ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ

II

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИСТОРИЯ СОПРЕДЕЛЬНЫХ С АРМЕНИЕЙ СТРАН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ II

СРЕДНИЕ ВЕКА

ЗАНГАК
ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 2016

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HISTORY OF NEIGHBOURING COUNTRIES OF ARMENIA

IN FOUR VOLUMES

VOLUME

II

MIDDLE AGES

ZANGAK
PUBLISHING HOUSE
YEREVAN 2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

II

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2016

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ Է ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼ
ՀՀ ԳԱԱ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հրատարակվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի պատվերով՝ պետական ֆինանսավորմամբ

Քառահատորյակի գլխավոր խմբագիր՝ Ռուբեն Սաֆրաստյան
Խմբագրական խորհուրդ՝ Վ. Ա. Բայբուրդյան (պ. գ. դ.), Ն. Վ. Հարությունյան (պ. գ. դ.), Ն. Հ. Հովհաննիսյան (պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ), Պ. Մ. Մուրադյան (պ. գ. դ.), Պ. Ա. Չոբանյան (պ. գ. դ.), Ռ. Ա. Սաֆրաստյան (պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Ա. Վ. Քոսյան (պ. գ. դ.)
Հատորի խմբագիր՝ Պավել Չոբանյան

Անվանացանկերը կազմեց Գ. Ա. Մարգարյանը, պ.գ.թ.

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Հ 247

Հայաստանի հարակից երկրների պատմություն / Խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ.— Եր.:
Հ 247 «Զանգակ» հրատ., 2016:
Հ. 2: Միջին դարեր.— 600 էջ + 24 էջ ներդիր:

Հայաստանի հարակից երկրների պատմության երկրորդ հատորն ընդգրկում է միջնադարյան Հայաստանին սահմանակից պետությունների՝ Իրանի, Բյուզանդիայի, Արաբական խալիֆայության, Վրաստանի, օսմանյան պետության, ինչպես նաև Արևելյան Այսրկովկասի տարածաշրջանի IV–XVIII դարերի ժամանակաշրջանի պատմությունը:

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-68-532-8

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2016 թ.
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2016 թ.

Editor in Chief: Ruben Safrastyan
Editorial Board: V. A. Bayburtyan, Dr. Sci. (Hist.), N. V. Harutyunyan, Dr. Sci. (Hist.), N. H. Hovhannisyan, Dr. Sci. (Hist.), Corresponding Member of NAS RA, P. M. Muradyan, Dr. Sci. (Hist.), P. A. Chobanyan, Dr. Sci. (Hist.), R. A. Safrastyan, Dr. Sci. (Hist.), Academician of NAS RA, A. V. Kosyan, Dr. Sci. (Hist.).
Editor of the Volume: Pavel Chobanyan
Indices by Gor Margaryan, PhD

Главный редактор: Рубен Сафрастян
Редакционная коллегия: Н. В. Арутюнян (д.и.н.), В. А. Байбуртян (д.и.н.), А. В. Косян (д.и.н.), П. М. Мурадян (д.и.н.), Н. О. Оганесян (д.и.н., член-корр. НАН РА), Р. А. Сафрастян (д.и.н., академик НАН РА), П. А. Чобанян (д.и.н.).
Редактор тома: Павел Чобанян,
Составитель индексов: Гор Маргарян, к.и.н.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ 14

ԲԱԺԻՆ 1
ԻՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ *(Վ. Բայբուրդյան)*

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ 16
ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ V–VII ԴԱՐԵՐՈՒՄ 23
ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ III–VII ԴԱՐԵՐՈՒՄ 26

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԻՐԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ
(Վ. Բայբուրդյան)

ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 32
ՕՄԱՅԱՆ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ 37
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 43
ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ 46

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԵՎ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ
(Վ. Բայբուրդյան)

ՂԱԶՆԵՎԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 50
ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 52
ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 55
ԻՐԱՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻՑ ՀԵՏՈ 60
ԹԵՄՈՒՐՅԱՆՆԵՐ 62

ԿԱՐԱ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ 65
ԱԿ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ 67

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ *(Վ. Բայբուրդյան)*
ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 71
ՍԵՖՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԱՀԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 74
ՇԱՀ ԱԲԱՍ Ա ԵՎ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ 78
ԻՐԱՆԸ XVII ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ 83
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ 87

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԻՐԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ *(Վ. Բայբուրդյան)*
ԱՖՂԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 93
ՆԱԴԻՐ ՇԱՀ *(Վ. Բայբուրդյան, Ք. Կոստիկյան)* 95
ՋԵՆԴԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ. ՔԵՐԻՄ ԽԱՆ 100
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՂԱՋԱՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ 103

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ *(Ա. Կոզմոյան)* 107
ՊԱՐՍԻՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Ա. Կոզմոյան)* 108
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *(Մ. Հասրաթյան)* 116
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ *(Վ. Բայբուրդյան, Ք. Կոստիկյան)* 119
Օգտագործված գրականություն 126

ԲԱԺԻՆ 2
ԲՅՈՒԶԱՆԴԻԱ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Մուրադյան)*
ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ 132
ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ 133
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ 135
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ 137

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԲՅՈՒԶԱՆԴԻԱ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ Ա-Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ *(Պ. Մուրադյան)*
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 141

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 142
ԴԱՎԱՆԱԿԱՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ *(Ա. Մաթևոսյան)* 143
ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 144
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 148

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VII–IX ԴԱՐԵՐՈՒՄ
ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ: ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ *(Ա. Մաթևոսյան)* 151
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VII ԴԱՐՈՒՄ ԵՎ VIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ *(Պ. Հոբանյան)* 153
ԻՍԱՎՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ *(Պ. Հոբանյան)* 158
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ IX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ *(Պ. Հոբանյան)* 162

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ IX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XI ԴԱՐ *(Ա. Բոզոյան)*
ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ) ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ 167
ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 170
ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ XI ԴԱՐՈՒՄ 172
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ 174

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ XII–XIII ԴԱՐԵՐՈՒՄ *(Ա. Բոզոյան)*
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ԿՈՄՆԵՆՈՍ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ 178
ԼԱՏԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 180
ՏՐԱՊԻԶՈՆԻ ԵՎ ՆԻԿԵԱՅԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 183
ՊԱԼԵՈԼՈԳՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՀԱՄԱՐ 187
ՀԱՅ–ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XII–XIII ԴԱՐԵՐՈՒՄ 190

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ *(Ա. Բոզոյան)*
ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 194
ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ 197

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ
ՄՇԱԿՈՒՅԹ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ *(Ա. Մաթևոսյան)* 201
ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ *(Ա. Բոզոյան)* 203

ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *(Մ. Հասրաթյան)*. 205
Օգտագործված գրականություն 209

ԲԱԺԻՆ 3
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՐԱԲՆԵՐԸ. ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ *(Ն. Հովհաննիսյան)*

ԱՐԱԲՆԵՐԻ ԲՆՕՐԱՆԸ ԵՎ ՑԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ. 212
ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ, ԿՈՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ 214

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ *(Ն. Հովհաննիսյան)*

ՄՈՒՀԱՄՄԵԴԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ 217
ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ: ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԲԱՐԵՊԱՇՏ ԽԱԼԻՖԱՆԵՐԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ (632–661 թթ.) 217
ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ: 652 թ. ԱՐԱԲԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 221

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ
ՕՄԱՅԱՆ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ *(Ն. Հովհաննիսյան)*

ՕՄԱՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (661–750 թթ.) 225
ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (750–1258 թթ.) 227
ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ (909–1171 թթ.) 230
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VII–XI ԴԱՐԵՐՈՒՄ 233
ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (1055–1194 թթ.) 235
ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ 237
ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1171–1250 թթ.) 240
ՄՈՆՂՈԼՆԵՐԸ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՐՇԱՆՈՒՄԸ 243

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1250–1517 թթ.) *(Ն. Հովհաննիսյան)*

ՄԱՄԼՈՒՔՆԵՐԸ 245
ԲԱՀՐԻ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1250–1390 թթ.) 246
ԲՈՒՐՋԻ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ (1390–1517 թթ.) 248

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XII–XV ԴԱՐԵՐՈՒՄ 249
ՀԱՅԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (VII–XV ԴԱՐԵՐ) 251

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎՐԱ *(Ն. Հովհաննիսյան)*

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ 255
ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 257
ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ 259
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 262
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 264
ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 267
ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵԳԻՊՏՈՍ (1798–1801 թթ.) 272

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՐԱԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ* ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ *(Ն. Հովհաննիսյան)* 275
ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈ՞ՒՆԴ (ՌԵՆԵՍԱՆՍ), ԹԵ՞ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԾԱՂԿՈՒՄ *(Ն. Հովհաննիսյան)* 277
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Ն. Հովհաննիսյան)* 279
ԱՐՎԵՍՏ *(Ն. Հովհաննիսյան)* 283
ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՐՈՆԱՒՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ՝ ՄԱՋՀԱԲ *(Դ. Հովհաննիսյան, Ն. Հովհաննիսյան)* 285
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ *(Ա. Մելքոնյան)* 288
ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *(Մ. Հասրաթյան)* 292
Օգտագործված գրականություն 295

ԲԱԺԻՆ 4
ՎՐԱՍՏԱՆ (ՎԻՐՔ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ՎՐԱՍՏԱՆԸ IV–VI ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Մուրադյան)*

ՎՐԱՍՏԱՆԸ ԱՎԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ 298
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ 299
ՎՐԱՍՏԱՆԸ V–VI ԴԱՐԵՐՈՒՄ 300
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ 302

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ IV–VI ԴԱՐԵՐՈՒՄ 303
ՎՐԱՑ ԳՐԻ ՈՒ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ 304
ՀԱՅ–ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ 305

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ VII–X ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Մուրադյան)*

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ VI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ VII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐ 307
ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ 308
ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 309
ՏԱՅՔ–ԿՂԱՐՋՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 310
ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ IV–X ԴԱՐԵՐՈՒՄ 312

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ *(Հ. Մարգարյան)*

ՊԱՅՔԱՐ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԴԵՄ 314
ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ 316
ԴԱՎԻԹ ՇԻՆԱՐԱՐ 318
ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XIII ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ 321
ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ: ՀԱՅ–ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 326
ՋԱԼԱԼ ԱԴ–ԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 329
ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 330
ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ 332

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ *(Հ. Մարգարյան)*

ԳԻՈՐԳԻ ՊԱՅՇԱՌ 334
ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 336
ՎՐԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 337
ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ 341

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XVI–XVII ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Չորանյան)*

ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI ԴԱՐՈՒՄ 343
ՇԱՀ ԱԲԲԱՍ Ա-Ի ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ 350
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 353

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐՈՒՄ 355
ՍԱՄՑԽԵԻ ԱԹԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ 357

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ *(Պ. Չորանյան)*

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ 358
ՊԱՐՍԻՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՆԱԴԻՐ ՇԱՀ 360
ՔԱՐԹԼ–ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՐԱԿԼ ԵՐԿՐՈՐԴ 361
ԳԵՈՐԳԻԵՎԱԿՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ 367
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ 370
ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Չորանյան, Մ. Հասրաթյան)* 372
Օգտագործված գրականություն 379

ԲԱԺԻՆ 5
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԵԼՋՈՒԿ–ԹՅՈՒՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ *(Մ. Զուլալյան)*

ՍԵԼՋՈՒԿ–ԹՅՈՒՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ 382
ՌՈՒՄԻ (ԻԿՈՆԻԱՅԻ) ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 385
ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 389

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ *(Մ. Զուլալյան)*

ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 392
ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 397
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ 398
ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 408
ՀԱՐԿԵՐԻ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ 413
ՄԱՆԿԱՀԱՎԱՔԸ (ԴԵՎՇԻՐՄԵ) ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ *(Ա. Շաքարյան)* 415

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ *(Մ. Զուլալյան)*
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 419
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 422

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ *(Մ. Զուլալյան)*
ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 431
ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ 437
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ XV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ *(Ա. Խաչատրյան)* 444

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ՄՇԱԿՈՒՅԹԸ *(Մ. Զուլալյան)*
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 456
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ 458
ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ 461
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *(Մ. Հասրաթյան)* 461
Օգտագործված գրականություն 465

ԲԱԺԻՆ 6
ԱՂՈՒԱՆՔԸ (ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ)
IV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ
ԱՂՈՒԱՆՔԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ *(Ա. Հակոբյան)*
ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ 468
ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ 469
ԱՂՈՒԱՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐՈՒՄ.
«ԱՂՈՒԱՆԵՐԵՆ» ԳՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ 470
ԱՂՈՒԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ (IV–VI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ) 475
ՎԱՉԱԳԱՆ Բ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱ. ԱՂՈՒԱՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ VI ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ 478

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ
ԱՂՈՒԱՆՔԸ VII–X ԴԱՐԵՐՈՒՄ *(Ա. Հակոբյան)*
ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 482
ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ. ՀԱՄԱՄ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱ 487

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ IX–XII ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Չորանյան)*
ԱՐԱԲԱԿԱՆ ՅԱՋԻԴՅԱՆ ՈՒ ՀԱՇԻՄՅԱՆ ՏՈՀՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՇԻՐՎԱՆՈՒՄ ԵՎ ԴԵՐԲԵՆԴՈՒՄ 489
ՇԻՐՎԱՆՇԱՀԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XI ԴԱՐՈՒՄ 493
ՇԻՐՎԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ 497

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XIII–XV ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Չորանյան)*
ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 502
ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ 506
ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 507

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ *(Պ. Չորանյան)*
ՇԻՐՎԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՍԵՖՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 511
ԹՈՒՐՔ–ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՇԻՐՎԱՆԸ 513
ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ 517
ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ 522

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ
ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ *(Պ. Չորանյան)* 524
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ *(Մ. Հասրաթյան)* 526
Օգտագործված գրականություն 528

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ 531
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ 571

ԱՌԱՋԱԲԱՆ

Միջին դարերի ժամանակաշրջանը Հայաստանին հարակից երկրներում նշանավորվել է քաղաքական, հասարակական-տնտեսական ու մշակութային զարգացման խոշոր տեղաշարժերով, այդ երկրների միջև բազմապիսի հարաբերությունների ծավալումով, Հայաստանի հետ նրանց հարաբերությունների աշխուժացումով և Հայաստանի կյանքում նրանց ունեցած դերակատարման մեծացումով:

Հայաստանի հարակից երկրների պատմության հանգամանալի և համակարգված իմացությունն անհրաժեշտ է հասկանալու այդ ժողովուրդների ներքին կյանքում տեղի ունեցող վերափոխումները, իրադարձությունների փոխկապակցվածությունը, Հայաստանի պատմության մեջ նրանց դերակատարման դրսևորումները և այլն:

Միջնադարյան ժամանակաշրջանի պատմության սկզբնաղբյուրները բազմազան են: Գրավոր բազմալեզու աղբյուրների և նյութական մշակույթի հուշարձանների ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում հանգամանալի լուսաբանելու իրադարձությունների պատճառահետևանքային կապերը: Բյուզանդական, արաբական, հայկական և վրացական սկզբնաղբյուրները առատ տեղեկություններ են պարունակում հարակից երկրներում և Հայաստանում տեղի ունեցած պատմական իրադարձությունների վերաբերյալ:

Միջին դարերի ժամանակաշրջանում Արևելքից սկիզբ առած ժողովուրդների խոշոր գաղթերը, պետական նոր կազմավորումների, աշխարհակալ կայսրությունների ստեղծումն ու կործանումը խոր ազդեցություն են ունեցել Հայաստանի պատմական զարգացման վրա:

Խաչակրաց արշավանքները Մերձավոր Արևելքի երկրներում և Հայաստանում ունեցել են երկակի դերակատարում: Խաչակրաց պետությունների ձևավորումը մի կողմից՝ խթան հանդիսացավ եվրոպական երկրների հետ ևս սերտ հարաբերություններ մշակելու գործում, մյուս կողմից՝ Խաչակրաց պետությունները հանդես էին գալիս որպես Կիլիկյան Հայաստանի ռազմաքաղաքական մրցակիցներ:

Հայաստանի կյանքում ծանր հետք թողած իրադարձություններ էին Մերձավոր Արևելքի տարածաշրջան և Հայաստան սելջուկ-թյուրքերի ներխուժումներն ու Արևմտյան Հայաստանում և հարակից երկրներում օսմանյան տիրապետության հաստատումը:

Միջին դարերի բնութագրիչ հանգամանքներից էր ավատատիրության ձևավորումը: Ավատատիրական համակարգի քայքայման ու կապիտալիստական հարաբերությունների ձևավորման գործընթացով իր ավարտն է ապրում միջնադարը, և սկսվում է Նոր պատմության ժամանակաշրջանը:

Հայաստանի հարակից տարածքներում ստեղծված ավատատիրական կայսրությունները կարևոր դերակատարում են ունեցել Եվրոպայի ու Ասիայի բազում երկրների, այդ թվում նաև Հայաստանի ճակատագրում (Սասանյան Իրան, Բյուզանդիա, Արաբական խալիֆայություն, Մոնղոլական կայսրություն, Օսմանյան կայսրություն): Գերակայության հասնելու նպատակով հիշյալ կայսրությունների միջև երկարատև պայքարի զգալի մասը ընթացել է նաև Հայաստանի տարածքում:

Տարբեր է Հայաստանի հարակից երկրների ավանդը համաշխարհային քաղաքակրթությանը բերած նպաստի առումով: Արաբական և մոնղոլական նվաճումները զգալի չափով նպաստեցին տարբեր աշխարհամասերի ներկայացուցիչների փոխշփումներին, մշակութային փոխհարաբերություններին ու նրանց միջև կապերի զարգացմանը: Արաբական խալիֆայության, իսկ այնուհետև Բյուզանդական կայսրության փլատակների վրա ձևավորված Օսմանյան կայսրությունը դարձավ կաշկանդիչ գործոն քաղաքակրթության և կայսրության կազմի մեջ ընդգրկված ժողովուրդների սոցիալ-տնտեսական ու գիտամշակութային զարգացման համար:

Հայաստանի հարևանությամբ արաբական աշխարհում ծնունդ առած մահմեդականությունը մեծ ազդեցություն ունեցավ տարածաշրջանի զարգացման ընթացքի վրա: Նոր կրոնի մասին գրավոր առաջին տեղեկություններ պահպանվել են հայ մատենագրական երկերի մեջ:

Խալիֆայության թուլացումից և ապա անկումից հետո արաբական վարչակազմի ներկայացուցիչները Արևելյան Այսրկովկասում՝ Բուն Աղուանքի տարածքում, ձևավորեցին Շիրվանի և Դերբենդի իշխանությունները և «շիրվանշահ» տիտղոսով պահպանեցին իրենց հարաբերական անկախությունը մինչև XVI դար (1538 թ.): XVI դարի առաջին կեսին Արևելյան Այսրկովկասը նվաճվեց Սեֆյան Իրանի կողմից:

Միջին դարերի ժամանակաշրջանում էական զարգացում ապրեց վրաց պետականությունը: Սկզբնավորվելով IX դարի վերջերից և սերտ հարաբերություններ պահպանելով Հայաստանի ու հարակից այլ պետությունների հետ՝ Վրաստանում Բագրատունյաց հարստության տիրապետությունը շարունակվեց մինչև XIX դարի սկիզբը:

Այսպիսով՝ Հայաստանի հարակից երկրների պատմության համակարգված ուսումնասիրությունը կարող է իր նպաստը բերել ինչպես նշված երկրների զարգացման ավանդույթներն ու միտումները, այնպես էլ Հայաստանի հետ նրանց փոխհարաբերությունների բնույթը խորապես հետազոտելու գործում:

ԲԱԺԻՆ 1

ԻՐԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1. ՍԱՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IV ԴԱՐՈՒՄ

III դարի սկզբին Պարթևական Իրանն ընդգրկում էր բազմաթիվ ցրված, կիսանկախ, իսկ երբեմն նաև կատարելապես անկախ շրջաններ, որոնց գլուխ կանգնած էին հզոր ազնվականական տոհմերի ներկայացուցիչները: Երկրում տեղի ունեցող մշտական ներքին երկպառակությունները, չդադարող պատերազմները, Հռոմի հետ պարբերաբար տեղի ունեցող ռազմական բախումները թուլացրել էին երկիրը՝ նպաստելով նրա էլ ավելի ապակենտրոնացմանը:

Իրանական հողերի վերամիավորումը սկսվեց երկրի հարավում գտնվող Պարսք կամ Ֆարս նահանգից, որը III դարի սկզբներին գրեթե անկախ էր, թեև համարվում էր պարթև Արշակունյաց թագավորների գերիշխանության ներքո գտնվող երկրամաս: Ապագա Սասանյան դինաստիայի հիմնադիրները, ինչպես և ժամանակին Աքեմենյանները, ծագումով հենց այդ Պարսք նահանգից էին:

Սասանյան դինաստիան իր անվանումը ստացել է Պարսքի Ստահր քաղաքի Անահիտ աստվածուհու մեհյանի քրմապետ Սասանից, որն ամուսնացել էր Ստահրի արքայական տոհմի արքայադստեր հետ, և այդ ամուսնությունից ծնվել էր Պապակը: Վերջինս դառնում է Ստահրի կառավարիչը և նույնիսկ ձեռք է բերում թագավորի տիտղոս: Պապակի որդիներից մեկը՝ Արտաշիրը, ստանում է Դարաբկերտ ամրոցի կառավարչի պաշտոնը: Ազգակցական կապերի, ինչպես նաև քրմական շրջանների ու տոհմիկ ազնվականության աջակցության շնորհիվ նա կարողանում է աստիճանաբար ընդլայնել իր տիրույթները հարևան հողերի հաշվին և ամրապնդվել Իրանի հարավային շրջաններում՝ դառնալով Պարսքի միահեծան տերը: Այնուհետև նա Պարսքին է միացնում Սպահանի և Քերմանի հողերը, ներխուժում է Խուզիստան, իր տիրույթներին միացնում Շոշաստանը (Սուզիանեն), Մեսիենեն և անցնելով Միջագետք՝ պաշարումից հետո գրավում Սելևկիան:

Արտաշիրի քաղաքական սրընթաց վերելքը և նրա փառասիրական ձգտումները՝ դառնալու Իրանի միանձնյա տիրապետողը, անխուսափելիորեն հանգեցրին պարթև Արշակունիների պետության հետ բախման: 221 թ. Արտաշիրը պատերազմ սկսեց պարթևաց վերջին արքա Արտավան Ե-ի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 224 թ. ապրիլի 20-ին Որմիզդական (Հորմիզդական) կոչված դաշտավայրում, որտեղ պարթևները կրեցին ջախջախիչ պարտություն, և Արտավան Ե-ը գերի ընկավ թշնամու ձեռքը: Արտաշիրի հրամանով նրան մաշկազերծ արեցին և կախեցին Անահիտ աստվածուհու տաճարում: Ի նշանավորումն իր տարած պատմական հաղթանակի՝ Արտաշիրը Արտավանի կտրված գլուխը նետեց իր ոտքերի տակ:

Երբեմնի պարթևական հզոր թագավորությունը կործանված էր: 226 թ. Արտաշիրը թագադրվեց Տիզբոնում՝ ստանալով «արքայից արքա Երանի» տիտղոսը: Այսպիսով նա դառնում է Երանշահրի՝ նախկին Պարթևական թագավորության տարածքի մենատերը:

Արտաշիր Ա Պապականի (226–240 թթ.) գահակալությամբ սկսվում է Սասանյան (Արտաշիրի պապ Սասանի անունով) արքայատոհմի տիրապետությունը Իրանում: Պատմության ասպարեզ էր իջնում մի պետություն, որին վիճակված էր դառնալու Առաջավոր Ասիայի հզորագույն տերություններից մեկը:

Սասանյաններն իրենց համարում էին Աքեմենյանների հաջորդներ և իրենց առջև նպատակ էին դրել վերականգնելու հին պարսկական մեծ աշխարհակալությունը՝ Կյուրոս Մեծի և Դարեհ Ա-ի ընդարձակ պետությունը:

Արտաշիրը իր մայրաքաղաքը դարձրեց Տիգրիսի երկու ափերին գտնվող Տիզբոնը (Քտեսիֆոն), որն այսուհետև սկսեց կոչվել նաև Բեհ-Արդեշիր: Այդ ընտրությունը պատահական չէր: Նշված երկրամասում էին գտնվում առավել հարուստ ու բարեբեր շրջանները, որտեղ կային մեծ թվով քաղաքներ, այդ վայրերով անցնող առևտրական ճանապարհները Իրանը կապում էին մերձմիջերկրածովյան նավահանգիստների, Հայաստանի, Աղվանքի, Վրաստանի, Լազիստանի, Պարսից ծոցի առափնյա շրջանների և Հարավային Արաբիայի հետ:

Իրանի ազնվականական շրջանները աստիճանաբար սկսեցին անցնել իրական ուժի՝ հաղթանակած Սասանյանների կողմը: Ի վերջո նրանց հարեցին նաև պարթև Արշակունիների տոհմակից տները:

Կայունացնելով իր ներքին վիճակը՝ Արտաշիր Ա-ը ձեռնամուխ եղավ իր պետության սահմաններն ընդարձակելու գործին: Նա նվաճեց Մեդիան (Մարաստանը), Ադորբայգանը (Ատրպատական), Սաքաստանը (Սեյիսթան, Սիստան), Խորասանը, Հայաստանի մի մասը, Մարգիանան (Մերվի օազիսը), Մեքրանը և այլ տարածքներ: Արտաշիր Պապականի կառավարման տարիներին նրա տիրույթների սահմանը հյուսիսում հասավ մինչև մերձկասպյան նահանգները, հարավում՝ Պարսից ծոց, արևելքում՝ մինչև Աֆղանստան՝ Քաբուլ գետի հովիտը: Դեպի արևելք ծավալվելու հետևանքով քուշանական շրջանների մի մասը մտավ Սասանյանների տիրույթնե-

րի մեջ, որը հնարավորություն տվեց արքայից արքային իր բազում տիտղոսներին ավելացնելու ևս մեկը՝ «քուշանշահ» տիտղոսը:

Քայլ առ քայլ հետամուտ լինելով միասնական պետության կազմի մեջ պարսկական հողերի «հավաքմանը»՝ Սասանյան գահակալները ձևավորեցին ընդարձակ կայսրություն, որի պետական լեզու դարձավ հարավարևելյան պահլավական խոսվածքը: Այն իր մեջ ներառում էր նաև այլ բարբառներ: Անկասկած, Սասանյան պետությունը իր նախորդ պետական կազմավորումից՝ Պարթևական պետությունից, ժառանգեց պետականության ու մշակույթի բազմաթիվ հատկանիշներ: Այդ պետության մեջ գերակշռող տարրը պարսկական էթնոսն էր, թեև Սասանյան պետությունը իրենից ներկայացնում էր ժողովուրդների ու ցեղերի մի խայտաբղետ խառնուրդ:

Առաջին Սասանյանների կողմից արտաքին քաղաքականության բնագավառում ձեռք բերած հաջողություններն ամրապնդել են Սասանյան պետությունը և հանգեցրել կենտրոնական իշխանության ուժեղացմանը: Իրանական պետությունը հետզհետե դառնում էր կենտրոնացած թագավորություն: Իրանի տարբեր երկրամասերի պետերը, որոնք Արշակունիների ժամանակ գրեթե անկախ էին, թեև պահպանեցին իրենց բարձր տիտղոսները, սակայն համարվում էին արքայից արքաների «գործակալներ»:

Սասանյան առաջին տիրակալը վարում էր հակաարշակունյան քաղաքականություն: Նա հալածում ու ոչնչացնում էր նախկին պարթև Արշակունիների դինաստիայի կենդանի մնացած ներկայացուցիչներին: Արտաշիր Ա-ը պարթևներից խլված հողերի մի մասը վերածեց իր սեփական «դաստակերտի»՝ դոմենի:

Արևելքն ու Արևմուտքը ներկայացնող երկու հզորագույն ուժերի՝ Հռոմի և Պարսկաստանի միջև ծայր էր առնում մի արյունոտ պայքար, որի ելքը որոշելու էր Առաջավոր Ասիայի բազմաթիվ ժողովուրդների քաղաքական ճակատագիրը:

Հռոմում անմիջապես հասկացան, որ Արևելքում պատմական ասպարեզ է իջնում ահռելի եռանդով օժտված մի կենսունակ պետություն, որն ըստ էության ձգտում է համաշխարհային տիրապետության:

Պարսկա-հռոմեական պատերազմները սկիզբ առան դեռևս III դարի 30-ական թվականներից: 230 թ. Արտաշիր Ա-ը մեծ արշավանք կազմակերպեց Հռոմեական Միջագետքի ուղղությամբ: Նա հռոմեացիներից պահանջեց, որ իրեն վերադարձնեն բոլոր այն երկրները, որոնք նախկինում պատկանել են Աքեմենյան Պարսկաստանին:

Սասանյան գահի վրա Արտաշիր Ա-ին փոխարինած նրա որդի Շապուհ Ա-ի (241-272 թթ.) օրոք շարունակվեց պայքարը Հռոմի դեմ Միջագետքի ու Հայաստանի համար: Պարսիկները տարան մի շարք խոշոր հաղթանակներ և ներխուժեցին Փոքր Ասիա: 244 թ. կնքված խաղաղության պայմանագրով հռոմեացիները պարտավորվում էին վճարել խոշոր ռազմատուգանք և հակառակորդին էին զիջում Միջագետքն ու Հայաստանի մեծ մասը: Հռոմեական աղբյուրներն այդ պայմանագիրը բնորոշել են որպես «ամենաամոթաբեր հաշտություն»:

Օգտագործելով խաղաղ դադարը հռոմեացիների հետ՝ Շապուհ Ա-ը զենքն ուղղեց Կենտրոնական Ասիայի պետական կազմավորումների և արևելքից Իրանին սպառնացող վաչկատուն ցեղերի դեմ: Խորասանում ջախջախելով «թուրանական թագավորին», իսկ ապա նաև քուշաններին՝ Սասանյան զորքերը նվաճեցին մինչև Հնդկաստանի Փեշավար նահանգն ընկած տարածքները: Նվաճված երկրամասը միացնելով Իրանին՝ Շապուհ Ա-ը ստեղծեց իրենից կախյալ մի նոր թագավորություն՝ «Սաքաստանի, Թուրեստանի և Հնդկաց մինչև ծովափ»:

Այդ խոշոր հաղթանակներից հետո Շապուհին այլևս չէր բավարարում իր հոր «շահնշահ Իրանի» բարձր տիտղոսը, և նա իր արձանագրությունների մեջ իրեն անվանում է «շահնշահ Իրանի և Անիրանի» («շահնշահ-ե Էրան ու Աներան»)՝ դրանով իսկ շեշտելով, որ ինքը միավորել է ոչ միայն Իրանը, այլև այն երկրամասերը, որոնք մինչ այդ չէին մտնում Իրանի կազմի մեջ:

Ապահովելով իր աշխարհակալության արևելյան մասի անվտանգությունը՝ Շապուհ Ա-ը կրկին հայացքն ուղղում է դեպի արևմուտք: Պարսկա-հռոմեական պատերազմները փոփոխակի հաջողությամբ շարունակվում են: 253 թ. պարսկական զորքերը ծանր պարտության են մատնում հռոմեացիներին և հասնում մինչև Միջերկրական ծովի ափերը: 256 թ. նրանց հաջողվում է գրավել Անտիոքը, իսկ 260 թ.՝ հռոմեական զորքերին ջախջախելուց հետո՝ գերի վերցնել Վալերիանոս կայսրին: Այնուհետև Սասանյան զորքերը թափանցում են Արաբական թերակղզու խորքերը: Հիրավի, Շապուհ Ա-ի օրոք Սասանյան պետությունը հասավ մեծ հզորության: Նրա տիրույթները տարածվում էին Հարավային Միջագետքից ու Սիրիայից մինչև Հինդոս գետը, Կասպից ծովից մինչև Պարսից ծոց և Օմանի ծով:

Սակայն այնուհետև պարսիկներին ուղեկցեցին ռազմական անհաջողությունները: Անցնելով հակահարձակման՝ 283 թ. հռոմեացիները հասան մինչև Սասանյանների մայրաքաղաք, որի գրավմանը խանգարեց միայն կայսեր մահը: 298 թ. Նիսիբինի (Մծբին) մոտ պարսիկները կրեցին ջախջախիչ պարտություն: Այդ նույն թվականին Մծբինում կնքված 40-ամյա խաղաղության դաշնագրով, որը պարսից պատմության մեջ հայտնի է «ամոթալի հավերժական խաղաղություն» անունով, Սասանյան պետությունը կորցրեց Հայաստանը և Միջագետքի հյուսիսային հինգ նահանգներ, այլ կերպ ասած՝ այն ամենը, ինչ Արևմուտքում նվաճված էր նախկին ժամանակներում: Այդ պարտությունն այն աստիճանի ծանր էր, որ քառասուն տարի Սասանյանները հրաժարվեցին Արևմուտքում ակտիվ քաղաքականություն վարելուց:

Շապուհ Բ-ի (309-379 թթ.) օրոք սկիզբ առավ իրանա-հռոմեական պատերազմների մի նոր փուլ: Արքային հաջողվեց վերամիավորել նախկինում կորցրած տարածքները և ամրապնդել Սասանյան պետությունը: Այնուհետև իր զորքերը արևմուտքից նետելով պետության հյուսիսարևելյան ծայրամասային շրջանները՝ Շապուհը հաղթանակ տարավ հոն-խիոնիթների նկատմամբ և նրանց դարձրեց իր դաշնակիցը: Արքայի ծավալապաշտական քաղաքականությունը ծավալվեց նաև դեպի հարավ: Պարսից ծոցի արաբական ափերին տիրանալու համար նա պայքարի մեջ մտավ անհանգիստ արաբական ցեղերի հետ և նվաճեց Բահրեյնը:

Պարսկա-հռոմեական պատերազմներին հաջորդում են պարսկա-բյուզանդական պատերազմները: Երկու պետությունները վիճարկում էին իրենց հավակնությունները Սիրիայի, Կովկասի և Լազիստանի նկատմամբ: Իրանի և Բյուզանդիայի միջև մրցակցությունն ընթանում էր նաև Հարավային Արաբիայի համար, որտեղից անցնում էր համեմունքների հին քարավանային ճանապարհը: Այդ ճանապարհի վրայով հնդկական ապրանքներ էին տեղափոխվում միջերկրածովյան երկրներ:

Սասանյան պետության գլուխ էր կանգնած շահնշահը, որը սերում էր Սասանյանների թագավորող դինաստիայից: Շահնշահերն ունեին հսկայական իշխանություն: Սակայն պետության կառավարման գործում չափազանց կարևոր դեր էին խաղում նաև տոհմիկ ազնվականությունը, զորապետերն ու քրմերը: Իշխանությունը տնօրինելու գործում գերագույն քուրմը՝ մոբեդան մոբեդը, հաճախ հանդես էր գալիս շահի մրցակցի դերում, ուստի առավել ուժեղ և եռանդուն արքաները աշխատում էին հնարավորին չափով թուլացնել քրմական դասի դիրքերը և սահմանափակել մոբեդների չափից ավելի մեծ իշխանությունը:

Սասանյան պետությանը բնորոշ են եղել ներքին արյունալի երկպառակությունները, գահի շուրջ ծավալված փոթորկահույզ կռիվները, պալատական հեղաշրջումները և այլն, որոնք պետությունը մշտապես պահում էին լարվածության ու ապակայունացման վիճակում:

Կարևորագույն պետական որոշումները կայացվում էին պալատական երևելիների խորհրդում: Բարձրագույն դասը էթնիկական առումով կազմված էր համարյա բացառապես պարսիկներից, որոնք իրենց անվանում էին «նամդարան» («անվանիներ, ազնվագույններ»):

Քանի որ գահաժառանգման խստիվ սահմանված օրենքներ գոյություն չունեին, ուստի շահը ձգտում էր իր ժառանգորդին ընտրելու դեռևս իր կենդանության օրոք: Պետության կառավարման գործում շահնշահի մերձավորագույն օգնականներն ու խորհրդատուներն էին «վազուրգ-ֆրամադարը» (առաջին նախարար), զրադաշտական հոգևորականության գլուխ հանդիսացող մոբեդան մոբեդը, գլխավոր հրամանատար «երան-սպահբեդը», գրագիրների ղեկավար «դաբիրբեդը», հարկատու դասի ղեկավար «վաստրիոշան-սալարը», արհեստավորների գլխավոր «խութուշխբադը»: Սակայն բարձրագույն պաշտոնական անձ էր համարվում «փիթիախշը» (բդեշխ), որը պարտադիր կարգով պետք է լիներ արքայական ընտանիքի անդամ և վարում էր շահնշահի տեղակալի պաշտոնը՝ մայրաքաղաքից նրա բացակայության դեպքում:

Սասանյան պետության հիմքը զարգացած դասային համակարգն էր: Հասարակությունը խստորեն բաժանվում էր մի շարք դասերի: Դա սրբագործված էր կրոնի կողմից, և նրա պահպանմանը հետևում էր պետական ապարատը: Դասերի ներսում գոյություն ուներ բարդ աստիճանակարգային բաժանում: Հին Իրանին հայտնի էր ազատ մարդկանց երեք դաս՝ քրմեր, ռազմիկներ և հողագործներ: IV դարում կար չորս դաս՝ քրմեր, ռազմիկներ, գրագիրներ, հարկատու դաս (հողագործներ, անասնապահներ, արհեստավորներ և այլն: Քրմերի բարձրագույն կարգ էին կազմում մոբեդները: Մոբեդան մոբեդի իշխանությունը հաճախ մրցակցում էր շահի իշխանության հետ, ուստի առանձին ուժեղ ու եռանդուն արքաները աշխատում էին թուլացնել քրմերի դիրքը և մոբեդների իշխանությունը:

Ռազմիկների դասը, որն, ըստ հերթականության քրմերի դասից հետո կազմում էր երկրորդը, կոչվում էր նաև «ազատների» կամ «առաքինիների» դաս: Այս դասի ներսում գոյություն ուներ բազմաստիճան հիերարխիա, որի գագաթին գտնվում էր շահնշահը, դրանից հետո գալիս էր երան-սպահբեդը, այնուհետև՝ շահրդարները, որոնք խոշոր նահանգների կիսանկախ կառավարիչներ էին և կրում էին տվյալ նահանգի շահի տիտղոսը: Սրանք նշանակվում էին թագավորական ընտանիքի անդամներից կամ տեղական «թագավորիկներից»: Նահանգների կառավարիչները, V դարից սկսած, կոչվում էին մարզպաններ: Այնուհետև գալիս էին մարզերի կուսակալները, որոնք ունեին ոչ արքայական ծագում, բարձրագույն պալատականները և առավել երևելի ու հին իրանական տոհմերի ղեկավարները՝ «վիսպուհրները», որոնք օգտվում էին ժառանգական իրավունքից: Նրանց էին պատկանում կարևորագույն զինվորական ու պետական պաշտոնները վարելու ժառանգական իրավունքները: Ամենաերևելի յոթ տոհմերից՝ Կարեն, Սուրեն, Միհրան, Արշակ, Սպանդիար և այլն, հետո ըստ աստիճանակարգի գալիս էին «վուզուրգները» («մեծերը»), որոնք պատասխանատու պաշտոններ էին վարում ինչպես բանակում, այնպես էլ պետական ապարատի մեջ:

Դասերը Սասանյան Իրանում ներփակ սոցիալական խմբեր էին, որոնց պատկանելությունը որոշվում էր հոր կարգավիճակով: Անցումը դեպի ավելի բարձր դասի հնարավոր էր միայն արքայի և տոհմիկ ազնվականության ներկայացուցիչների հատուկ որոշմամբ: Դասային համակարգից դուրս գտնվում էին ոչ զրադաշտականները և ստրուկները, որոնց իրավունակությունը չափազանց սահմանափակ էր: Սասանյանների շրջանում ստրկատիրությունը թեև աստիճանաբար կորցնում էր իր առաջատար դերը, սակայն դեռևս որոշակի չափով պահպանվում էր ստրկական աշխատանքը:

Իրանում առկա են եղել ազատ գյուղական համայնքներ: Խոշոր գյուղերի կամ գյուղախմբերի գլուխ էին կանգնած «ազատները»: Գյուղական վայրերում նրանք ներկայացնում էին տեղական իշխանությունը: Պատերազմների ժամանակ նրանք շահի առաջին իսկ պահանջով իրենց ձիով ու սպառազինությամբ պարտավոր էին ներկայանալ նրան:

Պետության եկամտի հիմնական մասը գոյանում էր հողային հարկից: Բարձր դասին պատկանող անձինք ազատվում էին հարկերից: Այլադավանները, սովորական հարկերից բացի, վճարում էին նաև գլխահարկ, որի չափերը կախված էին հարկատուի ունևորության աստիճանից:

Աղբյուրները կցկտուր տեղեկություններ են հաղորդում Սասանյան պետության մեջ արհեստների մասին: Հայտնի է, սակայն, որ քաղաքներում արհեստավորները բնակվել են ըստ իրենց մասնագիտությունների՝ առանձին թաղամասերում:

Սասանյանները իրենց հսկողությունն էին սահմանել Չինաստանը Միջին և Առաջավոր Ասիայի և Բյուզանդիայի հետ կապող քարավանային մեծ ճանապարհի վրա: Նրանք իրենց ձեռքերում էին կենտրոնացրել նաև Մերձավոր Արևելքի, Հնդկաստանի ու Չինաստանի միջև կատարվող միջնորդական ծովային առևտուրը: Սասանյան Իրանը աշխույժ ցամաքային և ծովային առևտուր է ունեցել Ցեյլոն կղզու, Հարավային Արաբիայի, Եթովպիայի և այլ երկրների հետ:

Սասանյան պետության քաղաքական կառուցվածքի առանձնահատկությունը փոխարքաների անկախության բարձր աստիճանն էր: Նրանցից յուրաքանչյուրն ուներ իր զորքը: Անհրաժեշտության դեպքում դրանք միանում էին մշտական շահնշահական բանակին:

Սասանյան պետությունը բաժանված էր չորս խոշոր նահանգների՝ «քուստակների», որոնք ավելի շուտ խոշոր տարածաշրջանային միավորներ էին: Դրանք էին՝ Խորասան, Ազերբայգան, Նիմրուզ և Հորաբարան (Միջագետք): Վերոհիշյալ չորս նահանգները բաժանվում էին 18 սատրապությունների, որոնք կառավարում էին սատրապները կամ մարզպանները:

Սասանյանները հողագործների նկատմամբ վարել են կոշտ ու դաժան քաղաքականություն՝ նրանց վրա բարդելով անտանելի ծանր հարկեր: Ուստի հաճախ պետության հիմքերը ցնցել են բազմաթիվ ապստամբություններն ու խռովությունները: Սասանյանները նաև կտրուկ քաղաքականություն են վարել տեղական կառավարիչների կողմից անկախության ու ինքնուրույնության ամեն կարգի դրսևորումների դեմ:

Սասանյան պետության պաշտոնական կրոնը զրադաշտականությունն էր: Զրադաշտականների կողմից ամենագլխավոր պաշտամունքը մատուցվում էր կրակին: Այնքան տարածված էր այս պաշտամունքը, որ «զրադաշտական» անունը հաճախ փոխարինվում էր «կրակապաշտ» անվամբ: Զրադաշտականները երկրպագում էին նաև «սրբազան տարերքները»՝ կրակը, հողը և ջուրը: Զրադաշտական քրմերը ոչ միայն իրագործում էին ծիսական պարտականություններ, այլև նրանց ձեռքերում էին կենտրոնացած լուսավորությունն ու դատաիրավական համակարգը: Զրադաշտականների պաշտամունքի վայրեր էին կրակի տաճարները՝ ատրուշանները կամ «աթեշ-գահները»: Նրանց սուրբ գիրքը «Ավեստան» էր: Ավեստայի հին լեզուն Սասանյան շրջանում անհասկանալի էր դարձել բնակչության մեծամասնության համար, այդ պատճառով հետագայում կազմվեցին մեկնաբանություններ, որոնք ստացան «Զենդ» անվանումը («Զենդ Ավեստա»):

Առաջին Սասանյան թագավորները վարում էին հանդուրժողական քաղաքականություն այլ կրոնների և նրանց հետևորդների նկատմամբ: Սակայն III դարի վերջին գերագույն քուրմ «մոգպետաց մոգպետ» Քարթիրը կազմակերպեց քրիստոնեության, բուդդայականության և այլ դավանանքների հետևորդների հալածանքներ: Քարթիրի գործունեությունը հանգեցրեց նրան, որ Սասանյան պետությունը սկսեց վերածվել աստվածապետության:

Սասանյաններին ենթակա երկրներում, զրադաշտականությունից բացի, տարածում էին գտել նաև քրիստոնեությունը, հուդայականությունը, բուդդայականությունը, սաբեիզմը, ինչպես նաև III դարի կեսերին ծնունդ առած մանիքեականությունը, որն իրենից ներկայացնում էր դուալիստական մի ուսմունք: Իրանում մանիքեական համայնքները գոյատևեցին մինչև XI դարը:

Սասանյան պետության մեջ գոյություն ուներ նաև հուդայականների բազմամարդ գաղութ: Հուդայականության հետևորդները հալածանքների չէին ենթարկվում, քանի որ նրանց հալածում էին Հռոմեական կայսրությունում: Պետության արևելքում՝ Բալխում, տարածված էր բուդդայականությունը:

Նկատի ունենալով, որ Արևմուտքում Հռոմի դեմ հաջողությունները զարգացնելուն արգելակում էին երկրի ներսում գոյություն ունեցող թաքնված ու բացահայտ երկպառակությունները, Շապուհ Բ արքան անողոք պայքար ծավալեց ինքնիշխանության ձգտող տոհմիկ ազնվականության դեմ, որպեսզի եռանդուն արտաքին քաղաքականություն իրականացնելու համար ապահովի կայուն թիկունք: Իրանի այդ տիրակալն իր կառավարման տարիներին կարողացավ համախմբել պետությունը և կրկին բարձրացնել շահնշահի իշխանության հեղինակությունը: Նա նաև Սասանյան պետության մեջ առաջինը սկսեց քրիստոնյաների նկատմամբ կիրառել նպատակասլաց, պետական մակարդակով իրականացվող հալածանքների քաղաքականություն:

2. ՍԱՍԱՆՅԱՆՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ V–VII ԴԱՐԵՐՈՒՄ

Շապուհ Բ-ի մահից հետո ազնվականության ու քրմության քմահաճույքով 20 տարվա ընթացքում գահն անցնում էր ձեռքից ձեռք: Հազկերտ Ա-ի (399–421 թթ.) գահակալության շրջանում զրադաշտական քրմությունը և ազնվականական վերնախավը պետությունն ու գահը խաղալիք էին դարձրել իրենց ձեռքին: Իր դիրքերն ամրապնդելու համար Հազկերտը փորձում էր ոչ միայն սահմանափակել պալատական բարձրատոհմիկ ազնվականների և մոգերի իշխանությունը, այլև հենարան գտնել բնակչության այլ խավերի, մասնավորապես քաղաքային առևտրական և արհեստավորական շրջաններում, որոնց նշանակալի մասը քրիստոնյաներ էին: Ուստի, ի հակադրություն Շապուհ Բ-ի, Հազկերտ Ա արքայից արքան մեղմացրեց քրիստոնյա բնակչության և նրա հոգևորականության նկատմամբ սահմանված ճնշող ռեժիմը, դադարեցրեց քրիստոնյաների հալածանքները, թույլ տվեց վերականգնել ավերված եկեղեցիները և այլն:

Սակայն նրա այդ քաղաքականությունը հանդիպեց ազնվականների ու քրմերի ուժգին դիմադրությանը, ուստի իր թագավորության վերջում Հազկերտ Ա-ը որոշ վերանայման ենթարկեց իր այդ քաղաքականությունը:

Վարահրան կամ Վռամ (Վահրամ, Բահրամ) Ե Գոռի (Գուր) (421–439 թթ.) օրոք հաճախակի դարձան քոչվորների հարձակումները Իրանի վրա հյուսիսից և հյուսիս-արևելքից: Մերվի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Բահրամ Ե-ն ջախջախեց էֆթալիթական ցեղերին, որի հետևանքով Սասանյան պետության տարածքը միաժամանակ ընդարձակվեց դեպի Ամու Դարյա գետը:

Վերսկսվեցին հալածանքները քրիստոնյաների նկատմամբ: Դրա պատճառն այն էր, որ շահնշահը և զրադաշտական հոգևորականությունը հանձինս Իրանի քրիստոնյաների սկսել էին տեսնել Հռոմի քաղաքական դաշնակիցների: Հազկերտ Բ–ի (439–457 թթ.) օրոք էֆթալիթների դեմ պայքարը շարունակվում էր: Թալեղանի և Բալխի շրջաններում համառ մարտերն ավարտվում են քոչվորների պարտությամբ: Շահը այնտեղ հիմնում է Շահրիսթան–ե Յեզդիգերդ ամրոցը:

Հազկերտ Բ–ի թագավորության շրջանում Սասանյան պետության քրիստոնյա ժողովուրդների վիճակն ավելի է վատթարանում: Նա հրամայում է զորք հավաքել ենթակա քրիստոնյա երկրներից և առաջին հերթին Հայաստանից: Այդ քաղաքականության նպատակներից մեկն էր քրիստոնյա երկրները զրկել տեղական ռազմական ուժերից, թողնել անպաշտպան իրենց նվաճողական քաղաքականության հանդեպ և միաժամանակ խրախուսել զրադաշտականության տարածումը: Հայաստանում այդ քաղաքականության դեմ դժգոհությունը վերաճեց պատերազմի, իսկ Ավարայրի ճակատամարտից հետո պարսից իշխանությունները ստիպված էին մեղմացնել իրենց պարտադրանքը:

Իրադրությունն այդ առումով չփոխվեց նաև հինգերորդ դարի երկրորդ կեսին: Հայաստանում և Վրաստանում բռնկված ապստամբությունները միայն պարտադրեցին Իրանին գնալ զիջումների:

Սրված իրադրությունը Իրանի նեստորական եպիսկոպոսներին ստիպեց 484 թ. գումարել ընդհանրական մի ժողով, որտեղ որոշվեց խզել կապերը բյուզանդական ուղղափառ եկեղեցուց:

V–VI դարերի սահմանագծին Սասանյան Իրանը ցնցեց մի հուժկու շարժում, որը հայտնի է *մազդակյան շարժում* անունով: Այդ կրոնասոցիալական շարժման առաջնորդը Մազդակն էր: Մազդակյանների ուսմունքի սոցիալական ելակետը հետևյալն էր. աշխարհում գոյություն ունեցող անհավասարությունը և անարդարությունը չար սկզբունքի արգասիք են: Մազդակյանները հավատում էին, որ ի վերջո հաստատվելու է բանականության թագավորություն, որը կառուցված կլինի ընդհանուր հավասարության, մասնավոր սեփականության բացակայության և բարիքների հավասար բաշխման սկզբունքի վրա:

Մազդակյան շարժումը առանձնակի ուժգնության հասավ V դարի վերջին: Կավադ Ա–ը (488–531 թթ.) մի որոշ ժամանակ խրախուսում էր մազդակյաններին՝ հույս ունենալով նրանց օգնությամբ թուլացնել ավատատիրական ավագանուն և տոհմիկ ազնվականությանը, սահմանափակել արքունիքում գոյություն ունեցող ընդդիմության ազդեցությունը և սանձահարել մոգերին ու մոգպետներին, որոնց միջամտությունը պետական գործերին անցել էր ամեն չափ ու սահման: Սակայն ազնվականության ու հզոր քրմական դասի ճնշման ներքո ի վերջո Կավադ Ա–ը հրաժարվեց իր այդ քաղաքականությունից: 528 թ. մոգպետների կողմից Մազդակը հայտարարվեց հերձվածող ու ձերբակալվեց: 529 թ. նա իր հետևորդներից շատերի հետ սպանվեց: VI դարի 30–ական թվականներին մազդակյան շարժումը վերջնականապես ջախջախվեց:

Խոսրով Ա Անուշիրվանի (531–579 թթ.) օրոք Սասանյան պետությունն ապրում էր իր նոր վերելքի ժամանակաշրջանը՝ հասնելով ծաղկման գագաթնակետին: Դրան նշանակալիորեն նպաստել էին նրա իրականացրած ռազմավարչական և հարկային բարեփոխումները: Սակայն նրա օրոք ևս քրիստոնյաների նկատմամբ կրոնական հալածանքները շարունակվում էին: Անշուշտ սխալ կլիներ շահնշահի այդ քաղաքականությունը բացատրել նրա կրոնական մոլեռանդությամբ: Հարցը քաղաքական էր: Պարսից արքունիքում քրիստոնեական կրոնին պատկանելությունը շարունակում էր ընկալվել իբրև Սասանյանների ախոյան Բյուզանդիայի հետ դաշնակցություն, ինչը անհանդուրժելի էր ընթացող պարսկա–բյուզանդական պատերազմի պայմաններում:

Խոսրով Անուշիրվանը միաժամանակ աշխատում էր թուլացնել նաև զրադաշտական մոգերի, ինչպես նաև տոհմիկ ազնվականության այն մասի տնտեսական ու քաղաքական դիրքերը, որոնք աշխատում էին սահմանափակել թագավորի իշխանությունը:

Սասանյանների արտաքին քաղաքականությունը մեծ ակտիվության հասավ Խոսրով Ա Անուշիրվանի (531–579 թթ.) օրոք: Վերջինիս հաջողվեց արևելքում կործանիչ հարված հասցնել հեփթաղ–էֆթալիթների հզորությանը և վերանվաճել նախկինում կորցրած տարածքները: Թյուրքական ցեղերը, որոնք միավորվել էին VI դարի կեսերին, դարձան Իրանի անմիջական հարևաններ՝ նոր սպառնալիք ստեղծելով Սասանյանների համար:

561 թ. Խոսրով Ա–ի և բյուզանդական Հուստինիանոս Ա կայսեր միջև կնքված «Հավերժական խաղաղությունը» տևեց ընդամենը տասը տարի: Խոսրով Բ Փարվեզի (591–628 թթ.) օրոք 591 թ. կնքված հաշտության պայմանագիրը ևս, որով վերջ էր տրվում պարսկա–բյուզանդական 20–ամյա պատերազմին, այդ երկու ախոյանների միջև թշնամական առճակատմանը լուծում չտվեց: Դրանից հետո էլ առերևույթ բարեկամական հարաբերությունների հետևում նրանց միջև առկա էին խոր հակասություններ:

Խոսրով Բ Փարվեզի («հաղթական») (590–628 թթ.) ժամանակաշրջանը նշանավորվեց Իրանի պաշտոնական շրջանների կրոնական մեծ հանդուրժողականությամբ: Դրա հիմքում ընկած էր քրիստոնյաներին Բյուզանդական կայսրության ազդեցությունից ձերբազատելու քաղաքական շահը: Պարսկական դիվանագիտությունը փայլուն կերպով օգտագործեց միաբնակ և երկաբնակ ուղղություններին հետևող եկեղեցիների դավանաբանական անհաշտ վեճերն ու առճակատումը: Վերջին՝ ամենախոշոր պարսկա–բյուզանդական պատերազմը տևեց քառորդ դար և ավարտվեց 628 թ.: Սասանյան զորքերը հասան մինչև Բոսֆորի ափերը և փորձեցին գրոհով վերցնել Բյուզանդիոնը (Կոստանդնուպոլիսը), որը, սակայն, նրանց չհաջողվեց: Դրանից հետո Բյուզանդիան անցավ հակահարձակման, որի հետևանքով Սասանյան բանակը կրեց աղետալի պարտություն: 628 թ. կողմերի միջև կնքվեց հերթական «հավերժական խաղաղությունը», որի շնորհիվ Բյուզանդիան վերադարձրեց իր բոլոր կորցրած տարածքները:

Խոսրով Բ Փարվեզից հետո Սասանյան պետությունը գտնվում էր քաղաքական անկայունության վիճակում: Շահնշահերը փոխարինում էին մեկը մյուսին՝ չկարողանալով տևական ժամանակ հաստատվել գահի վրա:

Սասանյանների վերջին շահնշահ Հազկերտ Գ-ը (632-651 թթ.) թեև փորձեց նորից համախմբել պետությունը, սակայն թուլացած ու տրոհված երբեմնի հզոր կայսրությունն այլևս ի վիճակի չէր դիմագրավելու արաբական ապագա արշավանքի հուժկու ճնշմանը:

Սասանյաններն իրենց տիրապետության ողջ ընթացքում վարում էին ռազմաշունչ արտաքին քաղաքականություն: Իրանի հյուսիսում և հյուսիսարևելյան շրջաններում նրանց համար մեծ վտանգ, հետևաբար և ուժերի լարվածություն էր պահանջում այն հորդաների դեմ պայքարը, որոնք միավորված էին *հոներ* հավաքական անվան տակ:

Արևմուտքում Սասանյանների հիմնական ախոյանը Հռոմն էր, իսկ ավելի ուշ՝ Բյուզանդիան, որոնց դեմ նա իր գոյության ողջ ընթացքում մղում էր դաժան ու անզիջում պայքար: Սասանյանների մեծագույն նպատակներից մեկն էր իրենց սահմանները հասցնել մինչև Սև և Միջերկրական ծովերի ափերը և հսկողություն սահմանել Արևելքը Արևմուտքի հետ կապող «Մետաքսի ճանապարհի» և միջազգային առևտրի կարևորագույն ուղիների վրա: Նրանք փառասիրություն ունեին տիրելու Հռոմեական կայսրության ամբողջ ասիական մասին: Սակայն առաջնահերթ խնդիրը Միջագետքին, որը Մովսես Խորենացին անվանում է «գահանիստ երկիր», ինչպես նաև Սիրիային, Հայաստանին և Անդրկովկասին տիրելն էր:

Արևելքում ևս ռազմաշունչ քոչվորական ցեղերի դեմ պայքարը պահանջում էր ուժերի մեծ լարում: Նույնիսկ Խոսրով Փարվեզի կառավարման շրջանում, երբ Սասանյան պետությունը դեռևս վերելքի մեջ էր, նրան այնուամենայնիվ չէր հաջողվում ընկճել երկրի արևելյան երկրամասերն ասպատակող ցեղերին:

Այդ բոլորով հանդերձ՝ VII դարի սկզբին Սասանյան Իրանը վերածվել էր մի վիթխարի կայսրության: Նրա տարածքը կազմում էր 2,9 միլիոն քառակուսի կիլոմետր, իսկ բնակչությունը՝ 30 միլիոն մարդ:

Սակայն վերջին Սասանյանների օրոք շահնշահերի գահը խաղալիք էր դարձել ազնվականության տարբեր խմբավորումների միջև մղված պայքարի ընթացքում, որոնք մշտապես հրահրում էին արյունոտ սադրանքներ, ներքին պատերազմներ և իրենց քմահաճույքով մեկ արքային փոխարինում էին մյուսով:

3. ՀԱՅ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ III-VII ԴԱՐԵՐՈՒՄ

Սասանյանների քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկն էր պարթևներին Հայաստանից դուրս մղելը և այդ երկիրը Սասանյան շահերի հետ սերտ կապերով կապելը: Ուստի դեռևս Սասանյան առաջին արքա Արտաշիր Ա Պապականը շեշտված թշնամական դիրքորոշում էր որդեգրել Հայաստանի նկատմամբ, որովհետև նախ՝ այն իր ոխերիմ թշնամի Արշակունիների երկրորդ թագավորությունն էր և ապա՝ դառնում էր այդ դինաստիայի հալածական անդամների ապաստան: Հայ Արշակունիներն իրենց հերթին Սասանյաններին համարում էին դինաստիական հակառակորդներ: Հայոց արքա Խոսրով Մեծը Արտավան Ե-ի պարտությունից հետո քանիցս արշավել է Սասանյանների դեմ և շուրջ տասը տարի պայքարել պարթև Արշակունիների տիրապետությունը վերականգնելու համար:

Այսպիսով՝ Սասանյանների իշխանության գալով Հայաստանի համար ստեղծվում էր միանգամայն նոր վիճակ, ավելի ճիշտ՝ փոխվում էր նրա պատմության ընթացքը: Եթե պարթևների ժամանակ Հայաստանն ապրում էր Պարսկաստանի քաղաքական-մշակութային շահերով, ապա Սասանյանների ժամանակ, ընդհակառակը, ջանքեր էր գործադրում նրանից քաղաքականապես անջատվելու համար:

244 թ. կնքված պարսկա-հռոմեական խաղաղության պայմանագրի համաձայն՝ Հայաստանի պարսկական մասը մտավ Երանշահիր կազմի մեջ՝ դառնալով նրա մեջ մտնող ոչիրանական («Ան-Էրան») երկրներից մեկը: 253 թ. պարսկա-հռոմեական համաձայնագրով Հայաստանի մեծագույն մասն անցնում էր պարսիկներին, իսկ մնացյալ փոքր մասի վրա Սասանյանները ճանաչեցին կայսրության իրավասությունը:

Սակայն Շապուհ Ա արքայի նվիրական իղձն էր նաև Հայաստանի հռոմեական մասի բռնազավթումը:

260 թ.՝ Վալերիանոսի նկատմամբ տարած հաղթանակից հետո, Սասանյանները որոշեցին Հայաստանի պարսկական մասում վերացնել հայ Արշակունիների իշխանությունը: Մոտ 261 թ. Հայաստանի թագավոր Արտավազդ Ե-ն գահընկեց արվեց և սպանվեց: Դրանով ավարտվեց հայ Արշակունիների գահակալությունը Հայաստանի պարսկական մասում: Հայաստանը հայտարարվեց Սասանյան դինաստիայի դաստակերտ և արքայից արքայի ժառանգական «դոմեն»: Դրանով Սասանյաններն իրագործեցին իրենց վաղեմի քաղաքական ծրագիրը: Այսուհետև նրանց խնդիրն էր Հայաստանում իրագործել զրադաշտականությունը արմատավորելու քաղաքականություն:

276 թ. Սասանյանները պարսկական գահաժառանգներից մեկին՝ Ներսեհին, շնորհեցին «հայերի մեծ արքա» տիտղոս և ուղարկելով Հայաստան՝ բազմեցրին հայկական գահին: «Պարսկական Հայաստանը» դարձավ Սասանյան պետության ամենակարևոր թագավորությունը, որովհետև այն իրենից ներկայացնում էր Հռոմի դեմ Իրանի մղած պայքարում անփոխարինելի և առաջնակարգ կարևորություն ունեցող հենակետ: Այստեղից էին ճանապարհները բացվում դեպի արևելահռոմեական պրովինցիաները: Պատահական չէ, որ այսուհետև Հայաստանում էին կենտրոնացվում Իրանի հիմնական ռազմական ուժերը:

301 թ. քրիստոնեությունը Հայաստանում ճանաչվեց որպես պաշտոնական պետական կրոն: Հայաստանի քրիստոնեացումը անխուսափելիորեն նրան կապում էր Հռոմի հետ՝ մի նոր վիհ բացելով Սասանյան Իրանի և Հայաստանի միջև: Որպես դրա հետևանք՝ երկրում տեղի ունեցավ պառակտում. ազնվականության մի մասը հարեց կայսրությանը, մյուս մասը կողմնորոշվում էր դեպի Իրան: Մինչդեռ Տիզբոնի

նպատակն էր Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը: Սասանյանների հակաքրիստոնեական քաղաքականությունը Հայաստանում տարվում էր ոչ միայն այն նպատակով, որ եկեղեցին դիտվում էր երկրում իբրև Սասանյանների թշնամի՝ Բյուզանդիայի բարեկամ, այլև նրա համար, որ այն մի կազմակերպություն էր, որն Արշակունիների անկումից հետո համարվում էր երկրի կենտրոնաձիգ ուժերը պահպանող զորեղ գործոն: Առհասարակ Սասանյանները իրենց պետության մեջ գոյություն ունեցող քրիստոնեական եկեղեցիները համարում էին հակապետական կազմակերպություններ՝ գտնելով, որ դրանք անհրաժեշտ է վերացնել:

363 թ. կնքված պարսկա-հռոմեական, այսպես կոչված, «ամոթալի» հաշտությամբ Հռոմի դաշնակից Հայաստանը թողնվում է բախտի քմահաճույքին: Կայսր Հովիանոսը խոստանում էր չօգնել Հայոց թագավոր Արշակ Բ-ին, եթե Սասանյանները պատերազմ սկսեին նրա դեմ:

371 թ. պարսկական զորքերը ասպատակում են Հայաստանը և բազմահազար գերիներ տանում Պարսկաստան: Սակայն՝ Տիզբոնի հայ Արշակունիների թագավորությունը վերացնելու ծրագրերը կրկին տապալվում են: Շապուհը ստիպված էր Պապին ճանաչել որպես Հայաստանի թագավոր: Վերջինս, ի շահ իր պետության անկախության, ձգտում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանելու ոչ միայն Կոստանդնուպոլսի, այլև Տիզբոնի հետ: Նրան հաջողվեց ամրապնդել նաև Հայոց եկեղեցու կատարյալ ինքնուրույնությունը: Նրա այդ քաղաքականությունը առաջացրեց Բյուզանդիայի մեծ դժգոհությունը, և 374 թ. Պապը դավաճանաբար սպանվեց:

Սասանյան պետությունը 384 թ. Կոստանդնուպոլիս է ուղարկում մի դեսպանություն, որին հանձնարարված էր արքայից արքա Շապուհ Գ-ի (383–388 թթ.) անունից առաջարկություն անել խաղաղություն կնքելու և Հայաստանը բաժանելու մասին: Պարսկա-հռոմեական բանակցությունները հաջող ավարտ ունեցան, և 387 թ. կնքվեց պայմանագիր, որով թուլացած Հայաստանը բաժանվում էր երկու պետությունների միջև: Հայաստանի արևմտյան մասն անցնում էր Բյուզանդիային, իսկ արևելյանը՝ Սասանյան Իրանին: Ղազար Փարպեցին նշում է, որ այս բաժանումով «Հայոց երկրի մեծ մասը՝ լավը, պիտանին ու արգավանդը, պարսից արքայի բաժնի մեջ ընկավ»: Սասանյան Իրանին բաժին ընկած տարածքը համարյա չորս անգամ մեծ էր Արևմտյան՝ Բյուզանդական կայսրությանն անցած մասից: Մեծ Հայքը որպես միասնական պետություն դադարեց գոյություն ունենալուց: Հայաստանի արևմտյան մասում 391 թ. Արշակունիների իշխանությունը վերացավ: Այդ բաժանումից հետո Մեծ Հայքի կենտրոնացված պետության միասնական տարածքը, որը գոյություն էր ունեցել գրեթե վեց հարյուրամյակ, հետագայում չվերականգնվեց: Նախարարական Հայաստանը դառնում էր Սասանյան պետության վարչական միավորումներից մեկը:

421–422 թթ. բռնկվեց պարսկա-բյուզանդական հերթական պատերազմը, որի հիմնական պատճառը Վերին Միջագետքին և Հայաստանի հարավարևմտյան երկրամասերին տիրելու ձգտումն էր: Այդ պատերազմը հույսեր ներշնչեց հայ հայրենասերներին, որ հնարավոր կլինի ազատվել օտար տիրապետությունից: Հայաստանում ծավալվեց բուռն ապստամբական շարժում:

Հազկերտ Բ-ի (439–457 թթ.) օրոք Հայաստանի վիճակը խիստ վատթարացավ: Նա հատուկ հրովարտակով հրամայեց զորք հավաքել ենթակա քրիստոնյա երկրներից և, առաջին հերթին, Հայաստանից: Դա Սասանյանների համար նաև այն նշանակությունն ուներ, որ նրանք Հայաստանը զրկում էին տեղական ռազմական ուժերից: Բացի այդ, պարսկական արքունիքի ներկայացուցիչ Դենշապուհը Հայաստանում անցկացրեց աշխարհագիր, որի հետևանքով հարկային լուծը խիստ ծանրացավ: Այդ քաղաքականության գաղտնի նպատակն էր տնտեսական ճնշմամբ ստիպել ազգաբնակչությանն ընդունել զրադաշտականությունը: Հայաստանի ներքին ինքնավարությանը վերջ տալու համար Հազկերտ Բ-ը առհասարակ վարում էր հայկական նախարարական ուժերը ջլատելու քաղաքականություն:

Տիզբոնում Հայաստանը դիտվում էր որպես Մերձավոր Արևելքի քրիստոնեության միջնաբերդ-պատվարը: Սասանյան արքունիքին մշտապես անհանգստություն էր պատճառում նաև Հայաստանի և Բյուզանդիայի միջև դաշինքի հավանականությունը: Սասանյան մայրաքաղաքում ենթադրում էին, որ Հայաստանը հնազանդեցնելուց հետո այլևս դժվարություն չէր ներկայացնի Վրաստանը և Աղվանքը նույնպես ենթարկել Իրանին:

428 թ. Սասանյանները Հայաստանում վերացրին հայ Արշակունիների թագավորությունը և ենթարկեցին Իրանի ուղղակի կառավարմանը: Հայաստանում սահմանվեց մարզպանական կառավարում: Օրըստօրե ուժեղացող Սասանյանների կրոնական և հարկային քաղաքականությունը 450–451 թթ. Հայաստանում առաջ բերեց ապստամբություն: Հիրավի, 451 թ. Վարդանանց պատերազմը օտար նվաճողների դեմ հայ ժողովրդի պայքարի հերոսական դրվագներից մեկն էր: Թեև այն ավարտվեց ապստամբների պարտությամբ, սակայն Հայաստանը պահպանեց իր ինքնավար գոյությունը և քրիստոնեությունը դավանելու իրավունքը:

481–484 թթ. Այսրկովկասում՝ Հայաստանում Վահան Մամիկոնյանի, Վրաստանում (Քարթլի) Վախթանգ Գորգասալի և Աղվանքում ազնվականության կողմից բարձրացված հակաՍասանյան ապստամբության հետևանքով ձախողվեցին Տիզբոնի փայփայած հեռահար ծրագրերը: Այդ ապստամբությունը ստիպեց Իրանին ավելի շատ հաշվի նստել Անդրկովկասի ազնվականության հետ և նույնիսկ մարզպաններ նշանակել նրանց միջավայրից:

484 թ. պատերազմներից թուլացած Սասանյան Իրանը ստիպված էր Նվարսակ գյուղում Հայաստանի հետ կնքել պայմանագիր՝ երաշխավորելով նրա ինքնուրույնությունը և խոստանալով ոտնձգություն չկատարել հայերի քրիստոնեական (միաբնակ) դավանանքի նկատմամբ, անխախտ պահպանել Հայաստանում հաստատված նախարարական կարգերը և հարգել տոհմիկ ազնվականների իրավունքներն ու արտոնությունները: Միաժամանակ նա բուն Իրանում ճանաչեց նեստորական ուղղության քրիստոնեական եկեղեցին:

Սակայն անտեսելով Նվարսակի պայմանագիրը՝ Հայաստանի Սասանյան մարզպանը ծանրացնում է հարկերն ու տուրքերը և ամեն կերպ ձգտում վերացնելու մարզպանական Հայաստանի ներքին ինքնավարությունը: Սասանյանները Հայաստանի նկատմամբ կրկին վարում են կրոնական անհանդուրժողականության քաղաքականություն: Խոսրով Ա Անուշիրվան արքան մոգերի դրդմամբ հրամայում է զրադաշտական կրոնափոխման ենթարկել իր բոլոր հպատակներին, առաջին հերթին՝ հայերին: Պարսկական արքունիքի այդ քաղաքականությունը 571–572 թթ. Հայաստանում առաջ է բերում ազատագրական շարժման նոր պոռթկում: 572 թ. հայոց նախարարները Կարմիր Վարդանի գլխավորությամբ ապստամբություն են բարձրացնում Սասանյան Պարսկաստանի դեմ: Այդ շարժումը խրախուսվում էր բյուզանդական արքունիքի կողմից: 573 թ. պարսկական 20 000–անոց բանակի գլուխ անցած Հայաստան է արշավում նշանավոր զորավար Միհրան Միհրևանդակը (Բահրամ Չուբին)՝ ունենալով թագավորի հրամանը՝ Հայաստանում սրի քաշել բոլոր տղամարդկանց, իսկ երկիրը հիմնովին ամայացնել: Պարսիկների անօրինակ դաժանություններից սարսափած՝ շատ հայեր թաքնվում են անառիկ ամրություններում կամ փախչում հեռավոր վայրեր: Պարսիկները 577 թ. նորից գրավում են մարզպանական Հայաստանը:

591 թ. Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև կնքված հաշտության պայմանագրով վերջ է տրվում պարսկա–բյուզանդական 20–ամյա պատերազմին: Հայաստանում գծվում է երկու տերությունների նոր սահմանագիծ: Իրանը հարկադրված էր Բյուզանդիային զիջել Հայաստանի նշանակալից մասը: Հայ ազնվականությունը չհանդուրժեց Հայաստանը վարչականորեն Բյուզանդիայի հետ ձուլելու՝ Մորիկ կայսեր քաղաքականությունը և բարձրացրեց հակաբյուզանդական ապստամբություն:

Հարկ է նշել, որ բուն Իրանում ևս, IV դարի 30–ական թվականներից սկսած, տեղի էին ունենում այլադավանների, հատկապես քրիստոնյաների նկատմամբ արյունոտ հալածանքներ: Սակայն Իրանում ասորական եկեղեցին 484 թ. ընդունեց նեստորական դավանանքը (որը Բյուզանդիայում ճանաչվել էր որպես հերձված) և խզեց իր կապերը բյուզանդական ուղղափառ եկեղեցուց: Հենց այդ ժամանակաշրջանից սկսած՝ քրիստոնյաների նկատմամբ հալածանքներ կազմակերպելու քաղաքական շարժառիթները վերանում են, և քրիստոնեական երկու դավանանքները՝ նեստորականը և մոնոֆիզիթը (միաբնակ), ստանում են լեգալ գոյության իրավունք: Այս իրադարձությունը ունեցավ քաղաքական կարևոր նշանակություն: Խոսրով Բ Փարվեզ արքայի հրամանով 615/616 թթ. Տիզբոնում գումարվում է նվաճված երկրների քրիստոնեական եկեղեցիների ժողով՝ դավանական վեճերը «կարգավորելու» նշանաբանով: Ըստ Սեբեոսի՝ Հայաստանից այդ ժողովին ներկա էին Կոմիտաս Մամիկոնյան և Մատթեոս Ամատունի եպիսկոպոսները: Իսկ Խոսրով Փարվեզի կողմից ժողովում վերահսկողներ էին նշանակված Սմբատ Բագրատունին և արքունի բժշկապետ Գաբրիելը: Այդ ժողովի հանրագումարում Խոսրովը հրաման է արձակում. «Եթե ամենայն քրիստոնեայք, որ ընդ իմով իշխանութեամբսն են՝ հաւատ զհայոցն կալցին»: Դա նշանակում էր, որ արքայից արքան հովանավորում է միաբնակ ուղղության քրիստոնեության հետևորդներին, որոնք կրոնաքաղաքական սուր առճակատման մեջ էին բյուզանդական պաշտոնական եկեղեցու հետևորդների՝ երկաբնակների հետ: Սասանյանների տիրապետության վերջին շրջանում տեղի է ունենում միաբնակ քրիստոնեության աճ, հիմնականում ի հաշիվ նեստորականության:

Անկասկած, Սասանյան Իրանի «զիջող» քաղաքականությունը Հայոց եկեղեցու հանդեպ, որը դարեր շարունակ ենթարկվել էր հալածանքների, վկայում էր այն մասին, որ Սասանյան պետությունը հայտնվել էր խոր քաղաքական, սոցիալ–տնտեսական և գաղափարական ճգնաժամի վիճակում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԻՐԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

1. ԻՐԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ԱՐԱԲՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

VII դարի սկզբին Իրանը ծվատվում էր ներքին հակասություններից: Երկրի կենտրոնախույս ուժերը, մասնավորապես ռազմական ու քրմական ազնվականության վերնախավը, այլևս հաշվի չնստելով կենտրոնական կառավարության հետ, բացահայտ ձևով դրսևորում էին անկախության ու ինքնագլխության ձգտումներ: Պետության միասնությունը խաթարվել էր:

Վերջին անհաջող պատերազմը Բյուզանդիայի դեմ (604–628 թթ.) ռազմական, քաղաքական ու տնտեսական առումով թուլացրեց Իրանը՝ խարխլելով նրա հիմքերը: Իշխանության համար տարբեր խմբավորումների միջև անզիջում պայքարն էլ ավելի էր արագացնում պետության վայրէջքը: Սասանյանների համար առավել վտանգավոր դարձան արաբական ցեղերի նվաճումները, որոնք միավորվել էին նոր կրոնի՝ իսլամի հենքի վրա: Արտաքին զավթումները և նվաճողականությունը դարձան արաբական մահմեդական պետության քաղաքականության անբաժանելի մասը: Արաբները իրենց զավթողական պատերազմները մղում էին «անհավատների» դեմ «ջիհադի»՝ «սրբազան պատերազմի» նշանաբանի ներքո հանուն իսլամի հաղթանակի:

Սասանյան վերջին արքա Հազկերտ Գ–ի (632–651 թթ.) կառավարման հենց սկզբից ծայր առան Արաբական խալիֆայության ներխուժումները Սասանյան պետության տարածք: Սակայն դրանք դեռևս կրում էին ասպատակության բնույթ: Ուստի VII դարի 20–ական թվականներին և 30–ական թվականների սկզբին ոչ ոք չէր ենթադրում, որ Իրանի անկախության համար լուրջ վտանգ կարող է ստեղծվել ոչ թե Բյուզանդիայի կամ Միջին Ասիայի թյուրքերի կողմից, այլ Արաբիայի անապատներում ապրող քոչվոր բեդվիններից, առավել ևս, որ Սասանյանները նրանց լուրջ հակառակորդ չէին համարում:

Իրանի նկատմամբ արաբական հզոր արշավանքի նախերգանք հանդիսացավ Միջագետքում Զու Քարեի մոտ 604 կամ 605 թ. տեղի ունեցած ճակատամարտը, երբ մի քանի հազար արաբ բեդվիններ գլխովին ջախջախեցին պարսկական երկրապահ զորքերին: Սասանյան կառավարող վերնախավը, սակայն, պատշաճ գնահատական չտվեց իսլամի ռազմական նվաճողականության այդ առաջին լուրջ քայլին, և որևէ միջոցառում չձեռնարկվեց նոր հարձակման վտանգը կանխելու համար: Թերևս խանգարում էր Իրանում առկա վերին աստիճանի բարդ ներքին իրադրությունը՝ Սասանյան վերնախավի շրջանում առկա անջատողական տրամադրությունները, երկպառակությունները, արտաքին քաղաքականության բնագավառում ոչ բարենպաստ զարգացումները և այլն:

VII դարի առաջին քառորդին արդեն իր ավարտին էր հասնում Արաբիայի քաղաքական միավորումը իսլամի դրոշի ներքո: Նորաստեղծ պետությունն անսքող կերպով դրսևորում էր ռազմաշունչ աշխարհակալական տրամադրություններ: Քոչվորական կյանքն արաբներին դարձրել էր պատրաստի զինվորներ: Բոլոր բեդվին տղամարդիկ ռազմիկներ էին, որոնք միջցեղային կռիվների ժամանակ ձեռք էին բերել ոչ միայն ռազմական փորձ, այլև հաղթանակի հասնելու կամք ու հաստատակամություն:

Արաբների առավելությունն իրենց հակառակորդների՝ Բյուզանդիայի և Իրանի նկատմամբ այն էր, որ այդ երկրները ծվատվում էին ներքին հակասությունների մեջ, մինչդեռ արաբների մոտ սոցիալական հակասությունները դեռևս համեմատաբար թույլ էին արտահայտված:

Իսլամը արաբական վերնախավի կողմից օգտագործվեց նվաճողական պատերազմներ մղելու համար: 631 թ. արաբական մի խումբ ցեղեր, որոնք համախմբված էին ռաբի՛ա ընդհանուր անվան տակ, ներխուժեցին Սասանյան Միջագետք: Տեղի ունեցած ընդհարումների ժամանակ արաբների հրամանատար Մուսաննա իբն Հարիսը համոզվել էր, որ պարսիկները թույլ են, և նամակով դիմել էր խալիֆա Աբու Բաքրին՝ ռազմական օգնություն խնդրելով Սասանյանների դեմ լայնամասշտաբ գործողություններ ծավալելու համար: 633 թ. գարնանը Քուվեյթի տարածքում գտնվող Ալ Քավազիմ (Քազիմ) կոչված վայրում արաբները կրկին հաղթանակ տարան Սասանյան զորքերի նկատմամբ: Այդ ճակատամարտը հայտնի է «շղթաների ճակատամարտ» անունով, որովհետև առաջին շարքերում պարսիկ զինվորները մեկը մյուսի հետ կապված էին շղթաներով, որպեսզի չկարողանան փախուստի չդիմել: Այդ հաղթանակը մուսուլմանների համար ճանապարհ բացեց դեպի Միջագետք (Իրաք): 633 թ. ապրիլ–մայիսին արաբները կրկին հաղթանակ տարան մայրաքաղաք Տիզբոնից իրենց դեմ ուղարկված մեծաթիվ զորքերի նկատմամբ: Այդ հաղթանակի համար արաբների հրամանատար Խալիդ իբն ալ–Վալիդը ստացավ «Ալլահի սուր» պատվանունը: Եվս մի հաղթանակ տանելով այսպես կոչված «արյան գետի» ճակատամարտում՝ արաբները շարժվեցին Հիրա քաղաքի վրա, որը Եփրատից արևմուտք Սասանյան պետության հիմնական հենակետն էր: Այնուհետև նրանք 633 թ. մայիսին մի նոր հաղթանակ տարան Ուլլեյսի մոտ:

Այդ հարվածներից շփոթահար Սասանյանները մի պահ կարողացան վերախմբավորել իրենց ուժերը, և 634 թ. նոյեմբերին պարսիկ փառաբանված զորավար Ռոստամ Ֆարոխզադը այսպես կոչված «Կամուրջի մոտ» (Եփրատի վրա) տեղի ունեցած ճակատամարտում կարողացավ արաբներին ծանր պարտության մատնել: Սակայն դա ժամանակավոր հաջողություն էր: Դրան հետևեց Քուվեյթի մոտ տեղի ունեցած ճակատամարտը, որտեղ պարսկական զորախումբը ամբողջովին ոչնչացվեց:

Արաբները դեսպաններ ուղարկեցին պարսիկների մոտ՝ առաջարկելով ընդունել իսլամը և դառնալ իրենց հարկատուն: Այդ առաջարկը կտրուկ մերժվեց, որովհետև Սասանյան ազնվականությունը չէր պատկերացնում, որ ինքը կարող է դառնալ հետամնաց ու կիսաաղքատ արաբների հարկատուն:

637 թ. հունիսին Եփրատից հարավ-արևելք՝ Սիրիական անապատի հենց սահմանին՝ Հիրայի մոտ՝ Կադիսի (Կադիսիա) կոչված վայրում, տեղի ունեցավ դաժան ու արյունահեղ մի ճակատամարտ, որը տևեց չորս օր: Այդ ճակատամարտում պարսկական զորքերի մաս էին կազմում նաև մի շարք հայ նախարարների զորամիավորումներ՝ Սյունյաց Գրիգոր իշխանի և Մուշեղ Մամիկոնյանի գլխավորությամբ: Լավ զինված և թվական նշանակալից առավելություն ունեցող պարսկական բանակը, որն ուներ նաև երեսուներկու մարտական փղեր, աղետալի պարտություն կրեց: Ճակատամարտում զոհվեց նաև իրանապահբատ (ողջ իրանական բանակի հրամանատար) Ռոստամ Ֆարոխզադը: Որպես ռազմական ավար՝ արաբների ձեռքն ընկավ Սասանյան Իրանի նշանավոր Քավեի մարտական դրոշը («դարաֆշի Քավեյանի»). այն, ըստ ավանդության, որպես ապստամբության դրոշ հին ժամանակներում առասպելական հերոս դարբին Քավեհը բարձրացրել էր չար թագավոր Զոհակի դեմ:

Կադիսիի մոտ կրած պարտության հետևանքները հսկայական էին Իրանի համար: Նախ՝ Սասանյանները կորցրին ողջ Միջագետքը: Այնուհետև՝ զավթիչների առջև ճանապարհն արդեն բաց էր դեպի Տիգրոն, քանի որ փախուստի դիմած և ցիրուցան եղած Սասանյան զորքերը անզոր էին պաշտպանելու դեպի մայրաքաղաք տանող ճանապարհը: Ճիշտ է, մայրաքաղաքի ճանապարհին արաբները դիմադրության հանդիպեցին, սակայն հաղթահարելով այդ դիմադրությունը՝ արաբական աշխարհազորը մեկը մյուսի հետևից գրավում էր Սասանյանների ամրոցները, ընդ որում՝ դրանց մի մասը՝ «խաղաղ ճանապարհով», քանի որ դրանք հանձնվում էին առանց դիմադրության:

Երբ Կադիսիի մոտ տեղի ունեցած պարտության լուրը հասավ Տիգրոն, խուճապի մատնված Հազկերտ Գ-ը և նրա արքունիքը հապշտապ լքեցին մայրաքաղաքը և փախան Զագրոսյան լեռներ:

637 թ. հունիսին լքված Մադաինը (այդպես էին արաբներն անվանում Տիգրոնը) գրավվեց հաղթողների կողմից, կողոպտվեց և հրդեհի մատնվեց: Այն, հիմնահատակ քանդվելով, այլևս երբեք չվերականգնվեց:

Քաղաքում և նրա շրջակայքում եղած բնակչության մի մասը կոտորվեց, մյուս մասը քշվեց ստրկության:

Մայրաքաղաքի գրավումը Իրանի ողջ բնակչության վրա թողեց ծանր ու ճնշող տպավորություն: Հազկերտ Գ-ի շրջապատն անում էր հնարավոր ամեն ինչ, որպեսզի նոր զորահավաք կատարի և արաբներին տա վճռական ճակատամարտ: Սակայն դա հնարավոր չեղավ ներքին տարաձայնությունների, զինվորական ազնվականության անջատողական տրամադրությունների և այլ պատճառներով:

637 թ. վերջին Տիգրիսից արևելք ընկած Ջալուլա վայրի մոտ ձեռք բերելով հերթական հաղթանակը՝ արաբները 638 թ. ներխուժեցին Խուզիստան (Բեթ-Խուզայե), որը հայկական աղբյուրներում անվանվում է Խուժաստան: Արաբական զորքերը համեմատաբար հեշտությամբ գրավեցին այդ երկրամասը, քանի որ տեղի արաբ բնակչությունն անցավ խալիֆայի բանակի կողմը: Շուշթարը գրավելիս մարզպան Հորմուզդանը իսլամն ընդունելու գնով պահպանեց իր կյանքը, իսկ խաղաղ բնակչության մեծ մասը սրի քաշվեց: Արաբների հաղթարշավը Իրանում շարունակվում էր: 639-641 թթ. նրանք նվաճեցին Ատրպատականը, 643 թ.՝ Սասանյան պետության լեռնային մասը՝ «Մարաց աշխարհը», որտեղից մտան Արտազ:

Արաբ նվաճողները հատկապես ուժգին դիմադրության հանդիպեցին մերձկասպյան շրջաններում՝ Թաբարիստանում, Դեյլեմում և Գիլանում, որտեղ բնակչությունը տևական ժամանակ չէր հանձնվում զավթիչներին՝ վարելով համարյա ինքնուրույն քաղաքական կյանք: Իսկ Գիլանի լեռնային մասը՝ Դեյլեմը, արաբները այդպես էլ չկարողացան նվաճել: Մեկ այլ վայրում՝ Սիստանում և Թոհարիստանում (Բալխի շրջան), արաբների նկատմամբ դիմադրությունը շարունակվեց ընդհուպ մինչև VIII դարի սկիզբը:

642 թ. Համադանից հարավ՝ Նեհավենդ կոչված վայրում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտը որոշելու էր Իրանի հետագա ճակատագիրը: Չնայած պարսկական զորքերի անձնուրաց ու կատաղի դիմադրությանը՝ արաբները դարձյալ վճռական հաղթանակ տարան: Այդ պարտությունը Իրանի համար լուրջ հետևանքներ ունեցավ: Ճակատամարտը տանուլ էր տրված ոչ թե պետության ծայրամասերում, այլ իրանական տարածքի խորքում: Պարսիկների կրած պարտության հետևանքով մահմեդականների բանակը հայտնվեց Երանշահրի կենտրոնում: Նեհավենդի ճակատամարտից հետո Իրանի կողմից ամեն մի կազմակերպված դիմադրություն դարձավ անհնար: Երկիրը տրոհվեց բազմաթիվ մանր տիրույթների, որոնց տիրակալներին արաբալեզու աղբյուրները անվանում են դեհկաններ: Սրանցից յուրաքանչյուրը մտածում էր իր տիրույթը փրկելու մասին: 643 թ. ընկավ Համադանը, որը արաբները հենակետ դարձրին դեպի հյուսիս՝ Ատրպատական ու Հայաստան, հարավ՝ Սպահան, և հարավ-արևելք՝ Քերման արշավանքների համար: Մահմեդական բանակները այնուհետև առաջ շարժվեցին դեպի արևելք՝ գրավելով Խորասանը և հասնելով Ամու Դարյա գետի ափերը: Այնուհետև 644-645 թթ. արաբական ջոկատները Բելուջիստանի վրայով մոտեցան Հնդկաստանի սահմաններին: 644 թ. Բահրեյնից Պարսից ծոցի վրայով և ցամաքից՝ Խուզիստանից, խալիֆայի զորքերը ներխուժեցին Պարսք (Ֆարս) նահանգը՝ Սասանյանների բուն «հայրենիքը»: Պարսիկ դեհկանների աշխարհազորը Ռեյշահր (Ռև-Արդաշիր) քաղաքի մոտ փորձեց կանգնեցնել արաբների առաջխաղացումը: Դա մի կատաղի և արյունահեղ ճակատամարտ էր, որի ընթացքում արաբները մեծ կորուստների գնով հաղթանակ տարան: Ծանր մարտերով շարժվելով առաջ՝ նրանք իրար հետևից գրավում էին Ֆարսի քաղաքները: Նրանց հաջողվեց վերցնել նաև Ստահր քաղաքը, որը Սասանյան պետականության օրրանն էր: Արդեն 653-654 թթ. Ֆարսի (Պարսք) հողում հաստատ-

վեց իսլամի ռազմաքաղաքական տիրապետությունը: Սակայն Պարսքը Իրանի այն նահանգներից էր, որտեղ դժվարությամբ էին համակերպվում օտար լծի հետ: 649 թ. Ստահրում բռնկվեց հակաարաբական հուժկու ապստամբություն: Քաղաքի բնակիչները կոտորեցին արաբական կայազորի զինվորներին: Գրոհով վերցնելով քաղաքը՝ արաբները դաժան դատաստան տեսան ապստամբների հետ՝ ավերելով Ստահրը և քաղաքում ու նրա շրջակայքում սրի քաշելով քառասուն հազար տղամարդու, իսկ կանանց ու երեխաներին քշելով ստրկության:

Բոլորից լքված ու իշխանազուրկ Սասանյան արքա Հազկերտ Գ–ը, անընդհատ փախուստի դիմելով մի վայրից մյուսը, հույսեր էր փայփայում, որ իր հպատակները կաջակցեն իրեն, և կհաջողվի իրադարձությունների ընթացքի մեջ բեկում մտցնել: Սակայն դա տեղի չունեցավ: 651 թ., բոլորովին մենակ ու հուսահատ, դեռևս պատանի Հազկերտ Գ–ը սպանվում է Մերվ քաղաքում: Դրանով վերջ էր տրվում Սասանյան երբեմնի մեծ տերության քաղաքական գոյությանը: Իրանը նվաճված էր արաբների կողմից: Այն դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն պետություն:

Արաբները գրավեցին Իրանի տարածքը զենքի ուժով և բնակչության հետ հնազանդության վերաբերյալ իսլամի մեջ ընդունված «պայմանագրեր» կնքելով: Բոլոր նրանք, ովքեր հրաժարվում էին նվաճողներին կամովին հանձնվելուց, անխնա ոչնչացվում էին կամ գերվում ու վերածվում ստրուկների: Անհնազանդների վրա դրվում էին ծանր հարկեր, կամ նրանք վոնդվում էին հարազատ վայրերից, իսկ նրանց պատկանող հողերն ու գույքը բռնագրավվում էին: Արաբները անխնա ոչնչացնում էին նաև պարսիկների հետ դաշինքի մեջ գտնվող քրիստոնյա արաբներին:

Տեսակետ կա, որ Իրանի տարածքի մեծ մասը՝ համարյա երեք քառորդը, արաբների կողմից նվաճվել է «խաղաղ ճանապարհով», այսինքն՝ պայմանագրեր կնքելու միջոցով: Շատ դեպքերում Սասանյան վարչաբյուրոկրատական ապարատի և ծանր հարկապահանջության տակ կքած իրանական ժողովուրդը արաբներին դիմավորում էր որպես ազատարարների: Բացի այդ, առաջին իսկ պարտություններից հետո բարոյապես ընկճված պարսիկների մոտ այլևս միասնություն գոյություն չուներ: Ամեն մի նահանգի բնակչություն թշնամու դեմ կռվում էր լոկ իր նահանգի սահմաններում:

Հնազանդության մասին պայմանագրերը Իրանի բնակչությանը իրավունք էին տալիս ապահովելու իրենց դավանանքը, ազատությունն ու ունեցվածքը: Փոխարենը պայմանագիր կնքած բնակիչները պարտավորվում էին ճանաչել իրենց նկատմամբ արաբա–մահմեդական պետության իշխանությունը, չդավաճանել նրան, վճարել միաժամանակյա ռազմատուգանք և ապա կանոնավոր կերպով վճարել սահմանված հարկերն ու տուրքերը: Ապստամբած բնակչությունը դիտվում էր որպես պայմանագիրը խախտած կողմ, և նման դեպքում արաբները իրենց տված երաշխիքները համարում էին չեղյալ ու իրենց իրավունք էին վերապահում ստրկացնելու ապստամբ բնակչությանը:

Իրանական ազնվականության մի ստվար զանգված իրենց իրավունքները, հողերն ու կալվածքները, նյութական ու բարոյական արտոնությունները պահպանելու

նպատակով կամովին ընդունում էր իսլամը: Ընդ որում՝ Իրանի իսլամականացման գործընթացը անշրջելի էր այն պատճառով, որ իսլամի մեջ հավատուրացությունը դաժանորեն պատժվում էր:

Սկզբնական շրջանում Իրանում իսլամ էին ընդունում միայն հողային ազնվականության ներկայացուցիչները՝ դեհկանները և այլ տիրապետող տարրեր: Իսկ զանգվածորեն իսլամի ընդունումը Իրանի բնակչության կողմից կատարվեց շատ ավելի ուշ: Պետք է նկատի ունենալ, որ արաբների համար սկզբնական շրջանում կարևորը ոչ թե բնակչությանը իսլամականացնելն էր, այլ ռազմական ավարը:

Իրանը նվաճելու ընթացքում տեղական բնակչության այն մասը, որը չընդունեց նրանց կրոնը՝ իսլամը, սակայն չցանկացավ ենթարկվել օտարերկրյա նվաճողներին, գերադասեց հեռանալ հայրենիքից և տարագրվել գլխավորապես Հնդկաստան:

696 թ. խալիֆա Աբդ ալ–Մալիքը անթույլատրելի համարեց, որ արաբների կողմից գրավված Իրանում գործավարությունն իրականացվեր պահլավերենով: Արաբերենը դարձավ ոչ միայն գործավարության ու գրագրության հիմնական լեզուն, այլև ազգամիջյան հաղորդակցության, գրական ու պաշտոնական, ինչպես նաև նոր կրոնի լեզու: Իսկ պահլավերենը մնաց լոկ որպես զրադաշտական քրմության լեզու: Պարսիկները, իհարկե, շարունակում էին խոսել պարսկերեն, սակայն նրանցից շատերը տիրապետում էին նաև արաբերենին և ավելին՝ գերադասում էին գրել արաբերեն: Աստիճանաբար միջին պարսկական (պահլավական) գրականության շատ կոթողներ թարգմանվեցին արաբերենով: Արաբ նվաճողները իրանական ժողովրդին պարտադրեցին ոչ միայն իրենց կրոնը և լեզուն, այլև գիրը: Նոր պարսկերենը արաբերենից փոխ առավ հսկայական քանակությամբ արաբերեն բառեր, ինչը մեծապես նպաստեց նրա հարստացմանը: Նոր պարսկերենը՝ ֆարսին, վերածնվեց միայն IX դարի սկզբին, երբ այդ լեզվով ստեղծվեց պարսիկ ժողովրդին համաշխարհային հռչակ բերած պոեզիան: Իսլամն աստիճանաբար Իրանից դուրս մղեց զրադաշտականությունը և դաղարեցրեց քրիստոնեության հետագա տարածումն այդ երկրում:

2. ՕՄԱՅԱՆ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ

Իրանի նվաճումից հետո այդ երկիրն ընդգրկվեց Օմայան խալիֆայության կազմի մեջ՝ դառնալով նրա նահանգներից մեկը: Արաբները շատ արագ ձեռնամուխ եղան այդ նորանվաճ հսկա ու հարուստ երկրի յուրացմանը: Արաբական թերակղզուց, Միջագետքից և այլ վայրերից ծայր առավ արաբների զանգվածային արտագաղթ դեպի Իրան: Նախկին անապատաբնակ քոչվորները հաղթողի իրավունքով բռնազավթում էին հսկայական հողատարածություններ: Քաղաքներում հայտնվեցին արաբներով բնակեցված բազմաթիվ թաղամասեր: Երկրի կարևորագույն հանգուցային վայրերում ստեղծվեցին ռազմական ճամբարներ, որտեղ սովորաբար բնակվում էին խալիֆայի տեղապահները:

X դարում Իրանի մի շարք քաղաքներում արաբներն արդեն կազմում էին բնակչության մեծամասնությունը:

Արաբներն իրենց մշակութային զարգացման մակարդակով այն ժամանակ ցածր էին կանգնած իրենց կողմից նվաճված պարսիկներից: Չունենալով ոչ պետություն կառավարելու փորձ, ոչ գիտակ աստիճանավորներ՝ նրանք ստիպված էին իրենց կարիքներին հարմարեցնել Իրանում առկա քաղաքական կարգերն ու կառավարման համակարգը: Ուստի նրանք պահպանեցին Սասանյան բյուրոկրատիայի մի շարք ինստիտուտներ՝ միաժամանակ ոչնչացնելով շահնշահական իշխանության ատրիբուտները:

Արաբների կողմից իրանական աստիճանավորների օգտագործումը նոր պետական ապարատ ստեղծելու գործում իրանական հասարակության ունևոր խավերի համար ճանապարհ բացեց դեպի նոր պետության քաղաքական կյանքը, թեև, անշուշտ, որոշ սահմանափակումներով:

661 թ. հիմք դրվեց կառավարող մի դինաստիայի, որը հայտնի է Օմայան դինաստիա անունով (661–750 թթ.): Նրա մայրաքաղաքը դարձավ Դամասկոսը: Այդ հարստության կառավարման տարիներին Իրանը Օմայան խալիֆայության ուժգին կերպով հարստահարվող նահանգներից էր: Օմայան խալիֆայությունը կոպտորեն և ատելությամբ էր վերաբերվում ոչ արաբների նկատմամբ: Նկատի ունենալով Իրանում ձևավորված ժողովրդական դժգոհության շարժումը, հետևաբար նաև ապստամբությունների հնարավորությունը՝ Օմայանները սկսեցին Իրանի քաղաքներում և ռազմավարական կարևոր նշանակության վայրերում տեղավորել մեծ թվով արաբ բնակչություն: Այսպիսով՝ արաբների զանգվածային տեղափոխությունն Իրան անանախադեպ թափ ստացավ: Այդ տեղափոխվածներին («մոհաջիրներին») հատկացվում էին լավագույն հողերը և այլ արտոնություններ: Հասկանալի պատճառներով արաբների բնակեցումը Իրանում արժանանում էր տեղական բնակչության թշնամական վերաբերմունքին, թեև խոշոր հողատերերը արագորեն հաշտվում էին նվաճողների հետ, քանի որ վերջիններս պահպանում էին նրանց արտոնություններն ու հողային տիրույթները: Իրանական բնակչության այդ խավը նույնիսկ փնտրում էր մերձեցում արաբների հետ, չէր խորշում նրանց հետ ամուսնություններից և այլն:

Այդ բոլորով հանդերձ՝ Օմայանների ստեղծած քաղաքական համակարգը այնպիսին էր, որ մեծ տեղ էր տալիս նվաճված երկրների բնակչության քաղաքական անբավականությանը: Օրինակ՝ նախկին այլադավանները իսլամն ընդունելուց հետո չէին դառնում կատարելապես իրավահավասար մահմեդականներ: Նույնիսկ ծառայության մեջ մտնելով արաբական բանակի մեջ՝ պարսիկ դեհկանները չէին օգտվում արաբ զինվորների բոլոր արտոնություններից ու իրավունքներից: Քանի որ արաբների մոտ դեռևս պահպանվում էր տոհմացեղային համակարգը, ուստի ոչ արաբ ամեն մի նորաթուխ մահմեդական պարտավոր էր այնուհետև դառնալ «հաճախորդ» (արաբերեն՝ «մաուլա», հոգն. «մավալի»), այսինքն՝ այս կամ այն արաբական ցեղի կամ տոհմի անդամ:

Արաբներին փոխանցելով իրանական մշակույթի նվաճումները և պետություն կառավարելու հարուստ ավանդույթները՝ մավալիները թեև մեծ դեր էին խաղում Օմայան խալիֆայության կյանքում, սակայն պետության մեջ իրենց ունեցած դիրքը ակնհայտորեն չէր բավարարում նրանց: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ Իրանում Օմայանների տիրապետության շրջանում բնակչության հիմնական զանգվածը դեռևս չէր ընդունել մահմեդականությունը և մնում էր զրադաշտական: Բացի այդ, Իրանի քաղաքներում կային մեծ թվով քրիստոնյաներ և հուդայականներ: Ինչպես հայտնի է, ոչ մահմեդականներին՝ քրիստոնյաներին, զրադաշտականներին և հուդայականներին, որոնք դարձել էին մահմեդական պետության հպատակներ և որպես հարկատուներ վճարում էին գլխահարկ (ջիզյա, ջիզիե) ու հողային հարկ (խարաջ), արաբներն անվանում էին «զիմմիներ»: Նրանց քաղաքացիական իրավունքները, որպես «անհավատներ», էապես սահմանափակված էին, իսկ իրենք՝ զրկված քաղաքական գործունեությանը մասնակցություն ունենալու իրավունքից:

Կասկածից վեր է, որ այդ ամենը պարարտ հող էր ստեղծում այն բանի համար, որ Իրանի բնակչության հոծ զանգվածները թշնամաբար տրամադրված լինեին արաբ նվաճողների նկատմամբ: Հատկապես մեծ դժգոհություն էր առաջ բերում արաբների հախուռն բնակեցումը Իրանում: Օմայանների նկատմամբ շեշտված ընդդիմադիր կեցվածք էր որդեգրել նաև քաղաքական և կրոնական լիցք պարունակող շիական շարժումը, քանի որ Իրանի ազգային–քաղաքական շահերը նույնանում էին իսլամի այդ ուղղության սկզբունքների հետ: Պարսիկները, եթե նույնիսկ ընդունում էին իսլամը, ավելի հաճախ դառնում էին ոչ թե նրա «ուղղադավան» (սուննիական) ուղղության, այլ իսլամի «հերձվածողական»՝ շիական կամ խարիջիական ուղղությունների հետևորդներ:

Արդեն Օմայանների տիրապետության վերջին շրջանում Իրանը վերածվել էր հակաարաբական պայքարի կենտրոնի: Իրանցիների մոտ գնալով ուժեղանում էր իրանական ժողովրդին պատկանելության զգացումը: Դա հատկապես դրսևորվեց այսպես կոչված «շու'ուբիյա» շարժման մեջ, որը հակաարաբական լիցք պարունակող և իրանասեր մշակութային–քաղաքական բնույթի մի շարժում էր:

Դժգոհությունը Օմայան խալիֆայության տիրապետության նկատմամբ գնալով աճում էր ոչ միայն արաբների կողմից նվաճված պարսիկների և մյուս ժողովուրդների, այլև հենց իրենց՝ արաբների շրջանում: Արաբ խարիջիները, օրինակ, կարծում էին, որ Օմայան դինաստիայի խալիֆաները հեռացել են նախնական «մաքուր» իսլամի սկզբունքներից: Նրանց տեսակետի համաձայն՝ իսլամական պետությունը, այսինքն՝ խալիֆայությունը, պետք է կառուցվի այնպես, որ մահմեդականներն իրենցից ներկայացնեն հավասար իրավունքներ ունեցող կրոնական համայնք (ումմա):

Իր ծագմամբ թեև խարիջիական շարժումը, ինչպես և շիականությունը, զուտ արաբական երևույթ էր, սակայն արդեն VII դարում նրանց սկսեցին հարել մեծ թվով իրանցիներ:

Օմայան ընդարձակ խալիֆայության տարբեր նահանգներում ծայր են առնում ընդվզումներ, որոնց մեծ մասը թեև ուներ շեշտված քաղաքական բնույթ, սակայն ընթանում էր կրոնական քողի ներքո:

Որպես պատասխան՝ Օմայաններն ավելի ու ավելի էին ուժեղացնում նվաճված ժողովուրդների, այդ թվում նաև իրանցիների նկատմամբ ճնշումը՝ քայքայելով նրանց ուժից վեր հարկերով, ենթարկելով հալածանքների և այլն: Տնտեսական մամլիչի և քաղաքական անհանդուրժողականության ուժեղացման հետ միաժամանակ արաբները նաև ոտնահարում էին իրանցիների ազգային արժանապատվությունը՝ նրանց հետ վարվելով ինչպես ցածր մարդկանց: Որպես այդ ամենի տրամաբանական հետևանք՝ Օմայանների դեմ խուլ տրտունջներին Իրանում աստիճանաբար փոխարինելու եկան եռանդուն քարոզչությունը և անհնազանդության բռնկումները:

VIII դարի սկզբին հենց արաբական միջավայրում հայտնվեցին Օմայանների նոր հակառակորդներ, որոնք նրանց իշխանությունը համարում էին ոչ օրինական: Նրանք քարոզում էին, որ խալիֆայության նկատմամբ օրինական իրավունքներ ունի միայն Աբբասյանների ընտանիքը, որը սերել է Մուհամմեդ մարգարեի տոհմից և ազգակցական կապ ունի նրա հետ: Հետևաբար, եզրակացնում էին նրանք, Օմայաններն իրավական հիմք չունեն դառնալու խալիֆաներ, այսինքն՝ նրանց կառավարումը օրինական, լեգիտիմ չէ:

Քանի որ Աբբասյանները իրենց հակաօմայան քարոզչությունն իրականացնում էին արդարությունը և օրինականությունը վերականգնելու նշանաբանի ներքո, նրանց շուրջը սկսեցին համախմբվել Օմայաններից դժգոհ բոլոր ուժերը: Ի սկզբանե Իրանի մահմեդականները հանդես եկան որպես Աբբասյանների հենարան: Նրանք ձգտում էին վերացնելու պետությունը կառավարելու գծով արաբների մենաշնորհը: Պատկանելությունը իսլամին, այլ ոչ թե արաբական ծագումը, ահա թե ինչը պետք է ապահովեր պետության գործերին լիիրավ մասնակցությունը:

Մյուս կողմից՝ Աբբասյանները հավաստիացնում էին պարսկական մահմեդական շրջանակներին, որ իրենց հաղթանակի դեպքում նոր դինաստիան թույլ կտա, որ իրանցիները, ինչպես նաև մյուս ժողովուրդները, մուտք ունենան դեպի իշխանություն: Գյուղացիներին և քաղաքային բնակչության ստորին խավերին նրանք խոստանում էին հարկերի և տուրքերի նվազեցում:

724 թ. ձևավորվեց Աբբասյանների կողմնակիցների մի գաղտնի կազմակերպություն, որի հիմնադիրն էր Մուհամմեդ մարգարեի հորեղբայր Աբբասի ծոռ Մուհամմեդ իբն Ալին, սակայն իրական ղեկավարն էր պարսիկ հարուստ վաճառական Բուքեյր իբն Մահանը, որը խալիֆայության տարբեր նահանգներ էր ուղարկում իր քարոզիչներին (արաբ. դա'ի): Աբբասյանների քարոզչության առավել կարևոր կենտրոններ դարձան Խորասանը և Մավարաննահրը:

Խալիֆայության տարբեր շրջաններում ծայր առան ապստամբություններ, որոնք ծայրից ծայր ցնցում էին Օմայան խալիֆայությունը: Ի վերջո՝ 750 թ., ընկավ Օմայան դինաստիան, որը 90 տարի անընդմեջ կառավարեց խալիֆայությունը: Վերջին

խալիֆա Մրվան Բ–ը փախուստի դիմեց Եգիպտոս, որտեղ և սպանվեց: Իշխանության գլուխ եկավ Աբբասյանների դինաստիան (750–1258 թթ.):

Հաղթանակած Աբբասյանները դաժան հետևողականությամբ սկսեցին կոտորել Օմայաններին՝ կենդանի չթողնելով ոչ ծերերին, ոչ կանանց և ոչ էլ երեխաներին: Նրանք նույնիսկ չխորշեցին Օմայան խալիֆաներից մի քանիսի գերեզմանները ավերելուց և նրանց աճյունները պղծելուց:

Աբբասյանների տիրապետությունը չբարելավեց ժողովրդական զանգվածների վիճակը: Ընդհակառակը՝ հողային հարկի (խարաջ) և այլ հարկերի ու տուրքերի չափերը նախորդ տարիների համեմատ ավելի բարձրացան:

Իշխանությանը տիրացած Աբբասյան դինաստիայի ներկայացուցիչները փորձում էին հավասարակշռություն պահպանել արաբների և իրանցիների միջև: Պարսիկները, որոնցից շատերն ընդունվեցին Աբբասյանների ընտանիքի մեջ որպես «զավակներ», նոր դինաստիայի կառավարման սկզբում ձևավորեցին խալիֆայության ռազմական կորիզը: Պետության մեջ բարձրագույն պաշտոնները, արաբներից բացի, սկսեցին զբաղեցնել նաև իրանական հողատեր ազնվականության (դեհկանների) ներկայացուցիչները: Իրանական ազնվականները պետության կառավարման մեջ զբաղեցրին համարյա նույնքան տեղեր, որքան արաբները:

Աբբասյանների տիրապետության շրջանում աննախընթաց կերպով պետության մեջ մեծացավ պարսիկների կշիռը: Ըստ էության առաջին անգամ իսլամի քաղաքական պատմության մեջ պարսիկները խալիֆայության մեջ ձեռք էին բերում հսկայական դեր: Կայսրության համախմբման գործոն էր հանդիսանում արդեն ոչ թե արաբ ժողովուրդը, այլ դինաստիան, որը կոչված էր ապահովելու իսլամական միասնությունը: Որևէ ազգի առաջնություն չտալու, հետևաբար դժգոհություններ չհարուցելու նպատակով Աբբասյաններն ամուսնանում էին ստրկուհիների հետ:

Աբբասյան հարստության ժամանակ իրանական ազդեցությունը նկատելի էր պետության ներքին կյանքի համարյա բոլոր, նույնիսկ պալատական նիստուկացի, զգեստների, կենցաղի և այլ բնագավառներում: Այն թափանցել էր նաև արվեստի ու գրականության ոլորտ:

Առհասարակ, իրանական մշակույթը իր խոր դրոշմը թողեց Աբբասյանների քաղաքականության վրա: Պարսիկ կրթված դասը մշակեց նաև մահմեդական աստվածաբանության և իրավագիտության սկզբունքները:

Ձգտելով հենվել իրանական ազնվականության վրա՝ Աբբասյան առաջին խալիֆաները որոշեցին մայրաքաղաքը Դամասկոսից, որտեղ չափազանց ուժեղ էին օմայան ավանդույթները, տեղափոխել Իրանին ավելի մոտ գտնվող Բաղդադ (Մեդինաթ աս–սալամ՝ արաբերեն խաղաղության կամ բարեկեցության քաղաք), որը հիմնադրվել է 762 թ.: Աբբասյանները խալիֆայությունում արմատավորեցին Սասանյան Իրանի կառավարման համակարգը, նրանք Սասանյան շահերի օրինակով իրենց մայրաքաղաք Բաղդադում սկսեցին կառուցել շքեղ պալատներ և այլն:

Աբբասյան խալիֆայության գոյության հինգ դարերից միայն առաջին դարը իսկապես հանդիսացավ ծաղկման ու վերընթաց զարգացման շրջան: Դա այդ

հարստության պատմության ամենափայլուն շրջանն էր: Սակայն աստիճանաբար սկսեցին ի հայտ գալ խալիֆայության պետական կարգի թերությունները: Կայսրության ներսում սկսեցին նկատվել քայքայման նշաններ: VIII դ. երկրորդ կեսից սկսած՝ ողջ խալիֆայությունով մեկ ծայր առան ապստամբական շարժումներ:

Աբբասյանների նկատմամբ դժգոհությունը վաղ դրսևորումներ ունեցավ նաև Իրանում: Տարբեր վայրերում սկսեցին բռնկվել մեծ ու փոքր ապստամբություններ, որոնցից հատկապես իր ուժգնությամբ աչքի էր ընկնում 816 թ. սկսված Բաբեկի ապստամբությունը, որը, սկիզբ առնելով Ատրպատականում, այնուհետև տարածվեց ողջ Իրանում: Այդ շարժումն ընթանում էր հուրեմիների ուսմունքի գաղափարական քողի ներքո, մարդկանց ունեցվածքային հավասարության, բռնությունն ու հարստահարությունը աշխարհից վերացնելու կարգախոսների ներքո: Բաբեկի շարժումը ջախջախվեց 837 թ., իսկ իրեն՝ շարժման ղեկավարին, սպանեցին տանջալից մահով: Աբբասյան խալիֆայությանը հուժկու հարված հասցրին նաև Միջագետքում բռնկված, այսպես կոչված, զինջերի կամ զինջիների ապստամբությունը (869–883 թթ.), քարմաթների շարժումը (IX դ. վերջ և X դ.) և այլն, որոնց հետևանքով պետության հիմքերը նշանակալիորեն թուլացան: Դա նպաստեց տեղական իրանական ավատատերերի դիրքերի ամրապնդմանը՝ ի հակակշիռ արաբների: Չնայած նրան, որ Աբբասյան արքունիքը հետևողական քայլեր էր կատարում Իրանում ժողովրդական դժգոհությունը թուլացնելու ուղղությամբ, այդ քաղաքականությունը ցանկալի արդյունքներ չէր տալիս: Ապստամբություններն ու հուզումները շարունակվում էին՝ ժամանակ առ ժամանակ ձեռք բերելով խիստ վտանգավոր բնույթ:

Արդեն IX դ. առաջին քառորդից սկսած՝ Աբբասյանների խալիֆայությունում սկսվեց աստիճանական քաղաքական տրոհման գործընթաց: Պետության քայքայման գործոնները բազմապիսի էին. անընդհատ բռնկվող ապստամբությունները, իրանցիների և արաբների միջև մշտական դարձած խուլ հակամարտությունը, արաբական և պարսկական վերնախավի միջև բացահայտ պայքարը, որը հաճախ ձեռք էր բերում սուր առճակատման ու քաղաքական դիմակայության բնույթ, շիա–սուննի անհաշտ վեճը, որն իր հիմքում պարունակում էր իշխանության համար քաղաքական պայքարի իմաստ, տեղական խոշոր ավատատերերի քաղաքական անջատողականությունը և վերջապես այն հանգամանքը, որ Աբբասյան խալիֆայությունը իրենից ներկայացնում էր ժողովուրդների ու ցեղերի մի խառնուրդ, որտեղ գոյություն չուներ տնտեսական միասնական կյանք, երկրի տարբեր շրջաններ գտնվում էին տնտեսական ու մշակութային զարգացման տարբեր մակարդակներում, բացակայում էր էթնիկական միասնությունը և այլն:

Այսպիսով, ինչպես Օմայանների, այնպես էլ Աբբասյան դինաստիայի տիրապետության շրջանում թեև Իրանը գտնվում էր օտար իշխանության մականի ներքո, սակայն նա ոչ միայն դրսևորեց բարձր կենսունակություն, կարողացավ պահպանել իր ազգային դիմագիծը, իր դարավոր մշակույթն ու հարուստ ավանդույթները, այլև խալիֆայության կյանքում ի զորու եղավ խաղալու կարևոր դեր: Ավելին՝ արաբներն Իրանում ենթարկվեցին իրենց կողմից նվաճվածների կամ ընկճվածների քաղաքակրթությանը: Նույնիսկ իսլամը, որը պարտադրվեց պարսիկ ժողովրդին և դարձավ նրա կրոնը, ազգայնանալով ձեռք բերեց յուրահատուկ դիմագիծ:

Միաժամանակ անվիճելի իրողություն է, որ արաբներն ու իսլամը նոր շունչ հաղորդեցին Իրանին և առհասարակ Միջին Արևելքի տարածաշրջանին, որտեղ ծայր առավ ու տևական ժամանակ շարունակվեց մշակութային ու քաղաքական նորացման վերընթաց շարժում:

3. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արաբների կողմից Իրանի նվաճումն ուղեկցվեց ողջ հողային ֆոնդի վերաբաշխմամբ: Հողերի մեծ մասը, այդ թվում դեհկաններին և համայնքներին պատկանող հողերը, Սասանյան պետության և զրադաշտական տաճարների ունեցած հողերն ու կալվածքները, հայտարարվեցին մահմեդական համայնքի («ումմա») ընդհանուր սեփականություն («ֆայ»): Ըստ էության այդ հողերը դարձան արաբական պետության սեփականությունը: Պարսիկ գյուղացիները համարվում էին լոկ պետական հողերը մշակողներ, և նրանց վրա դրված էր հողային հարկ՝ խարաջ մուծելու պարտականություն:

Իրանում, ինչպես և Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների մեծ մասում, հողի նկատմամբ պետական սեփականությունը հողային սեփականության գերակշռող, սակայն ոչ միակ ձևն էր: Պետությունը միաժամանակ ոռոգման համակարգերի և ջրային ռեսուրսների սեփականատերն էր: Այլ կերպ ասած՝ հողը և ջուրը, այսինքն՝ արտադրության հիմնական միջոցների մեծ մասը պատկանում էր պետությանը: Դա նպաստում էր պետության ուժեղացմանը և հզոր կենտրոնացված ապարատի ստեղծմանը:

Գոյություն ունեին նաև «մուլք» հողեր, որոնք պատկանում էին տեղական հողատերերին (դեհկաններին) և արաբ ազնվականությանը՝ ժառանգական սեփականության իրավունքով: VIII–IX դարերում ձևավորվեց հողի և ջրի նկատմամբ ավատական սեփականության ևս մեկ ձև, որը կոչվում էր «վակֆ»: Դա մահմեդական կրոնական և բարեգործական հիմնարկներին պատկանող սեփականությունն էր: Վակֆային հողերն ու անշարժ գույքը ենթակա չէին վաճառքի ու օտարման: Դրանք օգտվում էին նաև հարկային իմունիտետից, այսինքն՝ ազատված էին հարկեր վճարելու պարտավորությունից:

Դեռևս Օմայանների շրջանում հայտնվեց, իսկ Աբբասյանների ժամանակ լայն տարածում գտավ պայմանական ավատական սեփականության իքթա ինստիտուտը: Այն հատկացվում էր պետական ծառայության դիմաց: Գոյություն ունեին իքթայի մի քանի տեսակներ՝ կապված այն բանի հետ, թե ինչ ծառայության համար էր հատկացվում տվյալ հողակտորը:

Իրանում VII–IX դարերում գյուղական բնակչությունը համախմբված էր համայնքների մեջ: Կային խոշոր և միջին հողատերեր: Խոշոր հողատերերը չէին վարում սեփական տնտեսություն, այլ հողը մանր կտորներով վարձակալությամբ հանձնում էին գյուղացիներին:

Իրանական գյուղացիների վիճակը Օմայանների տիրապետության շրջանում չափազանց ծանր էր: Այն էլ ավելի վատթարացավ Աբբասյանների ժամանակ: Բացի սովորական խարաջից, գյուղացիները պարտավոր էին հարկեր վճարել նաև բնամթերքով և պետության ու ավատատերերի համար կատարել զանազան հարկադիր աշխատանքներ՝ ջրամբարտակներ, քյարիզներ, ջրանցքներ, ճանապարհներ և այլն կառուցելու համար: Հարկերը բազմազան էին ու ծանր: Հաճախ թույլ էին տրվում հարկային կամայականություններ, որոնք առաջ էին բերում գյուղացիական ընդվզումներ:

Արաբական տիրապետության շրջանում Իրանում լայնորեն օգտագործվում էր նաև ստրկական աշխատանքը: Ստրուկներին օգտագործում էին գյուղատնտեսության մեջ, ջրանցքներ ու ոռոգման համակարգեր կառուցելու, պետական հանքավայրերում աշխատելու, արհեստագործության մեջ և այլն:

Հարկ է նշել, որ Իրանի նվաճումից հետո՝ առաջին տասնամյակների ընթացքում, հարկերի և տուրքերի գանձումը արաբներն ամբողջապես հանձնել էին ենթակա տեղական տիրակալներին: Նվաճողներին հետաքրքրում էր լոկ տարբեր նյութական արժեքների քանակը, իսկ թե ով և ինչպես այն կհավաքի, նրանց համար երկրորդական հարց էր: Խալիֆայությունը կարիք ուներ գլխավորապես ստրուկների և ստրկուհիների, բրդի, բամբակի, կտորեղենի, հացահատիկի, ձիերի և առհասարակ անասունների, կաշվի, զենքի ու սպառազինության, ոսկու, արծաթի և այլն: Այդ բոլորը հարկերի միջոցով անցնում էր արաբական վերնախավին: Ավելի ուշ՝ Իրանում իրենց սեփական հարկային համակարգը ստեղծելուց հետո, արաբներն այլևս կարիք չունեին «միջնորդների» և ամբողջապես իրենց ձեռքը վերցրին հարկահավաքման գործը:

Զրադաշտականները, քրիստոնյաները և հրեաները խարաջից բացի պարտավոր էին վճարել նաև գլխահարկ՝ ջիզյա:

Իրանում հողագործների վիճակը դարձավ անտանելի, երբ խալիֆաները հրամայեցին ջիզյա և խարաջ վճարող բոլոր գյուղացիների վզից կախել հատուկ կապարե հաշվեպիտակ, որտեղ նշվում էր, թե որ ռուստակից (գավառից) և գյուղից է տվյալ մարդը: Եթե, լքելով իր բնակավայրը, գյուղացին տեղափոխվում էր մեկ այլ շրջան, նրան որսում և ուղարկում էին հաշվեպիտակում նշված իր բնակավայրը: Առանց վզից կախված այդ տարբերանշանի որևէ վայրում հայտնվելու դեպքում կարող էին ձերբակալել և ենթարկել պատժի: Այդ տարբերանշանները հանում էին միայն հարկերի լրիվ վճարումից հետո և կրկին կախում էին, երբ գալիս էր նոր բերքի ժամանակը: Նշված կարգի հետևանքով ոչ մի գյուղացի չէր կարող խուսափել ջիզյան և խարաջը վճարելու պարտավորությունից: Այդ նվաստացուցիչ կարգը տարածված էր արաբների կողմից նվաճված համարյա բոլոր երկրներում՝ Իրանում, Միջագետքում, Հայաստանում, Եգիպտոսում, Միջին Ասիայում և այլն:

Որպես «անհավատներ»՝ բոլոր այլադավանները սահմանափակված էին քաղաքացիական իրավունքների մեջ և հեռացված էին քաղաքական գործունեության ասպարեզից:

X դ. 30-ական թվականներից հետո, երբ Արաբական խալիֆայության տիրապետությունը Իրանում փաստացի կերպով վերացել էր, երկրում նկատվեց տնտեսական վերելք: Գյուղացիներից ու քաղաքացիներից հավաքված հարկային միջոցներն այլևս դուրս չէին տարվում երկրից, ինչպես դա տեղի էր ունենում խալիֆայության ժամանակ, այլ ծախսվում էին Իրանի ներսում, այդ թվում նաև երկրի համար կենսական նշանակություն ունեցող ոռոգման ջրանցքների, ջրամբարտակների և այլնի կառուցման համար:

Դաշթ-ե Քեվիր և Դաշթ-ե Լութ անապատների հարակից շրջաններում (Սիստանում և այլուր) կառուցվեցին արգելապատնեշներ, որոնք կասեցնում էին շարժվող ավազների հոսքը դեպի օազիսներն ու բարեբեր հողերը: Յուրացվեցին նոր հողեր, որոնց հետևանքով ընդարձակվեցին նաև ցանքատարածությունները, երկրում արմատավորվեցին նոր կուլտուրական բույսեր և պտղատու ծառեր: Հատկապես լայն տարածում գտավ բրնձի մշակումը, որը Սասանյանների ժամանակ համարյա գոյություն չուներ: Բրինձ սկսեցին աճեցնել Խուզիստանում, Ֆարսի և Խորասանի ցածրադիր վայրերում, Սիստանում, Մերձկասպյան շրջաններում: Աճ տեղի ունեցավ նաև բամբակի մշակման բնագավառում:

Նշանակալից զարգացում ապրեց անասնապահությունը:

X դ. առանձնակի ծաղկում ապրեց քարավանային և ծովային առևտուրը: Քարավանային ճանապարհներով Իրանը կապված էր Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների, ինչպես նաև Հնդկաստանի և Հարավարևելյան Ասիայի երկրների հետ: Քարավանային առևտրի խոշորագույն հանգույցներ էին Համադան, Ռեյ, Նիշապուր, Հերաթ, Սպահան, Շիրազ և Ահվազ քաղաքները:

Կասպից ծովի Ամոլ և Սարի նավահանգիստների միջոցով լայն ծովային առևտրափոխանակություն էր իրագործվում Խորեզմի, Խազարական Իթիլի, Պովոլժիեի, Ռուսիայի, ինչպես նաև Անդրկովկասի հետ: Իրենց հերթին այդ նավահանգիստներն էին այցելում վերոհիշյալ երկրների վաճառականները:

Պարսից ծոցի Սիրաֆ, Ջաննաբա, Քիշ (Քայս) և Հորմուզ նավահանգիստներից իրանական ապրանքներն արտահանվում էին Բասրա, Արաբական թերակղզու նավահանգիստներ, Եգիպտոս, Հնդկաստան, Չինաստան և այլ երկրներ: Ընդ որում՝ Պարսից ծոցի առևտրի մեջ մեծ մասնակցություն ունեին նաև արաբ վաճառականները:

Իրանից միջերկրածովյան ավազանի երկրներ, Արաբիա, Հնդկաստան և Չինաստան բազմապիսի ապրանքներ արտահանվում էին նաև քարավանային ճանապարհով:

Իրանում, ինչպես և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրներում, առևտրի եկամտաբեր ճյուղ էր երկսեռ ստրուկների առևտուրը: Իրանի տարբեր քաղաքներում գոյություն ունեցող ստրկավաճառանոցներ ստրուկներ էին բերվում Աֆրիկայից, Հնդկաստանից, Անդրկովկասից, Միջին Ասիայից, Փոքր Ասիայից և նույնիսկ Արևելյան Եվրոպայի երկրներից:

Արհեստագործությունը, որը հնուց անտի չափազանց զարգացած էր Իրանում, X–XI դդ. արձանագրեց նոր նվաճումներ: Նիշապուրում, Սպահանում, Շիրազում, Ռեյում և այլ քաղաքներում արտադրվում էին բարձրորակ մետաքսյա, բրդյա և բամբակյա կտորեղեն, հախճապակյա ամաններ ու սպասք, պղնձից, բրոնզից, ոսկուց ու արծաթից պատրաստված բարձրարժեք գեղարվեստական իրեր, զենքի ու սպառազինության տարբեր տեսակներ և այլն:

Իրանի քաղաքներում գոյություն ունեին համքարությունների տիպի արհեստակցական միավորումներ, որոնց մեջ համախմբված էին նույն արհեստի տեր մարդիկ: Նրանց գործունեությունը խստիվ վերահսկվում էր պետության կողմից:

X դ. Իրանի քաղաքներում գործում էին մահմեդական հոգևոր դպրոցներ՝ մեդրեսներ: X դ. աշխարհագիրները, հատկապես Իսթահրին և Մուքադդասին, մանրամասնորեն նկարագրում են իրենց ժամանակի Իրանի քաղաքների արտաքին տեսքը:

4. ՊԵՏԱԿԱՆ ՆՈՐ ՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Արդեն IX դարի առաջին քառորդից սկսած՝ Արաբական խալիֆայությունում սկսվեց աստիճանական քաղաքական տրոհման գործընթաց, որն իր ավարտին հասավ 945 թ.: Դա միանգամայն բնականոն երևույթ էր, քանի որ Արաբական խալիֆայությունը իրենից ներկայացնում էր տարբեր ցեղերից ու ժողովուրդներից բաղկացած մի խառնուրդ, որոնք չունեին ո՛չ ընդհանուր լեզու, ո՛չ տնտեսական կյանքի միասնություն և գտնվում էին տնտեսական ու մշակութային զարգացման տարբեր մակարդակներում: Այդ պետությունը ծվատվում ու թուլանում էր նաև ներքին հակասությունների և ապստամբությունների հետևանքով:

Աբբասյան խալիֆայությունում տեղական խոշոր ավատատերերի քաղաքական անջատողականության հետևանքով դեռևս VIII–IX դարերում տարբեր վայրերում գոյացան ինքնուրույն պետական միավորներ՝ ժառանգական էմիրություններ, որոնց գլուխ կանգնած տեղական դինաստիաները կա՛մ ձևականորեն ճանաչում էին խալիֆայության իշխանությունը, կա՛մ ընդհանրապես չէին ճանաչում այն: Այդ էմիրությունները աստիճանաբար վերածվում էին ինքնուրույն ավատական պետությունների: Նման պետությունները IX դարում և X դարի առաջին կեսին ձևավորվում էին ինչպես Իրանում, այնպես էլ խալիֆայության կազմի մեջ մտնող այլ երկրներում: X դարում ավարտվեց Աբբասյան խալիֆայության տրոհման գործընթացը: Խալիֆաների տիրապետության ներքո մնացին միայն Իրաքը և Արևմտյան Իրանը: Խորասանում և Միջին Ասիայի սահմանակից շրջաններում ստեղծվեց Թահիրիների պետությունը (821–873 թթ.), որի հիմնադիրը իրանցի մավալ Թահիր իբն ալ–Հուսեին Խորասանին էր: Վերջինս ծրագրել էր Բաղդադից անջատել Իրանի շրջանները և ստեղծել անկախ իրանական պետություն: Անվանապես իրենց կապերը չխզելով խալիֆայության հետ և ձևականորեն մնալով նրա կազմում՝ թահիրիներին իսկապես հաջողվեց ստեղծել մի հզոր պետություն, որն ընդգրկում էր Խորասանի, իսկ ապա նաև Թաբարիստանի ու Իրանի մի շարք այլ նահանգներ: Էմիրության

սահմանները ծավալվելով հասան մինչև Հնդկաստան: Պետության մայրաքաղաքը Մերվն էր, ապա Նիշապուրը:

Թահիրիները վարում էին իրանական մշակույթը, գրականությունը և գիտությունը զարգացնելու քաղաքականություն: Ըստ էության, նրանք հանդես էին գալիս որպես երկրի «իրանականացման» համոզված ջատագովներ: Թահիրիները դավանում էին ուղղադավան իսլամը՝ սուննիզմը, և անհանդուրժողական դիրքորոշում էին որդեգրել շիաների նկատմամբ: Թահիրիների պետությունը գոյատևեց մինչև 873 թ. և ընկավ քաղաքական վերելք ապրող Սաֆֆարիների հարվածների տակ:

Իրանի Սիստանի (Սեյիստան) շրջանը աղանդավոր խարիջիականների գաղափարական ղեկավարության ներքո մշտապես ապստամբում էր խալիֆայության տիրապետության դեմ: Բարեբեր այս շրջանում 861 թ. ծնունդ առավ Սաֆֆարիների էմիրությունը (861–900 թթ.): Աստիճանաբար ընդարձակվելով՝ այն նվաճեց Հերաթը, Բալխը, իսկ այնուհետև տապալելով Թահիրիների դինաստիան՝ Սաֆֆարիները տիրացան ողջ Խորասանին, նվաճեցին Թաբարիստանը և ժամանակավորապես Քերմանն ու Ֆարսը: Սաֆֆարիների էմիրները Բաղդադի խալիֆայի իշխանությունը ճանաչում էին լոկ անվանապես: Սաֆֆարիների պետության էմիր Յաղուբ իբն ալ–Լայս աս–Սաֆֆարը նույնիսկ փորձում է գրավել խալիֆայության մայրաքաղաքը՝ Բաղդադը, սակայն նրա զորքերը ծանր պարտություն են կրում: Ի տարբերություն Թահիրիների՝ Սաֆֆարիները շիականության հետևորդներ էին:

819 թ. Մավարաննահրում հիմք դրվեց մի նոր պետականության՝ Սամանյանների էմիրությանը, որը գոյատևեց մինչև 999 թ.: Այս պետության կազմի մեջ մտան ողջ Խորասանը, Սիստանը, Մավարաննահրը, Քերմանը Գուրգանը, Ռեյը, Թաբարիստանը և իրանական մեծ անապատից արևելք ընկած այլ տարածքներ: Այդ պետության պաշտոնական մայրաքաղաքը Բուխարան էր, սակայն որպես մշակութային ու վարչաքաղաքական կարևոր կենտրոն հանդես էր գալիս նաև Սամարղանդը: Շնորհիվ տարբեր երկրների, այդ թվում նաև Արևելյան Եվրոպայի և Բյուզանդիայի հետ իր առևտրական լայն կապերի, Սամանյանների պետությունը սկսեց արագորեն ծաղկել: Սամանյանների էմիրների հովանավորողական քաղաքականության շնորհիվ այդ պետության մեջ մեծ ծաղկում ապրեցին մշակույթն ու գիտությունը, հատկապես ֆարսի լեզվով գրականությունը:

Սամանյանների պետությունը ստիպված էր մշտական պայքար մղել թյուրք քոչվորների ասպատակությունների դեմ: Հենց այդ նույն թյուրք ղոլամներից (ստրուկներից) Սամանյանները կազմակերպեցին հատուկ զորամասեր՝ ներքին ապստամբությունները ճնշելու համար: Սակայն աստիճանաբար ղոլամների բարձրագույն հրամանատարները, վերածվելով խոշոր ավատատերերի և իրենց տրամադրության տակ ունենալով մարտունակ ռազմական ուժեր, դադարեցին Սամանյաններին ենթարկվելուց և սկսեցին խռովություններ բարձրացնել: Այդ ուժերի հարվածներից, ինչպես նաև ներքին ապստամբություններից ու անջատողական շարժումներից թուլացած Սամանյանների պետությունը 999 թ. նվաճվեց թյուրք Կարախանյանների կողմից և դադարեց գոյություն ունենալուց:

IX–X դարերում Իրանի տարածքի այլևայլ վայրերում իրար հետևից ծնունդ էին առնում նոր պետական միավորումներ և, ապրելով կարճատև քաղաքական ինքնուրույն կյանք, մեռնում կամ իրենց տեղը զիջում էին նոր ծնվող այլ էմիրությունների: Դրանցից էին, օրինակ, Սաջիդների թյուրքական (890–929 թթ.), Ռավվադյանների արաբական (979–1070 թթ.), Սալարյանների կամ Մուսաֆիրյանների (941–979 թթ.), Զիյարիների (928–1045 թթ.), Ալիդների շիական (864–928 թթ.) պետությունները և այլն: Նման պետական կազմավորումներից հատկապես մեծ հզորության հասավ Բուիների (արաբական արտաբերմամբ՝ Բուվեյհիների) պետությունը, որը գոյատևեց 935–1055 թթ. ընթացքում: Այս դինաստիայի հիմնադիրները սերում էին Դեյլեմից, որը գտնվում էր Կասպից ծովի հարավարևմտյան մասում՝ Գիլանից հարավ՝ Էլբուրս լեռնաշղթայի երկու փեշերին: Դեյլեմը երբեք չէր նվաճվել արաբների կողմից: Այդ վայրերում ապրում էին ծանր, դժվարին ու աղքատ կյանք վարող գիլանցիներն ու դեյլեմցիները, որոնք խոսում էին իրանական լեզվախմբի մեջ մտնող գիլաներենով: Դեյլեմցի լեռնականները վերին աստիճանի ազատատենչ էին ու ռազմունակ:

Բուիների դինաստիայի հիմնադիր է համարվում Աբու Շաջջա Բուվայհին: Պետության մայրաքաղաքը Շիրազն էր: Բուիների պետության կազմի մեջ էին մտնում Իրանի ողջ արևմուտքը և հարավը (Պարսկական Իրաքի մեծ մասը)՝ Համադան, Սպահան և Ռեյ քաղաքներով հանդերձ, Խուզիստանը, Ֆարսը և Քերմանը: 945 թ. Բուիները գրավեցին Բաղդադը: Խալիֆա ալ-Մուսթակֆին ստիպված էր բուի Ահմեդին շնորհել «ամիրաց ամիր» («ամիր ալ-ումարա») բարձրագույն պետական տիտղոսը: Շուտով Բուիները փաստորեն խալիֆային զրկեցին պետական իշխանությունից: Ձևականորեն նրանք պետությունը կառավարում էին խալիֆայի անունից, մզկիթներում գոհաբանական աղոթքի ժամանակ («հութբե») առաջինը հիշատակում նրա անունը, նրան իրավունք վերապահում դրամ հատելու և այլն, սակայն իրականում խալիֆային թողնվել էր լոկ հոգևոր կրոնական իշխանությունը: Ընդ որում՝ այսուհետև խալիֆան պետք է լիներ ուղղադավան սուննի մուսուլմանների հոգևոր ղեկավարը, իսկ շիաները և մյուս մահմեդականները պետք է դուրս մնային նրա իրավասության շրջանակներից և անցնեին շիա Բուիներին: Այսպիսով՝ Բուիները խալիֆայի հետ համահավասար ձեռք էին բերում նաև հոգևոր առաջնորդների կարգավիճակ: Սա պարսիկ գիտնականների կողմից դիտվել է շիիզմի և առհասարակ «իրանիզմի» մեծագույն հաղթանակ: Խալիֆան փաստորեն հեռացվում էր պետական բոլոր գործերից: Բուիները խալիֆայից վերցրին նաև նրա ընտանեկան հողերը՝ փոխարենը, ինչպես սովորական ավատական հողատիրոջ, տալով մի կալվածք՝ իքթայի իրավունքով: Պաշտոնապես խալիֆայությունը չվերացվեց, որովհետև դա ձեռնտու չէր Բուիներին: Նրանք շարունակում էին կառավարել խալիֆայի անունից:

Այսպիսով՝ ողջ Արաբական Իրաքը, Բաղդադ և Բասրա քաղաքներով հանդերձ, մտավ Բուիների ընդարձակ պետության կազմի մեջ: Բուիների պետությունը իր բարձրագույն հզորությանը հասավ Ադուդ ադ-Դաուլա Ֆեննա Խոսրովի (949–983 թթ.) օրոք: Նրա իշխանությունը ճանաչվում էր նույնիսկ Արաբական թեռակողզում: 981 թ. նրա դեսպանությունը ընդունվեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլսում: Եռանդուն ու նախաձեռնող Ադուդ ադ-Դաուլա Ֆեննա Խոսրովը դրսևորեց ռազմական ու պետական գործչի մեծ ունակություններ: Իր կատարյալ ինքնուրույնությունը շեշտելու համար նա կատարեց ևս մեկ քայլ առաջ. այլևս չբավարարվելով «էմիրների էմիր» տիտղոսով՝ Ադուդ ադ-Դաուլան ընդունեց նաև «շահնշահ» տիտղոսը՝ ցանկանալով շեշտել, որ ինքը Իրանի տիրակալն է: Այսպիսով՝ նա եղավ առաջին իսլամ տիրակալը, որը կրեց պարսկական այդ տիտղոսը:

Սակայն Ադուդ ադ-Դաուլայի մահից հետո նրա որդիների միջև սկսվեցին երկպառակություններ և զինված պայքար հանուն իշխանության: Դինաստիան այլևս չուներ բոլորի կողմից ընդունվող առաջնորդ: Պետության մեջ տնտեսական և քաղաքական կապերի թուլությունը, ավատական տրոհվածության աճը և ներքին երկպառակությունները Բուիների պետությունը հասցրին լրիվ քայքայման: Բուի կառավարիչների իշխանության ներքո գտնվող տարածքները դարձան այլ նվաճողների ավար: 1055 թ. Բուիների պետությանը մահացու հարված հասցրին թյուրք սելջուկները, և այն դադարեց գոյություն ունենալուց:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԵՎ ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ

1. ՂԱԶՆԵՎԻՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սամանյանների պետության մեջ, որպես ռազմական ուժ, մեծ տեղ էր հատկացվում թյուրք-ղոլամներին: Դրանց հրամանատարներից մեկը՝ Աբու Իսհաք Ալփ-Թեքինը, որը փառասիրական ձգտումներ էր փայփայում, ապստամբելով Սամանյանների դեմ, Իրանի արևելքում՝ Ղազնի քաղաքում, 962 թ. հիմնում է մի ոչ մեծ, սակայն անկախ էմիրություն: 963 թ.՝ Ալփ-Թեքինի մահից հետո, Սեբուք-Թեքինը (977–998 թթ.) շարունակում է նրա գործը, և այսպիսով ձևավորվում է մի իշխող դինաստիա, որի անունով և պատմության ասպարեզ է մտնում Ղազնիների կամ Ղազնյան պետությունը (997–1186 թթ.), որն իրենից ներկայացնում էր թյուրքական ռազմաավատական պետություն: Այն Իրանի պատմության մեջ խաղացել է չափազանց կարևոր դեր: Նոր պետությունն իր առավելագույն հզորությանը հասավ Սեբուք-Թեքինի որդու՝ Մահմուդ Ղազնևիի (998–1030 թթ.) կառավարման շրջանում, երբ այդ պետությունը ներառեց Գանգեսի ափերից մինչև Իրանական Քրդստան ընկած տարածքները: Մահմուդ Ղազնևին նվաճեց Խորասանը, Թաբարիստանը, Սիստանը, ներկայիս Աֆղանստանը, Խորեզմը, Բուխարան, Սպահանը, Ռեյը և այլն: Մահմուդը իր իշխանությունը տարածեց նաև Արևմտյան Իրանի վրա: Նա իր երեսնամյա կառավարման շրջանի մեծ մասը անցկացրեց ռազմարշավների մեջ:

Իսլամի հաղթական դրոշի տարածման պատրվակի ներքո Մահմուդ Ղազնևին մի քանի անընդմեջ կողոպտչական արշավանքներ կազմակերպեց դեպի Հնդկաստան՝ խորանալով Հինդուստան թերակղզու խորքերը: Նրա զորքերը գրավեցին Քաշմիրն ու Փենջաբը, Մուլթանը, Սինդի մի մասը և Հյուսիսային ու Հյուսիսարևմտյան Հնդկաստանի հսկայական տարածքները: Այդ արշավանքների հետևանքով իսլամը տարածվեց Հնդկաստանում: Նրա բոլոր արշավանքները Հնդկաստան ուղեկցվում էին անողոք կողոպուտով ու ավարառությամբ: Մահմուդը այդ երկրից ստրկության քշեց հարյուր հազարավոր մարդկանց, այդ թվում՝ արհեստավորների: Կողոպտված գումարներով նա նախկինում աննշան Ղազնի քաղաքը, որը դարձել էր Ղազնյանների մայրաքաղաքը, վերածեց իր ժամանակի փայլուն մայրաքաղաքներից մեկի:

Հաջողությունների համար Մահմուդը նշանակալից չափով պարտական էր իր մարտունակ բանակին, որի հիմքն էր կազմում թյուրք ստրուկներից բաղկացած ղոլամների գվարդիան, և որի շարքերում նա հաստատել էր երկաթյա կարգապահություն: Ղոլամների գվարդիայի հետ միաժամանակ Մահմուդի բանակում ծառայում էին նաև տարբեր ժողովուրդների ներկայացուցիչներ, ինչպես նաև կամավոր «ղազիներ» («մարտիկներ հանուն հավատի»):

Մահմուդ Ղազնևին թեև ճանաչում էր Աբբասյան խալիֆա ալ-Կադիրի գերագույն իշխանությունը, որը նրան շնորհել էր «Յաման ադ-Դովլա» («Պետության աջ ձեռք») պատվավոր տիտղոսը, սակայն նրա կախումը խալիֆայությունից կրում էր լոկ անվանական բնույթ: Խալիֆայի արտաքուստ ճանաչումը նրա իշխանությանը հաղորդում էր օրինական բնույթ:

Մահմուդ Ղազնևին իր ներքին քաղաքականության մեջ ձգտում էր ամրապնդելու կենտրոնական իշխանությունը, աքցանի մեջ պահելու ինքնագլխության ձգտող անսանձ տարրերին, ստեղծելու վարչահարկային արդյունավետ համակարգ, հատում էր իր սեփական դրամը և այլն: Գործավարության լեզուն պարսկերենի փոխարեն նա դարձրեց արաբերենը:

Ծայրահեղ դաժանությունն ու բռնակալությունը չէին խանգարում Մահմուդին ունենալու նաև գրականության ու արվեստի հովանավորի հռչակ: Ղազնիում նրա արքունիքը համարվում էր պարսկալեզու պոեզիայի կենտրոնը: Նրա կրթական մակարդակը թույլ էր տալիս ունենալ գեղեցիկն ընկալելու ճաշակ, որի մասին վկայում են Իրանի ու Հնդկաստանի տարածքներում նրա հրամանով կառուցված բազմաթիվ հոյակերտ պալատները, մզկիթները, սլացիկ աշտարակները և այլ շինություններ:

Մահմուդի պետության մայրաքաղաքը ոչ միայն մշակույթի ու պոեզիայի կենտրոն էր, այլև նշանավոր առևտրական քաղաք: Ղազնին իր կողմն էր ձգում տարբեր երկրների վաճառականների առևտրական քարավանները:

1030 թ.՝ Մահմուդ Ղազնևիի մահից հետո, պետության հզորությունը սկսեց սրընթաց անկում ապրել: Գահ բարձրացած նրա որդին՝ Մասուդը (1030–1041 թթ.), զուրկ էր իր հոր ընդունակություններից և պետություն ղեկավարելու համար անհրաժեշտ մտավոր զարգացումից, քաղաքական կամքից ու ռազմաշունչ ոգուց: Դրա հետևանքով մայրաքաղաքում ու նահանգներում, փաստորեն, ողջ իշխանությունը հայտնվեց ապաշնորհ, եսամոլ և ընչաքաղց աստիճանավորների ձեռքերում, որոնք պետությունը հասցրին կործանման եզրին: Մասուդի կառավարման տարիներին կամայականությունները, բռնություններն ու անօրինականությունները հասան աննախընթաց չափերի: Սրվեցին ներքին հակասությունները, ուժեղացավ ավատատերերի անջատողականությունը, պետական համակարգը սկսեց արագորեն քայքայվել, բանակը կորցրեց իր մարտունակությունը և հաղթանակի հասնելու ոգին: Այդ բոլորի անխուսափելի հետևանքը եղավ այն, որ Ղազնևիների երբեմնի հզոր պետությունը թևակոխեց իր մայրամուտի շրջանը:

Այդ ամենը նպաստեց սելջուկների գլխավորությամբ օղուզ-թյուրքերի շարժման հաջողությանը: 1037 թ. սելջուկ թուրքմենները սկսում են հաճախակի ասպատակ սփռել Արևմտյան Իրանում՝ Ուրմիա լճի շուրջը, Մարաղայում և այլուր և իրենց հսկողությունը հաստատել Ատրպատականի մի շարք վայրերի նկատմամբ՝ այստեղից իրենց ասպատակության ալիքները հասցնելով մինչև Ռեյ, Սպահան և Պարսկական

Իրաքի տարբեր շրջաններ: Սելջուկների և ղազնևյանների թշնամական հարաբերությունների հանգուցալուծումը տեղի ունեցավ 1040 թվականին, երբ Դանդանաքանի ճակատամարտում սելջուկները տարան վճռական հաղթանակ:

Ղազնևյան պետության թյուրք բնակչությունը ժամանակի ընթացքում համարյա ամբողջապես տարրալուծվեց Իրանի ժողովրդի մեջ:

2. ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Օղուզ անվամբ թյուրքական վաչկատուն ցեղերը զբաղեցնում էին Սիր Դարյա գետի ընդարձակ տափաստանային հովիտները, ինչպես նաև Արալյան և Կասպից ծովերի միջև ընկած հարթությունները: Այդ ցեղերը չինական աղբյուրներում հիշատակվում են մ. թ. VIII դարից սկսած: Օղուզներին հետագայում սկսեցին անվանել նաև թուրքմեններ, իսկ արաբ հեղինակները նրանց կոչում են ղուզզեր: Վաչկատուն այդ ցեղը արոտավայրերի փնտրտուքներում անընդհատ շարժվում էր տեղից տեղ՝ զբաղվելով նաև ասպատակությամբ ու կողոպուտով: Աստիճանաբար նրանց շրջանում ձևավորվում էին ավատական հարաբերություններ, և ծնունդ էր առնում հողային ազնվականություն:

X դարի երկրորդ կեսին օղուզները, ինչպես և Միջին Ասիայի թյուրքական մյուս ցեղերը, հրաժարվելով շամանիզմից, ընդունեցին իսլամը: Հենց այդ ժամանակ էլ օղուզների, կարլուկների և թյուրքական այլ վաչկատուն ցեղերի շրջանում սկսեցին ձևավորվել պետական միավորումներ: Դրանց մեջ սկսեց առանձնանալ և առավել աչքի ընկնող միավորում դառնալ օղուզների կամ ղուզզերի սելջուկյան միավորումը, որը և հանդիսացավ սելջուկյան դինաստիայի հիմնադիր (1038–1194 թթ.): Այդ հարստության իշխանությունը ճանաչած օղուզներին սկսեցին անվանել սելջուկներ:

X դ. վերջին և XI դ. սկզբին տեղի ունեցավ թյուրքական ցեղերի հուժկու տեղաշարժ արևելքից արևմուտք: Այդ գաղթային շարժումների մասնակից էին նաև սելջուկները, որոնք սկզբնական շրջանում հաստատվեցին Խորասանում, իսկ այնուհետև, անընդհատ պատերազմների մեջ գտնվելով Ղազնիների պետության հետ, քայլ առ քայլ գրավեցին նրանց տարածքները, հետզհետե ծավալվելով դեպի արևմուտք: Այդ ժամանակ Իրանում գոյություն չուներ քաղաքական և ռազմական մի այնպիսի ուժ, որն ի վիճակի լիներ կասեցնելու օղուզների շարժումը դեպի երկրի տարածք:

Սելջուկյան արշավանքների առաջին փուլին բնորոշ էին ավարառությունն ու կողոպուտը, գերեվարությունն ու բարգավաճ քաղաքների ամայացումը: Սակայն հաջորդ փուլում սելջուկները արդեն բնակություն էին հաստատում նվաճված հողերում և իրենց տիրապետությունը հաստատում նստակյաց հողագործական բնակչության նկատմամբ: 1040 թ. Դանդանաքանի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտում ջախջախելով ղազնևյան տիրակալ Մասուդի զորքերին՝ սելջուկները թափանցեցին բուն Իրանի տարածքը և 1040–1054 թթ. ընթացքում տիրացան Ռեյ, Համադան, Քերմանշահ, Սպահան քաղաքներին, նվաճեցին նաև Գուրգանը, Դեհիստանը, Խորեզմը, Սիստանը, Քերմանը, Ֆարսը, Խուզիստանը: Նրանք խոշոր ցեղախմբերով

գաղթում էին Իրան՝ ողողելով Ատրպատականը և Պարսկական Իրաքը: Այսպիսով՝ սելջուկյան տիրապետությունը հաստատվեց Իրանի մեծագույն մասում: Իրանը դարձնելով հենակետ՝ սելջուկները այնուհետև ներխուժեցին Փոքր Ասիա, Վերին Միջագետք և Հայաստան, որտեղ նրանց հրապուրում էին հիանալի արոտավայրերը:

1050 թ. սելջուկների առաջնորդ Տուղրիլ բեկը իր բոլոր ուժերն ուղղեց Բաղդադի գրավման համար: Քարոզչական նպատակով նա առաջ քաշեց Աբբասյան ուղղադավան խալիֆային Բուիների դինաստիայի «շիա հերետիկոսների» լծից ազատագրելու կարգախոսը:

1055 թ. դեկտեմբերի 20-ին սելջուկներն առանց մարտի մուտք գործեցին Բաղդադ՝ քաղաքը մատնելով ահավոր կողոպուտի: Խալիֆա ալ-Կայիմը 1058 թ. ստիպված էր սելջուկների առաջնորդ Տուղրիլ բեկին հռչակել «Արևելքի սուլթան»: Սելջուկները խալիֆաներին թողեցին լոկ հոգևոր իշխանությունը: Այսպիսով պաշտոնապես հիմք դրվեց սելջուկյան աշխարհակալ պետությանը:

Բաղդադի գրավումը վերջ տվեց Իրանում Բուիների դինաստիայի կառավարմանը: Ողջ Իրանն անցավ սելջուկների տիրապետության տակ: Սելջուկ-օղուզական նվաճումներն ուժգին ազդեցություն գործեցին ողջ Մերձավոր ու Միջին Արևելքի, այդ թվում նաև Իրանի քաղաքական ու տնտեսական զարգացման վրա: Իրանը ենթարկվեց սոսկալի ավերածության, որի հետևանքով նրա առաջընթացը մեծապես կասեցվեց: Այնուհետև, եթե IX–X դարերում Իրանում ընթանում էր իրանալեզու ժողովուրդների ավատական պետական կազմավորումների համախմբման (կոնսոլիդացման) գործընթաց, որոնք հանդես էին գալիս Աբբասյան խալիֆայության դեմ, ապա Ղազնիների պետության ստեղծումով և հատկապես քաղաքական ասպարեզում սելջուկ-օղուզների հանդես գալով այդ գործընթացը դադարեց և համարյա իսպառ կանգ առավ: Թյուրք-օղուզների հսկայական զանգվածներ տեղափոխվեցին Իրան՝ շեշտակի ձևով ազդելով այդ երկրի էթնիկական-ազգային կազմի ձևավորման վրա:

Մալիքշահի օրոք (1072–1092 թթ.) սելջուկյան պետությունը հասավ իր քաղաքական հզորության բարձրակետին: Նրա տարածքները Արևելքում հասնում էին մինչև Կաշգար և Արալյան ծով, իսկ Արևմուտքում՝ Միջերկրական ու Մարմարա ծովերը: Այդ աշխարհակալության հյուսիսային սահմանն անցնում էր Կովկասյան գլխավոր լեռնաշղթայով ու Սև ծովով, իսկ հարավում՝ Պարսից ծոցով ու Սիրիական անապատով:

Չունենալով խոշոր երկրներ կառավարելու փորձ՝ սելջուկները ստիպված էին վարչական ու ֆինանսական ապարատ կազմակերպել առավելապես իրանական ծագում ունեցող կադրերից: Իրանական պաշտոնական ազնվականության շրջանում ամենակարկառուն ու վառ դեմքը սուլթաններ Ալփ Արսլանի (1063–1072 թթ.) և Մալիքշահի նշանավոր վեզիր, ականավոր պետական գործիչ Աբու Ալի Հասան Թուսին էր (1063–1092 թթ.), որը հայտնի է Նիզամ ալ-Մուլք («Պետության կարգ ու կանոն») պատվանունով: Նա սելջուկյան պետության ողջ քաղաքական վարչության և

ֆինանսների կազմակերպիչն էր, ինչպես նաև սելջուկյան սուլթանների արտաքին քաղաքականության ոգեշնչողն ու ուղղություն տվողը: Իր քաղաքական հայացքները և գաղափարները Նիզամ ալ-Մուլքը շարադրել է մի աշխատության մեջ, որը նա անվանել է «Սիասեթ-նամե» («Կառավարման ձեռնարկ»):

Իրանական ազնվականությունը, ավատատերերը, պաշտոնեությունը, մահմեդական հոգևորականությունը, վաճառական դասը և այլն արագորեն հաշտվեցին սելջուկյան տիրապետության հետ՝ դաշինք որոնելով նվաճողների հետ: Սելջուկյան պետության քաղաքական կառույցի վրա նշանակալից ազդեցություն գործեցին իրանական հասարակության մեջ գոյություն ունեցող սոցիալ-քաղաքական ինստիտուտները: Դա, անշուշտ, չէր նշանակում, որ սելջուկների պետության մեջ այլևս զարգացում չէին ստանալու այն կառույցները և սոցիալ-տնտեսական հարաբերությունները, որոնք բնորոշ էին վաչկատուն թյուրքական հասարակությանը:

XI դարի վերջին սկսվում է սելջուկյան պետության մայրամուտը: Վերջանում ու իր ավարտին է հասնում սելջուկների աշխարհակալության վերելքի ու հզորության ժամանակաշրջանը: Սկսվում է իշխանության համար անզիջում ու դաժան պայքարի մի շրջան, որը պատմության մեջ մտել է «ահդ ալ-Ֆիթրաթ» («խառնակ ժամանակներ») անունով: Ծայր է առնում հսկայածավալ տերության կազմալուծման ու տրոհման գործընթացը: Անշուշտ, դա հետևանք էր սելջուկյան պետական կարգի ռազմաավատական բնույթին բնորոշ արատների: Այդ պետությունը, որը բաղկացած էր տնտեսական զարգացման տարբեր մակարդակ և էթնիկական առումով ոչ միատարր բնակչություն ունեցող մասերից, որպես միասնական ամբողջություն չէր կարող երկար գոյատևել: Սելջուկյան ընդարձակ պետությունը բաժանվեց մեծ ու փոքր իշխանությունների: «Սուլթան» տիտղոսը դադարեց խորհրդանշելուց միանձնյա իշխանությունը: Սելջուկյան տիրույթների տրոհում և մասնատում տեղի ունեցավ նաև Իրանի տարածքում: Արևմուտքում ստեղծվեց Իրաքի սելջուկյան սուլթանությունը (1118–1194 թթ.)՝ Համադան մայրաքաղաքով, որի մեջ մտան նաև Պարսկական Իրաքն ու Արևմտյան Իրանը, ինչպես նաև ողջ Ատրպատականը: Իսկ արևելքում Խորասանը, Սիստանը, Խորեզմը և Մերվի օազիսը կազմեցին Արևելասելջուկյան պետությունը՝ Սանջար իբն Մալիքշահի (1118–1153 թթ.) գլխավորությամբ: Նա իրեն ենթարկեց նաև Մավարաննահրը, Մազանդարանը, Դեմավենդը, Կումիսը, Դամղանը և Ռեյը: Թեև Սանջարը իրեն հռչակեց «Արևելքի տիրակալ» («Մալիք ալ-Մաշրիք»), իսկ այնուհետև ընդունեց «սուլթանների սուլթան» տիտղոսը, սակայն շուտով Միջին Ասիայի թյուրքական ցեղերի՝ օղուզների, թուրքմենների, հալլաջների, չիգիլների և այլն, ռազմաավատական ազնվականությունը սկսում է իր կամքը թելադրել սուլթան Սանջարին:

Հարկ է նշել, որ Իրանում սելջուկյան տիրապետության շրջանում հիմք դրվեց իրանալեզու և թյուրքալեզու ժողովուրդների էթնիկական խառնման ու միավորման գործընթացին: Առհասարակ սելջուկյան պետությունը նշանակալիորեն փոխեց Իրանի ժողովրդագրական հաշվեկշիռը հօգուտ թյուրքալեզու ժողովուրդների: Սակայն սելջուկներին այնուամենայնիվ չհաջողվեց իրենց կողմից նվաճված իրանական ժողովրդին համախմբել «սելջուկյան հայրենասիրության» շուրջ և պարտադրել ընդունել թյուրքական դիմագիծ:

Ճիշտ է, կայսրության ստեղծման համար միանգամայն բավարար էր մահմեդական միասնության գաղափարը, սակայն իրական միասնություն ստեղծելը իրենց ուժերից վեր մի խնդիր դարձավ: «Ադաթի», այսինքն՝ ավանդական ապրելակերպի և չգրված օրենքների ու սովորույթների առկայությունն իրանցիների մոտ այն աստիճանի ուժեղ գտնվեցին, որ սելջուկները չկարողացան այն փոխարինել ինչ-որ նոր և արժանավոր բանով:

Սելջուկ նվաճողներն Իրանում իրենց պահում էին ինչպես զավթիչներ: Նրանք ոտնահարում էին տեղական սովորույթները, ավանդույթները և բարոյական նորմերը: Իրենց լեզվով, ապրելակերպով օտար լինելով տեղացիներին՝ նրանք արժանանում էին իրանական ժողովրդի խոր ատելությունը:

Սելջուկ ավատատերերի կողմից բնակչության շահագործումը, բռնություններն ու ապօրինություններն առաջ բերեցին դիմադրության շարժում, որը, որպես կանոն, ընդունում էր կրոնական գունավորում: Այդ շարժումներից ամենահզորը իսմայիլիական շարժումն էր, որի առաջնորդն ու գաղափարախոսը Հասան իբն աս Սաբբահն էր (մոտ 1055–1124 թթ.): Իսմայիլականները հիմնադրեցին հզոր աստվածապետություն (1090–1256 թթ.), որի մայրաքաղաքը Ղազվինից հյուսիս՝ Էլբուրսի լեռներում գտնվող Ալամուտն էր: Այդ պետության մեջ վերացվեց սելջուկների քաղաքական իշխանությունը:

Իրանի տարածքում սելջուկյան սուլթանությունը ի վերջո տրոհվեց մի շարք անկախ տիրույթների, որոնց ժառանգական կառավարիչները կոչվում էին աթաբեկներ: XII–XIII դարերում առավել կարևոր աթաբեկություններ կազմավորվեցին Ատրպատականում, Ֆարսում և Լուրիստանում:

XIII դարում Խորեզմի հզորացող պետությունը սկսեց կարևոր դեր խաղալ Իրանի քաղաքական կյանքում: Խորեզմշահերի պետությանը հաջողվեց իր տիրապետության տակ միավորել ողջ Իրանը, բացի Խուզիստանից, որը շարունակում էր մնալ խալիֆայության կազմի մեջ:

Խորեզմշահերի պետությունը, որի սահմանները տարածվում էին արևելքում Հինդոս գետից մինչև արևմուտք՝ Զագրոսյան լեռնաշղթա, և հյուսիսում Կասպից և Արալյան ծովերից մինչև հարավում Պարսից ծոց, դարձավ Մերձավոր Արևելքում խոշորագույն պետությունը:

3. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

XIII դ. սկզբին Կենտրոնական Ասիայի խորքերից պատմության թատերաբեմ իջավ մի հզոր ուժ՝ ի դեմս մոնղոլների, որոնք հրով ու սրով նվաճեցին ժամանակի քաղաքակիրթ աշխարհի մեծ մասը և իրենց տիրապետությունը հաստատեցին Խաղաղ օվկիանոսից մինչև Սև և Միջերկրական ծովերը հասնող վիթխարի տարածքների վրա: Մոնղոլները քոչվորական ռազմիկ ցեղեր էին, որոնց տարածման աշխարհագրական գոտին ընդգրկում էր մի ընդարձակ տարածք՝ Իրտիշ գետի վերին

հոսանքներից մինչև Ամուր գետի ակունքները և Մեծ Հինդյան լեռնաշղթան: Մոնղոլները խոսում էին մեկ ընդհանուր լեզվի տարբեր բարբառներով, որը կոչվեց մոնղոլերեն: Նրանց հիմնական մասի դավանանքը շամանիզմն էր, իսկ գլխավոր աստվածը՝ «հավիտենական կապույտ երկինքը»: Մոնղոլների շրջանում տարածում էին գտել նաև բուդդայականությունը և քրիստոնեության նեստորական ուղղությունը:

Ինչպես բոլոր քոչվորական ռազմիկ ժողովուրդները, մոնղոլական ցեղերը ևս մշտական արյունախանձ կռիվների մեջ էին միմյանց հետ: Այդ պայքարն ուղեկցվում էր ամբողջ ցեղերի ոչնչացումով և նոր՝ առավել հզոր ցեղային միությունների կազմավորումով: Ի վերջո այդ պայքարից հաղթանակած դուրս եկավ մի հզոր ցեղային խմբավորման առաջնորդ՝ Թեմուչինը, որը 1206 թ. ընտրվեց համայն Մոնղոլիայի խաքան կամ մեծ խան, և նրան տրվեց Չինգիզ (հզոր) խան պատվավոր անունը (1206–1227 թթ.):

1209 թ. սկսվեցին Չինգիզ խանի աշխարհակալ նվաճումները:

Մինչև Իրանի նվաճմանը ձեռնամուխ լինելը Չինգիզ խանին անհրաժեշտ էր ջախջախել խորեզմշահերի պետությունը, որի կազմի մեջ էր մտնում նաև համարյա ողջ Իրանը, բացի Խուզիստանից և իսմայիլականների Ալամուտյան պետությունից (1090–1256 թթ.): Այդ խնդիրներն իրագործելուց հետո մոնղոլները ձեռնամուխ եղան բուն Իրանի նվաճմանը:

Մոնղոլների առաջին արշավանքը դեպի Իրան տեղի ունեցավ 1220–1222 թթ.: Դա դեռևս երկրի նվաճում չէր, այլ ավերիչ ու կողոպտչական ասպատակություն, որն ուղեկցվում էր զանգվածային գազանություններով, բնակչության անխնա կոտորածներով և այլն: Կիրակոս Գանձակեցին մոնղոլական արշավանքների մասին գրում է. «Ամբողջ երկիրը լցվեց դիակներով, կարծես թե խավարով էր պատած ամբողջ աշխարհը, մարդիկ գիշերն ավելի էին սիրում, քան ցերեկը, և երկիրը դատարկվեց իր բնակիչներից...»: Սակայն այդ ասպատակություններին հետևեց երկրի նվաճումը: Արդեն XIII դարի 50-ական թվականներին մոնղոլական նվաճողների տիրապետության տակ էին Խորասանը, Սիստանը, Մազանդարանը, Պարսկական Իրաքը (Կենտրոնական Իրան) և Ատրպատականը: Այդ նվաճումներն ուղեկցվում էին Իրանի տարածքում գոյություն ունեցող ավատական պետությունների մեծ մասի վերացմամբ: Երկրի հարավում և հարավ-արևմուտքում (Ֆարս, Լուրիստան) դեռևս գոյություն ունեին աթաբեկների ինքնուրույն պետություններ. հյուսիսում իսմայիլականների Ալամուտյան պետությունը՝ Քերմանը, Կարաչինացիների դինաստիայի տիրապետության ներքո էր և այլն:

1251 թ. մոնղոլական ցեղային առաջնորդների մեծ ժողովում՝ ղուռուլթայում, որտեղ մեծ խանի գահը ստանձնեց Մունքե ղաանը (1251–1259 թթ.), որոշվեց արագացնել Մերձավոր և Հեռավոր Արևելքում մոնղոլների կողմից դեռևս չնվաճված հողերի գրավումը: Մունքե ղաանի եղբոր՝ Հուլավու խանի գլխավորությամբ մի ուժեղ զորամիավորում ուղարկվեց Իրան, որն ուներ գործողությունների հստակ ծրագիր՝ ոչնչացնել իսմայիլականների Ալամուտյան պետությունը, հնազանդեցնել Բաղդադի խալիֆային և ավարտին հասցնել Մերձավոր Արևելքի երկրների նվաճումը:

Հայ պատմիչ Մաղաքիա աբեղայի հաղորդած տեղեկությունների համաձայն՝ Հուլավուն իր դրոշի ներքո հավաքեց մինչև 70 հազար զինվոր: 1253 թ. այդ բանակը դուրս եկավ Ղարաղորումից և Թուրքեստանի վրայով սկսեց շարժվել դեպի Իրան: Առաջխաղացումը տեղի էր ունենում շատ դանդաղ, որովհետև հսկայական բանակը շատ ծանրաշարժ էր: Հուլավու խանը (Հուլաղու խան) իր առաջին հարվածն ուղղեց իսմայիլական ուժեղ պետության դեմ: 1256 թ. Էլբուրսի լեռներում մոնղոլական զորքերը պաշարեցին իսմայիլական ամրոցները և մեկը մյուսի հետևից գրավեցին դրանք: Նրանք գրոհով վերցրին նաև Ալամուտ ամրոցը: Չնայած մոնղոլներին ցուցաբերվող կատաղի դիմադրությանը՝ իսմայիլական պետությունն արդեն դատապարտված էր: Մոնղոլները ոչնչացրին այն: Հաշվեհարդարը պարտվածների հետ վերին աստիճանի անողոք էր: Նրա հաջորդ քայլը իրանական տեղական հնագույն ֆեոդալների հնազանդեցումն էր:

1258 թ.՝ Բաղդադը գրավելուց և խալիֆայությունը վերացնելուց հետո, Հուլավու խանը (1256–1265 թթ.) ստեղծեց սեփական ուլուս կամ պետություն, որը 1261 թ. ճանաչվեց մեծ խան Խուբիլայ ղաանի կողմից: Վերջինս Հուլավուին շնորհեց նաև «իլ-խան» (բառացիորեն «ցեղի խան»), «ուլուսի խան» տիտղոսները: Այստեղից էլ այդ պետությունը հայտնի է որպես իլխանների պետություն (1256–1353 թթ.): Այն, ըստ էության, մոնղոլա-իրանական պետություն էր, որն ընդգրկում էր վիթխարի տարածք: Հյուսիսում Կովկասյան լեռնաշղթան նրա սահմանն էր Ոսկե Հորդայի հետ, այնուհետև իր մեջ ներառում էր ողջ Իրանը, Մերվի օազիսը, Հերաթի շրջանը և ներկայիս ամբողջ Աֆղանստանը (բացի Բալխի շրջանից, որը Մավարաննահրի հետ մտնում էր Չաղաթայի ժառանգորդների ուլուսի մեջ), Արաբական Իրաքը՝ Բաղդադ քաղաքով հանդերձ, Ատրպատականը, Արրանը և Շիրվանը, Հայաստանը, Ջազիրան (Վերին Միջագետքը) և Ռումի (Փոքր Ասիայի) արևմտյան մասը՝ մինչև Կրզըլ-Իրմակ գետը: Ռումի սելջուկյան սուլթանությունը, Վրաստանը, շիրվանշահերի պետությունը, տրապիզոնյան թագավորությունը, ներկայիս Աֆղանստանի տարածքում գոյություն ունեցող Կուրտերի իշխանապետությունը և այլն դարձան Հուլավյանների վասալները: Նրանցից իր կախվածությունը ճանաչեց նաև Կիլիկիայի Հայկական թագավորությունը, որը դարձել էր Հուլավյանների հենարանը Եգիպտոսի սուլթանության դեմ պայքարում: Եփրատ գետը Հուլավյանների պետության սահմանն էր Սիրիայի հետ: Հարավում բնական սահման էր Պարսից ծոցը, հարավ-արևելքում Հուլավյանների պետությունը սահմանակցում էր հնդկական իշխանությունների հետ, արևելքում Չաղաթայցիների մոնղոլական պետության հետ սահմանն անցնում էր Ամու Դարյա գետով: Իլխանական պետության կենտրոնը Ատրպատականն էր, իսկ մայրաքաղաքը նախ Մարաղան էր, իսկ ավելի ուշ՝ Թավրիզը:

Եգիպտոսի դեմ պայքարի հրամայականը Հուլավյաններին ստիպում էր շփումների մեջ մտնել Սիրիայի խաչակիրների և Եվրոպայի քրիստոնյա պետությունների, հատկապես Ֆրանսիայի, Ջենովայի, Անգլիայի և Հռոմի պապի հետ Եգիպտոսի մամլուքների դեմ ընդհանուր դաշինք կազմելու նպատակով:

Հուլավյանների պետությունը կառուցված էր այն նույն սկզբունքով, ինչ որ մոնղոլական կայսրությունը: Պետության մեջ բարձրագույն իշխանությունը պատկանում էր իլխանին: Վերջինիս մոտ ծառայության մեջ գտնվող առաջին վեզիրը կամ նայիբը սովորաբար լինում էր պարսիկ: Առհասարակ իլխանների մոտ ծառայող իրանական պաշտոնեությունը հավատարմորեն ու նվիրվածությամբ կատարում էր իր պարտականությունները:

Իրանում մոնղոլների տիրապետության շրջանում մահմեդական հոգևորականությունը և դերվիշական միաբանությունները կարողացան պահպանել իրենց դիրքն ու տնտեսական հզորությունը: Նրանք օգտվում էին մեծ ինքնուրույնությունից և զանազան արտոնություններից: Մոնղոլները պահպանեցին տեղական իրանական ազնվականության միայն մի մասին, մյուս մասին ոչնչացրին, և նրանց հողերն անցան կամ պետությանը, կամ մոնղոլական քոչվորական ազնվականությանը:

Հուլավյանների պետության մեջ, մասնավորապես Իրանում, գոյություն ունեին հողատիրության հետևյալ ձևերը. ա) պետական կամ դիվանի հողեր, բ) ինջու կամ խասինջու հողեր, որոնք պատկանում էին խանին և նրա ազգականներին, գ) մասնավոր հողեր (մուլք), որոնք պատկանում էին ինչպես մոնղոլական, այնպես էլ տեղական ավատատերերին, դ) վակֆային կամ մզկիթապատկան հողեր:

Ողջ պետական վարչությունը ծառայում էր բնակչությունից առավելագույն չափով եկամուտներ կորզելուն: Գյուղացիները պարտավոր էին վճարել ամենաբազմապիսի հարկեր և տուրքեր և կատարել ձրի հարկադրական աշխատանքներ: Հարկերը գանձվում էին ինչպես դրամով, այնպես էլ բնամթերքով: Հարկահավաքները գործում էին բացարձակ անվերահսկելի ձևով՝ հաճախ միևնույն հարկը հավաքելով երկու-երեք անգամ:

Մոնղոլ-թյուրքական քոչվորական ազնվականությունը ամուր կառչած էր Չինգիզ խանի «Մեծ Յասային»: Այն պահանջում էր անվերապահորեն հավատարիմ մնալ քոչվորական ավանդույթներին և չանցնել նստակեցության, ինչպես նաև պահպանել արյան մաքրությունն ու չխառնվել իրանական նստակյաց ազնվականության հետ: Ավելին՝ նստակյաց մահմեդական մշակույթի և իսլամի նկատմամբ ռազմաքոչվորական ազնվականությունը երկար ժամանակ թշնամաբար էր տրամադրված:

Թեև Հուլավու խանը դավանում էր շամանիզմը, սակայն աչքի էր ընկնում մահմեդականների և այլ կրոնների հետևորդների նկատմամբ կրոնական հանդուրժողականությամբ: Իլխանը միաժամանակ գիտության ու գիտնականների մեծ հովանավոր էր:

Հուլավուի մահից հետո Ղուռուլթայը գահ բարձրացրեց նրա որդուն՝ Աբաղա խանին (1265–1282 թթ.): Վերջինիս օրոք սկիզբ առան Արևմտյան Եվրոպայի տերությունների հարաբերությունները մոնղոլ-իլխանների հետ: Թոքուդարը (1282–1284 թթ.) առաջին իլխանն էր, որն ընդունեց իսլամը: Նա սկսեց իրականացնել Հուլավյանների պետության իսլամականացման քաղաքականություն:

Արղուն խանի կառավարման շրջանը (1284–1291 թթ.) փոթորկահույզ և անհանգիստ մի ժամանակաշրջան էր: Անընդհատ տեղի էին ունենում ինքնագլխության

ձգտող քոչվորական ավատատերերի խռովություններ ու ապստամբություններ: Ցանկանալով խորտակել ամենազոր իրանական մահմեդական բյուրոկրատիայի ազդեցությունը, որին ինքը խորապես ատում ու չէր վստահում՝ Արղուն խանը որոշեց պետական ապարատը մաքրել պարսիկներից և նրանց փոխարինել հուդայականներով ու քրիստոնյաներով: Արղուն խանի հակաիսլամական այդ թշնամական դիրքորոշումը պետության մեջ նոր ցնցումների պատճառ դարձավ:

Արղուն խանի որդի Մահմուդ Ղազան խանը (1295–1304 թթ.), ընդունելով իսլամը, սակայն մնալով մոնղոլական հայրենասեր, գնահատում էր հին Իրանի մշակութային ժառանգությունը: Պարսկերենը մնում էր որպես պետական լեզու: Ղազան խանի օրոք իսլամը դարձավ իլխանների պաշտոնական կրոնը:

Իրանի ողջ բազմադարյան պատմության ընթացքում երկրի բնակչության վիճակը մոնղոլների տիրապետության ժամանակ եղել է ամենածանրը: Մոնղոլական արշավանքների հետևանքով ոռոգման ջրանցքներն ու քյարիզները, որպես կանոն, քանդվեցին ու հողով ծածկվեցին, պտղատու ծառերը կտրատվեցին: Գյուղատնտեսությունը խոր անկում ապրեց: Ծաղկուն քաղաքները վերածվեցին անշուք գյուղերի: Իրանի մոնղոլական նվաճումը հանգեցրեց ստրկատիրական կացութաձևի ժամանակավոր վերածննդին: Մոնղոլական զավթիչները հսկայական վնասներ պատճառեցին Իրանի արտադրողական ուժերին:

Իլխան Մահմուդ Ղազան խանը մոնղոլական տիրակալներից առաջինն էր, ով հասկացավ, որ շտապ կարգով պետության մեջ բարեփոխումներ չիրականացնելու դեպքում այն կկանգնի փլուզման վտանգի առջև: Նրա բարենորոգչական քաղաքականության գործնական իրականացման գործում չափազանց կարևոր դեր է խաղացել Ղազան խանի մեծ վեզիր և սահիբ-դիվան, պարսից խոշոր գիտնական-հանրագիտակ Ռաշիդ-ադ-Դին Ֆազլուլլահ Համադանին (1294–1317 թթ.):

Ղազան խանի ժամանակ Իրանում ղեկավար դերը մոնղոլ-թյուրքական ռազմաքոչվորական ազնվականությունից անցավ իրանական պաշտոնեության և առհասարակ աշխարհիկ ու հոգևոր ազնվականության ձեռքը: Այսպիսով՝ իրանական հին ու հարուստ մշակույթն իր հերթական հաղթանակն էր տանում քոչվոր նվաճողների նկատմամբ:

Իրանում մոնղոլական տիրապետության վերջին շրջանում երկրի տարբեր մասերում ծայր էին առել խռովություններ ու ապստամբություններ: Հազիվ էին կարողանում մեկ վայրում ճնշել դրանք, երբ նոր բռնկում էր տեղի ունենում մի այլ վայրում: Գնալով խորանում էր իշխանությունների ճգնաժամը: Պետությունը հայտնվել էր աղետալի վիճակում: Այլևս հնարավոր չէր կանգնեցնել Հուլավյանների տերության քայքայման գործընթացը: Պետության քաղաքական տրոհումը և անդամահատումն իրենց ավարտին հասան վերջին իլխան Թուղա Թիմուր խանի (1336–1353 թթ.) սպանությունից հետո: Իլխանների Հուլավյան պետությունը, որը ժամանակի հզորագույն պետական միավորումներից մեկն էր, ապրելով ծանր հոգեվարք, քայքայվեց:

4. ԻՐԱՆԸ ՄՈՆՂՈԼՆԵՐԻՑ ՀԵՏՈ

Հուլավյանների պետության քայքայումը դեռևս չէր նշանակում ողջ Իրանի տարածքում մոնղոլական տիրապետության վերացում, քանի որ մի շարք նահանգներում իշխանությունը շարունակեց մնալ մոնղոլական և թյուրքական ռազմաքոչվորական ազնվականության ձեռքերում: Հետագայում մոնղոլներն Իրանում աստիճանաբար ձուլվեցին մասամբ այնտեղ ապրող թյուրքերի, մասամբ էլ իրանցիների հետ:

Իլխանների պետության տարածքը վերածվել էր իշխանության համար սուր պայքարի ասպարեզի մոնղոլական, թյուրքական, իրանական ավատատերերի ու ազնվականության առանձին ընտանիքների միջև: Հուլավյանների պետության փլատակների վրա ձևավորվեցին մի շարք անկախ ավատական պետություններ, որոնցից առավել հզորագույններն էին Չոբանյանների (1336–1356 թթ.), Ջելայիրյանների (1340–1432 թթ.), Մուզաֆարյանների (1313/14–1393 թթ.) պետությունները: Այս պետությունների միջև ընթանում էր անզիջում պայքար առաջնության հասնելու համար: Այսպես՝ երկու ճակատամարտերի ընթացքում (1338 թ. Նախիջևանի մոտ և 1340 թ. Մարաղայի մոտ) Չոբանյանները ջախջախեցին Ջելայիրյաններին, որից հետո Չոբանյանների դինաստիան իր իշխանությունը հաստատեց Ատրպատականում, Հայաստանում, Պարսկական Իրաքում և Հյուսիսարևմտյան Իրանում: Ջելայիրյանները հարկադրված էին հաստատվելու գլխավորապես Արաբական Իրաքում:

Չոբանյանները, Ջելայիրյանները և Մուզաֆարյանները միմյանց միջև բաժանեցին Իրանի տարածքի մեծ մասը, թեև ժամանակ առ ժամանակ միմյանց դեմ պատերազմների միջոցով վերաձևում էին իրենց տիրույթների սահմանները:

Հուլավյանների պետության քայքայումից հետո Հարավային Իրանում իլխանների նախկին վասալները փաստորեն դարձան անկախ: Դրանք էին Մեծ Լուրի (Լուրիստանի) աթաբեկները Հազարասպների դինաստիայից, որոնց մայրաքաղաքը Իդաջ քաղաքն էր: Այս դինաստիան տիրում էր նաև Խուզիստանի մի մասին: Հարավային Իրանում անկախ էին Փոքր Լուրի աթաբեկները, Ֆարսի տիրակալները (1336–1357 թթ.), որոնց տիրույթների մեջ էր մտնում նաև Սպահանը, Շեբանգարեի Ֆազլու աթաբեկները և Հորմուզի ծովային պետությունը Պարսից ծոցում: Հին Հորմուզը գտնվում էր ցամաքի վրա՝ Պարսից ծոցից Հնդկական օվկիանոս տանող ճանապարհի ելքի մոտ: Արդեն XIII դ. այն Իրանի համար Հնդկաստանի հետ միջնորդ առևտրի գլխավոր կետն էր: Աֆղանստանում հանգրվանած իլխանների իշխանությունը չճանաչող մոնղոլների, այսպես կոչված՝ նիքուդերիական հորդայի կողոպտչական արշավանքները ստիպեցին Հորմուզի տիրակալին քաղաքը և նավահանգիստը տեղափոխել անապատային, անջուր, արևակեզ ու մերկ Ջերաուն կղզյակը: Հնդկաստանի և Չինաստանի հետ միջնորդ առևտրի հսկայական շրջանառության և մարգարտի որսից ստացվող խոշոր եկամուտների շնորհիվ Հորմուզի տիրակալներն իրենց տրամադրության տակ ունեին վիթխարի նյութական միջոցներ, վարձու զորքեր և ուժեղ ռազմական նավատորմ՝ բաղկացած ավելի քան 300 նավերից: Հորմուզի արաբական ծագում ունեցող տիրակալներն իրենց ենթարկեցին Պարսից

ծոցի Քայս, Քիշմ, Բահրեյն և այլ կղզիները, Քերմանի և Ֆարսի առափնյա շրջանների շատ կետեր և Պարսից ծոցի ողջ արաբական ափը՝ Քալխաթով ու Օմանով հանդերձ:

XIV դարի կեսերին Իրանի հարավում ձևավորվեց մի նոր ավատական պետական միավորում՝ Մուզաֆարյանների դինաստիայի գլխավորությամբ: Սրանք Իրանի արաբ նվաճողների՝ իրանականացման ենթարկված սերնդի ժառանգորդներն էին: Մուզաֆարյան էմիր Մուբարիզ-ադ-Դին Մուհամմեդը 1340 թ. գրավեց Քերման քաղաքը, 1353 թ. էմիր Աբու Իսհակ Ինջուից խլեց Շիրազը, իսկ այնուհետև՝ ողջ Ֆարսը: 1356 թ. նա իրեն ենթարկեց Լուրիստանի տիրակալներին և վերջապես 1357 թ. գրավեց Սպահանը: Այսպիսով՝ Իրանի ողջ հարավը մտցվեց Մուզաֆարյանների պետության կազմի մեջ:

Հենվելով մոնղոլական և թյուրքական քոչվորական ազնվականության վրա՝ Չոբանյանները իրենց տիրակալ Մելիք-Աշրաֆի գլխավորությամբ դաժան շահագործման էին ենթարկում գյուղացի-ռայաթներին և հալածում ու հողազրկում էին նստակյաց հողատեր ազնվականությանը: Վերջիններիս ներկայացուցիչները օգնության խնդրանքով դիմեցին Ոսկե Հորդայի Ջանիբեկ խանին, որն, իր զորքերով մտնելով Թավրիզ, 1356 թ. վերջ տվեց Չոբանյանների պետությանը: Աղբյուրների վկայությամբ, երբ Մելիք-Աշրաֆին տանում էին Թավրիզի փողոցներով, տանիքներ բարձրացած բնակչությունը մոխիր և ավազ էր նետում նրա վրա: Մելիք-Աշրաֆը գահազրկվում և սպանվում է:

XIV դ. վերջերին Ջելայիրյանների պետությունը նշանակալիորեն ընդարձակվել էր: Ջելայիրյան Հասան Բուզուրգի որդի Սուլթան Ուվեյսը, մեկ տարի տևող պատերազմական գործողություններից հետո Թավրիզում, Նախիջևանում, Ղարաբաղում և մի շարք այլ վայրերում ձեռք բերելով հաղթանակ, միավորում է Ջելայիրյանների և Չոբանյանների տիրույթները և իր աթոռանիստը Բաղդադից տեղափոխում է Թավրիզ: Այդ պետության կազմի մեջ էին մտնում Պարսկական Իրաքի մեծ մասը՝ Համադան, Ղազվին և Սուլթանիե քաղաքներով հանդերձ, Քրդստանը (Իրանական), Ատրպատականը, իսկ ոչ պարսկական շրջաններից՝ Հայաստանը և Արաբական Իրաքը: Ջելայիրյան էմիրների նստավայրերն էին Թավրիզը և Բաղդադը: Սակայն Ջելայիրյանների պետությունը ևս, արևելյան մյուս բռնապետությունների նման, բաղկացած էր տնտեսապես միմյանց հետ չշաղկապված ու էթնիկապես տարաբնույթ երկրամասերից:

Իրանի տարածքում ծնունդ առան նաև մի շարք երկրորդական պետություններ: Այսպես՝ Հյուսիսային Խորասանում իշխանությունը զավթեց մոնղոլական օյրաթ ցեղից սերած էմիր Արղունշահը: Այս ընտանիքի տիրույթներն ընդգրկում էին լայնածավալ տարածքներ՝ Սերախս, Աբիվերդ, Նեսա, Թուս, Մեշհեդ, Նիշապուր և այլ քաղաքներով հանդերձ: Չինգիզ խանի եղբոր՝ Օթչիգինի ժառանգորդներից մեկի՝ Թուղա Թեմուր խանի իշխանությունը անվանապես ճանաչվում էր ողջ Հյուսիսային և Արևմտյան Խորասանում, սակայն իրական իշխանությունից նա օգտվում էր միայն Գուրգանում:

Արևելյան Խորասանում դեռևս Հուլավյանների ժամանակ ստեղծվեց մի խոշոր վասալական իշխանություն՝ տեղական Կուրտերի դինաստիայի (1245–1389 թթ.) գլխավորությամբ, որի կենտրոնը Հերաթ քաղաքն էր: Նրա տարածքի մեջ էին մտնում Խորասանի ողջ արևելյան մասը, հյուսիսում մինչև Մերվի օազիսը, այնուհետև Սիստանը, Զաբուլիստանը և ողջ Աֆղանստանը՝ մինչև Սուլեյմանյան լեռները:

Այդ մեծ պետությունը, սակայն, բազմաթիվ ավատական տիրույթների ձևական ռազմավարչական մի միավորում էր: Կուրտերի դինաստիայի անմիջական իշխանության ներքո գտնվում էին Հերաթի օազիսը և Հուր կոչված լեռնային շրջանը:

Խորասանյան վերոհիշյալ պետական կազմավորումներից զատ՝ սոցիալ–կրոնական շարժման հետևանքով այդ ընդարձակ նահանգի արևմտյան մասում XIV դարի առաջին կեսին ծնունդ առավ Սերբադարների կամ Սերբադարյան աստվածապետական պետությունը:

1337 թ. սերբադարներին հաջողվեց գրավել Սաբզեվար քաղաքը, որը նրանք վերածեցին մայրաքաղաքի: Նրանք գրավեցին նաև Սպահանը և մի շարք այլ քաղաքներ: 1338 թ. սերբադարների առաջնորդ Վեջիհ–ադ–Դին Մասուդը ընդունեց սուլթանի տիտղոս: Սերբադարները մոնղոլների տիրապետությունից ազատագրեցին նաև Նիշապուր և Ջամ քաղաքները:

Աղբյուրների վկայությամբ՝ սերբադարները ձգտում էին հասնելու նրան, որ «այսուհետև ոչ մի թյուրք (քոչվոր) մինչև ահեղ դատաստանը չհամարձակվի Իրանում վրան խփել»: Սերբադարյան պետությունը տևական ժամանակ հետևողական պայքար էր մղում Իրանի մոնղոլ և թյուրք նվաճողների դեմ:

5. ԹԵՄՈՒՐՅԱՆՆԵՐ

XIV դ. կեսերին Չաղաթայական երբեմնի հզոր պետությունը, որն իր մականի տակ միավորել էր միջինասիական երկրամասերը, պառակտվեց երկու հակամարտ մասերի: Դրանցից մեկը Մողոլիստանն էր, որտեղ իշխում էր քոչվորական կյանքով ապրող մոնղոլական ցեղերի ավագանին, իսկ մյուսը՝ Մավարաննահրը, ուր տեղի էր ունեցել մերձեցում արդեն կիսով չափ նստակյաց դարձած մոնղոլ–թյուրքական ցեղերի ավագանու և տեղաբնիկ պարսկական ավատատերերի միջև:

Ահա այս միջավայրում քաղաքական ասպարեզ է իջնում Թեմուրը կամ Լենկ (կաղ) Թեմուրը, որը շուտով նոր աղետի էր մատնելու Արևմտյան Ասիան: Պարսկա–արաբական պատմագրությունը նրան համարում է զտարյուն մոնղոլ և Չինգիզ խանի տոհմի շառավիղ, սակայն կա նաև տեսակետ, որ նա կարող էր լինել թյուրք: Այս տեսակետը հիմնավորվում է նրանով, որ Թեմուրի ծնվելու պահին մոնղոլական բարլասների տոհմը, որից սերել էր Թեմուրի հայրը, արդեն թյուրքացվել էր:

1370 թ. Թեմուրը Ղազանի կողմից ընտրվեց միջինասիական ուլուսի մեծ էմիր: Նա այդ պետությունը կառավարեց 1370–ից մինչև իր մահը՝ 1405 թ.: Թեմուրը հիանալի հասկանում էր, որ մոնղոլա–թյուրքական ռազմաքոչվորական ազնվականության հավատարմությունն ապահովելու միակ ձևը արտաքին զավթումներ կատարելն ու նոր հողերի և հարուստ ռազմական ավարի ձեռքբերումն է: Ուստի կազ-

մակերպեց աշխարհավեր կողոպտչական արշավանքներ Ոսկե Հորդայի, Իրանի, Հնդկաստանի, Կովկասի և Առաջավոր Ասիայի երկրների կողմը: Այդ արշավանքների նպատակներից մեկն էր նաև եվրոպա–ասիական առևտրի քարավանային ճանապարհների վրա հսկողության սահմանումը, որը նրան կարող էր բերել հսկայական եկամուտներ:

Իր նվաճողական արշավանքների հետևանքով Թեմուրը ստեղծեց մի կայսրություն, որի տարածքն իր մեջ ներառում էր Վոլգա և Յայիկ (Ուրալ), Օբ և Իրտիշ, Խուանխե և Յանցզի, Հինդոս և Գանգես, Եփրատ և Տիգրիս գետերի հովիտները:

Թեմուրի կողմից Իրանի նվաճումը սկսվեց 1381 թ.: Նախ ընկճվեցին Հերաթի Կուրթ մելիքները: Նույն թվականին ընկավ Սաբզեվարը: Թեմուրն այդ երկու քաղաքների և նրանց հարակից շրջանների վրա դրեց հսկայական ռազմատուգանք: Նրա հաջորդ քայլը եղավ Արևմտյան Խորասանում Սերբադարյան պետության իշխանության ոչնչացումը: 1383 թ.՝ իր դեմ ապստամբած սերբադարներին ճնշելիս, Թեմուրը իր գազանություններով գերազանցեց Չինգիզ խանին: Իսկապես, ապստամբների հետ հաշվեհարդարն ուղղակի սահմռկեցուցիչ էր. 2000 մարդու նա կենդանի թաղել տվեց կառուցվող աշտարակի պատերի մեջ: Այնուհետև նույն՝ 1383 թ. Թեմուրը նվաճեց Սիստանն ու Ղանդահարը, դրանք ավերեց ու ամայացրեց և սպանված մարդկանց գանգերից կառուցեց աշտարակներ: Լենկ Թեմուրը մահվան էր դատապարտում բոլոր այն վայրերի բնակչությանը, որոնք կամովին չէին հայտնում իրենց հնազանդությունը: 1384 թ. նրա զորքերը գրավեցին Գուրգանը՝ այնտեղ ոչնչացնելով Էմիր Վելիի պետությունը: 1385 թ. նրան հաջողվեց իրեն ենթարկել Հյուսիսային Իրանի մի մասը՝ Դամղանից մինչև Սուլթանիե:

Ջելայիրյանների պետությունը, որը ծվատվում էր ներքին երկպառակություններից, ի վիճակի չէր դիմադրելու Թեմուրին, առավել ևս, որ Ոսկե Հորդայի Թոխթամիշ խանը 1385 թ. այդ պետության դեմ կազմակերպել էր ավերիչ ասպատակություն՝ ավերի ու ավարի մատնելով նաև Թավրիզը:

1385 թ. Լենկ Թեմուրը մեծ զորքով մտավ Ատրպատական, գրավեց Սուլթանիե քաղաքը, 1386 թ. գարնանը գրավեց Թավրիզը՝ իր հերթին անխնա կողոպուտի մատնելով այն: Սուլթան Ահմադ Ջելայիրյանը, որն ատելի էր բնակչության համար, դիմեց փախուստի՝ իր տիրույթները թողնելով Թեմուրին: Վերջինս Թավրիզից իր մայրաքաղաք Սամարղանդ տեղափոխեց մեծ թվով գերի արհեստավորների:

1386 թ. Թեմուրի զորքերը Նախիջևանի վրայով արշավեցին դեպի Հայաստան ու Վրաստան: Ժամանակի աղբյուրները սրտաճմլիկ նկարագրություններ են պահպանել Հայաստանում Լենկ Թեմուրի գործած ավերածությունների, բնակչության սրածության, գերեվարության, նյութական ու հոգևոր արժեքների կողոպուտի ու ոչնչացման մասին: Այնուհետև, ձեռնամուխ լինելով Մուզաֆարյանների պետության նվաճմանը, Թեմուրը Իրանի հարավում ծավալեց ռազմական խոշոր գործողություններ և, 1387 թ. գրավելով Սպահանը, նրա վրա դրեց ծանր ռազմատուգանք: Այն Թեմուրի նոքյարների կողմից գանձվում էր այնպիսի դաժանությամբ ու սանձարձակ բռնություններով, որ քաղաքում արհեստավորների և քաղաքային չքավորության

ապստամբություն բռնկվեց, որը գլխավորում էր մի երիտասարդ դարբին: Ճնշելով ժողովրդական այդ ընդվզումը՝ Թեմուրն իր զինվորներին թույլատրեց անողոք դատաստան տեսնել նրա մասնակիցների հետ և քաղաքը մատնել անխնա կողոպուտի: Յուրաքանչյուր զինվորի հրամայված էր բերել որոշակի թվով մարդկանց կտրված գլուխներ: 70 հազար սպանված սպահանցիների գանգերով բռնավորը կառուցեց մի աշտարակ՝ ի ցույց բոլոր նրանց, ովքեր կհամարձակվեն դուրս գալ իր դեմ: 1392 թ. Թեմուրն անողոք դաժանությամբ ճնշեց Գուրգանում բռնկված ապստամբությունը, ապա վերացրեց Մազանդարանի Սեյիդների պետությունը: Նա ամբողջությամբ նվաճեց Մուզաֆարյանների և Ջելայիրյանների պետությունները: 1393 թ. Թեմուրն ավարտեց Իրանի ողջ տարածքի նվաճումը:

Նորանվաճ այդ մեծ երկրի հողերը նա սկսեց բաժանել իր զորքին, հատկապես նրա հրամանատարությանը: Իր կողմն անցած իրանական խոշոր ավատատերերին ևս նա առատորեն հատկացրեց հողեր՝ որպես ավատական տիրույթ (սոյուրղալ): Թեմուրը եռանդուն միջոցառումներ էր իրականացնում նաև իր նվաճած երկրների էթնիկական կազմը փոխելու ուղղությամբ: Նա, օրինակ, Անդրկովկասից և հատկապես Հայաստանից, ինչպես նաև Իրանից գերիների անթիվ-անհամար բազմություն էր տարել Միջին Ասիա և գլխավորապես իր նստավայր Սամարղանդ: Ի դեպ, նա Խորասանից Ղարաբաղ գաղթեցրեց թյուրքական ցեղեր՝ այդ երկրամասի ազգային կազմն արհեստականորեն փոխելու համար: Առհասարակ Լենկ Թեմուրի սովորությունն էր անընդհատ փոփոխել զորքերի ու ժողովուրդների բնակության վայրերը: Դեռևս կենդանության օրոք Թեմուրն իր որդիների միջև բաժանեց Իրանում նվաճված հողերը. Օմար-շեյխին բաժին հասան «Հուլավուի թագավորությունը» և Ֆարսը, Միրանշահին՝ Արևմտյան Իրանը, Ատրպատականը և Արաբական Իրաքը, Շահրուհին՝ Խորասանը, Գուրգանը, Մազանդարանը և Սիստանը: Ուլուսներ ստացան նաև Թեմուրի թոռները: Իսքանդարը դարձավ Համադանի կառավարիչը, Ռուստամը՝ Սպահանի տիրակալը և այլն:

Թեմուրի տիրապետությունն Իրանում նշանակալիորեն դանդաղեցրեց երկրի սոցիալական, տնտեսական ու քաղաքական առաջընթացը:

Թեմուրի մահից հետո (1405 թ.) նրա մեծ ու ընդարձակ աշխարհակալությունը, որը չուներ միասնական տնտեսական ու քաղաքական հիմքեր, սկսեց արագորեն քայքայվել: Խորասանում իշխանության և սուլթանի տիտղոսի համար թեժ պայքար ծավալվեց Թեմուրի որդու՝ Շահրուհի, և թոռան՝ պատանի Խալիլ-սուլթանի միջև: Այն ավարտվեց առաջինի հաղթանակով: Հաղթանակած Շահրուհը (կառավարել է 1405–1447 թթ.) եռանդուն ջանքեր էր գործադրում՝ պահպանելու համար իր իշխանությունը Միջին Ասիայի և Իրանի մեծ մասի նկատմամբ: Թեև դա նրան հաջողվեց, սակայն Թեմուրյաններից Հոսեյին Բայքարիի կառավարման շրջանում (1469–1506 թթ.) ավատական երկպառակությունների հետևանքով Թեմուրյանների պետությունը քայքայվեց ու բաժանվեց երկու մասի՝ միջինասիական ու խորասանյան:

Խլրտումները և արյունահեղ ընդհարումներն ավելի երկարատև ու կատաղի էին Լենկ Թեմուրի պետության արևմտյան մասում ու Ատրպատականում, որտեղ նվաճված երկրների նախկին տերերը, մասնավորապես նախկինում փախուստի դիմած սուլթան Ահմադ Ջելայիրյանը և նրա դաշնակից Կարա Յուսուֆը, որը արևմտյան օղուզների՝ կարա կոյունլու («սև խոյ») քոչվորական ցեղային միության առաջնորդն էր, իշխանության համար անզիջում ու արյունոտ պայքար էին մղում Թեմուրյան Միրանշահի և նրա որդի Օմարի դեմ: Այդ պայքարի ընթացքում՝ 1408 թ., Թեմուրյանների վերջին ազդեցիկ շառավիղը՝ Միրանշահը, սպանվում է:

6. ԿԱՐԱ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ

Թեմուրյանների պետության մայրամուտի շրջանում իշխանության համար քաղաքական պայքարի ասպարեզ էին մտել բազմապիսի ուժեր, որոնցից մեկն էլ, ինչպես նշվեց, Հայաստանում հաստատված թուրքմենական (կարա կոյունլու ցեղախումբը Հայաստան էր գաղթել իշխան Արղունի ժամանակ (1284–1291 թթ.) և բնակություն հաստատել Արածանիի վերին հոսանքներում) կարա կոյունլու ցեղային միության առաջնորդ Կարա Յուսուֆն էր: Նա, իր դաշնակից Ջելայիրյան սուլթան Ահմադի հետ Միջագետքում պարտություն կրելով Թեմուրյաններից (1396 թ.), որպես քաղաքական վտարանդի ապաստան էր գտել Եգիպտոսում: Թեմուրի մահից հետո վերադառնալով՝ 1410 թ. նախկին դաշնակիցների միջև բորբոքվում է սուր մրցակցություն:

Կարա Յուսուֆը, մի քանի հաղթանակներ տանելով Թեմուրյանների նկատմամբ, գրավում է Ատրպատականը՝ Թավրիզ քաղաքով հանդերձ: Նրա տիրապետության տակ է անցնում նաև Հայաստանի մեծ մասը: Նրա նվաճումները ծավալվում են նաև Միջագետքի և Փոքր Ասիայի կողմերը:

Այդ նվաճումների հետևանքով արևմուտքում կարա կոյունլուները դարձան ակ կոյունլու («սպիտակ խոյ») օղուզական քոչվոր թուրքմենների անմիջական հարևան: Թեև նրանք ցեղակից էին, բայց միմյանց հետ գտնվում էին մշտական թշնամանքի մեջ էին: Այս երկու ցեղերն ունեին նաև կրոնադավանաբանական սուր հակասություններ. կարա կոյունլուները շիաներ էին, իսկ ակ կոյունլուները՝ սուններ: Բացի այդ, ակ կոյունլուները օղուզների դեմ պայքարում հանդես էին գալիս որպես Թեմուրյան Շահրուհի դաշնակիցներ:

1410 թ. Կարա Յուսուֆը ռազմերթի ելավ ակ կոյունլուների առաջնորդ Կարա Յուլուք Օսմանի դեմ, որն իր ամենաուժեղ հակառակորդն էր արևմուտքում: Բախումը տեղի ունեցավ նույն թվականին Մշո դաշտում և ավարտվեց Կարա Յուսուֆի հաղթանակով:

Օգտվելով Կարա Յուսուֆի բացակայությունից՝ Ջելայիրյան սուլթան Ահմադը փորձում է ազատվել իր «դաշնակցի» տհաճ ընկերակցությունից և դաշինքի մեջ մտնելով շիրվանշահ Իբրահիմի հետ՝ գրավում է կարա կոյունլուների պետության կենտրոն Թավրիզը: Լուր ստանալով այդ մասին՝ Կարա Յուսուֆը շուտափույթ հաշտություն է կնքում ակ կոյունլուների հետ, սրընթաց արշավով վերադառնում է Ատրպատական և, 1410 թ. օգոստոսի 30-ին տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնելով ապստամբներին, հրամայում է խեղդամահ անել Ջելայիրյան

սուլթան Ահմադին ու սրի քաշել նրա որդիներին: Այսպիսով՝ Ջելայիրյանների պետության տարածքների մեծագույն մասը՝ Ատրպատականը, Հայաստանը և Արաբական Իրաքը, Կարա Յուսուֆը միացրեց կարա կոյունլուների նորաստեղծ պետությանը (1410–1468 թթ.):

Թեմուրյան Շահրուհը քաջ գիտակցում էր, թե ինչ վտանգ են ներկայացնում կարա կոյունլուները իր պետության համար: Ուստի նրանց դեմ մղեց երեք պաշտպանողական պատերազմ՝ ձգտելով թույլ չտալ նրանց հետագա նվաճումներն Իրանում:

Կարա կոյունլու առաջնորդներից Իսքանդարը ձգտում էր ստեղծելու կենտրոնաձիգ ուժեղ պետություն: Սակայն քանի որ իր այդ ձգտումը հակասում էր թուրքմենական ռազմաքոչվորական ազնվականության շահերին, Իսքանդարն աշխատում էր հենվել «երրորդ ուժի», այդ թվում նաև հայ էթնիկական տարրի վրա: Պատահական չէ, որ նա իրեն անվանում էր «շահ–ի արման» (թագավոր Հայոց):

Կարա կոյունլու տիրակալներից ամենաաչքի ընկնող դեմքը, անկասկած, սուլթան Ջահան–շահն էր (1436–1467 թթ.): Վերջինս գահը ստացել էր Թեմուրյան Շահրուհի ձեռքից և իրեն համարելով նրա վասալը՝ բավարարվում էր Ատրպատականում, Հայաստանում և Արաբական Իրաքում իր ունեցած տիրույթներով: Սակայն Շահրուհի մահից հետո (1447 թ.) նրա լայնածավալ պետությունը ներքին երկպառակությունների, դինաստիական վեճերի և գահակալական կռիվների պատճառով սկսեց քայքայվել: Ջահան–շահն ընդունեց սուլթանի տիտղոս, ինչը նշանակում էր, որ նա ձեռք էր բերել անկախ տիրակալի կարգավիճակ: Հենց այդ պահից նրա արտաքին քաղաքականության մեջ կտրուկ շրջադարձ սկսվեց: Նա աշխատում էր ընդարձակել իր պետության սահմանները՝ արևելքում պատերազմներ մղելով լենկթեմուրյան տոհմի իշխանների, իսկ արևմուտքում՝ Թեմուրյանների զորեղ դաշնակիցներ հանդիսացող ակ կոյունլու թուրքմենների դեմ: 1453 և 1457 թթ. միջև ընկած շրջանում Ջահան–շահը նվաճեց Պարսկական Իրաքը, Խուզիստանը, Ֆարսը և Քերմանը: Այդ զավթումները քոչվորների կողմից ուղեկցվում էին արյունալի կոտորածներով ու ավերածություններով: Առանձնապես տուժեցին Սուլթանիե և Սպահան քաղաքները: Առաջինն ավերվելուց հետո այլևս երբեք չվերածնվեց, իսկ երկրորդը ընդհուպ մինչև XVI դարի վերջը կորցրեց իր տնտեսական նշանակությունը:

1457 թ. Ջահան–շահը Թեմուրյանների դեմ սկսում է մի նոր արշավանք: Նրանցից խլելով Համադանը, Ռեյը, Ղազվինը և Գիլանը՝ դրանք միացնում է իր տիրույթներին և ապա շարունակում ռազմերթը դեպի արևելք՝ Խորասանի կողմը, հասնելով մինչև Հերաթ: Սակայն նվաճված հսկայածավալ երկրները տևական ժամանակով իրենց ձեռքում պահելու համար կարա կոյունլուները չունեին անհրաժեշտ ուժեր: Ուստի, երբ Թեմուրյան պետության մեջ դադարեցին գահակալական կռիվները, և սուլթան Աբու Սայիդը, գրավելով իշխանությունը, Ջահան–շահից պահանջեց հրաժարվել նվաճված երկրամասերի մի մասից, վերջինս ստիպված էր ընդունել այդ առաջարկը. 1459 թ. Ջահան–շահի և լենկթեմուրյան սուլթան Աբու Սայիդի (1451–1469 թթ.) միջև կնքվեց պայմանագիր Իրանը միմյանց միջև բաժանելու վերաբերյալ. Իրանական բարձրավանդակի Դաշթ–ե Քեվիր և Դաշթ–ե Լութ անապատները ճանաչվեցին որպես նրանց պետությունների միջև սահմանագծեր: Հաշտության պայմանագրին կից կողմերը ստորագրեցին նաև մեկ այլ փաստաթուղթ ռազմական դաշինքի վերաբերյալ, որը ենթադրում էր փոխադարձ օգնություն իրենց երկրներում ավատական երկպառակությունների և ժողովրդական շարժումների դեմ:

Այսպիսով, ամրապնդելով իր ներքին դրությունը՝ Ջահան–շահը հետևողականորեն սկսում է նախապատրաստվել մեծ պատերազմի ակ կոյունլուների դեմ՝ վերջնականապես լուծելու համար այն հարցը, թե ով է հանդիսանալու տարածաշրջանի թելադրող ուժը: Կողմերի քաղաքական մրցակցության հանգուցալուծումը տեղի ունեցավ 1467 թ., երբ Հայաստանում ակ կոյունլուների առաջնորդ էմիր Հասանը, որի իսկական անունը Հասան բեկ Ակ կոյունլու էր, և նիհար ու բարձրահասակ լինելու պատճառով ստացել էր «ուզուն» («երկար») մականունը, ջախջախեց կարա կոյունլու զորքերին: Ուզուն Հասանը սպանված Ջահան–շահ Կարա կոյունլուի գլուխն ուղարկեց նրա դաշնակից, թեմուրյան սուլթան Աբու Սայիդին, իսկ Ջահան–շահի որդու գլուխը՝ օսմանյան սուլթան Մեհմեդ Բ–ին: Ողջ Հայկական բարձրավանդակը, Ատրպատականը և կարա կոյունլուներին պատկանող Իրանի տարածքներն անցան հաղթողին: Այսպիսով՝ կարա կոյունլու պետությունը կործանվեց և չքացավ պատմության ասպարեզից՝ իր տեղը զիջելով ակ կոյունլու պետությանը:

7. ԱԿ ԿՈՅՈՒՆԼՈՒՆԵՐ

Ակ կոյունլու («սպիտակ խոյ») թուրքմենական վաչկատուն ցեղերը կարա կոյունլուների հետ Միջին Ասիայից Մերձավոր ու Միջին Արևելք էին գաղթել XIII դարի վերջերին և քոչում էին Տիգրիս գետի վերին հոսանքների շրջանում և Դիարբեքիրի ու Սեբաստիա (Սվաս) քաղաքների միջև: Ակ կոյունլուների մեջ առաջատար ցեղը Բայանդուրն էր, ուստի և նրանց դինաստիան երբեմն կոչում են Բայանդուրյան:

Կարա կոյունլու ցեղերի միավորումը դեռևս XIV դ. վերջերից տարածքներ, արոտավայրեր և ռազմական ավար ձեռք բերելու համար պատերազմներ էր մղում ակ կոյունլուների դեմ: Սակայն նրանց հակամարտությունը լայն թափով սկիզբ առավ XV դարի սկզբներից, երբ նրանք բախվում էին միմյանց հետ իրարից երկրամասեր գրավելու համար:

Ակ կոյունլուները, ինչպես նշվել է, Թեմուրյանների դաշնակիցն էին: Նրանք հաճախ թշնամական հարաբերությունների մեջ էին գտնվում նաև օսմանյան թուրքերի հետ և սերտ դաշնակցային հարաբերություններ էին պահպանում Տրապիզոնի կայսրության (1204–1461 թթ.) հետ: Տրապիզոնը ակ կոյունլուների համար ծառայում էր որպես առևտրական նավահանգիստ:

Ակ կոյունլու դինաստիայի հիմնադիր Կարա Օսմանի մահից հետո (1435 թ.) նրա ժառանգորդների միջև սկսվեցին ներքին երկպառակություններ, որոնց վերջ տվեց նրա թոռը՝ Ուզուն Հասանը՝ իրեն հռչակելով սուլթան (1453–1478 թթ.):

Ուզուն Հասանի տատը Տրապիզոնի կայսերական տոհմի իշխանուհի էր: Ինքն էլ ամուսնացած էր Տրապիզոնի Կալո–Յոհաննես Կոմնենոս կայսեր աղջկա՝ Կատա-

ինայի հետ, որին եվրոպական ճանապարհորդներն իրենց ուղեգրություններում անվանում են Դեսպինա («տիրուհի»):

Ուզուն Հասանը կազմեց օրենքների մի ժողովածու, որը կոչվում էր «Կանուն-նամե-ե Հասան փադիշահ»: Դա հարկային համակարգի և բնակչության տարբեր խավերից գանձվող հարկերի ու տուրքերի մի կանոնագիրք էր, որ երկար ժամանակ՝ մինչև XVI դարի վերջը, կիրառվում էր որպես հարկային ու մաքսային համակարգի ուղեցույց Իրանում և Օսմանյան կայսրության արևելյան երկրամասերում: Ուզուն Հասանի օրոք «սև» և «սպիտակ» խոյերի միջև սկսվեց անզիջում մի պայքար: Ուզուն Հասանին հաջողվեց իրեն ենթարկել համարյա ողջ Արևմտյան Իրանը, ինչպես նաև Հայկական բարձրավանդակը: Նա ձգտում էր ընդլայնելու իր տիրույթները ոչ միայն Իրանի տարածքում, այլև Փոքր Ասիայում: Օսմանյան թուրքերի դեմ պայքարում ձգտելով դաշնակիցներ ձեռք բերելու՝ Ուզուն Հասանը դիվանագիտական շփումների մեջ մտավ եվրոպական պետությունների հետ: 1469 թ., օրինակ, նա Վենետիկ ուղարկեց լայն լիազորություններով օժտված մի դեսպանություն, որի կազմում կարևոր դերակատարություն ուներ միջազգային առևտրով զբաղվող մեծահարուստ հայ վաճառական խոջա Միրաքը: Եվրոպական երկրներում Ուզուն Հասանի դիվանագիտական հանձնակատարների բանակցություններն ի վերջո ավարտվեցին հակաօսմանյան դաշինքի ստեղծումով, որի մեջ էին մտնում Եվրոպայում Վենետիկի հանրապետությունը, Հռոմի պապը, Նեապոլի թագավորությունը և Հունգարիան, իսկ Ասիայում՝ ակ կոյունլուների պետությունը, Կարամանիան և Կիպրոսը: Իրենց հերթին եվրոպացիները ևս դիվանագիտական հանձնակատարներ էին ուղարկում Թավրիզ՝ Ուզուն Հասանի մայրաքաղաքը: Վենետիկի ծերակույտը նույնիսկ որոշեց առանձին դաշինք կնքել Ուզուն Հասանի հետ, որը դարձել էր օսմանյան պետության միակ հզոր հակառակորդն արևելքում:

Ինչպես նշվեց, 1467 թ. Ուզուն Հասանը ջախջախեց կարա կոյունլուներին: Այդ մեծ հաղթանակից հետո նա հիմնադրեց մի հսկայական պետություն (1468–1502 թթ.), որի սահմանները ձգվում էին Եփրատից մինչև Իրանի արևելյան կողմերը և Կովկասից ու Տրապիզոնից մինչև Հնդկական օվկիանոս: Այդ պետության կազմի մեջ էին մտնում Հայաստանը, Շիրվանը (մինչև Կուր գետը), Ատրպատականը և Արրանը, Իրանական Քրդստանը, Պարսկական և Արաբական Իրաքը, Խուզիստանը, Ֆարսը, Քերմանը: 1469 թ. Ուզուն Հասանը ջախջախեց նաև թեմուրյան Աբու Սայիդին և մահապատժի ենթարկեց:

Կարա կոյունլու ցեղերի մնացուկները մտան ակ կոյունլու ցեղային միության կազմի մեջ: Իր ներքին կառուցվածքով ակ կոյունլուների պետությունն ըստ էության ոչնչով չէր տարբերվում կարա կոյունլուների և Թեմուրյանների պետություններից: Դա տիպիկ ռազմաքոչվորական միապետություն էր: Հենվելով գլխավորապես քոչվորական ազնվականության վրա՝ Ուզուն Հասանը ձգտում էր իր կողմը գրավելու նստակյաց իրանական ազնվականությանը:

Ակ կոյունլու պետության գլխավոր թշնամին Օսմանյան կայսրությունն էր, որը կասեցրեց նրա հետագա նվաճողականությունը: 1473 թ. Եփրատ գետի վերին հոսանքների մոտ գտնվող Դերջան կոչված վայրում տեղի ունեցած արյունահեղ ճակատամարտում օսմանցիները պարտության մատնեցին ակ կոյունլուներին: Դրանից հետո Ուզուն Հասանը խուսափում էր ուժեղ հակառակորդներից և բավարարվում՝ թույլ հարևանների դեմ պատերազմներ մղելով: Այսպես՝ նա երկու անգամ կողոպտչական արշավանքներ կազմակերպեց դեպի Վրաստան:

1478 թ.՝ Ուզուն Հասանի մահից հետո, նրա ժառանգորդների օրոք բացահայտվեց պետության թուլությունը: Տնտեսության բնագավառը սկսել էր նկատելի անկում ապրել: Գործող հարկային համակարգը սպառել էր իրեն և չէր նպաստում պետության գործարար կյանքի ակտիվացմանը: Ակ կոյունլուների տերությանը այդպես էլ չհաջողվեց դառնալ մեկ միասնական ամբողջություն: Ուզուն Հասանի մահից հետո նրա հինգ որդիների միջև, որոնք տարբեր մայրերից էին, անմիջապես բռնկվեցին գահակալական կռիվներ: Եղբայրներից մեկը, որի մայրը Տրապիզոնի իշխանուհի Դեսպինան էր, խեղդամահ արվեց: Հոր գահը նախ գրավեց Ուզուն Հասանի անդրանիկ որդի Սուլթան Խալիլը (1478 թ.): Վեց ամիս հետո երկրորդ եղբայրը՝ Յաղուբը, սպանեց նրան և գահ բարձրանալով՝ իշխեց ավելի քան 12 տարի (1478–1490 թթ.): Վերջինս ռազմական գործին անընդունակ, թույլ ու անկամ մի անձնավորություն էր: Նրա օրոք պետության ղեկը, փաստորեն, գտնվում էր Ուզուն Հասանի անվանի զորավարների՝ Սուլեյման բեկ Բիժան-օղլուի, Բայանդուր բեկի և Սուֆի Խալիլի ձեռքերում: Շնորհիվ այս փորձառու հրամանատարների Յաղուբը մի շարք հաղթանակներ տարավ արևելքում՝ Թեմուրյանների, արևմուտքում՝ օսմանյան թուրքերի, իսկ հարավում՝ Եգիպտոսի և Սիրիայի սուլթանության դեմ: Այդ հաղթանակների շնորհիվ ակ կոյունլուների պետության քաղաքական վարկը Արևելքում ժամանակավորապես վերականգնվեց:

1490 թ.՝ Յաղուբ փադիշահի մահից հետո, գահաժառանգման համար նրա որդիների միջև սկսվեցին նոր երկպառակություններ: Քոչվորական ֆեոդալների տարբեր խմբավորումներ ձգտում էին գահին նստեցնելու իրենց դրածոներին, որպեսզի նրանց անունից կառավարեն իրենք: Այդ արյունահեղ ներքին կռիվների ժամանակ սպանվեցին բազմաթիվ ամիրզադեներ: Մի պահ այդ կատաղի ու անզիջում պայքարը դադարեց, երբ 1493 թ. ակ կոյունլուների պետության գահը ստացավ Ուզուն Հասանի թոռներից մեկը՝ Ռուստամը: Սրա իշխանության չորրորդ տարում, սակայն, 1496 թ. կրկին ծայր առան ներքին խռովություններ: Ռուստամի դեմ ապստամբեց իր հորեղբոր՝ Ուղուրլու Մուհամմեդի որդի Ահմադը: Արաքսի ափին՝ Ջուղայի դաշտում, Ահմադը պարտության մատնեց նրան, սպանեց և նրանից խլեց գահը: Ահմադ փադիշահը փորձեց կանխել պետության քայքայումը ավատական անջատողականության գլխավոր հրահրողների՝ թյուրք քոչվորական ֆեոդալների հզորության ու ազդեցության սահմանափակման ճանապարհով: Նա մահապատժի ենթարկեց նրանցից մի քանիսին, զրկեց իրենց հողային տիրույթներից (սոյուրղալներից) և այլն: Քոչվորական ազնվականության դեմ մղված պայքարում Ահմադ փադիշահը հենվում էր իրանական քաղաքացիական պաշտոնեության վրա: Միաժամանակ գյուղացիության համակրանքը շահելու նպատակով նա կատարեց հարկային բարեփոխում՝

պահպանելով միայն այն հարկատեսակները, որոնք ուղղակիորեն հիմնված էին շարիաթական իրավունքի վրա (խարաջը, ուշրը, զաքյաթը, ջիզյան), և վերացնելով մի շարք ծանր հարկեր ու տուրքեր: Դա առաջ բերեց ցեղային ազնվականության զայրույթը: Պարսկական Իրաքում և Ֆարսում բարձրացած խռովության ճնշման ժամանակ Ահմադը սպանվեց՝ կառավարելով ընդամենը ութ ամիս: Գահի շուրջ պայքարը, սակայն, չէր դադարում: Տիրակալները փոխարինում էին մեկը մյուսին՝ որպես կանոն իրենց տիրապետության բռնի ավարտով: Ի վերջո 1500 թ. ակ կոյունլուների պետությունը տրոհվում ու բաժանվում է երկու մասի. Հայաստանն ու Ատրպատականը բաժին են ընկնում Ալվանդին, իսկ Արաբական Իրաքը, Պարսկական Իրաքը և Ֆարսը՝ սուլթան Մուրադին: Վերջինս, սակայն, կարողացավ ամրապնդվել միայն Պարսկական Իրաքում: Միասնական պետության տրոհումն ու անդամահատումը նոր մարտահրավերների առջև էին կանգնեցնում ակ կոյունլուների պետությունը:

Այսպիսով՝ XVI դարի սկզբին Իրանն իրենից չէր ներկայացնում մեկ միասնական քաղաքական ամբողջություն: Յեզդում և Քերմանում կառավարում էին Ակ կոյունլու դինաստիայի այլևայլ ներկայացուցիչներ: Խուզիստանը գտնվում էր արաբական շիական Մուշաշա («Փայլուն») դինաստիայի տիրապետության տակ: Արերքուհում, Քաշանում, Սեմնանում, Սիստանում նստած էին անկախ կառավարիչներ: Մազանդարանը բաժանված էր առնվազն տասը տեղական դինաստիաների միջև: Գիլանում կային երկու էմիրություններ՝ Լահիջանի «Բիյե փիշ» և Ռեշտի «Բիյե փաս» էմիրությունները: Թալիշը հանդիսանում էր առանձին խանություն: Արևելքում Խորասանը ներկա Աֆղանստանի և Թուրքմենստանի հետ համատեղ կազմում էր Թեմուրյան սուլթան Հուսեին Բայքարի (1469–1506 թթ.) պետությունը՝ Հերաթ մայրաքաղաքով: Բալխում և Ղանդահարում առկա էին առանձին կառավարիչներ, որոնք անվանապես կախում ունեին սուլթան Հուսեին Բայքարից:

Թվարկված պետություններից ամենաուժեղներն ու կազմակերպվածներն էին համարվում ակ կոյունլուների և Խորասանի Թեմուրյանների պետությունները:

Ակ կոյունլու թուրքմեն տիրակալների նկատմամբ կուտակված ատելությունն աշխատում էին օգտագործել արդաբիլյան շեյխերը կամ Սեֆյան տոհմի ավատատերը, որոնց ազդեցությունը Ատրպատականի հյուսիսարևելյան մասում սկսել էր աճել՝ դեռևս XV դարի արշալույսից սկսած:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Դեռևս XIII դ.՝ մոնղոլական տիրապետության շրջանում, Իրանում լայն տարածում գտան սուֆիական–դերվիշական միաբանությունները: Սուֆիզմը կամ սուֆիականությունը կրոնական–փիլիսոփայական մի ուսմունք է, որը ծնունդ է առել իսլամի հայտնվելուց մեկ–երկու դար հետո: Իրանում սուֆիզմը հայտնի էր արդեն IX դ., սակայն հատկապես լայն տարածում գտավ՝ XI դարից սկսած:

Ի թիվս Իրանի այլևայլ վայրերի՝ Ատրպատականում ևս XIII դ. ծնունդ են առնում մի շարք դերվիշական–սուֆիական միաբանություններ, որոնցից մեկը շեյխ Սեֆի–ադ–Դին Իսհաքի (1252–1334 թթ.) անունով կոչվեց «Սեֆեվիյե»: Սեֆի–ադ–Դին Իսհաքը և իր մեծ գերդաստանը, ինչպես նաև նրա հետևորդներն ու ժառանգորդները («մուրիդներ») ապրում էին Ատրպատականի Արդաբիլ քաղաքում: Սեֆյանները հարեցին իսլամի շիական ուղղությանը՝ նպատակ ունենալով նրա ժողովրդականությունն օգտագործելու իրենց շահերի օգտին: Սեֆյանների հետևորդների շրջանում, դեռևս XIV դարից սկսած, արմատավորվել էր մի ավանդություն այն մասին, որ Սեֆյանները Ալիից սերված յոթերորդ շիական իմամ Մուսա Քազիմի ժառանգորդներն են:

Շիական հիմնական գաղափարն այն մասին, որ մահմեդական համայնքի օրինական ղեկավար կարող է հանդիսանալ միայն Ալիի ժառանգորդներից որևէ մեկը, զանգվածների կողմից մեկնաբանվում էր այն իմաստով, որ Իրանում կառավարող դինաստիաները օրինական չեն, ինչպես նաև օրինական չի կարող լինել տիրապետող սուննիական շարիաթը:

XV դարում Սեֆյանների գլխավոր հենարան դարձան Ատրպատականում և Հայաստանում թափառող թրքախոս քոչվոր ցեղերը, որոնք ունեին տարբեր ծագում: Նրանց մեծ մասը գաղթել էր Ատրպատական և բուն Իրան Փոքր Ասիայից՝ դժգոհ լինելով օսմանյան սուլթանների կենտրոնացման ու ծանր հարկային քաղաքականությունից: Սկզբնապես այդ ցեղերի թիվը յոթն էր՝ շամլու, ռումլու, ուսթաջլու, թեքելլու, աֆշար, ղաջար, զուլքադար, որոնցից միայն շամլու և ռումլու ցեղերն էին իրենց ամբողջ կազմով ենթարկվում Սեֆյաններին: Հետագայում՝ XV դ. երկրորդ կեսին, այդ ցեղերը ստացան «ղզլբաշներ» կամ «կզլբաշներ» («կարմրագլուխներ») ընդհանուր անվանումը, քանի որ այդ ռազմիկ քոչվորները որպես տարբերանշան սկսեցին կրել տասներկու ալ երիզներով չալմա («թաջ»)՝ ի պատիվ տասներկու շիական

իմամների: Հենց սրանց անունով Սեֆյանների պետությունը հաճախ անվանվում էր «ղզլբաշական պետություն» («դոուլեթ-ի ղզլբաշ»):

Հետագայում ղզլբաշական ցեղերի թիվն ավելացավ շնորհիվ այն բանի, որ նրանց միացան նաև թյուրքալեզու այլ ցեղեր: Ղզլբաշների զինված ջոկատները գտնվում էին Արդաբիլի շեյխերի տրամադրության տակ: Այդ ջոկատները տոգորված էին կրոնական մոլեռանդությամբ ու ռազմաշունչ ոգով և անվերապահորեն ենթարկվում էին իրենց առաջնորդների կամքին: Ղզլբաշական ցեղերը Սեֆյաններից կախման մեջ էին ինչպես կրոնական, այնպես էլ քաղաքական առումով: Շեյխին ընդունում էին որպես իրենց հոգևոր առաջնորդ, իսկ իրենց համարում էին նրա «մյուրիդը», վասալը՝ միաժամանակ հանդիսանալով նրա հավատարիմ զինվորը: Սեֆյան միաբանությունը խաղաղ դերվիշական եղբայրությունից, ինչպիսին այն հանդիսանում էր XIV դարում, աստիճանաբար վերածվեց մի յուրահատուկ հոգևոր-ասպետական օրդենի: XV դ. երկրորդ քառորդից սկսած՝ Սեֆյան շեյխերը, «հանուն հավատի» նշանաբանով ղզլբաշական ցեղային զորամիավորումների գլուխ անցած, սկսեցին հաճախակի ռազմարշավներ կազմակերպել դեպի հարևան ոչ մահմեդական երկրները՝ Դաղստան, չերքեզների երկիրը (սրանք դեռևս ամբողջովին չէին ընդունել իսլամը), Վրաստան, տրապիզոնյան թագավորություն և այլն: Կրոնական շղարշով սքողված այդ արշավանքները ոչ այլ ինչ էին, եթե ոչ կողոպտչական ասպատակություններ, որոնք «հավատի մարտիկներին» բերում էին հարուստ ավար, հատկապես ձիեր, անասուններ և երկսեռ գերիներ, որոնց ստրկացնելով՝ օգտագործում էին ծանր աշխատանքների համար կամ վաճառում Արդաբիլի և այլ քաղաքների «եսիր բազարներում» (ստրկավաճառանոցներում):

Տասնամյակներ շարունակ Արդաբիլի շեյխերի և Շամախիի շիրվանշահերի միջև գոյություն ուներ անհաշտ թշնամանք: Դեպի Վրաստան, Դաղստան և չերքեզների երկիր արշավանքներ կազմակերպելու ժամանակ ղզլբաշները անցնում էին շիրվանշահերի տիրույթների վրայով: Կողմերի միջև թշնամանքն ու պայքարը առերևույթ ուներ նաև դավանաբանական բնույթ. շիրվանշահերը հետևում էին սունիի դավանանքին, և բացի այդ, նրանք Վրաստանի դաշնակիցն էին:

Արշավանքներից մեկի ժամանակ Սեֆյան շեյխ Ջունեյդը (1447–1460 թթ.) սպանվեց, սակայն նրա որդի Հեյդարը (1460–1488 թթ.) շարունակեց հոր գործը: Օգտվելով ակ կոյունլուների թուլացումից՝ Հեյդարը կարողացավ, հենվելով ղզլբաշ ցեղերի վրա, իրեն ենթարկել շրջակա էմիրներին: Սակայն ընդհարումներից մեկի ժամանակ շեյխ Հեյդարը ևս սպանվեց (1488 թ.) ակ կոյունլու Ուզուն Հասանի որդի Յաղուբի (1479–1490 թթ.) կողմից: Շիրվանշահ Ֆարրուխ Յասարը, որին օգնում էին ակ կոյունլու սուլթանները, 1489 թ. գրավելով Արդաբիլ քաղաքը, կոտորեց շեյխ Հեյդարի ամբողջ գերդաստանը: Փրկվեց միայն մանկահասակ Իսմայիլը՝ շեյխ Հեյդարի կրտսեր որդին, որին, ըստ ավանդության, կարողացան փախցնել Հայաստան և թաքցնել Աղթամար կղզում:

Ընթանալով իր հոր քաղաքական շավղով՝ ընդամենը 13 տարեկան Իսմայիլը, օգտվելով իրենց թշնամի ակ կոյունլուների ներքին երկպառակություններից, սկսում է իր շուրջը համախմբել Ատրպատականում, Հայաստանում և Փոքր Ասիայում ափոված թյուրքական ցեղերին և նրանցից ստեղծել զինական ուժեր: Նրան զինվորագրվեցին նաև Գիլանի և Թալիշի ավատատերերը: Կարճ ժամանակամիջոցում նրան հաջողվում է ստեղծել մի պատկառելի բանակ, որն ընդունակ էր լուծելու ռազմական և քաղաքական բարդ խնդիրներ: 1500 թ. Արդաբիլում տեղի է ունենում ղզլբաշ էմիրների հավաք, որտեղ նրանք, իրենց հավատարմությունը հայտնելով Իսմայիլին, նրա դրոշի ներքո արշավանքի են ելնում շիրվանշահերի դեմ՝ Ֆարրուխ Յասարից վրեժխնդիր լինելու համար: Ջաբանի կոչված վայրում տեղի ունեցած ճակատամարտում շիրվանշահը պարտություն կրեց ու գլխատվեց: Տիրելով Շամախի քաղաքին ու Շիրվանին՝ Սեֆյանները այնտեղ ափոեցին զարհուրելի ասպատակ: Այնուհետև Իսմայիլը մի քանի ամիսներ նվաճեց Ղարաբաղում: 1501 թ. նա իր զենքն ուղղեց ակ կոյունլու սուլթան Ալվանդի դեմ: Ճակատամարտը տեղի ունեցավ Նախիջևանի մոտ՝ Շարուրի հարթավայրում: Իսմայիլը գլխովին ջախջախեց Ալվանդին, որն իր ընտանիքի հետ փախավ Ամիդ, և ղզլբաշական զորքերը հանդիսավոր երթով մտան Թավրիզ:

1502 թ. Իսմայիլը իրեն հռչակեց Իրանի շահ (1502–1524 թթ.)՝ ընդունելով շահ Իսմայիլ Ա գահակալական անունը և հիմք դնելով Սեֆյանների հարստությանը, որն իշխեց Իրանում մինչև 1722 թ.: Նորաստեղծ պետության մայրաքաղաք հռչակվեց Թավրիզը: Շիականությունը կամ «12 իմամների» վերաբերյալ շիական ուսմունքը հայտարարվեց Իրանի պետական կրոն, որը փոխարինելու եկավ սուննիական ուղղադավան իսլամին: Այդ քայլով շահ Իսմայիլը ձեռք էր բերում երկրի բնակչության մեծամասնության համակրանքը: Շահը շիական ուսմունքը տեսնում էր ինչպես պետության միավորման մի զորեղ գործոն, այնպես էլ սուննիականության հետևորդ հարևան պետություններին հակազդելու մի զորեղ կռվան:

Սեֆյանների պետությունը օժտված էր աստվածապետական տերությանը բնորոշ հատկանիշներով:

Այսպիսով՝ Սասանյան պետության անկումից 900 տարի հետո պատմության ասպարեզ էր իջնում իրանական ազգային միասնական մի հզոր պետություն, որը կոչված էր վերածնելու իրանական պետականության ավանդները: Սեֆյան պետության ստեղծումով, փաստորեն, Իրանը փրկվեց իրեն սպառնացող երկակի վտանգից՝ արևմուտքից Օսմանյան կայսրության, իսկ արևելքից ուզբեկների կողմից: Սեֆյանները երկիրը կրկին սկսեցին անվանել Իրան՝ նախկին Պարսկաստանի փոխարեն: Շահ Իսմայիլն ընդունեց «Իրանի շահնշահ» տիտղոսը:

Ճիշտ է, շահ Իսմայիլի արքունիքում տևական ժամանակ գերակայում էր թուրքերենը, սակայն նա գրագրության լեզուն դարձրեց պարսկերենը: Անկասկած, շահ Իսմայիլի կողմից ստեղծված պետությունը իրանական էր:

Շահական գահը ստանձնելուց հետո Իսմայիլ Ա-ը սկսեց «հավաքել» ու իրեն ենթարկել Իրանի տարածքները: 1503 թ. նա ջախջախեց ակ կոյունլու սուլթան Մուրադին և վերջ տվեց ակ կոյունլուների պետության գոյությանը:

Շահ Իսմայիլը կարողացավ կարճ ժամանակում տիրել Իրանի մեծ մասին, Անդրկովկասին, Հայաստանին ու Միջագետքին: Այսպիսով՝ հենց առաջին Սեֆյան շահի օրոք ստեղծվեց մի հսկա պետություն, որի հարավային սահմանները ողողում էր Պարսից ծոցը, արևելքում սահմանը հասնում էր մինչև Աֆղանստանի խորքերը, հյուսիսում՝ մինչև Ամու Դարյա գետը, արևմուտքում՝ մինչև Եփրատ:

Արևմուտքում ղզլբաշները անխուսափելիորեն բախվելու էին ժամանակի հզորագույն կայսրության՝ օսմանյան պետության հետ: Ծայր առան համարյա անընդմեջ թուրք-իրանական պատերազմներ, որոնք թեև մղվում էին կրոնական քողի տակ՝ «ուղղադավան» (սուննի) իսլամը «հերետիկոս շիաներից պաշտպանելու» կարգախոսների ներքո, բայց իրականում պայքարն ընթանում էր Անդրկովկասին, Հայաստանին ու Միջագետքին տիրելու և Մերձավոր ու Միջին Արևելքի առևտրական ճանապարհների նկատմամբ հսկողություն սահմանելու համար:

Երկու հզոր կենտրոնացված, ռազմաավատական բռնապետությունների առաջին խոշոր ռազմական բախումը տեղի ունեցավ 1514 թ. Չալդրանի դաշտավայրում, որն ավարտվեց օսմանցիների հաղթանակով: Կողմերի միջև 1515 թ. կնքված պայմանագրով ամբողջ Արևմտյան Հայաստանն ու Միջագետքը անցնում էին Օսմանյան կայսրությանը:

2. ՍԵՖՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇԱՀԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Կյանքի 37-րդ տարում՝ 1524 թ., շահ Իսմայիլ Ա-ը մահացավ: Ղզլբաշական ավագանին շահ հռչակեց նրա անչափահաս որդուն՝ Թահմազ (Թահմասպ) Ա-ին (1524-1576 թթ.): Ցեղային վերնախավը, հատկապես ռումլու, ուսթաջլու, թեքելու, զու-լ-քադար և մյուս ցեղերը աշխատում էին տասնամյա շահին խաղալիք դարձնել իրենց ձեռքերում: Պետության առաջին դեմքի անզոր լինելը և «ուժեղ ձեռքի» բացակայությունը նպաստեցին երկրի ծայրամասային շրջանների խաների ու ավատատերերի ինքնագլխության ձգտումներին: 1526 թ. տեղի ունեցավ ուսթաջլու ցեղի ապստամբություն, 1531 թ. ապստամբեց թեքելու ցեղը, որը կողոպուտի ու ավարի մատնեց Թավրիզը: Սեֆյանների հենարանը հանդիսացող այս ղզլբաշական ցեղերի անհնազանդությունն ու ըմբոստությունը վտանգավոր նախանշան էին: Քոչվորական ազնվականությունը, որի հսկողության տակ էին գտնվում բանակը և աշիրեթական զորամասերը, սկսել էր կենտրոնական կառավարությանը թելադրել իր պայմանները: Վտանգը բազմապատկվում էր այն բանի շնորհիվ, որ Օսմանյան կայսրությունը աչալուրջ կերպով հետևում էր Իրանում ծավալվող զարգացումներին՝ առիթը բաց չթողնելով, որպեսզի դրանք օգտագործի իր շահերի օգտին: Իսկ այդպիսի առիթներ պատահում էին ավելի ու ավելի հաճախ: Այսպես՝ 1529 թ. Լուրիստանի ազդեցիկ առաջնորդներից մեկը՝ Քելհուրի տիրակալ Զուլֆիղար բեկը, ապստամբելով շահի դեմ, այնուհետև շարժվեց Բաղդադ, պաշարեց ու գրավեց այն, ապա տիրացավ ողջ Արաբական Իրաքին: Նա հայտարարեց, որ դուրս է գալիս շահի տիրապետությունից և այսուհետև ենթարկվում է օսմանյան սուլթան Սուլեյման

Ա-ին: Նա նույնիսկ սուլթանի անունով մզկիթներում մտցրեց հութբայի ընթերցում: Շահը հարկադրված էր Բաղդադը վերագրավելու համար 1530 թ. կազմակերպել մի մեծ արշավանք: Ղզլբաշական զորքերը 1529 թ. հունիսի 10-ին գրավեցին Բաղդադը և սպանեցին խռովարարների գլխավորին: Հաջորդ տարում ապստամբություն բռնկվեց հենց մայրաքաղաքում՝ Թավրիզում: Ընդ որում՝ ապստամբը Թավրիզի բեկլարբեկ Ուլաման էր, որը, նահանջելով շահական զորքերի առաջ, ապավինեց օսմանցիներին և ամրացավ Վանի բերդում: Դրանից քիչ անց թուրքերի հետ միացած Ուլաման հետ վերցրեց Թավրիզը: Այս շարժումը հաջողվեց վերջնականապես ճնշել միայն 1575 թ.: 1535 թ. ապստամբեց Գիլանը: 1538 թ. Աստարաբադը գրավեց ոմն Մուհամմեդ Սալիհ Բիթիքչին, որը տեղական ազնվականներից էր: Նա իրեն հայտարարեց տեղական տիրակալ և օգնության խնդրանքով դիմեց Խորեզմի ուզբեկներին: 1540 թ. ապստամբություն բռնկվեց Ռուստեմդարում, 1541 թ.՝ Խուզիստանում:

Շահական իշխանություններին հաջողվեց ճնշել այդ բոլոր ապստամբությունները: Սակայն դրանց առկայությունը ինքնին վկայություն էր այն իրողության, որ շահական կառավարությանը չէր հաջողվում կենսագործել կենտրոնացման քաղաքականություն:

Թահմազ Ա-ի գահակալության առաջին տարիներին կրկին ակտիվացել էին նաև Միջին Ասիայի ուզբեկական խանությունները: Մավարաննահրի էմիրներն ու խաները համարյա ամեն տարի արշավանքներ էին կազմակերպում դեպի Խորասան և Աստարաբադի շրջան: Թեև 1528 թ. ղզլբաշները ուզբեկների Ուբեյդուլլա խանին ծանր պարտության մատնեցին, սակայն Սեֆյան զորքերի հեռանալուց հետո նա կրկին գրավեց Մեշհեդն ու Հերաթը:

1533 թ. օսմանյան սուլթան Սուլեյման Ա-ը իր առաջին պատերազմը սկսեց Իրանի դեմ: Նրա հսկայական բանակը մեծ վեզիր Իբրահիմ փաշայի հրամանատարությամբ ձեռնամուխ եղավ Իրանի արևմտյան շրջանների նվաճմանը: Ղզլբաշները նահանջում էին՝ օգտագործելով «այրված հողի» մարտավարությունը: Նրանք իրենց հետևից այրում ու ոչնչացնում էին ամեն ինչ, որպեսզի գրավյալ տարածքում թշնամին ուտելիք ու կացարան չգտնի բանակի համար: Իրանին հնուց ի վեր ծանոթ այդ մարտավարության բաղկացուցիչ մասն էր նաև տեղական բնակչության բռնի տեղահանությունը դեպի երկրի խորքերը: 1534 թ. թուրքական զորքերը մուտք գործեցին Թավրիզ, որտեղից շարժվեցին դեպի հարավ՝ Համադան, այնուհետև գրավեցին Բաղդադը: Թեև Ատրպատականից օսմանյան բանակը դուրս մղվեց, սակայն Արաբական Իրաքը այդպես էլ մնաց թուրքերի ձեռքում: 1548 թ. օսմանյան զորքերին նույնիսկ հաջողվեց գրավել Սպահանը, որտեղ, սակայն, նրանց չհաջողվեց ամրապնդվել:

Ողջ XVI դ. առաջին կեսին (1514-1555 թթ.) թուրք-իրանական պատերազմները շարունակվում էին: Շահ Թահմասպի օրոք օսմանյան բանակը բազմիցս ռազմական է ենթարկել Իրանի հյուսիսարևմտյան շրջանները:

Քանի որ օսմանյան բոլոր արշավանքների գլխավոր թիրախը Թավրիզն էր, որը չափազանց մոտ էր թուրքական սահմանին, 1548 թ. շահ Թահմասպը իր մայրաքաղաքը տեղափոխեց Ղազվին:

Շահ Թահմասպի արտաքին քաղաքականությունը ևս աչքի էր ընկնում իր ռազմաշունչ նվաճողական բնույթով: 1538 թ. նա գրավեց Շիրվանը, 1551 թ.՝ Շաքին: Արևելյան Վրաստանում (Քարթլիի և Կախեթի թագավորություններում) իր դիրքերն ամրապնդելու համար նա բազմիցս կազմակերպում էր ավերիչ արշավանքներ դեպի այդ երկրամասը:

Սեֆյան պետությունը ծավալվում ու ընդարձակվում էր: Նրա հարավարևելյան սահմանները հասան մինչև Հնդկաստանի Մեծ Մողոլների տերության տիրույթները: Ղանդահարը, որն ուներ ռազմավարական կարևոր նշանակություն, անցնում էր ձեռքից ձեռք: Սակայն այդ քաղաքը ևս ի վերջո միացվեց Սեֆյան պետությանը:

1555 թ. մայիսի 29-ին Փոքր Ասիայի Ամասիա քաղաքում կնքված հաշտությունը իր ավարտին հասցրեց թուրք-իրանական պատերազմների առաջին փուլը: Սեֆյանները հրաժարվեցին Միջագետքի (Արաբական Իրաքի) նկատմամբ իրենց հավակնություններից: Օսմանցիները ստացան նաև Վասպուրականն ու Ալաշկերտի հովիտը, ինչպես նաև Արևմտյան Վրաստանը (Իմերեթը, Մենգրելիան, Գուրիան): Իրանն իր կազմում պահպանեց Ատրպատականը, Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը: Կարսի նահանգը ճանաչվեց որպես չեզոք տարածք, որոշվեց այդ նահանգը իսպառ ավերել ու մարդաթափ անել:

Այսպիսով տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի բաժանում Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև:

Թահմասպ Ա-ի ներքին քաղաքականությունը վերին աստիճանի արատավոր էր: Գյուղացիության վրա դրված հարկային ծանր լուծը կասեցնում էր երկրի արտադրողական ուժերի զարգացումը: Գանձարանի եկամուտներն ավելացնելու համար շահը այլ միջոց չէր տեսնում, բացի հարկերի հարաճուն բարձրացումից: Շահի կուտակած վիթխարի հարստությունները որպես գանձ պահվում էին գանձարանում՝ առանց շրջանառության մեջ մտնելու: Իր կառավարման վերջին 14 տարիների ընթացքում շահը բոլորովին աշխատավարձ չէր վճարում իր զորքերին: Նա հրաժարվում էր ունկնդիր լինելուց ռայաթների բողոքներին և առհասարակ վարում էր մեկուսացած ու ինքնամփոփ կյանք, չէր սիրում երևալ ժողովրդի աչքին: Նա խառնվածքով ևս մռայլ ու կասկածամիտ էր: Նրա բնավորության բնորոշ գծերն էին ծայրահեղ ժլատությունը և մանրախնդրությունը: Թահմասպ Ա-ի թագավորության ավելի քան 50 տարիների ընթացքում երկրի ներքին կյանքում դրական տեղաշարժ չարձանագրվեց: Ընդհակառակը՝ նրա կառավարման վերջին տարիներին Իրանի ներքին դրությունը էլ ավելի ծանրացավ: Ճանապարհների վրա վխտացող ավազակների հարձակումների և ավատատերերի ներքին կռիվների պատճառով երթևեկությունը դարձել էր վտանգավոր: Այդ պատճառով կարևորագույն քարավանային ճանապարհները դեպի արևմուտք՝ Հալեպ, և դեպի հարավ՝ Հորմուզի նավահանգիստը, կատարելապես լքված էին: Պաշտոնությունը, որն իր վրա չէր զգում կենտրոնական

կառավարության «ուժեղ ձեռքի ծանրությունը», թույլ էր տալիս ամեն տեսակի կամայականություններ: Ավատատերերը, հատկապես վաչկատուն ցեղերի առաջնորդները, կատարելապես տնօրինում էին ռայաթների ճակատագիրը: 1571 թ. բռնկված ժանտախտի համաճարակի և նրան հետևած սովի պատճառով երկրի բնակչության հսկայական զանգվածներ կորստյան մատնվեցին: Բնական աղետները և հասարակական ցնցումները անդամալուծեցին երկիրը: Արևելքում Խորասանն անընդհատ ենթարկվում էր ուզբեկական խաների և նրանց քոչվոր ռազմիկների ասպատակություններին: Արևմուտքում երկրի վրա կախված էր թուրքական ներխուժման մշտական վտանգը: Երկրի տարբեր շրջաններում գյուղացիության և քաղաքային արհեստավորության ապստամբական բռնկումները երբեք չէին դադարում:

1576 թ.՝ Թահմասպ Ա-ի մահից հետո, գահ բարձրացավ շահ Իսմայիլ Բ-ը (1576-1577 թթ.), որին նրա հայրը՝ շահ Թահմասպը, քսան տարի շարունակ բանտարկված էր պահում Կահկահե կոչված ամրոցում: Իրանի նոր տիրակալը փորձում էր իր իշխանությունն ամրապնդել զանգվածային մահապատիժների ու սարսափի միջոցով: Նորաթուխ շահը չխնայեց նույնիսկ իր վեց եղբայրներին: Այնուհետև հրաման արձակեց երկրի տարբեր մասերում ապրող իր ազգականների ոչնչացման վերաբերյալ: Սակայն կարճ եղավ նրա գահակալությունը:

Իսմայիլ Բ-ի հանկարծակի ու կասկածելի մահից հետո էմիրների և ազնվականության բարձրագույն խորհուրդը («դիվան-ի ալի») որոշեց շահ հռչակել Թահմազ Ա-ի ավագ որդուն՝ Սուլթան Մուհամմեդին (1577-1587 թթ.), որն ուներ Խուդաբենդե («Աստծո ծառա») մականունը:

Նրա գահակալության հենց հաջորդ տարին Օսմանյան կայսրությունը խախտեց Ամասիայի պայմանագիրը և վերսկսեց պատերազմը Իրանի դեմ: Այս պատերազմի ժամանակ թուրքերը իրենց առջև դրել էին ավելի ծավալուն ռազմավարական խնդիրներ. զավթել ողջ Այսրկովկասը, տիրանալ Վոլգա-Կասպյան ջրային ճանապարհին, որը վեր էր ածվել կարևոր ու բանուկ առևտրական երթուղու, խզել ռուս-իրանական առևտրական կապերը և Իրանի արտաքին առևտուրը ամբողջապես շրջել դեպի Օսմանյան կայսրության տիրույթներով անցնող ցամաքային քարավանային ճանապարհներ, հսկողություն սահմանել Կասպից ծովի արևմտյան ծովափի նկատմամբ և այլն:

Հակառակ 1555 թ. Ամասիայի պայմանագրի արգելքի, ըստ որի՝ Թուրքիան պարտավորվում էր չվերականգնել Կարս քաղաքի ամրոցը, սուլթան Մուրադ Գ-ի հրամանով այն ամբողջապես վերականգնվեց և դարձավ ուժեղ ռազմական հենակետ: Այնտեղից թուրքական զորքերը ներխուժեցին Արևելյան Հայաստան ու Վրաստան: 1578 թ. մայիսի 9-ին սուլթանի և Մուհամմեդ Խուդաբենդեի զորքերը հանդիպեցին Կարսից հյուսիս-արևելք գտնվող Չըլդըր լճի մոտ: Ղզլբաշները կրեցին ջախջախիչ պարտություն, որը օսմանյան զորքերի առջև բացեց ճանապարհը դեպի Այսրկովկաս: Օգոստոսի 24-ին օսմանցիները գրավեցին բնակչությունից լքված Թիֆլիսը, այնուհետև սրընթաց արշավով վերցրին Շամախին, Բաքուն, Դերբենդը, ինչպես նաև Շիրվանի և Դաղստանի մյուս քաղաքները: 1588 թ. նրանք գրավեցին ողջ Ատրպա-

տականը՝ Թավրիզ քաղաքով հանդերձ, որը ենթարկեցին ահավոր կողոպուտի և ավերածության: Այնուհետև թուրքերը կտրեցին Վոլգա–Կասպյան առևտրական ճանապարհը՝ համարյա իսպառ դադարեցնելով ռուս–իրանական առևտուրը:

Այդ արշավանքի ժամանակ թուրքական զորքերին արդյունավետ օգնություն էին ցուցաբերում Իրանի սուննի քրդերը:

Օգտվելով երկրի համար ստեղծված դժվարին վիճակից՝ Խորասանում ղզլբաշական ուսթաջլու և շամլու ցեղերը կրկին գլուխ բարձրացրին շահի ու կենտրոնական կառավարության դեմ: Նրանք ձգտում էին շահ հռչակելու իրենց մոտ «սանի» կարգավիճակում գտնվող Աբբաս միրզային (1581 թ.), որպեսզի այդ դեռահաս պատանու անունից կառավարեն երկիրը: Ուստի, ստանալով իրենց ցեղակիցների համաձայնությունը, Ալի–ղուլի–խան շամլուն և Մուրշիդ–ղուլի–խան ուսթաջլուն բացահայտ պատերազմ սկսեցին Մուհամմեդ Խուդաբենդեի դեմ: Նրանք իրենց զորքերը շարժեցին դեպի պետության մայրաքաղաքը՝ Ղազվին, և առանց մեծ դիմադրության 1587 թ. գրավեցին այն: Մայրաքաղաքի գրավումը ունեցավ այն հետևանքը, որ բանակը լքեց շահին: Ղազվինում ապստամբները ուժի օգնությամբ ստիպեցին Մուհամմեդ Խուդաբենդեին հրաժարվել գահից հօգուտ իր 16–ամյա որդի Աբբասի: Շուտով, չդիմանալով ճակատագրի այդ ծանր հարվածին, նախկին շահը հրաժեշտ տվեց կյանքին:

Օսմանցիներից կրած ռազմական պարտությունները և տարածքների խոշոր կորուստները, պետության իրականացրած հոռի հարկային քաղաքականությունը, գյուղական և քաղաքային բնակչության անսանձ շահագործումը, ժողովրդի տնտեսական վիճակի անշեղ վատթարացումը այլևս լցրել էին բնակչության համբերության բաժակը:

3. ՇԱՀ ԱԲԲԱՍ Ա ԵՎ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ

1587 թ. շամլու, ռումլու և ուսթաջլու ղզլբաշական խոշոր ու հզոր ցեղերի առաջնորդների և ազդեցիկ էմիրների ճնշման տակ գահ բարձրացավ շահ Աբբաս Ա–ը (1587–1629 թթ.): Նրա կառավարման առաջին շրջանում Իրանի ներքին և արտաքին իրավիճակը ծայրահեղորեն ծանր էր: Մավարաննահրի ուզբեկական պետության զորքերը գրավել էին ողջ Խորասանը՝ Մերվ, Հերաթ, Մեշհեդ և Նիշապուր քաղաքներով հանդերձ: Արևելյան Հայաստանը, Ատրպատականը և Իրանի արևմտյան շրջանները ռազմակալման էին ենթարկված օսմանյան զորքերի կողմից: Դաղստանի լեռնականները հաճախակի ապստամբում էին շահական իշխանության դեմ, բուն երկրում ընթանում էին խուլ խմորումներ, որոնք ժամանակ առ ժամանակ ունենում էին վտանգավոր պոռթկումներ, երկրի բնակչությունը քայքայված էր մշտական պատերազմների հետևանքով, օսմանցիները տասնյակ հազարավոր մարդկանց քշել էին գերության:

Այդ պայմաններում Աբբաս Ա–ը Ռուսաստանի կառավարությանը առաջարկեց համատեղ ռազմական գործողություններ սկսել օսմանյան կայսրության դեմ՝ խոստանալով ռազմական օգնության դիմաց Դերբենդը և Բաքուն իրենց շրջակա տարածքներով զիջել ռուսներին: Սակայն երկարատև լիվոնյան պատերազմից թուլացած և Շվեդիայի, Լեհաստանի ու Ղրիմի խանի հետ պատերազմի սպառնալիքի եզրին գտնվող Ռուսաստանը մերժեց այդ առաջարկը:

Ուստի 1590 թ. Սեֆյան Իրանը ստիպված էր Կոստանդնուպոլսում օսմանյան Թուրքիայի հետ կնքել հաշտության ծանր պայմանագիր, որով ամբողջ Անդրկովկասը, Ատրպատականը՝ բացառյալ Արդաբիլի և Թալիշի մարզերից, և Լուրիստանի մի մասը անցնում էին օսմանյան պետությանը:

Օգտվելով օսմանյան ճակատում հաստատված խաղաղությունից՝ երիտասարդ շահը բոլոր ուժերը կենտրոնացրեց երկրից դուրս մղելու ուզբեկ նվաճողներին, որոնք գրավել էին ամբողջ Խորասանն ու Սիստանը: Այնուհետև նա ձեռնամուխ եղավ ներքին ապստամբությունները ճնշելուն: Դա շահի կողմից իրագործվում էր ամենայն դաժանությամբ: Գիլանում, օրինակ, սրի քաշվեց ողջ ջիք ցեղը, նույնպիսի ճակատագրի արժանացան նաև քրդական մուքրի և ղզլբաշական թեքքելլյու ցեղերը: Կայունացնելով երկրի ներքին վիճակը՝ շահը սկսեց իրականացնել ռազմական բարեփոխում: Կազմակերպվեցին հեծելազորային զորամասեր, որի զինվորները հիմնականում հավաքագրվում էին կովկասյան ժողովուրդների ներկայացուցիչներից, հատկապես վրացիներից ու հայերից՝ նրանց պարտադրելով իսլամը: Դրանք կոչվում էին «ղուլամների» հեծելազոր: Կազմակերպվեցին նաև առավելապես պարսիկներով համալրված և նոր հրազեներով սպառազինված հրացանակիրների («թուֆանգչիների») և հրետանավորների զորամասեր: Ռազմական բարենորոգումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակներ: Բանն այն էր, որ նախկինում Սեֆյանների հիմնական ռազմական ուժը կազմում էին ղզլբաշական ցեղերից բաղկացած զորամասերը, որոնք Աբբաս Ա–ի ժամանակ վերածվել էին մշտական խռովություններ ու անկարգություններ սնուցող ուժերի: Նշված ցեղերը ավելի շատ ենթարկվում էին իրենց ցեղապետերին, քան թե շահին: Ուստի Աբբաս Ա–ը ձգտում էր ռազմական բարեփոխմամբ նվազեցնելու ղզլբաշական և այլ վաչկատուն թյուրքական ցեղապետերի քաղաքական դերը և ընդհակառակը՝ բանակում ու ընդհանրապես պետական կառույցներում ուժ տալու իրանական տարրին:

Շահը ստեղծեց նաև մի հատուկ ռազմական կազմակերպություն, որը խաղում էր շահական գվարդիայի դեր, և որը ստացավ «շահսևեններ» (շահին սիրողներ) անվանումը: Նրա մեջ կարող էին մտնել անխտիր բոլոր ժողովուրդների ու ցեղերի ներկայացուցիչները:

1598 թ. շահը Սեֆյան պետության մայրաքաղաքը առավելապես թյուրքալեզու բնակչություն ունեցող Ղազվինից տեղափոխեց օսմանյան Թուրքիայի սահմաններից ավելի հեռու գտնվող և պարսկական էթնոսով շրջապատված Սպահան քաղաքը: Նա նոր մայրաքաղաքը վերածեց երկրի քաղաքական ու առևտրական ակտիվության կենտրոնի:

Այսուհետև Սեֆյան պետության կենտրոնական նահանգը Ատրպատականի փոխարեն դառնում էր ներքին Իրանը:

Շահը իսլամի շիական ուղղությունն օգտագործում էր որպես գաղափարական զենք իր թշնամիների՝ օսմանյան Թուրքիայի և ուզբեկական խանությունների դեմ մղվող պայքարում: Նա սուննիներին համարում էր օսմանցիների և ուզբեկների կողմնակիցներ: Շիիզմը նրա համար նաև մի միջոց էր երկրի միասնությունն ամրապնդելու համար:

Շահ Աբբաս Ա-ը կորցրած տարածքները հետ վերցնելու նպատակով օսմանյան Թուրքիայի դեմ հետևողականորեն պատրաստվում էր պատերազմի: Ընդ որում՝ նրա կողմից դա իրականացվում էր հիմնարար ձևով՝ այդ նպատակին ծառայեցնելով ամեն ինչ:

Այսպիսով, երբ տերության արևելյան սահմաններում երկարատև խաղաղությունն ապահովված էր, երբ ջելալիների հզոր շարժումը ուժգին հարված էր հասցրել Օսմանյան կայսրության հիմքերին՝ սպառնալով նրա բուն գոյությանը, շահ Աբբասը ժամանակը պատեհ համարեց թուրքերի դեմ պատերազմ սկսելու համար: 1603 թ. նա զորաշարժ կատարեց դեպի Ատրպատական և ծավալեց ռազմական գործողություններ: Առաջին անգամ ամբողջ հարյուրամյակի ընթացքում Իրանը հարձակվում էր, իսկ օսմանյան Թուրքիան՝ պաշտպանվում: Թավրիզի, Նախիջևանի, Երևանի բերդերը, Լուրիստանը, Քրդստանի մի մասը, Ատրպատականը, Արևելյան Հայաստանը և Արևելյան Վրաստանը կրկին նվաճվեցին իրանական զորքերի կողմից: Այդ պատերազմի ժամանակ առանձնապես աչքի ընկան ծագումով հայազգի զորահրամանատար Ալլահվերդի խանի զորքերը:

Շուտով, սակայն, օսմանյան բանակը Ջղալ-օղլի Սինան փաշայի հրամանատարությամբ անցավ հակահարձակման: Գիտակցելով, որ ուժերի հարաբերակցությունը իր օգտին չէ, շահ Աբբասը որոշեց արագորեն նահանջել՝ կիրառելով ղզլբաշների վաղեմի ռազմական մարտավարությունը: Նահանջող բանակին հրամայված էր իրագործել «այրված հողի» կամ «մեռյալ գոտու» ռազմավարություն, այսինքն՝ հրկիզել ու ավերել ճանապարհամերձ բոլոր գյուղերն ու քաղաքները, այրել ու սպառել հացահատիկն ու ցանքերը, իսկ բնակչությանը քշել խոր թիկունք՝ Պարսկաստանի խորքերը: Բռնագաղթի ենթարկվեց Արարատյան երկրի, Նախիջևանի, Կարսի, Ատրպատականի, մասամբ նաև Արևմտյան Հայաստանի և հատկապես Արաքսի ափին գտնվող հարուստ Ջուղա քաղաքի բնակչությունը: Բռնագաղթն իրականացվում էր անողոք դաժանությամբ, որպեսզի ապահովվի գործողության արագությունը, և բացառվի դիմադրության ամեն մի փորձ:

Անցնելով ամայացված վայրերով՝ հոգնած, սոված և ուժասպառ օսմանյան զորքերը հասան մինչև Ատրպատական և հրաժարվեցին արշավանքը շարունակելուց: Բանակը կազմալուծվել և այն աստիճանի էր բարոյալքվել, որ առանձին զորամասեր ծառայության անցան շահ Աբբասի մոտ: Սինան փաշան իր կյանքը փրկելու համար փախավ Վան:

1612 թ. Ստամբուլում կնքվեց թուրք-իրանական հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Իրանը պահպանում էր իր նվաճումները, իսկ սուլթան Ահմեդ Ա-ը ճանաչում էր 1555 թ. Ամասիայի պայմանագրով որոշված սահմանները:

Թեև այս հաշտությունը հետագայում քանիցս խախտվեց թուրքերի կողմից, սակայն այնուհետև շուրջ երկու տասնամյակ լուրջ ընդհարումներ տեղի չունեցան: Այդ ընթացքում շահ Աբբասը գրավեց Բաղդադը (1623 թ.) և ողջ Արաբական Իրաքը, Հնդկաստանի Մեծ Մողոլների պետությունից հետ խլեց Ղանդահար քաղաքը (1622 թ.) և այլն:

Հարձակողական պատերազմներ վարելու մարտավարությունը ևս մեկ անգամ գալիս էր վկայելու, որ Իրանը այդ տարիներին և՛ ռազմական, և՛ քաղաքական, և՛ տնտեսական առումով վերելքի մեջ էր:

Պարսից ծոցում իր գերիշխանությունը հաստատելու և միջազգային առևտրով զբաղվող Նոր Ջուղայի հայ վաճառականների կողմից մետաքսի արտահանման ցամաքային քարավանային ուղիները ծովայինով փոխարինելու համար շահն իրականացրեց մի շարք միջոցառումներ: Նախ նա 1601-1603 թթ. պատերազմ սկսեց Պարսից ծոցը վերահսկող պորտուգալացիների դեմ և գրավեց Բահրեյն կղզին: Այնուհետև՝ 1622 թ., իրանական զորքերը բրիտանական նավատորմի օգնությամբ գրավեցին Ղեշմ կղզին, որը Պարսից ծոցից ազատ ելք էր ապահովում դեպի Հնդկական օվկիանոս: Մեկ տարի անց՝ 1623 թ., ձեռք բերվեց ամենախոշոր հաջողությունը. գրավվեց ծոցի մուտքը հանդիսացող Հորմուզ կղզին: Այսպիսով՝ պորտուգալացիները վտարվեցին Պարսից ծոցից, և այնտեղ հաստատվեց իրանական տիրապետությունը: Ռազմավարական և առևտրական մեծ նշանակություն ունեցող Հորմուզի նեղուցի վրա վերահսկողությունը առավել ապահովելու և ծովային առևտրին զարկ տալու նպատակով շահ Աբբասի հրամանով քանդվեց կղզու պորտուգալական ամրոցը, և առևտրական նավահանգիստը տեղափոխվեց ցամաք՝ Գոմբրուն կոչված վայրը, որը հետագայում վերանվանվեց Բենդեր Աբբասի («Աբբասի նավահանգիստ»):

Այսպիսով՝ Պարսից ծոցը բացվեց բոլոր երկրների վաճառականների, այդ թվում նաև արևելքի և արևմուտքի միջև միջնորդ առևտրով զբաղվող հայ վաճառական-խոջաների համար:

Շահ Աբբասը մշտապես դեսպանություններ էր ուղարկում Ռուսաստան, Հոլանդիա, Ֆրանսիա, Իսպանիա, գերմանական կայսրի, Հռոմի պապի և եվրոպական այլ տիրակալների մոտ՝ Իրանի հետ հակաօսմանյան ռազմական դաշինք և առևտրական պայմանագրեր կնքելու առաջարկներով: Շահ Աբբասի կողմից եվրոպական պետություններին տրամադրվում էին միակողմանի արտոնություններ ու իրավունքներ: Օրինակ՝ կրոնական քարոզչության իրավունք, ազատ առևտրի և երկրում տեղաշարժվելու արտոնություն, անձի և գույքի անվտանգության երաշխիքներ և այլն: Կարևոր է, սակայն, նշել, որ նման կարգի միակողմանի արտոնությունների տրամադրումը դեռևս կապիտուլյացիոն ռեժիմ չէր: Իրանը շահ Աբբաս Ա-ի կառավարման շրջանում կատարելապես ինքնուրույն և անկախ պետություն էր և Արևմուտքի տերությունների հետ իրականացնում էր միջպետական հարաբերություններ ինչպես հավասարը հավասարի հետ:

Աբբաս Ա–ի կառավարման տարիները Սեֆյան պետության համար ամենաբուռն զարգացման տարիներն էին: Իրանը հասավ իր հզորության գագաթնակետին: Պատահական չէ, որ ժամանակակիցների կողմից շահը մեծարվեց «քաբիր» (մեծ) տիտղոսով: Չափազանց ազդու էին նաև շահի նվաճումները աշխարհաշինության մեջ: Նրա ջանքերով Իրանը դարձավ հարաբերականորեն ավելի կենտրոնացված պետություն, թեև այնուամենայնիվ նրան չհաջողվեց մինչև վերջ հաղթահարել երկրի ավատական տրոհվածությունը, որը պատմական տվյալ ժամանակաշրջանում դեռևս անհնարին էր:

Աբբաս Մեծի օրոք ևս Սեֆյան պետությունն իրենից ներկայացնում էր տիպիկ արևելյան բռնապետություն, որտեղ առաջին և վերջին խոսքը պատկանում էր ինքնակալին: Այդ շրջահայաց և քաղաքական կամքով օժտված տիրակալը թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության բնագավառում մշտապես վարում էր իր պետությունը տարածաշրջանի առաջատար ուժ դարձնելու քաղաքական գիծ: Պետության կենտրոնացման և նրա տնտեսական հզորության ուժեղացման քաղաքականության բաղկացուցիչ մասն էր կազմում նաև նրա կողմից պետական և արքունական (շահապատկան) հողերի հարաձուն ավելացումը, որը հնարավորություն էր տալիս, որ շահի գանձարան հոսեն հսկայական հարստություններ:

1629 թ.՝ շահ Աբբաս Ա–ի մահից հետո, գահը ժառանգեց նրա թոռը՝ Սեֆին (Սաֆի)՝ ընդունելով Սեֆի Ա գահակալական անունը (1629–1642 թթ.): Շահ Աբբասի նման ուժեղ հակառակորդի մահը քաջալերեց օսմանցիներին, որոնք 1630 թ. անցան սահմանը և գրավեցին Համադանը՝ սրի քաշելով նրա բնակչությանը: 1635 թ. օսմանյան զորքերը ռազմակալման ենթարկեցին Անդրկովկասի և Ատրպատականի արևմտյան շրջանները: Առժամանակ նրանց ձեռքն անցավ Երևանը, այնուհետև գրավեցին ու կրակի մատնեցին Նախիջևանն ու Թավրիզը: Հաջորդ տարի հակահարձակման անցած ղզլբաշների բանակը կարողացավ հետ գրավել տարածքների մեծ մասը, այդ թվում՝ ողջ Ատրպատականը՝ Թավրիզ քաղաքով հանդերձ, և Նախիջևանի ու Երևանի բերդերը: Դրանից հետո թուրք–իրանական պատերազմների թատերաբեմը տեղափոխվեց Միջագետք, որտեղ 1638 թ. թուրքերին հաջողվեց գրավել Բաղդադը: Պատերազմական գործողությունները փոփոխակի հաջողություններով շարունակվեցին մինչև 1639 թ., երբ Քասրե Շիրինում կնքվեց թուրք–իրանական խաղաղության պայմանագիր, որով Անդրկովկասն ու Ատրպատականը մնում էին Իրանին, իսկ Արաբական Իրաքը, Բաղդադ քաղաքով հանդերձ, անցնում էր օսմանցիների տիրապետության տակ: Ի դեպ, այդ նույն պայմանագրով Արևելյան Հայաստանն անցավ Իրանին, իսկ Արևմտյան Հայաստանը՝ Օսմանյան կայսրությանը:

Քասրե Շիրինի կամ Զոհաբի պայմանագրի ստորագրումից հետո թուրք–իրանական հարաբերություններում սկսվեց տևական խաղաղության մի շրջան, որը տևեց ավելի քան 80 տարի: Պայմանագիրը գրավոր փաստաթղթով որոշում էր երկու պետությունների փաստական սահմանագիծը՝ Արարատից մինչև Պարսից ծոց:

Սեֆի Ա–ի կառավարման շրջանում հաջողվեց նաև հետ մղել ուզբեկների հարձակումները: Նրա օրոք, սակայն, Ղանդահարը նվաճվեց Մեծ Մողոլ Ջհանշահի կողմից:

1642 թ.՝ Սեֆի Ա–ի մահից հետո, գահ բարձրացավ նրա որդի Աբբաս Բ–ը (1642–1666 թթ.): Վերջինիս օրոք Սեֆյան պետությունը դեռևս ապրում էր վերելքի շրջան: Նրա հարաբերությունները Օսմանյան կայսրության հետ մնում էին խաղաղ ու անվրդով ընդհուպ մինչև XVIII դարի 20–ական թվականները: Այդ ժամանակահատվածում երկու պետությունների միջև ստեղծվել էր ուժերի հավասարակշռություն, և պատերազմական գործողությունների վերսկսումը երկուստեք թվում էր անհեռանկար:

Անկասկած, տևական հաշտությունը նպաստելու էր Սեֆյան Իրանի տնտեսական վերելքին, նրա առևտրական հարաբերությունների վերընթաց զարգացմանը և պետության սահմանների անվտանգության ապահովմանը: Աբբաս Բ–ին հաջողվեց Մեծ Մողոլ Ջհանշահից հետ գրավել երկրի արևելքում միջնաբերդի դեր կատարող Ղանդահար քաղաքը և վերահաստատել Սեֆյանների իշխանությունը Աֆղանստանում:

Սեֆի Ա–ի և Աբբաս Բ–ի օրոք կնքվեցին առևտրական պայմանագրեր անգլիական Օստ–Հնդկական ընկերության, հոլանդացիների և ֆրանսիացիների հետ, որոնք Իրանում ձեռք բերեցին մի շարք առևտրական արտոնություններ ու իրավունքներ:

4. ԻՐԱՆԸ XVII ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՎ XVIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Շահ Սուլեյման Ա–ի (Սեֆի Բ, 1666–1694 թթ.) կառավարման շրջանում Սեֆյան պետության մեջ արդեն սկսվել էր տնտեսական, քաղաքական ու ռազմական ճգնաժամ, որը միտում ուներ խորանալու: Ներքին և արտաքին առևտուրը սկսել էր նկատելի անկում ապրել: Ռազմական առումով պետությունն այն աստիճանի էր թուլացել, որ արևելքում ուզբեկական խաների և աֆղանների ակտիվությունն ու նրանց հաճախակի հարձակումները Սեֆյան պետության սահմանների վրա այլևս չէին հանդիպում ուժեղ դիմադրության: Արևմուտքից անընդհատ հարձակումներ էին գործում քրդական ցեղերը, հյուսիսից՝ Դաղստանի կողմերից՝ լեզգի ֆեոդալները: Սուննի դավանանքի լեզգիական ցեղերի ապստամբական շարժումները և նրանց ասպատակությունները դեպի Շիրվան խրախուսվում էին Օսմանյան կայսրության կողմից: Պետության անվտանգության համար սպառնալիք ստեղծվեց նաև հարավից՝ Պարսից ծոցի կողմից, որտեղ առևտրական հենակետ ստեղծելու պատրվակով հոլանդացիները, փաստորեն, գրավեցին Ղեշմ կղզին:

Շահ Սուլեյմանի քսանութ տարվա տիրապետությունը ոչ տնտեսական, ոչ քաղաքական և ոչ էլ մշակութային կյանքի բնագավառում արժանահիշատակ ոչինչ չարձանագրեց Սեֆյան պետության տարեգրության մեջ:

Քայքայման ջղաձգություններն ավելի խորացան շահ Սուլթան Հուսեինի օրոք (1694–1722 թթ.), որը դարձավ Սեֆյան պետության վերջին շահը: Նրա օրոք հարկային լուծը, որն առանց այն էլ չափազանց ծանր էր, էլ ավելի ուժեղացավ: Հար-

կային կամայականությունները հասան աննախադեպ չափերի: Այդ առթիվ ուշագրավ ու հավաստի տեղեկություններ է հաղորդում Գանձասարի Հայոց կաթողիկոս Եսայի Հասան Ջալալյանը: Ուժից վեր հարկերից խուսափելու համար գյուղացիները, լքելով իրենց գյուղերն ու բնակավայրերը, զանգվածաբար դիմում էին փախուստի, սակայն օրենքը թույլ էր տալիս 12 տարվա ընթացքում փնտրել փախստականներին և վերադարձնել իրենց տերերին:

Կենտրոնական իշխանության տկարացումը, տեղերում սաստկացող կամայականություններն ու բռնությունները հպատակ ժողովուրդների մոտ առաջացնում էին մեծ դժգոհություն: Որպես դրա հետևանք՝ ընդարձակ Սեֆյան տերության տարբեր ժողովուրդների շրջանում բուռն թափով արթնանում էին անկախության ձգտումներ: Միջցեղային ու միջավատական ներհակություններով պառակտված երկրի տարբեր մասերում խմորվում ու բռնկվում էին զինված ապստամբություններ: 1715 թ. տեղի ունեցած իրանական քրդերի ապստամբությունը Իրանի տարածքային ամբողջականության համար ստեղծեց լուրջ սպառնալիք, մանավանդ որ ապստամբներն օգնություն էին ստանում Օսմանյան կայսրությունից: Սեֆյան պետության համար նույնպիսի վտանգ էին ներկայացնում նաև 1711 և 1719 թթ. բռնկված լեզգիների հուժկու ապստամբությունները Սուրխայ խանի և Հաջի Դավուդի գլխավորությամբ, որոնք նույնպես սերտորեն կապված էին Օսմանյան կայսրության հետ և նրանից ստանում էին աջակցություն ու հրահանգներ:

1716 թ. Հերաթի շրջանում ապստամբեց աբդալի ցեղը, որի առաջնորդ Ասադուլլա խանը դաշինքի մեջ մտավ ուզբեկների հետ, 1717 թ. խոշոր ապստամբություն բռնկվեց Թավրիզում, նույն թվականին Մուղանում ապստամբեցին շահսևենյան ցեղերը: Քաղցած ամբոխի խոշոր խռովություն տեղի ունեցավ Սպահանում (1717 թ.): Երեք հազարից ավելի ապստամբներ փորձեցին գրոհով վերցնել շահի պալատը: Վերջինս սկզբում թաքնվեց հարեմում, ապա փախավ նոր կառուցվող Ֆարահաբադ քաղաք-ամրոցը: Գիլանում 1717 թ. ապրիլին սկսված ապստամբությանը մասնակցում էր 20 հազար մարդ: Միաժամանակ Սեֆյան պետությունը սկսեց կորցնել տարածքներ: 1717 թ. Մասկաթի սուլթանի ջոկատները ներխուժեցին Բահրեյն կղզին, պաշարեցին Բենդեր-Աբբաս նավահանգիստը և գրավեցին Հորմուզը՝ հսկողության տակ վերցնելով Հորմուզի նեղուցը: Փաստորեն, Իրանը ենթարկվեց ծովային շրջափակման, և Պարսից ծոցը փակվեց իրանական վաճառականների առջև: 1719 թ. ուզբեկները հարձակվեցին Խորասանի վրա և գրավեցին զգալի տարածքներ:

1707 թ. Իսրայել Օրին Իրանից հայտնում էր Պետրոս Ա ցարին, որ երկիրը գտնվում է քայքայման վիճակում: Իսկ 1715-1717 թթ. Իրանում եղած ռուսական դեսպան Արտեմի Վոլինսկին, որը Պետրոս Ա-ի կողմից ուղարկված էր այդ երկիրը հետախուզելու համար, գրում էր. «Պարսիկներն ի վիճակի չեն պաշտպանվելու ոչ միայն թշնամիներից, այլև իրենց ապագա ապստամբներից, և սակավ են այն վայրերը, որտեղ չեն ծագել ապստամբություններ»:

Օգտվելով իշխանության թուլությունից՝ ռազմաշունչ վաչկատուն ցեղերը սկսեցին ասպատակել նստակյաց շրջանները: Անսանձ տարրերը կազմակերպում էին

խռովություններ ու դավադրություններ, մինչդեռ կազմալուծված զինված ուժերն ի վիճակի չէին ոչ պաշտպանելու պետության սահմանները և ոչ էլ ապահովելու նրա բնակչության անվտանգությունը: Իսկ հասարակությունը անվստահությամբ էր համակված կառավարության նկատմամբ:

Երկրի առանց այն էլ ծանր դրությունը գնալով ավելի էր վատթարանում ընդհանուր տնտեսական ճգնաժամի հետևանքով, որն իր հերթին հանգեցնում էր գանձարանի մուտքերի կտրուկ կրճատմանը: Սակայն, չնայած գանձարանի եկամուտների անկմանը, պալատականները բնավ մտադրություն չունեին հրաժարվելու ճոխ ու շվայտ կյանքից ու հարստանալու մոլուցքից: Արքունիքի ծախսերը գնալով ավելանում էին, շահի համար կառուցվում էին պալատներ, Եվրոպայից բերվում էին պերճանքի առարկաներ և այլն: Արքունիքում կատարյալ անիշխանություն էր տիրում: Շահն իրեն շրջապատել էր հոգևորականներով: Նա ավելի շատ մտահոգված էր իր հարեմի գործերով: Նահանգների կառավարիչներն էլ, ձգտելով միապետին հաճոյանալու, հպատակների շրջանում կազմակերպում էին բռնի աղջկահավաքներ և գեղեցիկ աղջիկներին ուղարկում շահի ու նրա ազգականների հարեմները: Գնալով ավելի մեծ չափերի էին հասնում պաշտոնների վաճառքն ու բնակչության սանձարձակ հարստահարությունը:

Ճանապարհներին մեծ չափերի հասած առևտրական քարավանների կողոպուտները ոչ միայն հանդուրժվում էին կառավարության կողմից, այլև իշխանություններն իրենք էին բացահայտ կերպով խրախուսում ավազակախմբերի գործունեությունը, որոնց կողմից կողոպտված ավարի մի մասը բաժին էր հասնում իրենց:

Գնալով սանձարձակ չափերի էին հասնում տեղական տարբեր մակարդակների կառավարիչների կամայականությունները: Լեհ ճիզվիտ Թադեուշ Կրուշինսկին նշում էր, որ նրանք, իրենց պաշտոնները համարելով ժամանակավոր, ավելի շատ մտածում էին քաղաքների և նահանգների կողոպուտի, քան նրանցում կարգ ու կանոն պահպանելու մասին: Վստահ լինելով իրենց անպատժելիության մեջ՝ նրանք բնավ մտահոգված չէին զգուշություն դրսևորելու իրենց սանձարձակ գործողությունների մեջ:

Շահ Սուլթան Հուսեինը կրոնական անհանդուրժողական քաղաքականություն էր վարում ոչ միայն այլադավանների, այլև համադավան սուննիների և շիական ծայրահեղ աղանդների հետևորդների նկատմամբ: Նրանց մզկիթները պղծվում էին կամ վերածվում ախոռների: Կրոնական հալածանքների թիրախ դարձան նաև հայերը: Նոր Ջուղայի բնակչության նկատմամբ սկսեցին իրագործվել բռնի մահմեդականացման գործողություններ, մոլլաների և հայ հոգևորականության միջև կազմակերպվում էին «կրոնական վիճաբանություններ»՝ ապացուցելու համար, որ իսլամը ավելի կատարյալ կրոն է, քան քրիստոնեությունը: Այդ «վիճաբանությունները» կամ «հակաճառությունները» ոչ այլ ինչ էին, եթե ոչ բռնի դավանափոխության սքողված ձև: Շահ Սուլթան Հուսեինը հրաման արձակեց, որ հայերը հասարակական վայրերում իրավունք չունեն հայտնվելու շքեղ զգեստներով, այլ պետք է հագնեն ցնցոտիներ, նրանց արգելվում է շուկա գնալ ձիով, իսկ անձրևոտ օրերին իրավունք չունեն

խանութներ կամ շուկա մտնելու, որպեսզի նրանց թաց զգեստները չդիպչեն մահմեդականներին և պղծեն նրանց: Ուժի մեջ մտցվեց, այսպես կոչված, իմամ Ջաֆարի օրենքը, ըստ որի՝ քրիստոնյա ընտանիքի վախճանված հոր ժառանգությունը ամբողջապես անցնում էր նրա այն ժառանգին, որն ընդունել էր իսլամը: Կրոնական մոլեռանդությունն ընդունում է այնպիսի չափեր, որ շահի հրամանով Նոր Ջուղայի հայկական գերեզմանատան տապանաքարերի ծայրերը կտրում են՝ իբր թե դրանով թլպատելով հայ ննջեցյալներին: Այս բոլորի հետևանքը լինում է հայերի զանգվածային արտագաղթը, ավելի շուտ՝ փախուստը Սեֆյան Իրանից այլ երկրներ:

Շահ Սուլթան Հուսեինի օրոք Իրանը առաջին անգամ եվրոպական տերությունների հետ կնքեց, այսպես կոչված, *կապիտուլյացիոն պայմանագրեր*: Դրանք միակողմանի միջազգային-իրավական ակտեր էին, որ շահը հատկացնում էր այս կամ այն պետությանը՝ նպատակ ունենալով այդ երկրների վաճառականներին ներգրավելու Իրանի ներքին ու արտաքին առևտրի մեջ: Այսպես՝ 1708 թ. սեպտեմբերի 14-ին շահ Սուլթան Հուսեինի և ֆրանսիական թագավորի կողմից լիազորված անձի միջև կնքվեց առևտրական մի պայմանագիր, որը տիպիկ կապիտուլյացիոն պայմանագիր էր: Ներմուծվող և արտահանվող ֆրանսիական ապրանքները հինգ տարի ժամկետով ազատվում էին մաքսատուրքերից, որից հետո սահմանվում էր մաքսատուրք 3%-ի չափով: Ֆրանսիական վաճառականները և նրանց մոտ ծառայող հայերն ու հնդիկները նույնպես ազատվում էին հարկերից և տուրքերից: Ֆրանսիացիների միջև ծագած վեճերի լուծման իրավասությունը պատկանելու էր միայն ֆրանսիական հյուպատոսին: Ֆրանսիացու և մահմեդականի միջև վեճի ծագման դեպքում իրանական իշխանությունները պարտավոր էին հետաքննությունն իրականացնել միայն ֆրանսիական հյուպատոսի ներկայությամբ: Այնուհետև ֆրանսիացիներին իրավունք էր տրվում բնակություն հաստատելու Իրանի ցանկացած վայրում, այդ թվում նաև նավահանգիստներում, իսկ ֆրանսիացի հոգևորականներին՝ կատարելու կրոնական ծիսակատարություններ և անարգել զբաղվելու միսիոներական քարոզչությամբ, պայմանով, որ կրոնական քարոզչությունը չպետք է մղվի մահմեդականների շրջանում:

1715 թ. օգոստոսի 15-ին Վերսալում ստորագրվեց ֆրանս-իրանական պայմանագիր բարեկամության ու առևտրի մասին: Այս նոր պայմանագրով ֆրանսիական վաճառականները և առհասարակ ֆրանսիական դրոշի ներքո Իրանում առևտուր անող յուրաքանչյուր ոք կարող էր ազատորեն Իրան ներմուծել և այնտեղից արտահանել ցանկացած ապրանք առանց սահմանափակումների և առանց որևէ մաքսատուրք ու հարկ վճարելու: Ֆրանսիական դրոշը կարող էր բարձրացվել Իրանում ֆրանսիական ֆակտորիաների և վաճառականների տների վրա: Պարսից արքունիքում, այլ պետությունների դեսպանների համեմատ, ֆրանսիական դեսպանին տրվելու էր նախապատվություն:

Ֆրանսիացիներին հատկացնելով վերոհիշյալ իրավունքներն ու արտոնությունները՝ շահը հույս ուներ, որ արտաքին առևտրից ստացվող հասույթների օգնությամբ հնարավոր կլինի գեթ ինչ-որ չափով հաղթահարել Իրանի ֆինանսատնտեսական

ծանր ճգնաժամը: Սակայն նրա այդ հույսերը չարդարացան: Վերոհիշյալ պայմանագրերը, ըստ էության, մնացին թղթի վրա, որովհետև Ֆրանսիան այդպես էլ չաշխուժացրեց իր առևտրական քաղաքականությունը Իրանի նկատմամբ:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ

Իրանում Սասանյան դինաստիայի տիրապետության շրջանում այդ պետության քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ, որպես կանոն, կրում էր թշնամական դիմակայության և կոշտ առճակատման բնույթ: Առերևույթ թվում էր, թե այդ թշնամանքի հիմքում ընկած էր կրոնական գործոնը, երբ Սասանյան Իրանը ձգտում էր Հայաստանին պարտադրելու իր պետական կրոնը՝ զրադաշտականությունը: Սակայն իրականում պատճառները խորքային էին և առավելապես կրում էին քաղաքական բնույթ: Սասանյան Իրանի և Հայաստանի միջև բացված անջրպետը էլ ավելի խորացավ 301 թ.՝ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց հետո:

III-IV դարերում Սասանյան Իրանի և Հայաստանի միջև պարբերաբար բռնկվող պատերազմները ուղեկցվում էին հայ բնակչության զանգվածային բռնագաղթերով դեպի Իրան: Նման խոշոր բռնագաղթերից մեկը կազմակերպել է Շապուհ Բ արքան (309-379 թթ.) IV դարի 60-ական թվականներին: Հայաստանից դեպի Իրանի հյուսիսարևելյան նահանգներ բնակչության խոշոր բռնագաղթեր են կատարվել նաև VI դարի երկրորդ կեսին: Հայ բնակչության այդ զանգվածային գերեվարությունների ու տարագրությունների հետևանքով Իրանի տարբեր վայրերում առաջացել են մեծ ու փոքր հայ գաղթականական օջախներ, որոնք, կտրված լինելով հայրենի բնաշխարհից, օտար միջավայրում ժամանակի ընթացքում ձուլվել են և դադարել գոյություն ունենալուց:

Միանգամայն այլ բնույթի հայկական բնակավայրեր են եղել Վասպուրականի մաս կազմող Արտազ գավառը և Մեծ Հայքի մեջ մտնող Պարսկահայք նահանգը: Վերջինս, որն ընդգրկում էր Կապուտան (Ուրմիա) լճի հյուսիսային և արևմտյան առափնյա շրջանները, Մեծ Հայքի 387 թ. բաժանումից հետո անցել է Սասանյան Իրանին: Նրա կազմի մեջ մտնող տարբեր բնակավայրերում, հատկապես Ջարեհավանում, Ջարավանդում, Հերում (այժմ՝ Խոյ քաղաքը), Սաղամասում (այժմ՝ Սալմաստ), Որմիում (այժմ՝ Ուրմիա) և այլն, բնականաբար եղել է հայ հոծ բնակչություն: Ենթադրվում է, որ VII դարում, երբ Իրանն ընկավ Արաբական խալիֆայության տիրապետության տակ, այդ վայրերի հայ բնակչության մի մասը, ընդունելով իսլամը, դիմահեղվել և ձուլվել է մահմեդական զանգվածի մեջ: Դրանով, փաստորեն, ավարտվել է Իրանում հայ գաղթականության Պարթևական և Սասանյան շրջանը:

Իրանում հայկական նոր գաղթօջախներ սկսել են ստեղծվել XI դարից, գլխավորապես սելջուկների կողմից կազմակերպված բռնի գաղթերի և գերեվարությունների հետևանքով: Առաջին խոշոր բռնագաղթն Իրան սելջուկները կատարել են 1048 թ., իսկ այնուհետև դրանք պարբերաբար կրկնվել են: Այդ բռնագաղթերի և զանգվածային տարագրությունների հետևանքով XI-XII դարերում Իրանի հյուսի-

սային շրջաններում, հատկապես Ատրպատականում (Թավրիզ, Ուրմիա, Մարանդ, Սուլթանիե, Ռեյ, Ղարադաղ և այլն), ստեղծվում են հայկական նոր բնակավայրեր ու գաղթօջախներ, իսկ հնում եղածները, որոնք խամրել ու հոգեվարքի մեջ էին, վերականգնվում են:

Իրանում մոնղոլական տիրապետության շրջանում (1220–1385 թթ.) պարսկահայ գաղթօջախներն էլ ավելի ստվարացան՝ իրենց մեջ ընդունելով գաղթականական նոր հոսանքներ: Հայաստանում մոնղոլների կատարած ամենամեծ գերեվարությունը տեղի է ունեցել 1236–1237 և 1240 թվականներին, որի մասին տեղեկություններ է հաղորդում պատմիչ Կիրակոս Գանձակեցին: Գաղթեցված հայ բնակչության հիմնական մասը տեղաբաշխվել է Ատրպատականում, իսկ մի խոշոր զանգված քշվել է Թաբարիստան և Կասպից ծովի հարակից շրջանները:

Մոնղոլական շրջանում հայ բնակչություն է տեղափոխվել Իրան նաև կամովին՝ ոչ բռնագաղթի ճանապարհով: Հայաստանում ստեղծված ծանր տնտեսական պայմանները, քաղաքական անապահովությունը և այլն ստիպել են մարդկանց լքել հայրենիքը և տեղափոխվել հարևան Իրան՝ հաստատվելով առևտրաշատ և տնտեսապես բարվոք կենտրոններում, հատկապես առևտրական բանուկ ճանապարհների հանգուցային կայաններում:

XIII դարի երկրորդ կեսին Իրանի հայ բնակավայրերի կյանքում տեղի է ունենում մի կարևոր իրադարձություն: Մակվում, Սալմաստում, Խոյում, Ուրմիայում, Շամբում (Դարաշամբ), Թավրիզում, Մարանդում, Սուլթանիեում, Ղարադաղում և հայ բնակչություն ունեցող այլ վայրերում գտնվող հայ համայնքները, համախմբվելով Արտազի Ս. Թադևոս վանքի շուրջը, կազմել են Ատրպատականի թեմը: Մոնղոլական խաների շնորհած իրավունքով այդ նույն ժամանակ վերելք է ապրում Արտազի հայկական իշխանությունը, որն, ի դեպ, օգտվում էր Կիլիկյան Հայաստանի հովանավորությունից: Այդ իշխանության կազմի մեջ էին մտնում նաև Մակու քաղաք-ամրոցը և Ծործորի վանքը՝ իրենց կալվածքներով հանդերձ:

XIV դարի վերջերից պարսկահայ գաղթօջախները ապրել են աննկարագրելի կողոպուտի, կոտորածների, կրոնական ու տնտեսական հալածանքների և գերեվարությունների մի սոսկալի շրջան: Հատկապես օրհասական է դառնում նրանց վիճակը Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ: Վերջինս Ատրպատականը նվաճելուց հետո այնտեղից հայ գերիների անհամար բազմություններ է քշում Սամարղանդ: Դրա հետևանքով նվազում է այդ երկրամասի հայ բնակչության թիվը, մարում տնտեսական աշխուժությունը, տեղի է ունենում մշակութային անկում և այլն: Սակայն հայ գաղթօջախները, վերապրելով ծանր հոգեվարքը, շարունակում են գոյատևել: XIV դարում Իրանի առավել խոշոր հայաշատ կենտրոն է հանդիսացել Թավրիզը (Դավրեժը), որը հայկական աղբյուրներում հիշվում է նաև Գանձակ-Շահաստան անունով: Թավրիզում այնքան շատ հայեր են կենտրոնացված եղել, որ 1345 թ. գրված հայկական մի ձեռագրի հիշատակագիր՝ Ներսես Գրիչը, Թավրիզը համարում է ոչ միայն ֆարսերի (պարսիկների), այլև հայերի մայրաքաղաք: Աղբյուրներից տեղեկանում ենք, որ Թավրիզի հայ համայնքը բաժանված է եղել երեք հատվածների՝ Հայ

առաքելական եկեղեցու հետևորդների, կաթոլիկների և հունադավանների: Հիշատակարանների հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ այդ երեք հատվածների միջև անպակաս են եղել համայնքը պառակտող դավանաբանական վեճերը և կրոնական սուր առճակատումները: Կաթոլիկ եկեղեցու կենտրոնի՝ Վատիկանի քարոզիչ-միսիոներները եռանդուն գործունեություն են ծավալել Ատրպատականի հայաշատ կենտրոններում՝ աշխատելով «դարձի բերել» և կաթոլիկության գիրկը մտցնել տեղի հայությանը: Թավրիզում, Մարաղայում և Սուլթանիեում Վատիկանի ջանքերով ստեղծվում են քարոզչական կենտրոններ: 1330 թ. հոմադավան հայության համար Սուլթանիեում հիմնադրվում է եպիսկոպոսական թեմ, որի առաջին թեմակալ առաջնորդն է հանդիսացել Հովհաննես Կոր անունով արքեպիսկոպոսը:

XV դարում Հայաստանում և Իրանում կարա կոյունլու և ակ կոյունլու թուրքմեն իշխողների տիրապետության շրջանում պարսկահայ գաղթօջախները ծանր կորուստներ կրեցին: Այդ գաղթավայրերի հայ բնակչությունը մեծապես տուժում էր չդադարող պատերազմների, ներքին կռիվների, վաչկատուն ցեղերի ասպատակությունների, կրոնական հալածանքների և այլևայլ պատճառներով: Այդ շրջանում ունիթոր հայերի մեծ մասը, ընդունելով իսլամը, ձուլվեց ու անհետացավ: Սակայն չնայած աներևակայելի քաղաքական վայրիվերումներին՝ հայությունը ընդհանուր առմամբ կրկին կարողացավ դրսևորել զարմանալի կենսունակություն և ապրելու ու հարատևելու աներևակայելի կամք: Այդ դժնդակ ժամանակներում նա ոչ միայն կարողացավ պահպանել իր լեզուն, մշակույթը, կրոնը և ազգային ավանդույթները, այլև ի վիճակի եղավ նշանակալի մղում հաղորդելու դրանց: Հյուսիսային Իրանի հայ գաղթօջախներում առանձնակի զարգացում ապրեցին եկեղեցական ճարտարապետությունը, գրչագրության արվեստը, մի շարք գիտնականներ թարգմանեցին եվրոպացի միջնադարյան փիլիսոփաների երկերը, Ս. Թադևոսի վանքը դարձավ գիտական մտքի ուշագրավ կենտրոն և այլն:

XVI դարում իրանա-թուրքական համարյա անընդմեջ և արյունահեղ պատերազմների ընթացքում մարտնչող կողմերը ռազմական գործողությունների թատերաբեմ դարձած վայրերի բնակչությանը ենթարկում էին զանգվածային տեղահանության: Նահանջի ժամանակ պարսիկները օգտագործում էին «այրված հողի» մարտավարությունը՝ իրենց հետևից այրելով և ոչնչացնելով ամեն ինչ, որպեսզի գրավյալ տարածքում թշնամին չգտնի ուտելիք ու կացարան՝ բանակի և կեր՝ կենդանիների համար: Այդ մարտավարության բաղկացուցիչ մասն էր կազմում նաև տեղական բնակչության բռնի տեղահանությունը դեպի երկրի խորքերը:

Բնական է, որ Արևելյան Հայաստանից և Արևմտյան Հայաստանի՝ Իրանին սահմանակից շրջաններից հայ բնակչության բռնի տեղահանության հետևանքով XVI դարում իրանահայ գաղութը դառնում էր ավելի ստվարաթիվ: Նրա մեծացմանն ու ընդարձակմանը նպաստում էր նաև այն, որ թուրքական ծանր հարկապահանջության, հալածանքների և հարստահարությունների հետևանքով Արցախից, Սյունիքից և մի շարք այլ վայրերից հայ բնակչության առանձին խմբեր լքում էին հայրենիքը և գաղթում Իրան:

Հայ ժողովրդի նկատմամբ իրականացված բռնագաղթերի պատմության մեջ անանախադեպ էր Սեֆյան շահ Աբբաս Ա-ի (1587–1629 թթ.) կազմակերպած հայոց մեծ տարագրությունը դեպի Իրան, որը հայտնի է նաև «մեծ սյուրգուն» անունով: Հայության զանգվածային տեղահանությունը իրականացվեց 1604 թ.՝ իրանա-թուրքական պատերազմի շրջանում: Սակայն հետագայում նման բռնագաղթեր կրկնվեցին ևս մի քանի անգամ:

Դրանք իրականացվում էին անօրինակ դաժան եղանակներով: Գաղթեցված բնակչության թիվը անցնում էր երեք հարյուր հազարից: Հազարավոր մարդիկ Արաքսն անցնելիս ջրախեղդ եղան՝ ուժասպառ կամ ցրտահար լինելով, կամ սովահար մեռնում էին ճանապարհներին, շատերն էլ զինվորների կողմից սրախողխող էին արվում: Այսպիսով՝ հարյուր հազարավոր մարդկանց տառապանքների գնով շահ Աբբասը իրականացնում էր իր մտահղացած վիթխարի ծրագիրը:

Բռնագաղթի ենթարկված հայ բնակչությունը ցրվեց ու տեղավորվեց Իրանի այլևայլ շրջաններում ու քաղաքներում՝ Թավրիզում, Քաշանում, Համադանում, Ղազվինում, Գիլանում, Մազանդարանում և այլ վայրերում: Սակայն հիմնական զանգվածին շահը բնակեցրեց երկրի կենտրոնական շրջաններում, իր մայրաքաղաք Սպահանում, որի հարավային մասում՝ Զաենդերուդ գետի ափին, ի հիշատակ Հին Ջուղայի՝ հայերը հիմնեցին Նոր Ջուղա ավանը: Ուշագրավ է նշել, որ Սպահանում մինչև Նոր Ջուղայի հիմնադրումը գոյություն է ունեցել հայ գաղթօջախ, որն, անշուշտ, վկայում է այն մասին, որ հայկական բնակավայրերի աշխարհագրական սահմանները տարածված են եղել մինչև Իրանի կենտրոնական և հարավային շրջանները:

Իրանում հում մետաքսի արտահանությունը զարգացնելու նպատակով շահը Կասպից ծովի մերձակա նահանգները՝ Գիլան և Մազանդարան, գաղթեցրեց հազարավոր հայ ընտանիքներ: Ֆրանսիացի Շարդենի վկայությամբ՝ 40 տարի հետո նրանցից մնաց միայն մի փոքր մասը, իսկ մնացածները մահացան անբարենպաստ կլիմայի և կյանքի անասելի ծանր պայմանների հետևանքով:

Շահական իշխանությունները մեծ թվով հայ գյուղական բնակչություն բնակեցրին նաև Սպահանի շրջակա Լընջան, Ալինջան, Գանդիման, Ջղախոռ, Փերիա, Բուրվառի, Քարվանդ մահալներում, ինչպես նաև Բախթիարում (Չհարմահալ):

Կարճ ժամանակամիջոցում հարմարվելով նոր պայմաններին և օգտագործելով Հին Ջուղայից իրենց հետ բերած միջազգային առևտրի հարուստ փորձը՝ ջուղահայ խոջաները Իրանի արտաքին առևտրի մեծագույն մասը կենտրոնացրին իրենց ձեռքերում: Լեոյի արտահայտությամբ՝ Նոր Ջուղան վերածվեց «Գաղութային հայ կապիտալի ամենամեծ և ամենաուժեղ կենտրոնի»: Իրանում ստեղծվեց առևտրական էլիտա, որը բաղկացած էր գլխավորապես միջազգային ու ներքին առևտրով զբաղվող հայ վաճառականներից: Ողջ Փոքր Ասիայի և Լևանտի առևտրական կենտրոններում բազմամարդ հայ բնակչության, գաղութների և գաղթօջախների գոյությունը նշանակալիորեն հեշտացնում էր ջուղահայ վաճառականների գործունեությունը և համաշխարհային շուկայում նպաստում նրանց մրցողունակության բարձրացմանը: Չափազանց լայն էին նրանց առևտրական գործունեության աշխարհագրական սահմանները՝ Եվրոպայից մինչև Հնդկաստան ու Հեռավոր Արևելք, Աֆրիկայից մինչև Ռուսաստան ու Մերձբալթյան երկրներ: Ընդ որում՝ նրանք զբաղվում էին ինչպես ցամաքային քարավանային, այնպես էլ ծովային առևտրով: Կային նաև ջուղայեցի նավատերեր և անվանի նավավարներ: Մրցակցային դաժան պայքարին դիմանալու համար եվրոպացիների օրինակով խոջաները ստեղծում էին առևտրական ընկերություններ, յուրացնում միջազգային առևտրի կանոնները, սովորում լեզուներ: Միջմայրցամաքային առևտրով զբաղվող ջուղահայ վաճառականները մեծ դերակատարություն են ունեցել եվրոպական և ասիական մշակույթները միմյանց մերձեցնելու գործում: Նրանք Եվրոպայից Արևելք էին բերում նաև նոր, թարմ գաղափարներ:

Նոր Ջուղան հայ իրականության մեջ եղել է այն բացառիկ գաղթօջախներից մեկը, որը չափազանց մեծ դեր է խաղացել համահայկական տարողություն ունեցող հարցերում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ նա իր ձեռքն էր վերցրել հայ ազգային կյանքի ղեկավարությունը: Նույնիսկ Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոսների ընտրության գործում վերջին խոսքը պատկանում էր ջուղայեցիներին: Նրանք էին ուղղություն տալիս Հայաստանի հասարակական-քաղաքական, գաղափարական և գիտամշակութային կյանքին: Այդ գաղթօջախը առանձնահատուկ տեղ է գրավում նաև հայ ժողովրդի քաղաքական ինքնագիտակցության ձևավորման և ազատագրական գաղափարների հասունացման գործում: Նոր Ջուղայից են սերել հայ ազատագրական մտքի այնպիսի ռահվիրաներ, ինչպիսիք են Շահամիր Շահամիրյանը, Հարություն Շմավոնյանը և ուրիշներ: Ուշ միջնադարում Նոր Ջուղան դարձավ նաև հայ հոգևոր զարթոնքի ամենաուշագրավ կենտրոններից մեկը: Քաղաքական-տնտեսական համեմատաբար բարենպաստ պայմանները հնարավորություն տվեցին, որ Հայաստանից հեռու՝ Իրանի խորքերում գտնվող այդ գաղթօջախը դառնա հայ մշակույթի, կրթության ու գիտության ամենանշանավոր կենտրոնը: Ողջ Մերձավոր ու Միջին Արևելքում այստեղ է առաջին անգամ լույս տեսել տպագիր գիրք: Նորջուղայեցիներն են Եվրոպայի տարբեր երկրներում սկզբնավորել հայ գրատպությունը, որը ծավալվելով հասել է մինչև Հնդկաստան ու Հեռավոր Արևելք: Ուշ միջնադարում Նոր Ջուղայում է հիմնադրվել առաջին համալսարանը, զարգացում ապրել փիլիսոփայական միտքը, գրչագրությունը, մանրանկարչությունը, նկարչությունը, ճարտարապետությունը և այլն: Ջուղահայության ծոցից դուրս են եկել անվանի պատմիչներ (օր.՝ Խաչատուր Ջուղայեցին), հոգևորականներ (Ամենայն Հայոց կաթողիկոսներ) և այլն: Մի խոսքով՝ ողջ XVII դարի ընթացքում հայ ժողովրդի պատմության երկնակամարում Նոր Ջուղայի հայ գաղթօջախը աչքի է ընկել իր անզուգական փայլով:

Իրանահայ բնակչության եկեղեցական և հասարակական գործերը ղեկավարելու համար XVII դարում (1605–1606 թթ.) Նոր Ջուղա կենտրոնով ստեղծվում է Հայոց եկեղեցու հոգևոր թեմ: Նրա հոգևոր իշխանությունը տարածվում էր Իրանի կենտրոնական և հարավային նահանգների հայ համայնքների վրա: Հիշյալ թեմի

մեջ են մտել նաև Հնդկաստանի, Բասրայի, Բաղդադի և մի շարք այլ վայրերի հայ համայնքները:

XVIII դ. վերջին Իրանի տնտեսական անկման, շահական իշխանությունների կողմից հարստահարությունների, ազգային ու կրոնական հալածանքների, անձի ու գույքի անապահովության և մի շարք այլ պատճառների հետևանքով սկսվեց իրանահայության զանգվածային արտագաղթ եվրոպական ու ասիական տարբեր երկրներ, որի հետևանքով իրանահայության թիվը կտրուկ նվազեց, իսկ առանձին գաղթօջախներ լրիվ հայաթափվեցին:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ԱՖՂԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Սեֆյան պետության դեմ ճնշված ժողովուրդների ընդվզումներից ամենախոշորը Ղանդահարի շրջանում ապրող աֆղանական կիսաքոչվորական ռազմաշունչ գիլզայի ցեղի ապստամբությունն էր: XVIII դ. սկզբին աֆղանական էմիրների ջիրգայի կողմից գիլզայի ցեղի առաջնորդ նշանակվեց եռանդուն, փառասեր ու խորամանկ Միր–Վեյսը: Վերջինս 1709 թ. բարձրացնում է խռովություն, սրի քաշում շահական զորամասը և հրամայում է սպանել Ղանդահարի նահանգի բեկլարբեկ վրացի Գորգին խանին (Քարթլիի թագավոր Գիորգի ԺԱ, որը մահմեդականություն ընդունելուց հետո ստացել էր Շահնավազ–խան անունը): Այդ բոլորից հետո Միր–Վեյսը բացահայտ կերպով հրաժարվում է շահին ենթարկվելուց:

Գիլզայիների ապստամբությունը ծավալվում և աջակցություն է գտնում նաև շահական կառավարությունից դժգոհ աֆղանական մի շարք ցեղերի կողմից: 1711 և 1712 թթ. ջախջախելով իր դեմ ուղարկված շահական զորքերին՝ Միր–Վեյսին հաջողվում է իր անկախ կառավարչի վիճակը պահպանել ընդհուպ մինչև իր մահը՝ 1715 թ.: Երկու տարի ընդմիջումից հետո իր հորը՝ Միր–Վեյսին, փոխարինում է որդին՝ Միր–Մահմուդը (1717–1725 թթ.):

1717 թ. Սեֆյան պետության մայրաքաղաք Սպահան հասան տեղեկություններ, որ ապստամբ աֆղանները գրավել են նաև Հերաթը: Սակայն շահական արքունիքն ընդունակ չեղավ կտրուկ միջոցներով կասեցնելու ապստամբների շարժումը: Ավելին՝ Սեֆյան պետության անկարողությունը, որը հետևանք էր ընդհանուր քայքայման ու կազմալուծման, հնարավորություն տվեց Մահմուդին 1720 թ. կազմակերպելու իր առաջին արշավանքը դեպի Իրան, որը, սակայն, ավարտվեց անհաջողությամբ: Այնուհետև հավաքելով 20 հազարանոց մի բանակ՝ Միր–Մահմուդը կրկնեց իր արշավանքը:

Նա Սիստանի (Սեյիստան) վրայով շարժվեց դեպի արևմուտք՝ նպատակակետ ունենալով մայրաքաղաք Սպահանը: 1722 թ. մարտի 8–ին քաղաքից 25 կիլոմետր արևելք՝ Գյուլնաբադ գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտը ճակատագրական եղավ Սեֆյանների պետության համար: Շրջակա գյուղերից հապճեպ հավաքված իրանական աշխարհազորը կրեց ջախջախիչ պարտություն և ցրիվ եկավ: Աֆղանները պաշարեցին մայրաքաղաքը՝ շահից պահանջելով անձնատուր լինել: Սպահանում սկսված սովը և շահի մտավախությունը, որ մայրաքաղաքում կարող է բռնկվել ապստամբություն, ստիպեցին շահ Սուլթան Հուսեինին 1722 թ. հոկտեմբերի 22–ին

գնալ Միր–Մահմուդի «ոտքը» և թագը անձամբ դնել նրա գլխին: Պարտված ու կամազուրկ շահը Միր–Մահմուդի մատն անցկացրեց նաև թագավորական իշխանությունը խորհրդանշող մատանին, հանձնեց Սպահանի բանալիները՝ միաժամանակ նրա առջև խոնարհվելով իբրև թագավորի: Մահմուդն իրեն հայտարարեց Իրանի շահ: Սեֆյան էմիրները և զինվորականների մի մասը, ինչպես նաև պալատականներն ու արքունիքի ավագանին, հետևելով շահի օրինակին, հավատարմության երդում տվեցին Միր–Մահմուդին՝ նրան հայտնելով իրենց հնազանդությունը: Դրժելով իր կողմից տրված անձի անվտանգության երաշխիքները՝ Մահմուդը սկսեց ոչնչացնել շահի մերձավորներին և առհասարակ Սեֆյան ազնվականության ներկայացուցիչներին: Դրանից հետո աֆղանները Իրանում սահմանեցին ահաբեկման, կողոպտիչ հարստահարության ու հետապնդումների մի վարչակարգ: Երկիրը մատնվեց քաոսի ու անորոշության:

Եթե մայրաքաղաքում վախը անդամալուծել էր մարդկանց կամքը, և ոչ ոք չէր համարձակվում դիմադրել աֆղան զավթիչներին, ապա երկրի բազմաթիվ վայրերում բնակչությունը սկսում է բուռն դիմադրություն ցույց տալ զավթիչներին՝ շոշափելի հարվածներ հասցնելով նրանց: Աֆղանները հատկապես կորովի դիմադրության հանդիպեցին Յեզդ, Ղազվին քաղաքներում, Սպահանի շրջակայքի բնակավայրերում և այլուր: Երկրի նշանակալից մասը, փաստորեն, չէր հնազանդվում զավթիչներին, և զինված դիմադրությունը աֆղաններին պահում էր մշտական լարվածության մեջ: Դիմադրության ձևերից մեկն էլ իրենց բնակավայրերը լքելն ու հեռավոր շրջանները տեղափոխվելն էր: Որպես կանոն՝ տարբեր վայրերում բռնկվող մեծ ու փոքր ապստամբություններին աֆղանները պատասխանում էին սարսափելի կոտորածներով ու անագորույն դաժանությամբ:

Շահ Սուլթան Հուսեինի որդուն՝ Թահմասպին, հաջողվել էր մայրաքաղաքի պաշարման օրերին փախչել երկրի հյուսիսային շրջանները, որտեղ նա իրեն հայտարարեց Իրանի շահ՝ ընդունելով Թահմասպ (Թահմազ) Բ գահակալական անունը: Աֆղանների կողմից նա ճանաչվում էր որպես շահ չնվաճված երկրամասերում՝ Գիլանում, Մազանդարում և դրանց հարակից շրջաններում: Նորաթուխ շահը կոչով դիմեց ժողովրդին համախմբվելու իր շուրջը՝ զավթիչներին երկրից վռնդելու համար: Սակայն նրան, այնուամենայնիվ, չհաջողվեց ստեղծել մի այնպիսի բանակ, որն ի վիճակի լիներ լուծելու այդ խնդիրը: Սեֆյան դինաստիան վերջնականապես վարկաբեկել էր իրեն, և մարդիկ չէին ցանկանում հավաքվել նրա դրոշի ներքո:

Իրանի ներքաղաքական դրությունը էլ ավելի սրվեց 1723 թ. օսմանյան զորքերի ներխուժման պատճառով: Իրար հետևից գրավելով իրանական պետության կենսական նշանակություն ունեցող կենտրոնները՝ թուրքերը շարժվում էին առաջ՝ նպատակ ունենալով «ողջ Իրանը միավորել իրենց տիրապետության ներքո»: Պարտություն կրած աֆղանները ստիպված են լինում 1727 թ. նոյեմբերին օսմանցիների հետ կնքել պայմանագիր, որով նրանց էին զիջում ողջ Իրանի տարածքի երկու երրորդ մասը: Դրա փոխարեն սուլթանը աֆղանների նոր տիրակալին՝ Աշրաֆին, ճանաչում էր որպես Իրանի շահ, որը վասալական կախման մեջ պետք է լիներ Օսմանյան կայսրությունից:

Իրանը այլևս մեկ միասնական պետություն չէր: Ըստ էության այն բաժանվում էր չորս մասի, աֆղանները զբաղեցնում էին երկրի կենտրոնական մասը, թուրքերը ռազմակալման էին ենթարկել Համադանից մինչև Վրաստանի սահմաններն ընկած տարածքները, ռուսները տիրացել էին Կասպից ծովի ողջ արևմտյան ծովափնյա շրջանին և Գիլան նահանգին: Ամենափոքր մասը բաժին էր ընկել շահ Թահմազ Բ–ին: Նրա տիրապետության տակ էր միայն Կասպից ծովի հարավային ափի Մազանդարան նահանգը: Շահի փորձերը՝ դիմադրություն կազմակերպելու աֆղանների դեմ, հաջողություն չունեցան: Երկիրը կանգնած էր պետականությունը և իր կենսական տարածքը կորցնելու ահեղ մարտահրավերի առջև:

2. ՆԱԴԻՐ ՇԱՀ

Իրանի համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ պահին ասպարեզ է իջնում թուրքական աֆշար ցեղի քըրքլու ցեղախմբի մի ռազմիկ՝ Նադիրը: Իր զինված ջոկատով մի քանի հաղթանակներ տանելուց և Խորասանը իրեն ենթարկելուց հետո՝ 1726 թ., նա իր ծառայությունն առաջարկեց շահ Թահմազին՝ երդվելով, որ ինքը նրան կվերականգնի իր նախնիների գահի վրա և վրեժ կլուծի աֆղաններից ու օսմանցիներից: Թահմազը ուրախությամբ ընդունեց նրա ծառայության առաջարկը՝ վերջինիս տալով Թահմազ ղուլի–խան (Թահմազի ծառա խան) անունը: Սակայն շուտով ինքը՝ Թահմասպ Բ–ն, դարձավ իր «ստրուկի» ձեռքին մի պարզ գործիք նրա փառասիրական մտադրություններն իրագործելու ճանապարհին:

1729 թ. նոյեմբերի 29–ին Սպահանից 60 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Մուրչեխոր գյուղի մոտ Նադիրը գլխովին ջախջախեց աֆղանական զորքերին, որոնք դիմեցին խուճապահար փախուստի՝ իրենց հետ տանելով կողոպտված հարուստ ավարը և սպանելով նախկին շահ Սուլթան Հուսեինին: Փախուստի ընթացքում սպանվեց նաև աֆղանների տիրակալը՝ Աշրաֆը: Մայրաքաղաքն ազատագրված էր: Նադիրը, իսկ նրա հետևից նաև Թահմազը հաղթական երթով մուտք գործեցին Սպահան, որը յոթ տարի շարունակ զավթված էր օտարների կողմից: Թահմազը հանդիսավոր կերպով բազմեց Սեֆյանների գահին: Բոլորի շուրթերին հնչում էր Թահմազ–ղուլի խանի անունը, բոլորը նրան անվանում էին ազատարար:

Այսպիսով՝ 1729 թ. նոյեմբերին աֆղանները, որոնց տիրապետությունը ծանր աղետ էր Իրանի համար, վերջնականապես դուրս քշվեցին Իրանից: Դրանից հետո Նադիրն իր զենքն ուղղեց ամենաահարկու թշնամու՝ օսմանյան թուրքերի դեմ, որոնք, օգտվելով Իրանում ստեղծված խառնակ վիճակից, հասցրել էին գրավել համարյա ողջ Այսրկովկասը, Դաղստանի և Շիրվանի մի մասը, ինչպես նաև ընդարձակ տարածքներ Հյուսիսային, Արևմտյան և Կենտրոնական Իրանում: 1730 թ. Նադիրի զորքերը ծանր պարտության մատնեցին թուրքերին և գրավեցին Համադանը, Քերմանշահը և Ատրպատականը՝ Թավրիզ քաղաքով հանդերձ:

Օսմանյան ռազմակալման դեմ պայքարը կիսատ թողնելով՝ 1731 թ. Նադիրը հապշտապ մեկնեց արևելք՝ Հերաթում աբդալի ցեղի ապստամբությունը ճնշելու համար: Օգտվելով նրա բացակայությունից՝ շահ Թահմազ Բ-ն, որը մտավախություն ուներ, որ Նադիրի զորքերի կողմից Այսրկովկասի նվաճումը էլ ավելի կբարձրացնի նրա հեղինակությունը, որոշեց անձամբ զորաշարժ կատարել թուրքերի դեմ և հաղթական ճակատամարտով ձեռք բերել հեղինակություն ու կշիռ: Եվ դա հակառակ այն բանի, որ Նադիրը բազմիցս նախազգուշացրել էր նրան խուսափել երկու ճակատով պատերազմ մղելուց: Համադանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Թահմասպը կրեց ծանր պարտություն, որի հետևանքով թուրքական բանակի առջև ճակատը կատարելապես մերկացավ, և սրընթաց շարժվելով առաջ՝ օսմանցիները վերստին գրավեցին Համադանը, Քերմանշահն ու Թավրիզը, ապա ներխուժեցին Խուզիստան: 1731 թ. պարտված ու բարոյալքված շահը ստիպված էր օսմանցիների հետ հաշտություն կնքել, որով նրանց էր զիջում Արաքս գետից հյուսիս ընկած բոլոր տարածքները: Բացի այդ, Բաղդադի Ահմադ փաշան որպես «արփա» (կերակրում) Քերմանշահի նահանգում ստացավ ինը գավառ: Շահի պայմանագիրը օսմանցիների հետ Նադիրը հայտարարեց խայտառակ և հրաժարվեց այն ճանաչելուց: Նա պահը միանգամայն պատեհ համարեց Թահմազ Բ-ին գահընկեց անելու համար:

1732 թ. Նադիրն իր զորքերով ժամանեց Սպահան և գահընկեց անելով շահ Թահմազին՝ իր խնամակալության ներքո շահ հայտարարեց նրա մանկահասակ որդուն՝ Աբբաս Գ-ին, որը անվանապես իշխեց 1732–1736 թթ.: Տեղի ունեցածը փաստորեն պետական հեղաշրջում էր, և Նադիրը դարձավ երկրի ինքնիշխան տերը:

1732 թ. հունվարի 21-ին Նադիրը Ռուսաստանի հետ կնքեց պայմանագիր, ըստ որի վերջինս պարտավորվում էր անմիջապես Իրանին վերադարձնել մերձկասպյան նահանգները, իսկ Կուր գետից հյուսիս ընկած շրջանները, ներառյալ Բաքուն ու Դերբենդը, ռուսները պետք է վերադարձնեին Այսրկովկասից թուրքերին վոնդելու դեպքում: Այդ պայմանագիրը փոխշահավետ ակտ էր, որովհետև ռուսները հնարավորություն էին ստանում Իրանի միջոցով հարվածներ հասցնելու Մերձավոր Արևելքում ու Այսրկովկասում իրենց հիմնական ախոյան Օսմանյան կայսրությանը, իսկ Նադիրը հնարավորություն էր ստանում ամբողջ ուժերը կենտրոնացնելու թուրքերի դեմ և մեկ ավելորդ անգամ ևս իր ժողովրդին ներկայանալու որպես հայրենի հողը օտարերկրյա տիրապետությունից ազատագրողի դերում:

Անմիջապես զորաշարժ կատարելով օսմանցիների դեմ՝ Նադիրի զորքերը գրավեցին Համադանն ու Քերմանշահը, իսկ 1733 թ. սկզբին Քիրքուքի մոտ պարտության մատնելով թուրքերին՝ գրավեցին շիաների սրբազան քաղաքներ Քարբալան ու Նաջաֆը, այնուհետև՝ 1734–1735 թթ., թուրքերից մաքրեցին Վրաստանը, Արևելյան Հայաստանն ու Ատրպատականը:

1734 թ. սուլթան Մահմուդ Ա-ն արևելյան զորաբանակների ընդհանուր հրամանատար նշանակեց Քյոփրուլու զադե Աբդուլլա փաշային, որն իր բանակը շարժեց դեպի Այսրկովկաս: Սակայն այս զորաբանակը դեռ Կարս չհասած՝ Նադիրը իր զորքերը մտցրեց Շիրվան, պարտության մատնեց օսմանցիների հետ կապված Սուրխային, գրավեց ու ավերեց Շամախին ու Ղազի-Ղումուխը և պաշարեց Գանձակի բերդը: Այնուհետև նա արագ երթով մեկը մյուսի հետևից հետ վերցրեց Արաքսից հյուսիս ընկած քաղաքները, այդ թվում նաև Թիֆլիսը: Այդ նույն ժամանակ Նադիրը իր առաջին արշավանքը կազմակերպեց Իրանի նկատմամբ թշնամի Դաղստանի ինքնագլուխ խաների դեմ: Նադիրի և Աբդուլլա փաշայի զորաբանակների միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1735 թ. հուլիսի 8-ին Երևանից ոչ հեռու՝ Եղվարդ գյուղի մոտ: Չնայած թվական բացարձակ գերակշռությանը՝ թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին և խուճապահար նահանջեցին: Սակայն նահանջի ճանապարհը փակել էին տեղի հայկական աշխարհազորայինները: Ընկնելով շրջապատման մեջ՝ թուրքական բանակը գլխովին ոչնչացավ:

Շուտով Եղվարդի ճակատամարտում սպանված Աբդուլլա փաշայի տեղը նոր հրամանատար (սարասկյար) նշանակված Ահմադ փաշան հատուկ պատվիրակություն ուղարկեց Կարս՝ Նադիրից հաշտություն խնդրելու: 1736 թ. կնքված թուրք-իրանական պայմանագրով օսմանցիները Իրանին էին վերադարձնում այն բոլոր տարածքները, որոնք նրան էին պատկանում մինչև 1722 թ.: Այլ կերպ ասած՝ թուրքերը վերադարձնում էին Երևանի, Գանձակի և Թիֆլիսի բերդերը և պարտավորվում էին իրենց զորքերը հետ քաշել Այսրկովկասից:

Նադիրը որոշեց օգտագործել իր ռազմական հաջողությունները և Իրանի «ազատարարի» իր փառքը՝ շահական գահը հափշտակելու համար: 1735 թ. նա բանակ դրեց Մուղանի դաշտավայրում և հրավեր ուղարկեց երկրի բոլոր նահանգների կառավարիչներին ու ավագանուն շտապ հավաքվելու այնտեղ՝ «ղուռուլթայ» գումարելու համար: Հաջորդ տարի՝ 1736 թ. հունվարին, ավագանու այդ ժողովը գումարվեց: Նրան մասնակցում էր Իրանի աշխարհիկ և հոգևոր, մուսուլման և այլադավան ավատատիրության վերնախավը: Ներկա էին նաև հայ մելիքներն ու կաթողիկոս Աբրահամ Կրետացին: Հավաքի մասնակիցների թիվը անցնում էր 20 հազարից: «Ղուռուլթայը» շրջապատված էր Նադիրին հավատարիմ զորքերով, և առհասարակ ամեն ինչ արվում էր, որ համընդհանուր վախի մթնոլորտում ոչ ոք չհակառակվի Նադիրի կամքին: Ավագանու ժողովը Իրանի գահի միակ արժանի թեկնածու «միաձայն» ճանաչեց Նադիրին: Գարնանամուտին՝ պարսից ավանդական ամանորին (նովրուզ), տեղի ունեցավ Նադիրի թագադրությունը, որը ստացավ Նադիր շահ Աֆշար գահակալական անունը (1736–1747 թթ.): Պատմության թատերաբեմից հեռացած Սեֆյան դինաստիային փոխարինելու եկավ Աֆշարների հարստությունը:

Գահ բարձրանալուց մի քանի օր անց Իրանի նոր շահնշահը հասկացրեց իր շրջապատի մարդկանց, որ մտադիր չէ իր իշխանությունը կիսել ոչ մանկահասակ Աբբասի և ոչ էլ Սեֆյան տոհմի որևէ այլ մեկի հետ: Ուստի նրա հրամանով Աբբաս Գ-ը, ինչպես և նրա հայրը՝ նախկին շահ Թահմասպ Բ-ը, սպանվեցին: Զբավարարվելով դրանով՝ Նադիրը հրամայեց սրի քաշել նաև շահական ընտանիքի բոլոր մեծ ու փոքր շառավիղներին: Այսպիսով՝ Սեֆյան դինաստիան հիմքից արմատախիլ արվեց:

Անկասկած, Նադիր շահի մեծագույն ծառայությունը Իրանին այն էր, որ նա վերականգնեց այդ երկրի միասնությունը և կրկին ի մի բերեց ու «հավաքեց» նախկինում Իրանի կորցրած տարածքները:

Սակայն Պարսկաստանի նոր տիրակալը միանգամից բախվեց լայնածավալ երկիրը կառավարելու հետ կապված մի շարք դժվարությունների: Ժառանգելով օտար ռազմակալման և անընդմեջ պատերազմների հետևանքով ծայրահեղ աղքատության հասած և տնտեսապես քայքայված մի երկիր՝ Նադիրը կարծում էր, թե այդ ծանր վիճակից դուրս գալու լավագույն միջոցը արտաքին արշավանքների կազմակերպումն է, որպեսզի նվաճված երկրների կողոպուտով լցնի պետական գանձարանը, պահի բանակը, ինչպես նաև շահի իր իշխանության գլխավոր հենարանը հանդիսացող քոչվոր ու նստակյաց ռազմաավատատիրական դասակարգի համակրանքն ու աջակցությունը: Նվաճումներն անհրաժեշտ էին նաև նոր դինաստիայի համար փառք ստեղծելու և նրա ներկայացուցիչների հարստացման համար: Հենց այդ պատճառով նրա ողջ կառավարման շրջանն ընթացավ նվաճողական ու կողոպտչական պատերազմներ մղելու հունով:

1737 թ. Նադիր շահը ներխուժեց Աֆղանստան և գրավեց Քաբուլը, Հերաթը և Ղանդահարը: Այնուհետև նրա 80 հազարանոց բանակը շարժվեց դեպի Հնդկաստան: Այդ արշավանքի համար ժամանակը հաջող էր ընտրված, քանի որ Մեծ Մողոլների պետությունը տագնապ էր ապրում և հայտնվել էր տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի վիճակում: Մեծ Մողոլ Մուհամմեդ շահի ուժերը թուլացել էին հյուսիսում սիկխերի, իսկ հարավում՝ Մահարաշթրայում մարատհների դեմ մղված պայքարում: 1739 թ. փետրվարի 24-ին Դելիից ոչ հեռու գտնվող Քառնալ քաղաքի մոտ տեղի ունեցած մեծ ճակատամարտում Նադիրը գլխովին ոչնչացրեց Մուհամմեդ շահի բանակը, որից հետո գրավեց Դելին՝ այն մատնելով ահավոր կողոպուտի ու ավարի: Կողոպտվեց և ավարի մատնվեց ինչպես Մեծ Մողոլների ամբողջ հարստությունը, այնպես էլ բնակչության ունեցվածքը: Դա դեռ քիչ էր, Մեծ Մողոլի վրա դրվեց հսկայական տուգանք մուծելու պարտավորություն: Նա ստիպված էր ստորագրել նվաստացուցիչ ու ծանր մի պայմանագիր, որով Հինդոս գետից արևմուտք ընկած բոլոր հողերը զիջում էր Նադիրին: Մեծ Մողոլների թագավորը դառնում էր նրա հարկատուն:

Պետական գանձարանը անբավ հարստությամբ լցնելուց հետո Նադիրը հրովարտակ հրապարակեց Իրանի բնակչությանը երեք տարի ժամկետով հարկերից ազատելու վերաբերյալ: Իր այդ քայլով նա ցանկանում էր խթանել պատերազմների, զորաշարժերի և ներքին ցնցումների հետևանքով քայքայված տնտեսությունը և զարկ տալ երկրի տնտեսությանն ու արտադրողական ուժերի զարգացմանը: Սակայն, բնականաբար, հնարավոր չէր լոկ հարկային, թեկուզ բարենպաստ քաղաքականության շնորհիվ այդ բնագավառում հասնել գոհացուցիչ արդյունքների:

1739–1740 թթ. Նադիր շահը ձեռնամուխ եղավ Միջին Ասիայի նվաճմանը: Կարճ ժամանակամիջոցում նրա հաղթական բանակը գրավեց Բուխարան և Խիվան (Խորեզմը): Շահը քայլեր էր ձեռնարկում նաև դեպի հարավ՝ Պարսից ծոցի կողմը ծավալվելու ուղղությամբ: Դեռևս 1736 թ. նա արաբներից հետ խլեց Բահրենյան կղզիները: 1737–1738 և 1741–1743 թթ. զորքեր ուղարկեց Օման և Հարավարևելյան Արաբիա՝ դրանք Իրանին ենթարկելու նպատակով, սակայն շոշափելի հաջողություն չունեցավ: 1741–1743 թթ. ընթացքում Նադիրը մի քանի արշավանք կազմակերպեց նաև դեպի Դաղստան՝ ինքնագլխության ձգտող և անհնազանդ խաներին ու նահապետական կյանքով ապրող ազատ համայնքներին ընկճելու և իրեն ենթարկելու համար: Սակայն դաղստանյան պատերազմը դարձավ Նադիր շահի առաջին ռազմական անհաջողությունը, որը մեծ հարված հասցրեց նրա հեղինակությանը: Ուստի անհրաժեշտ էր հաղթական մի պատերազմով վերականգնել իր ռազմական վարկը, այլապես ապստամբությունների ու խռովությունների ալիքը կարող էր սրբել տանել ամեն ինչ: Այդ նպատակով նա 1743 թ. պատերազմական ճակատ բացեց Օսմանյան կայսրության դեմ, որը փոփոխակի հաջողությամբ շարունակվեց ընդհուպ մինչև 1746 թ.: Նադիրը իր առջև խնդիր էր դրել նվաճելու Արաբական Իրաքը, որը նախկինում մի որոշ ժամանակահատված պատկանել էր իրանական պետությանը: Սակայն այս անգամ այդ պատերազմը հաջողություն չբերեց շահին, և 1746 թ. կնքված պայմանագրով սահմանները մնացին անփոփոխ:

Ներքին կյանքում Նադիր շահը փորձում էր ստեղծել կենտրոնացված վարչական համակարգ՝ երկաթյա կամքով և բռնապետական եղանակներով երկիրը կառավարելու համար: Նրա օրոք արքունիքն ու ռազմական ճամբարը ներկայացնում էին մեկ միասնություն: Իր տարածքով վիթխարի չափերի հասնող պետությունը Նադիր շահը կառավարում էր համարյա բացառապես ռազմական ուժի օգնությամբ: Նա, անշուշտ, գիտակցում էր, որ միայն ռազմական հաղթանակներով, որքանով էլ որ դրանք փայլուն լինեին, հնարավոր չէր իրականացնել աշխարհակալ պետություն ստեղծելու իր նվիրական իդեալը: Ուստի իր հասկացած ձևով նա ձեռնարկում էր միջոցառումներ երկրի տնտեսական կյանքն աշխուժացնելու ուղղությամբ, որոնք, սակայն, ոչ մի էական արդյունք չտվեցին: Իրանի քաղաքական միավորումը արտադրողական ուժերի չափազանց ցածր մակարդակի և ֆեոդալական դաժան շահագործման պայմաններում չհանգեցրեց երկրի քիչ թե շատ վերընթաց զարգացմանը:

Ժողովրդական լայն զանգվածների շրջանում Նադիրը ժողովրդականություն էր վայելում մինչև այն պահը, քանի դեռ ղեկավարում էր պայքարը օտարերկրյա զավթիչների՝ աֆղանների և օսմանցիների դեմ: Սակայն այնուհետև նրա չդադարող շարունակական պատերազմները երկրի բնակչության համար դարձան անտանելի բեռ, մանավանդ որ Նադիրի հարկային քաղաքականությունը գնալով ավելի ու ավելի էր ծանրանում: Նադիր շահի պետության մեջ ամենուրեք իշխում էր բիրտ ուժի սարսափը: Առհասարակ, Նադիր շահի ներքին քաղաքականության գլխավոր գիծը զանգվածային ահաբեկչությունն էր գործնականում բնակչության բոլոր խավերի, ներառյալ նաև ավատական ազնվականության նկատմամբ: Դա առաջ էր բերում մշտական հուզումներ ու ապստամբություններ ինչպես բուն Իրանում, այնպես էլ նվաճված երկրներում:

Նադիր շահի նվաճումների հետևանքով ստեղծված հսկայածավալ պետությունը արդեն դրսևորում էր քայքայման բացահայտ նշաններ: Ռազմական անհաջողությունները, արքունիքում ծայր առած խարդավանքները էլ ավելի ուժեղացրին շահի հիվանդագին կասկածամտությունն ու դաժանությունը: Բռնակալը ամենուրեք տեսնում էր դավադիրների: Ինքնապաշտպանության բնազդը նրան մղում էր անլուր գազանությունների իր իսկ հարազատների նկատմամբ: Ենթարկվելով պալատական բանսարկություններին՝ շահը հրամայեց կուրացնել իր հարազատ որդուն՝ Ռզա ղուլի միրզային: Եվ երբ պարզվեց, որ որդին անմեղ էր, կորցնելով հոգեկան անդորրը՝ շահը գտնվում էր կիսամեղսունակ վիճակում:

Գնալով լեռնանում էր դժգոհությունը Նադիր շահի ահաբեկչական վարչակարգի նկատմամբ: Հետևաբար հասունանում էր դավադրությունը նրա կյանքի դեմ: 1747 թ. հունիսի 24-ին՝ գիշերը, Խորասանում՝ իր ռազմական ճամբարում, Նադիր շահը սպանվեց սեփական վրանի մեջ իր համարձակ սպաների և պահակազորի խաների կողմից կազմակերպված դավադրության հետևանքով:

3. ԶԵՆԴԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ. ՔԵՐԻՄ ԽԱՆ

Նադիր շահի սպանությունից հետո Իրանում ծայր առան երկպառակություններ և տարբեր ավատական խմբավորումների միջև իշխանության համար թեժ պայքար: 1747 թ. Խորասանի ղզլբաշական ցեղերի խաները Մեշհեդում շահ հռչակեցին Նադիր շահի եղբորորդի Ալի-ղուլի-միրզա Աֆշարին, որն ընդունեց Ադիլ շահ («արդարամիտ շահ») անունը: Սակայն իր դաժանությամբ «արդարամիտ շահը» չէր զիջում Նադիրին, ուստի 1748 թ. գահընկեց արվեց և կուրացվեց: Գահ բարձրացվեց Նադիր շահի 14-ամյա թոռը՝ Շահրուխը: 1749 թ. նրա դեմ խռովություն կազմակերպեց Մեշհեդ քաղաքի շիական հոգևորականությունը, և նա նույնպես գահընկեց արվեց, թեև հետագայում կարողացավ վերստին տիրանալ, և մինչև 1796 թ. նրան որպես շահ ճանաչում էին միայն Խորասանում:

XVIII դ. 50-ական թթ. սկզբին Իրանը տրոհվել էր մի շարք մանր ավատական տիրույթների, որոնց կառավարիչները համարյա անդադար պայքար էին մղում միմյանց դեմ:

Հետագայում Իրանին տիրանալու համար պայքարը ծավալվեց գլխավորապես ավատական երեք խմբավորումների միջև, որոնք իշխանությունը զավթել էին Ֆարսում, Ասթերաբադում և Ատրպատականում: Այդ խմբավորումները գլխավորում էին Քերիմ խան Զենդը, Մուհամմեդ Հասան խան Ղաջարը և Ազադ խանը: Այդ պայքարը 1758 թ. ավարտվեց Քերիմ խան Զենդի (1758-1779 թթ.) վճռական հաղթանակով:

Զենդերի ցեղը մտնում էր ֆեյլի իրանալեզու լուրերի կամ լորերի ցեղախմբի մեջ, որի բնակության վայրը Լուրիստանն էր (Համադանից հարավ-արևելք):

Երկրի գերագույն իշխանությունը իր ձեռքում կենտրոնացնելուց հետո Քերիմ խանը սկսեց իրանական հողերի «հավաքումը»: Պարսկական Իրաքը, Մազանդարանը, Գիլանը, Քրդստանը, Արևմտյան ու Կենտրոնական Իրանի մի շարք խաներ կամովին իրենց հնազանդությունը հայտնեցին նրան: Այն երկրամասերը, որոնք

չցանկացան ընդունել Իրանի նոր տիրակալի գերիշխանությունը, հնազանդեցվեցին զենքի ուժով: 1763 թ. Քերիմ խան Զենդին հաջողվեց իր իշխանության ներքո համախմբել ողջ Իրանը, բացառությամբ Խորասանի, որտեղ կառավարում էր կույր Շահրուխ Աֆշարը: Իրենց անկախությունը պահպանեցին միայն Աֆղանստանը, Այսրկովկասյան խանությունները և Արևելյան Վրաստանի թագավորությունները: Քերիմ խանը մտադիր էր անցնել Արաքսը և շարժվել դեպի Այսրկովկաս՝ այդ ինքնագլուխ երկրամասերը ընկճելու համար, սակայն ստանալով տեղեկություն այն մասին, որ իր եղբայր Զեքի խան Զենդը ապստամբել է իր դեմ, որոշեց հետաձգել այդ ծրագիրը և նախ ճնշել ապստամբությունը:

1763 թ. Քերիմ խանն ընդլայնեց իր ռազմական գործողությունները Խուզիստանի անհնազանդ ավատական տիրակալների դեմ, որոնց տիրույթները նվաճելուց հետո սկսեց ինքնագլուխ արաբական ցեղերի (բանի քաաբ և այլն) հնազանդեցումը: Այսպիսով՝ Իրանի ողջ հարավը ևս մտավ նրա ընդարձակ պետության կազմի մեջ:

1775 թ. մարտին Քերիմ խանի 30 հազարանոց զորքը պաշարեց Բասրան: Տասներեքամսյա պաշարումից հետո հիվանդություններից ու սովից ուժասպառ եղած ու հյուծված քաղաքն ընկավ: Քերիմ խանը Բասրայի բնակիչների վրա դրեց ծանր ռազմատուգանք: Սակայն հետագայում՝ նրա մահից հետո, իրանական զորամասը լքեց ու հեռացավ քաղաքից, և Բասրան վերստին անցավ օսմանյան տիրապետության տակ (1779 թ.): Քերիմ խանը տարիներ շարունակ պատերազմեց օսմանցիների դեմ, սակայն առանց շոշափելի հաջողություններ ձեռք բերելու:

Ձևականորեն Քերիմ խանը իրեն շահ չհայտարարեց: Նա սկզբում կառավարում էր Սեֆյանների շառավիղ Իսմայիլ Գ-ի անունից, որը գտնվում էր պատվավոր «տնային կալանքի» վիճակում: Քերիմ խանը իրեն համեստորեն կոչում էր «վաքիլ» («վաքիլ-օդ-դոուլե» կամ «վաքիլ-ար-ռայա»), որը նշանակում է լիազորված անձ, և այդ կարգավիճակով կառավարեց երկիրը ընդհուպ մինչև իր մահը՝ 1779 թ.:

Առհասարակ իր տիրապետության սկզբնական շրջանում նա ամեն կերպ ձգտում էր դրսևորելու իր նվիրվածությունը Սեֆյան դինաստիային՝ իրեն ներկայացնելով որպես Սեֆյանների «ոտնահարված» իրավունքների վերականգնման ջատագով: Սակայն դրանով հանդերձ՝ նա աչալուրջ կերպով հետևում էր, որ այդ դինաստիայի շառավիղներից որևէ մեկը չփորձի հավակնություններ դրսևորել իր իշխանության նկատմամբ: Հետագայում վերացնելով դրածո Իսմայիլ Գ շահին, որն այլևս պետք չէր իրեն, Քերիմ խանը սկսեց կառավարել երկիրը իր անունից, սակայն դարձյալ չընդունելով շահական տիտղոսը և բավարարվելով «վեքիլի» տիտղոսով:

Նախապես Քերիմ խանի մայրաքաղաքը Սպահանն էր, սակայն հետագայում նա իր նստավայրը տեղափոխեց Ֆարս նահանգի կենտրոն Շիրազ քաղաքը, որը հեռու չէր իր ցեղի քոչավայրերից, և, բացի այդ, քաղաքի բնակչությունն ու հատկապես տեղի ազնվականական վերնախավը անվերապահորեն պաշտպանում էին իրեն:

Քերիմ խանի տիրապետությունը նշանավորվում էր նրանով, որ Բուիների դինաստիայի անկումից հետո (1055 թ.)՝ 700 տարի անց, նա Իրանի առաջին տիրակալն էր, որն ուներ ոչ թե թյուրքական, մոնղոլական կամ աֆղանական, այլ իրանա-

կան ծագում: Այնուհետև, թեև նա սերել էր քոչվորական ազնվականության կազմից, սակայն աշխատում էր հենվել ոչ միայն Իրանում մեծ թիվ կազմող վաչկատուն ցեղերի և նրանց վերնախավի, այլև նստակյաց բնակչության ավատատեր-վերնախավի, ինչպես նաև Իրանի առևտրավաճառականական դասի վրա: Նա, օրինակ, միջազգային առևտրով զբաղվող հայ վաճառական խոջաներին շնորհեց մի շարք արտոնություններ և իրավունքներ: Վաքիլն աշխատում էր դյուրություններ հատկացնել նաև եվրոպական վաճառականներին և առևտրական ընկերություններին՝ նրանց Իրանի արտաքին առևտրի մեջ ներգրավելու համար: Այսպես՝ 1763 թ. հուլիսի 2-ին նա հրապարակեց մի հրամանագիր, որով անգլիական Օստ-Հնդկական ընկերությանը շնորհեց լայն արտոնություններ ու իրավունքներ Իրանի հետ առևտուրը զարգացնելու համար:

Քերիմ խանը ժառանգել էր երկարատև երկպառակությունների, միջավատական պատերազմների, իշխանության համար անընդմեջ կռիվների հետևանքով քայքայված տնտեսությամբ և նոսրացված բնակչությամբ մի երկիր: Ուստի նա սկսեց եռանդուն ջանքեր գործադրել գյուղատնտեսության, արհեստների և առևտրի զարգացման ուղղությամբ: Նա հրապարակեց մի շարք ֆերմաններ (հրամանագրեր), որոնք ինչ-որ չափով սահմանափակում էին գյուղացիության շահագործումը, նրանց նկատմամբ խաների սանձարձակ կամայականությունները: Խրախուսում էր նոր հողերի յուրացումը, աշխատում էր վերականգնել նախկին մանուֆակտուրաները: Երկրում սկսվեց շինարարական եռուզեռ: Քերիմ խանն առանձնակի ուշադրություն դարձրեց իր մայրաքաղաք Շիրազի կառուցման ու բարեկարգման վրա: Քաղաքի շուրջը փորվեցին խոր պաշտպանական խանդակներ, որոնք լցվեցին ջրով, կառուցվեցին բարձր պարիսպներ: Կառուցվեց Շիրազի հայտնի բազարը, որը գոյություն ունի մինչև օրս, սլացիկ մզկիթներ, իրենց գեղեցկությամբ անզուգական դամբարաններ և այլն: Քերիմ խանի հրամանով պարսիկ հանճարեղ բանաստեղծներ Սաադիի և Հաֆեզի գերեզմանների վրա կառուցվեցին դամբարաններ: Նա մեծագույն հարգանքով էր վերաբերվում գիտնականներին և բանաստեղծներին, ամեն կերպ խրախուսում էր գրականության ու արվեստի վերածնունդը: Քերիմ խանը հովանավորում էր շիիզմը և շիական հոգևորականությանը՝ միաժամանակ սուննիների և այլ կրոնների նկատմամբ վարելով կրոնական հանդուրժողական քաղաքականություն: Առևտուրը զարգացնելու նպատակով Քերիմ խանն անողոք պայքար ծավալեց ավազակախմբերի դեմ՝ դրանով իսկ ապահովելով քարավանային ճանապարհների անվտանգությունը:

Այսպիսով՝ Քերիմ խանի տիրապետության շրջանում նրա պետության մեջ տիրեց հարաբերական հանգիստ: Նա աշխատում էր իր գթասրտությամբ ձեռք բերել պարսիկների վստահությունը: Պատերազմների ժամանակ և Նադիր շահի գազանությունների հետևանքով Իրանից տարբեր երկրներ փախած հազարավոր մարդկանց, այդ թվում նաև հայերի, վեքիլը հրավերներ էր ուղարկում՝ վերադառնալու Իրան և բնակություն հաստատելու անմարդաբնակ դարձած քաղաքներում ու ավաններում:

Քերիմ խանի հրամանով զենք կրելու ընդունակ բոլոր տղամարդկանց ընդգրկեցին բանակի շարքերը: Պետության մեջ ամեն ոք պետք է զբաղվեր որևէ հանրօգուտ աշխատանքով: Իշխանությունը ուժի օգնությամբ հարկադրում էր մարդկանց ենթարկվել կարգապահությանը և հրաժարվել անբան ու թափառաշրջիկ կյանքից:

Սակայն Քերիմ խանի կողմից երկրում արմատավորված հանգստությունը մի խաղաղ դադար էր փոթորկից առաջ: Իրանում տիրող վիճակն այնպիսին էր, որ կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէր բեկում առաջացնել:

Հարկ է նշել, որ իր բոլոր դրական հատկանիշներով հանդերձ՝ Քերիմ խան Զենդը, այնուամենայնիվ, իր ժամանակի և երկրում տիրող պայմանների ծնունդ էր և տիպիկ արևելյան բռնակալ:

Սակայն այն, որ նա 18 տարի շարունակ երկաթյա կամքով կարողացավ ապահովել իր երկրի հանգստությունը, Իրանի պատմության մեջ փառքով է պսակում նրա անունը:

4. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՂԱՋԱՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

1779 թ.՝ Քերիմ խանի մահից հետո, Իրանը կրկին նետվեց անիշխանության և արյունահեղ ներքին պատերազմների հորձանուտ: Քերիմ խանի որդի Աբու-լ-Ֆաթհ խանի կառավարման շրջանում, որը 1779-ից մինչև 1782 թ. Իրանի փաստացի կառավարիչն էր, երկրում իշխանությունը վիճարկում էին հանգուցյալ վաքիլի հինգ որդիները, նրա եղբայրները, իշխանության մարմաջով տարված նրա ազգականները և նույնիսկ զորահրամանատարները: Այդ տևական պայքարից հաղթող դուրս եկավ Քերիմ խանի եղբորորդի Ալի Մուրադ խանը, որն իրեն հռչակեց շահ (1782-1785 թթ.): Նրան հաջողվեց իրեն ենթարկել Իրանի մեծ մասը՝ բացառությամբ հյուսիսային նահանգների և Կասպից ծովի առափնյա շրջանի, որոնք գտնվում էին ղաջարների իշխանության ներքո:

Ալի Մուրադ խանի դեմ հանդես եկավ նրա հորեղբորորդի Ջաֆար խանը, որը հաղթեց նրան և կառավարեց 1785-ից մինչև 1789 թ.: Սակայն մի շարք նահանգների կառավարիչներ չճանաչեցին նրան: Ի վերջո Ջաֆար խանը ևս սպանվեց, և իրանական պետությունը կրկին տրոհվեց ու բաժանվեց առանձին մասերի:

Այսպիսով՝ տարիներ տևած արյունախանձ կռիվների ընթացքում Զենդերը ոչնչացրին մեկը մյուսին՝ ղաջարների համար ճանապարհ հարթելով դեպի շահական գահը: Զենդերի դինաստիայի վերջին տիրակալ Լոթֆ Ալի խանի (1789-1796 թթ.) կառավարման տարիներն ընթացան իրենց գլխավոր մրցակիցների՝ ղաջարների դեմ պայքարով:

Ղաջարների թյուրքական ցեղախումբը, որը հաստատվել էր Իրանի հյուսիսում՝ Աստարաբադում ու Մազանդարանում, արդեն XVIII դ. սկզբից ներգրավվել էր քաղաքական պայքարի մեջ՝ փայփայելով իր իշխանությունը ողջ Իրանի վրա տարածելու փառասիրական ձգտումներ:

Որպես Զենդերի դինաստիայի առավել ոխերիմ թշնամի հանդես եկավ Իրանում ղաջարական դինաստիայի ապագա հիմնադիր, թյուրքական վաչկատուն ղաջար (կաջար) ցեղի Աստարաբադի ճյուղի առաջնորդ, ներքինի Աղա Մուհամմեդ խանը, որն ազդեցիկ Մուհամմեդ Հասան խան Ղաջարի որդին էր: Քերիմ խան Զենդի դեմ պայքարում իր հոր զոհվելուց հետո Աղա Մուհամմեդը որպես պատանդ ապրում էր Շիրազում՝ Քերիմ խան Զենդի պալատում: Հենց այնտեղ էլ վեց տարեկան հասակում Աղա Մուհամմեդին ամորձատեցին, որպեսզի ոխերիմ թշնամու սերունդը չշարունակվի: Քերիմ խանի մահից հետո Աղա Մուհամմեդը փախավ Շիրազից՝ սկզբում մեկնելով Թեհրան, ապա հայտնվելով իր հարազատ Մազանդարանում, որտեղ նա անմիջապես համառ պայքար սկսեց իր եղբայրների դեմ՝ ղաջարական ցեղի առաջնորդությունը ձեռք բերելու համար: Նա այդ անզիջում պայքարից դուրս եկավ հաղթանակով և կարողացավ իրեն ենթարկել Մազանդարանը, Աստարաբադն ու Գիլանը: Դրանից հետո նա իր ողջ ուշադրությունն ու ուժերը ուղղեց Զենդերի դեմ պայքարին:

Ջախջախելով Ջաֆար խան Զենդին և նրանից գրավելով Սպահանը՝ այնուհետև Աղա Մուհամմեդ խանը բանակցությունների օգնությամբ կարողացավ իր շուրջը համախմբել Հյուսիսային Իրանի խաներին և քոչվորական ազնվականությանը:

Այսպիսով՝ Իրանում ստեղծվեցին ուժային կենտրոն հանդիսացող ավատական ազնվականության երկու խմբավորումներ, հյուսիսում՝ ղաջարների, իսկ հարավում՝ Զենդերի գլխավորությամբ: Այդ երկու կենտրոնների միջև անզիջում ու արյունահեղ պայքարն ավարտվեց ղաջարական խմբավորման հաղթանակով: 1791 թ. Աղա Մուհամմեդը գրավեց Զենդերի մայրաքաղաք Շիրազը: Դա նրան հաջողվեց համարյա առանց դիմադրության, քանի որ քաղաքի քալանթար Հաջի Իբրահիմը դավաճանեց Լոթֆ Ալի խան Զենդին: Զենդերի գանձարանը և հարստություններն անցան Աղա Մուհամմեդ խանին, իսկ Շիրազն ավերվեց: Աղա Մուհամմեդը հրամայեց բանդել Քերիմ խան Զենդի գերեզմանը, նրա ոսկորները տեղափոխել Թեհրան ու թաղել Գյուլիստանի իր պալատի մուտքի առջև, որպեսզի ամեն անգամ ինքն անցնի իր ոխերիմ թշնամու ոսկորների վրայով:

Ղաջարների և Զենդերի միջև վերջին արյունահեղ բախումը տեղի ունեցավ Քերմանի մոտ 1794 թ.: Այսպիսով՝ Զենդերի դինաստիան դադարեց գոյություն ունենալուց:

Աղա Մուհամմեդ խանը քայլ առ քայլ իրագործում էր մեծ կայսրություն ստեղծելու իր երազանքը: Նա իր գերիշխանությունը հաստատեց համարյա ողջ Իրանի տարածքի վրա, բացառությամբ Խորասանի, ինչպես նաև մի շարք ծայրամասային կիսանկախ տարածքների: Սակայն փառասիրությամբ տարված խանը ձգտում էր նվաճելու նաև այսրկովկասյան խանությունները, Վրաստանը, թուրքմենական հողերը, Հերաթի խանությունը և Քրդստանը: Այսրկովկասի խաները դրականորեն արձագանքեցին Աղա Մուհամմեդ խանի՝ Իրանի գերակայությունն ընդունելու կոչին և նվերներ ու պատանդներ ուղարկեցին նրան: Անհաղորդ մնացին միայն Ղարաբաղի խանը և վրաց թագավոր Հերակլ Երկրորդը:

Աղա Մուհամմեդին լուրեր էին հասել, որ դեռևս 1783 թ. Քարթլիի և Կախեթի թագավոր Հերակլ (Իրակլի) Բ-ն Ռուսաստանի հետ ստորագրել է Գեորգիևսկյան պայմանագիրը Արևելյան Վրաստանի նկատմամբ ռուսական հսկողություն սահմանելու վերաբերյալ: Դա Աղա Մուհամմեդի կողմից գնահատվեց որպես Իրանի վասալի դավաճանություն: Ուստի նա որոշեց կազմակերպել պատժիչ արշավանք դեպի Վրաստան:

1795 թ. գարնանը 60 հազարանոց բանակի գլուխ անցած՝ Աղա Մուհամմեդ խանը շարժվեց դեպի հյուսիս, որպեսզի ոչ միայն տիրանա Շուշիին ու պատժի Ղարաբաղի խան հորջորջվող Իբրահիմ խանին, այլև անհնազանդ վրացական թագավորին ու Վրաստանը ենթարկի իրեն: Դրանով նա ավարտին կհասցներ վերստին ողջ Այսրկովկասի և Դաղստանի նվաճումը, որոնց խաներն ու տիրակալները հայտարարել էին իրենց անկախության մասին, կամ, փաստորեն, վաղուց արդեն դարձել էին Իրանից անկախ: 1795 թ. ամռանը պաշարելով, սակայն չկարողանալով գրավել Շուշին՝ նույն թվականի սեպտեմբերին պարսկական զորքերը մոտեցան Թիֆլիսին, ջախջախեցին վրացական փոքրաթիվ բանակը և գրոհով վերցրին քաղաքը: Վրաստանի մայրաքաղաքը հիմնովին ավերվեց, ութ օր շարունակ զավթիչները կոտորում էին Թիֆլիսի բնակչությանը, որի մի զգալի մասը հայեր էին: Վրացական թագավորի հարստությունները հափշտակվեցին, իսկ ավելի քան 22 հազար մարդու քշեցին Իրան՝ ստրկության:

Երևանի Մուհամմեդ խան ղաջարը, Էջմիածնի կաթողիկոսը, Դերբենդի, Բաքվի և Գանձակի խաները շտապեցին կրկին իրենց հնազանդությունը հայտնել Աղա Մուհամմեդ խանին: Այդ թալանչիական արշավանքը դեպի Վրաստան և Աղա Մուհամմեդի ահավոր գազանությունները առաջ բերեցին Այսրկովկասի ողջ բնակչության, հատկապես ոչ մահմեդականների անզուսպ ատելությունը ղաջարների նկատմամբ:

Վրաստանից վերադառնալուց հետո՝ 1796 թ., Աղա Մուհամմեդ խանը թագադրվեց Թեհրանում, որը 1785 թվականից դարձել էր ղաջարների մայրաքաղաքը: Թագադրման հանդիսավոր արարողությունը կատարվեց Մուղանի տափաստանում: Այսպիսով՝ Իրանում հաստատվեց Ղաջարների (Կաջարների) թագավորական նոր հարստությունը: Դրանով Իրանի գահի վրա կրկին հաստատվեց թյուրքական դինաստիա, որն այդ երկիրը կառավարեց մոտ 130 տարի՝ մինչև 1925 թվականը:

Շահնշահական գահը ստանձնելուց հետո Աղա Մուհամմեդը գործուն միջոցներ ձեռնարկեց կենտրոնական իշխանությունն ամրապնդելու համար՝ վճռականորեն հաշվեհարդար տեսնելով Քրդստանի, Ֆարսի, Արաբստանի և այլ անհնազանդ խաների հետ: Նա եռանդուն կերպով աշխատում էր նաև վերականգնել Իրանի առևտրական կապերը տարբեր երկրների հետ, որոնք խզվել էին ներքին պատերազմների ժամանակ:

Շահ դառնալուց հետո ևս անագորույն դաժանությունը մնաց Աղա Մուհամմեդի կառավարման ոճը: Ծայրահեղ կասկածամիտ ու դաժան շահը հազարներով ոչնչացնում էր իր իրական և ենթադրյալ թշնամիներին:

Աղա Մուհամմեդ խանը ձգտում էր ստեղծելու ճիշտ այնպիսի իրանական մեծ պետություն, ինչպիսին էր Սեֆյան տերությունը: Ուստի թագադրման ժամանակ նրա մեջքին կապեցին Արդաբիլում շեյխ Սեֆի-էդ-դինի դամբարանում օրհնված արքայական մի սուր, որը խորհրդանշելու էր Սեֆյանների իշխանության շարունակականությունը և Աղա Մուհամմեդի նվիրվածությունը շիիզմին: Նա գտնում էր, որ Իրանն ունի ներքին ներուժ՝ ուժեղ պետության վերածվելու համար, որն ի վիճակի կլիներ վարելու եռանդուն ու ինքնուրույն քաղաքականություն և ազդեցություն գործելու հարևան երկրների ու ժողովուրդների վրա:

1796 թ. Աղա Մուհամմեդը գրավեց նաև Խորասանը, որը դեռևս միացված չէր դաշարական պետությանը: Նա շահի իրավունքով բռնագրավեց Մեշհեդում պահվող Նադիր շահի առասպելական հարստությունները: Մինչ Աղա Մուհամմեդ խանը զբաղված էր Խորասանում, ռուսական կայսրուհի Եկատերինա Երկրորդը գեներալ Զուբովի գլխավորությամբ Այսրկովկաս առաքեց ռուսական զորամաս՝ Ռուսաստանի հովանավորության ներքո գտնվող Վրաստանը պաշտպանելու և Աղա Մուհամմեդ խանին պատժելու պատրվակով: Ռուսական զորքերը 1796 թ. գրավեցին Դերբենդը, Բաքուն, Շամախին և Գանձակը, սակայն կայսրուհու մահից հետո արշավանքը դադարեցվեց, և ռուսական զորքերը հեռացան Այսրկովկասից:

Խորասանի նվաճումից հետո շահը, տեղեկանալով ռուսական բանակի հեռանալու մասին, որոշեց իր երկրորդ արշավանքը կազմակերպել դեպի այսրկովկասյան խանությունները և Վրաստան՝ նրանց կատարելապես ընկճելու և Այսրկովկասից ռուսական զորքերին «վտարելու» նպատակով: 1797 թ. գարնանը Աղա Մուհամմեդի զորքերն անցան Արաքսը և շարժվեցին դեպի Շուշի՝ պատժելու Ղարաբաղի Իբրահիմ Խալիլ խանին: Սակայն առանց դիմադրության հանդիպելու Շուշիի բերդի գրավումից մի քանի օր անց՝ 1797 թ. մայիսի 14-ին՝ Շուշիում գիշերով քնած ժամանակ, Աղա Մուհամմեդ խանը սպանվեց իր երկու ծառաների ձեռքով:

Աղա Մուհամմեդի սպանությունը կանխեց նրա արշավանքը դեպի Վրաստան: Զորքը խուճապի մատնվեց և ցրիվ եկավ: Ընդհանուր խուճապի և խառնաշփոթության օրերին Իրանում գահի շուրջը ծավալվեց պայքարի նոր ալիք:

Դեռևս իր կենդանության օրոք Աղա Մուհամմեդը գահի ժառանգորդ էր նշանակել իր եղբորորդի Բաբախանին, որը 1798 թ. թագադրվեց շահական գահի վրա՝ ընդունելով Ֆաթհ Ալի շահ (1798–1834 թթ.) գահակալական անունը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԻՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

VII դարում՝ իսլամի ընդունումից հետո, Արաբական խալիֆայության կազմում ձևավորվող իրանական մշակույթը, բնականաբար, կրում էր իսլամի անմիջական ազդեցությունը: Իրանական մոնումենտալ արվեստին հատուկ ոճավորված բարձրաքանդակները, դիմաքանդակները մնացին պատմության մեջ որպես Իրանի հին մշակույթի քարե վկաներ: Իսլամն արգելում էր այդ ամենը, որ գալիս էր կրկին կռապաշտությանը վերադառնալու Մուհամմեդի երկյուղից: Սակայն հայտնի է, որ արգելքները ծնում են նոր լուծումներ, նոր ոճեր և ձևեր, ինչպես նաև նոր գաղափարներ: Արաբական ճկուն և արվեստաշնորհ գիրը, որ փոխարինեց պարսից արամեական գրին, դարձավ նախշազարդի և արաբեսկի հիմքը, որն իր կիրառությունն էր գտնում մշակույթի ամենալայն դաշտերում՝ կառույցների, գրքերի, կիրառական և կենցաղային առարկաների ձևավորման մեջ: Իրանը ներգրավվում էր արաբական հոգևոր մշակույթի ոլորտ, իր անցյալի ձեռքբերումների միջով անցկացնելով նորը՝ կերտում էր սեփական մշակույթը: Իր հերթին իսլամը դուրս էր գալիս «արաբական» կոչվող բովանդակությունից և սինթեզում իր տիրապետության տակ ապրող բազմաթիվ մշակույթները՝ ստեղծելով իսլամական մի նոր քաղաքակրթություն: Չենք կարող շրջանցել Ռիչարդ Ֆրայի մի դիտարկումը, թե իրանական քաղաքակրթությունը այնպիսի դեր խաղաց իսլամական մշակույթի ձևավորման գործում, ինչպիսին հունականը՝ քրիստոնեության և նրա մշակույթի: Պարսից ճարտարապետության և գրականության զարգացման հետ մեկտեղ կայանում էին գիտությունները՝ փիլիսոփայությունը, պատմությունը, աշխարհագրությունը, բնական գիտություններից՝ մաթեմատիկան, տոմարագիտությունը, աստղագիտությունը և այլն: Ստեղծագործում էին հանրագիտակներ Ալ Բիրունին, Ալ Ռազին, Ավիցեննան (Իբն Սինա), Օմար խայամը, Նասր էդ Դին Թուսին և այլք: XI դարում Խայամը ղեկավարում էր Սպահանի աստղադիտարանը, իսկ Ավիցեննայի բժշկական երկասիրությունը մինչև օրս չի կորցրել իր օգտակարությունը: Այդ շրջանում գիրքը մեծ արժեք էր ձեռք բերում: Իրանի տարբեր քաղաքներում հիմնադրվում էին գրադարաններ, մադրասեներ: Գրադարանի առկայությունը մեծապես բարձրացնում էր նույնիսկ արքունական տների հեղինակությունը: Իրանական մշակույթում իր առանձնահատուկ տեղն ուներ մանրանկարչությունը, որը XV դարում արդեն հայտնի էր իր դպրոցներով և ոճերով՝ հերաթյան (Բեհզադ), շիրազյան ևն: Մեկ-երկու դար հետո լիովին կայացած էր իսպահանյան դպրոցը, որի ջատագովն էր Ռեզա Արբասին, ում կրկնօրինակում էին

Արևմտյան Եվրոպայում: Մանրանկարչությունը արձագանքում էր առավելապես իշխող դասի ներկայացուցիչների կյանքի անցուդարձին, հատկապես ներկայացնում էր գրական հայտնի թեմաները և նկարազարդում կիրառական արվեստի նմուշները:

Ֆեոդալական քաղաքի զարգացման հետ մեկտեղ զարգանում էին արհեստները, այդ թվում նաև նուրբ և գեղեցիկ «արվեստի» ճյուղերը՝ ոսկերչությունը, արծաթագործությունը, ակնագործությունը, բրուտագործությունը, գորգագործությունը, որոնք իրենց հրաշալի լուծումներն էին ստանում իշխող դասի կենցաղը զարդարող շքեղության առարկաներում: Նեղ փողոցներով և կեռմաններով հարուստ քաղաքի ներքին կառույցում պարտադիր էին շուկան և հրապարակը (բազար–մեյդան): Մեյդանում էր ժամանակին հավաքվում ժողովուրդը՝ լսելու «երկնային ատյաններից» եկող Մուհամմեդի քարոզները:

Շուկայի հրապարակը ավանդության ուժով պահում էր կենտրոն լինելու առաջնությունը, որտեղ հանդիպում էին տարբեր խավերի և տարբեր արվեստների ու արհեստների ներկայացուցիչները: Երաժիշտները, բանաստեղծները, լարախաղացները, ասացողները ցուցադրում էին իրենց արվեստը: Այդտեղ էր իրականանում էլիտար և ժողովրդական սկզբի հանդիպումը, որն էլ միջնադարյան Իրանի մշակույթը տանում էր զարգացման բնականոն հունով:

2. ՊԱՐՍԻՑ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պարսից հոգևոր մշակույթի նվաճումներից մեկը գրականությունն է, որի ձևավորումը սերտորեն պայմանավորվել է սոցիալ–պատմական իրողությունների և մեծ տեղաշարժերի հետ, ինչպիսիք են տարբեր քաղաքակրթությունների հետ երկարատև մերձեցումները, նոր կրոնի ընդունումը, երկրի պետականության կորուստը և այլն:

Պարսից միջնադարյան գրականությունը պետք է զարգանար՝ հիմնվելով զրադաշտական Իրանի հին և միջին շրջանների (փահլավի) գրական ավանդույթների վրա, սակայն VII դարում այն անսպասելի դրամատիկ շրջադարձ ունեցավ: 636 թ. Ղադիսիեի և 641–ին Նեհավենդի ճակատամարտերում պարտություն կրելուց հետո Իրանը բացեց իր քաղաքակրթության նոր էջը. ընդունեց Իսլամը, Ղուրանի լեզուն՝ արաբերենը, դարձավ պետական–արքունական լեզու, պահլավական բարդ այբուբենին փոխարինեց արաբական ճկուն ու պարզ գիրը: Իրանը, որ հին գրականության կորստով խաթարել էր կապը սեփական գրական ավանդույթների հետ, որոնումների մեջ էր: «Ամենացավալին այն էր, որ ոչնչացան միջին պարսկերենով ստեղծված աշխարհիկ ստեղծագործությունները, որոնք էլ հնարավորություն էին տալիս առավել խոր և ճշմարիտ պատկերացնելու Սասանյան պոեզիայի բովանդակությունը»: Այդ է պատճառը, որ պարսից գրականության պատմության մեջ VII–IX դարերը կոչվում են «լռության դարեր»: Իրանական ծագում ունեցող շատ բանաստեղծներ գրում էին արաբերեն (Բաշար իբն Բուրդ, Աբու Նովաս և այլք): Իրանագետներն այդ շրջանի գրականությունը որակում են որպես «իրանական գրականության տարրեր՝ արաբական հագուստով», ուր մուտք էին գործում պարսկերեն լեզվական ձևեր,

դարձվածքներ, անձնանուններ: Այդ շրջանից մեզ հասած գրական պատառիկները ցույց են տալիս, որ պարսիկները յուրացրել էին արաբական պոեզիայի քանակական տաղաչափությունը (արուզ) և այն հարմարեցրել ժողովրդական ֆարսի կոչվող լեզվի առանձնահատկություններին: Ընդունել էին նաև ժանրային ձևերը՝ միահանգ դասիդե–ներբողը, ղազալը, մասնավին, ղաթեն (բեկոր): Ղասիդեն (բառացի՝ նպատակաուղղված), բեղվինի միապաղաղ առօրյայի ուղեկիցը լինելուց զատ, զարգանալով և ժամանակի պահանջներին հարմարվելով, դարձավ արքունական կյանքի ու կենսաձևի խոսափող:

Քառյակը, որ հնագույն պարսից ժողովրդական ձև էր, շարունակում էր իր բնականոն զարգացումը և արաբների կողմից թարգմանաբար ստացել էր ռոբայի անվանումը: Ղազալը քնարական ձև էր, սկզբնական շրջանում՝ սիրային զգացումների արտահայտիչ:

Այդ ժամանակ լայն զանգվածներին մատչելի լեզուն դարին էր (ֆարսի), որ տարածված էր Աֆղանստանի արևելյան շրջաններից մինչև Մերվ և Սիր Դարյայի ափերից մինչև Խորասանի հարավային սահմանները: Արաբական նվաճումներից երկու դար անց ժողովրդական ապստամբությունների, ազատագրական և ազգային ուղղվածության (շուհուբիե) շարժումների արդյունքում արաբական խալիֆաթից անջատվեցին և անկախություն ձեռք բերեցին պարսից տեղական հարստությունները՝ Թահիրիները, Սաֆարիները, Սամանյանները, որոնց վարած քաղաքականությունը նպաստում էր իրանական ոգու վերելքին, ֆարսի լեզվի գրական և պետական լեզու դառնալու պատմական պահանջին:

Որոշ դրվագներ և հատվածներ են պահպանվել XIII դ. անթոլոգիայի (թազքյարե) հեղինակ Աուֆիի հայտնի ժողովածուում՝ պոետներ Հանզալե Բադղիսիի, Մուհամմեդ իբն Վասիֆի, Ֆիրուզ Մաշրաղիի, Աբու Սալիքի, Շահիդ Բալխիի, Աբու Շուքուր Բալխիի, Մունջիկի, Մորադիի և այլոց ստեղծագործություններից: Ոմանք ներբողել են նորաստեղծ արքունական տները: Այսպիսով՝ ֆարսի–դարին դուրս էր գալիս ասպարեզ և հարթում էր գրական լեզու դառնալու ճանապարհը: Կայանում էր թարգմանական գրականությունը: Բավական է հիշատակել Ղուրանի թարգմանությունը և այն ուղեկցող մեկնությունը Ալ Թաբարիի կատարմամբ, ֆարսի լեզվով գրված «Աշխարհի սահմանները» անանուն գիտական արժեքավոր գործը, հնդկական կենդանական էպոս «Պանչատանտրան» (Քալիլա և Դիմնա), որը դեռևս Սասանյանների օրոք թարգմանվել էր միջին պարսկերեն:

Իրանի անծայրածիր տարածքներում միջնադարյան պարսից գրականությունը զարգանում էր տարածաշրջանային յուրահատկություններով, որոնք կարելի է համարել տարբեր դպրոցներ (խորասանյան, իսպահանյան, հերաթյան) և ոճեր՝ խորասանյան (պարզ), իրաքյան, հնդկական (բարդ) ևն:

Պարսից միջնադարյան գրականությունը կայանում էր հիմնականում ներբող–դասիդեի ժանրում, էպիկական–հերոսական և սիրային–ռոմանտիկական երկերում (Ֆիրդուսի, Գուրգանի, Նիզամի, Դեհլևի), ինչպես նաև գիտական, գեղարվեստական և ուսուցողական արձակի տարբեր ձևերում: Թազքյարեները (Մուհամմեդ Աու-

ֆի, Դովլաթշահ Սամարղանդի ևն), պոետիկայի դասագրքերը (Ռաշիդ Վաթվաթ, Ղայս ալ Ռազի, Վահիդ Թաբրիզի), պետությունը ղեկավարելու ուսույցները (Նեզամ ալ Մոլք), փիլիսոփայական երկերը (Աբու Ալի իբն Սինա, Օմար Խայամ), ճամփորդական նոթերը (Նասեր Խոսրով), արքունական դպիրների հուշագրությունները (Նիզամի Արուզի Սամարղանդի), միստիկական վարքագրությունները (Քուշեյրի, Հոջվիրի), բարոյախրատական պատմությունները (Ղաբուս-նամե) զարգանում էին պոեզիային զուգահեռ: Գեղարվեստական արձակ էր մուտք գործում ցածր խավի արկածախնդիր, ապաղասակարգային հերոսը (այյար Սամաքը), որը սեփական սուբկուլտուրայի տարրերով հարստացնում ու ժողովրդականացնում էր գրականությունը:

X դարի պարսից բազմաթիվ բանաստեղծների մեջ ամենաականառուն Ռուդաքի Սամարղանդին էր, որի ստեղծագործությունների Դիվանից որոշ մաս է պահպանվել: Նա Սամանյանների արքունական պոետն էր, «անկրկնելի պարզ» ոճի կրողը: Պոետիկայի գիտակ Ռաշիդ Վաթվաթը վերջինիս էությունը բացատրում է որպես պարզ թվացող, սակայն իրականում՝ շատ դժվար գրվող ոտանավորներ: Նրանից մեզ են հասել աշխարհիկ բովանդակության դասիդեներ, քնարական-սիրային դրվագներ և փիլիսոփայական մտորումներ: Նրա պոեզիան արտացոլում էր սեփական ժողովրդի էսթետիկական գիտակցության բնորոշ գծերը, նրա գրավոր և բանավոր խոսքի ավանդույթները: Ռուդաքին իրավամբ համարվում է պարսից պոեզիայի հիմնական ժանրային ձևերի առաջնեկը (դասիդե, ղազալ, մասնավի, ռոբայի, դաթե, բեյթ): Այդ է պատճառը, որ ժամանակի ընթացքում նրա արվեստը ձեռք բերեց չափանիշի ուժ և մեծապես նպաստեց գրականության հետագա զարգացմանը: XV դարի պոետիկայի գիտակ, ծաղկաքաղ-ժողովածուի հեղինակ Դովլաթշահ Սամարղանդին զարմանք է հայտնում, որ ժամանակին գնահատվել են այդքան «պարզ» բանաստեղծությունները: Մի հանգամանք, որ ընդգծում է պարսից գրականության զարգացման ընթացքը, նրա տարբեր փուլերը: «Պարսից դասիդեի ամենավաղ և իսկական նմուշներից մեկը, որը համեմատաբար սակավ աղճատված է հասել մեզ, Ռուդաքիի «Գինու մայրը» գործն է»:

Նույն շրջանում մի նոր խորհուրդ էին ստանում ժողովրդի ընդերքում պահպանված «Խվաթայ-նամեի» (Արքաների գիրք) պատումները՝ Իրանի հին թագավորների և դյուցազուն փահլևանների սխրանքները: Օգտագործելով գրավոր (դաղիղի) և ժողովրդի հիշողության մեջ պահպանված բանավոր աղբյուրները՝ Ֆիրդուսին ստեղծեց պարսից հերոսական էպոսը, որը, ըստ տարբեր խմբագրությունների, կազմում է 48–52 հազար բեյթ: Նրա երեք՝ հերոսական, դյուցազնական և պատմական կոչվող մասերը արտացոլում են Իրանի Սասանյան հզոր գահակալների հաղթական անցյալը: «Շահ-նամեն» պատասխանում էր X դարի քաղաքական կացության պահանջին, ուղղորդում էր ազգային կամքի դրսևորումները հենց այն պահին, երբ պարսից գահին նստած էին օտարները: Թյուրք Մահմուդ Ղազնևին չընդունեց «Շահ-նամեն» և չմեծարեց Ֆիրդուսուն: «Մեծ անհատականություն-տիրակալ» տխրավախճան հակամարտությունը քաղաքակիրթ մարդկությանը վաղուց հայտնի

մոդել էր: Այս պարագայում այն սնեց բազմաթիվ տաղանդավոր արվեստագետների երևակայությունը, որի արդյունքում ծնվեցին Ֆիրդուսուն նվիրված դրամատիկ, արևելյան վառ կոլորիտով հագեցած գործեր (Հայնե, Անդերսեն, Եսենին, Սուրենյանց ևն): Հետագայում «Շահ-նամեի» հերոսական թեմաները կրկնող բազմաթիվ տարբերակներ ստեղծվեցին (Բարզու-նամե, Գարշասպ-նամե), սակայն Ֆիրդուսու էպոսը մնաց անկրկնելի: Այն իր արձագանքը գտավ նաև հայ իրականության մեջ:

Հետազոտողների մի մասը պարսից սիրային պոեմի կայացումը (Գուրգանի, Նիզամի) բխեցնում է «Շահ-նամեի» քնարական դաստաններից, ինչպես, օրինակ՝ Բիժան և Մանիժե, Զալ և Ռուդաբե ևն: Ի դեպ, խորասանյան ոճի առանձնահատկություններից էր նաև պոեզիայում արաբերեն և օտար բառերի բացակայությունը, որը ակնհայտ է «Շահ-նամեում»:

X–XIII դդ. ղազնևիների, սելջուկների, հետագայում մոնղոլների կողմից նվաճված պետության արքունիքներում զարգանում էր ներբողը, որն իր կանոնարկված թեմաների մեջ, բացի փառաբանյալի նկարագրից, ընդգրկում էր նաև առօրյան՝ բնությունը, սերը, բողոքը, երգիծանքը, ինչպես նաև կրոնական հավատքային զգացումները: Պրոֆեսիոնալ պոետների գործն ու նրանց կարգավիճակն արքունիքում ներքին համակարգման և ինստիտուցիայի կարիք էին զգում: Ղազնևիների կողմից ստեղծվեց «բանաստեղծների արքայի» (մալեք ալ շոարա) պաշտոնը, որը հնարավորություն տվեց ղեկավարելու պալատական պոետների խումբը՝ ինչ-որ չափով կատարելու նաև գրաքննիչի դեր: Հայտնի է տարբեր արքունական տներում ստեղծագործող պոետների համաստեղությունը՝ Ունսուրի, Ֆարրոխի, Մանուչեհրի, Ասջադի, Անվարի, Մոեզզի, Ամաղ, Ազրաղի, Ադիբ Սաբիր, Մահսաթի ևն: Ղազնավյան պալատի «պոետների արքան» Օնսորին էր՝ Մահմուդի անունը պարսից պոեզիայում ամրագրողը:

Դեռևս X դ. սկսած՝ Ղազնևիների կողմից նվաճված՝ Հնդկաստանի հյուսիսային շրջաններում ստեղծագործում էին բազմաթիվ պոետներ և արձակագիրներ: Շնորհալի բանաստեղծներ Մասուդ Սաադ Սալմանը, Զահիր Ֆարյաբին, Նախշաբին, Ամիր Խոսրով Դեհլևին, Աբու-լ Ֆարաջ Ռունին, Ուրֆին, Բիդելը և այլք կոչվում էին Հնդկաստանի պարսկալեզու գրողներ: Ավելին, հետագայում բյուրեղանալով՝ այդ գրականությունը հատուկ ոճային առանձնահատկություններ ձեռք բերեց և կոչվեց «Հնդկական ոճ», որը բարդ էր և հաճախ մեկնաբանությունների կարիք էր զգում: Մասուդ Սաադ Սալմանը պոեզիայի բովանդակությունը հարստացրեց «բանտային» (հաբսիե) կոչվող նոր՝ դրամատիկ թեմայով: Դա նրա ողբերգական կյանքի արտացոլումն էր և պարսից պոեզիայում ինքնակենսագրական «ռեալիզմի» ձևավորման սկիզբը:

Սելջուկյան իշխանության ծայրամասային տերություններում իշխող Գանձակի և Շիրվանի թագավորություններում ստեղծագործում էին Խաղանին, Նիզամին, Ֆալաքին և այլք: Նիզամին, որ հեղինակ է բազմաթիվ ներբողների, ղազալների, քառյակների, որոնք կրում էին պարսից գրականության հիմնական միտումները, այնուհանդերձ, համաշխարհային գրականություն մտավ իր նորարարական պոեմնե-

րով՝ Հնգամատյանով (Խամսե)՝ եվրոպական սիրային ռոմանտիկական ժանրին հավասարեցնելով «Լեյլի և Մաջնունը», «Խոսրով և Շիրինը»: Նա պարսից պոեզիան հարստացրեց ժողովրդական բառ ու բանով, առակներով, ասացվածքներով և տեղական կուլտուրան արտացոլող ուշագրավ դրվագներով: «Խոսրով և Շիրին» պոեմում Նիզամին բազմիցս հիշատակում է Հայաստանը, ուր պարսից արքա Խոսրովի հրամանով փնտրում էին գեղեցիկ հայուհուն: VII դարի պատմիչ Սեբեոսի երկում այդ փաստը հավաստող դրվագ է պահպանվել: «Խամսեն» հետագայում նմանակումների և կրկնությունների մի շարք բերեց՝ Դեհլևի, Ջամի, Լամիի ևն:

Խաղանին, որ մի շրջան շիրվանշահերի արքունական երգիչն էր, ներբող-դասիդեն հասցրեց իր զարգացման գագաթնակետին: Նա վերնախավային արվեստի գաղափարակիր էր, բարդ և դժվարթարգմանելի հեղինակ: Հետաքրքիր են նրա պոեզիայում առկա քրիստոնեական թեմաներն ու մոտիվները, սիրով Հայաստանին նվիրված տողերը, որ նրա մոր քրիստոնյա լինելու արդյունքն էին:

Շուտով արքունական պոեզիայի հիմնական ժանրային ձևը՝ ներբողը, սկսեց սպառել իրեն, դարձավ միօրինակ թեմաների կրկնություն, նրբաճաշակ և անիրական պատկերների, բարդ հանգի, վերծանության կարոտ այլաբանությունների և տեխնիկական խաղերի համալիր: Նոր կյանք էին ստանում այլ ժանրերը և ժանրային ձևերը:

Ժողովրդական ակունքներից հեռանում և արքունական էլիտար ժանրային համակարգ էր մուտք գործում ռոբային, որին քիչ թե շատ անդրադառնում էին բոլորը, սակայն ռոբային աշխարհին ներկայացավ XII դ. հանրագիտակ Օմար Խայամի գաղափարներով: Քառյակ մուտք գործեց ռացիոնալիստական փիլիսոփայական թեման: Խայամի ազատախոհական գաղափարները, որոնք իսլամական գրաքննության ուշադրության կենտրոնում էին, դուրս էին գալիս նրա գիտական-փիլիսոփայական երկերից և քառյակի ձևով տարածվում ու շրջում էին ժողովրդի մեջ: Մինչև օրս ճշտված չեն նրան պատկանող հավաստի քառյակները:

XI–XIV դդ. կրոնափիլիսոփայական գրականության ոլորտում ձևավորվում էր սուֆիական-միստիկական պոեզիան, որը բոլոր ժանրային ձևերն օգտագործում էր Աստծո հետ մերձենալու գաղափարը հաստատելու համար: Սուֆիզմը (արաբ. սուֆ՝ կոպիտ, բրդյա քուրձ) միստիցիզմի այն տարատեսակն է, որ ձևավորվել և բարձրացել է իսլամի հողի վրա: Ճեշտադրումն արդեն իսկ ենթադրում է, որ այն մեծապես հենված է Ղուրանի դրույթներին՝ շարիաթին, որտեղից սերում է սուֆիզմի հայտնի երրորդությունը՝ «շարիաթ-թարիղաթ- հաղիղաթ»: Հոգու կատարելագործումն իրականանում էր շեյխ-ուսուցչի օգնությամբ՝ բազմաթիվ բարոյահոգեբանական հանգրվաններ հաղթահարելուց հետո: Աղեպտի հիմնական նպատակն էր մտահայեցությամբ և էքստազի միջոցով Աստծու հետ միացումը և նրա մեջ տարրալուծվելով՝ հավերժանալու (ֆանա) ձգտումը. ըստ էության՝ իռացիոնալ մի երևույթ: Փաստորեն, միստիկական գաղափարները մուտք էին գործում և՛ արձակ, և՛ բանաստեղծական բոլոր ժանրային ձևեր:

Սուֆիական պոեզիայի ամենաակնհայտ առանձնահատկությունը խորհրդանիշն է, այն պայմանական լեզուն, որ ստեղծվեց պարսից բանաստեղծության ավանդական պոետիկայի և սուֆիզմի գաղափարների սինթեզից: Այլ կերպ ասած՝ պարսից աշխարհիկ բանաստեղծության պատրաստի գեղարվեստական արտահայտչամիջոցները «հարմարվեցին» նոր բովանդակությանը՝ ստեղծելով մի այլ որակ, որ կոչվեց սուֆիական: Պարսից բանաստեղծության վաղեմի պատկերները և դրանց հետ կապված ամենանուրբ և մեքենայորեն ձևավորվող զուգորդությունները, սովորական կերպարները բարձրանում էին փիլիսոփայական կատեգորիաների մակարդակի: *Սիրելի, յար, ընկեր, մոմ, լույս, սեր, հանդիպում, բաժանում, միացում, գիշեր, ցերեկ, տուն, հանգրվան, գինի, գավ, գինետուն, վարդ, սոխակ, խոպոպներ* և բազմաթիվ այլ հասկացություններ սուֆիական պոեզիայում վերաիմաստավորվում և դառնում էին պայմանականություն, կոդ, մտածողության այլ համակարգ: Այդ գաղափարները սնում էին պարսից այնպիսի մեծ պոետների միտքը, ինչպիսիք էին սուֆիական պոեմների, ղազալների, աղոթքների, քառյակների հեղինակներ Սանային, Աթթարը, Բաբա Թահերը, Ջալալ ադ դին Ռումին և այլք: Ա. Արբերրին, օրինակ, «հոնքը» բացատրում է որպես Աստծո ատրիբուտ (անկապտելի հատկանիշ), որը թաքցնում է նրա (Աստծո) ճշմարիտ էությունը:

Ռումին հայտնի է իր «Մասնավիով», որ պարունակում է մոտ 25 000 երկտող և կոչվում է Սուֆիզմի հանրագիտարան: Նրան են պատկանում նաև բանաստեղծությունների հսկայածավալ Դիվանը, ինչպես նաև միստիկական բնույթի պատմվածքների շարքը (Ֆիե մաֆիե), նամականին:

Արքունիքից և պաշտոնական պոեզիայից դուրս հետաքրքիր զարգացում էր ապրում ժողովրդական ոգով, քաղաքային կյանքի ազդեցությունը կրող արհեստավորական խավերի պոեզիան, որը լայն տարածում էր գտնում հատկապես քաղաքային զանգվածների մեջ (Ջոհարի, Հանայի, Սուզանի ևն): Շուկայի հերոսը մուտք էր գործում գրականություն: Այդ տեսակի զարգացումը հետագայում իր անվանումը ստացավ և կոչվեց «Շահրաշուբ»՝ քաղաքի հանգստությունը խաթարող, իսկ ավելի ուշ՝ «Շահրանգիզ» (Վասիֆի):

Սաադին իր «Գոլեսթանով» և «Բուսթանով» շարունակում էր պարսից գրականության մեջ իր ամուր տեղը հաստատած բարոյախրատական մտքի զարգացումը: «Գոլեսթանը» գրված է հանգավորված արձակով (սաջ), որն ընդմիջվում է բանաստեղծական հատվածներով: Այն ինչ-որ չափով ինքնակենսագրական բնույթ ունի և ուսուցանում է նաև բանաստեղծի կենսափորձից ելնող իմաստությունն ու խրատը: Սակայն նրա և նրանից մեկ դար հետո ստեղծագործող Հաֆեզի առաքելությունը ղազալի ժանրը զարգացման բարձրակետին հասցնելն էր: Սաադիի ղազալի առանձնահատկություններն էին սքանչելի հարմոնիան, սիրային թեմայի առաջնությունը, նախկին՝ խորասանյանին մոտեցող պարզ ոճը, ապրումի և զգացմունքի անհատականացումը, ղազալներում իմաստության և թեավոր խոսքի մշտական ներկայությունը: Սաադիի և Հաֆեզի պոեզիայում ղազալը ժանրային համակարգում հաստատեց իր անվերապահ առաջնությունը: Հաֆեզի ղազալը նոր՝ որակական

փոփոխություններ բերեց: Ձևի տեսակետից բացարձակ ազատություն տրվեց բեյթերին՝ խախտելով ղազալի ներքին կառուցվածքի մեջ դարեր ի վեր հաստատված կայունությունն ու կապը: Նրա ղազալը բազմաթեմատիկ էր, սպոնտան: Հաֆեզը ղազալի սահմանափակ տարածքը հարստացրեց շարժումով, սիրուհու կերպարի հոգեբանացմամբ, զվարճալի ու սրամիտ դրվագներով, կերպարների բազմազանությամբ, մեղեդայնությամբ և ռիթմային հնարանքներով՝ ապշեցնելով նույնիսկ խստապահանջ եվրոպացուն (Գյոթե): Սաադիի և Հաֆեզի, ինչպես նաև նրանց վաղ և ուշ ժամանակակիցների (Իբն Յամին, Սալման Սավաջ, Քյամալ Խոջանդի) պոեզիան մեծապես ուղեկցվում էր ղուրանյան պատկերներով, արձագանքներով և հիշատակություններով, որ մեկ անգամ ևս ընդգծում էր նրանց միջնադարյան մտածող լինելու հանգամանքը, խոր կապը իսլամական գեղագիտական գիտակցության և պատկերացումների հետ:

Առանձնանում է երգիծաբան Օբեյդ Զաքանին, ում ստեղծագործության մեջ արդեն հնչում է սուր սոցիալական երգիծանքի նոտան, որի տարրերը երկու դար առաջ տեսնում էինք Օմար Խայամի քառյակներում:

Իրականում մինչև XVI դարը ձգվող այլալեզու և այլացեղ տիրակալների արժեքների չափանիշները ձևավորվում ու հղկվում էին պարսից հզոր քաղաքակրթության մամլիչի տակ, այնուհանդերձ, ժամանակները թելադրում էին այլ ձևեր և միջոցներ: Լենկ Թեմուրը չէր գնահատում ներբողը և պատվիրում էր շահնամեատիպ հերոսական պատումներ: Նրանք արժևորում էին նաև պատմագրությունը, որը պիտի հավերժացներ իրենց անունները և ամրագրեր պատմության էջերում: Հայտնի է, որ Թեմուրյանների օրոք գիրքը արժեք էր ներկայացնում, սակայն Ֆիրդուսին և Նիզամին դարակազմիկ էին և չէին կրկնվում: Թեմուրյանները ստիպված էին բավարարվել էպիգոններով: Թեմուրի թոռ Ուլուղբեկի պալատը արվեստի, մշակույթի և գիտության կենտրոն էր: Այդ շրջանի բազմաթիվ թյուրքալեզու բանաստեղծներ գրում էին նաև պարսկերեն:

Այդ էր պատճառը, որ տաղանդավոր բանաստեղծ և հանրագիտակ Ջամին (XV դ.), որի մասին Գյոթեն գրում է, թե նա անցյալի ձեռքբերումները միավորում էր ինչպես մի խուրձ, նմանակում, նորոգում, ծավալում, թարմացնում... ևն, մնում է պարսից գրականության պատմության էջերում որպես էպիգոն: Չկա պարսից գրականության մեջ մի ժանր, որով ստեղծագործած չլինի Աբդուռահման Ջամին: Նրա գրչին են պատկանում քնարական դիվանը, «Յոթամատյան» կոչվող պոեմների «փունջը», արձակը (Բահարեսթան), սուֆիական մեկնությունները, պոետիկայի, աստվածաբանության, ճարտասանության, քերականության, երաժշտության տեսության և փիլիսոփայական վերլուծությունները: Նա այդ շրջանում հարել է արդեն անկում ապրող սուֆիականությանը:

Առանձնահատուկ է, ինչպես նշել ենք, «հնդկական ոճը», որը խրթին էր, զարդաբանդակ և նրբաճաշակ: Լի էր բառախաղերով, այլաբանություններով, տեխնիկական և վիրտուոզ վարժանքներով (Ուրֆի, Ֆայզի, Սայեբ, Բիդել): Այդ ոճը, որ եվրոպացիների կողմից կոչվել է բարոկկո, ոչ միշտ, սակայն հիմնականում զարգանում

էր Հնդկաստանում (Աբու ալ Ֆարաջ Ռունի, Ամիր Խոսրով Դեհլևի, Զիա աղ-Դին Նախշաբի): Ամիր Խոսրով Դեհլևին և Նախշաբին հայտնի էին նաև իրենց գեղարվեստական և գիտական արձակով: Նախշաբին Դելիի սուլթանությունում ստեղծագործող բարդ ու նրբաճաշակ հնդկական ոճի կրողն էր: Սկզբնական շրջանում Հնդկաստանի պարսկալեզու գրականությունը սնվում էր մայր գրականության հաստատուն ավանդույթներից, սակայն ավելի ուշ, համադրվելով բնիկ ժողովուրդների մշակույթի հետ, դառնում է նոր որակ: Պարսից հեղինակները ի ցույց էին դնում հնդկական աշխարհին առնչվող գիտելիքներ, պարսից տեքստում սփռում սանսկրիտով և տեղական բարբառներով բազմաթիվ մեջբերումներ: Նրանց կենցաղը, մշակույթը, հոգեկան կերտվածքն ու էթնիկական առանձնահատկություններն արտացոլող դրվագները մի նոր կոլորիտ էին ստեղծում, որի արդյունքում հանդիպում էին հնդկական և պարսից-մահմեդական աշխարհները: Ամենաակնառուն Սայեբ Թաբրիզին էր, որի պոեզիան սինթեզում է անցյալի դասիդեի և ղազալի պոետիկայի ողջ համալիրը՝ հանգի հրաշալի իր զգացողությամբ:

Իր ավարտին էին մոտենում XVI–XVII դարերը՝ Ջամիի հետնորդներով, որոնք գրականության ներկան էին, բայց ո՛չ ապագան: Այդ շրջանի գրականությունը մեզ է ներկայանում իր ողջ բազմազանությամբ, սակայն ո՛չ նոր ուղղություններով, միտումներով և հարցադրումներով: Այս ամենով հանդերձ՝ ծայրամասային, տեղային տարրերը բացարձակ չէին խաթարում պարսից գրականության պատմամշակութային միասնականությունը և այն որպես մեկ ամբողջություն ընկալելու գիտակցությունը:

XVII դարում ավատատիրական ինստիտուտների քայքայման պայմաններում արքունական գրականությունը շարունակում էր օգտագործել անցյալի կարծրացած ձևանմուշներն ու ավանդույթները:

Շիա Սեֆյանների շրջանում փառաբանվում և ներբողվում էին շիիզմի հիմնադիր Ալին, նրա որդիներ Հասանը և Հոսեինը՝ շիա նահատակները: Պարսից գրականության աշխարհիկ ոգին, որը իր մեծ ազդեցությունն էր ունեցել նաև հարևան ժողովուրդների քերթության վրա (Հայաստան, Վրաստան), իր տեղը զիջում էր կրոնականին:

Քաղաքային թաղամասերում, արհեստավորական շրջաններում և շուկաներում զարգանում էր ցածր ոճի գրականությունը իր արկածախնդիր հերոսներով:

XVIII դ. պարսից գրականությունը հիմնականում նախկին գրական ժառանգության հետահայաց մի ամփոփումն է դառնում, անցյալի հանճարների գունատ արձագանքը: Այն կրում է «Վերադարձի շրջան» (բազգաշթ) անվանումը և լիովին արտացոլում է իր անվան բովանդակությունը: Այդ ուղղության ջատագովները ձգտում էին վերադառնալու դասականների հումանիստական արվեստին, սակայն այդ «գեղագիտական ռազմավարությունը» ժամանակավրեպ էր: Այնուհանդերձ, կային բանաստեղծներ, որոնց հաջողվում էր պոեզիայում մնալ որպես անհատականություն: Դրանցից էր Հաթեֆ Էսֆահանին՝ հայտնի բանաստեղծական անսքող պատկերներով: Այդ շրջանում պարսից գրականության մեջ նույնիսկ ակնառու անհատակա-

նությունների գոյության պայմաններում ձանձրալի միապաղաղություն էր տիրում: Դիալեկտիկան իր պահանջներն ուներ, ու հետդարձը խնդրի լուծում չէր:

«Վերադարձի շրջանը» կատարեց իր դերը՝ կապելով երկու պատմամշակութային ֆենոմենները՝ միջնադարը և նոր շրջանը:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ պարսից գրականությունը մոտ երկու–երեք դար հարաբերական հանգստի մեջ էր: Սակայն դա հանգիստ էր հզոր թռիչքից առաջ: Պարսից գրականությունը պատրաստվում էր նոր շրջանին, որն իր պոռթկումով պետք է գրավեր առաջավոր մարդկության միտքը, սներ նրա հոգեկան աշխարհը, ինտեգրվեր համաշխարհային նոր գրականության ընդհանուր համակարգին՝ թարգմանվեր բազմաթիվ ժողովուրդների լեզուներով:

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սասանյանների հարստության սկզբնական շրջանում Իրանի ճարտարապետությունը շարունակում էր պարթևական շինարարական արվեստի ավանդները: Սակայն արդեն III դ. երկրորդ կեսից հանդես եկան կառուցողական նոր տարրեր և մոնումենտալ ճարտարապետության նոր հորինվածքներ: Ողջ Արևելքի ճարտարապետությունում նորույթ էր քառակուսի հիմքի վրա տրոմպային փոխանցումով գմբեթի ստեղծումը, որը լայն տարածում ստացավ նաև Իրանի հարևան երկրներում, ներառյալ՝ Հայաստանում:

Վաղագույն նմանատիպ գմբեթը հանդիպում է Արտաշիրի արքայական պալատում՝ կառուցված III դ. Գորում (այսօր՝ Ֆիրուզաբադ): Ուղղանկյուն հատակագծով պալատական համալիրը բաժանված է երկու մասի՝ հանդիսավոր և բնակելի: Ողջ համակառույցն աչքի է ընկնում խիստ սիմետրիկ լուծումով, որտեղ ներդաշնակ զուգակցվում են սենյակները և թաղածածկ կիսաբաց սրահները՝ «այվանները», գմբեթածածկ ու քառակուսի հատակագծով դահլիճների հետ: Ընդհանուր գծերով նման լուծում ունի նաև Սերվիստանի պալատը (V դ.):

Սասանյան Իրանի ճարտարապետության կարևորագույն հուշարձանը Տիզբոնի արքայական պալատն է: Նրա հորինվածքի առանցքը թաղածածկ գահադահլիճն է (ուր արքունի ատյանի առաջ է կանգնել Վարդան Մամիկոնյանը զինակից նախարարների հետ), որը պալատի գլխավոր ճակատում ունի հսկայական՝ 26 մ թռիչք և շենքի ողջ բարձրությամբ կամարակապ բացվածք: Դահլիճի խորքում դրվել է բարձր գահը, որի վերևում ոսկյա շղթաներով կախված է եղել արքայից արքայի թագը: Դահլիճին կից են բնակելի, տնտեսական և այլ շինությունները: Պալատի գլխավոր ճակատը դահլիճի երկու կողմում զարդարված է կիսասյուների վրա հենված բազմահարկ դեկորատիվ կամարաշարով: Այսօր էլ այդ մոնումենտալ կառույցը մեծ տպավորություն է թողնում իր չափերով և ճարտարապետական կերպարով, որը կոչված էր ցուցադրելու Սասանյան պետության հզորությունը:

Սասանյանների օրոք պաշտամունքային շենքի հիմնական տիպը զրադաշտական տաճարն էր՝ քառակուսի, չորս կողմից կամարակապ բացվածքներով, քառամույթ գմբեթավոր կառույցը («չորտակ»):

VII դարում արաբների կողմից Իրանի նվաճումը և երկրում նոր կրոնի՝ իսլամի տարածումը պայմանավորեցին նոր տիպի մոնումենտալ շենքերի երևան գալը (առաջին հերթին՝ մզկիթների): Փոփոխություններ եղան նաև քաղաքաշինությունում: Աշտարակներով ուժեղացված, չթրծված աղյուսից շինված պարիսպներով շրջապատված քաղաքների հին մասը՝ «շահրիստանը», շրջապատվեց արհեստավորական արվարձաններով՝ «ռաբաթներով», որտեղ տեղափոխվեց քաղաքային տնտեսական և գործարարական կենտրոնը: Կառուցվող հասարակական շենքերն էին մինարեթներով մզկիթները, ծածկված շուկաները, քարավանատները («խանները»), բաղնիքները՝ («համամները»), մեդրեսեները՝ իսլամական հոգևոր դպրոցները: Դրանք բոլորը կառուցվում էին թրծված աղյուսով: Շենքերի կամարները և ծածկի թաղերը ստացան շեշտված սլաքաձև ուրվագիծ: Ի տարբերություն մզկիթի արաբական տիպի՝ այունասրահով և ներքին բակով, Իրանում ձևավորվեց տեղական հորինվածքը՝ այվաններով: Այս ժամանակաշրջանի գլխավոր կառույցը Սպահանի Մեծ մզկիթն է, որը, փաստորեն, խոշոր համալիր է (170x140 մ չափերով), նրա ներքին՝ ուղղանկյուն բակը (65x55 մ) շրջապատված է սրահով, յուրաքանչյուր կողմում՝ մեկական այվանով: Համալիրի կազմում են գմբեթավոր դահլիճը (1072–1092 թթ.), հյուսիսարևելյան կողմում՝ դեպի Մեքքա ուղղված «միհրաբը», մինչև 50 մ բարձրություն ունեցող մինարեթներ, մեդրեսեներ, դամբարաններ և այլն:

XI դարում սելջուկ–թյուրքերի և XIII դարում մոնղոլների ներխուժումները և ասպատակությունները դանդաղեցրին, բայց չընդհատեցին Իրանում ճարտարապետության զարգացման գործընթացը: Մզկիթներից բացի, կառուցվեցին բազմաթիվ աշտարակաձև դամբարաններ, որոնք հիմնականում ունեն կլոր կամ աստղաձև հատակագիծ:

Այդ դարերի կառուցվածքային նպատակահարմարությամբ, ձևերով և կատարյալ համաչափություններով աչքի ընկնող հուշարձանը իրավամբ համարվում է Օլջեյդ Խոդաբանդի դամբարանը Սուլթյանիեում (1305–1313 թթ., ճարտարապետ՝ Ալի–Շահ): Հսկայական, ութանիստ բարձր շենքը (ընդհանուր բարձրությունն է 51 մ) պսակված է խոշոր, թմբուկով երկթաղանթ, 24,5 մ տրամագծով գմբեթով, որը շրջապատված է ութ սլացիկ մինարեթներով՝ կանգնեցված դամբարանի երրորդ հարկի անկյուններում: Ողջ կառույցի հորինվածքի ընդհանուր համաչափությունը խախտում է հարավից կից թաղման խուցը: Նորույթը դամբարանի հարդարանքում եղան արտաքին ճակատների երեսպատումը ջնարակած սալիկներով, ներսը՝ զարդանախշերով, ինչպես նաև գմբեթի փիրուզե գույնը: Գունազարդումը, չխախտելով հորինվածքի մոնումենտալ բնույթը, ճարտարապետական կերպարին հաղորդում է հուզական մեծ արտահայտչականություն:

Իրանի ճարտարապետության միջնադարյան շրջանը նոր վերելք ապրեց XVI–XVII դդ.՝ Սեֆյան հարստության օրոք: Լայնածավալ շինարարական աշխատանքներ իրականացվեցին երկրի նոր մայրաքաղաք Սպահանում: Շահ Աբբաս Ա–ի օրոք քաղաքը շրջապատվեց մոտ 40 կմ ընդհանուր երկարությամբ պարիսպներով, ձևավորվեց նոր կենտրոնը՝ հյուսիսից հարավ ձգվող հսկայական Մեյդանե–Շահ հրա-

պարակը (510 մ երկարությամբ և 165 մ լայնությամբ), որը ողջ պարագծով շրջապատվեց առևտրի համար հատկացված կամարասրահով: Հարավում կառուցվեց այդ դարերի ամենախոշոր՝ Շահական մզկիթը (1611–1630 թթ., ճարտարապետ՝ Աբու-լ-Բազեմ), որն ուներ ավանդական՝ չորս այվանով և կենտրոնում ջրավազանով ներքին բակ: Դեպի հրապարակ բացվող, ստալակտիկային կիսագմբեթով, 27,5 մ բարձրությամբ շքամուտքի ողջ մակերեսը երեսապատված է ջնարակե խճանկարով, որը ձևավորել է, ըստ արձանագրության, գեղագիր Ալի Ռիզան 1616 թ.: Ճոխ ձևավորում ունեն մզկիթի գմբեթը, շքամուտքը, մինարեթները, միհրաբը: Համալիրի կազմում են նաև երկու մեդրեսեներ: Հրապարակի հյուսիսային կողմում ծածկած շուկան է և քարավանատները, արևելքում՝ Լոտֆոլլա մզկիթը (1603–1618 թթ.), որն իր հարդարանքով չի զիջում Շահական մզկիթին:

Հրապարակի արևմտյան կողմում շահի պալատն է՝ Ալի-Կափուն (XV դ., հիմնովին վերակառուցված 1598 թ. շահ Աբբասի կողմից): Ուղղանկյուն խոշոր կառույցը բազմաֆունկցիոնալ է. բուն պալատական մասից բացի՝ այստեղ տեղադրված են գրասենյակը, դատարանը, պահակազորը, շահի մերձավորների սենյակները և այլն: Շենքի վերին՝ դեպի հրապարակ նայող մասը այունազարդ բարձր և ընդարձակ պատշգամբն է, որտեղից շահ Աբբասը դիտում էր հրապարակում կատարվող հանդիսությունները:

Սպահանի քաղաքաշինական առանցքը դարձավ նոր բացված Չհար-Բաղ ծառազարդ պողոտան, որն ուներ մոտ 1700 մ երկարություն և քաղաքը կիսելով երկու մասի՝ ձգվում էր դեպի հարավ, կամրջով անցնելով Զաենդերուդ գետը՝ հասնում էր 3 կմ հեռու փռված այգիներին: XVII դ. մոտ 600 000 բնակչություն ունեցող Սպահանը ողջ Արևելքի խոշոր և բարեկարգ, բազմապիսի և բազմաթիվ հասարակական ու պաշտամունքային շենքերով ամենահարուստ քաղաքն էր (ըստ ճանապարհորդ Շարդենի՝ ուներ 162 մզկիթ, 48 մեդրեսե, 1802 քարավանատուն, 273 բաղնիք և այլն):

XVII դ. Սպահանի քաղաքաշինական կազմությունը լրացվեց հարավում՝ Զաենդերուդ գետի մյուս ափին, շահ Աբբաս Ա-ի՝ Արևելյան Հայաստանից այդ դարասկզբին բռնի տեղահանված հայերի կողմից հիմնադրված և կառուցապատված Նոր Ջուղա արվարձանով (փաստորեն առանձին քաղաք էր), որն իր բարեկարգությամբ, երկհարկանի բնակելի տներով, բազմաթիվ եկեղեցիներով հարստացրեց Իրանի մայրաքաղաքի ճարտարապետությունը:

Սեֆյանների օրոք ձևավորվեց իրանական քարավանատների տիպը: Գործառական այս շենքերի հորինվածքը այնպիսի կատարելություն ստացավ, որի շնորհիվ դրանք դարձան Իրանի աշխարհիկ ճարտարապետության նվաճումը: Չորս այվաններով ներքին բակի շուրջը տեղադրված են հյուրերի սենյակները: Շենքը շրջանցում է գրաստի համար նախատեսված սրահը, որը լուսավորվում է երդիկներով: Քարավանատան միակ դուռը շեշտված է բարձր շքամուտքով: Արտաքին պատերը, փաստորեն, անկյուններում կլոր բուրգերով պարիսպներ են, որոնք ապահովում են քարավանատան պաշտպանությունը առևտրական ճանապարհներին այդ դարերում վխտացող բազմաթիվ ավազակախմբերից: XVI–XVII դդ. քարավանատների

լավագույն նմուշներն են Մայարի, Ամենաբադի, Մադերի-Շահի, Շեբլի, Դեհի-Բիդի համակառույցները:

Սեֆյանների օրոք վերելք է ապրում կամրջաշինությունը: Գլուխգործոցներ են Սպահանի կամուրջները Զաենդերուդ գետի վրա, որոնք միաժամանակ նաև ամբարտակ են՝ վրան երկհարկ թաղածածկ սրահներով, նախատեսված առևտրի և ժամանցի համար:

XVII–XVIII դդ. բազմաթիվ մզկիթներ են կառուցվել նաև Իրանի տիրապետության տակ գտնվող Այսրկովկասի քաղաքներում, որոնցից իր ճարտարապետությամբ, գեղարվեստական արժանիքներով լավագույններից է Երևանի Կապույտ մզկիթը (1765 թ.):

4. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սասանյան ժամանակաշրջանի գրավոր աղբյուրներից պահպանվել են պահլավերեն արձանագրություններ, մասնավորապես Արտաշիր Ա-ի, Շապուհ Ա-ի, Ներսեհի ու Շապուհ Բ-ի արձանագրությունները, որոնց մի մասը երկլեզու է՝ պահլավերեն և հունարեն:

Սասանյան արքունիքում գրի էին առնվում պաշտոնական տարեգրություններ («Խվաթայ-նամակի»), որոնք թեև բնագրով չեն պահպանվել, սակայն կան մի քանի հունարեն, արաբերեն թարգմանություններ, որոնցից առավել հայտնի է Իբն ալ-Մուկաֆֆայի (մահ. 757 թ.) թարգմանությունը:

Հատվածաբար պահպանվել է այս ժամանակաշրջանի իրավագիտական հուշարձանը՝ «Հազար որոշումների ժողովածուն»: Սասանյան պետության քաղաքների մասին կարևոր նյութ է մատակարարում «Իրանի քաղաքները» աշխատությունը: Պետության կառավարման մասին խրատներ են բովանդակում «Թանսարի նամակը» և «Թաջ նամակը»:

«Քարնամակ-ե Արտաշիր-ե Պաբագան» (Արտաշիր Պաբագանի գործերի գիրքը) մեզ հասած պահլավերեն պատմական գրականության եզակի նմուշներից է, որում միահյուսված են Սասանյան թագավորական տան հիմնադիր Արտաշիր Ա-ի մասին պատմական ու առասպելական նյութերը:

Իրանի արաբական նվաճմամբ մի քանի դարով ընդհատվում է պարսկալեզու պատմագրության զարգացումը: VII–X դարերում պարսկերենով չի գրվում որևէ պատմագրական կամ պատմաաշխարհագրական երկ: Ծագումով իրանցի հեղինակները իրենց աշխատությունները գրում էին արաբերեն:

X դարից գրական ասպարեզ է մուտք գործում նոր պարսկերենը: Պարսկերեն առաջին ինքնուրույն աշխատություններից էր 982 թ. Սասանյան պետության մեջ մտնող Գուզգանանի մարզում անհայտ հեղինակի կողմից գրված աշխարհագրական աշխատությունը, որ վերնագրված է «Հուդուդ ալ-ալամ» (Աշխարհի սահմանները): 60 գլուխներից բաղկացած այս աշխատությունը, հենվելով արաբ հեղինակներ Իսթահրու, Բալխու, Մաս'ուդու և Իբն Հաուկալի հաղորդումների վրա, շարունակում է արաբական նկարագրական աշխարհագրության ավանդույթները և արժեքավոր

տեղեկություններով լրացնում ինչպես խալիֆայության, այնպես էլ Հայաստանի ու հարակից տարածքների պատմական աշխարհագրությունը:

Բալ'ամիի կողմից X դարի կեսերին Թաբարի «պատմության» համառոտ խմբագրությունից հետո առաջին պարսկերեն պատմագրական աշխատությունը XI դարի կեսին գրվել է Աբդ ալ-Հայ Գարդիզի կողմից և վերնագրված է «Զեյն ալ-ախբար»: Այս աշխատությունը ընդգրկում է նախաիսլամական ժամանակներից մինչև 1041 թ. ընկած ժամանակաշրջանի Իրանի և հատկապես Խորասանի պատմությունը:

Իրանի XI դարի պատմական առավել արժեքավոր աշխատություններից է Աբու-լ-Ֆազլ Բեյհակիի «Թարիխ-ե ալ-ե Սեբուք Թեքին» (Սեբուք Թեքինի տոհմի պատմությունը): Հեղինակը, երկար տարիներ աշխատելով Ղազնյան տիրակալներ Մահմուդի ու Մաս'ուդի արքունիքում, իր աշխատությունը գրելիս օգտագործել է պետական փաստաթղթեր և հարուստ փաստագրական նյութ: Նրա աշխատությունն ընդգրկում է 1018–1059 թթ. ժամանակաշրջանի պատմությունը և բաղկացած է եղել 30 հատորներից, որոնցից մեզ են հասել միայն VII, VIII ու IX հատորներն ամբողջությամբ և VI, X հատորների մի մասը:

Իրանի սելջուկյան ժամանակաշրջանի պարսկերեն աղբյուրներից է անհայտ հեղինակի կողմից 1196 թ. գրված հակիրճ «Մուջմալ աթ-թավարիխը» (Պատմությունների համառոտագրությունը), որում պատմության շարադրանքը հասցվում է մինչև 1126 թ:

Նաջմ ադ-Դին Ռավենդին, որը մասնագիտությամբ եղել է գրագիր ու կազմաբար և որոշ ժամանակ ծառայել է Իրաքի սուլթան Տուղրիլ Գ-ի արքունիքում, 1202 թ. գրում է իր պատմագրական աշխատությունը, որ կոչվում է «Ռահաթ աս-սուդուր վա այաթ աս-սուրուր» (Սրտերի հանդարտեցում և ուրախության հրաշք): Հեղինակն, իր երկում ընդգրկելով Իրանի սելջուկյան ժամանակաշրջանը՝ մինչև 1199 թ., անդրադառնում է քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության հարցերին:

Այս ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է սելջուկյան տիրակալներ Ալի Արսլանի ու Մալիքշահի վեզիր Նիզամ ալ-մուլքին վերագրվող «Սիասաթ-նամե» աշխատությունը, որը բովանդակում է պետության կառավարման, զանազան վարչությունների ու պաշտոնյաների գործունեությանը վերաբերող տեղեկություններ ու հանձնարարականներ:

Սոցիալ-կենցաղային բնույթի առատ նյութ է պարունակում Նիզամի Արուզի Սամարղանդիի «Չահար մաղալե» (չորս հոդված) աշխատությունը մարդկային չորս խավերի (վեզիրներ, բանաստեղծներ, աստղագուշակներ և բժիշկներ) նշանավոր ներկայացուցիչների մասին:

Իրանի մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում (1220–1336 թթ.) պարսկալեզու պատմագրությունը վերելք է ապրում: Պատմագրության մեջ տիրապետող է դառնում պարսկերենը, իսկ արաբերենը գրեթե դուրս է մղվում:

Այս ժամանակաշրջանի պատմագիրներին, ըստ նվաճողների նկատմամբ նրանց դրսևորած վերաբերմունքի, կարելի է բաժանել երկու խմբի՝ թշնամաբար տրամադրվածներ և նվաճողներին գովերգողներ:

Առաջին խմբի պատմագիրներից է Մուհամմեդ իբն Ահմեդ Նեսևին, որը, լինելով վերջին խորեզմշահ Ջալալեդդինի քարտուղարը, գրում է ոչ միայն նրա կյանքին ու գործերին նվիրված իր արաբերեն «Սիրաթ աս-սուլթան Ջալալեդդին» պատմությունը, այլև պարսկերեն «Նաֆսաթ ալ-մասդուր» (Քամու սուլոցը) աշխատությունը, որն իրենից ներկայացնում է հեղինակի հուշերը վերջին խորեզմշահի մահից հետո իր թափառումների մասին և լի է տարբեր շրջաններում մոնղոլների արշավանքների հետևանքով մարդկանց աղետալի դրության պատկերներով:

Մինհաջ ադ-Դին Օսման Ջուզջանին, որ եղել է Գուրյան սուլթանների պաշտոնյաներից, մոնղոլների արշավանքի ժամանակ հեռանում է Հնդկաստան, որտեղ էլ մնում է մինչև իր մահը: Այստեղ էլ 1260 թ. ավարտում է իր կարճ ընդհանուր տիպի պատմությունը, որն ընծայել է Հինդուստանի Նասիր ադ-Դին Մահմուդ շահին՝ անվանելով այն «Թաբաղաթ-ե Նասիրի» (Նասիրի կարգերը): Այս հեղինակը ևս պատկերում է մոնղոլական արշավանքները՝ առանց քողարկելու նրանց սարսափելի հետևանքները:

Մոնղոլների պետական ապարատում ծառայության մեջ գտնվող պատմագիրների շարքը սկսում է Ալա ադ-Դին Աթա Մալիք իբն Մուհամմեդ Ջուվեյնին (1226–1283 թթ.)՝ ծագումով պարսից ազնվականական տոհմից: Նա իր պատմագրական երկը, որ կոչվում է «Թարիխ-ե Ջահանգոշա» (Աշխարհի նվաճման պատմություն), ավարտել է 1260 թ.: Այն բաղկացած է երեք հատորներից, որոնցից առաջինը բովանդակում է Մոնղոլական կայսրության պատմությունը՝ Չինգիզ խանի առաջին արշավանքներից մինչև Գույուկ խանի մահը, երկրորդը՝ խորեզմշահերի պետության պատմությունը, երրորդը՝ Հուլավու խանի արշավանքը Իրան, նաև Ալամուտի իսմայիլական պետության պատմությունը: Չնայած իր ընդհանուր մոնղոլական ուղղվածությանը՝ երկում լռության չեն մատնված մոնղոլական նվաճման մութ կողմերը:

Պարսկալեզու խոշորագույն պատմագիր է Ռաշիդ ադ-Դին Ֆազլուլլահ իբն Աբու-լ-Խեյր Ալի Համադանին (1247–1318 թթ.): Ղազան խանի պատվերով 1300–1310 թթ. նրա գրած ընդարձակ «Ջամի' աթ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածուն), որը Ղազան խանի պատվին կոչվել է «Թարիխ-ե Ղազանի», ներառում է մոնղոլա-թյուրքական ցեղերի, Չինգիզ խանի ու նրա հաջորդների, մոնղոլական պետությունից առանձնացած ուլուսների պատմությունը: Երկրորդ հատորի մեջ են մտել ոչ մահմեդական երկրների՝ Չինաստանի, հրեաների, «Ֆրանկների», Հռոմի կայսրերի ու Հնդկաստանի պետության պատմությունը:

Շահաբ ադ-Դին Աբդուլլահ իբն Ֆազլուլլահ Շիրազին, որն առավել հայտնի է իր «Վասսաֆ ալ-հազրաթ» ծածկանունով, ևս մոնղոլ տիրակալներին գովերգող պատմագիրներից է, որը ծառայելիս է եղել ֆինանսական վարչությունում[1]:

Մոնղոլ տիրակալներին գովերգող հայտնի պատմագիրների շարքը լրացնում է իրանցի ազնվականների տոհմից սերող Համդալլահ Մուսթովֆի Ղազվինին (ծնվ. 1281 թ.): Նա իր պատմական «Թարիխ-ե գոզիդե» (Ընտիր պատմություն) աշխա-

[1] Երևանի Մատենադարանում պահպանվել է «Թարիխ-ե Վասսաֆի» առաջին հատորի XIX դարի մի ձեռագիր ընդօրինակություն (Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 15):

տությունն ավարտում է 1330 թ.: Այն ընդգրկում է Իրանի մոնղոլական ժամանակաշրջանի համառոտ պատմությունը մինչև 1329 թ., իսկ VI գլխում մանրամասն նկարագրվում է հեղինակի ծննդավայր Ղազվինը: Հետագայում հեղինակը շարունակում է իր պատմության շարադրանքը՝ հասցնելով մինչև 1344 թ.: Նրա որդին՝ Զեյն ադ-Դին Մուսթովֆի Ղազվինին, իր հերթին պատմական դեպքերի շարադրանքը շարունակում է՝ հասցնելով մինչև 1392 թ.:

XV դարի պատմագիրների շարքում նախ և առաջ հարկ է նշել Լենկ Թեմուրի պալատական պատմագիրներ Նիզամ ադ-Դին Շամիին և Շարաֆ ադ-Դին Եզդիին, որոնք երկուսն էլ իրենց պատմական աշխատությունները վերնագրել են «Զաֆար-նամե»: Թե՛ Շամիի երկը (գրվել է 1404 թ.) և թե՛ Եզդիինը (1424 թ.) շարադրված են մեզ չհասած պաշտոնական սկզբնաղբյուրների վրա և ներկայացնում են Թեմուրին ու նրա գործերը իդեալական կերպով, առանց որևէ բացասական կողմերի: Շամիի աշխատությունը գրված է պարզ ու հասկանալի ոճով[2], իսկ Եզդիինը խրթին է ու ավելի ներբողական:

Թեմուրյան պատմագրության առավել նշանավոր ներկայացուցիչը Հաֆիզ-ի Աբրուն է (մահ. 1430 թ.): Նա ծառայել է սկզբում Լենկ Թեմուրին, ապա նրա որդուն՝ Շահրուխին: Վերջինիս արքունիքում էլ գրում է իր պատմական ու աշխարհագրական երկերը: 1420 թ. նա գրում է իր «Ջողրաֆիա» երկհատորյա աշխատությունը Իրանի ու հարակից շրջանների XV դարի մանրամասն տնտեսական ու աշխարհագրական նկարագրությամբ: Նրա պատմական աշխատություններից մեկը կոչվում է «Մաջմու'ե» (Ժողովածու), որում հեղինակը, ներառելով Թաբարիի, Ռաշիդ ադ-Դինի ու Շամիի հատվածները, շարունակում է նրանց պատմությունը: Հաֆիզ-ի Աբրուի մյուս ընդարձակ պատմական աշխատությունը, որը հայտնի է երկու վերնագրերով՝ «Մաջմա' աթ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածու) և «Զուբդաթ աթ-թավարիխ» (Տարեգրությունների ժողովածու), բաղկացած է չորս հատորներից: Այս աշխատությունն աչքի է ընկնում իր սկզբնաղբյուրների առատությամբ, հաղորդումների ճշգրտությամբ ու հակիրճ շարադրանքով:

XV դարի նշանավոր պատմագիրներից է Միրխոնդ անվամբ հայտնի Մուհամմեդ իբն Խավանդշահը (1433–1498 թթ.), որը գրել է 7 հատոր ընդհանուր տիպի պատմություն «Ռոուզաթ աս-Սաֆա» (Մաքրության այգի) վերնագրով, որի միայն VI և VII հատորներն են վերաբերում XV դարի երկրորդ կեսին[3]: Սկզբի հատորները բանաքաղական (կոմպիլյատիվ) բնույթ ունեն և հիմնված են արաբական ու պարսկական տարբեր աղբյուրների վրա, որոնց մի մասը չի պահպանվել:

Սեֆյան դարաշրջանում պարսկալեզու պատմագրությունը շարունակում է զարգանալ: Խիստ մեծ է այս շրջանի պատմագիրների թիվը, որոնց որոշ մասը, գտնվելով պետական ծառայության մեջ, հնարավորություն ուներ օգտվելու պետական փաստաթղթերից ու հավաստի աղբյուրներից:

Սեֆյան թագավորական տան հիմնադիր Իսմայիլ Ա-ի գահակալության մինչև 1512 թ. ժամանակագրությունն է ընդգրկում Քյամալ ադ-Դին Բեննայիի «Շահանշահ-նամեն»:

Ամիր Սադր ադ-Դին Սուլթան Իբրահիմ Ամինիի «Ֆութուհաթ-ե շահի» (Շահական հաղթանակները) կամ «Ֆութուհաթ-ե Ամինի» (Ամինիի հաղթանակները) աշխատությունը ևս նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի ժամանակաշրջանի դեպքերի նկարագրությանը: Հեղինակը նախապես եղել է Սուլթան Հուսեին Բայքարի պաշտոնյաներից, իսկ 1519 թվականից ծառայել է Սեֆյան շահ Իսմայիլ Ա-ի պալատում: Իր երկհատորյա պատմությունը Ամինին սկսում է Ադամից և հասցնում մինչև 1512 թ., ընդ որում՝ երկրորդ հատորն ամբողջովին նվիրված է շահ Իսմայիլ Ա-ի գահակալման առաջին 12 տարիների պատմությանը:

Առաջին Սեֆյան շահի ժամանակակիցն էր Ղիյաս ադ-Դին իբն Հումամ ադ-Դին ալ-Հուսեինին, որը հայտնի էր Խոնդեմիր ծածկանունով (1475–1535 թթ.): Նշանավոր ուզբեկ բանաստեղծ Միր Ալիշեր Նավոյիի հովանավորությամբ 1500 թ. նա գրում է պատմական բանաքաղական (կոմպիլյատիվ) «Խոլասաթ ալ-Ախբար» (Տեղեկությունների համառոտագրություն) կոչվող, իսկ 1524 թ.՝ իր ընդարձակ «Հաբիբ աս-սիյար» (կենսագրությունների ընկեր) աշխատությունները: Վերջինս բաղկացած է երեք հատորներից, որոնցից յուրաքանչյուրը բաժանվում է չորս մասի[4] և աչքի է ընկնում ճշգրտությամբ ու բովանդակած փաստագրական նյութերի առատությամբ: Հատկապես արժեքավոր են նրա այն մասերը, որոնք ընդգրկում են Թեմուրյան սուլթան Հուսեինի ու Իսմայիլ Ա-ի կառավարման ժամանակաշրջանը: Թեև առանձին դեպքերում հեղինակը հանդես է բերում կողմնակալ վերաբերմունք, սակայն ընդհանուր առմամբ նրա «Հաբիբ աս-սիյար» աշխատությունը բարձրարժեք աղբյուր է համարվում իր ժամանակի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության որոշ հարցերի լուսաբանման համար:

Միր Յահիա Ղազվինին (1481–1552/3 թթ.) գրել է «Լուբբ աթ-թավարիխ» (Պատմությունների միջուկ) կոչված հակիրճ աշխատությունը՝ նվիրված շահ Թահմասպ Ա-ի որդի Բահրամ Միրզային: Այն բաղկացած է 4 մասից, որոնց շարադրանքը խիստ ճշգրիտ է և հագեցած իրադարձությունների մասին տվյալներով, իսկ լեզուն՝ պարզ: Դեպքերի շարադրանքը հասցվում է մինչև 1542 թ.:

Հասան Բեկ Ռումլուն (ծնվ. 1531 թ.) ծագումով թյուրքական ռումլու ցեղից էր, որը 10 տարեկանից դաստիարակվել էր շահ Թահմասպ Ա-ի պալատում: Նա գրել է 12 հատորանոց «Ահսան աթ-Թավարիխ» (Պատմություններից լավագույնը) պատմությունը, որից պահպանվել են միայն XI և XII հատորները: XII հատորը բովանդակում է Սեֆյան առաջին երեք շահերի ժամանակաշրջանի պատմությունը մինչև 1577 թ.: Աշխատության յուրաքանչյուր տարվա շարադրանքում առկա են տվյալներ

[2] Երևանի Մատենադարանում պահվում է այս աշխատության XVII դարի մի ամբողջական ընդօրինակություն (Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 286):

[3] Այս աշխատությունը պահպանվել է մեծ թվով ձեռագրերով, այդ թվում Մատենադարանում կան այս աշխատության առաջին հինգ հատորներից մեկական ձեռագրեր (տես Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 1, 9, 24, 337, 1886): Այն ունեցել է ինչպես վիմատիպ, այնպես էլ մի քանի նոր հրատարակություն:

[4] Երևանի Մատենադարանում կա այս աշխատության առաջին հատորի XVII դարի ձեռագիր ընդօրինակությունը (Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 558):

նշանավոր մարդկանց, աստվածաբանների ու բանաստեղծների մասին, որոնք մահացել են այդ տարի: Այս աշխատությունը համարվում է շահ Թահմասպ Ա–ի և շահ Իսմայիլ Բ–ի ժամանակաշրջանի լավագույն սկզբնաղբյուրներից մեկը:

Իրան ներգաղթած քրդական ռուզեքի ցեղի առաջնորդի ընտանիքից է սերել Շարաֆ խան Բիթլիսին, որը ծնվել է 1543 թ. Ղումի մոտ գտնվող Քերեհրուդ վայրում: 9 տարեկան հասակից նա դաստիարակվել է շահ Թահմասպ Ա–ի պալատում: Վարել է Շիրվանի կառավարչի պաշտոնը: Բայց հետագայում հեռացել է Օսմանյան կայսրության տարածք՝ ստանձնելով Բիթլիսի վիլայեթի կառավարչի պաշտոնը: 1596 թ. Շարաֆ խան Բիթլիսին ավարտել է իր «Շարաֆ–նամե» աշխատությունը, որտեղ ընդարձակ տեղ է հատկացված քրդական ցեղերի պատմությանը՝ հնագույն ժամանակներից մինչև իր օրերը: «Շարաֆ–նամե»–ում մանրամասն և անկողմնակալ կերպով շարադրված են Իրանում XVI դարում զարգացող իրադարձությունները: Հատկապես բարձր է այս աղբյուրի պատմագիտական արժեքը Արևմտյան Հայաստանի XVI դարի սոցիալ–տնտեսական պատմության համար: Այս աշխատությունը ունեցել է մի քանի հրատարակություն, թարգմանվել ռուսերեն[5]:

Սեֆյան պատմագրության խոշորագույն ներկայացուցիչը Իսքանդար Բեկ Թորքեմանն է (1560/1–1633/4 թթ.), որն ավելի հայտնի է Մունշի (պրսկ.՝ քարտուղար) անվամբ: 1592/3 թ. նա դառնում է Բարձրագույն դիվանի քարտուղարներից մեկը՝ գտնվելով էթեմադ ադ–դովլեի անմիջական ենթակայության տակ: Լինելով ժամանակաշրջանի դեպքերից շատերի ականատեսն ու մասնակիցը՝ Մունշին գրում է շահ Աբբաս Ա–ի պատմությունը, որը վերնագրում է «Թարիխ–ե ալամ առայե Աբբասի» (Աշխարհը զարդարող Աբբասի պատմությունը):

Հեղինակը անկողմնակալ է դեպքերի լուսաբանման հարցում և իր հաղորդումներով հաստատում է հայկական աղբյուրների տվյալները հայության բռնագաղթի մասին: Դեռ հեղինակի կենդանության օրոք նրա «Պատմությունն» այնպիսի մեծ ժողովրդականություն էր վայելում, որ Մունշին պաշտոնական առաջարկ էր ստացել շարունակելու այն՝ ընդգրկելով շահ Սեֆի Ա–ի ժամանակաշրջանը: Մունշին սկսում է այն, բայց աշխատանքն ընդհատվում է հեղինակի մահով:

Շահ Աբբաս Բ–ի ժամանակաշրջանի կարևոր աղբյուրներից է Մուհամմեդ Թահիր Վահիդի «Թարիխ–ե շահ Աբբաս–ե Սանի» կամ «Աբբաս–նամե» կոչված աշխատությունը: Արժեքավոր են այս աղբյուրի վկայությունները հարկագանձումների ընթացքում չարաշահումները սահմանափակելու նպատակով շահ Աբբաս Բ–ի ձեռնարկած միջոցառումների մասին:

Սեֆյան պետության վարչական համակարգի ուսումնասիրության համար բարձրարժեք սկզբնաղբյուր է անհայտ հեղինակի «Թազքիրաթ ալ–մուլուք» (Հիշատակարան թագավորների համար) աշխատությունը, որ գրվել է աֆղան Մահմուդ շահի հրամանով: Հեղինակն այն ավարտել է 1722 թ.: «Թազքիրաթ ալ–մուլուքը» բովանդակում է տվյալներ կենտրոնական վարչության և սահմանային շրջանների պաշտոնյաների եկամուտների, Սեֆյան պետության ծախսերի ու եկամուտների մասին, ամիրների, հոգևոր, պալատական ու ֆինանսական պաշտոնյաների, մայրաքաղաք Սպահանի վարչության մասին:

[5] Երևանի Մատենադարանում պահվում է այս աշխատության XIX դարի մեկ ձեռագիր (Մատենադարան, արաբատառ ֆոնդ, ձեռ. 1799):

Միրզա Մեհդի խանը եղել է Նադիր շահի քարտուղարն ու պալատական պատմագիրը, մասնակցել Աստվածաշնչի պարսկերեն թարգմանությանը, գրել ուզբեկերեն–պարսկերեն «Սանգլախ» կոչված բառարանը: Նրա պատմագրական երկերն են «Թարիխ–ե Նադիրի» (Նադիրի պատմություն)[6] և «Դորրե–ե Նադերե» (Հազվագույտ գոհար) աշխատությունը, որը հայտնի է բազմաթիվ ձեռագրերով[7] և շուրջ 11 վիմատիպ հրատարակություններով: Այս երկու աշխատություններն աչքի են ընկնում իրենց նրբագեղ համարվող խիստ ծանր ու դժվարըմբռնելի ներբողական ոճով: Այն Հարավային Կովկասի ժողովուրդների պատմության այս շրջանի կարևոր աղբյուրներից է[8]:

Պատմագիտական ավելի բարձր արժեք ունի Մուհամմեդ Բյազիմի ծավալուն «Թարիխ–ե ալամ առայե Նադիրի» (Աշխարհը զարդարող Նադիրի պատմությունը)[9] երկը: Այս հիմնարար աշխատությունը առատ նյութ է մատակարարում ժամանակաշրջանի Իրանի ու նաև Հարավային Կովկասի թե՛ քաղաքական և թե՛ սոցիալ–տնտեսական պատմության համար, որը բարձր է գնահատվել ուսումնասիրողների կողմից:

Մուհամմեդ Սաղեղ Մուսևին (մահ. 1789/90 թ.) գրում է Քերիմ Խան Զենդի ժամանակաշրջանի պատմությունը՝ վերնագրված «Թարիխ–ե գիթի գոշայ» (Տիեզերակալի պատմությունը) կամ «Թարիխ–ե Զենդիյյե» (Զենդյան պատմություն): Նրա մահից հետո այս «Պատմությունը» շարունակում են Միրզա Արդ ալ–Քերիմը և Աղա Մուհամմեդ Ռեզա Շիրազին:

Մուհամմեդ Ֆաթհալլահ իբն Մուհամմեդ Թաղի Սարավին եղել է Աղա Մուհամմեդ խանի պալատական պատմագիրը: 1785–1786 թթ. Սարավին սկսում է գրել Աղա Մուհամմեդ խան Ղաջարին նվիրված «Թարիխ–ե Մուհամմեդի» (Մուհամմեդի պատմությունը) պատմագրական երկը: Այն ընդգրկում է Զենդյան արքայատոհմի վերջին 18 տարիների և հետագա՝ մինչև Աղա Մուհամմեդ խան Ղաջարի մահն ընկած ժամանակաշրջանի (1761–1797 թթ.) պատմությունը: Այն իր ժամանակաշրջանի արժեքավոր սկզբնաղբյուր է, որտեղ գտնում ենք նաև հայ ժողովրդի պատմությանը վերաբերող կարևոր անդրադարձներ՝ կապված Աղա Մուհամմեդ խանի կողմից

[6] Միրզա Մեհդի խանի այս աշխատությունը հայտնի է նաև «Թարիխ–ե Զահանգոշա–ե Նադերի» (Նադիրի աշխարհի նվաճման պատմություն) վերնագրով:

[7] Միայն Երևանի Մատենադարանում պահվում են «Թարիխ–ե Նադերի» և «Դորրե–ե Նադերե» աշխատությունների հինգական ձեռագրեր (Մատենադարան, ձեռ. 23, 33, 293, 567, 590 և 7, 16, 86, 1198):

[8] Այս աշխատության նոր հրատարակություններից մեկը տես آسترابادی، جهانگشای نادری، تهران، ۱۳۷۷ میرزا مهدی خان:

[9] Այս աշխատության Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտում պահվող միակ ձեռագրի ֆոտոպատճենը տես Мухаммед Казим, Наме–йи аламара–йи Надири, т. I, II, III, Москва, 1960, 1965, 1966.

XVIII դարի 90-ական թթ. Ղարաբաղը հպատակեցնելու նպատակով ձեռնարկված քայլերի հետ:

Ղաջարական ժամանակաշրջանի պատմագիրներից է քրդական դունբուլի ցեղի առաջնորդի տոհմից սերած Աբդ ալ-Ռազզաղ իբն Նաջաֆկուլի Դունբուլին (1762/3-1827/8 թթ.): Նա գրել է Ղաջարական դինաստիայի առաջին երկու գահակալների պատմությունը մինչև 1825 թ.՝ վերնագրելով այն «Մա'ասեր-ե սուլթանիե» (Սուլթանական հուշարձաններ)[10]: Այն ինչպես Իրանի, այնպես էլ Հարավային Կովկասի XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի պատմության կարևոր սկզբնաղբյուրներից է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամ Երևանցի, Պատմություն պատերազմացն, 1721-1736, Երևան, 1936:

Աբրահամ Կրետացի, Աբրահամ կաթողիկոսի Կրետացւոյ պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-շահին Պարսից, Վաղարշապատ, 1870:

Ալպոյաճեան Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան, մասն Ա-Գ, Կահիրե, 1941, 1955, 1961:

Աճառյան Հր., Վավերագրեր հայ-պարսկական հարաբերության մասին, Երևան, 1927:

Առաքել Դավրիժեցի, Պատմութիւն, Վաղարշապատ, 1896:

Առաքելյան Հ., Պարսկաստանի հայերը, նրանց անցյալը, ներկան և ապագան, մասն Ա, Վիեննա, 1911:

Աճառյան Հր., Հայ գաղթականության պատմություն, Երևան, 2002:

Բայբուրդյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005:

Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը XVII դարում, Թեհրան, 1996:

Բայբուրդյան Վ., Հայաստանի ազատագրման խնդիրը և ջուղահայ առևտրական բուրժուազիան XV-XVIII դարերում,- «XV-XVIII դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը», Երևան, 1989:

Բայբուրդյան Վ., Նոր Ջուղա, Երևան, 2008:

Գյուտերբոք Գ., Բյուզանդիոն և Պարսկաստան և անոնց դիվանագիտական և ազգային-իրավական հարաբերությունները Հուստինիանու ժամանակ: Գերմ. թարգմանեց՝ Հմայակ Համբարյան, Վիեննա, 1911:

Գարոյանց Ն., Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1986:

Դանիելյան Է., Հայ եկեղեցու նկատմամբ Խոսրով Փարվեզի վարած քաղաքականությունը, ՊԲՀ, 1981, 4:

Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914:

Եղիշե, Պատմութիւն վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1957:

Երեմյան Ս., Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244-253 թթ.), - ՊԲՀ,1976, 1:

Երեմյան Ս., Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963:

Թաղիադյան Մ., Պատմութիւն պարսից, հ. Ա, Կալկաթա, 1846:

Թիրեաքեան Յ., Արտաշիր Բաբական Քարնամակ, Փարիզ, 1906:

Թովմա Մնձոփեցի, Պատմութիւն Լանկ Թամուրայ և յաջորդաց իւրոց, Փարիզ, 1860: Երևան, 1999:

Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, Երևան, հ. 1, 1966; հ. 2, 1967; հ. 3, 1969; հ. 4, 1948:

[10] عبد الرزاق مفتون دنبلی، مآثر سلطانیه، تهران ۱۳۵۱

Խաչատուր Ջուղայեցի, Խաչատուր արեղա Ջուղայեցւոյ Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961:

Կոզմոյան Ա. Կ., Պարսից պոեզիայի ընտրանի (Ռումի, Հաֆեզ), Երևան, 2004:

Հեթում պատմիչ, Պատմութիւն թաթարաց, Վենետիկ, 1842:

Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1907:

Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, երկեր, հ. Բ, մասն Ա, Երևան, 1978:

Մարտիրոսյան Ա., Հայաստանը և առաջին Սասանյանները, ՊԲՀ, 1975, 3:

Մարկվարտ Ի., Պարսկահայք նահանգը, ՊԲՀ, 1961, 1-2:

Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968:

Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն: Թարգմ., ներած. և ծանոթագր.՝ Հր. Բարթիկյանի, Երևան, 1973:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը, I, Հրովարտակներ, կազմեց՝ Հ. Դ. Փափազյան, պրակ I (ԺԵ-ԺԶ դդ.), Երևան, 1956: Պրակ II (1601-1650 թթ.), Երևան, 1959:

Նաջարյան Հ., Թուրք-իրանական հարաբերությունները XVI դարում և XVII դարի առաջին կեսին և Հայաստանը, Երևան, 1961:

Նեղոդեքե Թ., Պատմություն Սասանյան տերության, Վաղարշապատ, 1896:

Շահնազարյան Ն., Հայ-իրանական և հայ-հոռմեական հարաբերությունները հայ մատենագիրների լուսաբանությամբ, Երևան, 1990:

Պահլավերեն-պարսկերեն-հայերեն-ռուսերեն-անգլերեն բառարան, կազմեց՝ պրոֆ. Լ. Աբրահամյան: Բառարանը տպագրության պատրաստեց, խմբագրեց և պահլավերենի համառոտ քերականությունը կազմեց Գ. Մ. Նալբանդյանը, Երևան, «Միտք», 1965:

Տեր-Ավետիսյան Ս., Նադիր-շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու), Երևան, 1940:

Տեր-Հովհանյանց Հ., Պատմութիւն Նոր Ջուղայու, որ յԱսպահան, հ. 1-2, Նոր Ջուղա, 1880:

Տիտանյան Ռ., Վարդան Օձնեցին պարսիկների 1795-1796 թթ. Անդրկովկասյան արշավանքի մասին, ՊԲՀ, 1965, 3:

Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Երևան, 1968:

Акоп Шамахеци, Походы Тамас-кули-хана (Надир-шаха) и избрание его шахом, Тифлис, 1932.

Арунов М. Р. и Ашрафян К. З., Государство Надир-шаха Ашрафа, Москва, 1958.

Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII в. (роль Новой Джульфы в иран-западноевропейских связях), Ереван, 1969.

Бартольд В. В., Иран. Исторический обзор, Ташкент, 1926.

Бартольд В. В., Историко-географический обзор Ирана, СПб, 1903.

Бартольд В. В., Место прикаспийских областей в истории мусульманского мира, Баку, 1925.

Бертельс А. Е., Насир-и Хосров и исмаилизм, Москва, 1959.

Бертельс Е. Э., Избранные труды. История персидско-таджикской литературы, М., 1960.

Бертельс Е. Э., Избранные труды. Суфизм и суфийская литература, М., 1965.

Бойс М., Зароастрийцы. Верование и обычай, Москва, 1987.

Бушев П. П., Посольство Артемия Валынского в Иран в 1715-1718 гг., Москва, 1978.

Дневник осады Испагани, веденный Петросом ди Саргис Гиланенц в 1722 и 1723 годах, СПб, 1870.

Дарошенко Е. А., Зароастрийцы в Иране (историко-географический очерк), Москва, 1982.

Заходер Б. Н., Хорасан и образование государства сельджукидов, "Вопросы истории", 1945, N 5-6.

Заходер Б. Н., История восточного средневековья (Халифат и Ближний Восток), Москва, 1944.
Зароастр. Зара Тустра. Жизненный путь правов-вестника в Иране, Штутгард, 1994.
Иванов М. С., Очерк истории Ирана, Москва, 1952.
Иностранцев К. А., Сасанидские этюды, СПб, 1909.
Иран: история и культура в средние века и в новое время, Москва, 1980.
История персидской и таджикской литературы, под. ред. Яна Рипка. М., 1970.
Книга деяний Ардашира сына папака, Транскрипция текста, перевод со среднеперсидского, введение, комментарий и глоссарий О. М. Чумаковой, Москва, 1987.
Крымский А. Е., История Персии, ее литературы и древнейшей теософии, т. I-III, Москва, 1909-1917.
Крымский А. Е., История Сасанидов и завоевание Ирана арабами, Москва, 1905.
Кишмишев, Походы Надир-шаха в Герат, Кандагар, Индию и события в Персии после его смерти, Тифлис, 1889.
Колесников А. И., Завоевание Ирана арабами (Иран при праведных халифах), Москва, 1982.
Колесников А. И., Иран в начале XVII в (Источники, внутреняя и внешняя политика, вопросы административного деления),"Палестинский сборник", вып. 22(85), Ленинград, 1970.
Колесников А. И., Сражение при Зу-Каре, "Палестинский сборник", вып. 19(82), Ленинград, 1969.
Кузнецов В. С., Последний правитель Иран-шахра, Новосибирск, 1991.
Луконин В. Г., Иран в III в., Москва, 1979.
Луконин В. Г., Иран в эпоху первых сасанидов, Очерки по истории культуры, Ленинград, 1961.
Луконин В. Г., Древний и средневековый Иран. Очерк истории и культуры, Москва, 1987.
Луконин В. Г., Культура Сасанидского Иран, Иран в III-V вв., очерк по истории культуры, Москва, 1969.
Луконин В. Г, Завоевания Сасанидов на Востоке и проблема кушанской абсолютной хронологии. "Вестник древней истории", 1969, N 2.
Лысцов В. П., Персидский поход Петра I (1722-1723 гг.), Москва, 1951.
Маркарян С. А., Сельджуки в Иране XI века, Саратов, 1991.
Миклухо-Маклай Н. Д., Из истории афганского владычества в Иране (20-ые годы XVII в.) "Ученые записки Ленинградского государственного университета", N 179, вып. 4, Ленинград, 1945.
Миклухо-Маклай Н. Д., О налоговой политике шаха Аббаса I, "Советское востоковедение", т. VI, Москва-Ленинград, 1949.
Миклухо-Маклай Н. Д., Шиизм и его социальное лицо в Иране на рубеже XV-XVI вв.,-сб. "Памяти академика И. Ю. Крачковского", Ленинград, 1958.
Мартиросян А. У., Армянские поселения на территории Ирана в XI-XV вв., Ереван, 1990.
Мухаммад Казим, Поход Надир-шаха в Индию (Извлечение из "Тарих-и аламарай-и Надири"). Пер. с персид., предисл. И примеч. П. И. Петрова, Москва, 1961.
Патканов К. П., Опыт истории династии Сасанидов по сведениям армянских писателей, СПб, 1863.
Периханян А. Г., Сасанидский судебник. "Книга тысяча судебных решении", Ереван, 1973.
Периханян А. Г., Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, Москва, 1983.
Петрушевский И. П., Ислам в Иране VII- XV веках, Москва, 1966.
Петрушевский И. П., Городская знать в государстве Хулагуидов., -"Советское востоковедение", т. V, 1948.

Петрушевский И. П., Внутреняя политика Ахмеда Ак-Коюнлу,- Сборник статей по истории Азербайджана, вып. I, Баку,1949.
Петрушевский И. П., Земледелие и аграрные отношения в Иране XIII- XIV, Москва-Ленинград, 1960.
Петрушевский И. П., Очерки по остории феодальных отношений в Азербайджане и Армении XVI-начале XIX вв., Ленинград, 1949.
Пигулевская Н. В., Якубовский А. Ю., Петрушевский И. П., Строева Л. В., Беленицкий А. М., История Ирана с древнейших времен до конца XVIII в., Ленинград, 1958.
Пигулевская Н. В., Иран на рубеже VI и VIII века, Москва-Ленинград, 1946.
Пигулевская Н. В., К вопросу о податной реформе Хосрова Ануширвана, -"Вестник древней истории", т. I, Москва, 1937.
Пигулевская Н. В., Маздакитское движение. -"Известия отделения истории и философии", 1944, N 3-4.
Пигулевская Н. В., Идеи равенства в учении маздакитов,-сб. "Из истории социально-политических идей", Москва, 1956.
Пигулевская Н. В., Византия и Иран на рубеже VI-VII вв., Москва-Ленинград, 1946.
Пигулевская Н. В., Города Ирана в раннем средневековье, Москва-Ленинград, 1956.
Пигулевская Н. В., Арабы у границ Византии и Ирана в IV-VI вв., Москва, 1964.
Рак И. В., Мифы древнего и раннесредневекового Иран, СПб, 1998.
Рашид ад-Дин, Джами ат-таварих (пред. А. А. Али-заде), т. I-III, Москва, 1957-1968.
Сиасет-наме, Книга о правлении вазира XI столетия Низам ал-Мулька (пер., введ. и примеч. проф. Б. Н. Заходера), Москва-Ленинград, 1949.
Строева Л. В., Государство исмаилитов в Иране в XI- XIII вв., Москва, 1978.
Тер-Мкртичян Л. Х., Армения под властью Надир-шаха, Москва, 1963.
Тер-Аветисян С. В., Походы Тамас Кули-хана (Надир шаха) и избрание его шахом в описании Акопа Шамахеци, Тифлис, 1932.
Фрай Р., Наследие Ирана, Москва, 1972.
Шарашенидзе З. М., Иран во второй половине XVIII в., Тбилиси, 1970.
Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси. Шараф-наме. Перевод, предисловие, примечания и приложения Е. И. Васильевой, т.1, М., "Наука",1967; т. 2, М., "Наука",1976.
Якубовский А. Ф., Махмуд Газневи. К вопросу о происхождении и характере Газневидского государства.- Сб. "Фердовси", Ленинград, 1934.
Якубовский А. Ю., Тимур. Опыт краткой характеристики. -"Вопросы истории", 1946, N 8-9.
A Chronicle of the Early Safawis being the Ahsanu't- Tawarikh of Hasan-i Rumlu, vol. II, Translated by C. N. Seddon, Oriental Institute Baroda, 1934.
Baibourtian V., International Trade and Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.
Bayani Kh., Les relations de L'Iran avec L'Europe Occidentale a' L'epoque Safavide, Paris, 1937.
Bartholomae c., Zum sasanidischen Recht, I- V, Heidelberg, 1918-1920.
Bellan L. L., Chah Abbas I, sa vie, son histoire. Paris, 1932.
Browne E. G., A History of Persian Litrature in Modern Times (A. D. 1500-1924), Cambridge, 1924.
Bulsara Sohrab Jainshedjee, The Laws of the Ancient Persia as found in the Matikan-e Hezur Datastan, Bombay, 1937.
Christensen A., L'Iran sous les Sassanides, Copenhague, 1944.
Christensen A., La règne du roi Kawadh I et communisme mozdakiste, Copenhague, 1924.

Christensen A., Sassanid Persia.–The Cambridge Ancient History, 1939, Vol. 12, cap. 4.
Chrishman R., Parthes et Sassanides, Paris, 1962.
Encyclopedia Iranica, ed. Ehsan Yarshater, London and Boston, 1982.
Farmayan Hafez F., The Beginnings of Modernization in Iran. The Politics and Reform of Shah Abbas I (1587–1629), Salt Lake City (Utah), 1969.
Floor Willem, Safavid Government Institutions. Mazda Publishers inc., Costa Mesa, California, 2001.
Ghulam Sarwar, History of Shah Ismail Safawi, Aligarh, 1939.
Garsoian N. G., Armenia between Byzantium and the Sassanians, London, 1985.
Hekmat M. A., Essai sur L'histoire des relations politiques Irano-ottomanes de 1722-1747, Paris, 1937.
Herzfeld E., Zoroaster and his World. Prienceton, 1947.
Herzfeld E., Persian Empire. Studies in geography and ethnography of the Ancient Near East. Wiesbaden, 1968.
Hinz W., Zarathustra, Stuttgart, 1961.
Huart Cl., La Perse antique et la civilisation Iranienne, Paris, 1925.
Ivanov. W., Studies in Early Persian Ismailizm, Bambey, 1955.
Klima O., Mazdak. Geschichte einer sozialen Bewegung im sasanidschen Persien, Praha, 1957.
Keddie N. R., Scholars, Saints and Sufis, Muslim Religions Institutions in the Middle East Since 1500, Berkeley, 1972.
Lockhart L., Nadir-Shah. A critical Study based mainly on contemporary sources, London, 1938.
Lockhart L., The Fall of the Safavi Dinasty and the Afgan Occupation of the Persia, N. Y., Cambridge, 1958.
Labourt J., Le Christianisme, dans L'Empire Perse sous la dynastie Sassanide, Paris, 1904.
Morgan D., Medieval Persia 1040–1797, London, 1988.
Marquart J. Eränschahr nach der Geographie des Ps. Moses Horenaci, Berlin, 1901.
Michel M., Mazzaoui, The Origins of the Safawis, Siism, Sufism and the Gulat, Wiesbaden, 1972.
Minorsky V., Esquisse d'une histoire de Nadir-chah, Paris, 1934.
Nöldeke Th., Aufsätze zur persischen Geschichte, Leipzig, 1887.
Nöldeke Th., Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden, Leyden, 1879.
Nyberg H. S., Die Religionen des alten Iran, Leipzig,. 1938.
Olmsted A. T., History of the Persian Empire, Chicago, 1948.
Perry J. R., Karim Khan Zand. A History of Iran, 1747–1779, Chicago, 1979.
Puech H. Ch., Le manicheisme, son fondateur, sa doctrine, Paris, 1949.
Ramasani R., The Foreign Policy of Iran. A developing Nation in World Affairs 1500–1941. Virginia, 1966.
Roemer, Shah Ismail II, Leipzig, 1940.
Savory R., Iran under the Safavids, Cambridge, 1980.
Savory R., Studies on the History of Safawid Iran, London, 1987.
Spuler B., Die Mongolen in Iran, Berlin, 1955.
Tadhkirat-al-muluk, A manual of Safavid Administration by V. Minorsky, London, 1943.
Woods J. E., The Aqquyunlu. Clan. Confederation, Empire. A Study in 15-th -19-th Century. Turco-Iranica Politics, Minneapolis and Chicago, 1976.
Աբբաս Էղբալ, Թարիխ-ե մոֆասալ-ե Իրան ազ էսթիլա-ե մողոլ թա էնղերազ-ե Ղաջարիե, Թեհրան, 1320 (պարսկ.):

Բասթանի Մուհամմեդ Իբրահիմ, Սիյասաթ վա էդթեսադ-ե ասր-ե սաֆավի, Թեհրան, 1974 (պարսկ.):
Բիյանի Խանբաբա, Թարիխ-ե նեզամի-ե Իրան: Ջանգհա-ե դոուրե-ե սաֆավիյե, Թեհրան, 1946 (պարսկ.):
Թարիխ-ե զենդիե, Թեհրան, 1946 (պարսկ.):
Թարիխ-ե Իրան, դովրե-ե թիմուրիան, փաժուհեշ ազ դանեշգահ-ե Քամբրիջ, Թեհրան, 1379 (պարսկ.):
Խալիլ Աբբաս, Իրան բադ ազ էսլամ, ջ. 1, Թեհրան, 1957 (պարսկ.):
Հաղի Հեդայաթի, Թարիխե-ե զենդիե, Թեհրան, 1958 (պարսկ.):
Միրզա Մեհդի խան, Ջահանգոշա-ե Նադիրի, Թեհրան, 1968 (պարսկ.):
Մոդթաղեր Ղոլամ Հոսեյին, Նաբարդիա-ե բոզորգ-ե Նադեր-շահ, Թեհրան, 1959 (պարսկ.):
Նավայի Ա., Քարիմ խան-ե զանդ, Թեհրան, 1965 (պարսկ.):
Ջհանբախշ Սովաղար, Թարիխ-ե նեզարի-ե ասր-ե Սեֆեվիյե, Շիրազ, 2001 (պարսկ.):
Ռաջաբի Պ., Քարիմ խան վա զաման-ե ու, Թեհրան, 1976 (պարսկ.):
Ռահիմ զադե-ե Սաֆավի, Շարհ-ե ջանգհա վա թարիխ-ե զենդեզանի-ե շահ-ե Էսմայիլ-ե Սաֆավի, Թեհրան, 1962 (պարսկ.):
Սարդաղուր Արու Թորաբ, Թարիխ-ե Նեզամի վա սիասի-ե դոուրան-ե շահ Աֆշար, Թեհրան, 1975 (պարսկ.):

ԲԱԺԻՆ 2

ԲՅՈՒԶԱՆԴԻԱ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

IV դարի սկզբներին՝ Դիոկղետիանոսի օրոք (284–305 թթ.) տեղի ունեցած Հռոմեական կայսրության վարչաքաղաքական բաժանման արդյունքում երևան էին եկել միաժամանակ երկու ավգուստոս և երկու ցեզարոս (այլ կերպ՝ ստեղծվեց քառապետություն՝ տետրարխիա)[11]: Թեոդոսիոս Ա Մեծը (379–395 թթ.) Հռոմեական կայսրությունը 395 թ. վերջնականապես բաժանեց երկու մասի՝ իր որդիների միջև: Արկադիոսին (395–408 թթ.) բաժին հասավ արևելյան մասը՝ Բյուզանդիոն կենտրոնով, իսկ Հոնորիոսին (395–423 թթ.)՝ արևմտյան մասը՝ Հռոմ կենտրոնով: Արևելահռոմեական կայսրությունը (Բյուզանդիան) իր հերթին կազմավորված էր տնտեսական ու մշակութային տարբեր աստիճան, սակայն համընթաց զարգացում ունեցող երկրամասերից: Արևելահռոմեական մասում շարունակվում էին հելլենիզմի դարաշրջանից գոյությունը պահպանող մի քանի կարևոր ինքնատիպություններ, որոնցից առավել նշանակալին դասական ստրկության ոչ համատարած լինելն էր: Արևելյան հատվածում համայնքային ավանդական կացութաձևը՝ ազատ ու կիսազատ շինականության և քաղաքների մանր արհեստավորության առկայությունը, խոչընդոտում էր արևմտյան ստրկության համակարգի տարածմանն ու խորացմանը: Արևելահռոմեական հատվածը համեմատաբար հեշտությամբ էր հաղթահարում տնտեսական դժվարությունները: Այս պարագան ընդգծում էր կայսրության արևելյան հատվածի որոշ առանձնակիությունը, ուստի մի տեսակ մրցակցություն էր տեղի ունենում երկու հատվածների միջև և ստեղծում անցումային կացության լրացուցիչ հիմքեր:

[11] Արևելյան մասում կայսր էր Դիոկղետիանոսը, կեսար՝ Գալերիոսը (293–311 թթ.), իսկ արևմտյան մասում կայսր էր Օգոստոս Մաքսիմիանոսը (284–305 թթ.), և կեսար՝ Կոստանդիոս Խլորը:

Հիշյալ պարագաների թելադրանքով արևելյան հատվածում ևս տեղի ունեցավ տնտեսական, քաղաքական և մշակութային կառավարման կենտրոնացում, որի արտահայտություններից էր Բյուզանդիոն բնակավայրում տեղական կառավարող սենատի ձևավորումը: Բյուզանդիոն բնակավայրի մայրաքաղաք դառնալուն զուգընթաց Արևելահռոմեական այս նոր վարչական միավորը սկսեց կոչվել Բյուզանդիա, իսկ կայսերանիստ քաղաքը Կոստանդին Մեծի (306–337 թթ.) անունով անվանակոչվեց Կոստանդնուպոլիս:

Բյուզանդիան ընդգրկեց Արևելահռոմեական կայսրության վարչական բոլոր միավորները՝ նվաճված երկրներով: Հարավում խոսքը վերաբերում է Պաղեստինին, Սիրիային ու Աֆրիկայի ափերին, արևելքում՝ Հայաստանի 387 թվականի բաժանմամբ գոյացած արևմտյան հատվածին, ինչպես նաև Այսրկովկասի՝ Բյուզանդական կայսրությանը հարող տարածքներին: Բյուզանդիային անցան Իլյուսիսի (Տավրիկա – Դանուբ) և արևմուտքի (Թրակիա ևն) տարածքները:

Այս տարածքների վրա իշխող պետությունը լեզվի ու մշակույթի առումով միատարր ու միասնական չէր: Կայսրության փոքրասիական բնակչությունը հելլենիզմի շրջանից հիմնականում հունալեզու էր, թեև ազգագավառների միջև եղած լեզվամշակութային տարբերությունները երկար ժամանակ համահարթման չէին ենթարկվել (Կապադովկիա, Փոքր Հայք, Կողքիս ևն): Երկրի արքունիքն ու քաղաքական ինստիտուտները լատինախոս ու լատինագիր էին, եկեղեցին և նրա աթոռները՝ հունախոս:

Բնակլիմայական տարբեր նկարագիր ունեցող ծայրագավառները, բնականաբար, չէին կարող ստեղծել միասնական տնտեսություն, ուստի կարևորություն ուներ նրանց միջև ձևավորվող ապրանքափոխանակությունը: Այս ամենը պայմանավորեցին այն բոլոր առանձնահատկությունները, որ բնորոշ էին Բյուզանդիայի տնտեսական, վարչական ու մշակութային պատմությանը:

Բյուզանդական կայսրության ներքին կացության վրա ազդում էին նաև քաղաքակրթական տարբեր զարգացում ունեցող հարևան ցեղերն ու ժողովուրդները, ինչպես, օրինակ՝ գոթերը, վանդալները, հոները, սարմատները, ալանները, սլավոնները և այլն:

2. ՀՈՂԱՏԻՐՈՒԹՅՈՒՆԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ, ԱՐՀԵՍՏՆԵՐԸ ԵՎ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Ավատատիրական հարաբերություններին անցման շրջանի հակասություններն ու տնտեսական երերումները չէին նպաստում բյուզանդական հասարակության կայունացմանը: Ստրկական աշխատանքը շարունակում էր գոյատևել, իսկ դա խոչընդոտում էր ավատատիրական նոր հարաբերությունների ձևավորմանը: Ճիշտ է, այլևս չէր կարելի ստրուկին վաճառել առանց նրան կցված հողի, սակայն այդ կացությունն էլ նրան ազատ շինական չէր դարձնում, այլ մոտեցնում էր կախյալ կոլոնի վիճակի: Զանգվածային դարձող կոլոնների մեջ բազմանում էին տիրույթային հողեր վարձակալողները: Իրավական առումով նրանք համարվում էին ազատներ, որոնք կարող էին ունենալ սեփականություն, հետևաբար և պետական պարտույթներ ու

հարկեր վճարելու պարտականություն: Պարտքերի կուտակումը, սակայն, նրանց զրկում էր ունեցած հողակտորից: 365 թ. հրովարտակը կոլոններին զրկում էր ինչքը օտարելու իրավունքից առանց տիրոջ արտոնման, ինչը նրանց ժառանգական կախման մեջ էր դնում: Ընդսմին՝ վարձակալներ էին հաճախ ոչ միայն անհատ կոլոններ, այլ նաև գյուղեր ու համայնքներ: Ավելի կախյալ վիճակի մեջ էին էնապոգրաֆները. նրանք ամրացված էին կալվածքին և առանց տիրոջ արտոնման չէին կարող լքել կալվածքը կամ նույնիսկ ամուսնանալ, քանի որ իրավական առումով չէին ճանաչվում որպես ազատներ:

Գյուղական համայնքները, անհատական սեփականությունից բացի, ունեին նաև հավաքական հողատիրույթ, որը կարող էր օտարվել հանուր համաձայնությամբ: Համայնքը (ազգակցական կամ հարևանական) ուներ իր ընտրովի ավագը (համայնքապետը): Համայնքն ինքն էր հավաքում տուրքը և մուծում գանձարան: Հիմնական հողային տուրքը (աննոնա) գանձվում էր բնամթերքով կամ փողային արժեքով: Մանր սեփականատերերը, մանավանդ քաղաքային բնակչության մեջ, չէին դիմանում լրացուցիչ տուրքերի ծանրությանը և ստիպված լքում էին բնակատեղիները: Այս հիմքի վրա ձևավորվեց պատրոնատի ինստիտուտը, երբ մանր հողատերը իր ունեցվածքը հանձնում էր ավելի զորեղին և, փաստորեն, վերածվում կոլոնի: Ընդ որում՝ դա տեղի էր ունենում ինչպես մասնավոր, այնպես էլ համայնքային եղանակով: Կազմավորված բոլոր պատրոնատները 397 թ. հրովարտակով համարվում էին օրինավոր: Այսպիսով՝ պատրոնատի գործադրմամբ ազատ գեղջկական և ստրկական զանգվածները գնալով փոքրանում էին, իսկ քաղաքներում ձևավորվում էր տեղական հարկերից ազատ սենատորական խավ, որոնք պետությունից արտոնություններ էին կորզում:

IV–V դարերի Բյուզանդիայում աշխարհական հողատերերի կողքին ձևավորվեց նաև խոշոր վանական–եկեղեցական հողատիրություն: Վերջիններս ազատ էին հողային հարկերից, ինչը մանր հողատերերին հրում էր դեպի վանականություն: Իբրև կանոն՝ եկեղեցապատկան հողերը վարձով էին տրվում հուսալի հողատերերին: Հիմնական վարձակալական եղանակը արտոնյալ (էմֆիտևսիս) երկարաժամկետ և կայուն վարձավճարով տալն էր: Այս հնարավորությունից օգտվողների մեջ նշանակալի թիվ էին կազմում կայսրության պաշտոնյաները, ինչը օժանդակում էր նրանց ամրագրմանը:

Արևելահռոմեական քաղաքները տնտեսական առումով ավելի երկարակյաց գտնվեցին, անցման շրջանում նրանց նվազումը կատարվեց դանդաղ, իսկ այս նոր կազմավորված պետության մեջ քաղաքները գերակշիռ էին, քան արևմտյան հատվածում: Ընդ որում՝ նրանք ոչ միայն առևտրաարհեստավորական կենտրոններ էին, այլ նաև հողագործական, ինչը քաղաքի եկամտի հիմնական աղբյուրներից էր: Պոլիսների թուլացման շրջանում դիմացկուն գտնվեցին առևտրական խաչուղիներում գտնվող քաղաքները, որպիսիք էին Կ. Պոլիսը, Ալեքսանդրիան և Անտիոքը:

Մինչ արտաքին բարբարոսական հարձակումներն ու ավարառությունները թուլացնում էին սահմանամերձ պոլիսները, որոնք կորցնում էին իրենց կառուցվածքը

և հիմնականում վերաճում պաշտպանական ամրոցների, եկվորների հաշվին աճում էր կենտրոնական մեծ քաղաքների բնակչությունը:

Նոր ձևավորվող քաղաքները այլևս պոլիսներ չէին, այլ առևտրաարհեստավորական և վարչական կենտրոններ: Նրանցում շատ էին հասութաբեր կառույցները, առևտրական ու արհեստավորական կուղպակները, իսկ կարավանատներն ու իջևանատեղիները քաղաքի պարսպից դուրս էին, ուր և ժամանում էին վաճառականները: Նոր քաղաքներից հատկապես նշանավոր էր Բյուզանդիոնին փոխարինելու եկած, Բոսֆորի ափին գտնվող մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, որն իրեն անուն տվող կայսեր օրոք արդեն, պարիսպներից բացի, առանձնանում էր շքեղ նորակառույց պալատներով, հասարակական կառույցներով: 330 թ. մայիսին տեղի ունեցավ մայրաքաղաքի հանդիսավոր բացումը, որի կառավարիչը եպարքոսն էր: Բնակչությունը պատկառելի էր՝ շուրջ մի քանի հարյուր հազար: Քաղաքի կենսագործունեության գլխավոր դժվարությունը ջրամատակարարումն էր, թեև ուներ ջրակուտակման ստորգետնյա կառույցներ: Բացի կայսերական պաշտոնեությունից՝ մայրաքաղաքում ապրում էին մեծ թվով խոշոր հողատերեր, առևտրաարհեստավորական խավի երևելի ներկայացուցիչներ, ռազմական աստիճանավորներ և, բնականաբար, աշխատավորներ (պլեբս): Մեծ թիվ էր կազմում սպասավորող արհեստավորությունը: Քաղաքներում լայն ծավալ ստացավ արտահանվող ապրանքների, այդ թվում և պերճանքի առարկաների արտադրությունը: Առանձնահատուկ կարևորություն ստացավ ծովային առևտուրը, ուստի և ծավալվեց նավաշինարարությունը, որի գլխավոր կենտրոնները մերձափնյա քաղաքներն էին:

Արևելահռոմեական քաղաքների ներքին առևտրում IV–V դարերում մեծ ծավալների էր հասել վաշխառությունը, որի դեմ պայքար էին մղում եկեղեցու նշանավոր հայրերը (ս. Բարսեղ, ս. Հովհան Ոսկեբերան): Արհեստավորները քաղաքային մանր սեփականատերեր էին, որոնց եկամուտը կապված էր շուկայում կատարած առևտրի հետ: Հարկավ, կային և եկամտաբեր արհեստանոցներ, որոնց մեկ մասի տերն էլ եկեղեցին էր: Քիչ չէին պետությանը սպասավորող արհեստանոցները (փողերանոց, զինագործարան), որոնց դերը մեծ էր, մանավանդ որ նրանց մեծ մասի աշխատանքը պայմանավորված չէր տարվա եղանակով: Պետական արհեստանոցները առաջնակարգ տեղ էին գրավում կազմավորվող արհեստակցություններում (կորպորացիաներում): Անկախ արհեստավորները, հարկերից ու պարտույթներից բացի, պետությանը պիտի տային իրենց արտադրության մեկ մասը: Արհեստակցություններն ունեին ընտրովի ղեկավար, որի իրավունքները կանոնավորված էին: Քաղաքային բնակչության մեջ ստվար թիվ էին կազմում ընչազուրկները: Աստիճանաբար մեծանում էր քաղաքային ու մունիցիպալ ազնվական խավի անջատումը հասարակական մյուս խավերից ու դասերից:

3. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՎԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ

Արևելահռոմեական կայսրության կայացման ժամանակաշրջանում քրիստոնեությունը բավականաչափ կազմավորված կրոնական համայնք ու վարդապետություն

էր, թեև բաժանված էր զանազան դավանական նախասիրություն դրսևորող խմբավորումների: Անտիկ փիլիսոփայության ազդեցությունը առավել արտահայտված էր գնոստիկների ուսմունքի հետևորդների շրջանում. նրանք ոչ միայն չէին ընդունում հանդերձյալ աշխարհի գոյությունը, այլև մերժում էին հասարակական մի քանի ինստիտուտների անհրաժեշտությունը, ինչպես, օրինակ՝ սեփականությունը: Ծիսական առումով ևս առաջին քրիստոնյաները միասնական չէին. հեթանոսությունից պահպանված զանազան սովորույթներ, տոներ ու հանդիսություններ, որոշ փոփոխություններ կրելով հանդերձ, գոյատևում էին, որոնցից կարևորը Զատկի կատարումն էր: Ձևավորվում էին քրիստոնեական վարդապետության առանձին դպրոցներ՝ աղեքսանդրյան, անտիոքյան:

Դիոկղետիանոսյան հալածանքները քրիստոնեության նկատմամբ (303 թ.) անկարող եղան արմատախիլ անել նոր ուսմունքը, ուստի Գաղերիանոս կայսեր օրոք հալածանքները դադարեցին (311 թ.), և սկիզբ առավ քրիստոնյաներին (մանավանդ զինվորականության շրջանում) հանդուրժելու մտայնություն: Փաստորեն, տեղի էր ունենում նոր վարդապետության, ուրեմն և նրա կազմակերպական արտահայտության՝ եկեղեցու (ժողովի, համայնքի) պետականորեն ճանաչման գործընթաց: Կոստանդին կայսրը 321 թ. արտոնեց եկեղեցու ինքնակայության իրավունքը՝ դրանով իսկ հնարավորություն տալով եկեղեցուն նվիրապետականորեն կազմավորվելու և ամրապնդվելու: Եպիսկոպոսները (թարգմանաբար՝ վերադիտողները) սկսեցին տնօրինել եկեղեցական թեմերին (աթոռներին) պատկանող սեփականությունը: Հելլենա–հռոմեական տաճարների քրմերի նմանողությամբ ապահարկության իրավունքի տիրացան եկեղեցականները և ձեռք բերեցին նույնիսկ դատ ու դատաստան վարելու իրավունք: Այս շրջանում արդեն կարևորություն ստացան նախ տեղական եպիսկոպոսական ժողովները, ապա, այսպես ասած, տիեզերական հավաքները, որոնք կոչված էին դավանական ու ծիսական, քրիստոսաբանական սահմանումներ տալու գործող եկեղեցիներին: Ստորակը չէր կարող հոգևորական ձեռնադրվել, եթե տերը նրան ազատ չէր արձակում:

Աստիճանաբար կազմավորվող վանական միաբանությունները դարձան յուրատեսակ ապաստարաններ, որոնց դիմում էին քրիստոնեության հարած անազատները: Ժամանակի ընթացքում եկեղեցիները սկսեցին որոշակիացնել ծիսականների շրջանակը: Գյուղական վայրերում թեմակալ եպիսկոպոսին փոխարինում էր քորեպիսկոպոսը: Ընդունվեց եպիսկոպոսների ձեռնադրության կարգը: Ընդ որում՝ IV–V դարերում թեմակալներն ընտրվում էին:

Առավել ազդեցիկ հոգևոր կենտրոններում հաստատվեցին մետրոպոլիտություններ, որոնց կառավարիչ եպիսկոպոսները (առավել ևս՝ արքեպիսկոպոսները) իրավասու էին իրենց ենթակա աթոռներում թեմակալներ նշանակելու: Ընտրությունը (կամ նշանակումը) ցկեանս էր, իսկ մինչև 692 թվականի Տրուլյան ժողովը կուսակրոնությունը պարտադիր չէր:

Արևելյան եկեղեցին IV դարի առաջին կեսին արդեն բաժանվում էր մի քանի ինքնուրույն կենտրոնների՝ Աղեքսանդրիա, Անտիոք, Կեսարիա, Եփեսոս և այլն: 325 թ.

Նիկեայի ժողովը ընդգծեց մետրոպոլիտի դերը, և այդ հիմքի վրա աստիճանաբար ձևավորվեց պատրիարքության ինստիտուտը: V դարում արդեն համընդհանուր ճանաչում ունեին Կ. Պոլսի, Անտիոքի, Աղեքսանդրիայի և Երուսաղեմի պատրիարքությունները: Հետագայում ձևավորվեց քրիստոնեական «պենտարխիան», որի կազմից դուրս գտնվողները համարվում էին հերձվածողական:

Ավտոկեֆալիայի (ինքնագլխության) և պատրիարքության ձևավորման գործում իրենց արտահայտությունը գտան քրիստոնյա աշխարհի էթնիկական, մշակութային–պատմական ինքնությունները, ինչի հետևանքով ինքնակա դարձան Հայոց միաբնակ և ասորոց նեստորական եկեղեցիները:

Շտապ լուծում պահանջող խնդիրներ քննարկելու համար հրավիրում էին մետրոպոլիտական կամ պատրիարքական ժողովներ: Կանոնական–դավանական հարցերում լուծումներ առաջարկելու իրավասությունը վերապահված էր տիեզերական ժողովին: Այստեղ էր հաստատվում «Հավատո հանգանակը», որպիսին և եղավ 325 թ. Նիկեայի ժողովը, մինչդեռ 381 թ. Կ. Պոլսի ժողովը դատապարտեց արիանոսականությունը, իսկ Եփեսոսի 3–րդ ժողովը 431 թ. քննարկեց ուղղափառության ճանաչման քրիստոնեաբանական շրջանակները և դատապարտեց նեստորականությունը: Հայոց եկեղեցին ընդունում է այս երեք եկեղեցական ժողովների որոշումների կանոնականությունը և մերժում 451 թ. Կ. Պոլսում գումարված չորրորդ և նրան հաջորդած մյուս ժողովների ընդունելի լինելը: Տիեզերական եկեղեցական ժողովների որոշումները ամփոփվեցին կանոնական ժողովածուի մեջ, որը հունական աշխարհում կոչվում է «Նոմոկանոն», իսկ հայերեն՝ «Կանոնագիրք»: Եկեղեցին ճանաչում է նվիրապետական ինն աստիճան՝ ցածրագույնը սկսելով կիսասարկավագից ու սարկավագից: Բարձրագույնը տիեզերական պատրիարքն էր՝ արքեպիսկոպոսի աստիճանով: Հայոց, վրաց և աղվանից եկեղեցիները իրենց պատրիարքներին կոչում են «կաթողիկոս», որ «կաթողիկե» (ընդհանրական) իմաստն ունի: Բյուզանդական եկեղեցին ուներ շարժական և անշարժ տոներ:

4. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ IV–V ԴԱՐԵՐՈՒՄ

Արևելահռոմեական կայսրությունը դեռևս կազմավորման առաջին իսկ տասնամյակներին ստիպված էր դիմակայել գոթերի հարձակումներին ու ներխուժումներին, որոնք ուղեկցվում էին հյուսիսային այդ ցեղախմբում սոցիալական շերտավորման խորացմամբ: Աստիճանաբար գոթերի ռազմի ջոկատները մտնում էին կայսեր ծառայության մեջ, ընդունում էին քրիստոնեություն, ստեղծում սեփական գիր ու դպրություն:

Արևելահռոմեական կայսրության արևելյան քաղաքականությունը հիմնականում ուղղված էր Իրանի ծավալումը դեպի արևմուտք՝ Բյուզանդիային հարակից տարածքներ, և Կովկաս կանխելուն: Պարսիկները երեք անգամ պաշարեցին Մծբինը, սակայն Բյուզանդիան համակիրներ էր շահում պարսից դեմ պայքարող հայ և կովկասյան քրիստոնյաների շրջանում: Փորձեր էին արվում համակիրներ շահե-

լու նաև հարավային սահմաններին մոտ բնակվող արաբական ցեղերի շրջանում: Երկրի ներքին կացությունը բարդացավ Հուլիանոս Ուրացողի իշխանության տարիներին (361–363 թթ.): Իբրև հաջողակ ռազմական գործիչ՝ նա համակրություն էր վայելում, բայց չէր ընդունում նորահաստատ քրիստոնեական վարդապետությունը և փորձում էր վերականգնել հելլենիզմով ու փիլիսոփայությամբ հարստացած հեթանոսությունը: Եվ այնուամենայնիվ, եկեղեցիներն ու եկեղեցականությունը հալածանքի չէին ենթարկվում: Զգուշավոր Հուլիանոսը, սակայն, չէր ուզում նաև թշնամացնել քրիստոնյաներին: Փորձում էր շահել քաղաքային բնակչության պաշտպանությունը:

Հուլիանոս Ուրացողը վախճանվեց պարսիկների դեմ արշավանքի ժամանակ: Նրան փոխարինած նոր կայսր Հովիանոսը (363–364 թթ.), լինելով Նիկեայի հավատո հանգանակի կողմնակից, չեղյալ հայտարարեց իր նախորդի կարգադրությունները, և կրկին կայսերական քաղաքականության հիմքում դրվեց քրիստոնյաների հետ դաշինքը: Հովիանոսից հետո գահ բարձրացած Վաղեսը (364–378 թթ.) չեղյալ հայտարարեց Հուլիանոսի կողմից հողային տիրույթները քաղաքներին վերադարձնելու վերաբերյալ կարգադրությունները, ինչը դժգոհությամբ ընդունվեց ու պատճառ դարձավ ապստամբության, որի շնորհիվ 365 թ. սեպտեմբերի 28–ին կայսր հռչակվեց Հուլիանոսի ազգական Պրոկոպիոսը: Վաղեսն ու Պրոկոպիոսը միմյանց նորամուծությունները մերժող վարքագիծ էին դրսևորում և բնակչությանը գրգռում իրար դեմ: Ի վերջո Պրոկոպիոսը ձերբակալվեց և 366 թ. մայիսի 26–ին ենթարկվեց մահապատժի:

IV դարի 70–ական թվականներին Բյուզանդիան հարկադրված էր պատերազմական գործողություններ վարել երկրի մի շարք հարևանների հետ: Նորից ակտիվացել էին գոթերը, և Վաղեսը հարկադրված եղավ ընդունել նրանց անկախությունը: Արևելքում Հայաստանի համար մղվող պայքարն ավարտվեց 387 թ. Պարսկաստանի հետ կնքած հաշտությամբ, որով Հայաստանը բաժանվեց երկու մասի: Բյուզանդիայի գերիշխանության տակ էր նաև Կողքիսը:

Թեոդոսիոս Ա–ի կայսրության տարիներին (379–395 թթ.) Բյուզանդիան բանակցությունների մեջ մտավ կայսրությանը սպառնացող գերմանական ցեղապետերի հետ և, զիջումների գնալով (ապահարկություն, զինվորական կազմավորումների պահպանում և այլն), զբաղվեց երկրի ներքին խնդիրներով: Պարապի մատնված մշակովի հողատարածքները տնտեսության ծառայեցնելու համար այլուր ապաստանած մշակները (կոլոնները) հարկադրաբար վերադարձվում էին իրենց տերերին, իսկ վերջիններս եթե երկու տարվա ընթացքում չէին մշակում հողը, ապա զրկվում էին նրա սեփականատերը լինելուց: Սենատորների ունեցած հողային իրավունքները պաշտպանելու և լրացուցիչ հարկերից ազատելու համար նշանակվեցին հատուկ վերակացու պաշտոնյաներ:

Թեոդոսիոսի օրոք հրավիրված Կ. Պոլսի երկրորդ տիեզերական ժողովը 381 թ. մերժեց եղած հերձվածողությունները: Կ. Պոլսի Աթոռին նստեց նշանավոր Հովհան Ոսկեբերանը: Արիոսականությունը մերժվեց: Կոնսուլ դարձած Եվտրոպիոսը կարողացավ բարբարոսների դեմ բավարար ուժեր կուտակել և ճնշել նրանց կազմակերպած խռովությունը: Սակայն նա ևս հարկադրված եղավ 399 թ. հրաժարական տալ, որին փոխարինեց Կ. Պոլսի ավագանու ներկայացուցիչ Ավրելիանոսը: 400 թ. Կ. Պոլսի ազնվականությունը գոթերին քշեց քաղաքից և իշխանությունն առավ իր ձեռքը: Կայսրության համար եղան կայունության և աճի բարենպաստ մի քանի տարիներ[12]:

408 թ.՝ կայսր Արկադիոսի (395–408 թթ.) մահից հետո, նրան փոխարինեց մանկահասակ Թեոդոս Բ Փոքրը (408–450 թթ.), որի օրոք պարսից արքա Հազկերտ Ա–ը (399–420 թթ.) հոժարեց հանդես գալ որպես կայսեր հովանավոր՝ դադարեցնելով ընդսմին քրիստոնյաների հալածանքը: Ավելին՝ 412 թ. նա նույնիսկ հանդուրժեց հաստատել Պարսից ինքնակա քրիստոնեական Աթոռ: Կայսեր անունից գործող Թեոդոսի ավագ քույր Պուլքերիան 416 թ. կատարեց պաշտոնեության զտում, փոփոխություններ տեղի ունեցան նաև բանակում. բարբարոսներից սկսեցին բանակ վերցնել անհատապես, որով կանխվում էր նրանց կազմած ջոկատների վտանգավորությունը: Սակայն Պուլքերիայի նորամուծությունները դիմադրության էին արժանանում կայսրուհի Եվդոքսիայի խմբի ներկայացուցիչների մոտ: Հասուն տարիքի հասած կայսրը ջանաց կենտրոնացնել իշխանությունը, և 429–438 թվականների միջոցին մշակվեց ու գործարկվեց կայսերական կառավարման կանոնագիրքը:

Այդ տարիներին փոխզիջումների ճանապարհով հարթվեցին նաև Պարսկաստանի հետ ծագող խնդիրները՝ գերազանցապես Հայաստանի ու Այսրկովկասի առնչությամբ: Պարսկաստանը հաշտվեց Հայաստանում ինքնուրույն գիր ու գրականություն ունենալու և Բյուզանդիայի քաջալերմամբ դպրոցներ հիմնելու փաստի հետ: Սակայն ժամանակ առ ժամանակ խաթարվում էին Բյուզանդիայի հարաբերությունները Արևմտյան կայսրության (իմա՝ Հռոմի) հետ՝ երբեմն անգամ հանգելով պատերազմական գործողության: Դրանք կարգավորվեցին արևմտահռոմեական Վաղենտինիանոս Գ կայսեր (425–455 թթ.) օրոք:

Այս տարիներին կայսրությանը մտահոգող ներքին խնդիրը քրիստոնեության շրջանակներում աշխուժացած դավանական վեճերն էին: Մայրաքաղաքի և Աղեքսանդրիայի վանականությունը մերժում էր Կ. Պոլսի պատրիարք Նեստորի (428–431 թթ.) ուսմունքը, որ մեծ տարածում ուներ արևելյան ծայրագավառներում: Կյուրեղ Աղեքսանդրացու հետևորդները 431 թ. Եփեսոսի տիեզերական ժողովում հալածեցին նեստորականներին, սակայն վերջիններս պաշտպանություն գտան Իրանի սահմաններում: Կյուրեղին Աղեքսանդրիայի Աթոռին փոխարինած Դիոսկորոսը վայելում էր Թեոդոս Բ–ի հովանավորությունը, ուստի Քրիստոսի բնության հարցում Եվտիքիոսի հարուցած վեճին պատասխանողը նա էր և Կ. Պոլսի պատրիարք Փլավիանոսը (446–449 թթ.): 449 թ. Եփեսոսի ժողովը վերջինիս դատապարտեց աքսորի: Թեոդոսի վերահաս մահվամբ խնդիրները առավել բարդացան, քանի որ Պուլ-

[12] Բնակչության մեջ մեծ հեղինակություն էր ձեռք բերել Կ. Պոլսի արքեպիսկոպոս Հովհան Ոսկեբերանը (398–404 թթ.), որ կայսերական արքունիքի հետ հակամարտության պատճառով աքսորվեց Հայաստան, որտեղ և մահացավ երեք տարի անց:

քերիան մերժեց այս ժողովի որոշումները: Մարկիանոսի օրոք կայացավ չորրորդ տիեզերական ժողովը (451 թ.), որի ժամանակ Հռոմի Լևոն պապի պատվիրակները կարողացան դավանական խնդիրներում հաջողության հասնել՝ ընդունել տալով երկաբնակության բանաձևը, ընդսմին պապը կտրականապես պահանջեց ճանաչել Հռոմի եպիսկոպոսի գերակայությունը մյուսների հանդեպ: Ասորիքի ու Եգիպտոսի Աթոռները, ինչպես նաև քիչ անց Հայոց եկեղեցին չընդունեցին Քաղկեդոնի ժողովի այդ որոշումները և հորջորջվեցին «միաբնակ»:

Այս տարիներին բյուզանդական դիվանագիտությունը մեծ ջանքեր գործադրեց հոների հարձակումների վտանգից երկիրն ապահով պահելու համար: Նրանք կարողացան Աթիլայի սպառնալիքը ուղղել դեպի արևմուտք, իսկ 453 թ.՝ նրա մահից հետո՝ ազատվել վերահաս վտանգից: Համեմատաբար հանգիստ պարագաներում Մարկիանոսը կարողացավ ուշադրության առնել արևելքում գոյացած խնդիրները և ձնշում գործադրել արևմտավոցաց թագավորության վրա:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍ Ա–Ի ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՍՈՑԻԱԼ–ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Անաստաս կայսեր (491–418 թթ.) վարած քաղաքականության շնորհիվ Բյուզանդիան տնտեսապես առաջընթաց ապրեց: Այն շարունակվեց Հուստինոս Ա–ի կայսրության տարիներին (518–527 թթ.), երկրում աշխուժացան Հռոմեական միասնական կայսրության սահմաններում Բյուզանդիայի ընդարձակման տրամադրությունները: Նոր կայսրը վճռական էր, եկեղեցական վարդապետությունների հանդեպ՝ հանդուրժող, դիվանագիտական խաղերին՝ հմուտ: Կյանքի վերջին տարիներին կայսրության փաստական վարումը նա հանձնել էր իր զարմիկ Հուստինիանոսին: 527 թվին որդեգրեց նրան և դարձրեց կայսերակից: Պրոկոպիոս Կեսարացին ուրվագծում է Հուստինիանոսի հակասական, բայց և անհողդողդ խառնվածքը: Հուստինիանոսը տարված էր Հռոմեական կայսրության փառքն ու հզորությունը հետ բերելու գաղափարով ու այն իրագործելու վճռականությամբ: Խիստ զգուշավոր էր և կասկածամիտ, բայց և միաժամանակ՝ բարենորոգումների ու վարչակառուցվածքային փոփոխությունների հետևորդ: Գեղեցկությամբ ու խելամտությամբ փայլում էր կայսրուհի Թեոդորան, որը նաև դիվանագիտական գրագրություն էր վարում և մասնակցում դավանական քննարկումների:

Պրոկոպիոսի հաղորդմամբ՝ Հուստինիանոս Ա–ը սահմանափակել էր սենատի իրական իշխանությունը, ուստի հաճախ վերախմբագրում էր սենատորների որոշումները: Հուստինիանոսը քաջալերում էր հողատերերի լայն շրջանակներին և նպաստում կոլոնների ամրացմանը տերունի հողին: Այդ պարագան հանգեցրեց հողի երկարաժամկետ վարձակալման՝ Էմֆիթևսիսի ինստիտուտի ծավալմանը, ընդ որում՝ վարձակալվող հողի չափը կարող էր տարբեր լինել՝ զանգվածայինից մինչև հողակտոր: Նա հետևողականորեն պայքար էր տանում խոշոր հողատերերի կողմից միջին և մանր սեփականատերերի հողի գրավման դեմ, թեև երբեմն էլ անտեսում էր իրողությունը:

Կայսրը հովանավորում էր հոգևորական բարձր դասին և եկեղեցիներին ու վանքերին առատ կալվածքներ նվիրում, որի դիմաց ուղղափառ հոգևորականությունը պաշտպանում էր արևմուտքի հանդեպ նրա վարած քաղաքականությունը:

Հուստինիանոս Ա–ի օրոք Բյուզանդիայում զարգացում ապրեցին արհեստագործությունը և առևտուրը՝ ընդգրկելով ընդհուպ Աֆրիկայի խորքերը, Ասիայի երկրները, Ղրիմը: Հատկապես եկամտաբեր էր արևելքի հետ հում մետաքսի առևտուրը,

որով զարգանում էին երկրի մետաքսե կտավի արտադրությունն ու արտահանումը: Պարսիկների միջնորդությամբ հումքը ներմուծում էին Չինաստանից: Մերձսևծովյան բնակավայրերից ու Կովկասից Բյուզանդիայի վաճառականները տանում էին պերճանքի առարկաներ, յուղ, հացահատիկ, ստրուկներ ու մթերքներ: Փաստորեն, վաճառականության նկատմամբ հովանավորությունը բարձրացված էր պետական քաղաքականության մակարդակի: Հուստինիանոսի կայսրության տարիներին աննախընթաց զարգացում ապրեց քաղաքների կառուցապատումը, պալատների ու պարիսպների վերականգնումը: Ճարտարապետության պատմությունը նրան է պարտական Կ. Պոլսում Ս. Սոֆիայի տաճարի կառուցման համար (532–537 թթ.):

2. ՕՐԵՆԱԴՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գահակալության առաջին իսկ տարիներից Հուստինիանոսը զբաղվեց կայսրության առջև ծառացած խնդիրների հստակեցմամբ ու օրենսդրական կարգավորմամբ: 528 թ. խստիվ արգելվեց գավառում ծառայության մտած մեծավորներին հողային ձեռքբերումներ կատարել ծառայության վայրերում: Մեկ տարի անց արգելք դրվեց մասնավոր բանտերի գործունեության վրա: 531 թ. Հուստինիանոսն անցկացրեց պետական ու արքունապատկան հողատիրույթների կառավարման ձևերի փոփոխություն՝ այն հանձնարարելով կայսերական վերակացուների, որոնք վերածվեցին կայսերական տան կամակատարների: Լրացուցիչ եկամուտներ ապահովելու համար հմուտ տնտեսագետ Հովհան Կապադովկացին սահմանեց լրացուցիչ հարկեր ու արտակարգ մուծումներ: Լայնորեն կիրառվեց հացի հարկադիր գնումը բնակչությունից և այլն: Հետևողականություն ցուցաբերվեց անտեր թողած հողամասերի՝ հարևան հողամասին միացնելու և նրանցից տուրքը գանձելու գործում, որ կոչվում էր *էպիբոլե*: Հուստինիանոսի ժամանակ գործադրվեց «օդային» հարկը՝ *այերիկոն*, որը գանձարանին բերում էր 3 հազար ֆունտ ոսկի: 10–15 քայլից ավելի մոտ կառուցված տների տերերը հարկադրված էին կամ քանդել, կամ տուգանք վճարել (ուրիշի բաժին օդը խլելու համար):

Հուստինիանոսի վարած պատերազմները գերիներ հայթայթելու փորձված եղանակ էին, մանավանդ Հյուսիսային Աֆրիկա կատարած արշավանքների ժամանակ: Նույնը վերաբերում է և դեպի Իտալիա, և Իսպանիա կատարած արշավանքներին, որոնց մասին խոսում է պատմիչ Պրոկոպիոսը: Ստրուկներ բերելու և վաճառքի հանելու կայուն աղբյուրներ էին Սև ծովի առափնյա շրջանները: Ընդ որում՝ Հուստինիանոսը սահմանել էր մշտական գործող ստրկագին՝ 20–70 նոմիսմա: Բյուզանդական ավազանին խուսափում էր մարտնչող ցեղից սերող ստրուկ գնելուց, ուստի ստրկավաճառը պիտի հայտներ ստրուկի էթնիկական պատկանելությունը: Ամենից բարձր էին գնահատվում ներքինացված ստրուկները, կրկնակի ավելի, քան ոսկերչություն իմացող երիտասարդ ստրուկները:

Տիրոջ համաձայնությամբ բանակում ծառայության մտած ստրուկը պարտադիր դառնում էր ազատ: Օրենքը արգելում էր բյուզանդական ծագում ունեցող ստրուկի ներքինացումը: Ստրկական աշխատանքի ձևերը VI դարում ընդգրկում էին տնային

ծառայությունից մինչև հողագործություն ու արհեստագործություն: Ի դեպ, երբեմն կոլոններն էլ ստրուկներ էին ունենում, և որևէ մեկը իրավունք չուներ առանց տիրոջ համաձայնության աշխատեցնելու նրանց:

Հուստինիանոսի օրենսգիրքը արտոնում էր վաճառել կալվածքը, եթե նրա հետ օտարվում էին նաև հողակտորին ամրացված կոլոնները: Այդ նույնը վերաբերում էր նաև կտակ անելուն, նվիրատվությանը: Կոլոնները պետական եկամտի կարևոր աղբյուր էին, մանավանդ ամրագրվածները, որոնք վճարում էին և՛ հողատիրոջը, և՛ նրա միջնորդությամբ՝ գանձարանին:

Աղբյուրների տեղեկությամբ Եգիպտոսի կոլոնները տեր էին դառնում իրենց աճեցրած բերքի 1/4 կամ 1/5-ին: Լինում էին դեպքեր, երբ պարտույթը ստիպված էին տեղափոխել հաջորդ տարի:

Հուստինիանոսը աչքաթող չէր անում Բյուզանդիայի սահմաններ ընդգրկված այլէթնիկ միջավայրում տիրող ավանդական սովորույթները ևս բյուզանդական օրինակարգով վերանայելու խնդիրը: Մասնավորապես նշանավոր են նրա այն նովելները, որոնք վերաբերում են Հայաստանին: Ելնելով հայոց սովորութական իրավունքի նորմերից՝ մեծատունների դուստրերը ամուսնանալիս հայրենական կալվածքից իբրև օժիտ բաժին չէին ստանում: Հուստինիանոսը վերանայեց այդ կարգը: Մեկ այլ նովելում նա փորձեց արգելակել Հայաստանից կատարվող արտագաղթը, որը երկիրը սակավաբնակ էր դարձնում:

Հուստինիանոսի գահակալության շրջանը իր պատմական անդրադարձն ունեցավ Բյուզանդիայի ազդեցության ոլորտն ընդգրկված հարևան ու հեռու բոլոր երկրների վարչական, քաղաքական, տնտեսական ու մշակութային կացության վրա:

3. ԴԱՎԱՆԱԿԱՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հուստինիանոսի ներքին քաղաքականությունը հանգում էր երեք կարևոր սկզբունքային մոտեցման՝ պետական, օրենսդրական և եկեղեցական միասնական հաստատության: Արևմուտքում կատարվելիք նվաճումները նրան թելադրում էին կայուն կապեր պահպանել Հռոմի պապի հետ: Նա քաջալերում էր ուղղափառ հոգևորականությանը, նվիրատվություններ կատարում, կառուցում եկեղեցիներ ու վանքեր, բայց և միաժամանակ՝ պատրիարքներին դիտում իբրև կայսեր ծառաներ: Եկեղեցիների տնտեսական կարողության համար Հուստինիանոսը հատուկ նովելով (VII) արգելեց եկեղեցական ինչքի օտարումը (տուն, դաշտ, այգի), միաժամանակ կարգավորեց աշխարհականության ու եկեղեցու փոխհարաբերությունները, ճանաչեց բարեգործական հաստատությունների իրավական կարգավիճակը՝ տեղի եպիսկոպոսի վերահսկողությամբ: Այդ ամենն ուղեկցվում էր հերետիկոսների, հերձվածողների ու ուրացողների հանդեպ կիրառվող անողոք խստություններով:

Արիոսականության հետ միաժամանակ կայսրության տարբեր հատվածներում զորեղ էր նաև մանիքեության աղանդը, որոնց դավանած վարդապետությունները դժվարություններ էին ստեղծում կայսրության և եկեղեցու համար: Պակաս վտանգ չէին ներկայացնում Հայաստանում, Միջագետքում ու անգամ մայրաքաղաք Կ. Պոլ-

սում տարածված միաբնակության հետևորդները, որոնք մերժում էին Քաղկեդոնի որոշումները: Խնդիրը մասամբ բարդանում էր նրանով, որ միաբնակները հովանավորություն էին գտնում կայսրուհի Թեոդորայի մոտ: Հուստինիանոսը գտնում էր, որ «ճշմարիտ աստծուն» չծառայող հեթանոսներն ու պաշտոնական եկեղեցուց հերձվածողները չպիտի օգտվեն երկրային բարիքներից: Նրանք զրկվում էին ժառանգություն ստանալու, ինչպես նաև ժառանգություն թողնելու իրավունքից: Հեթանոսները, հուդայականները չէին կարող քրիստոնյա ծառաներ (ստրուկներ) պահել: Կայսրության համար առավել ատելի էին մանիքեացիներն ու մոնթանականները: Հետևանքն այն էր, որ ծայր առավ այլ դավանանքին պատկանողների զանգվածային արտագաղթ կայսրությունից: Համեմատաբար մեղմ էին Պաղեստինի հրեաների հանդեպ, բայց նրանց էլ արգելվում էր պետական–վարչական պաշտոն զբաղեցնել կամ քրիստոնյա ծառա ունենալ, ինչպես նաև ամուսնանալ քրիստոնյայի հետ: Հուստինիանոսի առաջին իսկ հրովարտակներից մեկով փակվեցին Սամարական սինագոգները: Այս իրողությունը առաջ բերեց հետևորդների ընդվզում, որի ժամանակ նույնիսկ այրվեցին ու ավերվեցին եկեղեցիներ: Պրոկոպիոս Կեսարացին շարժման ղեկավար Հուլիանոսին ավազակ է հայտարարում: Ընդվզման վտանգավորությունը այն էր, որ կացությանը ակնդետ հետևում էր կայսրության ախոյան Պարսկաստանը: Մալալայի տեղեկությամբ՝ պաղեստինյան այդ շարժումը դադարեցվեց 20 հազար սամարացու սպանությամբ ու նույնքան մարդու ստրկացնելով: Կենդանի մնացողները զրկվեցին քաղաքացիական բոլոր իրավունքներից: Կեսարիայի եպիսկոպոս Սերգիոսի միջնորդությամբ 551 թ. խստությունները մասամբ մեղմացվեցին, սակայն քսան տարի անց նորից վերականգնվեցին սամարացիների ու հրեության դեմ եղած հալածանքները:

Հուստինիանոսը քաղաքական նկատառումներով որոշ ժամանակ մեղմ էր վերաբերվում նեստորականներին ու միաբնակներին, սակայն 540–ականների վերջերին նրանց ևս հայտարարեց հերձվածողներ: Արգելվեց պատարագ մատուցելը, տաճարները փակվեցին: Նրանց արգելվեց հողամասեր գնել կամ վարձակալել: Այս փաստը դժգոհության և դիմակայության շարժում առաջ բերեց, և Հուստինիանոսը ստիպված եղավ հաշտության եզրեր որոնել նեստորական ու միաբնակ բարձրաստիճան հոգևորականության հետ: Նրա վարած կրոնական քաղաքականությունը շատ հոգևորականների, առևտրականների ու արհեստավորների հարկադրեց լքել երկիրը, հատկապես Կ. Պոլիսը, Երուսաղեմը և այլն:

4. ՀՈՒՍՏԻՆԻԱՆՈՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

532 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև կնքվեց «Հավերժական խաղաղություն» (այդպես էր կոչվում պայմանագրում ժամկետ նշված չլինելու պատճառով):

Հուստինիանոսը ծրագրել էր վերականգնել Հռոմեական կայսրության երբեմնի հզորությունը: Կայսրը համոզված էր, որ արևմուտքում եղած էթնիկական–պետական կազմավորումների (վանդալներ, օստգոթեր, ֆրանկներ ևն) միջև շարունակվող հակասություններն ու կռիվները ներքուստ թուլացրել էին նրանց, և հասել էր իր ծրագիրն իրագործելու ժամանակը:

Որոշ տատանումներից հետո՝ 533 թ., սկսեց պատրաստվել պատերազմի. առաջիկա արշավանքը նա մատուցում էր իբրև Հյուսիսային Աֆրիկայի բնակիչներին ազատագրելու առաքելություն: Ջորքի առաջնորդությունը հանձնարարեց հմուտ զորավարի անուն վաստակած Վելիսարիոսին: Արշավը ուղեկցողների թվում էր հետագայում այն նկարագրող Պրոկոպիոսը: Վելիսարիոսի նավատորմը պաշտպանություն էր գտնում տեղական որոշ ուժերի կողմից. սեպտեմբերի 13–ին նրանց առաջ բացվեցին Կարթագենի դարպասները: Սակայն վանդալների դիմադրությունը վերջնականապես կոտրված չէր, և հաջորդ բախումը տեղի ունեցավ 534 թ. մարտին, երբ նրանց առաջնորդը վերջնականապես հանձնվեց: Կոստանդնուպոլսում տեղի ունեցան այդ հաղթանակը նշանավորող հանդիսություններ: Հուստինիանոսը շտապեց իր տիտղոսաշարին ավելացնել «վանդալների» և «աֆրիկացիների» կայսր հորջորջումը:

Առաջին քայլերից մեկը Հռոմեական կայսրության ժամանակի հարկային համակարգի վերակենդանացումն էր: Սկսեցին հալածանքի ենթարկվել այստեղ հաստատված արիոսականները, մովսեականները, դոնատականները: Հարկային բեռը, ինչպես նաև գրաված հողերի նկատմամբ իբրև կայսեր կամ գանձարանի սեփականություն վարվելը 536 թ. առաջ բերեցին դժգոհության զորեղ ալիք: Ապստամբողների մեջ էին նաև կայսրության տնտեսական ու կրոնական քաղաքականությունից դժգոհ բյուզանդացիները: Բյուզանդական բանակին Սիցիլիայից օգնության հասած Վելիսարիոսը օգտագործեց ապստամբների շարքերում եղած հակասությունները և փորձեց թուլացնել նրանց դիրքերը: Տևական և իրար հաջորդող խռովություններից ու փոփոխակի ձեռքբերումներից հետո՝ 546 թ., հայազգի Արտավանը կարողացավ վերջ դնել խռովություններին և հնազանդությանն ըմբոստացողներին, որով Աֆրիկան վերջնականապես վերադարձվեց Բյուզանդիային (548 թ.):

Հուստինիանոսը չհապաղեց բարենորոգումներ կատարել Աֆրիկայում: 552 թ. հրատարակած նովելով վանդալների ժամանակ հողամասերից փախած կոլոնները պահպանում էին իրենց ազատությունը, սակայն 558 թ. լրացումով՝ Բյուզանդիայի կողմից Աֆրիկայի գրավումից հետո փախուստի դիմածները վերստին պիտի վերադառնային իրենց տերերի մոտ: Նորամուծությունների շարքում հատկապես հիշատակելի է բուռն շինարարությունը, հատկապես քաղաքաշինությունը:

Աֆրիկայում ունեցած ձեռքբերումները ոգևորեցին կայսրին: 535 թ. բաղնիքում արքայադստեր խեղդամահ անելը պատեհ առիթ տվեց կայսրին՝ միջամտելու օստգոթական կառավարության գործերին: Այդ նույն տարում խզվեցին նրանց հարաբերությունները: Իտալիան դարձավ բյուզանդական նվաճողականության հիմնական թիրախը: Պատերազմական գործողությունների սկիզբը Բյուզանդիայի համար հաջողակ էր: Սիցիլիայի գրավումը Օստգոթական թագավորությանը զրկում էր հացի շտեմարանից: Վերահաս ապստամբությունից զգուշացած Հռոմի տիրակալը ստիպված էր Հուստինիանոսի առաջ զանազան զիջումների գնալ: 539 թ. կայսրու-

թյան դեսպանի հետ նա գաղտնի պայմանագիր կնքեց, որով պատրաստ էր Հուստինիանոսին հանձնել ողջ Իտալիան՝ փոխարենը հարուստ կալվածքներ և դրամական փոխհատուցում ստանալու պայմանադրությամբ:

Հարավային Իտալիայի բնակչությունը բյուզանդացիներին ընդունում էր իբրև ազատարարների, սակայն բավական համառ դիմադրություն ցուցաբերեցին նեապոլցիները: Իտալիայի միջնաշխարհի դիմադրությունը շարունակվեց ևս երկու տարի: Խնդիրն այն է, որ բյուզանդական զորախմբերի միջև գործողության լիակատար համաձայնեցում չկար: Վելիսարիոսի զորքը և նրան օգնության եկած հայազգի Նարսեսի (Ներսեսի) 7 հազարանոց բանակը գործում էին միմյանցից գրեթե անկախաբար, ուստի Հուստինիանոսը ստիպված եղավ Ներսեսին ետ կանչել (539 թ.): Այս ընթացքում գոթերը փորձում էին դաշնակիցներ որոնել Բյուզանդիայի հարևանների մեջ: Նրանք դիմեցին Խոսրով Ա Անուշիրվանին, որը 540 թ. խախտեց «հավերժական խաղաղությունն» ու պատրաստվեց պատերազմի: Սակայն այդ շրջանում մեջտեղ եկան ֆրանկները, որոնք, փաստորեն, հարվածեցին հակամարտողներից երկուսին էլ: Շատ չանցած՝ օստգոթերի արքան հարկադրված եղավ հանձնվել բյուզանդացիների ողորմածությանը, որով ավարտվեց հնգամյա պատերազմը: Այժմ Հուստինիանոսը կարող էր կոչվել նաև «գոթերի արքա»: Կայսրն այստեղ էլ մտցրեց բյուզանդական վարչական ու ֆինանսական համակարգ, որով և հարուցեց որոշակի դժգոհություն, ինչը և 542–543 թվականներին հանգեցրեց զինված դիմադրության: 550 թ. նրանք երկրորդ անգամ գրավեցին Հռոմը և դուրս քշեցին բյուզանդական զորքերին՝ նրանց ձեռքին թողնելով մի քանի առափնյա քաղաքներ:

Հուստինիանոսը չհաշտվեց ստեղծված կացության հետ և պատրաստվեց Իտալիա կատարելիք նոր արշավանքի՝ գլխավոր զորապետ նշանակելով վերոհիշյալ Նարսեսին, որը հանդուգն ու մտացի գործչի համարում ուներ: Նրա ահռելի զորքը 552 թ. շարժվեց և Ռավեննայում միացավ այնտեղ գտնվող բյուզանդական բանակին: Օստգոթերի արքան խուճապի մատնվեց Նարսեսի հեծելազորի անակնկալ հարձակումից և վերքից արյունաքամ լինելուց զոհվեց՝ իր ողջ ինչքը թողնելով Նարսեսին: Օստգոթերի դիմադրությունը շարունակվում էր, սակայն Նարսեսը հաջողությամբ գրավում էր գավառները: Շուտով տիրացավ Հռոմին և զորքն ուղղեց դեպի Հարավային Իտալիա: Օստգոթերը ստիպված եղան հաշտության գնալ՝ Բյուզանդիային հանձնելով ողջ Իտալիան, իսկ իրենք կամ մտնում էին Նարսեսի բանակ ծառայության, կամ լքում Իտալիան:

553–554 թվականներին Բյուզանդիայի կողմից գրավված Իտալիայի վրա հարձակվեց ֆրանկների ու ալեմանների 75 հազարանոց բանակը, գրավեց երկրի հյուսիսային մասը և սկսեց շարժվել հարավ: Նարսեսը հաջողեց հավաքել մեծ զորք (նրանց միացան նաև գոթերի մնացած զորական ուժերը) և Վոլտուռնո գետի ափին գլխովին ջախջախել հարձակվող բարբարոսներին: 555 թ. Իտալիան հիմնականում արդեն նվաճված էր, իսկ իշխանությունը կենտրոնացած էր գլխավոր հրամանատար, զորավար Նարսեսի ձեռքում, որը տեղում կայսեր փաստացի փոխանորդն էր: Մինչև այդ արդեն «գործնական հրահանգ» էր տրվել երկրի վարչակառավարական

կառույցի և ներքին քաղաքականության վերաբերյալ, որով հողերը վերադարձվում էին խոշոր հողատերերին, թույլատրվում էր երկիր վերադառնալ իտալական ազնվականության մնացորդներին, իսկ արիոսական հոգևորականության ունեցած ինչքը տրվում էր կաթողիկե եկեղեցուն:

Օստգոթերի տիրապետությունը տապալելուց հետո Բյուզանդական կայսրությունն իր հայացքն ուղղեց դեպի Իսպանիայի վեստգոթերը, որոնց նվաճումը Միջերկրականը կվերածեր ներքին ծովի, իսկ նավատորմը կդառնար առավել զորեղ: Բյուզանդական բանակի ղեկավարությունը հանձնվեց հռոմեական պատրիկիոս Պետրոս Լիվերիոսին: Վեստգոթերի թագավոր Աթանագիլդը կարողացավ կազմակերպել հակակայսերական ուժերը և կանգնեցնել Լիվերիոսի առաջխաղացումը, ապա պայմանավորվածության հասնել Հուստինիանոսի հետ: Վերջինս Իսպանիայի գրավմամբ դադարեցրեց իր նվաճումները արևմուտքում՝ չփորձելով այլևս գործողություններ ձեռնարկել Գաղիայի ֆրանկական զորեղ պետության դեմ:

Այլ ընթացք ունեին Բյուզանդիայի հարաբերությունները երկրի արևելքում, ուր Սասանյան Պարսկաստանը ծավալուն ու ռազմունակ պետություն էր, որի կարողության աղբյուրներից մեկը Չինաստանի ու Հնդկաստանի հետ տարանցիկ առևտուրն էր: Բյուզանդիան ու Իրանը մրցակցող պետություններ էին, որոնց շահերը հաճախ էին բախվում Միջագետքում ու Կովկասում: Բյուզանդիան քաջալերում էր իրանական գերիշխանության տակ գտնվող այսրկովկասյան քրիստոնյաներին, քանի դեռ նրանք հալածվում էին Սասանյանների կողմից, բայց դադարեց նրանց պաշտպանելուց, երբ վերջիններս հարեցին նեստորականությանն ու միաբնակությանը:

Քանի դեռ Մազդակյան շարժումը տարածուն էր, շահ Խոսրով Անուշիրվանը ջանում էր չմեծացնել Բյուզանդիայի հետ ունեցած առճակատումը, սակայն նրանց հետ հաշվեհարդարից հետո հաճախակի դարձան հակամարտող պետությունների ընդհարումները սահմանային գոտիներում՝ Սիրիա, Միջագետք, Հայաստան, Կողքիս: Երկու տերություններն էլ ունեին ներքին խնդիրներ, ուստի հանգեցին 532 թ. պայմանագրի ստորագրմանը, թեև նրանց միջև եղած մրցակցությունը շարունակվեց, մանավանդ Հուստինիանոսի այլուր ունեցած հաջողությունների պարագայում: 540-ական թվականներին Հայաստանի բյուզանդական մասում կայսրության վարած քաղաքականությունը (մանավանդ հարկերի ծանրությունը) առաջ բերեց պայքարի խլրտում, ուստի տեղական ազնվականության մեջ գտնվեցին պարսից դաշնակցությունը գերադասողներ:

Անուշիրվանը Հուստինիանոսին մեղադրեց հոների հետ գաղտնի բանակցություններ ունենալու և արաբներին Իրանի դեմ հրահրելու համար և 540 թ. դուրս եկավ «Հավերժական խաղաղության» պայմանագրից: Նա ինքը գլխավորեց ահռելի բանակը և գրավեց ու ավերեց Անտիոքը: Վերադարձի ճանապարհին Խոսրովը նոր քաղաքներ գրավեց և ավարառություններ կատարեց: Հաջորդ տարվա ընթացքում պատերազմական գործողություններ տեղի ունեցան Լազերի երկրում (Ճանիքում), որի բնակիչները նպաստեցին պարսիկների հաջողությանը: Հուստինիանոսը ստիպված էր գործողություններ սկսել Միջագետքում, որով Անուշիրվանին ստիպեց

նահանջել: 545 թ. կայսրը գերադասեց թեկուզ ծանր պայմանով խաղաղության դաշինք ստորագրել: Սակայն շատ չանցած՝ լազերը դարձյալ նախընտրեցին կայսրության հպատակությունը: Մարտեր տեղի ունեցան Պետրա ամրոցի մատույցներում: Պարսիկների կողմը բռնեցին աբխազները: Իրադրությունը չփոխեց բյուզանդական հրամանատարների կողմից լազերի Գուբազ թագավորի սպանությունը: Գահը անցավ Գուբազի եղբորը՝ Գուաֆին, և լազերը պահպանեցին բյուզանդամետ դիրքորոշումը: 555 թ. պարսկական 60 հազարանոց բանակը արյունալի մարտեր մղեց Փազիս (այժմ՝ Փոթի) քաղաքի համար և պարտություն կրեց, որը ստիպեց Անուշիրվանին 561 թ. հաշտություն կնքել 50 տարով: Նա հրաժարվեց Սև ծովի ափ դուրս գալուց և պահպանեց Վիրքում ու Սվանեթում իր գերիշխանությունը: Հայաստանը, Միջագետքը և Սիրիան պահպանեցին իրենց գոյավիճակը (status quo):

Հուստինիանոսի գահակալության վերջին տարիներին կայսրության ուշադրության առարկան Խերսոնեսն էր, ինչպես նաև հոների, ալանների, գոթերի ու սլավոնների հետ վարելիք քաղաքականությունը: Բյուզանդիայի դիրքերը Տավրիկիայում համեմատաբար ամրապնդվեցին: Կայսրը ձեռնամուխ եղավ սահմանային տարածքներում ամրոցների շինարարությանը: Տեղական բնակչության դժգոհությունը բյուզանդական տիրապետությունից, սակայն, գնալով աճում էր:

5. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Բյուզանդիայի վարած արտաքին նվաճողական արշավանքներն ու ներքին սոցիալական շարժումները հյուծում էին կայսրության ուժերը և նպաստավոր իրավիճակ ստեղծում կայսրության հյուսիս-արևելքից սպառնացող ցեղերի հարձակումների համար: VI դարի երկրորդ կեսին Բյուզանդիան դժվարությամբ էր դիմակայում Դանուբի հյուսիսից ներխուժող սլավոնական ու ավարական ցեղերին, որոնք, հաղթահարելով բյուզանդական ռազմուժին, արշավում էին բալկանյան տարածքներ ու հաճախ նաև բնակություն հաստատում այնտեղ: Սլավոնների ճնշումը հատկապես ուժեղացավ VI դարի 50-ական թվականներից: Բյուզանդիայի համար ահեղ հակառակորդներ էին ավարական ցեղախմբերը, որոնք, հաստատվելով Դանուբի հյուսիսային տարածքներում, մշտական սպառնալիքի տակ էին պահում Բյուզանդիային: Նրանց հաջողվեց Բյուզանդիային ստիպել հարկ վճարել ավարներին՝ բարբարոսների հարձակումներից նրա սահմանները պահպանելու համար: Ավարները, աստիճանաբար մեծացնելով ճնշումը Բյուզանդիայի վրա, ստիպում էին ավելացնել վճարվող հարկը՝ խաղաղությունը պահպանելու նպատակով, կամ պահանջում բնակության համար տարածքներ տրամադրել կայսրության սահմաններում: Բյուզանդիայի դեմ պայքարում ավարները հաճախ գործում էին սլավոնների հետ համատեղ: 570-580-ական թթ. նրանց հաջողվեց մի շարք ավարառություններ իրականացնել Թրակիա, Պանոնիա և բուն Հունաստան՝ Հելլադա: Հարկը մեծացնելու վերաբերյալ ավարական խաքանի պահանջին Մորիկ կայսեր (582-602 թթ.) կողմից չընդառաջելուն ի պատասխան՝ 586 թ. ավարա-սլավոնական խոշոր արշավանք ձեռնարկվեց Բյուզանդիա, և պաշարվեց Թեսալոնիկեն: Բյուզանդիային երբեմն հաջողվում էր

համաձայնության հասնել ավարների հետ՝ համատեղ արշավելու սլավոնների դեմ, սակայն դա ևս չէր ապահովագրում Բյուզանդիային սլավոնների և ավարների հետագա արշավանքներից: Միայն պարսկա-բյուզանդական պատերազմի ավարտից հետո Բյուզանդիան հնարավորություն ստացավ Հայաստանից զորքեր փոխադրելու եվրոպական ճակատ և մարտերը տեղափոխելու Դանուբից հյուսիս: Փոփոխակի հաջողություններով ընթացող պայքարը շարունակվեց նաև VII դարի առաջին տասնամյակներին, որի ընթացքում սլավոններին հաջողվեց ներթափանցել և բնակություն հաստատել Մակեդոնիայում, Թրակիայում և բալկանյան այլևայլ նահանգներում՝ մեծացնելով կայսրության ներքին անկայունությունը:

VI դարի երկրորդ կեսին Բյուզանդիայի արտաքին քաղաքական վիճակը ծանրացավ ինչպես արևմուտքում, այնպես էլ արևելյան սահմաններին: 568 թ. լանգոբարդները գրավեցին հյուսիսային ու կենտրոնական Իտալիան: 584 թ. վեստգոթերը գրավեցին Կորդովան Իսպանիայում: Արևելքում պարսկա-բյուզանդական հակամարտության հիմնական թիրախը ռազմավարական կարևոր դիրք ունեցող Հայաստանն էր: Պարսից լծի դեմ հայոց ազատագրական շարժմանը օժանդակելու պատրվակով Բյուզանդիան պատերազմական գործողություններ սկսեց Իրանի դեմ: 573 թ. պարսից թագավոր Խոսրով Անուշիրվանը Մծբինի մոտ ջախջախեց բյուզանդական զորքին: Սակայն Որմիզդ Դ-ի կառավարման ժամանակ (579-590 թթ.) Պարսկաստանում ծայր առած ներքին անկայունության հետևանքով բյուզանդական բանակը հնարավորություն ստացավ գերակայության հասնելու Պարսկաստանի նկատմամբ և գրավելու Հայաստանի մեծ մասը: Բահրամ Չուբինի գլխավորած ապստամբներին 590 թ. հաջողվեց սպանել Որմիզդ Դ-ին և գերի վերցնել գահաժառանգ Խոսրով Փարվեզին: Բյուզանդացիների օժանդակությամբ գրավելով գահը՝ Խոսրով Բ Փարվեզ (590-628 թթ.) թագավորը 591 թ. կնքված պայմանագրով ճանաչեց Բյուզանդիայի իրավասությունը Հայաստանի նկատմամբ մինչև Արարատյան դաշտ ու Վանա լիճ սահմանագծով:

Չնայած այդ հաջողությանը՝ Բյուզանդիայի ներքին ու արտաքին վիճակը մնում էր ծանր: Ավելի դժվարանում էր մեկ կենտրոնից կայսրության կառավարումը: Կայսրության ծայրամասերում կառավարիչները ավելի մեծ լիազորություններ ձեռք բերեցին: Ռավեննայի էքսարխությունը սկիզբ առավ արդեն 584 թ.: 591 թ. հիշատակվում է նաև Կարթագենի էքսարխությունը: Էքսարխները միավորում էին ռազմական ու քաղաքացիական վարչական լիազորությունները: Մորիկ կայսրը զգալիորեն կրճատեց արքունիքում շքեղությունների վրա ծախսումները, բնակչության դժգոհությունը թուլացնելու նպատակով նվազեցրեց բնակչությունից գանձվող հարկերը, միաժամանակ հոգ էր տանում քաղաքների բարեկարգման համար: Բանակի մատակարարումների նվազեցումը պատճառ դարձավ խոր դժգոհությունների: 602 թ. Դանուբի մոտ գտնվող և սլավոնների ու ավարների դեմ կռվող բանակի մատակարարման կրճատումը պատճառ դարձավ հուզումների, և զորքը խռովարար Փոկաս զորավարի գլխավորությամբ շարժվեց դեպի Կ. Պոլիս՝ հրահրելով նաև մայրաքաղաքի բնակչությանը: Կայսրը և նրա որդիները մահապատժի ենթարկվեցին, Փոկա-

սը գրավեց գահը (602–610 թթ.)։ Իշխանափոխության կողմնակիցների նկատմամբ հանդուրժողականությունը կարճ տևեց։ Աստիճանաբար աճող դժգոհությունները զենքի միջոցով ճնշելու՝ Փոկասի ձեռնարկումները խոր հուզումներ առաջացրին կայսրության մեջ։ Դաժան հետապնդումները մեծ տարածում ստացան կայսրության արևելյան մասերում, որտեղ դրանք տարածվեցին հատկապես միաբնակ դավանանքի հետևորդների նկատմամբ։ Կայսրությունում, փաստորեն, ընթանում էր քաղաքացիական պատերազմ, ինչը նպաստավոր իրադրություն էր ստեղծում արտաքին թշնամիների ներխուժման համար։

ԳԼՈՒԽ ԵՐԿՈՐԴ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VII–IX ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԴԱՎԱՆԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ։ ՊԱՏԿԵՐԱՊԱՇՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Հուստինիանոս Ա կայսեր գահակալության ժամանակ ծառացել էր կայսրության մեջ հոգևոր և քաղաքական միատարրություն հաստատելու խնդիրը։ Տիեզերական 4 ժողովները բանաձևել էին քրիստոնեական վարդապետության հիմնադրույթները, և այժմ անհրաժեշտ էր, ի մի բերելով դրանք, ստեղծել միասնական և համապարփակ դավանաբանական համակարգ։ Հենց այս նպատակով 553 թ. Կոստանդնուպոլսում գումարվել է V տիեզերական ժողովը, որի ժամանակ վերստին դատապարտվել ու նզովվել են Ապողինարի, Նեստորի և Եվտիքեսի հերձվածները։ Դավանաբանական տեսակետից խիստ կարևոր է նաև Որոգինեսի և նրա հետևորդների դատապարտումը։ Ժողովի կողմից մերժվել էր նրանց վարդապետությունը, որի համաձայն՝ գոյություն ունի հոգիների նախագոյություն և վերամարմնավորում, որ Հիսուսի հոգին հավիտենական է, և այն դեռ մարդեղությունից առաջ արդեն միավորված էր աստվածային Բանի հետ, և որ նա ապագայում խաչվելու է նաև դևերի փրկության համար։ Մերժվել է նաև Որոգինեսի այն տեսակետը, ըստ որի՝ Աստծո կողմից արարված աշխարհը սկզբնապես զուտ հոգևոր էություն ուներ։ Եվ քանի որ ներկայիս նյութական տիեզերքը ի հայտ է եկել հոգիների անկման հետևանքով, Որոգինեսը համոզված էր, որ վերջիվերջո արարածի նախնական կատարելությունը վերականգնվելու է համայն գոյի ապամարմնավորման հետևանքով։

680–681 թթ. Կոստանդնուպոլսում գումարվեց VI տիեզերական ժողովը, որը դատապարտեց այսպես կոչված միակամությունը, որի համաձայն՝ Քրիստոսն ունի երկու բնություն, բայց մեկ աստվածային կամք։ Այս վարդապետությունը մի կառույց էր, որ ստեղծվել էր զուտ քաղաքական նպատակներին հասնելու համար։ Բանն այն է, որ Քաղկեդոնի ժողովից հետո քրիստոնյա Արևելքը, ի դեմս հայ, ասորի և ղպտի եկեղեցիների, կտրականապես մերժել էր երկաբնակությունը՝ խզելով կապերը քաղկեդոնականությունը որդեգրած կայսերական եկեղեցու հետ։ Դա մեծապես թուլացնում էր Բյուզանդական կայսրության քաղաքական ազդեցությունն Արևելքում, ինչը, բնականաբար, բյուզանդացիների համար ընդունելի չէր։ Սակայն այս դեպքում պետության շահերը բախվեցին եկեղեցու շահերին, որի առավել արմատական ներկայացուցիչներն, անշուշտ, չէին կարող հանդուրժել քաղաքական հաշվարկների նման անսքող ներխուժումը հավատքի ոլորտի մեջ։ Միակամության դատապարտման և մերժման գործում վճռական դեր են խաղացել Երուսաղեմի պատրիարք Սոփրոնիո-

սը, Հռոմի պապ Մարտինը և Ագաթոնը, և հատկապես Մաքսիմոս Խոստովանողը, որը հասարակ մի վանական էր ու համարվում է բյուզանդական եկեղեցու մեծագույն սրբերից և աստվածաբաններից մեկը:

Դավանաբանական վեճերը Բյուզանդիայում շարունակվեցին նաև VI տիեզերական ժողովից հետո: Խնդրո առարկա դարձան սրբապատկերները, որոնք պահվում, և որոնց երկրպագում էին ինչպես տաճարներում, այնպես էլ հավատացյալների տներում: Շատերը մերժում էին սրբապատկերների այդ պաշտամունքը՝ համարելով այն կռապաշտության դրսևորում: Պայքարը սրբապատկերների դեմ սկսվեց Իսավրական դինաստիայի կայսրերի գահակալության օրոք ու տևեց շուրջ 120 տարի: Պատկերամարտական շարժման մեջ կարելի է առանձնացնել 2 փուլ: Առաջին փուլը սկսվում է 726 թ.՝ Լևոն Գ կայսեր օրոք, և ավարտվում է 780 թ., երբ կայսրուհի Իրինան դադարեցրել է պատկերապաշտների հալածանքները: Պատկերապաշտությունը վերահաստատվել է 787 թ. Նիկեայում գումարված VII տիեզերական ժողովի կողմից, որի որոշման համաձայն՝ սրբապատկերները պիտի պահվեն տաճարներում և տներում և նույնքան պաշտելի պիտի լինեն, որքան Ավետարանը և խաչը: Պատկերամարտության երկրորդ փուլը սկսվել է 815 թ.՝ հայազգի Լևոն Ե-ի օրոք, և ավարտվել է 843 թ.՝ կայսրուհի Թեոդորայի օրոք, երբ պատկերամարտները վերջնականապես պարտություն են կրել: Ի նշանավորումն այս իրադարձության՝ բյուզանդական եկեղեցին սահմանել է հատուկ տոն, որը կոչվում է «ուղղափառության հաղթանակ»: Պատկերամարտության դեմ պայքարի առաջին փուլում վճռական դեր է խաղացել մեծ աստվածաբան Հովհաննես Դամասկացին (675–749 թթ.), իսկ երկրորդ փուլում՝ հայտնի վանահայր Թեոդորոս Ստուդիտեսը (759–826 թթ.):

Պատկերապաշտների կողմից ստեղծվել է ծավալուն աստվածաբանական գրականություն, որտեղ նրանք փորձում են հիմնավորել իրենց գաղափարները: Ի պաշտպանություն պատկերապաշտության՝ նրանք առաջ են քաշել 3 հիմնական դրույթներ.

1. Պատկերապաշտները նշում էին, որ երբ հավատացյալը համբուրում է սրբապատկերը կամ էլ խոնարհվում նրանց առջև, նա պաշտում է ոչ թե փայտը կամ ներկերը, որից այն բաղկացած է, այլ նրա վրա պատկերված Աստծուն: Ըստ այդմ՝ սրբապատկերները ոչ թե կուռքեր են, այլ ճշմարիտ Աստծո խորհրդանիշեր: Քրիստոնյաները պաշտում են նրանց, բայց երկրպագում են միմիայն Աստծուն:

2. Սրբապատկերները եկեղեցու վարդապետության անբաժանելի մասն են կազմում: Նրանք նման են յուրատեսակ բաց գրքերի, որոնք հիշեցնում են Տիրոջ մասին: Աստվածաբանական երկերը մատչելի են ոչ բոլորի համար, սակայն յուրաքանչյուր ոք կարող է եկեղեցի մտնել, և այնտեղ գտնվող սրբապատկերների վրա տեսնել քրիստոնեական վարդապետության ամբողջ բովանդակությունը: Հետևաբար սրբապատկերներն անգնահատելի ուսուցողական նշանակություն ունեն:

3. Սրբապատկերները նաև սերտորեն կապված են ուղղափառ դավանանքի հետ: Նրանք ոչ թե սոսկ հանդուրժելի են եկեղեցական պաշտամունքի մեջ, այլ կենսական կարևորություն ունեն նրա համար: Ըստ պատկերապաշտության ջատագովների՝ սրբապատկերների պաշտամունքը բխում է Աստծո Որդու մարդեղության դավանանքից:

Եվ պատկերապաշտները, և պատկերամարտները հավասարապես համոզված էին, որ Աստծո էությունն անճանաչելի և անտեսանելի է և չի կարող պատկերվել որևէ մեկի կողմից: Սակայն պատկերապաշտները համոզված էին, որ աստվածային Բանի մարդեղությունը հնարավորություն է ընձեռել պատկերելու Աստծուն, քանի որ Բանը մարմին եղավ: Ծնունդ առավ կրոնական-եկեղեցական կերպարվեստի զարգացումը:

Պատկերամարտության պարտությունը նշանավորեց բյուզանդական եկեղեցու պատմության կարևորագույն փուլերից մեկի ավարտը, քանի որ տիեզերական 7 ժողովների արդյունքում նրա վարդապետությունը ստացավ իր վերջնական տեսքը:

2. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ VII ԴԱՐՈՒՄ ԵՎ VIII ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ներքաղաքական իրադրությունը Բյուզանդիայում VII դարի սկզբին միանգամայն ձեռնտու էր պարսից Խոսրով Փարվեզին, որը խոովարարներին պատժելու և արդարությունը վերականգնելու պատրվակով պատերազմ սկսեց Բյուզանդիայի դեմ, գրավեց Հայաստանը, Ասորիքը և Փոքր Ասիան: Պարսկական բանակը հայտնվեց Բոսֆորի ափին: Բյուզանդական արքունիքի քաղաքականությունից դժգոհությունը ընդգրկել էր նաև Հյուսիսային Աֆրիկան: Կարթագենի նավատորմը էքսարխի որդու՝ Հերակլի հրամանատարությամբ 610 թ. սեպտեմբերին մոտեցավ Կ. Պոլսին: Քաղաքային բնակչության օժանդակությամբ Հերակլի զորքը ներխուժեց մայրաքաղաք, և հոկտեմբերի 5-ին կայսր Փոկասը ենթարկվեց մահապատժի: Նույն օրը կայսր հռչակվեց Հերակլը (610–641 թթ.):

Հերակլի գահակալությունը տեղի ունեցավ Բյուզանդիայի համար ծանր ժամանակաշրջանում: Հերակլի կառավարման սկիզբը նշանավորվում էր արտաքին քաղաքական անհաջողություններով: Թրակիան ամբողջությամբ ավերվել էր սլավոնների կողմից: Գրեթե ողջ Բալկանները գտնվում էին ավարների ու սլավոնների գերակայության ներքո: Պարսկա-բյուզանդական պայքարը շարունակվում էր արևելքում: Պարսից բանակը 614 թ. գրավեց Երուսաղեմը և ենթարկեց ավերածությունների ու գերեվարության: Կողոպտվեցին քրիստոնեական սրբությունները: Պարսից բանակը, գրավելով Փոքր Ասիան, կրկին հասավ Կ. Պոլսի մատույցներին: Հերակլը, անձամբ ներկայանալով պարսից զորահրամանատարին, խնդրեց միջնորդել Խոսրով Բ-ին հաշտություն կնքելու համար: Խոսրով Բ-ն անդրդվելի էր, ավելին՝ նրա զորքերը 619 թ. ներխուժեցին նաև Եգիպտոս, պաշարեցին Ալեքսանդրիան և գրավեցին այն: Իսպանիայում վեստգոթերը գրավեցին բյուզանդական վերջին տիրույթները: Իտալիայում Ռավեննայի էքսարխությունը ձգտում էր անջատվելու կայսրությունից: Հերակլը ստիպված էր դիմել արմատական քայլերի՝ կայսրությունը վերջնական փլուզումից փրկելու համար: Անհրաժեշտ էր ստեղծել նոր բանակ և կենտրոնական իշխանության ազդեցությունը կայսրության ծայրամասերում ամրապնդելու համար իրականացնել ռազմավարչական բարեփոխումներ: Մարտունակ բանակ

ստեղծելու նպատակով նա որոշեց օգտագործել փոքրասիական բնակչության ռազմուժը: Փոքրասիական նահանգներում ստրատիգների հրամանատարությամբ ստեղծվեցին ռազմավարչական միավորներ, այսպես կոչված՝ բանակաթեմեր, որտեղ զինվորական դասը ձևավորվում էր նաև տեղական աշխարհազորայինների՝ ստրատիոտների հաշվին: Միաժամանակ բանակում ուժեղացվեց հեծելազորն, ու ստեղծվեցին նետաձիգների ջոկատներ:

619 թ. Հերակլը հաշտություն կնքեց ավարական խաքանի հետ Բալկաններում և բյուզանդական բանակը փոխադրեց Փոքր Ասիա: 622 թ. հարձակման անցնելով պարսկական զորամասերի դեմ՝ Հերակլը սկսեց հաջողություններ արձանագրել. գրավվում էին փոքրասիական քաղաքները, և բյուզանդական բանակը շուտով հասավ մինչև Կիլիկիա և Հայաստան: Պարսկական բանակը պարտություն կրեց, բյուզանդական զորքերը 623 թ. ներխուժեցին Դվին:

Կարճատև դադարը հնարավորություն ընձեռեց պարսկական կողմին վերադասավորելու ուժերը և անցնելու հակահարձակման: Պարսից բանակը, շրջանցելով Լազիկայում գտնվող բյուզանդական բանակին, արշավեց արևմուտք, հասավ մինչև Քաղկեդոն, որտեղից արդեն երևում էր Կոստանդնուպոլիսը: Համաձայնության գալով ավարների հետ՝ որոշվեց գրոհով գրավել քաղաքը: Քաղաքի պաշտպանությունը համակարգում էր պատրիարք Սերգիոսը: Առաջինը գրոհեցին ավարները, սակայն պարտություն կրելով՝ նահանջեցին: Պարսիկների զորահրամանատար Շահրավարազը ստիպված էր վերադառնալ դեպի Ասորիք:

Բյուզանդիայի դեմ պայքարում եթե պարսիկները փորձում էին դաշինքի գնալ ավարների հետ, ապա Հերակլը փորձեց պարսիկների դեմ համաձայնության գալ խազարների հետ: 627 թ. Հերակլը ներխուժեց Պարսկաստան, Նինվեի մոտ ջախջախեց Խոսրով Բ-ի բանակին և գրավեց պարսից արքայի նստավայր Դաստակերտը: Պարսից արքայի որդիներից մեկը՝ Կավադ-Շիրոեն, 628 թ. դավադրություն կազմակերպեց Խոսրով Բ-ի դեմ: Խոսրովը մահապատժի ենթարկվեց, և գահ բարձրացած Կավադ-Շիրոեն շտապեց հաշտության պայմանագիր կնքել բյուզանդացիների հետ՝ նրանց զիջելով Հայաստանը, Միջագետքը, Ասորիքն ու Եգիպտոսը:

Այսպիսով՝ բանակային ռեֆորմի շնորհիվ վարձկանների փոխարեն աշխարհազորի հիման վրա վերակառուցված բանակի միջոցով Բյուզանդիային հաջողվեց գերակայություն ստանալ իր երկու հզոր հակառակորդների դեմ: Ավարներն ու պարսիկները խիստ թուլացան և այլևս վտանգավոր չէին Բյուզանդիայի համար:

Հերակլ կայսրը, խորացնելով բանակաթեմերի կայացման գործընթացը, բանակը համալրում էր ոչ միայն նախկինում կախյալ գյուղացիներով, այլև ծառայության էր ներառում նաև սլավոններին՝ զինվորական ծառայության դիմաց բանակաթեմերի շրջանակներում նրանց տրամադրելով հողային սեփականություն:

Արաբական խալիֆայության ստեղծումն ու նվաճողական արշավանքները լուրջ սպառնալիք էին Բյուզանդիայի համար: 636 թ. օգոստոսի 20-ին արաբները գլխովին ջախջախեցին բյուզանդական 40 հազարանոց բանակը, և Բյուզանդիան կորցրեց Ասորիքը, արաբները գրավեցին Անտիոքը, Պաղեստինյան Կեսարիան և Եդեսիան:

640 թ. արաբները ներխուժեցին նաև Հայաստան, գրավեցին Դվինը: 641 թ. արաբները հաստատվեցին Եգիպտոսում և Տրիպոլիում: Բյուզանդիան կարճ ժամանակում կորցրեց այն ամենը, ինչ գրավել էր մեծ ջանքերի գնով: Հերակլը վախճանվեց 641 թ.: Գահը անցավ նրա հաջորդ Կոնստանտ Բ-ին (641-668 թթ.):

Արաբ զորավար Մուավիան 647 թ. գրավեց Կապադովկիան և կողոպտեց Փռուգիան: Արաբական նորաստեղծ նավատորմը արշավեց Հռոդոս կղզին և գերակայություն ձեռք բերեց Միջերկրականում: 652 թ. արաբների գերիշխանությունը ճանաչեցին նաև Հայաստանը և Վրաստանը: Չնայած Բյուզանդիայի հյուսիսային սահման համարվում էր Դանուբը, սակայն Բալկանյան թերակղզում գերակայությունը անցել էր սլավոններին:

Արաբական նվաճումների սպառնալիքի պայմաններում առավել կարևորվում էր քրիստոնեական աշխարհի միասնության հանգամանքը և մասնավորապես դավանական անհանդուրժողականության հաղթահարման խնդիրը: Քաղկեդոնականների և հակաքաղկեդոնականների միջև դավանական խնդիրներում համաձայնություն հաստատելու փորձ էր, ինչպես արդեն նշվել է, այսպես կոչված միակամության ուսմունքի առաջադրումը, ըստ որի՝ Հիսուս Քրիստոսը, երկու էության առկայությամբ հանդերձ, օժտված է մեկ աստվածային կամքով, ինչը ենթադրում էր փոխզիջման հնարավորություն երկաբնակ և միաբնակ եկեղեցիների միջև: Այն թեև պաշտպանություն էր գտնում Կոնստանտ Բ կայսեր կողմից, սակայն 649 թ. Լատերանի ժողովը դատապարտեց այդ գաղափարը: Կոնստանտ Բ-ն չէր կարող հանդուրժել Հռոմի պապի դիմադրությունը Բյուզանդիայի գերիշխանությունը Իտալիայում վերականգնելու ջանքերի դեմ: Ռավեննայի զորքերը մտան Հռոմ և ձերբակալեցին պապ Մարտինիոսին: Վերջինս աքսորվեց Խերսոն, որտեղ և մահացավ 656 թ.:

VII դարի երկրորդ կեսին արաբական հաղթարշավների պայմաններում Բյուզանդիային այնուամենայնիվ հաջողվեց պահպանել կայսրության հետագա գոյատևումը երաշխավորող իր հիմնական ներուժը:

659 թ. արաբ զորավար Մուավիան (խալիֆա՝ 661-680 թթ.) հաշտության պայմանագիր կնքեց Բյուզանդիայի հետ: Կայսրը 663 թ. մայրաքաղաքից փոխադրվեց Սիցիլիա, որտեղ, սակայն, 668 թ. սպանվեց դավադրության հետևանքով: Կայսր հռչակվեց նրա որդին՝ Կոստանդիանոս Դ-ը (668-685 թթ.):

VII դարի երկրորդ կեսից Բյուզանդիայի փոքրասիական տիրույթներում տեղի էր ունենում սոցիալ-տնտեսական վերափոխումների գործընթաց, ինչը պայմանավորված էր արաբական արշավանքների վերսկսման հանգամանքով: Մուավիայի խալիֆա օծվելուց հետո դեպի Փոքր Ասիա վերսկսված արաբական արշավանքներին դիմագրավումը կատարվում էր հիմնականում տեղի բնակչության ռազմուժի միջոցով: Հակառակորդին սեփական հնարավորություններով դիմագրավելու խնդիրը հանգեցնում էր բնակչության համախմբման, ինչն իր հերթին բանակաթեմերը վերածում էր ինքնակազմակերպվող պաշտպանական միավորների: Չկարողանալով հաստատվել Փոքր Ասիայում՝ Մուավիան որոշում է գրավել Բյուզանդիայի ծովափնյա տարածքները՝ Կ. Պոլիսը բյուզանդական նահանգներից մեկուսացնելու հա-

մար: Արաբական նավատորմը գրավում է Կիպրոս, Հոռոդոս, Քիոս կղզիները, իսկ 672 թ. արաբները մտնում են նաև Զմյուռնիա: Փոքրասիական ողջ ծովափը անցնում է արաբների վերահսկողության ներքո: Արաբական նավատորմը 674 թ. մոտենում է Կ. Պոլսին, սակայն մի շարք գրոհներից հետո չկարողանալով գրավել քաղաքը՝ ստիպված է լինում 678 թ. մեծ կորուստներով թողնել քաղաքի պաշարումը և Բյուզանդիայի հետ կնքել 30-ամյա հաշտության պայմանագիր: Արաբները պարտավորվում էին Բյուզանդիային վճարել ամենամյա հարկ՝ 3 հազար ոսկեդրամ, 50 գերի և 50 ձի:

680-ական թթ. Բյուզանդիային, սակայն, սպասում էր նոր անհաջողություն իր հյուսիսային սահմաններում: Դեռևս 60-70-ական թթ. դանուբյան տարածքներ հաճախակի արշավանքներ էին իրականացնում բուլղարական (պրոտոբուլղարական) ցեղերը Ասպարուխ խանի գլխավորությամբ: Նրանց դիմակայելու և սպառնալիքը չեզոքացնելու նպատակով կայսր Կոստանդիանոս Դ-ը 680 թ. արշավանք կազմակերպեց նրանց դեմ, որը, սակայն, ավարտվեց անհաջողությամբ, և կայսրը ստիպված էր 681 թ. հաշտություն կնքել նրանց հետ և հարկ վճարել: Դանուբից հարավ ընկած տարածքներում, այսպիսով, առաջացավ Բուլղարական պետություն, որը 681 թ. պաշտոնապես ճանաչվեց Բյուզանդիայի կողմից:

VII դարում Բյուզանդիայի տարածքային կորուստները իրենց խոր անդրադարձն ունեցան կայսրության սոցիալ-տնտեսական, էթնիկական ու մշակութային զարգացման գործընթացի վրա: Բյուզանդիան, կորցնելով կապը ինչպես լատինական, այնպես էլ երուսաղեմյան, ասորական, եգիպտական և հայկական տարածաշրջանների հետ, ավելի ներփակվեց հունական մշակութային միջավայրով, որտեղ գերակայություն ստացավ հունական տարրը, և հունարենը դարձավ պետական պաշտոնական լեզու: Արտաքին աշխարհի հետ առևտրատնտեսական հարաբերությունների նվազումը հանգեցրեց քաղաքների անկմանը: Անկում է արձանագրվում նաև արվեստի, շինարարության ու հոգևոր-մշակութային ոլորտներում: Խորանում է դավանական ու գաղափարական անհանդուրժողականությունը: Աստիճանաբար ամրապնդվում է հողագործական արիստոկրատիան, կարևոր դերակատարում են ձեռք բերում բանակաթեմերը: Իրենց ձեռքը վերցնելով քաղաքացիական, դատական ու հարկային կառավարումը՝ թեմերի առաջնորդ ստրատիգները երկրամասերում աստիճանաբար վերածվեցին լիակատար տիրակալների: Սկզբնապես Փոքր Ասիայի տարածքը բաժանված էր երեք բանակաթեմերի՝ Անատոլիկ, Արմենիակ և Օպսիկիոն: Զորքը հավաքագրվում էր ազատ գյուղացիներից, որոնք և կազմում էին բանակի կորիզը: Յուրաքանչյուր գյուղացի-ռազմիկ (ստրատիոտ) ներկայանում էր սեփական ձիով ու հանդերձանքով: Ստրատիգները վերածվում էին կայսեր համար ահեղ մրցակիցների: Բյուզանդիայի վարչաքաղաքական նման ապակենտրոնացումը, սակայն, ուղեկցվեց ծայրամասային քաղաքների անկմամբ, ինչը և խոչընդոտեց միասնական պետության հնարավոր կազմալուծմանը: Պետության միասնականությունը պահպանվում էր ռազմավարական նպաստավոր դիրք և միջազգային առևտրի ու զարգացած արհեստների կենտրոն հանդիսացող Կ. Պոլսի կենտրոնաձիգ միտումները խթանող դերակատարման շնորհիվ: Կենտրոնախույս ուժերը գերակշռում չստացան:

Կոստանդիանոս Դ-ի մահից հետո գահ բարձրացավ նրա 16-ամյա որդին՝ Հուստինիանոս Բ-ը (685-695, 705-711 թթ.): Բյուզանդական արքունիքին հաջողվեց հնազանդեցնել Թրակիայի սլավոններին և իրականացնել նրանց վերաբնակեցումը բյուզանդական վերակացուների կողմից կառավարվող առանձին համայնքներով՝ զինվորական ծառայություն իրականացնելու պարտադրանքով: Բյուզանդական արշավանքներն այնուհետև շարունակվեցին Հայաստանում և Կիպրոսում, ապա ուղղվեցին դեպի Ասորիք: Խալիֆայությունը ստիպված էր Հայաստանի մի մասը Բյուզանդիային զիջելու գնով հաշտություն կնքել Բյուզանդիայի հետ: Հուստինիանոսի կառավարման ժամանակ մեծացան հարկերը, որոնք առավել անտանելի դարձան Հայաստանում: Հարկային կեղեքումը հանգեցրեց սոցիալական ու դավանական խոր ճգնաժամի, ինչը առավել սուր արտահայտություն գտավ արաբա-բյուզանդական ռազմական հակամարտության ու բախումների գոտի հանդիսացող Հայաստանում՝ հանգեցնելով աղանդավորության՝ որպես սոցիալական բողոքի ու պայքարի տարածմանը: Շարժումը լայն տարածում էր ստանում նաև Բյուզանդիայում: Կ. Պոլսում եկեղեցական ժողովը 692 թ. խիստ պատիժներ սահմանեց աղանդավորների և ուժեղացրեց վերահսկողությունը հոգևորականության, այդ թվում նաև վանականության նկատմամբ: Միաժամանակ բյուզանդական իշխանություններն ու եկեղեցին փորձում էին ճնշել այդ շարժումները դաժան հաշվեհարդարներով: Երկրում ծայր առան կասկածամտությունն ու դժգոհությունը, ձեռնարկվեցին հալածանքներ նաև Կ. Պոլսի բնակչության նկատմամբ: Կազմակերպված դավադրության արդյունքում 695 թ. վերջին Հուստինիանոս Բ-ը գահընկեց արվեց և աքսորվեց Խերսոն: Կայսր հռչակվեց դավադրության ղեկավարությունը ստանձնած Լեոնտիոսը (695-698 թթ.), որը մինչ այդ իր զորավարական ունակություններով աչքի էր ընկել Հայաստանում: Լեոնտիոսի կառավարումը, սակայն, երկարատև չեղավ: Նրան հաջողվեց Կարթագենը ետ գրավել արաբներից, սակայն շուտով այն կրկին անցավ արաբներին: Բյուզանդական նավատորմի հրամանատար Ապսիմարը անհաջողությունը վերագրեց Լեոնտիոսին, ինքն իրեն հռչակեց կայսր, նավատորմը ուղղեց դեպի Կ. Պոլիս և չորսամյա պաշարումից հետո գրավեց քաղաքը: Լեոնտիոսը աքսորվեց վանք, և Ապսիմարը դարձավ կայսր՝ անվանակոչվելով Տիբերիոս Գ (698-705 թթ.): Ապսիմարը Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունը ուղղորդեց դեպի Հայաստանի և Ասորիքի համար արաբների դեմ պայքարի ճակատ: Բյուզանդացիները Սամոսատի մոտ տպավորիչ հաղթանակ տարան արաբների դեմ, զգալի հաջողությունների հասան նաև Հայաստանում: Արաբական տիրապետությունից դժգոհ հայ բնակչությունը ևս աջակցում էր Բյուզանդիային: Սակայն այդ ժամանակ Խերսոնեսից փախուստի դիմած Հուստինիանոս Բ-ին հաջողվեց 705 թ. համաձայնության գալ բուլղարների հետ և նրանց օժանդակությամբ գրավել Կ. Պոլիսը: Իր երկրորդ կառավարման շրջանում Հուստինիանոսին չհաջողվեց ձևավորել կանոնավոր բանակ և նշանակալի հաջողություններ արձանագրել արտաքին քա-

ղաքականության մեջ: Բյուզանդիան պարտություններ կրեց արաբներից, թուլացան դիրքերը Իտալիայում, Խերսոն ուղարկված զորամասերը հրաժարվեցին կայսրին ենթարկվելուց, և այնտեղ կայսր հռչակվեց հայազգի Վարդանը՝ անվանակոչվելով Ֆիլիպպիկոս: Վարդանը շուտով զորքով շարժվեց դեպի մայրաքաղաք և առանց դիմադրության գրավեց Կ. Պոլիսը: Աջակիցներից ու դաշնակիցներից լքված Հուստինիանոսը սպանվեց 711 թ. դեկտեմբերին: Վարդան-Ֆիլիպպիկոսը 712 թ. հրավիրեց եկեղեցական ժողով, որտեղ միակ ընդունելի դավանանք հայտարարվեց միակամությունը: Կայսեր այդ քաղաքականությունը դժգոհությամբ ընդունվեց բյուզանդական օրթոդոքս քաղկեդոնական ավագանու և հոգևորականության կողմից, ինչն իր արտահայտությունը գտավ կայսեր դեմ կազմակերպված դավադրության ձևով: 713 թ. հունիսի 3-ին տեղի ունեցած հեղաշրջման հետևանքով կայսրը ձերբակալվեց և կուրացվեց, իսկ հաջորդ օրը կայսր հռչակվեց Անաստաս Բ-ը: Քաղկեդոնական հոգևորականության ու ավագանու հաղթանակը ակնհայտ էր, ինչը, սակայն, հարուցեց երկարատև ու ծանր քաղաքացիական պատերազմ: Փոքրասիական Օպսիկիոն թեմի բնակչությունը հրաժարվեց ենթարկվելուց, ապստամբեց և, կայսր հռչակելով հարկահավաք Թեոդոսիոս Բ-ին, բանակաթեմի զորքը շարժեց դեպի մայրաքաղաք: 715 թ. օգոստոսին՝ վեց ամիս պաշարումից հետո, քաղաքը գրավվեց ու կողոպտվեց, իսկ այդ ընթացքում Նիկեայում գտնվող Անաստասիոս կայսրը հրաժարական տվեց գահից: Գահի համար պայքարը, սակայն, շարունակվեց, և գահակալական պայքարի մեջ ընդգրկվեցին նաև Արմենիակ և Անատոլիկոն բանակաթեմերը: Անատոլիկոն բանակաթեմի առաջնորդ Լևոն Իսավրացին, 716 թ. ապրիլին իրեն կայսր հռչակելով, խոշոր բանակով շարժվեց դեպի Կ. Պոլիս: Նրան հաջողվեց վեցամսյա պայքարից հետո գրավել քաղաքը և տիրել կայսերական գահին: Բյուզանդական գահին սկիզբ առավ Իսավրական դինաստիան:

Այսպիսով՝ Բյուզանդիան VIII դար մուտք էր գործում որպես կենտրոնացված պետություն: Բյուզանդական կայսրը, լինելով երկրի աշխարհիկ տիրակալ, իր կամքը թելադրում էր նաև հոգևոր ոլորտին: Աստիճանաբար Բյուզանդիայում ձևավորվում է պետական պաշտոնեության նոր աստիճանակարգ: Փոքրասիական բանակաթեմերը սկսում են տրոհվել ավելի մանր թեմերի, իսկ նորանվաճ տարածքներում ձևավորվում են նոր բանակաթեմեր: Գյուղացիության շերտավորման հետևանքով թեմական աշխարհազորը ևս աստիճանաբար փոխում է իր բնույթը: Բոլորը չէ, որ հնարավորություն ունեին սեփական զինվորական հանդերձանքով ներկայանալու զորակոչի, ուստի համայնքը ստանձնում էր զինվորին հանդերձավորելու պարտականություն:

3. ԻՍԱՎՐԱԿԱՆ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Լևոն Գ Իսավրացու (717–741 թթ.) գահակալումը նշանավորում էր փոքրասիական ավագանու դիրքերի ամրապնդում և դերակատարության մեծացում կայսրության ներքին ու արտաքին քաղաքականության մեջ: Բյուզանդիայում ընթացող գահակալական պայքարի ընձեռած հնարավորությունից փորձեցին օգտվել արաբները և Մասլամայի հրամանատարությամբ հզոր նավատորմով մոտեցան Կ. Պոլսին: Բյուզանդացիներին, սակայն, հաջողվեց մեծ կորուստներ պատճառել արաբական նավատորմին, արաբները ստիպված էին հաշտվել պարտության հետ և 718 թ. օգոստոսին դադարեցրին Կ. Պոլսի պաշարումը: Բյուզանդիայի դեմ արաբների հաջորդ արշավանքը ձեռնարկվեց 726 թ., երբ կրկին Բյուզանդիայում գլուխ բարձրացրեց ներքաղաքական պայքարը, ու արաբներին հաջողվեց արշավել մինչև Նիկեա: Սակայն արաբներին, այնուամենայնիվ, չհաջողվեց հասնել ավելիին, և նրանք ստիպված էին ավելի քան մեկ տասնամյակ բավարարվել փոքրասիական տարածքներում կողոպտիչ արշավանքների ձեռնարկումներով: Արաբների դեմ պայքարի գործում Բյուզանդիան դաշնակցում էր խազարների հետ: 737 թ. արաբներին հաջողվեց պարտության մատնել խազարներին և պարտադրել ընդունել մահմեդականություն: Սակայն մինչ արաբական բանակը զբաղված էր հյուսիսում խազարների դեմ պատերազմով և նրանց հնազանդեցնելու խնդիրներով, բյուզանդական բանակը 740 թ. խոշոր հաղթանակ տոնեց արաբների դեմ Փոքր Ասիայի Անատոլիկոն բանակաթեմի Ակրոինա բնակավայրի մոտ: Արաբների այդ պարտությունը խազարներին հնարավորություն տվեց կրկին թոթափելու արաբական լուծը և հրաժարվելու մահմեդականությունից, իսկ Բյուզանդիան աստիճանաբար կարողացավ զարգացնել հաջողությունը և ընդարձակել իր տիրույթները դեպի արևելք:

Լևոն Գ Իսավրացին ձեռնամուխ եղավ ամրապնդելու Բյուզանդիայի պետականության իրավաօրենսդրական հիմքերը, և այդ նպատակով 726 թ. հրապարակվեց այսպես կոչված «Էկլոգա» օրենսգիրքը: Այն հաստատագրում էր մասնավոր սեփականության իրավունքը, ազատություն էր խոստանում այն ստրուկներին, որոնք մասնակցում էին օտար թշնամու դեմ պատերազմին, կարգավորում էր պատերազմական ավարի բաշխման սկզբունքը, դատավորների համար սահմանվում էր պետական հատկացում՝ բնակչությունից ոչինչ չգանձելու պայմանով: Կենտրոնախույս ուժերի ձևավորումը կանխելու նպատակով ապախոշորացվում էին բանակաթեմերը, և կրճատվում էին քաղաքային ինքնավարության իրավասությունները: Քաղաքային իշխանությունների իրավասությունների կրճատման ուղղությամբ կայսերական իշխանության ձեռնարկումները, սակայն, դժգոհության հանդիպեցին Սիցիլիայի քաղաքներում, Թեսալոնիկեում և Ռավեննայում, որտեղ կազմակերպված դավադրությունները անողոքաբար ճնշվեցին: Բնակչության դժգոհությունների արտահայտման ձևերից առավել տարածում ստացան պատկերամարտությունը և աղանդավորությունները: Դավանաբանական շղարշով ընթացող սոցիալական պայքարն առավել տարածում ստացավ Հայաստանում, ինչն ուղղված էր ոչ միայն պաշտոնական եկեղեցու և տեղերում սոցիալական ճնշումների դեմ, այլև Կ. Պոլսից ծայրամասային բանակաթեմերի ինքնավարության նկատմամբ սպառնալիքների դեմ: Պատկերամարտությունը դարձավ նաև փոքրասիական բարձրագույն հոգևորականության կողմից մայրաքաղաքային հոգևոր պաշտոնեության դեմ պայքարի միջոց: Կայսեր կողմից պատկերամարտությանը աջակցելու որոշումը սրեց հարաբերությունները Կ. Պոլսի պատրիարքի ու կայսեր, այն է՝ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների

միջև: Հոգևոր իշխանության նկատմամբ վերահսկողություն սահմանելու կայսերական իշխանության քայլերը ուղեկցվում էին նաև եկեղեցու ուռճացված սեփականությանը տիրանալու հավակնությունների դրսևորումներով: Պատկերապաշտության ջատագովությամբ առավել հայտնի դարձան Հելլադան ու Իտալիան, ինչպես նաև արաբական տիրապետության սահմաններում գտնվող Դամասկոսը: Իտալիայում Հռոմի պապի կողմից պատկերամարտության դեմ քայլերին կայսրը պատասխանեց Բալկաններում և Հարավային Իտալիայում ու Սիցիլիայում պապական տիրույթները հարքունիս գրավելու միջոցով: VIII դարի կեսերին պատկերամարտության վիճահարույց խնդիրները նպաստեցին ֆրանկների պետության և պապական իշխանության միջև մերձեցմանն ու Կ. Պոլսի իշխանությունների հետ Հռոմի պապերի հակամարտության խորացմանը:

Լևոն Գ Իսավրացին վախճանվեց 741 թ. հունիսին, և գահն անցավ նրա Կոստանդին որդուն (Կոստանդին Ե, 741–775 թթ.):

Նոր կայսեր գահակալումը փորձեցին օգտագործել պատկերապաշտության կողմնակիցները: Լևոն Գ–ի փեսա և Օպսիկիոն թեմի ստրատիգ Արտավազդը հրաժարվեց նրա իշխանությունը ճանաչելուց, իսկ Կ. Պոլսի բնակչությունը Արտավազդին հռչակեց կայսր: Վերականգնվեց սրբապատկերների պաշտամունքը: Արտավազդի դեմ պայքարում Կոստանդինը օգտագործում էր մյուս թեմերի աջակցությունը, որոնք պաշտպանում էին վերջինիս, և նրանց օգնությամբ 16–ամսյա քաղաքացիական պատերազմից հետո՝ 743 թ. նոյեմբերի 2–ին, գրավեց Կ. Պոլիսը: Կոստանդինը կրկին վերականգնեց պատկերամարտությունը, հաշվեհարդար տեսավ ապստամբների հետ, իսկ Օպսիկիոն բանակաթեմը բաժանեց երեք մասի: Կոստանդինը ամրապնդեց կենտրոնական իշխանությունը և ձեռնամուխ եղավ երկրի սահմանները ընդարձակելու խնդրին, ինչը համապատասխանում էր բանակաթեմերի ավագանու ձգտումներին: Կոստանդինը հաջող արշավանքներով ընդարձակեց Բյուզանդիայի սահմանները Փոքր Ասիայում, գրավեց Ասորիքի մի մասը: Բյուզանդիայի հաջողությունները պայմանավորված էին նաև Արաբական խալիֆայության մեջ ընթացող ներքաղաքական պայքարի հանգամանքով: Փոքրասիական նորանվաճ տարածքներից կայսեր հրամանով քրիստոնյա բնակչության մեծ խմբեր, այդ թվում նաև պավլիկյան շարժման հետևորդներ փոխադրվում էին դեպի կայսրության եվրոպական մաս և վերաբնակեցվում այնտեղ: Մեծ թվով արհեստավորներ վերաբնակեցվում էին Կ. Պոլսում:

Բյուզանդիայի եվրոպական մասում արտաքին հարձակումների սպառնալիքների դեմ կայսրությունը փորձում էր ստեղծել հուսալի հենակետեր ու ամրապնդել իր դիրքերը: Այնտեղ կառուցվում էին նոր ամրոցներ և տեղադրվում կայազորներ: 756 և 763 թվականներին, ի պատասխան բուլղարների կողմից կատարված հարձակումների, Կոստանդինը պատասխան արշավանքներով կարողացավ պարտության մատնել և մեծ կորուստներ պատճառել նրանց:

754 թ. եկեղեցական ժողովի հրավիրումով և ժողովի կողմից պատկերապաշտությունը դատապարտող որոշման ընդունումով Կոստանդինը փորձեց ամրապնդել

պատկերամարտության հաղթանակը երկրում: Ժողովի որոշման դեմ, սակայն, ընդվզեց Հռոմի պապը, նախաձեռնեց և 769 թ. Հռոմում հրավիրեց եկեղեցական նոր ժողով, որտեղ չեղյալ հայտարարվեցին պատկերամարտության վերաբերյալ 754 թ. ժողովի որոշումները: Պատկերամարտության դեմ հանդես էին գալիս հատկապես վանքերն ու վանականները, որոնք զրկվում էին սրբապատկերների եկամտաբեր վաճառքի հնարավորությունից: Կայսերական արքունիքը հալածանքներ ձեռնարկեց վանականների դեմ: Առանձնակի անհնազանդություն ցուցաբերող վանքերի տիրույթները գրավվեցին հարքունիս:

775 թ. սեպտեմբերին՝ Կոստանդին կայսեր վախճանվելուց հետո, գահակալեց նրա որդին՝ Լևոն Դ–ը, որի կառավարումը, սակայն, երկարատև չեղավ: 780 թ. սեպտեմբերին՝ նրա մահից հետո, գահը անցավ մանկահասակ որդուն՝ Կոստանդին Զ–ին, իսկ կայսրության ղեկը իր ձեռքն առավ Լևոն կայսեր այրին՝ Իրինան: Արքունիքում թուլացավ թեմային ավագանու, այդ թվում նաև ստրատիգների դիրքը, և փոխարենը աճեց պալատական ներքինիների ազդեցությունը, որոնց մեջ առանձնացավ իր զորավարական ունակություններով հայտնի Ստավրիկիոսը: Բյուզանդական բանակին, սակայն, չհաջողվեց դիմակայել Արաբական խալիֆայության արշավանքին, և Բյուզանդիան ստիպված էր 782 թ. հաշտություն կնքել՝ պարտավորվելով ամենամյա հարկ վճարել արաբներին: 783–784 թթ. Ստավրիկիոսը ռազմական հաջող գործողություններով կարողացավ Բյուզանդիայի դիրքերն ամրապնդել Հելլադայում, Թեսալիայում և Թրակիայում:

Պատկերապաշտության կողմնակից Իրինան պատրիարքական աթոռին բազմեցրեց պատկերապաշտության ջատագով, մեծահարուստ աշխարհական Տարասիոսին (784–786 թթ.), որը և Նիկեայում 787 թ. հրավիրեց տիեզերական VII ժողովն ու պարտադրեց ընդունել պատկերամարտությունը դատապարտող որոշումներ: Վերականգնվեցին եկեղեցական հողատիրության նախկին սահմանափակումները:

Բյուզանդական արքունիքում, սակայն, շուտով ծայր առան նոր զարգացումներ: Երիտասարդ Կոստանդին Զ–ը թեմային առաջնորդների օժանդակությամբ, որոնք ձգտում էին վերականգնելու իրենց դիրքերը արքունիքում, իշխանությունից հեռացրեց իր մորը՝ Իրինային, ու նրա խորհրդականներին:

789 թ. Մակեդոնիա ներխուժած բուլղարների դեմ պատերազմում Կոստանդինը պարտություն կրեց, և կնքված հաշտությամբ Բյուզանդիան պարտավոր էր ամենամյա վճարումներ կատարել բուլղարներին: Կոստանդինի պայքարը բուլղարների դեմ անհաջող ելք ունեցավ նաև 796 թ., երբ նա փորձեց դադարեցնել հարկի վճարումները: Այդ անհաջողությունները արտաքին ճակատում իրենց կնիքը թողեցին նաև ներքաղաքական կյանքում տիրող իրավիճակի վրա: Իրինայի հրամանով Կոստանդինը դավադրաբար ձերբակալվեց և կուրացվեց: 797 թ. օգոստոսի 15–ին Իրինան հռչակվեց միանձնյա տիրակալ: Երկրում հուզումները կանխելու և Կ. Պոլսի բնակչության պաշտպանությունը ստանալու նպատակով Իրինան հրամայեց իջեցնել բնակչությունից գանձվող հարկերը, վանքերին կից բացել հիվանդանոցներ, հյուրատներ և այլն: Այդ բոլոր ձեռնարկումները, սակայն, չէին կարող կայունացնել

իրադրությունը, իշխանության վերադարձած ներքինիների վարած քաղաքականությունից դժգոհությունը գնալով աճում էր, ինչն ավարտվեց 802 թ. հոկտեմբերի 31–ին տեղի ունեցած պալատական անարյուն հեղաշրջումով, որի արդյունքում իշխանության եկավ և կայսր հռչակվեց Կ. Պոլսի ավագանու ներկայացուցիչ Նիկիֆորը:

4. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ IX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Բյուզանդիայում 803 թ. թեմային ավագանին կայսր հռչակեց իր թեկնածուին՝ Անատոլիկոն թեմի ստրատիգ Վարդանին: «Խռովարարների» զորքը մոտեցավ մայրաքաղաքին, սակայն չկարողացավ գրավել քաղաքը, և խռովությունը ճնշվեց, ինչը և նպաստեց Նիկիֆորի դիրքերի ամրապնդմանը: Պետական գանձարանը համալրելու նպատակով բարձրացվեցին հարկերը, վերացվեցին վանքերի նախկին արտոնությունները, հարկային պարտավորություններ դրվեցին եկեղեցական բարեգործական հաստատությունների վրա, համայնքները պատասխանատու էին իրենց բոլոր գյուղացիների հարկային պարտավորությունների համար: Դադարեցին պավլիկյանների և այլ աղանդավորների նկատմամբ հետապնդումները, և նրանց հնարավորություն տրվեց զբաղվելու հողագործությամբ՝ մեծացնելով հարկատուների քանակը: Պետական շահերը հայտարարվեցին գերակա բոլոր ոլորտներում, և Նիկիֆորի քաղաքական ու սոցիալական գործողությունները խիստ նպատակաուղղված էին: Այդ նպատակով շարունակվում էր փոքրասիական հատվածներից բնակչության փոխադրումը Բալկաններ: Կարևոր բարեփոխումներ տեղի ունեցան նաև թեմային զորքի կազմակերպման գործում: Համայնքները պարտավոր էին վճարումներ կատարել աշխարհազորը հանդերձավորելու նպատակով: Արտաքին քաղաքականության մեջ, սակայն, կայսեր ձեռնարկումները հաջողությամբ չպսակվեցին: Արաբները, դժգոհ լինելով Բյուզանդիայի կողմից հարկի վճարման դադարեցումից, 806 թ. հարձակվեցին և գրավեցին բյուզանդական որոշ տարածքներ (Իրակլիոն): 811 թ. հուլիսին բուլղարների դեմ պատերազմում բյուզանդական բանակն ընկավ ծուղակի մեջ, որտեղ և կայսր Նիկիֆորը զոհվեց: Բյուզանդիայում կայսր հռչակվեց ճակատամարտից ծանր վիրավոր վերադարձած գահաժառանգ Ստավրիկիոսը, սակայն շուտով՝ նրա դեմ դավադրությունից հետո, կայսր հռչակվեց նրա քրոջ ամուսին Միքայել Ա Ռանգավեն (811 թ. հոկտեմբերի 2), որ համաձայնել էր Կ. Պոլսի պատրիարք Թեոֆանեսի պահանջին՝ արտոնություններ շնորհել եկեղեցուն և կառավարել եկեղեցու շահերի հաշվառումով: Բանտերից ազատվեցին հոգևորականները: Մոլի պատկերապաշտ Միքայելը հսկայական միջոցներ տրամադրեց եկեղեցուն, և աղանդավորների դեմ սկսվեցին դաժան հետապնդումներ: Սահմանային գոտում վերաբնակեցված պավլիկյանները սկսեցին անցնել բուլղարների կողմը: Մեծացավ բուլղարների կողմից սպառնալիքը Բյուզանդիայի դեմ: Միքայելը դաշնակիցների ձեռքբերման նպատակով որոշեց հարաբերությունները բարելավել Հռոմի պապի և Կարլոս Մեծի հետ: Բյուզանդիան 812 թ. ճանաչեց Կարլոս Մեծի կայսրությունը:

Արտաքին սպառնալիքների ուժգնացումը, պատերազմը բուլղարների դեմ և ռազմական անհաջողությունները նպաստեցին երկրում դժգոհությունների աճին, ինչը և օգտագործվեց ինչպես պատկերապաշտների հակառակորդների, այնպես էլ թեմային ավագանու կողմից: 813 թ. հունիսի 22–ին՝ Ադրիանապոլսի մոտ բուլղարների դեմ ճակատամարտի ընթացքում, ստրատիգ Լևոն Հայազնը իր զորքով լքեց ճակատամարտի դաշտը, որտեղ բուլղարները հաղթանակի հասան, այնուհետև շրջապատեցին Կ. Պոլիսը, սակայն չկարողացան գրավել այն: Ընդդիմադիրների պահանջով կայսր Միքայելը ստիպված էր հրաժարական տալ, և 813 թ. հուլիսի 11–ին կայսր հռչակվեց թեմային ավագանու ներկայացուցիչ Լևոն Ե Հայազնը (813–820 թթ.): Բյուզանդիայում վերականգնվեց պատկերամարտությունը: Երկրում հոգևորականությունը զիջեց դիրքերը, իսկ փոխարենը իշխանական լծակները կենտրոնացան թեմային ավագանու ձեռքում, որոնց մեջ հիմնական դերակատարները խոշոր հողատերերն էին:

Արտաքին քաղաքականության ոլորտում Լևոն Ե Հայազնը ստիպված էր առաջնահերթ խնդիր դարձնել բուլղարների արշավանքների կասեցումը, որոնց հետևանքով մեծ ավերածությունների էր ենթարկվում Թրակիան: Նա երեսնամյա հաշտություն կնքեց բուլղարների հետ: Հստակորեն սահմանվեց երկու պետությունների միջև սահմանը: Արաբական խալիֆայության հետ հարաբերությունների կարգավորումը պայմանավորվում էր խալիֆայության մեջ սկիզբ առած երկպառակությունների հանգամանքով, ինչը նպաստավոր էր Բյուզանդիայի համար:

Ներքին քաղաքականության մեջ առանձնակի նշանակություն ուներ եկեղեցու հետ հարաբերությունների կարգավորումը, և այդ նպատակով 815 թ. Նիկիփոր պատրիարքի փոխարեն պատրիարքական գահ բարձրացվեց պատկերամարտության ջատագով թեկնածուն և անմիջապես հրավիրվեց եկեղեցական ժողով, որը չեղյալ հայտարարեց պատկերապաշտության մասին 787 թ. ժողովի որոշումները՝ փոխարենը վերահաստատելով 754 թ. ժողովի սահմանած կանոնները: Սկսվեցին հոգևորականության նկատմամբ հալածանքներ, որոնք պատճառ դարձան նոր դժգոհությունների: 820 թ. դավադրության արդյունքում սպանվեց Լևոն Ե Հայազնը, և կայսր հռչակվեց Ամորիական թեմի ստրատիոտների դասից սերող Միքայել զորավարը:

Միքայել կայսեր գահակալումից հետո ևս շարունակվում էին փոքրասիական թեմերում դժգոհ գյուղացիության սկիզբ առած շարժումները: Դրանք նպաստավոր միջավայր դարձան իշխանափոխության նպատակով գահի օրինական հավակնորդ ներկայացող Թովմա Սլավոնի համար, որ, վեր բարձրանալով ստորին խավից, ստացել էր զորավարի աստիճան, սակայն այնուհետև փախուստի էր դիմել և ապաստան գտել Արաբական խալիֆայությունում: Նա, իրեն հռչակելով որպես հրաշքով փրկված Ալեքսանդր Զ, հայտարարեց իր հավակնությունները բյուզանդական գահի նկատմամբ: Անտիոքում կազմակերպելով նրա կայսերական օծումը՝ արաբները թույլատրեցին հավաքագրել վարձու բանակ և շարժվել դեպի Կ. Պոլիս՝ գրավելու գահը: Փոքրասիական բանակաթեմերում համալրելով իր զինված

ուժերը տեղի ապստամբ գյուղացիների և ավագանու կազմից՝ նա հասավ մինչև Կ. Պոլիս, սակայն քաղաքը գրավել չհաջողվեց: 823 թ. պառակտումներ սկսվեցին ապստամբների շարքերում, որի արդյունքում Թովման ձերբակալվեց և հանձնվեց իշխանություններին: Միքայել կայսեր հրամանով Թովմա Սլավոնը ենթարկվեց մահապատժի:

Ապստամբության ճնշումից հետո Միքայել կայսրը որդեգրեց դավանական հանդուրժողականության մարտավարություն: Եկեղեցական ու դավանաբանական վեճեր չրորբոքելու նպատակով նա թույլատրեց սրբապատկերների նկատմամբ վերաբերմունքի հարցում ցուցաբերել հանդուրժողականություն և զերծ մնալ պարտադրանքներից: Արգելվեցին այդ հարցի շուրջ բոլոր բանավեճերը: Այդ ամենով հանդերձ, սակայն, պատկերամարտների դիրքերը շարունակում էին դեռևս ամուր մնալ:

Ներքին անկայունությունը իր անդրադարձն ունեցավ երկրի արտաքին դրության վրա: Եգիպտացիները գրավեցին Կիպրոսը, և այն դարձավ Բյուզանդիայի դեմ պայքարի հենակետ: Բյուզանդիայի ծովային առևտուրը լուրջ հարված ստացավ: Հյուսիսային Աֆրիկայից արաբները ներխուժեցին նաև Սիցիլիա, իսկ Բյուզանդիան հնարավորություն չունեցավ զորք ուղարկելու նրանց դիմակայելու համար:

829 թ.՝ Միքայել Բ–ի մահից հետո, Բյուզանդիայի գահը ժառանգեց նրա որդին՝ Թեոփիլոսը (829–842 թթ.): Պատկերապաշտությունը արգելվեց, սակայն շարունակում էին կառուցվել նոր վանքեր, վանականությունը գնալով ավելի ծավալում էր ստանում երկրում: Թեոփիլոսի քաղաքական հենարանը թեմային ավագանին էր: Նրա շրջապատում մեծ թիվ էին կազմում փոքրասիական և, մասնավորապես, Ամորիայից ելած խոշոր հողատերերը:

Բյուզանդիայի սահմանային գոտիներում լարվածությունը չէր թուլանում: Ապստամբություններ էին բռնկվում Թեսալոնիկեում, Պելեոնեսում, և կայսրությունը ստիպված էր խոշոր ուժեր հատկացնել ապստամբությունները ճնշելու համար: Ուժեղացան հալածանքները պավլիկյանների դեմ:

Բյուզանդիան թեև շարունակում էր մնալ խազարների դաշնակիցը, սակայն գնալով նրանց միջև ևս նվազում էր փոխվստահությունը: Թեոփիլոսը որոշեց ամրապնդել կայսրության դիրքերը Ղրիմում և այնտեղ հիմնադրեց նոր բանակաթեմ: 830–831 թթ. փոփոխակի հաջողություններով Բյուզանդիայի դեմ արշավանք կազմակերպեցին արաբները, իսկ 837 թ. Բյուզանդիային հաջողվեց գրավել Սամոսատը: Պատասխան արշավանք կազմակերպելով՝ արաբները հասան մինչև Ամորի, գրավեցին ու գլխովին ավերեցին այն 838 թ.: Ամորիի ավերումը խոշոր կորուստ էր Բյուզանդիայի համար: Թեոփիլոսը ստիպված էր մահմեդականների դեմ պայքարում օգնության խնդրանքով դիմել եվրոպական երկրներին, ինչը, փաստորեն, խաչակրաց արշավանքի գաղափարի առաջին դրսևորումներից էր: Արաբները Սիցիլիայից անցան Հարավային Իտալիա և գրավեցին նաև Բարի քաղաքը: Բուլղարիան, օգտվելով Բյուզանդիայի ծանր դրությունից, 837 թ. գրավեց Մակեդոնիայի զգալի մասը: Կայսրության ներքին կայունության համար լուրջ սպառնալիք էր նաև պավլիկյանների շարժումը, ինչը արդյունք էր հասարակության ծայրահեղ բևեռացման: Պավլիկյան շարժման հետևորդների մեջ մեծ թիվ էին կազմում հայազգի աղանդավորները, որոնք, խույս տալով բյուզանդական հալածանքներից, անցնում և համախմբվում էին Արևմտյան Հայաստանի արաբական գերակայության ներքո գտնվող Տարիկ բնակավայրում և նրա շուրջ:

842 թ. հունվարին Թեոփիլոսի մահը և նրա մանկահասակ որդու՝ Միքայել Գ–ի գահակալումը (842–867 թթ.) առավել խորացրին ճգնաժամը Բյուզանդիայում: Իշխանության լծակները հայտնվեցին կայսրուհու՝ Թեոդորայի, և նրա ազգականների ձեռքում, որոնց առաջին ձեռնարկումներից էր պատկերապաշտության վերականգնումը: Հրավիրված եկեղեցական ժողովը 843 թ. գահազրկեց Հովհան Քերականին պատրիարքական աթոռից, և նոր պատրիարք հռչակվեց Մեթոդիոսը: Օրթոդոքս եկեղեցին մեծապես կարևորում էր պատկերապաշտության վերականգնումը և որպես եկեղեցու և աշխարհիկ իշխանության համերաշխ միասնության հավաստում՝ կայսրն ու պատրիարքը Մեծ զատիկին միասին հանդիսավոր մուտք գործեցին Ս. Սոֆիայի տաճար: Բյուզանդական նոր իշխանությունների հերթական հարվածն ուղղվեց պավլիկյանների դեմ: Մեծ չափերի հասան զանգվածային մահապատիժներն ու նրանց ունեցվածքի բռնագրավումները: Իշխանությունների նման վարվելակերպը թեև որոշ ժամանակ նպաստեց իշխող դասի թվացյալ համախմբմանն ու երկրի կայունացմանը, սակայն ավելի բևեռացրեց սոցիալական իրադրությունը երկրում և սկիզբ դրեց նոր ապստամբությունների ու քաղաքացիական պատերազմի:

856 թ. պալատական հեղաշրջման հետևանքով կայսրուհի Թեոդորան աքսորվեց վանք, և պալատում փաստական իշխանությունը անցավ կայսեր քեռու, այն է՝ Թեոդորայի եղբայր Վարդասի ձեռքը: Չնայած կայսերական իշխանության ներքին ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված քայլերին՝ սոցիալական բևեռացման պատճառով իշխանություններին ընդդիմադիր և կայսրության հալածանքներից խույս տված աղանդավոր պավլիկյանների հավաքագրած զորքը հաճախ մասնակցում էր կայսրության դեմ արաբների կողմից ձեռնարկված արշավանքներին: Բյուզանդական բանակը Վարդասի եղբայր Պետրոնայի հրամանատարությամբ 856 թ. արշավեց Հայաստան և մեծ ավերածություններ գործեց Տարիկում, ոչնչացվեցին պավլիկյաններին հարած բազմաթիվ գյուղեր: 860 թ. պավլիկյանների զորքը պատասխան արշավանք ձեռնարկեց Բյուզանդիայի դեմ և վերադարձավ 5000 գերիներով:

Բյուզանդական արքունիքը դժգոհ էր պետության ամրապնդման ուղղությամբ իրականացվող գործողություններում եկեղեցու մասնակցությունից և մասնավորապես պատրիարքի դիրքորոշումից, ուստի 858 թ. արքունիքը որոշեց աթոռազրկել Իգնատիոս պատրիարքին և պատրիարքական աթոռին բազմեցնել Փոտին, ով մինչ այդ աշխարհական էր և զբաղվում էր գիտությամբ, սակայն իր քաղաքական հայացքներով և կառավարման ձևերի վերաբերյալ հայացքներով համամիտ էր գործող իշխանությանը: 861 թ. Կ. Պոլսում հրավիրված եկեղեցական ժողովում որոշվեց ամրապնդել և առավելագույնս մեծացնել պատրիարքի իրավասությունները եկեղեցական կառույցի մեջ:

Կառավարության ձեռնարկումները միանշանակ չէին ընդունվում բյուզանդական հասարակության կողմից: Միքայել Գ–ը շուտով իր հովանավորության տակ առավ Մակեդոնիայից մայրաքաղաք ժամանած երիտասարդ Բարսեղին (Վասիլ), իսկ 865 թ.՝ վերջինիս կողմից Վարդասի սպանությունից հետո, նրան հռչակեց իրեն գահակից: Գյուղական միջավայրից սերող Բարսեղի սլացքը իշխանական համակարգ և կայսերական գահակցությունը դժգոհությամբ ընդունվեցին փոքրասիական նահանգային, այդ թվում նաև հայազգի բյուզանդական արիստոկրատիայի կողմից, ինչը սպառնալիք էր արքունիքում իրենց ունեցած ազդեցության և դիրքի համար: Փոքրասիական բանակաթեմերի ներկայացուցիչների՝ Թրակեսիոնի զորավար հայազգի Սմբատի և Օպսիկիոնի զորավար Գևորգ Պեգանիի գլխավորությամբ սկսված ապստամբությունը՝ միայն Միքայելին կայսր ճանաչելու պահանջով, ճնշվեց, իսկ առաջնորդները կուրացվեցին: Մայրաքաղաքային արիստոկրատիան, իր հերթին երկնչելով նահանգային ավազանու հզորացումից, շտապեց ազատվել թուլակամ Միքայել Գ կայսրից և գահը հանձնել Բարսեղին: 867 թ. սեպտեմբերի 24–ին Միքայելը սպանվեց, և Բարսեղը հռչակվեց միանձնյա կայսր: Բյուզանդիայում սկիզբ առավ Մակեդոնական դինաստիայի կառավարումը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ IX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ ՄԻՆՉԵՎ XI ԴԱՐ

1. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ) ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Բյուզանդական կայսրությունը բարձր վերելքի հասավ Մակեդոնական դինաստիայի իշխանության դարաշրջանում (867–1057 թթ.): Նրա հիմնադիր Բարսեղ (Վասիլ) Ա–ը (867–886 թթ.) իրեն հռչակել է Արշակունի՝ հավանաբար սեփական իշխանությունը լեգիտիմ դարձնելու համար: Այս դարաշրջանում ևս բյուզանդական կայսրերը հաճախակի միջամտում էին հոգևոր–եկեղեցական գործերին: Ստեղծվել էր քաղաքական իշխանության մի տեսակ, որն իրար էր միահյուսել կայսերական և պատրիարքական իրավասությունները, փորձում էր իր իշխանությունը տարածել Հռոմի պապության և արևմտաեվրոպական պետությունների վրա: Կայսրությունը ձգտում էր վերականգնելու իր վաղեմի փառքը: Նրա իշխանության օրոք կայսրության հզոր ավատատերերի հրամանատարությամբ ստեղծվեց հզոր մի բանակ, որն ի վիճակի դարձավ հետ մղելու օտար նվաճողների հարձակումները, ընդարձակելու կայսրության սահմանները և ապահովելու երկրի միասնականությունը: Արևելյան Միջերկրականում Բյուզանդիայի տիրապետությունը վերահաստատելու համար Բարսեղ Ա–ը ցամաքային և ծովային պատերազմներ էր վարում Արաբական խալիֆայության դեմ: Այդ պատերազմները տեղի էին ունենում Իտալիայի հարավում, Սիցիլիայում, Աֆրիկայում և Փոքր Ասիայում: Նիկեփորոս Փոկաս զորավարը 885 թ. գրավեց Իտալիայի մեծ մասը և ֆրանկների արքա Լյուդովիկոս Բ–ին դուրս մղելով Հյուսիսային Իտալիայից՝ երկրի պաշտպանության համար կազմակերպեց Կալաբրիայի և Լանգոբարդիայի բանակաթեմերը: Բարսեղ Ա–ը կայսրության արևելյան սահմանները հասցրեց մինչև Եփրատ, իսկ 872 թ. Փոքր Ասիայում պարտության մատնելով պավլիկյաններին՝ նրանց բնակեցրեց Բալկաններում: IX դարում Բյուզանդիային սպառնում էին Բալկաններում հաստատված բուլղարները՝ Սիմեոն ցարի գլխավորությամբ: Նրանց դեմ հերթական պատերազմն 899 թ. ավարտվեց հաշտությամբ: Բյուզանդիան ժամանակավորապես ստիպված էր հանդուրժել սլավոնական ցեղերի ինքնավար ներկայությունը Բալկաններում՝ օգտագործելով նրանց զինվորական ուժը Դանուբի երկայնքով ձգվող սահմանի պաշտպանության համար: Կոստանդին Է Ծիրանածնի առաջին մենիշխանության օրոք (913–920 թթ.) Բյուզանդական կայսրությունը արաբների հետ հաշտություն կնքեց՝ ուշադրությունը բևեռելով Բալկաններում ստեղծված իրավիճակին: 913 թ. բուլղարները կրկին հարձակվեցին Բյուզանդիայի վրա: 920 թ. հեղաշրջմամբ Բյուզանդիայում կայսրակից

հռչակվեց Ռոմանոս Ա Լեկապենոսը (920–944 թթ.): Հովհաննես Կուրկուաս զորավարի ջանքերով Բյուզանդիայի սահմանները տարածվեցին մինչև Վերին Եփրատ և Տիգրիս: Ռազմական տաղանդով փայլեց նաև Մելիաս (Մլեհ) զորահրամանատարը, որը հիմնադրեց Կապադովկիայում Լիկանդոս բանակաթեմը: 944 թ. Ռոմանոսը գահընկեց արվեց: Բյուզանդական զինվորականության շարքերը ավելի ու ավելի էին համալրվում փոքրասիական և հայկական ծագման հրամանատարներով: Կոստանդին Ծիրանածինը իր երկրորդ մենիշխանության (945–959 թթ.) ժամանակ զորքերի գլխավոր հրամանատար նշանակեց Վարդաս Փոկասին: Նրա օրոք նշանավոր զորապետեր էին նաև Մուշեղ-Ռոմանոսը, Հովհաննես Կուրկուասի եղբայր Թեոփիլոսը, որը 949 թ. արաբներից գրավեց Կարինը: Արքունիքում կարևոր դիրք էին զբաղեցնում Տարոնի Թոռնիկյանները: Ռոմանոս Բ-ի օրոք (959–963 թթ.) Նիկեփոր Փոկասը 961 թ. արաբներից գրավեց Կրետեն: Նիկեփոր Բ-ի ժամանակ (963–969 թթ.) Տարոնի հայկական իշխանությունը կցվեց կայսրությանը (967 թ.), և սկիզբ դրվեց «կամավոր կտակների» քաղաքականությանը, որի միջոցով մոտ ութսունամյա ժամանակամիջոցում Բյուզանդիան տեր դարձավ գրեթե ողջ Հայաստանին: Նիկեփորը 964 թ. գրավեց Անավարզան, Ադանան, Մամեստիան, 965 թ.՝ Տարսոնը, ապա՝ Կիպրոսը: 968 թ. Նիկեփորի զորահրամանատար Վուրցեսը գրավեց Անտիոքը, որին ավելի քան երեք հարյուրամյակ տիրում էին արաբները: Դաշնակցելով Կիևյան Ռուսիայի իշխան Սվյատոսլավի հետ՝ Նիկեփորն ընկճեց բուլղարներին: Հովհաննես Ա Չմշկիկ կայսեր օրոք (969–976 թթ.) բյուզանդական զորքը ներխուժեց Հայաստան, սակայն Աշոտ Գ թագավորը (953–970 թթ.) հայոց զորքով կանխեց նրա առաջխաղացումը Հարք գավառում և ստիպեց հաշտության պայմանագիր կնքել՝ 10 000-անոց բանակով բյուզանդական ռազմարշավներին մասնակցելու պայմանով: 971 թ. ամռանը Չմշկիկը պարտության մատնեց Սվյատոսլավին, որը մտել էր Թրակիա: Բուլղարիան դարձավ կայսրության նահանգ: Չմշկիկը 972–976 թթ. նվաճեց Ասորիքը, Պաղեստինը, պաշարեց Դամասկոսը, գրավեց Ամիդն ու Մարտիրոպոլիսը: Բասիլ Բ Բուլղարասպանի օրոք (976–1025 թթ.) Մակեդոնյան հարստությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Այս ժամանակաշրջանում զորեղացած զինվորական ավագանին մեծ վտանգ էր դարձել կենտրոնական իշխանության համար: 976 թ. Բասիլ Բ-ի դեմ ապստամբեց զորավար Վարդաս Սկլերոսը, որին աջակցեցին Փոքր Ասիայի հայկական իշխանությունները: Վարդաս Սկլերոսը նվաճեց Փոքր Ասիան ու սպառնաց մայրաքաղաքին, սակայն 979 թ. պարտվեց Վարդաս Փոկասից: Ութ տարի անց Բասիլի դեմ ապստամբեց Վարդաս Փոկասը՝ նվաճելով Փոքր Ասիայի մեծ մասը: Նրան օգնում էր Տայքի իշխան Դավիթ Կյուրապաղատը: Բասիլը Ռուսիայի իշխան Վլադիմիր Սվյատոսլավիչի օգնությամբ պարտության մատնեց Փոկասին: Դրանից հետո Վլադիմիրն ընդունեց քրիստոնեություն (988 թ.), ամուսնացավ Բասիլի քրոջ՝ Աննայի հետ, և երկու երկրների միջև հաստատվեցին սերտ հարաբերություններ: Թիկունքն ամրապնդելով Բալկաններում՝ Բասիլ Բ-ը մեծ բանակով հայտնվեց փոքրասիական սահմաններում և ճնշում գործադրելով՝ Դավիթ Կյուրապաղատին ստիպեց հրաժարվել սեփական տիրույթներից ու դրանք

կտակել կայսրությանը, իսկ նրա մահից հետո՝ 1001 թ., տիրացավ Տայքին: Թեպետ 981 թ. բուլղարների ցար Սամուելի գլխավորությամբ Սարդիկայի (Սոֆիա) մոտ ջախջախեցին բյուզանդական զորքերին, այնուամենայնիվ Բասիլը 1018 թ. կարողացավ մեծ զոհողությունների գնով իրեն ենթարկել բուլղարներին՝ վերացնելով թագավորական իշխանությունը, իսկ իր դաժան վարվելակերպի համար արժանացավ *Բուլղարասպան* մականվանը: 1021 թ. Բասիլ Բ-ը Բյուզանդիային միացրեց նաև Վասպուրականը: Բասիլ Բ-ի իշխանության տարիներին Բյուզանդիայի սանձազերծած պատերազմները ամբողջովին դատարկեցին երկրի գանձարանը, ավելի ուժեղացան տեղական իշխանությունների կենտրոնախույս ձգտումները: Այնուամենայնիվ, բյուզանդական ռազմական մեքենան իներցիայի ուժով դեռևս առաջ էր շարժվում: Ռոմանոս Գ Արգիրոս կայսրը (1028–1034 թթ.) արաբ ամիրաներից գրավեց Բերկրին և այլ քաղաքներ ու ամրոցներ՝ սպառնալով հայ Բագրատունիներին: 1032 թ. բյուզանդացիները գրավեցին Եդեսիան: Կայսր Կոստանդին Թ Մոնոմախը (1042–1055 թթ.) Հայոց Բագրատունի թագավոր Հովհաննես-Սմբատի մահից հետո, ըստ նրա կտակի, Գագիկ Բ-ից պահանջեց Անի-Շիրակի թագավորությունը: Մերժում ստանալով՝ պատերազմ սկսեց, որն ավարտվեց Բագրատունիների թագավորության կործանումով: Բյուզանդիան զավթեց Հայաստանը, այն ենթարկելով ծանր հարկահանության ու կրոնական հալածանքների՝ շարունակեց հայերի զինված ուժերի ջլատման և ազատանու տեղահանման քաղաքականությունը:

1040-ական թթ. Բյուզանդական կայսրության դրությունը ծանրացավ: Ապստամբեցին բուլղարները (1040 թ.), նորմանները նվաճեցին Սիցիլիան և Հարավային Իտալիան՝ վերացնելով Բյուզանդիայի տիրապետությունը այդ երկրամասում: 1054 թ. տեղի ունեցավ Հռոմի ու Կոստանդնուպոլսի պատրիարքական աթոռների վերջնական բաժանումը, որոնց հիմքերի վրա ձևավորվեցին քրիստոնյա աշխարհի երկու մեծագույն՝ կաթոլիկ և օրթոդոքս եկեղեցիները: Բյուզանդիայի դրությունն էլ ավելի վատթարացավ, երբ սելջուկները Վասպուրականի ու Բասենի վրայով ներխուժեցին Բյուզանդիայի արևելյան նահանգները: Նրանց դիմադրելու նպատակով Բյուզանդիան փորձեց վերանայել իր քաղաքականությունը Փոքր Ասիայում դեռևս կենսունակ հայկական ավատական զինախմբերի և Հայաստանում դեռևս կանգուն Բագրատունյաց թագավորության մնացորդների նկատմամբ: Ցավոք, արդեն բավական ուշ էր. 1064 թ. սելջուկ-թյուրքերի առաջնորդ Ալփ Արսլան սուլթանը գրավեց Անին, իսկ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում պարտության մատնեց Բյուզանդական բանակին և գերեց Ռոմանոս Դ Դիոգենես (1068–1071 թթ.) կայսրին: 1074 թ. սելջուկների և բյուզանդացիների միջև կնքված հաշտությամբ թյուրքերը ճանաչվեցին իրենց գրաված նահանգների տեր: Կոստանդնուպոլսի մոտակայքում գտնվող Նիկեա քաղաքն անցավ սելջուկ-թյուրքերի տիրապետության տակ:

Արևմուտքից կայսրությանն ավելի ու ավելի էին սպառնում հունգարներն ու կոմանները: 1065 թ. անցնելով Դանուբը՝ կոմանները հասան մինչև Թեսալոնիկե: Բյուզանդիայի թուլացման պատճառները բազմաթիվ են. ա) երկրի տնտեսության քայքայումը մի քանի հարյուրամյակ տևած անդադար պատերազմներից, բ) երկրի

բյուրոկրատական ուռճացած վարչակարգի ֆինանսավորումը, գ) զինվորական դասի հեռացումն իր բուն գործից: Մակեդոնական դինաստիայի իշխանության վերջին տարիներին բանակը հիմնականում համալրված էր օտարերկրյա (նաև թյուրքական ծագում ունեցող) վարձկաններով: Արտաքին ուժերի ճնշումը և երկրի տնտեսության անմխիթար վիճակը իշխանությունների դեմ էին հանել երկրի անապահով բնակչությանը: Դեռևս զինվորական գործն իրենց հիմնական զբաղմունքը համարող մի շարք ազնվականական տներ ճանապարհներ էին որոնում Բյուզանդիայի ամբողջականությունը պահպանելու համար: 1057–1081 թթ. կայսերական գահի վրա իրար էին հաջորդում Կոմնենոսների, Դուկաների, Դիոգենեսների ազնվականական ընտանիքները: 1078 թ. ապստամբություններ բռնկվեցին Փոքր Ասիայում Նիկեփորոս Վոտանիատեսի, իսկ Բալկաններում Նիկեփորոս Բրիեննիոսի գլխավորությամբ: Կայսրության ղեկն իր ձեռքը վերցրեց Ալեքս Կոմնենոսը:

2. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

VIII–IX դարերում Բյուզանդական կայսրության մեջ հետզհետե ուժեղանում էր գյուղական համայնքը: Զգալի չափով սահմանափակվում էր խոշոր հողատիրությունը, ոչնչացվում էր ստրկական և կցագրված կոլոնների աշխատանքի վրա հիմնված հողային սեփականությունը, տիրապետող էր դառնում ազատ գյուղական համայնքը: Ավատական տնտեսությունը շարունակում էր մնալ պետական հսկողության ներքո: Համայնքի անդամները ազատորեն օգտվում էին հողային ժառանգության, նվիրատվության, առուծախի և վարձակալության իրավունքից: Շարունակվում էր ազատ գյուղացիության շերտավորումը հարուստ և աղքատ համայնականների: Հարուստ համայնականները ձեռք էին բերում մի քանի բաժին հողատարածություն, ավելացնում էին ընտանի կենդանիների թիվը, տնտեսության մեջ օգտագործում էին ստրուկների աշխատանքը, կախման մեջ էին դնում աղքատներին: Համայնական սեփականություն հանդիսացող տարածքները, արոտավայրերը, ջրերի նկատմամբ վերահսկողությունը աստիճանաբար անցնում էր հարուստների վերահսկողության տակ: Նման վիճակներից խուսափելու համար հաճախ կատարվում էր համայնական հողերի վերաբաժանում, որը պայմանավորված էր գյուղատնտեսական մթերքների արտադրության ընդլայնումով կամ էլ բնակչության աճով: Համայնական հողատիրությունը խրախուսվում էր պետության կողմից, քանի որ այն ապահովում էր հարկերի անխափան գանձումը: Համայնքի անդամները վճարում էին նաև թափուր կամ անտեր մնացած հողատարածությունների համար:

Մակեդոնական հարստության տիրապետության դարաշրջանում մտցվեց գյուղական բնակչության՝ ստրատիոտների զինվորական ծառայություն կատարելու նոր կարգ[13]: Խոշոր կալվածատերերը (դինատները) ուժեղացնում էին մանր գյուղացիների հողազրկումը. ժամանակի ընթացքում սակավացան ազատ գյուղացիները, ուստի և փոքրացավ ստրատիոտների՝ զինվորական ծառայություն կատարող հարկատու գյուղացիների դասը: Այդ գործընթացը կանխելու համար Ռոմանոս Ա–ը 922 թ. օրենք հրապարակեց, որի համաձայն՝ գյուղացու հողը առաջնահերթության սկզբունքով կարող էին գնել վաճառողի ազգականները, հարևանները, համագյուղացիները, իսկ նրանց հրաժարվելուց հետո միայն՝ կողմնակի մարդիկ: Խոշոր հողատերերը զրկվեցին գյուղացու հողը գնելու կամ այլ ճանապարհով ձեռք բերելու իրավունքից: Ռոմանոս Ա–ի միջոցառումները վաղանցուկ էին: X դ. կազմավորվեց ֆեոդալական ուժեղ ավագանի, ստեղծվեցին խոշոր կալվածային հողատիրության վրա հիմնված հզոր տնտեսություններ: Բյուզանդական սկզբնաղբյուրները հատկապես խոշոր ավատական ընտանիքների անուններ են հիշատակում փոքրասիական տարածքներում (Սկլերոսներ, Փոկասներ, Արգիրոսներ և ուրիշներ): Այդ իշխանները ունեին հսկայական տարածքներ, ստրատեգի տիտղոս, ապրում էին շքեղ պալատներում, իրենց ստորականներից կարողանում էին ստեղծել բանակներ, որոնք պատերազմում էին կայսրության թշնամիների՝ պավլիկյանների, արաբների և Բալկաններից ներխուժող սլավոնների ու պեչենեգների դեմ: Դինատների պալատները քիչ էին տարբերվում կայսերական արքունիքից, նրանց ստորականների մեջ կային պռոտոստրատորներ, կուվիկուլարներ և այլ տիտղոսներ ունեցող պաշտոնյաներ:

Եկեղեցուն տրվող նվիրատվությունների հաշվին մեծացան նաև վանքապատկան հողատարածությունները: X դարում նկատվում է վանքերի աննախադեպ շինարարություն Թեսալոնիկեում, Բյութանիայում, Պրոպոնտիդյան և Արքիպելագի կղզիներում, Աթոնում, Միլեթում, Աթենքում և Կոստանդնուպոլսում: Վանքի տնտեսության հիմնական աշխատուժը մինչև X դարը շարունակում էր մնալ վանականությունը: Այդ շարժումն այնքան մեծ թափ էր ստացել, որ Նիկեփոր Բ Փոկասը արգելեց հողի վաճառքը կամ նվիրատվությունը վանքերին ու եկեղեցիներին: Դա պայմանավորված էր նրանով, որ թողնելով իրենց հողատարածությունները՝ սնանկացած գյուղացիները հեռանում էին այլ բնակավայրեր՝ խուսափելով պետական հարկերից: Սակայն Նիկեփորի հաջորդները չեղյալ հայտարարեցին նրա օրենսդրությունը, ուստի հոգևոր կալվածատերերը շարունակեցին գյուղացիների հողազրկումը՝ հետզհետե օգտագործելով նաև կախման մեջ ընկած գյուղացիների աշխատուժը: XI դարի վերջին ազատ գյուղացիության հիմնական զանգվածը կորցրեց իր հողերի նշանակալի մասը, ազատությունը և դարձավ աշխարհիկ ու հոգևոր ավատատիրոջից կախյալ պարիկոս կամ հողի վարձակալ: XI դարում լայն տարածում գտավ իմունիտետի (էքսկուսիա) իրավունքը, որով աշխարհիկ ու հոգևոր ավատատերերը լայն առանձնաշնորհումներ էին ստանում պետությունից: Մեծ ծավալ ստացավ հարկերը կապալով վերցնելը: Հիմնականում ազատ գյուղացիների հողազրկմամբ էին պայմանավորված XI դարի կեսերին տնտեսական անկումը և երկրի ռազմական անհաջողությունները:

[13] Յուրաքանչյուր ազատ գյուղացի պարտավոր էր ծառայել բանակաթեմային զորքի կազմում: Ըստ ստացվող եկամուտի որոշվում էր նաև զորքի տեսակը՝ հեծյալ, թե հետիոտն: Իրեն պատկանող հողատարածության եկամուտները հոգում էին զինվորականի նյութական կարիքները: Ստրատիոտից պահանջվում էր լինել Բյուզանդական կայսրության քաղաքացի և հավատարիմ մնալ օրթոդոքս եկեղեցու դավանական սկզբունքներին, բանակում չէր կարևորվում նրանց էթնիկական պատկանելությունը:

IX դարում սկսեց զարգանալ բյուզանդական քաղաքը՝ հաղթահարելով նախորդ դարաշրջանի լճացումը: Նոր թափ ստացան արհեստները և առևտուրը: Արհեստավորական միավորումների աշխատանքի կարգավորման գործն իր վրա էր վերցրել պետությունը, որի գանձարանը նշանակալի եկամուտներ ուներ նրանց արտադրանքից: Մասնագիտացված արհեստանոցներում օգտագործվում էր հիմնականում վարձու աշխատանքը: Իրենց արհեստագործական արտադրանքով հռչակված էին Կոստանդնուպոլիսը, Թեսալոնիկեն, որոնց համբավը վաղուց դուրս էր եկել կայսրության սահմաններից: Մակեդոնական հարստության կայսրերը վերացրին քաղաքային ինքնավարության մնացորդները, սենատը դադարեց օրենսդրության մշակմանը մասնակցելուց:

3. ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ XI ԴԱՐՈՒՄ

XI դարի ներքաղաքական լճացումը և գահակալական պատերազմները, ինչպես նաև պեչենեգների և սելջուկների արշավանքները խոր ճգնաժամ հասունացրին երկրում: Պետական հեղաշրջում կատարած Իսահակ Կոմնենոսը (1057–1059 թթ.) փորձեց սահմանափակել երկրում խոշոր հողատերերի իշխանությունը: Երկրի գանձարանը լցնելու համար ձեռք բարձրացրեց նաև վանական հողատիրության վրա, ուժեղացրեց վերահսկողությունը արհեստավորական կորպորացիաների արտադրության վրա: Թեպետ այս քայլերը նպատակ էին հետապնդում ուժեղացնելու կայսերական իշխանությունը, երկրի ուռճացած պաշտոնեությունը և կենտրոնախույս ուժերը պատերազմ հայտարարեցին արհեստավարժ զինվորականին, որը կարողացավ կանգնեցնել պեչենեգների մուտքը Բալկաններ: Իսահակի վարած քաղաքականության հզորագույն հակառակորդը դարձավ Կոստանդնուպոլսի պատրիարք Միքայել Կերուլարիոսը:

Գահից հրաժարված Իսահակ Կոմնենոսին հաջորդեց մայրաքաղաքային ազնվականության թեկնածու Կոստանդին Դուկասը (1059–1067 թթ.), որը ազգակցական կապեր ուներ Դալասին և Մակրեմվոլ հզոր ընտանիքների հետ: Նոր կայսրը, ներկայացնելով մայրաքաղաքային սինկլիտի և քաղաքային բնակչության շահերը, փորձեց հարկային քաղաքականության, պաշտոնների վաճառքի շնորհիվ լցնել դատարկ գանձարանը՝ միաժամանակ կրճատելով բանակի վրա կատարվող ծախսերը: Այս քաղաքականության հիմնական հետևանքը եղան 1064 թ. պեչենեգների կողմից դանուբյան սահմանի նոր ավարառությունները: Բանակի հատկացումների կրճատումը կայսեր քաղաքականության դեմ դուրս բերեց զինվորականությանը և զավառական ազնվականությանը: Դրանից օգտվեցին նաև նորմանները, որոնք աշխուժացան Հարավային Իտալիայում, իսկ հունգարները և ուզ-թյուրքերը, պատերազմ սանձազերծելով Բալկաններում, 1064 թ. գրավեցին Բելգրադը: Սելջուկ-թյուրքերը գրավեցին Անին և Ալփ Արսլանի գլխավորությամբ նվաճելով Ասորիքը՝ արշավանքներ կազմակերպեցին դեպի Փոքր Ասիայի խորքերը:

Կոստանդինի կին Եվդոկիան ամուսնացավ զինվորական վերնախավի ներկայացուցիչ Ռոմանոս Դիոգենեսի հետ, որին էլ հանձնեց երկրի կառավարումը: Կոստանդին Դ Դիոգենեսի (1068–1071 թթ.) հենարանը փոքրասիական խոշոր հողատեր ազնվականությունն էր, հատկապես նկատելի է դաշինքը Կոմնենոսների ընտանիքի հետ: Նոր կայսրը փորձեց կրկին վերականգնել բյուզանդական բանակի մարտունակությունը և իր կառավարման երկրորդ տարում հաջող ռազմարշավ սկսեց Փոքր Ասիա թափանցած սելջուկների դեմ, սակայն 1070/71 թ. դիմագրավելով Ալփ Արսլանի նոր ռազմարշավին՝ Մանազկերտի ճակատամարտում գերի ընկավ: Այդ պարտության մեջ իրենց դերն ունեցան բանակում և կայսրության մեջ գլուխ բարձրացրած անջատողական ուժերը Անդրոնիկ Դուկասի գլխավորությամբ, որոնք հենվում էին մայրաքաղաքային պաշտոնեության աջակցության վրա:

Գահ բարձրացավ Միքայել Է Դուկասը (1071–1078 թթ.): Գերությունից ազատված և սելջուկների հետ պայմանագիր կնքած Ռոմանոսը, պարտություն կրելով իտալական վարձկանների հրամանատար Կրիսպինից և Անդրոնիկ Դուկասից, ստիպված էր հրաժարվել գահից և հանձնվել հաղթողների բարեսրտությանը: Երկրի կառավարման լծակները կրկին անցան մայրաքաղաքային ազնվականության ձեռքը, սակայն շուտով Անդրոնիկ Դուկասը և նրա շրջապատը հեռացվեցին իշխանությունից, և կառավարման լծակները իր ձեռքը վերցրեց ներքինի Նիկիփորը, որը փորձեց պետական գանձարանը լցնել եկեղեցուց խլված ոսկեղենով: Խիստ հսկողության տակ դրվեց հացի առևտուրը մայրաքաղաքում, սահմանափակեցին ավատական ազնվականության իրավունքները, սակայն չհաջողվեց վերացնել իր գագաթնակետին հասած ներքին ճգնաժամը: Նորմանների առաջնորդ Ռոբերտ Գվիսկարը նվաճեց Հարավային Իտալիայում բյուզանդական վերջին բաստիոն Բարիի ամրոցը: Խորվաթները իրենց հպատակությունը հայտնեցին Հռոմի պապ Գրիգոր Է-ին: Փոքր Ասիայում և մայրաքաղաքում սով սկսվեց: 1072/73 թթ. ապստամբեց Արևմտյան Բուլղարիան, Բալկանների կենտրոնախույս ուժերը, դաշնակցելով պեչենեգների հետ, ներխուժեցին երկրի կենտրոնական նահանգներ: Փոքր Ասիայում խռովություն բարձրացրեց վարձկանների հրամանատար Ռուսելը: 1077 թ. Մակեդոնիայում ապստամբեց ինքնակոչ Նիկեփորոս Բրիեննիոսը և արշավեց դեպի Կոստանդնուպոլիս: Արևելյան թեմերի ազնվականներին և զինվորականությանը համախմբելով՝ իշխանությունների դեմ ելավ նշանավոր զորահրամանատար Նիկիփոր Վոտանիատեսը, որը նվաճեց Նիկեան և մերձակա քաղաքները: Միքայել կայսրը մտավ Ստուդիտների վանք, իսկ կառավարիչ Նիկիփորը դատապարտվեց մահվան:

Կայսերական գահն անցավ զավառական ազնվականության առաջնորդ Նիկեփորոս Գ Վոտանիատեսին (1078–1081 թթ.), որի իշխանությունը ճանաչեցին Դուկաս և Կոմնենոս ազնվականական ընտանիքները, կյուրապաղատ Փիլարտոս Վարաժնունին: Նիկիփոր Վրիենոսը, չճանաչելով նրա իշխանությունը, պարտություն կրեց և կուրացվեց: Նիկիփոր Գ-ը չեղյալ հայտարարեց Նիկիփոր կառավարչի միջոցառումները, եկեղեցուն վերադարձրեց խլված գույքը, զավառական ազնվականությունը ետ ստացավ իր իրավունքները: Գանձարանը մեկ անգամ ևս դատարկվեց: Նորմանների հետ սկսված բանակցությունները դադարեցվեցին, Ռոբերտ Գվիսկարն իր հովանավորության տակ առավ ինքնակոչ Միքայել Է-ին: Բուլղարիայում

պավլիկյան Լեկան, դաշնակցելով պեչենեգների հետ, հարձակվեց Սարդիկայի վրա: Դիոսխիումի քաղաքապետ Նիկիփոր Վասիլակին նվաճեց Թեսալոնիկեն, սակայն շուտով պարտություն կրեց: Ապստամբեց նաև Միքայել Է-ի եղբայր Կոստանդին Դուկասը: Սակայն ամենավտանգավորը փոքրասիական ազգաբնակչության անցումն էր սելջուկների կողմը, որից օգտվելով՝ Նիկիփոր Մելիսինը Նիկեայի մոտ ջախջախեց կայսերական բանակը: Մինչ վերջինս կհասցներ մոտենալ Կոստանդնուպոլսին, Ալեքս Կոմնենոսը, որը բանակ էր դրել Թրակիայում, 1081 թ. մարտին գրավեց Կոստանդնուպոլիսը և ապրիլի 4-ին պաշտոնապես հռչակվեց կայսր: Նոր գահակալը մեծ ջանքեր թափեց հաղթահարելու համար երկրի ներքին ճգնաժամը և հակահարված տալու արտաքին թշնամիներին:

4. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բյուզանդական կայսրության արտաքին քաղաքական հայեցակարգում միշտ կարևոր դեր է հատկացվել Արևելքին: IX դարի կեսերից Արաբական խալիֆայության աստիճանական թուլացման և կենտրոնախույս ձգտումների ուժեղացմանը զուգահեռ, Բյուզանդական կայսրությունը ոչ միայն ամրացրեց իր սահմանները, այլ նաև հետևողական ռազմարշավներով սկսեց ետ շպրտել խալիֆայությանը Փոքր Ասիայից և Հյուսիսային Ասորիքից: Բյուզանդիայի համար օրակարգի հարց էր դարձել 591 թ. բյուզանդա-պարսկական պայմանագրով գծված սահմանի վերականգնումը: 863 թ. Թրակիա թեմի ստրատեգ Պետրոնաս զորահրամանատարը պարտության մատնեց Մելիտենեի էմիր Օմարին: Դա նոր հաղթանակների պատուհան բացեց բյուզանդական բանակների համար: Փոքր Ասիայում առաջանալու ծրագրում բյուզանդական բանակների համար խոչընդոտ էին նաև պավլիկյան աղանդավորները: Այս է պատճառը, որ միայն 873 թ.՝ պավլիկյանների կենտրոն Տևրիկն ավերելուց հետո, բյուզանդացիները կրկին ռազմարշավ ձեռնարկեցին արաբական խալիֆայությանը ենթակա Հյուսիսային Ասորիք: Բյուզանդական բանակի գլուխ անցած Բարսեղ Ա Մակեդոնացին նվաճեց Զապետրա և Սամոսատ քաղաքները, սակայն Մելիտենեի մոտ պարտության մատնվեց: Լևոն Զ-ի զորահրամանատար Նիկիփոր Փոկաս Ավագը 890-ական թթ. կարողացավ թափանցել Կիլիկիա, սակայն բյուզանդացիները չկարողացան զարգացնել հաջողությունը, քանի որ արաբներից պարտություն կրեցին ծովում: Բյուզանդական բանակի նոր հաջողությունները կապված էին զորահրամանատարներ Եվստաթեոս և Լևոն Արգիրոսների, Մլեհ Մեծի անունների հետ: Մանավանդ վերջինս կարողացավ արաբներից խլել ընդարձակ տարածքներ, կառուցեց սահմանային Լիկանդոս (նույնանուն բանակաթեմի կենտրոնը) և Ծամնդավ ամրոցները: Այս զորահրամանատարների հաջողությունը Ռոմանոս Լեկապենոսի իշխանության տարիներին զարգացրեց փոքրասիական ազնվականության մեկ այլ ներկայացուցիչ՝ դոմեստիկոս Հովհաննես Կուրկուասը, որը կարողացավ 934 թ. տիրել Մելիտենեին և Բյուզանդիայի քաղաքական ազդեցությունը տարածել Հյուսիսային Ասորիքի տարածքների վրա: Օգտագործելով Բաղդադի և Սեյֆ

ադ-Դաուլա Համդանյանի միջև հակամարտությունը՝ 938 թ. Ռոմանոս Լեկապենոսը զինադադար կնքեց խալիֆա ադ-Ռադի հետ: Արևելյան սահմաններում բյուզանդական ցամաքային բանակների հաջողությունները ժամանակ առ ժամանակ մթագնվում էին կայսրության ռազմածովային ուժերի պարտություններով, արաբները շարունակում էին տիրել Կրետեին և Կիպրոսին:

Բյուզանդիայի արևելյան քաղաքական առաջնությունների մեջ շարունակում էր կարևոր դեր կատարել Հայաստանը, որի տարածքների հիմնական մասը Արաբական խալիֆայության սահմաններում էր: 885 թ. խալիֆայությունը ճանաչեց Աշոտ Բագրատունու հռչակած անկախությունը, չհապաղեց իր հավանությունը հայտնել նաև Բյուզանդական կայսրությունը: Բարսեղ Ա Մակեդոնացին փորձում էր իր ազդեցությունը տարածել նաև Հայաստանի վրա: Բյուզանդական կայսրության և Արաբական խալիֆայության քաղաքական հակամարտության բովում Հայաստանում գլուխ էին բարձրացնում կենտրոնախույս ուժերը, որոնց հավասարապես օգտագործում էին հակամարտող կողմերը: Այդ քաղաքականությունը X դ. կեսերին հասցրեց բազմաթիվ ինքնանկախ թագավորությունների և իշխանությունների առաջացմանը, որոնք անզոր էին կանգնեցնելու բյուզանդական էքսպանսիան և նվաճվում էին կայսրության կողմից:

Բյուզանդական կայսրությունը Հայոց եկեղեցու հետ վերսկսեց եկեղեցական բանակցությունները: Այս շրջանում կայսրությունը պատրիարք Նիկողայոս Միստիկոսի միջոցով մի քանի անգամ դիմեց Հայոց կաթողիկոսին և Հայոց թագավորին՝ խոստանալով օգնել Հայաստանին արաբների դեմ պատերազմում: 914 թ. բանակցություններ վարելու նպատակով Կոստանդնուպոլիս մեկնեց Աշոտ Երկաթը:

X դարի երկրորդ կեսին փոքրասիական ազնվականությունը, օգտագործելով երկրի ռազմական հաջողությունները, տեր դարձավ մեծ քանակությամբ հողային տիրույթների և հետզհետե իր ձեռքը վերցրեց երկրի կառավարումը: Թեպետ Կոստանդին Է Ծիրանածնի (913-959 թթ.) իշխանության շրջանում քայլեր ձեռնարկվեցին սահմանափակելու զինվորական խոշոր հողատերերի իշխանությունը, սակայն օրենսդրական այդ քայլերը հանդիպեցին հզոր դիմադրության: Կայսրը ստիպված էր բավարարվել միայն հետևակ, հեծյալ և ծովային ստրատիոտների ստացած եկամուտների հաստատագրմամբ, որով ամրապնդվեց շարքային զինվորների նյութական վիճակը: 949 թ. Բյուզանդական կայսրությունը նվաճեց Կարինը (Թեոդոսոպոլիս), մտավ Ապահունիք և Հարք, գրավեց Ադանան և Մարաշը: Նիկիփոր Փոկաս և Հովհաննես Չմշկիկ զորահրամանատարները, պարտության մատնելով Համդանյաններին, նվաճեցին Կիլիկիան, 958 թ. մտան Սամոսատ: Վերջապես բյուզանդական նավատորմը 961 թ. նվաճեց Կրետեն, իսկ ցամաքային զորքերը հպատակեցրին Հալեպը՝ ջախջախելով Սեյֆ ադ-Դաուլայի բանակը: 963 թ. հեղաշրջումը մայրաքաղաքում իշխանության գլուխ բերեց փոքրասիական խոշոր ազնվականության ներկայացուցիչ Նիկիփոր Բ Փոկասին, որը միավորեց երկրի ուժերը՝ արաբների դեմ պատերազմը հաղթանակով պսակելու համար: Հարկային արտոնություններ տրվեցին ծանր հեծելազորային-ստրատիոտներին: 969 թ. բյուզանդական բանակը գրա-

վեց Անտիոքը, Հալեպի ամիրաները պարտավորվեցին հարկ վճարել կայսրությանը: Սակայն ռազմական հաջողությունները արևելքում զուգորդվում էին Կ. Պոլսում սկսված սովի հետ, Նիկիփոր Բ Փոկասը ստիպված էր զանձարանը լցնել եկեղեցուց բռնագրաված ունեցվածքով, որն էլ նրա դեմ դուրս բերեց եկեղեցուն և քաղաքային բնակչությանը:

Կայսեր նախկին զինակից Հովհաննես Չմշկիկը, 969 թ. սպանելով Նիկիփորին, գրավեց գահը: Թեպետ ինքն էլ ծագմամբ փոքրասիական խոշոր զինվորական-հողատերերի ներկայացուցիչ էր, ստիպված էր զիջումներ կատարել քաղաքային պաշտոնեությանը և եկեղեցուն: Ճնշելով Փոկասի կողմնակիցների անհնազանդությունը՝ 970 թ. Չմշկիկը գրավեց Հալեպը, 972 թ. մտավ Մծբին և Մարտիրուպոլիս, իսկ 975 թ. հասավ մինչև Պաղեստին: Նրա նախաձեռնությամբ մեծ քանակությամբ պավլիկյան աղանդավորներ տեղափոխվեցին Բալկաններ: Նա մեծ ջանքեր թափեց բարելավելու ստրատիոտ-հողատերերի նյութական վիճակը, երկիրը դուրս բերեց ներքին ճգնաժամից: Չնայած ներքին և արտաքին քաղաքական հաջողություններին՝ նրա դեմ ապստամբեց մտերիմ զինակից Վարդաս Սկլերոսը՝ իր թիկունքում ունենալով փոքրասիական հողային ազնվականությանը: Ապստամբությունը ճնշվեց, սակայն Հովհաննես Չմշկիկն էլ 976 թ. մահացավ անհասկանալի մահով, որով էլ վերջ դրվեց փոքրասիական հողատեր մագնատների իշխանությանը: Դրան նպաստեց նաև Վարդաս Սկլերոսի նոր խռովությունը, որը ճնշվեց աքսորից ետ կանչված Վարդաս Փոկասի հրամանատարությամբ: Փաստորեն իրար դեմ ելան խոշոր հողատիրության շահերը պաշտպանող երկու ազնվականական ընտանիք:

Այս պայքարն իր իշխանությունն ամրապնդելու համար օգտագործեց գահի ժառանգորդ Բասիլ Բ-ը (976-1025 թթ.), որն իր ձեռքը վերցրեց բանակի հրամանատարությունը, իսկ 989 թ. ճնշեց ինքնակոչ Վարդաս Փոկասի ապստամբությունը: Բասիլ կայսեր առաջին օրենսդրական նորամուծությունները ուղղված էին խոշոր հողային սեփականատերերի հզորության թուլացմանը և մանր ստրատիոտների՝ կռվող զինվորի շահերի պաշտպանությանը: Կայսեր վերահսկողությունը տարածվեց նաև եկեղեցու վրա: Մեծացան պետական զանձարանի մուտքերը: Արևելքում Բասիլ Բ-ի հիմնական հակառակորդը Եգիպտոսի Ֆաթիմյաններն էին, որոնք Հալեպին տիրանալու համար երկարատև պայքար էին վարում Բյուզանդիայի դեմ: Այդ պայքարը փոփոխական հաջողություններով շարունակվեց մինչև 1016 թ., երբ բյուզանդացիները կարողացան կանգնեցնել հակառակորդի առաջխաղացումը: Այդ ընթացքում բյուզանդացիները պատերազմ էին վարում Վարդաս Փոկասի դաշնակից Դավիթ Կյուրոպաղատի և Հայոց Բագրատունիների դեմ: Բասիլն այդ պատերազմների շնորհիվ 1001 թ. կայսրությանը միացրեց Տայքը, իսկ 20 տարի հետո նվաճեց Վասպուրականը, Սմբատ Բագրատունուն ստիպեց Բյուզանդիային կտակել Անիի թագավորության տարածքները:

Տիրանալով Հայաստանին՝ Բյուզանդիան իր առաջին գործը համարեց բնիկ ավագանուն վերացնելը կամ Արևմուտք գաղթեցնելը: Հայաստանը բաժանվեց ռազմաքաղաքական առանձին շրջանների, որոնք կոչվում էին կատապանություններ և

կառավարվում էին կատապանի կամ ստրատեգի կողմից: Հայաստանի նվաճումից շատ չանցած՝ տեղական զորքերը լուծարվեցին: Շուտով ավելի մեծ թափ ստացավ դավանական հալածանքը: Անիի կաթողիկոսարանը փակվեց, իսկ կաթողիկոսն աքսորվեց: Կայսրությունը շատ լավ էր գիտակցում, որ պետականության վերացման պայմաններում հայերին կենտրոնացնող և համախմբող միակ ուժը Հայոց կաթողիկոսությունն է: Նման քաղաքականությունը, սակայն, վերջին հաշվով ճակատագրական դարձավ նաև հենց իր՝ կայսրության համար: Կայսրությունը վերացրեց այն պատնեշը, որ փակում էր դեպի Բյուզանդիա տանող թշնամական հորդաների ճանապարհը: Երբ ԺԱ դարի առաջին կեսին Հայաստանում հայտնվեցին նախ թուրքմեն հրոսակները, ապա և ավելի հզոր՝ սելջուկ-թյուրքերը, Բյուզանդիան ի վիճակի չեղավ նրանց առաջն առնելու, իսկ Հայաստանն էլ արդեն զրկվել էր պաշտպանական զորությունից: Անիի անկումից երկուսուկես տասնամյակ անց Մանազկերտի ճակատամարտը (1071 թ.) Բյուզանդիայի համար ճակատագրական նշանակություն ունեցավ: Թեև սելջուկ-թյուրքերի՝ Փոքրասիական թերակղզուն տիրանալը վերջ դրեց հայ-բյուզանդական հարաբերություններին բուն երկրում, այդուհանդերձ այդ հարաբերությունները շարունակվեցին Կիլիկիայում, որտեղ հայության մի ստվար զանգված, խուսափելով բյուզանդական ու թյուրքական ճնշումներից, ապաստան էր գտել և ստեղծել իր անկախ պետությունը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ XII–XIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ ԿՈՄՆԵՆՈՍ ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ալեքսիոս Ա Կոմնենոսի (1081–1118 թթ.) կողմից գահի զավթման շրջանում Բյուզանդիային սպառնում էին բազմաթիվ թշնամիներ. մեկը մյուսին էին հաջորդում ավատատիրական վերնախավի ապստամբությունները, սելջուկները նվաճել էին Փոքր Ասիան, նորմանները զավթել էին Իտալիան և պատրաստվում էին թափանցել Հունաստան, անցնելով Դանուբը՝ պեչենեգները թափանցում էին Բալկաններ: Դատարկվել էր պետական գանձարանը, խախտվել էր երկրի ներքին կյանքը կարգավորող բանակաթեմային կառուցվածքը, որն այլևս չվերականգնվեց: Ալեքսիոս Ա կայսեր հետևողական ջանքերի շնորհիվ երկիրը դուրս բերվեց խոր ճգնաժամից և մի քանի տասնամյակ հետո կրկին դարձավ տարածաշրջանի հզոր պետություններից մեկը: Առաջին երեք Կոմնենոս կայսրերից յուրաքանչյուրն իր դերն ունեցավ կայսրության հեղինակության բարձրացման գործում: Կոմնենոսների ներքին քաղաքականության հիմնական ուղղվածությունը դարձավ փոքրասիական խոշոր ավատական ընտանիքների և մայրաքաղաքային պաշտոնեության դերի սահմանափակումը երկրի կառավարման գործում: Կոմնենոսները կայսրության տարածքները սկսեցին դիտել իբրև սեփական տիրույթ և իրենց իշխանության հենարան դարձնել գավառական քաղաքներն ու ամրոցները: Երկրի կառավարման լծակները հանձնվեցին հավատարիմ ստորականներին, նկատվեց զինվորական և քաղաքացիական իշխանությունների համատեղում: Եկեղեցու կառավարման, հատկապես վանական տնտեսությունների վերահսկման մի շարք լծակներ իրենց ձեռքը վերցրին կայսրերը, աղանդավորական շարժումների, հատկապես բոգոմիլների դեմ միջոցառումներ էին կիրառում իշխանությունները: Ավատական հակասությունները սկսեցին արտահայտվել Կոմնենոսների կլանի ներսում, հիմնական հակակառավարական ապստամբությունների գլուխ էին կանգնում կայսեր հարազատները:

Ալեքսիոս Ա Կոմնենոսը քայլեր ձեռնարկեց ապահովելու երկրի սահմանների անձեռնմխելիությունը: Նա, դաշինք կնքելով վենետիկցիների հետ, նրանց նավատորմի օգնությամբ հաղթեց նորմաններին և ետ նվաճեց կորցրած տարածքները: 1108 թ. բյուզանդացիները վերջնականապես պարտության մատնեցին Բոհեմունդ Անտիոքացուն և հեռացրին Բալկաններից՝ ստիպելով ստորագրել Դեաբոլի հաշտության պայմանագիրը: 1091 թ. Ալեքսիոս Կոմնենոսը կարողացավ պարտության մատնել պեչենեգներին և կումաններին՝ ետ շպրտելով Դանուբի ձախ ափ: Հետագա

պայքարը Բալկանների համար մղվում էր հունգարական թագավորության, սերբական իշխանությունների, իսկ XII դարի վերջին՝ կրկին բարձրացող բուլղարական թագավորության դեմ: Սելջուկները շարունակում էին իրենց ձեռքում պահել գրեթե ողջ Փոքր Ասիան: Ալեքսիոսը կարողացավ դիվանագիտական հնարքներով վերանվաճել Սինոպն ու Նիկոմեդիան, իսկ խաչակիրների օգնությամբ 1097 թ. Նիկեայի մոտ ջախջախեց Ռումի սուլթան Խլիճ Արսլանին և վերստին տիրեց Փոքր Ասիայի մի շարք նահանգների: Բյուզանդիան կարողացավ նաև սելջուկներին խանգարել ստեղծելու սեփական նավատորմ, թեպետ ողջ XII դարում նա իր արևելյան սահմաններում գործ ունեցավ Իկոնիայի սուլթանության և Դանիշմանյան ամիրայության հետ՝ պատեհ առիթներին օգտագործելով նրանց միջև հակամարտությունը: Փոքր Ասիայի հյուսիսում՝ Սև ծովի ափին՝ հին Խալդիա բանակաթեմի տարածքում, իր գոյությունն էր շարունակում Տրապիզոնի դքսությունը, որի կապերը Բյուզանդական կայսրության մնացած տարածքների հետ գրեթե ամբողջովին խզվել էին: Տրապիզոնում հաստատված իշխանությունները, չնայած ճանաչում էին Բյուզանդական կայսրության գերակայությունը, այնուամենայնիվ կայսրության ներսում գլուխ բարձրացրած անջատողական միտումների կրողներն էին: Բյուզանդական արևելյան քաղաքականության ծիրում դեռևս իրենց նշանակությունն էին պահպանում Կիլիկիան և Հյուսիսային Ասորիքը:

Հովհաննես Բ Կոմնենոսը (1118–1143 թթ.) վենետիկցիների հետ կնքված նվաստացուցիչ պայմանագրից ազատվելու նպատակով երկրից արտաքսեց առևտրի ասպարեզում բավական ամուր դիրք հաստատած վենետիկցիներին: Սակայն չունենալով հզոր նավատորմ՝ վերստին հաստատեց Բյուզանդիայում նրանց տրված առանձնաշնորհումները: 1122 թ. Հովհաննես Բ–ը հաղթեց պեչենեգներին, որոնք դրանից հետո անհետացան պատմության ասպարեզից: Եթե ուշադիր հետևենք XII դարի երկրորդ և երրորդ տասնամյակներում արևելքում բյուզանդական արշավանքների և տարածքային գրավումների ուղղություններին, պարզ կդառնա, որ կայսրության արտաքին քաղաքականության առաջնային խնդիրներից է եղել Փոքր Ասիայի հյուսիսային և հարավային ծովափնյա շրջաններում վերահաստատվելը: Նման քաղաքականությամբ կայսրությունը իր առջև նպատակ էր դրել խանգարելու սելջուկ–թյուրքերին ստեղծելու ռազմական և առևտրական նավատորմ, որը կարող էր մրցակցության մեջ մտնել կայսերական նավատորմիղի հետ և լուրջ վտանգ դառնալ կայսրության առևտրական ու արտաքին քաղաքական կապերի և ընդհանրապես Միջերկրական ծովում միջազգային ծովագնացության համար: 1136–1138 թթ. Հովհաննես Բ Կոմնենոսը մեծ բանակով արշավեց Կիլիկիա՝ նպատակ ունենալով վերացնելու Ռուբինյան հայկական իշխանությունը, որը փորձում էր թոթափել Բյուզանդիայի գերակայությունը: Բյուզանդական բանակի նպատակներից էր նաև Հյուսիսային Ասորիքի հպատակեցումը, որի համար պայքարը շարունակվեց նաև 1143 թ. ռազմարշավի ընթացքում: Տարածաշրջան թափանցելու փորձերն ապարդյուն էին անցնում, քանի որ Ռումի սուլթանությունը Ղլիճ Արսլան Բ–ի տարիներին օրավուր ամրապնդում էր իր դիրքերը:

Մանուել Ա Կոմնենոսը (1144–1180 թթ.) ակտիվ քաղաքականություն էր վարում ողջ Արևելյան Միջերկրականում. միջամտում էր Խաչակրաց պետությունների գործերին, ծովային ռազմարշավներ էր կազմակերպում դեպի Կորֆու (1149 թ.), Իտալիա (1154 թ.) և Եգիպտոս (1168 թ.), ակտիվորեն աջակցում էր իտալական քաղաքներին Ֆրիդրիխ Բարբարոսայի դեմ պայքարում: Հաջողությամբ պատերազմում էր Բալկաններում պոլովցիների (1148 թ.) և նորմանների դեմ (1149 թ.), փորձում էր չափավորել անկախության ձգտումը սերբերի մոտ (1168, 1173 թթ.), ռազմարշավներով պատժում էր հունգար արքաներին (1151, 1161, 1167 թթ.): Մանուել Ա Կոմնենոսը 1158–1159 թթ. նոր ռազմարշավ ձեռնարկեց Հյուսիսային Ասորիք: Ռումի սուլթանն այդ ընթացքում կարողացավ հաշվեհարդար տեսնել իր ամենաոխերիմ հակառակորդ Դանիշմանյան ամիրայության հետ: Փոքր Ասիայում ուևանշի ձգտող երկու տերությունների պայքարը մոտեցավ իր գագաթնակետին. 1175 թ. սկսված պատերազմն ավարտվեց 1176 թ. Միրեոկեֆալոնի մոտ բյուզանդական բանակի ջախջախմամբ, թեպետ երկարատև պատերազմներից ուժասպառ սելջուկները չկարողացան զարգացնել իրենց հաջողությունը: Նույն թվականին Բյուզանդիային դաշնակից իտալական քաղաքները պարտություն կրեցին Ֆրիդրիխ Բարբարոսայից: Այս պահից ի վեր Կոմնենոսների հարստության դիրքերը Բյուզանդիայում սկսեցին թեքվել դեպի մայրամուտ:

Մանուել Ա Կոմնենոսի մահից հետո գահակալական պատերազմները, արյունալի հեղաշրջումները և ժողովրդական ապստամբությունները ցնցեցին երկիրը: 1183 թ. մանկահասակ Ալեքսիոս Բ Կոմնենոսի ձեռքից իշխանությունը խլեց Անդրոնիկոս Ա Կոմնենոսը, իսկ 1185 թ. իշխանությանը տիրացավ Իսահակ Բ Անգելոսը (1185–1195 թթ.), որից իշխանությունը գրավեց հարազատ եղբայրը՝ Ալեքսիոս Գ–ը (1195–1203 թթ.): Կայսերական իշխանության հասնելու համար թեկնածուները դիմում էին քաղաքային բնակչության և օտարազգի վարձկանների օգնությանը: Այս դարաշրջանում կայսրության պատմության մեջ լուսավոր կետ կարելի է համարել 1192 թ. Իսահակ Կոմնենոսի տարած հաղթանակը գահակալական պատերազմներից բզկտված Իկոնիայի սուլթանության դեմ: 1185 թ. նորմանները կրկին բանակ դուրս բերեցին Բալկաններ՝ փոփոխական հաջողություններով պատերազմը շարունակելով մինչև 1187 թ.: Երկու տարի անց III խաչակրության դրոշի ներքո Ֆրիդրիխ Բարբարոսան ներխուժեց Բալկաններ և գրավեց Փիլիպպոպոլիս քաղաքը: Բյուզանդիան ստիպված էր ճանաչել Բուլղարիայի անկախությունը, հունգարները նվաճեցին Հյուսիսային Դալմաթիան, սերբերը ամրապնդեցին իրենց անկախությունը Հարավային Դալմաթիայի տարածքներում: Իշխանությունները ավելի ու ավելի էին կախման մեջ ընկնում վենետիկյան կապիտալից:

2. ԼԱՏԻՆԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ

ԺԲ դարի վերջի քաղաքական անկայուն վիճակը հանգեցրեց IV խաչակրաց ռազմարշավի բանակների կողմից 1204 թ. ապրիլի 13–ին Կոստանդնուպոլսի գրավմանը: Ստեղծվեց մի նոր պետություն, որը սկզբնաղբյուրներում առավել հայտնի է

Ռոմանիա անվամբ, իսկ մասնագետներն անվանում են Լատինական կայսրություն: Խաչակրաց բանակը վենետիկցիների աջակցությամբ Կ. Պոլսի գահին բազմեցրեց Ֆլանդրիայի գրաֆ Բալդուինին, որի թագադրումը տեղի ունեցավ 1204 թ. մայիսի 16–ին Ս. Սոֆիայի տաճարում: Նոր կայսրը, յուրացնելով Բյուզանդիայի կայսեր տիտղոսները, նմանակում էր արքունական էտիկետի յուրահատկությունները՝ շնորհելով խաչակրաց բանակի հրամանատարներին պատվո աստիճաններ: Մյուս կողմից՝ կայսրության բնակիչներին նվաճողները համարում էին հերձվածող: Խաչակիրները թալանեցին մայրաքաղաքը, Կ. Պոլսի պատրիարքական գահին նշանակվեց վենետիկցի Թոմազո Մորոսինին, բյուզանդական ազնվականությունը հեռացվեց երկրի ղեկավարումից: Այս քաղաքականությունը խաչակիրներին խանգարում էր յուրացնել գավառները: Եթե սրան հավելենք նաև խաչակրաց բանակի հրամանատարների միջև պայքարը առաջնության և դեռևս չգրավված տարածքների համար, ինչպես նաև վենետիկցիների պահանջները, մոտավորապես կարելի է պատկերացնել այն մթնոլորտը, որ տիրում էր նվաճողների բանակում: Լատինական կայսրության ընդարձակմանը խանգարեցին Կ. Պոլսի անկումից հետո կազմակերպված Տրապիզոնի և Նիկեայի կայսրությունները, Էպիրոսի և Բուլղարական թագավորությունները: Բուլղարական բանակը, Ադրիանապոլի մոտ 1205 թ. ապրիլին Կալոյանի ղեկավարությամբ պարտության մատնելով խաչակրաց բանակին, գերեց Բալդուին կայսրին: 1214 թ. կնքված Նիմֆեայի պայմանագրով լատիններն իրենց տիրապետությունը հաստատեցին միայն Փոքր Ասիայի հյուսիս–արևմուտքում: Լատիններն ավելի հաջող հաստատվեցին միջին Հունաստանում, Պելեպոնեսում, Էվբեայում և Կրետեում:

Լատինական կայսրության հաջորդ կայսրը՝ Բալդուինի եղբայր Հենրին (1206–1216 թթ.), ստիպված էր հրաժարվել եղբոր բացահայտ հակահունական քաղաքականությունից և զիջումներ կատարել բյուզանդական ազնվականությանը: Դրա շնորհիվ նա կարողացավ դաշնակցելով Տրապիզոնի կառավարիչների հետ՝ պատերազմել Նիկեայի դեմ: Թեպետ Թրակիայում Հենրին հասավ որոշ հաջողությունների՝ բուլղարների դեմ հանելով բյուզանդական ազնվականությանը, սակայն Էպիրոսի կառավարչից դժվարությամբ խլեցին Կորնթոսը: Երկարատև պայքարից հետո՝ 1209 թ., Հենրիին իրենց հպատակությունը հայտնեցին Թեսալոնիկեի լատին թագավոր Դիմիտրին և Պելեպոնեսի իշխող Ժոֆրուա Վիլարդուենը: Միջին Հունաստանի մյուս լատին իշխանությունները (Աթենքի հերցոգություն, Նեգրոպոնտոս, Կրետե և այլն) վասալական կախման մեջ էին հայտնվում Վենետիկից և Հռոմի պապությունից: Էպիրոսը միայն ժամանակավորապես ճանաչեց Լատինական կայսրության գերագահությունը, իսկ Տրապիզոնի կախումը կայսրությունից ձևական էր: Խաչակիրների կողմից Հունաստանի գրավումից հետո երկրամասում հաստատվեցին ֆրանսիական ավատատիրությանը հատուկ փոխհարաբերություններ, որոնք կարգավորվում էին «Ռոմանիայի ասիզներով»: Գյուղացիների ճորտացումը ավելի մեծ չափերի հասավ: Ավատատեր ստորականները Ավետարանի վրա երդվում էին իրենց գերականերին և իբրև իշխանության նշան նրանցից ստանում մատա-

նի, ձեռնոց կամ գավազան: Ստորակայի հիմնական պարտականություններից էր զինվորական ծառայությունը: Միայն Մորեայում հաշվվում է շուրջ 600 ավատատիրական տնտեսություն: Խոշոր ավատատերերին էին ենթարկվում առնվազն 25 հողատեր–ասպետներ: Խոշոր բարոնները ունեին լայն իրավական լիազորություններ. կարող էին նույնիսկ արձակել իրենց ստորակայի մահվան դատավճիռը, ապաֆեոդալականացնել իրենց հողերի մեկ երրորդը, առանց գերակայի թույլտվության ամուսնացնել դուստրերին, նրանց կարող էին բանտարկել միայն դավաճանության և սպանության պարագայում, ազատված էին գերակային տրվող որոշ հարկերից: Այն հույն ազնվականները (արխոնտ), որոնք ճանաչել էին լատինների նվաճումները, ներգրավվել էին ավատատերերի դասակարգի մեջ: Նրանց համար գործում էր ժառանգականության հատուկ կարգ. եթե լատին ազնվականի ավատն անցնում էր միայն ավագ որդուն, ապա արխոնտներինը, բյուզանդական օրենսդրությանը համապատասխան, բաժանվում էր հավասարապես բոլոր երեխաների մեջ: Լատիններին ծառայության մեջ գտնվող հույն ազնվականները արագորեն յուրացնում էին նոր տերերի սովորույթները, իրենց գերակայի հետ մասնակցում էին Նիկեական կայսրության դեմ մղվող պատերազմներին: Հաճախադեպ էր դարձել ամուսնությունը լատին և հույն ազնվականների միջև, նման ընտանիքներում ծնվածներն անվանվում էին գասմուլներ: Տիրապետող դասակարգի մեջ հատուկ տեղ ուներ հոգևորականությունը, որի գլուխ էր կանգնած Կ. Պոլսի լատին պատրիարքը՝ իրեն ենթակա ողջ եկեղեցական նվիրապետությամբ: Հունաստանում տարածվում էին կաթոլիկ եկեղեցու հոգևոր և ասպետական կարգերը, արքեպիսկոպոսները ստանում էին ութ, իսկ եպիսկոպոսները՝ չորս ասպետի ավատաբաժին: Շարունակվում էր պայքարը հույն և լատին, ֆրանսիական և վենետիկյան հոգևորականության միջև: Պապությունը փորձում էր համաձայնության եզրեր գտնել հույն հոգևորականության հետ, պապի իշխանությունը հարգելու դեպքում տալիս էր արտոնություններ: Թեպետ Աթոսի վանքերին տրվել էին որոշակի արտոնություններ, միայն Իվերոնի վանքը համաձայնվեց ենթարկվել Ս. Պետրոսի Աթոռին: Արհեստներն ու առևտուրն իրենց տեղը զիջեցին փակ բնամթերային ավատական տնտեսությանը, որը Եվրոպա էր արտահանում գինի, ձիթապտուղ, շերամի բոժոժ: Ռոմանիայի քաղաքներում և մեծ նավահանգիստներում վենետիկցիները ստեղծում էին գաղութներ, կառուցում էին եկեղեցիներ: Լատինական կայսրության պաշտոնեությունը նշանակվում էր խոշոր ավատատերերից, արդարադատությունը գտնվում էր հողատեր ազնվականների դատարանի ձեռքին: Պետության ղեկավարման բնագավառում նկատելի էր նաև բյուզանդական ազդեցությունը. պահպանվում էր հողահարկի և ֆինանսական գործունեության համակարգը: Լատինական կայսրության իշխանություններին զուգահեռ կառավարման օրգաններ էին ստեղծել նաև վենետիկցիները, որոնք Ռոմանիայում ընտրում էին իրենց պոդեստային, որը երդում էր տալիս Վենետիկի դուքսին և Կ. Պոլսի խորհրդին: Պոդեստան և խորհուրդը մասն էին կազմում Լատինական կայսրության արքունական խորհրդի, մեծ ազդեցություն ունեին որոշումների ընդունման ժամանակ: Խոշոր հողատերերին ձգում էր Կ. Պոլիսը, որտեղ հիմնա-

կանում ապրում էին նրանք մայրաքաղաքային վայելքների մեջ: Թեպետ Կ. Պոլսի գրավումն ու թալանը նվազեցրել էին քաղաքի մշակութային նշանակությունը, հույն մտավորականությունը հիմնականում ապաստան էր գտել Նիկեայում, Էպիրոսում և Տրապիզոնում, այնուամենայնիվ նկատելի էին նաև նոր գրական շարժումներ, որոնք Մորեայի և Կ. Պոլսի եվրոպական նվաճողներին հասու էին դարձնում հույն մատենագրության գոհարներին:

Լատինական կայսրությունը դիմացավ միայն կես դար, քանի որ նվաճողների որդեգրած կառավարման և հարկահավաքման համակարգը չկարողացավ ապահովել երկրի բնականոն զարգացումը: Ֆեոդալիզմի եվրոպական ձևը, որը հիմնված էր ավատական հողատիրության, հոգևորականության և զինվորականության սերտ համագործակցության վրա, արդեն ապրել էր իր դարը և խանգարում էր տնտեսական առաջընթացին: Ֆրանկ և հույն ավատատերերի երկակի շահագործումը նորանոր ըմբոստությունների պատճառ էր դառնում բնակչության շրջանում: Վենետիկցիների որդեգրած շահադիտական քաղաքականությունը խոչընդոտում էր երկրում առևտրի և արհեստների զարգացմանը, որով էլ պայմանավորված էին քաղաքային բնակչության դժգոհությունները: Կաթոլիկ հոգևորականության կողմից օրթոդոքս եկեղեցու իրավունքների ոտնահարումը ավելի խորացրեց հակասությունները նվաճողների և տեղական բնակչության միջև: Լատին իշխանությունների մեջ ամենաերկարակյացը եղավ Մորեան, որն իր գոյությունը շարունակեց մինչև XV դար: Լատին ազնվականներն արագորեն կորցրին իրենց հողատարածությունները Բալկաններում, Փոքր Ասիայում և Էպիրոսում:

3. ՏՐԱՊԻԶՈՆԻ ԵՎ ՆԻԿԵԱՅԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

IV խաչակրաց բանակների կողմից Կոստանդնուպոլսի նվաճումից հետո Բյուզանդական կայսրությունը բաժանվեց մանր իշխանությունների: Ֆեոդալական մասնատվածության նշանները, որոնք նկատելի էին XII դարի վերջին, XIII դարի սկզբին վերածվեցին առանձին ժողովուրդների անկախության համար պայքարի, հունաբնակ գավառներում ստեղծվեցին բազմաթիվ անկախ իշխանություններ: Այդ իշխանություններից միայն երեքը՝ Նիկեայի կայսրությունը, Էպիրոսի թագավորությունը և Տրապիզոնի կայսրությունը, հավակնություններ ցուցաբերեցին վերականգնելու Բյուզանդիան: Ալեքս Ե (1204 թ.) փախուստից հետո՝ ապրիլի 13–ին, մայրաքաղաքային ազնվականությունը Ս. Սոֆիայի տաճարում կայսր էր հռչակել Կոստանդին Լասկարիսին, որն էլ վերջին փորձը կատարեց խաչակիրների կողմից պաշարված քաղաքը պաշտպանելու համար, սակայն զգալով այդ ձեռնարկի անհուսալիությունը՝ մի քանի ժամ անց իր համախոհների հետ փախավ Փոքր Ասիա: Նրա եղբայր Թեոդորը, որը Ալեքսիոս Գ Անգելոսի ժամանակ ամուսնացել էր կայսեր դստեր հետ և արժանացել դեսպոտի տիտղոսին, երկար դեգերումներից հետո հաստատվելով Նիկեայում, կարողացավ իր շուրջը հավաքել մայրաքաղաքից փախած ազնվականությանը և, վերականգնելով կառավարման համակարգը, հետզհետե սկսեց իրեն ենթարկել շրջակա գավառները: Նա առաջին կազմակերպ-

ված դիմադրությունը ցույց տվեց խաչակրաց բանակներին՝ դրանով բարձրացնելով իր հեղինակությունը և ամրապնդելով իշխանությունը: 1208 թ. նորընտիր պատրիարք Միքայել Դ Ավտորիանը նրան թագադրեց Հոռոմների կայսր: Թեպետ Էպիրոսի և Տրապիզոնի կառավարիչները ևս իրենց հռչակել էին նույն տիտղոսով, սակայն նրանց իշխանությունը չէր սրբագործվել Կ. Պոլսի օրթոդոքս պատրիարքի օծումով: Նիկեայի կայսրությունը, հետզհետե տեր դառնալով փոքրասիական հարուստ գավառներին, իր վրա վերցրեց բյուզանդական պետությունը վերականգնելու դժվար առաքելությունը: Օգտագործելով ժառանգություն ստացած բյուզանդական ամրոցների պաշտպանական համակարգը և ստեղծելով մարտունակ բանակ՝ Թեոդորոս Ա Լասկարիսը (1208–1222 թթ.) կարողացավ կանգնեցնել Իկոնիայի սուլթանության առաջխաղացումը: Ջինվորականները, հատկապես սահմանապահ (Ակրիտ) զորքերը, ստանալով ավատական հողատարածություններ և ազատվելով պետական հարկերից, շահագրգռված էին պաշտպանելու իրենց ունեցվածքը օտար նվաճողներից: Հաջող պատերազմների դեպքում նրանց հողատարածությունները մեծանում էին, Թեոդոր Ա Լասկարիսը ակրիտներին բաժին էր հանում նաև իրեն չենթարկվող ավատատերերի հողատարածություններից: Կայսեր տրամադրության տակ էին նաև եկեղեցական հողատարածությունները: Ջինվորները, իբրև ծառայության վարձ ստանալով հողային սեփականության ավատներ (պրոնիա), իրավունք չունեին գնելու իրենց պատրիկների հողերը: Հողի գերագույն սեփականատերը պետությունն էր: Ավատատիրոջ կամ կայսեր մահվան դեպքում ժառանգները ստիպված էին կրկին դիմել իշխանություններին՝ վերահաստատելու համար իրենց իշխանությունը պրոնիայի վրա: Այս պարագայում կառավարության գլխավոր ուղենիշը հավատարիմ ծառայությունն էր: Նիկեայի կայսրության տարածքներում նկատվում են խոշոր հողատիրության աննախընթաց զարգացում և ազատ գյուղացիության տնտեսությունների արագ քայքայում: Նման համակարգը արտաքին վտանգի պայմաններում կայսեր շուրջն էր համախմբում երկրի ազնվականությանը և մինչև XIII դարի երկրորդ կեսը լիովին արդարացրեց իրեն: Առևտրի և արհեստագործության կենտրոնների մեջ առանձնանում էին մայրաքաղաք դարձած Նիկեան և Ֆիլադելֆիան, Թեոդոր Ա Լասկարիսը միաժամանակ շարունակում էր իտալական առևտրական հանրապետություններին առանձնաշնորհումներ տալու Կոմնենոսների քաղաքականությունը:

Թեոդոր Ա–ը թագը ժառանգեց իր փեսա Հովհաննես Գ Վատացեսին (1222–1254 թթ.): Լասկարիսների և արքունական ընդդիմության խռովությունները ճնշվեցին: Ընդդիմությունը չէր կարողանում բնակչությանը դուրս բերել միապետի դեմ, այդ իսկ պատճառով հաճախ դիմում էր արտաքին ուժերին: Երկրի հիմնական հարստությունը հողն էր, որից ստացված հարկերի ու եկամուտների վրա էլ հիմնված էր պետության քաղաքականությունը: Գանձարանի եկամուտների բարձրացման համար պետական հողերի մշակումը ավելի ինտենսիվ դարձվեց: Տնտեսության կայունացումը հնարավորություն տվեց Նիկեայի կայսրությանը զարկ տալու եկեղեցաշինությանը, հիվանդանոցների և բարեգործական հիմնարկների կառուցմանը: Վերականգնվեց կրթական համակարգը, արքունիքին կից ստեղծվեց հարուստ գրադարան: Նիկեայի արքունական դպրոցում դասավանդում էին ժամանակի ամենալուսավոր գործիչները: Վատացեսը օգնության ձեռք էր մեկնում Կ. Պոլսի, Ալեքսանդրիայի, Երուսաղեմի, Անտիոքի պատրիարքություններին, Բալկանների, Հունաստանի, Փոքր Ասիայի, Ասորիքի և Պաղեստինի օրթոդոքս եկեղեցու հիմնական վանական կենտրոններին: Տնտեսական վիճակի բարելավումը թույլ տվեց Հովհաննես Գ Վատացեսին ամրապնդել բանակի ռազմական հզորությունը: Ամրոցներին կցվում էին բնակավայրեր, որոնք ապահովում էին կայազորները անհրաժեշտ գյուղատնտեսական մթերքներով: Թշնամական հարձակումներին համապատասխան հակահարված տալու համար ամրոցների ամբարներում պահեստավորվում էին գյուղատնտեսական մթերքներ և զինամթերք: Կայսրը դյուրություններ ստեղծեց տեղական արհեստավորների (միստիա) աշխատանքի համար և ներմուծվող արտադրանքի վրա բարձրացրեց հարկերը: Առավել մեծ արտոնություններ ստացան զինագործները և պետական արհեստագործական միությունները, ուժեղացան տնտեսական կապերը Բալկաններում Թեսալոնիկեի և Մելնիկի հետ, խրիսովուլներ շնորհվեցին բյուզանդական այդ քաղաքների առևտրականներին: Եկեղեցական իշխանությունները ամեն կերպ սատարում էին Հովհաննես Վատացեսի վարած քաղաքականությանը:

Կայսեր մահից հետո գահն անցավ ժամանակի համար լավագույն կրթություն ստացած անհատներից մեկին՝ Թեոդոր Բ Լասկարիսին (1254–1258 թթ.): Նա շարունակեց պայքարը խոշոր ավատատերերի դեմ, իրեն շրջապատեց ավելի համեստ ծագում ունեցող, սակայն կրթված մարդկանցով: Անողոք էր երկրի միասնականությունը վտանգող անձնավորությունների նկատմամբ: Նրան հաջորդեց ութամյա որդին՝ Հովհաննես Դ Լասկարիսը (1258–1261 թթ.), որին խնամակալներ էին նշանակվել Գևորգ Մուզալոնին և Արսեն պատրիարքը: Սակայն շուտով մանկահասակ կայսեր խնամակալությունը ստանձնեց Միքայել Պալեոլոգը, որն իր ձեռքում կենտրոնացրեց երկրի կառավարման լծակները: Մանկահասակ կայսեր խնամակալը 1259 թ. թագադրվեց, իսկ օրինական ժառանգի թագադրությունը հետաձգվեց: Արսեն պատրիարքը, 1261 թ. ընդդիմանալով Միքայել Ը Պալեոլոգին (1259–1282 թթ.), հրաժարվեց պատրիարքական իշխանությունից: Օգտվելով Կ. Պոլսի գրավման փաստից՝ Միքայել Ը–ը իրեն գահակից հայտարարեց սեփական որդուն՝ Անդրոնիկին: Այս հեղաշրջումով Լասկարիսները վերջնականապես հեռացվեցին երկրի կառավարումից: Նիկեական կայսրության արքունիքը իր աստիճանակարգով պատճենում էր բյուզանդական կառավարման համակարգը, թեպետ ուներ նաև յուրահատկություններ: Կայսրությունը բաժանվում էր թեմերի, որոնց ղեկավարում էին քաղաքացիական կառավարիչները: Առանձին ամրոցների և քաղաքների ստրատեգները, երկրի վարչական ղեկավարման հիմնական աստիճանավորները հաշվետու էին կենտրոնական իշխանություններին: Հաճախ կայսրերը իրենց փոխանորդներն էին նշանակում մի քանի թեմերի վրա, հատկապես Թեսալոնիկեի (Անդրոնիկ Պալեոլոգ) և արևմտյան գավառների (Գևորգ Ակրոպոլիտ) վրա՝ տալով լայն լիազո-

ություններ: Երկրի կառավարման համակարգ էին թափանցում նոր սովորույթներ. ավատատեր ազնվականությունը երդում էր տալիս կայսերը, ավելի հաճախակի էին դառնում կայսերական ընտանիքի անդամների հետ ամուսնությունները, որոնց սերունդների ձեռքն էին անցնում երկրի կարևորագույն պաշտոնները:

Էպիրոսի թագավորության և Թեսալոնիկեի կայսրության առաջացումը տեղի ունեցավ այլ պայմաններում: 1204 թ.՝ խաչակիրների կողմից Կոստանդնուպոլսի նվաճումից անմիջապես հետո, Նիկոպոլսի բանակաթեմում բռնկվեց ապստամբություն: Հակալատին ուժերի գլուխ կանգնեց Միքայել Անգելոսը, և շուտով նրա իշխանության տակ անցավ Էպիրոսի մեծ մասը: Սկզբում նա կարողացավ արգելակել խաչակիրների մուտքը Պելոպոնես: Այս տարածաշրջանում Միքայել Ա-ի (1204–1215 թթ.) իշխանության գալուն նպաստեցին հողային հսկայական ավատներն ու իր ընտանիքի կապերը Էպիրոսի ֆեոդալական վերնախավի մյուս ներկայացուցիչների (Կոմնենոսներ, Անգելոսներ, Մալիասիններ և այլն) հետ: Նպաստավոր էր նաև երկրի աշխարհագրական դիրքը: Էպիրոսը իր ազգաբնակչությամբ տարբերվում էր Բյուզանդական կայսրության մյուս շրջաններից. Մակեդոնիայում գերակշռում էին սլավոնները, իսկ Էպիրոսում և Թեսալիայում՝ հույները, Հյուսիսային Էպիրոսում՝ ալբանացիները: Թեսալիայում, Մակեդոնիայում և Էպիրոսում բնակվում էին նաև քոչվոր և նստակյաց վլախներ: Սրանց և ալբանացիների մոտ դեռևս պահպանվում էին տոհմատիրական կենցաղի մնացուկները: Բերրի հողերի նշանակալի մասը պատկանում էր եկեղեցուն, Մակեդոնիայի հարավում հզոր տնտեսական ուժ էին ներկայացնում Աթոսի վանքերը: Ի տարբերություն Նիկեայի կայսրության՝ այստեղ տնտեսությունը համաչափ չէր զարգացել: Բերրի հարթավայրերը պատկանում էին հզոր ազնվականական տներին և եկեղեցուն, որոնց տնտեսությունը հիմնված էր կախյալ պարիկների ֆեոդալական շահագործման վրա, իսկ Էպիրոսի անմատչելի շրջաններում և Միջին Մակեդոնիայում գերակշռում էին ազատ գյուղացիները: Հիշատակված հակասություններն անկայուն էին դարձնում երկրի քաղաքական վիճակը՝ հող նախապատրաստելով կենտրոնախույս ուժերի գործունեության համար: Իշխանությունները, ընկրկելով Վենետիկի և Դուբրովնիկի տնտեսական ճնշման առջև, չէին կարողանում նպաստել տեղական արտադրության զարգացմանը և քաղաքների (Թեսալոնիկե, Դիրախիում, Օխրիդ, Առտա, Նավպակտ, Լարիսա) հզորացմանը: Այդ էր պատճառը, որ Թեսալոնիկեի առևտրական վերնախավը անցավ Նիկեայի կայսր Հովհաննես Գ Վատացի կողմը, որը պարտավորվեց վերականգնել նրանց արտոնությունները: Ի հավելումն այս ամենի՝ երկիրը բաժանված էր մանր բանակաթեմերի, որոնց կառավարիչ-դուքսերը ժառանգում էին թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական իշխանությունը: Նրանց ենթարկվում էին կատեպանները, որոնք հիմնականում իրականացնում էին հարկային գանձումները: Կլոկոտնիցայի ճակատամարտից հետո երկիրը բաժանվեց. կայսր Մանուել Անգելոսը Էպիրոսի կառավարումը հանձնեց Միքայել Բ Անգելոսին (1231–1268 թթ.): Վերջինս էլ երկիրը բաժանեց իր որդիների միջև: Ֆեոդալական մասնատվածությունը Էպիրոսին դուրս մղեց միացյալ Բյուզանդիայի համար Նիկեայի կայսրության դեմ մղվող պայքարից:

Խաչակիրների կողմից Կ. Պոլսի գրավումից հետո Խալդիայում ստեղծվեց Տրապիզոնի կայսրությունը, որտեղ հույների կողքին բնակվում էին նաև լազեր և հայեր: Իկոնիայի սուլթանության հզորացմանը զուգընթաց, կտրվել էին ցամաքային կապերը կայսրության հետ, որտեղ XII դարի երկրորդ կեսին առաջացել էր Գավրասների գրեթե անկախ իշխանությունը: XII դարի 60-ական թթ. այստեղ ապաստանել էր նաև Անդրոնիկ Կոմնենոսը: 1185 թ. տեղի ունեցած հեղաշրջումից և Անդրոնիկ Ա Կոմնենոսի ու նրա որդի Մանուելի սպանությունից հետո վերջինիս Ալեքս և Դավիթ մանկահասակ որդիներին ապաստան տվեց և իր արքունիքում դաստիարակեց Վրաստանի Թամար թագուհին (1184–1213 թթ.) և 1204 թ. Խալդիան հանձնեց նրանց: Հաստատվելով Տրապիզոնում՝ Ալեքս Կոմնենոսը (1204–1222 թթ.) իրեն հռչակեց կայսր, սակայն կտրված լինելով Բյուզանդական կայսրության մյուս շրջաններից՝ նշանակալի դեր չկատարեց: XIII դարում այստեղ մեծ չափերի հասավ խոշոր հողատիրությունը, սնանկացած ազատ գյուղացիները վաճառում էին իրենց հողակտորները խոշոր ավատատերերին: Ի տարբերություն բյուզանդական մյուս նահանգների՝ այստեղ հարկերը հավաքում էին ոչ թե ըստ ադմինիստրատիվ բաժանումների (գավառների և գյուղերի), այլ տոհմական պատկանելության սկզբունքով: Երկիրն իր կառուցվածքով ավելի նման էր վրացական պետությանը: Ազնվականությունը երկրի կառավարումը իր ձեռքում կենտրոնացնելու համար մրցակցում էր բյուզանդական ավատատերերի հետ: Տրապիզոնի կայսրությունը բաժանված էր մի քանի ադմինիստրատիվ շրջանների (բանդա), որի կառավարիչ-դուքսերը ունեին թե՛ քաղաքացիական և թե՛ զինվորական իշխանություն: Իրենց ավատներում անսահմանափակ իշխանություն ունեին տեղական ազնվականները, որոնց իշխանությունը հիմնված էր սովորութային իրավունքի վրա: Կայսրության տնտեսական միջուկը Տրապիզոնի առևտրական և արհեստագործական կենտրոնն էր, որը շրջապատված էր հզոր ամրություններով և իր նշանակությամբ գերազանցում էր անգամ Նիկեային: Կայսրության տարածքը արևմուտքում հասնում էր մինչև Սինոպ: Տրապիզոնից տնտեսական կախման մեջ էին երբեմնի բյուզանդական գաղութները Ղրիմում, որոնց արխոնտները հարկ էին վճարում Մեծ Կոմնենոսներին: Այնուհանդերձ, Տրապիզոնի կայսրությունը խամաճիկ դարձավ տարածաշրջան ներխուժած մոնղոլական և թյուրքական նվաճողների ձեռքին՝ շարունակելով իր գոյությունը մինչև 1461 թ.:

4. ՊԱԼԵՈԼՈԳՆԵՐԻ ԴԻՆԱՍՏԻԱՅԻ ՊԱՅՔԱՐԸ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Միասնական Բյուզանդիայի համար պայքարում ավելի կենսունակ գտնվեց Նիկեայի կայսրությունը, որը հաջող պատերազմներով կանգնեցրեց սելջուկների առաջխաղացումը, լատիններից խլեց Էգեյան ծովի կղզիները, բուլղարների հետ համաձայնեցնելով գործողությունները՝ 1235 թ. սկսեց Թրակիայի նվաճումը, 1246 թ. տիրացավ Թեսալոնիկեին, 50-ական թթ. գրավեց Մակեդոնիան: Միացյալ Բյուզանդիայի համար պայքարում Նիկեայի կայսրության հաջողությունը պայմա-

նավորված էր տնտեսական կայունությամբ, էթնիկական միաձուլությամբ և թշնամիների (լատիններ, բուլղարներ, թյուրքեր) դեմ պայքարում ողջ ազգաբնակչության համախմբվածությամբ: Միքայել Ը Պալեոլոգը, զարգացնելով այդ հաջողությունները, պարտության մատնեց իր բոլոր հակառակորդներին և 1261 թ. օգոստոսի 15–ին մտավ Կոստանդնուպոլիս:

Ս. Սոֆիայի տաճարում Արսեն պատրիարքը վերստին թագադրեց Միքայել Ը Պալեոլոգին, Կ. Պոլիսը գրավող Ալեքս ստրատեգոպուլը հաղթահանդեսով մտավ քաղաք: Այնուամենայնիվ, պետության վերահսկողության տակ էին անցել երբեմնի Բյուզանդական կայսրության տարածքի միայն խղճուկ մնացորդները (Թրակիայի և Մակեդոնիայի մի մասը, որոշ ամրոցներ Պելեպոնեսում և կղզիներ Էգեյան ծովում): Հյուսիսային Թրակիան և Մակեդոնիան շարունակում էին մնալ բուլղարներին և սերբերին, Էպիրոսի թագավորությունը պահպանեց իր անկախությունը, գրեթե ողջ Կենտրոնական Հունաստանում և Պելեպոնեսում իշխում էին լատինները, Արխիպելագի կղզիները պատկանում էին վենետիկցիներին: Կայսեր հիմնական խնդիրներից դարձան ավերված Կոստանդնուպոլսի վերականգնումը, երկրի վարչական ապարատի վերստեղծումը, վանքերի և եկեղեցիների նորոգումը: Ավատներ և տիտղոսներ էին շնորհվում կայսերը սատարող ազնվականներին, զինվորականությանը և մերձավոր ազգականներին: Բանակում հետզհետե կարևորություն էին ձեռք բերում վարձկանները: Նավատորմի և բանակի զինումը, արքունիքի ծախսերը, մայրաքաղաքի շինարարությունը, օտար պետությունների ղեկավարներին և հատկապես Հռոմի պապին ուղարկված թանկագին նվերները կարճ ժամանակում դատարկեցին գանձարանը, քանի որ հարկատուների մի մասն էլ փորձում էր խուսափել ծանր հարկերից: Դրությունը շտկելու համար կառավարությունը ստիպված էր գցել դրամի որակը, բռնագրավել կայսերական շնորհից զրկվածների ունեցվածքը, տույժերով ու նոր հարկերով լցնել գանձարանը: Գյուղացիական տնտեսությունը, մանավանդ փոքրասիական գավառներում, անկում էր ապրում, ինչն էլ 1262 թ. ոտքի հանեց Բյութանիայի ակրիտներին և գյուղացիությանը: Թեպետ կեղծ Հովհաննես Դ–ի ապստամբությունը ճնշվեց, արևելյան սահմանները առավել խոցելի դարձան: Արևմուտքում Բյուզանդիան կարողացավ օգտագործել Ջենովայի և Վենետիկի հանրապետությունների հակամարտությունը՝ իր իշխանությունը Պելեպոնեսում և Էպիրոսում հաստատելու համար (1265 թ.): Եկեղեցական միություն կնքելու խոստումներով փորձեց իր կողմը գրավել Հռոմի պապությանը՝ ցանկանալով վնասազերծել Սիցիլիայի և Նեապոլի արքա Կարլոս Անժուացուն, որն իր արքունիքում էր պահում կուրացված Հովհաննես Դ Լասկարիսին և ամեն կերպ միջամտում էր Բալկանյան գործերին: Միքայել Ը–ը կարողացավ դաշնակցել Հունգարիայի թագավոր Ստեֆանի և Հյուսիսային Իտալիայի քաղաքների միության հետ: Բուլղարների դեմ պատերազմում օգտագործեց թաթար վարձկաններին, իսկ երբ բուլղարները գահընկեց արեցին թագավորին (1277 թ.), Միքայել Ը–ի օգնությամբ գահ բարձրացավ Իվան Գ Ասենը՝ ամուսնանալով կայսեր դստեր հետ:

Լիոնի ժողովի (1274 թ.) նախօրյակին Միքայել Ը–ը դավանաբանական բանակումներ կազմակերպեց՝ փորձելով բյուզանդական հոգևորականությանը հաշտեցնել եկեղեցիների միության գաղափարի հետ: Մասնակցելով ժողովին՝ բյուզանդական պատվիրակներն ընդունեցին պապի գերագահությունը և դավանաբանական զիջում կատարեցին (ընդունվեց ֆիլիոքվեն), իսկ Գրիգոր Ժ պապը խոստացավ կայսրության հետ հաշտեցնել լատին պետություններին: Սակայն Սիցիլիական թագավորությունը 1268 թ. պապի համաձայնությամբ նվաճած Կարլոս Անժուացին չհրաժարվեց Բյուզանդիայի նկատմամբ իր ոտնձգություններից, իսկ պապությունը նոր պայմաններ սկսեց դնել Միքայել Ը–ի առջև՝ դրանով իսկ նպաստելով երկրի ներսում հակամիարարների ուժերի համախմբմանը, որոնց դեմ կառավարությունը ճնշումներ գործադրեց: Կենտրոնախույս ուժերը համախմբվեցին դեսպոտ Հովհաննես Կոմնենոս–Անգելոսի շուրջը և եկեղեցական ժողով հրավիրելով՝ նզովեցին կայսերը, պատրիարքին և Հռոմի պապին, ցամաքում պարտության մատնեցին (1278 թ.) Միքայել Ը–ին: Սակայն այդ պարտությունը ճակատագրական չեղավ կայսրության համար, քանի որ Բյուզանդիայի հիմնական հակառակորդ Կարլոս Անժուացին շուտով ստիպված էր դիմագրավել Անժուի դինաստիայի տիրապետության դեմ սկսված հուժկու ապստամբական շարժումներին, և ի վերջո Սիցիլիան 1302 թ. հանձնվեց Արագոնի արքա Պեդրո Գ–ին:

Բյուզանդական գահն անցավ Միքայելի որդի Անդրոնիկոս Բ Պալեոլոգոսին (1282–1328 թթ.), որն իրեն նվիրել էր գիտությանն ու արվեստներին: Իշխանության գալով ներքին քաղաքական ճգնաժամի պահին՝ նա անցավ հակամիարարների կողմը: Երկրի տնտեսական վիճակը բարելավելու նպատակով կրճատեց ռազմական ծախսերը: Բյուզանդական գահի համար պայքարը, սակայն, շարունակվում էր նոր թափով: Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Դ Գեղեցիկը 1304 թ. իր եղբայր Կարլոս Վալուային ամուսնացրեց Կոստանդնուպոլսի վերջին լատին կայսր Բալդուին Բ–ի դուստր Եկատերինա դը Կուրտընիեի հետ և նրան հռչակեց Բյուզանդական կայսրության ժառանգորդ: Ֆրանսիայի թագավորը, իր հերթին չկարողանալով իրագործել Կ. Պոլսի դեմ ուղղված ծրագիրը, փորձեց իր տիրապետությունը հաստատել Էպիրոսում՝ ստորակա Փիլիպոս Տարենտացուն (Նեապոլի թագավոր Կարլոս Բ Անժուացու որդուն) ամուսնացնելով Էպիրոսի դեսպոտի դուստր Թամարայի հետ: Այս անգամ Էպիրոսին օգնության հասավ Անդրոնիկոս Բ–ը՝ պաշտպանելով դեսպոտ Նիկիփորի այրի Աննային: Բյուզանդիան ներքաշվեց նաև Ջենովայի ու Վենետիկի հանրապետությունների միջև սանձազերծված պատերազմի մեջ և պարտություն կրելով Վենետիկից՝ ստիպված եղավ 1303 թ. հաշտություն կնքել վերջինիս հետ՝ վերականգնելով նրա առևտրական արտոնությունները: Երկրի արևելյան սահմանների անպաշտպանությունը հնարավորություն տվեց Օսման Ա–ին իր իշխանապետության սահմաններն ընդլայնելու Բյուզանդական կայսրության փոքրասիական տարածքների հաշվին, իսկ երբ Անդրոնիկոս Պալեոլոգոսը փորձեց նրան դիմակայել, 1302 թ. թուրքերը Մագնեսիայի և Նիկոմեդիայի մոտ պարտության մատնեցին բյուզանդական զորքերին: Անդրոնիկոս Պալեոլոգոսը հրավիրեց Ռո-

ջեր դը Ֆլորիին՝ 6000 կատալոնյան վարձկաններով թուրքերի դեմ պատերազմելու համար: Սկզբում Ռոջերը մի քանի փայլուն հաղթանակներ տարավ, սակայն վարձկանները ծանր հարկերով և բռնություններով իրենց դեմ հանեցին տեղական ազգաբնակչությանը: Կայսրությունը միջոցներ չուներ վճարելու վարձը, իսկ պարտքն օրեցօր մեծանում էր: Վարձկանները գաղտնի պայմանավորվեցին Արագոնի և Սիցիլիայի թագավորության հետ՝ գրավելու Կ. Պոլիսը: Անդրոնիկոսը ստիպված էր վարձկանների ղեկավար Ռոջերին և Բերենգար Էստենացուն զիջել Փոքր Ասիայում թուրքերից գրավված հողատարածությունները՝ տալով կեսարի և մեգադուքսի աստիճան: Կատալոնցի վարձկանները, չբավարարվելով ստացածով, իրենց իշխանության սահմաններն ընդարձակեցին նաև կայսրության հաշվին: 1305 թ. ապրիլին Ռոջեր դը Ֆլորին սպանվեց: Կատալոնցիները պատերազմ հայտարարեցին, որին ի պատասխան՝ Կ. Պոլսում ավերվեց իսպանացիների թաղամասը: Ավերելով իր ճանապարհին հանդիպող փոքրասիական բնակավայրերը՝ Բերենգարը արշավեց Կ. Պոլիս: Սկզբում վարձկանների զորահրամանատարը պարտություն կրեց և գերի ընկավ ջենովական նավատորմին, սակայն վարձկանների բանակը, անցնելով Բալկաններ, սկսեց ավարառել ու թալանել Աթոնի վանքերը, Թեսալոնիկեի շրջապատը, Էպիրոսի թագավորության տարածքը, Աթենքի հերցոգությունը: Կենտրոնական Հունաստանում առաջացավ կատալոնյան մի իշխանություն, որը դարձավ Սիցիլիայի թագավորության ստորական: Թեպետ Բյուզանդական կայսրությունը որոշ ժամանակավոր հաջողություններ ունեցավ Պելեպոնեսում և Էպիրոսում, սակայն վերջին հաշվով քաղաքական այս անցուդարձերը խիստ թուլացրին Բյուզանդիայի դիրքերը Փոքր Ասիայում:

5. ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XII-XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Բագրատունյաց թագավորության կործանումից և սելջուկների կողմից Մեծ Հայքի տարածքները գրավելուց հետո հայ-բյուզանդական փոխհարաբերությունները նոր շրջադիր մտան: XI դարի երկրորդ կեսին Բյուզանդիայի գերակայությունը ճանաչող հայկական բազմաթիվ իշխանություններ առաջացան Կապադովկիայում (Արծրունիներ), Կիլիկիայում (Վահրամյաններ), Հյուսիսային Ասորիքում (Պահլավունիներ): Տարածաշրջանում առաջատարի դեր ստանձնելու համար նրանց միջև ծավալված պայքարը ուղեկցվում էր սելջուկ-թյուրքական և խաչակրաց բանակների հետ բախումներով: XII դարի սկզբին հայկական շրջանակներում առաջատարի դիրքեր ձեռք բերեցին Ռուբինյան և Հեթումյան իշխանությունները, որոնք ճանաչում էին Բյուզանդական կայսրության գերակայությունը: Հեթումյանները, որոնք իրենց համարում էին Բյուզանդական կայսրության ավատատերեր, ամեն կերպ խանգարում էին Ռուբինյանների՝ ինքնավարության հասնելու ձգտմանը: Բյուզանդական կայսրությունն էլ իր հերթին օգտագործում էր Ռուբինյաններին՝ սահմանափակելու Անտիոքի խաչակրաց իշխանության ախորժակը Հյուսիսային Ասորիքում և Կիլիկիայում տարածքներ նվաճելու գործում: Այդ է պատճառը, որ 1108 թ. Անտիոքի

նորմանական իշխան Բոհեմունդի հետ կնքված Դեաբոլի հաշտության պայմանագրում հիշատակվում են Կիլիկիայի Ռուբինյան իշխաններ Թորոսը և Լևոնը՝ իբրև Բյուզանդական կայսրության ստորականներ, որոնք գտնվում են Ալեքսիոս Ա Կոմնենոսի հովանավորության ներքո: Բյուզանդական կայսրության հետ փոխհարաբերությունները նոր որակ են ստանում XII դարի 30-ական թթ., երբ բյուզանդական կայսր Հովհաննես Բ Կոմնենոսը նպատակադրված քայլեր է ձեռնարկում իր տիրապետությունը Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատելու համար: 1138 թ. իր զորաբանակի գլուխ անցած՝ նա նվաճում է Կիլիկիան, ձերբակալում սեփական ինքնավարությունը ընդլայնել ձգտող Լևոն Ա իշխանին և անմիջական գահաժառանգներին: Մինչև XII դարի 50-ական թթ. տարածքը դառնում է Բյուզանդական կայսրության մաս, ուր Կ. Պոլիսը նշանակում էր իր ստրատեգ-կառավարիչներին, որոնց գործունեությանը սատարում էր Հեթումյան ավատատիրական ընտանիքը՝ ստանալով կայսրությունից սեբաստոսի պատվավոր աստիճան:

Խաչակրաց երկրորդ արշավանքի մասնակից բանակների հայտնվելը Մերձավոր Արևելքում առիթ դարձավ Ռուբինյան հայկական իշխանության նոր վերածննդի: Թորոս Բ Ռուբինյան իշխանը 1145-1150 թթ. կարողացավ վերականգնել հայրական իշխանության սահմանները, իսկ մի քանի տարի հետո սկսեց Կիլիկիայում հետևողականորեն վարել ինքնուրույն քաղաքականություն, որի հետևանքով խաչաձևվում էին իշխանապետության շահերը կայսրության հետաքրքրությունների հետ: Բյուզանդական զորահրամանատարներ (ստրատեգ) Թոմասը և Անդրոնիկոս Կոմնենոսը Թորոսին Կիլիկիայից դուրս մղելու միտումով պատերազմ սկսեցին նրա դեմ, սակայն պարտություն կրեցին: Ռուբինյան իշխանը, դաշնակցելով Անտիոքի իշխան Ռայմոնդ Պուատիեի հետ, կարողացավ 1156 թ. ավարառության ենթարկել Կիպրոս կղզին: Մանուել Ա Կոմնենոսը, որոշելով պատժել ապստամբ իշխաններին, 1158 թ. կրկին ներխուժում է Կիլիկիա և Հյուսիսային Ասորիք: Բյուզանդական բանակի ճնշման ներքո Թորոս Բ-ը ճանաչեց Բյուզանդիայի գերագահությունը և կայսրից ստացավ պանսևաստոսի պատվավոր աստիճան: Փաստորեն, կայսրությունը ճանաչեց Ռուբինյանների գերագահությունը տարածաշրջանի մյուս բյուզանդամետ հայկական իշխանությունների նկատմամբ: Նրա իշխանության դիրքերը թուլացնելու միտումով հետագայում ևս բյուզանդական ստրատեգները կենտրոնական իշխանության դրդումով շարունակեցին Ռուբինյանների նկատմամբ թշնամական գործողությունները. 1161 թ. սպանվեց Թորոսի եղբայր Ստեփանեն: Նմանատիպ քայլերը ստիպեցին իշխանապետության հաջորդ գահակալ Մլեհ Ռուբինյանին 1173 թ. հրաժարվել Բյուզանդական կայսրության գերագահությունից: Կայսրությունն այժմ հնարավորություն չուներ պատժելու ապստամբ իշխանին, քանի որ զբաղված էր այլ խնդիրներով: Այս ընթացքում (1165-1178 թթ.) կայսրությունը Հռոմկլայի կաթողիկոսարանի հետ սկսած միջեկեղեցական բանակցությունների ու միության պայմանագիր կնքելու միջոցով փորձում էր Կ. Պոլսի պատրիարքությանը ենթարկել Ամենայն Հայոց կաթողիկոսի իշխանությունը: Երրորդ խաչակրաց արշավանքի նախօրյակին Բալկաններում կտրուկ աճեց հայկական գործոնի դերը: Վարդան Արևելցու հա-

ղորդմամբ՝ տարածաշրջանում գործում էր Հայոց եկեղեցու եպիսկոպոսական երեք աթոռ: Փիլիպոպոլսի և շրջակայքի հայկական բնակչությունը, հակադրվելով բյուզանդական վարչությանը, 1189 թ. քաղաքի դռները բացեց Ֆրիդրիխ Բարբարոսայի խաչակրաց բանակների առջև: Այս հանգամանքն էլ առիթ ծառայեց Իսահակ Բ Անգելոսին Բալկաններում ապրող հայ ազգաբնակչության նկատմամբ ճնշումներ գործադրելու համար: Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների աշխուժացում նկատվեց նաև նրան հաջորդած Ալեքսիոս Գ Անգելոսի ժամանակներում: Պահպանվել է Գրիգոր Ե Ապիրատ կաթողիկոսի նամակը՝ ուղղված բյուզանդական այդ տիրակալին:

XII դարի վերջին Բյուզանդական կայսրության հետ Ռուբինյան իշխանության փոխհարաբերությունները նոր մակարդակի բարձրացան: Լևոն Բ Ռուբինյան իշխանը, որին Հռոմի պապությունը և Գերմանական կայսրությունը խոստացել էին թագավորական իշխանություն շնորհել, 1197 թ. Ալեքսիոս Գ Անգելոսի արքունիք դեսպանագնացության ուղարկեց Տարսոնի եպիսկոպոս Ներսես Լամբրոնացուն՝ ակնկալելով կայսրությունից թագ ստանալ եկեղեցական միություն կնքելու պայմանով: Թեպետ եկեղեցական բանակցությունները փակուղի մտան, 1198 թ. հունվարի 6-ին Գերմանական կայսրության և Բյուզանդիայի ուղարկած թագերով Լևոնը Տարսոն քաղաքում թագադրվեց իբրև Ամենայն Հայոց թագավոր:

Չորրորդ խաչակրությանը հաջորդած իրադարձությունները կաթվածահար արեցին նաև հայ-բյուզանդական փոխհարաբերությունները:

Նիկեայի կայսրության միջազգային հեղինակությունը բարձրացնելու և նոր խաչակրաց արշավանքը իր նպատակներին ծառայեցնելու միտումով Բյուզանդիայի կայսր հռչակված Թեոդորոս Լասկարիսը 1213 թ. կնության առավ Լևոն Ա-ի եղբայր Ռուբեն Գ իշխանի դուստր Ֆիլիպեին, որին Հայոց թագավորը որդեգրել էր: Խնամական կապերի հաստատումով ամրապնդվում էին Իկոնիայի սուլթանության դեմ կողմերի կնքած դաշնակցական հարաբերությունները: Այնուամենայնիվ, խնամական կապերով ամրագրված այդ դաշինքը երկարատև չեղավ, քանի որ շուտով մահացավ այդ ամուսնությունից հետո ծնված զավակը, իսկ կայսրը ամուսնալուծվելով կնության առավ Կ. Պոլսի լատին կայսր Ռոբերտ դը Կուրտընիեի (1219–1228 թթ.) քրոջը: Իկոնիայի սուլթանության թիկունքում դաշնակից ունենալու գաղափարը ստիպում էր Կիլիկիայի թագավորությանը և կաթողիկոս Կոստանդին Բարձրբերդցուն 1239 թ. եկեղեցական միության բանակցություններ վարել Նիկեայի հաջորդ կայսր Հովհաննես Գ Վատացեսի և օրթոդոքս եկեղեցու պատրիարք Գերմանոս Բ-ի հետ: Այս բանակցությունները, որոնք Նիկեայում վարում էին Անտիոքի հույն պատրիարք Դորոթեոսի (1219–1245 թթ.) միջնորդությամբ, հավանաբար նպատակ ունեին նաև ընդհանուր դիրքորոշում մշակելու մոնղոլների նկատմամբ վարվելիք քաղաքականության վերաբերյալ: Պատվիրակները հասնում են Նիկեա, երբ արդեն վախճանվել էր Գերմանոս Բ-ը պատրիարքը: Նիկեայի նորընտիր պատրիարք Մանուել Բ-ի պատասխանը Կիլիկիա է բերում Մելիտենեի մետրոպոլիտ Հովհաննեսը, որին էլ հանձնվում է Հայոց թագավորի պատասխան գրությունը, քանի որ կաթողիկոսը այդ պահին գտնվել է Հռոմկլայում: 1247/8 թ. ապագա կաթողիկոս Հակոբ վարդապետի գլխավորությամբ Կոստանդին Բարձրբերդցին մեկ այլ պատվիրակություն է ուղարկում Նիկեա՝ հանձնելով Հայոց եկեղեցու Հավատո Գիրը, իր և Հեթում թագավորի նամակները Մանուել Բ պատրիարքին և Թեոդոր Բ Լասկարիսին (հնարավոր է՝ Հովհաննես Գ Վատացեսին): Բյուզանդական կողմը այս դեսպանագնացությանը պատասխանում է՝ Կիլիկիա ուղարկելով Մելիտենեի Հովհաննես և Ֆիլադելֆիայի Փոկաս մետրոպոլիտներին, Մանուել Ա պատրիարքի նամակով: Մանուել Բ պատրիարքի նամակում տեղ գտած ստորաքարշ ոճը խոսում է այն մասին, որ բյուզանդական կողմը ակնկալիքներ ուներ Կիլիկիայի Հայոց թագավորությունից:

Բյուզանդական կայսրության հետ Կիլիկյան Հայաստանի վարած բանակցությունների հաջորդ փուլը թվագրվում է XIV դարի առաջին կեսով: Միության համար հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների այս փուլը կապվում է Անդրոնիկոս Գ Պալեոլոգոսի իշխանության ժամանակաշրջանի հետ: Պահպանվել են բյուզանդական Եսայի պատրիարքի 1330/1 թ. գրած նամակները՝ ուղղված Հայոց Կոստանդին Դ կաթողիկոսին և Լևոն Դ թագավորին:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲՅՈՒԶԱՆԴԻԱՆ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ավատատիրական իրավունքի բյուզանդական նորմերը ավելի ու ավելի էին միահյուսվում եվրոպական հողատիրության զանազան դրսևորումների հետ: Իբրև դասակարգ վերացավ բյուզանդական ազատ գյուղացի–ստրատիոտը: Պետության մեջ հզորանում էին խոշոր կալվածատեր–հողատերերը, որոնց տնտեսությունը հիմնված էր հողին ամրացված ճորտ–պարիկոսների շահագործման վրա: Երկրի ներսում կարևոր դեր էր կատարում նաև վանքապատկան և եկեղեցական հողատիրությունը, որին կայսրերը օժտում էին զանազան արտոնություններով, իսկ հավատացյալները կատարում էին նվիրատվություններ: Թուրքական արշավանքների նախօրյակին կայսրերը, կորցնելով իրենց հողատարածությունների գերակշիռ մասը, ստիպված էին ավելի հաճախակի կիրառել վարչական միջոցներ աշխարհիկ և հոգևոր ավատատերերի նկատմամբ՝ երկրի գանձարանը լցնելու համար: Նմանատիպ միջոցառումներն ավելի էին թուլացնում կենտրոնական իշխանությունը՝ սրելով սոցիալական լարվածությունը երկրում:

Բյուզանդական քաղաքն ու արհեստագործությունը ևս անկում ապրեցին: Դրան նպաստեցին չդադարող միջավատատիրական պատերազմները, վարձկան բանակների ավերածությունները, դրսի ուժերի ավարառությունները, որոնց հետևանքով խիստ նվազում էր քաղաքային բնակչությունը: Տնտեսական աճի տեմպերի թուլացումը բյուզանդական քաղաքները դարձրին իտալական ծովային հանրապետությունների առևտրական ֆակտորիաների կցորդը: Չորրորդ խաչակրաց ռազմարշավից հետո տարածաշրջանում մոնոպոլ դիրքեր ձեռք բերած Վենետիկի հանրապետության հետ մրցակցում էին մյուս իտալական հանրապետությունները, որոնք զանազան արտոնություններ էին կորզում իրենց տնտեսական գործունեության ծավալման համար: Մերձավոր Արևելքում մոնոպոլների կատարած ներխուժումներից հետո խիստ բարձրացավ Տրապիզոնի տնտեսական նշանակությունը, քանի որ նրա միջով էին անցնում Արևելքն Արևմուտքի հետ կապող առևտրական հիմնական ճանապարհները: Այս իրավիճակից կարողացավ մեծ օգուտներ կորզել Ջենովական հանրապետությունը, որը առևտրի բնագավառում մոնոպոլ դիրքեր ստացավ տարածաշրջանում, երբ 1261 թ. Նիկեայի կայսրությունը ջենովական նավատորմի օգնությամբ վերանվաճեց Կոստանդնուպոլիսը: Բազմաթիվ մանր իշխանությունների մեջ բաժանված Բյուզանդական կայսրության նախկին տարածքներում գավառային քաղաքներն ավելի ու ավելի ինքնուրույնություն էին ստանում՝ ստեղծելով ինքնակառավարման օրգաններ, ուր գերիշխում էին ավատատերերը: Սակայն վարչական նոր փոփոխությունները չհանգեցրին քաղաքների նշանակության բարձրացմանը, քանի որ դրանց հիմնական մասը շարունակում էին մնալ խոշոր ավատատերերի սեփականությունը և հնարավորություն չունեին պայքարելու կենտրոնախույս ուժերի դեմ երկրի ամբողջականության համար: Քաղաքային իշխանությունները, որոնք ղեկավարվում էին ավատական վերնախավի շահերով, գերադասում էին հումքի արտահանմամբ և օտար արտադրանքի ներմուծմամբ մեծացնել իրենց եկամուտները՝ դրանով իսկ նպաստելով ծովային հանրապետությունների հզորացմանը տեղական արհեստագործական արտադրության նվազեցման հաշվին: Կ. Պոլսի, Թեսալոնիկեի և մյուս քաղաքների արհեստավորական ընկերությունների գործունեությունը ենթարկվում էր պետական խիստ հսկողության և կարգավորման, որն էլ իր հերթին խանգարում էր նրանց մրցունակության բարձրացմանը այն շրջանում, երբ Եվրոպան ապրում էր արդյունաբերական վերազինման և հեղափոխության դարաշրջան:

Ջենովական, վենետիկյան, իսկ հետագայում նաև իտալական այլ հանրապետությունները բյուզանդական տարբեր քաղաքներում ունեին իրենց առևտրական թաղամասերը, ի հեճուկս բյուզանդական քաղաքների՝ օգտվում էին բազմաթիվ արտոնություններից, իրենց ձեռքն էին վերցրել մի շարք սննդամթերքների (հացահատիկ, աղ դրած ձուկ ևն)՝ Կ. Պոլիս ներմուծման մենաշնորհը: XIII–XIV դարերում Ջենովան անհարկ առևտրի իրավունք ստացավ Սև ծովում, Կ. Պոլսի դիմաց՝ Գալաթիայում, կառուցեց անմատույց նավահանգստային ամրոց՝ իր ձեռքը վերցնելով սևծովյան նեղուցների երթևեկության և առևտրի վերահսկողությունը: Ջենովական հանրապետությունը ամուր արմատներ էր ձգել Ղրիմում, պատերազմական վիճակներում ապահովում էր բյուզանդական բանակը նավատորմով: Բյուզանդական դրամը երկրի ներսում հետզհետե իր տեղը զիջում էր վենետիկյան և ֆլորենտական ոսկե դուկատին, թեպետ Կ. Պոլիսը և մյուս քաղաքները դեռևս շարունակում էին պահպանել իրենց երբեմնի փայլը, նրանց շուկաները լի էին զանազան ապրանքներով: Առևտրի բնագավառում հատկապես լուրջ հաջողությունների հասավ Թեսալոնիկեն, որը հաջող պայքար էր վարում տնտեսական ճակատում՝ իտալական առևտրականների դեմ պայքարում:

Իտալական հանրապետությունների արտոնությունները սահմանափակելու բնագավառում Անդրոնիկոս Բ–ի թույլ փորձերը հաջողություններ չունեցան, մանավանդ որ ջենովացիները արքունական ընդդիմության ղեկավար Անդրոնիկոս Գ Փոքրին դարձրել էին իրենց պարտապանը: Անդրոնիկոս Փոքրը վարում էր շփացած, արկածախնդիր կյանք: Կ. Պոլսում կազմակերպած ծեծկռտուքի ժամանակ նրա կողմնակիցները սպանեցին Անդրոնիկոս Փոքրի եղբայր Մանուելին: Կայսրը փորձեց սահմանափակել թոռան լիազորությունները, սակայն Հովհաննես Կանտակուզենը և Սիրգիանոսը, անցնելով թագաժառանգի կողմը, 1322 թ. ապստամբեցին: Երկպառակտչական պատերազմում հաղթեց թոռը, և պապը Էպիվատի հաշտությամբ ստիպված էր Անդրոնիկոս Փոքրին տալ լայն լիազորություններ: Բուլղարների դեմ սանձազերծած պատերազմում որոշակի հաջողությունների հասնելով՝ Անդրո-

նիկոս Փոքրը 1327 թ. վերսկսեց պայքարը պապի դեմ և մեկ տարի անց գահընկեց արեց նրան: Երկպառակտչական պատերազմներից երկիրը լիովին ավերվել էր: Դրանից օգտվելով՝ բուլղարները, սերբերը և թուրքերը ավելի հաճախակի սկսեցին թափանցել բյուզանդական տարածքներ: Անդրոնիկոս Գ–ը (1328–1341 թթ.) սկզբնական շրջանում փոփոխական հաջողություններով պատերազմում էր նրանց դեմ, սակայն իր գահակալման վերջում, երբ երկրի ընդդիմադիր ուժերը հաճախակի սատարում էին թշնամիներին, իսկ կայսրը, փորձելով պահպանել իր իշխանությունը, հաճախակի դիմում էր վարձկանների օգնությանը, Բյուզանդական կայսրությունը բոլորովին դուրս մղվեց Փոքր Ասիայից, Բալկաններում կորցրեց բազմաթիվ տարածքներ: 1341–1354 թթ. երկպառակտչական պատերազմները ուղեկցվում էին ժողովրդի լայն շերտերի ապստամբություններով: Գահ բարձրացած մանկահասակ Հովհաննես Ե Պալեոլոգոսի (1341–1391 թթ.) իշխանության առաջին շրջանում, փաստորեն, շարունակում էր կառավարել տաղանդավոր զորահրամանատար, կայսեր խնամակալ Հովհաննես Կանտակուզենը, որը նպատակադրվել էր վերականգնել կայսերական իշխանությունը: Վերջինիս հակառակորդները, 1341 թ. օգտվելով նրա բացակայությունից, հալածանքների ենթարկելով նրա կողմնակիցներին, կարողացան նրան հեռացնել իշխանությունից, ինչն էլ քաղաքացիական պատերազմի առիթ ծառայեց: Երկիրը բաժանվեց երկու ճամբարների, առաջին անգամ երկրի պատմության մեջ նկատվեցին քաղաքների կոալիցիայի առաջացման նշաններ Թեսալոնիկեի զիլոտների գլխավորությամբ, միստիկ–վանական շարժումը (հսիխազմ) դարձավ ապստամբների գաղափարախոսական զենքերից մեկը: Դաշնակցելով Սերբիայի թագավոր Ստեփան Դուշանի հետ և օգտագործելով թուրք Օրխանի միջամտությունը երկրի ներքին գործերին՝ Հովհաննես Կանտակուզենը կարողացավ 1343 թ. իրեն ենթարկել Թրակիան: Կ. Պոլսի կառավարությունն էլ իր հերթին Կանտակուզենի դեմ պայքարում վարձեց օսման Սուլեյմանի տրամադրած բանակը: Թրակիայի և Մակեդոնիայի համար միմյանց դեմ էին կռվում սերբական, լատին կոալիցիայի, թուրքական, ընդդիմության և կառավարության ուժերը: Պատերազմներից հոգնած Կ. Պոլիսը 1347 թ. իր դռները վերջապես բացեց Հովհաննես Զ Կանտակուզենի (1347–1354 թթ.) առջև, Հովհաննես Ե Պալեոլոգը և նրա մայր Աննա Սավոյացին հավատարմության երդում տվեցին հաղթողին, սակայն երկրի վերածննդի մասին արդեն խոսք անգամ չէր կարող լինել: Երկարատև քաղաքացիական պատերազմի հետևանքով Մակեդոնիայի և Թրակիայի բյուզանդական տիրույթները խիստ կրճատվեցին, այստեղ միայն որոշ կղզիացած ավատական իշխանություններ էին ճանաչում Կ. Պոլսի իշխանությունը, հեռու ընկած Մորեան, որտեղ կառավարում էր Հովհաննես Զ Կանտակուզենի որդի Մանուելը, ինքնավար էր դարձել: Կենտրոնական կառավարությունը նավատորմի վերաշինության անհաջող փորձ կատարեց, 1348 թ. գլուխ բարձրացրած ժանտախտի զոհ դարձավ բնակչության նշանակալի մասը, Ստեփան Դուշանը տեր դարձավ Թրակիային, Ջենովայի հանրապետությունը Գալաթիայից բացահայտ պատերազմ սկսեց Բյուզանդիայի դեմ՝ այրելով երկրի նորաստեղծ նավատորմը: Կանտակուզենը ուշացած փորձ կատարեց երկրի տնտեսությունը ամրացնելու համար. բարձրացրեց իտալական հանրապետություններից և օտար առևտրականներից գանձվող հարկերը, սկսեց սատար կանգնել տեղական արտադրողներին: 1349 թ. Թեսալոնիկեում հետզհետե հանգավ զիլոտական շարժումը, և քաղաքը կրկին ենթարկվեց կենտրոնական իշխանությանը: 1351 թ. Ջենովայի և Վենետիկի միջև բռնկված պատերազմի մեջ ներքաշվեց նաև Բյուզանդիան, որը ստիպված եղավ ստորացուցիչ պայմանագիր կնքել Ջենովայի հետ: Հովհաննես Ե–ը փորձեց սերբերի և բուլղարների օգնությամբ իշխանությունից հեռացնել Հովհաննես Զ Կանտակուզենին, սակայն պարտություն կրեց: Օրթոդոքս եկեղեցում հաղթանակ տարած պալամականները, պայքարելով լատինների ազդեցության դեմ, բացում էին երկրի սահմանները թուրքերի առջև: 1354 թ. Օրխանը մտավ Գալիպոլիս: Մեկ տարի անց Հովհաննես Ե Պալեոլոգը կատարեց հեղաշրջում և գահընկեց արեց Հովհաննես Զ Կանտակուզենին: Արդյունք չտվեց Բյուզանդիայի հզորության վերականգնման վերջին փորձը:

2. ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

XIV դ. կեսի երկպառակտչական և քաղաքացիական պատերազմները հյուծեցին երկիրը, սերբերը, վենետիկցիներն ու թուրքերը հավակնում էին նվաճելու երկրի տարածքները: Ահագնանում էր թուրքական վտանգը. 1362 թ. նրանք գրավեցին Ադրիանապոլիսը և ողջ Թրակիան: 1366 թ. Հովհաննես Ե–ը դիմեց երկրի պատմության մեջ աննախադեպ քայլի, լքեց պետության սահմանները և մեկնեց Հռոմի պապի մոտ՝ օգնություն խնդրելու: Թուրքերը, փորձելով մեկը մյուսի հետևից շարքից հանել իրենց հակառակորդներին Բալկաններից, 1371 թ. Մարիցայի ճակատամարտում ջարդեցին սերբերին՝ ճանապարհ բացելով դեպի Մակեդոնիա: Սերբերն ու Բյուզանդիան պաշտոնապես ճանաչեցին օսմանների գերակայությունը: Մուրադ Ա–ը միջամտում էր երկրի ներքին գործերին: Վենետիկցիների ու ջենովացիների պայքարը բյուզանդական ժառանգության համար թուլացրեց նրանց ուժերը, և երկուսն էլ ստիպված էին դաշինք կնքել Մուրադ Ա–ի հետ: Այս պայքարում ժամանակավոր քաղաքական և մշակութային հաջողությունների հասավ Մորեան, որտեղ Հովհաննես Ե–ի որդի դեսպոտ Թեոդորը (1382–1406 թթ.) կարողացավ իր իշխանությունը տարածել Պելեպոնեսի և Հունաստանի աքայան իշխանությունների վրա: 1389 թ. Կոսովոյի ճակատամարտում սերբերի և բուլղարների դեմ տարած Բայազետ Ա–ի հաղթանակով Բալկաններն անցան թուրքերի տիրապետության տակ, 1394 թ. Թեսալոնիկեի գլխավորությամբ ընկավ ողջ Մակեդոնիան, Վալախիան ճանաչեց թուրքերի իշխանությունը, Կոստանդնուպոլիսը հայտնվեց պաշարման մեջ: Երբ թուրքական նվաճման վտանգը սպառնաց նաև Հունգարիային, պապությունը նոր խաչակրաց արշավանքի կոչով Բալկաններ ուղարկեց Չեխիայի, Գերմանիայի, Լեհաստանի և Ֆրանսիայի ասպետներին, որոնց օժանդակում էր նաև վենետիկյան նավատորմը: 1396 թ. Նիկոպոլսի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Բայազետ Ա–ը գլխովին ջախջախեց խաչակրաց բանակը Հունգարիայի թագավոր Սիգիզմունդ Ա–ի գլխավորությամբ: 1399–1402 թթ. Մանուել Բ կայսրը (1391–1425 թթ.)

այցելեց Փարիզ և Լոնդոն՝ հույս ունենալով նոր խաչակրաց ռազմարշավ կազմակերպելու թուրքերի դեմ: Լսելով Լենկ Թեմուրի կողմից Բայազետ Ա–ի բանակի ոչնչացման (1402 թ.) լուրը՝ Մանուել Բ–ը ձեռնունայն վերադարձավ Կ. Պոլիս: Մահմեդ Ա–ի իշխանության տարիներին (1402–1421 թթ.) օսմանյան պետությունը լարել էր իր ուժերը՝ վերականգնելու համար սեփական երկրի միասնականությունը: Չնայած որոշ հաջողություններին (Թեսալոնիկեի վերադարձ են)՝ Բյուզանդիան ի վիճակի չեղավ երկրի ներսում կարգ հաստատելու համար օգտագործել ժամանակավոր զինադադարը: Մուրադ Բ սուլթանը վերսկսեց բյուզանդական տարածքների գրավումը. 1423 թ. ներխուժեց Մորեա, 1430 թ. գրավեց Թեսալոնիկեն: Հովհաննես Ը Պալեոլոգը (1425–1448 թթ.) հորից ժառանգեց ընդամենը թշնամու կողմից պաշարված մանր հողակտորներ: Տնտեսական անզորությանը զուգահեռ, երկրում աճել էին նաև թուրքամետ տարրերը, Մորեայում և Աքայայում հույները դեսպոտ Կոստանդինի ղեկավարությամբ վռնդում էին լատին ֆեոդալներին, օրթոդոքս վանականությունը անհաշտ պայքար էր մղում ունիայի կողմնակիցների դեմ: 1439 թ. հուլիսի 6–ին բյուզանդական հոգևորականությունը ունիա կնքեց լատին հոգևորականության հետ Ֆլորենցիայի ժողովում, սակայն պապական կուրիան շարունակեց հապաղել ռազմական օգնություն ցույց տալու գործում: 1443 թ. Մուրադ Բ–ը 1444 թ. Վառնայի մոտ ջախջախեց Լեհաստանի և Հունգարիայի արքա Վլադիսլավ Գ–ի կազմակերպած խաչակրաց բանակը:

Հովհաննես Ը–ի մահից հետո բյուզանդական գահին անցավ Մորեայի դեսպոտ Կոստանդին Թ Պալեոլոգին (1149–1153 թթ.): Օսմանյան պետության մեջ 1451 թ. բարձրացավ Մեհմեդ Բ–ը: Վերջինս կարողացավ կարճ ժամանակում ծնկի բերել Կարամանի էմիրությանը և Բոսֆորի վրա՝ Կ. Պոլսի դեմ հանդիման, կառուցել երկու հզոր ամրոց, որոնք հսկողության տակ առան Բյուզանդիայի մայրաքաղաքը, ստեղծեց հզոր հրետանի: Կայսրը մեծ ծախսերով վերանորոգեց Կ. Պոլսի պարիսպները, Եվրոպայի օգնությունը ապահովելու համար թույլ տվեց Ս. Սոֆիայի տաճարում կաթոլիկ ծեսով պատարագ մատուցել (1452 թ. դեկտ. 12): Ունիայի կողմնակիցների և հակառակորդների միջև պայքարը հասավ իր գագաթնակետին: 1453 թ. մարտին օսմանյան բանակը շրջապատեց Կ. Պոլիսը, Մարմարի ծով մտավ թուրքական նավատորմը: Թեպետ սկզբում մայրաքաղաքի պաշտպանները ցուցաբերեցին տոկունություն և ծովում պարտության մատնեցին թուրքական նավատորմին, սակայն նրանց ուժերը հետզհետե սպառվում էին. քաղաքի պաշտպանների մոտ բացակայում էր միասնականությունը: Կրելով հսկայական կորուստներ՝ 1453 թ. մայիսի 29–ին թուրքերը գրավեցին Կ. Պոլիսը՝ դարձնելով Օսմանյան կայսրության մայրաքաղաք:

1255–1261 թթ. հյուծիչ ներքաղաքական պայքարի ընթացքում իր անկախությունը կորցրեց նաև Մորեայի դեսպոտատը, որը դրսից կառավարում էին լատիններն ու թուրքերը, և որը XIV–XV դդ. մեծ հաջողություններ էր արձանագրել մշակույթի զարգացման բնագավառում, հասել էր տնտեսական աննախադեպ զարգացման: Թուրքերը չկարողացան հաստատվել միայն անառիկ Մոնեվասիայում, որն էլ դարձավ վենետիկյան գաղութ: 1461 թ. թուրքերը նվաճեցին նաև Տրապիզոնի կայսրությունը՝ վերջ դնելով Մեծ Կոմնենոսների իշխանությանը:

Կայսրությունն իր հազարամյա պատմության ընթացքում բազմակողմանի կապեր էր ունեցել քրիստոնյա Արևելքի գրեթե բոլոր ժողովուրդների հետ: Այդ իսկ պատճառով Կ. Պոլսի անկումը ծանր ընկալվեց Բյուզանդական կայսրության սահմանակից երկրներում, հատկապես Հայաստանում և Վրաստանում: Կ. Պոլսի անկման լուրը առանձնապես ծանր տպավորություն էր առաջացրել Հայաստանում այն պատճառով, որ իր պետականությունն ու անկախությունը կորցրած հայ ժողովրդի համար Բյուզանդիան մինչ այդ ստացել էր ապագա ազատարար լինելու հմայքը: Այդ մասին են վկայում Ս. Ներսեսին և Ս. Սահակին վերագրված տեսիլներն ու Ագաթոնի ու Հովհաննես Կոզոռնի մարգարեությունները, որոնք, ստեղծված լինելով Արշակունյաց և ապա Բագրատունյաց թագավորությունների կործանումից հետո, հույսեր էին ներշնչում Հայոց պետականության վերականգնման բնագավառում: Ըստ Ագաթոնի մարգարեության՝ Կ. Պոլսի թագավոր Վիզանդը (Բյուզանդ) հայ ժողովրդին և նրա Վաղարշակ թագավորին պետք է պաշտպաներ հագարացիներից: Այս տեսակետից էլ հասկանալի է, թե ինչու Բյուզանդիոնի հայերը հույների և իտալացիների հետ անձնվիրաբար գործուն մասնակցություն են ունենում քաղաքի հերոսական պաշտպանության գործում 1453 թվականին, երբ Մեհմեդ Բ–ի զորքերը կռիվներ էին մղում նրա դեմ: Բյուզանդիայի անկման լուրը անակնկալի էր բերել հայ հոգևոր և մտավոր վերնախավին, քանի որ նրանց հետ հայ ժողովուրդը կորցնում էր ազատագրական հույսերի հզոր կռվանը:

Հայ մատենագրության մեջ Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին երկարաշունչ քերթվածներով ողբում են Կ. Պոլսի անկումը՝ արտահայտելով հայ ժողովրդի ոչ միայն վերնախավերի, այլև առհասարակ բոլոր խավերի խոր վրդովմունքը, ցավն ու վիշտը քաղաքակրթության այդ հոյակապ ոստանի նվաճման ու ավերման առթիվ և նրանց բացասական վերաբերմունքը նվաճող բարբարոսների հանդեպ: Ըստ նրանց երկերի՝ Բյուզանդիայի անկման պատճառների մեջ կարևոր դեր են խաղացել ոչ միայն արտաքին–քաղաքական հանգամանքները, այլև, գլխավորաբար, կայսրության ներքին կյանքում տիրող տնտեսական և սոցիալական պայմանները: Տնտեսական անկումը և դրա հետ միասին ներքաղաքական սուր պայքարն ընդհանրապես զրկել էին բյուզանդական պետականությանը ներքին հավասարակշռության հիմքերից, և երբ թուրք նվաճողների վտանգը ավելի քան ծավալուն էր դարձել, սոցիալական խմբավորումներն, աշխատելով ըստ իրենց յուրահատուկ շահերի, յուրովսանն ուղղություն էին տալիս անկման եզրին հասած կայսրության կյանքին: Կ. Պոլսի անկման նախօրյակին Բյուզանդիայում իրար դեմ սուր պայքարի մեջ էին երեք հիմնական քաղաքական հոսանքներ՝ ազգային–ուղղափառ, արևմտյան–լատինասեր և թուրքասեր: Բյուզանդիայի գոյության վերջին տարիների պատմությունը խոսում է այն մասին, որ լատինասեր ուղղությունը խորապես վնասակար դեր է խաղացել իր երկրի կյանքում: Լատինասերները դատարկ ու մոլար հույսեր էին դնում Արևմուտքի օգնության վրա և վերջին հաշվով գործիք էին դառ-

նում պապական արքունիքի շահադիտական ու գիշատիչ քաղաքականության համար: Այդ քաղաքականության քննադատության տարրերն առկա են նաև հայկական սկզբնաղբյուրներում, ինչպիսիք են Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու «Ողբերը», ինչպես նաև Դավիթ Խարբերդցու և Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի աշխատությունները:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹ

1. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅՈՒՄ

Բնագիտական գիտելիքների իրենց պաշարը բյուզանդացիները ժառանգել են անտիկ ժամանակաշրջանից: Տեսական գիտությունը Բյուզանդիայում նկատելի զարգացում չի ունեցել, ինչն, առհասարակ, բնորոշ է միջնադարյան մշակույթի համար: Հաղթանակած քրիստոնեության ուշադրության կենտրոնում գտնվում էր գերզգայական, հոգևոր աշխարհը, քանի որ մարդու գերագույն նպատակն էր համարվում հոգու փրկությունը անդրշիրիմյան կյանքում: Դա, իհարկե, չէր նպաստում բնագիտության զարգացմանը: Քրիստոնեական իմացաբանության հիմքում ընկած էր հավատն աստվածային հայտնության նկատմամբ, և անտիկ շրջանի գիտական ժառանգությունից բյուզանդացիներն ուշադրության արժանի էին համարում գլխավորապես այն գիտությունները, որոնք չէին հակասում քրիստոնեական հավատի հիմնադրույթներին ու նպաստում էին նրանց ամրապնդմանը:

Այս գիտությունների թվին էր պատկանում նախ և առաջ մաթեմատիկան: Այն մեծ կարևորություն ուներ եկեղեցու համար, քանի որ առանց մաթեմատիկական գիտելիքների անհնարին կլիներ կատարել այն բարդ հաշվարկները, որոնք անհրաժեշտ էին եկեղեցական տոմարը կազմելու համար: Թեև բյուզանդական մաթեմատիկոսները չէին զբաղվում տեսական հիմնախնդիրների լուծմամբ, սակայն նրանք մեծ վաստակ ունեն անտիկ մաթեմատիկայի ժառանգության համակարգման, մեկնաբանման և ուսումնասիրման գործում: Հատկապես մեծ արժեք ունեն նորպլատոնականների մաթեմատիկական աշխատությունները: Անտիկ իմաստասիրության այս կարևորագույն դպրոցի ականավոր ներկայացուցիչներ Յամբլիքոսին (IV դ.) և Պրոկլեսին (V դ.) են պատկանում համապատասխանաբար Նիկոմաքոս Հերասցու «Թվաբանության ներածության» ու Էվկլիդեսի «Սկզբունքների» մեկնությունները: Բյուզանդական նշանավոր մաթեմատիկոսների շարքում հիշատակման են արժանի նաև Եվտոքիոս Ասկալոնցին (V–VI դդ.) ու Հովհաննես Փիլոպոնոսը (VI դ.), Լևոն Մաթեմատիկոսը (IX դ.), Միքայել Փսելլոսը (XII դ.) և ուրիշներ:

Բյուզանդացիները մեծ հետաքրքրություն էին ցուցաբերում նաև աստղագիտության նկատմամբ, քանի որ այն նույնպես գործնական կարևորություն ուներ նրանց համար, հատկապես երկրագործության և նավագնացության բնագավառում: Այստեղ նույնպես բյուզանդացիներն էապես չէին հարստացրել անտիկ ժամանակաշրջանից ժառանգած գիտելիքների պաշարը՝ հիմնականում զբաղվելով անտիկ աստղագետների աշխատությունների մեկնաբանմամբ: Այդ ասպարեզում արժե-

քավոր գործեր են ստեղծել Պրոկլեսը, Հովհաննես Փիլոպոնոսը, Ստեփանոս Ալեքսանդրացին (VI–VII դդ.) և ուրիշներ:

Բյուզանդացիների կողմից անտեսված չէր նաև ֆիզիկան, որն անտիկ բնագիտության հիմքն էր կազմում, քանի որ նրա մեջ էին մտնում նաև աշխարհագրությունը, կենդանաբանությունը, բուսաբանությունը, հանքաբանությունը և բժշկագիտությունը: Ի տարբերություն ժամանակակից ֆիզիկայի՝ անտիկ ժամանակաշրջանում և միջնադարում ֆիզիկան զուտ տեսական, նկարագրական գիտություն էր, որ կապ չուներ փորձարարության հետ: Բյուզանդացիներին հայտնի ֆիզիկական գիտելիքների հիմնական աղբյուրն էին Արիստոտելի աշխատությունները: Կազմվել են Արիստոտելի երկերի հանրամատչելի վերաշարադրանքները, որոնցից առավել հայտնիները պատկանում են նշանավոր հռետոր և իմաստասեր Թեմիստիոսին (IV դ.): Գրվել են նաև Արիստոտելի բնագիտական երկերի բազմաթիվ մեկնություններ, որոնցից առավել կարևորները պատկանում են Սիմպլիկիոսին և Հովհաննես Փիլոպոնոսին (VI դ.):

Բյուզանդիայում գոյություն ուներ զարգացած կրթական համակարգ, որը նույնպես ժառանգված էր անտիկ ժամանակաշրջանից: Եկեղեցու հայրերը բարձր էին գնահատում դասական կրթության արժեքը, քանի որ այն օգտակար էր քրիստոնեական հավատքի հիմնադրույթների հաստատման և խորացված ըմբռնման համար: Այս կրթությունն ուներ նաև գործնական նշանակություն: Ուսումը հնարավորություն էր ընձեռում ձեռք բերելու ավելի բարձր հասարակական կարգավիճակ, ուստի անգամ ռամիկները ձգտում էին կրթություն տալու իրենց զավակներին:

Բյուզանդիայում նախնական դպրոցներում հիմնականում շարունակում էին օգտագործվել հելլենիստական ժամանակաշրջանից ժառանգված ուսումնական ծրագրերը, որոնց հիմքում ընկած էին, այսպես կոչված, «եռյակը»՝ քերականությունը, ճարտասանությունը և դիալեկտիկան, և «քառյակը»՝ թվաբանությունը, երկրաչափությունը, երաժշտությունը և աստղագիտությունը: Այս առարկաները աշակերտին նախապատրաստում էին իմաստասիրության ուսումնասիրմանը, որն անհրաժեշտ էր համարվում աստվածային հայտնությունը ճիշտ ընկալելու համար: Սա, անշուշտ, տեսական սխեմա է, քանի որ իրականում բյուզանդացիների ճնշող մեծամասնությունը սահմանափակվում էր «եռյակի» կազմի մեջ մտնող առարկաների ուսումնասիրմամբ: Կրթական համակարգի հիմքը տարրական դպրոցն էր, որտեղ հիմնական առարկան ուղղագրությունն էր: Այս առարկայի կարևորությունը պայմանավորված էր էական տարբերություններով, որ գոյություն ունեին դասական գրական հունարենի և բյուզանդական շրջանի խոսակցական լեզվի միջև: Որպես ուսումնական նյութ ծառայում էին Հոմերոսի և Եզովպոսի ստեղծագործությունները, ինչպես նաև Դավթի սաղմոսները: Տարրական կրթությունը մոտավորապես 3 տարի էր տևում: Մեծամասնության կրթությունը դրանով էլ ավարտվում էր, իսկ իրենց ուսումը շարունակել ցանկացողներն ընդունվում էին քերականական դպրոց, որտեղ 6–7 տարի ուսումնասիրում էին քերականությունը, որը կրթության և արվեստների հիմքն էր համարվում: Այստեղ աշակերտները կատարելապես տիրապետում էին դասական հունարենին, որի իմացությունը բարձր էր գնահատվում բյուզանդացիների կողմից: Այդ նպատակին հասնելու համար աշակերտները սերտում էին ինչպես հին հունական գրականության դասականների երկերը, այնպես էլ Ս. Գիրքը և Եկեղեցու հայրերի ստեղծագործությունները: Եվ վերջապես, 16–17 տարեկան հասակում ընդունվում էին հռետորական և փիլիսոփայական դպրոց, որտեղ ուսումնասիրում էին ճարտասանությունը և իմաստասիրությունը, որոնք չափազանց բարձր էին գնահատվում բյուզանդացիների կողմից: Բացի աշխարհիկ դպրոցներից, կային նաև վանքերին կից գործող եկեղեցական դպրոցներ:

Բյուզանդիայում գոյություն ունեին նաև բարձրագույն դպրոցներ: 425 թ. Թեոդոսիոս Բ կայսեր հրամանագրով Կոստանդնուպոլսում համալսարան ստեղծվեց, որում կային հունական և լատինական քերականության և ճարտասանության, իրավաբանության և փիլիսոփայության ամբիոններ: Այդ համալսարանը ավելի քան 100 տարի գործելուց հետո, փաստորեն, լուծարվեց Հուստինիանոս Ա կայսեր կողմից, որը չէր հանդուրժում հեթանոսական մշակույթի որևէ դրսևորում: Այն վերականգնվեց միայն հետագայում և գործել էր մինչև 1204 թ., երբ Բյուզանդիայի մայրաքաղաքը նվաճեցին խաչակիրները: Այդ համալսարանում, որը պատկանում էր միջնադարի լավագույն բարձրագույն դպրոցների թվին, դասավանդվում էին հռոմեական իրավունք, լատիներեն, բյուզանդական իրավաբանություն և փիլիսոփայություն: Նույն դարում Կոստանդնուպոլսում Ալեքսիոս Ա Կոմնենոս կայսեր կողմից հայրապետական աթոռին կից ստեղծվեց նաև հոգևոր դպրոց: Այս դպրոցում աշակերտները հիմնականում ուսումնասիրում էին Ս. Գրքի մեկնությունները, սակայն դասավանդվում էին նաև աշխարհիկ առարկաները: Այս դպրոցի դասախոսներն էին բյուզանդական մշակույթի խոշորագույն գործիչները: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Բյուզանդիան միջնադարյան առավել քաղաքակիրթ և կրթված երկրներից մեկն էր:

2. ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Համակարգման ձգտումն ու ավանդապահությունը, որ հատուկ էին բյուզանդական մշակույթին, առանձնապես արտահայտվել են իրավագիտության բնագավառում: Այն սկիզբ է դրվել հռոմեական իրավունքի համակարգմամբ, քաղաքացիական իրավունքի ժողովածուների կազմումով: Բյուզանդական իրավագետների խնդիրը հիմնականում եղել է այդ ժողովածուների մեկնաբանումն ու վերապատմումը: Ժողովածուն լատիներենից մասնակի թարգմանվել է հունարեն և դրվել Վասիլիկների հիմքում: Վասիլիկներին կից կազմվել են զանազան տեղեկագրային ձեռնարկներ: Իրավագիտության վերելքը Բյուզանդիայում սկսվել է XI դարից, երբ Կ. Պոլսում հիմնադրվել է բարձրագույն իրավաբանական դպրոց: XI դարի Կ. Պոլսի դատարանի պրակտիկան ընդհանրացնելու փորձն ամփոփվել է «Պիրե» («փորձ») ժողովածուի մեջ: Բյուզանդական իրավաբանները մեկնաբանել են Եկեղեցական ժողովների կանոնները, որով ձգտել են համապատասխանեցնելու կանոնական և հռոմեական իրավունքների նորմերը:

Բյուզանդական իրավունքը հռոմեականի անմիջական ժառանգորդն է: Թեոդոս Փոքրի ժամանակ կազմված ժողովածուում (438 թ.) ընդգրկված են հռոմեական կայսերական օրենքները՝ սկսած Կոստանդին Ա–ից: VI դարում Հուստինիանոս Մեծ կայսեր ստեղծած իրավաբանական հանձնաժողովը առանձին գրքերով կազմեց օրենսգրքերի երեք հիմնական ժողովածուներ: Պատժամիջոցների մեջ հիմնական տեղը զբաղեցնում էին դրամով հատուցվող պատիժները: Քաղաքացիական իրավունքի ժողովածուն (Corpus juris civilis), Ինստիտուցիաները և Դիգեստները հայտնի են նաև հունարեն թարգմանություններով, ցանկերով և զանազան իրավաբան հեղինակների (Թեոփիլոս, Դորոթեոս, Ստեփաննոս ևն) մեկնություններով: Այս ժամանակաշրջանում Տիեզերական ժողովների կանոնների և եկեղեցու Ս. հայրերի (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նազիանզացի, Հովհան Ոսկեբերան ևն) կանոնների հիմքի վրա ստեղծվում են նաև եկեղեցական կանոնների առաջին ժողովածուները, որոնց նախաձեռնողը Կ. Պոլսի Հովհաննես Սքոլաստիկոս պատրիարքն էր: Շրջանառության մեջ են դրվում 60 և 50 տիտղոսների կանոնագրքերը, 87 գլուխների ժողովածուն: Բյուզանդական կայսրության մի շարք քաղաքներում (Կ. Պոլիս, Աթենք, Անտիոք, Ալեքսանդրիա, Բեյրութ ևն) կային իրավունք ուսուցանող բարձրակարգ դպրոցներ, որոնք վայելում էին պետության հովանավորությունը: Հիշատակված համալսարաններում իրավունք էին դասավանդում կայսեր կողմից նշանակված անտեցեսորները, VI դարից սկսած՝ նրանց՝ Բյուզանդական կայսրության իրավաբաններին, սկսեցին անվանել սքոլաստիկներ:

726 թ. հունարենով հրապարակվեց Էկլոգան՝ օրենքների համառոտ ժողովածուն, ուր համառոտված էին հուստինիանոսյան Ինստիտուցիաների, Դիգեստների, Կորպուսի և Նովելների բնագրերը 17 տիտղոսներում: Այստեղ կարգավորված են հանցանքների համար նախատեսված պատիժները, որոնցով մեղավորը, իբրև կանոն, հատուցում էր՝ իր վրա փորձարկելով հանցագործության միևնույն տեսակը: Հաստատագրվում են քրիստոնեական ամուսնական իրավունքի հիմքերը: Իրավունքի մի շարք բնագավառներ, որոնք համապատասխան արտացոլում չէին գտել Էկլոգայում, ամրագրվեցին ժողովածուի հավելվածներում, որոնց մեջ ինքնուրույն նշանակություն են ձեռք բերել Հողագործական, Ջինվորական, Ծովային և Մովսիսական օրենսգրքերը: Հետագայում հրապարակ ելան նաև այս ժողովածուի զանազան տարբերակները, ինչպիսիք են Նիկիփոր Ա–ի Էկլոգադիան (IX դ. սկիզբ), Պրոխիրոնյան Էկլոգան և մասնավոր Էկլոգան (IX դարի կես): Վերջինս իր մի շարք հավելվածներով թարգմանվել է քրիստոնյա Արևելքի գրեթե բոլոր լեզուներով: Քրիստոնյա Արևելքի բազմաթիվ լեզուներով (սլավոներեն, վրացերեն, հայերեն ևն) թարգմանվել է նաև ԺԴ տիտղոսների կանոնագիրքը, որը հետագա դարաշրջանի իր հավելումներով և մեկնություններով ստացել է Նոմոկանոն անունը:

Մակեդոնական կայսրերի իշխանության տարիները համարվում են բյուզանդական իրավունքի զարգացման բեղմնավոր շրջաններից մեկը: Ավատատիրական իրավունքն ու առևտրատնտեսական փոխհարաբերությունները կազմում են Էպարքոսի գրքի հիմնական բովանդակությունը: Լևոն Զ–ի իշխանության տարիներին

ավարտվեցին աշխատանքները հուստինիանոսյան Կորպուսի և ողջ նախորդ քաղաքացիական ու եկեղեցական իրավական ժառանգության հիմքի վրա կազմված Վասիլիկների ընդարձակ (60 գիրք) ժողովածուի վրա: Օրենքների հավաքածուն մատչելի դարձնելու միտումով ստեղծվեցին Մեծ (X դ.) և Փոքր (XII դ.) սինոպսիսցանկերը, Տիպուկիտները (XI դ.): Փոտ պատրիարքի նախաձեռնությամբ շարադրվեց Վասիլիկները բացատրող Իսագոգե ժողովածուն, ուր, զանազան իրավական հարցերի հետ մեկտեղ, սահմանվում էին կայսեր, պատրիարքի և բյուզանդական պաշտոնեության իրավունքներն ու պարտականությունները: Լևոն Զ–ի հսկողության ներքո հրապարակվեց Պրոխիրոնը (908 թ.), իբրև Վասիլիկների լրացում՝ Լևոն Զ–ի 113 նովելները, Էպանագոգան (886 թ.): Դրանց զուգահեռ ժամանակ առ ժամանակ կայսրերը հրապարակում էին նաև նովելներ:

Բյուզանդական կայսրության իրավական ժառանգության մեջ իրենց ուրույն տեղն ունեն Լատինական կայսրության դարաշրջանում ստեղծված օրենքների ժողովածուները: Դրանց մեջ բնորոշ է 1204 թ. մարտյան պայմանագիր–սահմանադրությունը, ուր սահմանվում են Կ. Պոլիսը նվաճած ուժերի իրավունքները, տրվում են նոր լատին պետության կառավարման հիմնադրույթները: Դատաիրավական հիմնական ժողովածուն Ռոմանիայի և Մորեայի Ասիզներն էին, որոնց նախատիպ էին ծառայել Երուսաղեմի Ասիզները: Նիկեայում, Տրապիզոնում, Էպիրոսում և Աթոսում շարունակվում էր բյուզանդական իրավունքի ժողովածուների վրա հիմնված օրենսդրական համառոտ ժողովածուների կազմումը:

Պալեոլոգների դարաշրջանում կրկին բյուզանդական իրավունքը մի վերջին բոնկում է ունենում շնորհիվ կանոնագետ–մեկնիչ Թեոդոր Բալսամոնի և այլոց: Անդրոնիկ Գ–ը հատուկ հրամանագրով ստեղծում է Տիեզերական դատավորների ինստիտուտը: Այս շրջանում է կազմվում Ընդարձակ Պրոխիրոնը: 1345 թ. կազմվում է Կոստանդին Արմենոպուլոսի բյուզանդական իրավունքի ժողովածուների համառոտման վրա կազմված նշանավոր Վեցգրքյանը, որը հինգ դար Բալկաններում օրենսդրական ուղեցույց է հանդիսացել դատավորների համար: Այն կարելի է համարել XIX դարի պետական օրենսգրքերի նախատիպը: Կանոնական իրավունքի դասակարգման կարևոր ձեռնարկ է Արմենոպուլոսի Էպիտոմեն, որը նախորդի նման բաժանված է 6 գրքի, որոնք բաղկացած են մի քանի տիտղոսներից: Լայն տարածում են ստանում պալամիստական շարժման ներկայացուցիչներ Նեղոս Դիասորինոսի, Հովասափ Եփեսացու և Մաթեոս Վլաստարիսի կանոնական բովանդակության հարցում–պատասխանները և վերջինիս Կանոնների այբբենական ժողովածուն: Բյուզանդական իրավունքի զարգացման մեջ, անկասկած, մեծ ներդրում ունի Թեսալոնիկեի դպրոցը:

3. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Միջնադարյան մշակույթի պատմության մեջ բյուզանդական ճարտարապետությունը առանձնահատուկ և կարևոր տեղ է գրավում: Դրա նվաճումները (հորինվածքային և գեղարվեստական հարդարանքի) անվիճելի ազդեցություն են ունեցել մեր-

ձակա ու հարևան երկրների (հատկապես՝ ուղղափառ դավանանքին հարող) արվեստի ու ճարտարապետության ձևավորման ու զարգացման վրա:

Բյուզանդիայի ճարտարապետության պատմությունը բաժանվում է երեք հիմնական փուլերի՝ վաղ շրջան (V–VIII դդ.), միջին շրջան (VIII–XIII դդ.) և ուշ շրջան (XIII–XV դդ.):

Առաջին փուլը բյուզանդական ճարտարապետության ձևավորման շրջանն էր: Այն կազմավորվեց ուշհռոմեական և հելլենիստական ավանդույթների հիման վրա ու փոքրասիական, մերձավորարևելյան շինարարական արվեստների կառուցողական ու ճարտարապետական մի շարք ձևերի յուրացման և վերամշակման միջոցով, որին նպաստեց նաև կայսրության կազմի մեջ մտնող երկրների ճարտարապետների ու շինարար վարպետների աշխատանքը:

Բյուզանդական ճարտարապետությունը V դ. մինչև XV դ. ունեցել է իր առանձին ստեղծագործական դպրոցները: Գլխավորը կոստանդնուպոլսյանն էր. մայրաքաղաքում մշակված ճարտարապետական ու հարդարանքի ձևերը կիրառվում էին ընդարձակ կայսրության ողջ տարածքում: Մյուս դպրոցներից կարևոր էին արևելաբյուզանդականը, հունականը, Ռավեննայինը:

Իսկ Ասորիքում IV–VI դդ. ձևավորվեց հելլենիստական շինարարական արվեստից սերող ինքնուրույն ճարտարապետական դպրոց:

Վաղ միջնադարում բյուզանդական քաղաքների կառուցապատումը բնորոշվում էր անտիկ քաղաքաշինական սկզբունքի կիրառումով՝ փոխհատվող կենտրոնական մայրուղիներով և փողոցների ուղղանկյուն ցանցով, հասարակական-առևտրական կենտրոնով, պարսպապատումով: Առանձին ստեղծագործական դպրոցներում առկա է շինարարական տեխնիկայի տարբերություն. երբ արևելաբյուզանդականում մոնումենտալ շենքերի կառուցման ժամանակ պատերի շարվածքում օգտագործվել է մաքուր տաշած քար, իսկ ծածկերը եղել են փայտից, ապա կոնստանդնուպոլսյանում կիրառվել է ինքնատիպ շարվածք՝ քարի ու աղյուսի համատեղությամբ, իսկ ծածկերը իրականացվել են թաղակապ:

Բյուզանդական ճարտարապետության զարգացման ուղիները և ստեղծագործական դպրոցների տարբերությունները առավել ակնհայտ երևում են եկեղեցական շենքերի օրինակով, որոնք անհամեմատ լավ են պահպանվել, քան աշխարհիկ կառույցները:

IV–V դդ. հիմնականում կառուցվում էին եռանավ բազիլիկներ, որոնց՝ արևելքից արևմուտք ձգված ընդարձակ աղոթասրահը այունաշարերով բաժանվում էր կենտ թվով (հիմնականում՝ երեք) մասի՝ «նավի», և նախատեսված էր բազմաթիվ հավատացյալների համար:

Բյուզանդական եռանավ բազիլիկի բնորոշ օրինակն է Կոստանդնուպոլսի Ստուդիայի վանքի եկեղեցին (463 թ.)՝ եռանավ, արտաքուստ բազմանիստ Ավագ խորանով, դահլիճը երկու կողմից շրջապատող կամարակապ վերնահարկով:

Բյուզանդական ճարտարապետության զարգացման շեշտակի վերելքը տեղի ունեցավ VI դ., որն իրավամբ համարվում է նրա «ոսկեդարը»: Առաջին խոշոր, ինքնատիպ հորինվածքով մոնումենտալ շենքը հանդիսացավ մայրաքաղաքում Ս. Սարգսի և Ս. Բաքոսի եկեղեցին (527–563 թթ.)՝ Հուստինիանոս Ա կայսրի առաջին կառույցը: Այստեղ կենտրոնագմբեթ հորինվածքը կազմվում է արտաքուստ բառանկյունի, ներսում Ավագ խորանից բացի՝ չորս ոչ մեծ աբսիդներով, երկհարկ շրջանց սրահով, կենտրոնում առանց թմբուկի գմբեթով: Կոստանդնուպոլսում Հուստինիանոսը կառուցեց նաև Ս. Առաքելոց խաչաձև, հնգագմբեթ եկեղեցին և Ս. Իրենե (532 թ.) գմբեթավոր բազիլիկը, որոնք նախորդեցին Ս. Սոֆիայի տաճարին՝ համաշխարհային ճարտարապետության գլուխգործոցին: 532–537 թթ. կառուցված այս տաճարի ճարտարապետներն են Անթեմիոս Թրալացին և Իսիդորոս Միլեթացին՝ երկուսն էլ Փոքր Ասիայից. մի հանգամանք, որն էլ, հավանաբար, պայմանավորեց հունա-հռոմեական և արևելյան շինարարական արվեստների լավագույն նվաճումների արտակարգ տպավորիչ և ներդաշնակ զուգակցումը: Տաղանդավոր ճարտարապետները, որոնք միաժամանակ և խոշոր ճարտարագետներ էին, կարողացան ստեղծել քրիստոնեական ճարտարապետության խոշորագույն գմբեթով պսակված, կենտրոնակազմ եկեղեցի, որը նոր խոսք էր միջնադարյան շինարարական արվեստում: Ս. Սոֆիայի տաճարի հսկայական չափերը, բացառիկ ճարտարապետությունը, արտակարգ շքեղ ինտերիերը կոչված էին ցուցադրելու աշխարհին Բյուզանդական կայսրության և ուղղափառ եկեղեցու հզորությունն ու վեհությունը:

Ս. Սոֆիայի տաճարը համատեղեց բազիլիկ համակարգը կենտրոնագմբեթի հետ: 54 մ բարձրության վրա դրված 31,5 մ տրամագծով գմբեթի 40 լուսամուտները ստեղծում են երկնքում գմբեթի ազատ ճախրելու պատրանք: Մեզ հասած գմբեթը՝ նախնականը երկրաշարժից քանդվելուց հետո, 989–992 թթ. վերականգնել է միջնադարյան Հայաստանի հռչակավոր ճարտարապետ Տրդատը:

Ռավեննայի ճարտարապետական դպրոցը V–VI դդ. ձևավորվեց տեղական շինարարական արվեստի ավանդների հիման վրա, կոստանդնուպոլսյան դպրոցի որոշ ազդեցությամբ: Հատկապես բեղմնավոր էր VI դ. առաջին կեսը, երբ Ռավեննայում կառուցվեցին երկու եռանավ բազիլիկներ՝ Կլասի Ս. Ապոլինարե (549 թ.) և Ս. Ապոլինարե Նոր (VI դ. սկիզբ) եկեղեցիները, որոնք ունեին Կոստանդնուպոլսի տաճարներին հատուկ հանդիսավորություն ու վեհություն, հատկապես ներսում, բարձրարվեստ խճանկարների շնորհիվ:

Ռավեննայում 526–547 թթ. կառուցվեց Ս. Վիտալի եկեղեցին, որի արտաքին ճարտարապետությունը որքանով որ պարզունակ էր և անարտահայտիչ, այնքանով էլ արտակարգ տպավորիչ ու բացառիկ էին նրա բարդ և ճոխ ներսակողմի ճարտարապետությունն ու հարդարանքը:

Արտաքուստ ութանիստ եզրագծի մեջ ներառված է ութախորան (շեշտված խոշոր արևելյան՝ Ավագ խորանով) գմբեթակիր ռոտոնդա՝ շրջապատված երկհարկ կամարաշար սրահով: Ս. Վիտալի եկեղեցու ներսը զարդարված է բյուզանդական վաղմիջնադարյան կերպարվեստի նշանավոր ստեղծագործությամբ. պատերի, գմբեթարդի, թաղերի խճանկարները կազմում են բարդ և գեղարվեստորեն ամբողջական համալիր, որում առանձնանում են հատկապես Հուստինիանոս կայսրն ու

Թեոդորա կայսրուհին՝ պատկերված ողջ հասակով, շքախմբերով, հանդիսավոր երթի ժամանակ:

Միջին բյուզանդական ճարտարապետության փուլի առաջին դարերը բնորոշվեցին քառամույթ գմբեթավոր, ուղղանկյան մեջ ներառված հորինվածքով եկեղեցիներով, արևելքից ընդհանուր ծավալից դուրս շեշտված կիսաշրջանաձև կամ բազմանիստ եզրագծով Ավագ խորանով և ավանդատների աբսիդներով: Տվյալ հորինվածքը գրեթե հազարամյակ դարձավ ուղղափառ երկրների եկեղեցիների հիմնական տիպը:

Բյուզանդական ճարտարապետական միջին փուլը նշանավորվեց նոր երևույթով՝ վանքային համալիրների կառուցումով, որոնք ունեն գրեթե միանման քաղաքաշինական կազմություն՝ ուղղանկյուն բակի կենտրոնում կանգուն եկեղեցով և պարսպին կից տարբեր նշանակության շինություններով:

Բյուզանդական աշխարհիկ ճարտարապետության կառույցների մասին պատկերացում են տալիս վանքային համալիրներում միաբանների երկհարկ բնակելի շենքերը, հիվանդանոցները, ծերանոցները, սեղանատները, աղբյուրները և այլն:

Մակեդոնյան հարստության հայազգի կայսրերի իշխանության IX–XI դարերը եղան բյուզանդական ճարտարապետության փայլուն վերելքի շրջանը: Այս դարերի նորակառույց պալատներն ու եկեղեցիներն աչքի են ընկնում արտակարգ շքեղությամբ: Վասիլ Ա կայսրը Կոստանդնուպոլսում կառուցեց ութ եկեղեցի, որոնք չափերով մեծ չէին (ինչպես վաղմիջնադարյանները), սակայն ավելի համահնչուն էին մարդուն և համապատասխան ծիսակատարության պահանջներին: Կայսեր պալատում կառուցած Նես Եկլեսիա եկեղեցին (880 թ.), ըստ պահպանված նկարագրությունների և գծագրերի, պատկանել է հայ ճարտարապետության IV–VII դդ. ստեղծած «Էջմիածին–Բագարան» եկեղեցական շենքի տիպին՝ ներքուստ և արտաքուստ խաչաձև, քառախորան, չորս գմբեթակիր մույթերով: Այն հետագայում կիրառվեց Արևմտյան Եվրոպայում (Ֆրանսիա, Իտալիա) և հատկապես տարածում գտավ բյուզանդական ճարտարապետության հունական դպրոցում, հիմնականում՝ Աթոս լեռան վանքում: Այստեղ, օրինակ, «բագարանատիպ» են վանքերից Մեծ Լավրայի Կաթողիկեն (961 թ. կառուցել է հայազգի Աթանաս Աթոնացին), Վատոպեդիի (X դ.), Չիլանդարի (1197 թ.) գլխավոր եկեղեցիները (մի տարբերությամբ՝ դրանք եռախորան են):

Բյուզանդական ճարտարապետությունը IX–XIII դդ. մեծ մասամբ կիրառել է եկեղեցական շենքի երկու տարբերակ: Դասականը՝ տարածվածը ուղղանկյուն, քառամույթ կամ քառասյուն, առագաստային փոխանցումով և ցածր թմբուկով գմբեթավոր հորինվածքն էր, որը դարձավ նաև ուղղափառ դավանանքի երկրների եկեղեցական շենքի հիմնական տիպը (Ռուսաստան, Վրաստան, Բալկանյան երկրներ և այլն): Մյուսը տրոմպային փոխանցումով գմբեթավոր դահլիճն էր: Դրանցից բացի, միջնադարում բյուզանդական եկեղեցական ճարտարապետության մեջ այլ տիպեր չօգտագործվեցին, և նորերը չստեղծվեցին: Բայց, ի տարբերություն վաղ՝ առաջին շրջանի, միջնադարում արդեն ուշադրություն էր դարձվում շենքի արտաքին ծավալի արտահայտչական–գեղարվեստական կողմին: Մակեդոնյան և Կոմնենոսների հարստության օրոք բյուզանդական ճարտարապետության երեք դպրոցները՝ մայրաքաղաքայինը, հունականը և արևելյանը, ունենալով որոշակի ոճական ու տիպաբանական միասնություն, միաժամանակ ունեին նաև էական տարբերություններ: Կոստանդնուպոլսյան դպրոցում անտիկ արվեստի ազդեցությունը բավական ուժեղ էր, իսկ արևելյանում զգալի էր կայսրության կազմի մեջ մտնող տարբեր ազգերի շինարարական արվեստի ազդեցությունը: Հունական դպրոցը այս երկուսի միջանկյալն էր:

Բյուզանդական ճարտարապետության պատմության կարճատև՝ երրորդ և վերջին փուլը (XIII–XV դդ.), որը անվանվում է նաև «պալեոլոգոսյան», բնորոշվում է գլխավորապես գոյություն ունեցող մոնումենտալ (աշխարհիկ ու եկեղեցական) շենքերի նորոգումով ու կցակառույցներով:

XIII դ. Բյուզանդիան տրոհվեց մի քանի ոչ մեծ պետությունների՝ Տրապիզոնի ու Նիկեայի կայսրությունների և Էպիրոսի դեսպոտության, որոնց գեղարվեստական մշակույթը և ճարտարապետությունը որոշակիորեն տարբերվում էին: Տրապիզոնի կայսրությունում կիրառվեցին Կոմնենոսների ճարտարապետության գավառական վերամշակված հորինվածքներն ու ձևերը (օրինակ՝ Տրապիզոնի Ս. Սոֆիա եկեղեցին): Էպիրիայում եկեղեցական շենքերը որոշակի նմանություն ունեն աշխարհիկ՝ պալատական կառույցներին (Արտեի՝ Պանագիայի եկեղեցի): Առավել ավանդական էր Նիկեայի կայսրության մշակույթը, որտեղ ճարտարապետությունը բնորոշվում է անտիկ ժառանգության օգտագործումով:

XIV դ. վերստին միավորված Բյուզանդական կայսրության ճարտարապետությունը կիրառեց շենքերի նախկին շրջանից ծանոթ տիպերը, սակայն հարդարանքի նոր մեկնաբանությամբ՝ արտաքին ճակատներում դեկորատիվ կամարաշարերով, պատերի շարվածքում բազմագունության կիրառումով: Երրորդ փուլի աշխարհիկ շենքերը նորակառույց պալատներն են, որոնց շարքում առանձնանում է մայրաքաղաքում Թեքֆուր–Սերայը՝ ճակատների գունագեղությամբ ու հարդարանքի հագեցվածությամբ:

Բյուզանդական ճարտարապետությունը հանդիսացավ համաշխարհային մշակույթի կարևոր երևույթներից՝ դառնալով հանգուցային կապող օղակ անտիկ և միջնադարյան, Վերածննդի ու Նոր ժամանակների եվրոպական ճարտարապետության միջև:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արամեան Մեսրոպ, Հայ եկեղեցու քրիստոսաբանական մտքի ուրուագծեր Դ–Ը դդ., Գանձասար, Բ, Եր., 1992, էջ 86–122:

Ցովսէփեան Գարեգին, Խոսրովիկ Թարգմանիչ, Վաղարշապատ, 1899:

Տէր–Միքելեան Արշակ, Հայաստանեայց Սուրբ Եկեղեցու Քրիստոնէականը, Տփղիս, 1900:

Տէր–Միքելեան Արշակ, «Հայաստանեայց եկեղեցին եւ բիւզանդական ժողովոց պարագայք», Մոսկուա, 1892:

Տէր-Մինասեանց Երուանդ, «Հայոց Եկեղեցու յարաբերությունները ասորոց եկեղեցիներու հետ», Ս. Էջմիածին, 1908:
Античная музыкальная эстетика. М., 1960.
Болотов В. В., Лекции по истории Древней церкви. Репринт. изд. Вып.1–4. М., 1994.
Булгаков С. Н., Православие: Очерки учения православной церкви. М., 1991.
Вильльман О., Дидактика как теория образования в ее отношениях к социологии и истории образования (Пер с нем. А. И. Дружинина). М. 1904, т. 1, с. 169–237.
Гранстрем Е. Э., Отрывок медицинского трактата Аэция из Амиды в списке X–XI вв.–ВВ, 1956, IX, с. 159–169.
Дьяконов А. П., Типы высшей богословской школы в древней церкви III–VI вв. СПб., 1913.
Иларион (Алфеев), Таинство веры. Введение в православное догматическое богословие М., 1996.
Карсавин Л. П., Святые отцы и учители Церкви (раскрытие Православия в их творениях). М., 1994.
Карташев А. В., Вселенские соборы. М., 1994.
Киприан (Керн), архим. Золотой век Свято-Отеческой письменности. М., 1995.
Клеман О., Истоки. Богословие отцов Древней Церкви. М., 1994.
Лосский В. Н., Очерк мистического богословия Восточной церкви. Догматическое богословие, М., 1991.
Флоровский Г. В., Восточные отцы IV-го века. (Репринт изд.), М., 1992.
Флоровский Г. В., Византийские отцы V–VIII веков (Репринт изд.), М., 1992.
Пигулевская Н. В., Города Ирана в раннем средневековье. М.–Л., 1956.
Рожанский И. Д., Античная наука. М., 1980.
Тарн В., Эллинистическая цивилизация. М., 1949.
Уколова В. И., Боэций и формирование системы квадривиума (К истории начального этапа средневекового образования).–В кн.: Сборник научных работ аспирантов исторического факультета МГУ. М., 1970, с. 243–266.
Уколова В. И., Из истории эстетических учений раннего средневековья. (эстетические взгляды Боэция).– В кн.: Европа в средние века: экономика, политика, культура. М., 1972, с. 277–293.
Удальцова З. В., Византийская культура. М., 1988.
Цветаев И. В., Из жизни высших школ Римской империи. М., 1902.
Яннарас Х., Вера Церкви. Введение в православное богословие. М., 1992.
Bigg C., The Christian Platonists of Alexandria. Oxford, 1886.
Buckler G., Byzantine Education. An Introduction to East Roman Civilization/Ed. N. H. Baynes, H. St. L. B. Moss. Oxford, 1948, p.200–220.
Downey G., Education in the Christian Roman Empire: Christian and Pagan Theories under Constantine and his successors.–Speculum, 1957, XXXII, N 1, p.48–61.
Kustas G. L., Studies in Byzantine Rhetoric. Thessalonike, 1973.
Васильев А. А., История Византийской империи.
Византийские очерки. М., 1996.
Диль Ш., История византийской империи.
Искусство Византии, Армении и Грузии, южных славян, Древней Руси // Всеобщая история искусств. Т. 2. Кн. 1 / Под общ. ред. Б. В. Веймарна и Ю. Д. Колпинского. М., 1960.
Каждан А. П., Византийская культура. М., 1968
Колташов В. Г., Организация и состав византийской армии IV–XIII веков.

Культура Византии IV – первая половина VII в. Т. 1. М., 1984.
Культура Византии VII – вторая половина XII в. Т. 2. М., 1989.
Культура Византии XIII – первая половина XV в. Т. 3. М., 1991.
Лебедев А. П., Очерки внутренней истории Византийско-восточной церкви в IX, X и XI веках. СПб., 1998.
Пигулевская Н. В., Византия и Иран на рубеже VI–VII веков. М.–Л.,1946.
Чичуров И. С., Политическая идеология средневековья: Византия и Русь. М., 1990.
Удальцова З. В., Византийская культура. М., 1988.
Удальцова З. В., Идейно-политическая борьба в ранней Византии. М., 1974.
Успенский Ф. И., История Византийской империи. Том 1; Том 2.
Haldon J. F., Byzantium in the Seventh Century: The Transformation of a Culture. Cambridge, 1997.
Haldon J. F., Warfare, State, and Society in the Byzantine World, 565–1204. London, 1999.
Krumbacher K., Geschichte der byzantinischen Litteratur. 2. Anflage. Munchen, 1897.
Treadgold W. T., A History of the Byzantine State and Society. Stanford, 1997.
Treadgold W. T., Byzantium and Its Army, 284–1081. Stanford, 1998.

ԲԱԺԻՆ 3

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԱԲՆԵՐԸ. ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

1. ԱՐԱԲՆԵՐԻ ԲՆՕՐՐԱՆԸ ԵՎ ՑԵՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Արաբներն աշխարհի հնագույն ժողովուրդներից են, որոնք պատմության մեջ մեծ դերակատարում են ունեցել, հատկապես ասիական մայրցամաքի այն հատվածում, որը նախկինում հայտնի էր Առաջավոր Ասիա, իսկ մեր օրերում՝ Մերձավոր Արևելք անվանակոչումով:

Արաբների բնօրրանը Արաբական թերակղզին է, որը գտնվում է Արևմտյան Ասիայի մերձավորարևելյան տարածաշրջանում: Նրա տարածքը կազմում է մոտ 3 մլն քառ. կմ, արևելքից հարում է Պարսից ծոցին, արևմուտքից՝ Կարմիր ծովին, իսկ հարավից նրա ափերը ողողում են Արաբական ծովի ջրերը: Թերակղզու կեսից ավելին կազմում են անապատները և կիսաանապատները, որոնց մեջ իրենց անկենդան բնությամբ աչքի են ընկնում Ռուբ ալ–Խալին («Դատարկ քառորդը»), Սիրիական անապատի մի հատվածը, ալ–Նուֆուդը, Դահան, իսկ կենտրոնական մասը զբաղեցնում է ալ–Նաջդ սարահարթը: Դրանք ջրազուրկ և կանաչազուրկ տարածքներ են: Արաբական թերակղզում չկան մշտական գետեր, բայց կան բազմաթիվ վադիներ՝ չորացած գետահուներ, որոնցով հազվագյուտ անձրևներից հետո հոսում են անձրևաջրերը: Արաբական թերակղզու բնության տիրակալները ավազախառն քամիներն են՝ սամումները, խամսինները և տարատեսակ ավազափոշիները: Մարդու ֆիզիկական գոյության և տնտեսական գործունեության համար համեմատաբար ավելի նպաստավոր են թերակղզու արևմտյան և հարավային մասերը: Արևմտյան մասը, որը ձգվում է Կարմիր ծովի ափերին, գրավում են Թիհամի հարթավայրը և Հիջազի բարձրավանդակը, որտեղ Արաբական թերակղզու ամենաբարեբեր հողերն են:

Արաբական թերակղզու բուսական աշխարհն աղքատ է, թեև հնում հարավային մասում Եմենի լեռնագոտիները ծածկված են եղել անտառներով: Սարերը լերկ են, իսկ անապատներում և կիսաանապատներում աճում են դրանց բնորոշ գաճաճ

փշատերև բուսատեսակներ: Միայն Հարավային Եմենում՝ Հադրամաութում, մուսոնային արևադարձային հորդառատ անձրևների շնորհիվ կա փարթամ բուսականություն: Արաբական թերակղզու բնությանը բնորոշ է յուրատեսակ կանաչ գոտիների՝ օազիսների առկայությունը, որոնք ցրված են Արաբիայի ամբողջ տարածքով: Նրանք հիմնականում սնվում են ստորգետնյա ջրերով, ինչպես նաև հազվադեպ անձրևաջրերով: Օազիսներում տիրապետողը արմավենին է, որին արաբները քնքշությամբ անվանում են «բույսերի թագուհի»: Քոչվոր՝ բեդվին արաբի երազանքն է եղել ունենալ ջուր և արմավ: Մուհամմեդ մարգարեին է վերագրվում «Հարգիր քո հորաքրոջը՝ արմավենուն, որը ստեղծված է այն նույն կավից, ինչ որ Ադամը» թևավոր արտահայտությունը: Օազիսներում և թերակղզու հարավային շրջանում՝ Եմենում, մշակում են ցորեն, գարի, բրինձ, խաղողի, նարնջի, ծիրանի, ձիթապտղի պտղատու այգիներ: XIV դարից սկսած՝ Արաբիայում մեծ տարածում է գտել սուրճը, որը հաճախ անվանում են «իսլամի գինի»:

Աղքատ է նաև Արաբիայի կենդանական աշխարհը, որտեղից անվերադարձ կերպով անհետացել են առյուծը և այլ գիշատիչ գազաններ: Մերօրյա արաբական ֆաունայի անբաժան մասն են կազմում քարայծը, աղվեսը, բորենին, գայլը, ջայլամը, հովազը և այլն: Արաբի կյանքում բացառիկ դեր է խաղում ուղտը, որին նա անվանում է «ջամալ»՝ «գեղեցկուհի»: Նա ունի նաև մեկ այլ անվանում՝ «անապատի նավ»: Նա է վաչկատուն արաբի կերակրողը: Իսկ թևավորներից տարածված են բազեն, արծիվը, աղավնին, լորը, բուն և այլ թռչուններ:

Արաբական թերակղզու բնական պայմանները և կլիման դաժան են, և մարդն այստեղ հնուց ի վեր իր գոյության պահպանման համար մաքառել է բնության դեմ:

Արաբիան սեմական ընտանիքին պատկանող ժողովուրդների բնօրրանն է: Արաբները որպես ժողովուրդ ձևավորվել են հնագույն սեմական ազգակից ցեղերի հիմքի վրա, հավանաբար Ք. ա. երկրորդ հազարամյակում: Այդ ժամանակից սկսվում է թերակղզու արաբականացման գործընթացը: Նրանց մոտ ուժեղ էին ցեղերը և ցեղային միությունները, որոնք շատ նախանձախնդիր էին իրենց «ցեղային» ինքնությունը պահպանելու հարցում:

Արաբների մոտ տիրապետող էին արխաիկ, նահապետական, տոհմատիրական հարաբերությունները: Նրանք բաժանվում էին վաչկատուն քոչվորների (բեդվիններ) և նստակյացների: Բեդվինները բնակվում էին վրաններում, և յուրաքանչյուր վրան համարվում էր մի ընտանիք: Մի քանի ընտանիքների միավորումից առաջանում էր տոհմը, իսկ արյունակից տոհմերից՝ ցեղը կամ կաբիլան, ապա նաև ցեղային միությունները: Տոհմի արյունակցական–ազգակցական կապերի առաջին աստիճանը տվյալ ցեղապետի որդիները՝ «բանու» լինելու հանգամանքն էր, ինչպես, օրինակ, «բանու Հաշիմ», «բանու Հասան» և այլն, որը նշանակում է «Հաշիմի որդիներ», «Հասանի որդիներ»: Տվյալ արյունակցական–ազգակցական խմբին պատկանող կաբիլաները կարող էին միավորվել և կազմել ավելի մեծ ցեղախմբեր՝ աշիրաթներ: Կաբիլայի գլուխ կանգնած էին սեյիդները, շեյխերը և զաիմները: Ներցեղային և միջցեղային հարաբերությունները կարգավորվում էին սովորութային իրավունքի՝

ադաթի հիման վրա: Բեդվինների տնօրինության տակ էր Արաբիայի տարածքների մեծ մասը: Նրանց հիմնական զբաղմունքը քոչվորական անասնապահությունն էր: Բեդվինի համար անասնապահությունը, որսորդությունը և ասպատակությունը տղամարդուն վայել միակ զբաղմունքն են, և նա վերևից, արհամարհանքով է նայում բոլոր նրանց, ովքեր զբաղվում են հողագործությամբ, առևտրով և արհեստներով:

Նստակյացները կազմում էին Արաբիայի բնակչության մյուս մեծ մասը, որը գլխավորապես զբաղվում էր հողագործությամբ, ինչպես նաև արհեստներով: Բեդվինները, նրանց կաբիլաները թշնամաբար էին վերաբերվում նստակյացներին և սննդամթերքի պահանջները բավարարում էին նրանց հաշվին. նրանք դա իրականացնում էին՝ կամ նրանց հարկադրելով մթերքների փոխանակություն կատարել, կամ, որն ավելի շատ էր տարածված, բռնության, ասպատակության և թալանելու ուղիով: Այդ պատճառով նստակյաց արաբները շատ հաճախ դիմում էին ուժեղ հարևան բեդվինական ցեղերի հովանավորությանը և պաշտպանությանը՝ դրա համար համապատասխան գին վճարելով:

Նախաիսլամական Արաբիայի տնտեսական կյանքում զգալի տեղ էր գրավում նաև առևտուրը, հատկապես քարավանային առևտուրը:

2. ԻՍԼԱՄԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ, ԿՈՐԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Արաբները մինչև VII դարի սկզբները հեթանոս կռապաշտներ էին, և այդ ժամանակաշրջանը արաբների պատմության մեջ հայտնի է որպես «ջահիլիայի»՝ «անգիտության», «խավարի» դարաշրջան: Յուրաքանչյուր ցեղ և ցեղային միություն ուներ իր կուռք-աստվածը: Արաբական իրականության մեջ թագավորում էր բազմաստվածությունը, որն արաբների և նրանց ցեղերի բաժանված լինելու, տարանջատվածության արտացոլումն էր և սրբագործում էր արաբական հասարակության ներքին տրոհվածությունը: Բազմաստվածության համակարգում ամենահզորը Հիջազի գլխավոր աստված Ալլահն էր, որը հետագայում դարձավ համայն արաբների միակ աստվածը: VI–VII դարերում Արաբիայում խիստ խորացավ սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամը, որին նպաստում էր նաև բազմաստվածությունը: Երկիրը քաղաքական, սոցիալ-տնտեսական և զաղափարաբանական-կրոնական արմատական վերափոխումների կարիք էր զգում:

Վերափոխումները սկսվեցին VII դարում, որը կապված է նոր նաբի՝ մարգարե Մուհամմեդի անվան հետ: Նա դարձավ նոր կրոնի՝ իսլամի ստեղծողը, արաբներին միավորողը և միասնական կենտրոնացված արաբական թեոկրատիայի՝ աստվածապետության հիմնադիրը:

Մուհամմեդը ծնվել է 570 թ. Մեքքայում և պատկանում էր ամենաազդեցիկ՝ Կուրայշ ցեղի Հաշիմի տոհմին: Երիտասարդ հասակում նա հաճախ էր առանձնանում Մեքքայի մոտակայքում գտնվող Հիրա սարի քարանձավներում, խորասուզվում իր խոհերի և զգացմունքների մեջ, անձնատուր լինում մեդիտացիային: Նրա վրա մեծ ազդեցություն թողեցին հանդիպումը և զրույցները քրիստոնյա վանական Բահիրայի հետ: Նա ընդհանուր գծերով ծանոթանում էր քրիստոնեության և հուդայականության դրույթների հետ, սակայն փնտրում էր դրանցից տարբեր բան:

Մուհամմեդի կենսագիրները հավաստում են, որ նա ինքնախորասուզման և հոգով սավառնելու պահերից մեկի ժամանակ ինչ-որ ձայն է լսել, որը նրան ոգեկոչել է քարոզի: Եվ Մուհամմեդը 610 թ. սկսեց իր քարոզը՝ հիմք դնելով մի նոր կրոնի, որը ստացավ իսլամ անունը: Նա իր քարոզը սկսեց հայրենի Մեքքա քաղաքում՝ ձեռք բերելով ինչպես իր առաջին հետևորդներին, այնպես էլ հակառակորդներին՝ ի դեմս Կուրայշ ցեղի Օմայա տոհմի: Հակասությունները նրանց միջև այն աստիճանի են սրվում և այնպիսի սպառնալից բնույթ կրում, որ Մուհամմեդը հարկադրված էր իր ոչ մեծ կողմնակիցների հետ 622 թ. փախչել Մեքքայից և հաստատվել Յասրիբում, որը հետագայում կոչվեց Մադինա: 622 թվականը համարվում է գաղթի՝ հիջրայի տարի և ընդունված է որպես արաբների և համայն մուսուլմանական աշխարհի տոմարի սկիզբ:

Մուհամմեդի քարոզները Յասրիբում պարարտ հող գտան, և նրան հաջողվեց այստեղ կազմակերպել հավատացյալ մուսուլմանների առաջին համայնքը՝ ումման: Հենվելով այդ ումմայի աջակցության վրա՝ Մուհամմեդը կարողացավ պարտության մատնել իր հակառակորդներին և 630 թ. տասը հազարանոց զորքի գլուխն անցած վերադառնալ իր հայրենի Մեքքա քաղաք: Դա համաշխարհային պատմական նշանակություն ունեցող հաղթանակ էր, որը հանգեցրեց համաշխարհային նոր կրոնի՝ իսլամի հաստատմանը:

Իսլամ բառացիորեն նշանակում է *հնազանդություն*: Նա պահանջում է բոլոր մուսուլմաններից հնազանդություն Ալլահին, իսլամի բոլոր դոգմաների անշեղ կատարում, ենթակայություն հոգևոր առաջնորդներին՝ իմամներին, աստվածաբանուլեմներին և այլն: Իսլամը դավանողները կոչվում են մուսուլմաններ: Հայ իրականության մեջ «իսլամի» փոխարեն օգտագործվում են նաև «մահմեդականություն», իսկ մուսուլմանի փոխարեն «մահմեդական» եզրերը՝ կապված նրա ստեղծողի՝ Մուհամմեդի անվան հետ: Երկու անվանումներն էլ հավասարապես կիրառելի են:

Իսլամը խարսխված է հինգ հենասյուների վրա:

Առաջին հենասյունը միաստվածության սկզբունքի հաստատումն է, որը ելակետային է իսլամի համակարգի մեջ: Դա իր արտացոլումն է գտել «Լա Ալլահ իլլա Ալլահ վա Մուհամմեդ ռասուլ Ալլահ»՝ «Չկա աստվածություն՝ բացի Ալլահից, իսկ Մուհամմեդը նրա առաքյալն է» բանաձևում: Դա հավատի հաստատումն է առ միաստվածություն՝ շահադա, որով վերջ էր տրվում բազմաստվածությանը, և հաստատվում Ալլահի՝ իբրև միակ Աստծո պաշտամունքը:

Երկրորդը աղոթքն է՝ սալաթ (հգն.՝ սալավաթ): Իսլամը սահմանում է օրական աղոթել հինգ անգամ՝ արտոնելով աղոթքը կատարել տանը, աշխատատեղում, բացօթյա և մասջիդում՝ մզկիթում:

Երրորդ հենասյունը սաումն է կամ ուրազան՝ ծոմը, որը պարտադիր է բոլոր մուսուլմանների համար, և որի ընթացքում նրանք պետք է ձեռնպահ մնան սնունդ և հեղուկ ընդունելուց, զվարճանքներից, ընթերցեն սրբազան գիրքը՝ Կորանը, աղոթեն, մտորեն Ալլահի և նրա ամենամեծը լինելու («Ալլահ աքբար») մասին և այլն:

Ծոմապահության համակարգում գլխավորը ռամադան ամսվա ծոմապահությունն է, որը տևում է մեկ ամիս:

Չորրորդը հաջն է՝ ուխտագնացությունը Մեքքա: Հաջը պարտադիր է այն մուսուլմանների համար, որոնց առողջությունը և ֆինանսական միջոցներն ընձեռում են այդ հնարավորությունը: Ի նշան հարգանքի՝ Մեքքա հաջ գնացողին սովորաբար կոչում են «Հաջի»:

Իսլամի հինգերորդ հենասյունը զաքաթն է: Դա յուրահատուկ բարեգործական հարկ է, որը գանձվում է հարուստների և ունևորների եկամուտներից ու գույքից և հատկացվում իսլամական ումմայի՝ համայնքի կարիքների բավարարման համար, աղքատներին և սակավ ունևորներին:

Մուսուլմանների սրբազան գիրքը Կորանն է, որն իր նշանակությամբ կարող է դասվել Ավեստայի, Թորայի և Աստվածաշնչի, Հին և Նոր Կտակարանների շարքին: Այն մուսուլմանների հավատի աղբյուրն է, որը նրանք համարում են ի վերուստ տրված, աստվածային հայտնություն՝ իրագործված նաբի Մուհամմեդի կողմից: Արաբները երբեք չեն ասում Կորան, այլ միայն «Ալ-Կորան ալ-քարիմ»[14]: Իսկ «Կորան» նշանակում է «այն, ինչը կարդում են, արտասանում են», այսինքն՝ «կարդացվելիքը»: Կորանում արձանագրված են հավատի, պաշտամունքի, իրավունքի, աշխարհի, արարչի, մարգարեների, հանդերձյալ կյանքի, մեղքերի պատժելիության, անհավատների և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ իսլամի հիմնարար կանոնները և պահանջները: Նրանում մեծ տեղ է հատկացված մուսուլմանների անձնական կյանքի, կենցաղային հարցերի կարգավորման խնդիրներին՝ ամուսնությանը, ապահարզանին, ժառանգությանը, գույքի տնօրինմանը և բաժանմանը և այլն: Այդ պատճառով է նաև, որ իսլամը համարվում է ոչ միայն կրոն, այլև կենսաձև: Դրանում է իսլամի կենսունակության աղբյուրներից մեկը:

Կորանը բաղկացած է 114 սուրահներից՝ գլուխներից, որոնք բաժանվում են այաթների՝ ֆրազների, խոսքերի կամ արտահայտությունների: Սուրահների դասավորությունը կատարվել է ըստ նրանց ծավալների՝ ընդարձակներից դեպի փոքրերը, բացառությամբ առաջին սուրահի, որն ամենափոքրն է և կոչվում է «Ֆաթիհ», այսինքն՝ «Բացող» կամ «Սկիզբ»: Նրանում ուղղակի նշված է, որ այն ուղարկված է Ալլահի կողմից:

Մուհամմեդի կենդանության օրոք Կորանը գրավոր տեքստ չի ունեցել, և այն դեռևս կանոնակարգված չէր: Այդ հարցը լուծվեց նրա մահից հետո, երբ սկսեցին գրի առնել մարգարեի հայտնությունները: Մուհամմեդի հայտնություններն ամբողջապես հավաքվեցին, և Կորանը գրավոր գրքի տեսք ստացավ երրորդ բարեպաշտ խալիֆա Օսմանի օրոք՝ 651 թ.: Դա համարվում է Մուհամմեդ մարգարեի միակ լիակատար, իսկական և կանոնակարգված տեքստը, որն, ըստ էության, դրանից հետո փոփոխության չի ենթարկվել և այսօր էլ օգտագործվում է որպես այդպիսին:

[14] «Քարիմ» բառն արաբերեն ունի մի քանի նշանակություն՝ «ողորմած», «մեծահոգի», «առատաձեռն» և այլն: Տվյալ պարագայում այն կարելի է օգտագործել «ողորմած» իմաստով:

Շապուհ Բ և Շապուհ Գ արքաները, բարձրաքանդակ Թաղ-և Բոստանից

Շապուհ Բ արքայի մետաղադրամը

Խոսրով Բ արքայի մետաղադրամը

Շահ Իսմայիլ Ա



Շահ Աբբաս Ա

Չալդիրանի 1514 թ. ճակատամարտը, XVI դարի մանրանկար

Սպահանի համայնապատկերը, 1725 թ.



Քարավանատուն

Սպահանի Շահ մզկիթը

Հուստինիանոս Ա կայսրը իր շքախմբով, Ռավեննայի Սան Վիտալե եկեղեցու խճանկար

Բարսեղ (Վասիլ) Ա կայսրը

Բարսեղ (Վասիլ) Բ կայսրը

Խաչակիրների՝ Կոստանդնուպոլսի 1204 թ. պաշարումը, XV դարի մանրանկար



Կոստանդնուպոլսի Ս. Սոֆիայի տաճարի որմնանկարներից

Էջ Ղուրանի ամենավաղ թվագրվող VII դարի ձեռագրից

Աբբասյան Հարուն ալ-Ռաշիդ խալիֆայի մետաղադրամը

Աբբասյան Ալ-Կահիր խալիֆայի մետաղադրամը



Բաղդադի գրավումը մոնղոլների կողմից 1258 թ., XIV դարի մանրանկար

Մեքքա, XVII դար

Բագրատ Դ արքայի մետաղադրամը

Թամար թագուհու մետաղադրամը

Վրաց Գիորգի Գ արքան և Թամար թագուհին, որմնանկար Վարձիայից

Վրաց Հերակլ Բ արքան



Էջ Շոթա Ռուսթավելու «Վագրենավոր»-ի 1712 թ-ի հրատարակությունից



Մցխեթա: Սվետիցխովելի տաճարը

Մեհմեդ Բ Ֆաթիհ սուլթանը

1389 թ. Կոսովոյի ճակատամարտը

Կոստանդնուպոլսի գրավումը 1453 թ., XV դարի մանրանկար

Մոհաչի 1526 թ. ճակատամարտը, XVI դարի մանրանկար

1683 թ. Վիեննայի ճակատամարտը



Աղվանական այբուբեն Մատենադարանի թիվ 7117 ձեռագրից



1500 թ. ձակատամարտը շահ Իսմայիլի և շիրվանշահ Ֆարրուխ Յասարի միջև
Գյուլիստանի մոտ, XVI դարի մանրանկար



Դերբենդ, 1690 թ.



Շամախի, 1734 թ.



Շիրվանշահերի պալատը Բաքվում

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՀԻՄՆՈՒՄԸ

1. ՄՈՒՀԱՄՄԵԴԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Արաբական միասնական կենտրոնացված պետության ստեղծումը կապված է Մուհամմեդ մարգարեի անվան հետ: Դրա հիմքում ընկած են մարգարեի տեսակետները, իսլամի սկզբունքները և Կորանի հիմնադրույթները: Նրա գործունեության և արաբական հասարակության իսլամացման շնորհիվ արաբական համայնքը՝ ումման, աստիճանաբար վերածվեց միաստվածության վրա խարսխված իսլամական պետության: Դա հեշտորեն չիրականացվեց, քանի որ հանդիպեց որոշ ցեղերի և ցեղապետերի դիմադրությանը: Մարգարեն նրանց իր կողմը գրավելիս ցուցաբերեց քաղաքական գործչին վայել դիվանագիտական մեծ հմտություն:

Մուհամմեդի հիմնած պետությունը վերցեղային համայնք–պետություն էր, որի շրջանակներում ապահովվում էին ցեղերի գոյությունը և նրանց որոշակի դերն ու կշիռը պետության ներսում, որի հետ հետագայում ևս միշտ հաշվի են նստել արաբական պետության կառավարողները: Մուհամմեդը դրեց պետական բյուրոկրատական վարչակազմի հիմքը, մտցրեց հարկերի և հարկահավաքի ինստիտուտը և այլն: Նա հիմնադրեց մի պետություն, որն ընդունված է համարել թեոկրատիկ կամ աստվածապետական: Մուհամմեդն իր ձեռքում էր կենտրոնացրել և մարմնավորում էր պետական, կրոնական, քաղաքական, ռազմական և դատական ողջ իշխանությունը՝ խարսխված իսլամի սկզբունքների վրա: Պետական կառավարման այդ ձևը օրինակելի դարձավ և փոխանցվեց մարգարեի հաջորդներին՝ խալիֆաներին:

Մուհամմեդ մարգարեն վախճանվեց 632 թ. Մադինայում և թաղված է այդ քաղաքի իր անունը կրող «Մասջիդ ալ–նաբի»՝ «Մարգարեի մզկիթում»:

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ: ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ԲԱՐԵՊԱՇՏ ԽԱԼԻՖԱՆԵՐԸ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ (632–661 ԹԹ.)

Մուհամմեդի մահը ցնցեց ողջ Արաբիան: Ո՞վ պետք է փոխարիներ նրան: Խնդիրը բարդանում էր նրանով, որ իշխանության փոխանցման հարցում մարգարեն չէր թողել որևէ գրավոր կամ բանավոր կարծիք, ուստի և նրա հետնորդներն իրենք պետք է լուծեին այդ բարդ կնճիռը: Գահի հավակնորդների միջև ծավալված սուր պայքարում հաղթող դուրս եկավ Աբու Բաքրը, որը Մուհամմեդի ամենահավատարիմ զինակիցներից մեկն էր: Նրա դուստրը՝ Այշան, Մուհամմեդի վերջին՝ չորրորդ

կինն էր[15]: Արաբական ցեղային ավագանին՝ ցեղապետերը, շեյխերը և սեյիդները, նախապատվությունը տվեցին Աբու Բաքրին և նրան ընտրեցին խալիֆա:

Աբու Բաքրից սկսած՝ Արաբիայում մտցվեց կառավարման խալիֆայի ինստիտուտը, իսկ պետությունը կոչվեց խալիֆայություն: Խալիֆա բառացիորեն նշանակում է փոխարինող, փոխանորդ: Տվյալ դեպքում նրա քաղաքական բովանդակությունը նշանակում էր Աստծո առաքյալի փոխանորդ: Արաբերենում նա հենց այդպես էլ հորջորջվում էր՝ «Խալիֆա ռասուլ իլլահ»՝ «Աստծո առաքյալի փոխանորդ»:

Աբու Բաքրը դարձավ առաջին խալիֆան և կառավարեց ընդամենը երկու տարի՝ 632–634 թթ.: Նա և նրան հաջորդած երեք խալիֆաները՝ Օմարը (634–644 թթ.), Օսմանը (644–656 թթ.) և Ալին (656–661 թթ.), համարվում են բարեպաշտ, արդարամիտ կամ ուղղափառ խալիֆաներ՝ «ալ-խուլաֆա ալ-ռաշիդուն»:

Մուհամմեդ մարգարեի կողմից հաստատված կարգի համաձայն՝ խալիֆաները պետության հոգևոր և աշխարհիկ ղեկավարներն էին: Նրանց ձեռքում էր կենտրոնացված ամբողջ իշխանությունը, նրանց էր վերապահված իսլամի օրենքների կատարմանը հետևելու և սրբազան պատերազմ՝ ջիհադ հայտարարելու իրավունքը, ղեկավարելու զինված ուժերը և կրոնական ծեսերը, հետևելու արդարադատությանը, ինչը նշանակում էր աստվածապետությանը բնորոշ բոլոր գործառույթների պահպանում և իրագործում:

Աբու Բաքրը բախվեց շատ վտանգավոր խնդրի հետ: Շատ ցեղեր, առնելով Մուհամմեդի մահվան լուրը, հրաժարվեցին իսլամից և վերադարձան հեթանոսությանը: Մի շարք ցեղեր էլ իրենց հավատարմությունն իսլամին պայմանավորեցին հարկերը վերացնելու պահանջի հետ: Աբու Բաքրը հստակ պատկերացնում էր ստեղծված վտանգի կործանարար հետևանքները դեռևս չամրապնդված նոր կրոնի և նրա դրույթների վրա բարձրացած պետության համար: Նա գործեց շատ արագ և վճռականորեն: Նա կարողացավ իր շուրջը համախմբել իրեն հավատարիմ կրոնական և զինվորական գործիչներին և ճնշել ըմբոստ ցեղախմբերի, առաջին հերթին՝ բեդվինների ընդվզումները: Իսկ բազմաթիվ այլ ցեղապետերի հաջողվեց համոզել կրկին վերադառնալ իսլամի կանաչ դրոշների ներքո:

Աբու Բաքրի կառավարության օրոք սկսվեց իսլամի հաղթարշավը, որը վերածվեց նվաճողական հաղթական պատերազմների մի անվերջ շարանի: Նրանց հաղթանակներին նպաստում էր նաև այն հանգամանքը, որ Արաբիայի բարձրացման տարիները համընկան նրա հիմնական ախոյանների՝ Բյուզանդական կայսրության և Իրանի թուլացման հետ: Այդ երկրներում տիրում էր ներքաղաքական անկայունություն, որին նպաստում էր նրանց ենթակա ժողովուրդների դժգոհությունը՝ կապված հարկային քաղաքականության և կրոնական հալածանքների հետ: Այդ պատճառով էլ նրանք արաբներին շատ հաճախ ընկալում էին որպես ազատարարների ու ոչ միայն նրանց չէին դիմադրում, այլև երբեմն իրենց բնակավայրերը՝ քաղաքները, գյուղերը և ամրոցներն առանց մարտի հանձնում էին արաբական զորքերին:

[15] Երբ Այշան ամուսնացավ, նա ընդամենը 9 տարեկան էր և ամուսնուն ներկայացավ իր խաղալիքներով հանդերձ:

Արաբական արշավանքները հարևան Իրան սկսվեցին դեռևս Աբու Բաքրի խալիֆայության տարիներին՝ 633 թ.: Սակայն Իրանի նվաճումն իրականացվեց Օմար խալիֆայի (634–644 թթ.) կողմից: Արաբներն իրենց առաջին կարևոր հաղթանակն Իրանի դեմ տարան 636 թ. Կադիսիայի մոտ, իսկ երկրորդ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 642 թ. Նեհավենդի մոտ, որից հետո Իրանը համարյա ամբողջությամբ անցավ Արաբական խալիֆայության տիրապետության ներքո: Շարունակելով իրենց հաղթանակները՝ արաբական զորքերը մոտեցան Հնդկաստանի սահմաններին, իսկ Կենտրոնական Ասիայում դուրս եկան Ամու Դարյայի ափերը:

634 թ. սկսվեց Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող Սիրիայի և Պաղեստինի նվաճումը: 635 թ. սեպտեմբերին ընկավ Դամասկոսը: Սակայն արաբական և բյուզանդական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Յարմուկ գետի ափերին 636 թ., որն ավարտվեց բյուզանդական զորքերի պարտությամբ: Սիրիան, Լիբանանը և Պաղեստինն անցան արաբների տիրապետության տակ: 638 թ. արաբները գրավեցին նաև Երուսաղեմը և ներխուժեցին Եգիպտոս: Շարունակելով իրենց հաղթարշավը՝ նրանք 642 թ. արդեն Իֆրիկիայում՝ Թունիսում էին՝ հող նախապատրաստելով Աֆրիկայում հետագա նվաճումների համար: Ջինվոր դարձած արաբ բեդվինը 649 թ. հայտնվեց նաև Կիպրոսում: Այդ առաջին նվաճումների արդյունքում արաբները դուրս եկան Արաբիայից, և խալիֆայությունը վերածվեց կայսրության:

Այդ ընթացքում զուգահեռաբար ընթանում էր խալիֆայության ամրապնդման և պետական ապարատի ձևավորման գործընթացը: Օմարի կառավարման տասը տարիների ընթացքում խալիֆայությունը որպես պետություն առաջադիմեց իրավական-կառուցվածքային առումով: Իրավական ուժ ստացան աստվածապետության վարչաիրավական հաստատությունները, այդ թվում և հարկային համակարգը: Պետության ամրապնդումը և կառավարման համակարգի կատարելագործումը շարունակվեցին նաև Օսման խալիֆայի կառավարության շրջանում (644–656 թթ.): Հենց այդ ժամանակ էր, որ, ինչպես նշվեց, կանոնակարգվեց և վերջնական տեսք ստացավ Կորանը: Նրա մյուս կարևոր նորամուծությունը եղավ կառավարման համակարգում մտցված փոփոխությունը: Խալիֆա Օսմանը ստեղծեց և առաջին անգամ կիրառեց խալիֆայի տեղապահների կամ փոխարքա-կուսակալների ինստիտուտը: Մարգարեի մերձավորների և արաբական ցեղային ավագանու շարքերից տեղապահ-կուսակալներ նշանակվեցին բոլոր նվաճված երկրներում: Դրանով նա ցանկանում էր ստեղծել իր համար հուսալի հենարան և ամրապնդել խալիֆայության պետական կենտրոնաձիգ համակարգը: Այդ կուսակալները, սակայն, միշտ չէ, որ տեղերում հաշվի էին առնում Մադինայում նստած խալիֆայի հրամանները և գործում էին անկախ: Նրանք դժգոհ էին կառավարման բոլոր լծակներն իր ձեռքում կենտրոնացնելու՝ խալիֆա Օսման իբն ալ-Աֆֆանի քաղաքականությունից: 650-ական թվականներին ներքին հակասությունները վերածվեցին իշխանության համար բացահայտ պայքարի, որի ընթացքում խալիֆա Օսմանը սպանվեց 656 թ. Մադինայում՝ իր տանը:

Խալիֆայության պետական ու վարչական կառույցների ձևավորման հետ միասին հստակություն մտցվեց նաև ոչ մուսուլմանների նկատմամբ քաղաքականության հարցում: Բոլոր ոչ մուսուլմանները համարվում էին անհավատներ և նրանք ընդհանուր հարկի հետ պարտավոր էին վճարել նաև գլխահարկ՝ ջիզյա: Սակայն իսլամը նրանց մեջ տարբերակում էր ժողովուրդների մի խումբ, որը նրանք անվանում էին «Ահլ ալ-քիթաբ», այսինքն՝ «Գրքի ժողովուրդ»: Դրա մեջ նրանք մտցնում էին քրիստոնյաներին և հուդայականներին, որոնք ունեին իրենց սրբազան գրքերը՝ Աստվածաշունչը և Թորան: Մուսուլման աստվածաբանները՝ ուլեմները, գտնում էին, որ Սուրբ Գիրք ունեցողները զբաղեցնում են ինչ-որ միջին տեղ իսկապես հավատացյալների՝ մուսուլմանների և անհավատների միջև: «Գրքի ժողովուրդներն» իրավունք ունեին ապրելու իսլամական միջավայրում առանց կրոնափոխության՝ իսլամ ընդունելու պարտադրանքի: «Գրքի ժողովուրդները», առաջին հերթին քրիստոնյաները, գտնվում էին պետության պաշտպանության ներքո և համարվում էին նրա զիմմին՝ ենթահովանավորյալները: Շնորհիվ դրա հայերը, ասորիները, ղպտիները, քրիստոնյա արաբները և հրեաները կարողացան պահպանել իրենց հավատը և դավանել իրենց նախընտրած կրոնը:

Օսման խալիֆայի սպանությունից հետո՝ 656 թ., խալիֆա ընտրվեց Ալի իբն Աբու Տալիբը, որը դարձավ չորրորդ և վերջին բարեպաշտ խալիֆան: Նա Մուհամմեդ մարգարեի հորեղբորորդին էր և ամուսնացած էր մարգարեի դստեր՝ Ֆաթիմայի հետ: Ալի իբն Աբու Տալիբը խալիֆայության ղեկավարությունը ստանձնեց շատ ծանր ժամանակներում: Խալիֆա Օսմանի սպանությունից հետո երկիրը չէր հանդարտվել և, փաստորեն, ընկղմվել էր քաղաքացիական պատերազմի մեջ: Ալիի դեմ բացահայտ կերպով հանդես եկավ սպանված Օսման խալիֆայի հորեղբորորդին՝ Սիրիայի կառավարիչ Մուավիան, որը Կուրայշ ցեղախմբի Օմայա ազդեցիկ ցեղից էր: Նրան միացավ մարգարեի կինը՝ Այշան, և նրանց շուրջը համախմբվեցին այլ երևելի ազդեցիկ հոգևոր և քաղաքական առաջնորդներ: Երկարատև պատերազմական գործողությունների ընթացքում, որն ընթանում էր փոխադարձ հաջողություններով, ի վերջո Ալին պարտություն կրեց, իսկ 661 թ. սպանվեց իր նախկին կողմնակիցներից մեկի ձեռքով Կուֆայի մզկիթը մտնելու պահին:

Ալի-Մուավիա հակամարտության ժամանակ տեղի ունեցավ Արաբիայի ոչ միայն ռազմաքաղաքական առճակատում, այլև կրոնական պառակտում: Այդ պահից սկսված՝ իսլամը բաժանվեց սուննիների և ալիականների կամ շիաների:

Սուննիզմն առաջացել է արաբական *սունա* բառից և նշանակում է *ուղի, օրինակ, նմուշ*: Բովանդակային առումով դա նշանակում է հավատ առ Մուհամմեդի արարքները, արտահայտությունները և նրա կողմից ընդունված որոշումները, որոնք արձանագրված են հադիսներում և Մուհամմեդի գործունեությանը նվիրված պատումներում: Այն մուսուլմանները, որոնք ընդունում են սունան և հադիսները, համարվում են սուննիներ՝ ուղղափառ մուսուլմաններ, Մուհամմեդ մարգարեի ուսմունքի և թողած ավանդների անաղարտ հետևորդներ: Սուննիզմը պահանջում է ընդունել Մուհամմեդին հաջորդած առաջին չորս բարեպաշտ խալիֆաների օրինական լինելը, ճանաչել կանոնակարգված հադիսների հավաստիությունը և հետևել դրանց դրույթներին:

Սուննիները շիաներին համարում են Մուհամմեդ մարգարեի ուսմունքի խեղաթյուրողներ:

Շիիզմի առաջացումը կապված է 661 թ. սպանված խալիֆա Ալիի անվան հետ: Շիիզմն առաջացել է արաբական *շաա* բառից, որը նշանակում է *կուսակից, կողմնակից* կամ *միացում որևէ մեկին*: Շիաներն Ալիին համարում են Մուհամմեդ մարգարեի միակ օրինական ժառանգորդը և գտնում, որ իմամներ՝ իսլամական ումմայի քաղաքական և կրոնական բարձրագույն ղեկավարներ, պետք է լինեն միայն նրա ուղղակի ժառանգորդները, կողմնակիցները: Նրանք իմամների, որոնք սերում են Ալիից կամ ալիական են, ժառանգականության սկզբունքի կողմնակից են և ճանաչում են միայն առաջին 12 իմամներին, որոնցից վերջինը համարվում է «թաքնված իմամ», որը մի օր հայտնվելու է որպես մահդի՝ փրկիչ, և իշխանությունը վերցնելու է իր ձեռքը:

Շիաները Կորանի 114 սուրահներին ավելացրել են ևս մի սուրահ, որը, սակայն չի ընդունվում սուննիների կողմից: Իսկ շիաները չեն ընդունում սուննան՝ հադիսներով հանդերձ: Նրանք հադիսների փոխարեն ունեն իրենց ավանդույթները և տեղեկությունները՝ խաբարները, ինչը, բնականաբար, մերժվում է սուննիների կողմից: Տարբեր են նաև նրանց գլխավոր սրբակենտրոնները: Շիաների գլխավոր սրբավայրերն են Նաջաֆը և Քարբալան, որոնք երկուսն էլ գտնվում են Իրաքում:

Հարաբերությունները սուննիների և շիաների միջև միշտ չէ, որ հաշտ են լինում: Պատմությունը գրանցել է սուննիների և շիաների արյունալի բախումների բազմաթիվ դեպքեր:

3. ՀԱՅԱՍՏԱՆՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՈՒՄ: 652 Թ. ԱՐԱԲԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

VII դարի 30-40-ական թվականներին արաբների կողմից իրականացված նվաճումների արդյունքում արաբական զորքերն ընդհուպ մոտեցան Հայաստանին, որը համարվում է Կովկասի հարավային դարպասները:

Այդ ժամանակ Հայաստանն ուներ յուրատեսակ կարգավիճակ: 628 թ. Հայոց սպարապետ նշանակված Թեոդորոս Ռշտունին 634 թ. դարձավ նաև Հայաստանի մարզպան: Նա դարձել էր Հայաստանի արևելյան (պարսկական) և արևմտյան (բյուզանդական) երկու հատվածների ղեկավար, որով, փաստորեն, իրականացվել էր Հայաստանի միավորումը: 639 թ. Հայաստանն արդեն իշխանապետություն էր: Հայաստանն արաբական արշավանքները դիմավորեց որպես մի իշխանապետություն, որի գլուխ կանգնած էր հմուտ քաղաքական և ռազմական գործիչ, դիվանագետ, լայնախոհ և հեռատես Թեոդորոս Ռշտունին: Իշխանապետության մայրաքաղաքը Դվինն էր:

Արաբական զորքերը Հայաստան մտան 640 թ. Աղձնիքից: Արաբական 18 հազարանոց զորքը, որը գլխավորում էր Իյադ իբն Ղանմին, մտնելով Տարոն, Տիրան Մամիկոնյանից պահանջում է հարկ վճարել: Վերջինս մերժում է այդ պահանջը և իր

8 հազարանոց զորքով Գրգուռ լեռան ստորոտում հարձակվում է արաբական զորքերի վրա, որոնք, պարտություն կրելով, փախուստի են դիմում: Սակայն արաբները չեն հրաժարվում իրենց ռազմաքաղաքական նպատակներից և 640 թ., ինչպես վկայում է հայ պատմիչ Սեբեոսը, գրավելով Տարոնը, Բզնունյաց երկիրը և Աղձնիքը՝ Բերկրիի ձորով և Կոգովիտով մտնում են Այրարատ: Նրանք գրավում են Դվինը և մեծ ավարով հեռանում Հայաստանից: Արաբական երկրորդ արշավանքը Հայաստան տեղի է ունեցել հիջրայի քսանմեկերորդ տարում, որը համընկնում է մեր թվարկության 642–643 թթ.: Դա կապված էր խալիֆա Օմարի՝ Մուղան, Տփղիս և Ալանաց լեռներ արշավանքի հետ, որի ընթացքում արաբական զորքերը գրավում են Գողթն գավառը, Նախիջևանը և հարակից տարածքները: Արաբական զորքերը հետդարձի ճանապարհին գերիներով անցնում են Երասխը, սակայն մի զորախումբ շարունակում է մնալ գրաված վայրերում՝ անհանգստություն պատճառելով հայերին: Ստեղծված պայմաններում Թեոդորոս Ռշտունին հրամայում է հայոց զորքին անցնել հարձակման, որոնք փայլուն հաղթանակ են տանում: 650 թ. տեղի ունեցավ արաբական զորքերի երրորդ ներխուժումը Հայաստան: Նրանք ներխուժեցին Վասպուրական, Կոգովիտ, Սյունիք և հասան Աղվանք: Սակայն վրա են հասնում հայոց զորքերը Թեոդորոս Ռշտունու հրամանատարությամբ և պարտության մատնում արաբներին: Վերջիններս հարկադրված նահանջում են:

Արաբական երեք արշավանքները ստեղծեցին նոր իրադրություն և Հայաստանին, նրա ղեկավարությանը կանգնեցրին Արաբական խալիֆայության հետ հետագա փոխհարաբերությունները ճշգրտելու անհրաժեշտության առջև՝ ելնելով Հայաստանի անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունից: Ստեղծված պայմաններում Թեոդորոս Ռշտունին ընտրեց նոր ռազմավարություն:

Թեոդորոս Ռշտունին խզեց հարաբերությունները Բյուզանդական կայսրության հետ, որը դադարել էր Հայաստանի համար հուսալի դաշնակից լինելուց և 650–651 թթ. ուղիներ էր փնտրում արաբների հետ հաշտության եզրեր գտնելու համար: Հայոց իշխանը բանակցություններ սկսեց Ասորիքի կուսակալ Մուավիայի հետ, որը մի քանի տարի անց նստեց խալիֆայի գահին: Հարաբերությունների կարգավորումը և հստակեցումը Հայաստանի հետ համապատասխանում էին նաև Արաբական խալիֆայության շահերին:

Հարկ է նկատի առնել մի կարևոր հանգամանք ևս: Չնայած արաբական երեք ներխուժումներին Հայաստան, այդուհանդերձ Հայաստանը չէր համարվում խալիֆայության կողմից նվաճված երկիր: Արաբական զորքերը յուրաքանչյուր ներխուժումից հետո չէին ամրապնդվում Հայաստանում, այլ կրկին վերադառնում էին իրենց երկիրը:

Հարաբերությունները կարգավորելու երկուստեք ձգտումը հանգեցրեց Արաբա–հայկական պայմանագրի կնքմանը, որը տեղի ունեցավ 652 թ.: Դա երկու երկրների միջև կնքված առաջին դիվանագիտական պաշտոնական փաստաթուղթ էր, որը սահմանում էր Հայաստանի քաղաքական կարգավիճակը և երկու կողմերի հարաբերությունների բնույթը:

Սեբեոսի կողմից բերված տեքստում պայմանագիրը բնութագրված է որպես հաշտության պայմանագիր՝ «Այս լիցի ուխտ հաշտութեան իմոյ՝ ընդ իս և ընդ ձեզ»: Հայաստանը ճանաչում էր Արաբական խալիֆայության գերիշխանությունը, որը երաշխավորում էր Հայաստանի իշխանապետության քաղաքական կարգավիճակը և ընդունում նրա ներքին ինքնուրույնությունը: Իշխանապետությունը երեք տարի ժամանակով ազատվում էր հարկ վճարելուց, որից հետո վճարելու էր այնքան, որքան կամենար:

Պայմանագրի կարևոր մասերից էին հայկական զինական ուժին և երկու երկրների միջև ռազմական համագործակցություն հաստատելու վերաբերյալ հատվածները: Հայոց իշխանապետությունը կարող էր ունենալ իր սեփական ռազմական ուժերը՝ 15 հազարանոց այրուձի, որը մնում էր հայերի հրամանատարության տակ: Արաբական կողմը պարտավորվում էր հայոց հեծելագունդը չօգտագործել Ասորիքում, բայց հայոց այրուձին պարտավոր էր խալիֆայի հրամանով մասնակցել նրա պատերազմական գործողություններին՝ այնտեղ, ուր և երբ կպահանջվեր:

Արաբական կողմը պարտավորվում էր հայկական բերդերում չտեղակայել արաբական ռազմական ուժեր: Եվ, վերջապես, պայմանագրի կարևոր կետերից մեկն էլ վերաբերում էր փոխադարձ օգնությանը, որտեղ ուղղակի ասված էր, որ եթե Հայաստանը ենթարկվի ռազմական հարձակման, այդ թվում և Բյուզանդիայի կողմից («Եթե գայ Հոռոմ ի վերայ ձեր»), ապա հայերի պահանջով խալիֆայությունը պարտավորվում էր հայերին որպես օգնություն այնքան զորք ուղարկել, որքան նրանք կկամենան:

Խալիֆայի անունից պայմանագիրը ստորագրած Մուավիան երդվում էր «Մեծն ալլահով, որ չի ստում», այսինքն՝ ուխտադրուժ չի լինի:

Շնորհիվ այդ պայմանագրի Հայաստանը ստացավ ներքին լայն ինքնավարությամբ օժտված կիսանկախ պետության կարգավիճակ:

652 թ. պայմանագիրը հայ քաղաքական մտքի, կամքի, հեռատեսության և դիվանագիտական արվեստի խոշոր նվաճումն էր, Հայոց սպարապետ և Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու պետական գործչի պատմական նվաճումը:

Հարկ է նշել, որ երկու կողմերն էլ հավատարիմ են եղել պայմանագրի տառին և ոգուն: Երբ Բյուզանդական կայսր Կոստանդ Բ–ն, դժգոհ Հայաստանի նոր քաղաքական ուղուց և ցանկանալով ստիպել հայերին հրաժարվել 652 թ. պայմանագրից, այդ նույն թվականին մեծաքանակ զորքով արշավեց Հայաստանի վրա, Թեոդորոս Ռշտունին որոշեց դիմադրել բյուզանդական զորքին, որը հավանություն գտավ նաև Սյունիքի, Վիրքի և Աղվանքի կողմից: Հայոց սպարապետը և իշխանը, համաձայն 652 թ. պայմանագրի դրույթների, օգնության համար դիմեց Մուավիային, վերջինս բավարարեց նրա խնդրանքը և նրան որպես օգնություն 7 հազարանոց մի բանակ ուղարկեց, որը Թեոդորոս Ռշտունու հրամանով բանակեց Հայաստանի Բզնունիք և Աղիովիտ գավառներում: 653 թ. գարնանը հայ–արաբական միացյալ բանակը սպարապետ Թեոդորոս Ռշտունու հրամանատարությամբ ջախջախեց բյուզանդական բանակը և նրան դուրս շպրտեց Հայաստանի տարածքներից:

Հաղթանակից հետո Ռշտունին մեկնեց Դամասկոս և արժանացավ Մուավիայի շատ ջերմ ընդունելությանը: Նա Հայոց իշխանին նշանակեց նաև Վիրքի և Աղվանքի իշխան:

Հայաստանն իր հերթին, հավատարիմ իր պարտավորություններին, մեկ անգամ չէ, որ ռազմական օգնություն է տրամադրել խալիֆայությանը, մասնակցել է արաբների ռազմական գործողություններին: 737 թ., երբ արաբները արշավանք սկսեցին խազարների դեմ, որոնք սպառնում էին Արմինիայի մեջ մտնող Հյուսիսային Կովկասի որոշ շրջանների, ինչպես նաև Վիրքին ու Աղվանքին, 135 հազարանոց արաբական զորքին միացավ 15 հազարանոց հայկական այրուձին, որոնք համատեղ փայլուն հաղթանակ տարան խազարների դեմ: Արաբա-հայկական միացյալ բանակի մի մասն Ալանաց դռներով մտավ Հյուսիսային Կովկաս, իսկ մյուս մասն էլ Դարբանդի կողմից առաջ շարժվեց և հարձակվեց խազարների վրա: Վերջիններս նահանջեցին մինչև Վոլգա գետի ափերը:

Հետագայում՝ 680-688 թթ., եղավ մի պահ, երբ Հայաստանը ձեռք բերեց լրիվ անկախություն:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՕՄԱՅԱՆ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՕՄԱՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (661-750 ԹԹ.)

Ալիի սպանությունից հետո Արաբական խալիֆայությունում հաստատվեց Օմայան դինաստիան, և նրա հիմնադիր խալիֆան եղավ Մուավիա Ա-ն: Նրա իշխանության գլուխ գալով տեղի ունեցան սկզբունքային փոփոխություններ խալիֆայության կառավարման համակարգում: Վերջ տրվեց խալիֆային ավագանու կողմից ընտրելու կարգին, և հաստատվեց գահակալության դինաստիական-ժառանգական սկզբունքը: Մուավիան իր որդուն՝ Յազիդին, նշանակեց ժառանգորդ, որից հետո կառավարման դինաստիական-ժառանգական մոդելը դարձավ արաբական պետությունների կառավարման միակ ձևը: Խալիֆայության մայրաքաղաքը Կուֆայից՝ Իրաքից, տեղափոխվեց Դամասկոս, Սիրիա:

Մուավիայի հաստատած դինաստիական մոդելի դեմ հանդես եկան շիաները, որոնք կարծում էին, որ իշխանությունը խալիֆայությունում օրինականորեն պատկանում է իրենց՝ Ալիի հետևորդներին: Դժգոհ էին խարիջիները, որոնք տարված էին հավասարության գաղափարներով: Օմայանների ընդդիմության երրորդ կենտրոնը դարձավ Մեքքայի և Մադինայի արիստոկրատիան, որը կարծում էր, որ խալիֆայության և նրա կառավարման հարցում ամենամեծ իրավունքը պատկանում է նրանց:

Մուավիային շատ մեծ դժվարությամբ հաջողվեց հնազանդեցնել ընդդիմությանը: Նրա զորքերը պարտության մատնեցին շիաներին, այնուհետև նա կարողացավ հարաբերությունները մեծ խոստումների գնով կարգավորել նաև մեքքայական արիստոկրատիայի հետ:

Օմայանների ժամանակ տեղի ունեցան խալիֆայի կրոնական և աշխարհիկ կառավարման գործառույթների ճշգրտում և կոնկրետացում: Ճշգրտվեց, որ խալիֆա, այսինքն՝ Մուհամմեդի փոխանորդ լինելը չի նշանակում առաքյալի՝ ռասուլի փոխանորդ լինել, այլ լոկ պետության ղեկավարի փոխանորդ: Հաստատվեց, որ խալիֆա կարող է լինել միայն Կուրայշ ցեղից, որին պատկանում էր Մուհամմեդը, և միայն տղամարդը: Շեշտվեց խալիֆայի «էմիր ալ-մու՝մինին», այսինքն՝ հավատացյալների էմիրը, վեհապետը լինելու հանգամանքը: Նրա կարևոր գործառույթներից էր համարվում նաև արդարադատության իրականացումը, մեղավորներին և հանցագործներին պատժելը: Հաստատվեց, որ միայն խալիֆան կարող է կրել Մուհամմեդի թիկնոցը՝ բուրդահը, նա է Մուհամմեդի մասունքների՝ իշխանության խորհրդանիշ մականի, կնիքի, կոշիկի, ատամների և մազերի խնամակալ-պահպանիչը: Օմայան-

ները արաբերենը դարձրին գործավարության լեզու, շրջանառության մեջ դրեցին միասնական դրամ, կարգավորեցին հարկային-ֆինանսական համակարգը և այլն: Օմայան խալիֆայությունն ունեցավ 14 խալիֆա, որոնցից ամենաականավորները դինաստիայի հիմնադիր Մուավիա Ա-ից հետո եղան Աբդ ալ-Մալիքը (685-705 թթ.) և Վալիդ Ա-ը (705-715 թթ.): Հենց նրանց կառավարման տարիները եղան Օմայան խալիֆայության ծաղկման և հզորության տարիները:

Օմայանների գահակալության տարիներին վերսկսվեցին արաբների ռազմական արշավանքները և նոր երկրների նվաճումն ու իսլամացումը:

Արաբները մեծ հաջողության հասան Աֆրիկայում: Մեկը մյուսի հետևից նվաճելով Հյուսիսային Աֆրիկայի տարածքները՝ նրանք 683 թ. հասան Մավրիտանիա և դուրս եկան Ատլանտյան օվկիանոսի ափերը: Արաբական զորահրամանատար Օկբան Տանժերի մոտ նժույգի վրա նստած փորձում էր մտնել օվկիանոս, սակայն նրա նժույգն ալիքների առջև վրնջալով ընկրկում է: Օկբան, սուրը հանելով պատյանից, բացականչում է. «Թող Ալլահը վկա լինի, որ ավելի հեռու գնալ չի լինի»: Նա այն կարծիքին էր, որ դրանից հետո այլևս ցամաք չկար, որ նա նվաճեր: VIII դարում ավարտվեց Հյուսիսային Աֆրիկայի նվաճումը, որն արաբներն անվանեցին «Մաղրիբ»՝ Արևմուտք:

Դա նրանց հնարավորություն տվեց ներխուժելու Եվրոպա և սկսելու Իսպանիայի նվաճումը: Տանելով մի շարք հաղթանակներ՝ նրանք 718 թ. ավարտեցին Իսպանիայի նվաճումը, որը նրանք կոչեցին «Անդալուս»: Արաբները, շարունակելով խորանալ Եվրոպայում, ներխուժեցին Ֆրանկների թագավորության սահմանները՝ նպատակ ունենալով նվաճելու Ֆրանսիան: Սակայն 732 թ. հոկտեմբերի 4-ին Պուատիեի մոտ տեղի ունեցած ճակատամարտում արաբները պարտվեցին: Դրանով կասեցվեց արաբների հետագա առաջխաղացումը Եվրոպայում, և 759 թ. նրանք հեռացան Ֆրանսիայի տարածքներից:

Արաբները VII-VIII դարերում մի քանի փորձ կատարեցին գրավելու Կոստանդնուպոլիսը և վերջ տալու Բյուզանդական կայսրությանը, բայց որևէ նշանակալի հաջողության չհասան:

Վերսկսվեց նաև Կենտրոնական Ասիայի նվաճումը: VIII դարի սկզբներին արաբները մի շարք հաղթական ճակատամարտերի արդյունքում նվաճեցին Մավարաննահրը (արաբերեն «Մա վարաա ան-Նահր»՝ «Այն, ինչ գետի հետևում է»), Ամու Դարյա և Սիր Դարյա գետերի միջև ընկած, ինչպես նաև հարակից տարածքները: Կենտրոնական Ասիան նույնպես հայտնվեց արաբների տիրապետության ներքո: Այնուհետև արաբական նվաճողական քաղաքականությունը տարածվեց Աֆղանստանի և Հնդկաստանի վրա: VIII դարի սկզբներին արաբները հեշտությամբ գրավեցին Աֆղանստանի հարթավայրային տարածքները և մտան Բաբուլ: Դրանից հետո արաբները ներխուժեցին Հնդկաստան: 711-712 թթ. նրանք մտան Սինդ և Հինդոսի գետահովիտը, այնուհետև Հարավային Փենջաբ՝ գրավելով մի շարք քաղաքներ և բնակավայրեր: Դա դարձավ վերջին սահմանագիծը, որից այն կողմ արաբները չանցան: Այսպիսով՝ կարելի է ասել, որ VIII դարի կեսերին Արաբական խալիֆայությունը ձգվում էր Հնդկական օվկիանոսից մինչև Ատլանտյան օվկիանոս և փռված էր երեք մայրցամաքներում՝ Ասիայում, Աֆրիկայում և Եվրոպայում:

Օմայան խալիֆայությունը կարևոր էր համարում նաև Կովկասի գրավումը: Խալիֆայության քաղաքականությունը Օմայանների դինաստիայի հաստատումից և նրանց դիրքերի ամրապնդումից հետո փոխվեց Հայաստանի, ինչպես նաև Աղվանքի և Վիրքի հանդեպ: Նա դարձավ ավելի անհանդուրժողական և դաժան: Խալիֆայությունը 701 թ. իրականացրեց Հայաստանի գրավումը, ապա նույն թվականին նվաճեց Աղվանքը, Վիրքը և մերձկասպյան տարածքները, որի արդյունքում Հարավային Կովկասն ամբողջապես անցավ խալիֆայության տիրապետության տակ: Արաբական զորքերը, շարունակելով հարձակումը, հասան Ճորա երկիր և իրենց տիրապետությունը հաստատեցին Դերբենդի վրա:

Խալիֆայությունը վերոնշյալ նվաճված տարածքներից 701 թ. ստեղծեց վարչական նոր միավոր, որը կոչվեց Արմինիա: Նրա մեջ մտնում էին Հայաստանը, Վիրք-Վրաստանը (Ջուրզան), Աղվանքը (Առանը) և մերձկասպյան շրջանները, որոնց հիման վրա հետագայում ձևավորվեցին Շիրվանը և Դերբենդը: Արմինիան մտնում էր Ատրպատականի, Հայաստանի և Ջազիրայի կուսակալության մեջ, որի կուսակալը նշանակում էր Արմինիայի կառավարչին՝ արաբ ոստիկանին: Նրա նստավայրը հայոց Դվին քաղաքն էր: Արմինիայի առաջին ոստիկան նշանակվեց Արդալլահը:

Օմայանների դաժան քաղաքականությունն առաջ բերեց հայերի դիմադրությունը: Նրանք մի քանի անգամ ապստամբեցին, որոնցից նշանակալի էր 703 թ. ապստամբությունը և Վարդանակերտի հերոսամարտը, որն ավարտվեց հայկական զորքերի փառահեղ հաղթանակով:

Թեև հետագայում խալիֆայության քաղաքականությունը մի փոքր մեղմացավ Հայաստանի հանդեպ, այդուհանդերձ Արմինիայում դրությունը մնում էր լարված:

Իսկ բուն խալիֆայությունում օրեցօր ուժեղանում էր դժգոհությունը Օմայանների հանդեպ: Հատկապես ակտիվ էին գործում շիաները և այլ ընդդիմադիր ուժեր՝ չթաքցնելով Օմայաններին տապալելու իրենց մտադրությունները:

2. ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ (750-1258 ԹԹ.)

VIII դարի քսանական թվականներից սկսվում է Օմայան խալիֆայության աստիճանական թուլացումը, ապա և ճգնաժամը, որը համակարգային բնույթ էր կրում: Այն համակել էր բոլոր ոլորտները՝ պետական, քաղաքական, տնտեսական, վարչական կառավարման, ռազմական, միջցեղային հարաբերությունների և այլն: Խալիֆա Մարվան Բ-ը (744-750 թթ.), որը եղավ Օմայան վերջին խալիֆան, տեսնում էր այդ բոլորը և փորձում էր ինչ-որ չափով շտկել դրությունը, բայց դա նրան չհաջողվեց: Հատկապես ագրեսիվ էին շիաները, որոնք դրել էին Օմայանների ոչ լեգիտիմ լինելու հարցը:

Խալիֆայությունում սկսվեց ապստամբություն, որի դրոշը բարձրացրին շիաները Խորասանում: Նրանց միացան բոլոր դժգոհները: Ապստամբները մեկը մյուսի հետևից գրավեցին Խորասանը, Սպահանը, Քուֆան, Դամասկոսը և խալիֆայու-

թյան մյուս տարածքները: Ապստամբությունն ընդունել էր համընդհանուր բնույթ և համակել Իրաքը, Իրանը, Սիրիան, Արմինիան, Կենտրոնական Ասիան և Հյուսիսային Աֆրիկան: Ապստամբության ղեկավարությունն իրենց ձեռքը վերցրին Աբբասյանները՝ Մուհամմեդ մարգարեի հորեղբայր Աբբասի հետնորդները: Խալիֆա Մարվան Բ-ը անկարող էր ճնշելու ապստամբությունը և փախավ Եգիպտոս, սակայն նրան հետապնդող աբբասյան զորքերը 750 թ. օգոստոսին Գիզայի մոտ բռնեցին նրան, գլխատեցին և նրա գլուխը որպես ընծա ուղարկեցին արդեն իրեն խալիֆա հռչակած Աբու ալ-Աբբասին: Օմայան դինաստիան, որը կառավարեց 90 տարի, տապալվեց: Խալիֆայությունում հաստատվեց նոր՝ Աբբասյան դինաստիան: Նրան իրենց հավատարմությունը հայտնեցին խալիֆայության մեջ մտնող տարբեր շրջանները:

Աբբասյան դինաստիայի իշխանության ամրապնդման գործում մեծ դերակատարում ունեցավ Աբու ալ-Աբբասի եղբայր խալիֆա Աբու Ջաֆար ալ-Մանսուրը (754-775 թթ.): Ալ-Մանսուրի անվան հետ է կապված նաև խալիֆայության նոր մայրաքաղաքի՝ Բաղդադի՝ Մադինա աս-սալամի հիմնադրումը 762 թ.:

Աբբասյան առաջին հինգ խալիֆաների՝ Աբու ալ-Աբբասի, ալ-Մանսուրի, ալ-Մահդիի, ալ-Հադիի և Հարուն ալ-Ռաշիդի կառավարման տարիները, որն ընդգրկում է մոտ 60-ամյա մի ժամանակաշրջան, Աբբասյան խալիֆայության վերելքի տարիներն են եղել: Նա իր հզորության և փառքի գագաթնակետին հասավ Հարուն ալ-Ռաշիդի խալիֆայության տարիներին՝ 786-809 թթ.: Հարուն ալ-Ռաշիդը կարողացավ սահմանափակել արքունիքում մեծ ազդեցություն ձեռք բերած պարսկական ծագում ունեցող Բարմաքիների իշխանությունը՝ սրի քաշելով նրանց տոհմը: Նրա քաղաքականության մյուս կարևոր գծերից մեկն էլ այն էր, որ նա ջանում էր զգույշ քաղաքականություն վարել շիաների նկատմամբ, չգրգռել նրանց և փոքր հարցերում բավարարել նրանց պահանջները: Իր սոցիալական բազան ընդլայնելու նպատակով նա մի շարք նորամուծությունների օգնությամբ կարողացավ ապահովել մուսուլման հոգևոր առաջնորդների և աստվածաբան ուլեմների աջակցությունը: Աբբասյանների ժամանակ կատարելագործվեց և արդիականացվեց պետական մեքենան, կատարվեց իշխանական գործառույթների հստակ բաժանում և մասնագիտացում, կառավարական մարմինների՝ դիվանների ստեղծում:

Այդուհանդերձ, Աբբասյան խալիֆաների ջանքերն իրենց դինաստիան ամրապնդելու ուղղությամբ չկանխեցին ժողովրդական հուզումները, որոնց հիմնական պատճառը անընդհատ աճող հարկերը և դրանց գանձման դաժան մեթոդներն էին: Այդ հողի վրա ըմբոստանում էին գյուղացիները, քաղաքի արհեստավորները և ընդհանրապես խալիֆայության աղքատ խավերը: Դժգոհության այդ դրսևորումները պատժվում էին ամենադաժան մեթոդներով:

Աբբասյան խալիֆայության շրջանում, սկսած խալիֆա Մամունի (833-842 թթ.) գահակալությունից, մեծացավ թուրքական տարրի դերը՝ կապված խալիֆայության թուրքական գվարդիայի ձևավորման հետ: Այդ ճանապարհով Բաղդադում սկսեց աստիճանաբար կուտակվել թուրքական էթնիկական տարրը, որն այնքան հզորացավ, որ զորանոցներից դուրս գալով՝ արդեն միջամտում էր խալիֆայության ներքին գործերին, իսկ երբեմն էլ խալիֆաները խաղալիք էին դառնում նրանց ձեռքում:

Ահա այդ բոլորը հանգեցրեց կենտրոնախույս ուժերի ձևավորմանը, ուժեղացմանը և ակտիվացմանը, զանազան ընդվզումների և ապստամբությունների ալիքի բարձրացմանը՝ լուրջ սպառնալիք դառնալով խալիֆայության գոյությանը: VIII դարի վերջերից սկսվում է խալիֆայության տրոհումը, որն ավելի մեծ չափեր է ընդունում IX-X դդ.: 756 թ. անջատվում է Կորդովայի խալիֆայությունը կամ Անդալուսիան, իսկ այնուհետև իրականում որպես անկախ պետություններ են ձևավորվում Իդրիսների էմիրությունը Մաղրիբում (Մարոկոյում), Աղլաբիների էմիրությունը Իֆրիկիայում (Թունիսում), Թուլունիների պետությունը Եգիպտոսում, Թահիրիների պետությունը Խորասանում, Սաֆարիների էմիրությունը Սիստանում, Սամանյանների էմիրությունը Մավարաննահրում և այլն: Տեղի են ունենում հուժկու հակաաբբասյան ելույթներ, որոնք սասանում էին խալիֆայության հիմքերը, ինչպես Բաբեկի (816-837 թթ.) և ստրուկ զանջիների (869-883 թթ.) ապստամբությունները:

885 թ. խալիֆայության կազմից դուրս եկավ և որպես թագավորություն իր անկախությունը հռչակեց Հայաստանը Բագրատունիների թագավորական դինաստիայի ներքո: Աշոտ Ա Բագրատունին թագադրվեց որպես իր անկախությունը վերականգնած Հայաստանի թագավոր: Աբբասյան խալիֆա Մութամիդը Աշոտ Ա-ին պաշտոնապես ճանաչեց Հայաստանի թագավոր, նրան ուղարկեց թագ և արքաներին վայել նվերներ՝ թագավորական զգեստներ, ընծաներ, երիվարներ, զենքեր և թանկարժեք զարդեր:

Այնուհետև սկսվեց օտար էթնիկական ուժերի ներխուժումը խալիֆայության տարածք: Առաջինն այդ համարձակ քայլին դիմեցին և 945 թ. Բաղդադ ներխուժեցին Բուիները կամ Բուվայիհիները՝ իրանական ծագում ունեցող ռազմատենչ մի կլան: Նրանք խալիֆայությունը չվերացրին, բայց խալիֆային զրկեցին աշխարհիկ, քաղաքական իշխանությունից՝ նրան թողնելով միայն մուսուլմանների հոգևոր առաջնորդի դերը:

X-XI դարերում զգալիորեն ակտիվանում է խալիֆայության տարածքում բնակվող քրդերի դերակատարումը: Նրանց բնակության հիմնական տարածքը խալիֆայության լեռնային շրջաններն էին՝ Մոսուլի վիլայեթը, Ջազիրան, Ջաբալը, Ատրպատականը և այլ վայրեր, որտեղ նրանք կազմում էին մեծամասնություն, և որտեղ հողային տարածքները, արոտավայրերը և ջրի աղբյուրները գտնվում էին գլխավորապես քրդական ավատատիրական ավագանու ձեռքում:

Քրդերի ակտիվացմանը նպաստեց երկու կարևոր հանգամանք: Առաջինը՝ քրդական ցեղերն այդ շրջանում զանգվածաբար ընդունեցին իսլամ: Քուրդ շեյխերը, ավատատեր-բեկերը, ցեղային ողջ ավագանին անցան իսլամի ծառայությանը և խալիֆայության շահերի սպասարկմանը, որը նրանց, գլխավորապես ցեղային ավագանուն, հնարավորություն էր ընձեռում ներգրավվելու խալիֆայության կառավարության համակարգում: Երկրորդ՝ ժամանակաշրջանի առումով դա համընկավ Աբբասյան խալիֆայության թուլացման հետ, մանավանդ այն բանից հետո,

երբ 945 թ. իրանական ծագումով դելմիկ-դայլամի Բուիներին հաջողվեց գրավել խալիֆայության մայրաքաղաք Բաղդադը և իր իշխանությունը հաստատել խալիֆայությունում: Բուիներն իրականում Աբբասյան խալիֆաներին զրկեցին քաղաքական գործառույթից՝ նրանց թողնելով լոկ հոգևոր-կրոնական գործառույթներ: Այդ յուրահատուկ քաղաքական իրավիճակը պահպանվեց մոտ երկու դար, որի ընթացքում քրդերը հնարավորություն ունեցան ակտիվացնելու իրենց գործունեությունը, դրսևորելու քաղաքական որոշակի միտումներ, անգամ քաղաքական ինքնուրույնության նախանշաններ: Խալիֆայության որոշ շրջաններում աճեց քրդերի մասնակցությունը, առանձին դեպքերում՝ անգամ ղեկավար դերակատարումը տարածաշրջանային կառավարման համակարգում: Դրան պետք է ավելացնել նաև այն հանգամանքը, որ առանձին քուրդ անհատների հաջողվեց բարձր դիրքեր գրավել խալիֆայության զինվորական, քաղաքական և կառավարման այլ ոլորտներում, որը հիմք է տվել խոսելու քրդական կիսանկախ դինաստիաների առաջացման մասին: Նրանք չկարողացան հասնել ավելիին, ապա նաև բարենպաստ պայմանների վերացման արդյունքում կորցրին իրենց դիրքերը և անհետացան քաղաքական ասպարեզից: Դրան մեծապես նպաստեց XI դարի սկզբներին տարածաշրջանում սելջուկ-թյուրքերի հայտնվելը, որը ողբերգություն եղավ խալիֆայության և նրա կազմի մեջ մտնող բոլոր ժողովուրդների, այդ թվում և քրդերի համար: XI դարում, այլ ժողովուրդների թվում, նրանք ևս հարկադրված էին արտագաղթել ու հաստատվել այլ շրջաններում, այդ թվում և Հայաստանի հարավային ու արևմտյան շրջաններում:

3. ՖԱԹԻՄՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՀԱՅ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԸ (909–1171 ԹԹ.)

VIII դարի կեսերին իսլամի շիական ուղղության ընդերքում ձևավորվեց մի նոր աղանդավորական հոսանք, որը ստացավ իսմայիլական անունը: Նրա կողմնակիցներն իրենց համարում էին վեցերորդ իմամ Իսմայիլի հետևորդներ: Նրանք միաժամանակ կոչվում էին Ֆաթիմյաններ՝ Մուհամմեդ մարգարեի դստեր և նրա եղբորորդի խալիֆա Ալիի կնոջ՝ Ֆաթիմայի անունով՝ ցանկանալով շեշտել իրենց ուղղակի կապը մարգարեի և չորրորդ բարեպաշտ խալիֆայի հետ: Ֆաթիմյան-իսմայիլական շարժումը լայն ծավալ ստացավ Հյուսիսային Աֆրիկայում, որտեղ նրանք կարողացան իրենց տիրապետությունը հաստատել Իֆրիկիայում՝ Թունիսում, ապա Ալժիրում և Մաղրիբում: Դրա հետևանքով 909 թ. հայտնվեց մի նոր խալիֆայություն, որը կոչվեց Ֆաթիմյան: Ֆաթիմյանները 969 թ. իրենց իշխանությունը հաստատեցին նաև Եգիպտոսում, ապա նաև Սիրիայում, Արաբիայում և Իրաքի որոշ շրջաններում: Նրանք իրենց մայրաքաղաքը տեղափոխեցին Եգիպտոս, որտեղ 969 թ. դրվեցին նոր մայրաքաղաքի հիմքերը, որը կոչվեց «Ալ-Կահիրա»՝ «Հաղթող»:

Ֆաթիմյան խալիֆայության կազմավորումով ավելի խորացավ արաբական աշխարհի պառակտումը: Այդ պահից սկսած՝ քաղաքական ասպարեզում գոյություն ունեին երեք ինքնուրույն խալիֆաներ՝ Աբբասյան, Կորդովայի (Իսպանիայում) և

Ֆաթիմյան: Ֆաթիմյան խալիֆայության գոյության առաջին հարյուրամյակը եղել է նրա վերընթաց զարգացման և քաղաքական ու տնտեսական հզորության շրջանը: Ֆաթիմյանները մեղմ քաղաքականություն էին վարում ներքին կյանքում, որին բնորոշ էր հանդուրժողականությունը այլադավանների՝ քրիստոնյաների և հրեաների նկատմամբ, որոնք կառավարման համակարգում զբաղեցնում էին կարևոր պաշտոններ: Ամրապնդվեցին նաև Ֆաթիմյան խալիֆայության միջազգային դիրքերը:

Սակայն XI դարում սկսվեց խալիֆայության անկումը: Մեկը մյուսին փոխարինող ապաշնորհ խալիֆաները երկիրը հասցրին տնտեսական քայքայման, սրվեցին սոցիալական հարաբերությունները, այլադավանների նկատմամբ հանդուրժողականության քաղաքականությանը փոխարինելու եկավ նրանց հալածելու քաղաքականությունը, որի հետևողական կիրառողը եղավ խալիֆա Հաքիմը: Խալիֆայության թուլացման և անկայուն վիճակի ստեղծման գործում իր ներդրումն ունեցավ նաև խալիֆայական գվարդիան, որը կազմված էր միմյանց նկատմամբ բացահայտ թշնամանք տածող անկարգապահ թուրքերից, բերբերներից և սուդանցիներից: Թուլացան նաև խալիֆայության միջազգային դիրքերը, նա ունեցավ տարածքային կորուստներ: Դրությունը հատկապես օրհասական դարձավ խալիֆա Մուսթանսիրի գահակալության առաջին շրջանում: Հուսալքված և անելանելի դրության մեջ հայտնված խալիֆա Մուսթանսիրը (1036–1094 թթ.) 1073 թ. հարկադրված դիմեց սելջուկների դեմ պայքարում մեծ անուն հանած Ակկայի կառավարիչ հայազգի Բադր ալ-Ջամալի (Ջամալի) ալ-Արմանիի օգնությանը՝ հրավիրելով նրան և նրա հայկական զորագնդին, որի թիվը հասնում էր մոտ յոթ հազարի, Կահիրե՝ անհնազանդ թուրք գվարդիականներին սանձահարելու և Եգիպտոսում կարգ ու կանոն հաստատելու համար: Բադր ալ-Արմանին ընդունեց խալիֆայի հրավերը և 1073 թ. մտավ Կահիրե: Նա շատ արագ և փայլուն կերպով կարողացավ իրականացնել իր առաքելությունը, ջախջախեց թուրքական գվարդիականներին, պատժեց նրանց հրամանատարներին և նրանց հետ համագործակցած արաբ պաշտոնյաներին: Խալիֆան Բադր ալ-Ջամալիին օժտեց ամենալայն լիազորություններով: Նա դարձավ Եգիպտոսի վազիրը և նշանակվեց զորքերի գլխավոր հրամանատար՝ էմիր ալ-Ջույուշ: Նրա ձեռքում կենտրոնացվեց ամբողջ իշխանությունը, և նա 20 տարի՝ 1074–1094 թթ.՝ մինչև իր մահը, եղավ Եգիպտոսի փաստական և անսահմանափակ կառավարողը: Այդ շրջանում խալիֆայի իշխանությունը ձևական էր, և նա ոչինչ չէր կարող անել Բադր ալ-Արմանիի կամքին հակառակ կամ առանց նրա գիտության և համաձայնության: Նա կարողացավ երկիրը դուրս բերել քաոսային վիճակից, հաստատել օրինականություն և կարգապահություն, մեծապես օժանդակել տնտեսության զարգացմանը և նոր շունչ փչել հոգեվարքի մեջ հայտնված Ֆաթիմյան խալիֆայությանը:

Բադրի կենսագրության մասին տեղեկություններն այնքան էլ հարուստ չեն: Ղևոնդ Ալիշանը, հենվելով Աբու Սալիհ ալ-Արմանիի (12 դ.) մի վկայության վրա, նրան նկարագրում է որպես «կես քրիստոնյա, կես մուսուլման»: Իսկ ինչ վերաբերում է մեծաքանակ հայերի հայտնվելուն այդ ժամանակ Եգիպտոսում և արաբական այլ երկրներում, ապա մի շարք հեղինակներ իրավացիորեն այն կարծիքն են հայտնել,

որ դրանք Բագրատունյաց թագավորության և Անիի անկումից հետո Հայաստանից հեռացած հայերն էին, որոնք հաստատվել էին Անտիոքում, Եդեսիայում, Ուրֆայում և Հալեպում ու հետագայում տարածվել այլ շրջաններ: Բադր ալ-Արմանին իր հայկական զորագունդը հիմնականում ձևավորել էր նրանցից, թեև կա տեսակետ, որ նրանցում զգալի թիվ են կազմել նաև սասունցիները:

1094 թ.՝ Բադր ալ-Արմանիի մահից հետո, նրան փոխարինեց որդին՝ Մալիք Աբու ալ-Կասիմ ալ Աֆդալը՝ Շահնշահը, որին նրա հայրը դեռևս իր կենդանության ժամանակ նշանակել էր «իր ժառանգը կառավարությունում»: Նա գրավեց այն բոլոր պաշտոնները, որ զբաղեցրել էր նրա հայրը՝ դառնալով Եգիպտոսի վազիր, բանակի հրամանատար և Եգիպտոսի անսահմանափակ կառավարիչ: Նրա դիրքերն այնքան ուժեղ էին, որ նրանից լիակատար կախման մեջ էին ոչ միայն խալիֆա Մուսթանսիրը, այլև նրան հաջորդած խալիֆաներ Մուսթալին (1094–1101 թթ.) և Ամիրը (1101–1130 թթ.): Նա վերակառուցման ենթարկեց բանակը, խիստ հսկողություն սահմանեց ցորենի բերքի և պաշարների վրա, ստեղծեց հետախուզական ծառայություն, պետական բոլոր կառույցներում նշանակեց հայազգի պաշտոնյաներ, մեծ զարկ տվեց շինարարությանը և այլն: Բայց նա ուներ և հակառակորդներ, որոնց դուր չէր գալիս Աֆդալի անսահմանափակ իշխանությունը: Հավանաբար հենց նրանց էլ հաջողվեց 1121 թ. իրականացնել նրա սպանությունը:

Բայց դրանով չավարտվեց հայերի առաջնակարգ դերակատարումը Եգիպտոսի կառավարման մեջ: Փոքր ընդմիջումից հետո՝ 1131 թ., Եգիպտոսի վազիր դարձավ Աֆդալի որդին՝ Կութայֆը, 1132 թ. խալիֆա Հաֆիզը վազիր նշանակեց Յանիս (Հովհաննես) ալ-Արմանիին: Նրանք երկուսը նույնպես սպանվեցին: Դրանից հետո Եգիպտոսում դարձյալ սկսվեց խառնակ շրջան, տեղի էին ունենում խռովություններ, անհնազանդության դրսևորումներ, ոչ ոք իրեն ապահով չէր զգում: Ստեղծված պայմաններում խալիֆա Հաֆիզը դիմեց Եգիպտոսի Ղարբիյյայի նահանգապետ Բահրամ ալ-Արմանիին՝ Վահրամ Պահլավունուն, օգտագործել հայկական զորքը՝ Եգիպտոսում խաղաղություն հաստատելու և կարգը վերականգնելու համար: Այդ խառնաշփոթ շրջանում Վահրամ Պահլավունին կարողացավ բանակը փրկել քայքայումից և վերակառուցել այն: Խալիֆա Հաֆիզը 1135 թ. Վահրամ Պահլավունուն նշանակեց վազիրի պաշտոնում: Նա հինգերորդ հայն էր, որ զբաղեցնում էր այդ բարձր պաշտոնը Եգիպտոսում: Նա դարձավ նաև Եգիպտոսի զորքերի հրամանատար: Հանգամանքների բերումով Վահրամ Պահլավունին հարկադրված էր հետագայում հրաժարվել իր գրաված պաշտոններից և հեռանալ Սիրիա: Բայց խալիֆա Հաֆիզը նրան կրկին հրավիրեց Եգիպտոս, որտեղ նա վախճանվեց 1140 թ.: Խալիֆան երեք օր սուգ հայտարարեց Եգիպտոսում, և Վահրամ Պահլավունու հուղարկավորությունը կատարվեց ամենամեծ պատիվներով: Հետագայում ևս երկու հայեր զբաղեցրին Եգիպտոսի վազիրի և զորահրամանատարի պաշտոնները՝ Թալաի իբն Ռուզիկ ալ-Արմանին (1154–1161 թթ.) և Ռուզիկ իբն Թալաին (1161–1162 թթ.):

Պատմագրության մեջ շատ բարձր գնահատականի է արժանացել հայ վազիրների, առաջին հերթին Բադր ալ-Գամալի և Աֆդալի գործունեությունը: Մաքրիզին

և Իբն Խալիքանին, Ֆ. Հիթթին և Ալ-Իմադը, Ա. Մյուլլերը, Բ. Տուրանը, Ի. Ֆիլշտինսկին և շատ ուրիշներ նրանց են վերագրում Ֆաթիմյան խալիֆայության գոյատևության, Եգիպտոսում պետական կառույցների ստեղծման, կատարելագործման և զարգացման, երկրում խաղաղության և կարգ ու կանոնի հաստատման պատիվը: Արաբ պատմաբան Ֆ. Հիթթիի կարծիքով՝ Բադր ալ-Արմանին «Ֆաթիմյան խալիֆայությանը կյանքի նոր շունչ տվեց»: Իսկ Եգիպտոսի պատմության լավագույն գիտակ Գաստոն Վիետը Ֆաթիմյան տիրապետության ժամանակահատվածն անվանում է «Հայկական դարաշրջան» («Armenian period»):

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ VII–XI ԴԱՐԵՐՈՒՄ

Արաբական խալիֆայությունը VII–XI դարերում՝ կազմավորումից մինչև սելջուկյան նվաճումները, զարգացման առումով գտնվում էր անցումային շրջանում՝ նախնադարյան տոհմատիրական-համայնքային հասարակությունից ավատատիրական հարաբերությունների սկզբնական փուլում՝ դեռևս պահպանվող տոհմատիրական-ստրկատիրական հարաբերությունների բավականին շոշափելի մնացուկներով հանդերձ:

Հասարակության հիմքում դեռևս ընկած էր ցեղային կառուցվածքը, և թեև ցեղային հարաբերությունները որոշ փոփոխությունների էին ենթարկվում, բայց որպես սոցիալական կառույց՝ այն շարունակում էր պահպանել իր առաջնային դերն ու նշանակությունը:

Խալիֆայությունում գոյություն ուներ ստրկություն՝ իր յուրահատկություններով: Թեև դա արդեն կացութաձև չէր, այդուհանդերձ նշանակալի տեղ էր գրավում հասարակության կառուցվածքում: Ստրկության հիմնական աղբյուրը պատերազմներն էին և դրանց ընթացքում գերեվարվածները, որոնց այնուհետև վաճառում էին խալիֆայության տարբեր քաղաքների շուկաներում: Ստրկավաճառությունը համարվում էր շատ եկամտաբեր բնագավառ, և նրանում ներգրավված էին ստվարաքանակ խմբեր:

Մյուս աղբյուրը պարտապաններն էին, որոնք ի վիճակի չէին վճարելու իրենց պարտքերը, այդ պատճառով ստրկացվում էին և վաճառվում պարտքի դիմաց: Ստրուկների կիրառման ասպարեզը հիմնականում շինարարական ոլորտն էր՝ ճանապարհների, ամրությունների և այլ շինությունների կառուցումը, նրանց օգտագործում էին նաև գյուղատնտեսության բնագավառում, ոռոգման համակարգում, երբեմն նաև հողերի մշակման համար: Օմայանների, ավելի շատ Աբբասյանների ժամանակ ստրուկներին սկսեցին օգտագործել նաև բանակում, սակայն ոչ որպես զինվորներ, քանի որ դա նրանց զենք կրելու հնարավորություն կտար, այլ որպես օժանդակ ուժ, որն օգտագործում էին ռազմական ամրությունների կառուցման, մատակարարման, սպասարկման և ամեն տեսակի ծանր ու ոչ հարգի աշխատանքներում:

Ձևավորվեցին ազգարային հարաբերությունները: Եթե բեդվինների համար գլխավորը անասնապահությունն էր, ապա բնակչության ճնշող մեծամասնության

համար կարևորը հողագործությունն էր: Խալիֆայությունում գոյություն ուներ հողատիրության երեք ձև՝ համայնքային, պետական և մասնավոր: Հողատիրության ամենահին ձևը համայնքային հողատիրությունն էր, որը քանի գնում, այնքան նվազում էր: Շատ ազդեցիկ հողատերեր, ցեղապետեր և շեյխեր աստիճանաբար յուրացնում էին համայնքապատկան հողերը և դրանք օգտագործում որպես մասնավոր սեփականություն:

Հողասակավ և հողազուրկ գյուղացիները հարկադրված էին դիմել հարուստ հողատերերին՝ նրանց հողերի վարձակալության համար: Գոյություն ունեցող աղաթի՝ սովորույթի համաձայն՝ հողատերերն անձամբ չէին զբաղվում հողագործությամբ, այլ նախընտրում էին հողը տալ վարձակալության հողազուրկ գյուղացիներին՝ ֆելլահներին: Կային վարձակալության տարբեր չափաբաժիններ՝ կիսարար, մեկ երրորդ և մեկ քառորդ չափաբաժիններով:

Օմայան դինաստիայի կառավարման շրջանից սկսած՝ հողային տիրապետության գլխավոր ձևը դարձավ պետական հողատիրությունը: Հողերի և ոռոգման համակարգի հիմնական մասը կենտրոնացված էր պետության ձեռքում: Խալիֆաները և նրանց ազգականներն ու մերձավորներն իրենք էին հանդիսանում մեծ հողատերեր: Խալիֆաները խոշոր հողաբաժիններ էին շնորհում արաբական հողային ավագանուն, որը դրանք օգտագործում էր որպես մասնավոր սեփականություն: Աբբասյան խալիֆա Հարուն ալ-Ռաշիդն առաջին անգամ խոշոր հողաբաժիններ պարգևեց նաև մուսուլմանական բարձրագույն հոգևորականությանը՝ իմամներին և աստվածաբան-ուլեմներին՝ դրանով շահելով նրանց աջակցությունը:

Կար նաև մասնավոր սեփականություն՝ մուլք, որն առաջացել էր երկու ճանապարհով: Առաջին՝ արաբական նվաճումների ժամանակ խալիֆայության կազմում հայտնվեցին զգալի թվով բյուզանդական և պարսկական ֆեոդալ-հողատերեր, որոնց հողերը նրանց սեփականությունն էին, և խալիֆայությունը պահպանեց նրանց սեփականատիրական իրավունքները: Երկրորդ՝ արաբների կողմից բռնությամբ և պարտադրված վաճառքով ձեռք բերված հողերն էին:

Խալիֆայությունում գոյություն ուներ երկու տեսակի հարկ՝ հողահարկ և գլխահարկ: Հողահարկը՝ խարաջ, գանձվում էր բոլորից՝ մուսուլմաններից և ոչ մուսուլմաններից, իսկ գլխահարկը՝ ջիզյա, միայն ոչ մուսուլմաններից: Հարկերի գանձման հարցում իշխանությունները վերին աստիճանի հետևողական էին և դաժան:

Այս ժամանակաշրջանում բավականին առաջադիմել էր ևս երկու սոցիալական խումբ՝ առևտրականների և արհեստավորների, որոնք նշանակալի դեր էին խաղում խալիֆայության տնտեսական կյանքում, հատկապես քաղաքներում, առափնյա բնակավայրերում, ռազմական քաղաք-ճամբարներում և այլն:

Պետության զարգացմանը և վարչակառավարական ապարատի կազմավորմանը զուգընթաց առաջացավ մի նոր սոցիալական խավ, որը կարելի է անվանել բյուրոկրատական-ծառայողական: Դրանք նախ և առաջ քաթիբները՝ գրագիրներն էին, որոնք ոչ թե սովորական գրագիրներ-քարտուղարներ, այլ պետական ապարատի աշխատանքները կազմակերպող և կարգավորող պաշտոնյաներ և ծառայողներ էին, որը կարող էին կատարել միայն նրանք, ովքեր կրթություն ունեին, գրագետ էին և լեզուներ գիտեին: Այդ էին պահանջում անծայրածիր կայսրության կառավարման շահերը: Աբբասյանների ժամանակ տեղի ունեցավ մի կարևոր տեղաշարժ ևս սոցիալ-համայնքային կողմնորոշման հարցում: Հաղթանակ տանելով շիաների նկատմամբ՝ սուննի Աբբասյանները եկան այն եզրակացության, որ հասել է ժամը կողմնորոշվելու ոչ թե դեպի կոնկրետ այս կամ այն սոցիալական խավը, այլ ամբողջ ջամաան, այսինքն՝ ամբողջ մուսուլմանական համայնքը (համենայն դեպս, նրա մեծամասնությունը կազմող սուննիները): Մուսուլմանական ջամաայի մեջ մտնում էին նաև շիաները, որոնք Աբբասյանների հետ համագործակցելու ցանկության դեպքում կարող էին, որպես ջամաայի անդամներ, ստանալ այդ հնարավորությունը: Ջամաայի սկզբունքը, որ հոչակեց Աբբասյան երկրորդ խալիֆա, Բաղդադի հիմնադիր ալ-Մանսուրը, հնարավորություն էր տալիս համախմբելու բոլոր մուսուլմաններին: Սակայն շիաները, որոնք չէին ընդունում Աբբասյանների լեգիտիմ լինելը, մերժեցին համագործակցել նրանց հետ, փաստորեն իրենց հակադրեցին ամբողջ ջամաային և հայտնվեցին մեկուսացման մեջ:

Աբբասյան խալիֆայության պետական, քաղաքական և սոցիալ-տնտեսական բնականոն զարգացումն ընդհատվեց, երբ XI դարում նա հայտնվեց օտար նվաճողների տիրապետության ներքո:

5. ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ (1055-1194 ԹԹ.)

Սելջուկների պետությունը պատմության թատերաբեմում հայտնվեց XI դարի 30-ական թվականներին և հետագայում մեծ դերակատարում ունեցավ Միջին Ասիայի, Մերձավոր Արևելքի և Այսրկովկասի պատմության մեջ: Նրա անվանումը սերում է թուրքական օղուզ ցեղի ցեղապետերից մեկի՝ Սելջուկի անունից: Այդ քոչվորական ցեղախումբը, շարժվելով ղրղզական տափաստաններից, հաստատվեց Բուխարայի շրջակա տարածքներում, ընդունեց իսլամ և սկսեց նվաճել նորանոր տարածքներ: Սելջուկի երկու թոռներին՝ Տուղրիլ բեկին և Չաղրի բեկին էր վիճակված դառնալ Սելջուկյան պետության հիմնադիրներ: Նրանք գրավեցին Ղազնևիների տիրապետության տակ գտնվող Խորասանը, Մերվը և Նիշապուրը, որից հետո՝ 1038 թ., Չաղրի բեկը սուլթան հոչակվեց Մերվում, իսկ Տուղրիլ բեկը՝ Նիշապուրում: Նրանք այնուհետև իրենց տիրույթներին միացրին Բալխը, Գուրգանը, Թաբարստանը, Խորեզմը, Համադանը, Ռեյը և Սպահանը: Այսպես հիմնվեց Սելջուկյան Մեծ պետությունը:

Սակայն սելջուկների երազանքը Բաղդադի վրա արշավելը և այն գրավելն էր: Տուղրիլ բեկը, 1055 թ. դեկտեմբերի 18-ին իր զորքերի գլուխն անցած, հայտնվեց Բաղդադի մատույցներում: Նրանք առանց ճակատամարտի գրավեցին խալիֆաների մայրաքաղաքը: Սելջուկյան զորքերի՝ Բաղդադին մոտենալու պահին Բաղդադի զինվորական կառավարիչ, թուրքական զորահրամանատար Բասասիրը հապճեպորեն լքեց մայրաքաղաքը՝ անպաշտպան թողնելով խալիֆային և նրա բնակչու-

թյանը: 945 թ. հաստատված Բուիների տիրապետությունը Աբբասյան խալիֆայության վրա վերացվեց, և հաստատվեց սելջուկների տիրապետությունը:

Աբբասյան խալիֆա ալ-Կայիմն իր պալատում մեծ պատիվներով ընդունեց Տուղրիլ բեկին, նրա գլխին դրեց թագ, իսկ մեջքին կապեց գոտի՝ երկու թրերով, և նրան շնորհեց «Արևելքի և Արևմուտքի թագավորի» տիտղոս: Բայց Տուղրիլը գերադասում էր կրել «ալ-սուլթան» կոչումը, դառնալ ամբողջ խալիֆայության խնամակալը: Խալիֆայի պաշտոնը չվերացվեց, նա մնաց իր գահին, սակայն իշխանազուրկ:

Սելջուկյան պետությունն իր հզորության գագաթնակետին հասավ Տուղրիլ բեկ Ա-ի (1038-1063 թթ.), Ալփ Արսլանի (1063-1072 թթ.) և Մալիքշահի (1072-1092 թթ.) կառավարման տարիներին: Ալփ Արսլանն ընդարձակեց Սելջուկյան պետության սահմանները, որի մեջ մտան ամբողջ Իրանը, Իրաքը, Սիրիայի մի մասը, Այսրկովկասը և այլ տարածքներ: Նա 1065 թ. գրավեց Անին, իսկ 1071 թ. Մանազկերտի ճակատամարտում գլխովին ջախջախեց բյուզանդական բանակը և գերի վերցրեց բյուզանդական կայսր Ռոմանոս Դիոգենեսին: Սելջուկները մտան Փոքր Ասիա, որտեղ նրանք հիմնեցին իրենց երկրորդ պետությունը՝ Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը: Արաբ պատմաբան Ֆ. Հիթթին կարծում է, որ այդ պահից սկսվեց Փոքր Ասիայի թուրքացումը միջինասիական տափաստաններից ներխուժած քոչվոր թուրքական-օղուզական ցեղերի կողմից, ինչը նրա բնիկների՝ հայերի, հույների, ասորիների և այլ ժողովուրդների համար ունեցավ ողբերգական հետևանքներ:

Սելջուկներն ընդօրինակեցին կառավարման բյուզանդական և պարսկական ձևերն ու մեթոդները, որ գործում էին նաև խալիֆայությունում: Նրանք ստեղծեցին կենտրոնացված պետություն, որտեղ ամեն ինչ ենթակա էր սուլթանին, բայց միևնույն ժամանակ մեծ դերակատարում ուներ վազիրը: Մեծ տեղ էր հատկացվում նաև բանակին, որն անհրաժեշտ էր ոչ միայն նոր երկրներ նվաճելու, այլև սուլթանությունում կենտրոնախույս ուժերին զսպելու և սանձելու համար: Այդ բնագավառում մեծ է Մալիքշահի վազիր Նիզամ ալ-Մուլքի դերակատարումը, որն իր ժամանակի համար կրթված անձնավորություն էր: Նա 1065-1067 թթ. Բաղդադում բացեց բարձրագույն դպրոց, նրա հորդորներով Մալիքշահը Բաղդադում հիմնեց աստղադիտարան, որտեղ 1074 թ. գումարվեց ժամանակի ականավոր աստղագետների ժողով՝ առաջարկելով նրանց բարեփոխել պարսկական տոմարը: Ալփ Արսլանի որդին, որը հրապուրված էր արաբա-պարսկական մշակույթով, հրաժարվեց իր թուրքական անունից, ընդունեց նոր անուն՝ Մալիքշահ՝ կազմված արաբական «մալիք» և պարսկական «շահ» բաղադրիչներից, որոնք երկուսն էլ նշանակում են թագավոր, վեհապետ, և այդ անունով գահ բարձրացավ:

Մալիքշահի մահից հետո սկսվեց Սելջուկյան Մեծ պետության աստիճանական թուլացումը և տրոհումը մի քանի անկախ պետությունների: Այդ պետության թուլացումից փորձեց օգտվել նաև Աբբասյան խալիֆա ալ-Նասիրը (1180-1225 թթ.): Նրա այդ դիրքորոշման վրա ազդեցություն ունեցավ Ֆաթիմյան խալիֆայությունը 1171 թ. տապալած և Եգիպտոսի ու Սիրիայի սուլթան դարձած Սալահ ադ-Դինը, որը հանդես եկավ Աբբասյան խալիֆաների պաշտպանությամբ: Նրա հրամանով

ուրբաթօրյա աղոթքի՝ խուտբայի ժամանակ նորից սկսեց հիշատակվել Աբբասյան խալիֆայի անունը, որը նշանակում էր Աբբասյանների գերակայության վերականգնում արաբական այդ երկու կարևոր երկրներում՝ Եգիպտոսում և Սիրիայում: Խալիֆա ալ-Նասիրը կապեր հաստատեց Խորեզմի կառավարողների հետ, որոնք կրում էին «խորեզմշահ» տիտղոսը: Հարկ է նշել, որ սելջուկների տիրապետությունը Խորեզմում երբեք ամուր չի եղել: Խորեզմշահ Թակաշը, օգտվելով սելջուկների թուլացումից, պատերազմ սկսեց նրանց դեմ: Վճռական ճակատամարտը Թակաշի և սելջուկյան սուլթան Թուղրիլ Բ-ի միջև տեղի ունեցավ 1194 թ. և ավարտվեց վերջինիս կատարյալ պարտությամբ: Դրանով վերացավ սելջուկների տիրապետությունը Իրաքում և Աբբասյան խալիֆայության վրա:

Խալիֆա ալ-Նասիրը հավատացած էր, որ հաղթանակած Թակաշն իրեն կվերադարձնի սելջուկներից հետ գրաված տարածքները: Բայց Թակաշը վարվեց այնպես, ինչպես Բաղդադ ներխուժած մյուս նվաճողները: Նա իր ձեռքում կենտրոնացրեց ամբողջ աշխարհիկ իշխանությունը և իր անունով դրամ հատեց, իսկ խալիֆա ալ-Նասիրին բաժին հասավ միայն հոգևոր «իշխանությունը»: Թակաշի որդին՝ Ալա ալ-Դին Մուհամմեդը, որը նրան հաջորդեց խորեզմշահերի գահի վրա (1200-1220 թթ.), ծրագրում էր վերջնականապես տապալել Աբբասյանների դինաստիան և խալիֆայի գահի վրա նստեցնել Ալիի հետնորդներից որևէ մեկին՝ այդկերպ լուծելով շիաների՝ հարյուրամյակներ տևող պայքարը իշխանության համար: Բայց խորեզմշահերի մայրաքաղաք Սպահանում հղացած այդ ծրագրին վիճակված չէր իրականություն դառնալ: Ասպարեզ իջավ մի նոր քաղաքական հզոր ուժ, որը խառնեց բոլոր խաղաքարտերը:

Խոսքը մոնղոլների և նրանց առաջնորդ Թեմուչինի՝ Չինգիզ խանի մասին է:

Սակայն նախքան այդ հարցը լուսաբանելն անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ խաչակրաց արշավանքներին:

6. ԽԱՉԱԿՐԱՑ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՌՃԱԿԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

XI դարի վերջերից Առաջավոր Ասիայում տեղի ունեցան այնպիսի իրադարձություններ, որոնք կազմում են համաշխարհային պատմության թերևս զարմանահրաշ էջերից մեկը: Խոսքը խաչակրաց արշավանքների մասին է, որի նախաձեռնողները եղան Հռոմի կաթոլիկ եկեղեցին, Գերմանիայի, Ֆրանսիայի և Անգլիայի միապետերը, Իտալիայի Ջենովա, Վենետիկ և Պիզա քաղաքները, որոնց աջակցում էր Բյուզանդական կայսրությունը:

Խաչակրաց պատերազմների սկիզբը դրվեց 1095 թ., երբ Հռոմի պապ Ուրբան Բ-ը Կլերմոնում գումարված եկեղեցական ժողովում հանդես եկավ Տիրոջ՝ Հիսուսի գերեզմանն անհավատների ձեռքից ազատագրելու կոչով: Պոնտիֆիկի կոչը խուսներամ ժողովուրդը և եվրոպական միապետերն ընդունեցին մեծ խանդավառությամբ:

Խաչակրաց առաջին արշավանքը տեղի ունեցավ 1096 թ. վերջերին: Նրա մասնակիցները կոչվեցին խաչակիրներ, քանի որ նրանք իրենց աջ թևին կապում էին կարմիր կտորից խաչ: Կրոնական բողի տակ ընթացող արշավանքն ավելի շատ քաղաքական և նվաճողական բնույթ էր կրում: Եվրոպական միապետական վերնախավը ծարավի էր նոր նվաճումների՝ հուսալով տիրանալ Արևելքի առասպելական հարստություններին, որից իր մասնաբաժինն էր ակնկալում նաև Հռոմի կաթոլիկ եկեղեցին: Խաչակիրների մեջ քիչ չէին նաև զանազան բախտախնդիրներ, ավազակներ, գողեր և ավարառուներ, որոնք Արևելք էին գնում թալանի և կողոպուտի համար:

Խաչակիրների առաջնահերթ նպատակն էր նվաճել նախ և առաջ Սիրիան, Պաղեստինը և Եգիպտոսը: Այդ ճանապարհին նրանց առաջին խոշոր հաղթանակը եղավ Եդեսիայի գրավումը 1097 թ. կոմս Բոլդվինի կողմից և Եդեսիայի կոմսության հիմնումը, որը դարձավ առաջին Լատին իշխանապետությունը: Խաչակիրները 1097 թ. հոկտեմբերին պաշարեցին Անտիոքը, սակայն, հանդիպելով համառ դիմադրության՝ այն կարողացան գրավել միայն 1098 թ. հունիսին: Այստեղ նրանք հիմնեցին իրենց երկրորդ պետական կազմավորումը՝ Անտիոքի իշխանապետությունը, որը գլխավորեց Բոհեմունդը: Խաչակիրների մի զորաբանակ, Ռայմոն Տուլուզեցու հրամանատարությամբ, Անտիոքից շարժվեց դեպի հարավ և մտավ Մաարաթ ալ-Նուման, որն արաբ հռչակավոր փիլիսոփա և բանաստեղծ Աբու ալ-Ալա ալ-Մաարիի ծննդավայրն էր: Կոտորելով բնակչության մեծ մասին և հրի մատնելով այդ քաղաքը՝ նրա զորքերը մտան Լիբանան՝ արժանանալով քրիստոնյա մարոնիների բարեհաճ ընդունելությանը: Նրանցից շատերը համալրեցին խաչակիրների շարքերը: Այնուհետև Ռայմոնի զորքերը միացան խաչակիրների հիմնական ուժերին, որոնք նախապատրաստվում էին գրավելու Երուսաղեմը, որն էլ, ի վերջո, խաչակիրների գլխավոր նպատակն էր:

Խաչակիրների 40 հազարանոց բանակը 1099 թ. հունիսի 7-ին արդեն Երուսաղեմի դարպասների մոտ էր: Քաղաքը պաշտպանող եգիպտական հազարհոգանոց կայազորը, հասկանալի է, երկար ժամանակ չէր կարող պաշտպանել քաղաքը: Խաչակիրները 1099 թ. հուլիսի 15-ին գրոհով գրավեցին Երուսաղեմը: Նրանք սարսափելի ջարդ կազմակերպեցին: Ականատեսը վկայում է, որ Երուսաղեմի փողոցներում և հրապարակներում կարելի էր տեսնել մարդկանց կտրված գլուխներից, ձեռքերից և ոտքերից առաջացած բլուրներ: Արաբ պատմիչ Իբն ալ-Ասիրի վկայությամբ՝ մորթվել էր մոտ 75 հազար մարդ:

Խաչակիրները եգիպտացիների դեմ հաղթանակ տարան նաև Աշկելոնի մոտ, բայց Ֆաթիմյան վազիր հայազգի Մալիք ալ-Աֆդալը՝ Շահնշահը, կարողացավ հակահարված տալ խաչակիրներին և Աշկելոնը պահել որպես եգիպտական նավատորմի հենակետ: Դեռ ավելին, պահելով իր ձեռքում Աշկելոնը՝ նա անընդհատ սպառնալիքներ էր ստեղծում խաչակիրների համար:

Երուսաղեմի գրավումով խաչակիրները 1099 թ. հիմնեցին Երուսաղեմի թագավորությունը, որը ներառում էր նաև Պաղեստինը և Հարավային Սիրիան: Նրա

առաջին թագավորը դարձավ Գոդֆրեյը: Եդեսիայի կոմսությունը և Անտիոքի իշխանապետությունն ընդունում էին Երուսաղեմի թագավորության գերակայությունը և, փաստորեն, գտնվում նրանից վասալական կախման մեջ: Նման կարգավիճակում հայտնվեց նաև նույն՝ 1099 թ. հիմնված Տրիպոլիի կոմսությունը:

Արաբական բնակչությունը չէր հասկանում, թե ինչ են ուզում իրենցից ֆրանկները, ինչպես նրանք կոչում էին խաչակիրներին, և ինչու են ներխուժել իրենց երկիրը:

Թվում էր, թե խաչակիրների արշավանքները կտրիպեն մուսուլմանական պետություններին՝ Սելջուկյան Մեծ սուլթանությանը, Աբբասյան և Ֆաթիմյան խալիֆայություններին, Ռումի սելջուկյան սուլթանությանը, միավորվել և միասնական ուժերով դիմագրավել իրենց ընդհանուր թշնամուն: Սակայն դա տեղի չունեցավ: Խաչակիրների դեմ ավելի վճռական գտնվեցին Զանգիները:

Զանգիների դինաստիայի հիմնադիրը եղավ Իմադ-ալ-Դին Զանգին՝ մի թուրք ստրուկի որդի, որը դարձել էր զորահրամանատար և ծառայության մեջ էր սելջուկյան սուլթանի մոտ որպես նրա երկու որդիների աթաբեկ՝ դաստիարակ (թուրքերեն աթաբեկ նշանակում է բեկի հայր): Սելջուկյան սուլթանը 1127 թ. նրան նշանակեց Մոսուլի էմիր, որն իր տիրապետությունը հաստատեց նաև Մծբինի, Հարանի, Հալեպի և Սիրիայի այլ մասերի վրա, ապա գրավեց նաև Լիբանանում Բաալբեքը: Նրա առաջին բախումը խաչակիր ֆրանկների հետ տեղի ունեցավ 1144 թ., որն ավարտվեց վերջիններիս պարտությամբ, և նա գրավեց Եդեսիան: Սակայն նա 1146 թ. դավադրաբար սպանվեց, և նրա էմիրությունը բաժանվեց երկու որդիների միջև: Մեծ որդուն՝ Սայֆ ալ-Դին Ղազիին, բաժին ընկան Մոսուլն ու Զազիրան, իսկ կրտսեր որդուն՝ Նուր ալ-Դինին, բաժին ընկան Հալեպը և մնացած տարածքները: Խաչակիրների դեմ մղվող պայքարում առավել կարևոր դերակատարում ունեցավ Նուր ալ-Դինը:

Եդեսիայի կորուստը և խաչակիրների պարտությունը Երուսաղեմի լատինական պետության թագավորին հարկադրեցին օգնության խնդրանքով դիմել Հռոմի պապին, որը 1147-1149 թթ. կազմակերպեց խաչակրաց երկրորդ արշավանքը՝ գերմանական կայսր Կոնրադ Գ-ի և ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս Է-ի գլխավորությամբ:

Նրանք փորձեցին գրավել Դամասկոսը և պաշարեցին քաղաքը: Սակայն պաշարվածներին օգնության շտապեց Նուր ալ-Դինը մեծ զորաբանակով: Խուսափելով նրա հետ ճակատամարտելուց՝ խաչակիրները վերացրին Դամասկոսի պաշարումը և հեռացան:

Դրանից հետո այն, ինչ տեղի ունեցավ, կարելի է համարել Նուր ալ-Դին Զանգիի հաղթարշավը խաչակիրների դեմ: 1151 թ. նա պարտության մատնեց խաչակիրներին, որոնք փորձեցին հետ գրավել Եդեսիան, և գերի վերցրեց նրա կոմսին: Նուր ալ-Դինը 1154 թ. գրավեց Դամասկոսը, որով նրա տիրապետության տակ անցավ Սիրիան իր այն մասով, որը գտնվում էր մուսուլմանների ձեռքում, իսկ 1164 թ. նա հաղթանակ տարավ Անտիոքի իշխան Ռայմոնի դեմ, որն իր դաշնակից Տրիպոլիի իշխանի հետ գերի ընկավ: Նուր ալ-Դին ալ-Զանգիի տիրապետության տակ ան-

ցավ Անտիոքի իշխանապետության մի մասը: Նրա հաղթանակները կասեցրին խաչակիրների հետագա ագրեսիվ գործողությունները Սիրիայում, և երկու կողմերի հակամարտության կենտրոն դարձավ Եգիպտոսը:

Երուսաղեմի թագավոր Ամալրիկը 1163 թ. ներխուժեց Եգիպտոս՝ օգտվելով Ֆաթիմյանների թուլությունից: Նուր ալ-Դինը, որը սկզբում սպասողական դիրք էր գրավել, 1164 թ. Եգիպտոս ուղարկեց մի զորաբանակ՝ իր վասալներից մեկի՝ քուրդ զորահրամանատար Շիրկուհի գլխավորությամբ, որին ուղեկցում էր նրա եղբորորդին՝ երիտասարդ Սալահ ալ-Դինը: Խաչակիրները ստիպված հեռացան Եգիպտոսից: Պայմանագրի համաձայն՝ հեռացավ նաև Շիրկուհը իր զորքերով: Սակայն երբ 1167 թ. Ամալրիկը նորից ներխուժեց Եգիպտոս, ապա Շիրկուհը կրկին մտավ Կահիրե և խաչակիրներին դուրս շպրտեց Եգիպտոսից: Շիրկուհը Ֆաթիմյան խալիֆա ալ-Ադիդի կողմից նշանակվեց Եգիպտոսի վազիր, բայց մահացավ 1169 թ., և վազիրի պաշտոնում նրան փոխարինեց Սալահ ալ-Դինը, որը դարձավ Ֆաթիմյան խալիֆայության գերեզմանափորը և նոր՝ Այյուբյան քրդական դինաստիայի հիմնադիրը:

Խաչակիրների հայտնվելը տարածաշրջանում ծանր ընտրության առջև կանգնեցրեց Կիլիկյան Հայաստանին: Նա՝ որպես քրիստոնյա երկիր, պարտավորված էր զգում օգնելու խաչակիրներին, որոնց զորքերը շատ հաճախ նրա տարածքով էին անցնում: Այդպես վարվեց Թորոս Երկրորդը, որը խաչակիրների հետ միացավ և հանդես եկավ Նուր ալ-Դին Զանգիի դեմ: Իսկ նրան հաջորդած Մլեհը (1170–1175 թթ.), ընդհակառակը, դաշնակցում էր Զանգիների հետ և կարողացավ մի շարք հաղթանակներ տանել խաչակիրների և բյուզանդացիների դեմ: Լինում էին պահեր, երբ Կիլիկյան Հայաստանը փորձում էր չեզոքություն պահպանել, որն այնքան էլ դյուրին գործ չէր: Այդուհանդերձ, խաչակիրների արշավանքները բացասական հետևանքներ ունեցան արաբական երկրների հետ Կիլիկյան Հայաստանի հարաբերությունների վրա, որը հետագայում թանկ արժեցավ նրան:

7. ԱՅՅՈՒԲՅԱՆՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1171–1250 ԹԹ.)

Ինչպես նշվեց, 1169 թ. Սալահ ալ-Դինը դարձավ Ֆաթիմյան Եգիպտոսի վազիր: Նա դարձավ Ֆաթիմյան դինաստիայի տապալողը և քրդական ծագում ունեցող Այյուբյան դինաստիայի հաստատողը Եգիպտոսում: Իսկ ինչպե՞ս էին Այյուբյանները հայտնվել արաբական աշխարհում: Սալահ ալ-Դինի պապը՝ Շազին, ծնվել էր Հայաստանում՝ Դվին քաղաքի մերձակա լեռնային գյուղերից մեկում: Այստեղ էին ծնվել նաև նրա երկու որդիները՝ Նաջմ ալ-Դին Այյուբին և Ասադ ալ-Դին Շիրկուհը: Շազին, մտահոգ իր ապագայով, ընտանիքով հեռանում է Հայաստանից, հաստատվում Իրաքում և նշանակվում Բաղդադից հյուսիս գտնվող Թիկրիտ քաղաքի պարետ, որին այնուհետև այդ պաշտոնում փոխարինում է նրա ավագ որդին՝ Նաջմ ալ-Դին Այյուբին: Հենց այստեղ՝ Թիկրիտում, 1138 թ. ծնվում է Նաջմ ալ-Դին Այյուբիի որդին՝ Սալահ ալ-Դինը: Հետագայում Նաջմ ալ-Դին Այյուբին իր ճակատագիրը կապում է Զանգիների հետ և ծառայության մտնում Նուր ալ-Դին Զանգիի մոտ:


ՍԱԼԱՀՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ
Սալահ ալ-Դինի և նրա զորքերի ճանապարհները
Սալահ ալ-Դինի զորքերի ճանապարհները
Սալահ ալ-Դինի զորքերի ճանապարհները
Սալահ ալ-Դինի


ՍԵՖՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1502-1722թթ.)
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՆՇՈՒՄՆԵՐ
Սեֆյանների (Աղդաբիլի) իշխանության տարածքը
Աղդոյունլուների պետության սահմանները 1490թ. (մինչև տրոհումը առանձին իշխանությունների)
1510թ. նվաճված Սեֆյանների տարածքները, որոնք հետագա տասանամյակներին զիջվեցին Օսմանյան կայսրությանը
Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև 1555թ. մայիսի 29-ին կնքված Ամասիայի պայմանագրով հաստատված սահմանագիծը
Կարսի «չեզոք» գոտին ըստ Ամասիայի պայմանագրի
1578-1580թթ. Օսմանյան կայսրության կողմից զավթված տարածքները
1590թ. Շահ-Աբաս I-ի կողմից Օսմանյան կայսրությանը զիջված տարածքների սահմանը
1639թ. մայիսի 17-ին Կասրե-Շիրինում կնքված պայմանագրով Սեֆյան Պարսկաստանի և Օսմանյան կայսրության միջև հաստատված սահմանագծի ծայր հյուսիսային հատվածը
1639թ. պայմանագրով որոշված «չեզոք» գոտիները
Պորտուգալացիների տիրույթները Հարավային Իրանում (1622-ից՝ Սեֆյան տերության կազմում)
Սեֆյան Պարսկաստանի սահմանները և տարածքը XVIդ. 2-րդ կեսին
Սեֆյան Պարսկաստանի արևելյան և հյուսիս-արևելյան սահմանները 1722թ.
XVIդ.-XVIIդ. սկզբին Սեֆյանների դեմ բռնկված ազատագրական շարժումների շրջանները
ՄԵԾ ՄՈՂՈԼԻ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ
Պետություններ, պետական կազմավորումներ
ԳՈՒՄԱ
Երկրամասեր, երկրներ
Քարտեզում թվերով նշված են
1. Մազանդերան
2. Գորգան (Կասպ)
Մասշտաբ 1:22 000 000
2016 © Քարտեզի հեղինակ՝ Գեղամ Բաղալյան
Քարտեզագիր՝ Մարտին Մարտիրոսյան

ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ 867-1070 թթ.
2016 © Քարտեզի հեղինակ՝ Գեղամ Բաղալյան
Քարտեզագիր՝ Մարտին Մարտիրոսյան
Մասշտաբ 1:20 000 000
ԽԱԶԱՐԱԿԱՆ ԽԱՂԱՆԹՈՒԹՅՈՒՆ (մինչև 966թ.)
ՍԵՎ ԾՈՎ (ՊՈՆՏՈՍ)
ԱՐԱԲԱԿԱՆ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՍՍՀՄ
ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԵՎ ՆՇՈՒՄՆԵՐ
Բյուզանդական կայսրության սահմանները և տարածքը մինչև 867թ.
Կայսրության տարածքային նվաճումները տարեթվերի նշումով
Պավլիկյան շարժման տարածման շրջանները (VIII-IXդդ.)
Բյուզանդացիների և Համդանյանների միջև գոյություն ունեցող տարածքային հավակնությունների շրջանը IXդ. կեսերին
Բյուզանդական կայսրության սահմանները 1064թ.
Բյուզանդական կայսրության սահմանները և տարածքը 565թ.
Կայսրությանը ենթակա իշխանությունները XIդ. 2-րդ կեսին


ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԸ XI-XIIդդ.
Մասշտաբ 1:15 000 000
2016 © Քարտեզի հեղինակ՝ Դեղամ Բաղալյան
Քարտեզագիր՝ Մարսելի Մարսելիսյան


ՎՐՈՍ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XII-XIII դդ.
Մասշտաբ 1:7 000 000
2016 © Քարտեզի հեղինակ՝ Դեղամ Բաղալյան
Քարտեզագիր՝ Մարսելի Մարսելիսյան




ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVI-XVII դդ.
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
Օսմանի բէյության սահմանները XIVդ. սկզբին
Օսմանյան կայսրության սահմանները և տարածքը 1502թ.
Օսմանյան կայսրության տարածքային աճը XVIդ.
Օսմանյան կայսրության տարածքային աճը XVIդ.
Օսմանյան կայսրության և Սեֆյան Պարսկաստանի միջև հաստատված սահմանագիծը 1639թ. Կասրե-Շիրինի պայմանագրով
Օսմանյան կայսրության սահմաններն ամենարնդարձակ ժամանակաշրջանում
Օսմանյան նահանգների (էյալեթների) մոտավոր սահմանները XVIդ. կեսին
Օսմանյան կայսրությանը ենթակա կիսանկախ իշխանություններ և երկրներ
Օսմանյան կայսրության տարածքային կորուստները մինչև 1683թ.
Կայսրության մայրաքաղաք
Օսմանի բէյության կենտրոնը
Կիսանկախ իշխանությունների կենտրոններ
Նահանգների կենտրոններ
Այլ բնակավայրեր
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ
ՌՈՒՍԱ-ԱԼ-ԽԱԼԻՖԱՅԻ ՄԱՆԱՊԱՏ
ԵԹՈՊԻԱ
ՍԱՍ ԾՈՎ
ՄԱՍ ԾՈՎ
ՄԱՍ ԾՈՎ
ՍԱՍ ԾՈՎ
ՍԱՍ ԾՈՎ
Ս



Այդ հանգամանքը Սալահ ալ–Դինի համար ուղի հարթեց դեպի ապագա մեծ քաղաքականություն:

1171 թ. մահացավ Ֆաթիմյան վերջին խալիֆա ալ–Ադիդը, սակայն վազիր Սալահ ալ–Դինը թույլ չտվեց, որ նրա փոխարեն որևէ մեկը գահ բարձրանա: Այնուհետև նրա կարգադրությամբ երկար դադարից հետո՝ Կահիրեի մզկիթում ուրբաթօրյա խուտբայի ժամանակ, հիշատակվեց Աբբասյան խալիֆա ալ–Մուսթադիի անունը: Դա նշանակում էր Ֆաթիմյանների վերջնական տապալում և Եգիպտոսի վերադարձ սուննիզմին: Իր այդ քայլով Սալահ ալ–Դինը շահեց բոլոր Աբբասյանների և սուննիների համակրանքն ու աջակցությունը: 1174 թ.՝ Նուր ալ–Դին Զանգիի մահից հետո, որի վասալն էր ձևականորեն համարվում Սալահ ալ–Դինը, նա Եգիպտոսը հռչակեց անկախ պետություն, իսկ այնուհետև իր տիրապետությանը կցեց Սիրիան, Եմենը, Հիջազը՝ Մեքքա և Մադինա քաղաքներով: Այսպիսով՝ թատերաբեմում հայտնվեց բավականին հզոր մի պետություն, որի կազմի մեջ մտնում էին Եգիպտոսը, Մաղրիբը, Նուբիան, Կենտրոնական Սիրիան՝ Դամասկոս և Հալեպ քաղաքներով, Արևմտյան Արաբիան, Եմենը և Պաղեստինը: Աբբասյան խալիֆան 1175 թ. հրովարտակով Սալահ ալ–Դինին ճանաչեց նշյալ տարածքների տիրակալ: Սալահ ալ–Դինը վերցրեց «Ալ–Մալիք ալ–Նասիր ալ–Սուլթան» տիտղոսը, որը նշանակում էր «Հաղթական թագավոր և սուլթան»: Իր տիտղոսի մեջ միավորելով թագավոր՝ մալիք, և սուլթան անունները՝ նա ցանկանում էր ընդգծել իր առանձնահատուկ կարգավիճակը մուսուլմանական պետությունների համակարգում:

Սալահ ալ–Դինն իր գլխավոր խնդիրը համարեց պայքարը խաչակիրների դեմ և գրավյալ մուսուլմանական տարածքների հետ նվաճումը: Նա այստեղ նույնպես հասավ տպավորիչ հաղթանակների: Ֆրանկների դեմ նրա լայնածավալ պայքարը վերսկսվեց 1187 թ. և շարունակվեց մինչև նրա մահը: 1187 թ. հուլիսի 1–ին Սալահ ալ–Դինի զորքերը գրավեցին Տիբերիան, ապա նաև Հիթթինը: Այդ ճակատամարտում գերի ընկավ խաչակիրների 20 հազարանոց բանակը Երուսաղեմի թագավոր Գի Լուզինյանի հետ, որը դուռ բացեց Երուսաղեմի գրավման համար: Եվ 1187 թ. հոկտեմբերի 2–ին Երուսաղեմն անձնատուր եղավ Այյուբյան սուլթանին, ինչը նշանակում էր Երուսաղեմի թագավորության կործանում: Երուսաղեմի անկումից հետո Սալահ ալ–Դինն առանց դժվարության գրավեց Սիրիայում և Պաղեստինում խաչակիրների տիրապետության տակ գտնվող բազմաթիվ քաղաքներ, նավահանգիստներ և այլ բնակավայրեր, այդ թվում՝ Լաթաքիան:

Խաչակրաց երրորդ արշավանքի ժամանակ՝ 1189–1192 թթ., որը գլխավորեցին Գերմանիայի կայսր Ֆրիդրիխ Շիկամորուսը, Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ Ավգուստը և Անգլիայի թագավոր Ռիչարդ Առյուծասիրտը, խաչակիրները երկամյա պաշարումից հետո գրավեցին Ակրը, սակայն ավելին անել կամ սասանել Սալահ ալ–Դինի դիրքերը չկարողացան:

Այդ հակամարտությունն ունեցավ շատ յուրօրինակ վերջավորություն: Անգլիական թագավոր Ռիչարդ Առյուծասիրտն իր քրոջը կնության առաջարկեց Սալահ ալ–Դինի եղբորը՝ Մալիք ալ–Ադիլին: Միաժամանակ անգլիական միապետն առա-

ջարկեց որպես հարսանեկան նվեր նորապսակներին տալ Երուսաղեմը և այդկերպ վերացնել հակամարտությունը քրիստոնյաների և մուսուլմանների միջև: Այդ առաջարկը Սալահ ալ-Դինն ընդունեց, և 1192 թ. մայիսի 29-ին կայացավ նրանց ամուսնությունը: Նույն թվականի նոյեմբերի 2-ին ստորագրվեց հաշտության պայմանագիրը: Կողմերը պայմանավորվեցին, որ առափնյա մասերն անցնում են խաչակիրների, իսկ ներքին, ցամաքային մասերը՝ մուսուլմանների տնօրինության տակ, Սուրբ քաղաք՝ Երուսաղեմ ուխտագնացության եկողների համար չպետք է ստեղծվեր որևէ խոչընդոտ և այլն: 1193 թ. Սալահ ալ-Դինը մահացավ:

Նրա մահից հետո սկսվեց Այյուբյան սուլթանության թուլացումը, և դինաստիայի ներսում ծայր առավ պայքար իշխանության համար: Այյուբյանները պառակտվեցին, և սուլթանությունը, փաստորեն, բաժանվեց երկու մասի: Մի ճյուղն իշխում էր Եգիպտոսում, Միջագետքում և Դամասկոսում, իսկ մյուս ճյուղը՝ Եմենում և Հյուսիսային Սիրիայում:

Այյուբյանների պառակտումը և տկարացումը նպաստավոր պայմաններ ստեղծեցին խաչակիրների համար, որոնց հաջողվեց հետ նվաճել Բեյրութը, Աշկելոնը, Սաֆադը, Տիբերիան, իսկ 1229 թ.՝ նաև Երուսաղեմը: XIII դարի 40-ական թվականներին Այյուբյան սուլթանությունն արդեն հոգեվարքի մեջ էր: 1249 թ. մահացավ սուլթան Սալիհը, բայց նրա այրին՝ Շաջար ալ-Դուրրը, որը, ըստ Ֆ. Հիթթիի, «ծագումով թուրք կամ հայ ստրկուհի էր», երեք ամիս գաղտնի պահեց իր ամուսնու մահվան լուրը՝ սպասելով ամուսնու որդու՝ Մուազզամ Թուրան Շահի վերադարձին Միջագետքից, որի կառավարիչն էր նա[16]: Այդ ընթացքում Շաջար ալ-Դուրրն էր հրամաններ արձակում Սալիհի անունից՝ կեղծելով նրա ստորագրությունը: Նա այդ քայլին դիմեց զորքը հնազանդության մեջ պահելու համար: Մուազզամ Թուրան Շահը, վերադառնալով Եգիպտոս, ստանձնեց սուլթանի պարտականությունները, սակայն չկարողացավ ճիշտ կողմնորոշվել ուժերի նոր դասավորության մեջ արքունիքում և երկրում: Նա հակասությունների մեջ մտավ իր հոր գվարդիայի հետ, որը կազմված էր թուրք, այսպես կոչված՝ բահրի մամլուքներից, ապա նաև իր խորթ մոր՝ Շաջար ալ-Դուրրի հետ: Նա պետության բարձր պաշտոններից հեռացրեց մամլուքներին և Շաջար ալ-Դուրրի կողմնակիցներին ու նրանց փոխարեն նշանակեց իր մարդկանց: Բահրի մամլուքները Բայբարսի գլխավորությամբ ապստամբեցին և անցան Շաջար ալ-Դուրրի կողմը: Շաջար ալ-Դուրրի համաձայնությամբ 1250 թ. Սուլթան Մուազզամ Թուրան Շահը տապալվեց և Բայբարսի հրամանով գլխատվեց: Սուլթան հռչակվեց Շաջար ալ-Դուրրը՝ կին, նախկին ստրկուհի և հարճ: Նա իրեն հայտարարեց «Մուսուլմանների թագուհի»:

Այյուբյանների դինաստիան տապալվեց 1250 թ., և հաստատվեց մամլուքների դիկտատուրան:

[16] Հակառակ Ֆ. Հիթթիի կարծիքի՝ արաբ պատմաբան Ամին Մաալուֆը կարծում է, որ նա հայուհի էր՝ գրելով, որ Շաջար ալ-Դուրրը (արաբերեն նշանակում է «Դեղձի ծառ») «Հայկական ծագումով կին ստրկուհի էր, գեղեցկուհի և հնարամիտ» – Amin Maalouf, The Crusades Through Eyes of Arabs, New York, 1985:

8. ՄՈՆՂՈԼՆԵՐԸ ԵՎ ԱԲԲԱՍՅԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Մոնղոլները քաղաքական ասպարեզ իջան XI դարի վերջերին, իսկ XIII դարի սկզբներին մոնղոլական տարբեր ցեղեր միավորվեցին մեկ միության մեջ, որը գլխավորեց ցեղապետերից մեկը՝ Թեմուչինը: 1206 թ. ցեղերի ներկայացուցիչների համաժողովը՝ կուրուլտայը, նրան ընտրեց թագավոր, և նա կոչվեց Չինգիզ խան: Նա եռանդուն, խելացի, բայց դաժան և նենգ զորահրամանատար էր, որը շատ կարճ ժամանակամիջոցում կարողացավ մոնղոլական ցեղային միությունը վերածել հզոր ռազմական պետության, որն ահ ու սարսափ էր տարածում ամբողջ աշխարհում: Չինգիզ խանն իր կառավարման տարիներին (1206–1227 թթ.) նվաճեց Հյուսիսային Չինաստանը, խորեզմշահերի տիրույթների մեծ մասը, Միջին Ասիան և այլ երկրներ: Մոնղոլական հորդաներն իրենց ճանապարհին ամեն ինչ ավերում, հող ու մոխիր էին դարձնում, անողոքաբար սրի քաշում մարդկանց, կողոպտում, թալանում և հրկիզում իրենց գրաված բնակավայրերը: Հերաթի 100 հազարանոց բնակիչներից մոնղոլների սրից փրկվեց միայն 40 հազար մարդ, Խորեզմը հիմնահատակ կործանվեց. կոտորելով Բուխարայի բնակիչներին՝ Չինգիզ խանը նրա հռչակավոր մզկիթը վերածեց ախոռի: Նրա մահից հետո նույն քաղաքականությունը վարում էին հետնորդները: Նրանք, նորանոր տարածքներ գրավելով և առաջ շարժվելով դեպի արևմուտք, աստիճանաբար մոտենում են Բաղդադին: Աբբասյան վերջին չորս խալիֆաները, փակված Բաղդադում, ահ ու դողի մեջ էին՝ ի վիճակի չլինելով որևէ քայլ ձեռնարկել պաշտպանվելու համար:

1251 թ. մոնղոլական գահին որպես մեծ խան նստեց Չինգիզ խանի թոռը՝ Մունգքեն, որն իր առջև կոնկրետ խնդիր դրեց գրավելու Բաղդադը և վերացնելու Աբբասյան խալիֆայությունը: Նա այդ դժվար խնդիրը հանձնարարեց իր եղբորը՝ Հուլավու (Հուլաղու) խանին, որը, 1253 թ. մի մեծ զորաբանակի գլուխն անցած, դուրս եկավ Մոնղոլիայից և շարժվեց Բաղդադի ուղղությամբ: Ճանապարհին լուծելով այլևայլ խնդիրներ՝ Հուլավու խանը մոտեցավ Բաղդադին և 1257 թ. սեպտեմբերին վերջնագիր ուղարկեց Աբբասյան խալիֆա Մուսթասիմին՝ պահանջելով նրանից անձնատուր լինել: Նա միաժամանակ պահանջեց քանդել Բաղդադի արտաքին պատերը: Դա նման չէր նախկին նվաճողների պահանջներին, որոնք, գրավելով Բաղդադը, խալիֆային գահընկեց չէին անում, այլ նրա հրովարտակով ամրապնդում էին իրենց կարգավիճակը՝ խալիֆային թողնելով հոգևոր առաջնորդի գործառույթները: Խալիֆայի պատասխանը խուսափողական էր, որը, սակայն, մոնղոլական զորավարն ընկալեց որպես իր վերջնագրի մերժում:

1258 թ. հունվարին մոնղոլական զորքերն արդեն Բաղդադի դարպասների մոտ էին: Միայն այդ ժամանակ խալիֆան փորձ արեց բանակցությունների մեջ մտնելու Հուլավուի հետ, բայց արդեն ուշ էր: Մոնղոլական խանը հրաժարվեց խալիֆայի հետ բանակցելուց: Նույն թվականի փետրվարի 10-ին մոնղոլական զորքերը ներխուժեցին Բաղդադ: Աբբասյանների մայրաքաղաքն ավերվեց և հրկիզվեց: Հինգ օր քաղաքը թալանվում էր, և կողոպուտը դադարեցվեց, երբ այլևս բան չէր մնացել թալանելու: Գերի ընկած խալիֆային Հուլավու խանը հրամայեց ցույց տալ իր թաքց-

ռած գանձերը, ինչն էլ նա հնազանդորեն կատարեց: Ականատեսները ցնցված էին խալիֆայի անհամար ոսկեղենից, ակնեղենից և թանկարժեք քարերից, որոնք բոլորը մոնղոլական խանը բռնագրավեց: 1258 թ. փետրվարի 20–ին Աբբասյան վերջին խալիֆա ալ–Մուսթասիմը մահապատժի ենթարկվեց: Նրա հետ սպանվեցին Աբբասյան ընտանիքի բոլոր արու անդամները, պաշտոնյաները, կադիները՝ թվով 300 մարդ: Բաղդադի փողոցները ծածկված էին անհամար դիակներով, որոնք թաղող չկար: Դիակների նեխումից տարածված գարշահոտությունը պատել էր քաղաքը, և Հուլավու խանը հարկադրված էր մի քանի օրով հեռանալ Բաղդադից: Ավերակների վերածված և հրկիզված Բաղդադը դադարեց մայրաքաղաք լինելուց և հետագա դարերում գավառական մակարդակի անշուք քաղաքից այն կողմ չկարողացավ բարձրանալ:

1258 թ. ավելի քան հինգ դար գոյատևած Աբբասյան խալիֆայության կործանումը և վերացումը դարձան պատմական իրողություն:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՄԱՄԼՈՒՔՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍՈՒՄ ԵՎ ՍԻՐԻԱՅՈՒՄ (1250–1517 ԹԹ.)

1. ՄԱՄԼՈՒՔՆԵՐԸ

Աբբասյան խալիֆաներն իրենց գահակալման տարիներին մի կարևոր փոփոխություն մտցրին իրենց ռազմական ուժերում, մասնավորապես գվարդիայում, որի վնասակար հետևանքների մասին նրանք անգամ չէին կարող երևակայել: Նրանց բանակը, որը հիմնականում կազմված էր արաբներից, աստիճանաբար իր տեղը զիջեց օտար վարձկաններից համալրվող բանակին: Արտակարգ կերպով բարձրացավ խալիֆայի անձնական գվարդիայի դերը: Գվարդիականները հիմնականում գերի ընկած կամ ստրկավաճառական շուկաներում գնված ստրուկներ էին, մասնավորապես Միջին Ասիայից և Իրանից: Հետագայում նրանց ձեռքբերման աշխարհագրությունն ընդլայնվեց:

Այս ստրուկ գերիները կոչվում էին «մամլուքներ» կամ «ղուլամներ», որն իմաստային առումով հաճախ թարգմանվում է «ծառաներ» և «պատանիներ»: Ավելի շատ տարածված է «մամլուքն» ընկալել որպես այսինչի սեփականությունը, նրան պատկանողը, անգամ ստրուկը: Հետագայում, ի հավելումն Միջին Ասիայի և Իրանի, մամլուքներ էին ձեռք բերվում, գլխավորապես պատանի հասակում, թուրքերից, ղփչաղներից, քրդերից, հույներից, սլավոններից, վրացիներից, եղել են դեպքեր նաև հայերից և այլ ազգություններից:

Մամլուքներից բանակը և գվարդիան համալրելու ավանդույթն Աբբասյաններից անցավ Ֆաթիմյաններին, Այյուբյաններին և այլ դինաստիաների: Ֆաթիմյաններն իրենց մամլուքներին հավաքագրում էին եվրոպացիներից՝ իտալացիներից, հույներից և սլավոններից: Այդ պատճառով մամլուքներին համարում են սպիտակամորթ ստրուկներ:

Սովորաբար մամլուքներին հավաքագրում էին երեխա և պատանի հասակում՝ նվաճված երկրի բնակչությունից, գերի վերցնելով, գնելով կամ ստանալով հարկի դիմաց որպես դեղիրմե: Այդ մանկահասակներին անջատում էին ծնողներից և հարազատ ազգային միջավայրից ու տանում խալիֆաների, սուլթանների և էմիրների մոտ ծառայության: Նրանց թլփատում, իսլամացնում էին և դաստիարակում խալիֆային կամ սուլթանին անձնական անսահման նվիրվածությամբ ծառայելու ոգով, վարժեցնում ռազմական գործին և նրանցից պատրաստում հիանալի, բայց դաժան ու արնախում զինվորականներ: Միայն դրանից հետո մամլուքին ծառայության էին վերցնում բանակում և խալիֆայական գվարդիայում, որի մասին տրվում էր հատուկ

վկայական: Մտնելով խալիֆայի կամ սուլթանի գվարդիան՝ մամլուքները ազատություն էին ձեռք բերում, կարող էին դառնալ զորահրամանատարներ, էմիրներ, նահանգների կառավարիչներ, բարձր դիրք գրավել արքունիքում և անգամ դառնալ սուլթան: Նրանք ստանում էին ամուսնանալու իրավունք, և նրանց ընտանիքի անդամները համարվում էին ազատ մուսուլմաններ:

Համանման գործընթաց տեղի ունեցավ Եգիպտոսում Այյուբյանների տիրապետության շրջանում, մանավանդ այն ժամանակ, երբ թուլացան դինաստիայի դիրքերը: Հենց մամլուքները 1250 թ. սպանեցին Այյուբյան վերջին սուլթան Մուազզամ Թուրան Շահին և մամլուքյան Բահրիները գրավեցին իշխանությունը:

Արաբների պատմության մեջ սկսվեց մամլուքների կառավարման շրջանը, որն ընդգրկում է 1250–1517 թթ.:

2. ԲԱՀՐԻ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆԸ (1250–1390 ԹԹ.)

Առաջին շրջանը Բահրի մամլուքների կառավարման շրջանն է, որը տևեց մոտ մեկուկես դար: «Բահրի մամլուքներ» անունը կապված է այն իրողության հետ, որ նրանց կենտրոնատեղին Նեղոս գետի՝ արաբերեն «Բահր ալ-Նիլի» կղզիներից մեկն էր: Էթնիկական առումով Բահրի մամլուքները հիմնականում թուրքեր և մոնղոլներ էին: Հենց նրանք Բայբարսի հրամանատարությամբ տապալեցին Այյուբյանների դինաստիան և Շաջար ալ-Դուրրին հռչակեցին մուսուլմանների թագուհի: Սակայն նրան թագուհի հռչակելը դժգոհությամբ ընդունեցին արաբները և մուսուլման ղեկավարները, այդ թվում և Աբբասյանների խալիֆա ալ-Մուսթասիմը: Նա դեմ էր, որ մուսուլմանական պետության ղեկավարը լինի կին և այն էլ իր հարեմի նախկին հարճերից մեկը, որին նա ժամանակին որպես հարճ նվիրել էր Այյուբյան սուլթան Սալիհին: Նա մամլուքներից պահանջեց հեռացնել այդ հարճին և պետության ղեկավար ընտրել տղամարդու: Շաջարի նշանակումից դժգոհ էր նաև Այյուբյանների սիրիական ճյուղը, որը դեռևս նշանակալի ազդեցություն ուներ Դամասկոսում և Հալեպում:

Ստեղծված պայմաններում Շաջարը մոտ երեք ամիս կառավարելուց հետո հրաժարական տվեց, և մամլուքները 1250 թ. Եգիպտոսի նոր սուլթան ընտրեցին իրենց հայտնի զորավարներից մեկին՝ Այբակին, որը և հանդիսացավ Բահրիների դինաստիայի հիմնադիրը: Սակայն հնարամիտ Շաջարն ամուսնացավ Այբակի հետ, որով և սկսվեց նրանց համատեղ կառավարումը:

Ճգնաժամից դուրս գալու այդ տարբերակը ոչ բոլորին բավարարեց, և հարաբերությունները մամլուքների ղեկավարության ներսում մնում էին լարված: Սրվեցին Այբակի հարաբերությունները նաև իր կնոջ՝ Շաջարի հետ, մանավանդ այն բանից հետո, երբ վերջինիս հայտնի դարձավ, որ Այբակն ուզում է ամուսնանալ մեկ այլ կնոջ հետ: Բայց հնարամիտ և վճռական Շաջարն այն կինը չէր, որ հենց այնպես զիջեր: Նրա հավատարիմ ստրկուհիները 1257 թ. Կահիրեի միջնաբերդի բաղնիքում իրենց փայտե կոշիկներով սպանեցին Այբակին, իսկ դին վայր նետեցին միջնաբերդի աշտարակից: Եգիպտոսի սուլթան դարձավ մամլուք Բայբարս Ա-ը (1260–1277 թթ.):

Բահրի մամլուքները Եգիպտոսում իշխանությունն իրենց ձեռքում պահեցին մոտ 140 տարի՝ իրենց տիրապետությունը տարածելով նաև Սիրիայի, Պաղեստինի, Հիջազի և հարակից տարածքների վրա: Նրանք կարողացան խաչակիրներից հետ նվաճել այն բոլոր տարածքները, որ նրանց տիրապետության տակ էին: Նրանք կարողացան նաև հակահարված տալ մոնղոլներին և կանխել Եգիպտոսի գրավումը նրանց կողմից: Այդ առումով սկզբունքային նշանակություն ունեցավ 1260 թ. մամլուքների հաղթանակը մոնղոլների դեմ Այն Ջալուտի մոտ, որի շնորհիվ մամլուքների տիրապետությունը տարածվեց Սիրիայի վրա:

Բահրի մամլուքներն իրենց հեղինակությունը բարձրացնելու նպատակով պատսպարեցին Հուլաղու խանի սրից պատահականորեն ճողոպրած Աբբասյան ընտանիքի անդամներից մեկին, որը վերջին խալիֆայի հորեղբայրն էր: Բայբարս Ա-ը նրան Սիրիայից հրավիրեց Եգիպտոս և 1261 թ. մեծ հանդիսավորությամբ օծեց որպես խալիֆա ալ-Մուստանսիր: Նա և նրան հաջորդած բոլոր խալիֆաները զուրկ էին որևէ իրական իշխանությունից և ամբողջովին կախված էին մամլուքյան սուլթաններից: Պատահականություն չէ, որ նրանց անվանում էին «թոշակառու սուլթաններ»:

Խալիֆա ալ-Մուստանսիրը հատուկ հրովարտակով Բայբարսին հաստատեց Եգիպտոսի, Սիրիայի, Դիարբեքիրի, Հիջազի, Եմենի և մերձեփրատյան տարածքների սուլթան: Խալիֆաները Կահիրեում մնացին մինչև XVI դարի սկզբները՝ օսմանների կողմից Եգիպտոսի և արաբական մյուս երկրների գրավումը:

Բահրի մամլուքները մեծ վտանգ էին ներկայացնում Կիլիկիայի հայկական պետության համար, մանավանդ, երբ նրանք որոշեցին վերջնականապես դուրս մղել խաչակիրներին և ազատագրել բոլոր մուսուլմանական տարածքները: Այն բանից հետո, երբ նրանք գրավեցին Եդեսիայի և Տրիպոլիի կոմսությունները, Անտիոքի իշխանապետությունը, Երուսաղեմի թագավորությունը, միջերկրածովյան առափնյա բոլոր մեծ ու փոքր քաղաքները, ամրոցները և բնակավայրերը, ինչպես Բեյրութը, Սայդան, Տյուրոսը, Ակրը և այլն, նրանց անմիջական հարևանությամբ մնաց միայն մեկ քրիստոնեական պետություն՝ Կիլիկիայի հայկական թագավորությունը: Մամլուքների աչքում հայկական պետությունը ներկայանում էր որպես մի պետություն, որը ժամանակին օժանդակել էր խաչակիրներին մուսուլմանների դեմ ուղղված նրանց արշավանքների ժամանակ:

Հարկ է հաշվի առնել մի կարևոր հանգամանք ևս: Տարածաշրջանում մոնղոլների հայտնվելուց հետո Կիլիկիայի հայ թագավորներին հաջողվել էր կարգավորել իրենց հարաբերությունները նրանց հետ և կանխել ահարկու մոնղոլների ներխուժումը Կիլիկիա: Այդ հարկադրյալ դաշնակցության պայմաններում հայ զորաբանակները 1299–1303 թթ. մասնակցել էին մամլուքների դեմ ուղղված մոնղոլների արշավանքներին: Ահա սրանք էին այն պատճառները, որոնք ընկած էին հայ-մամլուքյան հարաբերությունների լարվածության հիմքում:

Հայ գահակալները գիտակցում էին Եգիպտոսի հետ հարաբերությունները կարգավորելու անհրաժեշտությունը և ձեռնարկում համապատասխան քայլեր: Դրանում շահագրգռված էին նաև մամլուքները, քանի որ նրանց վիճակն էլ ծանր էր, և նրանք

հաճախ հայտնվում էին անելանելի դրության մեջ: Այդ առումով բարձր գնահատականի են արժանի մամլուքյան սուլթան ալ-Նասիրիի (1298–1308, 1309–1340 թթ.) և Հայոց գահի խնամակալ իշխան Օշին Պայլի գործադրած ջանքերը, որոնց արդյունքում 1323 թ. Եգիպտոսի և Կիլիկիայի Հայոց թագավորության միջև կնքվեց հաշտության և համագործակցության մասին պայմանագիր: Հայոց պետությունը պարտավորվում էր Եգիպտոսին տարեկան վճարել 120 հազար դիրհամ հարկ: Եգիպտական սուլթանը պարտավորվում էր վերականգնել մամլուքների կողմից ավերված բոլոր հայկական քաղաքներն ու ամրոցները: Պայմանագրի կետերից մեկը վերաբերում էր Կիլիկիայի հարաբերություններին եվրոպական երկրների հետ, որում ամրագրված էր, որ եվրոպական պետությունների հետ Կիլիկյան Հայաստանի ամեն մի բանակցություն կդիտվի որպես եգիպտա-հայկական պայմանագրի խախտում և Եգիպտոսի դեմ ուղղված թշնամական գործողություն:

Հայ-եգիպտական պայմանագիրը որոշ ժամանակ խաղաղություն բերեց Կիլիկյան Հայաստանին և նպաստեց նրա անվտանգության ապահովմանը: Կիլիկյան Հայաստանի բնակչության մեծ մասը դեմ էր խաչակրաց պատերազմներին մասնակցելուն և ցանկանում էր հաշտ ապրել իր մուսուլման հարևանների հետ: Սակայն այդ պայմանագիրն անհանգստացրեց Հռոմի պապին և նրա կողմնակիցներին Հայաստանի ներսում: Նրանց դավադրությունների զոհ դարձան Օշին Պայլը և Հայոց թագավոր Լևոն Դ-ը: Դա հանգեցրեց հարաբերությունների սրմանը Եգիպտոսի և Կիլիկյան Հայաստանի միջև: Բահրի մամլուքները ներխուժեցին Կիլիկիա և համառ դիմադրությունից հետո՝ 1375 թ., գրավեցին մայրաքաղաք Սիսը: Դա համարվում է Կիլիկիայի հայկական թագավորության անկման տարեթիվը:

3. ԲՈՒՐՋԻ ՄԱՄԼՈՒՔՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԸ (1390–1517 ԹԹ.)

Տարաձայնությունները և ներքին պայքարը մամլուքների միջև իշխանության համար շարունակվում էին: 1390 թ. Բուրջի չերքեզական մամլուք զորահրամանատար Բարկուկը տապալեց Բահրի մամլուքների դինաստիան, և իշխանությունն անցավ Բուրջիների դինաստիային:

Բուրջի մամլուքները կենտրոնացված էին Կահիրեի ամրոցում՝ Բուրջում: Այստեղից էլ՝ նրանց անվանումը: Այդ դինաստիան մինչև 1517 թ.՝ մինչև իր անկումը, ունեցավ 23 սուլթան, որոնք շատ վատ հիշողություն են թողել իրենց դաժանությամբ, ըստմնելի արարքներով, նենգությամբ, ուխտադրժությամբ: Նրանցից քչերն են գրել-կարդալ իմացել, մեծ մասն անգամ Կորանի որևէ սուրան չի կարողացել անսխալ արտասանել: Բուրջիների կառավարման համակարգն անկայուն էր, սուլթաններն արագորեն փոխարինում էին մեկը մյուսին գահին՝ հիմնականում դավադրությունների, հեղաշրջումների և սպանությունների ուղիով: Նրանք միմյանց հետ մրցում էին դաժանությամբ և անմարդկայնությամբ: Այսպես, օրինակ՝ սուլթան Բարսբայը (1422–1438 թթ.) իր երկու անձնական բժիշկներին գլխատեց այն բանի համար, որ նրանք չէին կարողանում իր ցավերը թեթևացնել, իսկ սուլթան Քաիտ-

բայը իր ալքիմիկոս Իբն ալ-Մարշուշին կուրացրեց և լեզուն կտրեց նրա համար, որ նա խարամը չէր կարողանում ոսկու վերածել:

Բուրջիների ժամանակ կաշառակերությունը, դրամաշորթությունը և գանձագողությունը համակել էին կառավարող ամբողջ վերնախավին: Ահավոր էր նրանց տնտեսական քաղաքականությունը, որը ժողովրդին հասցրել էր աղքատության և հուսահատության: Դրամի մոլուցքով տարված սուլթանները խլում էին հարստացած մարդկանց ունեցվածքը: Անելանելի վիճակում հայտնված քոչվորները հարձակվում էին հողագործ ֆելլահների վրա և խլում նրանց անասուններն ու կուտակած մթերքները: Սովը դարձել էր սովորական երևույթ: Այն ուղղակի «հնձում» էր մարդկանց: Բուրջիները որևէ հաջողություն չունեցան նաև արտաքին հարաբերություններում: Նրանք չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ Լենկ Թեմուրին, որը 1380 թ. գրավեց Բաղդադը, ապա ամբողջ Միջագետքը: Թիկրիտում և Դամասկոսում Լենկ Թեմուրը մարդկանց գանգերից կառուցեց բուրգեր:

Շուտով ասպարեզում հայտնվեցին օսմանյան թուրքերը, որոնք 1516 թ. ներխուժեցին արաբական երկրներ: 1517 թ. հունվարի 22-ին Կահիրեից ոչ հեռու տեղի ունեցած վճռական ճակատամարտում թուրքերը ջախջախեցին մամլուքների վերջին սուլթան ալ-Աշրաֆ Թուման բեյի զորքերին:

Դա մամլուքների սուլթանության կործանումն էր:

4. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XII–XV ԴԱՐԵՐՈՒՄ

Հայաստանին հարակից արաբական երկրների սոցիալ-տնտեսական հարաբերություններում XII–XV դարերում նկատվեցին զգալի տեղաշարժեր, վերելքներ և անկումներ: Դրանք ցայտունորեն դրսևորվեցին հատկապես այն երկրամասերում, որոնք գտնվում էին Այյուբյանների անմիջական տիրապետության ներքո:

Այյուբյանները շատ բան վերցրին սելջուկներից և Ֆաթիմյաններից, հատկապես պետական կառավարման բնագավառում: Նրանք Սելջուկյան սուլթանությունից որդեգրեցին պետության կառավարման մի համակարգ, որը կոչվում է ընտանեկան կառավարման համակարգ: Ըստ այդմ՝ երկրի բոլոր բարձր պաշտոնները կարող էին գրավել միայն տվյալ դինաստիայի, այսինքն՝ ընտանիքի գլխավոր անդամները: Թե՛ սելջուկները և թե՛ Այյուբյանները այդկերպ ցանկանում էին պետության կառավարմանը տալ ընտանեկան բնույթ՝ չցանկանալով իշխանությունը կիսել ընտանիքին չպատկանող ուժերի հետ և այդ ուղիով պահպանել միասնությունը կառավարման վերին կառույցներում ու իրենց ապահովագրել հնարավոր մարտահրավերներից:

Ղեկավարվելով այս սկզբունքներով՝ Սալահ ալ-Դինն իր հորը՝ Նաջմ ալ-Դին Այյուբյանին, տվեց հարկերը Ալեքսանդրիա և Դամիյաթ նավահանգիստներից և Բուհայրա նահանգից հավաքելու պաշտոնը, իսկ իր եղբորը՝ Շամս ալ-Դին Թուրան Շահին, նշանակեց Վերին Եգիպտոսի կառավարիչ: Կառավարման ներընտանեկան սկզբունքը պահպանվեց Սալահ ալ-Դինի մահից հետո: Նրա ստեղծած սուլթանությունը, որը տարածվում էր Տիգրիսից մինչև Նեղոս, բաժանվեց նրա ժառանգորդ-

ների՝ որդիների և եղբայրների միջև: Նրա որդիներից Մալիք ալ-Աֆդալը ստացավ Դամասկոսը, ալ-Ազիզը՝ Կահիրեն, ալ-Զահիրը՝ Հալեպը, իսկ կրտսեր եղբայրը՝ Սալիհը, ստացավ Կարակը և ալ-Շոբակը: Արտաքուստ նրանք այդ երկրամասերը կառավարում էին որպես մի ընտանիքի անդամներ:

Խորացնելով կառավարման ներընտանեկան սկզբունքի կիրառումը՝ դեռևս Սալահ ալ-Դինի օրոք վերացվեց Ֆաթիմյանների ժամանակ ձևավորված արքունիքը՝ իր բազմաթիվ պաշտոնյաներով, թողնելով միայն ամենաանհրաժեշտները:

Կարևոր փոփոխություն տեղի ունեցավ ագրարային հարաբերությունների ոլորտում: Զարգացան ավատատիրական հարաբերությունները, ինչին նպաստեցին նաև խաչակիրներն իրենց նվաճած տարածքներում: Նրանք ամենուրեք ներդնում էին Եվրոպայից իրենց հետ բերած տնտեսական կացութաձևերը, առաջին հերթին՝ ավատատիրական հարաբերությունները: Ավելի լայնորեն կիրառվեց իքթայի՝ պետական, ռազմական և այլ ծառայության դիմաց ժամանակավոր հողօգտագործման սկզբունքը:

Փոփոխություններ կատարվեցին դատական համակարգում: Շարիաթի՝ իսլամական օրենքների և ադաթների վրա հիմնված դատավարությունը պահպանվեց, սակայն վերացվեցին շիական-իսմայիլական սկզբունքների հիման վրա դատական գործերի քննարկումն ու դատավճիռների ընդունումը: Դատական գործերը հանձնվեցին սուննի իրավաբաններին, կադիներին, մասնավորապես նրանց, ովքեր պատկանում էին շաֆիական մազհաբին:

XII-XIII դարերում նկատվեց որոշակի տնտեսական վերելք: Սալահ ալ-Դինը և նրան հաջորդած առաջին սուլթաններն իրենց քաղաքականությամբ խրախուսում էին հատկապես գյուղատնտեսության զարգացումը, կառուցվում էին ամբարտակներ, փորվում ջրանցքներ և այլն: Զարգացավ առևտուրը, որին նպաստեց առևտրական աշխույժ հարաբերությունների հաստատումը եվրոպական երկրների՝ Իտալիայի, Ֆրանսիայի, Կատալոնիայի առևտրական կենտրոնների հետ: Մեծացավ առևտրական խավի կշիռը տնտեսության մեջ: Սուլթան Ադիլի (1199-1218 թթ.) թույլտվությամբ Վենետիկի վաճառականներն Ալեքսանդրիայում ստեղծեցին իրենց առանձին առևտրական գոտիները՝ համապատասխան արտոնություններով, իսկ Պիզան, թերևս առաջինը, նույն Ալեքսանդրիայում բացեց հյուպատոսություն՝ առևտրական գործարքները կանոնակարգելու և առևտրականների շահերը պաշտպանելու համար: Սուլթանությունում հաստատված ապահովությունը նպաստեց նաև տարանցիկ առևտրի զարգացմանը: Արաբական առևտրականները Եգիպտոսից, Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից հասնում էին մինչև Հնդկաստան, անգամ Հեռավոր Արևելքի երկրներ:

Մեծ թափ ստացավ մզկիթների և դպրոցների կառուցումը: Կառուցվում էին նաև քաղաքացիական շինություններ, ինչպես XII դարում կառուցված Կահիրեի միջնաբերդը, պալատներ, հյուրանոցներ և այլ շինություններ:

Իրադրությունը շեշտակի փոխվեց մամլուքների, հատկապես XIV դարի վերջին իշխանության գլուխ եկած Բուրջի մամլուքների տիրապետության շրջանում: Կառավարման ոլորտում հաստատվեց քառասային վիճակ, ուժեղացավ կլանների միջև պայքարը իշխանության համար, կառավարման ընտանեկան սկզբունքի հետքն անգամ չմնաց: Դրա անմիջական հետևանքը եղավ քաղաքական անկայունությունը, որի անբաժան ուղեկիցներն էին թալանը, կողոպուտը, զանգվածային սպանությունները: Սուլթանները զբաղվում էին խարդախությամբ և շատ հաճախ պակասեցնում էին իրենց կողմից հատվող դրամի արժեքի պարունակությունը, սակայն վաճառքը և փոխանակումը կատարում էին բարձր գներով: Հոգ չէր տարվում գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ, որը հանգեցրեց առաջին անհրաժեշտության սննդամթերքների պակասին, դրանց գների անկմանը և, ի վերջո, համատարած սովի: Նրանց աղետալի տնտեսական քաղաքականության և որևէ բժշկական ծառայության բացակայության արդյունքում մամլուքների տիրապետության շրջանում Եգիպտոսի և Սիրիայի բնակչությունը կրճատվել էր երկու երրորդով:

5. ՀԱՅԵՐԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ (VII-XV ԴԱՐԵՐ)

Հայ-արաբական հարաբերությունները գնում են պատմության խորքերը: Հայ-արաբական միջպետական հարաբերությունները բաժանվում են հինգ փուլի:

Առաջին փուլն ընդգրկում է մ. թ. ա. I-III դարերը: Մ. թ. ա. I դարի 84-66 թթ. Սիրիան, Միջագետքը, Փյունիկիան (Լիբանանը) և Պաղեստինը, Հրեաստանով հանդերձ, մտնում էին Տիգրան Մեծի Հայոց կայսրության մեջ:

Այդ փուլի հայ-արաբական միջպետական հարաբերությունների բաղադրամասն է կազմում Ուրֆայի՝ Եդեսիայի թագավորությունը, որը գոյություն է ունեցել մ. թ. ա. 136 – մ. թ. 216 թթ.:

Երկրորդ փուլը ներառում է VII-IX դարերը, երբ Հայաստանը հայտնվեց Արաբական խալիֆայության կազմում: Սակայն նա պահպանեց իր յուրահատուկ պետական կազմավորում լինելու կարգավիճակը՝ հանդիսանալով ըստ էության կիսանկախ պետություն, որն ամրագրվեց 652 թ. արաբա-հայկական հատուկ պայմանագրով: Իսկ VIII դարի սկզբում կազմավորվեց խալիֆայության մի նոր վարչական միավոր, որին արաբները, արաբական հնչյունաբանությանը համապատասխան, տվեցին Արմինիա անվանումը, որի մեջ, բացի Հայաստանից, միավորվեցին նաև Աղվանքը, Վրաստանը և Հյուսիսային Կովկասի որոշ տարածքներ: Վարչական նոր միավորի այդ անվանակոչումը վկայում էր այն կարևորության մասին, որն արաբները տալիս էին Հայաստանին: Հատկանշական է, որ Արմինիա-Հայաստանի մայրաքաղաքը խալիֆայի կարգադրությամբ դարձավ Հայաստանի երբեմնի մայրաքաղաք Դվինը:

Երրորդ փուլն ընդգրկում է IX-XIV դարերը, երբ արաբները և հայերը միմյանց հետ հարաբերվում էին որպես անկախ պետություններ: Նախ՝ IX դարում Հայաստանը դուրս եկավ Աբբասյան խալիֆայության կազմից և դարձավ անկախ պետություն (885-1045 թթ.), որը ճանաչվեց առաջին հերթին Հայոց արքա Աշոտ Ա Բագրատունուն ոսկյա թագ ուղարկած խալիֆայի կողմից: Ապա՝ 1080 թ. կազմավորված Կիլիկյան Հայոց իշխանապետությունը, որը XII դարում վերածվեց թագավորության

և գոյություն ունեցավ մինչև 1375 թ.: Գտնվելով փոթորկալից իրադարձությունների հորձանուտում և եվրոպական ու արաբական-մուսուլմանական պետությունների շահերի բախման խաչմերուկում՝ Կիլիկյան Հայոց թագավորությունը իմաստուն քաղաքականության, արիության և հնարամիտ դիվանագիտության փայլուն դրսևորումների շնորհիվ մոտ երեք դար կարողանում էր Միջերկրականի ափին հայտնված Հայոց պետության նավը հաջողությամբ վարել խաչակիրների և այյուբիական-մամլուքյան իշխանությունների միջև՝ մշտապես կարևորելով արաբական գործոնը և հաշվի նստելով նրանց հետ:

Չորրորդ փուլն ընդգրկում է XVII–XX դարի սկիզբը, երբ 1639 թ. Օսմանյան կայսրությունը նվաճեց Արևմտյան Հայաստանը: Թուրքական այդ պետությունը դեռևս XVI դարում արդեն նվաճել էր արաբական երկրները: Այսպիսով՝ արաբները և հայերը հայտնվեցին միևնույն պետության կազմում՝ որպես նվաճված երկրներ: Հասկանալի է, որ հայ-արաբական հարաբերություններն այդ ժամանակահատվածում ուղղակի իմաստով չի կարելի համարել միջպետական հարաբերություններ: Դա ավելի շուտ կարելի է դիտել որպես սեփական պետականությունը կորցրած երկու ժողովուրդների յուրատեսակ «ներպետական» հարաբերություններ միևնույն պետության՝ օսմանյան միահեծանության շրջանակներում՝ որպես նրա բաղկացուցիչ մասեր: Երկուսն էլ Օսմանյան կայսրությունը դիտում էին որպես իրենց ընդհանուր թշնամի պետություն և դարձել էին բնական դաշնակիցներ նրա դեմ մղվող պայքարում: Այդ փուլն ավարտվեց 1918 թ. Օսմանյան կայսրության փլուզումով:

Հինգերորդ փուլն ընդգրկում է XX դարի 90-ական թվականներից XXI դարի սկիզբը, երբ արաբական երկրները և Հայաստանն արդեն դարձել էին անկախ և սուվերեն պետություններ: Նրանք ճանաչել են միմյանց անկախությունը, հաստատել դիվանագիտական հարաբերություններ և համագործակցում են պետական, քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ մակարդակներով:

Հայ-արաբական հարաբերությունները ընդգրկում են նաև հայերի հարաբերություններն արաբների հետ բուն արաբական երկրներում, որտեղ նրանք հայտնվել են զանազան հանգամանքների բերումով, հաստատվել արաբական հյուրընկալ երկրներում՝ դառնալով նրանց քաղաքացիները, արժանանալով ժողովրդի և իշխանությունների բարյացակամ վերաբերմունքին:

Հայերի ներկայությունն արաբական երկրներում՝ Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Պաղեստինում, Միջագետքում և Արաբիայում, դարերի ընթացքում եղել է անընդմեջ, մերթ ստվարաքանակ, մերթ փոքրաթիվ՝ կախված հիմնականում քաղաքական իրադարձություններից և իրողություններից, նրանց բարենպաստ և ոչ նպաստավոր լինելուց: Ըստ այդմ՝ ձևավորվել են հայկական գաղթավայրեր, որոնցից մի քանիսը առաջատար դերակատարում են ունեցել: Քննարկվող ժամանակահատվածում՝ VII–XV դարերում, հայերի գլխավոր հավաքատեղիներն են եղել և մեծ դերակատարում են ունեցել Երուսաղեմն ու Եգիպտոսը:

Հայերը Երուսաղեմում հաստատվել են վաղնջական ժամանակներից՝ քրիստոնեական դարաշրջանի սկզբներին: Նրանք եղել են ուխտավորներ և հոգևորականներ, որոնք այցելել են Տիրոջ գերեզմանը, ուսանողներ, մտավորականներ, ինչպես նաև առևտրականներ և սոցիալական այլ խավերի ներկայացուցիչներ, որոնց զգալի մասն այնուհետև մշտական բնակություն է հաստատել սուրբ համարվող այդ քաղաքում: Նրանք Երուսաղեմում և նրա շրջակայքում կառուցել են եկեղեցիներ, որոնց թիվն, ըստ վարդապետ Անաստասի, VI դարի կեսերին հասել է մոտ յոթանասունի: Հայերը IV–V դարերում արդեն ունեցել են իրենց հատուկ թաղամասը՝ Հայկական թաղամասը Երուսաղեմում, որը Հին քաղաքի չորս թաղամասերից մեկն էր: Հայ եկեղեցու անբաժան տնօրինության տակ են եղել և այժմ էլ շարունակում են մնալ Երուսաղեմի մի շարք ամենակարևոր սրբավայրեր, ինչպես Անայի և Կայաֆայի տները, Ս. Հակոբի վանքը և այլն:

Արաբական նվաճումներից հետո Երուսաղեմում ընդհանուր առմամբ ավելի բարենպաստ մթնոլորտ ստեղծվեց Հայ եկեղեցու գործունեության համար, քան Բյուզանդիայի տիրապետության ժամանակ էր: Արաբներն ավելի հանդուրժողական քաղաքականություն են որդեգրում բոլոր այն ժողովուրդների և նրանց հաստատությունների նկատմամբ, որոնք հալածանքի էին ենթարկվում բյուզանդացիների կողմից: Ըստ ավանդության՝ Հայ եկեղեցու ղեկավարը 620-ականներին գնացել է Մեքքա և Մուհամմեդ մարգարեից ստացել հրովարտակ, որը երաշխավորում էր Երուսաղեմի հայության կյանքի և ունեցվածքի ապահովությունը, ճանաչում Հայ եկեղեցու իրավունքները Երուսաղեմի այն բոլոր սրբատեղերի վրա, որոնք գտնվում էին նրա վերահսկողության տակ: 638 թ., երբ խալիֆա Օմարը գրավեց Երուսաղեմը, նա իր նոր հրովարտակով հաստատեց բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմեդ մարգարեն տվել էր Հայ եկեղեցուն: Հետագայում՝ XII դարում, Այյուբի սուլթան Սալահ ալ-Դինը նույնպես ճանաչեց Հայ եկեղեցու իրավունքները և նրան իր նախորդների տված երաշխիքները:

X–XI դարերում տեղի ունեցավ հայերի լայնածավալ տեղափոխում Հայաստանից արաբական երկրներ: Դա կապված էր անբարենպաստ և անկայուն քաղաքական իրադրության հետ, որ հաստատվել էր Հայաստանում և հարակից տարածքներում: 1045 թ. ընկավ Անին, և Հայաստանը կորցրեց իր անկախությունը, որին հաջորդեց հայերի հոսքը Անտիոք, Հալեպ, Դամասկոս, Լիբանանի ու Պաղեստինի տարածքներ: Հայ գաղթականներ հայտնվեցին նաև Միջագետքում: Հետագայում այդ վայրերից, հատկապես Սիրիայից և Պաղեստինից, երբ սելջուկները 1071 թ. գրավեցին Երուսաղեմը, իսկ 1075 թ. տիրեցին Դամասկոսին, նրանց սպառնալիքների տակ հայերի մեծաքանակ խմբեր տեղափոխվեցին Եգիպտոս, որը XI–XIV դդ. դարձավ հայերի գլխավոր կենտրոնատեղին:

Դրանում իր վճռորոշ նշանակությունն ունեցավ նաև այն հանգամանքը, որ հայերը XI դարի 70-ական թվականներից տիրապետող դիրքեր գրավեցին Ֆաթիմյան խալիֆայությունում: Դրա հիմքը դրեց Բադր ալ-Գամալի ալ-Արմանին, որը 1074 թ. դարձավ Ֆաթիմյան խալիֆայության վազիրը, բանակի հրամանատարը և անսահմանափակ տիրակալը: Այդ իրավիճակն այս կամ այն չափով պահպանվեց նրա որդու՝ Աֆդալի և նրա հաջորդների, այդ թվում Վահրամ Պահլավունու և հայկական

ծագում ունեցող մյուս վազիրների ժամանակ, ընդհուպ մինչև Ֆաթիմյան դինաստիայի անկումը՝ 1171 թ.:

Բադր ալ-Գամալին Եգիպտոս հրավիրեց մեծ թվով հայերի, որոնք կազմեցին նրա հիմնական զորագունդը և Եգիպտոսի ռազմական ուժերի միջուկը: Գամալ ալ-Արմանիի զորագունդը հաշվվում էր մոտ 20 հազար ընտիր զինվորներ: Հայերը մեծ դիրքեր գրավեցին կառավարման բոլոր օղակներում: Նրանք ակտիվորեն մասնակցում էին երկրի կառավարմանը, ռազմական գործողություններին և բանակի ամրապնդմանը՝ դառնալով հայ վազիրների հենարանը, ապահովելով Եգիպտոսի անվտանգությունը: Մեծ էր նաև նրանց դերակատարումը առևտրի, շինարարության և արհեստների զարգացման գործում: Նրանք կրոնական և էթնիկ խտրականության չէին ենթարկվում, վայելում էին անձի, գույքի և ունեցվածքի ապահովություն: Նման պայմաններում հայ համայնքը բարգավաճում էր, իսկ նրա թվաքանակն ավելանում էր՝ հասնելով տասնյակ հազարների[17]: Դա հիմք հանդիսացավ, որ Եգիպտոսում 1084 թ. հիմնվի Հայոց եկեղեցու թեմ:

Հայերի վիճակը փոփոխության ենթարկվեց Ֆաթիմյանների տապալումից հետո՝ Այյուբյանների, ապա նաև մամլուքների տիրապետության տակ: Նրանք կորցրին իրենց նախկին դիրքերը: Այյուբյանները հեռացրին Ֆաթիմյան կառավարման համակարգի հայ պաշտոնյաներին, իսկ հայկական զորքը ցրեցին: Հայ բնակչությունը ստացավ նաև տնտեսական ծանր հարված. սեփականությունը բռնագրավվեց, իսկ տաճարները և եկեղեցիները վերցվեցին հսկողության տակ: Շատ հայեր հարկադրված էին արտագաղթել, ոմանք հարկադրաբար կրոնափոխ եղան, ոմանք ստրկացվեցին և այլն: Հետագայում թեև Այյուբյանների քաղաքականությունը մի փոքր մեղմացավ հայերի նկատմամբ, այդուհանդերձ նախկին իրավիճակը այլևս չվերականգնվեց, և հայերի քաղաքական ու տնտեսական դիրքերը խիստ թուլացան:

Նրանք ընդհանուր առմամբ ստորադաս վիճակում մնացին նաև մամլուքների տիրապետության ժամանակ: Մամլուքները հատկապես դաժան վարվեցին հայերի հետ 1375 թ.՝ Կիլիկյան Հայաստանի թագավորության վրա հարձակվելու և այն վերացնելու ժամանակ: Միայն Կիլիկիայի այն ժամանակվա մայրաքաղաք Տարսուսը գրավելու ժամանակ մոտ տասը հազար հայեր ստրկացվեցին, որոնց մի մասը վաճառվեց շուկաներում: Իսկ մի մասն էլ մամլուք դարձավ, և մոտ 4000 հայեր չերքեզների հետ կազմեցին մամլուքյան էլիտար կորպուս, որին հանձնարարվեց Կահիրեի բուրուջի՝ միջնաբերդի պաշտպանությունը:

Այսպիսով՝ Ֆաթիմյան դարաշրջանը, երբ խալիֆայության բարձրագույն ղեկավարությունը կենտրոնացված էր հայերի ձեռքում, եղավ արաբական երկրներում հայերի բարգավաճման և ծաղկման գագաթնակետը:

[17] Նաիրի Համբիկյանը, վկայակոչելով միջնադարյան արաբ ականավոր պատմաբան ալ-Մաքրիզիին, նշում է, որ Ֆաթիմյանների ժամանակ հայերը Եգիպտոսում ունեին 35 եկեղեցի, իսկ հայերի թիվը հասնում էր 300 հազարի – Armenian-Egyptian Historical & Cultural Ties, Cairo, 2007, p. 33:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎՐԱ

1. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Մինչև XI դարը թուրքական էթնոսը որպես ժողովրդագրական գործոն, գոյություն չի ունեցել մերձավորարևելյան, այսրկովկասյան և փոքրասիական աշխարհագրական տարածքում: Թուրքերը, իհարկե, որպես վարձկաններ, գերիներ կամ խալիֆաների և էմիրների գվարդիայի անդամներ, հայտնի են եղել այդ տարածաշրջանում. խոսքն այդ մասին չէ, այլ այն, որ նրանց հայտնվելը չի կրել զանգվածային բնույթ և փոփոխության չի ենթարկել Առաջավոր Ասիայի էթնիկական կազմը: Իրավիճակն արմատականորեն փոխվեց X դարի վերջերին և XI դարի սկզբներին, երբ սկսվեց թուրքական ցեղերի արդեն զանգվածային ներխուժումը Միջին Ասիայից Մերձավոր Արևելք, ապա նաև Այսրկովկաս և Փոքր Ասիա: Նրանց միջուկը կազմում էին թուրքմենները և օղուզները: Նրանք 1038 թ. ստեղծեցին իրենց սուլթանությունը, որը 1055 թ.՝ Բուիների տիրապետությունը վերացնելուց և Բաղդադը գրավելուց հետո, ստացավ «Սելջուկյան Մեծ սուլթանություն» անվանումը: Նա դարձավ սելջուկյան-թուրքական առաջին պետությունն Առաջավոր Ասիայում, որին հաջորդեց սելջուկյան երկրորդ պետությունը՝ Ռումի սուլթանությունն արդեն Փոքր Ասիայում, որը 1116 թ.՝ Կոնիայի գրավումից հետո, վերանվանվեց Իկոնիայի սուլթանության՝ Իկոնիա մայրաքաղաքով:

Թուրքական առանձին ցեղեր իրենց իշխանապետությունը՝ բեյլիքները, ստեղծեցին Փոքր Ասիայի արևմտյան մասերում: Դրանց մեջ էր Խորասանից ներգաղթած օղուզա-թուրքմենական ցեղապետ Օսմանը, որին Իկոնիայի սուլթանը 1289 թ. շնորհեց բեյի տիտղոս: Օսմանը, օգտվելով Իկոնիայի սուլթանության թուլացումից, 1299 թ. իր բեյլիքը (բեյությունը կամ իշխանապետությունը) հռչակեց անկախ պետություն: Այսպես պատմության մեջ հայտնվեց մի նոր պետություն, որը ցեղապետ Օսմանի անունով կոչվեց Օսմանլը, այսինքն՝ օսմանյան, որը հետագայում վերածվեց Օսմանյան կայսրության:

Նորաստեղծ այդ պետությունն իր գոյության առաջին օրվանից իրեն դրսևորեց որպես ագրեսիվ պետություն՝ վարելով նվաճողական քաղաքականություն:

Այդ քաղաքականության զոհը դարձան բազում երկրներ և ժողովուրդներ, այդ թվում և արաբները: XV դարի վերջերից և XVI դարի սկզբներից օսմանյան տիրակալների, որոնք կրում էին «սուլթան» տիտղոսը, նվաճողական քաղաքականության

մեջ գերակա ուղղություն է դառնում արևելյան ուղղությունը, որը պայմանականորեն կարելի է անվանել արաբական ուղղություն:

Օսմանյան պետության արևելյան նվաճողական քաղաքականության նախաձեռնողը և առաջին իրականացնողը եղավ օսմանյան սուլթան Սելիմ Ա Յավուզը (Ահեղը) (1512–1520 թթ.): Դեպի արևելք տանող ճանապարհին նրա միակ ախոյանը Պարսկաստանն էր: 1514 թ. Չալդրանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում՝ Սելիմ Ա–ի և շահ Իսմայիլի զորքերի միջև, պարսկական զորքերը պարտություն կրեցին, և 1515 թ. թուրքական տիրապետության տակ անցան Հայաստանի մի հատվածը, Հյուսիսային Պարսկաստանը և Միջագետքը: Թուրքական զորքերն ընդհուպ մոտեցան արաբական երկրներին: Առաջին հարվածը հասցվեց եգիպտական մամլուքների տիրապետության տակ գտնվող Սիրիային:

Եգիպտական մամլուք սուլթան Աշրաֆ Կանսոհ ալ–Ղաուրի (1500–1516 թթ.) համար ստեղծվեց անելանելի դրություն, մանավանդ որ նա գաղտնի դաշինքի մեջ էր Սեֆյան Պարսկաստանի շահ Իսմայիլի հետ: Չալդրանի մոտ պարսիկների կրած պարտությունից հետո նա հասկացավ, որ Պարսկաստանի վրա չի կարող հույս դնել և 1516 թ. փորձեց միջնորդի դերում հանդես գալ սուլթան Սելիմ Ա–ի և շահ Իսմայիլի միջև: Սակայն նա հետապնդում էր մի գաղտնի նպատակ՝ օգնել պարսիկներին: Սելիմ Ա–ը իր լրտեսների միջոցով իմացավ մամլուք Կանսոհի այդ գաղտնի նպատակի մասին: Եվ երբ բանակցությունների համար ժամանեց Կանսոհի բանագնացը, ապա Սելիմը սափրել տվեց նրա մորուքը, որը մեծ վիրավորանք էր համարվում, նստեցրեց կաղ էշի վրա և հետ ուղարկեց իր տիրոջը, իսկ նրան ուղեկցողներին գլխատեց: Դրանից հետո Սելիմը պատերազմ հայտարարեց Եգիպտոսին: Առաջին վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1516 թ. օգոստոսի 24–ին Հալեպից հյուսիս գտնվող Մարջ Դաբիքի մոտ: Մամլուքյան բանակը մարտունակ բանակ էր, և հայտնի չէ, թե ինչպես կավարտվեր մարտը, եթե չլիներ Կանսոհի մի քանի զորավարների դավաճանությունը: Մարտի վճռական պահին մամլուքների ձախ թևի հրամանատար, Հալեպի նահանգապետ Խաիր բեյը դավաճանեց և անցավ թուրքերի կողմը: Նույն կերպ վարվեց նաև Համայի կառավարիչը: Մարտում ընկավ Եգիպտոսի սուլթան Կանսոհը: Այդ հանգամանքը և նրա երկու զորահրամանատարների դավաճանությունը որոշեցին մարտի ելքը հօգուտ թուրքերի: Սելիմը մտավ Հալեպ և մի փոքր դադարից հետո շարժվեց Դամասկոսի վրա, որը նա գրավեց առանց որևէ բարդությունների, ինչին էլ հաջորդեց ամբողջ Սիրիայի գրավումը:

Սիրիան առաջին քայլն էր արաբական երկրները նվաճելու ճանապարհին: Հաջորդ քայլը եղավ Եգիպտոսի նվաճումը: Իր զորքը Եգիպտոս գլխավորելու ճանապարհին Սելիմը մտավ Պաղեստին և ուխտագնացություն կատարեց Երուսաղեմ: Պաղեստինում՝ Ղազայի մոտ, եգիպտական նոր սուլթան Թուման բեյը, որը փոխարինել էր մարտի դաշտում զոհված Կանսոհին, փորձեց կասեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը Եգիպտոսի ուղղությամբ, սակայն 1516 թ. դեկտեմբերի 19–ին տեղի ունեցած ճակատամարտում պարտություն կրեց: 1517 թ. հունվարին Սելիմի զորքերը ներխուժեցին Եգիպտոս: Հունվարի 23–ին նրանք արդեն Կահիրեի

մատույցներում էին: Այստեղ՝ Կահիրեի մերձակայքում գտնվող Ռիդանիայի մոտ, տեղի ունեցավ երկրորդ վճռական ճակատամարտը: Մամլուքյան բանակը կռվում էր քաջաբար: Այդուհանդերձ, մամլուքյան բանակը պարտություն կրեց, և Սելիմ Ա–ը մտավ Կահիրե: Սակայն Թուման բեյը, որին հաջողվել էր փախուստ տալ, հունվարի 27–ին իր զորքերի մնացորդներով հանկարծակի հարձակվեց և գրավեց Կահիրեն: Երեք օր արյունալի մարտեր էին ընթանում Կահիրեի փողոցներում: Հունվարի 30–ին թուրքերը նորից պարտության մատնեցին մամլուքներին: Փախուստի դիմած Թուման բեյն ընկավ բեդվինների ձեռքը, որոնք նրան հանձնեցին օսմանյան սուլթանին, վերջինիս հրամանով էլ նա անհապաղ կախաղան հանվեց: Սելիմը Հալեպի նահանգապետ Խաիր բեյին, որը Մարջ Դաբիքի ճակատամարտի ժամանակ դավաճանել էր Կանսոհին և անցել իր կողմը, 1517 թ. օգոստոսին նշանակեց Եգիպտոսի կառավարիչ:

Այսպիսով՝ 1516 թ. հոկտեմբերից մինչև 1517 թ. հունվարն ընկած շրջանում թուրքերը գրավեցին արաբական երկու ամենակարևոր երկրները՝ Սիրիան և Եգիպտոսը:

Եգիպտոսի և Սիրիայի գրավումը ցնցող տպավորություն թողեց արաբական երկրների վրա: Դրանից հետո օսմանյան սուլթանին իրենց հավատարմությունը հայտնեցին Հիջազի շերիֆը և Մեքքայի ու Մադինայի ավագանին, որոնք ատելությամբ էին լցված մամլուքների դեմ: Շուտով օսմանյան տիրապետությունը հաստատվեց Լիբանանի, ապա նաև Պաղեստինի և Հորդանանի վրա: Հերթը հասավ Իրաքին: Սելիմ Ա–ին և 1520 թ. նրան հաջորդած սուլթան Սուլեյմանին հաջողվեց 1516–1538 թթ. Պարսկաստանին դուրս մղել Իրաքից և այն միացնել օսմանյան կայսրությանը: XVI դարի 30–ական թվականներին թուրքերը հայտնվեցին նաև Եմենում: Նրանք 1518–1551 թթ. նվաճեցին նաև Մաղրիբի երկրները: Թուրքերի տիրապետությունից դուրս մնացին Կենտրոնական Արաբիան՝ Նաջդը, Օմանը և Մարոկոն:

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Արաբական երկրների վարչատարածքային բաժանումը միտված էր օսմանյան տիրապետության պահպանմանը և ուժեղացմանը: Նրա հիմքում դրվեցին յուրաքանչյուր երկրի կամ երկրամասի կարևորությունը և յուրահատկությունները: Այստեղ կիրառվեց մի նորամուծություն՝ կայսրության վարչատարածքային միավորներն ըստ կատեգորիաների բաժանումը և նրանց անվանակոչումը: Կայսրության արևելյան, այդ թվում արաբական տիրույթները բաժանվեցին էյալաթների, վիլայաթների, սանջակների և կազաների:

Էյալաթները կամ *փաշայություններն* ամենախոշոր վարչական միավորներն էին, որոնց գլուխ կանգնած էին սուլթանի կողմից նշանակվող փաշաները: Դրանք խոշոր նահանգներ կամ պրովինցիաներ էին: Կայսրությունը բաժանված էր 16 էյալաթների, որոնց մի մասը կազմված էր արաբական տարածքներից:

Վիլայաթները նույնպես նահանգներ կամ մարզեր էին, ինչպես էյալաթները, միայն այն տարբերությամբ, որ նրանք իրենց ծավալներով զիջում էին էյալաթներին, ավելի փոքր էին, և նրանց գլուխ կանգնած էին վալիները, որոնք իրենց աստիճանակարգով փաշաներից ավելի ցածր էին:

Սանջակները կամ *լիվաները* համապատասխանում էին օկրուգին կամ գավառին: Սանջակի գլուխ կանգնած էր կայմակամը: Կայսրությունում կային 250 սանջակներ, այդ թվում և նրա արաբական հատվածում:

Կազան համարվում էր Օսմանյան կայսրության ամենափոքր վարչական միավորը, որի համարժեքը հայերենում կարելի է համարել գավառակը կամ շրջանը:

Կայսրությունում հաստատվեց խիստ կենտրոնաձիգ համակարգ, որը գործում էր նաև արաբական երկրներում:

Կառավարման բուրգի գագաթնակետում էր օսմանյան սուլթանը, որի ձեռքում էր կենտրոնացված ամբողջ պետական, քաղաքական, ռազմական և դատական իշխանությունը: Կայսրությունում բոլորը նրա ենթակաները և հպատակներն էին:

Սուլթան Սուլեյմանալ-Կանունին 1525 թ. հաստատեց «Կանուն ալ-Մըսրին»՝ «Եգիպտոսի օրենսգիրքը», որը կարգավորում էր նրա ներքին կառավարման համակարգը: Այդ օրենքով Եգիպտոսը չբաժանվեց էյալաթների և վիլայաթների, այլ պահպանվեց որպես վարչատարածքային մեկ ամբողջություն, որի գլուխ կանգնած էր օսմանյան սուլթանի կողմից նշանակվող փաշան, որը համարվում էր փոխարքա և ներկայացնում օսմանյան սուլթանին Եգիպտոսում: Ըստ «Կանուն ալ-Մըսրիի»՝ փոխարքան օժտված էր լայն լիազորություններով, որին ենթակա էին Եգիպտոսի բոլոր վարչական, քաղաքացիական և զինվորական մարմիններն ու պաշտոնյաները: Եգիպտոսը բաժանվեց 12 սանջակների: Օսմանյան սուլթանը, հաշվի առնելով մամլուքների ուժը և ցանկանալով սիրաշահել նրանց, սանջակների կառավարիչներ՝ հաքիմներ նշանակեց երևելի մամլուք բեյերի: Նրանք թեև ենթակա էին թուրքական փոխարքային՝ փաշային, իրականում մեծ իշխանություն ունեին, փոքրիկ թագավորներ էին, անգամ ունեին իրենց ռազմական ջոկատները: Մամլուք հաքիմներին վերապահվեց հարկեր հավաքելու իրավունքը: Մամլուքներն օսմանյան սուլթանին ճանաչում էին որպես իրենց սյուզերենը, որի վասալներն էին նրանք: Բայց դա որոշ իմաստով ձևական կամ խորհրդանշական բնույթ էր կրում, իսկ հետագայում սուլթանների իշխանությունը մամլուքների վրա գնալով թուլացավ, մանավանդ երբ սկսեցին Ստամբուլից Եգիպտոս փոխարքաներ ուղարկել թուրք փաշաների, որոնք վատ գիտեին երկիրը, նրա պայմանները, մամլուքներին, նրանց սովորույթները և կորցրին երկիրն իրենց վերահսկողության տակ պահելու հնարավորությունները:

Ի տարբերություն Եգիպտոսի՝ Սիրիայի վարչատարածքային բաժանման հիմքում դրվեց վիլայաթների կազմավորման սկզբունքը: Ըստ այդմ՝ Սիրիան բաժանվեց երեք վիլայաթների՝ Դամասկոսի, Հալեպի և Տրիպոլիի: 1600 թ. տեղի ունեցավ նոր բաժանում, և ստեղծվեց նոր՝ թվով չորրորդ, Սայդայի վիլայաթը: Վիլայաթները բաժանվեցին սանջակների: Դամասկոսը բաժանվեց տասը, Հալեպի վիլայաթը՝ ինը, իսկ Տրիպոլիի վիլայաթը՝ հինգ սանջակի:

Սիրիայի վիլայաթների գլուխ կանգնած էին օսմանյան սուլթանի կողմից նշանակվող վալիները, որոնք իրենց վիլայաթների շրջանակներում օգտվում էին ամենալայն իշխանությամբ՝ պատասխանատու լինելով միայն սուլթանի առջև: Նրանց պարտականությունների մեջ մտնում էին վիլայաթներում կարգ ու կանոնի պահպանումը, ամեն տեսակի հուզումների, խռովությունների և հակաօսմանյան ելույթների ճնշումը, ոստիկանական ֆունկցիաների իրականացումը, պատերազմի դեպքում անհրաժեշտ քանակությամբ զորք՝ զենքով ու հանդերձանքով, օսմանյան սուլթանին տրամադրելը:

1841 թ. տեղի ունեցավ նոր փոփոխություն Սիրիայի վարչատարածքային կառուցվածքում: Տրիպոլիի և Սայդայի վիլայաթների միավորումով ստեղծվեց Բեյրութի էյալաթը՝ Բեյրութ կենտրոնով: Իսկ Պաղեստինը, որ մինչ այդ բաժանված էր տարբեր վիլայաթների միջև, դարձավ ինքնուրույն վարչատարածքային միավոր, որը կոչվեց Երուսաղեմի սանջակ: Այն ենթակա էր Բեյրութին:

Վիլայաթի սկզբունքը դրվեց նաև Իրաքի վարչատարածքային բաժանման հիմքում: Այստեղ կազմավորվեց երեք վիլայաթ՝ Մոսուլի, Բաղդադի և Բասրայի, որոնց գլուխ կանգնած էին օսմանյան սուլթանի կողմից նշանակված վալիները:

Առաջինը ստեղծվեց Բաղդադի վիլայաթը, որը համարվում էր կենտրոնականը: Մյուս վիլայաթը Մոսուլի վիլայաթն էր, որն ընդգրկում էր Իրաքի կամ Միջագետքի ամբողջ հյուսիսային շրջանները: Իսկ հարավային շրջանների միավորումով, որի ձևավորումը զանազան պատճառներով ձգձգվեց մինչև 1538 թ., ստեղծվեց Բասրայի վիլայաթը: Նրանց վալիների լիազորությունները և պարտականություններն ընդհանուր առմամբ նույնն էին, ինչ որ սիրիական մյուս վալիներինը:

Հիջազը չկոտորակվեց և պահպանվեց որպես մեկ ամբողջական վարչական միավոր, որի գլուխ կանգնած էր Հիջազի շերիֆը. նա ավանդաբար սերում էր Հաշիմիների տոհմից և իր արմատներով հասնում Մուհամմեդ մարգարեին: Այդ պաշտոնը կարող էին զբաղեցնել միայն մարգարեի շառավիղները՝ Հաշիմի տոհմից: Ուստի օսմանյան սուլթանները չհամարձակվեցին խախտել հնուց ի վեր եկող այդ կարգը: Նրանք ուղղակի ենթարկվեցին օսմանյան սուլթանին՝ անվանականորեն համարվելով նրա վասալը, իրականում պահպանելով ինքնուրույնության բավականին բարձր աստիճան:

Յուրահատուկ կարգավիճակ ստացավ Լիբանանը: Նրա ղեկավարները Շուֆի էմիր Ֆախր ալ-Դին ալ Մաանի գլխավորությամբ Դամասկոսում ներկայացան Սելիմ Ահեղին և նրան հայտնեցին իրենց հպատակությունը: Սուլթանը Ֆախր ալ-Դինին ճանաչեց Լիբանանի ղեկավար՝ էմիր, և Մաանների դինաստիան 1516–1697 թթ. դարձավ Լիբանանում կառավարող դինաստիա: Լիբանանին տրվեց ինքնավար էմիրության կարգավիճակ:

3. ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Միջազգային հարաբերություններում առանձնահատուկ տեղ է գրավում կապիտուլյացիաների ինստիտուտը, որն առաջին անգամ հանդես է եկել թուրք-եվրոպա-

կան հարաբերություններում: Ի՞նչ էր դա և ինչո՞ւ էր կոչվում կապիտուլյացիոն ինստիտուտ: *Կապիտուլյացիա* բառը լատինական արմատ ունի, որը ծագել է օսմանյան սուլթանների կողմից քրիստոնեական պետություններին շնորհվող գիր-հրովարտակներից, որոնք սովորաբար բաղկացած էին լինում մի քանի գլուխներից: Լատիներեն *կապիտուլա (capitula)* նշանակում է *գլուխ*, որից և առաջացել է *կապիտուլյացիա (capitulation)* եզրը: Օրինակ՝ 1521 թ. սուլթանի կողմից Վենետիկին շնորհված հրովարտակը բաղկացած էր երեսուն կապիտուլաներից՝ գլուխներից: Սկզբնական շրջանում կապիտուլյացիան ընկալվում էր որպես այդ գլուխների և նրանցում ամրագրված դրույթների համակարգ: Սակայն ինչպես հաճախ է պատահում պատմության մեջ, այդ եզրն իմաստային առումով փոփոխություն կրեց և ձեռք բերեց առանձնահատուկ, միջպետական հարաբերություններին առնչվող քաղաքական բովանդակություն:

Կապիտուլյացիաները սկզբնական փուլում՝ XIV–XVI դարերում, օսմանյան սուլթանների կողմից եվրոպական պետություններին միակողմանիորեն և կամավոր կերպով տրվող շնորհներ էին: Առաջին կապիտուլյացիաները սուլթանի կողմից շնորհվեցին դեռևս XIV դարում Ջենովայի և Վենետիկի վաճառականներին: Երկրորդ փուլում կապիտուլյացիաներն ընդունեցին երկկողմ պայմանագրերի տեսք, որ ստորագրվում էին մի կողմից՝ օսմանյան սուլթանի, իսկ մյուս կողմից՝ եվրոպական որևէ պետության ղեկավարի միջև: Նման պայմանագրեր սուլթան Սուլեյման Կանունին 1521 թ. ստորագրեց Վենետիկի դոժի, իսկ 1535 թ. Ֆրանսիայի թագավոր Ֆրանցիսկ Ա-ի հետ:

Հետագայում, երբ Օսմանյան կայսրությունն արդեն թուլացել էր, եվրոպական պետությունները կապիտուլյացիաներն արդեն չէին ընկալում որպես շնորհ կամ երկկողմ պայմանագրի հիման վրա տրված արտոնություն: Այդ արտոնությունները նրանք համարում էին իրենց յուրատեսակ բնական իրավունքները:

Կապիտուլյացիաներն առաջին հերթին ընդգրկում էին դատաիրավական ոլորտը: Ըստ այդմ՝ այն երկրների քաղաքացիները, որոնք թուրքական սուլթանից ստացել էին համանման շնորհ՝ ամրագրված նրա կողմից ստորագրված հրովարտակի համապատասխան գլխում (capitula), ենթակա չէին օսմանյան օրենքներին և սովորույթներին: Օսմանյան կայսրությունում այդ քաղաքացիների վրա միայն տարածվում էին այդ օտարազգի քաղաքացու երկրի օրենքները: Եվ եթե այդ քաղաքացին Օսմանյան կայսրության տարածքում, այդ թվում և արաբական երկրներում, թույլ էր տվել օրինազանցություն կամ հանցագործություն կատարել, ապա օսմանյան իշխանությունները նրան չէին կարող դատել և պատիժներ սահմանել: Եթե նա, ասենք, ֆրանսիացի էր, նա կդատվեր ֆրանսիական օրենքների համաձայն: Նույնը նաև մյուս եվրոպացիների պարագայում:

Ուրեմն կապիտուլյացիայի ամենակարևոր հատկանիշն այն էր, որ օսմանական իրավասությունը չէր տարածվում քրիստոնյա երկրների քաղաքացիների վրա: 1740 թ. օսմանյան սուլթան Մահմուդ Ա-ը և Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս ԺԵ-ը ստորագրեցին մի պայմանագիր, որով սուլթանը Ֆրանսիային ճանաչում էր

Օսմանյան կայսրությունում, ներառյալ նրա արաբական երկրամասերը, գտնվող կամ հայտնվող բոլոր քրիստոնյաների հովանավոր և պաշտպան: Եթե որևէ քրիստոնյա, անկախ այն բանից, թե որ երկրի քաղաքացի էր, թեկուզ ամենակարճ ժամանակով հայտնվում էր Օսմանյան կայսրության տարածքում, ապա նա այդ պահից գտնվում էր Ֆրանսիայի պաշտպանության ներքո:

Կապիտուլյացիաների երկրորդ ոլորտը բնակություն հաստատելու և գույքային ու հարկային արտոնությունների ոլորտն էր: Օտարերկրացիները կայսրության սահմաններում կարող էին ունենալ իրենց կոմպակտ ապրելու բնակավայրերը, քաղաքներում իրենց առանձին թաղամասերը՝ սեթլմենթները, որը փակ էր տեղաբնիկների համար: Այդ թաղամասերն ապրում էին իրենց սեփական օրենքներով: Նման բազմաթիվ սեթլմենթներ առաջացան Հալեպում, որը սկզբում հիմնականում վենետիկցիներն էին հիմնում: Հետագայում նման թաղամասեր առաջացան Սիրիայի համարյա բոլոր քաղաքներում, որտեղ բնակվում էին ֆրանսիացիները, անգլիացիները և այլ եվրոպացիներ: Նրանց իրավունք տրվեց ազատորեն կատարելու իրենց կրոնական ծիսակատարությունները, սահմանվեցին ավելի ցածր հարկեր և տուրքեր՝ համեմատած տեղացիների հետ, նրանց տրվեց գույքի և ունեցվածքի ապահովման կայուն երաշխիքներ, որը կայսրությունում ընդհանրապես գոյություն չուներ:

Ֆրանսիան կարողացավ հասնել նրան, որ օսմանյան նավահանգիստները, այդ թվում՝ Ալեքսանդրիայի, Բեյրութի, Սայդայի, Լաթաքիայի, Տրիպոլիի և այլն, մտնող բոլոր նավերը, անկախ այն բանից՝ նրանք ֆրանսիական էին, թե ոչ, պետք է մտնեին միայն ֆրանսիական դրոշի ներքո և կայսրության ջրային տարածքներում կարող էին առևտուր անել միայն ֆրանսիական դրոշի ներքո, որը նրանց ապահովում էր Ֆրանսիայի հովանավորությամբ և պաշտպանությամբ:

Այսպիսով՝ կապիտուլյացիաները յուրատեսակ իրավաքաղաքական արտոնյալ պայմաններ ստեղծեցին եվրոպական երկրների համար՝ ներթափանցելու Օսմանյան կայսրություն, նրա տարածքներում ծավալելու տնտեսական և առևտրական գործունեություն, տիրանալու համապատասխան լծակների՝ իրենց քաղաքական ազդեցությունը Օսմանյան կայսրության վրա ուժեղացնելու համար:

Կապիտուլյացիոն այս համակարգն ամբողջությամբ գործում էր նաև Օսմանյան կայսրության արաբական երկրներում: Արդեն նշվեց, որ եվրոպացիներն իրավունք էին ստացել արաբական քաղաքներում հիմնելու իրենց թաղամասերը և ապրելու իրենց օրենքներով: Եվրոպական վաճառականներն ու գործարարներն իրենց գրասենյակները բացեցին Եգիպտոսում, Սիրիայում և հյուսիսաֆրիկյան արաբական մերձծովյան քաղաքներում: Նրանց հոսքը արաբական երկրներ այնքան մեծ էր, որ եվրոպացիները սկսեցին հյուրանոցներ կառուցել արաբական տարբեր քաղաքներում, որոնց կից կային պահեստներ՝ եվրոպական ապրանքները պահեստավորելու համար:

Օգտվելով կապիտուլյացիոն արտոնյալ ռեժիմից՝ արաբական երկրներում իր գործունեությունն ակտիվացրեց անգլիական «Արևելյան-հնդկական ընկերությունը» («Օստ-ինդիան կոմպանի»): Նա Իրաքում, Բաղդադ և Բասրա քաղաքներում

բացեց իր ֆակտորիաները՝ իր ձեռքում կենտրոնացնելով մի շարք ապրանքների առևտուրը, նրանց ներմուծումը և արտահանումը:

Կապիտուլյացիոն ռեժիմի պայմաններում եվրոպական վաճառականները երկու-երեք անգամ ավելի ցածր հարկ էին վճարում, քան արաբ վաճառականները: Բացի դրանից, եվրոպական վաճառականը մաքսատուրք վճարում էր ընդամենը մեկ անգամ, երբ ապրանք էր ներկրում և մտնում արաբական տվյալ երկիրը: Մինչդեռ երբ արաբ վաճառականն էր ներմուծում այդ նույն ապրանքները, ապա նա մաքսատուրք էր վճարում մի քանի անգամ, երբ մի ավատատերի տիրույթից անցնում էր մյուս ավատատերի տիրույթը, քանի որ նրանցից յուրաքանչյուրն ուներ իր մաքսատունը և իր համար մաքս էր հավաքում:

Եվրոպական երկրները կառչած էին կապիտուլյացիոն ռեժիմից: Նույնիսկ երբ թուրքական կառավարությունը Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայտարարեց կապիտուլյացիոն ռեժիմի վերացման մասին, կապիտուլյացիայից օգտվող պետությունները հայտարարեցին, որ իրենք չեն ճանաչում այդ որոշումը: Եվրոպական պետությունները մինչև 1937 թ. օգտվում էին այդ ռեժիմից Եգիպտոսում, թեև այդ ժամանակ Օսմանյան կայսրությունը չկար, և Եգիպտոսը, բնականաբար, նրա կազմում չէր:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Օսմանյան նվաճողներն ըստ էության պահպանեցին արաբական երկրներում հաստատված ցեղային-կլանային, ավատատիրական համակարգը, հողատիրության և սեփականության ձևերը, որը լուսաբանվել է աշխատության նախորդ հատվածներում: Հիշատակության կարգով նշենք, որ արաբական երկրներում գոյություն ունեին հողային սեփականության համայնքային-տոհմատիրական, մասնավոր սեփականատիրական և վակֆային ձևերը:

Օսմանյան տիրապետության հաստատումից հետո այդ ոլորտում տեղի ունեցավ թերևս ամենակարևոր նորամուծությունը: Կայսրության ամբողջ տարածքում հողը հայտարարվեց պետական սեփականություն, որի գերագույն սյուզերենը օսմանյան սուլթանն էր: Սակայն դա չէր նշանակում, թե արաբական երկրներում հողը նախկին հողատերերից և տնօրինողներից խլվեց և անցավ սուլթանի անմիջական տնօրինության տակ: Թուրքերը թեև գտնվում էին զարգացման ցածր մակարդակի վրա և այդ առումով զիջում էին իրենց ենթակա ժողովուրդներին, այդ թվում և արաբներին, այդուհանդերձ նրանք հասկանում էին, որ անգամ Օսմանյան կայսրության նման բռնատիրական պետությունը չէր կարող դիմանալ նման սոցիալական ցնցման: Սակայն դա ստեղծեց իրավական նոր իրողություն, որի պայմաններում ուժեղանում էր հողատերերի կախվածությունը օսմանյան պետությունից և նրա սուլթանից:

Մյուս ոչ պակաս կարևոր փոփոխությունը տեղի ունեցավ համայնքային հողատիրության բնագավառում: Համայնքային հողերը նույնպես հայտարարվեցին օսմանյան պետության սեփականություն: Դա հնարավորություն տվեց համայնքային

հողերը խլելու համայնքներից և գրանցելու տոհմական ավագանու անունով: Արդյունքում համայնքի անդամները զգալի չափով զրկվեցին իրենց հասանելիք հողերից, իսկ քոչվոր անասնապահ բեդվինները՝ արոտավայրերից: Եվ դա դարձավ նրանց տնտեսական դրության վատթարացման պատճառներից մեկը:

Օսմանյան տիրապետության շրջանում տեղի ունեցավ մեկ այլ ընդհանուր բնույթի փոփոխություն: Շատ հողատերեր, չդիմանալով ծանր հարկերին, նախընտրում էին իրենց հողերը դարձնել վակֆ, այսինքն՝ բարեգործապատկան, որոնք տրվում էին մզկիթներին և այլ իսլամական հաստատությունների, և նրանցից ստացվող հասույթների մի մասը, երբեմն անգամ մեծ մասը, դառնում էր մզկիթների, մեդրեսեների և նման այլ հաստատությունների հասույթը: Նման հողերն, ըստ շարիաթի, ազատված էին հարկերից: Հողատիրության այս ձևի յուրահատկությունն այն է, որ հողատերն իր հողը վակֆ դարձնելու դեպքում չէր կորցնում իր հողակտորը, այն շարունակում էր համարվել նրանը, սակայն նա այլևս չէր կարող դա տնօրինել իր հայեցողությամբ՝ վաճառել, վարձակալության տալ և փոխանցել իր ժառանգներին: Եվ թեև կրճատվում էին նրա եկամուտները, այդուհանդերձ վակֆային հողատիրությունը հուսալի էր, քանի որ ոչ մի ուժ, անգամ փաշան, վալին կամ այլ պաշտոնյաներ, չէին կարող այն օտարել, բռնագրավել և սեփականացնել: Այդ պատճառով շատ մասնավոր հողատերեր, վախենալով փաշաների և վալիների կամայականություններից, մուլքը դարձնում էին վակֆ, թեև նրանց եկամուտները պակասում էին:

XVI-XVII դարերում արաբական երկրներում հողօգտագործման բնագավառում սկսեց օգտագործվել իլթիզամի կամ իքթայի համակարգը, որի էությունը հետևյալն է: Շատերը, այդ թվում և քոչվորները, մտան զինվորական ծառայության մեջ, որի դիմաց նրանք պետությունից ստանում էին թիմար՝ հողակտոր, որոնք համարվում էին պայմանական ժառանգական տիրույթներ, քանի որ հողը տրվում էր զինվորական ծառայության դիմաց և կարող էր հորից անցնել որդուն, եթե նա շարունակեր հոր գործը և մտներ սուլթանի զինվորական ծառայության մեջ: Թիմարիոտը կամ թիմարատերը իրավունք էր ձեռք բերում այդ հողաբաժնի վրա աշխատող գյուղացիներից հարկ հավաքելու: Լայն տարածում ստացավ նաև զեամաթը, որը նույն թիմարն էր, սակայն իր չափերով՝ ավելի մեծ. այն տրվում էր սիփահիների զորաջոկատների հրամանատարներին: Զինվորական ծառայության դիմաց հողաբաժին ստացած այդ թիմարիոտները և զաիմները անձամբ չէին զբաղվում տնտեսությամբ, այլ իրենց հողաբաժինների վրա աշխատող գյուղացիների բոլոր աշխատանքների կազմակերպումը, վերահսկողությունը, հարկերի գանձումը կապալով տալիս էին համապատասխան անհատների: Հողօգտագործման այդ ձևը կոչվեց իլթիզամ, իսկ անհատը, որը կապալով ստացավ այն, կոչվեց մուլթազիմ:

Իլթիզամի համակարգը հատկապես մեծ տարածում ստացավ Եգիպտոսում, ավելի պակաս չափով՝ արաբական մյուս երկրներում, իսկ Լիբանանում տիրապետող մնաց ֆեոդալական համակարգն իր դասական ձևով: Մուլթազիմները պատուհաս դարձան ֆելլահների գլխին և նրանց հետ վարվում էին այնպես, ինչպես ցան-

կանում էին, կարող էին նրանց ձերբակալել և բանտ նետել, մարմնական պատիժների ենթարկել, եղել են անգամ սպանության դեպքեր:

Կայսրության թուլացմանը զուգահեռ սկսվեց նաև նրա տնտեսական անկումը: Երբեմնի ծաղկուն քաղաքներ Կահիրեն, Բաղդադը, Դամասկոսը, Հալեպը կորցրին իրենց նախկին փայլը և վերածվեցին գավառական անշուք բնակավայրերի: Կյանքն ամենուր մեռած էր: Գյուղացիները՝ արաբական երկրների հիմնական արտադրողները, բայքայվեցին և սկսեցին զանգվածաբար լքել գյուղերն ու փախչել քաղաքները: XVII դարում Հալեպում կար 3200 գյուղ, իսկ XVIII դարում մնացել էր ընդամենը 400: Նույն պատկերն էր նաև Իրաքում, Եգիպտոսում, Պաղեստինում և արաբական մյուս երկրներում: Իսկ Պաղեստինում XVIII դարի կեսերին արդեն սկսվել էր նրա դեպոպուլյացիան: Բնակչության կատաստրոֆիկ անկումն արաբական երկրներում համընդհանուր էր: XVIII դարի վերջում Երուսաղեմում ապրում էր ընդամենը 12 հազար, Դամասկոսում՝ 150 հազար, իսկ Հալեպում՝ 17 հազար մարդ: Ավելի ծանր էր դրությունը Եգիպտոսում, որտեղ գյուղացիները և հասարակ բնակչությունը մամլուքների համար սոսկ ստրուկներ էին, որոնք միակ փրկությունը տեսնում էին իրենց բնակավայրերից փախուստի մեջ: Այստեղ նույնպես բնակչության մահացությունը սովի և հիվանդությունների պատճառով շատ մեծ չափերի էր հասնում: Արաբական երկրներում սովը սովորական երևույթ էր, որն ուղղակի հնձում էր: Այդ հողի վրա սովյալների խռովություններ տեղի ունեցան՝ 1695 թ. Կահիրեում, 1703 թ. Երուսաղեմում և Դամյաթում, 1720 թ. Տրիպոլիում և Հալեպում, իսկ 1721 թ. Բասրայում:

XVI–XVIII դարերում ստեղծված սոցիալ–տնտեսական ծանր վիճակը խիստ բացասաբար ազդեց նաև արհեստների և առևտրի վրա: Օսմանյան կայսրությունում և նրա արաբական տիրույթներում տիրող դրությունը, պաշտոնյաների կամայականությունները, թալանը և կողոպուտը, անձի և գույքի ապահովության բացակայությունը, այդ բոլորը հակացույց էր առևտրի և արհեստների զարգացման համար:

5. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Օսմանյան տիրապետության հաստատումն արաբական երկրների վրա բացասական հետևանքներ ունեցավ դեռևս նախորդ դարերում ձևավորված հայ համայնքների ազգային, համայնքային, քաղաքական և մշակութային կյանքի, տնտեսական գործունեության վրա: Սուլթանների քաղաքականությունը չէր կարող բարենպաստ պայմաններ ստեղծել հայ համայնքների գոյության և զարգացման համար:

Օսմանյան կայսրությունում, որտեղ շեշտը դրված էր նվաճումների և դրանցից ստացվող ավարի ու թալանի վրա, չկային համապատասխան քաղաքական պայմաններ տնտեսական գործունեության խթանման, անհատի, նրա գույքի և ունեցվածքի ապահովության համար: Իսկ քանի որ հայերը հիմնականում զբաղված էին արհեստներով, վաճառականությամբ և շինարարությամբ, ապա Օսմանյան կայսրությունում տիրող պայմաններն առաջին հերթին հարվածում էին հենց այդ բնագավառներին, ուստի և բարենպաստ չէին հայերի համար: Կար նաև կրոնական–էթնիկական պատկանելության խնդիրը: Օսմանյան իշխանությունները հանդուրժողական չէին քրիստոնյաների և ոչ թուրք ժողովուրդների, այդ թվում և հայերի նկատմամբ, որը շատ հաճախ վերածվում էր հալածանքների և ընդունում այլանդակ ձևեր:

Այդ գործոններն իրենց խիստ բացասական անդրադարձն են ունեցել արաբական երկրներում հայ համայնքների գոյության, գործունեության և զարգացման վրա:

Առանձնապես ծանր պայմաններ ստեղծվեցին եգիպտահայ համայնքի համար: XVI–XVIII դարերում հայերի թիվը, որը Ֆաթիմյանների ժամանակ հասնում էր մի քանի տասնյակ հազարի, խիստ կրճատվել էր: Սիմեոն Լեհացու վկայությամբ, որը ճանապարհորդել էր արաբական երկրներով, նշված ժամանակաշրջանում Կահիրեում բնակվում էր ընդամենը 200 տուն հայ, իսկ մյուս վայրերում նրանք հազվադեպ էին հանդիպում: Եգիպտահայերը, որոնք նախկին հալեպցիներ, ստամբուլցիներ, դիարբեքիրցիներ էին, արհեստավորներ էին՝ զինագործներ, բարտաշներ, ոսկերիչներ, շինարարներ, ինչպես նաև զբաղվում էին վաճառականությամբ: Նրանք սերտ կապեր էին հաստատել եվրոպական գործարարների և առևտրականների հետ, որոնք օգտվում էին Եգիպտոսում հաստատված քրիստոնյաների՝ սիրիացիների, հույների և հայերի ծառայություններից: Սահմանափակ թվով եգիպտահայեր եղել են անգամ պետական և զինվորական ծառայության մեջ. նրանք եղել են մամլուք սուլթանների բանագնացներ, կատարել են նրանց հատուկ հանձնարարությունները, ինչպես, օրինակ, 1771 թ. Բեյրութի ջրերում հայտնված ռուսական նավատորմի հրամանատար, իշխան Ա. Օոլովի հետ Եգիպտոսի սուլթան Ալի բեյի բանակցությունների ժամանակ: Արաբ պատմաբան Աբդ ալ–Ռահման ալ–Ջաբարտին Նապոլեոնի եգիպտական արշավանքին նվիրված իր ուսումնասիրության մեջ հետաքրքիր տեղեկություններ է հայտնում այն մասին, որ 1798 թ. Եգիպտոս ներխուժած ֆրանսիական բանակի դեմ կռվող եգիպտական հրամանատարների մեջ եղել են նաև հայեր: Պետք է նշել, որ Բոնապարտի ներխուժումը Եգիպտոս ընդհանուր առմամբ բացասական հետևանքներ ունեցավ եգիպտահայության համար: Նա հենվում էր ղպտիների վրա և հովանավորում նրանց առևտրի ու տնտեսական գործունեության բնագավառում: Նա վերացրեց հայերի մենաշնորհները մի շարք բնագավառներում և սահմանափակեց նրանց գործունեությունը: Բոնապարտի արշավանքը Եգիպտոս խիստ զայրացրել էր մուսուլման եգիպտացիներին, որոնք իրենց զայրույթն ուղղեցին քրիստոնյաների, այդ թվում և հայերի դեմ, թեև վերջիններս չէին օգտվում Նապոլեոնի հովանավորությունից: Եգիպտացիները ֆրանսիական զորքերի վրա հարձակվելու ժամանակ հարձակվում էին նաև հայերի թաղամասերի և տների վրա լոկ այն պատճառով, որ հայերը, ինչպես ֆրանսիացիները, քրիստոնյաներ էին: Այդ ամենի հետևանքով հայերի թիվը XVIII դարի վերջերին Եգիպտոսում նվազեց, և նրանց դիրքերը խիստ թուլացան:

XVI–XVIII դարերում հայկական համայնքներ գոյություն ունեին Սիրիայի, Լիբանանի և Պաղեստինի տարբեր քաղաքներում՝ Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում, Զմմառում, Լաթաքիայում և այլ վայրերում: Սիրիայում առանձնապես աչքի էր ընկնում Հալեպի հայ համայնքը: Սիմեոն Լեհացու տվյալներով՝ 1616 թ. Հալեպում ապրել է մոտ երեք հազար հայ, իսկ դարակեսին նրանց թիվն աճել և հասել է քսան

հազարի: XVII դարի վերջերից, երբ ուժեղացան խժդժությունները Սիրիայում, և վատացավ քրիստոնյաների վիճակը, Հալեպի, ինչպես նաև Դամասկոսի հայությունը անկում ապրեց: 1745 թ. Հալեպում ապրում էր ընդամենը 6700 հայ:

Հալեպի և ընդհանրապես Սիրիայի ու Լիբանանի հայությունն Էրզրումից, Բիթլիսից, Սեբաստիայից, Սասունից, Վանից, Ղարաբաղից, անգամ Երևանից գաղթածներն էին, հիմնականում արհեստավորներ և վաճառականներ: Արհեստներից զարգացած էին ոսկերչությունը, կաշեգործությունը, դերձակությունը, մուշտակագործությունը, ներկարարությունը և այլն: Հայ վարպետները մեծ հեղինակություն էին վայելում: Իսկ հայ վաճառականներից պետք է առանձնացնել մետաքսի առևտրով զբաղվող հայ խոջաներին, որոնց ձեռքում էին մետաքսի արտահանման հիմնական լծակները: Նրանք հաջողությամբ մրցակցում էին եվրոպական, մասնավորապես Վենետիկի վաճառականների հետ:

Հալեպում գործում էր երկու հայկական եկեղեցի, որոնք կառուցվել էին XV դարում: Դրանք էին Ս. Աստվածածին և Քառասուն մանկան եկեղեցիները, որոնք մեծ համարում ունեին ամբողջ Սիրիայում և տարածաշրջանում:

Հարկ է նշել Զմմառի և նրա շրջակա գյուղերի հայ համայնքը Լիբանանում: Զմմառի վանքը հիմնվել է XVIII դարում: Այն կանգուն է մինչև օրս և հայտնի է իր հարուստ միջնադարյան ձեռագրերի հավաքածուով: Դա, փաստորեն, եղել է կարևոր հոգևոր-մշակութային կենտրոն: Հայերի կենտրոնացմանը Լիբանանում խթանել է այն բարենպաստ քաղաքական մթնոլորտը, որը հաստատվել էր այդ երկրում Մաանների դինաստիայի տարիներին, հատկապես Էմիր Ֆախր ալ-Դին Բ-ի կառավարման շրջանում՝ XVI դարի վերջերին և XVII դ. սկզբներին: Դա մի ապահով երկրամաս էր, որն իրեն էր ձգում Օսմանյան կայսրությունում բռնության ենթակա ժողովուրդներին: Դրսն նպաստում էր նաև Ֆախր ալ-Դին Բ-ի քաղաքականությունը, որը հովանավորում էր գյուղատնտեսության, առևտրի, արհեստների ու արվեստների զարգացումը: Այդ պատճառով էլ նրա կառավարման տարիներին զգալի թվով հայեր Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթեցին Լիբանան:

Ինչ վերաբերում է Պաղեստինի հայությանը, ապա այստեղ իր գոյությունը պահպանում և գործունեությունը շարունակում էր Երուսաղեմի հայ համայնքը, որը համախմբված էր իր եկեղեցու և հոգևոր առաջնորդների շուրջը:

Նշված դարերում հայ բնակչություն կար նաև Իրաքում, գլխավորապես Բաղդադում, ինչպես նաև Բասրայում և Մոսուլում: Սակայն նրանց թիվը, ինչպես նախկինում, այնպես էլ XVI–XVIII դարերում, մեծ չի եղել: Նրանք համալրվում էին՝ մի կողմից Հայաստանի՝ ղափանցի, ագուլիսցի, տիգրանակերտցի, սղերթցի և այլ վայրերի հայ տարագիրներից, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի տարբեր վայրերից՝ Նոր Ջուղայից, Քերմանշահից, Համադանից և այլ քաղաքներից գաղթածների հաշվին: Իրաքի հայերի կյանքում նշանակալի դեր էին խաղում Նոր Ջուղայի վաճառականները, որոնք առևտրական գործերով շատ հաճախ էին լինում Բաղդադում, այցելում Բասրա:

Իրաքի հայերի վերաբերյալ Ա. Ալպոյաջյանը, հենվելով օտար ճանապարհորդների տեղեկությունների վրա, իր «Իրաքի հայերը» գրքում բերում է մի քանի տվյալներ, որից երևում է, որ, օրինակ, 1604 թ. Իրաքում եղել է ընդամենը 10 հայ: Հետագայում, անշուշտ, տեղի են ունեցել փոփոխություններ, և հայերի թվաքանակը հավանաբար աճել է, բայց ընդհանուր առմամբ հայերն Իրաքում մեծ թիվ չեն կազմել, լինի Բաղդադում թե Բասրայում, ինչպես, ասենք, Հալեպում: Ա. Ալպոյաջյանը ցավով նշում է, որ իրաքահայերը, որոնք պահպանել էին իրենց հավատարմությունը Հայ եկեղեցուն և կրոնին, անգամ իրենց սեփական եկեղեցին չունեին և թուրքական տիրապետության առաջին հարյուրամյակի ընթացքում օգտվում էին կաթոլիկ վարդապետների եկեղեցուց: Ինչպես նշում է հայ վաստակաշատ պատմաբանը, այն սակավաթիվ հայերը, որոնք գտնվում էին Բաղդադում, մեծ մասամբ առևտրականներ էին:

XVIII դարի վերջերին իրաքահայության շրջանում որոշ աշխուժություն նկատվեց, որը կապված էր առևտրական կապերի զարգացումով Փոքր Ասիայի և Պարսից ծոցի ու նրա միջոցով ասիական մայրցամաքի տարբեր երկրների հետ: Դրան համապատասխան ավելացավ նաև իրաքահայության թիվը, որը XVIII դարի վերջին հասավ մոտ յոթ հարյուրի: Նրանք ունեցան իրենց եկեղեցին, առևտրական խավի կողքին ավելացան արհեստավորները, կային նաև բժիշկներ և այլն: Բայց դա նույնպես երկար չտևեց, նրանց մեծ մասը՝ մոտ 670 հոգի, հերթական ժանտախտի զոհը դարձավ, և Իրաքի հայության կյանքը կրկին խամրեց:

Ծանոթությունն արաբական երկրներում հաստատված հայության XVI–XVIII դարերի կյանքին և գործունեությանը ցույց է տալիս, որ միայն մեծ վերապահումով կարելի է խոսել նրանց՝ որպես կազմակերպված համայնքի մասին: Նրանք ավելի շուտ եղել են մի հավաքականություն, որը, սակավ բացառությամբ, չի ունեցել իր ազգային, թեմական, եկեղեցական, կրթական և մշակութային կառույցները, որոնք համակարգեին, ուղղություն տային հայությանը, ապահովեին հայության՝ որպես օտար ափերում հայտնված մի ուրույն էթնոսի ինքնությունը: Դրա համար, հավանաբար, անհրաժեշտ էր ժամանակ, փորձառություն և փորձի կուտակում: Դրանից ավելի անհրաժեշտ էր ազգային, քաղաքական-սոցիալական, տնտեսական և մշակութային որակապես այլ միջավայր, որն Օսմանյան կայսրությունում տիրող քաղաքականության, մտածելակերպի, ծանր մթնոլորտի և ոչ թուրքերի, այդ թվում և հայերի նկատմամբ վարվող թշնամական դիրքորոշման պայմաններում բացակայում էր:

6. ՀԱԿԱԹՈՒՐՔԱԿԱՆ ԸՆԴՎԶՈՒՄՆԵՐՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Իր դաժանությամբ հռչակված օսմանյան տիրապետությունը, որը հաստատվեց արաբական երկրների վրա XVI դարի ընթացքում, պարարտ հող հանդիսացավ հակաթուրքական ելույթների համար: XVI–XVIII դարերում բազմաթիվ հակաթուրքական ելույթներ, խռովություններ և ապստամբություններ են տեղի ունեցել Սիրիայում, Եգիպտոսում, Լիբանանում, Պաղեստինում, Եմենում և արաբական այլ երկրներում:

Հատկանշական է, որ օսմանյան տիրապետության դեմ արաբները հանդես եկան, երբ նրա հաստատումից հետո դեռ շատ ժամանակ չէր անցել: Առաջին հակաօսմանյան խոշոր ելույթը տեղի ունեցավ Սիրիայում 1520 թ.՝ օսմանյան սուլթան Սելիմի մահից անմիջապես հետո, և դրա նախաձեռնողը եղավ Սիրիայի փոխարքա Ջան Բիրդի ալ-Ղազալին, որին այդ բարձր պաշտոնին էր նշանակել հենց ինքը՝ Սելիմ Ա-ն, Սիրիան նվաճելուց հետո: Ալ-Ղազալին 1520 թ. Դամասկոսի Օմայանների հոչակավոր մզկիթում Սիրիան հայտարարեց անկախ և հրաժարվեց ճանաչելուց օսմանցիների գերիշխանությունը: Նա իրեն կոչեց Մալիք ալ-Աշրաֆ՝ «Ամենապատվելի թագավոր», և իր անունով դրամ հատեց: Ցանկանալով օսմանցիների հավանական հարձակման ժամանակ դաշնակից ունենալ՝ Մալիք ալ-Աշրաֆը դիմեց Եգիպտոսի փոխարքա Խաիր բեյին՝ վարվել նույն կերպ, ինչպես ինքն էր վարվել, այսինքն՝ հոչակել Եգիպտոսի անկախությունը, սակայն վերջինս հրաժարվեց այդ առաջարկությունից: Օսմանյան նոր սուլթան Սուլեյման Ա ալ-Կանունին մեծ զորքով մտավ Սիրիա և 1521 թ. հունվարին Դամասկոսի մոտ՝ ալ-Քաբանում տեղի ունեցած ճակատամարտում ջախջախեց Մալիք ալ-Աշրաֆի զորքերը, դաժանորեն պատժեց ապստամբներին, իսկ Մալիք ալ-Աշրաֆը գերի ընկավ և կախաղան հանվեց: Օսմանյան ենիչերական զորքերը մտան Դամասկոս, և սուլթան Սուլեյմանը նրանց իրավունք տվեց մի քանի օր կողոպտելու և թալանելու քաղաքը, սպանելու ապստամբած արաբներին: Նրանց գործողություններն իրենց դաժանությամբ հիշեցնում էին Լենկ Թեմուրի ահարկու գործողությունները: Այդկերպ օսմանյան սուլթանը «խաղաղեցրեց» Դամասկոսը: Սիրիայում վերականգնվեց մինչև ապստամբությունը հաստատված վարչակարգը՝ երեք վիլայեթներն իրենց նախկին սահմաններով:

Սակայն օսմանյան սուլթանները չկարողացան վերջնականապես հնազանդեցնել Սիրիան: Հակաթուրքական դժգոհությունը շարունակվում էր՝ ընդունելով այլ ձևեր: Ուժեղացավ տեղական սիրիական ավատատիրական ավագանու, երևելի արաբական ընտանիքների դերը, որի հետ հարկադրված էր հաշվի նստել Ստամբուլը: Սիրիայում այդպիսի ընտանիքների շարքում առաջին հերթին պետք է նշել Դամասկոսի Ազըմների ընտանիքը: Օսմանյան թուլացող սուլթանները ստիպված էին Ազըմների ներկայացուցիչներին անգամ նշանակել Դամասկոսի վալիներ, որոնք այդ պաշտոնը վարել են 1724–1783 թթ.: Սակայն թուրքական իշխանությունները հարմար առիթի էին սպասում նրանցից ձերբազատվելու համար: Նրանք այդպես վարվեցին առաջին վալի Իսմայիլ ալ-Ազըմի հետ, որին բանտ նետեցին, որտեղ և նա մահացավ: Սուլթանը դաժան վարվեց նաև նրա որդու՝ Ասադ ալ-Ազըմի հետ, որին 1757 թ. հրամայեց խեղդամահ անել բաղնիքում: Նրանց հետ այդպես դաժան վարվելու պատճառն այն էր, որ հայր և որդի Ազըմները ձգտում էին ինքնուրույն քաղաքականություն վարելու՝ հաշվի առնելով Սիրիայի ազգային շահերը, որը մահացու հանցանք էր համարվում Օսմանյան կայսրությունում: Այդուհանդերձ, Ստամբուլին չհաջողվեց արմատախիլ անել հակաօսմանյան տրամադրությունները Սիրիայում:

Անհանգիստ էր Եգիպտոսը, որը ժայթքելու պատրաստ հրաբուխ էր հիշեցնում: Եգիպտոսում աստիճանաբար իրենց դիրքերն ամրապնդեցին մամլուքները, որոնք ի վերջո դարձան նրա փաստացի կառավարողները: Դա անհերքելի իրողություն դարձավ XVIII դարի երկրորդ կեսին, երբ ծագումով աբխազ մամլուք Ալի բեյը 1767 թ. իր հավատարիմ զորքով մտավ Կահիրե և իրեն հոչակեց «Շեյխ ալ-բալադ»՝ երկրի կառավարիչ: Նա դաժան հաշվեհարդար տեսավ Կահիրեում տեղակայված թուրքական ենիչերական բանակի հետ՝ սրի քաշելով թուրք զինվորներին: Ալի բեյը 1769 թ. Եգիպտոսից արտաքսեց թուրք փոխարքա-փաշային և Եգիպտոսը հոչակեց անկախ: Նա այնուհետև գրավեց Արաբիան և Սիրիան: 1770 թ. նրա մամլուքյան զորքը մտավ Մեքքա: 1791 թ. իշխանությունն անցավ Մուրադ և Իբրահիմ մամլուքյան բեյերին, որոնք Եգիպտոսը համատեղ կառավարում էին որպես անկախ պետություն մինչև 1798 թ. Բոնապարտի ներխուժումը Եգիպտոս:

Հակաթուրքական համառ և երկարատև պայքար ծավալվեց Լիբանանում: Օսմանյան սուլթան Սելիմ Ահեղը Լիբանանի վրա իր տիրապետությունը հաստատելիս նրան շնորհել էր յուրատեսակ կարգավիճակ՝ ինքնավարություն: Սակայն հետագայում թուրքական իշխանությունները հաշտ աչքով չէին նայում դրան: Նրանց առանձնապես անհանգստացնում էր այն հանգամանքը, որ Լիբանանի էմիր Ֆախր ալ-Դին Ա-ը եռանդուն քայլերով զարգացնում էր իր երկիրը և ամրապնդում այն: Սուլթան Սուլեյման Ա-ն փոխեց իր դիրքորոշումը և փորձեց Լիբանանը դնել իր ուղղակի կառավարման ներքո, բայց հանդիպեց դիմադրության էմիրի գլխավորությամբ և հաջողություն չունեցավ: Սուլթանը դիմեց հին ու փորձված զենքին՝ դավադրությանը: 1544 թ. Ֆախր ալ-Դինը դավադրաբար սպանվեց: Սակայն պայքարն օսմանյան տիրապետությունը Լիբանանի վրա ամրապնդելու քաղաքականության դեմ շարունակվեց, որը գլխավորեց սպանված էմիրի որդին՝ Քուրքումազը: Բայց նա ևս այդ պայքարում 1585 թ. զոհվեց, և էմիրությունն անցավ նրա որդուն՝ Ֆախր ալ-Դին Բ-ին: Նա խելացի, եռանդուն, զգույշ և հաշվենկատ, խորամանկ ու դիվանագիտության նրբություններին տիրապետող պետական գործիչ էր, որի օրոք Լիբանանի էմիրությունը հասավ իր ծաղկման և հզորության գագաթնակետին: Նա իր առջև խնդիր էր դրել ստեղծելու ռազմական և տնտեսական առումով հզոր Լիբանան, ընդարձակելու նրա սահմանները, խզելու կամ արմատապես փոխելու հարաբերությունները Ստամբուլի հետ, և Լիբանանը դնելու զարգացման առաջադիմական ուղու վրա՝ շատ բաներում ընդօրինակելով Եվրոպային: Ֆախր ալ-Դին Բ-ն հասավ այն բանին, որ Ստամբուլը Լիբանանին զիջեց Բեյրութի և Սայդայի սանջակները, Տրիպոլին, Բաալբաքն ու Բիքաան, Սաֆադը, Տիբերիան և Նազարեթը: Նա, փաստորեն, սկսեց վարել ինքնուրույն արտաքին քաղաքականություն: Այնուհետև նա ձեռնամուխ եղավ իր ծրագրի ամենավտանգավոր կետի իրագործմանը՝ խզելու կապերը Ստամբուլի հետ կամ դրանք դնելու նոր հիմքերի վրա: Ի վերջո դա հանգեցրեց ապստամբության: Լիբանանյան առաջին ապստամբությունը տեղի ունեցավ 1613 թ., որն ավարտվեց անհաջողությամբ: Ֆախր ալ-Դինը պարտություն կրեց և փախավ Տոսկանա, որտեղ նա մնաց հինգ տարի: Ներում ստանալով սուլթանից՝

նա վերադարձավ Լիբանան և վերահաստատվեց իր գահի վրա: Սակայն Ֆախր ալ-Դինը չէր հրաժարվել օսմանյան լուծը թոթափելու իր քաղաքական ծրագրերից, որը 1633 թ. հանգեցրեց նոր ապստամբության: Սուլթան Մուրադ Դ-ը պատերազմական գործողություններ սկսեց Ֆախր ալ-Դին Բ-ի դեմ, որը տևեց երկու տարի: Այն ավարտվեց 1635 թ. թուրքերի հաղթանակով, Լիբանանի իշխանապետությունը ջախջախվեց, Ֆախր ալ-Դին Բ-ը գերի ընկավ և մահապատժի ենթարկվեց:

Չնայած պարտությանը՝ Լիբանանի պայքարն օսմանյան տիրապետության դեմ և 1613 ու 1633-1635 թթ. երկու հակաօսմանյան ապստամբությունները կազմում են Լիբանանի և ընդհանրապես արաբական երկրների միջնադարյան պատմության ամենափառավոր էջը:

XVII դարի վերջում հակաթուրքական շարժում ծավալվեց Հյուսիսային Պաղեստինում՝ ներառելով նաև Սիրիայի և Լիբանանի տարածքները: Այդ շարժումը ղեկավարում էր Զահիր ալ-Ումարը, որը ստեղծեց կիսանկախ պետություն՝ իր տիրույթներին միացնելով Սաֆադը, Նաբլուսը, Նազարեթը և Ակկան: 1768 թ. տեղի ունեցավ արաբական և թուրքական զորքերի բախումը, որն ավարտվեց արաբական զորքերի հաղթանակով: Այդ պահից սկսվեց արաբների լայնածավալ ապստամբությունը, որը տևեց մի քանի տարի, և որի ընթացքում նրանք հասան նոր հաջողությունների: 1773 թ. նրանք գրավեցին Բեյրութը: Դա եղավ նրանց վերջին կարևոր հաղթանակը, քանի որ 1775 թ. տեղի ունեցավ բեկում, և թուրքական զորքերը կարողացան ճնշել ապստամբական կենտրոնները: 1775 թ. դավադրաբար սպանվեց ապստամբության ղեկավար Զահիր ալ-Ումարը, և թեև դրանից հետո նրա որդին ևս որոշ ժամանակ ղեկավարեց ապստամբությունը, այդուհանդերձ թուրքերը կարողացան կոտրել ապստամբների դիմադրությունը:

Այդ իրադարձությունների ընթացքում բացասական դեր խաղաց թուրքերի հավատարիմ ծառա, ծագումով բոսնիացի նախկին մամլուք Ահմադը, որն իր դաժանության համար ստացել էր Ջազզար՝ «Մսագործ» մականունը: Նա դարձավ Սայդայի և Դամասկոսի վալի և իրեն ենթարկեց Տրիպոլիի վիլայաթը՝ իր իշխանությունը տարածելով ամբողջ Սիրիայի վրա: Նրա դեմ Սիրիայում, Լիբանանում և Պաղեստինում մի քանի անգամ ապստամբություն բարձրացվեց՝ փորձելով տապալել նրան: 1789 թ. խոշոր ապստամբություն տեղի ունեցավ Լիբանանում, որի ընթացքում ազատագրվեցին Բեյրութը, Սայդան և Սուրը: Ապստամբությունն ընդհատումներով շարունակվեց մինչև 1797 թ.: Ջազզարի և նրա թիկունքում կանգնած օսմանյան վարչակարգի դեմ հուժկու ապստամբություն տեղի ունեցավ Դամասկոսում 1798 թ.: Ստամբուլը հարկադրված եղավ Մսագործին հեռացնել Դամասկոսի վալիի պաշտոնից:

Հակաօսմանյան ելույթներ տեղի ունեցան նաև Իրաքում, որոնցից ուշագրավ է 1651 թ. ապստամբությունը Բասրայում, մունթաֆիկ ցեղային միության ապստամբությունը 1690 թ. և այլն: Վալիներին հաջողվեց ճնշել այդ ապստամբությունը, որը միաժամանակ հանգեցրեց նրանց դիրքերի ամրապնդմանը և կախվածության թուլացմանը Ստամբուլից: Այդ առումով մեծ հաջողության հասան Բաղդադի վալի Հասան փաշան (1702-1724 թթ.) և մամլուք Սուլեյման Բույուկը (1780-1802 թթ.): Նա

ստեղծեց իր բանակը, հարկեր ու մաքսեր էր հավաքում՝ հաշվի չնստելով Բարձր Դռան հետ:

Հակաթուրքական շարժումներից դուրս չմնաց նաև Արաբիան, հատկապես Եմենը: Եմենցիները 1565 թ. երկրից դուրս վռնդեցին թուրքերին: Եվ թեև թուրքական բանակին 1570 թ. հաջողվեց նորից մտնել Եմեն, բայց եմենցիները շարունակեցին պայքարը, և նրանց հարվածների տակ թուրքական կայազորները 1635-1642 թթ. հարկադրված էին հեռանալ երկրից: Զեյդական առաջնորդ Կասիմը Եմենում հիմնեց անկախ իմամություն:

Պայքարի մեջ մտան նաև Արևելյան Արաբիայի ցեղերը, որոնք XVII դարի 70-ական թվականներին թուրքերին արտաքսեցին և իրենց տիրապետությունը հաստատեցին ալ-Խասայի վրա:

Նշանակալի քաղաքական և սոցիալ-տնտեսական տեղաշարժեր կատարվեցին Կենտրոնական Արաբիայում, որը թեև չէր մտնում Օսմանյան կայսրության մեջ, բայց կարևոր դերակատարում ունեցավ՝ կանխելով թուրքական տիրապետության հաստատումը Արաբիայում: Կենտրոնական Արաբիայում XVIII դ. սկզբներին հզորացավ Սաուդների ընտանիքը: Մուհամմեդ իբն Սաուդը (1727-1765 թթ.) Նաջդի օազիսային մի գյուղի՝ Դիրայահի շեյխն էր: Նա և նրա մահից հետո նրա որդին՝ Աբդ ալ-Ազիզ Սաուդը (1765-1803 թթ.), իրականացրին Նաջդի միավորումը և Սաուդյան էմիրության հիմնումը, որին հետագայում վիճակված էր մեծ դեր խաղալ Արաբիայի պատմության և հակաթուրքական պայքարի մեջ:

Սաուդյան էմիրության ստեղծման մեջ կարևոր հանգամանք էր այն իրողությունը, որ նրա հիմնադիր էմիրներն առաջին օրվանից պաշտպանեցին վահաբիական նոր կրոնաքաղաքական գաղափարախոսությունը, որի հիմնադիրն էր Մուհամմեդ իբն ալ-Վահաբը (1703-1792 թթ.): Վահաբիական ուսմունքը պահանջում էր վերադառնալ մուսուլմանների սրբազան գրքին՝ Կորանին, և նրա ուղղափառ ուղղությանը՝ սուննիզմին, մերժել այն բոլոր նորամուծությունները, որոնք կատարվել են վաղնջական իսլամի մեջ, դեմ էին սրբերի պաշտամունքին և այլն: Նա հանդես էր գալիս հանուն մաքուր իսլամի, որի պատճառով էլ վահաբիականներին համարում են իսլամի պուրիտաններ: Վահաբիզմը կրոնաքաղաքական ուսմունք է և ուներ հակաթուրքական ուղղվածություն: Նա մուսուլմաններին բաժանում է լավ և վատ մուսուլմանների: Վատերի մեջ վահաբիզմը մտցնում է թուրքերին, իսկ Օսմանյան կայսրությունը՝ համարում արատավոր և անմաքուր: Նա մերժում էր թուրքերին հատուկ զանազան կրոնական պաշտամունքներն ու սովորույթները՝ միստիցիզմը, դերվիշիզմը և, որ ամենակարևորն է, կոչ էր անում պայքարելու թուրքական կեղծ սուլթան-խալիֆաների ու տեղերում նրանց ներկայացուցիչները հանդիսացող թուրքական փաշաների և վալիների դեմ: Նա թուրքական սուլթաններին չէր ճանաչում խալիֆա՝ նրանց համարելով կեղծ խալիֆա:

Հետագայում՝ XVII դարի վերջերին և XIX դարի սկզբներին, Սաուդյան էմիրությունը, հենվելով վահաբիականության սկզբունքների վրա, իրեն ենթարկեց ամ-

բողջ Կենտրոնական Արաբիան, Խասը, Ասիրը և մի շարք հաղթանակներ տարավ Հիջազի շերիֆի նկատմամբ ու վերածվեց ուժեղ աստվածապետության:

XVI–XVIII դարերում արաբական երկրներում մեծ թափ ստացած հակաթուրքական շարժումները, որոնք շատ հաճախ ապստամբությունների, իսկ երբեմն նաև պատերազմների բնույթ էին կրում, ցնցեցին Օսմանյան կայսրության հիմքերը, սասանեցին նրա տիրապետությունը արաբական երկրներում և ցույց տվեցին արաբներին, որ միանգամայն հնարավոր է պայքարել օսմանյան լծի դեմ՝ այն տապալելու և վերացնելու համար:

Հակաթուրքական շարժումները հետագայում ոչ միայն չթուլացան, այլև, ընդհակառակը, ավելի մեծ չափեր ընդունեցին:

7. ՆԱՊՈԼԵՈՆ ԲՈՆԱՊԱՐՏԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵԳԻՊՏՈՍ (1798–1801 ԹԹ.)

Գեներալ Բոնապարտի եգիպտական արշավանքը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: 1789 թ. հեղափոխությունից հետո Ֆրանսիան օրհասական պայքար էր մղում եվրոպական միապետական հետադիմության կոալիցիայի դեմ, որի կազմակերպիչն ու ոգեշնչողը Մեծ Բրիտանիան էր՝ Ֆրանսիայի գլխավոր ախոյանը: Չկարողանալով Լա Մանշի նեղուցն անցնել և ներխուժել Անգլիա՝ Ֆրանսիան կառավարող Դիրեկտորիան որոշեց Անգլիային հարված հասցնել Արևելքից՝ նրա գաղութներից, առաջին հերթին սպառնալ Հնդկաստանին: Իսկ դրա համար ամենահարմարը արաբական բնական կամուրջն օգտագործելն էր, որի գլխավոր օղակը Եգիպտոսն էր: Կար նաև մեկ այլ հանգամանք: Գեներալ Բոնապարտը Ֆրանսիայի բարձրացող զինվորական աստղն էր, որն արդեն մեծ հեղինակություն էր վայելում, և Դիրեկտորիան մտավախություն ուներ, որ նա կարող է տապալել Դիրեկտորիան և գրավել իշխանությունը: Ուստի անհրաժեշտ էր նրան ինչ-որ պատրվակով հեռացնել Ֆրանսիայից: Եվ նրան հանձնարարվեց գլխավորել ֆրանսիական 30 հազարանոց էքսպեդիցիոն կորպուսը, ներխուժել Եգիպտոս և սպառնալ բրիտանական գաղութներին, առաջին հերթին՝ Հնդկաստանին: Դրա հետ միասին հեղափոխական Ֆրանսիան արդեն այդ ժամանակ փայփայում էր նոր գաղութներ նվաճելու գաղափարը:

1798 թ. մայիսին գեներալ Բոնապարտն, իր 30 հազարանոց կորպուսի գլուխն անցած, նավատորմի ուղեկցությամբ դուրս գալով Տուլոնից և հաջողությամբ խուսանավելով բրիտանական նավատորմի հետ բախվելուց, որը գլխավորում էր ծովակալ Նելսոնը, հուլիսի 1-ին մտավ եգիպտական Ալեքսանդրիա նավահանգիստը: Նա առանց դժվարության ճնշեց եգիպտական մամլուքների դիմադրությունը, գրավեց Ալեքսանդրիան և պատրաստվեց արշավել Կահիրեի վրա:

Ոտք դնելով եգիպտական հողի վրա՝ Բոնապարտը արաբերենով կազմված հատուկ մանիֆեստով դիմեց եգիպտացիներին, որտեղ ասված էր. «Եգիպտոսի՛ բնակիչներ: Ձեզ կարող են ասել, որ ես իբր եկել եմ կործանելու ձեր կրոնը: Դա սուտ է: Չհավատաք դրան: Պատասխանեք այդ ստախոսներին, որ ես եկել եմ վերականգնելու ձեր իրավունքները, պատժելու բռնազավթիչներին, որ ես ավելի շատ եմ հարգում Ալլահին, նրա մարգարեին և Կորանը, քան թե մամլուքները»: Մանիֆեստում հիմնական ալաքն ուղղված էր մամլուքների դեմ, որոնց համարելով վատ մուսուլմաններ՝ Բոնապարտը նշում էր, որ «նրանք զավթել են կյանքի բոլոր բարիքները և ուրախությունները», իսկ Եգիպտոսի երբեմնի մեծ քաղաքները, ջրանցքները և առևտուրը «կործանվել են մամլուքների բռնատիրության և ագահության հետևանքով»: Մանիֆեստում ասված էր, որ բոլոր այն եգիպտացիները, որոնք կանցնեն ֆրանսիացիների կողմը, «եռակի երջանիկ կլինեն»: Եգիպտացիների համակրանքը շահելու համար Բոնապարտը փոխեց իր անունը և ընդունեց «Ալի Բունապարդի-փաշա» անվանակոչումը:

Եգիպտոսը, ինչպես նշվել է, գտնվում էր Մուրադ և Իբրահիմ բեյերի կառավարման ներքո: Նրանք և մամլուքների ռազմական խորհուրդը որոշեցին ֆրանսիացիներին ճակատամարտ տալ մինչև նրանց մոտենալը Կահիրեին: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ 1798 թ. հուլիսի 21-ին Կահիրեից ոչ հեռու՝ Գիզայում՝ Քեոփսի և եգիպտական այլ փարավոնների բուրգերի մոտ: Մամլուքյան զորքերը գլխովին ջախջախվեցին: Մուրադ բեյը փախավ Վերին Եգիպտոս, իսկ Իբրահիմ բեյը՝ Սիրիա:

Սակայն շուտով Բոնապարտը լուրջ դժվարությունների հանդիպեց: 1798 թ. օգոստոսի 1-ին անգլիական նավատորմը Աբուկիրի ծովախորշում հարձակվեց ֆրանսիական նավատորմի վրա և ոչնչացրեց այն: Դրա հետևանքով խզվեց ծովային կապը Ֆրանսիայի հետ, որի պատճառով նա չէր կարող համալրում ստանալ հայրենիքից: Բոնապարտն այլևս չէր կարող մտածել Հնդկաստանը գրավելու մասին: Նա ավելի շատ պետք է մտածեր ֆրանսիական զորքերի փրկության մասին: Եգիպտոսը ֆրանսիացիների համար վերածվեց թշնամական միջավայրի: Դրանում իր բացասական դերը խաղաց Բոնապարտի քաղաքականությունը: Նա շատ դաժան էր վարվում եգիպտացիների հետ: Երբ ֆրանսիական զորքերը մտան Կահիրե, նրանք կողոպտեցին, թալանեցին և հրկիզեցին քաղաքը: Նա ծանր հարկեր դրեց, որոնք երբեմն ավելի ծանր էին, քան մամլուքներինը, գյուղացիներից բռնագրավեցին հացահատիկը և անասնակերը: Դրա հետևանքով եգիպտացիները թշնամաբար տրամադրվեցին Բոնապարտի և ֆրանսիացիների նկատմամբ: Դրությունն ավելի բարդացավ, երբ օսմանյան սուլթան Սելիմ Գ-ը 1798 թ. սեպտեմբերին պատերազմ հայտարարեց Ֆրանսիային:

Եգիպտոսում սկսվեց հակաֆրանսիական ապստամբություն: Ապստամբության մասնակիցները հարձակվում էին ֆրանսիական զինվորների և սպաների վրա, սպանում նրանց: Նույն ճակատագրին էին արժանանում եգիպտացիներին ատելի հարկահավաքները: Այդ շարժումը լայն թափ էր ստացել հատկապես Նեղոսի դելտայում, որտեղ ապստամբել էր քաղաքային և գյուղական բնակչությունը: Ի պատասխան՝ ֆրանսիական զինվորները խստորեն պատժում էին նրանց, անգամ ամբողջ գյուղեր հրկիզում: Բայց դա չօգնեց նրանց: Ապստամբությունը տարածվեց նաև Եգիպտոսի մյուս շրջաններում, իսկ 1798 թ. հոկտեմբերին ապստամբեց Կահիրեն: Չկարողանալով հնազանդեցնել ապստամբներին՝ ֆրանսիացիները հար-

կաղրված էին լքել Կահիրեն: Բոնապարտը հազիվ փրկվեց՝ փախուստ տալով մայրաքաղաքից և ապաստան գտնելով Նեղոսի կղզիներից մեկում: Ապստամբները Կահիրեն ծածկեցին բարիկադների ցանցով՝ սպասելով ֆրանսիացիների հակահարձակմանը: Ապստամբության կենտրոնը դարձավ Կահիրեի ալ-Ազհար մզկիթը, որտեղ կենտրոնացավ մոտ 15 հազար կահիրցի: Կահիրեին օգնության եկան նաև գյուղացիները՝ մոտ 5 հազար ֆելլահներ, և բեդվիններ հարևան լիբիական անապատից: Ֆրանսիական հակահարձակումն իրեն սպասեցնել չտվեց: Ֆրանսիացիները կարողացան դաժանորեն ճնշել ապստամբությունը, իսկ նրա վեց ղեկավարները գլխատվեցին:

Թեև ապստամբությունը ճնշվեց, բայց Բոնապարտը լավ էր հասկանում, որ Եգիպտոսում ինքն այլևս անելիք չունի, և 1799 թ. օգոստոսի 22-ին նա, անգամ առանց իր զորահրամանատարներին տեղյակ պահելու, գաղտնի լքեց Կահիրեն և վերադարձավ Ֆրանսիա: Բայց Եգիպտոսում շարունակում էր մնալ եգիպտական կորպուսը՝ գեներալ Կլեբերի գլխավորությամբ: Նա հայտնվեց անելանելի վիճակում, կրկին ապստամբեց Կահիրեն, տեղի էին ունենում ռազմական բախումներ թուրքական զորքերի հետ, դավադրաբար սպանվեց նաև ինքը՝ գեներալ Կլեբերը: 1801 թ. սկզբներին ֆրանսիական կորպուսի դրությունը Եգիպտոսում դարձավ օրհասական: Եգիպտոս մտավ անգլիական 20 հազարանոց կորպուսը, որը շրջապատեց Կահիրեն և Ալեքսանդրիան: 1801 թ. սեպտեմբերին այն, ինչ մնացել էր ֆրանսիական կորպուսից, անգլիացիների թույլտվությամբ հեռացավ Եգիպտոսից և վերադարձավ Ֆրանսիա:

Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ արկածախնդրություն հիշեցնող ֆրանսիական կորպուսի եգիպտական արշավանքը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ: *ԱՐԱԲԱ-ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ*

Հետօմայյան դարաշրջանում նոր փուլ սկսվեց մշակույթի, արվեստների և գիտության զարգացման ընագավառում, որն ընդունված է անվանել «Արաբա-մուսուլմանական մշակույթ»:

Եթե մինչ այդ խոսքը արաբական մշակույթի ձևավորման և զարգացման մասին էր, ապա, սկսած Աբբասյան խալիֆայությունից, նրան զուգահեռ գոյություն ունեցած կամ նրան հաջորդած խալիֆայություններում, սուլթանություններում, էմիրություններում և այլ իշխանապետություններում ի հայտ է գալիս մշակութային մի նոր երևույթ, որը ստացել է «Արաբա-մուսուլմանական մշակույթ» անվանումը: Դա իր նախադեպը և զուգահեռները չունեցող վերին աստիճանի հետաքրքիր երևույթ էր:

Մուհամմեդ մարգարեի, առաջին չորս ուղղադավան խալիֆաների, ինչպես նաև Օմայան խալիֆայության շրջանում, երբ նոր էր ձևավորվում իսլամը և ամրապնդում իր դիրքերը արաբական աշխարհում, քաղաքականության և մշակույթի ընագավառում հիմնական գործող անձն ինքը՝ արաբն էր: Մարգարեի կողմից հիմնադրված իսլամական ումման ըստ էության արաբական ումմա էր, քանի որ նա էթնիկական առումով հիմնականում կազմված էր արաբներից: Հոգևոր կյանքի, մշակույթի գաղափարական և հայեցակարգային ըմբռնումների և պատկերացումների հիմքում ընկած էին արաբների ստեղծած Կորանը, նրա հիմնադրույթները և դոգմաները: Եվ դա ոչ միայն աստվածաբանության և փիլիսոփայության, այլև պատմագրության, էթիկայի, ասքի, պոեզիայի և այլ ընագավառներում:

Արաբները մարդկությանը պարգևեցին իրենց սեփական գիրը՝ արաբերենը, որի հիման վրա զարգանում էին կրթությունը, գիտությունը և ընդհանրապես մշակույթն իր բոլոր բաղադրամասերով: Թե՛ կատարողների, թե՛ բովանդակության և թե՛ ձևի առումով Մուհամմեդ մարգարեի, առաջին չորս ուղղադավան խալիֆաների, ինչպես նաև Օմայան խալիֆայության շրջանում ստեղծված մշակույթը և մշակութային համակարգը, ըստ էության, արաբական մշակույթ էր:

Այս գնահատականը վերաբերում է նաև պետական և քաղաքական իրողություններին, ուստի այդ դարաշրջանում գոյություն ունեցած պետությունն իրավացիորեն կոչվել է «Արաբական խալիֆայություն», իսկ մշակույթը՝ «Արաբական մշակույթ»:

Իրադրությունը փոխվում է Օմայան խալիֆայության կործանումից (750 թ.) հետո: Արաբական նվաճումները, իսլամի տարածումը և ոչ էթնիկ բազում ժողովուրդների

իսլամադավան դառնալը որակական փոփոխություններ առաջացրին խալիֆայության քաղաքական, էթնիկական և մշակութային համակարգում:

Առաջինը փոփոխության ենթարկվեց մուսուլմանական ումմայի էթնիկական կազմը: Իսլամի ընդունումն իրանական ժողովուրդների, թուրքերի, բերբերների, քրդերի, չերքեզների, ապա նաև ղփչաղների, մոնղոլների, Միջին Ասիայի, Փոքր Ասիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Կովկասի, Մերձվոլգյան տափաստանների, Հարավարևելյան Ասիայի, անգամ եվրոպական զանազան ժողովուրդների կողմից հիմնականորեն փոխեց իսլամական ումմայի էթնիկական պատկանելությունը: Այն դադարեց մաքուր արաբական լինելուց և վերածվեց իսլամական ումմայի, որտեղ արաբներն այլևս մենաշնորհ դիրքեր չունեին, թվական առումով մեծամասնություն չէին կազմում և դադարեցին գլխավոր դերակատարները լինելուց: Արաբներն իրենց դիրքերը զիջեցին մուսուլման այլ ժողովուրդների: Չափազանց մեծացավ իրանական ժողովուրդների, առաջին հերթին պարսիկների դերը բոլոր բնագավառներում, այդ թվում նաև մշակույթի ոլորտում, իսկ հետագայում նաև թուրքական և այլ ժողովուրդների դերը:

Նոր՝ ոչ արաբ ժողովուրդներն իրենց ուսերի վրա վերցրին մշակույթի և գիտության զարգացման ամբողջ բեռը: Նրանք արաբների հետ միասին մեծ ներդրում ունեն պատմական նոր պայմաններում մշակութային նոր համակարգի ստեղծման մեջ, որն արդեն ոչ թե զուտ արաբական, այլ համաիսլամական էր: Այդ ժողովուրդներից յուրաքանչյուրն իր հետ բերեց և մշակույթի ընդհանուր գանձարանը ներածեց իր ազգային ավանդությունները, պատկերացումները և նախասիրությունները:

Իր մեծ դերը խաղաց նաև «իսլամական ազգի» հայեցակարգը, որի համաձայն՝ իսլամը չի ընդունում առանձին ազգությունների գոյությունը և արհեստական պատնեշներ չի ստեղծում նրանց առջև: Նա գտնում է, որ բոլոր ժողովուրդները, որոնք իսլամադավան են, կազմում են մեկ ազգ՝ իսլամական ումմա կամ իսլամական ազգ: Նրանց կողմից ստեղծված արժեքները համարվում են համաիսլամական և բոլոր մուսուլմանների սեփականությունը: Ուստի այն, ինչ ստեղծել և ստեղծում են արաբները, պարսիկները, աֆղանները, խորասանցիները և մուսուլման այլ ժողովուրդներ, մտնում է «մուսուլմանական մշակույթ» հասկացության մեջ:

Այսպես է ձևավորվել «Արաբա-մուսուլմանական մշակույթ» բանաձևի «մուսուլմանական» բաղադրատարրը:

Բանաձևի «արաբական» մասը պահպանվեց նաև հետօմայյան դարաշրջանում: Նրա գոյությունն արդարացված էր ոչ միայն այն պատճառով, որ արաբները շարունակում էին մնալ այդ մշակույթի ակտիվ ստեղծողներից մեկը, այլև այն, որ իսլամական մշակույթի և գիտության գրավոր արտահայտության միակ միջոցը շարունակում էր մնալ արաբերենը: Արաբերեն էին գրվում և տարածվում մուսուլմանական բոլոր գիտնականների՝ պատմաբանների, աստվածաբանների, փիլիսոփաների, բժիշկների, մաթեմատիկոսների, աստղագետների, իրավաբանների տրակտատները, բանաստեղծների ստեղծագործությունները և այլն: Նրանք մեզ են հասել արաբերենով, ինչն անգնահատելի հարստություն է: Իսլամական միջնադարյան գիտության կարկառուն դեմքերից մեկը՝ ծագումով պարսիկ ալ-Բիրունին (973–1048 թթ.), նշել է, որ արաբերենը գիտական նպատակների համար միակ պիտանի լեզուն է: Նա հիմք և իրավունք ուներ նման հայտարարության համար, քանի որ ոչ միայն արաբերենով գրված բազմաթիվ գիտական աշխատությունների հեղինակ էր, այլև իսկական պոլիգլոտ, ազատորեն տիրապետում էր արաբերենին, պարսկերենին, թուրքերենին, եբրայերենին, սանսկրիտին և ասորերենին:

Խալիֆայության սահմաններում արաբերեն էին կատարվում պաշտոնական գրագրությունը և նամակագրությունը: Արաբերենով էին տեղի ունենում նաև գիտնականների բանավոր վեճերը, գիտական քննարկումները և պոետների ու աշուղների մրցությունը: Մի խոսքով, արաբերենի միջոցով էին էթնիկական տարբեր ծագում ունեցող գիտնականները միմյանց հետ հաղորդակցվում և կապ պահպանում: Միջնադարում ընդունված էր, որ մարդը չէր կարող զարգացած համարվել, եթե չէր տիրապետում արաբերենին: Պատահականություն չէր, որ բոլոր մադրասաներում ուսուցումը տարվում էր արաբերենով: Ուստի սխալված չենք լինի, եթե ասենք. «Հանի՛ր ասպարեզից արաբերենը, և դու չես ունենա համաիսլամական մշակույթ»:

«Արաբա-մուսուլմանական» բանաձևի մյուս, կարելի է ասել առանցքային բաղադրատարրը խարսխված էր Կորանի և նրանից բխող հիմնադրույթների վրա: Ճիշտ է, հետօմայյան շրջանում մեծ զարգացում ապրեցին աստվածաբանությունը, Կորանի դրույթների մեկնությունը, գոյացան զանազան աստվածաբանական դպրոցներ, գրվեցին բազում տրակտատներ և այլն, բայց, այդուհանդերձ, նրանց համար ելակետայինը մնում էր Կորանը, նրանք ներծծված էին կորանական հիմնարար սկզբունքներով: Յուրաքանչյուր շեղում նրանցից, այդ թվում և մշակույթի բնագավառում, համարվում էր նահանջ իսլամից, անգամ հերետիկոսություն, և անվերապահորեն մերժվում էր:

Ահա այս երկու տարրերի՝ արաբերենի և իսլամի համադրումը տվել է այն, ինչ գոյություն ունի, և որը կոչվում է «Արաբա-մուսուլմանական մշակույթ»:

2. ՄՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ (ՌԵՆԵՍԱՆՍ), ԹԵ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԾԱՂԿՈՒՄ

IX և հատկապես X դարից սկսվում է արաբա-իսլամական մշակույթի բուռն զարգացում, որի շուրջը մինչև օրս լուրջ գիտական վեճեր են գնում արևելագիտության մեջ: Վիճաբանության հիմնական առարկան այն հարցն է, թե ինչպես բնութագրել այդ վերելքը, արդյոք դա ռենեսանս էր, թե պարզապես զարգացման մի նոր՝ մինչ այդ չտեսնված որակ և մակարդակ:

Վիճաբանությունը հարուցել է շվեյցարական արևելագետ Ադամ Մեցի (1869–1917 թթ.) «Մուսուլմանական ռենեսանս» վերին աստիճանի արժեքավոր և ինքնատիպ աշխատությունը, որը լույս է տեսել նրա մահից հետո՝ 1922 թ., Հայդելբերգում, գերմաներենով: Նա անմիջապես իր վրա սևեռեց ժամանակի ականավոր արևելագետների ուշադրությունը և թարգմանվեց աշխարհի տարբեր լեզուներով, այդ թվում՝ անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն, իսպաներեն, ռուսերեն, թուրքերեն: Հեղինակը

գիրքն անվանել է «Իսլամի ռենեսանս», սակայն մի շարք թարգմանություններում, այդ թվում և ռուսերեն (թարգմանիչ՝ Դ. Բերտելս), այն դարձել է «Մուսուլմանական ռենեսանս», և այժմ երկուսն էլ հավասար չափով կիրառվում են: Ռ. Գարտմանը Ա. Մեցի աշխատությունն անվանում է «Վերլուծական մեթոդի օրինակ պատմագիտության մեջ»:

Արևելագետ գիտնականները քննարկվող հարցի վերաբերյալ արտահայտում են հակադիր կարծիքներ և չունեն միասնական տեսակետ:

Նրանց մի մասը կարծում է, որ «Վերածնունդ» կամ «Ռենեսանս» հասկացությունը կապված է Եվրոպայի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության, հելլենիզմի դարաշրջանին հաջորդած միջնադարի խավարի և վանդալիզմի տիրապետության հետ, որը հազիվ թե կիրառելի լինի Արևելքի համար: Վերածննդի դարաշրջանով Եվրոպայում վերադարձ է տեղի ունենում դեպի կորցրածը, դասական կամ անտիկ հելլենական կուլտուրան ու արվեստը, որի վրա հենվելով՝ եվրոպական մշակույթը և արվեստը նոր թռիչք են կատարում: Ելնելով այդ տեսադրույթից՝ մի շարք արևելագետներ՝ Կ. Բեկկերը, Ռ. Գարտմանը, Դ. Մարգոլիուսը, Վ. Բարտոլդը, Վ. Շտեյնը և ուրիշներ, մերժում կամ կասկածի տակ են դնում Ա. Մեցի կողմից առաջ քաշված «Մուսուլմանական վերածնունդ» հասկացության օրինաչափությունը: Նրանք կարծում են, որ իսլամի, մուսուլմանական մշակույթի մեջ ընդմիջում, անկում կամ խավարամոլության թագավորություն չի եղել, և չի կարող խոսք լինել իսլամի կամ Մուսուլմանական վերածննդի մասին: Այդ տեսակետը շատ հստակ է արտահայտված Վ. Շտեյնի մոտ, որի կարծիքով՝ Արևելքում ռենեսանս չէր կարող լինել, «որովհետև այնտեղ անկում չի եղել, չի եղել անկենդանություն՝ կապված սխոլաստիկայի հետ»: Ուստի և «Վերածնունդ ինչից և ո՞ւր» հարցի պատասխանը մուսուլմանական միջավայրի համար, ըստ այդ տեսակետի կողմնակիցների, մնում է անորոշ:

Հարկ է նշել, որ Ա. Մեցի աշխատության մեջ հղում կա հունական արմատներին: Նրա «Աշխարհագրություն» գլխում ուղղակի ասվում է, որ «Աշխարհագրությունը III/IX դարի (III դ. հիջրիի, արաբական թվագրության) ռենեսանսի արդյունք է: Նրա զարգացման ակունքների մոտ կանգնած են 200/800 թ. վերաբերող ալ-Կինդիի աշխատությունները, որոնք հունական գիտության գլխավոր փոխանցիչներից մեկն էին»: Բայց ամենայն հավանականությամբ դա, ըստ եվրոպական չափանիշների, բավարար չէ:

Արևելագետների մի ուրիշ՝ համեմատաբար ավելի փոքրաթիվ խումբ համամիտ է կամ հիմնականում կիսում է Մեցի «Մուսուլմանական ռենեսանս» սահմանումը: Դրանց շարքում պետք է առանձնացնել գիտական աշխարհում մեծ հեղինակություն վայելող արաբագետ Ի. Կրաչկովսկուն, որը գրում է, որ «Անժամանակ մահացած Ա. Մեցի հետմահու ստեղծագործությունը տալիս է հիջրայի IV դարի (մ. թ. X դ. – Ն. Հ.) ընդհանուր պատկերը, որը հեղինակը լրիվ իրավունքով անվանել է «Իսլամի վերածնունդ»: Թեև հետագայում Ի. Կրաչկովսկին փոխում է իր մոտեցումը և Ա. Մեցի կողմից «Իսլամի ռենեսանս» անվանումը կոչում է «հակասական անվանում»,

այդուհանդերձ նա սկզբունքորեն չի ժխտում այդ ֆենոմենը: «Մուսուլմանական վերածնունդ» սահմանումն ընդունում են Իոգան Ֆյուկը և այլ արևելագետներ:

Արևելքի վերածննդի վերաբերյալ հարկ է ավելացնել, որ անցյալ դարի կեսերին գիտությունը կարևոր նվաճումներ արձանագրեց այս բնագավառում: Շնորհիվ մի շարք գիտնականների՝ Ն. Կոնրադի, Վ. Զալոյանի, Շ. Նուցուբիձեի, Վ. Ժիրմունսկու, Ռ. Ֆրայի և այլոց աշխատությունների քաղաքացիական իրավունք ձեռք բերեց «Վերածնունդն Արևելքում» հասկացությունը:

Չնայած այս տարբերակումներին՝ անգամ նրանք, ովքեր չեն ընդունում մուսուլմանական վերածնունդը, համաձայն են, որ այն ֆենոմենը, որը տեղի ունեցավ՝ սկսած IX–X դարերից, մշակութային աննախադեպ վերելք էր: Վ. Բարտոլդը դա համարում է «մուսուլմանական կուլտուրայի ծաղկում», որը շատ մոտ է Ի. Կրաչկովսկու տված սահմանումին առ այն, որ «X դարը խալիֆայության վերջնական փլուզման դարաշրջանն է, որը միաժամանակ արաբական մշակույթի բարձրագույն ծաղկման՝ «Իսլամի ռենեսանսի» դարաշրջանն է»:

Կարծում ենք, որ այս բնութագրումն առավել մոտ է ճշմարտությանը: Եվ եթե դա վերածնունդ էր, ապա ուներ իր յուրահատկությունները, որոնք նրան տարբերակում էին եվրոպական դասական մոդելից: Իսկ եթե ոչ, ապա միևնույն է, դա մշակութային որակական նոր երևույթ էր, արաբա-մուսուլմանական մշակույթի բարձրագույն ծաղկում, որով նա ընդհուպ մոտենում է Ռենեսանս–Վերածնունդ կատեգորիային՝ նրա թե՛ արևմտյան և թե՛ արևելյան ըմբռնումներով:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զգալի փոփոխություններ և նորամուծություններ տեղի ունեցան նաև գրականության ասպարեզում, մասնավորապես պոեզիայի բնագավառում:

Պոեզիա: Եթե մինչև VII դարը՝ իսլամի ընդունումը, գրականության մեջ տիրապետողը բանավոր պոեզիան էր, որը դեռ որոշ ժամանակ ևս պահպանեց իր դիրքերը, ապա Աբբասյանների շրջանում՝ VIII դարից սկսած, նա իր տեղը զիջում է գրավոր պոեզիային:

Տեղի է ունենում մի կարևոր փոփոխություն ևս: Մինչև Աբբասյանները գրականությունն իրոք արաբական էր, քանի որ տիրապետում էին ծագումով արաբ հեղինակները: Աբբասյանների տիրապետության շրջանում աճեց էթնիկապես ոչ արաբների դերը պետական, քաղաքական, տնտեսական և ռազմական կյանքում: Նույնպիսի փոփոխություն տեղի ունեցավ նաև գրականության և արվեստի բնագավառում: Արաբների հետ արվեստը զարգացնում են նաև ծագումով պարսիկ, հույն, հայ, ասորի և այլ հեղինակներ: Նրանք իրենց մշակույթն են ներմուծում արվեստի ընդհանուր գանձարանը:

Սակայն տեղի է ունենում մի հետաքրքիր երևույթ: Բանավորից գրավոր պոեզիային անցնելուց հետո էլ, ընդհուպ մինչև XVIII դարը, պահպանվում են նախահսլամական կամ ջահիլիյայի շրջանի պոեզիայի կանոնները, որին հավատարիմ են մնում մուսուլմանական աշխարհի բանաստեղծները: Արաբ բեդվինների ստեղ-

ծած ասքերը, հերոսապատումները, հանգավորված և չափածոյի վերածված հետաքրքրաշարժ պատմությունները, որոնք աչքի էին ընկնում իրենց անկեղծությամբ և անմիջականությամբ, ձևերի հղկվածությամբ, իսլամական գրականության ձևավորումից հետո դառնում են մուսուլմանական մշակույթի տարրերից մեկը և զգալի ազդեցություն գործում պոետների մի քանի սերունդների, նրանց ստեղծած պոեզիայի վրա, որը, մասնագետ-գրականագետների կարծիքով, դարեր շարունակ շնչում էր անապատի ոգով:

Բոլորը չէին, իհարկե, որ հիացած էին ջահիլիյայի շրջանի պոեզիայի ներխուժումից համաիսլամական մշակույթ: Իրենց դժգոհությունը չէին թաքցնում մասնավորապես պարսիկ բանաստեղծները: Ջահիլիյայի շրջանի պոեզիան, նրա արխաիկ ձևերն ու պատկերները մերժելու և ծաղրելու մեջ հատկապես աչքի էր ընկնում պարսիկ բանաստեղծ Բաշար իբն Բուրդը (714–783 թթ.), որը չէր խորշում ծանակելուց «վայրենի բեդվիններին» և նրանց ստեղծած բանաստեղծությունները և հավանաբար այդ պատճառով 783 թ. Աբբասյան խալիֆա ալ-Մահդիի կողմից դատապարտվեց մահվան: Նա կույր էր և ընդհանրապես ցածր կարծիքի էր արաբական արվեստի մասին՝ փառաբանելով այն ամենը, ինչ որ իրանական էր, այդ թվում և քաղաքականության ասպարեզում: Նրան է պատկանում թևավոր այն արտահայտությունը, որ ինքը փառք է տալիս Ալլահին, որ կույր է, «և այդպիսով ես կարիք չունեմ տեսնելու այն, ինչ ատում եմ»:

Իբն Բուրդը համարվում է պոետական նոր ոճի և, այսպես կոչված, «նոր դպրոցի» առաջին խոշոր ներկայացուցիչը: Այդ դպրոցի մյուս ներկայացուցիչն էր ծագումով կիսապարսիկ-կիսաարաբ բանաստեղծ Աբու Նուվասը (մահ. 810 թ.), որը գովերգում էր կյանքի վայելքները գեղոնիստական ընկալումներով, և որի պոեզիան սահմանակցում էր էրոտիկային: Նա խալիֆաներ Հարուն ալ-Ռաշիդի և ալ-Ամինի կազմակերպած գիշերային խնջույքների և գինարբուքների մշտական մասնակիցն ու փառաբանողն էր: Պատահական չէ, որ նրա գազելները, կարճ պոեմները ձոներգեր էին՝ նվիրված գինուն և սիրո զգացմունքներին:

Աբու Նուվասը միակը չէր, որ գովերգում էր արքունիքի ցոփ կյանքը, աշխարհիկ վայելքները, քաղաքային կյանքի հրապուրանքները, մարդու մարմնական հաճույքներին հագուրդ տալու պահանջը: Սակայն հարցը դա չէ, այլ այն, որ այդ «նորացված» պոեզիան ավելի ու ավելի էր թեմատիկ առումով գրականությունից դուրս մղում անապատի, բեդվինական կյանքի, նրան բնորոշ ասկետիզմի նկարագրությունը՝ առաջացնելով կարոտախտ անցած-գնացած «փառավոր» ու «հերոսական» օրերի համար: Հենց նման զգացմունքների արտահայտիչը դարձավ Աթաիյահը (748–828 թթ.): Նա պատկանում էր արաբական հայտնի անազահ ցեղին, մեծացել և դաստիարակվել էր բեդվիններին բնորոշ խիստ ու պարզ միջավայրում: Հայտնվելով Բաղդադում՝ Հարուն ալ-Ռաշիդի արքունիքում, տեսնելով արքունիքի բարքերը՝ ամբողջ հոգով ընդվզում է դրա դեմ և դատապարտում Բաղդադում տիրող շվայտ կյանքը: Նա իր պոեմներում ասկետիզմի կոչ էր անում՝ անձնական կյանքում ցույց տալով նման ապրելակերպ:

Մեծ զարգացում է ստանում ջատագովական պոեզիան, որն իր գագաթնակետին է հասնում X դարի արաբական խոշոր բանաստեղծ Մութանաբիի բանաստեղծական արվեստում: Ընդունված կարգի և սովորույթի համաձայն՝ բոլոր մեծ ու փոքր տիրակալներն իրենց շրջապատել էին բանաստեղծներով, որոնք փառաբանում էին իրենց հովանավորներին, նրանց առատաձեռնությունը, մեծահոգությունը, արարների հերոսական անցյալը, սխրանքները, հաղթանակները և այլն: Մութանաբին, ինչպես նաև Աբու Թամմամը, Իբն ալ-Մութազզան և ուրիշներ, գովերգելով արարների անցյալի փառքը և հերոսությունները, հմայվելով բեդվինական կյանքով և սովորություններով, իրենց ջատագովական պոեզիայով, կարծես թե յուրահատուկ ձևով հակադրվում էին արաբների կողմից նվաճված ու իսլամ ընդունած ժողովուրդներին, նրանց կողմից ներմուծածին և փորձում ցույց տալ արաբների ու արաբականի գերազանցությունը նրանց նկատմամբ:

Իր արվեստով ու փիլիսոփայությամբ, կյանքի ու արվեստի նկատմամբ իր հայացքներով ժամանակակիցներից տարբերվում էր հանճարեղ Աբու Ալա ալ-Մաարին (973–1057 թթ.): Նա իր ստեղծագործություններում փորձում էր ըմբռնել կյանքի և մահվան իմաստը, բացահայտել նրանց գաղտնիքը, մտորում էր հավերժական այնպիսի կատեգորիաների մասին, ինչպես չարն ու բարին, մարդկային բարոյական արժեքները: Նա իրեն տանջող այդ հարցերը քննարկում էր տարբեր կրոնափիլիսոփայական համակարգերի համատեքստում՝ չդառնալով, սակայն, ոչ մեկի պատանդը: Այդ բոլորի արդյունքը լինում է այն, որ ալ-Մաարին չի կարողանում համակերպվել հասարակությունում տիրող բարոյական, հոգեբանական իրավիճակի հետ, որը փակուղի էր դարձել մարդու համար: Նա հանգում է այն եզրակացության, որ մարդուն շրջապատող աշխարհը թշնամի է նրան: Մեծ բանաստեղծն ըստ էության ելք չի տեսնում: Այստեղից էլ հիասթափության և հուսահատության այն զգացումը, որ համակել էր նրան, նրա արվեստին ու փիլիսոփայական մտորումներին:

Գրական բազմազան ուղղությունների կողքին X դարից հայտնվում և իր ուրույն տեղն է գրավում սուֆիական պոեզիան, որը ներծծված էր միստիցիզմով: Այդ պոեզիայի յուրահատուկ գծերից մեկը ենթատեքստին մեծ տեղ հատկացնելն էր: Անգամ քնարական-սիրային բանաստեղծությունները կառուցված էին միստիկական ենթատեքստի վրա և պարունակում էին միստիկական խորհրդանիշ-սիմվոլներ: Սուֆի պոետը տառապում էր Աստծուն միանալու, նրա հետ ձուլվելու մտատանջությամբ: Ուստի սիրո արբեցումը, որ գովերգում էին սուֆիական պոետները, արբեցում էր ոչ թե սովորական իմաստով, այլ սիրո արբեցում առ Աստված: Այս ուղղության հայտնի ներկայացուցիչներն էին XII–XIII դարերի սուֆիներ Իբն ալ-Ֆարիդը և Իբն ալ-Արաբին:

Արձակ: Արաբների, ընդհանրապես Արևելքի ժողովուրդների մոտ պոեզիան մշտապես զարգացման ավելի բարձր մակարդակի վրա է գտնվել, քան արձակը: Դա հավանաբար ունի իր բացատրությունը: Բայց չցանկանալով խորանալ դրա պատճառների մեջ՝ այստեղ ցանկանում ենք նշել, որ VIII–IX դարերից զգալի զարգացում է ապրում նաև արձակը: Ինչպես և պոեզիայի դեպքում, բանավոր արձակին

փոխարինելու է գալիս գրավոր արձակը, որտեղ տիրապետող էր պատմվածքի, նովելի, առակի, իմաստաբանական ու բարոյախրատական ասացվածքի ժանրը: Լայն տարածում են ստանում քաղաքային կյանքի տարբեր կողմերին նվիրված, շատ հաճախ երգիծական կամ զվարճալի բնույթի պատմությունները:

Զգալի տեղ է հատկացվում թարգմանչական գրականությանը: Արաբերեն են թարգմանվում այլ ժողովուրդների արձակ գրականության լավագույն նմուշները: Նշենք դրանցից «Կալիլա և Դիմնա» հնդկական բարոյախոսական պատմվածքների թարգմանությունը պարսկերենից, որ VIII դարում իրագործեց Իբն ալ-Մուկաֆֆան: Նա այդ թարգմանությունը կատարել էր այնպիսի վարպետությամբ, որ արաբալեզու ընթերցողն այն ընկալում էր որպես իր սեփականը:

Արձակ գրականությունը, բացի գեղարվեստականից, հետապնդում էր նաև կոնկրետ այլ նպատակներ, առաջին հերթին՝ դաստիարակչական և խորհրդատվական: Նրանցում խորհուրդ էր տրվում, երբեմն այլաբանորեն, խալիֆային, սուլթանին կամ էմիրին, այսինքն՝ բոլոր նրանց, ում ձեռքում էր կենտրոնացված իշխանությունը, և ովքեր տնօրինում էին միլիոնավոր մարդկանց ճակատագիրը, լինել իմաստուն, արդարամիտ, բարի և մարդասեր: Նրանցում խարազանվում և ծաղրի էին ենթարկվում մարդկային բնավորության բացասական գծերը՝ ագահությունը, ժլատությունը, ստախոսությունը, խաբեբայությունը, նախանձը և այլն: Այդ առումով հարկ է նշել ալ-Ջահիզի (775–868 թթ.) «Գիրք ժլատության մասին» հիանալի ժողովածուն, որը հետաքրքրաշարժ պատմվածքներ և անեկդոտներ է պարունակում Խորասանի, Բասրայի և խալիֆայության այլ շրջանների բնակիչների կյանքից: Նա ուներ նաև հատուկ ենթատեքստ: Ալ-Ջահիզը քննադատում էր իրանցիների ժլատությունը և նրանց բացասական վերաբերմունքը արաբ բեդվինների առատաձեռնության նկատմամբ՝ կանգնելով վերջիններիս պաշտպանության դիրքերում, չհամաձայնվելով բեդվինական առատաձեռնության և հյուրընկալության մեջ բարբարոսության դրսևորում տեսնելու իրանցիների միտումնավորության հետ:

Նույն բնույթի էր Աբու Ալի աթ-Թահունիի (940–994 թթ.) «Զվարճալի պատմություններ»-ի շարքը, որտեղ տրված էին խալիֆաների, բարձրաստիճան պաշտոնյաների, հասարակության ցածր խավերի կյանքից վերցրած իրական պատմություններ, ինչպես նաև եգիպտական հեղինակ աս-Սույութիի (1445–1505 թթ.) պատմվածքները:

Այս շրջանում ձևավորվում է մաքամահի ժանրը, որը գրական նորություն էր: Դա իրենից ներկայացնում էր դրամատիկական էպիզոդների և պատմվածքների հավաքածու, որի ժամանակ հեղինակը պատմվածքի սուբստանցիան ենթարկում էր ձևին և ամեն ինչ անում իր տաղանդը դրսևորելու համար: Շատերը մաքամահի բնորոշ գիծը համարում էին նրբաճաշակ ձևը և հռետորական անեկդոտը: Սակայն ոչ բոլորն են համաձայն նման բնորոշման հետ: Այս վերջիններս առանձնացնում են ալ-Հարիրիի (1054–1122 թթ.) մաքամահների ժողովածուն՝ Մաքամաթը, որը համարվում էր արաբական լեզվի գանձարանը և դարեր շարունակ ամենաընթերցվող գրքերից մեկը:

Ժանրային առումով արձակի մեջ նորություն էր նաև վարքագրությունը՝ սիրան: Այդ ժանրի երևան գալը ծնունդ տվեց աստվածաբանների մի ամբողջ դասի, որոնք քաղաքների հրապարակներում արտասանում էին սիրաներից ընտիր հատվածներ, շատ հաճախ՝ երաժշտության ուղեկցությամբ:

Հետագա զարգացում է ստանում աշխարհահռչակ «Հազար ու մի գիշեր» պատմվածաշարը՝ իր մեջ ներառելով նորանոր շերտեր, հարստանալով նորանոր դրվագներով: Նրա արաբական տարբերակը հիմնականում ձևավորվում է X դարում: Նրա գործողությունները կատարվում են Բաղդադում և իրաքյան այլ քաղաքներում, որի մասնակիցներից է նաև խալիֆա Հարուն ալ-Ռաշիդը: XII դարից «Հազար ու մի գիշերը» հարստանում է եգիպտական նյութի հաշվին, իսկ XIV–XVI դարերում արդեն նրա հիմնական գործող անձերն են դառնում եգիպտացի հասարակ մարդիկ, որոնք շնորհիվ իրենց հմտության, խորամանկության և ճարպկության հաղթահարում են կյանքի դժվարությունները, հաջողությամբ դուրս գալիս անելանելի թվացող իրադրություններից և, ի վերջո, հասնում բաղձալի նպատակի՝ հարստության կամ էլ բարձր պաշտոնի, հաճախ նաև թե մեկին, թե մյուսին:

4. ԱՐՎԵՍՏ

Արվեստը, ի տարբերություն կրթության, գիտության և գրականության, մեծ վերելք չապրեց: Այդ դարաշրջանի ճարտարապետությունից համարյա ոչինչ չի հասել, թեև գրավոր աղբյուրների համաձայն՝ կառուցվել են խալիֆայական և սուլթանական պալատներ, մզկիթներ և այլ շինություններ: Բաղդադում, որտեղ Աբբասյան խալիֆաները, ըստ գրավոր աղբյուրների, կառուցել են ժամանակին մեծ արձագանք գտած Անմահության (կամ Հավերժության) պալատը, Բաղդադի Ոսկյա դարպասը, պալատական կառույցներ Սամարրայում, Բարմաքիների պալատները ալ-Շամամաշիյայում և այլն, նրանց հետքն անգամ չի մնացել, կամ մեզ են հասել միայն նրանց փլատակները:

Հայտնի է, որ դրանք կառուցվել են ասիական ոճով՝ փոխառնված պարսիկներից, երբեմն նաև հնդկացիներից, ի տարբերություն Օմայան շրջանի կառույցների, որոնք ակնհայտորեն կրում էին բյուզանդական, մասամբ նաև սիրիական ճարտարապետական արվեստի ակնհայտ ազդեցությունը: Նրանցում կիրառվել է Սասանյան Իրանում ձևավորված և այդ դարաշրջանի մուսուլմանական աշխարհի համար դասական դարձած ոճը՝ ձվածիր գմբեթ, կիսաշրջանաձև կամար, պարուրագիծ աշտարակներ, ատամնավոր պարիսպներ, ջնարակված կղմինդր, մետաղապատ հատակ և այլն: Մասնագետների կարծիքով՝ Աբբասյան ճարտարապետությունը խարսխված է եղել այդ սկզբունքների վրա:

Միջնադարյան արաբական արվեստում նկատելի տեղ են գրավել **քանդակագործությունը** և **գեղանկարչությունը**: Բաղդադի հիմնադիր խալիֆա ալ-Մանսուրի կառուցած պալատի գմբեթի վրա դրվել էր հեծյալի քանդակը: Քանդակներով իրենց պալատները, անգամ նավերը զարդարելով հրապուրված էին համարյա բոլոր խալիֆաները: Այսպես, օրինակ՝ խալիֆա ալ-Ամինը, որը սիրում էր նավարկել Տիգրի-

սով, իր նավակներին տալիս էր առյուծի, արծվի և կամ դելֆինի կերպարանք: Իսկ խալիֆա Մութադիրի պալատում կար ոսկուց և արծաթից պատրաստված ծառ, որին բնականություն հաղորդելու նպատակով խալիֆան ծառը դրել էր դրա համար հատուկ պատրաստված մի մեծ ջրամբարում, որի շուրջը գտնվում էին տասնհինգ զինված հեծյալների արձանները:

Ինչ վերաբերում է **նկարչությանը**, ապա նա ևս ուներ իր դերակատարումը պալատների գեղարվեստական ձևավորման մեջ: Խալիֆա Մութասիմը (IX դար) Սամարրայի իր պալատի պատերը նկարազարդել էր մերկ կանանց և որսի տեսարաններ պատկերող որմնանկարներով: Իրավացիորեն ենթադրվում է, որ դրա կատարողը կամ կատարողները եղել են քրիստոնյա: Ընդհանրապես ընդունված է եղել շատ հաճախ գեղարվեստական գործերի կատարումը հանձնարարել քրիստոնյաների՝ նրանց հրավիրելով հատկապես Բյուզանդիայից: Օրինակ՝ Մութավաքիլ խալիֆայի պալատը նրա հրավերով նկարազարդել են բյուզանդական վարպետները, որոնք այնքան ազատ են իրենց զգացել, որ իրենց նկարների մեջ մտցրել են անգամ քրիստոնեական եկեղեցիների և հոգևորականների պատկերներ:

Ուշագրավ է, որ նկարիչները փորձել են տալ Մուհամմեդ մարգարեի դիմապատկերը: Դրանք թեև հազվադեպ են, բայց, այդուհանդերձ, վկայված են: Դա հաստատում է մի արաբ ճանապարհորդ IX դարի վերջերին, որը, իբր, տեսել է մարգարեի նկարը չինական արքունիքում: Շատ նկարիչներ պատկերել են Բուրաքին՝ մարգարեի ձիուն, որի վրա նստած՝ նա համբարձվել է առ Ալլահ: Դրանց վրա ոճաբանական առումով խիստ զգացվում է պարսկական, բյուզանդական և ասսիրիական նկարչական արվեստի ազդեցությունը:

XIII դարից սկսում է զարգանալ արաբա-մուսուլմանական մանրանկարչությունը: Մուսուլման մանրանկարիչները նկարազարդում են ձեռագրերը: Հայտնի են «Կալիլա և Դիմնայի», «Մութամաթի», «ալ-Աղանիի» և այլ ձեռագրերի նկարազարդումները, որոնք, անկասկած, կրում են քրիստոնեական մանրանկարչության ազդեցությունը: Մուսուլման մանրանկարիչների մեջ իրենց բարձր արվեստով առանձնանում էին պարսիկ մանրանկարիչները:

Զգալի առաջընթաց է ապրել դեկորատիվ-կիրառական արվեստը, հատկապես գորգագործությունը, հյուսվածքեղենի և կտորեղենի արտադրությունը, խեցեղենը, մետաղյա իրերի պատրաստումը և այլն:

VIII-IX դարերից արվեստի ինքնուրույն ճյուղ է դառնում գեղագրությունը՝ կալիգրաֆիան, որը խրախուսվում էր Կորանի կողմից, քանի որ նա գեղազարդում էր Ալլահի խոսքը: Ոչ միայն խալիֆաները և սուլթանները, այլև յուրաքանչյուր մեծ թե փոքր իշխող իր համար պատիվ և պարտադիր էր համարում ունենալ գեղագիրի կողմից պատճենավորված Կորան, առանց որի նա չէր կարող ակնկալել կրոնական բարձր հեղինակություն:

Արվեստի այս ճյուղը, բարեբախտաբար, ունեցել է մի կարևոր յուրահատկություն: Նրանում նշված են կատարողների, կրոնական, պատմական և գրական երկերի գրագիրների կամ պատճենահանների անունները, ուստի և մենք գիտենք, թե

ովքեր են եղել գեղագիր հեղինակները: Հայտնի են, օրինակ, ալ-Ռայհանիի (մահ. 834 թ.), Իբն Մուքլահի (886-940 թթ.), Յակուտ ալ-Մուստասիմիի (մահ. 1032 թ.) և այլոց անունները, ինչը, ցավոք սրտի, չի կարելի ասել ճարտարապետների և նկարիչների մասին:

Մեզ մնում է ավելացնել, որ հետագայում գրքի գործի և գեղագրության զարգացումն առաջ բերեց գրքի արվեստի կատարելագործում՝ կապված նրա ձևավորման, գույների օգտագործման, նախշազարդման, երեսպատման և կազմի հետ: Շատ հաճախ գրքերը կազմելիս օգտագործում էին թանկարժեք մետաղներ, ոսկեզօծում կամ արծաթապատում էին նրանք, որոնք իսկական արվեստի գործեր էին դառնում:

Աբբասյան և հետաբբասյան միջնադարյան գրականությունը և արվեստն իրենց ժանրային բազմազանությամբ արաբա-մուսուլմանական մշակույթի ամենաինքնատիպ դրսևորումներից են և իրենց ուրույն տեղն են գրավում համաշխարհային քաղաքակրթության մեջ:

5. ԻՍԼԱՄԱԿԱՆ ԿՐՈՆԱԻՐԱՎԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ՝ ՄԱԶՀԱԲ

Մազհաբը կամ ֆիքհը առանցքային տեղ է գրավում իսլամական իրավունքի տեսության մեջ: Նա իսլամագետ աստվածաբանների կողմից սահմանվում է որպես կրոնաիրավական դպրոց կամ իսլամական դոգմաների մեկնաբանման յուրահատուկ ուղղություն:

Յուրաքանչյուր մազհաբ մշակում է Կորանի և սուննայի օգտագործման, նրա հիմնարար դրույթների մեկնաբանման իր սկզբունքները:

Մազհաբի համար աղբյուր են հանդիսանում Կորանը, սուննան և հադիսները: Նա լայնորեն օգտագործում է կիյասը՝ դատողություն ըստ անալոգիայի, իջման՝ համայնքի անդամների հավաքական կարծիքը կամ համաձայնությունը, և ռայը՝ ազատ անհատական կարծիքը կամ դատողությունը:

Մազհաբի կամ ֆիքհի մեկնաբանումներն ունեն ոչ միայն տեսական բնույթ, այլև գործնական նշանակություն: Մազհաբի, նրա մեկնաբանությունների հիման վրա մշակվում են իսլամական հասարակության կյանքի նորմերը և հիմնադրույթների օգտագործման կերպը մուսուլմանական հասարակության ներսում: Ի հավելումն՝ մազհաբ-ֆիքհը տեսականորեն հիմնավորում է շարիաթը, մուսուլմանական հասարակությունում նրա անշեղ կիրառման պարտադիր լինելու հանգամանքը:

Մազհաբի գործունեության դաշտը ներառում, և նրա իրավասությունը տարածվում է պետական, կրոնական և քաղաքացիական հարաբերությունների, անձնական կյանքի, ընտանիքի, ժառանգականության, պաշտամունքային և այլ հարցերի վրա: Եվ այդ բոլորը կրոնական նպատակաուղղվածության տեսանկյունից: Այսինքն՝ մուսուլմանի անձնական-ընտանեկան և հասարակական կյանքը պարտադիր կերպով պետք է կրոնական-իսլամական կողմնորոշում ունենա:

VIII-IX դարերում վերոնշյալ հարցերի շուրջ ուժեղ վեճեր էին ընթանում իսլամական աստվածաբանների միջև: Խոր տարաձայնություններն ի վերջո IX-X դարերում հանգեցրին տարբեր մազհաբների՝ կրոնաիրավական դպրոցների ձևավորմանը:

Սուննիների մոտ ձևավորվեցին չորս մազհաբներ՝ հանիֆիական, շաֆիական, մալիքիական և հանբալիական:

Իրենց դպրոցներն ունեն նաև շիաները, զեյդիականները և խարիջիականները:

Հանաֆիական (հանիֆիական) մազհաբ:

Նրա հիմնադիրն է Աբու Հանիֆան (IX դ.): Այս մազհաբը հատկապես տարածված էր Իրաքում, Խորասանում և Մավարաննահրում, իսկ հետագայում նա Օսմանյան կայսրությունում հայտարարվում է պետական կրոն: Այդ երկրներում կադիները՝ մուսուլմանական դատավորները, կարող էին դատել և դատական վճիռներ, ֆետվաներ ընդունել՝ հանաֆիական մազհաբի, հանաֆիական իրավունքի և իրավական նորմերի համաձայն:

Հանաֆիական մազհաբի բնորոշ գիծն այն էր, որ նա համեմատաբար ավելի հանդուրժողական էր մյուս մազհաբների ջատագովների նկատմամբ, մեծ տեղ էր հատկացնում ադաթին, որը նրան գրավիչ էր դարձնում հատկապես քոչվորների համար:

Հանաֆիականների հանդուրժողականությունը տարածվում էր նաև քրիստոնյաների և հրեաների վրա, և այդ առումով նույնպես նա շահեկանորեն տարբերվում էր մյուս մազհաբներից: Եվ վերջապես հանաֆիական մազհաբն ավելի լայնորեն, քան մյուս մազհաբները, տեղ էր տալիս ռայյին և կիյասին:

Շաֆիական մազհաբ: Աբու Աբդալլահ Մուհամմեդ իբն Իդրիս աշ-Շաֆին (767-820 թթ.) այլ կրոնաիրավական դպրոցի հիմնադիր է, որը նրա անունով կոչվում է Շաֆիական մազհաբ: Նա ուսուլ ալ-ֆիքհի՝ ֆիքհի արմատների մեթոդոլոգիայի հիմնադիրն է, որի շնորհիվ հնարավոր եղավ տալ մազհաբների ճշգրիտ սահմանումները՝ նրանց արմատների և աղբյուրների տեսակետից:

Շաֆիական մազհաբը և ինքը՝ աշ-Շաֆին, մեծ տեղ էին հատկացնում իջմային՝ ումմայի, իսլամական համայնքի հավաքական կարծիքին, և դա եթե ոչ հակադրում, ապա դրանով փորձում էին սահմանափակել ռայյի՝ ազատ անհատական կարծիքի սկզբունքի անսահմանափակ օգտագործումը, որը, շաֆիականների կարծիքով, հասնում էր չարաշահումների աստիճանի:

Այդ պատճառով ընդունված է ասել, որ շաֆիական մազհաբը գրավում է յուրատեսակ միջին կամ կոմպրոմիսային դիրք հանաֆիական և մալիքիական մազհաբների միջև, և իջմայի միջոցով սահմանափակում կիյասի՝ անալոգիայի և ռայյի գործողության շառավիղը:

Շաֆիական մազհաբը տարածված էր Սիրիայում, Քերմանում, Բուխարայում և մուսուլմանաբնակ այլ վայրերում: XI-XII դդ. ուժեղ պայքար է գնում մի կողմից՝ շաֆիականների, իսկ մյուս կողմից՝ հանբալիականների միջև Բաղդադում, և հանաֆիականների միջև՝ Սպահանում: Հենց այդ ժամանակ շաֆիական մազհաբը դառնում է պետական մազհաբ Եգիպտոսում: Նա տիրապետող դիրքեր է գրավում նաև մուսուլմանական աշխարհի հոգևոր կենտրոն Մեքքայում:

Չնայած հետագա դարերում տեղի ունեցած փոփոխություններին՝ շաֆիական մազհաբն այսօր էլ տիրապետող դիրքեր ունի Եգիպտոսում, Բահրեյնում, Ինդոնեզիայում, Արևելյան Աֆրիկայում: Նրա հետևորդներ կան Սիրիայում, Հարավային Արաբիայում, քրդերի մեջ և այլուր:

Մալիքիական մազհաբ: Իսլամի երրորդ՝ Մալիքիական մազհաբի հայտնվելը կապված է Մադինայի իմամ Մալիք իբն Անասի (708/715-795 թթ.) անվան հետ: Նա հեղինակն է մի քանի հազար ավանդույթներ պարունակող «Ալ-Մուվատտա» հադիսների արժեքավոր ժողովածուի, որը մեծ ճանաչում ուներ մուսուլմանական աշխարհում:

Մալիքիական մազհաբը տարբերվում է մյուս երեք մազհաբներից նախ և առաջ ավանդույթներին իր անզիջում նվիրվածությամբ՝ համարելով դրանք նախնական մաքուր և անաղարտ վիճակում պահպանած տեղեկությունների աղբյուր:

Այս մազհաբի երկրորդ բնորոշ գիծն է, որ նա մերժում է մուսուլմանների սուրբ գրքի՝ Կորանի հայեցողական մեկնաբանությունը:

Եվ, վերջապես, մալիքիական մազհաբն ընդունում է տրամաբանական եզրակացությունները և դատողություններն ըստ կիյասի՝ անալոգիայի:

Մալիքիական մազհաբը տարածված էր Մադինայում և Հիջազում, իսկ IX դ. սկսած՝ նաև Մաղրիբում՝ Արաբական Արևմուտքում, Թունիսում, Ալժիրում, Մարոկոյում, ինչպես նաև Աֆրիկայի իսլամադավան ժողովուրդների շրջանում: Իսկ Իսպանիայում արաբական տիրապետության շրջանում այս մազհաբը համարվում էր պետական դավանանք:

Հանբալիական մազհաբ: Հանբալիական մազհաբը իսլամական չորրորդ կրոնաիրավական դպրոցն է: Նրա հիմնադիրն է իմամ Ահմադ իբն Հանբալը:

Մուսուլմանական ուլեմները՝ աստվածաբանները, այս մազհաբի հետևորդներին՝ հանբալիականներին, համարում են ամենամոլեռանդ մուսուլմաններ: Հանբալիական մազհաբը Կորանը, իսլամական դոգմաները, հնից եկող ավանդույթներն ընկալում է բառացիորեն, այնպես, ինչպես նրանք հայտնվել և ձևակերպում են գտել իսլամի ծագման շրջանում: Հավատարիմ այդ սկզբունքին՝ նա մոլեռանդորեն դեմ է և չի ընդունում որևէ նորամուծություն: Նա կանգնած է շարիաթի նորմերը և մուսուլմանական ծիսակատարություններն անշեղորեն կատարելու անզիջում դիրքերում:

Հանբալիական մազհաբը կտրուկ դեմ է Կորանի և հադիսների ազատ մեկնաբանությանը: Սկզբնական շրջանում հանբալիականներն անգամ դեմ էին կիյասին և իջմային: Միայն հետագայում նրանք համաձայնվեցին խիստ սահմանափակ ձևով օգտագործել կիյասի և իջմայի սկզբունքները մեկնությունների և ֆետվաների՝ վճիռների արձակման պարագայում: Սակայն այստեղ նույնպես հանբալիական մազհաբը ցուցաբերեց յուրահատուկ մոտեցում: Նա ժխտում է իջմայի՝ հավաքական համաձայնության սկզբունքի ազատ օգտագործումը և ընդունում իջման որպես միայն և միայն Մուհամմեդ մարգարեի անմիջական զինակիցների միաձայն կարծիքը՝ զրկելով այդ իրավունքից նրանց հետագա աշակերտներին և կրոնական առաջնորդներին:

Հանբալիական մազհաբը X-XV դդ. մեծ տարածում ուներ ամբողջ մուսուլմանական աշխարհում: Այն տարածված էր Իրանում, Սիրիայում, Պաղեստինում և այլ

երկրներում: Սակայն Օսմանյան կայսրության բարձրացումով նրա ազդեցությունը թուլանում է: Նա իր ազդեցությունը պահպանեց Հիջազում և Նաջդում:

Հանբալիական մազհաբի սկզբունքների հիման վրա հետագայում ձևավորվեց վահաբիզմը, որն այսօր տիրապետող է Սաուդյան Արաբիայում, և նրա աջակցությամբ փորձ է արվում այն տարածելու իսլամական այլ երկրներում:

6. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արաբական պատմագրությունը սկզբնավորվել է արաբական նվաճումներից հետո և բուռն զարգացում ապրել հետագա դարերի ընթացքում: Այն կարևորագույն սկզբնաղբյուր է ոչ միայն նախաիսլամական Արաբիայի, Արաբական խալիֆայության և տարբեր ժամանակներում վերջինիս ենթակայության ներքո հայտնված ժողովուրդների, այլև սահմանակից երկրների և տարածաշրջանների միջնադարյան պատմության համակողմանի ուսումնասիրման համար:

Արդեն VIII դարում ի հայտ եկան Մուհամմեդ մարգարեի կենսագրական աշխատությունները (սիրա), որոնք հարուստ նյութեր են պարունակում ջահիլիայի և վաղ իսլամի պատմության ուսումնասիրման համար: Հնագույն սիրայի հեղինակը Իբն Իսհակն է (մահ. 768 թ.), որի գործը պահպանվել է Աբդ ալ-Մալիք իբն Հիշամի (մահ. 833 թ.) խմբագրությամբ: Արաբական առաջին արշավանքներին և նվաճումներին էր նվիրված ալ-Վակիդիի (747–822 թթ.) հոչակավոր «Քիթաբ-ուլ-Մաղազի» (Նվաճումների գիրք) ծավալուն աշխատությունը, որը միայն քաղվածաբար տեղ է գտել ավելի ուշ շրջանի մի քանի հեղինակների գործերում: Սկզբնաղբյուրները պարտաճանաչ կերպով նշելու (իսնադ) արաբական պատմագրության մեջ տարածված սովորության շնորհիվ հաճախ կարելի է մի հեղինակի գործում առանձնացնել ավելի վաղ շրջանի մեկ այլ հեղինակի պատկանող աշխատության ընդարձակ հատվածները:

Արաբական դասական պատմագրությունը ձևավորվեց IX դարի կեսերին և ծաղկում ապրեց մինչև XI դարի սկզբները: Այդ ժամանակաշրջանում ի հայտ եկան ընդգրկուն «տիեզերական պատմությունները», որոնք սկսվում էին արարչագործությունից և ավարտվում տվյալ պատմիչի ապրած ժամանակաշրջանով: Նշված դարաշրջանի առավել հայտնի հեղինակներից էին Աբդ ալ-Ռահման իբն Աբդ ալ-Հաքքամը (802–871 թթ.), Իբն Կուտայբան (մահ. 889 թ.), Աբու Հանիֆա ալ-Դինավարին (մահ. 895 թ.), Ահմադ բին Յահյա բին Ջաբեր ալ-Բալազուրին (մահ. 892 թ.) և Իբն Վահիդ ալ-Յակուբին (մահ. 897 թ.): Այս շարքում հատկապես առանձնանում է ալ-Բալազուրին իր «Ֆութուհ ուլ-բուլդան» (Երկրների նվաճումը) աշխատությամբ, որն անփոխարինելի սկզբնաղբյուր է արաբական նվաճումների և խալիֆայության վաղ շրջանի պատմության համար: Ալ-Բալազուրին կարևոր տվյալներ է հաղորդում նաև նվաճված բնակավայրերի, խալիֆայության վարչակառավարման համակարգի և ներքին կյանքին առնչվող այլ հարցերի մասին: Նրա շնորհիվ պահպանվել են պայմանագրերի բացառիկ տեքստեր, որոնցով կարգավորվում էին արաբ նվաճողների և նրանց հպատակների փոխհարաբերությունները:

Արաբ դասական պատմագրությունն իր զարգացման գագաթնակետին հասավ շնորհիվ երկու հոչակավոր պատմիչների՝ ծագումով պարսիկ Աբու Ջաֆար Մուհամմեդ իբն Ջարեր ալ-Թաբարիի (838–923 թթ.) և Աբու ալ-Հուսեին Ալի իբն ալ-Հուսեին ալ-Մասուդիի: Ալ-Թաբարին հայտնի է իր «Պատմություն մարգարեից և թագավորաց» բազմահատոր աշխատությամբ, ինչպես նաև Ղուրանի մեկնություններով: Նրա «Պատմությունը», ուր դեպքերի նկարագրությունը շարադրված է ժամանակագրական հերթականությամբ՝ ըստ հիջրի տարիների, ուղեցույց է դարձել հետագա արաբ պատմագիրների համար: Ալ-Թաբարին հիանալի տիրապետել է հրեական, իրանական, արաբական հնագույն ավանդությանը և իսլամական շրջանի պատմության մանրամասներին, որը հասցրել է մինչև 915 թ.: Նա պարտաճանաչ կերպով նշում է օգտագործած աղբյուրները, որոնց մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Իբն Իսհակի, Իբն Սաադի, Մոքաֆֆայի ստեղծագործությունները, ինչպես նաև պարսկական ավանդությունները:

Պատմագիր և ճանապարհորդ ալ-Մասուդիի երկու տասնյակ երկերից պահպանվել է միայն «Ոսկու լվացարաններ ու գոհարների մարգագետիններ» աշխատության համառոտ խմբագրությունը: Չի պահպանվել նաև նրա հանրագիտարանային 30-հատորյա «Ժամանակի պատմությունը»: Ալ-Մասուդին հայտնի է եղել որպես բազմակողմանիորեն զարգացած անձնավորություն, որին կոչել են արաբների Հերոդոտոս: Նա քաջատեղյակ է եղել փիլիսոփայությանը, աստղագիտությանը, բժշկագիտությանը, աշխարհագրությանը: Ուսումնասիրել է տարբեր երկրների պատմությունը, ժողովուրդների սովորույթներն ու ավանդությունները: Համարվում է առաջին արաբ հեղինակը, որը մեկտեղել է պատմությունն ու աշխարհագրությունը:

Նույն դարաշրջանի անվանի պատմիչներից է նաև ծագումով պարսիկ Իբն Միսկավայհը (մահ. 1038 թ.), որը ծառայել է Բուվեյհիների արքունիքում և գրել «Ազգերի փորձը» աշխատությունը:

Արաբ պատմագրությունն ուրույն զարգացում ապրեց նաև Անդալուսիայում: Իբն Աբդ Ռաբբիհին (860–940 թթ.), որը նաև հայտնի պոետ էր, գրեց Իսպանիայի խալիֆաների պատմությունը: Վեստգոթերի իշխող ընտանիքից սերող Իբն Կութիյան (մահ. 977 թ.) հեղինակեց Ալ-Անդալուսի նվաճումը: Ալ-Հումայդիի (մահ. 1095 թ.) երկը նվիրված է Անդալուսիայի նշանավոր մուսուլման գործիչների կյանքի նկարագրությանը: Մեծ համբավ էր վայելում Իբն Հայյայի (մահ. 1076 թ.)՝ Անդալուսիայի պատմությանը նվիրված 60 հատորանոց «Ամուր գիրքը»:

X–XI դարերում ի հայտ են գալիս նաև քրիստոնյա արաբալեզու պատմիչներ: Այսպես՝ Ալեքսանդրիայի պատրիարք Եվտիքիոս Սաիդ իբն ալ-Բաթրիկը (876–939 թթ.) «Գոհարների շարք» երկում շարադրել է արևելքի պատմությունը մինչև 933 թ.: Յահյա իբն Սաիդ ալ-Անթաքին (980–1066 թթ.), շարունակելով Եվտիքիոսի գործը, այն հասցրել է մինչև XI դարի կեսերը: Հերմոպոլիսի եպիսկոպոս Սևերոսը (մահ. 987 թ.) գրել է «Ալեքսանդրիայի ղպտի եկեղեցու պատրիարքների պատմությունը»՝ հենվելով հունական և ղպտիական աղբյուրների վրա: Սևերոսի գործը շա-

ունակել են Թիֆլիսի եպիսկոպոս Միքայելը, Մահբուբ իբն Մանսուր իբն Մուֆարրիզը, Ալեքսանդրիայի պատրիարք Մարկոս Գ-ը՝ այն հասցնելով մինչև 1167 թ.:

Սելջուկյան արշավանքների ժամանակաշրջանում արաբ պատմագրությունը, ինչպես և ողջ մշակույթը, անկում ապրեցին: Տիեզերական պատմությունների փոխարեն ի հայտ եկան տեղական նշանակության պատմական կամ կենսագրական գործեր:

XII դարի կեսերից, սակայն, նորից աշխուժություն նկատվեց պատմագրության բնագավառում: Խաչակրաց արշավանքների ժամանակակից, Դամասկոսի քաղաքագլուխ Իբն Կալանիսին (1073–1160 թթ.) գրեց «Դամասկոսի պատմության հավելվածը»՝ որպես շարունակություն Հիլալ ալ-Սաբիի (970–1056 թթ.) «Դամասկոսի պատմության»: Խաչակիրների և մուսուլմանների հարաբերությունների համար կարևոր աղբյուր է նաև Ուսամա իբն Մունքիզի (1095–1188 թթ.) աշխատությունը:

Արաբ պատմագրության հետագա զարգացման մեջ նշանակալից ավանդ ունեցան աստվածաբան Աբու-լ Ֆարաջ իբն ալ-Ջաուզին (1126–1200 թթ.), Նփրկերտի պատմության հեղինակ Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկին (1117–1226 թթ.), Հալեպի Ջենգիների ժամանակագիր Իբն ալ-Ադիմը (1192–1262 թթ.), Մաղրիբի ալ-Մոհադների պատմիչ Աբդել Ուահիդ ալ-Մարրաքուշին (ծ. 1185 թ.) և այլք:

Այնուամենայնիվ, այդ շրջանի անգերազանցելի հեղինակությունն է Իբն ալ-Ասիրը (1160–1233 թթ.), որի «Լիակատար պատմությունն» իրավամբ համարվում է արաբ մատենագրության փայլուն գոհարներից մեկը: Այդ բազմահատոր աշխատության մեջ Իբն ալ-Ասիրը լայնորեն օգտագործել է նախորդ պատմագիրների աշխատությունները, արժեքավոր տեղեկություններ հաղորդել խալիֆայության մաս կազմող տարբեր երկրների և ժողովուրդների, այդ թվում Հայաստանի պատմության մասին՝ դեպքերի շարադրանքը հասցնելով մինչև մոնղոլական արշավանքների սփոռած ավերածությունները:

Եգիպտոսում մամլուքների տիրապետության հաստատումը (1250 թ.) և Բաղդադի խալիֆայության կործանումը (1258 թ.) նոր փուլ նշանավորեցին արաբա-մուսուլմանական աշխարհի պատմության մեջ, որը հարատևեց մինչև օսմանյան նվաճումները (1517 թ.): Մատենագրության այլ ճյուղերի հետ այդ ժամանակահատվածում պատմագրությունը ծաղկում ապրեց հատկապես Եգիպտոսում և Սիրիայում: Ասպարեզում հայտնվեցին այնպիսի ֆունդամենտալ աշխատություններ, ինչպիսիք են Իբն ալ-Ջահաբիի (1274–1347 թթ.) «Իսլամի պատմությունը և նշանավոր մարդկանց վախճանը», Աբու-լ-Ֆիդայի (1273–1357 թթ.) «Մարդկության համառոտ պատմությունը», Իբն ալ-Բասիրի (1301–1373 թթ.) «Սկիզբը և վերջը»: Իբն Խալդունը (1332–1406 թթ.) գրեց իր հռչակավոր յոթ հատորանոց «Պատմությունը», որի «Առաջաբան» կոչվող առաջին հատորը նոր խոսք էր ինչպես պատմագիտության, փիլիսոփայության, այնպես էլ ժողովրդագիտության, սոցիոլոգիայի, մշակույթի պատմության առումով: Պատմագիտական մեծ նշանակություն ունեն կենսագրական բառարանները, որոնցից հատկապես հիշարժան է ծագումով քուրդ մատենագիր Իբն Խալլիքանի (1211–1282 թթ.) «Նշանավոր մարդկանց վախճանը»: XIV–XV

դարերի պատմիչներից հարկ է նշել ալ-Կալկաշանդիին (1355–1406 թթ.), Մաքրիզիին (1364–1442 թթ.), Բադր ալ-Դին ալ-Այնիին (1360–1451 թթ.), Իբն Թաղրիբիրդիին (1411–1466 թթ.), Ջալալ ալ-Դին ալ-Սույութիին (1445–1505 թթ.) և այլոց:

Արաբա-մուսուլմանական պատմագրությանը զուգահեռ, հաճախ միաձուլված նրան, զարգանում էր նաև աշխարհագրությունը: Դեռ VIII դարից սկսած՝ արաբերեն թարգմանվեցին մի շարք հունական և հռոմեական աշխարհագրական աշխատություններ, որոնք հիմք ծառայեցին արաբա-մուսուլմանական աշխարհագրության, ինչպես նաև քարտեզագրության ուրույն զարգացման համար: Այն հատկապես առաջընթաց ապրեց և կիրառական նշանակություն ստացավ Աբբասյանների օրոք: Հսկայական կայսրության կառավարումը, նրա կենտրոնի և ամենահեռավոր անկյունների միջև կապի ապահովումը, հարկերի հավաքագրումը, օտար երկրներ արշավանքների կազմակերպումը պահանջում էին մանրակրկիտ գիտելիքներ և ճշգրիտ տվյալներ խալիֆայության բնակավայրերի, ազգաբնակչության, ցամաքային և ծովային ուղիների, փոստային կայանների, հարակից երկրների և ժողովուրդների մասին: Նման գիտելիքներ հիմնականում ձեռք էին բերվում ռազմական արշավանքների կամ ճանապարհորդությունների ընթացքում:

Արդեն IX դարում ի հայտ եկան հարկամատյանները, որոնցից ամենահռչակավորը դատավոր և աստվածաբան Աբու Յուսուֆի (731–798 թթ.) «Քիթաբ ուլ-խարաջն» էր (հարկամատյան)՝ կազմված Հարուն ալ-Ռաշիդի պատվերով: Արաբական աշխարհագրության սկզբնավորման մեջ նշանակալից ավանդ ունեցավ մաթեմատիկոս ալ-Խորեզմիի (780–847 թթ.) «Գիրք երկրի պատկերի մասին»-ը: 9–10-րդ դդ. արաբ աշխարհագրության դասական դպրոցի ձևավորման մեջ կարևոր ներդրում ունեցան Ջահիզը (մահ. 869 թ.), Յակուբին (մահ. 897 թ.), Իբն ալ-Ֆակիհը (մահ. 903 թ.), Իբն Խորդադբեհը (820–912 թթ.), Իբն Ռուստան (մահ. 913 թ.), Ալ-Բալխին (850–934 թթ.), Ալ-Համդանին (893–945 թթ.), Իսթահրին (մահ. 951 թ.), Իբն Հաուկալը (մահ. 977 թ.), Մուկադդասին (946–1000 թթ.): Ալ-Մամուն խալիֆայի արքունիքում ապրող և ստեղծագործող աշխարհագիրները կազմում էին խալիֆայության քարտեզները և իրականացնում դրա հետ կապված աստղաբաշխական հաշվարկներ: Նրանց աշխատությունները կարևոր տվյալներ են պարունակում խալիֆայության ճանապարհների, բնակավայրերի և ժողովուրդների մասին:

Ավելի ուշ շրջանի ականավոր աշխարհագրագետներից հիշատակելի են Աբու Ռեյհան ալ-Բաքրին (1014–1094 թթ.), Ալ-Իդրիսին (1100–1166 թթ.), Ալ-Դիմաշկին (1213–1288 թթ.), Իբն Բատտուտան (1377 թ.), Իբն Մաջիդը (1421–1500 թթ.) և այլք:

Արաբ պատմագրությունը հարուստ նյութեր է պարունակում Հայաստանի և հայ ժողովրդի միջնադարյան պատմության տարբեր շրջանների վերաբերյալ: Այդ նյութերը լայնորեն օգտագործվել են հայ և օտար ուսումնասիրողների կողմից: Որպես օրինաչափություն՝ արաբ պատմիչները Հայաստանին անդրադարձել են այնքանով, որքանով այն առնչվել է արաբա-մուսուլմանական պատմությանը: Մի շարք արաբ աշխարհագիրներ իրենց ճամփորդությունների ժամանակ այցելել են Հա-

յաստան և տեղեկություններ հաղորդել նրա կլիմայի, բնաշխարհի, բնակավայրերի, ժողովրդի, բուսական և կենդանական աշխարհի մասին:

Օսմանյան տիրապետության հաստատումը խալիֆայության ողջ տարածքում արգելակեց թե՛ պատմագրության և աշխարհագրության և թե՛ մյուս գիտությունների առաջընթացը:

7. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Օմայան խալիֆայության օրոք արաբները, չունենալով շինարարական-ճարտարապետական ավանդներ և փորձ, կառուցողական արվեստի սկզբունքները սովորում էին նվաճված ժողովուրդներից: Նրանք օգտագործում էին տեղական ճարտարապետներին՝ ասորիներին, հայերին, հույներին, առաջին մզկիթների կառուցման համար օգտագործում էին բյուզանդական եկեղեցիներից կամ նույնիսկ հռոմեական տաճարներից վերցված այուները:

Խալիֆայության մայրաքաղաքը Մեդինայից Դամասկոս տեղափոխելը մեծապես նպաստեց արաբական մշակույթի և հատկապես ճարտարապետության ձևավորմանը և զարգացմանը: Օմայան շինարարները սկզբում որպես մզկիթ վերակառուցում էին եկեղեցիները, ապա բյուզանդական ճարտարապետությունից յուրացնելով օրդերային համակարգի տարրերը, կամարա-թաղային և գմբեթային ծածկերի կոնստրուկցիաները՝ մշակեցին մահմեդական պաշտամունքային շենքի՝ մզկիթի տիպը:

Բուն Արաբիայի տարածքի վաղմիջնադարյան հուշարձանները փոքրաթիվ են և դարերի ընթացքում վերակառուցումների հետևանքով կորցրել են իրենց նախնական տեսքը: Մահմեդական աշխարհի գլխավոր սրբատեղին՝ Քաաբան Մեքքայում, դեպի ուր ուղղված են ողջ աշխարհի մզկիթները, կառուցվել է 608 թ. և հրդեհվելուց հետո վերակառուցվել 684 թ. որպես Բեյթ-Ուլահ մզկիթի համալիր: Ուղղանկյուն բակը (160x110 մ չափերի) շրջապատված է մոտ 550 այուներով ծածկված սրահով և ունի բազմաթիվ դարպասներ ու յոթ մինարեթ: Կենտրոնում Քաաբայի գրեթե խորանարդաձև (12x13 մ, բարձրությունը՝ 15 մ) քարաշեն ծավալն է, որի ներսում՝ արևելյան անկյունում, ագուցված է սրբազան «Սև քարը»:

Մահմեդական ճարտարապետության առաջին մզկիթներից է Երուսաղեմում 681-691 թթ. կառուցված Քուբաթ աս-Սահրան՝ «Ժայռի մզկիթը», որի հորինվածքը ազդված է Ս. Հարություն տաճարից: Մզկիթը ութանիստ արտաքին պատերով, ներսից կրկնակի այունակամարաշարով կառույց է, փայտաշեն բարձր գմբեթով (20,44 մ տրամագծով), կանգուն այն ժայռի վրա, որի վրայից, ըստ ավանդության, Մուհամմեդը համբարձվել է երկինք:

Արաբական աշխարհի առաջին խոշոր մզկիթները դարձան վերափոխված նախկին եկեղեցիները: Այսպես՝ Երուսաղեմի ալ-Աքսա մզկիթը VIII դ. վերակառուցված քրիստոնեական բազիլիկ եկեղեցի էր: Օմայան հարստության մայրաքաղաք Դամասկոսում ևս Ս. Հովհաննես Մկրտիչ խոշոր բազիլիկ եկեղեցին 708 թ. ալ-Վալիդ խալիֆան վերակառուցել է մզկիթի: Վերջինիս մեծությունը (մզկիթը բակի հետ ունի

157,5x100 մ չափեր), արտակարգ շքեղ հարդարանքը՝ մարմարով սալահատակված բակը և աղոթասրահը, կորնթական ոսկեզօծ այուները, պատերի խճանկարը (որն իր մակերեսով գերազանցում է երբևէ գոյություն ունեցած օրինակները), այս բոլորը ցնցող տպավորություն են թողել ժամանակակիցների վրա:

VIII դ. արաբական աշխարհում ձևավորվեց մզկիթի ճարտարապետական երկու հիմնական հորինվածք. ա) բուն արաբական՝ կազմված այուների վրա հենված ծածկով դահլիճից և նրա առջևի բակից, բ) Ասորիքից ընդօրինակած բազիլիկ հորինվածքը՝ միջին բարձր նավով (որը տանում էր դեպի Մեքքա կողմնորոշված խորշը՝ միհրաբը) և այունասրահով բակից, կենտրոնում՝ ծիսական լվացումների համար նախատեսված ջրավազանով: Հավատացյալներին աղոթքի՝ նամազի հրավիրելու համար մզկիթներին կից կառուցվում են հատուկ աշտարակներ՝ մինարեթներ:

Միհրաբից բացի, մզկիթի ինտերիերում մյուս կարևոր մանրամասը փայտե ամբիոնն էր՝ միմբարը:

Արաբական խալիֆայությունում VIII դ. կեսին իշխանությունն անցավ Աբբասյան հարստությանը, որի օրոք պետության մայրաքաղաքը դարձավ Բաղդադը: VIII-X դդ. եղան արաբական մշակույթի, հատկապես արվեստի ու ճարտարապետության ծաղկման ժամանակաշրջանը: Դա հատկապես արտահայտվեց IX դ. կարճատև ժամանակով մայրաքաղաք դարձած Սամարրայում: Քաղաքի կենտրոնում խալիֆա Մութասիմի կառուցած Ջաուսակ պալատն ուներ հսկայական չափեր (175 հա ընդհանուր մակերեսով) և բաղկացած էր պաշտոնական մասից, հարեմից, գանձարանից, զորանոցից, բաղնիքից, խաղահրապարակից, այգիներից: Խաչաձև հատակագծով գահադահլիճը պսակված էր բարձր գմբեթով: Պալատի բոլոր շենքերն ունեին ճոխ հարդարանք՝ բաղկացած ոճավորված բուսական զարդանկարներից, սյուժետային որմնանկարներից, զարդաքանդակներից: Սամարրայում Մութազզա խալիֆայի (849-853 թթ.) կառուցած Բալկուվարա պալատը ուներ կանոնավոր ուղղանկյուն հատակագիծ (1250x1250 մ չափերի), աշտարակներով ուժեղացված ամրոցատիպ պարիսպներ և, փաստորեն, փոքր քաղաք էր՝ փողոցներով, շուկայով, մզկիթներով և բաղնիքներով:

Սամարրայում Մութավաքիլ խալիֆայի (847-861 թթ.) կառուցած Մեծ մզկիթը իր չափերով (240x156 մ) մահմեդական աշխարհում ամենամեծն էր: Բակը շրջապատված էր 464 այուներից բաղկացած սրահով, պատերը զարդարված էին ոսկեզօծ հիմնապաստառի վրա իրականացված խճանկարներով: Մզկիթի հյուսիսային կողմում՝ համալիրից դուրս, կանգուն էր Մալվիա կոչվող մինարեթը՝ ամենահինքնատիպը մահմեդական ճարտարապետությունում: Այն խորանարդաձև պատվանդանի վրա կանգուն, 50 մ բարձրությամբ կոնաձև աշտարակ է՝ շուրջը սպիրալաձև պանդուսով, և իր ձևերով հիշեցնում է Հին Միջագետքի զիկկուրատները:

Աբբասյանների օրոք Իրաքի և Սիրիայի տարածքի ճարտարապետությունը զարգացավ՝ նախորդ ժամանակաշրջանում մշակված հորինվածքները և ձևերը կիրառելով:

Մեծ մզկիթները կառուցվում էին Դամասկոսի մզկիթի օրինակով՝ սյունազարդ դահլիճով և բակի պարագծով՝ սյունասրահով: Այդպիսին է Հալեպի Մեծ մզկիթը (VIII դ., վերակառուցված XIII դ.): Ուշագրավ է դրա մինարեթը (1091 թ.)՝ իր հարդարանքի ճոխությամբ:

Քաղաքներից դուրս՝ քարավանային ճանապարհների վրա, կառուցում էին իջևանատներ, ամրոցներ, ընդ որում՝ քարից (կրաքար, բազալտ):

Նոր քաղաքների հիմնադրումը սկսվում էր պարիսպների, պալատի և գլխավոր մզկիթի կառուցումով: Տեղանքի բարձրադիր վայրում կառուցվում էր միջնաբերդը՝ «կասբան», որն իշխում էր քաղաքի՝ «մեդինայի» վրա: Թաղամասերը բաժանվում էին էթնիկ սկզբունքով, ծածկված շուկայի փողոցները հատկացվում էին որոշակի արհեստանոցների և խանութների:

Մզկիթներից բացի, մյուս մոնումենտալ շինություններն էին հոգևոր դպրոցները՝ մեդրեսեները, հիվանդանոցները: Սելջուկյան տիրապետության օրոք՝ XII դ. կառուցված, ճարտարապետությամբ և հարդարանքով արժեքավոր կառույցները եղան Դամասկոսի հիվանդանոցը (1154 թ.)՝ մեդրեսեն (1172 թ.), Նուր-ալ-Դինի դամբարանը (1172 թ.)՝ ալեբաստրե ստալակտիտներով գմբեթներով:

Այյուբյանների իշխանության օրոք արաբական ամրաշինական արվեստի փայլուն օրինակը դարձավ բարձր բլրի վրա տեղադրված Հալեպի միջնաբերդը (վերակառուցված 1292 թ.)՝ ձվաձև հատակագծով, աշտարակներով ուժեղացված հզոր պարսպով, խանդակի վրա կառուցված թեքադիր կամարակապ կամրջով: Ներսում պալատն էր, մզկիթը մինարեթով (ծառայում էր նաև որպես դիտաշտարակ), բաղնիքները, դրամահատարանը, արհեստանոցները և այլն:

Աբբասյան խալիֆայության անկումը, Լենկ Թեմուրի ավերածությունները, Եգիպտոսի մամլուքների ասպատակությունները, փաստորեն, ընդհատեցին ճարտարապետության զարգացումն Իրաքում և Սիրիայում: Մոնումենտալ շենքերի շինարարությունը վերսկսվեց XIV դ. երկրորդ կեսից միայն՝ իրանական ճարտարապետական դպրոցի հետ սերտորեն առնչված: Ուշ միջնադարում վերակառուցվեցին և շինություններով լրացվեցին շիաների գլխավոր սրբություններ՝ իմամներ Հուսեինի և Աբբասի դամբարանները Քարբալայում և իմամ Ալիինը՝ Նաջաֆում: Երեքն էլ խոշոր համալիրներ են, որոնց կենտրոնում կանգուն է բարձր (մոտ 30 մ) գմբեթով բուն դամբարանի շենքը՝ արտակարգ շքեղ հարդարանքով:

Օսմանյան տիրապետության տակ անցնելուց հետո տարածում գտավ շուկաների և խաների (իջևանատների) կառուցումը, որոնք հսկայական համալիրներ էին, օրինակ՝ Հալեպի խան Դուանն (1574 թ.) ուներ 52 խանութ, 77 սենյակ, 344 կրպակ, երկու ծածկած 10 գմբեթով շուկա, երկու շատրվան, մզկիթ և այլն: Այդ ժամանակաշրջանի շենքերից առանձնանում են Սիրիայում Սելիմեի մեդրեսեն (1566 թ.) և Օսմանյան կայսրության խոշորագույն ճարտարապետ, հայազգի Սինանի կառուցած Սուլեյմանիե մեդրեսեն (1554 թ.), որը համաչափ լուծված մեծ համալիր էր՝ գմբեթավոր մզկիթով, սեղանատնով, գմբեթածածկ խցերի չորս մասնաշենքով:

XVII–XVIII դ. Մերձավոր Արևելքի արաբական ճարտարապետները օսմանյան տիրապետության օրոք նոր նվաճումներ չարձանագրեցին և պահպանեցին միայն տեղական ավանդները առանձին կառույցներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբրահամյան Ա. Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. Ա–Բ, Եր., 1964, 1967:

Ալպոյաճեան Արշակ, Իրաքի հայերը: Խմբագրեց և հրատարակության պատրաստեց Վարդան Գրիգորեանը, Եր., 2003:

Ալպոյաճեան Ա. Ա., Պատմություն հայ գաղթականության, հ. 1, Կահիրե, 1941; հ. 2, Կահիրե, 1955:

Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբու-լ-Ֆիդա, Իբն Շադդադ): Կազմեց՝ Հ. Թ. Նալբանդյան, Եր., 1965:

Արաբական աղբյուրներ, հատոր Գ. Արաբ մատենագիրներ, Թ–Ժ դարեր, Ներած. և թարգմ.՝ Ա. Ն. Տեր-Ղևոնդյանի, Եր., 1981:

Արաբացի մատենագիրներ Հայաստանի մասին, հաւաքեց և թարգմ.՝ Բագրատ Խալաթեանց, Ազգ. Մատենադարան, ՁԴ, Վիեննա, 1919:

Արևելագիտական ժողովածու, հ. II, Եր., 1964:

Արևելյան աղբյուրագիտություն, հ. I, Եր.,1988:

Բայբուրդյան Վ. Ա., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Եր., 2005:

Բայբուրդյան Վ. Ա., Օսմանյան կայսրության պատմություն, Եր., 2011:

Երեմեև Դ. Ե., Թուրքերի ծագումը, Եր., 1975:

Թոփուզյան Հ. Խ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն, Եր., 1978:

Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս ընծայեալ Բ. Պատկանեան, Ս. Պետերբուրգ, 1887:

Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն (Ալ-Բամիլ ֆի-լ-թարիխ), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Ա. Ն. Տեր-Ղևոնդյան, Եր., 1981:

Իբն-ի Բատուտա, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան, Եր.1940:

Իպն Խալլիքան, Վեֆայաթ ալ-Այան (Անհետացած երևելիներ), թարգմ.՝ Գ. Մըսրլեան, Կահիրե, 1935:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Եր., 1961:

Հայաստանի հարակից երկրների պատմություն (հեղ. կոլեկտիվ), Եր., 1992:

Հայ ժողովրդի պատմություն (8 հատորով), հ. II, Երևան, 1984; հ. III, Երևան, 1976:

Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի, Հայոց պատմություն: Աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Գ. Բ. Թոսունյանի, Երևան, 1996:

Հովհաննիսյան Ն. Հ., Արաբական երկրների պատմություն (VII դ. – 2005 թ.), հ. 1, Արաբները VII դարից մինչև 1516 թ., Եր., 2003; հ. 2, Օսմանյան տիրապետության շրջան. 1516–1918, Եր., 2004:

Հովհաննիսյան Ն. Հ., Հայ-արաբական պատմական հարաբերությունները, Կահիրե, 2008, արաբերեն:

Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, ՌՋԽԴ:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. III, Արաբական երկրներ, Երևան, 1967:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI, Արաբական երկրներ, Երևան, 1974:

Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. IX, Արաբական երկրներ, Երևան, 1978:

Մըսրլեան Գ., Ականավոր Հայեր Եգիպտոսի մեջ, Գահիրե, 1947:

Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887:

Սեբեոսի եպիսկոպոսի Պատմութիւն ի ձեռն Ստ. Մալխասեանց, Երևան, 1939:

Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:
Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում, Երևան, 1965:
Տեր-Ղևոնդյան Ա. Ն., Հայաստանը VI-VIII դարերում, Երևան, 1996:
Տեր-Պետրոսյան Լ. Հ., Խաչակիրները և հայերը, Եր., 2007:
Փոլադյան Ա. Պ., Քրդերը Աբբասյան խալիֆայության ժամանակաշրջանում. X-XI դդ., Երևան, 1999:
Абурейхан Бируни. Избранные произведения. I. Памятники минувших поколений (пер. и примеч. М. А. Салье). Ташкент, 1957.
Адамов А., Ирак Арабский, СПб, 1901.
Амин аль-Холи, Связи между Нилом и Волгой в XIII-XIV вв., М., 1962.
Базили К. М., Сирия и Палестина под турецким правительством, М., 1962.
Базиянц А. П., Лазаревский институт восточных языков. М.,1959.
Бартольд В. В., Работы по истории ислама и Арабского Халифата, Сочинения, т. 6, М., 1966.
Беляев Е. А., Арабы, ислам и Арабский халифат в раннем средневековье. М.,1965.
Гибб Х. А. Р., Арабская литература, М., 1960.
Большаков О. Г., История Халифата, т. 1. Ислам и Аравия (570-633). М., 1989, т. 2, Эпоха великих завоеваний (633-656). М., 1993.
Васильев Л. С., История Востока. Т. 1. М., 2001.
Гатауллин М. Ф., Сирия. М., 1956.
Гореликов С. Г., Ирак. Экономическо-географическая характеристика. М., 1963.
Грюнебаум Г. Э., Классический ислам. М., 1986.
Данциг Б. М., Ирак в прошлом и настоящем, М., 1960.
Джафар Хайят. Иракская деревня. Пер. с араб., М., 1953.
Заходер Б. Н., История Восточного Средневековья (Халифат и Ближний Восток). М., 1944.
Ибн ал-Факих. Ахбар ал-Булдан. Введение, перевод и комментарий Жамкочяна А. С., Ереван, 1979.
Ислам. Краткий справочник. М., 1983.
История стран Азии и Африки в средние века. М., 1968.
История стран зарубежной Азии в средние века. М., 1970.
Коран. Перевод и комментарий И. Ю. Крачковского. Издание второе. М.,1986.
Конрад Р., Запад и Восток. М., 1966.
Крачковский И. Ю., Избранные сочинения. Т. IV. М.-Л., 1957.
Мец А., Мусульманский Ренессанс. М., 1966.
Массэ А., Ислам. Очерки истории. Пер. с французского. М., 1982.
Оганесян Н. О., Абгарян и др., Ислам в политической жизни стран современного Ближнего и Среднего Востока. Ереван. 1986.
Оганесян Н. О., Становление и развитие востоковедения в советской Армении. В кн. Востоковедные центры в СССР (Азербайджан, Армения, Грузия, Украина). М., 1988.
Панова В. Ф., Вахтин Ю. Б., Жизнь Мухаммеда. М., 1991.
Пиотровский М. Б., Южная Аравия в раннее средневековье: Становление средневекового общества. М., 1985.
Семенова Л. А., Салах ад-Дин и мамлюки в Египте. М., 1966.
Семенова Л. А., Из истории фатимидского Египта. М., 1974.
Тер-Гевондян А. Н., Армения и Арабский Халифат, Ереван, 1977.
Фильштинский И. М., История арабов и Халифата (750-1517 гг.). М., 2001.

Шумовский Т. А., У моря арабистики. М., 1975.
Abu Salih (al-Armani). Churches and Monasteries of Egypt and Some Neighbouring Countries. Transl. by B. T. A. Evetts, Oxford, 1895.
Azarya Viktor. The Armenian Quarter of Jerusalem. Urban Life Behind Monastery Walls. London, 1984.
Bibliotheca Geographorum Arabicorum, ed. M. J. de Goeje, I-VII, Lugduni Batavorum, 1967.
Brockelmann, Geschichte der Arabischen Litteratur, I-II, Weimar, 1898, Berlin, 1902.
Gibb H. A. R. Studies on the civilization of Islam. London, 1962.
Castle W. Syrian Pageant. The History of Syria and Palestine 1000 B. C. to A. D. 1954. London.
Coke R. Baghdad: the City of Peace. London, 1927.
Dinawari, Kitab al-Akhbar al-Tiwal, publ. par V. Guirgas, Leide, 1988.
Edmonds C. Kurds, Turks, Arabs. London, 1957.
Fedden R. Syria. A Historical Appreciation. London., 1956.
Fuad Hasan Hafiz, Tarikh al-Shaab al-Armani Munzu bБdayati Hatta al-Yaum, al-Kahira, 1986, (History of the Armenian People from the Beginning until Today), in Arabic.
Gillaume A. The Life of Mohammad: A Translation of Ibn Ishak's "Sirat Rasul Allah". London, 1955.
Hitti Ph. History of the Arabs. From the Earliest Timees to the Present. London, 1951.
Hitti Ph. History of Syria, including Lebanon and Palestine. London, 1951.
Hitti Ph. Lebanon in History. London, 1957.
Hitti Ph. Syria. A Short History. New York., 1959.
Al-Imam al-Baladzouri, Futuh al-Buldan, Beirut, 1978.
Ibn Khaldun, The Muqaddimah. An Introduction to History, v. I-III. Transl. by F. Rosenthal, NY, 1958.
Jacob Harold F., Kings of Arabia. The Rise and Set of Turkish Sovereignty in the Arabian Peninsula, London, 1923.
Hourani A. Syria and Lebanon. London, 1946.
Hourani A. Minorities in the Arab world, London, 1947.
Kapoyan-Kouymjian Angele. L'Egypte vue par des Arméniens (XI-XVII siecles). Preface par Jean Leclant, Paris, Editions de la foundation Singer-Polignac, 1988. 93 p.+VIIIpl.
Longrigg S., Stoaks F. Iraq. London, 1958.
Al-Mas'udi, Muruj al-Zahab wa Ma'adin al-Jawhar, Beirut, 1966-1974.
Marwan al-Mudawar, Al-Arman Abra Tarikh, Beirut, 1982. (Marwan al-Mudawar, The Armenians Through History) in Arabic.
Rosenthal F., History of the Muslim Historiography, Leiden, 1952.
Sati al-Husri, Al-Bilad al-Arabiya wa Duwlat al-Usmaniya, Beirut, 1960 (Sati-al-Husri, The Arab Countries and the Osmanian State) in Arabic.
Al-Tabari, Tarikh al-Rusul wa-l-Muluk li-ibn Ja'afar Muhammad bin Jarir al-Tabari, I-IX, al-Qahira. 1960-1969.
Vincent M. Les Arabes. Paris., 1959.
Young G., Egypt, London 1927.
Zeitlian S., The Armenians in Egypt. Contribution of Armeniains to Medieval and Modern Egypt. Los Angeles, 2006.
Ziadeh N. A. Syria and Lebanon. London, 1957.
Ziadeh N. A. Urban Life in Syria under the Early Mamluks, Beirut, 1953.

ԲԱԺԻՆ 4

ՎՐԱՍՏԱՆ (ՎԻՐՔ)

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՎՐԱՍՏԱՆԸ IV–VI ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՎՐԱՍՏԱՆԸ ԱՎԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԱԽԱՇԵՄԻՆ

Վրաստանի IV դարի առաջին տասնամյակների զարգացումները նշանակալի չափով պայմանավորված էին Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև 298 թ. Մծբինի քառասնամյա հաշտության պայմանագրի կնքմամբ, երբ Հայաստանն (Հայք) ու Վրաստանը (Վիրք), փաստորեն, ընդգրկվեցին հռոմեական ազդեցության ոլորտ: Ասպագուր արքայի մահվամբ Փարնավազյանների հարստությունը այլևս ժառանգորդ չունեցավ: Վրաց ավագանին Սասանյաններից գահակալության ստացավ մանկահասակ Միհրան/Միրիանին:

Միհրանի թագավորության ու ձեռնարկած գործողությունների ժամանակագրությունը բավական խառնակ է: Պիտի կարծել, որ իրական է Միհրան/Միրիանի ժամանակակցությունը Կոստանդին Մեծին (306–337 թթ.) և Հայոց Տրդատ թագավորին (287–330 թթ.):

IV դարի Վրաստանում աստիճանաբար նկատելի են դառնում սոցիալ–տնտեսական նոր ազդակներ, որոնք զարգացմամբ պիտի հանգեին պայմանական հողատիրության հանդեպ երկրի ազնվականության անբավականության և առաջ բերեին ժառանգական տիրույթների մեծացման ձգտում: Այս պարագան չէր կարող իր անդրադարձը չունենալ թագավորական իշխանության ու երկրի ազնվականության հարաբերությունների վրա: Ժառանգական սեփականության ծավալումը խախտում էր նաև հողի նկատմամբ համայնքային տիրակալության ավանդական իրավունքը: Փաստորեն, տեղի էր ունենում վաղ ավատականացում, որի հետևանքով երբեմնի ազատ հողամշակը կամ հողատեր էր դառնում, կամ զրկվում հողակտորից և դառնում ավատատիրոջը սպասարկող վարձակալ: Առաջ է գալիս հողի առուծախի գործընթաց, որ բնորոշ էր արդեն վաղ ավատատիրությանը: Հիմնավորվող նոր հարաբերությունները, բնականաբար, դուռ պիտի բացեին նաև գաղափարական նոր վերաձևավորումների համար:

2. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ

Պարսկա–հռոմեական հարաբերությունների կարգավորումը (Մծբինի պայմանագիր) Այսրկովկասի պետական կազմավորումներին թույլ տվեց առավելապես ներքին բնականոն զարգացում ապրել: Պարսից զրադաշտության ճնշման մեղմումը, ինչպես նաև տասնամյակներ առաջ տեղի ունեցած Հայաստանի քրիստոնեացումը նպաստավոր էին բազում ճանապարհներով հարավից եկող նոր կրոնի և տեղում քրիստոնեականացող համայնքների աշխուժացման համար: Վրաստանում դրան կարող էին ինչ–որ չափով մասնակից դառնալ նաև հրեական համայնքները, որոնք հեթանոսության տեղական պաշտամունքի հետևորդներ չէին: Անշուշտ, նկատելի պիտի լիներ նաև Գուգարաց բդեշխության հայ բնակչության արդեն նոր ուսմունքը ճանաչելու պարագան:

Ընդսին՝ քրիստոնեացումը ավատականացման ընթացքը խրախուսող և թագավորական իշխանության շուրջ բնակչությանը համախմբող գործոն էր: Այս պարագաները, ներառյալ նոր ստեղծվող պաշտամունքային կենտրոնների տնտեսական զորեղացումը, արտաքին միջամտության թուլացումը և այլն, տեղական դիպվածների գումարումով հանգեցրին նոր ուսմունքի պաշտոնական ճանաչման:

Սույն իրողությունը արձանագրող հնագույն աղբյուրները հունա–հռոմեական են կամ հայկական ու ասորական: Առաջին պատմիչը, որ այս մասին խոսում է, Գելասիոս Կեսարացին է, որից քաղում է Ռուփինոսը՝ վրաց դարձը համաժամանակյա նկատելով հաբեշների քրիստոնեականացմանը, «գերի կնոջ» քարոզչությամբ: Հայկական V դարի աղբյուրները պատմամշակութային այդ խոշորագույն շրջադարձը կապում են Հռիփսիմյանց կույսերի ու Գրիգոր Լուսավորչի հրահանգով ու առաքելությամբ գործող սուրբ Նունեի (Նինո) անվան հետ: Հարկավ, այդ հաղորդումները որոշակիորեն խտացնում են երանգները: Վրաստանի պես բազմատոհմ ու լեռնական հատվածականություն ունեցող երկրում հավատքի հետ կատարվող շրջադարձությունը շատ ավելի բարդ եղելություն է, քան ներկայացնում են աղբյուրները: Այս առումով բնավ պատահական չէ «Քարթլիի դարձը» կամ «ս. Նինոյի վարքը» ներկայացնող վաղմիջնադարյան բնագրի տարբերակների գոյությունը (այժմ նրանց թիվը հասնում է չորսի): Ինչ վերաբերում է դարձի ժամանակագրությանը, ապա պատմագիտության մեջ գերիշխող է Իվ. Ջավախիշվիլու վարկածը, ըստ որի՝ այն տեղի է ունեցել Կոստանդին Մեծի վերջին տարիներին, այն է՝ մինչև 337 թվականը: Կ. Կեկելիձեն և Յ. Մարկվարտը դարձի ժամանակը որոշելիս ելակետ էին ընդունում Արեգակի խավարման ստուգյալ ժամանակագրությունը, որով թվագրում էին 355/6 կամ 358 թթ.: Այս պարագայում աղբյուրի հիշատակած մառախուղը (մթնումը) պիտի հասկանալ Արեգակի խավարում: Սակայն եթե Հայաստանի և Վրաստանի դարձերի մեջ կեսդարյա տարբերություն լիներ, դժվար պիտի լիներ բացատրել Գրիգոր

Լուսավորչի պաշտամունքի նկատմամբ այն հանդուրժողականությունը, որ ունենք եկեղեցական բաժանմանը վերաբերող թղթերում:

Բոլոր պարագաներում նոր վարդապետության ընդունումը, շատ չանցած, առաջ բերեց ժողովրդի կազմավորման և միասնականացման հզոր խթաններ, ավելին, իբրև գրավոր վարդապետություն, Այսրկովկասի երկրներում հրատապ դարձրեց գրի ու դպրության խնդիրը: Հակառակ եղած բոլոր ջանքերին ու վարկածներին՝ վրաց, աղվանից և հայոց գրերի ստեղծումը և դպրության սկզբնավորումը քրիստոնեության թելադրած անհրաժեշտության ծնունդ են: Չմոռանանք, սակայն, արձանագրել, որ Արևմտյան Վրաստանի կամ Կողքիսի (Լազիկայի) քրիստոնեացումը տեղի էր ունենում միանգամայն այլ պարագաներում, այլ աղբյուրներից ու ավանդաբար այլ գործիչների քարոզչությամբ և առավել տևական ժամանակահատվածում:

3. ՎՐԱՍՏԱՆԸ V–VI ԴԱՐԵՐՈՒՄ

Իրանի հետ ունեցած պայմանագիրը շուտով խախտվեց, և Հուլիանոս Ուրացողի ձեռնարկած արշավանքը դեպի Տիզբոն ավարտվեց անհաջողությամբ: Նոր պայմանագրով հռոմեացիները չպիտի օժանդակեին Արշակ Բ–ի հակաիրանական ելույթներին: Վրաստանը, կարելի է ենթադրել, սատարում էր Հայոց թագավորին, այդ թվում և ըմբոստացած նախարարների դեմ գործելիս: Արշակին ու Վասակ Մամիկոնյանին խարդավանքով ձեռք գցելուց հետո Շապուհը, ինչպես Ամիանոսն է հաղորդում, Վրաստանից հալածեց հռոմեացիների օժանդակությամբ երկիրը կառավարող Սաուրմագին, սակայն 369 թ. Հայաստանում Պապը թագավոր դարձավ, և այս պարագան մասամբ նպաստեց Վրաստանի հակաիրանական դիրքորոշմանը, իսկ Սաուրմագը հռոմեացիների օժանդակությամբ վերադարձավ երկիր: Վրաստանի թագավորությունը կիսելու՝ Ասպագուրի ցանկությունը Շապուհը չէր ընդունում, ուստի 371 թ. նորից փորձեց արշավել հյուսիս: Սակայն Ձիրավի դաշտում կրած պարտությունը կանխեց այդ մտադրությունը: Նոր պատրաստությանը խանգարեց նաև հռոմեացիների զբաղվածությունը օստգոթերի դեմ: Եթե իրավացի է Ամիանոսի՝ Ասպագուրի և «Քարթլիի մատյանի» Վարազ–Բակուրի նույնանձնության վարկածը, ապա պիտի ենթադրել, որ Քարթլիի բաժանումը երկար չի տևել, և իրանցիները տիրացել են երկրին:

Բակուր թագավորի, իսկ ապա Փարսմանի իշխանության տարիներին Հայաստանի 387 թ. բաժանման հետևանքով Գուգարաց բդեշխության որոշ հատվածներ միացվեցին Վրաստանին (բացի Կանգարքից, Տաշիրից ու Աշոցքից): Սակայն Վրաստանում շարունակվում էին միջդինաստիական հակասությունները, և Իրանն ու Բյուզանդիան աշխատում էին օգտագործել այդ պարագան: Իրավիճակը էական փոփոխությունների չենթարկվեց նաև V դարի երկրորդ տասնամյակում Միհրդատին փոխարինած Արչիլի (Արձյուղի) թագավորության տարիներին: 428 թ. Հայոց թագավորության բարձումը հուշում էր Վրաստանի և Աղվանքի հանդեպ ևս ձեռնարկելիք խստություններ: Այս պարագան խթանում էր կազմավորվող ավատատերերի և արքունիքի միջև եղած հակասությունները: Իրանը հետևողականորեն միջամտում

էր նաև եկեղեցական խնդիրներին, ընդհուպ մինչև կաթողիկոսի հաստատում–մերժումը: Հազկերտ Բ–ն (438–457 թթ.) Այսրկովկասի երկրների ռազմական կարողությունը թուլացնելու նպատակով քուշանների դեմ պատերազմի էր ուղարկում մարտական կազմավորումները, միաժամանակ խստացնում պահանջվող հարկերն ու վճռական միջոցներ ձեռնարկում ենթակա երկրները Իրանի հետ միակրոն դարձնելու համար: Իրան կանչված Այսրկովկասի ներկայացուցիչները (տանուտերերը) կոահեցին սպառնացող վտանգը և առերես ընդունեցին մազդեզականություն ընդունելու առաջարկը՝ առաջիկայում միաձայն հրաժարվելու պայմանավորմամբ: Վրաստանը, սակայն, չկարողացավ պահել իր խոստումը. պատճառը թերևս իրանամետ իշխողների գերակշռությունն էր, իսկ առավել ազդեցիկ Աշուշա բդեշխը Հազկերտի մոտ էր՝ հսկողության տակ: Եվ այնուամենայնիվ, հայերի ապստամբությունը (Ավարայրի ճակատամարտը) նշանակալի զիջումների մղեց Իրանին, այդ թվում և Վրաստանի հանդեպ:

Իրանի շահ Պերոզի իշխանության տարիներին ևս (459–484 թթ.) երկիրը կոիվների մեջ էր Միջին Ասիայում, մանավանդ հեփթաղների դեմ: Թե ինչ պարագաներում Միհրդատի թագավորությունը փոխանցվեց Վախթանգ Գորգասալին, չգիտենք, բայց որ վերջինս պատրաստվում էր ազատագրական պայքարի, հայտնի է թեկուզ «Շուշանիկի վկայաբանության» հաղորդումներից: Թագավորական իշխանությունը այնքան էր թուլացել, և իրանամետ ուժերն այնքան էին աշխուժացել, որ Վարսքեն բդեշխը, ինչպես նաև նրան սատարող որոշ ավագանիներ հաշվի չէին նստում կենտրոնական իշխանության հետ: Միաժամանակ երկրին պակաս սպառնալիք չէին ներկայացնում հյուսիսից լեռնանցքներով Վրաստան թափանցող ցեղային կազմավորումները: Պատահական չէ, որ 493–494 թվականների Բոլնիսի արձանագրության մեջ ժամանակը նշվում է ըստ Պերոզ շահի իշխանության տարիների:

Այսպիսով՝ Վախթանգ Գորգասալը նախ պիտի զբաղվեր ներքին ավատատիրական տները հնազանդեցնելով, ապա մտածեր անկախության պայքարի մասին: Այս դեպքում էլ նրա անելիքը մասամբ ուղղորդվեց Վահան Մամիկոնյանի գլխավորությամբ հայոց ապստամբության փաստով: Մինչ այդ Վախթանգը նկատելի հաջողություններ էր գրանցել ներքին հարցերում: Կոտրել էր Միքայել եպիսկոպոսապետի հակառակությունը, նոր եպիսկոպոսներ ձեռնադրել և կաթողիկոսություն հիմնել: Ինքնավստահությունը հասել էր այնտեղ, որ Վախթանգը Պերոզ արքայի 25–րդ տարում (483/4 թ.) մահապատժի ենթարկեց դավանափոխ Վարսքենին, որով, փաստորեն, սկիզբ առավ վրաց հակաիրանական ապստամբությունը: Հայերը արձագանքեցին այս իրադարձությանը, մանավանդ որ Վախթանգը կանխավ պայմանավորվածության էր հասել հոների հետ: Ցավոք, այս խոստումը անկարելի եղավ կատարել, թեև Վախթանգը շարունակում էր հավատացնել Վահան Մամիկոնյանին, թե հոները արդեն ճամփա են ընկել: Ինչևէ, հայերը լեռներից իջան Ճարմանյան (Գարդաբանի) դաշտ և միացան վրաց զորքին: Զորքերի անմիաբանության պատճառով, հակառակ գործադրած ջանքերին, վրաց–հայկական միացյալ բանակը պարտու-

թյուն կրեց, և պարսիկները շուտով մտան Քարթլի՝ օժանդակություն ստանալով Վախթանգից դժգոհ իշխաններից ու նրանց զորական ուժից:

Հազարավուխտի գրոհին չդիմանալով՝ Վախթանգը ապաստան գտավ Արևմտյան Վրաստանում: Որոշ ժամանակ անց՝ Հազարավուխտի՝ Իրան վերադառնալուց հետո, Վախթանգը նորից գործի գլուխ կանգնեց. հրաժարվեց պարսից զորքերի հետ Բյուզանդիայի դեմ գնալուց, որով առիթ տվեց պարսից բանակին նորից ներխուժելու Քարթլի: Ըստ ավանդության՝ այս ընդհարման ժամանակ նա վիրավորվեց, որի ծանրացման հետևանքով այլևս անկարող եղավ ապաքինվել: Նա գնաց Ուշարմա և շուտով՝ հավանաբար 502–506 թվականների միջև, երբ վերսկսվեցին Իրան–Բյուզանդիա նոր ընդհարումները, վախճանվեց ստացած վերքից: Վախթանգին վերաբերող վրացական պատմողական աղբյուրները լեցուն են ներբողով և հերոսականացմամբ. արդեն Գորգասալ անունն էլ այդ է վկայում (սաղավարտի վրա գայլի գլուխ է պատկերված եղել), որ Վախթանգին փոխարինած թագավորը Պրոկոպիոս Կեսարացու հիշատակած Գուրգենն է եղել, որով և 523 թ. ավարտվեց վրաց թագավորությունը, և Վրաստանում հաստատվեց պարսից մարզպանական իշխանություն:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

Մարզպանի նստոց դառնալով՝ Տփղիսը աստիճանաբար իրեն էր ձգում վարչական պաշտոնեությանը և հարկավ նաև ազնվականական ընտանիքներին: Այս պարագան խթանեց քաղաքում պաշտամունքային նոր կառույցների անհրաժեշտություն: Երևան եկան Անչիսխատի եկեղեցին, Սբ Սիոնը, Սբ Մարիամը և այլն: Հիմնվեցին կամ աշխուժացան երկրի մյուս քաղաքներն ու ավանները՝ Ռուսթավը, Սամշվիլդեն, Դմանիսը, որոնք շրջակայքում ունեին մշակովի հողեր: Անցման շրջանի քաղաքային կենտրոնների նվազումը շուտով դադարեց, և նոր կարգերի ամրապնդմանը զուգընթաց սկիզբ առավ նկատելի աշխուժություն: Իրանի ու Հայաստանի պես Վրաստանում էլ սկսեցին ստվարանալ հասարակության արտոնյալ շերտերը, ամենից առաջ՝ ազատները: Նրա այն մասը, որ կապված էր արքունի ծառայության կամ տոհմակցության հետ, անվանեցին *սեպուհներ*: Հայկական աղբյուրները տեղեկություններ են հաղորդում վրաց «սեփեծուլների» մասին, որոնք համապատասխանում են Հայաստանում եղած ոստանիկներին: Սակայն կառուցվածքային առումով երկիրը բաժանվում էր էրիսթավությունների, որոնք ինչ-որ չափով հիշեցնում էին հայկական նախարարական տները: *Էրի* եզրը (հայ.՝ այր) նախ զինվորական պիտի նշանակեր, ուրեմն *էրիսթավը* նրանց առաջնորդողն էր, իշխանը: Ռազմավարչական այս բաժանումը երկրի ռազմականությունը չէր թուլացնում, որովհետև էրիսթավները թագավորական պաշտոնյաներ էին և ենթակա էին վերատեսչության: Առավել հսկելի էին «մթավարները» (իշխանները), որոնք արքունի իշխանավորներ էին նկատվում: Ինչ վերաբերում է բդեշխին, ապա այդպիսի տիտղոսի գործածությունը բնորոշ է Հայաստանի կազմից հանված Գուգարք ծայրագավառի իշխողին: Նրա

ինքնուրույնությունը, դատելով V դարի 70–80-ական թվականների անցուդարձերից, ավելին պիտի լիներ, քան նախորդ հիշվածներինը:

Վրաց հասարակության առավել զանգվածային խավերը հայտնի էին «մսախուրի», «մխեդարի», «ուազնոնի», «դաբիուրի», «գլեխի» և այլ անվանումներով: Նրանք բոլորը հասարակության ստորին շերտն էին կազմում, բայց զբաղմունքի ու իրավասության, սեփականություն ունենալ–չունենալու առումով չէին նույնանում: Հայերենում նրանց կարելի է միացնել «ամբոխ» կամ «ռամիկ» եզրով: Կային և այլ իրավազուրկ շերտեր՝ ընդոծիններ («սախլեուլի»), ծառաներ («մոնա») և այլն: Սակայն պետք է նկատել, որ ավատականացումը և նրա զարգացման ընթացքը համատարած չէին: Լեռնային գոտիներում համայնքային տնտեսաձևը բավական երկար շարունակեց իր գոյությունը:

5. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ IV–VI ԴԱՐԵՐՈՒՄ

Բյուզանդական կայսրության կազմավորումը մի շարք փոփոխություններ պայմանավորեց հարևան երկրներում: IV դարի 80-ական թվականներին Կողբիսի կամ Լազերի թագավորության ընդարձակումը դեպի Ճորոխի ավազան և հյուսիսում դեպի սվանական բնակավայրեր կայսրությունը դիտում էր իբրև իր արևելյան սահմանների ապահովության գրավական: Լազերի զորացումը հնարավորություն ստեղծեց Վրաստանի թագավորությունից ետ գրավելու խլված գավառները, իսկ Արևմտյան Վրաստանի մյուս ցեղախմբերին (մասնավորապես արխազական) ընդգրկելու ազդեցության ոլորտ: Ճիշտ է, լազերի (եգերաց) թագավորը ճանաչվում էր բյուզանդական կայսեր վասալ, բայց դա հիմնականում ձևական էր: Որքան հաճախակի էին դառնում Հյուսիսային Կովկասից սպառնացող վտանգները, այնքան ընդգծվում էր լազերի թագավորության դերակատարությունը Պարսկաստանի և Բյուզանդիայի համար: V դարի երկրորդ կեսի սկզբներին լազերի թագավոր Գուբազի ապստամբության փորձից կարելի է եզրակացնել, որ բյուզանդացիների հանդուրժողականությունը պայմանական էր: Համենայն դեպս, Վախթանգ Գորգասալի կողմից Եգրիսից գավառներ (Արգվեթի) գրավելու իրողությունը չհարուցեց կայսրության միջամտությունը:

Սև ծովի արևելյան ափի բնակավայրերում հույների ներկայությունը զսպում էր լազերի թագավորի գործունեության ազատությունը, իսկ կարող դաշնակիցներ նա չուներ (պարսիկներին դիմելու փորձերը հաջող ելք չունեցան, իսկ թե Գուբազի որդի Ծաթեի թագավորությունը ինչ պայմաններում շարունակեց իր գոյությունը, աղբյուրները չեն խոսում): Գիտենք, սակայն, որ VI դարում այստեղ շարունակվում էր քրիստոնեության դարձը, և բավական աշխույժ առևտրական երթևեկ կար, ինչի վկայությունն է Պևտինգերյան քարտեզում այդ տարածքի ճանապարհների առկայությունը (մինչև Սեբաստապոլիս և նրանից հյուսիս): Վերջին տասնամյակների հնագիտական պեղումները ևս հիմքեր տվեցին պնդելու, որ մերձսևծովյան քաղաքներում հունական մշակույթին աստիճանաբար փոխարինելու է գալիս տեղաբնիկ-

ների ստեղծած մշակույթը (Բիձվինթա, Սեբաստապոլիս, Փազիս, Արխեոպոլիս, Ռոդոպոլիս, Շորապան):

Լազերի թագավորության (իմա՝ Արևմտյան Վրաստանի) մշակութային աղերսները հունական աշխարհի հետ ավելի սերտ ու տևական են, քան Արևելյան Վրաստանինը: Մասնավորապես ուշագրավ է Բիձվինթայի խաչանկարը, ուր մասնագետները ասորա-պաղեստինյան հելլենիստական արվեստի աղերսներ են տեսնում: Փազիսում հունական փիլիսոփայական-ճարտասանական կենտրոնի գոյությունը չէր կարող իր բարերար ազդեցությունը չթողնել տարածաշրջանի մշակութային կյանքի վրա: Ինչ վերաբերում է Լազիկայի թագավորության գրավոր մշակույթին, ապա առ այսօր հայտնի վաղմիջնադարյան արձանագրական պատառիկները միայն հունարեն են: Բյուզանդիայից ընկալված քրիստոնեությունն իր հետ հաստատուն դարձրեց պատարագի հունարեն լեզուն:

6. ՎՐԱՑ ԳՐԻ ՈՒ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ

Քրիստոնեության ընդունումը, ինչպես ամենուր, Վրաստանում ևս օրակարգ բերեց գրի ու դպրության անհրաժեշտություն: Մինչ այդ, ինչպես Հայաստանում, Վրաստանում նույնպես պաշտոնական գործածություն ունեին արամերեն և հունարեն լեզուներն ու գրչությունները: Հնագիտական պեղումները Արմազում և հին Մցխեթի այլ թաղամասերում երևան բերեցին նախաքրիստոնեական շինարարական ու տապանագրային արձանագիր կարևոր նմուշներ: Պիտի ենթադրել, որ Վրաստանում ևս շուրջ մեկ դար եկեղեցին արարողությունը կատարում էր այլալեզվային ընթերցանությամբ ու բանավոր թարգմանությամբ:

Վրացագիտության մեջ շրջանառվող տեսությունները Փարնավազյանների օրոք ազգային դպրության գոյության մասին, ինչպես նաև վրաց գրերն ու գրչությունը արամեականին առնչելու կամ հունականի հետ նույն աղբյուրից բխեցնելու տեսությունները փաստական հաստատում չեն գտնում: Բոլոր հիմքերը կան պնդելու, որ ստույգը Կորյունի հաղորդած տեղեկությունն է, ըստ որի՝ Ջաղա անունով օգնականի միջնորդումով վրաց այբուբենը աղվանականի ու հայկականի հետ նույն պատմամշակութային և դավանական անհրաժեշտության ու նույն դպրոցի ծնունդ է: Բոլոր պարագաներում մինչև VII դ. սկզբները, ըստ «Գիրք թղթոցում» եղած վկայության, այս տեղեկությունը Վրաստանում ևս առարկություն չէր գտնում: Ուստի բնական է՝ վրացերենով կատարված անդրանիկ գրառումները V դարի կեսերից վաղ չեն թվագրվում, թեև կան տեսություններ, որոնք փորձում են շատ ավելի առաջ տանել: Վրաստանում պահպանված հնագույն վրացերեն արձանագրությունը պարսից Պերոզ արքայի 20-րդ տարում սկսած և 15 տարի հետո (492/3) ավարտած շինարարական վկայագիրն է: Այնուհետև հնագույնների թվին են պատկանում Երուսաղեմի Հուդայի անապատում և Պաղեստինի այլ հնավայրերում հայտնաբերված արձանագրությունները:

Ինչ վերաբերում է թարգմանական և ինքնուրույն մատենագրության սկզբնավորմանը, կասկած չկա, որ V դարում վրացերեն պիտի թարգմանված լիներին Հին

ու Նոր կտակարանային շատ գրքեր, ծիսական և վարքագրական բազմաթիվ հուշարձաններ՝ իբրև աղբյուր ունենալով այդ երկերի հունարեն, հայերեն և մասամբ ասորերեն խմբագրություններ: Վրացերենով մեզ հասած անդրանիկ տեղական հուշարձանը «Սուրբ Շուշանիկի վկայաբանությունն է», որը, հայերեն տարբերակի համեմատությամբ, բավական ընդարձակ է ու պատմագրական տեղեկություններով հարստացած:

7. ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ

Սույն խորագիրն ինքնին թելադրում է, թե մի քանի տասնամյակի տարբերությամբ դարձի եկած Հայաստանն ու Վրաստանը ինչպես որ բախտակից էին քաղաքական, վարչական, տնտեսական առումներով, նույնքան էլ առանձնանում էին նույնադավանությամբ: Հայկական աղբյուրները, մանավանդ «Գիրք թղթոցը», հայ-վրացական եկեղեցական հարաբերություններին վերաբերող կարևոր տեղեկություններ են բովանդակում: Վրաց եկեղեցու և մատենագրության խոշորագույն պատմաբան Կ. Կեկելիձեի համոզիչ եզրակացությամբ «Անկասկած է և այն, որ սկզբնապես՝ չորրորդ, հինգերորդ և վեցերորդ դարերում, Վրաստանը հայերի հետ ուներ ինչպես մշակութային, այնպես էլ նվիրապետական կապ, որ ընդհատվեց յոթերորդ դարի սկզբին»: Նա ընդգծում է, որ քրիստոնեությունը Գուգարքից էր թափանցում Վրաստան, երկու երկրներն էլ ընդունում էին Գրիգոր Պարթևի լուսավորիչ լինելը: «Վրաստանի և Հայաստանի եկեղեցական կարգուկանոնը և սովորույթը նույնական էին, օրինակ՝ շարժական տոներ և տոմար, ընդհանուր սրբեր (Շուշանիկ), ընդհանուր պահքեր (Առաջավորաց, Բաղարջակերաց, անշարժ քարի սեղան, կենդանու մատաղ, ընդհանուր արարողական ծեսեր և երուսաղեմյան խմբագրության նույնական սահմանք (տիպիկոն) և այլն»: Վախթանգ Գորգասալի օրոք (467 թ.) տեղի է ունեցել եկեղեցական 12 թեմերի հիմնում, որոնց եպիսկոպոսներին գլխավորում էր արդեն կաթողիկոսը: Հաջորդ թեմական վերակազմավորումը հայտնի է դառնում 506 թ. Դվինի ժողովին մասնակցող եպիսկոպոսների քանակով՝ 24 հոգի: Մեկ հարյուրամյակ անց թեմական աթոռների թիվը հասնում է 35-ի:

Քանի որ Մորիկ կայսեր իշխանության տարիներին բյուզանդական ազդեցությունը բերեց երկաբնակության առավել տարածման, ընդհուպ մինչև Հայաստանում Դվինին հակաթոռ կաթողիկոսության ստեղծման, Արևելյան Վրաստանը ևս ընդգրկվեց դավանական-մշակութային այդ ոլորտ: Սկզբնապես Կյուրիոն կաթողիկոսի դավանական նոր կողմնորոշումը հստակ դրսևորում չուներ, բայց երբ պարզվեց, որ միաբնակությունը նախընտրող Իրանը Վրաստանի կողմնորոշումը սաստող լծակներ այլևս չունի, նա ավելի համարձակորեն ձեռնամուխ եղավ նախընտրության իրականացմանը, որ, փաստորեն, նշանակում էր եկեղեցու ազգայնացում՝ հարակից վերանայումներով: Աբրահամ Աղբաթանեցու 609 թ. գրած շրջաբերականով

հայ-վրացական եկեղեցական միասնությունը ավարտվեց[18]: Իհարկե, փոխադարձ այցելություններ չանելու, նույնիսկ խնամիությունից ձեռք քաշելու կոչերը տևական ազդեցություն չունեցան, սակայն գրական-մշակութային մերձությունները աստիճանաբար զրկվեցին դավանական քաջալերանքից: Հայ-վրացական երկլեզու բնակչություն ունեցող Ցուրտավի եկեղեցու ժամասացությունը այլևս կատարվում էր երկու լեզվով՝ ըստ համայնքի պատկանելության: Հայերը բավական նկատելի ջանքեր գործադրեցին Աղվանքի հետ նաև վրաց դավանական միասնությունը պահպանելու համար, սակայն կատարվածն այլևս փաստ էր: Հունադավան միջավայրում ևս վրաց մշակույթն ու դպրությունը կարողացան պահպանել ու զարգացնել ազգային նկարագիրը: Վրաստանի կաթողիկոսի աթոռատեղին Մցխեթն էր, որ մինչև օրս նույնությամբ կա, իսկ Կողքիսի եկեղեցին երկու ինքնակա միավոր էր ներկայացնում՝ Լազիկայի մետրոպոլիտություն և Աբխազքի արքեպիսկոպոսություն: Հետագայում (X դ.) մետրոպոլիտությանը փոխարինեց Ճղոնդիդի եպիսկոպոսությունը, իսկ Աբխազքի արքեպիսկոպոսությանը՝ Բիձվինթայի կաթողիկոսությունը, որը, շատ չանցած, դարձավ Աբխազքի կամ Արևմտյան Վրաստանի կաթողիկոսություն (X դ. երկրորդ կես):

[18] Այդ կապակցությամբ եղած քննարկումները արտացոլված են Աբրահամ Աղթաթանեցու, Կյուրիոն կաթողիկոսի, Վրթանես տեղապահի, Սմբատ Վրկանա մարզպանի, Մովսես եպս. Ցուրտավեցու թղթերում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ VII–X ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ VI ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՑ VII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐ

Հուստինիանոս կայսեր (527–565 թթ.) և Խոսրով Ա. Անուշիրվանի միջև 532 թ. «մշտատև հաշտության» կնքումով բյուզանդա-պարսկական հակասությունները չավարտվեցին:

Հուստինիանոսը շարունակեց զորքեր կուտակել Արևմտյան Վրաստանում և կառուցել ամրություններ (Պետրա, այժմ՝ Ցիխիսձիրի): Պարսկաստանի ներկայությունը Եգերաց աշխարհում տեղացիներին ստիպում էր դաշնակցության եզրեր փնտրել մերթ այս, մերթ այն հակամարտողների հետ: 542 թվականին՝ Պետրան գրավելիս, մերթ այն հակամարտողների հետ: 542 թվականին՝ Պետրան գրավելիս, մինչդեռ Խոսրովի 550 թ. հարձակման ժամանակ Ցխենիսծղալիի մյուս ափին բյուզանդացիների հետ էին նաև եգրիսացիները: Ճակատամարտի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ է հաղորդում Պրոկոպիոս Կեսարացին:

562 թ. Խոսրով Անուշիրվանը 50-ամյա հաշտություն կնքեց բյուզանդացիների հետ և ձեռք քաշեց Լազիկայից՝ իր զիջման դիմաց Բյուզանդիայից ամենամյա 30 հազար ոսկի դինար ստանալու պայմանով: Այս կացության մեջ 571 թվականին ծայր առավ Հայոց ապստամբությունը պարսից դեմ, որին հարեցին նաև Վրաստանն ու մասամբ Աղվանքը: Բյուզանդիան չկարողացավ բախտորոշ օգնություն ցուցաբերել ապստամբներին: Գահ բարձրացած Տիբերիոսը (578–582 թթ.) պատրաստ էր խաղաղության հասնելու համար Պարսկահայքն ու Վրաստանը զիջել Իրանին: Սակայն շատ չանցած՝ Իրանում ծայր առավ նշանավոր Բահրամ Չուբինի գլխավորած ապստամբությունը, որի արդյունքում Հորմիզդը գահընկեց արվեց: Նոր շահը՝ Խոսրով Բ Փարվեզը (591–628 թթ.), օգնության ակնկալությամբ պատսպարվեց Բյուզանդիայում՝ դրա դիմաց Բյուզանդիային զիջելով Հայաստանի նշանակալի մասն ու Վրաստանի հարավային գավառները: Մինչ այդ՝ տակավին Հուստինիանոս Բ-ի ժամանակ, Վրաստանում տեղական իշխանական տների գլուխ էր անցել Գուրգեն/Գուարամ անունով էրիսթավապետ-պատրիկը: Պարսից շահը, կացությունից ելնելով, ճանաչեց Գուարամի իշխանապետությունը, որ հաստատվում է նրա անունը կրող դրամի հատությամբ: Նրան փոխարինած Ստեփանոսը շարունակում է մնալ Իրանին ենթակա: Խոսրով Փարվեզի և Մորիկ կայսեր փոխհամաձայնության քաղաքականությունը Վրաստանի ներքին կացության վրա բարերար ազդեցություն ունեցավ, սակայն 602 թ. Մորիկ կայսեր սպանությամբ խնդիրները բարդացան: Իրանը

շուտով տիրացավ բյուզանդական ենթակայության մի շարք երկրների՝ Սիրիային, Հայաստանին, Կապադովկիային, Պաղեստինին և այլն, սակայն Հերակլ Հայազն կայսրը (610–641 թթ.) գործի դրեց երկրի ռազմունակությունը վերականգնելու բոլոր հնարքները և 622 թվականից Իրանի դեմ արշավանքի դուրս եկավ: Բյուզանդական տիտղոսներ կրող Վրաստանի իշխանավորները զգուշավոր քաղաքականություն էին վարում: Ջվարի շինարարական արձանագրության մեջ հիշատակվող Ադրներսեհը, Դիմիտրեն և Ստեփանոսը հիմնականում բյուզանդական կայսեր համակիրներ էին, ուստի նրանք որևէ չափով չընդդիմացան Կյուրիոն կաթողիկոսի որդեգրած դավանական նոր կողմնորոշմանը, իսկ Բարսամուսեսը, Մովսես Դասխուրանցու (Կաղանկատվացու) բնորոշմամբ, բյուզանդացիներից ստացավ «եռեակ գահերեցություն»: Վրաց աղբյուրների միաբան վկայությամբ դարասկզբին սկսված Ջվարի տաճարի շինարարությունը այս տարիներին ընդհատում ապրեց և ավարտին հասավ VII դարի քառասունական թվականներին՝ Ստեփանոս–Քոբողի օրոք: Իրանի կրած պարտություններից օգտվեցին բյուզանդացիների կոչով Այսրկովկաս թափանցած խազարները: Խոսրով Փարվեզի սպանությունը կացությունը պարզելու հնարավորություն ստեղծեց: Նրան փոխարինած որդին՝ Կավատը, 628 թ. Հերակլից հաշտություն խնդրեց: Հերակլը համաձայնեց այդ դիմումին, և Այսրկովկասի մյուս երկրների թվում Վրաստանը ևս որոշ խաղաղ շրջան ապրեց, որն ընդհատվեց արաբական արշավանքների սկիզբ առնելով:

2. ԱՐԱԲԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

Բյուզանդիայի հետ մղած կռիվները այնքան էին թուլացրել Իրանին, որ VII դարի 40–ական թվականներին նա անկարող գտնվեց դիմակայել արաբների առաջին իսկ հարձակումներին, իսկ այս պարագան բացեց արաբների ճանապարհը նաև դեպի Այսրկովկաս: Շուտով՝ 642–643 թվականներին, նրանք հայտնվեցին Վրաստանում: Տեղի իշխողները որևէ դիմադրության փորձ չարեցին և Տփղիս եկած Հաբիբ իբն Մասլամայի հետ պայմանավորվեցին, Բալաձորիի հաղորդմամբ, ենթակայության ու ցուցաբերելիք օժանդակության շուրջ: Արաբներն անվտանգություն էին երաշխավորում՝ պայմանները պահպանելու պարագայում: Նրանք մահմեդականություն չէին պարտադրում, սակայն այն ընդունողները հավասարվում էին արաբներին և օգտվում նրանց իրավունքներից: Ներարաբական վեճերն ու կռիվները բավական թուլացնում էին նրանց վերահսկողությունը նվաճված երկրներում, որոնք հրաժարվում էին հարկերի վճարումից: 686 թ. խալիֆան ու բյուզանդական կայսրը նույնիսկ պայմանավորվածության հասան Հայաստանից ու Վրաստանից ստացվող հարկը իրար մեջ կիսելու հարցում: Սակայն Բյուզանդիայի քաղաքական նկրտումները սաստվեցին խալիֆա Աբդ–ալ–Մալիքի (685–705 թթ.) կտրուկ գործողությունների հետևանքով, առավել ևս, երբ Լազիկան (Եգերաց աշխարհը) ապստամբեց Բյուզանդիայի դեմ և հարեց արաբներին (697 թ.): Այսրկովկաս թափանցած խազարները դժվարացնում էին արաբների լիարժեք տիրապետությունը, որոնք ստիպված էին լինում մեծացնել տեղական բնակչությունից գանձվող հարկերը. այժմ, ջիզյայից բացի, պահանջում էին նաև զույքահարկ (խարաջ): Տեղական անհնազանդություններն ու խազարների պատճառած ավերածությունները արաբներին հարկադրեցին զորական մեծ ուժեր կենտրոնացնել այստեղ և 735 թ. Մուրվան Խուլի գլխավորությամբ լայնածավալ ռազմական գործողություններ ծավալել՝ ընդհուպ մինչև խազարների բնակատեղի հասնելն ու նրանց ջախջախելը: Նրա արշավանքներից զերծ չմնաց և Սուրամից արևմուտք ընկած երկրամասը: «Բարթլիս ցիսվրերայի» վկայությամբ՝ երկրում «այլևս կառույց չմնաց, ոչ էլ մարդու կամ անասունի ուտելիք»:

Արաբները Վրաստանում ամիրայի գլխավորությամբ յուրահատուկ վարչական համակարգ ստեղծեցին (շուրտա, մոհթասիբ, ռեիս, մուշրիֆ ևն), որոնց օգտին հատուկ հարկեր սահմանվեցին: Հաճախ հարկատվությունից ազատվելու համար բնակիչները թողնում էին տունուտեղը և փորձում ապաստանել լեռնային շրջաններում: Նույնիսկ իշխանավոր տեղացիները, ինչպես, օրինակ՝ VIII դարի վերջին քառորդում Ներսես էրիսթավապետը, փախուստով էին ազատվում արաբական հետապնդումներից: Հովհան Սարանիսձեի «Հարթլիսի վկայաբանության» մեջ հանգամանորեն արտացոլված է Վրաստանի այս շրջանի տնտեսական ու քաղաքական կացությունը:

3. ՆՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Խալիֆայության աստիճանական ավատականացումը ի վերջո հանգեցրեց կենտրոնական իշխանության թուլացման, որից և օգտվեցին նրա տիրապետության շրջանակ ընդգրկված ծայրագավառները: VIII դարի 30–ական թվականներին կազմավորված Տփղիսի ամիրայությունը դարավերջին սկսեց կորցնել իր ունեցած հսկողությունը գրեթե ողջ Վրաստանի վրա: Նման ընթացքը պաշտպանություն էր գտնում Բյուզանդական կայսրությունում, ինչի արտահայտությունն էր արաբներից խույս տված Աշոտ Բագրատունուն կյուրապաղատի տիտղոս շնորհելը: IX դարի սկզբներին ինքնակա իշխանություններ դարձան Կախեթն ու Հերեթը, արևմտյան հատվածում ձևավորվեց Եգրիս–աբխազական թագավորությունը:

Աբխազաց Լևոն էրիսթավի կողմից թագավորության հռչակումը տեղի էր ունենում արաբա–բյուզանդական և վրաց–խազարական բարդ փոխհարաբերակցության պարագաներում: Անհրաժեշտ է ընդգծել, որ նոր իշխանությունների կազմավորումը հետևանք էր նաև ծայրագավառների բնակչության անհնազանդության դրսևորման, ինչպիսիք էին ծանարների ելույթները: Պետք է հիշել, որ Կախեթի իշխանությունը շոշափում էր նաև հարևան հայաբնակ շրջանների շահերը: Փաստորեն, լեռնային միջավայրում սկսված պայքարը աստիճանաբար տարածվում էր հարավ: Կախեթի քորեպիսկոպոս կոչվող տիրակալները շուտով սերտաճեցին Բագրատունյաց Կյուրիկյան ճյուղին: Կախեթի միավորյալ իշխանության արարողը Կյուրիկե Մեծն է: IX դարի վերջին Կախեթի որոշ շրջաններ նվաճվեցին Հերեթի Գրիգոր Համամ տիրակալի կողմից (893 թվականից՝ թագավոր): Համամի նախորդներից նշանավոր էր Սահլ Սմբատյանը, որը սեփականեց Միհրդատյան Վարազ Տրդատի «արանշահ» տիտղոսը: Նրան հաջորդողներից նշանավոր են քաղկեդոնականու-

թյուն ընդունած Իշխանիկն ու նրա մայր Դինարը: Վերջիններիս փոխարինեց Հովհաննես Սենեքերիմը: Թագավորության վերականգնման տարիներին, փաստորեն, *Հերեթ (Հերք)* և *Աղվանք* հասկացությունները դարձան նույնական[19]:

VIII դարի վերջին տասնամյակներին Եգերաց թագավորության թուլացումը ուղեկցվեց աբխազաց իշխանության հզորացմամբ, որը սերտ հարաբերությունների մեջ էր խազարների հետ: Լևոն Աբխազը օգտվեց բյուզանդացիների թողտվությունից և Եգրիս-աբխազական միավորյալ իշխանությունը (էրիսթավությունը) IX դարի շեմին թագավորության վերածեց: Նա, փաստորեն, դարձավ ողջ Արևմտյան Վրաստանի տիրակալը, որի կազմում ընդգրկվեցին, աբխազ-ափսիլներից բացի, նաև ջիքեր, սվաններ, քարթեր, մեգրելներ և այլ վրացազգիներ: «Աբխազական թագավորություն» հասկացությունը պայմանավորված է այդ անունը կրող տարածքի ազդեցությամբ: Ոչ պատահականորեն որոշ արևելյան աղբյուրներ, X դարից սկսած, ողջ Վրաստանը երբեմն Աբխազք են հորջորջում:

X դարի երկրորդ կեսին Լազիկայի մետրոպոլիտության և Աբխազքի ինքնակա արքեպիսկոպոսության միավորմամբ նրանք անկախացան Կոստանդնուպոլսի պատրիարքությունից և հարեցին Մցխեթի կաթողիկոսությանը: Նախ Կ. Պոլսին ենթակա կաթողիկոսություն կազմեցին՝ իբրև հունական եկեղեցի, ապա հունական թեմերի աթոռների աստիճանական վրացականի փոխարինմամբ ու Ճղոնդիդի, Բեդիայի և այլ աթոռների հաստատմամբ տեղի ունեցավ Մցխեթի կաթողիկոսության իրավասության տարածումը Լիխից այն կողմ: Այս իրողությունը, փաստորեն, սկիզբ դարձավ լեզվամշակութային մի մեծ շրջադարձի, երբ վրացերենը ճանաչվեց աբխազաց թագավորության եկեղեցու արարողության լեզու, երբ վրաց դպրությունը դարձավ ընդհանրական:

4. ՏԱՅՔ-ԿՂԱՐՋՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև VIII դարի կեսերը Տայքը վստահաբար Հայաստանի մաս էր կազմում, որտեղ ապաստանում էին արաբների դեմ Գրիգոր Մամիկոնյանի ղեկավարությամբ ապստամբած զինական ուժերը: Դարավերջին, ինչպես ենթադրվում է, կացությունը փոխված պիտի լինի, որի հետևանքով արաբներից նեղված Ամատունու և նրա Համամ որդու գլխավորությամբ գաղթող հայկական զանգվածը, Կողից անցնելով, այստեղ կանգ չառավ: Համենայն դեպս, IX դարի սկզբներին կենտրոնական Վրաստանում արաբներից պարտություն կրած Աշոտ Բագրատունին լքեց իր տիրույթներն ու հաստատվեց Արտանուջում, և այստեղից սկսվեց նոր իշխանության կազմավորումը: Երկիրը, ինչպես նաև հարևան Տայքը, սակավաբնակ էր ու ավերված: Բյուզանդիան ընդառաջեց իրենից վասալական կախման մեջ գտնվող նոր կազմավորման ձևավորումը: Շուտով նրա մեջ ընդգրկվեցին Շավշեթը (Շավշք), Տայքը, Սպերը, մասամբ և

[19] Ինչ վերաբերում է Կախեթին, այստեղ հետագայում Կյուրիկյանների ժառանգ Դավիթ Անհողինի որդի Գագիկը ստեղծեց թագավորություն (XI դարի 40-ական թվականներին): Այս խնդրին վերաբերող աղբյուրների ու գրականության քննությունը տե՛ս Г. Г. Мкртумян, Грузинское феодальное княжество Кахети в VIII–XI вв. и его взаимоотношения с Арменией, Ереван, 1983, էջ 132–147:

Ջավախքն ու Սամցխեն: Գարդաբանի եկեղեցում Աշոտին սպանելու փաստից կարելի է եզրակացնել, թե նա շարունակում էր իր տարածքային ծավալումները երկրի արևելքում: Աշոտի ժառանգները իշխանությունը բաժանեցին երկու մասի՝ Տայքի և Կղարջքի: Ընդ որում՝ Տայքում իշխող Ադներսեհի Բ-ը շուտով սկսեց հորջորջվել «վրաց թագավոր», որ էրիսթավին, էրիսթավապետին և իշխանին համազոր մի հասկացության էր վերածվել՝ իրական իմաստ ձեռք բերելով Բագրատ Գ-ի ժամանակներից: Աշոտի միջնեկ որդի Բագրատը կյուրապաղատի տիտղոս էր կրում, և այս տիտղոսակիրն է համարվում Բագրատունյաց մեջ բարձրագույն իշխանության կրողը մինչև թագավորության հաստատումը: Աշոտի կրտսեր որդի Գուարամը «մամփալ» էր մեծարվում (հայր+տեր), որ հետո ժառանգեցին ավագ եղբայր Ադներսեհի հետնորդները: Իշխանության կազմավորումն ուղեկցվեց պաշտամունքային կառույցների շինարարությամբ ու եպիսկոպոսական աթոռների հաստատությամբ (Իշխան, Անչի, Էրուշեթի, Ածղուրի ևն): Վերանորոգվեց Իշխանն, ու նրան զուգընթաց, Ադներսեհը (888–923 թթ.) հիմնեց Բանա (Բանակ) եպիսկոպոսական աթոռը:

Կղարջքում հաստատվեցին վրաց դավանական ու մշակութային նշանավոր կենտրոններ՝ Խանձթան, Շատբերդը: Տայքի իշխանությունը նշանակալի հզորության հասավ X դարի երկրորդ կեսին՝ Դավիթ Մեծի կամ Դավիթ Գ Կյուրապաղատի օրոք, որը նախ հայտնի էր *էրիսթավաց էրիսթավ*, ապա *մագիստրոսի* և *ամենայն Արևելից կյուրապաղատ* հորջորջումներով: Նրա հեղինակությունը մեծ ճանաչում ստացավ Վարդ Սկլերոսի (976–979 թթ.) ապստամբությունը ճնշելուց հետո: Դավիթը լայն ճանաչում ուներ և Հայոց միջավայրում, որի մասին հանգամանորեն պատմում է Ասողիկը: Պահպանված հայերեն մի հիշատակարանի համաձայն՝ քաղկեդոնականություն դավանող այս երևելի զորավարը արաբերենից «Հազար ու մի գիշերների» զրույցներ էր հայերեն թարգմանել տալիս մերձավորների ընթերցանության համար: Նրա հորդորով Թոռնիկ զորավարը 12 000 հեծյալներով օգնության հասավ կայսրության զորքերին՝ հաստատուն պահելով կայսեր գահը: Այս բախտորոշ ծառայության դիմաց էր, որ Աթոսում վրաց գործիչները վանական միաբանություն հաստատելու հնարավորություն ստացան: Սակայն Վարդ Փոկասի ապստամբության ժամանակ (989 թ.) Դավիթը չպաշտպանեց Բարսեղ Բ-ին, որը և բարդացրեց անժառանգ Բագրատունու և կայսեր հարաբերությունները: Բագրատ Գ-ի որդեգրության հանդեպ հավատը կորցրած Դավիթը ափսոսանք հայտնեց Փոկասին քաջալերելու համար և կազմեց մահից հետո իր տիրույթները կայսրությանը հանձնելու կտակ: Այլ խնդիր է՝ խոսքը բոլոր տիրույթներին է վերաբերում, թե միայն «վերին աշխարհաց»: Դավիթը պայքար էր մղում թե՛ իր տիրույթներն ընդարձակելու և թե՛ վրաց և հայոց հողերը մահմեդականների տիրակալությունից ազատելու համար: Ցավոք, նրա զորականները դավանական պատկանելությանը ավելի մեծ կշիռ էին տալիս, քան այն իրականում ուներ այդ բարդ շրջանում:

Դավիթ կյուրապաղատի վարած քաղաքականությունը հող նախապատրաստեց վրացական անջատ կազմավորումները միմյանց մերձեցնելու, ապա և միավորելու համար: Դրա վկայություններից մեկը Քարթլիի էրիսթավ Հովհան Մարուշայի որ-

դու (Մարուշիսձեի) դիմումն էր Դավթին՝ տեր կանգնելու Քարթլիին և օժանդակելու «իբրև որդի մեծացրած» Բագրատին (Գուրգենի որդուն) Եգրիս-Աբխազքի թագավոր կարգելուն:

Ի վերջո ասենք, որ Վրաստանում գործող կազմավորումներից էր Թիֆլիսի արաբական ամիրայությունը, որ VIII-IX դարերի սահմանագլխին տիրապետում էր ընդարձակ տարածքների: Աստիճանաբար նրա իրավասության շրջանակները նեղացան և X դ. վերջին տասնամյակներին սահմանափակվեցին քաղաքով ու նրա շրջակայքով: Տաշիր-Զորագետի թագավոր Դավիթ Անհողինը (989-1048 թթ.) ամիրայությունից գրավեց Դմանիսը: Եվ այնուամենայնիվ, կենտրոնական խալիֆայությունից առանձնանալուց հետո էլ՝ մինչև XII դարի երկրորդ տասնամյակը, ամիրայությունը պահպանեց իր գոյությունը:

5. ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ IV-X ԴԱՐԵՐՈՒՄ

Քրիստոնեության ընդունումից մինչև ազգային գրի ու դպրության ստեղծումը՝ շուրջ մեկ հարյուրամյակ, վրաց մշակույթի մասին կարելի է դատողություններ անել Սամթավրոյի, Արմազիսխևի, Ռուսթավի, Ուրբնիսի և արևելավրացական այլ բնակավայրերի դամբարաններից պեղված առարկաների, ինչպես նաև քաղաքատիպ բնակավայրերի պահպանած շինարարական արվեստի նմուշների հիմնմամբ: Այսրկովկասի մյուս երկրների պես այստեղ էլ աստիճանաբար սկսում են ձևավորվել տեղական ավանդներ. զարդամոտիվները ազգային-տեղական երանգ են ձեռք բերում՝ զուգակցելով այդպիսիք անտիկ, մասամբ հունա-հռոմեական ոճական տարրին: Վրաց մշակութային ինքնության ձևավորումը Վրաստանում ավելի ընդգծված արտահայտվեց և ավելի վաղ, քան Կողքիսում: Ի թիվս այլ պարագաների՝ այստեղ պետք է նկատի առնել ավատականացման, ապա և քրիստոնեացման դանդաղումը: Քրիստոնյա Արևելքի երկրներում վաղմիջնադարյան վրացական մշակույթի մասին խոսելիս առաջին հերթին հիշատակվել են V-VI դարերով թվագրվող երուսաղեմյան խաչանկարները՝ վաղագույն արձանագրության նմուշներով:

V դարում սկիզբ առած սուրբ գրական թարգմանությունների շնորհիվ վրացերենը դարձավ ընդհանրական գրական լեզու հետագայում (XI դ.) հանդես եկող ողջ Վրաստան անունը կրող տարածքի էթնոազգագրական խմբերի համար: Վաղ շրջանում (V-VIII դդ.) թարգմանությունները կատարվում էին գերազանցապես հունարենից և հայերենից (ավելի ստույգ՝ հաճախ հայերենի միջնորդավորմամբ): Սուրբ Շուշանիկի վկայաբանության վրացական խմբագրության մշակմամբ սկիզբ է առնում վրաց ինքնուրույն մատենագրության դպրոցը, որը Զարզմեցու, Աբո Տպղեցու (Թիֆլիսեցու) և Գրիգոր Խանձթեցու վարքերի մշակմամբ V-X դարերում հասնում է բարձրագույն աստիճանի: Այդ դարերում ստեղծված կամ թարգմանված վրացալեզու հուշարձանները քրիստոնյա աշխարհի ստեղծած արժեքների շարքում իրենց կայուն ու պատվավոր տեղն ունեն: Համեմատաբար ուշ սկիզբ առավ վրաց պատմական մատենագրությունը: Մասնագիտական գրականության մեջ այդպիսին է համարվում VIII դ. կեսերին ապրած Գրիգոր Սարկավագի երկը, ուր խոսվում է

Մցխեթում ս. Խաչի կանգնեցման մասին՝ «գերուհու» (իմա՝ Ս. Նունեի/Նինոյի – Պ. Մ.) ձեռքով: Ցավոք այն պահպանված է պատառիկի տեսքով «Վրաց դարձի» Շատբերդյան խմբագրությունում՝ իբրև այդ երկի 14-րդ գլուխ: Դա նշանակում է, որ ազգային ավանդական պատմագրությունը սկիզբ է առնում Գրիգոր Սարկավագից հետո: Ազգային-եկեղեցական պատմության խնդիրների պատասխաններ կարելի է գտնել աղբյուրագիտական տեղեկություններով հարուստ վրաց մինչ այդ եղած վարքագրական հուշարձաններում:

Ի վերջո նկատենք, որ VII դարի սկզբին վրաց եկեղեցական բաժանումը Հայոց եկեղեցուց մշակութային կտրուկ խզում առաջ չբերեց վրաց-հայկական պատմամշակութային հարաբերությունների միջև: Դրանք շարունակվեցին նաև VIII-X դարերում՝ աստիճանաբար պայմանավորվելով քաղկեդոնական հայերի մատենագրական-մշակութային գործունեությամբ:

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՊԱՅՔԱՐ ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԴԵՄ

X դարի վերջին քառորդում սկիզբ առած Վրաստանի միավորումը XI դարի սկզբին հանդիպեց զգալի խոչընդոտների:

Դավիթ Կյուրոպաղատի մահից հետո բյուզանդական զորքերը մտան Տայք և տիրացան նրա կտակով իրենց անցած տարածքներին: Բագրատ Գ–ի զորքերը միայն առանձին դեպքերում դիմադրություն ցույց տվեցին բյուզանդացիներին: Վերջիններիս ռազմական գերազանցությունը ակնհայտ էր: Բյուզանդացիները նույնիսկ փորձեցին սեպ խրել Բագրատ Գ–ի և նրա հոր՝ Գուրգենի միջև:

Այնուամենայնիվ, ժամանակն աշխատում էր հոգուտ միացյալ Վրաստանի ստեղծման: 1008 թվականին մահացավ Գուրգենը, և Բագրատ Գ–ը ժառանգեց հայրական տիրույթները: Վրացական երկրամասերի միավորման հաջողությունը այսուհետև կախված էր Քարթլիի նկատմամբ վերահսկողությունից, այն խնդրից, թե որ քաղաքական ուժերը կարող են հաստատվել Վրաստանի կենտրոնական հատվածում: 1008–1010 թվականներին Բագրատ Գ–ի զորքերը անցան Լիխի լեռնաշղթան և Քարթլիի տարածքով շարժվեցին դեպի Կախեթ ու Հերեթ: Բագրատ Գ–ը կողմնակիցներ ուներ արևելավրացական երկրամասերի ավատատերերի շրջանում, որոնք զգալի օժանդակություն ցույց տվեցին նրան: Թվում էր, թե ամբողջ Վրաստանը հաջողությամբ միավորվելու է, սակայն արտաքին քաղաքական դրության բարդացումը դարձյալ կասկածի ենթարկեց ձեռք բերված հաջողությունը:

1014 թվականին մահացավ Բագրատ Գ–ը, և վրացական գահը ժառանգեց նրա որդին՝ երիտասարդ Գիորգի Ա–ը (1014–1027 թթ.): Վասիլ Բ–ը այդ ժամանակ պատերազմ էր վարում Բուլղարիայում՝ այդ երկիրը լիովին նվաճելու նպատակով: Այսպիսով՝ Գիորգի Ա–ը հնարավորություն ստացավ հանուն Տայքի պայքարը շարունակելու համար և չհապաղեց օգտվել այդ հնարավորությունից: 1021 թվականին՝ Բուլղարիայում պատերազմը հաղթական ավարտի հասցնելուց հետո, Վասիլ Բ–ը հսկայական բանակով շարժվեց դեպի Հայաստան ու Վրաստան: Վճռական ճակատամարտը բյուզանդական և վրացական զորքերի միջև տեղի ունեցավ 1021 թվականին Բասենի Շիրիմք գյուղի մոտ: Չնայած վրացական ջոկատների մի մասի ցուցաբերած քաջությանը՝ Գիորգի Ա–ի բանակը ճակատամարտի ընթացքում չկարողացավ դրսևորել իր հնարավորությունները: Անհավասար պատերազմն ավարտվեց բյուզանդացիների հաղթանակով, և 1022 թվականին Տրապիզոնում կնքված

հաշտության պայմանագրով Գիորգի Ա–ը հարկադրված եղավ հաշտվել տարածքային կորուստների հետ:

Գիորգի Ա–ի մահից հետո վատթարացավ Վրաստանի ոչ միայն արտաքին քաղաքական դրությունը, այլև սրվեցին ներքին հակասությունները: Գահ բարձրացավ դեռևս մանկահասակ Բագրատ Դ–ը (1027–1072 թթ.), որի գահակալման սկզբում երկրի փաստական կառավարիչը նրա մայրն էր՝ Մարիամ թագուհին: Վերջինս Վասպուրականի թագավոր Սենեքերիմի դուստրն էր, իսկ մայրական գծով՝ Անիի հզոր շահնշահ Գագիկ Ա–ի թոռը: Այս հանգամանքը Անիի թագավորության թուլացման պայմաններում որոշակի հույսեր էր ներշնչում, որ հնարավոր կլինի տարածքային ձեռքբերումների հասնել նաև Հայաստանում: Բյուզանդական կայսրությունը ուշադիր հետևում էր Վրաստանում իրադարձությունների զարգացմանը՝ ձգտելով թույլ չտալ նրա հետագա հզորացումը: Այդ նպատակով բյուզանդացիները հաջողությամբ օգտվում էին նաև երկրի ներսում գոյություն ունեցող բարդ հարաբերություններից: Բյուզանդական կայսրությունը Բագրատ Դ–ի իշխանության ամրապնդումը կանխելու նպատակով նրա դեմ դուրս բերեց խորթ եղբորը՝ Դեմետրեին՝ շահարկելով վերջինիս գահակալական հավակնությունները: Բյուզանդական զորքերը ափ իջան Արևմտյան Վրաստանում և ցանկանում էին զենքի ուժով գահ բարձրացնել Դեմետրեին: Միայն արքայազնի անակնկալ մահը փրկեց Բագրատ Դ–ին հետագա բարդություններից:

XI դարի 30–40–ական թվականներին Վրաստանի ներքաղաքական կյանքի կիզակետում հայտնվեց մայրաքաղաք Տփղիսը: Հասկանալի է, որ մայրաքաղաքին տիրանալը կամրապնդեր կենտրոնական իշխանության դիրքերը, և հնարավոր կդառնար կարճ ժամանակամիջոցում ավարտել երկրի միավորումը: Մինչդեռ Քարթլիի և Տփղիսի նկատմամբ վերահսկողություն չունենալը յուրաքանչյուր նոր թագավորի գահ բարձրանալիս ոչ վաղ անցյալում միավորված երկրամասերի անջատման պատճառ էր դառնում, ուստի հարկ էր լինում ամեն ինչ նորից սկսելու: Տփղիսի նկատմամբ իրենց ծրագրերն ունեին նաև ավատատիրական ավագանու ներկայացուցիչները, որոնց շրջանում իր բարձր դիրքով առանձնանում էր Լիպարիտ Բաղվաշը: Բաղվաշների տոհմը Արևմտյան Վրաստանից էր և տիրում էր Լիխի լեռնաշղթայից արևմուտք ընկած Արգվեթ երկրամասին: X դարի վերջին Բաղվաշները տեղափոխվել էին Արևելյան Վրաստան և տիրացել Կլդեկար անառիկ ամրոցին, որը գտնվում էր Թռեղքում (Թրիալեթ): XI դարի առաջին կեսին Բաղվաշների տոհմի ճանաչված ղեկավարը Լիպարիտն էր, որը հռչակված էր անձնական քաջությամբ և ուներ մեծաթիվ զորք:

Լիպարիտ Բաղվաշն առաջին անգամ փորձեց տիրանալ Տփղիսին 1032 թվականին, երբ նա դրդեց Բագրատ Դ–ին՝ նախաձեռնել Տփղիսի գրավումը: Վրացական բանակը պաշարեց քաղաքը, սակայն վճռական պահին, երբ քաղաքի պաշտպանները կորցրել էին փրկության հույսը, Բագրատ Դ–ը վերջիվերջո լսեց ընդդիմադիր քաղաքական խմբավորման խորհուրդը: Լիպարիտ Բաղվաշին հակառակորդ ուժերը, զգուշանալով այդ ազդեցիկ իշխանի չափազանց հզորացումից, փաստորեն պա-

հանջեցին չգրավել Տփղիսը, որպեսզի մայրաքաղաքը չանցնի Լիպարիտին: Նմանօրինակ իրադարձություններ ծավալվեցին նաև 1038–1040 թվականներին, և դարձյալ վրացական թագավորը չցանկացավ Տփղիսը հանձնել իր գլխավոր ախոյանին: Բագրատ Դ–ի և Լիպարիտի փոխհարաբերությունները վերջնականապես փչացան, և նրանք դարձան անհաշտ թշնամիներ:

Լիպարիտ Բաղվաշի ազդեցությունն այն աստիճանի աճեց, որ նա, փաստորեն, դարձել էր Վրաստանի երկրորդ տիրակալը: 1048 թվականին բյուզանդական զորքերը, Գրիգոր Մագիստրոսի հայկական և Լիպարիտ Բաղվաշի վրացական ջոկատները ծանր պարտություն կրեցին սելջուկ–թյուրքերի դեմ տրված Բասենի ճակատամարտում, իսկ Լիպարիտ Բաղվաշը գերի ընկավ: Սելջուկները նրա նկատմամբ բարյացակամ վերաբերմունք դրսևորեցին, իսկ բյուզանդացիները ամեն ջանք գործադրեցին նրան գերությունից ազատելու համար: Բյուզանդիայի և սելջուկ–թյուրքերի միջև որպես միջնորդ հանդես եկավ Մարվանյան ամիրան, որը ծագումով քուրդ էր և իշխում էր Հարավային Հայաստանում: 1051 թվականին Լիպարիտ Բաղվաշը վերադարձավ գերությունից և վերականգնեց իր դիրքերը Վրաստանում: Բագրատ Դ–ի համար կրկին օրհասական վիճակ ստեղծվեց: Նա հարկադրված էր 1054 թվականին հնազանդվել կայսերը և հանդուրժել, որպեսզի Լիպարիտը հոչակվի Վրաստանի ամբողջ հարավային մասի լիիրավ իշխան: Երկրում, փաստորեն, երկիշխանություն ստեղծվեց, կասկածի տակ դրվեցին Բագրատ Դ–ի նախորդ բոլոր նվաճումները:

Հանգուցալուծումը վրա հասավ 1058 թվականին: Լիպարիտի բռնություններից խիստ դժգոհ մեսխ ազնվաուրները կալանավորեցին նրան և հանձնեցին վրաց արքային: Լիպարիտը ստիպված հոգևորական ձեռնադրվեց ու քաշվեց վանք:

2. ՍԵԼՋՈՒԿՅԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

Սելջուկ–թյուրքերը Հայաստան կատարած հետախուզական արշավանքներից հետո՝ Ալփ Արսլան սուլթանի օրոք, երկու անգամ արշավեցին դեպի Վրաստան: 1064 թվականին նրանք մտան նաև Ջավախք և գրավեցին Ախալքալաքը: Ահաբեկված բնակչությունը ապաստան գտավ Քարթլիում: Բագրատ Դ–ը սթափ չգնահատեց ստեղծված իրադրությունը: Նա շարունակեց Կախեթը միացյալ Վրաստանին միավորելու փորձերը և նույնիսկ արշավանք ձեռնարկեց դեպի Շիրվան, որի տիրակալը հնազանդվել էր սելջուկներին ու դարձել նրանց հարկատուն:

1068 թվականին սելջուկյան սուլթանը ներխուժեց Վրաստան: Նրան ընդառաջ գնացին և հպատակվեցին Կախեթի թագավորը, շիրվանշահը և Տփղիսի ամիրան: Քարթլին ավերելուց հետո թշնամին անցավ Արևմտյան Վրաստան և ասպատակեց Արգվեթը: Միայն վերահաս խիստ ձմեռը հարկադրեց սուլթանին հեռանալ Վրաստանից: Վերադարձից առաջ նա Տփղիս, Ռուսթավ քաղաքները և բազմաթիվ ամրոցներ հանձնեց Գանձակի Փատլուն ամիրային, որը Բագրատ Դ–ի թշնամին էր:

Վրաց արքան չհուսահատվեց և կարևոր հաջողությունների հասավ սելջուկների հավատարիմ դաշնակից Շաղդադյանների դեմ պայքարում: Բագրատ Դ–ի զորքերը

ջախջախեցին Փատլունի երեսուներեք հազարանոց բանակը և փախուստի մատնեցին Շաղդադյան ամիրային: Վրաց ազնվաուրները գերի վերցրին Փատլունին և հանձնեցին Կախեթի թագավորին, որը երկու ամրոց ստանալու դիմաց ամիրային հանձնեց Բագրատ Դ–ին: Շաղդադյանները հարկադրված եղան վերադարձնել գրաված ամրոցները: Սելջուկյան վտանգն այնուամենայնիվ չէր նվազում: Մալիքշահ սուլթանը Հարավային Կովկաս ուղարկեց նոր զորքեր, որոնք պետք է օգնության հասնեին տեղի մահմեդական ամիրաներին: Թյուրքերը փրկագնով գերությունից ազատեցին նաև Փատլունին:

Բագրատ Դ–ը մահացավ 1072 թվականին՝ գահը թողնելով որդուն՝ Գիորգի Բ–ին (1072–1089 թթ.): Նա այդպես էլ չհնազանդվեց սելջուկներին և չդարձավ նրանց հարկատուն:

1071 թվականին բյուզանդացիները ջախջախիչ պարտություն կրեցին Մանազկերտի ճակատամարտում: 1074 թվականին կնքված պայմանագրով սելջուկ–թյուրքերին անցավ Բյուզանդիայի արևելյան նահանգների մեծ մասը: Այսպիսով՝ Վրաստանի համար ստեղծվեց առավել քան անբարենպաստ արտաքին քաղաքական իրադրություն: Միաժամանակ բարդացավ երկրի ներքին վիճակը: Թշնամուց բացի, թագավորին անելանելի վիճակի մեջ էին դրել անհնազանդ իշխանները, որոնք, օգտվելով իրադարձությունների ընթացքից, նորանոր պահանջներ էին ներկայացնում Գիորգի Բ–ին: Նրանցից Նիանիա Քվաբուլիսձեն գրավեց Քութայիսը և տեր դարձավ արքայական զանձարանին, սվանների էրիսթավ Վարդանը ասպատակեց Եգրիսը (Մամեգրելո), իսկ Լիպարիտ Բաղվաշի որդի Իվանեն մի շարք տարածքներ խլեց ու անցավ թյուրքերի կողմը: Թագավորը ի վիճակի չէր զենքի ուժով իրեն ենթարկելու ապստամբած խոշոր ավատատերերին և փորձում էր նրանց հետ համաձայնության գալ՝ նորանոր շնորհների արժանացնելու ու տիրույթներ շնորհելու միջոցով: Մինչդեռ սելջուկներից սպառնացող վտանգը գնալով ահագնանում էր, թշնամին որոշել էր վերջնականապես նվաճել նաև Վրաստանը:

1080 թվականին սկիզբ առավ սելջուկյան արշավանքների նոր ալիքը, որը վրացական սկզբնաղբյուրներում հայտնի է «դիդի թուրքոբա» («մեծ թրքություն») անվանումով: Սելջուկյան բանակի հետ մշտական բնակություն հաստատելու նպատակով դեպի Վրաստան էին շարժվում թյուրքական զանազան ցեղեր, որոնք բնակություն էին հաստատում հինավուրց երկրագործական ավանդույթներ ունեցող տարածքներում: Նրանք Վրաստանում ևս զբաղվում էին իրենց համար բնութագրական քոչվորական անասնապահությամբ: Թյուրքերի հսկայական հոտերը գարնանը շարժվում էին երկրի խորքերը, իսկ ձմռանը վերադառնում էին դեպի Կուրի ու Արաքսի ստորին հոսանքների շրջանները: Այսպիսով՝ Իոր, Ալազան ու Կուր գետերի հովիտները վերածվում էին անասնապահական շրջանների, երկրին տնտեսական աղետ էր սպառնում:

Նման պայմաններում թագավորը հարկադրված էր անձամբ ուղևորվել Մալիքշահ սուլթանի նստավայր Սպահան և սելջուկ–թյուրքերի գերիշխանությունն ընդունելով՝ ամենամյա հարկ վճարելու պարտավորություն ստանձնել: Գիորգի Բ–ի միակ հաջո-

ությունը Մալիքշահի կողմից սելջուկյան զորամասի տրամադրումն էր, որի օգնությամբ վրաց արքան հույս ուներ իրեն ենթարկելու Կախեթը: Սակայն այդ երկրամասի ամրոցների պաշարումը որևէ հաջողություն չունեցավ, և վրաց արքան շտապեց անցնել Արևմտյան Վրաստան: Առանց հսկողության մնացած սելջուկյան զորամասը սկսեց ավերել ու կողոպտել երկիրը: Երկիրը ներքին ու արտաքին ծանր ճգնաժամ էր ապրում:

3. ԴԱՎԻԹ ՇԻՆԱՐԱՐ

Այսպիսին էր իրադրությունը Վրաստանում, երբ 1089 թվականին, հավանաբար պալատական հեղաշրջման հետևանքով, գահ բարձրացավ իշխանությունից տակավին երիտասարդ հասակում հեռացված Գիորգի Բ–ի տասնվեցամյա որդին՝ Դավիթ Դ Շինարարը (1089–1125 թթ.):

Երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար նոր գահակալը պետք է լուծեր ներքին կյանքում իր առջև ծառացած անհետաձգելի հարցերը, ապա ձեռնամուխ լիներ պետական անկախության վերականգնմանը և ավարտին հասցներ Վրաստանի միավորումը: Դավիթ Շինարարի թագավորության սկզբում նրա տիրույթները սահմանափակվում էին միայն Արևմտյան Վրաստանով, քանի որ Կախեթը և Հերեթը առանձին թագավորություն էին կազմում, իսկ Քարթլիին տիրում էին թյուրքերը: Ուստի դեռևս թույլ թագավորը իր վերանորոգիչ գործունեությունը սկսեց ներքին կյանքի կարգավորմամբ՝ ուշադիր հետևելով նաև արտաքին աշխարհում կատարվող փոփոխություններին, որոնք բարենպաստ հող էին նախապատրաստում նրա նպատակների իրականացման համար:

Ի տարբերություն հոր՝ Դավիթ Դ–ը վճռական և անզիջում պայքար սկսեց մեծատոհմիկ ազնվականության դեմ: Այսպես՝ նա նախ կալանավորեց և ապա Վրաստանից արտաքսեց Կլդեկարի էրիսթավ Լիպարիտ Բաղվաշին՝ Բագրատ Դ–ի հակառակորդի թոռանը: Դրանով վերջ տրվեց այն պայքարին, որ վարում էր Բաղվաշների տոհմը թագավորական իշխանության դեմ: Լիպարիտի որդի Ռատի մահից հետո՝ 1103 թվականին, նրա տիրույթները՝ Թռեղքը և Կլդեակար ամրոցը, միացվեցին արքայական կալվածքներին, որը առաջընթաց քայլ էր Վրաստանի վերամիավորման ճանապարհին: Դավիթ Դ–ը նույնպիսի վճռականությամբ ճնշեց նաև Աբուլեթիսձե իշխանների ելույթը: Թագավորական իշխանության վարած այս նոր քաղաքականության շնորհիվ ձեռք բերվեց ներքին միասնություն, որը դարձավ Դավիթ Շինարարի հետագա հաջողությունների կարևոր նախապայմաններից մեկը:

Շուտով հօգուտ Վրաստանի սկսեց փոխվել նաև արտաքին քաղաքական դրությունը: Նախ՝ անկման ու քայքայման ուղին բռնեց անվերջ պատերազմներից ու ներքին խռովություններից թուլացած սելջուկյան պետությունը: Հետևաբար Դավիթ Դ–ը պետք է պայքար մղեր զգալիորեն թուլացած հակառակորդի դեմ: Ապա՝ 1096 թվականին սկսված խաչակրաց առաջին արշավանքը նշանակալիորեն փոխեց իրադրությունը Արևելքում: Սելջուկները հարկադրված էին մեծ ուշադրություն հատկացնել խաչակիրների դեմ պայքարին, որը զգալի ուժեր էր խլում նրանցից: Բացի այդ, նոր հիմնադրված խաչակրաց պետությունների դեմ անընդհատ կռիվները ստիպում էին թյուրքերին մարտնչել տարբեր ճակատներում և նրանց զրկում էին՝ Վրաստանի դեմ ամբողջ ուժով պայքարելու հնարավորությունից:

Օգտվելով ստեղծված նպաստավոր իրադրությունից՝ Դավիթ Դ–ը 1099 թվականին դադարեցրեց վճարել այն հարկը, որը ստանձնել էր Գիորգի Բ–ը, և բացարձակ պայքարի անցավ թյուրքերի դեմ: Առաջին խոշոր հաջողությունը Սամշվիլդե բերդաքաղաքի գրավումն էր 1110 թվականին, որը երերեց թյուրքերի դիրքերը Քարթլիում: Այսպիսով Տփղիսը կտրվում էր հարավից և առնվում էր շրջապատման մեջ: Հինգ տարի հետո ազատագրվեց Ռուսթավը: Սակայն ամբողջ Քարթլիի և Տփղիսի գրավումը հետաձգվեց մինչև XI դարի 20–ական թվականները:

Դավիթ Շինարարի առաջխաղացման երկրորդ կարևոր ուղղությունը Արևելքն էր, որտեղ դեռևս գոյատևում էր Հերեթ–Կախեթի թագավորությունը: 1103 թվականին Կախեթը և Հերեթը վերստին մտան Վրաստանի սահմանների մեջ, իսկ 1117 թվականին ավարտվեց ողջ Արևելյան Վրաստանի միացումը միասնական թագավորությանը: Հերթական խնդիր դարձան Շիրվանի նվաճումը և Դերբենդի նկատմամբ վերահսկողության հաստատումը: 1117 թվականին արքայազն Դեմետրեի գլխավորությամբ խոշոր արշավանք ձեռնարկվեց դեպի Շիրվան: Վրացական զորքերի այսօրինակ հարձակումները շարունակվեցին նաև հաջորդ տարիներին: Ի վերջո գրավվեց նաև Կապաղակ քաղաքը, իսկ 1124 թվականին Շիրվանը ևս մտավ Դավիթ Դ–ի տերության կազմի մեջ:

XII դարի առաջին քառորդում Վրաստանի սահմանները զգալիորեն ընդարձակվեցին նաև հյուսիս–արևմուտքում և հյուսիսում: Միասնական թագավորությանը միացվեցին վրացական երկրամասերից Սվանեթը և Ռաճան, իսկ Սև ծովի ափերին նվաճվեց Ջիքեթը, որտեղ բնակվում էին չերքեզական (ադըղական) ցեղերը: Կովկասյան լեռնականներից Դավիթ Դ–ին հնազանդվեցին դվալները:

1121 թվականին Վրաստանը ենթարկվեց մահմեդականների միացյալ բանակի հարձակմանը: Վճռական բախումը տեղի ունեցավ օգոստոսի 12–ին Թռեղքից Շիդա Քարթլի տանող ճանապարհին՝ Դիդգորի դժվարանցանելի մատույցներում: Դիդգորի ճակատամարտին, վրացական և ղփչաղական զորքերից բացի, մասնակցում էին օգնական ուժեր: Մասնավորապես ժամանել էր խաչակիր ասպետներից բաղկացած մի ջոկատ, մարտնչում էին նաև օս ռազմիկները:

Թշնամին չկարողացավ օգտվել իր թվական գերազանցությունից և ծանր պարտություն կրեց: Այս կարևոր հաղթանակից հետո Դավիթ Շինարարը հաջորդ տարում ազատագրեց Տփղիսը՝ ավարտին հասցնելով Վրաստանի վերամիավորումը: Թագավորը մայրաքաղաքը Քութայիսից տեղափոխեց Տփղիս, և 400 տարվա ընդմիջումից հետո այստեղ կրկին վերականգնվեց քրիստոնյաների քաղաքական գերիշխանությունը: Այնուամենայնիվ, քաղաքական նկատառումներով մահմեդական բնակչությունը չենթարկվեց դավանական հալածանքների: Դավիթ Շինարարի օրոք Վրացական թագավորությունն ընդգրկում էր Հարավային Կովկասի մեծ մասը և դարձել էր Մերձավոր Արևելքի ամենահզոր պետություններից մեկը:

Արտաքին քաղաքական այս մեծ հաջողությունները պայմանավորված էին Դավիթ Դ–ի իրականացրած պետական բարեփոխումներով: Այսպես՝ թագավորական իշխանության շահերը պահանջում էին պետությանը ենթարկել եկեղեցին և նրա ուժերը ևս ի սպաս դնել կենտրոնական իշխանության ամրապնդմանը: 1103 թվականին թագավորի ջանքերով հրավիրված Ռուիս–Ուրբնիսի եկեղեցական ժողովը ընդունեց մի շարք որոշումներ, որոնց հետևանքով վրաց եկեղեցին ստիպված էր ենթարկվել պետության վերահսկողությանը: Զգալի բարեփոխումներ մտցվեցին պետական ապարատում: Տեղական կառավարումն իրականացնում էին էրիսթավները, իսկ կառավարման կենտրոնական մարմինների գործունեությունը վերահսկում էր արքունիքը: Վրաստանի միավորումից ի վեր երկրի կառավարման ասպարեզում առանցքային դեր էր կատարում Քարթլիի էրիսթավը: Դավիթ Դ–ը նրա իրավունքների մի մասը հանձնեց մծիգնորարթուխուցեսին (արքունի գրասենյակի պետին): Թագավորը 1103–1110 թվականներին միավորեց մինչ այդ առանձին–առանձին գոյություն ունեցող ճղոնդիդելի (Արևմտյան Վրաստանում գտնվող Ճղոնդիդի եպիսկոպոսի) և մծիգնորարթուխուցեսի պաշտոնները: Նոր պաշտոնյան՝ ճղոնդիդել–մծիգնորարթուխուցեսը, դարձավ առաջին դեմքը արքունիքում և ստացավ «թագավորահայր» տիտղոսը: Նա համարվում էր երկրորդ դեմքը ողջ երկրում: Միաժամանակ, թագավորը նրա միջոցով կարող էր վերահսկել և միջամտել եկեղեցական գործերին: Այդ պաշտոնյայի գլխավորությամբ թագավորը ստեղծեց հատուկ դատական ատյան, որին և հանձնվեցին առավել կարևոր դատական գործերը: Նոր պաշտոնը հոգևոր գործչի հանձնելիս թագավորը առաջնորդվում էր իրատեսական նկատառումով: Դավիթը զգուշանում էր, որ ճղոնդիդել–մծիգնորարթուխուցեսի պաշտոնը կարող է անցնել մեծատոհմիկ ազնվականության ձեռքը և ժառանգական բնույթ ընդունել, որից հետո այն թագավորական իշխանության հենարանից կարող էր վերածվել կենտրոնական իշխանության դեմ պայքարելու գործիքի:

Ռազմական ասպարեզում ամենակարևոր ձեռնարկումը դարձավ մշտական զորքի ստեղծումը: Այս աշխատանքները ավարտին հասան 1118–1120 թվականներին, երբ թյուրքական ժողովուրդներից ղփչաղների մի մասը ռուսական զորքերից մի շարք պարտություններ կրելուց հետո ապաստան գտավ Հյուսիսային Կովկասում: Դավիթ Շինարարը մշտական բնակության համար նրանց հրավիրեց Վրաստան: Ղփչաղներից հավաքագրվում էր 40 հազարանոց թագավորական զորաբանակ, նրանցից ստեղծվեց նաև 5 հազարանոց թագավորական գվարդիա («մոնա սպա» – ծառայական զորք): Դավիթ Շինարարի օրոք Վրաստանը դարձավ քաղաքականապես և տնտեսապես բարգավաճ պետություն և ստանձնեց Հարավային Կովկասի ժողովուրդներին համախմբող ուժի դեր:

4. ՎՐԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ – XIII ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Դավիթ Շինարարի մահից հետո Վրաստանը նոր և անսպասելի դժվարությունների առաջ կանգնեց: Համարձակություն ստացած մահմեդական ամիրայությունները փորձեցին վերադարձնել Դավիթ Շինարարի օրոք իրենց կորցրած դիրքերը:

Միաժամանակ Վրաստանի հաջողություններին խոչընդոտում էր թագավորական իշխանության և մեծատոհմիկ ազնվականության միջև ծավալված պայքարը: Ավատատիրական ավագանին, որը Դավիթ Շինարարի օրոք միաժամանակ հրաժարվել էր գործուն պայքարից, նորից շարունակեց իր սովորական ընթացքը: Խոշոր ավատատերերը, ըստ երևույթին, դժգոհ էին Դեմետրե Ա–ի (1125–1155/1156 թթ.) վարած ոչ հարձակողական քաղաքականությունից, քանի որ չմասնակցելով ռազմական արշավանքներին՝ զրկվում էին եկամտի նշանակալի աղբյուրից:

Դեմետրե Ա–ի կառավարման վերջին տարիները նշանավորվեցին ներքաղաքական սուր պայքարի նոր բորբոքումով: Ծայրաստիճան սրվեցին հակասությունները թագավորի և նրա ավագ որդի Դավթի միջև: Վերջինս 1150 թվականին ապստամբեց և փորձեց գրավել իշխանությունը, բայց պարտություն կրեց: 1155 թվականին նա դարձյալ հանդես եկավ հոր դեմ և այս անգամ տիրացավ գահին: Դեմետրե Ա–ը ստիպված էր հոգևորական ձեռնադրվել և հեռանալ վանք:

Դավիթ Ե–ը գահ բարձրանալուց հետո անողոք դատաստան տեսավ իր հակառակորդների հետ և կտրուկ փոփոխություններ մտցրեց ներքաղաքական կյանքում: Մասնավորապես՝ նա խլեց ամիրսպասալարի (գլխավոր զորահրամանատարի) պաշտոնը Օրբելիներից և վերադարձրեց Աբուլեթիսձեներին: Դավիթ Ե–ը այսպիսով վարում էր չափից դուրս ուժեղացած Օրբելիների հզորացումը սահմանափակելու քաղաքականություն: Երկու տոհմերն էլ իրենց բարձրացումը սկսել էին Դավիթ Շինարարի օրոք, և նրանց միջև անգիջում պայքար էր ընթանում առաջնության համար: Դավիթ Ե–ի թագավորությունը տևեց ընդամենը մի քանի ամիս: Նա զոհ գնաց իր դեմ կազմակերպված այն դավադրությանը, որը գլխավորում էին Օրբելի իշխանները՝ չկարողանալով ավարտին հասցնել նախաձեռնած քաղաքականությունը:

Վերստին թագավորության գլուխ կանգնեց Դեմետրե Ա–ը, որը թողեց վանքը և վերադարձավ պալատ: Խախտելով երկրում ընդունված գահաժառանգության կարգը, ըստ որի՝ գահը պատկանում էր Դավիթ Ե–ի որդի Դեմետրեին (Դեմնա), նա իրեն գահակից կարգեց կրտսեր որդի Գիորգիին: Օրբելիները վերստացան ամիրսպասալարության պաշտոնը, իսկ Դավիթ Ե–ի կողմնակիցները ենթարկվեցին հալածանքների:

Գիորգի Գ–ի (1156–1184 թթ.) կառավարման ժամանակաշրջանում երկու անգամ՝ 1161–1164 և 1174–1176 թվականներին, վրացական զորքերը ժամանակավորապես իրենց վերահսկողությունը հաստատեցին Անիում: Հանդիպելով մահմեդական ամիրայությունների համառ դիմադրությանը՝ Անիի համար պայքարը ապարդյուն անցավ: Բացի այդ, Անիում հաստատվելու համար թագավորի հետ մրցակցության մեջ էին մտնում խոշոր ավատատերերը, առաջին հերթին՝ հսկայածավալ տիրույթ-

ներ ունեցող Օրբելի իշխանները: Ուստի Գիորգի Գ–ը նախընտրում էր Անին թողնել քաղաքի նախկին տերերին՝ Շադդադյաններին: Վերջիններս, ընդունելով Վրաստանի գերակայությունը, շարունակում էին տիրել Անիին ու շրջակայքին:

Անհաջողություն կրելով Անիի համար պայքարում՝ Օրբելիները 1176–1177 թվականներին գլխավորեցին ավատատերերի այն հզոր ելույթը, որը հայտնի է *Օրբելիների* կամ *Դեմնա արքայազնի ապստամբություն* անունով: Նրա մասնակիցները հիմնականում պատկանում էին խոշոր ավատատերերի վերնախավին: Օրբելիների, Գրիգոլիսձեների, Վարդանիսձեների, Թորելիների, Ջաղելիների իշխանական տները ներկայացնում էին ոչ միայն խոշոր հողատերերի վերնաշերտը, այլև արքունի պաշտոնեությունը: Ապստամբությանը հարել էին նաև միջին ու մանր ազնվականները, որոնք շարժմանը միացել էին նոր շնորհներ ու կալվածքներ ստանալու ակնկալիքով: Ապստամբության գլխավոր կենտրոնը Հյուսիսային Հայաստանում Օրբելիների ունեցած տիրույթներն էին, ուստի ներքաղաքական պայքարի մեջ էին ներգրավվել նաև տեղի հայ իշխանները, այդ թվում՝ Զաքարյանները: Ապստամբությունը ղեկավարում էր ամիրսպասալար Իվանե Օրբելին, որը ձևականորեն հանդես էր գալիս իր փեսա Դեմնա արքայազնի՝ գահի նկատմամբ իրավունքների պաշտպանությամբ:

Ապստամբները հավաքել էին 30 հազարանոց բանակ և մտադրվել էին անակնկալ հարձակումով հաշվեհարդար տեսնել Տփղիսի մերձակայքում գտնվող Գիորգի Գ–ի հետ: Թագավորը, սակայն, եռանդուն քայլերով կարողացավ պարտության մատնել ապստամբներին, որոնց մի մասը, այդ թվում՝ Սարգիս Զաքարյանն ու իր որդիները անցան հակառակորդի կողմը: Գիորգի Գ–ը դաժան դատաստան տեսավ ապստամբության մասնակիցների հետ, մասնավորապես կուրացրեց եղբորորդուն: Բայց նա հատկապես անողոք էր Օրբելիների նկատմամբ: Մահապատժի ենթարկվեցին Օրբելիների տոհմի գրեթե բոլոր այն անդամները, որոնք կարևոր դեր էին կատարել ապստամբության ընթացքում, նրանցից խլվեցին պաշտոններն ու կալվածքները: Մահապատժից փրկվեցին Լիպարիտ Օրբելին և նրա որդիները, որոնք օգնություն խնդրելու նպատակով մեկնել էին Իրաքի սելջուկյան սուլթանություն:

Արքունի բարձր պաշտոններ ստացան թագավորի հավատարիմ կողմնակիցները, այդ թվում՝ ապստամբությունը ճնշելիս աչքի ընկած ղփչաղ զորահրամանատար Խուբասարը: Գիորգի Գ–ը ամիրսպասալարության պաշտոնի հետ մեկտեղ Խուբասարին շնորհեց նաև Օրբելիների ամենակարևոր կալվածքը՝ Լոռեն: Թագավորի ձեռնարկումները, այնուամենայնիվ, չկարողացան տատանել մեծատոհմիկ ազնվականության հզորությունը: Բացի այդ, պետության և եկեղեցու պայքարում ևս զգալի հաջողությունների հասան հոգևոր ավատատերերը: Նրանք ազատվեցին հարկերից և փորձում էին պաշտոններ գրավել արքունիքում: 1176–1177 թվականների դեպքերից հետո ակներև դարձավ Արևելյան Վրաստանի և Հյուսիսային Հայաստանի իշխանների քաղաքական կշռի աճը երկրի ներքաղաքական կյանքում, մասնավորապես բարձր դիրքի հասան Զաքարյանների ու Մահկանաբերդցիների իշխանական տները:

Գիորգի Գ–ը արու զավակ չուներ և որոշեց ապահովել իր դստեր՝ Թամարի գահակալությունը. նա 1179 թվականին Թամարին գահակից օծեց: 1176–1177 թվականներին՝ մեծատոհմիկ ազնվականության ելույթի ժամանակ ստեղծված անկայուն իրադրությունը նպաստավոր հանգամանք էր գողության ու կողոպուտի տարածման համար: 1180 թվականին Գիորգի Գ–ը հարկադրված էր զբաղվել նաև այդ հարցով, քանի որ գողությունն ու կողոպուտը վերածվել էին սոցիալական չարիքի: Նա դիմեց խիստ պատժամիջոցների, ընդհուպ մեղավորներին կախաղան բարձրացնելը, սակայն անգամ այս կերպ հնարավոր չէր արմատախիլ անել սոցիալական խոր արմատներ ունեցող այդ երևույթները: Այսպես կոչված «գողերն ու ավազակները» հիմնականում տնտեսական քայքայման եզրին հասած, նախկինում ազատ գյուղացիներն էին, մասամբ նաև մանր ազնվականները:

Թամար թագուհու (1184–1207 թթ.) գահակալության առաջին իսկ տարվա իրադարձությունները պարզորոշ կերպով ցույց տվեցին, որ Գիորգի Գ–ին չէր հաջողվել սասանել խոշոր ավատատերերի դիրքերը: Այսպես՝ Թամարը թագավոր ճանաչվեց միայն երկրորդ անգամ թագադրվելուց հետո, ընդ որում՝ այդ արարողության ժամանակ ընդգծվեց այն հանգամանքը, որ թագուհին իշխանությունը ստանում է մեծատոհմիկ ազնվականությունից: Թամարի գահ բարձրանալուց հետո խոշոր ավատատերերը նույնիսկ թագուհուն հարկադրեցին ներել և Վրաստան վերադառնալու իրավունք շնորհել Օրբելիներին ու երկրից հալածված այլ ապստամբ իշխանների:

Գիորգի Գ–ի մահից հետո Քարթլիի կաթողիկոս Միքայել Միրիանիսձեն մծիգնոբարթուխուցես–ձղոնդիդել Անտոնից խլեց նրա պաշտոնը, սակայն թագավորական իշխանությանը մեծ ջանքերի գնով հաջողվեց այն վերադարձնել Անտոնին: Ավելին՝ մեծատոհմիկ ազնվականությունը թագուհուց պահանջեց պաշտոնանկ անել և կալվածքներից զրկել ղփչաղ զորահրամանատարներին: Թամարը հարկադրված էր զիջել և ամիրսպասալարության պաշտոնից հեռացնել Խուբասարին: Որպես նրա ծառայությունների փոխհատուցում՝ նրան թողնվեցին բոլոր տիրույթները, բացի Լոռե բերդաքաղաքից: Պաշտոնանկ արվեց նաև ղփչաղ Ափրիդոնը: Թագուհին «հայոց և վրաց ամիրսպասալար» նշանակեց Սարգիս Զաքարյանին՝ նրան շնորհելով նաև Լոռեն: Թագուհու խոշոր հաջողությունն էր, որ նա 1184–1185 թվականներին արքունի պաշտոնները հանձնեց հիմնականում իրեն հավատարիմ մարդկանց, նոր բարձրացող իշխանական տների ներկայացուցիչներին:

Ճգնաժամն ավելի խորացավ մեճուրձլեթուխուցես (արքունի գանձարանի կառավարիչ) Ղութլու Արսլանի գլխավորած խմբավորման ելույթով: Նրա անդամները պահանջում էին թագուհուց արքունական պալատին կից ստեղծել հատուկ մարմին, որտեղ նիստեր էին գումարելու մեծատոհմիկ ավատատերերը: Այդ ատյանի որոշումների իրականացումը պարտադիր էր լինելու թագուհու համար: Այսպիսով՝ պետական ապարատի նշանակալի վերափոխման հետևանքով զգալիորեն սահմանափակվելու էին թագավորական իշխանության իրավունքները: Թամարը մեծ համարձակություն դրսևորեց՝ ձերբակալելով Ղութլու Արսլանին, և բանակցություններ-

ից հետո կարողացավ հանգստացնել ու չեզոքացնել ընդդիմադիր խմբավորման անդամներին:

Թամարի գահակալությունից հետո մեծատոհմիկ ազնվականությունն առաջ քաշեց թագուհու ամուսնության հարցը: Սուր պայքար ծավալվեց տարբեր խմբավորումների միջև, որոնցից յուրաքանչյուրը պաշտպանում էր որոշակի թեկնածություն: Հաղթանակ տարավ այն խմբավորումը, որը հիմնավորեց ռուս իշխանազն Յուրի Բոգոլյուբսկու հետ ամուսնանալու նպատակահարմարությունը: Վերջինս Վլադիմիր-Սուզդալյան ընդարձակ իշխանության հզոր տիրակալ Անդրեյ Բոգոլյուբսկու որդին էր, սակայն նրան հայրական տիրույթներից հալածել էր հորեղբայրը՝ Վսեվոլոդ Մեծ Բույնը: Յուրին ապաստան էր գտել Հարավային Ռուսաստանում՝ ղփչաղների տիրակալի մոտ, քանի որ մայրական գծով նա ղփչաղների հետ ազգակցական կապեր ուներ: Վրաստանում Յուրիին անվանեցին Գիորգի Ռուս:

Կարճ ժամանակ անց ամուսինների միջև սուր տարաձայնություններ ծագեցին, և Թամարի պահանջով Գիորգի Ռուսն ամուսնությունից երկու տարի անց վտարվեց երկրից: Թամարն ամուսնացավ երկրորդ անգամ: Այս անգամ նրա ընտրյալը օս արքայազն Դավիթ Սոսլանն էր, որը մայրական գծով թագուհու ազգականն էր և, բացի այդ, դաստիարակվել էր Թամարի հորաքրոջ՝ Ռուսուդանի կողմից: Դավիթը թեև մեծ ազդեցություն ուներ արքունիքում, այնուամենայնիվ թագավորական իրավունքներ ձեռք չբերեց. նա ընդամենը թագուհու ամուսինն էր, այլ ոչ թե Վրաստանի լիիրավ արքան:

Ներքաղաքական պայքարը գագաթնակետին հասավ 1190–1191 թվականներին, երբ Թամարի դեմ ուղղված խոշոր ապստամբություն սկսվեց՝ Վրաստան վերադարձած Գիորգի Ռուսի գլխավորությամբ: Մեծատոհմիկ ազնվականության նոր ելույթին հատկապես եռանդուն մասնակցություն ցուցաբերեցին Արևմտյան Վրաստանի ու հարավային երկրամասերի ավատատերերը: Նրանց դեմ կռիվներում աչքի ընկան 1187 թվականին վախճանված Սարգիս Զաքարյանի որդիները՝ Զաքարեն ու Իվանեն, ինչպես նաև նրանց հորեղբորորդի Բլու Զաքարեն: Քաջության և հավատարմության համար բոլոր Զաքարյանները մեծ շնորհների արժանացան: Եթե ամիրսպասալարի պաշտոնը Սարգիս Զաքարյանի մահից հետո հանձնվել էր վրացի նշանավոր իշխաններից Գամրեկել Թորելուն, ապա Գիորգի Ռուսի ապստամբության ճնշումից և Գամրեկել Թորելու մահից հետո այն վերադարձվեց Զաքարյաններին: Սարգսի որդի Զաքարեն ստացավ ամիրսպասալարի պաշտոնը, նրա տիրույթներին գումարվեց նաև Ռուսթավ քաղաքը: Թագուհին ընդարձակեց նաև Իվանեի ու Բլու Զաքարեի տիրույթները: Իշխանությունը վերադարձնելու Գիորգի Ռուսի երկրորդ փորձը 1193 թվականին արագորեն ճնշվեց:

Ներքին ահեղ փորձությունները հաղթահարելուց հետո Վրաստանը խոշոր հաջողությունների հասավ արտաքին ասպարեզում: Վրացական թագավորության նոր վերելքին առաջին հերթին նպաստեցին երկու տարբեր գործոններ: Նախ՝ Թամար թագուհին թեև կարողացավ հաղթահարել դեռևս հոր օրոք սկզբնավորված ներքաղաքական սուր ճգնաժամը՝ ճնշելով ավատատերերի տարբեր խմբավորումների ելույթներն ու զինված ապստամբությունները, այսուհանդերձ հարկադրված էր նաև որոշ զիջումների դիմել: Այսուհետև հակառակորդներից գրավված տարածքները ժառանգական տիրակալության պայմանով անցնում էին Թամարի զորահրամանատարներին: «Ինքնակալ» Դավիթ Շինարարին փոխարինեց մեծատոհմիկների «համաձայնությամբ և կամակցությամբ» կառավարող Թամար թագուհին: Նոր գրավված տարածքները հարքունիս հայտարարելուն հաջորդելու եկավ նոր նվաճված հողերն ու քաղաքները խոշոր ավատատերերին որպես «հայրենիք» հանձնելու սկզբունքը: Ապա՝ թուլացան Վրաստանի հարևան մահմեդական քաղաքական կազմավորումները, բարենպաստ քաղաքական իրադրություն առաջացավ հատկապես Հայաստանում հարձակման անցնելու համար:

Վրացական թագավորության արտաքին քաղաքականությունն ընդգծված հարձակողական բնույթ ընդունեց: Զաքարյան իշխանները ընդարձակ տարածքներ ազատագրեցին Հայաստանի հյուսիսային, կենտրոնական և արևելյան գավառներում, սակայն չկարողացան արտաքսել թշնամուն Հարավային Հայաստանից: Վրաստանի արտաքին քաղաքական կացությունը ամրապնդելու առումով մեծ դեր կատարեցին երկու կարևոր հաղթանակներ: 1195 թվականին Զաքարյան եղբայրները և Դավիթ Սոսլանը պարտության մատնեցին Գանձակի աթաբեկին Շամքորի ճակատամարտում: Յոթ տարի անց՝ 1202 թվականին, Բասենում ջախջախվեց Իկոնիայի սուլթան Ռուքն ադ-Դինի հսկայական բանակը: IV խաչակրաց արշավանքի ժամանակ՝ Կոստանդնուպոլսի ավերումից և Բյուզանդական կայսրության տրոհումից հետո՝ XIII դարի սկզբին, Թամար թագուհու օժանդակությամբ հիմնադրվեց Տրապիզոնի կայսրությունը, որի տիրակալները ազգակցական կապեր ունեին վրաց Բագրատունիների հետ:

Թամար թագուհու կառավարման վերջին տարիներին վրացական պետությունից ստորակայական կախվածության մեջ էին մի քանի մահմեդական կազմավորումներ: Վրաստանը համարվում էր Մերձավոր Արևելքի ազդեցիկ քաղաքական ուժերից մեկը:

1207 թվականին Թամար թագուհուն (մեկ այլ տեսակետի համաձայն՝ 1210 թվականին. Թամար թագուհու մահվան ամսաթիվը՝ 1213 թվականը ներկայումս մերժվում է) հաջորդեց որդին՝ Գիորգի Դ-ը, որը հայտնի է նաև Լաշա անունով: Գիորգի-Լաշայի կառավարման առաջին տարիների իրադարձությունները ցույց տվեցին, որ Վրացական թագավորությունը զգալի չափով կորցրել է երբեմնի հզորությունը: Ստորակայական կախվածությունից դուրս գալու փորձ կատարեց Գանձակի աթաբեկությունը, դանդաղեց հայկական տարածքներից զավթիչների վտարման գործընթացը: Խորացան տարաձայնությունները թագավորի և մեծատոհմիկ ավատատերերի միջև: Վրաստանում աստիճանաբար հասունանում էր նոր ճգնաժամ:

5. ԵՐԿՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԸ: ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XI–XIII դարերում Վրաստանում բուռն վերելք ապրեցին տնտեսության բոլոր ճյուղերը: Զարգացավ հողագործությունը, զգալիորեն ընդարձակվեց ոռոգման համակարգը, մի շարք ջրանցքներ կառուցվեցին Քարթլիում և Կախեթում: Ոռոգովի տարածքների ընդլայնման շնորհիվ աճեց գյուղատնտեսական մթերքների, առաջին հերթին հացահատիկի արտադրությունը: Առաջընթաց ապրեցին դարավոր ավանդույթներ ունեցող այգեգործությունը և բանջարաբուծությունը: Հսկայական տարածքներ էին զբաղեցնում խաղողի այգիները, իսկ գինեգործությունը դարձել էր գյուղատնտեսության առաջատար ճյուղերից մեկը: Տեխնիկական կուլտուրաներից լայն տարածում էր ձեռք բերել կտավատի մշակությունը:

Երկրի տնտեսական կյանքում կարևոր տեղ էր զբաղեցնում անասնապահությունը: Մանր և խոշոր կենդանիների բուծմամբ զբաղվում էին ինչպես արքունիքին, այնպես էլ խոշոր ավատատերերին, ազնվականությանն ու վանքերին պատկանող տնտեսություններում: Երկրագործական ու անասնապահական արտադրանքը հաճախ դառնում էր արտահանման առարկա և վաճառքի էր հանվում հարևան երկրներում:

Զգալիորեն առաջադիմել էին մետաղագործությունը (զինագործություն, ոսկերչություն, պղնձագործություն), կավագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը: Արհեստավորների մեծ մասը կենտրոնացել էր քաղաքներում, զգալի թվով արհեստավորներ ապրում և աշխատում էին նաև արքունական, իշխանական ու վանական տնտեսություններում:

Ապրանք-դրամական հարաբերությունների զարգացման պայմաններում կարևոր դեր էին կատարում վաճառականները: Աշխուժացել էր ներքին առևտուրը, ընդլայնվել էին նաև արտաքին առևտրական կապերը: Միջազգային առևտրի մեջ ներգրավված էին նաև ազնվականներն ու իշխանները: Ներքին ու արտաքին առևտրի ասպարեզում աչքի ընկնող դեր էին կատարում վաճառականների յուրօրինակ ընկերությունները: Մոնղոլական նվաճումից հետո դրանք հայտնի էին դարձել «օրթախ» անվանումով:

Նշանակալի վերելք ապրեց քաղաքային կյանքը: Ավելի վաղ ժամանակներից հայտնի քաղաքների թիվն աճեց ի հաշիվ երկրի տարբեր մասերում առաջացած «ախալքալաքների» («նորաքաղաքների»): Վրացական թագավորության տնտեսական կյանքում XII դարում–XIII դարի սկզբներին աճեց նաև նվաճված երկրների քաղաքների (Անի, Կարս, Դվին, Շամախի, Կապաղակ) նշանակությունը: Երկրի միավորումն ու հզորացումը նաև թագավորական իշխանության ու քաղաքային բնակչության դաշինքի արդյունք էին: Քաղաքների հովանավորման ու բարեշինման քաղաքականություն էր իրականացվում հատկապես Դավիթ Շինարարի ու Թամար թագուհու կառավարման ժամանակաշրջանում: Մեծատոհմիկ ազնվականությունը համառորեն ջանքեր էր գործադրում քաղաքային կենտրոններին տիրանալու համար և XII–XIII դարերում որոշակի հաջողությունների հասավ: Խոշոր

ավատատերերը չկարողացան հաստատվել միայն հին քաղաքներում՝ Տփղիսում և Քութայիսում:

Սելջուկյան արշավանքները միաժամանակ միայն կասեցրին երկրի սոցիալական զարգացման ընթացքը: XI դարի վերջերին և XII դարի ընթացքում վրաց պետական, քաղաքական, տնտեսական, սոցիալական կյանքում կատարված տեղաշարժերը, որոնք նոր առաջընթաց քայլ էին ավատատիրության զարգացման ճանապարհին, նախադրյալներ ստեղծեցին հասարակության ներսում հակասությունների խորացման համար: Հաղթական պատերազմների հետևանքով նվաճված տարածքների մի զգալի մասը դեռևս Դավիթ Շինարարի օրոք իբրև ժառանգական տիրույթ («մամուլի» – «հայրենիք») հանձնվեց նրա զորավարներին, որոնցից շատերը հիմք դրեցին նոր իշխանական տների: Մեծատոհմիկ ազնվականության ներսում սրվեց պայքարը արքունի գործակալություններին տիրանալու համար, քանի որ միացյալ պետության և հզոր կենտրոնական իշխանության գոյության պայմաններում արքունի պաշտոնները կարևոր միջոց էին քաղաքական ու տնտեսական գերիշխող բարձունքներ նվաճելու համար: Արքունի պաշտոնի ու պատվի արժանացած խոշոր ավատատերերը կոչվում էին «դիդեբուլի» («փառավորյալ, մեծարյալ»): Նրանք ձգտում էին ժառանգական դարձնելու իրենց պաշտոնները, թագավորի հետ մեկտեղ մասնակցելու երկրի կառավարմանը, ստիպելու նրան իրականացնել իրենց շահերն արտահայտող ներքին ու արտաքին քաղաքականություն:

Երկրի սոցիալական զարգացման արդյունքներից էր նաև մանր ազնվականության՝ «ազնաուրների» պարտությունը մեծատոհմիկների դեմ պայքարում: Այդ խավը տնտեսական անկման էր հասել, և նրա մի մասը զբաղվում էր նույնիսկ կողոպուտով: Ծայրահեղ ծանր վիճակում էին հայտնվել նաև նախկինում անձնապես ազատ գյուղացիները, որոնց համար բնութագրական էր մասնակցությունը ռազմական արշավանքներին «մդաբիո մոլաշքրե» – «ռամիկ հեծեալ»): Հաճախակի պատերազմների ծանրությունն ընկած էր գյուղացիության այս մասի ուսերին, և տնտեսապես աննախանձելի դրության մեջ ընկնելով՝ նրանք համալրում էին անազատ գյուղացիների շարքերը, բռնում էին գողության ու կողոպուտի ուղին:

Թամարի կառավարման տարիներին ավարտուն տեսք ընդունեց պետական կառավարման այն համակարգը, որի հիմքերը դրվել էին դեռևս Դավիթ Շինարարի օրոք: Պետությունը գլխավորում էր թագավորը, որին կից գործում էր թագավորական խորհուրդը՝ դարբազը: Նրա նիստերի ժամանակ նախագահում էր թագավորը, քննարկումներին մասնակցում էին գործակալությունների ղեկավարները՝ վեզիրները և կաթողիկոսը: Թամարի օրոք վեզիրների թիվը հասավ վեցի: Նրանցից ավագը և գլխավորը համարվում էր ճորնդիդել-մծիգնոբարթուխուցեսը, որի իշխանությունը տարածվում էր ամենատարբեր ոլորտների վրա: Նա մասնակցում էր անգամ ռազմական արշավանքներին: Ամիրսպասալարը գլխավորում էր ռազմական ուժերի հավաքագրման ու բանակի ղեկավարման ողջ համակարգը: Վեզիրներից նա միակն էր, որ իրավունք ուներ զինված ներկայանալու դարբազի նիստերին, նրա կարծիքը վճռական նշանակություն ուներ բերդերի շնորհման հարցը քննարկելիս: Մանդա-

տուրքուխեցեսը վերահսկում էր երկրի ներքին դրությունը, պետական փոստի գործունեությունը: Որոշ դեպքերում ամիրսպասալարի և մանդատուրքուխեցեսի պաշտոնները հանձնվում էին միևնույն անձնավորությանը, օրինակ՝ Զաքարե Զաքարյանին: Մեծուրձլեթուխուցեսը պետական գանձարանի և արքունական կալվածքների ու տնտեսության կառավարիչն էր: Աթաբեկի պաշտոնի հաստատումը նոր երևույթ էր և տեղի ունեցավ XIII դարի սկզբին: Աթաբեկը, լինելով թագաժառանգի խնամակալը, սկզբից ևեթ մեծ ազդեցություն ձեռք բերեց և հաճախ ստվերի տակ էր թողնում ճողոնդիդել-մծիգնորարքուխուցեսին: Տեղական պաշտոնյաների գործունեությունը ղեկավարում էին էրիսթավները: Սահմանամերձ երկրամասերի էրիսթավները կոչվում էին «մոնապիրե» («սահմանապահ, կողմնապահ»): Նրանք թշնամու անակնկալ հարձակումների ժամանակ պաշտպանում էին իրենց հանձնված տարածքները, իսկ անհրաժեշտության դեպքում իրականացնում էին հետախուզական աշխատանքներ և նախապատրաստում հարձակողական գործողությունները: Քաղաքների կառավարիչներին անվանում էին ամիր, Տփղիսի քաղաքապետին՝ ամիրաների ամիրա կամ ամիրապետ:

Դավիթ Շինարարը տնտեսական առաջընթացն ապահովելու նպատակով առանձնահատուկ կարևորություն էր տալիս միջազգային առևտրին: Նրա օրոք Վրացական թագավորության սահմանների մեջ էին ընդգրկվել նշանավոր քաղաքային կենտրոններ, սերտացել էին տնտեսական կապերը Արևելքի երկրների հետ: Երկրում հսկայական աշխատանք կատարվեց ճանապարհները բարեկարգելու, կամուրջներ կառուցելու, իջևանատներ հաստատելու ուղղությամբ: Հատվեց դրամ, որի արտաքին տեսքը զգալի նմանություններ ուներ մահմեդական երկրներում թողարկված դրամների հետ: Այս հանգամանքը պետք է դյուրացներ վրացական դրամների շրջանառությունը Արևելքի գերազանցապես մահմեդական երկրներում:

XI–XIII դարերում առանձնապես սերտ ու բազմակողմանի դարձան հայ-վրացական հարաբերությունները: 1045 թվականին, երբ սուր ներքաղաքական ճգնաժամ էր տիրում Անիում, Հայոց մայրաքաղաքի բնակչության մի մասը մտադիր էր քաղաքը հանձնել Բագրատ Դ-ին՝ համարելով նրան Գագիկ 1-ինի օրինական ժառանգորդ: Հետաքրքրական է այն փաստը, որ վրացական սկզբնաղբյուրները Բագրատ Դ-ի և Մարիամ թագուհու հետ բանակցությունների նախաձեռնությունը վերագրում են Վեստին: Ամենայն հավանականությամբ, խոսքը վերաբերում է հայոց պատմությունից հայտնի Վեստ Սարգսին: Վրացական զորքերը նույնիսկ հասցրին գրավել Ամբերդը և Անիի շրջակայքի ինը ամրոցները: Սակայն քաղաքական այս ծրագրերը, հավանաբար բյուզանդացիների թելադրանքով, ձախողեց Լիպարիտ Բաղվաշը: Նրա ջոկատները ձերբակալեցին Բագրատ Դ-ի նշանակած Անիի վրացի կառավարչին և խանգարեցին Բագրատ Դ-ին իր հովանավորության տակ վերցնել Անին:

1118 թվականին վրացական բանակը գրավեց Լոռիի (Տաշիր-Զորագետի) Կյուրիկյան թագավորությունը և սահմանակից մի շարք բերդեր, ինչպես նաև 1124 թվականին հաստատվեց Անիում, թեև երկու տարի անց հարկադրված էր թողնել Բագրատունիների երբեմնի մայրաքաղաքը:

Հայ-վրացական դարավոր առնչությունները ավելի ընդգրկուն բնույթ ձեռք բերեցին Դավիթ Շինարարի կառավարման ժամանակաշրջանում: Անիի թագավորության անկումից հետո Վրաստանում էին ռազմական ծառայության մտնում հայ զորականները, հյուսիս էին տեղափոխվում հայ վաճառականներն ու արհեստավորները:

Հյուսիսարևելյան Հայաստանի բնակչությունը ոգևորությամբ էր ընդունում վրաց արքաների գործունեությունը և եռանդուն մասնակցություն էր բերում թյուրքերի դեմ ուղղված մարտական գործողություններին: Ի դեմս վրաց արքաների՝ հայ բնակչությունը տեսնում էր հայ Բագրատունիների օրինական ժառանգորդներին: Այս կերպ հայ-վրացական զինակցությունը ստանում էր գաղափարախոսական հիմնավորում:

6. ՋԱԼԱԼ ԱԴ-ԴԻՆԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Վրաստանի համար անսպասելի և դաժան պատմական փորձությունների շղթան սկսվեց XIII դարի 20–30-ական թվականներին: 1220–1221 թվականներին տեղի ունեցավ Ջեբեի և Սուբադայի գլխավորած մոնղոլական 20 հազարանոց բանակի հետախուզական արշավանքը, որի ժամանակ մոնղոլները երեք անգամ հաղթանակ տարան: Ճակատամարտերից մեկի ժամանակ էլ ծանր վիրավորվեց և 1223 թվականին մահացավ Գիորգի-Լաշա թագավորը: Գահ բարձրացավ օրինական ժառանգորդը՝ նրա քույր Ռուսուդանը (1223–1245 թթ.), քանի որ, վրացական իրավունքի համաձայն, Գիորգի-Լաշայի ապօրինի որդին թագադրվելու իրավունք չուներ: Նոր թագուհին չուներ ոչ միայն մոր կառավարման ձիրքը, այլև զուրկ էր նաև այն բարոյական առաքինություններից, որոնք բնութագրական էին Թամար թագուհուն: Հետևանքը եղավ թագավորական իշխանության հզորության և հեղինակության արագ անկումը, որը, սակայն, միայն նոր արհավիրքների սկիզբն էր:

Ռուսուդանի գահ բարձրանալուց կարճ ժամանակ անց Վրաստանը ենթարկվեց մոնղոլների կողմից հալածված խորեզմշահ Ջալալ ադ-Դինի զորքերի ասպատակություններին: Աթաբեկ և ամիրսպասալար Իվանե Զաքարյանի ղեկավարած հայ-վրացական զորքերը ճակատամարտ տվեցին թշնամուն 1225 թվականին Գառնիի մերձակայքում: Ներքին անհամերաշխության ու տարաձայնությունների պատճառով հայ-վրացական բանակը ծանր կորուստներ կրեց, իսկ թշնամին հաջորդ տարի հարձակվեց Տփղիսի վրա: Վրաստանի մայրաքաղաքը 1226 թվականի մարտին գրավելուց հետո խորեզմցիները ասպատակություններ ձեռնարկեցին դեպի շրջակա երկրամասեր և հասան մինչև Արևմտյան Վրաստան:

Ռուսուդան թագուհին միայն 1229 թվականի գարնանը կարողացավ նոր բանակ հավաքել՝ խորեզմցիներին երկրորդ խոշոր ճակատամարտը տալու համար: Այն տեղի ունեցավ Բոլնիսի շրջակայքում՝ Մինդորի (Դաշտ) կոչվող վայրում: Կռվի սկզբում Ջալալ ադ-Դինը կարողացավ իր կողմը գրավել ղիչաղական 20 հազարանոց ջոկա-

տը, որը հրաժարվեց խորեզմցիների դեմ մարտնչելուց: Մնացած հայ-վրացական ուժերը, որոնց օգնության էին հասել Հյուսիսային Կովկասի ժողովուրդներից հավաքագրված ջոկատները, այս անգամ ևս պարտություն կրեցին: Հաջորդ տարիների ընթացքում խորեզմշահը նոր հաջողությունների չկարողացավ հասնել, իսկ 1230 թվականին նրա զորքերը ջախջախվեցին թշնամի մահմեդական տիրակալների միացյալ ուժերի դեմ ճակատամարտում: Հաջորդ տարում Ջալալ ադ-Դինը սպանվեց, և այսպիսով խորեզմցիների յոթնամյա ներխուժումներն ու ավերածությունները ավարտվեցին:

Խորեզմցիների արշավանքները ոչ միայն տնտեսական ու ռազմական առումներով թուլացրին վրացական թագավորությունը, այլև խորացնելով ներքաղաքական ճգնաժամը՝ նպաստեցին խոշոր ավատատերերի անջատողական ձգտումների դրսևորմանը: Ռուսուդան թագուհին այլևս չէր էլ կարող երազել մոնղոլների դեմ խոշոր բանակ հանելու մասին, կենտրոնական իշխանությունը այլևս ի վիճակի չէր կազմակերպված դիմադրություն ցույց տալու թշնամիներին:

7. ՄՈՆՂՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

1236 թվականին մոնղոլները առանց նկատելի դիմադրության հանդիպելու գրավեցին ողջ Արևելյան Վրաստանը: Վրաց իշխանները մեկը մյուսի հետևից հնազանդվեցին նվաճողներին և նրանց հանձնեցին իրենց տիրույթները: Ռուսուդան թագուհին դիմադրություն կազմակերպելու փոխարեն հրամայեց թշնամուն թողնելուց առաջ հրդեհել մայրաքաղաքը, իսկ ինքը հեռացավ Քութայիս: Մոնղոլները Վրաստանը բաժանեցին թումանների, որոնցից յուրաքանչյուրը պարտավոր էր հեռավոր տարածքներ ձեռնարկած արշավանքների ժամանակ նվաճողներին 10 հազարանոց օժանդակ զորք տրամադրել: Կառավարման հին համակարգը պահպանեց իր գոյությունը, վրաց իշխանների մեծ մասը շարունակում էր տիրել սեփական տիրույթներին: Ռուսուդան թագուհին ևս համաձայնության եկավ մոնղոլների հետ ու 1243 թվականին հաշտություն կնքեց նրանց հետ:

Վրաստանը մտցվեց մոնղոլական պետության կազմի մեջ և ստանձնեց հարկեր վճարելու ու օժանդակ զորք տրամադրելու պարտավորություն: Վրացական թագավորությունը ներքաղաքական կյանքում ևս կախվածության մեջ էր ընկնում նվաճողներից: Վրաց թագավորի ընտրությունը հաստատելու էր մոնղոլական մեծ խանը: Ռուսուդանը շտապեց գահի նկատմամբ ամրապնդել իր որդի Դավթի իրավունքները և նրան թագավոր հաստատելու նպատակով ուղարկեց մոնղոլական մայրաքաղաք Կարակորում: Վրաստանում միաժամանակ միջթագավորության շրջան սկսվեց: Գահի նկատմամբ հավակնություններով հանդես էին գալիս թե՛ Գիորգի-Լաշայի և թե՛ Ռուսուդանի որդիները: Վրաց մեծատոհմիկ ազնվականությունը բաժանվեց երկու մասի, նրանցից յուրաքանչյուրը պաշտպանում էր գահի նկատմամբ հավակնորդներից մեկնումեկի իրավունքները: Մոնղոլները, սակայն, այլ ծրագիր էին մշակել: Թագավորական իշխանությունը թուլացնելու նպատակով նրանք 1247 թվականին վրացական գահը հանձնեցին Թամար թագուհու միաժամանակ

երկու թոռներին՝ Գիորգի-Լաշայի որդի Ուլու (Ավագ) և Ռուսուդանի որդի Նարին (Կրտսեր) Դավիթներին՝ հիմք դնելով Վրաստանի հետագա երկատմանը:

Բնակչությունը ենթարկվում էր մոնղոլների դաժան հարկային լծին, որը հատկապես ծանրացավ 1254 թվականին անցկացված աշխարհագրից հետո: 1256 թվականին Վրաստանը և Հյուսիսարևելյան Հայաստանը, որոնք մտնում էին մոնղոլների ստեղծած նոր վարչական միավորի՝ Գյուրջիստանի վիլայեթի մեջ, ընդգրկվեցին Չինգիզ խանի ժառանգներից Հուլավու խանի ստեղծած պետության՝ իլխանության սահմանների մեջ. բնակչության վիճակն էլ ավելի վատթարացավ:

Դեռևս 1247 թվականին վրաց իշխանները հավաքվեցին Ջավախքի Կախտասթավի կոչված վայրում և որոշեցին ապստամբել մոնղոլների դեմ: Հավաքի մասնակիցները չհաստատեցին ուժեր գումարել և վճռական գործողությունների դիմել: 1259 թվականին վրաց և հայ իշխանները երկրորդ անգամ ապստամբեցին: Մոնղոլական պատժիչ զորաջոկատի հետ բախումից հետո ապստամբությունը նախաձեռնող Դավիթ Նարինն անցավ Արևմտյան Վրաստան, իսկ Ուլու Դավիթը ամրացավ Սամցխեում, որի տիրակալ Սարգիս Ջաղելին հավատարիմ էր մնացել վրաց արքային: Ի վերջո ապստամբների այս խումբը ևս տեղափոխվեց Արևմտյան Վրաստան և երկամյա պայքարից հետո հարկադրված եղավ վերստին հնազանդվել մոնղոլներին:

Վրաց արքան ստիպված էր մեկնել Պարտավ, որտեղ իլխանի նստավայրն էր, Հուլավուին բացատրություն տալու համար: Ուլու Դավիթը, այնուամենայնիվ, վերստացավ իր տիրույթները Արևելյան Վրաստանում, իսկ Դավիթ Նարինը մնաց երկրի արևմտյան մասում:

Մոնղոլները դաժան հաշվեհարդար տեսան ապստամբության մասնակիցների հետ: Մահապատժի ենթարկվեցին նաև հայ իշխանները՝ ամիրսպասալար Զաքարե ամիրսպասալարի թոռ Զաքարե Զաքարյանը և Խաչենի տիրակալ Հասան-Ջալալը: Ավերածությունների ենթարկվեցին բազմաթիվ վրացական ու հայկական երկրամասեր:

Ուլու Դավթի որդու՝ Դեմետրե Բ Անձնուրացի (1270–1289 թթ.) կառավարման օրոք Արևելյան Վրաստանում և Հյուսիսարևելյան Հայաստանում փաստական իշխանությունը պատկանում էր Մահկանաբերդցիների հայկական իշխանական տան անդամներ Սադունին և նրա որդի Խութլու Բուղային: Թագավորական իշխանությունը առավել ևս կորցրեց իրական հզորությունը Դեմետրե Բ-ի որդիների օրոք, երբ Ղազան իլխանը (1295–1304 թթ.) իրար դեմ էր դուրս բերում եղբայրներին և գահակալական պայքար բորբոքում երկրում:

Դավիթ Նարինն ամրացել էր Արևմտյան Վրաստանում և փաստական անկախություն էր վայելում: Այստեղ թագավորական իշխանությունը պահպանել էր դիրքերը, Դավիթ Նարինը ինքնուրույն ու ճկուն քաղաքականություն էր վարում: Արևելյան Վրաստանում թագավորական իշխանության հետագա տրոհումը հանգեցրեց երեք թագավորների միաժամանակ կառավարմանը: Մոնղոլները Սամցխեն դուրս բերեցին ընդհանուր պետական ենթակայությունից, և այդ երկրամասի անմիջական վերահսկողությունը պատկանում էր մոնղոլական իլխանին: Իրականում Սամցխեում

ստեղծվել էր ինքնուրույն վարչական միավոր, որի կառավարումն իրականացնում էին Ջաղելիների տոհմին պատկանող աթաբեկները: Այսպիսով՝ XIII դարի վերջին Վրաստանի տարածքում առաջացել էին փաստորեն միմյանցից անկախ և տարբեր քաղաքական կացության մեջ գտնվող երեք պետական կազմավորումներ՝ Արևելյան Վրաստանի և Արևմտյան Վրաստանի թագավորությունները, ինչպես նաև Սամցխեի աթաբեկությունը:

8. ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XI–XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Երկրի միավորումը և քաղաքական ու տնտեսական վերելքը նախադրյալներ ստեղծեցին վրացական մշակույթի աննախընթաց ծաղկման համար: Հոգևոր և ուսումնագիտական խոշոր կենտրոններ դարձան վանքերը, որոնք գործում էին ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս՝ Պաղեստինում, Սինայում, Սև լեռներում, Աթոսում: Հատկապես աչքի էին ընկնում Տայքի ու Կղարջքի վանքերը՝ Խանձթան, Շատբերդը, Օպիզան: Վրաց մշակույթի հարստացման գործում նշանակալի ավանդ էին ներդնում նաև քաղկեդոնական հայերը, որոնց թիվը առանձնապես զգալի էր Տայքում: Հայկական ծագում ուներ Բյուզանդիայում բարձր դիրքի հասած Գրիգոր Բակուրյանը, որի ջանքերով 1083 թվականին Բուլղարիայում կառուցվեց Պետրիծոնի (Բաչկովոյի) վանքը: Վրացական մշակույթի նշանավոր գործիչներից այստեղ է ապրել նորպլատոնական փիլիսոփա Հովհան Պետրիծին:

Վրացական մատենագրության նշանավոր կենտրոններից մեկը դարձավ Անտիոքի մերձակայքում՝ Սև լեռների շրջանում գտնվող վրացական վանքը, որտեղ թարգմանական բեղմնավոր գործունեություն ծավալեց Եփրեմ Կրտսերը: Նրա նախաձեռնությամբ, «որդին թոռից մերձ» սկզբունքով, հունարեն բնագրերի հիման վրա վերստին թարգմանվեցին կամ խմբագրվեցին մատենագրական այն հուշարձանները, որոնք ավելի վաղ ժամանակներում մատչելի էին դարձել հայերենի միջնորդավորմամբ: X դարի վերջերին ուղղափառ քրիստոնեության ամենահայտնի կենտրոնում՝ Հունաստանի Աթոս լեռան շրջանում, Էքվթիմե (Եվթիմեոս) Աթոսցին (Սուրբսարեցին) հիմնադրեց վրացական Իվերոն վանքը: Հովհան և Գիորգի Աթոսցիների (Սուրբսարեցիների) գործունեության շնորհիվ վանքում մեծ ծավալ ձեռք բերեցին թարգմանչական աշխատանքները, շարադրվեցին նաև արժեքավոր ինքնուրույն երկասիրություններ: Աթոսի բարձրագույն տիպի դպրոցում՝ ակադեմիայում, ձևավորվեց մատենագրական, քերականական ու գրչագրական ուրույն դպրոց:

Կրթական գործի կազմակերպմանը մեծ ուշադրություն էր դարձնում Դավիթ Շինարարը, որի նախաձեռնությամբ XII դարի սկզբին Քութայիսի մոտակայքում հիմնադրվեց Գելաթի ակադեմիան: Արտերկրի մշակութային խոշոր կենտրոններից այստեղ հրավիրվեցին ժամանակի նշանավոր վրացի գիտնականներ: Հավանաբար ակադեմիա էր հաստատվել նաև Թելավի մերձակայքում՝ Իղալթոյի վանքում, որի առավել հայտնի գործիչներից էր Արսեն Իղալթոյեցին:

Վանքերը դառնում են նաև ձեռագրերի ընդօրինակման ու պատկերազարդման ճանաչված կենտրոններ: Այս դարաշրջանում է, որ հետագա զարգացում է ապրում

վրաց գիրը: Վրացական երկաթագիրը փոխարինվում է բոլորգրով (նուսխուրի): Երկաթագիր տառերը գործածվում են միայն բացառիկ դեպքերում, օրինակ՝ խորագրերի գրչության համար, այդ պատճառով էլ ստանում են «ասոմթավրուլի» («գլխագիր») անվանումը:

XI դարը նշանավորվեց պատմագրության սկզբնավորմամբ ու արագ առաջընթացով: Նրա հիմնադիրը Լեոնտի Մրովելին էր (Ղևոնդ Ռուիսեցին)՝ «Վրաց թագավորների և նախահայրերի ու տոհմերի պատմությունը» երկի հեղինակը: Նրա ջանքերով շարադրվեցին Վրաստանի պատմության ձեռնարկ-ժողովածուի՝ «Քարթլիս ցխովրեբայի» սկզբնական հատվածները: Հաջորդ երկու դարերի ընթացքում «Քարթլիս ցխովրեբան» լրացվել ու հարստացել է նոր ստեղծագործություններով: Դրանցից առանձնակի ուշադրության է արժանի «Մատիանե Քարթլիսայ» («Քարթլիի մատյանը») անվանումով հայտնի աշխատությունը, որը պատկանում է անհայտ հեղինակի գրչին: Այն սկսվում է VIII դարի իրադարձությունների արձանագրմամբ, բայց հատկապես մանրամասն արտացոլում է XI դարի պատմական անցուդարձերը: Միևնույն դարի վերջի և հաջորդ դարի առաջին քառորդի Վրաստանի պատմության գլխավոր աղբյուրը Դավիթ Շինարարի պատմիչի երկն է՝ «Արքայից արքա Դավթի պատմությունը»: Վրաստանի արքաներից Դեմետրե Ա-ի, Գիորգի Գ-ի, Թամար թագուհու և Գիորգի-Լաշայի ժամանակների իրադարձությունները արտացոլված են Գիորգի-Լաշայի ժամանակակից մատենագրի փոքրածավալ աշխատությունում: Թամար թագուհու ժամանակաշրջանում շարադրված պատմական աշխատություններից «Քարթլիս ցխովրեբայի» կազմի մեջ են մտցվել երկուսը՝ «Թագակիրների պատմությունն ու ներբողյանը» և «Արքայից արքա Թամարի պատմությունը»: «Քարթլիս ցխովրեբան» դեռևս XII դարում գրավել է հայ հեղինակների ուշադրությունը և թարգմանվել է հայերեն:

Թամար թագուհու անձնավորության ու գործունեության փառաբանման նպատակով շարադրվել են նաև ներբողական բնույթի գրական հուշարձաններ, որոնց հեղինակները Չախրուխաձեն ու Շավթելին են: Վրացական միջավայրի հոգևոր պահանջմունքները և գեղարվեստական ճաշակը բավարարելու նպատակով պարսկերենից թարգմանվել է «Վիս և Ռամին» պոեմը: Դարաշրջանի գեղարվեստական գրականության գլուխգործոցը Շոթա Ռուսթավելու «Ընձենավոր» ասքն է, որը դարերի ընթացքում վրացական միջավայրում բացառիկ սեր ու ժողովրդականություն է վայելել:

Բուռն զարգացում են ապրում արվեստի բազմաթիվ բնագավառներ, այդ թվում՝ երաժշտությունը, քանդակագործությունը, որմնանկարչությունը, խճանկարչությունը, մանրանկարչությունը: Վրաց գրականությունը հարստանում է նաև հոգևոր օրհներգերով, որոնք ի մի են բերվում առանձին ժողովածուներում: Ստեղծվում են նաև վարքագրական արժեքավոր հուշարձաններ, որոնք հավաստի պատմական տեղեկություններ են պարունակում:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԳԻՈՐԳԻ ՊԱՅՇԱՌ

Մոնղոլական տիրապետության հետևանքները խիստ ծանր էին Վրաստանի համար: Երկիրը տնտեսական խոր անկում էր ապրում, թուլացել էր թագավորական իշխանությունը, միացյալ թագավորությունը տրոհվել էր առանձին մասերի: Աբու Սայիդ (1316–1335 թթ.) իլխանի՝ Անիում թողած պարսկերեն հրովարտակից երևում է, որ քաղաքի տնտեսությունը քայքայման վիճակում էր, իսկ բնակչությունը բռնել էր հարկադրական գաղթի ուղին: Նույն վիճակն էր տիրում նաև Վրաստանի քաղաքներում: Սրվեցին փոխհարաբերությունները լեռնային և դաշտային շրջանների բնակչության միջև: Լեռնականները ձգտում էին ազատվելու թագավորական պաշտոնյաների վերահսկողությունից և զանգվածաբար տեղափոխվում էին հարթավայրային շրջաններ: Օսական բնակչությունը ևս լեռնային կիրճերից շարժվում էր դեպի հարավ և անգամ գրավել էր Գորին:

Երկրի քաղաքական վերամիավորումը վիճակված էր իրականացնել Դեմետրե Բ Անձնուրացի որդի Գիորգի Ե (1314–1346 թթ.) արքային, որը մայրական գծով Սամցխեի աթաբեկ Բեքա Ջաղելու թոռն էր: Այդ ժամանակ արդեն վախճանվել էին նրա մրցակից եղբայրները, և այսպիսով նպաստավոր իրադրություն էր ստեղծվել երկրի քաղաքական միասնության վերականգնման համար: Մինչդեռ Վրաստանի վերամիավորումն անհնարին էր իրականացնել առանց մոնղոլների համաձայնության ու օժանդակության:

Գիորգի Ե–ը որոշեց հրաժարվել մոնղոլական իլխանությանը հակադրվելու քաղաքականությունից, որը նախորդ ժամանակահատվածում բազում ավերածությունների դրդապատճառ էր դարձել և ամեն կերպ ձգտում էր ընդգծելու իր հավատարմությունը մոնղոլական իշխանությունների նկատմամբ: Այսպես՝ նա սերտ կապեր հաստատեց մանկահասակ Աբու Սայիդի ամենազոր խնամակալ Չոբան Նոյինի հետ և վայելում էր նրա կատարյալ վստահությունը: Օգտվելով իլխանությունում մեծ ազդեցություն ունեցող Չոբան Նոյինի վստահությունից՝ Գիորգի Ե–ը ճանաչվեց համայն Վրաստանի տիրակալ: Նրան պետք է ենթարկվեին վրաց բոլոր իշխողները, այդ թվում՝ իր եղբորորդիները: Դա նշանակում էր, որ իլխանությունը փոխում էր քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ և հրաժարվում էր նրա քաղաքական մասնատման ու թուլացման քաղաքականությունից: Իլխանությունը, իր հերթին, ձգտում էր օգտագործելու վրացական թագավորության ռազմական ուժերը թշնամիների դեմ պայքարում: Գիորգի Ե–ին հանձնվեց հարկերը հավաքելու իրավունքը, որը չափազանց կարևոր ձեռքբերում էր: Այսպիսով վերջ էր տրվում մոնղոլական հարկահավաքների, հատկապես հարկերը կապալով վերցնող պաշտոնյաների կամայականություններին ու չարաշահումներին: Սկսեց բարելավվել երկրի տնտեսական վիճակը, Գիորգի թագավորը կարճ ժամանակամիջոցում կարողացավ կասեցնել լեռնաբնակ օսերի տեղաշարժը դեպի հարթավայրային գոտի ու ետ գրավել Գորի քաղաքը: Հենվելով Չոբան Նոյինի աջակցության վրա՝ Գիորգի արքան իրեն ենթարկեց Արևելյան Վրաստանի տիրակալներին, իսկ անհնազանդ իշխանների դեմ պայքարում դիմեց անողոք միջոցների: Այսպես՝ նա Կախեթում գտնվող իր ամառային ապարանք կանչեց Կախեթի, Հերեթի և Սոմխիթի էրիսթավներին, նրանց ամբաստանեց մոնղոլական խաների հետ համագործակցության՝ դավաճանության մեջ ու կոտորել տվեց:

Երկրի ներսում իր դիրքերն ամրապնդելուն զուգընթաց, Գիորգի Ե–ը նպատակասլաց կերպով ձգտում էր Վրաստանի անկախացման շահերին ծառայեցնելու մոնղոլական պետության անխուսափելի անկումը: 1327 թվականին իլխանությունում ներքաղաքական սուր բախում սկսվեց: Աբու Սայիդ իլխանը մահապատժի ենթարկեց իր դաստիարակ Չոբանին ու նրա ընտանիքի բոլոր անդամներին ու կողմնակիցներին: Վրաց արքան օգտվեց ստեղծված խառնաշփոթ վիճակից և երկրի մեծ մասից դուրս քշեց մոնղոլական զորքերին, ինչպես նաև դադարեցրեց իլխանությանը տրվող հարկի վճարումը:

Շուտով ներքին բախումներ սկիզբ առան Արևմտյան Վրաստանում: 1329 թվականին Գիորգի Ե–ը արշավեց դեպի արևմուտք և տիրացավ Քութայիսին: 1334 թվականին իրեն ենթարկեց նաև Սամցխեի աթաբեկությունը: Այսպիսով վերականգնվեց երկրի տարածքային ամբողջականությունը, հերթական խնդիր դարձավ անկախության վերահաստատումը: Մոնղոլական տիրապետությունը լիովին վերացվեց Աբու Սայիդ իլխանի մահից հետո, երբ իլխանությունում անընդմեջ կռիվներ ծավալվեցին, ու իլխանությունը տրոհվեց մի քանի քաղաքական կազմավորումների, որոնցից յուրաքանչյուրում իրենց իշխանությունը հաստատեցին թուրքմենական զանազան ցեղախմբերը:

Գիորգի Ե–ը մի շարք միջոցառումներ ձեռնարկեց նաև երկրի ներսում պետության դիրքերը ամրապնդելու, երկրի նախկին պետական–վարչական կառուցվածքը վերականգնելու նպատակով: Թագավորի նախաձեռնությամբ անցկացվեց եկեղեցական ժողով, որը կարգավորեց հոգևոր գործերը: Ծավալվեց նաև օրինաստեղծ գործունեություն, որի նպատակը լեռնային շրջաններում պետության դիրքերի վերականգնումն էր:

Միջոցառումներ իրականացվեցին երկրի տնտեսական վիճակը բարելավելու, ֆինանսական հզորությունը ամրապնդելու նպատակով: Սկսվեց արծաթյա դրամի՝ «Գիորգաուլի թեթրիի» հատումը: Ամրապնդվեցին Վրաստանի միջազգային կապերը Բյուզանդիայի, Հռոմի պապի, Ֆրանսիայի հետ, Գիորգի Ե–ը ակտիվորեն միջամտում էր Տրապիզոնի կայսրության ներքաղաքական կյանքին, որոշ չափով վերականգնվեց երկրի միջազգային հեղինակությունը: Գիորգի Ե–ի խնդրանքին

ընդառաջելով՝ Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը վրացիներին վերադարձրեց մզկիթի վերածված Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքը, արտոնություններ շնորհեց Պաղեստին այցելող վրացի ուխտագնացներին: Վրաստանի միջազգային հեղինակության աճի մասին էր վկայում այն փաստը, որ Հռոմի պապը Փոքր Ասիայից՝ Զմյուռնիայից, Տփղիս տեղափոխեց կաթոլիկ քարոզիչների կենտրոնը: Պետական-քաղաքական արդյունավետ գործունեության համար Գիորգի Ե-ը վաստակեց «Պայծառ» պատվանունը:

Գիորգի Պայծառին հաջորդեց որդին՝ Դավիթ Թ-ը (1346-1360 թթ.), որի օրոք պահպանվում էր Վրաստանի ներքին ու արտաքին համեմատաբար բարենպաստ իրադրությունը:

Դավիթ Թ-ի մահից հետո գահ բարձրացավ նրա որդի Բագրատ Ե-ը (1360-1393 թթ.), որի կառավարման առաջին տասնամյակների ընթացքում նշանակալի փոփոխություններ չկատարվեցին: Վրաստանի սահմանների մեջ շարունակում էին ընդգրկված մնալ Աճարան, Կղարջքը, Շավշեթը, ողջ Մեսխեթը, Հյուսիսային Հայաստանի որոշ շրջաններ՝ Անի ու Լոռե կենտրոններով: Այնուամենայնիվ, Վրաստանի լիարժեք միավորման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական նախադրյալներ չէին ստեղծվել: Առանձին երկրամասեր անջատողական ձգտումներ էին դրսևորում: XIV դարի երկրորդ կեսին հանդես եկան, այսպես կոչված, պրովինցիալ արքաները, որոնք հակադրվում էին կենտրոնական թագավորական իշխանությանը: Երկրի բնակչությանը և տնտեսությանը ծանր հարված հասցրեց 1348 թ. սկսված ժանտախտի ահավոր համաճարակը՝ «սև մահը»:

2. ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

XIV դարի վերջին Վրաստանը ակամա ներքաշվեց այն դիմակայության մեջ, որ ստեղծվել էր մոնղոլական տերության՝ Ոսկե Հորդայի և Լենկ Թեմուրի ստեղծած հզոր պետության միջև: Նոր տարածքների ու առևտրական ուղիների վերահսկողության համար ընթացող այդ երկարատև հակամարտությունն ավերիչ հետևանքներ ունեցավ Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների և հարակից տարածաշրջանների համար:

1385 թվականին Ոսկե Հորդայի տիրակալ Թոխթամիշ խանը, որը մինչ այդ կարողացել էր վերականգնել մոնղոլական տիրապետությունը Ռուսաստանի նկատմամբ, ներխուժեց Ատրպատական ու գրավեց Թավրիզը: Ոսկե Հորդայի ու Լենկ Թեմուրի միջև ծավալված պայքարի սկզբում Բագրատ 5-րդը դաշնակցում էր Թոխթամիշի հետ, որը Վրաստանի հետ զինական համագործակցություն հաստատելու ձգտում էր դրսևորում: 1386 թվականին Թեմուրի հսկայական բանակը ավերեց Հայաստանի մի շարք շրջաններ և ուշ աշնանը ներխուժեց Վրաստան: Թշնամին պաշարեց ու գրավեց Տփղիսը, գերի վերցրեց Բագրատ Ե-ին ու Աննա թագուհուն: Թեմուրի ուղարկած զորաջոկատները ավերածություն սփռեցին վրացական երկրամասերում: Վրաստանից հեռանալիս ահեղ բռնակալը իր հետ տարավ վրաց թագավորին և ձմեռն անցկացրեց Ղարաբաղում: Բագրատ Ե-ը հարկադրված եղավ մահմեդա-

կանություն ընդունել, շահեց Թեմուրի վստահությունը և, նրանից 12 հազարանոց զորք ստանալով, վերադարձավ հայրենիք: Նրան հաջողվեց կապ հաստատել որդու՝ Գիորգիի հետ, որը, հոր ցուցումներին հետևելով, ճանապարհին հարձակվեց ու գլխովին ջախջախեց թշնամու զորաջոկատը: Թեմուրը չհապաղեց վրեժ լուծել և 1387 թվականին կրկին ավերեց երկիրը, թեև Թոխթամիշի նոր հարձակումը հարկադրեց նրան ընդհատել իր երկրորդ արշավանքը Վրաստան:

Թշնամու դեմ պայքարի հիմնական ծանրությունը վիճակվեց Բագրատ Ե-ի որդուն՝ Գիորգի Է-ին (1393-1407 թթ.): Թեմուրի նոր արշավանքների նպատակակետը Հյուսիսային Կովկասն էր, որտեղ Ոսկե Հորդայի դեմ պատերազմը շարունակվեց նոր թափով: 1394-1395 թվականներին Թեմուրը ջախջախեց հակառակորդին և գրավեց Ոսկե Հորդայի մայրաքաղաքը: Այս արշավանքի հետևանքով Հյուսիսային Կովկասում ամրապնդվեցին Թեմուրի կողմից բռնությամբ տարածվող մահմեդականության դիրքերը, Վրաստանի հետ մշակութային շփումներն ու քրիստոնեական ազդեցությունը խիստ սահմանափակվեցին:

1399-1403 թվականներին Թեմուրի զորքերը մի քանի անգամ նորից ավերեցին Վրաստանը և հարկադրեցին դառնալ ստորակայական կախվածության մեջ գտնվող երկիր: Գիորգի Է-ը պարտավորվեց բնակչությունից գանձվող գլխահարկ ու հողահարկ վճարել Թեմուրին և օգնական զորք տրամադրել: Փոխարենը Թեմուրը ճանաչում էր Վրաստանը քրիստոնեական երկիր: Թեմուրի զորքերը 17 տարվա ընթացքում 8 անգամ ներխուժեցին և ավերեցին Վրաստանը, անդառնալի կորուստներ պատճառեցին քաղաքներին ու գյուղերին, քայքայեցին տնտեսությունը: Վրաստանի վարչական կազմից հանվեցին Հյուսիսային Հայաստանի մի շարք գավառներ, այդ թվում և Լոռեն:

3. ՎՐԱՍՏԱՆԸ XV ԴԱՐՈՒՄ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Երկիրը ստացած ծանր հարվածներից ուշքի չեկավ ու նոր դժվարությունների հանդիպեց նաև 1405 թվականին՝ Լենկ Թեմուրի մահից հետո: 1407 թվականին թուրքմենների դեմ կռիվներում զոհվեց Գիորգի Է-ը, իսկ հինգ տարի հետո կարա կոյունլուների առաջնորդ Կարա Յուսուֆը գերի վերցրեց ու գլխատեց նրա եղբորը և հաջորդին՝ Կոստանդին Ա-ին (1407-1412 թթ.):

1412 թվականին Վրաստանի գահը ժառանգեց Կոստանդին Ա-ի որդի Ալեքսանդր Ա-ը (1412-1442 թթ.): Նրա գլխավոր խնդիրը դարձավ երկրի ծայրաստիճան քայքայված տնտեսության վերականգնումը, իսկ ներքաղաքական կյանքում՝ միասնականության պահպանումը: Օգտվելով արտաքին հարձակումների ժամանակավոր դադարից՝ վրաց թագավորը շինարարական-նորոգչական լայն գործունեություն ծավալեց: Անհրաժեշտ միջոցներ հայթայթելու նպատակով նա 1425 թ. ժամանակավոր արտակարգ հարկ սահմանեց: Յուրաքանչյուր ծուխ պարտավոր էր երկրի վերաշինման համար 40 արծաթյա դրամ տրամադրել: Այս հարկը հավաքվեց մինչև 1440 թվականը և կարևոր նշանակություն ունեցավ: Ալեքսանդր 1-ինը

նաև ձգտում էր ավելացնելու երկրի բնակչության թիվը և միջոցներ ձեռնարկեց հայ վերաբնակիչներին Վրաստան տեղափոխելու նպատակով: 1431 թվականին նրան հաջողվեց կրկին Վրաստանի սահմանների մեջ ներառել Լոռին: Բեշքեն Օրբելյանը, որը Ալեքսանդր Ա-ի աներն էր, 6 հազար հայ ընտանիքների հետ հեռացավ Սյունիքից և բնակություն հաստատեց Լոռիում: Շուտով, սակայն, զգուշանալով Լոռին որպես կալվածք ստացած Բեշքենի հզորացումից՝ վրաց արքան թունավորել տվեց նրան:

Ալեքսանդր Ա-ը սկզբնական շրջանում որոշակի հաջողությունների հասավ նաև անհնազանդ ստորականների դեմ պայքարում: Այսպես՝ նա իրեն ենթարկեց Սամցխեի աթաբեկին, արշավեց դեպի Արևմտյան Վրաստան և հնազանդեցրեց Շարվաշիձե ու Դադիանի իշխաններին: Անջատողական ձգտումները սանձահարելու մտահոգությամբ արքան սկսեց տարբեր երկրամասերի կառավարիչներ նշանակել իր հարազատներին, բայց այդ ձեռնարկումը սպասվածին հակառակ հետևանքներ ունեցավ: Երկպառակություններ ծայր առան նաև թագավորական ընտանիքի ներսում, անհնազանդություն դրսևորեցին արքայի որդիները: Միաժամանակ 1440 թվականին Վրաստանը ենթարկվեց կարա կոյունլու Ջահան-շահի ներխուժումներին: Թշնամին գրավեց ու ավերեց Տփղիսը և այլ քաղաքներ: Օրհասական վիճակում հայտնված Ալեքսանդր Ա-ը գերադասեց հրաժարվել պետական գործերից, հոգևորական ձեռնադրվեց ու ավարտեց իր կյանքը վանքում: Նրան հաջորդեցին որդիները՝ Վախթանգ Գ-ը (1442-1446 թթ.) և Գիորգի Ը-ը (1446-1466 թթ.):

XV դարի երկրորդ կեսին կտրուկ վատթարացավ Վրաստանի արտաքին քաղաքական դրությունը, միաժամանակ խորացավ երկրի քաղաքական մասնատվածությունը:

1461 թվականին թուրք-օսմանցիները վերացրին Տրապիզոնի կայսրությունը և դարձան Վրաստանի անմիջական հարևանը: 1475 թվականին նրանց անցավ նաև Ղրիմի թերակղզին, ճնշող դարձավ թուրքերի վերահսկողությունը Սև ծովում: Այսպիսով՝ թուրքական վտանգը սպառնում էր Վրաստանին ինչպես հարավ-արևմուտքից, այնպես էլ հյուսիս-արևմուտքից: Միաժամանակ ուժեղացավ թուրքերի ազդեցությունը Հյուսիսային Կովկասում: Հետևաբար Վրաստանը, փաստորեն, զրկվեց Արևմուտքի հետ անմիջական կապեր պահպանելու հնարավորությունից, հայտնվեց քաղաքակրթական առումով բացարձակապես աննպաստ պայմաններում: Մշակութային հազարամյա ավանդույթների բնօրրան Բյուզանդիային փոխարինեց ռազմաավատատիրական ավազանու շահերին ծառայող, հարևանների նկատմամբ ագրեսիվորեն տրամադրված, դավանական խտրականություն վարող պետական հզոր կազմավորում:

Արևմտաեվրոպական երկրները, ելնելով իրենց քաղաքական շահերից, հետաքրքրություն էին դրսևորում միայն այն ռազմաքաղաքական ծրագրերի նկատմամբ, որոնք ուղղված էին թուրք-օսմանցիների դեմ: Հետևաբար, վրացական տիրակալները չէին կարող հույսեր կապել Արևմուտքի աջակցության հետ Ակ կոյունլուների ու հետագայում Սեֆյանների դեմ պայքարում:

Մերձավոր Արևելքում կատարված քաղաքական փոփոխությունների հետևանքով նախորդ դարերի ընթացքում Վրաստանով անցնող առևտրական ուղիները կորցրին երբեմնի նշանակությունը, երկիրը կորցրեց տարանցիկ առևտրի միջնորդի ավանդական դերը: Հնդկաստան տանող ծովային ուղու հայտնագործումից հետո Եվրոպայի համար աննպատակահարմար դարձավ Հնդկաստանի հետ կապող և Վրաստանով անցնող ցամաքային առևտրական ճանապարհից օգտվելը:

Վրաստանի տնտեսական հզորության թուլացմանը և արտաքին դրության վատթարացմանը զուգընթաց խիստ բացասական բնույթ ընդունեց երկրի ներքին սոցիալական զարգացումը: Թագավորական իշխանությունը զրկվեց իր գլխավոր գործառույթները կատարելու հնարավորությունից: Նա ի վիճակի չէր պաշտպանելու երկրի սահմանները, չէր ապահովում ներքին կարգն ու կանոնը, այլևս չէր կարողանում պահպանել հին դաշինքը իր սոցիալական հենարանը հանդիսացող հասարակական խմբերի հետ: Վրաստանի նախորդ բոլոր հաջողությունները պայմանավորված էին ազատ գյուղացիության մեծաթիվ շերտի առկայությամբ: Այդ խավն էր ապահովում երկրի ռազմական հզորությունը՝ մասնակցելով բանակի կազմավորմանը, և միաժամանակ ի վիճակի էր վճարելու պետական հարկերը: Մինչդեռ դարեր տևած արհավիրքների ժամանակաշրջանում ազատ գյուղացիությունը տնտեսական առումով վերջնականապես քայքայվել էր և կախվածության մեջ էր ընկել առանձին ավատատերերից: Միջին և մանր ազնվականության տնտեսական ու քաղաքական անկման հետևանքով այդ հասարակական խմբերը հեռացել էին թագավորական իշխանությունից ու սկսել էին ծառայել խոշոր ավատատերերին: Կենտրոնական իշխանության դիրքերը թուլացել էին նաև քաղաքային բնակչության քանակական նվազման, թագավորական իշխանության հետ դաշինքի խզման ու ապրանքադրամական հարաբերությունների դերի սահմանափակման հետևանքով: Այս ամենի արդյունքը եղավ սաթավադոների (խոշոր իշխանությունների) վերջնական ձևավորումը: XV դարից սկսած՝ թավադ (գլխավոր) էին կոչվում ավատատիրական վերնախավի անդամները, որոնք իրենց շահերը պաշտպանելու նպատակով դրսևորում էին տոհմային համախմբվածություն և պայքարի մեջ էին մտնում թագավորական իշխանության դեմ: Վրաց արքաները կորցրել էին վերահսկողությունը ընդհանուր պետական և անգամ արքունի հողերի նկատմամբ, որոնք անցել էին խոշոր ավատատերերի ձեռքը: Թավադները ստեղծում էին առանձնացված, ինքնաբավ տնտեսություն ունեցող, փակ տնտեսական համալիրներ, որոնք սոցիալ-տնտեսական նախադրյալներ էին ստեղծում ավատատիրական անջատողականության հաղթանակի համար: Ավատատիրական իմունիտետի տարածման պայմաններում թավադները իրենց տիրույթներում քաղաքական իշխանություն էին ձեռք բերում: Նրանք ունեին իրենց վարչական-ոստիկանական ապարատը, դատարանները, բանտերը, ամրոցները, զորաջոկատները և վերածվել էին ինքնուրույն տիրակալների: Հարկ եղած դեպքերում թավադները չէին խորշում նաև արտաքին թշնամու հետ զինական համագործակցությունից:

Պատմական զարգացման նման ընթացքի պայմաններում երկրի միասնության պահպանումը վեր էր առանց այդ էլ խիստ թուլացած թագավորական իշխանության ուժերից: Գիորգի Ը-ը հարկադրված էր իր կառավարման սկզբից ևեթ պայքար մղել Սամցխեի աթաբեկ Ղվարղվարե Ջաղելու դեմ, որը ձգտում էր առանձնացնելու իրեն պատկանող երկրամասը նաև եկեղեցական առումով: Ներքաղաքական բախումները կարճ ժամանակով ընդհատվեցին, երբ Արևմտյան Եվրոպայում հակաօսմանյան դաշինք ձևավորվեց, և նրան միանալու առաջարկությամբ Վրաստան ժամանեց Հռոմի պապի դեսպան Լուդովիկոս Բոլոնացին: 1460 թվականին վրաց տիրակալները պատրաստակամություն հայտնեցին իրենց զորքերով մասնակցելու թուրքերի դեմ արշավանքին, բայց եվրոպական երկրները այդպես էլ գործնական քայլեր չձեռնարկեցին:

Այս առթիվ Վրաստանում սկիզբ առած հիասթափությանը հաջորդեց հակամարտությունների և զինված բախումների նոր ալիքի ծավալումը: Սամցխեի աթաբեկ Ղվարղվարե Ջաղելին վերսկսեց Գիորգի Ը-ի դեմ պայքարը և ակ կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի օգնությամբ 1461 թվականին պարտության մատնեց վրաց արքային: Թշնամին վերադարձի ճանապարհին գրավեց Լոռեն և այնտեղ կայազոր տեղակայեց: 1462 թվականին ընդվզեց Իմերեթի տիրակալ Բագրատը: Գիորգի Ը-ը անցավ Արևմտյան Վրաստան և փորձեց զենքի ուժով հնազանդեցնել ըմբոստ իշխանին: Բագրատին օգնության հասան նրա ստորակաները՝ Աբխազքի, Սամեգրելոյի, Գուրիայի իշխանները, ինչպես նաև Սամցխեի աթաբեկ Ղվարղվարե Ջաղելին: Վրաց արքան նորից պարտություն կրեց, բայց վերջին հաշվով չշահեց նաև Բագրատը: Վերջինս 1463 թվականին թագավոր հռչակվեց Բագրատ Բ անունով, բայց հարկադրված էր թագավորական իշխանության նկատմամբ իրենց ունեցած պարտավորություններից ազատել իր ստորակա իշխաններին և այդպիսով նպաստել ավատատիրական անջատողականության հաղթանակին, այս անգամ արդեն Իմերեթի թագավորությունում: Այստեղ ձևավորվել էր ընդարձակ իշխանություն, որը ստացել էր Սաբեդիանո անվանումը: Նրա սահմանների մեջ մտնում էին Աբխազքը, Սամեգրելոն, Գուրիան և ծովափնյա նավահանգիստ-քաղաքները՝ Սուխումը, Փոթին և Բաթումը: Սաբեդիանոյի տերերը միաժամանակ ճանաչում էին Իմերեթի արքաների բարձրագույն իշխանությունը: 1466 թվականից Բագրատ Բ-ը համարվում էր նաև Քարթլիի թագավոր (Բագրատ Զ), բայց նրա իշխանությունը, փաստորեն, սահմանափակվում էր Արևմտյան Վրաստանով: Քարթլիում թագավորում էր միացյալ Վրաստանի արքա Ալեքսանդր Ա-ի թոռ Կոստանդին Բ-ը (1478–1505 թթ.), որը ևս չէր հրաժարվում երկիրը վերստին միավորելու ծրագրերից:

1478 թվականին Բագրատ Բ-ը վախճանվեց, իսկ նրա որդի Ալեքսանդրը չկարողացավ պահպանել իշխանությունը և հարկադրված էր քաշվել Ռաճա-Լեչխում: Իմերեթում 1479 թվականին գահ բարձրացավ Քարթլիի թագավոր Կոստանդին Բ-ը, բայց նա էլ չկարողացավ ամուր կերպով հաստատվել Արևմտյան Վրաստանում և այդպիսով գոնե մասամբ միավորել երկիրը: 1483 թվականին նա պարտություն կրեց Սամցխեի աթաբեկ Ղվարղվարե Ջաղելուց, և ստեղծված իրադրությունից օգտվեց Բագրատ Բ-ի որդի Ալեքսանդրը՝ 1484 թվականին Իմերեթում իրեն թագավոր հռչակելով Ալեքսանդր Բ անունով (1484–1510 թթ.):

Կատարյալ ձախողում կրած, միասնական Վրաստանի վերջին արքա Գիորգի Ը-ը ի վերջո հաստատվել էր Կախեթում և գահակալել Գիորգի Ա անունով: Քարթլիի թագավոր Կոստանդին Բ-ը և Կախեթի թագավոր Ալեքսանդր Ա-ը հաշտություն կնքելով համաձայնության եկան երկու թագավորությունների սահմանների ճշտման հարցում: Կոստանդին Բ-ի և Սամցխեի աթաբեկ Ղվարղվարեի միջև փոխադարձ համաձայնությամբ ճշտվեցին նաև Քարթլիի թագավորության և Սամցխեի աթաբեկության սահմանները: Այսպիսով՝ XV դարի վերջերին երկիրը վերջնականապես բաժանվեց երեք թագավորությունների (Իմերեթ, Կախեթ, Քարթլի)՝ վրաց Բագրատունիների (Բագրատիոնիների) տարբեր ճյուղերի գլխավորությամբ, և մեկ անկախ իշխանության (Սամցխեի աթաբեկություն), որը կառավարում էին Ջաղելիները:

4. ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XIV–XV ԴԱՐԵՐՈՒՄ

Մոնղոլական տիրապետության քաղաքական ու տնտեսական ծանր հետևանքները, Լենկ Թեմուրի ու թյուրքական ցեղախմբերի արշավանքներն ու ավերածությունները մեծապես խոչընդոտեցին Վրաստանի մշակութային առաջընթացին: Նախորդ դարաշրջանի ուսումնագիտական կենտրոնները խոշոր չափով սահմանափակեցին իրենց գործունեության շրջանակները: Մշակութային նշանավոր կենտրոն շարունակում էր մնալ Տփղիսը: Որոշակի գործունեություն էին ծավալում Քարթլիի վանքերը, որոնք դարձել էին առանձին իշխանությունների հոգևոր կենտրոններ: Վրաստանից դուրս գտնվող մշակութային օջախներից շատերը ևս կորցրել էին երբեմնի իրենց դերը: Խզվել էին մշակութային առնչությունները Բյուզանդիայի հետ: Մեծ ջանքերի գնով հաջողվեց պահպանել վրաց հոգևորականության իրավունքները Երուսաղեմի Սուրբ Խաչ վանքի նկատմամբ: Շարունակվում էր մշակութային գործունեությունը Պետրիծոնի վանքում:

Պատմագրության ասպարեզում առաջընթացը զգալի էր միայն XIV դարում: Գիորգի-Լաշայի ժամանակներից մինչև Գիորգի Պայծառի կառավարման սկիզբն ընկած շուրջ հարյուրամյա դարաշրջանը հանգամանորեն նկարագրվել է անհայտ հեղինակի աշխատությունում, որը ստացել է «Ժամանակագրություն» կամ «Հարյուրամյա մատյան» անվանումը: Ժամանակագիրը հիանալի կրթություն ստացած, անտիկ աշխարհի պատմությանը քաջատեղյակ, նաև այլ լեզուներով ստեղծված պատմական երկերին լավատեղյակ անձնավորություն է: Նա հստակորեն առաջնորդվում է որոշակի պատմագրական սկզբունքներով, մասնավորապես ձգտում է անկողմնակալ լինել պատմական դեպքերի գործունեությունը գնահատելիս, քանի որ «մատյանն այս վերաբերում է և բարեգործներին, և չարագործներին... ժամանակագրությունը ճշմարտասացություն է և ոչ աչառություն մեկի համար»: «Ժամանակագրությունը» անդրադառնում է ոչ միայն Վրաստանում, այլև հարևան երկրներում կատարված անցուդարձերին, մանրամասն ներկայացնում է մոնղոլների ձեռնարկած արշավանքները, նրանց կենցաղն ու բարքերը: «Քարթլիս ցխովրեբայի»

կազմի մեջ «Ժամանակագրության» ընդգրկումից հետո՝ հաջորդ դարի ընթացքում, Վրաստանի պատմության ժողովածուի լրացման ու շարունակման աշխատանքները տևական ժամանակով ընդհատվել են:

Միացյալ թագավորության անկման ու միասնականության զգացողության մոռացության տրվելու մասին են վկայում առանձին երկրամասերում ստեղծված աշխատությունները: XIV դարի երկրորդ կեսին շարադրված «Էրիսթավների հուշամատյանում» նկարագրվում են հիմնականում Քսան և Արագվի գետերի հովիտներում ծավալված դեպքերը: Հեղինակը՝ Ավգարոզ Բանդայիսաձեն, ձգտում է ապացուցելու Քսանի էրիսթավների իրավունքների հիմնավորվածությունը և համապատասխան ավանդույթների առկայությունը նաև անցյալում:

Ստեղծվում են արժեքավոր իրավաբանական հուշարձաններ: XIII–XIV դարերի սահմանագծում կազմվում է «Բեքայի և Աղբուղայի դատաստանագիրքը», որը գործում էր ոչ միայն Սամցխեում, այլև Վրաստանի այլ մասերում: Գիորգի Պայծառի օրոք վրացի լեռնականների ներկայացուցիչների մասնակցությամբ կազմվեց «Ձեգլիս դեբա» («Օրինադրություն») օրենսդրական ժողովածուն: XIV դարում է շարադրվել նաև «Խելմծիփիս կարիս գարիգեբա» («Կարգադրումն արքունի դրան») երկը, որը հանգամանորեն նկարագրում է արքունիքի կառուցվածքը, պալատական արարողությունները, գործակալությունների գործառույթները, պաշտոնյաների իրավասությունների շրջանակը, պետական կառուցվածքի հետ կապված բազմազան այլ հարցեր: XIV–XV դարերից պահպանվել են նաև զգալի թվով փաստաթղթեր, որոնք որոշակի արժեք են ներկայացնում որպես իրավունքի հուշարձաններ:

XIV–XV դարերում ստեղծված գրական աչքի ընկնող հուշարձաններ չեն պահպանվել: Գրի են առնվել առանձին վկայաբանություններ, խմբագրվել են նախորդ դարերի վարքագրական հուշարձանները: Այս ժամանակաշրջանում ընդօրինակված ձեռագրերը իրենց գրչության արվեստով և գեղարվեստական ձևավորմամբ զգալիորեն զիջում են նախորդ դարերի լավագույն նմուշներին: Անկումը նկատելի է նաև որմնանկարչության ասպարեզում, բացառություն են կազմում միայն Սամցխեում կառուցված հուշարձանների որմնանկարները: Ընդհանուր պատկերը չեն խախտում նաև արվեստի այլ բնագավառների վիճակի մասին վկայող նյութերը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XVI–XVII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՎՐԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVI ԴԱՐՈՒՄ

XV դարի երկրորդ կեսին՝ Վրաստանի քաղաքական մասնատումը իրողություն դառնալուց հետո, երբ ձևավորվեցին Քարթլիի, Կախեթի, Իմերեթի թագավորությունները և Սամցխե–Սաաթաբագոյի աթաբեկությունը (սաաթաբագո), և 1490 թ. Քարթլիի թագավորական խորհուրդը արձանագրեց Վրաստանի քաղաքական մասնատման փաստը, իսկ թագավորներն ու Սամցխեի աթաբեկը 1491–1492 թթ. ստորագրեցին հաշտության պայմանագիր ու միմյանց միջև հաստատեցին սահմանաբաժանումը, հիմնականում ավարտին հասավ Վրաստանի տրոհման գործընթացը: Միասնական պետության գաղափարը, սակայն, գոյատևում էր թագավորությունների անվանման մեջ, և միասնականության վերականգնման միտումը շարունակվում էր նաև հետագայում: Քարթլիի, Կախեթի և Իմերեթի թագավորությունները շարունակում էին «գահերի միավորման» համար պայքարում իրենց անվանել «արքայից արքա»: Նման անվանումը թագավորների համար թեև զուրկ էր իրական բովանդակությունից, սակայն յուրաքանչյուրը սպասում էր հարմար ժամանակի՝ իր հավակնություններն իրականացնելու համար: Քաղաքական մասնատման գործընթացը, սակայն, գնալով ավելի էր խորանում: XV–XVI դարերի սահմանագլխին Քարթլիում արդեն գոյություն ունեին Քսանի և Արագվիի խոշոր իշխանությունները, Ամիլախվարիների տիրույթ՝ Սաամիլախորոն, Ցիցիշվիլիների տիրույթ՝ Սացիցիանոն, և Բարաթաշվիլիների տիրույթ՝ Սաբարաթիանոն: Կախեթում առավել հզոր իշխաններից էին Չոլողաշվիլիները, Սամցխեի աթաբեկությունում՝ Ջաղելիներն ու Շալիկաշվիլիները: Իմերեթի թագավորության մեջ իրենց կիսանկախ վիճակն էին ապահովել Մեգրելիայի և Գուրիայի կառավարիչները, որոնք XVI դարի կեսերին դարձան գրեթե լրիվ անկախ (Բեդիաններ): Իշխանապետությունները հետագա հզորացումը փորձում էին իրականացնել իրենց հարևանների հաշվին, ուստի և նրանց միջև ֆեոդալական պայքարն ու կռիվները սովորական երևույթ էին: Առանձին իշխանապետությունների մասնատվելուց հետո Վրաստանը վերածվեց ներքաղաքական պայքարի ասպարեզի:

Քարթլիում Կոստանդին Բ–ից (1478–1505 թթ.) հետո գահ բարձրացավ Դավիթ Ժ թագավորը (1505–1525 թթ.): Նա Մուխրանը հանձնեց իր եղբորը՝ Բագրատին, որով և սկիզբ դրվեց Բագրատունիների Մուխրանի ճյուղին, իսկ Կախեթը կարճ ժամանակով միավորեց իր տիրույթներին:

Այսպիսին էր Վրաստանի ներքաղաքական իրավիճակի ընդհանուր բնութագիրը այն շրջանում, երբ Վրաստանի վրա կախվում էր օսմանյան պետության ու Իրանի կողմից նվաճվելու վտանգը: XVI դարում Մերձավոր Արևելքում և Կովկասում իրենց գերակայությունը հաստատելու համար օսմանյան և սեֆյան պետությունների պայքարը հասել էր իր առավել վճռական փուլին:

1518 թ. Սեֆյանները ներխուժեցին Քարթլի: Դավիթ Ժ-ը պարտավորվեց հարկ վճարել Սեֆյաններին: Դավիթ Ժ թագավորը երկրում իրականացրեց մի շարք բարենորոգումներ: Նա Քարթլին բաժանեց չորս ռազմավարչական միավորի՝ զորավարությունների (սադրոշո), որոնցից մեկը Ջեմո (Վերին) Քարթլին էր, որ ամիլախորի հրամանատարության ներքո էր: Առաջատար էր համարվում Սոմխիթ-Սաբաթիանո զորամիավորումը, որը ևս իշխանական հրամանատարության ներքո էր: Երրորդը Մուխրանի, իսկ չորրորդը թագավորի զորավարությունն էր, որը ևս թագավորը հանձնում էր այս կամ այն իշխանի հրամանատարությանը: Թագավորի այս բարեփոխումը, սակայն, ոչ միայն չսասանեց իշխանական տների դիրքերը, այլև առավել հզորացրեց նրանց: Զորամիավորման հրամանատարի պաշտոնը Քարթլիում աստիճանաբար դառնում էր ժառանգական:

Վրաստանում վերջնականապես հաստատվելու նպատակով Սեֆյանները 1520 թ. կրկին արշավեցին Քարթլի: Դավիթ Ժ-ը պարտություն կրեց: Պարսիկները գրավեցին Տփղիսը: Դավիթ Ժ-ը 1524 թ. կրկին գրավեց քաղաքը, սակայն 1525 թ. ստիպված էր թողնել գահը, ձեռնադրվել հոգևորական, որից հետո գահը պետք է անցներ նրա որդուն՝ Լուարսաբին: Սակայն գահը գրավեց Դավիթ Ժ-ի եղբայրը՝ Գիորգի Թ-ը (1525-1527 թթ.): Գահակալական պայքարի արդյունքում Լուարսաբին հաջողվեց իր աներոջ՝ Իմերեթի թագավոր Բագրատ Գ-ի օժանդակությամբ գրավել գահը:

Լուարսաբ Ա-ը (1527-1556 թթ.) և Բագրատ Գ-ը գործում էին համաձայնեցված: 1535 թ. Բագրատ Գ-ը գրավեց Սամցխեն, իսկ Լուարսաբը՝ Ջավախքը: Իսմայիլից հետո գահակալած շահ Թահմասպի հրամանով 1541 թ. Սեֆյանները կրկին ներխուժեցին Քարթլի և գրավեցին Տփղիսը: Լուարսաբը պարսիկների դեմ վարում էր պարտիզանական պայքար, իսկ վերջիններս փորձեցին անցնել նաև Արևմտյան Վրաստան՝ Իմերեթ: 1545 թ. օսմանների դեմ Սոխոիստայի ճակատամարտում Բագրատ Գ-ը պարտություն կրեց և ստիպված էր հրաժարվել նաև Սամցխեից: Սամցխեի աթաբեկ Քայխոսրո Գ-ը օգնություն խնդրեց շահ Թահմասպից, որը և չհապաղեց օգտագործել առիթը: 1547 թ. Սեֆյանները ներխուժեցին Սոմխիթ ու Ջավախք և մեծ ավերածություններ կատարեցին: Իր հերթին Լուարսաբ թագավորը 1551 թ. գրավեց Սամցխեի մի մասը: Շահ Թահմասպը երրորդ անգամ արշավեց Քարթլի, գրավեց ու ավերեց Վարձիան: Շահ Թահմասպի հեռանալուց հետո ևս Լուարսաբը շարունակում էր պայքարը: 1554 թ. շահ Թահմասպը չորրորդ անգամ ներխուժեց Քարթլի: Այս անգամ պարսիկները գրավեցին Գորիի ու Ատենի բերդերը, գերեցին թագավորի մորը, սակայն չկարողացան հաղթահարել թագավորի դիմադրությունը և հնազանդեցնել Քարթլին: 1555 թ. Ամասիայի պայմանագիրը օսմանների և Սեֆյանների միջև բաժանում էր ինչպես Հայաստանը, այնպես էլ Վրաստանը: Նշված պայմանագրով Արևելյան Վրաստանը անցնում էր Սեֆյան Իրանին, իսկ Արևմտյան Վրաստանը՝ օսմանյան Թուրքիային, ինչն արդեն անհնարին էր դարձնում Վրաստանի միավորման ուղղությամբ պայքարի ծավալումը: Միաժամանակ Սեֆյանների և օսմանների ձեռքերն ազատվում էին՝ իրենց ենթակա տարածքներում բնակչությանը հնազանդեցնելու միջոցների դիմելու համար:

1556 թ. Քարթլի ներխուժեց Ղարաբաղի բեկլարբեկը: Ճակատամարտի ժամանակ Լուարսաբ թագավորը մահացու վիրավորվեց: Քարթլիում նրան հաջորդեց որդին՝ 19-ամյա Սիմոն Ա-ը:

Սիմոն Ա-ը անդուլ պայքար սկսեց Քարթլին թուրք-պարսկական տիրապետությունից ազատագրելու համար: 1561 թ. նա փորձ կատարեց ազատագրելու Տփղիսը, սակայն հաջողություն չունեցավ: Իրանի շահը Տփղիսի կառավարիչ նշանակեց Սիմոնի եղբորը՝ մահմեդականություն ընդունած Դավիթին (Դավութ-խան): Սիմոնը, սակայն, շարունակում էր պայքարը: 1569 թ. Սեֆյանները կրկին խոշոր բանակով ներխուժեցին Քարթլի: Սիմոնը գերի ընկավ, տարվեց Իրան և փակվեց Անհուշ բերդում: Քարթլիում օրինական թագավոր էր համարվում Դավութ-խանը (Դավիթ ԺԱ, 1569-1578 թթ.):

1578 թ. խախտելով Ամասիայի պայմանագիրը և Զըլդրի ճակատամարտում պարտության մատնելով Սեֆյան բանակին՝ օսմանները ներխուժեցին Այսրկովկաս: Թուրքական բանակը գրավեց Տփղիսը: Դավութ խանը փախավ Ղրիմ, ապա հպատակություն հայտնեց օսմանյան սուլթանին: Օսմանները ամրապնդվում էին ոչ միայն Տփղիսում, որը դարձավ փաշայի նստավայրը, այլև ողջ Հարավային Կովկասի տարածքում: Սեֆյանները ի վիճակի չէին դիմագրավելու օսմաններին: Նման պայմաններում շահի պալատում որոշվեց օսմանների դեմ պայքարը գլխավորելու համար ազատ արձակել Սիմոնին: 1582 թ. Սիմոնին հաջողվեց պարտության մատնել Քարթլի ներխուժած օսմանյան բանակին, իսկ օսմաններին միացած Սամցխեի աթաբեկ Մուստաֆան (Մանուչարը) կրկին ընդունեց քրիստոնեություն և պայքարը շարունակեց օսմանների դեմ:

1590 թ. կնքված պայմանագրով շահ Աբբաս Առաջինը (1587-1629 թթ.) ճանաչեց օսմանների տիրապետությունը Հարավային Կովկասի ու Ատրպատականի նկատմամբ: Վրաստանում թուրքերի դեմ պայքարը շարունակում էր Սիմոն թագավորը: 1598 թ. օգոստոսին նա հակաթուրքական պայքարում օգնության խնդրանքով հերթական անգամ նամակ ուղարկեց Իսպանիայի Ֆիլիպ Բ թագավորին, որն, ի դեպ, գրված էր հայերեն և հունարեն: Նամակատարը ամենայն հավանականությամբ այս անգամ ևս եղել է Էջմիածնի նվիրակ Հակոբ Մարգարյան Ամդեցին, քանզի վերջինս դեռևս 1597 թ. հունիսի 22-23-ին՝ Վենետիկի հանրապետության իշխանությունների կողմից հարցաքննության ժամանակ, հայտնել էր, թե Իրանից մեկնելուց հետո ինքը եղել է վրաց Ալեքսանդր և Սիմոն «իշխանների» մոտ, որոնք ևս նամակներ են տվել Հռոմի պապին հանձնելու համար, և որ ինքը «թղթեր» ունի նաև վրաց պատրիարքից:

Ինն ամիս պաշարելուց հետո Սիմոնը 1599 թ. գրավեց Գորի քաղաքը, ապա շարժվեց դեպի Տփղիս: Օսմանները լրացուցիչ զորք ուղարկեցին Տփղիս: Ճակատամարտում Սիմոնը գերի ընկավ, տարվեց Թավրիզ և ապա փոխադրվեց Կ. Պոլիս, որտեղ և կնքեց իր մահկանացուն[20]: Գահն անցավ Սիմոնի որդուն՝ Գիորգի Ժ-ին (1600–1606 թթ.):

XV դարում Կախեթը ևս բաժանված էր համեմատաբար խոշոր վարչատարածքային միավորների (էրիսթավություններ): Էրիսթավները ձգտում էին իրենց կառավարմանը հանձնված տարածքները դարձնելու ժառանգական: Այդ է պատճառը, որ Կախեթի թագավոր Գիորգի Ա-ը աստիճանաբար վերացրեց էրիսթավությունները և Կախեթը բաժանեց ավելի փոքր վարչական միավորների՝ մոուրավությունների (խնամակալությունների): Մոուրավները տեղերում թագավորի կողմից նշանակված կառավարիչ-պաշտոնյաներ էին, որոնց իրավասությունները նախապես գրավոր սահմանվում էին: Լինելով թագավորի լիազոր ներկայացուցիչները՝ նրանք չէին կարող ընդվզել թագավորի դեմ, քանի որ չունեին զորք, ինչը էրիսթավների հզորության հիմնական աղբյուրն էր: Էրիսթավությունների վերացման հետ միաժամանակ վերացվեցին նաև նրանց զորամասերը: Միաժամանակ Կախեթը բաժանվեց չորս զորավարությունների, որոնց հրամանատարներ նշանակվեցին, սակայն, ոչ թե իշխանները, ինչպես Քարթլիում, այլ եպիսկոպոսները (Ռուսթավի, Բոդբիի, Ալավերդու և Նեկրեսի), որով զորահրամանատարությունը չէր կարող վերածվել ժառանգական պաշտոնի: Այս բարեփոխումները մեծացրին մանր ու միջին ազնվականների քանակը, որոնք դարձան թագավորի սոցիալական հենարանը և ամրապնդեցին նրա իշխանությունը:

Գիորգի Ա-ի մահից հետո գահը ժառանգեց նրա որդին՝ Ալեքսանդր Ա-ը (1476–1511 թթ.): Ալեքսանդր Ա-ը 1483 թ. դեսպանություն ուղարկեց Ռուսաստան՝ Մոսկվայի մեծ իշխան Իվան Գ-ի մոտ: Թուրքմենական ակ կոյունլուների սպառնալիքներին դիմագրավելու համար օժանդակություն ստանալու նպատակով նա մեկ այլ դեսպանագնացություն կազմակերպեց նաև 1491 թ., սակայն այս անգամ ևս օժանդակություն չստացավ:

Ալեքսանդր Ա-ի գահակալության շրջանում Իրանում ակ կոյունլուներին, որին հարկատու էր Ալեքսանդր Ա-ը, փոխարինեց Սեֆյանների տիրապետությունը, որոնց հետ դաշնակցությունը որոշ թեթևություն բերեց երկրին: Ալեքսանդրի որդին՝ Գիորգին, սակայն, հաճախակի կողոպտչական արշավանքներ կատարելով դեպի Քարթլի, հարուցում էր հոր դժգոհությունը և, հերթական բանակովի ժամանակ սպանելով հորն ու կուրացնելով եղբորը, որին կասկածում էր գահի նկատմամբ հավակնություններ ունենալու մեջ, ինքը դարձավ Կախեթի թագավոր՝ վաստակելով Ավ Գիորգի (Չար Գիորգի) մականունը: Դեպի Քարթլի կատարած հերթական արշավանքի ժամանակ Ավ Գիորգին մարտի ժամանակ գերվեց Քարթլիի թագավոր Դավիթ Ժ-ի եղբոր՝ Մուխրանի կառավարիչ Բագրատի կողմից և մահացավ բանտում 1513 թ.: Օգտվելով այդ առիթից՝ Դավիթ Ժ-ը Կախեթը միավորեց Քարթլիի

[20] Մահացավ 1611 թ.: Դին բերվեց և հուղարկավորվեց Լուարսաբ Ա-ի մոտ՝ Սվետիցխովելիում:

հետ: Կախեթի իշխանները կարողացան Ավ Գիորգիի մանկահասակ որդուն՝ Լևանին, թաքցնել Դավիթ Ժ-ի կողմից գերեվարվելու վտանգից, իսկ 1518 թ., օգտվելով Սեֆյանների կողմից Քարթլի կատարած արշավանքի ընթացքում Դավիթ Ժ-ի բացակայությունից, Լևանին հռչակեցին Կախեթի թագավոր և հանդիսավորությամբ օծեցին Բոդբիի վանքում: 1520 թ. Լևանը հաղթանակ տարավ Դավթի դեմ ճակատամարտում և ամրապնդվեց Կախեթի գահին (1518–1574 թթ.): Լևանը որդեգրեց իր պապի՝ Ալեքսանդր Ա-ի արտաքին-քաղաքական ուղին և փորձում էր ճկուն դիվանագիտությամբ ու նվազագույն հարկ վճարելու պայմաններով լավ հարաբերություններ պահպանել Սեֆյանների հետ, սակայն Ամասիայի պայմանագրից հետո շահը Կախեթից անջատեց Սահնգիլոյի մի մասը և միացրեց 1551 թվականից Սեֆյաններին անցած Շաքիի իշխանությանը: 1561 թ. Լևանը պատվիրակություն ուղարկեց Ռուսաստան՝ Իվան Ահեղ ցարի մոտ, ով արդեն գրավել էր Կազանն ու Աստրախանը: 1557 թ. Կաբարդան ևս ընդունել էր ցարի հպատակությունը: Իրոք, շուտով Կաբարդա ժամանեց ռուսական 500 հոգանոց մի զորաջոկատ, և ամրոց կառուցվեց Թերեքի կիրճում: Զորաջոկատի մի մասն անցավ Կախեթ, որին Լևանը տեղաբաշխեց Դաղստանի հետ սահմանակից ամրոցներում: Իվան Ահեղի այդ գործողությունների դեմ բողոքեցին օսմանյան և Սեֆյան իշխանությունները, Ղրիմի խանը արշավանք ձեռնարկեց դեպի Աստրախան և դեպի Մոսկվա, իսկ Իվան Ահեղը, զբաղված լինելով Լիվոնյան պատերազմով (1558–1583 թթ.), ստիպված էր տեղի տալ, ետ կանչել զորաջոկատը Կախեթից և քանդել Թերեքի կիրճում կառուցված ամրոցը:

Լևանի մահից հետո գահը ժառանգեց նրա որդին՝ Ալեքսանդր Բ-ը (1574–1605 թթ.): Ալեքսանդր թագավորը ուներ մոտ 15 հազարանոց բանակ, որից երեք հազարն էր միայն հետևակ, իսկ մնացածը՝ հեծելազոր: Ի տարբերություն վրաց այլ թագավորությունների՝ Կախեթի թագավորությունը XVI դարում տնտեսապես համեմատաբար բարեկեցիկ վիճակում էր: 1578 թ. Տփղիսը գրավելուց հետո, օսմանյան բանակի հրամանատար Մուստաֆա Լալա փաշան արշավեց Կախեթ: Ալեքսանդր Բ-ն շտապեց հնազանդություն հայտնել փաշային և հարկ վճարելու պարտավորություն ստանձնել:

Օսմաններին դիմակայելու նպատակով, ինչպես արդեն նշվել է, Սեֆյանները ազատեցին բանտարկության մեջ գտնվող Քարթլիի Սիմոն թագավորին և Կախեթի Ալեքսանդր թագավորի եղբորը՝ գահի հավակնորդ Իեսեին՝ վերջինիս նշանակելով Շաքիի կառավարիչ: Հասկանալով վտանգը՝ Ալեքսանդրը արշավեց Շաքի, պարտության մատնեց եղբորը և այնտեղ կառավարիչ նշանակեց իր որդուն՝ Հերակլին: Օսմանյան օժանդակություն ստանալու անհուսությունը Ալեքսանդրին ստիպեց կրկին հայացքն ուղղել դեպի հյուսիս: 1585 թ. Կախեթ էր ժամանել ռուսական պետության դեսպանությունը, որին ի պատասխան՝ 1586-ին Ալեքսանդրը ևս դեսպանություն առաքեց Մոսկվա: 1587 թ. Ալեքսանդրը ստորագրեց հպատակության երդմնագիր, որին հաջորդեց Ֆեոդոր ցարի հրովարտակը: Ձևավորվում էր երկկողմ պայմանագիր, ըստ որի՝ Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնում պաշտ-

պանելու Կախեթը թշնամիներից, իսկ Կախեթը պետք է օժանդակեր Ռուսաստանին Հյուսիսային Կովկասում ռազմական գործողությունների ժամանակ:

Կախեթի թագավորների այս եռակողմ դիվանագիտությունը ուղղված էր երկրի անվտանգությունը ապահովելու խնդրին, ինչը որոշակի ժամանակահատվածում արդարացնում էր իրեն:

Իմերեթի թագավոր Ալեքսանդր Բ–ը հավակնություններ ուներ ոչ միայն Մեգրելիայի, Գուրիայի, Սվանեթի և Աբխազիայի, այլև Քարթլիի նկատմամբ: 1509 թ. նա արշավեց Քարթլի, գրավեց Գորի քաղաքը, սակայն օսմանցիների հարձակումը Քութայիսի վրա նրան ստիպեց ետ դառնալ: Ալեքսանդր Բ–ին Իմերեթի գահի վրա հաջորդեց նրա որդին՝ Բագրատ Գ–ը (1510–1565 թթ.): 1535 թ. Բագրատ Գ–ը արշավեց Սամցխե, գերի վերցրեց աթաբեկ Ղվարղվարե Ջաղելուն: Սակայն Սամցխեի իշխանները դիմեցին օսմանների օգնությանը, իսկ Բագրատն էլ իր հերթին օսմանների դեմ օգնության խնդրանքով դիմեց Սեֆյան շահ Թահմասպին: 1543 թ. Բագրատ Գ–ին հաջողվեց պարտության մատնել օսմանյան 20 հազարանոց բանակին, սակայն 1545 թ. թուրքական նոր բանակի հետ Բասենի Սոխոիստա վայրում ճակատամարտն ավարտվեց վրացական զորքի պարտությամբ: Արևմտյան Վրաստանի իշխանական տներին ևս, որոնք դարձան ավելի ինքնուրույն և չէին ենթարկվում Բագրատ Գ–ին, թագավորական իշխանության հզորացումն ընդունելի չէր:

Օսմանյան կողմը խրախուսում էր մարդավաճառությունը, որը մեծ ծավալներ ընդունեց Արևմտյան Վրաստանում: Մարդավաճառությունն արգելելու նպատակով հրավիրվեց եկեղեցական ժողով, սակայն սահմանված դաժան պատիժներն անգամ չկասեցրին այդ երևույթը:

Բագրատ Գ–ի ժամանակ Արևմտյան Վրաստանի կաթողիկոսանիստը Բիձվինթայից փոխադրվեց Գելաթ, ինչը նպատակ ուներ բարձրացնելու Իմերեթի թագավորության դերակատարումը նաև հոգևոր–եկեղեցական կյանքում:

Բագրատ Գ–ի մահից հետո գահը ժառանգեց նրա որդին՝ Գիորգի Բ–ը (1565–1583 թթ.), որի գահակալության տարիներին հարաբերությունները կրկին սրվեցին Գուրիայի և Օդիշի իշխանների հետ, գահակալական հավակնություններ դրսևորեցին Գիորգիի հորեղբայրն ու հորեղբոր որդիները: Իրավիճակից փորձեց օգտվել Քարթլիի Սիմոն թագավորը: Վերջինս անգամ գրավեց Քութայիսը, սակայն ստիպված էր կրկին վերադառնալ Քարթլի: Սիմոնի հեռանալուց հետո Գիորգին վերստին գրավեց գահը, սակայն Դադիանիի կողմից ձեռնարկված արշավանքի ընթացքում պարտվեց, գերի ընկավ և մահացավ բանտում: Գիորգիի մահից հետո Իմերեթում գահակալական կռիվներն ավելի սաստկացան:

XVI դարում օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի համար սկզբունքային ռազմավարական նշանակություն ստացավ Սամցխեի նկատմամբ վերահսկողություն սահմանելու խնդիրը: Սամցխեում իշխող Մզեձաբուկ աթաբեկը (1500–1515 թթ.) ի վիճակի չէր դիմագրավելու օսմանցիներին և օսմանյան բանակին թույլատրում էր իր տարածքներով արշավել դեպի Իմերեթ: 1515 թ.՝ Մզեձաբուկի մահից հետո, գահակալական պայքար սկսվեց նրա եղբայր Մանուչարի և եղբորորդի Ղվարղվարեի

միջև: Մանուչարը օսմանների օժանդակությամբ պարտության մատնեց Ղվարղվարեին, վերջինս էլ իր հերթին, օգնություն ստանալով Սեֆյաններից, գրավեց Սամցխեն: Ի հատուցումն այդ օգնության՝ Ղվարղվարե Գ–ը (1516–1535 թթ.) դարձավ շահի հպատակը և Սեֆյան բանակի հետ 1518 թ. մասնակցեց Քարթլի կատարած արշավանքին: Իմերեթի թագավոր Բագրատ Գ–ի՝ Սամցխե կատարած արշավանքի ժամանակ Ղվարղվարեն գերի ընկավ (1535 թ.), և Սամցխեն մոտ տասը տարի գտնվում էր Իմերեթի թագավորի ենթակայության ներքո: Չհանդուրժելով իմերեթական գերիշխանությունը՝ Սամցխեի ազդեցիկ իշխաններից Օթար Շալիկաշվիլին, օսմանյան սուլթանին հանձնելով Ղվարղվարեի անչափահաս Քայխոսրո որդուն, օգնություն խնդրեց Բագրատի դեմ պայքարի համար:

1545 թ. Էրզրումի և Դիարբեքիրի փաշաների գլխավորությամբ օսմանյան զորքերը ներխուժեցին Սամցխե: Սոխոիստի ճակատամարտում Բագրատ Գ–ի և Քարթլիի թագավոր Լուարսաբ Ա–ի պարտությունից հետո օսմանները գրավեցին Սամցխեն և այնտեղ սկսեցին կատարել վարչական նոր բաժանումներ: Դա օսմանցիների կողմից Սամցխեում հաստատվելու առաջին փորձն էր: Սամցխեում իշխանությունը հանձնվեց Ղվարղվարեի որդուն՝ Քայխոսրո Բ–ին (1545–1573 թթ.):

Լուարսաբը, սակայն, կարողացավ պահպանել Ջավախքը: Քայխոսրո Բ–ը Լուարսաբի դեմ պայքարի համար դաշնակցություն առաջարկեց Սեֆյան շահ Թահմասպին: Օսմանյան կողմի համար Քայխոսրո Բ–ի նման դիրքորոշումը չէր կարող ընդունելի լինել, ուստի 1550–ական թվականներին նրանք վերսկսեցին ռազմական գործողությունները: 1555 թ. Ամասիայի պայմանագիրը վավերացրեց Սամցխեի բաժանումը Իրանի և օսմանյան պետության միջև:

Քայխոսրոյի մահից հետո աթաբեկ դարձավ նրա որդին՝ Ղվարղվարե Դ–ը (1573–1581 թթ.), որի կառավարման ժամանակ իշխանական տների միջև ներքաղաքական պայքարը ավելի սրվեց: Թուրք–պարսկական պատերազմի վերսկսումով 1578 թ. օսմանյան բանակները Մուստաֆա Լալա փաշայի հրամանատարությամբ գրավեցին Սամցխեի աթաբեկությունը: Ղվարղվարեի եղբայր Մանուչարն ընդունեց օսմանյան հպատակություն: Թուրքերի կողմից Ախալցխայի գրավումից հետո օսմանյան հպատակություն ընդունեց նաև Ղվարղվարեն, սակայն սուլթանի հրամանով աթաբեկությունը Սամցխեում վերացվեց, և ստեղծվեց Չըլդրի (Ախալցխայի) փաշայություն, կատարվեց վարչական նոր բաժանում: Չըլդրի կառավարումը հանձնվեց մահմեդականություն ընդունած Մանուչարին (1581–1607 թթ.) (որին անվանակոչել էին Մուստաֆա): 1582 թ. Մանուչարը, սակայն, կրկին ընդունեց քրիստոնեություն և ամուսնացավ Քարթլիի Սիմոն թագավորի դստեր հետ: Թուրքական բանակը 1587 թ. վերստին ներխուժեց Սամցխե, Մանուչարը Սիմոնից սպասված օգնությունը չստացավ, և թուրքերին հաջողվեց գրավել Ախալցխան, իսկ Մանուչարը ստիպված էր հեռանալ Սամցխեից: 1590 թ. թուրք–իրանական հաշտության նոր պայմանագրով Սամցխեն ամբողջությամբ մնաց օսմանյան տիրապետության ներքո, որտեղ հաստատվեց օսմանյան կառավարում: Աթաբեկությունը բաժանվեց ութ սանջակների: Կատարվեց մարդահամար, և կազմվեց այսպես կոչված «Գուր-

ջիստանի վիլայեթի մեծ դավթար» հարկամատյանը: Հարկամատյանում արձանագրված են 1160 գյուղ, որից 300-ը՝ անմարդաբնակ: Գուրջիստանի վիլայեթում սկսեց մեծ տարածում ստանալ դավանափոխությունը, խրախուսվում էր մահմեդականության ընդունումը, որը միակ հնարավորությունն էր հողային սեփականատիրական իրավունքներն ու կալվածքները պահպանելու համար:

2. ՇԱՀ ԱԲԲԱՍ Ա-Ի ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՍԿԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

XVII դարի առաջին տասնամյակները լուրջ փորձության ժամանակաշրջան դարձան վրաց պետականության համար: 1603 թ. վերսկսվեցին թուրք-իրանական պատերազմները: Իրանի շահ Աբբաս Առաջինը խոշոր բանակով ներխուժեց Այսրկովկաս, պաշարեց Երևանը և իր մոտ հրավիրեց Քարթլիի և Կախեթի թագավորներին: Քարթլիի թագավոր Գիորգի Ժ-ը և Կախեթի թագավոր Ալեքսանդր Բ-ը ներկայացան շահին: Շահը նրանց գյուղեր նվիրեց Իրանում և նշանակեց գանձարանից հատկացվող «վարձատրություն»: Փոխարենը շահը Քարթլիի թագավորից պահանջեց Լոռին, իսկ Կախեթի թագավորից՝ Սահնգիլոյի մի մասը: Այդ տարածքներում շահը վերաբնակեցրեց թուրքմենական ցեղախմբեր (Լոռիում՝ բորչալու ցեղախմբին): Շահը Գիորգիին թույլատրեց վերադառնալ Քարթլի, իսկ Ալեքսանդր Բ-ին իր հետ տարավ Իրան: Ալեքսանդրի բացակայության ժամանակ Կախեթը կառավարում էր նրա որդին՝ Գիորգի արքայազնը:

1605 թ. սկզբին շահ Աբբաս Առաջինը Ալեքսանդր Բ-ին և Իրանում մահմեդականություն ընդունած նրա Կոստանդին որդուն ետ ուղարկեց Կախեթ՝ հանձնարարելով արշավել Շիրվան և այնտեղ կառավարիչ կարգել Կոստանդին Միրզային: Սակայն Կոստանդին Միրզան նույն թվականի մարտի 12-ին սպանել տվեց հորը և եղբորը, ինքը հռչակվեց Կախեթի թագավոր և արշավեց դեպի Շիրվան: Դեպի Շիրվան կատարած արշավանքն անհաջող էր, իսկ Կախեթում ապստամբություն բռնկվեց Կոստանդինի դեմ: Ապստամբների հետ ընդհարման ժամանակ Կոստանդինը սպանվեց, ու թագավոր հռչակվեց Թեյմուրազ Ա-ը (1606-1648 թթ.): Նույն թվականին Քարթլիում մահացած Գիորգի Ժ-ին հաջորդեց նրա որդին՝ Լուարսաբ Բ-ը (1606-1614 թթ.):

1609 թ. վերսկսվեցին Իրանի արշավանքները դեպի Քարթլի, Լուարսաբը կարողացավ խույս տալ բաց ճակատամարտից, իսկ շահական զորքերը ուղղվեցին դեպի Ախալցխա: Թբիլիսիի կառավարիչ (մոուրավի) Գիորգի Սաակաձեն, որ Լուարսաբի քրոջ ամուսինն էր, կարողացավ կտրել պարսիկների ճանապարհը և պարտության մատնել նրանց: Գիորգիի այս հաղթանակը մեծացրեց նրա հեղինակությունը, ինչն ընդունելի չէր Քարթլիի մեծատոհմիկների համար: Լուրեր տարածվեցին, թե իբր նա ձգտում է թագավորական գահին, ուստի թագավորի համաձայնությամբ դավադրություն կազմակերպվեց նրա դեմ: Գիորգի Սաակաձեին հաջողվեց հեռանալ Իրան:

1612 թ. կնքվեց թուրք-պարսկական հաշտության պայմանագիր, որով հիմնականում վերականգնվեցին Ամասիայի պայմանագրի սահմանները՝ այս անգամ Սամցխեն ամբողջությամբ թողնելով օսմանյան տիրապետության ներքո:

Արևելյան Վրաստանը, թեև համարվում էր շահի ենթակայության ներքո գտնվող տարածք, փաստական առումով դեռևս չէր հնազանդվել շահ Աբբաս Ա-ին: 1613 թ. շահը նոր բանակով արշավեց Գանձակ և պատանդներ պահանջեց Կախեթի թագավոր Թեյմուրազ Ա-ից: Թեյմուրազը չէր ցանկանում պատանդներ ուղարկել, սակայն մեծատոհմիկներից օժանդակություն չստանալով՝ ստիպված եղավ ուղարկել Քեթևան թագուհուն և երկու որդիներին՝ Լևանին ու Ալեքսանդրին: Շահ Աբբասը 1614 թ. գարնանը ներխուժեց Կախեթ: Թեյմուրազին հաջողվեց խույս տալ շրջապատումից և անցնել Քարթլի: Շահի զորքերը ներխուժեցին նաև Քարթլի, իսկ Լուարսաբ և Թեյմուրազ թագավորները հեռացան դեպի Իմերեթ: Բանագնացի միջոցով շահը իր մոտ հրավիրեց նրանց, Լուարսաբը հավատաց շահի խոստումներին և ներկայացավ նրան: Շահական զորքերը մեծ կողոպուտից հետո վերադարձան Իրան՝ իրենց հետ տանելով նաև Քարթլիի թագավոր Լուարսաբին, իսկ Կախեթում շահի կողմից կառավարիչ կարգվեց Թեյմուրազ Ա-ի հորեղբայր Գիորգիի որդին՝ Իսա խանը:

1615 թ. սեպտեմբերի 15-ին Կախեթում պարսիկների դեմ բռնկվեց նոր ապստամբություն, Թեյմուրազը շտապ վերադարձավ Կախեթ և գլխավորեց այն: Ապստամբությունը ճնշելու համար Կախեթ ժամանած պարսկական նոր զորամասը, սակայն, պարտություն կրեց, ուստի շահ Աբբասը 1616 թ. նոր բանակով անձամբ արշավեց Վրաստան: Նա գրավեց Տփղիսը, Քարթլիի կառավարիչ նշանակեց Դավութ խանի որդուն՝ Բագրատ խանին, և շահական զորքն այնուհետև ներխուժեց Կախեթ: Թեյմուրազը, սակայն, նախընտրեց նորից հեռանալ Իմերեթ, և Կախեթը դարձավ պարսիկների վրեժխնդրության զոհ: Չնայած բնակչության համառ դիմադրությանը՝ երկրամասը ենթարկվեց մեծ ավերածությունների, բնակչությունը ենթարկվեց բռնի տեղահանության, Կախեթում վերաբնակեցվեցին քոչվոր ցեղախմբեր:

Իմերեթում ապաստանած Թեյմուրազ Ա-ը Իրանի դեմ պայքարում օսմանյան սուլթանի օժանդակությունը ստանալու նպատակով մասնակցեց Իրանի դեմ օսմանցիների արշավանքին: Թուրքական բանակը, սակայն, հաջողություն չունեցավ. կնքվեց թուրք-իրանական նոր հաշտություն:

Պատանդության մեջ գտնվող Քեթևան թագուհին մերժեց շահ Աբբաս Ա-ի՝ դավանափոխության պահանջը և 1624 թ. սեպտեմբերի 12-ին տանջամահ արվեց Շիրազում: Վրաց եկեղեցին սրբացրել է նրան և դասել վրաց նահատակների շարքը:

1625 թ. սկզբներին շահ Աբբասի կողմից Վրաստան ուղարկված նոր բանակի կազմում էր նաև Գիորգի Սաակաձեն: Շահական բանակը ներխուժեց Քարթլի, և դիրքավորվեց Մուխրանում՝ հայտարարելով Իմերեթ արշավելու մտադրության մասին: Միաժամանակ շահական նվերներ բաժանելու պատրվակով պարսկական բանակատեղի հրավիրելով վրաց գործիչներին՝ նրանց ոչնչացնում էին, ինչն առավել նպաստում էր հակապարսկական ուժերի համախմբմանը՝ կրկին զենքի դիմելու մի-

ջոցով դիմագրավելու աղետին: 1625 թ. մարտի 25–ին իրանական բանակում գտնվող Գիորգի Սաակաձեն անձամբ սպանում է շահական բանակի հրամանատար Ղորչի (Ղարչխա) խանին և կազմակերպում վրացական զորքերի հարձակումը Մարտողփի դաշտում գտնվող պարսկական 30 հազարանոց բանակի վրա: Անակնկալ հարձակումը հաջողություն է բերում վրացական զորքերին, պարսիկներից փրկվում է միայն մոտ 3000 զինվոր: Գիորգի Սաակաձեն Թեյմուրազ Ա–ին հրավիրում է գրավելու Քարթլ–Կախեթի միացյալ թագավորության գահը, իսկ ղզլբաշների կտրած գլուխները և ավար վերցրած դրոշները ուղարկելով օսմանյան մեծ վեզիրին՝ առաջարկում է պարսիկների դեմ համագործակցության:

Մարտողփում կրած պարտությունը շահ Աբբասին ստիպեց շուտափույթ նոր բանակ ուղարկել Վրաստան, որը, ժամանելով Քարթլի, դիրքավորվեց Մարաբդայի դաշտում: Թեյմուրազը ստիպված էր ընդունել մարտահրավերը՝ պարսկական զորքի թվական և դիրքային գերակշռության պայմաններում: Ճակատամարտը տեղի ունեցավ 1625 թ. հուլիսի 1–ին և ավարտվեց Սեֆյանների հաղթանակով: Վրացական բանակը անցավ պարտիզանական պայքարի: Պարսկական բանակը ևս մեծ կորուստներ էր կրում: Շահ Աբբաս Ա–ն ստիպված էր Թեյմուրազին ճանաչել Քարթլ–Կախեթի թագավոր, իսկ Թեյմուրազը ընդունում էր Իրանի հպատակությունը: Այդ հաշտությունից հետո գժտություն սկսվեց Գիորգի Սաակաձեի և Թեյմուրազի միջև, 1626 թ. պարտություն կրած Գիորգի Սաակաձեն ստիպված անցավ օսմանյան ծառայության, որտեղ և 1629 թ. քառասուն այլ վրացիների հետ սպանվեց դավաճանության մեղադրանքով:

1629 թ. վախճանվեց շահ Աբբաս Ա–ը: Սպահանի կառավարիչ ազգությամբ վրացի Խոսրով Միրզայի օժանդակությամբ Իրանի գահին բազմեց շահ Աբբաս Ա–ի թոռը՝ Սեֆի Ա–ը:

Վրաստանում Թեյմուրազ Ա–ը գործում էր ինքնագլուխ և չէր ենթարկվում շահ Սեֆի Առաջինին: Նա 1632 թ. կողոպտչական արշավանք կազմակերպեց դեպի Գանձակի և Ղարաբաղի տարածք: Արցախի բնակավայրերի կողոպուտը կանխելու նպատակով նրան ներկայացավ Գանձասարի Հայոց[21] կաթողիկոսը՝ առաջարկելով արցախյան 40 հազարանոց զորախմբի օժանդակությունը՝ արշավանքը շարունակելու դեպի Իրան և վերականգնելու քրիստոնեական պետությունը: Թեյմուրազը մերժեց այդ առաջարկը և մեծ ավարով վերադարձավ Վրաստան: Ի պատասխան Թեյմուրազի այդ արշավանքի՝ Իրանի շահ Սեֆին, գահընկեց հայտարարելով Թեյմուրազին, խոշոր բանակով Քարթլի ուղարկեց մահմեդականություն ընդունած Խոսրով Միրզային՝ տալով նրան Ռոստոմ խան վերանվանումը[22]: Քարթլիի իշխան-

[21] Կաթողիկոսի ազգության ընդգծումը առկա է Փարսադան Գորգիջանիձեի «Պատմության» մեջ:
[22] 1632 թ. աշնանը Զախարի Սամեղ–խան բեկին գրած իր նամակում հաղորդելով այդ մասին՝ շահ Սեֆին կարգադրում է մինչև Ռոստոմ խանի ժամանումը արշավել և ավերել Քարթլին ու Կախեթը: Տես АКАК, հատոր II, Թիֆլիս, 1868, էջ 1086: Ուշագրավ է, որ հետագա տարիներին Իրանի շահը Ռոստոմ խանին անվանում է «մեր եղբայրը» և «Վրաստանի թագավոր»: Տես նույն տեղում, էջ 1086–1087:

ները այս անգամ արդեն չպաշտպանեցին Թեյմուրազին և նա անցավ Արևմտյան Վրաստան (Իմերեթ): Կախեթի կառավարիչ նշանակվեց Սելիմ խանը:

Քարթլիում գահակալեց Ռոստոմ խանը (1633–1658 թթ.): Նրա գահակալությամբ նոր փուլ սկսվեց Վրաստանի պետական կառավարման համակարգում: Իրանական արքունիքը, Վրաստանը ընդգրկելով իրանական պետական համակարգում, նրան հատկացրեց առանձնահատուկ կարգավիճակ՝ վալիություն, և Ռոստոմը սկսեց կոչվել Գուրջիստանի վալի[23]: Ռոստոմից սկիզբ առավ Իրանի կողմից վրաց գահին մահմեդական թագավորների նշանակման կարգը, որը տևեց մինչև XVIII դարի առաջին կեսը:

Ռոստոմը Իրանից բերած զորքի մի մասը տեղաբաշխեց Քարթլիի առավել հենակետային համարվող ամրոցներում՝ որպես կայազոր (Գորի, Սուրամ և այլն), որով ավելի ընդգծեց իր հավատարմությունը Իրանի գահին՝ միաժամանակ ապահովելով Քարթլիի նկատմամբ Թեյմուրազի հավակնություններին դիմագրավելու հնարավորությունը: Արագվիի ու Քսանի էրիսթավների օժանդակությունը ստանալու միջոցով Քարթլիում հաստատվելու Թեյմուրազ Ա–ի փորձը ձախողվեց: Նա ստիպված անցավ Կախեթ և այնտեղից վտարելով Սելիմին՝ հաստատվեց Կախեթում:

Ռոստոմի իշխանությունը ևս միանշանակ չէր ընդունվում Քարթլիի իշխանների կողմից, որոնք մի քանի անգամ անհաջող դավադրություն կազմակերպեցին նրա դեմ:

3. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Թուրք–պարսկական պատերազմի ավարտից հետո՝ XVII դարի կեսերից, ինչպես հարակից մյուս երկրներում, Վրաստանում ևս սկսվեց տնտեսական վերելքի ժամանակաշրջան: Վերականգնվեցին քաղաքները, գյուղատնտեսությունը, առևտուրն ու արհեստները: Ռոստոմը արշավեց Կախեթ և Մաղարոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնելով Թեյմուրազին՝ հաստատվեց Կախեթում: Թեյմուրազը հեռացավ Իմերեթ: Շահը Կախեթը ևս ժամանակավորապես հանձնեց Ռոստոմի կառավարմանը, որով Քարթլ–Կախեթի թագավորությունը կրկին միավորելու համար հնարավորություն էր ստեղծվում: Վարչաքաղաքական կարևոր փոփոխություն էր, սակայն, 1656 թ. Իրանի շահ Աբբաս Բ–ի (1642–1666 թթ.) կողմից Քարթլիից կրկին Կախեթի առանձնացումը և նրա կառավարման իրավունքի հանձնումը Գանձակի խանին, որը կրում էր Ղարաբաղի «բեկլարբեկ» տիտղոսը:

1658 թ. Ռոստոմը մահացավ և թաղվեց Իրանի Ղում քաղաքում: Քարթլիի թագավոր նշանակվեց Մուխրանի Բագրատունյաց ճյուղի ներկայացուցիչ, Ռոստոմի որդեգիր Վախթանգ Ե–ը (1658–1675 թթ.)[24]:

[23] Իրանում կար չորս վալիություն՝ Գուրջիստանի, Արաբիստանի, Լուրիստանի և Քուրդիստանի:
[24] Թեյմուրազ Ա–ը թողեց աշխարհիկ կյանքը և ձեռնադրվեց քահանա: Վախթանգ Ե–ի՝ Իմերեթ կատարած արշավանքի ժամանակ Թեյմուրազ Ա–ը գերվեց և ուղարկվեց Իրան, որտեղ և մահացավ 1663 թ.:

Կախեթում միաժամանակ բնակեցվում էին թուրքմեն քոչվորների հոծ խմբեր, որոնց հիմնական զբաղմունքը անասնապահությունն էր: Դա մեծ հարված էր Կախեթի երկրագործությանը և սպառնալիք՝ տեղի անասնապահ բնակչության համար, ինչը և դարձավ 1660 թ. տեղի ունեցած ապստամբության հիմնական պատճառը: Ապստամբության մեջ ընդգրկվեցին նաև Արագվիի և Քսանի էրիսթավները, խնսուրները, փշավները և այլք: Ապստամբները գրավեցին Բախտրիոնը և Ալավերդին, որտեղ կենտրոնացված էին ղզլբաշական կայազորները, ու լայնածավալ հարձակումներ սկսեցին թուրքմենների դեմ: Թուրքմենների մեծ մասը ոչնչացվեց, իսկ մնացածները դիմեցին փախուստի: Շահը ստիպված էր Կախեթը հանձնել Վախթանգ Ե-ի կառավարմանը:

Քարթլիի գահ բարձրացած Վախթանգ Ե-ը, որը կրում էր Շահնավազ խան մահմեդական անունը, կարողացավ Իմերեթի թագավորական գահին նստեցնել իր որդուն՝ Արչիլին, իսկ Օդիշում կառավարիչ կարգել տալ Լևան Գ Դադիանիին: Վախթանգի այդ գործողությունների դեմ բողոքեց Թուրքիան, որի իրավասության ներքո էր Արևմտյան Վրաստանը: Վախթանգը ստիպված էր Արչիլին ետ կանչել Իմերեթից:

Շուտով, սակայն, Վախթանգին նոր փորձություն էր սպասվում: Թեյմուրազ Ա-ի թոռը՝ Հերակլը, որ մինչ այդ Ռուսաստանում էր, վերադառնալով Կախեթ, փորձեց հաստատվել այնտեղ: Շահի կարգադրությամբ Վախթանգը հարձակվեց Թորդա ամրոցում ապաստանած Հերակլի վրա, երկար պաշարումից հետո գրավեց ամրոցը, սակայն Հերակլին հնարավորություն տրվեց փախուստի դիմելու: Նա կրկին հեռացավ Ռուսաստան:

Գնահատելով Վախթանգի հավատարմությունը՝ շահը 1664 թ. Վախթանգի որդուն՝ Արչիլին, որ մինչ այդ արդեն մահմեդականություն էր ընդունել, նշանակեց Կախեթի թագավոր՝ Շահնազար-խան անունով: Կախեթում Արչիլի գահակալության ժամանակ իրադրությունը կայունացավ, վերականգնվեցին ավերված բնակավայրերն ու եկեղեցիները: Բագրատունյաց տոհմի Քարթլիի ճյուղի ներկայացուցչի՝ Կախեթի գահին բազմելու հանգամանքը օրինական դարձնելու նպատակով Արչիլն ամուսնացավ Հերակլի քրոջ՝ Քեթևանի հետ: Կախեթի ազնվականությունը, այնուամենայնիվ, օրինական գահակալ համարում էր Հերակլին: 1674 թ. Հերակլը կրկին վերադարձավ Կախեթ: Տեղեկանալով Հերակլի վերադարձի մասին՝ Իրանի շահ Սուլեյման Ա-ը (Սեֆի Բ, 1666–1694 թթ.) իր մոտ հրավիրեց նրան: Ենթադրելով, թե պարսից շահը կարող է Կախեթի թագավոր հաստատել Հերակլին, Արչիլը ինքնակամ հեռացավ Կախեթից և անցավ Իմերեթ: Տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ բացատրություններ պահանջելու նպատակով շահը իր մոտ հրավիրեց նաև Վախթանգ Ե-ին: Քարթլիում տեղապահ նշանակելով իր որդուն՝ Գիորգիին, Վախթանգը ճանապարհվեց Իրան: Ճանապարհին, սակայն, նա վախճանվեց, իսկ նրա դին թաղվեց շիաների սրբավայր Ղում քաղաքում:

Շահի հրամանով Քարթլիում գահը հանձնվեց Վախթանգ Ե-ի ավագ որդուն՝ Գիորգիին (Գիորգի ԺԱ, 1675–1688 թթ.), իսկ Կախեթը՝ ղզլբաշ խաների կառավարմանը: Շարունակվեցին Կախեթում ղզլբաշների վերաբնակեցումներն ու մահմեդականության տարածման խրախուսումները:

Շահ Սուլեյմանի կառավարման շրջանում արդեն ակնհայտ էին Սեֆյան Իրանում ռազմաքաղաքական ու տնտեսական ճգնաժամը, ներքին ու արտաքին առևտրի անկումը, կառավարման թուլացումը:

Գիորգի ԺԱ-ը փորձում էր հնարավորինս խոչընդոտել Կախեթի արևելյան մասերում ղզլբաշական ցեղերի վերաբնակեցման գործընթացին: Այդ նպատակով նա փորձ արեց անգամ օգնություն խնդրելու օսմանցիներից:

Գիորգին Վրաստանի ազատագրության խնդրով Արևմուտքի օգնությանը դիմելու նպատակով բանակցություններ ունեցավ Եվրոպա ուղևորվող Հայոց պատվիրակության ղեկավար Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի հետ՝ իր հերթին խնդրագիր առաքելով Հռոմի պապին:

Գիորգի ԺԱ-ը օժանդակում էր Իմերեթի գահի համար պայքարող իր եղբորը՝ Արչիլին, և ոչ միայն չկատարեց շահի հրամանը՝ գերելու եղբորը, այլև ինքը փորձեց գրավել Կախեթը: Շահը 1688 թ. գահընկեց հայտարարեց Գիորգի ԺԱ-ին և նրա փոխարեն Քարթլիի թագավոր նշանակեց Ռուսաստանից վերադարձած և Իրանում գտնվող Հերակլ Ա-ին (Նազարալի-խան, 1688–1703 թթ.): Երկար տարիներ Վրաստանից Հերակլի բացակայությունը և Քարթլիում տիրող իրադրությանը անծանոթ լինելը երերուն էին դարձնում նրա կառավարումը:

Իրանի նոր շահի՝ Սուլթան Հուսեինի (1694–1722 թթ.) օրոք Իրանում շարունակում էր խորանալ քաղաքական ու տնտեսական ճգնաժամը, ապստամբություններն ընդգրկել էին մասնավորապես Աֆղանստանը, և նման պայմաններում շուտով շահի մոտ իր ծառայություններով աչքի ընկավ Գիորգի ԺԱ-ը: 1703 թ. շահ Սուլթան Հուսեինը Հերակլին Քարթլիից փոխադրեց և նշանակեց Կախեթի թագավոր, իսկ Քարթլին կրկին վերադարձրեց Գիորգի ԺԱ-ին: Շահը, սակայն, թույլ չտվեց Հերակլին վերադառնալ Կախեթ, այլ պարսից արքունիքում նրան նշանակեց ղուլլարաղասիի պաշտոնում, իսկ Կախեթում Հերակլի փոխարեն կառավարիչ կարգեց նրա որդուն՝ Դավիթին: Շահը նույն կերպ վարվեց նաև Գիորգի ԺԱ-ի հետ: Վերջինս նշանակվեց նաև իրանական բանակի սպասալար, Ղանդահարի բեկլարբեկ և ուղարկվեց Աֆղանստան: Քարթլիում Գիորգի ԺԱ-ի տեղապահ (ջանիշին) նշանակվեց նրա եղբորորդին՝ Վախթանգը (հետագայում՝ Վախթանգ Զ):

4. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

XVII դարում Արևմտյան Վրաստանում շարունակում էին գոյատևել տարածքային իշխանությունները: Գուրիայի, Օդիշի և Աբխազիայի իշխանությունները իրենց կենտրոնախույս գործողություններով փորձում էին անկախություն ձեռք բերել Իմերեթի թագավորությունից: Արևմտյան Վրաստանում աստիճանաբար իրենց ազդեցությունն էին ամրապնդում նաև օսմանները: Արդեն 1615 թ. Գուրիայի և Օդիշի տիրակալները հարկատու դարձան օսմանյան պետությանը: Օսմաններին հարկ էր վճարում նաև Իմերեթի թագավոր Գիորգի Գ-ը (1604–1639 թթ.): Ինչպես նախորդ

դարերում, երբ Արևմտյան Վրաստանը օտար նվաճողների դեմ անհավասար պայքարի ժամանակ հաճախ ապաստան էր ծառայում Արևելյան Վրաստանի թագավորների համար, XVII դարում ևս շարունակում էր պահպանել իր այդ դերակատարումը: Արևմտյան Վրաստանն ակտիվորեն ընդգրկվում էր գահակալական պայքարի մեջ նաև Արևելյան Վրաստանում:

Երբ Օդիշում իշխանության գլուխ անցավ Լևան Բ Դադիանին (1611–1657 թթ.), Արևմտյան Վրաստանում Իմերեթի թագավորի և Օդիշի իշխանության միջև հակամարտությունն առավել սուր բնույթ ստացավ: Վերջինս փորձեց իր գերակայությունը հաստատել ողջ Արևմտյան Վրաստանում, կարողացավ պաշտոնանկ անել Գուրիայի իշխանին և նրա փոխարեն նշանակել իր թեկնածուին: Լևան Բ–ը հակադրվեց նաև Իմերեթի թագավոր Գիորգի Գ–ին: 1634 թ. նրան հաջողվեց պարտության մատնել և գերել թագավորին: Գիորգի Գ–ի որդին՝ Ալեքսանդրը, հորը ազատելու դիմաց գնաց տարածքներ զիջելու քայլին և միաժամանակ Լևան Բ Դադիանիին հանձնեց Չխարիում բնակվող հայ և հրեա վաճառականներին, որոնց փոխադրեցին Ռուխի ամրոց: Ամրոցի շրջակայքում իշխանը մտադիր էր կառուցել քաղաք և այնտեղ զարգացնել առևտուրը:

Գերությունից ազատվելուց հետո շուտով վախճանված Գիորգի Գ–ի փոխարեն 1639 թ. Իմերեթի գահն անցավ Ալեքսանդր Գ–ին: Իմերեթի թագավորության և Դադիանիի միջև գժտությունը, սակայն, դրանով չվերացավ: Վերջինիս դեմ պայքարը շարունակում էր Ալեքսանդր Գ–ի եղբայր Մամուկան, որը ևս գերի ընկավ, կուրացվեց ու շուտով վախճանվեց: Այսպիսով՝ Լևան Դադիանիի ժամանակ Օդիշի իշխանությունը ամրապնդվեց և կարևոր դերակատարում ստանձնեց Արևմտյան Վրաստանում: Նա իր հավակնություններն էր ներկայացնում նաև Աբխազիայի նկատմամբ և հյուսիս–արևմուտքում իրեն ենթարկելով մինչև Սուխում ընկած տարածքները՝ նա Սուխումի մոտ որպես սահմանագիծ ծովեզրից մինչև լեռներ կառուցել տվեց պարիսպներ: Լևան Բ Դադիանիի մահից հետո, սակայն, Ալեքսանդր Գ–ին հաջողվեց Օդիշում և Գուրիայում իշխանության բերել իր համար ընդունելի թեկնածուների:

Ալեքսանդր Գ–ը մահացավ 1660 թ., և Իմերեթում սկիզբ առավ գահակալական անգիջում պայքարի նոր փուլ: Ահա նման պայմաններում էր, երբ Գիորգի ԺԱ–ը և Արչիլը անհաջող փորձեր կատարեցին գրավելու Իմերեթի գահը: Իմերեթում ստեղծված խառնակ իրադարձությունները նպաստավոր պայմաններ ստեղծեցին օսմանցիների տիրապետության ամրապնդման համար: Արչիլը 1699 թ. ստիպված եղավ հեռանալ Վրաստանից և մեկնել Ռուսաստան, հաստատվել Մոսկվայում, որտեղ 1701 թ. նրա հետ հանդիպումներ էր ունեցել Իսրայել Օրին:

XVII դարի երկրորդ կեսին Արևմտյան Վրաստանում օսմանյան լծի ամրապնդումը աղետալի հետևանքներ ունեցավ երկրի սոցիալ–տնտեսական զարգացման վրա, քանակապես խիստ նվազեց բնակչությունը: Արևմտյան Վրաստանից մեծ թվով գերիներ էին տարվում Ղրիմի և Կ. Պոլսի ստրկավաճառանոցներ, որտեղից այնուհետև տեղի էր ունենում նրանց փոխադրումը Եգիպտոս և Մերձավոր Արևելքի տարբեր երկրներ:

5. ՍԱՄՑԽԵԻ ԱԹԱԲԵԿՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

Սամցխեն XVI դարի երկրորդ կեսին արդեն ամբողջությամբ գրավվել էր Օսմանյան կայսրության կողմից, որոնք այնտեղ ստեղծել էին Գուրջիստանի վիլայեթը, կատարել աշխարհագիր և հաստատել օսմանյան հարկային համակարգ: Սամցխեի աթաբեկ Մանուչարը օսմանների լուծը թոթափելու համար շահ Աբբաս Ա–ի կողմից վերսկսած պատերազմի ժամանակ փորձ կատարեց ստանալու Իրանի օժանդակությունը: Շահ Աբբաս Ա–ը, օգտվելով Մանուչար Բ–ի և նրա մահից հետո կառավարման ղեկը ստանձնած նրա կնոջ՝ Սիմոն Ա–ի դուստր Ելենի պարսկամետ դիրքորոշումից, գրավեց Ախալցխան և այնտեղ հաստատեց պարսկական տիրապետություն՝ աթաբեկի պաշտոնը հանձնելով Մանուչար Գ–ին: Սակայն պարսիկները չկարողացան պահպանել հաջողությունը և ստիպված եղան կրկին այն զիջել օսմաններին: Մանուչար Գ–ը ստիպված էր հնազանդություն հայտնել սուլթանին, որը, չպարտադրելով նրան ընդունել մահմեդականություն, վերահաստատեց նրա աթաբեկությունը: Մանուչար Գ–ը շուտով մահացավ, և սուլթանի կողմից Ախալցխայի (Չըլդրի) փաշայության կառավարիչ նշանակվեց նրա հորեղբայրը՝ մահմեդականություն ընդունած Սաֆար փաշան: 1639 թ. Քասրե Շիրինի պայմանագրով Ախալցխայի փաշայությունը մնաց օսմանյան տիրապետության ներքո: Ախալցխայի փաշայությունում մեծ թափ ստացավ մահմեդականության և կաթոլիկ դավանանքի տարածումը:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Քարթլիում Գիորգի ԺԱ թագավորի տեղապահ նշանակված Վախթանգը եռանդուն կերպով ձեռնամուխ եղավ մի շարք բարենորոգումների, որով նպաստեց ոչ միայն Քարթլիի սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առաջընթացին, այլև ձեռք բերեց անառարկելի հեղինակություն ու ամրապնդեց գահի հավակնորդի իր դիրքերը: 1705 թ. կաթողիկոսական աթոռը գրավեց նրա եղբայրը՝ Դոմենտին: Վախթանգը ուժեղացրեց բանակը և հնազանդեցրեց կենտրոնախույս դիրքորոշում որդեգրած Քսանի և Արագվիի իշխաններին:

1709 թ. Աֆղանստանում զոհվեց Գիորգի ԺԱ-ը, որից հետո շահ Սուլթան Հուսեինը Քարթլիի թագավոր նշանակեց Վախթանգի եղբորը՝ Քայխոսրոյին, սակայն նրան ևս կարգելով իրանական բանակի հրամանատարի պաշտոնում՝ ուղարկեց Աֆղանստանում պատերազմելու: Վախթանգը շարունակեց վարել ջանիշինի պաշտոնը:

Աֆղանստանում իրանական բանակը կանգնած էր ծանր խնդրի առջև, և վրացական զորամիավորման դերակատարումը կարևոր նշանակություն ուներ Իրանի համար: Վրաց թագավորների՝ Իրանում գտնվելու հանգամանքը և Իրանի ներքին թուլացումը հնարավորություն տվեցին Վախթանգին ավելի ամրապնդելու իր դիրքերը Վրաստանում և անգամ Տփղիսում պաշտոնազրկելու պարսկական կայազորի ու բերդի ղեկավարներին՝ նրանց փոխարեն պաշտոնների նշանակելով ազգությամբ վրացի գործիչների: Այդ փաստը շահի կողմից հակազդեցության չհանդիպեց, ինչն ավելի ամրապնդեց Վախթանգի դիրքերն ու նրա համոզումը՝ ճնշում գործադրելու շահի վրա, Վրաստանին ընդառաջելու խնդրում նոր զիջումների գնալու համար:

1711 թ. Աֆղանստանում զոհվեց նաև Վախթանգի եղբայր Քայխոսրոն, և Իրանի շահ Սուլթան Հուսեինը իր մոտ հրավիրեց Վախթանգին՝ Վրաստանում իշխանությունը նրան հանձնելու մտադրությամբ: 1712 թ. ապրիլին Վախթանգը մեկնեց Իրան, սակայն հրաժարվեց մահմեդականություն ընդունելուց, ինչը, ըստ արդեն ձևավորված ավանդույթի, պարտադիր պայման էր Վրաստանի գահը ժառանգելու համար: Շահը տեղի չտվեց և Վախթանգին կալանավորելով Իրանում՝ Վրաստանի կառավարումը հանձնեց մահմեդականություն ընդունած նրա եղբորը՝ Իեսեին: Վախթանգին մնում էր ելք որոնել գերությունից ազատվելու և առանց դավանափոխության վերադառնալու Վրաստան: Այդ նպատակով Վախթանգը Հռոմի պապի ու Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս ԺԴ-ի արքունիք ուղարկեց հայտնի հոգևոր ու գրական-մշակութային գործիչ, «Վրաց բառարանի», «Խաբեության իմաստությունը» և այլ գրական գործերի հեղինակ Սուլխան-Սաբա Օրբելիանիին: 1713-1715 թթ. Սուլխան-Սաբան ճանապարհորդեց Եվրոպայում, այցելեց Հռոմ և Փարիզ, սակայն օժանդակության իրական երաշխիքներ չստանալով՝ կաթոլիկ հոգևորականների ուղեկցությամբ վերադարձավ Վրաստան: Ուշագրավ է, որ Սուլխան-Սաբայի՝ Փարիզում գտնվելու օրերին այնտեղ էր նաև իրանական շահի պատվիրակությունը, որը առևտրական պայմանագիր ստորագրեց Ֆրանսիայի հետ (1715 թ.), որով Ֆրանսիան կապիտուլյացիոն լայն արտոնություններ էր ստանում Իրանում: Դեսպանագնացության անարդյունավետությունը ստիպեց Վախթանգին Վրաստան վերադառնալու համար առերես ընդունել մահմեդականություն: 1716 թ. շահը նրան հաստատեց Քարթլիի թագավոր, սակայն չշտապեց ուղարկել Վրաստան և Վախթանգի փոխարեն կառավարիչ նշանակեց նրա որդուն՝ Բաքարին:

1703 թ. շահ Սուլթան Հուսեինը Կախեթում իշխանությունը հանձնել էր Հերակլ Ա-ին, սակայն նրան ևս թույլ չէր տրվել վերադառնալ Կախեթ, և նա նշանակվել էր դուլլարաղասի: Կախեթում Հերակլ Ա-ի տեղապահ նշանակված նրա որդուն՝ Դավիթին, 1709 թ. շահը հաստատեց որպես Կախեթի թագավոր՝ անվանակոչելով Իմամղուլի խան (Դավիթ Բ - 1709-1722 թթ.):

1710-ական թթ. Այսրկովկասում գնալով ավելի էին խորանում կենտրոնախույս տրամադրությունները, ու թուլանում էր իրանական կենտրոնական իշխանության ազդեցությունը: Շահական արքունիքի դիրքերը տեղում ամրապնդելու նպատակով 1719 թ. շահը ի վերջո համաձայնեց Վախթանգին ետ ուղարկել Քարթլի: Վրաստանում Վախթանգը փորձում էր արքունիքից ստացած իր պարտականությունների կատարումը ուղեկցել Վրաստանի ինքնուրույնությունը վերականգնելուն և Այսրկովկասում նրա դերակատարումը մեծացնելուն ուղղված քայլերով: Վախթանգը, համաձայնության գալով Կախեթի Դավիթ Բ-ի հետ, փորձ կատարեց համատեղ ուժերով Դաղստանի լեռնականների արշավանքները դեպի Կախեթ կասեցնելու պատրվակով հարձակման անցնելու դեպի Ճարի և Բելոքանի ուղղությամբ, սակայն Դավիթը հապաղեց դիմել ակտիվ հարձակողական գործողությունների:

Իրանում կենտրոնական իշխանության դիրքերի թուլացումը և ծայրամասային նահանգներում երկարատև անհնազանդությունները որոշակի հույսեր էին ներշնչում նաև Ռուսաստանին, որը Իսրայել Օրու դեսպանագնացությունից հետո ևս Իրանում տեղի ունեցող իրադարձություններին ուշադիր հետևելու նպատակով 1715 թ. այնտեղ էր ուղարկել նոր դեսպանություն՝ Ա. Վոլինսկու ղեկավարությամբ: Վերջինս հրահանգ ուներ գաղտնի կապեր հաստատելու այդ ժամանակ դեռևս գերության մեջ գտնվող Վախթանգի հետ: Վրաստան վերադարձից հետո Վախթանգն արդեն հնարավորություն ստացավ ընդառաջելու Ռուսաստանի հետ հարաբերություններ հաստատելու և դրանք օգտագործելու նախագծերին, և 1720 թ. սկսեցին այդ ուղղությամբ որոշակի քայլեր կատարվել: Հայտնի է, որ Վախթանգը մտադիր էր նման համագործակցությամբ հասնել Իրանից Վրաստանի անկախության ձեռքբերմանը և Այսրկովկասում ստանալ գերակա կարգավիճակ, իսկ վրաց թագավո-

րի օժանդակությունը Ռուսաստանին անհրաժեշտ էր մերձկասպյան տարածքներին տիրանալը դյուրացնելու նպատակով:

1721 թ. Դաղստանի լեռնականների կողմից Շամախի կատարած հարձակումը և ռուս վաճառականների նկատմամբ բռնությունները հարմար պատրվակ էին ռազմաքաղաքական միջամտության համար, որին գումարվեց նաև 1722-ին աֆղանների կողմից Իրանի մայրաքաղաք Սպահանի գրավման փաստը: Իրանի օրինական իշխանություններին օժանդակելու քողի տակ 1722 թ. ամռան վերջերին ռուսական բանակը արշավանք ձեռնարկեց դեպի Այսրկովկաս և գրավեց Դերբենդը: Միաժամանակ Վախթանգը առաջարկություն ստացավ պատրաստի բանակով սպասելու ռուսական զորքի ժամանելուն: Վախթանգը, այդ մասին հաղորդելով արցախահայերին, նրանց ևս կոչ ուղղեց միանալու ընդհանուր ձեռնարկմանը: 1722 թ. աշնանը վրաց բանակը Վախթանգի գլխավորությամբ և արցախահայոց զորքը հայ զորահրամանատարների և մելիքների առաջնորդությամբ Գանձակի մոտ գտնվող Զոլակ հայկական ուխտավայրի մոտ սպասում էին ռուսական բանակի մասին լուրերի:

Սպահանում աֆղանների դեմ պայքարում զոհված շահական գվարդիայի հրամանատար, Վախթանգի եղբայր Ռոստոմի փոխարեն այդ պաշտոնին նշանակվեց Վախթանգի որդին՝ Բաքարը, սակայն Վախթանգը վերջինիս արգելեց օգնության գնալ Իրանի նոր շահ հռչակված Թահմասպին:

Դերբենդի գրավումից հետո Պետրոս Ա-ի վերադարձը Ռուսաստան ծանր վիճակ ստեղծեց միայնակ մնացած Վախթանգի և հայկական ուժերի համար, որոնց ապստամբական տրամադրությունն արդեն պարսից իշխանությունների համար ակնհայտ էր: Ավելին՝ 1723 թ. Այսրկովկաս արշավեց նաև օսմանյան բանակը՝ ձգտելով օգտվելու Իրանում ստեղծված վիճակից և կրկին գրավելու 1639 թ. հաշտությամբ Իրանին անցած տարածքները: Օսմանյան պետությունը այդ արշավանքով մտադիր էր միաժամանակ կանխելու Ռուսաստանի կողմից Այսրկովկասի գրավումը:

Իրանի նոր շահ Թահմասպը Քարթլիի կառավարումը հանձնեց Կախեթում Դավիթ Բ-ի մահից հետո թագավոր դարձած Կոստանդինին (Մահմադդուլի խան, 1722-1732 թթ.), որը և շտապեց լեկերի օգնությամբ գրավել Տփղիսը: Այնուհետև, սակայն, մայրաքաղաք ներխուժեցին ու նաև ամբողջ Քարթլին գրավեցին օսմանցիները: Նման պայմաններում Վախթանգը ստիպված էր իր համախոհների ու մերձավորների հոծ խմբի հետ հեռանալ Վրաստանից և անցնել Ռուսաստան (1723 թ.): Ռուսաստանում ևս նա ուշադիր հետևում էր Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններին և փորձում ստանալ ռուսական իշխանությունների համաձայնությունը՝ իր որդիներից որևէ մեկին Վրաստան վերադարձնելու համար:

2. ՊԱՐՍԻՑ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԸ: ՆԱԴԻՐ ՇԱՀ

XVIII դարի երկրորդ քառորդը Վրաստանում նշանավորվեց օսմանյան տիրապետության հաստատումով: Վախթանգ Զ-ի եղբայր Իեսեն (Ալիղուլի խան) նշանակվեց Քարթլիի կառավարիչ, իսկ նրա մահից հետո Քարթլին հանձնվեց Ախալցխայի փաշայությանը: Քարթլիում կատարվեց աշխարհագիր, նշանակվեցին նոր հարկեր:

Կախեթի թագավոր Կոստանդինը, պարտվելով թուրքերի դեմ պայքարում, հանգրվանեց փշավների մոտ: Ի վերջո օսմանցիները, բանակցությունների հրավիրելով Կոստանդինին, դավադրաբար սպանեցին նրան: Մեկ տասնամյակից ավելի տևած օսմանյան տիրապետության ժամանակաշրջանը ծանր հետևանքներ ունեցավ Քարթլիի ու Կախեթի բնակչության համար: Կախեթը ավելի մեծ չափով դարձավ լեկերի կողմից իրականացվող արշավանքների թիրախ և զգալի չափով ենթարկվեց էթնիկ դիմահեղման:

Ձեռնարկելով ու գլխավորելով աֆղանների ու օսմանցիների դեմ պայքարը 1720-ական թվականների վերջերին՝ Շահ Թահմասպի մոտ ծառայության անցած Նադիրը (Թահմասպղուլի խան) կարողացավ ոչ միայն ազատագրել Իրանը նրանց տիրապետությունից, այլև բանակցությունների միջոցով ետ ստանալ Ռուսաստանի կողմից գրավված Մերձկասպյան տարածքները: Նադիրը Սեֆյան հարստության վերջին գահաժառանգի մահվան մասին հայտարարելուց հետո՝ 1736 թ. Մուղանի դաշտում հրավիրված համաժողովում, հռչակվեց Իրանի նոր շահ, որի գերակայությունը տարածվում էր Իրանի ենթակայության ներքո գտնված բոլոր երկրամասերում: Նադիրը ձեռնամուխ եղավ թուլացած իրանական պետության ամրապնդմանը և արշավանք ձեռնարկեց անգամ Հնդկաստանը գրավելու նպատակով: Հնդկական արշավանքի ժամանակ Նադիրի բանակում կային նաև հայ և վրացի զորավարներ, այդ թվում նաև Թեյմուրազի որդին՝ Իրանում պատանդ պահվող Հերակլը:

Նադիր շահի կողմից Քարթլիի գրավումը միանշանակ չընդունվեց վրաց իշխանական դասի շրջանում: Իրանի տիրապետության դեմ հանդես էր գալիս Քասանի էրիսթավ Շանշեն, ապա Գիվի Ամիլախվարին: Վերջինիս դեմ պայքարը Նադիրը հանձնարարեց Թեյմուրազին: Թեյմուրազին հաջողվեց պարտության մատնել Գիվի Ամիլախվարին ու գերել նրան: Դա իր հերթին նշանավորվեց Նադիրի կողմից 1744 թ. Քարթլիի ու Կախեթի կառավարումը Թեյմուրազին ու նրա որդուն՝ Հերակլ Բ-ին հանձնելու փաստով: Իրանից Քարթլի ժամանած Թեյմուրազն ու Հերակլը քրիստոնեական կարգով օծվեցին և ստանձնեցին Արևելյան Վրաստանի կառավարումը, ինչն, ավելի քան հարյուրամյա ընդմիջումից հետո, կարևոր իրադարձություն էր վրաց իրականության համար:

3. ՔԱՐԹԼԻ-ԿԱԽԵԹԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ: ՀԵՐԱԿԼ ԵՐԿՐՈՐԴ

Իրանում Նադիր շահի սպանությունից (1747 թ.) հետո ստեղծված խառնակ ժամանակաշրջանում Թեյմուրազ Բ-ի և Հերակլ Բ-ի կառավարումը Քարթլիում և Կախեթում ու նրանց կողմից համաձայնեցված ներքին և արտաքին միասնական քաղաքականությունը կարևոր նշանակություն ունեցան Վրաստանի համար: Նադիր շահի կենդանության ժամանակ ունենալով շահի աջակցությունը՝ Թեյմուրազն ու Հերակլը հաջողությամբ դիմագրավում էին լեզգիների ու Ախալցխայի փաշայության կողմից Վրաստանի վրա կատարվող հարձակումներին:

Նադիր շահի սպանությունից հետո Իրանում սկսվեց գահակալական անզիջում պայքար[25]: Թեյմուրազի՝ Իրանում գտնվելու պատճառով Քարթլիում կառավարիչ նշանակված Հերակլի ու Իեսեի որդի Աբդուլա բեկի միջև 1747 թ. պայքար սկսվեց գահի համար: Վերջինս ներկայանում էր օրինական իրավահաջորդ և փորձում գրավել գահը: Հերակլ Բ–ին հաջողվեց պարտության մատնել Աբդուլա բեկին: Քարթլիի գահի նկատմամբ իր հավակնություններով հանդես էր գալիս նաև Վախթանգ Զ–ի որդին՝ Բաքարը, որը հոր հետ փոխադրվել էր Ռուսաստան: Նման իրավիճակում Թեյմուրազի բացակայությունը կարող էր ավելի խորացնել ճգնաժամը, ուստի 1749 թ. Թեյմուրազ Բ–ը Իրանից վերադարձավ Քարթլի՝ բերելով նաև շահի կողմից Ղազախ և Բորչալու գավառների կառավարումը Քարթլիին հանձնելու շահական հրովարտակ: Թեյմուրազի վերադարձից հետո դադարեցվեց Իրանին հարկի վճարումը, և Տփղիսից արտաքսվեց պարսից կայազորը: Քարթլին ու Կախեթը ձեռք բերեցին փաստական անկախ թագավորությունների կարգավիճակ, ինչը պայմանավորված էր Իրանում կենտրոնական իշխանության բացակայությամբ և գահակալական կռիվներով: Նման ինքնուրույն կարգավիճակում էին նաև Իրանի ծայրամասային այլ նահանգներ, որոնց կառավարողների միջև ևս պայքար ծավալվեց տիրույթներն ընդարձակելու համար: Վրաց թագավորներին հաջողվեց ոչ միայն պահպանել իրենց տարածքներն ու ինքնիշխանությունը, այլև իրենց ազդեցությունը տարածել հարակից Երևանի ու Գանձակի խանությունների նկատմամբ և հարկատու դարձնել նրանց:

1751 թ. Երևանի խանի խնդրանքին արձագանքած և օգնության ժամանած վրացական բանակին հաջողվեց պարտության մատնել Երևանի խանության տարածք ներխուժած պարսից զորքերին, որից հետո Երևանի խանը սկսեց հարկ վճարել Թեյմուրազին: Այդ հաղթանակը մեծապես բարձրացրեց Քարթլիի հեղինակությունը Այսրկովկասում և նրան դարձրեց տարածաշրջանում քաղաքական հիմնական դերակատարներից մեկը: Հաջորդ տարի օգնության խնդրանքով Վրաստանին դիմեց նաև Գանձակի խանը՝ պարտավորվելով զինական օգնության դիմաց վճարել ամենամյա հարկ:

Չնայած ձեռք բերած ռազմական հաջողություններին՝ Թեյմուրազ Բ–ը և Հերակլ Բ–ը չէին կարող ինքնավստահ և ապահով զգալ Քարթլիի գահին, քանի դեռ Ռուսաստանում գտնվող Վախթանգ Զ–ի ժառանգները կարող էին իրենց հավակնությունները ներկայացնել վրացական գահի նկատմամբ: Վախթանգի ժառանգների հավակնություններին դիմակայելու գործում կարևոր օժանդակություն կհանդիսանար Ռուսաստանի կողմից Թեյմուրազի և Հերակլի թագավորության ճանաչումը: Այդ նպատակով Ռուսաստան առաքվեց պատվիրակություն՝ Տփղիսի առաջնորդ Աթանասի և Սիմոն Մաղաշվիլու գլխավորությամբ՝ Ռուսաստանից ռազմական և ֆինանսական օգնություն հայցելու պատրվակով: Դիվանագիտական այդ առաքելությունը, սակայն, հաջողություն չունեցավ, Ռուսաստանը ձեռնպահ մնաց վրաց պատվիրակությանը ընդառաջելու քայլերից:

[25] Գահը կարճ ժամանակ զբաղեցրեց նաև Ադիլ շահը, որը Թեյմուրազի փեսան էր:

Միաժամանակ ավելի էին հաճախանում Դաղստանի լեզգիական ժողովուրդների արշավանքները դեպի Վրաստան, որոնք ավերիչ ասպատակություններով մեծ սպառնալիք էին դարձել նաև հարակից երկրամասերի համար: XVIII դարի երկրորդ կեսին օսմանյան պետության օժանդակությունը վայելող լեզգիները իրենց արշավանքներով Վրաստանի համար դարձան անլուծելի խնդիր: Օսմանա–դաղստանյան ընդհանուր ճակատի դեմ 1758 թ. դաշինք կնքեցին նաև Արևելյան ու Արևմտյան Վրաստանի Թեյմուրազ Բ, Հերակլ Բ և Սողոմոն Ա թագավորները:

1750–ական թվականների վերջերին գահակալական պայքարն Իրանում ավարտվում էր Զենդական դինաստիայի հաղթանակով: Իրանի հարավային ու կենտրոնական նահանգներում իր հակառակորդներին պարտության մատնած Քերիմ խանը հայացքն ուղղել էր նաև դեպի հյուսիսային նահանգներ, որոնց միավորումը հնարավորություն կտար նրան հռչակվելու որպես Իրանի նոր շահ: Լեզգիական արշավանքներին դիմակայելու խնդիրը, Քերիմ խանի հզորացումն ու Իրանի կողմից սպառնալիքը՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ ռուսական կայսրից ճանաչում ստանալու և իրենց իշխանության օրինականությունը հաստատելու ձգտումը, Թեյմուրազ Բ–ին հարկադրեցին կրկին դիմել Ռուսաստանի օգնությանը և կազմակերպել վրաց պատվիրակության այցը Ռուսաստան: 1760 թ. Թեյմուրազը, Քարթլիի կառավարումը հանձնելով որդուն՝ Կախեթի թագավոր Հերակլ Բ–ին, շքախմբով ճանապարհվեց Պետերբուրգ՝ միաժամանակ մահմեդականների կասկածները փարատելու նպատակով Վրաստանում լուրեր տարածելով, թե իբր նա հեռացել է երկրից որդու հետ ունեցած գժտությունների պատճառով: Թեյմուրազի ճանապարհորդության նպատակների մասին իրազեկված էր Հայոց կաթողիկոս Հակոբ Շամախեցին: Վերջինս նախապատրաստել էր Թեյմուրազին օժանդակություն ցուցաբերելու խնդրանքով Ռուսաստանի Ելիզավետա կայսրուհուն ուղղված կոնդակ, որը, սակայն, մնաց չառաքված՝ Էջմիածնից Թիֆլիս ճանապարհների վտանգավորության և Թեյմուրազի անակնկալ մեկնելու պատճառով: Պետերբուրգում Թեյմուրազ թագավորին բազմիցս հանդիպել և երկարատև բանակցություններ է վարել Հայաստանի ազատագրության ջատագով Հովսեփ Էմինը:

Յոթամյա պատերազմի պայմաններում Թեյմուրազի այցը Ռուսաստան չունեցավ սպասված արդյունքները, իսկ Թեյմուրազի մահը Պետերբուրգում 1762 թ. ի չիք դարձրեց բոլոր սպասելիքները: Հերակլ Բ–ին մնում էր առավել ճկուն քաղաքականությամբ ամրապնդել ձեռք բերած հաջողությունները և միավորելով Քարթլիի ու Կախեթի կառավարումը՝ դիմագրավել ներքին ու արտաքին սպառնալիքներին:

Ներքին սպառնալիքների մեջ առավել վտանգ էին պարունակում կենտրոնախույս ուժերը, որոնց սանձահարման նպատակով Հերակլը վերացրեց երկու իշխանություններ՝ Քսանի և Արագվիի էրիսթավությունները: Հերակլ Բ–ի այդ քայլը իշխանական դասի ներկայացուցիչների մոտ մտավախություն հարուցեց, ինչը նպաստավոր հանգամանք դարձավ Վախթանգ Զ–ի ժառանգներից մեկի՝ Ռուսաստանից Վրաստան ժամանած Պաատայի կողմից 1765 թ. իշխանափոխության նպատակով դավադրություն կազմակերպելու համար: Դավադրությունը բացահայտվեց, իսկ

մասնակիցները ենթարկվեցին դաժան հաշվեհարդարի: Երևանի խանը փորձեց օգտագործել Վրաստանում ներքաղաքական լարվածության հանգամանքը և դադարեցնել հարկի վճարումը Հերակլ Բ–ին: Նույն թվականին Հերակլը արշավանք կազմակերպեց դեպի Երևան, որն ուղեկցվում էր նաև Արարատյան դաշտի հայ բնակչության կողոպուտով: Արշավանքը հնարավոր եղավ դադարեցնել Սիմեոն Երևանցի կաթողիկոսի (1763–1780 թթ.) միջնորդության շնորհիվ, և վերականգնվեց Երևանի խանի կողմից սահմանված հարկի վճարումը:

Արտաքին սպառնալիքներից էր Վրաստանից հնազանդության պահանջով Քերիմ խանի կողմից արշավանքի վտանգը, որը կասեցվեց Հերակլի մոտ գերության մեջ պահվող Իրանի գահի նախկին հավակնորդներից մեկին՝ Ազատ խանին Քերիմ խանին հանձնելու, ինչպես նաև վերջինիս դեմ Իրանում անակնկալ ծագած ապստամբության հետևանքով:

1760–ական թթ. վերջերին Վրաստանի անվտանգության համար լուրջ սպառնալիք էին օսմանյան պետությունը, որի տիրապետության տակ էր Արևմտյան Վրաստանը, ինչպես նաև լեզգիական արշավանքները, որոնց դիմակայելու համար Հերակլը ստիպված էր դիմելու Ռուսաստանի օգնությանը: Ռուսաստանի օժանդակությունը անհրաժեշտ էր նաև Արևմտյան Վրաստանին օսմանյան լծի դեմ պայքարում:

1768 թ. ծագած ռուս–թուրքական պատերազմը հարմար առիթ էր դիտվում վրաց գործիչների կողմից օտար լուծը թոթափելու պայքարում Ռուսաստանից ռազմական օժանդակություն ստանալու առումով: Այդ է պատճառը, որ Ռուսաստանին նման առաջարկներով դիմեցին Հերակլ Բ–ն ու Արևմտյան Վրաստանի թագավոր Սողոմոն Ա–ը: Վերջինս օգնության խնդրանքով Մաքսիմե Քութայիսեցու գլխավորությամբ դեսպանություն ուղարկեց Ռուսաստան՝ միաժամանակ առաջարկելով Վրաստան ուղարկել ռուսական զորամաս:

1769 թ. Ռուսաստանը գեներալ Տոտլեբենի հրամանատարությամբ Դարիալի կիրճով Վրաստան ուղարկեց զորամաս, որի միջոցով Հերակլ Բ–ը հույս ուներ պարտության մատնելու օսմանցիներին Ախալցխայի ուղղությամբ մարտերում և իր տիրապետությունը հաստատելու այնտեղ: Տոտլեբենը, սակայն, գործում էր առանց Հերակլի հետ իր գործողությունները համաձայնեցնելու և ձգտում էր թելադրող դիրք ձեռք բերելու Վրաստանում: Նա մտադիր էր օգտագործել վրաց օժանդակությունը Արևմտյան Վրաստանի թուրքական ամրոցները գրավելու և Վրաստանում Ռուսաստանի տիրապետությունը հաստատելու համար, ինչպես նաև բնակչությանը ստիպել հավատարմության երդում տալ Ռուսաստանին: Այդ հանգամանքը հարուցեց Հերակլի դժգոհությունը և պատճառ դարձավ նրանց միջև սուր հակասությունների: Ռուսաստանը ստիպված էր հակասությունները չխորացնելու նպատակով մեղքը բարդել գեներալի ինքնակամ գործողությունների վրա: Լրացուցիչ ուժերով Տոտլեբենի փոխարեն Վրաստան ուղարկվեց գեներալ Սուխոտինը: Սուխոտինը ևս հրահանգ չուներ զբաղվելու վրաց թագավորների տիրույթների ընդարձակման ու նրանց հզորացման խնդիրներով, ուստի ռուսական զորամասը ետ կանչվեց Վրաստանից՝ վրաց թագավորներին միայնակ թողնելով օսմանյան ներխուժման վտանգի

և լեզգիական հաճախացած արշավանքների առջև: Իրավիճակի թելադրանքով Հերակլ Բ–ը ստիպված էր Անտոն կաթողիկոսի և իր որդու՝ Լևանի գլխավորությամբ դեսպանություն ուղարկել Ռուսաստան: Պարտավորվելով ընդունել Ռուսաստանի հովանավորությունը՝ Հերակլը ուղարկել էր նաև ռուս–վրացական պայմանագրի նախագիծ:

Ռուսական իշխանությունների կողմից հարուցած ձգձգումները հաղթահարելուց և ամբողջ 1772 թվականը Աստրախանում անցկացնելուց հետո վրաց դեսպանությանը ի վերջո հաջողվում է ժամանել Պետերբուրգ: 1773 թ. դեկտեմբերի 31–ին վրաց դեսպանությանն է հանձնվում ռուսական արքունիքի պաշտոնական պատասխանը Հերակլի ներկայացրած խնդրագրին, որտեղ հայտնվում էր, թե Վրաստանի համար կարևորը խաղաղությունն է, ուստի Ռուսաստանն այդ նկատի կունենա առաջիկայում՝ ռուս–թուրքական հաշտության բանակցությունների ժամանակ: Ռուս–թուրքական պատերազմի ավարտից հետո կնքված Քյուչուկ Կայնարջիի պայմանագրի 23–րդ հոդվածով Արևմտյան Վրաստանի նկատմամբ ընդունվում էր օսմանյան տերության իրավասությունը այն պայմանով, որ Վրաստանն ազատվում էր հարկ վճարելու պարտականությունից:

Պայմանագրի մեջ չէր կարող ներառվել Արևելյան Վրաստանի հարցը, սակայն Հերակլը, փորձելով օգտվել պատերազմում Թուրքիայի կրած պարտության հանգամանքից և քայլեր ձեռնարկել Ախալցխայի նկատմամբ, որոշում է կրկին դիմել Ռուսաստանի օժանդակությանը՝ խնդրելով գեներալ Մեդեմին զորքով մոտենալ Վրաստանի սահմաններին: Ստանալով Մեդեմի զեկուցագիրը այդ մասին՝ Եկատերինան 1775 թ. հուլիսի 28–ին պատասխանում է գեներալին, թե Հերակլը շարունակում է միջոցներ փնտրել այստեղի օժանդակությունը իր սեփական շահերին ծառայեցնելու նպատակով: Կայսրուհին հրահանգում է իր գեներալին, թե Հերակլը արժանի չէ ուշադրության, և կարգադրում է «լռություն պահպանել» մինչև Հերակլի կողմից կրկին նոր դիմումի ստացվելը, իսկ այնուհետև ծանուցել նրան, թե նրա խնդրանքի բավարարումը անհնար է, և թող նվաճումներն ու ձեռքբերումները կատարի սեփական ուժերով: Ահա նման իրադրության պայմաններում էր, որ Հերակլը 1776 թ. կատարեց դիվանագիտական նոր շրջադարձ՝ իր դեսպանին ուղարկելով Կ. Պոլիս և պայմանագիր կնքելով օսմանյան պետության հետ, ինչը, սակայն, Հերակլի մտադրությունների վերաբերյալ լուրջ կասկածներ հարուցեց օսմանյան պետության հետ մշտական հակամարտության մեջ գտնվող Սողոմոն Ա թագավորի մոտ: Այդ հանգամանքը հանգեցրեց նրանց միջև հարաբերությունների սրմանը: Հերակլը ապաստան տվեց Սողոմոն Ա–ի դեմ ապստամբած նրա որդուն՝ Ալեքսանդրին, իսկ Սողոմոնը՝ որոշ ժամանակ անց Վախթանգ Զ–ի թոռանը՝ Ալեքսանդրին, որը հավակնում էր Քարթլիի գահին: Վերջինս, մինչ այդ Ռուսաստանից անցնելով Իրան, ապաստանել էր Քերիմ խանի մոտ:

Ներքին քաղաքականության մեջ Հերակլը փորձում էր բարեփոխումների իրականացումով ամրապնդել երկրի պաշտպանունակությունը: Նրա հրամանով 1774 թ. ստեղծվեց մշտական բանակ՝ այսպես կոչված «մորիգե», որ հավաքագրվում էր

բնակչության զորակոչի միջոցով: Յուրաքանչյուր տղամարդ պարտավոր էր տարին մեկ ամիս ծառայել բանակում իր հանդերձանքով: Նման սկզբունքով հավաքագրվեց մոտ հինգհազարանոց մշտական զորք, որը կարևոր դեր ունեցավ շրջակա ասպատակություններին դիմակայելու գործում:

Վրաստանի համար լուրջ սպառնալիք էր այն հանգամանքը, որ Ղուբայի Ֆաթալի խանին հաջողվել էր իրեն ենթարկել Դերբենդի, Շամախու, Բաքվի խանությունները, որին դիմակայելու անհրաժեշտությամբ էլ պայմանավորված էր Հերակլ Բ-ի համագործակցությունը Արցախի Իբրահիմ խանի հետ: Ֆաթալի խանի դրդումով Գանձակի Մահմեդ խանը 1778 թ. դադարեցրեց Հերակլին հարկի վճարումը: Այնժամ Հերակլի և Իբրահիմ խանի զորքերը համատեղ արշավանքով պարտության մատնեցին Ֆաթալի խանի և Գանձակի խանի զորքերին և Գանձակում հաստատեցին համատեղ կառավարում: Նշանակվեցին երկու կառավարիչներ՝ Հերակլի ներկայացուցիչ Քայխոսրո Էնդրոնիկաշվիլին և Իբրահիմի ներկայացուցիչ Հազրաթուլի բեկը (ծագումով՝ վրացի), որոնք այն կառավարեցին վեց տարի:

1779 թ. Երևանի խանը հրաժարվել էր Հերակլին հարկ վճարելուց: Քարթլի-Կախեթի թագավորության դիրքերը ամրապնդելու նպատակով Հերակլը որոշեց արշավանք կազմակերպել նաև դեպի Երևան և աթոռազրկելով խանին՝ խանությունը միացնել իր թագավորությանը՝ այնտեղ կառավարիչ նշանակելով իր թեկնածուին: Արարատյան դաշտ ներխուժած Հերակլի խոշոր բանակը մեծ վնաս պատճառեց հայկական բնակավայրերին[26]: Ապարդյուն անցան արշավանքը դադարեցնելու վերաբերյալ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի միջնորդական ջանքերը: Երևանի բերդը, սակայն, թեև մնաց անառիկ, և արշավանքը այդ առումով չհասավ իր նպատակին, Հերակլը Երևանի խանությունը առավել թուլացնելու նպատակով Արարատյան դաշտի հայ բնակչությունը փոխադրեց Վրաստան[27]: Ըստ Դավիթ արքայազնի հաղորդման՝ վրացական բանակը Երևանի բնակիչներին հասցրեց այն աստիճանի, որ Հուսեին Ալի խանը պարտավորվեց վճարել հարկը ավելի, քան նախկինում էր: Տեղեկանալով Հերակլի մտադրությունների մասին՝ Երևանի խանը դեռևս Հերակլի՝ Թիֆլիսում եղած ժամանակ օգնության խնդրանքով դիմում է Սիմեոն Երևանցի կաթողիկոսին և «երիցս հրավիրեց Սրբազանին իր մոտ...մեծ պաղատանքով խնդրեց...մարդ ուղարկել Թիֆլիզ...և որևէ կերպով փրկութեան հնար գտնել»: Սիմեոն Երևանցին Մկրտիչ Շոռոթեցի տեղապահին ու աթոռակալ Գալուստ Աշտա-

[26] Ականատես հեղինակը առավել հանգամանալի տեղեկություններ է հաղորդում այս արշավանքի մասին և արձանագրում, թե «իշխողն Վրաց, որ էր ի վաղուց հետէ անտի մեծ երախտաւոր երկրիս (իմա՝ Երևանի), որ քանիցս անգամ սաստիկ պատերազմաւ ի յօտար թշնամեաց զերծուցեալ էր զերկիրս և յատկապէս զիշխողս սորին իսկ, և որպէս թէ զիւրն համարելով, քաղցր ակամբ հայէր... սաստիկ բարկութեամբ սկսաւ յայլ և այլ տեսակ և բարբարոս ազգաց, լեռնականաց զանթիւ զօրս ժողովել և ի վարձու ունիլ – զորս անուանէին Թուշ, Փշաւ, Ղարաղլխան, Քիստ, Չէրքէզ, Ամիխազ բազմաթիւք և զայլս այսպիսիս, հանդերձ բոլոր զօրօքն իւրովք, որք էին Վիրք, Սումխէթք հայազունք, և ի տաճկաց... Ղազախ, Բորչալու, Բայտար և Դեմուրչի Հասանլու, մինչև զի՝ Եզտիք ևս գոյին»:

[27] Հովհան Ոսկերչյանի վկայությամբ՝ Հերակլ Բ-ն Արարատյան դաշտից փոխադրել էր հայկական այն գյուղերի բնակչությանը, որոնք խույս էին տվել և ապաստանել Բայազետում:

ռակեցի եպիսկոպոսին ուղարկում է Հերակլի մոտ, որին նրանք «մերձ ի Թիֆլիզ ի ձանապարհին հանդիպեալ էին և զթուղթն մատուցեալ նմա»: Հերակլը, սակայն, մերժումով էր պատասխանել Սիմեոն կաթողիկոսի և Երևանի խանի նամակներին:

Մինչ Երևանի բերդի պաշարումը, երբ Հերակլի զորքերը դեռևս Աշտարակում էին գտնվում, Երևանի խանը Սիմեոն Երևանցուն միջնորդական առաքելությամբ ուղարկել էր վրացական բանակ և պարտավորվել վճարել նախորդ տարիների չվճարված հարկերը, սակայն Հերակլը տեղի չի տալիս և շարժվում է դեպի Երևան: Երևան քաղաքի ու խանության տարածքում եղած հայ բնակչությունը ոչ միայն չէր օժանդակել ու պաշտպանել Հերակլի այս արշավանքի նպատակները, այլև լքելով բնակավայրերը՝ հեռացել էր դեպի Բայազետ: Հերակլը, «տեսնելով, որ մի քանի ամիս հետո ինքն ունայնաձեռն է հեռանալու», դիմում է խորամանկության: Նա իր հավատարիմներից ոմանց (Մելիք Շաքարո, Միրզա Ռապի և Հայոց Բլուր գյուղից տեր Հովհաննես) ուղարկում է Բայազետ փախած հայերի մոտ բանակցելու, թե՝ ինչո՞ւ են իբրև օտարից խուսափում, չէ՞ որ զենք վերցրի՝ փրկելու ձեզ նեղող պարսիկներից: Ավելին՝ Հերակլը հայազգի բնակչությանը գայթակղելու համար խոստանում է փոխհատուցել նախկինում նրանց կրած զրկանքների համար: Հերակլը երդվելով պարտադրում է Սիմեոն Երևանցուն, որպեսզի վերջինս ևս համոզի փախստականներին, թե «նրանց փրկության համար է զենք վերցրել», իսկ Բայազետի փաշայից պահանջում է վերադարձնել այնտեղ ապաստանած հայերին: Ի վերջո հաջողելով վերադարձնել հայերին՝ Հերակլը ձմեռնամուտին «...ութ գյուղերի բոլոր բնակիչներին քշում և խառնում է իր զորքին ու վերադառնում Տփղիս»: Այսպիսով, ամբողջ իր հեղինակությամբ ու ազդեցությամբ միջամտելով հանդերձ՝ Սիմեոն Երևանցին ի զորու չեղավ կասեցնելու Հերակլի կողմից 1779 թ. կատարված Արարատյան դաշտի հայաթափությունը[28]:

Քերիմ խանի մահը (1779 թ. փետրվար) ավելի էր սրել իրավիճակը, և լուրեր էին տարածվում, թե Հերակլն այնուհետև կարող է արշավանքը շարունակել դեպի Իրանի խորքերը: Տեսնելով Երևանի բերդի գրավման ձգձգումը՝ Հերակլը զինվորներին հրամայեց պատրաստ լինել ձմեռելու Հայաստանում: Արշավանքը արդեն ձգվել էր մոտ երեք ամիս, երբ Հերակլի անունով նամակ ստացվեց, թե վրացական գահի հավակնություններով Արևմտյան Վրաստան է ժամանել Բաքար արքայազնի որդի Ալեքսանդրը: Հերակլը ստիպված էր Երևանում մոռրավ նշանակել Մուխրանի տիրոջը՝ Հովհաննին, և նոյեմբերի 3-ին շտապ կարգով վերադառնալ:

4. ԳԵՈՐԳԻԵՎՍԿՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

1780-ական թվականներին Վրաստանը և ողջ Այսրկովկասը առավել մեծ չափով ներքաշվեցին Ռուսաստանի արտաքին քաղաքականության ոլորտ: Ռուս-թուրքական 1768–1774 թթ. հաղթական պատերազմից հետո՝ 1779 թ., հաջողությամբ իրականացնելով Ղրիմի խանությունից քրիստոնյաների տարհանումը և ներքաղաքա-

[28] Բռնագաղթեցված բնակչության մի մասը վերադարձվեց Երևանի խանի և Հերակլի միջև 1781 թ. վերջերին կնքված հաշտության պայմանագրով:

կան լարվածության ստեղծումով նախապատրաստելով խանության վերացումն ու այն Ռուսաստանին միացումը՝ ռուսական արքունիքում հերթի դրվեց Այսրկովկասը ևս Ռուսաստանին միացնելու համար անհրաժեշտ ռազմաքաղաքական հիմքերի նախապատրաստումը:

Այդ ուղղությամբ աշխատանքներ ծավալելով՝ ռուսական դիվանագիտությունը միաժամանակ հովանավորություն էր խոստանում Վրաստանին, Արցախի մելիքներին ու Այսրկովկասի խանություններին, ինչը նպատակ ուներ դյուրացնելու Ռուսաստանի մուտքը Հարավային Կովկաս:

Ռուս-վրացական հարաբերություններում կարևոր լծակ դարձավ օտար հարձակումներից Վրաստանի անվտանգությունը Ռուսաստանի կողմից երաշխավորելու խոստումը: Ռուսաստանի հովանավորության ընդունումը նախատեսում էր Վրաստանի ինքնուրույն արտաքին քաղաքականության վարումից հրաժարում, ուստի բանակցությունները դժվարությամբ էին առաջ ընթանում Հերակլի դիմադրության և մտավախությունների պատճառով: Որքանով գայթակղիչ էին Ռուսաստանից ռազմական օժանդակություն ստանալու խոստումները, նույնքան և վտանգավոր՝ թագավորական իշխանության իրավասությունների սահմանափակման գաղափարը: Երկար քննարկումներից հետո ձևավորվեցին ռուս-վրացական պայմանագրի հոդվածները, որոնք պետք է երաշխավորեին փոխադարձ վստահություն: 1783 թ. հուլիսին Գեորգիևսկ ամրոցում ստորագրվեց պայմանագիր, որը սահմանում էր երկու երկրների փոխհարաբերությունների հեռանկարը: Պայմանագիրը ռուսական կողմից ստորագրել էր գեներալ Պ. Ս. Պոտյոմկինը, վրացական կողմից՝ Մուխրանի տիրակալ Հովհան Բագրատիոնին և իշխան Գարսևան Ճավճավաձեն: Պայմանագիրը Հերակլի կողմից վավերացվեց 1784 թ. հունվարի 24-ին:

Պայմանագրի 13 հոդվածներով սահմանվում էր, որ Քարթլի-Կախեթի թագավորը և նրա ժառանգորդները ճանաչում են Ռուսաստանի գերակայությունը Վրաստանի արտաքին հարաբերություններում, Ռուսաստանը իր ռազմաքաղաքական հովանավորության տակ է առնում Վրաստանին, հաստատում է դիվանագիտական հարաբերություններ՝ դեսպանությունների փոխանակմամբ, և Վրաստանում ունենալու է ռուսական կայազոր, վրաց կաթողիկոսը դառնում է ռուսական եկեղեցու սինոդի անդամ և այլն: Ռուսաստանը նպաստելու է Վրաստանին միացնելու այն տարածքները, որոնք մինչ այդ պատկանել են նրան:

Ռուս-վրացական պայմանագրի ստորագրումը մեծ ահազանգ էր օսմանյան պետության, Իրանի և Վրաստանի կովկասյան այլ հարևանների համար: Հաճախացան լեզգիների արշավանքները Վրաստանի դեմ, որոնք հրահրվում էին օսմանյան իշխանությունների կողմից:

Հերակլը փորձեց հարաբերությունները կարգավորել օսմանյան պետության և Իրանի հետ: 1787 թ. սկսված ռուս-թուրքական պատերազմի կապակցությամբ Ռուսաստանը Վրաստանից ետ կանչեց Տփղիսում[29] (Թիֆլիսում) գտնվող ռուսական

[29] XVIII դ. վերջերից հայերենում հաճախանում է Տփղիսին (վրացերենում՝ Տփիլիսի) զուգահեռ Թիֆլիսի գործածությունը:

կայազորը՝ հարևանների հետ Վրաստանի հարաբերությունների կարգավորումը դյուրացնելու պատրվակով:

Վրաստանում ծանր էր նաև ներքաղաքական վիճակը: Գահաժառանգության խնդիրը անհանգստացնում էր արքունիքում Հերակլի երկրորդ ամուսնությունից ծնված որդիներին, որոնք վիճարկում էին գահի անցումը թագավորի առաջին ամուսնությունից ծնված ավագ որդուն՝ Գիորգիին: Լարվածությունը թուլացնելու նպատակով 1791 թ. Հերակլը ընդունեց գահաժառանգության նոր կարգ, որով գահը կարող էր անցնել եղբորից եղբորը և ոչ թե ուղղակի միայն ավագ որդուն: Բավարարելու համար արքայազների և իր երկրորդ կնոջ՝ Դարեջան թագուհու հավակնությունները՝ Հերակլը 1792 թ. ժառանգական կալվածքներ շնորհեց բոլոր որդիներին: Այդ հանգամանքը իր բացասական դերն ունեցավ արտաքին վտանգին դիմակայելու գործընթացում:

1790-ական թթ. հզորացած Աղա Մուհամմեդ խանին հաջողվեց իր գերակայությունը հաստատել Իրանի գրեթե ողջ տարածքում: Շահական աթոռը զբաղեցնելու համար անհրաժեշտ էր իրանական տիրապետությունը հաստատել նաև Այսրկովկասում: Այսրկովկասյան բոլոր իշխողներին ուղղված Աղա Մուհամմեդ խանի շրջաբերական վերջնագիր-նամակին չարձագանքեցին միայն Հերակլը և Արցախում ամրապնդված Իբրահիմ խանը: Աղա Մուհամմեդ խանը պատրաստվում էր արշավելու Արցախ և Քարթլի: Արտաքին վտանգին դիմակայելու համար Գեորգիևսկյան պայմանագրի համաձայն Ռուսաստանից օժանդակ ուժեր ուղարկելու մասին Հերակլի բոլոր հորդորներն ու պահանջները մնացին անպատասխան: 1795 թ. ամռանը Աղա Մուհամմեդ խանը խոշոր բանակով արշավեց Արցախ, պաշարեց Շուշին, սակայն չկարողանալով գրավել այն՝ արշավանքը շարունակեց դեպի Թիֆլիս՝ իր հետ առնելով նաև Գանձակի խանին և իրեն հպատակություն հայտնած մելիք Մեջլումին:

1795 թ. սեպտեմբերի 12-ին պարսկական զորքերը ներխուժեցին Թիֆլիս և այն ենթարկեցին սոսկալի ավերածությունների: Հերակլը ստիպված էր քաղաքից հեռանալ դեպի Կախեթ (Թելավ): Մեկ շաբաթ Թիֆլիսն ավերելուց և կողոպտելուց հետո Աղա Մուհամմեդ խանի զորքերը հեռացան քաղաքից՝ տանելով բազմաթիվ գերիներ և կողոպուտ: Արշավանքը մեծ հարված էր նաև քաղաքի հայազգի բնակչությանը: Աղա Մուհամմեդ խանին պատժելու պատրվակով 1796 թ. Այսրկովկաս ուղարկված ռուսական բանակը գլխավորում էր գեներալ Վ. Զուբովը: Ռուսական զորքը գրավեց Դերբենդը, Բաքուն, Շամախին ու մտավ Գանձակ, սակայն 1796 թ. նոյեմբերի 6-ին կայսրուհու մահը և նոր կայսեր գահակալումը պատճառ դարձան դադարեցնելու արշավանքը: Պավել Ա-ի հրամանով ռուսական բանակը վերադարձավ Ռուսաստան, Այսրկովկասը կրկին հայտնվեց Աղա Մուհամմեդ խանի պատժիչ գործողությունների վտանգի դիմաց, և միայն շահի մահը 1797 թ. կանխեց հետագա զարգացումները:

1798 թ. հունվարին Հերակլի մահից հետո գահ բարձրացած Գիորգի ԺԲ-ը իր կառավարումը սկսում էր երկրի համար ներքին և արտաքին ծանր պայմաններում: Իրանի նոր շահ հռչակված Բաբա խանը (Ֆաթալի շահ) սպառնալից նամակով

Գիորգիից պահանջում էր ընդունել Իրանի հպատակությունը, իսկ երկրի ռուսամետ գործիչները հակված էին հովանավորության ակնկալիքով կրկին դիմելու Ռուսաստանին: 1799 թ. ստանալով Ռուսաստանի գերակայությանը ապավինելու վերաբերյալ Գիորգիի կողմից ռուսական արքունիք ուղարկած նամակը՝ ռուսական զորքերը մուտք գործեցին Վրաստան և ստանձնեցին փաստական կառավարման ղեկը: 1800 թ. դեկտեմբերին Գիորգիի մահը հնարավորություն տվեց ռուսական կողմին լիովին տնօրինության տակ առնելու Վրաստանի ներքին ու արտաքին հարաբերությունները և Վրաստանի ժամանակավոր կառավարիչ նշանակելու Դավիթ արքայազնին:

1801 թ. հունվարին արդեն պատրաստ էր Պավել Ա-ի հրովարտակը՝ Վրաստանը Ռուսաստանին միացնելու վերաբերյալ, որը Թիֆլիս բերվեց և հրապարակվեց նույն թվականի փետրվարին: 1801 թ. մարտին Պավել Ա-ի սպանությունը և Ալեքսանդր Ա-ի գահակալումը անհրաժեշտություն առաջացրին վերահաստատելու Վրաստանի միացման վերաբերյալ որոշումը, ուստի 1801 թ. սեպտեմբերի 12-ին հրապարակվեց նաև Ալեքսանդր կայսեր հրովարտակը, որը ամրագրում էր Ռուսաստանի վճռականությունը Վրաստանի միավորման վերաբերյալ:

Վրաստանի թագավորական արքունիքի անդամները հայտնվեցին մեծ շփոթության մեջ: Թագավորական տան անդամների դիմադրությունը հաղթահարելու և նրանց մեկուսացնելու նպատակով 1802 թ. սկսվեց արտոնյալ պայմաններով մշտական բնակության համար Վրաստանից նրանց տարհանումը Ռուսաստան:

5. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՎՐԱՍՏԱՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

XVIII դարի սկզբներից օսմանյան պետությունը փորձում էր առավել ամրապնդվել Արևմտյան Վրաստանում: Արևմտյան Վրաստան ուղարկված թուրքական բանակին հաջողվեց հաղթահարել վրացական իշխանությունների համառ դիմադրությունը և պարտադրել օսմանյան լուծը: Երկրի համար նման ծանր պայմաններում Իմերեթում գահ բարձրացավ Վախթանգ Զ-ի արքունիքում մեծացած և նրա քաղաքական հայացքները կիսող Ալեքսանդր Ե-ը (1721–1752 թթ.): Վերջինս առավել չափով էր հետամուտ երկիրը օտար լծից ազատագրելու գաղափարին, սակայն հենց Ալեքսանդր Ե-ի գահակալության ժամանակ տեղի ունեցան թուրքական զորքերի կողմից Վրաստանի ծովափնյա բոլոր ամրոցների գրավումը և այնտեղ թուրքական կայազորների տեղադրումը (1723 թ.): Օսմանները գրավել էին նաև Քութայիսի, Բաղդադի և Շորապանի բերդերը: Արևելյան Վրաստանից Վախթանգ Զ-ի՝ Ռուսաստան փոխադրվելուց հետո Ալեքսանդրը Իմերեթում ստիպված էր ուժերի անհավասարության պայմաններում համակերպվել օսմանյան գերակայությունն ընդունելու կարգավիճակին: 1730 թ. նա հարկադրյալ մասնակցեց նաև Ջիքե ամրոցի գրավման թուրքական բանակի արշավանքին, ինչը խորացրեց նրա նկատմամբ Արխազիայի և Օդիշի իշխողների բացասական վերաբերմունքը:

1738 թ. Ալեքսանդր Ե-ը, փորձելով օգտվել ընթացող ռուս-թուրքական պատերազմի հանգամանքից, օգնության խնդրանքով դիմեց Ռուսաստանին՝ այնտեղ

ուղարկելով Քութայիսի հոգևոր առաջնորդ Տիմոթեոս Գաբաշվիլուն: Ալեքսանդրի դեսպանությունը Ռուսաստանին գայթակղելու նպատակով տարել էր նաև Արևմտյան Վրաստանի բնական հարստությունների և թանկարժեք մետաղների հանքավայրերի վերաբերյալ քարտեզ: Դեսպանությունը, սակայն, հաջողություն չունեցավ:

Թագավորական իշխանությունը ամրապնդելու և ավատատերերի կենտրոնախույս ձգտումները թուլացնելու ակնկալիքով Ալեքսանդր Ե-ը հողային շնորհումներ էր կատարում տարբեր ավատատերերի, ինչը, սակայն, ավելի էր ուժեղացնում նրանց դիրքերը: Ավելին՝ 1740-ական թթ. Ալեքսանդրը երկիցս գահընկեց եղավ իր հակառակորդների կողմից, սակայն կարողացավ կրկին վերականգնվել գահին: Գահընկեցության ընթացքում զրկված լինելով դրամական միջոցներից՝ օժանդակություն ստանալու նպատակով Ալեքսանդր Ե-ը Տիմոթեոս Գաբաշվիլուն ուղարկել էր անգամ Էջմիածին, իսկ 1750–52 թթ. ռազմաքաղաքական հետախուզական նպատակներով՝ Մերձավոր Արևելք:

1752 թ.՝ Ալեքսանդր Ե-ի մահից հետո, Իմերեթի թագավորական գահն անցավ նրա որդուն՝ Սողոմոն Ա-ին (1752–1784 թթ.): Սողոմոն Ա-ը խոշոր դերակատարում ունեցավ Արևմտյան Վրաստանը օսմանյան լծից ազատագրելու գործընթացում: Նրա առաջին ձեռնարկումներից էր մարդավաճառության արգելումը: Մարդավաճառությունը մեծ տարածում էր ստացել, վերածվել էր ավատատերերի եկամտի գայթակղիչ աղբյուրի, ինչը բացասաբար էր անդրադառնում Արևմտյան Վրաստանի ժողովրդագրական զարգացման վրա: Այդ է պատճառը, որ Սողոմոնի նման քաղաքականությունը հանդիպեց ինչպես օսմանյան պետության, այնպես էլ տեղի ավատատերերի ցասումին ու դիմադրությանը:

Սողոմոն Ա-ն իր հիմնական առաքելությունը համարում էր Արևմտյան Վրաստանից օսմանցիներին հեռացնելը և թագավորական իշխանությունն ամրապնդելը: 1757 թ. Սողոմոնի քաղաքականությունը կասեցնելու նպատակով Իմերեթ ներխուժեց օսմանյան խոշոր զորամաս: 1757 թ. դեկտեմբերի 14-ին Սողոմոն թագավորի գլխավորությամբ վրացական զորքը հարձակվեց Խրեսիլիի դաշտում բանակած օսմանյան զորքի և օսմանների կողմից հանդես եկող Ռաճայի էրիսթավ Ռոստոմի վրա ու կարողացավ հաղթանակի հասնել: Ճակատամարտում զոհվեց նաև Սողոմոնի պապը՝ Լևան Աբաշիձեն, որը ևս գտնվում էր օսմանների կողմում: Այդ հաղթանակը մեծապես ամրապնդեց Սողոմոնի հեղինակությունն ու վարկանիշը Արևմտյան Վրաստանում:

1758 թ. Քարթլիի, Կախեթի ու Իմերեթի թագավորները (Թեյմուրազ Բ, Հերակլ Բ, Սողոմոն Ա) կնքեցին փոխօգնության պայմանագիր: Սողոմոն Ա-ը փորձեց մարդավաճառության արգելքի համար ստանալ նաև եկեղեցու աջակցությունը: Եկեղեցական «արտահերթ» ժողովը օրենք ընդունեց մարդավաճառության մեջ մեղադրյալին հանցագործ ճանաչելու և մահվան դատապարտելու մասին:

1760-ական թթ. շարունակվեցին օսմանյան հարձակումները դեպի Իմերեթ, որոնք հանդիպում էին Սողոմոնի համառ դիմադրությանը՝ ավելի բարձրացնելով նրա հեղինակությունը: 1766–1768 թթ. Սողոմոնին հաջողվեց ոչ միայն երկրից հե-

ռացնել օսմանյան զորքերին, այլև հաշվեհարդար տեսնել նրան հարող վրաց իշխանությունների ներկայացուցիչների հետ: 1767 թ. Սողոմոնը Օսմանյան կայսրության հետ կնքեց պայմանագիր, որով Իմերեթը դիտարկվում էր ոչ թե օսմանյան պետությունից կախյալ, այլ նրա հովանավորության ներքո գտնվող երկիր:

1774 թ. ռուս-թուրքական Քյուչուկ-Կայնարջիի պայմանագրում Իմերեթը թողնվում էր որպես Թուրքիայի գերիշխանության ներքո գտնվող երկիր՝ առանց հարկ վճարելու պարտավորության:

Օսմանյան պետությունը հաջորդ տասնամյակում ևս մի շարք արշավանքներ ձեռնարկեց դեպի Արևմտյան Վրաստան, որոնք ընթացան փոփոխակի հաջողություններով: Իմերեթը համառ պայքարում կարողացավ պահպանել իր թագավորական իշխանությունը:

1784 թ.՝ Սողոմոն Ա-ի մահից հետո, գահի շուրջ երկարատև պայքարի արդյունքում գահակալեց նրա հորեղբորորդին՝ Դավիթը, անվանակոչվելով Սողոմոն Բ (1789–1810 թթ.): XIX դարի սկզբին՝ Ռուսաստանի կողմից Արևմտյան Վրաստանի գրավման ընթացքում, խույս տալով ռուսական գերությունից՝ Սողոմոն Բ-ը 1810 թ. սեպտեմբերից ապաստանեց օսմանյան պետության տարածքում (Տրապիզոն), որտեղ և 1815 թ. կնքեց իր մահկանացուն:

Այսպիսով ավարտվեց վրաց պետականության զարգացման միջնադարյան ժամանակաշրջանը: Ռուսական կայսրության կազմի մեջ կորցնելով ազգային պետականությունն ու հոգևոր իշխանության ինքնակայությունը՝ Վրաստանը, սակայն, ձեռք բերեց տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման նոր հնարավորություններ:

6. ՎՐԱՑԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI–XVIII դարերում վրաց մշակույթը շարունակում էր զարգացում ապրել ինչպես բուն Վրաստանում, այնպես էլ Վրաստանից դուրս գտնվող վրացական հոգևոր կենտրոններում: XVI դարից վրաց մշակույթի պատմության մեջ սկսվում է «վերածննդի» կամ վերականգնումի ժամանակաշրջանը, որն ավելի հստակորեն դրսևորվում է XVII դարում: Առաջընթաց արձանագրվեց մասնավորապես գեղարվեստական գրականության բնագավառում, որի բնորոշ գիծը ազգային-հայրենասիրական շունչն էր: Չնայած երկրի վարչաքաղաքական մասնատվածությանը՝ վրաց պետական-քաղաքական միավորներում ընթացող մշակութային կյանքը կրում էր համազգային բնույթ:

Վրաց մշակույթը առաջընթաց էր ապրում ինչպես ազգային հենքի ու ավանդույթների զարգացման, այնպես էլ հարևան ժողովուրդների հետ մշակութային առնչությունների պահպանման և գրական-մշակութային արժեքների թարգմանությունների ու փոխառությունների տեղայնացման շնորհիվ:

Վրաց իրականության մեջ շարունակում էր մեծ տեղ ունենալ ձեռագիր գրքի ավանդույթը: Ձեռագրական խոշոր հավաքածուներ կային վանական մենաստաններում, իշխանական ու թագավորական պալատներում: Առանձնապես ուշադրության կենտրոնում էին հոգևոր-դավանական բնույթի ստեղծագործությունները և աշխարհիկ պատմագրական երկերը: Այլևայլ լեզուներից թարգմանվում էին աշխատություններ բժշկության, աստղաբաշխության, աշխարհագրության, պատմության և գիտության այլ բնագավառներից:

Պատմագրություն: Աննախընթաց հետաքրքրություն առաջացավ գիտության և մասնավորապես պատմագրության նկատմամբ:

Վրաց պատմագրությունը ուշ միջնադարում սնվում էր հիմնականում վրաց ազգային ավանդույթներով: Շարունակում էին կազմվել մանր ժամանակագրություններ, արտագրվում էին ինչպես նախորդ դարերում ստեղծված երկերը, ինչպիսին էր «Քարթլիս ցխովրեբա» (Վրաստանի կյանքը) ժողովածուն, այնպես էլ ստեղծվում էին նոր և առավել հիմնարար աշխատություններ:

XVII դարի պատմության համար մեծարժեք աշխատություններից է քաղաքական անցուդարձերին լավատեղյակ Փարսադան Գորգիջանիձեի հեղինակած «Վրաստանի պատմությունը» աշխատությունը, որն ընդգրկում է սկզբից մինչև 1695 թ. ընկած ժամանակաշրջանը: Նա մոտ 40 տարի եղել էր Իրանի շահի ծառայության մեջ, և նրա աշխատությունը իր հավաստիությամբ առանձնապես կարևոր է հեղինակի ապրած ժամանակաշրջանի իրադարձությունների նկարագրության առումով, որոնց մի մասին նա ունեցել է անմիջական մասնակցություն կամ նկարագրության համար օգտագործել է իր ժամանակի պարսիկ հեղինակների երկերը: Փարսադան Գորգիջանիձեն կազմել է նաև պարսկերեն-արաբերեն-վրացերեն բառարան և 1691 թ. պարսկերենից վրացերեն թարգմանել մահմեդական իրավունքի վերաբերյալ «Ջամի Աբբասի» երկը:

XVII դարի երկրորդ կեսին և XVIII դարի առաջին կեսին է ապրել ու ստեղծագործել Սեխնիա Չիսեիձեն: Նա շարադրել է Վրաստանի 1658–1739 թթ. պատմությունը, որն արժեքավոր տեղեկություններ է պարունակում Քարթլիի և Իրանի պատմության մասին:

Վրաց գիտության զարգացման համար կարևոր խթան էր Վախթանգ Զ-ի կարգադրությամբ կազմված «Ուսյալ արանց» հանձնաժողովի ստեղծումը: Հանձնաժողովի ղեկավարն էր Բերի Էգնատաշվիլին: Հանձնաժողովը հավաքեց «Քարթլիս ցխովրեբա»-ի ձեռագրերը և կազմեց համեմատական բնագիր՝ հիմք ընդունելով նրանցից մեկը և լրացնելով դա եղած այլ ձեռագրերի պարունակած հավելումներով: Միաժամանակ, ձեռագրերում չհայտնաբերելով XIV–XVIII դարերի պատմության շարադրանքը, հանձնաժողովի անդամներն իրենք կազմեցին այն՝ հրովարտակների, արձանագրությունների ու ժամանակագրությունների հաղորդումների հիման վրա:

XVIII դարի առաջին կեսի վրաց գիտության խոշոր ներկայացուցիչ էր Վախթանգ Զ-ի որդի Վախուշտի Բագրատիոնին (1676 – մոտ. 1755/56): Նրա «Վրաստանի պատմություն» հիմնարար աշխատությունը Վրաստանի պատմության առաջին քննական շարադրանքի փորձն էր: Վախուշտին պատմության անհրաժեշտ բաղադրիչներ էր համարում աշխարհագրությունը, ծագումնաբանությունը (գենեոլոգիա), ժամանա-

կագրությունը և փաստագրությունը (իրադարձությունների շարադրանքը): Վախուշտին իր աշխատությունն ավարտեց 1745 թ. տարագրության մեջ՝ Մոսկվայում:

Պապունա Օրբելիանին իր աշխատության մեջ շարադրել է Վրաստանի 1739–1758 թթ. ոչ միայն քաղաքական իրադարձությունները, այլև կարևոր տեղ է հատկացրել սոցիալ-տնտեսական հարաբերությունների լուսաբանմանը: Նա փորձում է իրադարձությունները նկարագրել պատճառահետևանքային կապի մեջ՝ շեշտադրելով միաժամանակ պատմության իմացության կարևորությունը հաջորդ սերունդների համար: Հայ ընթերցողի համար հատկապես արժեքավոր են նրա հաղորդումները Արցախի պատմության, հայ մելիքների և Արցախում խանության կազմավորման սկզբնական փուլի վերաբերյալ:

XVIII դարի առաջին կեսին Վրաստանում սկզբնավորվեց նաև քարտեզագրությունը (Ս.-Ս. Օրբելիանի, Տիմոթեոս Գաբաշվիլի, Վախուշտի):

Կարևոր ներդրում էր վրաց բառարանագրության մեջ Սուլխան-Սաբա Օրբելիանի 1685–1716 թթ. կազմած բացատրական «Վրաց բառարանը», որն առ այսօր պահպանում է իր գիտական արժեքը:

Իրավունքի հուշարձաններ: Կարևոր ձեռքբերումներ եղան վրաց եկեղեցական ու աշխարհիկ իրավունքի ոլորտում: Դեռևս XVI դարից գործում էր այսպես կոչված «Կաթողիկոսական կանոններ» դատաստանագիրքը, որը ստեղծվել է 1543–49 թթ. Իմերեթում հրավիրված եկեղեցական ժողովի կողմից: Դատաստանագիրքը կանոններ էր սահմանում սպանության, մարդավաճառության, եկեղեցիների կողոպուտի, անօրինական ամուսնությունների և այլ հարցերի վերաբերյալ: Կարևոր տեղ էր տրված մարդավաճառության դեմ պայքարին: Աշխարհիկ իրավունքի նորմերը իրականացվում էին ինչպես սովորութային իրավունքի, այնպես էլ թագավորական հրովարտակների ու դատաստանագրքերի սահմանած սկզբունքներով: Ապացույցի համար մեծ նշանակություն էր տրվում երդմանը, մենամարտին և մարմնական տանջանքներին:

Վրաց իրավունքի զարգացման մեջ կարևոր նվաճում էր «ուսյալ արանց» հանձնաժողովի կողմից կազմված նոր դատաստանագիրքը, որի ստեղծման ժամանակ օգտագործվել են բազմաթիվ սկզբնաղբյուրներ, այդ թվում նաև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» վրացերեն թարգմանությունը: Այն կազմվել էր 1705–1709 թթ. և բաղկացած էր 270 հոդվածից:

Վախթանգյան հանձնաժողովը կազմել է նաև պետական կառավարման կանոնակարգ (Դաստուրլամալի), որի 223 հոդվածներում սահմանվում են արքունի և նահանգային պաշտոնեության իրավունքներն ու պարտականությունները:

Տպագրություն: Կարևոր նշանակություն ունեցավ վրաց տպագրության սկզբնավորումը: 1629 թ. Հռոմում տպագրվեց վրացերեն-իտալերեն բառարան: Վրաց տպագրության գործին ձեռնամուխ եղավ Մոսկվայում գտնվող Արչիլ թագավորը և 1705 թ. տպագրեց «Դավիթնի»-ն:

Վրաց տպագրության զարգացման գործում կարևոր նվաճում էր Վախթանգ Զ-ի տեղապահության տարիներին Թիֆլիսում վրացական տպարանի ստեղծման փաստը: Այդ տպարանում հրատարակվեցին հոգևոր ու աշխարհիկ աշխատություններ, այդ թվում նաև Շոթա Ռուսթավելու «Ընձենավորը» (1712 թ.): 1708–1722 թթ. լույս ընծայվեց մոտ քսան անուն գիրք:

Վրաց տպագրության զարգացման գործում մեծ էր նաև Պողոս Հովհաննիսյանի վաստակը: Հերակլ Բ-ի կողմից 1782 թ. նա Կ. Պոլսից հրավիրվել էր Թիֆլիս, որտեղ տպագրական նոր հաստոցներով և նոր տառատեսակներով ստեղծեց վրացական տպարան:

Գրականություն: Վրաց իրականության մեջ շարունակում էր ոգեշնչման աղբյուր լինել Ռուսթավելու «Ընձենավորը»: Լայն տարածում ունեին ինչպես ժողովրդական բանահյուսությունը, այնպես էլ գրավոր չափածո և արձակ ստեղծագործությունները: Վրաց մշակույթը հարուստ է նաև գեղարվեստական թարգմանություններով ու ընդօրինակումներով: Հատկապես մեծ տարածում ստացավ չափածոյի վերածված և քրիստոնեական երանգավորում ստացած «Ռոստոմիանի» հերոսական էպոսը, որը Ֆիրդուսու «Շահ-նամե»-ի մասերից էր:

Բանաստեղծական ձիրքով էին օժտված Թեյմուրազ Ա (1589–1663 թթ.) և Արչիլ (1647–1713 թթ.) թագավորները, որոնց ստեղծագործությունները որոշակի հետք են թողել հետագա շրջանի վրաց գրականության մեջ: Թեյմուրազ Ա-ը գրել է քնարական ստեղծագործություններ, կատարել թարգմանություններ պարսկերենից:

Արչիլը իր ժամանակի համար ստացել է փայլուն կրթություն, հրատարակության է պատրաստել Աստվածաշունչը՝ համեմատելով վրացերեն ու ռուսերեն տարբեր ձեռագրեր, կատարել է գրական թարգմանություններ: Նրա ստեղծագործություններին բնորոշ են ազգային-հայրենասիրական շունչը: «Թեյմուրազի և Ռուսթավելու զրույցը» պոեմում նա Գիորգի Սաակաձեին ներկայացնում է որպես ազգային հերոս, ով իր անձնական երջանկությունը զոհաբերեց հանուն հայրենիքի երջանկության:

XVII դարի վրաց գեղարվեստական գրականության առավել նշանավոր ներկայացուցիչներից է հայազգի Փեշանգ Խիթարիշվիլին (Փեշվիբերտղաձե), որը ծագումով Գորիից էր: Նա Վախթանգ Ե (Շահնավազ, 1658–1675 թթ.) թագավորի արքունի բանաստեղծն էր և 1664–1665 թթ. չափածո շարադրել է Վախթանգի թագավորության 1658–1664 թթ. պատմությունը, որ հայտնի է «Շահնավազիանի» վերնագրով: Նա ներբողում է Վախթանգին ու Արչիլին: Հեղինակը միասնական ու հզոր թագավորության կողմնակից է և ուռճացված գույներով է ներբողում Վախթանգ Ե-ի ներքին ու արտաքին քաղաքականությունը՝ ներկայացնելով նրան որպես երկիրը միավորող, հզոր իշխաններին հնազանդության բերող ու գրեթե որպես կայսր իշխող, որի իշխանության ներքո լիառատության մեջ «գայլն ու գառը միասին էին արածում»:

Վրաց մշակույթի մեջ և մասնավորապես նաև գրականության մեջ իր հատուկ տեղն ունի բազմակողմանի գործունեությամբ հայտնի Սուլխան-Սաբա Օրբելիանին (1658–1725 թթ.): Լայն տարածում է ունեցել նրա «Հիմարության իմաստությունը» առակների ժողովածուն: Նա Վախթանգի հետ պարսկերենից վրացերեն է թարգմանել նաև Արևելքում հանրահայտ «Քիլիլա և Դամանա» առակների գիրքը, որն ուներ կարևոր ուսուցողական նշանակություն:

Վրաց ճարտարապետությունը IV–XVIII դդ.: Վրաստանի IV–VII դդ. մոնումենտալ (տվյալ դեպքում՝ բացառապես եկեղեցական) ճարտարապետությունը վաղ միջնադարում զարգացավ՝ հայկական շինարարական արվեստի հետ տիպաբանական և ոճական սերտ ընդհանրություն ունենալով: Դա պայմանավորված էր երկու հարևան երկրների աշխարհագրական մերձավորությամբ, տնտեսական, քաղաքական, գիտամշակութային և հոգևոր–եկեղեցական սերտ կապերով ու ավանդույթներով:

Վրաստանում IV–VI դդ. առավել տարածված եկեղեցական շենքերի տիպերն են միանավ ու եռանավ բազիլիկները: Վերջիններիս շարքում (Անչիսխատի, Ծղարոսթավի, Ուրբնիսի և ուրիշներ) առավել հայտնին և լավ պահպանվածը Բոլնիսի Ս. Սիոնն է (V դ.)՝ հինգ զույգ խաչաձև մույթերով, արևելքից կիսաշրջանաձև ծավալով դուրս շեշտված Ավագ խորանով, հյուսիսից և հարավից՝ կամարասրահով: Բազիլիկ ոճի առանձնահատկություններն են երեք նավերը ընդհանուր երկթեք ծածկի տակ առնելը և երկայնական պատերում լուսամուտների բացակայությունը: Արտաքին սրահ ուներ նաև V–VI դդ. միանավ եկեղեցիների մեծ մասը:

Վրաց ճարտարապետությունը VII դ. եկեղեցական շենքերի համար սկսեց կիրառել գմբեթավոր (հիմնականում՝ կենտրոնագմբեթ) հորինվածքներ: Այդպիսին են Ձվելի Գավազի, Նինոծմինդա եկեղեցիները, որոնց հատակագծի հիմքում ընկած է քառախորանը, Սամծեվրիսի փոքր խաչաձև եկեղեցին և ուրիշները:

Վրաց VII դ. ճարտարապետության գլուխգործոցներն են քառախորան, երեք քառորդ խորշերով (որոնցից մուտք է բացվում դեպի ավանդատները) Աթենի Ս. Սիոն և Մցխեթի Ս. Խաչ (Ջվարի) եկեղեցիները, որոնք պատկանում են VI դ. հայ ճարտարապետության մշակած «Հռիփսիմեատիպ» եկեղեցիների տիպաբանական խմբին: Ըստ հայերեն շինարարական արձանագրության՝ Աթենի Ս. Սիոն եկեղեցին կառուցել է հայ ճարտարապետ Թոդոսակը (արձանագրությունը XX դ. տաշվել է) հայ շինարար վարպետների հետ, որոնց անունները հայերեն փորագրված են եկեղեցու պատերին (Ահարոն, Գիորգ Դապս և ուրիշներ):

Թոդոսակն է կառուցել նաև Մցխեթի Ս. Խաչ (Ջվարի) եկեղեցին հայ քարագործ վարպետների մասնակցությամբ, որոնց անունների հայերեն սկզբնատառերը (Ա, Գ, Թ, Ծ, Հ, Ձ, Լ, Ո) փորագրված են եկեղեցու ճակատներին և գմբեթի թմբուկին:

Վրաստանի VII դ. ճարտարապետական հուշարձաններից նշանավոր է նաև Ծրոմիի քառամույթ գմբեթավոր եկեղեցին, որի Ավագ խորանը զարդարված է ոսկեգույն ֆոնի վրա Քրիստոսի և Պողոս ու Պետրոս առաքյալների խճանկար պատկերով:

VII դ. երկրորդ կեսին Վրաստանի նվաճումը արաբների կողմից խանգարեց երկրի ճարտարապետության բնականոն զարգացմանը: Մոնումենտալ շինություններ վերստին կառուցվեցին միայն IX դ. սկսած: Հետարաբական շրջանի կարևոր ճարտարապետական հուշարձանները, որոնցում նկատելի է հորինվածքային և հարդարանքի ոճական նոր ուղղության արտահայտությունը, հանդիսանում են Վաչնաձիանի Կղվելածմինդա գմբեթավոր դահլիճը, Գուրջաանիի երկգմբեթ եկեղեցին, Կումուրդոյի խաչաձև հնգախորան (երկուական խորաններով նաև հյուսիսից և հարավից) ինքնատիպ հորինվածքով գմբեթավոր եկեղեցին (964 թ., ճարտարապետ՝ Սակոցարի):

Զարգացած միջնադարում վրաց ճարտարապետության վերելքը պայմանավորված էր միասնական և հզոր պետականության ձևավորումով: XI դ. եկեղեցու տարածված տիպը դարձավ քառամույթ գմբեթավոր հորինվածքով շենքը (ինչպես Բյուզանդիայում և ուղղափառ դավանանքին հետևող երկրներում ընդհանրապես), որի արտաքին ճակատների և գմբեթի հարդարանքի հիմնական ձևերն են դեկորատիվ կամարները, լուսամուտների արտակարգ լայն և ճոխ քանդակազարդ շրջանակները, մեծադիր խաչերը, զարդաքանդակներն ու պատկերաքանդակները:

Ճարտարապետական–գեղարվեստական ոճական նոր ուղղության բնորոշ և լավագույն նմուշներն են Մցխեթի Սվետիցխովելի տաճարը (1010–1029 թթ. ճարտարապետ՝ Արսուկիսձե), Ալավերդու Կաթողիկեն (XI դ.), Սամթավիսի (1030 թ., ճարտարապետ՝ Իլարիոն Սամթավնելի), Նիկործմինդայի (1010–1014 թթ.) եկեղեցիները, միավորված Վրաստանի առաջին թագավոր Բագրատ Գ–ի կառուցած Քութայիսի Կաթողիկեն (1003 թ.), որը կրկնում էր VII դ. Հայաստանում ստեղծված եռախորան գմբեթավոր բազիլիկի հորինվածքը: 1032 թ. հիմնովին վերակառուցվեց Ներսես Գ Շինարար կաթողիկոսի՝ Տայքում կառուցած զվարթնոցատիպ Իշխանի եկեղեցին: X–XI դդ. Տայքում ձևավորվեց ինքնատիպ ճարտարապետական դպրոց՝ հայկական, վրացական և բյուզանդական շինարարական արվեստների սինթեզի հիման վրա ստեղծված:

XII–XIII դդ. Վրաստանի ճարտարապետությունը բնորոշվում է եկեղեցական շենքի բացարձակ չափերի փոքրացումով, արտաքին ճակատների կամարաշարերի վերացումով: Զարդարանքում գերակշռող են դառնում լուսամուտների պսակները, խոշոր քանդակազարդ խաչերը և շեղանկյունները, ներսում՝ որմնանկարները: Վրացական ճարտարապետության ազդեցությամբ հարդարանքի այս ձևերը կիրառվեցին նաև Հյուսիսային Հայաստանի մի քանի բաղկեղոնիկ վանքերում ու եկեղեցիներում (Քոբայր, Պղնձահանք, Խուճապի վանք, Աքորիի Բգավոր եկեղեցի):

Վրաստանում XII–XIII դդ. քարաշեն քառամույթ գմբեթավոր եկեղեցիների հետ կառուցվում են նաև աղյուսաշեն գմբեթավոր դահլիճներ: Ընդարձակվեց Դավիթ Գարեջա վիմափոր վանքը, ձևավորվեց Վարձիայի ժայռափոր մենաստանի համալիրը: XII–XIII դդ. Վրաստանում կառուցված վանքերից իր ճարտարապետությամբ և հարդարանքով առանձնանում էր 1106 թ. հիմնադրված Գելաթի վանքը՝ բաղկացած քառամույթ գմբեթավոր Կաթողիկեից (XII դ. սկիզբ), XIII դ. Ս. Գևորգ և երկհարկանի Ս. Նիկողայոս եկեղեցիներից, եռահարկ զանգակատնից, ճեմարանից:

Զարգացած միջնադարի Վրաստանի աշխարհիկ ճարտարապետությունից ավերակ վիճակում պահպանվել են Գեգութում Թամար թագուհու պալատական համալիրը, որի կենտրոնում 14 մ տրամագծով գմբեթով ծածկված քառակուսի դահլիճը չորս կողմից շրջապատված է կից կառուցված սենյակներով և պարագծով՝ բուրգերով ուժեղացած պարսպով:

Մոնղոլական արշավանքների հետևանքով XIV–XV դդ. նորից ընդհատվեց վրացական ճարտարապետության զարգացման ընթացքը: Շինարարական կյանքը վերստին աշխուժացավ XVI դ. և վերելք ապրեց XVII–XVIII դդ.: Վրաց ճարտարապետության այս փուլում փոփոխություններ եղան շինարարական տեխնիկայում. գերիշխող դարձավ աղյուսի կիրառումը մոնումենտալ շենքերի (ինչպես եկեղեցական, այնպես էլ աշխարհիկ) կառուցման գործում, որն իր հետ բերեց նաև ուշ միջնադարի իրանական ճարտարապետության և արվեստի ազդեցությունը: Տարածում գտան ցոուկաձև կամարները, արտաքին հարդարանքում կիրառվեցին կորագիծ աղյուս, ջնարակված սալիկներ և այլն: Գերակշռող դարձավ աշխարհիկ ճարտարապետությունը. Վրաստանի առանձին թագավորություններում քաղաքների կերպարի պարտադիր և կարևոր տարրը դարձավ բարձրադիր վայրում տեղադրված, պարսպապատ միջնաբերդը: Կառուցապատումը բաժանվում էր ըստ թաղամասերի («ուբանի»): Այստեղ թաղամասերը բաժանվում էին ինչպես ըստ բնակչության զբաղմունքի, այնպես էլ ըստ սոցիալական և էթնիկ կազմի:

Վախթանգ Զ–ի կառավարման շրջանում վերակառուցվեցին մի շարք վերանորոգման կարիք ունեցող կառույցներ, եկեղեցիներ ու տաճարներ ինչպես Թիֆլիսում, այնպես էլ Վրաստանի այլևայլ բնակավայրերում: Վերանորոգվեցին մասնավորապես Մցխեթի Սվետիցխովելին, Թիֆլիսի Սիոնի տաճարը և այլն:

Ուշ միջնադարում Վրաստանի քաղաքների և ամրոցների ճարտարապետությունում զգալի դեր է խաղում նաև դրանց հայկական մեծաքանակ համայնքների շինարարական գործունեությունը: Կախեթի թագավորության մայրաքաղաք Գրեմիի բարձրադիր մասում՝ բլրի վրա, XVI դ. կառուցվեց դղյակ՝ պալատով և Ս. Աստվածածին կենտրոնագմբեթ եկեղեցիով, որի սլացիկ համաչափություններով ուրվագիծը դարձավ քաղաքի համայնապատկերի գլխավոր շեշտը: Դղյակից հարավ հայկական խոշոր թաղամասն է (մոտ 30 հա), որտեղ կարճ ժամանակաշրջանում կառուցվեցին տասը եկեղեցի, շուկա և իջևանատուն: Յուրօրինակ է 1695 թ. Մկրտչի կառուցած Ս. Աստվածածին գմբեթավոր եկեղեցու ճարտարապետությունը՝ եռայարուս Ավագ խորանով: Մուտքի վերևի հայերեն շինարարական արձանագրությունը կրկնված է նաև վրացերեն ու պարսկերեն: Ռազմավարական ճանապարհի վրա կառուցված Անանուրի ամրոցն ունի ուղղանկյուն հատակագիծ (70x32,5 մ) և շրջապատված է գլանաձև բուրգերով ուժեղացված պարսպով: Ամրոցում կանգուն են երկու գմբեթավոր եկեղեցիներ, զանգակատուն, ջրամբար, աշտարակ, բաղնիք և այլն: Մեծ եկեղեցին ունի երկու մույթերով գմբեթավոր հորինվածք և, ըստ հայերեն արձանագրության, կառուցված է 1688 թ. Գրիգորի կողմից, հայ շինարար վարպետների մասնակցությամբ (պատերին պահպանվել են նրանց հայատառ նշանները, իսկ հայերեն, ուռուցիկ տառերով փորագրված ճարտարապետի անունը XX դարում տաշել են): Այս եկեղեցին իր պատկերաքանդակների, զարդաքանդակների առատությամբ բացառիկ է ուշ միջնադարի Վրաստանի ճարտարապետությունում:

Առավել մեծ է հայերի շինարարական գործունեությունը Թբիլիսիում: XVIII դ. վերջում Վրաստանի մայրաքաղաքում կային հայերի կառուցած բազմաթիվ աշխարհիկ շենքեր և հայկական 24 եկեղեցի, որոնք գտնվում էին Թբիլիսիի կենտրոնական թաղամասերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բայրամյան Հ., Վրաց գրականությունը V–XIX դդ., գիրք Ա, Երևան, 2007:

Հովհաննիսյան Ա. Գ., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գ. 2, Երևան, 1959:

Մարտիրոսյան Վ. Մ., Հայ–վրացական համագործակցությունը ազատագրական պայքարում XVIII դարի առաջին քառորդին, Երևան:

Զորանյան Պ. Ա., Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին, Երևան, 1981:

Զորանյան Պ. Ա., Հայ–ռուս–վրացական հարաբերությունները ԺԸ դարի երկրորդ կեսին, Էջմիածին, 2006:

"Армяно–русские отношения в XVII веке" (сб. документов), под ред. В. А. Парсамяна, Ереван, 1953.

"Армяно–русские отношения в первой трети XVIII века" (сб. документов), под ред. А. Г. Иоаннисяна, т. II, ч. I–II, Ереван, 1964–1967.

Армяно–русские отношения во втором тридцатилетии XVIII века» (сб. документов), т. III, под ред. В. К. Восканяна, Ер., 1978.

Армяно–русские отношения во второй половине XVIII века» (сб. документов), т. IV, под ред. М. Г. Нерсисяна, Ер., 1990.

Бушев П. П., История посольств и дипломатических отношений Русского и Иранского государств за 1586–1612 гг. (по русским архивам), М., 1976.

Бушев П. П., Посольство Артемия Волынского в Иран в 1715–1718 гг., Москва, "Наука", 1978.

Давид царевич Грузинский. Краткая история Грузии, Тифлис, 1893.

Джамберидзе Н. Ш., Цицишвили И. Н., Архитектура Грузии от истоков до наших дней, Москва, 1976.

Иоаннисян А. Р., Иосиф Эмин, Ереван, 1945, 1990.

Иоаннисян А. Р., Армянское освободительное движение в 80–ых годах 18–го века, Ереван, 1947, 1989.

"Кавказ и Византия", вып. 1–6, Ер.,1980–

Мурадян П. М., Армяно–грузинские литературные взаимоотношения в XVIII веке, Ереван, 1966.

Мурадян П. М., Армянская надпись храма Джвари,– "Вестник общественных наук", Ереван, 1968, N 2.

Мурадян П. М., Армянская эпиграфика Грузии: Картли и Кахети, Ереван, 1985.

Материалы по истории русско–грузинских отношений (80–90–е годы XVII века), Документы к печати подготовил, предисловием и комментариями снабдил Г. Г. Пайчадзе, часть 1–3, Тбилиси, "Мецниереба", 1974–1979.

"Межкавказские политические и торговые связи Восточной Грузии" (конец 60–х – начало 90–х годов 18–го века). Документы и материалы. Материал подобрал и подготовил к печати В. Н. Гамрекели, Тбилиси, "Мецниереба", 1980.

Маркова О. П., Россия, Закавказье и международные отношения в XVIII веке, М., 1966.
Пайчадзе Г. Г. Русско-грузинские политические отношения в первой половине XVIII века. Тбилиси, 1970, с. 160–161.
Сулхан-Саба Орбелиани, Путешествие в Европу, Тбилиси, 1969.
"ადრინდელი ფეოდალური ქართული ლიტერატურა". ნაკეთი პირველი: I. იოანე საბანისძე, II. ბასილ ზარზმელი. კორნ. კეკელიძის რედაქციით და გამოკვლევით, ტფილისი, 1935.
გაბაშვილი ტ., მიმოსლვა. ტექსტი გამოსაცემად მოამზადა ელ. მეტრეველმა, თბ., 1956.
ვახუშტი ბაგრატიონი, ქართლის ცხოვრება, ტ. IV, თბ., 1973,
კეკელიძე კ., ქართული ლიტერატურის ისტორია, I, თბ., 1960.
ლომსაძე შ., გვიანი შუასაუკუნეების საქართველოს ისტორიიდან. ახალციხური ქრონიკები, თბ., "მეცნიერება", 1979.
მაისურაძე გ., ქართველი და სომეხი ხალხების ურთიერთობა XIII–XVIII სს., თბ., "მეცნიერება", 1982.
მაჭარაძე ვ., მასალები XVIII საუკუნის მეორე ნახევრის რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიისათვის ნაწილი II (თეიმურაზ მეორის ელჩობა რუსეთში), თბილისი, 1968.
პაიჭაძე გ., ტიმოთე აბაშვილის ელჩობა რუსეთში (1737–1740),– "ქართული სამეფო სამთავროების საგარეო პოლიტიკის ისტორიიდან", I, თბ., 1970.
საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. II, საქართველო IV–X საუკუნეებში, რედაქტორი შ. მესხია, თბ., "საბჭოთა საქართველო", 1973.
საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. III, საქართველო XI–XV საუკუნეებში, რედაქტორები ზ. ანჩაბაძე, ვ. გუჩუა, თბ., "საბჭოთა საქართველო", 1979.
საქართველოს ისტორიის ნარკვევები, ტ. IV, საქართველო XVI საუკუნის დასაწყისიდან XIX საუკუნის 30-იან წლებამდე, რედაქტორი მ. დუმბაძე, თბ., "საბჭოთა საქართველო", 1973.
"ძველი ქართული აგიოგრაფიული ლიტერატურის ძეგლები", I, გვ. 46–81.
ჯიქია ს., გურჯისტანის ვილაიეთის დიდი დავთარი, წ. II (თარგმანი), თბ., 1941, წ. I, (თურქული ტექსტი), თბ., 1947, წ. III, გამოკვლევა, თბ., 1958.
ქართული სამართლის ძეგლები, ტექსტები გამოსაცემად მოამზადა, გამოკვლევები, ლექსიკონები და საძიებლები დაურთო ი. სურგულაძემ, თბ., 1970.
ქართლის ცხოვრება, ტექსტი დადგენილი ყველა ძირითადი ხელნაწერის მიხედვით ს. ყაუხჩიშვილის მიერ, ტ. I–II, თბილისი, სახელგამი, 1955–1959.
"საქართველოს ისტორიის ნარკვევები", ტ. IV, თბილისი, "საბჭოთა საქართველო", 1973.
მაჭარაძე ვალერიან, მასალები XVIII საუკუნის მეორე ნახევრის რუსეთ-საქართველოს ურთიერთობის ისტორიისათვის, ნაწილი 1–3, თბ., 1968–1997.
«ამიერკავკასიის ისტორიის პრობლემები», თბილისი, «მეცნიერება», 1991.
გ. პაიჭაძე, ვახტანგ მეექვსე, თბ., "მეცნიერება", 1981, გვ. 34–35.
"საბუთები საქართველო-საფრანგეთის ურთიერთობის ისტორიიდან". ნაწილი I, შესავალი, თარგმანი და განმარტებები დაურთო ი. ტაბაღუამ, თბილისი, "მეცნიერება", 1975.
ნ. შენგელია, რამდენიმე "ჰუჯათი" თბილისის შესახებ,– § ქართული დიპლომატია. წელიწდეული", ტ. I, თბ., 1994.
1728 წლის თბილისის ვილაეთის დიდი დავთარი, წიგნი I, ოსმალური ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, გამოკვლევითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადეს აკად. სერგი ჯიქიამ და პროფ. ნოდარ შენგელიამ, თბილისი, 2009, 832 გვ.;
"სამი ოსმალური წყარო თბილისის ისტორიისათვის", თურქული ტექსტი ქართული თარგმანით, შესავლით, ტერმინოლოგიური ლექსიკონითა და ფაქსიმილეებით გამოსაცემად მოამზადა ნოდარ შენგელიამ, თბილისი, 2008, 488 გვ.
პაპუაშვილი თ., ჰერეთის ისტორიის საკითხები, თბ., 1970.
პაპუაშვილი თ., საინგილოს ისტორიის ნარკვევები. საქართველოს აღდგომისა და გამოხსნისათვის ბრძოლა კაკ-ელისენის გამო. თბ., 2008, 308 გვ.
მარჯანიშვილი გ., ჰერეთი. თბილისი, არტანუჯი, 2005, 58 გვ.+XXX ტაბ.

ԲԱԺԻՆ 5

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ ՓՈՔՐ ԱՍԻԱ ԵՎ ՆՐԱ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

1. ՍԵԼՋՈՒԿ-ԹՅՈՒՐՔԵՐԻ ՆԵՐԽՈՒԺՈՒՄԸ

Սելջուկ-թյուրքերի զանգվածային ներխուժումը Փոքր Ասիա տեղի ունեցավ XI դարում: Մինչև XI դարը թյուրքական տարբեր ցեղախմբերի բեկորներ որոշ չափով թեև ներթափանցել էին Բալկաններ և Փոքր Ասիայի ու Մերձավոր Արևելքի տարածքներ, սակայն մինչ սելջուկների զանգվածային ներխուժումը որևէ նշանակալի հետք չէին թողել նշված տարածքների էթնիկական կազմի մեջ: Բյուզանդական ու Արաբական կայսրությունների բանակներում ծառայության անցած թյուրքական ծագում ունեցող անձանց կամ զինվորական առանձին ջոկատների առկայության վերաբերյալ տեղեկությունները չեն կարող հիմք ծառայել պնդելու նրանց զանգվածային բնակության մասին: Ուստի մինչև սելջուկների քաղաքական ասպարեզ գալը և Կենտրոնական Ասիայից դեպի Արևմուտք նրանց զանգվածային արշավանքները Փոքր Ասիայի և Հայաստանի որևէ մասում թյուրքական էթնոսի կայուն առկայության և նշված տարածքներում թյուրքացման գործընթացի մասին խոսք լինել չի կարող:

Թյուրքերի նախահայրենիք համարվում են ներկայիս Չինաստանի հյուսիսում և հյուսիս-արևմուտքում ընկած տարածքները: Չինական աղբյուրներում այդ տարածքներում բնակվող ցեղային միավորումները ընդհանուր անունով կոչվում էին «Հիոն նու», որը նշանակում էր «ըմբոստ ստրուկներ»: Նրանք հաճախակի ասպատակել են Չինաստանը, և չինական կայսրերը ստիպված են եղել իրենց հյուսիսային ցեղերին վճարել տարեկան որոշակի տուրք: Սակայն չինական դիվանագետներին հաջողվել է կաշառքի միջոցով պառակտել «Հիոն նու» ցեղային միավորումը և առանձին-առանձին պարտության մատնել ու ետ շպրտել նրանց:

V դարի սկզբներին ձևավորված և գիտական աշխարհին հոներ ընդհանուր անվանումով հայտնի ցեղային միավորման մեջ մտնող ոչ բոլոր ցեղերն էին, որ ունեին թյուրքական ծագում, կային նաև այլ էթնիկ խմբավորումներ, ինչպիսիք էին ուգրոֆինները, մաջարները (մաղյար՝ հունգարացիներ) և այլն: VI դարի վերջում հոնական ցեղերը տարածվում և ասպատակություններ էին կատարում Չինական մեծ պարսպից մինչև Դանուբ գետը: Այդ նույն ժամանակաշրջանում նրանք թափանցեցին նաև մինչ այդ հեփթաղներով (էֆտալիտներով) բնակեցված Միջին Ասիայի տարածքը և այն համարյա ամբողջությամբ թյուրքացրին՝ մասամբ ոչնչացնելով բնիկ հնդեվրոպական ցեղերին, իսկ առանձին տեղերում ձուլվեցին նրանց հետ:

VII դարում հիմնականում թյուրքացված Միջին Ասիան նվաճվեց արաբների կողմից, և շուրջ երկու հարյուրամյակ կրոնական քարոզչական գործունեության հետևանքով թյուրքական ցեղախմբերը աստիճանաբար իսլամացան: Բաղդադի Աբբասյան խալիֆաները նրանցից կազմում էին վարձկան զորամասեր և օգտագործում իրենց արշավանքների ժամանակ: Միաժամանակ նրանց տրամադրվում էին արաբական գերիշխանության ներքո գտնվող տարբեր մասերում հողակտորներ՝ իքթայի իրավունքով, սակայն դա չի նշանակում, որ նրանք կայուն կերպով հաստատվել են այդ տարածքներում: Նույնիսկ պանթյուրքիստ պատմաբան Զ. Վ. Տոդանը ևս ստիպված էր ընդգծել, որ «...եթե հանրահայտ է որոշ թյուրք էմիրների՝ զինվորների գլուխ անցած երևալը Ադրբեջանում և Անատոլիայում, ապա նրանց՝ այստեղ հաստատվելու մասին վկայությունները չափից դուրս սակավ են», և *«միայն սելջուկների ժամանակ թյուրքերը իրենց հոտերով հաստատվեցին Անատոլիայում»*:

Միջինասիական թյուրքերը, որոնք ընկել էին արաբական իսլամական մշակույթի ազդեցության ներքո, աստիճանաբար խորթացան արաբական տիրապետության սահմաններից դուրս գտնվող թյուրքական այն ցեղերից, որոնք շարունակում էին գտնվել չինական բուդդայական մշակույթի ազդեցության ներքո:

XI դարում Միջին Ասիայի, այսպես կոչված, թուրք-օղուզական ցեղերի՝ Իրանի, Հայաստանի ու Փոքր Ասիայի տարածք թափանցելուց և ռազմական հաջողությունների արդյունքում իրենց քաղաքական տիրապետությունը հաստատելուց հետո միայն որոշ չափով կարողացան ներկայանալ տարածքի էթնիկական պատկերի վրա:

Սելջուկ-թյուրքերը բնակվում էին Սիր Դարյայի միջին հոսանքում՝ Կասպից և Արալյան ծովերի հյուսիսային մասերում, որտեղ նրանք զբաղվում էին անասնապահությամբ: X դարի վերջերին նրանք ընդունեցին իսլամ, ինչը նպաստեց Խորեզմի և Մավարաննահրի հետ հարաբերությունները սերտացնելուն, որտեղ հայտնվում էին որպես տեղական իշխողների համար օժանդակ վարձկան ջոկատներ: Սելջուկները, շարունակելով իրենց առաջխաղացումը, հայտնվեցին նաև Խորասանում և գրավեցին այն: Սելջուկների առաջնորդ Տուղրիլը Նիշապուրում հռչակվեց որպես սուլթան (1038–1063 թթ.):

XI դարի առաջին տասնամյակներին սելջուկները ձեռնարկեցին արշավանքներ դեպի Իրան, իսկ այնտեղից էլ Հայաստան և Փոքր Ասիա: «Ունենալով հարուստ անասնահոտեր,— գրում է բյուզանդական պատմիչ Նիկիտա Խոնիատը,—

(սելջուկ-թյուրքերը) կարիք ունենալով մարգագետինների և արոտավայրերի, լքում են իրենց բնակավայրերը և ամբողջ ընտանիքներով գալիս են Հոռոմների (Բյուզանդիայի) սահմանները»: 1048 թ. արշավանքի ժամանակ սելջուկյան հորդաներին ղեկավարում էին Տուղրիլ բեկը, Իբրահիմ Յաննալն ու Գելմուշը: Ժամանակակից հայ պատմիչ Արիստակես Լաստիվերցին, խոսելով սելջուկ-թյուրքերի՝ Հայաստան կատարած արշավանքի մասին, գրում է, որ նրանք «...յարձակեցան ի վերայ քրիստոնէից իբրև գայլս քաղցեալս արձակեալս ի կերակրոյ, և եկեալ մինչև ի գաւառն Բասեան... քանդեալ ապականեցին գաւառս քսան և չորս՝ սրով և հրով և գերութեամբ»: Նրանք հրո ճարակ են դարձնում միջնադարյան Հայաստանի վաճառաշահ կենտրոն Արծն քաղաքը, հիմնահատակ ավերում այն և հեռանում հարուստ ավարով:

1054 թ. Տուղրիլ բեկը Ատրպատականի վրայով կրկին ներխուժեց Հայաստան և Փոքր Ասիա՝ ավերի ու ավարի ենթարկելով տարածքի զգալի թվով բնակավայրեր: Արիստակես Լաստիվերցու վկայությամբ՝ սելջուկ-թյուրքերը «...աշխարհս գերի տարան, և զայլ քաղաքս և զաւանս... զչարիսն՝ զոր նոքա աշխարհին հասուցին, ով կարէ ընդ գրով արկանել... յամենայն շինանիստ տեղիս հուր հարեալ ապականեցին զտունսն և զեկեղեցիս... ապականեցին զաշխարհս ամենայն»:

Տուղրիլ բեկի այս արշավանքները մեծապես թուլացրին Հայաստանի ու Բյուզանդական կայսրության արևելյան պաշտպանական գծերը և դյուրացրին Հայաստանի ու Փոքր Ասիայի նվաճումը: 1055 թ. Տուղրիլ բեկին հաջողվեց գրավել Բաղդադը, և խալիֆան հաստատեց սուլթանի նրա տիտղոսը:

Տուղրիլ բեկին հաջորդած սուլթան Ալփ Արսլանը (1063–1072 թթ.) 1064 թ. դարձյալ Ատրպատականի վրայով ներխուժեց Հայաստան ու գրավեց Բագրատունյաց թագավորության մայրաքաղաք Անին: Դեպքերին ականատես արաբ պատմիչ Ալ-Քամիլ Աբու ալ Ֆավարիզին արձանագրում է, որ Անիում սելջուկ-թյուրքերի կոտորածների հետևանքով «...այնքան շատ էին մեռյալների դիակները, որոնց վրայով անցնելը հնարավոր չէր»:

1067–1068 թվականներին՝ Անիի գրավումից հետո, սուլթան Ալփ Արսլանը նվաճեց նաև Հայաստանի և Փոքր Ասիայի արևելյան մի շարք այլ շրջաններ, իսկ 1071 թ. օգոստոսին Մանազկերտի ճակատամարտում սելջուկյան տիրակալը վճռական հաղթանակ տարավ բյուզանդական կայսր Ռոմանոս Դ Դիոգենեսի (1068–1071 թթ.) նկատմամբ, որից հետո Փոքր Ասիայի արևմտյան մասերը նվաճելու խնդրում թյուրք սելջուկների համար այլևս անհաղթահարելի խոչընդոտ չէր մնում: Մանազկերտի ճակատամարտում բյուզանդական կայսեր կրած պարտությունը առավելապես բացատրվում է նրանով, որ բյուզանդական բանակում ծառայող պեչենեգները, ղիփչաղները և մի շարք այլ թյուրքական ցեղերի պատկանող զինվորներ ճակատամարտի վճռական պահին դավաճանեցին բյուզանդական կայսերը և անցան թյուրք սելջուկների կողմը: «1071 թ.՝ Մանազկերտի պարտության սարսափելի օրը, բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր... և թափառական թուրքը հին հռոմեական փառահեղության ավերակների վրա հաստատեց իր վրանը»:

Սուլթան Ալփ Արսլանի հաջորդ Մալիքշահի (1072–1092 թթ.) ժամանակ համարյա ողջ Փոքր Ասիայի տարածքը նվաճվեց սելջուկների կողմից, և նրանք դուրս եկան Միջերկրական ծովի ափերը: Ստեղծվեց ընդարձակածավալ մի կայսրություն, որը տարածվում էր Սև ու Միջերկրական ծովերից մինչև Չինաստանի սահմաններ:

Մալիքշահի մահից հետո հսկայածավալ սելջուկյան կայսրությունը տրոհվեց առանձին մասերի: Փոքր Ասիայում, Հայաստանում ու հարակից երկրներում առաջացան մի շարք վարչաքաղաքական միավորներ[30]: Խաչակրաց արշավանքը թեև ծանր հարված հասցրեց Մերձավոր Արևելքում հաստատված սելջուկներին, սակայն և խթանեց արդեն իսկ նվաճված տարածքներում թուրքական տարրի ամրապնդմանը:

Ավատատիրական այս պետությունները ընդհուպ մինչև 1153 թվականը գտնվում էին «Մեծ Սելջուկների» պետությունից կիսանկախ վիճակում, սակայն դրանից հետո ձերբազատվեցին որևէ կախյալ պայմաններից: Գտնվելով Բյուզանդական կայսրության մայրաքաղաք Կոստանդնուպոլսի անմիջական հարևանությամբ՝ Իկոնիայի սուլթանությունը տևական սպառնում էր ոչ միայն կայսրության մայրաքաղաքին, այլև Հարավարևելյան Եվրոպայի ժողովուրդներին: Միայն խաչակրաց արշավանքները կանխեցին այդ սպառնալիքները: Խաչակրաց արշավանքների նպատակ թեև հայտարարվում էր Բյուզանդիային օգնելն ու «Տիրոջ գերեզմանը անաստվածների գերությունից փրկելը», իրականության մեջ, սակայն, դրանք ուղղված էին հենց Բյուզանդական կայսրությունը կաթոլիկ աշխարհին ենթարկելու և Մերձավոր Արևելքում գերիշխանություն հաստատելու նպատակին: Այսուհանդերձ, այդ արշավանքները ժամանակավորապես փրկեցին Արևելյան Եվրոպան սելջուկ-թյուրքերի ներխուժումից:

Պատմաբանները իրավացիորեն պնդում են, թե այսօրվա Թուրքիան Մանազկերտի ճակատամարտի ծնունդն է, իսկ նրան հաջորդող երկու դարերի սելջուկյան իշխանությունները՝ օսմանյան պետության նախապատմությունը:

2. ՌՈՒՄԻ (ԻԿՈՆԻԱՅԻ) ՍԵԼՋՈՒԿՆԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մելիք Շահի մահից հետո սելջուկներից Ղլիճ Արսլան Ա-ին (1092–1107 թթ.) հաջողվեց Դանիշմենդյան իշխաններից խլել Կապադովկիան, Մալաթիան և Կարամանիան և հիմնել այսպես կոչված Ռումի սուլթանությունը: Մուսուլմանները Արևելահռոմեական (Բյուզանդական) կայսրությունը և նրա տարածքը անվանում էին Ռում: 1097 թ. խաչակիրները ծանր հարված հասցրին սելջուկներին Նիկեայի մոտ, իսկ այնուհետև՝ Դորիլեայում (այժմ՝ Էսքիշեհիր): Սելջուկները այդ պարտություններից հետո՝ ողջ XII հարյուրամյակում, այսինքն՝ շուրջ մեկ դար, առավելապես զբաղված էին Փոքր Ասիայում կազմակերպված մյուս ավելի փոքր պետական միավորումնե-

[30] Այդպիսիք էին մասնավորապես Ռումի կամ Իկոնիայի սուլթանությունը, Դանիշմանդյանների պետությունը՝ Սեբաստիա կենտրոնով, Արտուխյանների ամիրայությունը՝ Մերդին կենտրոնով, Շահիարմենների պետությունը՝ Խլաթ մայրաքաղաքով, Անիի Շադդադյանների էմիրությունը, Ելտկուզյանների կամ Իլտիկուզների աթաբեկությունը Այսրկովկասի արևելյան մասերում, Երզնկայի, Էրզրումի էմիրությունները և այլն:

ը իրենց ենթարկելու գործով: Առանձնապես դաժան պայքար ծավալվեց Իկոնիայի սուլթանության և Դանիշմենդյանների միջև, որոնց վերագրում են հայկական ծագում, և նրանց տիրապետությունը սկզբնապես տարածվում էր Թոխաթ, Ամասիա և Սեբաստիա քաղաքների միջև: Վերջինները առավել հզորության էին հասել Ամիր Ղազիի (1084–1134 թթ.) ժամանակ: Դանիշմենդյաններին պաշտպանում էին ոչ միայն Բաղդադի խալիֆաները, այլև Բյուզանդիան: Այսուհանդերձ, Փոքր Ասիայում գերակայություն հաստատելու համար Իկոնիայի սուլթանության և Դանիշմենդյանների միջև ծավալված երկարատև պայքարն ավարտվեց առաջինների հաղթանակով: 1178 թ. Դանիշմենդյանների պետությունը դադարեց գոյություն ունենալուց:

Ջախջախելով խաչակիրներին 1106 թ.՝ Ղլիճ Արսլան Ա–ը (1092–1107 թթ.) տիրացավ Մոսուլին, այնուհետև ռազմական գործողություններ ծավալելով Եդեսիայի (Ուրֆա) էմիր Ջավելիի դեմ՝ գրավեց Ուրֆան, իսկ Խաբարաս գետում նրա խեղդամահ լինելուց հետո գահը և Փոքր Ասիայի տարածքում ընդարձակածավալ պետությունը անցան նրա երկու որդիներին:

Ռումի սուլթանությունը Ղլիճ Արսլան Բ–ի տարիներին (1156–1192 թթ.) օրավուր ամրապնդում էր իր դիրքերը: 1176 թ. Միրիոկեֆալոնի մոտ սելջուկների կողմից ջախջախված Մանուել Ա կայսեր բյուզանդական բանակը այլևս չէր կարող դիմակայել սելջուկյան սուլթանության վերելքին:

Ղլիճ Արսլան Բ–ն իր իշխանության ավարտին տիրույթները բաժանեց որդիների միջև, որոնց իշխանության օրոք Ռումի սուլթանության ներքին գահակալման կռիվներից այդ պետությունը ևս բավական թուլացավ: Կիլիկիայի Հայոց թագավոր Լևոն Բ–ն Կեսարիայի հարավային մասի որոշ շրջաններ միացրեց իր պետությանը:

1204 թ. Խաչակրաց չորրորդ արշավանքի հետևանքով գրավվեց Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը, և հռչակվեց Լատինական կայսրության ծնունդը, ինչը հնարավորություն տվեց Ռումի սելջուկներին էլ ավելի անհաշտ պայքար մղելու հարևան պետությունների դեմ: Հայ և օտար աղբյուրները վկայում են, որ Ռումի սելջուկները Ղիասեդդին Քեյխոսրովի (1204–1210 թթ.) և Իզզեդդին Քեյկավուսի (1210–1219 թթ.) ժամանակ տևական նվաճողական պատերազմներ են մղել Փոքր Ասիայի տարածքում ձևավորված Տրապիզոնի և Նիկեայի կայսրությունների, ինչպես նաև Վրաստանի և Կիլիկյան հայկական պետության դեմ: Սելջուկյան ծավալապաշտական քաղաքականությանը մեծապես նպաստել է և այն հանգամանքը, որ Լատինական կայսրությունը շարունակում էր իր պայքարը Փոքր Ասիայի տարածքում ծվարած բյուզանդական այդ երկու կայսրությունների դեմ և դրանով մեծապես հեշտացնում Ռումի սելջուկների զավթողական քաղաքականությունը: Թեև Ռումի սելջուկների առաջին արշավանքները հարևանների դեմ ոչ միայն շոշափելի արդյունք չունեցան, այլև Ռումի սելջուկյան սուլթաններ Ռուքն ադ–Դինի և Սուլեյմանշահ Ա–ի պատերազմները Վրաստանի դեմ ավարտվեցին կատարյալ ձախողմամբ (վրաց Թամար թագուհու հայ զորավարներ Իվանե և Զաքարե Զաքարյանները պարտության էին մատնել սելջուկյան հորդաներին), սակայն այդ բոլորը չընկճեց

Իկոնիայի սելջուկներին շարունակելու իրենց հարևանների նկատմամբ զավթողական պատերազմները:

1210 թ.՝ Ղիասսեդդին Քեյխոսրովի մահից հետո, նրա որդիների միջև տեղի ունեցան գահակալական կռիվներ, որոնք ավարտվեցին Քեյկավուս Ա–ի հաղթանակով: Շարունակելով հարևանների նկատմամբ իր նախորդների զավթողական քաղաքականությունը և 1214 թ. գրավելով Ատտալիան (Անթալիա)՝ նա ավերիչ արշավանք ձեռնարկեց դեպի Կիլիկյան Հայաստան, զավթեց ու իր պետությանը բռնակցեց Կիլիկյան սահմանային որոշ շրջաններ: Հայկական աղբյուրների վկայությամբ՝ սուլթանը Կիլիկյան Հայաստանից խլեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Կապան ամրոցը, թեև Սմբատ Գունդստաբլի տարեգրության մեջ նշվում է, որ, այնուամենայնիվ, սուլթանին չի հաջողվել գրավել Կապան անառիկ ամրոցը:

Քեյկավուս Ա–ի իշխանության վերջին տարիներին Ռումի սուլթանությունը դարձել էր ընդարձակ ու բարգավաճ: 1219 թ. Ռումի սուլթանության գահին բազմեց Քեյկավուս Ա–ի եղբայր Ալա ադ–Դին Քեյկուբադ Ա–ը (1219–1236 թթ.): Նրա օրոք երկրի բարգավաճումը շարունակվում էր, ծավալվում էր շինարարական մեծ աշխատանք: Նա Կիլիկյան Հայաստանից խլեց Կալոնարոսը, որը վերածեց սելջուկյան ռազմածովային նավահանգստի: 1222 թ. նա Տրապիզոնի կայսրից զավթեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Սինոպ նավահանգիստը: 1230 թ. դաշնակցելով Եգիպտոսի Այյուբյան սուլթան Աշրաֆի հետ՝ նա հաղթական պատերազմական գործողություններ ծավալեց Խլաթին տիրացած Խորեզմի շահ Ջելալեդդինի դեմ: Շուտով Աշրաֆը խզեց դաշնակցային կապերը Ռումի սուլթանության հետ և պատերազմ սկսեց նրա դեմ, սակայն որևէ շոշափելի արդյունքի չհասավ:

1237 թ. Ռումի սուլթանության գահին բազմեց Ղիասեդդին Քեյխոսրով Բ–ը (1237–1246 թթ.): XIII դարի 40–ական թվականների սկզբներին մոնղոլները գրավեցին Փոքր Ասիայի հայաբնակ շրջանների մեծ մասը, որից հետո իրենց հարվածն ուղղեցին Ռումի սուլթանության դեմ: Մոնղոլական Բաչու Նոյինի զորամասերը Ռումի սուլթանության սահմաններում՝ «Զմանկատուկ» գյուղաքաղաքի մոտ մեծ ճակատամարտից հետո (1243 թ.), որն ավարտվեց սելջուկների լիակատար պարտությամբ, մեկը մյուսի հետևից գրավեցին Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան և Տիվրիկը: Մոնղոլական վտանգը սպառնում էր նաև Կիլիկյան Հայաստանին: Ուստի և Կիլիկիայի Հեթում թագավորը այդ վտանգը կանխելու նպատակով դեսպաններ ուղարկեց Բաչու Նոյինի մոտ և Խաչենի Հայոց իշխան Հասան Ջալալի միջնորդությամբ բարեկամական դաշինք կնքեց մոնղոլների հետ:

1243 թ. Զմանկատուկի ճակատամարտով վերջնականապես ջլատվեց Ռումի սելջուկյան սուլթանության դիմադրական ուժը և նրան դարձրեց մոնղոլներին ենթակա ու հարկատու: Փոքրասիական սելջուկյան պետությունը բռնել էր երկարատև հոգեվարքի ճանապարհը: Մոնղոլներից կրած պարտությունից հետո Ռումի սելջուկյան պետությունում գլուխ բարձրացրին կենտրոնախույս ուժերը, որոնք ձգտում էին ապավինելու մոնղոլներին: Տեղ–տեղ կենտրոնական կառավարության դեմ բռնկվում էին զինված ապստամբություններ: Վերջապես ծայր առան նաև ներքին գահակալական կռիվներ

Քեյխոսրով Բ–ի որդիների միջև: Իրանում հաստատված Հուլավու խանը, այդ բոլորի մեջ տեսնելով վտանգ իր իսկ պետության գոյությանը, պաշտպանեց Իզզեդին Քեյկավուս Բ–ին՝ բերելով նրան սելջուկյան գահին և հանձնարարելով պատժել բոլոր ընդդիմադիր ու կենտրոնախույս ուժերին: Սակայն ակնկալված խաղաղությունը չհաստատվեց, և գահակալական պայքարը սուլթանական բանակում էլ ավելի բորբոքվեց: Ի վերջո մոնղոլական Մանգու խանը Ռումի սելջուկյան պետությունը բաժանեց սուլթանական երկու եղբայրների միջև: Գահակալական պայքարը նրանց միջև շարունակվում էր: Եղբայրներից Իզեդդինը (1246–1248 թթ.) օգնության համար դիմեց բյուզանդական կայսրին և Ղրիմի թաթարական խանին, որոնք, սակայն, վախենալով մոնղոլների զայրույթից, հրաժարվեցին նրան օգնելուց:

Ի վերջո Հուլավու խանի առաջարկով Ռումի սուլթանությունում երեք եղբայրները (Քեյկավուս Բ, Ղլիճ Արսլան Դ, Ալա ադ–Դին Քեյկուբադ Բ) հաստատեցին եռապետություն (տրիումվիրատ՝ 1249–1257 թթ.):

Չմանկատուկի ճակատամարտից հետո ծայրահեղորեն սրվեցին նաև Ռումի սելջուկների և Կիլիկյան Հայաստանի հարաբերությունները: Ռումի սելջուկները, լինելով մոնղոլների ենթական ու հարկատուն, բնականաբար, չէին կարող բացահայտորեն հանդես գալ իրենց գերակաների նկատմամբ, սակայն գաղտնի կապեր հաստատելով Եգիպտոսի տիրակալների հետ՝ հաճախ հրահրում էին նրանց հարձակվելու Կիլիկյան Հայաստանի վրա ու ավերելու երկիրը: Նման պարագաներում, մոնղոլները, որպես Կիլիկյան Հայաստանի դաշնակիցներ, միշտ չէ, որ օգնության էին հասնում հայերին:

Այսուհանդերձ, Կիլիկյան Հայաստանը փորձեց օգտվել Ռումի սելջուկյան սուլթանության թուլացումից, և 1255 թ. ամռանը կիլիկյան Հեթում թագավորը սկսեց ազատագրել սելջուկների կողմից զավթված սահմանային շրջաններն ու ամրոցները: Նույն տարվա հոկտեմբերին Հայոց թագավորը մեծ բանակով շարժվեց դեպի Ռումի սուլթանություն, հասավ մինչև Հերակլիոն ու մեծ ավարով վերադարձավ հայրենիք:

Օգտվելով Ռումի սելջուկների թուլացումից՝ 1257 թ. նրանց դեմ զինված ապստամբություն բարձրացրին Կարամանի թուրքմենները, փաստորեն անկախացան, դարձան Կիլիկյան Հայաստանի անմիջական ու վտանգավոր հարևանները, ներխուժեցին երկիր ու մեծ ավերածություններ գործեցին: Նրանք տիրացել էին Տավրոսի հյուսիսարևմտյան մասում գտնվող Էրմենակին, որտեղից իրենց տիրապետությունը տարածեցին Փոքր Ասիայի հարավային ու կենտրոնական մասերում՝ մայրաքաղաք դարձնելով Կարամանը (Լարենդա):

1258 թ. Հուլավու խանի դեպի Բաղդադ կատարած արշավանքին ամենագործուն մասնակցությունն ունեցավ Կիլիկյան Հայաստանը՝ իր 12 հազար հեծյալներով և 40 հազար հետևակով, ինչպես վկայում է Հեթում պատմիչը: Կիլիկյան հայկական բանակը որոշակի մասնակցություն ունեցավ նաև Հուլավու խանի սիրիական արշավանքներին, որոնք, սակայն, հաճախ ավարտվում էին եգիպտական մամլուքներից մոնղոլների կրած պարտություններով: Այս բոլորը էլ ավելի էին սրում եգիպտական մամլուքների և Կիլիկյան Հայաստանի փոխհարաբերությունները:

Իրանում հաստատված Հուլավու խանը, ձգտելով համախմբելու ուժերը եգիպտական մամլուքների դեմ, որոշեց վերջ տալ Կիլիկյան Հայաստանի և Ռումի սելջուկյան սուլթան Ռուքն ադ–Դինի (1257–1263 թթ.) թշնամական հարաբերություններին: 1263 թ.՝ երկու տիրակալների՝ Ռուքն ադ–Դինի և Հայոց Հեթում թագավորի հանդիպման ժամանակ, նրանց միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր:

1284 թ. Ռումի սուլթանության գահ բարձրացավ այդ պետության վերջին տիրակալներից Ալա ադ–Դին Քեյկուբադ Գ–ը (ընդմիջումներով՝ մինչև 1307 թ.): Նրա իշխանության տարիներին Փոքր Ասիայի սելջուկյան թուլացած պետությունը դարձյալ տրոհվեց առանձին մասերի:

Իկոնիայի սուլթանության թուլացումից օգտվեցին Փոքր Ասիայի տարբեր մասերում առաջացած թյուրքական ավատատիրական իշխանությունները, որոնք մեկը մյուսի ետևից իրենց անկախ հռչակեցին: Փոքր Ասիայի սելջուկ վերջին սուլթանները, փաստորեն, գործել էին որպես առանձին ավատատերերի և մեծ վեզիրների ձեռքին յուրատեսակ խաղալիք, քանզի վերջինները վայելում էին մոնղոլ Հուլավյանների հովանավորությունը:

Ալա ադ–Դին Քեյկուբադին 1307 թ. հաջորդեց Ղիասեդդին Մասուդը, որի իշխանության տարիներին վերջնականապես Փոքր Ասիայի սելջուկյան պետությունը դուրս եկավ պատմության ասպարեզից և ամբողջովին վերացավ Փոքր Ասիայի քաղաքական քարտեզից: Սելջուկյան սուլթանների դրամները հայտնի են մինչև 1302 թ.:

Նրա փլատակների վրա վեր բարձրացավ օսմանյան պետությունը:

3. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Թեև սելջուկ–թյուրքերի մոտ ավատատիրական հարաբերություններ սկսեցին ձևավորվել դեռևս Միջին Ասիայում գտնվելու ժամանակաշրջանում, այսուհանդերձ համայնական հարաբերությունները դեռ երկար ժամանակ պահպանվում էին: Փոքր Ասիա փոխադրված թյուրքերի մոտ քաղաքական իշխանությունը հիմնականում ցեղային առաջնորդների ձեռքում էր: Նրանց էին պատկանում մանր եղջերավոր անասունների հսկա հոտեր, հազարավոր ձիեր: Փոքր Ասիայի սելջուկների մոտ ձևավորվել էին ավատանահապետական հարաբերություններ: Այսուհանդերձ, Փոքր Ասիայում հաստատվելուց հետո, երբ երեկվա այդ քոչվոր անասնապահները շփվեցին զարգացման ավելի բարձր աստիճանի վրա գտնվող նստակյաց հողագործ գյուղացիության հետ, ավատատիրական հարաբերությունները նրանց մոտ աստիճանաբար սկսեցին ավելի ու ավելի արմատավորվել, թեև դրա համար պահանջվեցին հարյուրամյակներ: Փոքր Ասիայում և Հայաստանում զավթիչ սելջուկ–թյուրքերը հայ և հույն գյուղացիներից սովորում էին հողամշակությունը:

Փոքր Ասիայի սելջուկների մոտ հողը համարվում էր պետական սեփականություն և սուլթանի կողմից որպես ավատներ բաժանվում էր խոշոր ավատատերերին («իքթա»): Դրանք ոչ միայն հսկա մշակելի հողային տարածություններ էին, այլև ամբողջ քաղաքներ: Այդ ավատները բաշխվում էին պետության նկատմամբ զինվո-

րական ծառայության դիմաց, հետևաբար՝ պայմանական: Իքթան, որն արաբերեն նշանակում է [հողա]կտոր, գերազանցապես բաշխվում էր զավթված երկրների հաշվին, որոնց նախկին տերերը կամ ոչնչացված էին, կամ հողազրկված: Դա հատկապես վերաբերում է Հայաստանին: Հանրահայտ է, որ սելջուկյան հորդաների արշավանքների ու նրանց կազմակերպած զանգվածային ջարդերի հետևանքով հարյուր հազարավոր հայեր ստիպված էին լքել հայրենի բնաշխարհն ու սեփական տիրույթները և արտագաղթել դեպի Հյուսիսային Միջագետք և Կիլիկիա: Հայերն այս վայրերում այն աստիճանի ստվարացան, որ հնարավորություն ունեցան ստեղծելու Գող Վասիլի, Փիլարտոս Վարաժնունու և Ռուբինյան իշխանությունները[31]:

Թեև «իքթա» հողակտորները սկզբում բաժանվում էին ցկյանս՝ պետության նկատմամբ ծառայության փոխարեն, սակայն «իքթադար» ավատատերերը ձգտում էին հետագայում այն վերածելու ժառանգական սեփականության: «Իքթադարական» տիրույթներում հողը Փոքր Ասիայի տարածքում մշակվում էր գերազանցապես հայ և հույն գյուղացիության կողմից կիսարարության հիմունքով, երբ գյուղացին հողօգտագործման համար վճարում էր բնամթերքով՝ հանձնելով բերքի մի մասը: Գանձման որոշակի չափ գոյություն չուներ, և, որպես կանոն, տիրում էր ավատատիրոջ կամայականությունը:

Նվաճելով Փոքր Ասիան՝ սելջուկ-թյուրքերը տիրացան բազմաթիվ քաղաքների, որոնք, ինչպես նշվեց, նույնպես որպես ավատներ հանձնվում էին խոշոր պետական այրերին, քոչվոր անասնապահների ավագանուն և այլոց: Շատ քաղաքներ, սակայն, սելջուկյան արշավանքների հետևանքով ավերվել էին, բնակչությունը սպանվել կամ գերեվարվել ու ստրկացվել էր: Բնակչության մի մասն էլ ստիպված էր զանգվածաբար փախչել ու ապաստան գտնել օտար երկրամասերում: Հետևաբար քաղաքային տնտեսությանը, արհեստագործությանն ու առևտրին հասցվել էր շոշափելի հարված: Սելջուկյան տիրապետության հաստատումից հետո երկար ժամանակ պահանջվեց քաղաքային կյանքը ինչ-որ չափով վերականգնելու համար: Այսուհանդերձ, սելջուկյան արշավանքներից հետո հնչուն դրամի նախկին արտակարգ առատության հետքեր այլևս գրեթե չենք գտնում: Որպես առևտրաարհեստագործական կենտրոններ՝ այնպիսի քաղաքներ, ինչպիսիք էին Էրզրումը, Երզնկան, Սեբաստիան, Կոնյան, կորցրել էին իրենց նախկին փայլը: Եվ անգամ այդ պայմաններում համարյա ողջ առևտրատնտեսական հարաբերությունները, արհեստագործությունը առաջվա նման հայերի և հույների ձեռքում էին:

Պետական կառուցվածքի առումով սելջուկյան սուլթանությունը նախնադարյան ցեղային հարաբերությունների հետ շաղախված ավատատիրական միապետություն էր: Փոքր Ասիայի սելջուկյան հարստության պատմությունը հարուստ է պետական

[31] Այդ իշխանություններից ամենակենսունակը դարձան Ռուբինյանները, որոնք, հենվելով տեղի հայության տնտեսական, ռազմաքաղաքական հզորության վրա և տևական պայքար մղելով բյուզանդացիների դեմ, կարողացան ի վերջո իրենց իշխանությունը վերածել թագավորության, որը հարատևեց շուրջ 300 տարի և խոշոր դեր կատարեց Մերձավոր Արևելքի առևտրատնտեսական և ռազմաքաղաքական պատմության մեջ՝ յուրատեսակ կամուրջ դառնալով Արևելք-Արևմուտք փոխհարաբերություններում:

հեղաշրջումների, պալատական դավադրությունների, սպանությունների մասին աղբյուրների մանրամասն նկարագրությամբ: Այդ բոլոր իրադարձությունների թիկունքում կանգնած էին ցեղային առաջնորդներն ու խոշոր ավատատերերը: Եթե ավատատիրական վերնախավը փորձում էր իրեն ենթարկել տարբեր ցեղային խմբավորումների ազատ վարվելակերպը, ապա վերջինները այդ բոլորին կատաղի դիմադրություն էին ցույց տալիս՝ երկրում ստեղծելով անկայուն քաղաքական իրավիճակ:

Փոքր Ասիայի սելջուկյան պետության պատմությունը ուսումնասիրած մասնագետների մեծ մասը հակված է այդ պետությունը բնութագրելու որպես «վաղ ավատատիրական» զարգացման փուլում գտնվող հասարակություն, որտեղ բնակչության մեծամասնությունը կազմող գյուղացիները, որոնք ընդհանուր անունով կոչվում էին ռայա կամ ռայաթ, թեև ձևականորեն հռչակվում էին ազատ, իրականության մեջ, սակայն, հողատեր-ավատատիրոջից գտնվում էին կախյալ վիճակում, ենթարկվում էին դաժան շահագործման ու մատնված էին աղքատության: Վ. Վ. Գորդլևսկին, հենվելով աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրության վրա, գյուղացիներին ներկայացնում է որպես «ֆուքարա», այսինքն՝ աղքատ խավ:

Փոքր Ասիայի սելջուկյան պետության մեջ զգալի տեղ էր գրավում ստրկավաճառությունը: Սելջուկյան արշավանքների ժամանակ գերեվարվում էր տասնյակ հազարավոր, գերազանցապես քրիստոնյա բնակչություն, որի զգալի մասը վաճառվում էր Փոքր Ասիայի և Իրանի շուկաներում:

Ծանր հարկապահանջությունը, բացահայտ կողոպուտն ու գերեվարությունը Փոքր Ասիայի տեղաբնիկ աշխատավորությանը հասցրել էին հուսահատության գիրկը: Ռումի կամ Իկոնիայի սուլթանության եկամտի հիմնական աղբյուրը քրիստոնյա բնակչությունից գանձվող ջիզյա հարկատեսակն էր:

Սելջուկները, Փոքր Ասիայում խորտակելով Բյուզանդիայի քաղաքական ուժը և գտնվելով տնտեսական ու մշակութային ցածր, քոչվորական անասնապահության աստիճանին, Հայաստանի ու Փոքր Ասիայի տեղաբնիկ բնակչությանը բերեցին միայն քաղաքական բիրտ գերիշխանություն: Այս պայմաններում երկրամասի բնիկ նախկին քրիստոնյա ավատատերերը կամ կանգնեցին ֆիզիկական ոչնչացման առաջ և կամ բռնեցին գաղթի ու տարագրության ուղին:

1243 թ.՝ Զմանկատուկի ճակատամարտից հետո, Փոքր Ասիայում մոնղոլական փաստական գերիշխանության հաստատումն ավելի բարդացրեց երկրամասում իրավիճակը հասարակական-տնտեսական և քաղաքական ոլորտներում: Բնակչությունից գանձվող հարկերն ու տուրքերը շեշտակի ավելացան: Մոնղոլական տիրապետությունը ի վերջո կործանեց Փոքր Ասիայի սելջուկյան պետությունը: XIII դարի վերջին Իկոնիայի սուլթանությունը տրոհվեց 12 անկախ իշխանությունների՝ բեյությունների: 1307 թվականին մոնղոլները խեղդամահ արեցին սելջուկյան վերջին սուլթանին, որն էլ համարվում է սելջուկյան պետության վերացման տարեթիվ:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ: ՕՍՄԱՆՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Օսմանյան պետության կազմավորման սկզբնական ժամանակաշրջանի պատմությունը մշուշապատ է: XV դարի թուրք պատմիչ Աշըքփաշազադեն հատուկ նշում է, որ օսմանյան պետության ամենավաղ ժամանակաշրջանի պատմության վերաբերյալ գոյություն ունեն տարբեր վարկածներ: Այսուհանդերձ, հետագա պատմիչների մոտ ներկայացված պատմական դեպքերի և իրադարձությունների հիման վրա կարելի է որոշակի եզրակացություններ անել:

Իկոնիայի սուլթանության վերացումից հետո Փոքր Ասիայում առաջացած Այդընը, Սարուխան, Մենթեշե, Գերմիան, Կարասի, Հյուդավենդրգյար, Կարաման իշխանություններից պատմական հանգամանքների բերումով առավել կենսունակ հանդիսացավ և թուրքական նոր պետության հիմքը կազմեց Օսմանյան բեյությունը: Այդ բեյությունը հիմնվել էր Փոքր Ասիայի հյուսիսարևմտյան մասում Միջին Ասիայից եկած օղուզական Քայի ցեղի կողմից: Այդ ցեղի առաջնորդ Էրթողրուլը իքթայի իրավունքով Իկոնիայի սուլթան Ալա ադ-Դին Քեյկուբադից որպես ուշ՝ սահմանային տարածք, ստացել էր Կարաջադաղի շրջանը, որն ընդգրկում էր հին հռոմեական Բյութանիա նահանգը (հետագայում վերանվանված՝ Սյոգյուտ): Այս համեմատաբար ոչ մեծ տարածքը դարձավ նոր՝ օսմանյան պետության կորիզը: Էրթողրուլը շուտով նվաճեց իր հիմնադրած պետության մի շարք հարակից շրջաններ: Թեև օսմանյան պետության փաստական հիմնադիրը Էրթողրուլն էր, սակայն այդ պետությունն իր անվանակոչությունը ստացավ նրա որդի Օսմանի (1258–1324 թթ.) անունով:

Հոր մահից հետո (1281 թ.) Օսմանը շարունակեց ընդարձակել իր իշխանությունը ի հաշիվ բյուզանդական տարածքների: Իր տարածքներն ընդարձակելիս Օսմանը հաճախ դաշինք էր կնքում բյուզանդական կենտրոնական իշխանությունից դժգոհ տեղի քրիստոնյա իշխանավորների հետ: Նրան հատկապես մեծ աջակցություն ցույց տվեց Քյոսե (ճաղատ) Միխայիլը: 1283–ից մինչև 1299 թվականն ընկած ժամանակաշրջանում Արևմտյան Փոքր Ասիայում Օսմանը տեր է դառնում զգալի մի տարածքի: 1299 թվականին, օգտվելով այն հանգամանքից, որ սելջուկյան սուլթան Ալա ադ-Դին Քեյկուբադը ժողովրդական ապստամբության հետևանքով փախչում է մայրաքաղաքից, և երկիրը մնում է անտեր, Օսման բեյը իրեն հռչակում է անկախ, և 1299 թվականն ընդունված է անվանել օսմանյան պետության հիմնադրման տարի:

1301 թ. Օսմանը նվաճում է Էսքիշեհիրը և այստեղ տեղափոխում իր նստավայրը: Նրա իշխանության տարածքը շուտով հասնում է մինչև Անկարա:

«Յերկիր Յունաց արշաւեալ՝
զքերդս և զաւանս յափշտակեալ,
Մինչ հասանի յԱնկուրիա»,— կարդում ենք Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի երկասիրության մեջ[32]:

Բյուզանդական և թուրքական աղբյուրների վկայությամբ՝ Օսմանի նվաճումներն ընթանում են երեք ուղղությամբ՝ դեպի արևմուտք՝ Սակարիա գետի երկայնքով և դեպի Նիկեա (Իզնիկ), դեպի արևելք՝ կենտրոնական Անատոլիա, և դեպի հարավ-արևմուտք:

Օսման բեյը մահանում է մոտ 1324 թ., և նրան հաջորդում է որդին՝ Օրխան բեյը (1324–1360 թթ.), որը բեյությունը կառավարում էր դեռևս 1321 թվականից՝ հոր հիվանդության ընթացքում: Նրա ավագ եղբայր Ալաեդդինը նշանակվում է վեզիրի պաշտոնում:

Օրխանի ու Ալաեդդինի անվան հետ են կապվում մի շարք կարևոր նորամուծություններ, ինչպիսիք են սեփական դրամի հատման սկզբնավորումը, անհավատների դեմ պատերազմող զորքի, ի տարբերություն այլ հեծյալների, սպիտակ գլխարկ կրելը, հատուկ հետևակ զորքի կազմակերպումը, որը աշխատավարձ ստանում էր արշավանքներին մասնակցելու ընթացքում, իսկ խաղաղ պայմաններում հատկացված հողակտորի մշակման դիմաց ազատվում էր հարկերից: Նման պայմաններով կազմակերպվեց նաև հեծելազոր, որ կոչվում էր մյուսելլեմ: Որոշ ժամանակ անց քրիստոնյա բնակչությունից հավաքագրած մանուկներին դավանափոխելու և զինվորական ծառայության պատրաստելու միջոցով սկսեցին ձևավորել նաև այսպես կոչված «նոր զորք» (ենի չերի):

1326 թ. ապրիլի 6–ին՝ երկարատև պաշարումից հետո, Օրխանը գրավում է Արևմտյան Փոքր Ասիայի խոշորագույն կենտրոններից մեկը՝ Բրուսան (Բուրսան) և այն վերածում օսմանյան պետության առաջին մայրաքաղաքի:

Բրուսայի գրավումից հետո Օրխանը Բյուզանդիայից 1330 թ. նվաճում է Իզնեկը, իսկ 1337 թվականին՝ Իզմիթը (Նիկոմեդիա):

Արևմտյան Փոքր Ասիայում օսմանցիների այս նվաճումները առաջ են բերում Կարասիի էմիրների նախանձն ու թշնամանքը, որոնք իրենց իշխանությունը հաստատել էին Մարմարա և Էգեյան ծովերի երկայնքով: Օգտվելով այդ էմիրությունում ծավալված գահակալական կռիվներից՝ Օրխանն իրեն է ենթարկում ոչ միայն օսմանցիներին ախոյան այս իշխանությունը, այլ նաև Գերմիանի և Չանդարլըի էմիրությունները: Այս բոլորը, համաձայն Աշըքփաշազադեի, տեղի է ունենում 1345–1349 թվականներին:

Բյուզանդիայում Անդրոնիկոս Գ կայսեր մահից հետո (1341 թ.) գահակալական պայքար ծավալվեց Հովհաննես Ե Պալեոլոգի և Հովհան Զ Կանտակուզենի միջև: Եր-

[32] Տես Երեմիա Քեօմուրճեան, «Պատմութիւն հաւատոց ԴԺ տարւոյ Օսմանցոց թագաւորացն», աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982 թ., էջ 63:

կու հավակնորդներն էլ օգնություն ստանալու համար դիմեցին թուրքերին. Պալեոլոգը դիմեց Այդընի բեյությանը, իսկ Կանտակուզենը՝ Օրխանին: 1345–1348 թթ., օգտվելով ընձեռված հնարավորությունից, Օրխանի որդին՝ Սուլեյմանը, պատերազմական գործողություններ էր իրականացնում Գալիոպոլի թերակղզում և Թրակիայում: 1349 թ. նա օգնեց Կանտակուզենին ճնշելու ապստամբությունը Թեսալոնիկեում և արշավեց նաև Սերբիա ու Բուլղարիա: Այդ օժանդակությունների դիմաց Գալիոպոլի թերակղզում նա ստացավ Ցիմպե ամրոցը (1352 թ.):

Այսպիսով՝ XIV դարի առաջին կեսի Թուրքիայի ներխուժումները Եվրոպայի հարավարևելյան տարածք ունեցան գերազանցապես հետախուզական և ավարառուական բնույթ, իսկ XIV դ. կեսերից Օրխանն արդեն ստեղծեց ամուր հենարան Բալկանյան երկրների նվաճման համար:

XIV դարի երկրորդ կեսին օսմանցի թուրքերն արդեն իսլամի դրոշով «անհավատների դեմ պայքարում» մեկը մյուսի հետևից գրավեցին Բալկանյան երկրները՝ վերջ տալով այնտեղ գոյություն ունեցող քրիստոնյա պետություններին, բնակչությանը մատնելով ստրկության ու ֆիզիկական ոչնչացման վտանգի: Թուրքերը իրենց նվաճած տարածքներում հաստատում էին դաժան ու միայն յաթաղանի վրա հիմնված բռնակալական համակարգ, իսլամական մոլեռանդությամբ սնված թուրք նվաճողները քրիստոնյա հպատակների համար ստեղծում էին ծանր ու անելանելի վիճակ: Նվաճված երկրներում եկեղեցիները վերածվում էին մզկիթների: Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի բառերով ասած՝ օսմանցիները ամենուր «քակեն ...զեկեղեցիսն՝ մեսճիտ և մետրէսե շինեալ», «...աննման և մեծածախ եկեղեցիքն են կործանեալ»:

Ինչպես Փոքր Ասիայում, այնպես էլ Բալկաններում թուրքերը հմտորեն օգտագործում էին քրիստոնյա պետությունների միջև հակամարտությունները և այդ պետություններում անջատողական կենտրոնախույս ուժերին: Իրենց ավատատիրական իրավունքները և ավատատիրական տիրույթները ամենից վեր դասելով՝ այդ ուժերը հաճախ դաշինք էին կնքում նվաճող թուրք ավատատերերի հետ ընդդեմ սեփական պետության ու իշխանության:

1362 թ. մարտին մահանում է Օրխանը, որին հաջորդում է իր որդի Մուրադ Ա–ը (1362–1389 թթ.)՝ ստանալով Հուդեվենդիգյար (տիրակալ) տիտղոսը: Գահակալման առաջին տարիներին Մուրադ Ա–ն առավելապես զբաղված էր Փոքր Ասիայով: Միայն հետագա տարիներին օսմանյան նոր տիրակալն իր ողջ ուշադրությունը սևեռեց Բալկանների նվաճմանը: Դեռևս 1362 թվականին Բալկաններում նա գրավեց կարևորագույն հենակետ Փիլիպոպոլիսը (Պլովդիվը): Բալկաններում թուրքական հետագա նվաճումների առաջ որևէ կարող դիմադրական ուժ, փաստորեն, գոյություն չուներ: Բուլղարական թագավոր Շիշմանը թուրքերին հարկատու և դաշնակից էր դարձել: Եվ ահա այս պայմաններում է, որ թուրքերին հաջողվեց գրավել Ադրիանապոլիսը՝ վերանվանելով այն Էդիրնեի և դարձնելով իրենց երկրորդ մայրաքաղաքը: Այդ բոլորից հետո թուրքերի հաջորդ զոհը դարձավ Սերբիան: 1389 թ. հունիսին թուրքական հորդաները ողողեցին այդ երկիրը: Նույն թվականի հունիսի 15–ին

Կոսովոյի դաշտում, որը թուրքերն անվանում էին Կարա Թափու Օվա, սերբական իշխան Լազար Գրեբլիանովիչը սերբերից, հունգարներից, վլախներից, խորվաթներից, չեխերից ու լեհերից կազմված իր բանակով ծանր պարտություն կրեց Մուրադ Ա–ի զորքից:

Այդ ճակատամարտում սերբական իշխանը վիրավորվեց ու գերեվարվեց թուրքերի կողմից: Սակայն հաղթական Մուրադ Ա–ն մի սերբ հայրենասերի ձեռքով սպանվեց, որի հետևանքով օսմանյան գահին տիրացավ Բայազետ Ա Յըլդըրըմը (Կայծակ, 1389–1402 թթ.):

Անցնելով իշխանության գլուխ՝ Բայազետ Ա Յըլդըրըմը իր ողջ ուշադրությունը սևեռեց Փոքր Ասիայում տեղի ունեցած իրադարձություններին: Օգտվելով թուրքերի ծավալած ռազմական գործողություններից Բալկաններում՝ Կարամանիայի տիրակալ Ալաեդդինը իր շուրջն էր համախմբել փոքրասիական թյուրքական բեյերի, Սեբաստիայի (Սվազի) Կադի Բուրհանեդդինի, Սարուխանի, Գերմիանի, Մենթեշեի տիրակալների ռազմական ուժերն ու 1389–1390 թվականներին գրավել Փոքր Ասիայի օսմանյան մի շարք տիրույթներ: Բայազետը հակաօսմանյան թյուրքական զորքերին շոշափելի հարվածներ հասցրեց, սակայն հանգամանքների բերումով նա ստիպված եղավ պարտված Ալաեդդինի հետ համաձայնագիր ստորագրել, որի հետևանքով վերջինը պահպանում էր անկախ իշխանությունը:

Կոսովոյի ճակատամարտից հետո եվրոպական մի շարք երկրներ, բաց ըմբռնելով թուրքական հետագա արշավանքների աղետալի հետևանքները, փորձել էին կազմել նոր դաշինք՝ ուղղված թուրքական նախահարձակության դեմ: 1396 թ. սեպտեմբերի 25–ին Նիկոպոլիսի (Բուլղարիա) մոտ տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ թուրքերի և եվրոպական դաշնակից զորաբանակների միջև, որն ավարտվեց վերջինների ծանր պարտությամբ: Թուրքերը շատ դաժան հաշվեհարդար տեսան հազարավոր գերեվարյալ և խաղաղ բնակչության հետ՝ ամենուր սփռելով արյուն ու ավեր:

Մինչ թուրքերը զբաղված էին Բալկաններում ռազմական գործողություններ ծավալելով, Կարամանիայի էմիր Ալաեդդինը, օգտվելով իր օսմանյան ախոյանի բացակայությունից, անցավ հարձակման և շարժվեց դեպի Անկարա և Բրուսա: Բայազետն անմիջապես անցավ հակահարձակման, պարտության մատնեց Կարամանիայի էմիրին: Վերջինս փախուստի դիմելով ապաստան գտավ Իկոնիայում, որի բնակիչները, սակայն, ձերբակալեցին նրան ու հանձնեցին Բայազետին: Սուլթան Բայազետը գլխատել տվեց նրան և Կարամանիան բռնակցեց օսմանյան պետությանը (1397 թ.): Դա Փոքր Ասիայի վերջնական նվաճման սկիզբն էր: 1398 թվականին Բայազետը իր պետությանը միացրեց նաև Կադի Բուրհանեդդինի էմիրությունը՝ Սեբաստիա կենտրոնով: Այնուհետև Բայազետի որդի Սուլեյմանը ասպատակեց Հայաստանի մի շարք այլ շրջաններ ու նվաճեց մերձեփրատյան տարածքները, ինչպես նաև Երզնկան ու Էրզրումը, որն այն ժամանակ Թեմուրի հովանավորյալ Թահարթենի ձեռքին էր: Այս պայմաններում 1400 թվականին Թեմուրն իր բանակները շարժեց դեպի Փոքր Հայք, պաշարեց Սեբաստիան ու գրավեց այն 1400 թ. օգոստոսի

26–ին՝ բնակչությանը ենթարկելով անասելի կոտորածի: Սեբաստիայի գրավումից հետո Թեմուրը շարժվեց դեպի Սիրիա և Միջագետք:

Օգտվելով հզոր նվաճողի բացակայությունից՝ Բայազետը փորձեց վերանվաճել մերձեփրատյան կորցրած տարածքները՝ արշավանքի ճանապարհին բնակչությանը ենթարկելով կողոպուտի ու սպանության: Թեմուրը նման պայմաններում իր զորքերը շարժեց դեպի Անկարա, ուր 1402 թ. հուլիսի 28–ին տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց Թեմուրի հաղթանակով ու Բայազետ Յըլդըրըմի գերեվարմամբ: Անկարայի ճակատամարտից հետո Թեմուրի հորդաները ավեր ու արյուն սփռեցին Արևմտյան Հայաստանի ու Փոքր Ասիայի արևմտյան մասերում և մոտ 60 հազար տուն դարա–թաթարներ փոխադրեցին Խորասան:

Անկարայի ճակատամարտն աղետալի հետևանքներ ունեցավ օսմանյան պետության համար: Բռնկվեցին գահակալական կռիվներ Բայազետի որդիների միջև, իսկ Կարամանը, Գերմիանը, Սարուխանը, Մենթեշեն և այլ էմիրություններ կրկին անկախացան օսմանցիներից:

Օսմանյան պետությունում սկսվեց ներքաղաքական ճգնաժամի մի երկարատև ժամանակաշրջան: Օգտվելով ստեղծված իրավիճակից՝ բալկանյան ժողովուրդները ևս փորձեցին ազատագրական կռիվներով թոթափել օսմանյան ատելի լուծը: Բայազետ Յըլդըրըմի որդիներից Մեհմեդ Ա Չելեբին փորձեց վերականգնել մասնատված օսմանյան պետությունը, և դա նրան մասնակիորեն հաջողվեց՝ բացառությամբ Կարամանի, նա նորից օսմանյան գերիշխանությանը ենթարկեց Փոքր Ասիայի մյուս թյուրքական էմիրությունները:

Մեհմեդ Ա Չելեբիի մահից հետո՝ 1421 թվականին, օսմանյան գահին տիրացավ նրա որդին՝ Մուրադ Բ–ն (1421–1451 թթ.), որի տիրապետության ժամանակ օսմանյան պետությունը ոչ միայն ամրապնդեց իր նախկին դիրքերը, այլև նորից անցավ զավթողական պատերազմների: Եվրոպական պետությունները նորից կանգնեցին թուրքական ներխուժումների վտանգի առջև: 1423–1430 թթ. ընթացքում Մուրադ Բ–ն տևական պատերազմների մեջ էր Վենետիկի հանրապետության և մի շարք այլ եվրոպական պետությունների հետ: 1430 թ. թուրքերը վերանվաճեցին Բալկաններում Սալոնիկը, որն իրենց ձեռքում պահեցին ընդհուպ մինչև 1912 թվականը:

Մուրադ Բ–ի հիմնական նպատակն էր զավթել Բյուզանդիայի մայրաքաղաք Կոստանդնուպոլիսը: Այդպիսի փորձ նա կատարեց իր իշխանության սկզբում՝ դեռևս 1422 թվականին, սակայն հանդիպեց անհաջողության:

Թուրքական նոր արշավանքները Բալկաններում նորից ահազանգեցին քրիստոնյա Եվրոպային: 1439 թ. Ֆլորենցիայի տիեզերաժողովում որոշում ընդունվեց խաչակրաց արշավանք կազմակերպելու թուրքերի դեմ: 1440–1448 թթ. ընթացքում քրիստոնյա պետությունների նոր կոալիցիան տաղանդավոր զորավար Յանոշ Հունյադիի գլխավորությամբ թուրքերին մի շարք շոշափելի պարտություններ հասցրեց Բալկաններում: Ալբանիայում մեծ ծավալ ընդունեց ազատագրական պատերազմը ականավոր Գեորգի Կաստրիոտայի գլխավորությամբ, որն առավելապես պատմությանը հայտնի է Սկանդարբեկ անունով: Սակայն ի վերջո 1448 թ. հոկտեմբերի 17–19–ը Կոսովոյի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում Յանոշ Հունյադին ծանր պարտություն կրեց, և Բալկանյան երկրների զգալի մասը նորից ընկավ թուրքական տիրապետության տակ: Յանոշ Հունյադիի դեմ թուրքերի այս հաղթանակը յուրատեսակ նախերգանք հանդիսացավ Կոստանդնուպոլսի անկմանը:

2. ԱՎԱՏԱՏԻՐԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՄԱՏԱՎՈՐՈՒՄԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

XIII–XIV դարերում օսմանյան պետության տարածքների ընդլայնմանը զուգընթաց շարունակվեց նաև ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Աստիճանաբար թյուրք քոչվոր ցեղապետերը վերածվում էին խոշոր ավատատերերի՝ իրենց ընդարձակ տիրույթներով և ավատատիրական արտոնություններով: Սելջուկների ժամանակաշրջանում հողատիրության մեջ «իքթայի» իրավունքը փոխարինվում էր օսմանյան թիմարական համակարգով, որով ավատատիրական վերնախավի հողային տիրույթները այսպես կոչված «խասս» հողերն էին: Հողատիրությունը բացառապես պայմանավորված էր ռազմական ծառայության մատուցմամբ: Հողատիրության այս համակարգը օսմանյան պետության մեջ վերջնականապես տիրապետող դարձավ 1375 թ. սուլթան Մուրադ Ա–ի իշխանության տարիներին: Ըստ որում՝ այդ համակարգը տարածվում էր ոչ միայն Փոքր Ասիայում, այլև Բալկաններում, որտեղ մատնանշված ժամանակաշրջանում թուրք ավատատերերը ստիպված էին հաշվի առնել այդ երկրներում դարերի ընթացքում ձևավորված որոշակի հասարակական հարաբերությունները, հողատիրության ձևերն ու հողօգտագործման եղանակները:

XIV դարի վերջերին և XV դարի սկզբներին օսմանյան պետությունը վաղ ավատատիրական հարաբերություններից աստիճանաբար տեղափոխվում է զարգացած ավատատիրական հարաբերությունների ժամանակաշրջան, որի համար ամենաբնորոշը գյուղացիների շահագործման սաստկացումն էր, ինչի հետևանքով էլ սոցիալական շարժումները, զինված խռովությունները հաջորդում էին մեկը մյուսին: Հատկապես հիշարժան են շեյխ Բեդրեդդին Սիմավիի (1358–1416 թթ.), Բյորկլյուջա Մուստաֆայի և Թորլակ Քեմալի զինված խռովությունները XV դարի առաջին քառորդին, որը խիստ լարված վիճակ ստեղծեց օսմանյան պետության քաղաքական կյանքում:

Դեռևս Օրխան Բեյի իշխանության տարիներին առաջին անգամ օսմանյան պետության մեջ կատարվել էր վարչատարածքային բաժանում, որը խարխլում էր ցեղային հարաբերությունները:

Նվաճումների ավելի ու ավելի ընդլայնումը օսմանյան պետության առաջ հրամայական պահանջ էր դնում փոփոխություններ կատարելու նաև բանակում: Եթե սկզբնական ժամանակաշրջանում թուրքական բանակի կորիզը կազմում էին հետևակը (յայա) և հեծելազորը (մյուսելլեմ), ապա 1361–1363 թվականներին՝ Մուրադ Ա–ի ժամանակ, կանոնավոր բանակի վերածվեց դեռևս Օրխանի ժամանակից

սկսված «ենի չերի» (նոր զորք) անվանումով «դևշիրմե»-ի (մանկահավաքի) ձևով բացառապես քրիստոնյա հպատակներից հավաքագրվող զորքը: Այդ հավաքագրումը հիմնված էր թուրք ավատատեր նվաճողի՝ «սրբազան» պատերազմի ժամանակ գերեվարյալների հինգից մեկին տիրանալու (պենչիկ) իրավունքով:

3. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XV ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՆՎԱՃՈՒՄԸ

Մուրադ Բ-ի մահից հետո իշխանության գլուխ անցած նրա որդի Մեհմեդ Բ Ֆաթիհը (Նվաճող) (1451–1481 թթ.) անմիջապես ձեռնամուխ եղավ իրականացնելու օսմանյան տիրակալների վաղուց փայփայած երազանքը՝ նվաճել Կոստանդնուպոլիսը: Իր նպատակին հասնելու համար նա կատարեց մանրակրկիտ նախապատրաստական աշխատանքներ: 1452 թվականին Բոսֆորի եվրոպական ափին կառուցեց Ռումելի Հիսար անվանված հզոր ամրոցը, որը գտնվում էր դեռևս Բայազետ Ա-ի կառուցած Անադոլու Հիսարի դեմ դիմաց, այնուհետև հունգարացիների և ջենովացիների աջակցությամբ նա ձուլել տվեց այն ժամանակվա աշխարհի գերհզոր հրետանին, որը ստացավ Բալյեմեզ անունը: Այդ հրետանին եթե ոչ վճռական, ապա էական նշանակություն ունեցավ Կոստանդնուպոլսի գրավման հարցում:

1453 թ. ապրիլ–մայիս ամիսներին թուրքերը 53 օր պաշարեցին բյուզանդական մայրաքաղաքը: Վճռական գրոհը Կոստանդնուպոլսի վրա տեղի ունեցավ 1453 թ. մայիսի 29-ին: Թուրքական հրետանու հարվածներից Կոստանդնուպոլսի պարսպում առաջացած ճեղքերից թուրքերը ներխուժեցին քաղաք և իրականացրին ահռելի կոտորած: Սպանվածների թվում էր բյուզանդական վերջին կայսր Կոստանդին ԺԱ Պալեոլոգը (1449–1453 թթ.): Նվաճված քաղաքում թուրքերի կատարած անլուր վայրագությունների, գազանությունների մասին մանրամասնությունները մեզ ներկայացնում է բյուզանդական պատմիչ Դուկան: Բյուզանդական մայրաքաղաքի գրավումը Մեհմեդ Ֆաթիհի կողմից 1453 թվականին հզորագույն հարված էր քրիստոնեական աշխարհին: Դեպքերի ժամանակակից երկու հայ հեղինակներ Աբրահամ Անկյուրացին և Առաքել Բաղիշեցին իրենց չափածո ողբերում արտահայտում են խոր ցավն ու վիշտը քաղաքակրթության այդ խոշորագույն կենտրոնի կործանման առթիվ:

Ելնելով օսմանյան պետության գերակա շահերից՝ Մեհմեդ Բ Ֆաթիհը Կ. Պոլսի գրավման երրորդ օրը կարգադրեց դադարեցնել սպանդն ու կողոպուտը: Կ. Պոլիսը հայտարարվեց օսմանյան պետության մայրաքաղաք: Շուտով Մեհմեդ Բ Ֆաթիհը հաստատեց նաև հունական և հայկական պատրիարքությունների հիմնադրումը Կ. Պոլսում: Հայոց առաջին պատրիարքը դարձավ Բրուսայի հոգևոր առաջնորդ Հովակիմը:

Կոստանդնուպոլսի գրավումից հետո բալկանյան երկրների վիճակը դարձավ ավելի խոցելի, և թուրքական նոր ներխուժումների վտանգն անհամեմատ ավելի մեծացավ: 1456 թ. Մոլդավիան դարձավ օսմանյան պետության վասալն ու հարկատուն: Թուրքական հսկա մի բանակ 1457 թ. ներխուժեց Ալբանիա, որտեղ դեռևս

շարունակվում էր դիմադրությունը թուրքերին: 1458–1460 թվականներին սուլթան Մեհմեդ Բ-ը նվաճեց Մորեան և Սերբիան: 1463 թ. թուրքերը իրենց ենթարկեցին Բոսնիան: 1458–1463 թթ. ընթացքում թուրքերը Բալկաններում իրենց տիրապետությունը հաստատեցին ոչ միայն բյուզանդական տիրույթների մնացորդների, այլև վենետիկյան գերիշխանության ներքո գտնվող բոլոր տարածքների վրա:

Դեռևս 1461 թվականին թուրքերը հարձակվեցին Փոքր Ասիայի տարածքում իր գոյությունը պահպանած քրիստոնեական վերջին պետության՝ Տրապիզոնի կայսրության վրա՝ նպատակ ունենալով օսմանյան պետությանը միացնելու եվրոպական պետությունների՝ Արևելքի երկրների հետ ունեցած կարևորագույն առևտրական մայրուղին: Տրապիզոնի կայսր Կալո-Յոհաննես Կոմնենոսի դաշնակից և փեսա, ակ կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանը, հակառակ ստանձնած իր պարտավորությունների, չկարողացավ օգնություն ցույց տալ կայսրությանը, երկիրը նվաճվեց թուրքերի կողմից ու ենթարկվեց ահավոր կոտորածի ու թալանի: Շատ շուտով Փոքր Ասիայում Սև ծովի երկայնքով համարյա ողջ տարածքն անցավ թուրքերի ձեռքը: Ասիական մասում թուրքերին մնացել էին երկու թշնամիներ՝ Կարամանի էմիր Իբրահիմն ու ակ կոյունլուների տիրակալ Ուզուն Հասանը (1453–1477 թթ.):

Օգտվելով Կարամանի էմիրությունում ծայր առած զահակալական կռիվներից՝ 1465–1468 թվականների ընթացքում Մեհմեդ Բ Ֆաթիհը իր տիրապետությունը հաստատեց նաև այս երկրամասում, թեև կարամանցիները տեղ-տեղ դիմադրեցին ընդհուպ մինչև 1472 թվականը:

Հերթը հասել էր Ուզուն Հասանին, որը դեռևս 1463 թ. Վենետիկի հանրապետության հետ կնքել էր հակաթուրքական դաշինք: 1471 թ. օգոստոսի 11-ին Մեհմեդ Բ-ի և Ուզուն Հասանի բանակները Դերջանում (թուրքական աղբյուրներում՝ Օթլուքբելի) մեծ ու արյունալի ճակատամարտ տվեցին, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Դերջանի ճակատամարտի անմիջական հետևանքն էր Մեծ Հայքի հյուսիսարևմտյան մասի (Էրզրում, Կամախ, Դերջան, Բաբերդ և այլն) միացումը օսմանյան պետությանը:

Դերջանում ակ կոյունլուների դեմ տարած հաղթանակից հետո Մեհմեդ Բ-ը իր հարվածն ուղղեց Ուզուն Հասանի դաշնակից Վենետիկյան հանրապետության դեմ: Երկարատև պատերազմը Վենետիկի հետ դարձյալ ավարտվեց թուրքերի հաղթանակով, և 1479 թ. հունվարի 26-ի հաշտության պայմանագրով թուրքերին հանձնվեցին Վենետիկի համարյա բոլոր տիրույթներն Էգեյան ծովում, բացառությամբ Կրետե կղզու և Կորֆուի:

1480 թ. Մեհմեդ Բ-ը ձեռնամուխ եղավ Հարավային Իտալիայի նվաճմանը: 100 հազարանոց թուրքական բանակը, ափհանում կատարելով Օտրանտո քաղաքի մերձակայքում, ողողեց Իտալիայի հարավը՝ ամենուր արյուն ու ավեր սփռելով: Իտալական ժողովուրդը Եվրոպայի տարբեր երկրներից ժամանած կամավորների օգնությամբ հերոսական դիմադրություն ցույց տվեց թուրքերին: Իտալական արշավանքի ժամանակ տեղի ունեցած Մեհմեդ Բ-ի մահը (1481 թ. մայիսի 4) թուրքերին ստիպեց հապճեպ կարգով դուրս հանել իրենց զորամասերն Իտալիայից: Այսուհանդերձ,

թուրքական տիրապետության սահմանները Մեհմեդ Բ–ի իշխանության տարիներին խիստ ընդարձակվել էին: Դեռևս 1475 թ. թուրքերը նվաճել էին Ղրիմը ու վերջ տվել այստեղ իտալական առևտրական գաղթավայրերին: Ղրիմում ապրում էին մեծ թվով հայեր, և իտալական աղբյուրներում այդ երկրամասը երբեմն անվանվում էր Armenia Maritima, այսինքն՝ Ծովային Հայաստան: Ղրիմի թուրքերի կողմից նվաճվելուց հետո ղրիմահայերի մի մասը ստիպված եղավ հեռանալ Ղրիմից ու հաստատվել Արևմտյան Ուկրաինայում և Լեհաստանում:

Մեհմեդ Բ–ը խոշոր պետական գործիչ էր: Նա ոչ միայն աչքի ընկավ ռազմաքաղաքական բնագավառում, այլև զգալի դեր կատարեց օսմանյան պետության հասարակական–տնտեսական կյանքում: Իր հրատարակած կանոնադրություններով նա փորձել է կարգավորել օսմանյան ավատական հողատիրական թիմարական համակարգն ու հողօգտագործման եղանակները, գյուղական ու քաղաքային բնակչությունից գանձվող հարկերը, միջհամայնքային հարցերը: Ընդգծելով պետական շահի գերակայությունը՝ իշխանափոխության ժամանակ քաղաքական ճգնաժամերից խուսափելու նպատակով 1478 թ. օրենքով նա սուլթանական գահ բարձրացող թագաժառանգին թույլ տվեց սպանել իր եղբայրներին:

Չնայած այդպիսի օրենքի գոյությանը՝ Մեհմեդ Բ–ի մահից հետո նրա երկու որդիների՝ Բայազետի ու Ջեմի միջև սկիզբ առան քաղաքացիական կռիվներ, որոնցից ի վերջո հաղթական դուրս եկավ Բայազետ Բ–ը (1481–1512 թթ.):

Իր արտաքին քաղաքականության մեջ Բայազետ Բ–ը աշխույժ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց եվրոպական մի շարք երկրների հետ, իսկ XV դարի վերջին՝ նաև Մոսկովյան պետության հետ: Շարունակելով իր նախորդների նվաճողական քաղաքականությունը՝ 1483–1484 թվականներին նա իրեն ենթարկեց Հերցեգովինան ու Մոլդավիան, գրավեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Ակքերմանը, և թուրքերի համար ուղի հարթվեց դեպի Լեհաստան ու Հունգարիա:

1485–1491 թվականներին Բայազետ Բ–ը ռազմական գործողություններ ծավալեց եգիպտական մամլուքների դեմ գերազանցապես Կիլիկյան Հայաստանի տարածքում՝ մամլուքների ոտնձգություններից պաշտպանության տակ վերցնելով թուրքերի հովանավորյալ, թուրքմենական զուլքադարյան էմիր Ալա–ուդ–Դեվլեթին: Կիլիկիան և կիլիկիահայությունը այդ տարիներին իր ուսերի վրա կրեց ռազմական գործողությունների ողջ ծանրությունը: Մամլուքների դեմ մղված այս պատերազմները մեծ մասամբ ավարտվում էին թուրքերի պարտությամբ: Ավելին՝ 1490 թ. մամլուքները պաշարեցին Կեսարիան և ասպատակեցին Կարամանը: Ի վերջո երկու պետությունների միջև 1491 թ. մայիսին կնքվեց հաշտության պայմանագիր, որով Կիլիկիայի հիմնական կենտրոնները, ներառյալ Տարսոնը, Ադանան, Սիսը, մնացին մամլուքների ձեռքում:

Եգիպտոսի հետ հաշտություն կնքելուց հետո Բայազետ Բ–ը իր զորքերը մտցրեց Ալբանիա՝ հերթական բռնկված խռովությունները ճնշելու, ասպատակեց Ավստրիան, Հունգարիան ու Տրանսիլվանիան:

1499–1503 թվականների ընթացքում Թուրքիան դարձյալ ռազմական ընդհարման մեջ էր Վենետիկյան հանրապետության հետ: Թեև 1501 թ. մայիսին թուրքերի դեմ պայքարում ստեղծվել էր եռյակ դաշինք պապական իշխանության, Վենետիկի և Հունգարիայի միջև, և թուրքերը մի շարք վայրերում կրել էին ռազմական պարտություններ, այսուհանդերձ 1503 թ. փետրվարի 22–ին թշնամի երկու կողմերը կնքել էին հաշտության պայմանագիր, որով Արևելքում Վենետիկյան առևտրի վերականգնման դիմաց Վենետիկը թուրքերին էր հանձնում Էգեյան ծովում գտնվող մի շարք կղզիներ:

Ավարտելով ռազմական գործողությունները Արևմուտքում՝ Բայազետ Բ–ը իր ուշադրությունը սևեռեց Արևելքին, ուր տեղի էին ունեցել լուրջ իրադարձություններ: 1477 թ.՝ Ուզուն Հասանի մահից հետո, ակ կոյունլուների պետությունը սկսել էր քայքայվել, անկում ապրել, երկրում ծայր էին առել անվերջ գահակալական կռիվներ, և շուտով՝ XV դարի վերջում և XVI դարի սկզբում, այդ պետությունը կործանվեց Արդաբիլի Սեֆյան հարստությունից սերած Իսմայիլի կողմից: Նա պարտության էր մատնել ակ կոյունլուների պետության վերջին ներկայացուցիչներ Ալվանդին և Ֆարրուխ Յասարին ու 1499 թվականին գրավել Թավրիզը, որը շուտով դարձավ նորաստեղծ Սեֆյան պետության մայրաքաղաքը: 1502 թ. Իսմայիլը իրեն հռչակեց Սեֆյան Իրանի տիրակալ և ընդունեց «շահնշահ» (արքայից արքա) տիտղոսը: Այսպիսով՝ Արևելքում հրապարակ եկավ մի նոր հզոր պետություն, որի քաղաքական շահերը բախվեցին օսմանյան պետության նվաճողական քաղաքականության հետ: Իսմայիլը պետական կրոն հռչակեց շիիզմը ու հալածանք սկսեց իսլամի մյուս տարատեսակի՝ սուննիզմի դեմ: Օսմանյան պետությունը Սեֆյան շահի այդ քայլն ընդունեց որպես իր դեմ ուղղված մարտահրավեր:

Սեֆյան պետության ստեղծման ժամանակաշրջանը հայկական աղբյուրներում բնութագրվում է որպես «վրդովման» և «ալեկոծման» մի շրջան:

1504–1508 թթ. շահ Իսմայիլը ծավալել էր ռազմական գործողություններ թուրքերի դեմ և մինչև 1507 թ. գրավել էր Արևմտյան Հայաստանի զգալի մասը, ներառյալ Երզնկան: 1508 թ. իրանական տիրակալը գրավեց նաև Բաղդադը: Ռազմական գործողություններն Արևմտյան Հայաստանում, ինչպես այդ մասին վկայում են հայերեն ձեռագրերի հիշատակարանները, աղետալի հետևանք ունեցան արևմտահայ բնակչության համար:

Զերկիրս բոլոր հրդեհեցին,
Ո՛չ շէն թողին և ո՛չ աւան,
Եւ զկողոպուտ երկրիս առին,
Զառ և զաւար և զթալան[33]:

1512 թ. անցնելով իշխանության գլուխ՝ օսմանյան պետության նոր տիրակալ սուլթան Սելիմ Յավուզը (Ահեղ, 1512–1520 թթ.) Սեֆյան Իրանի նկատմամբ ավելի

[33] Պ. Մ. Խաչատրյան, Հայ միջնադարյան պատմական ողբը, Երևան, 1969, էջ 99:

վճռական գտնվեց, քան իր նախորդ Բայազետ Բ–ը: Դեռևս Տրապիզոնի կառավարիչ եղած ժամանակ Սելիմը հաճախակի հարձակումներ էր կատարում դեպի Իրան: Օսմանյան տիրակալ դառնալուց հետո, երբ շահ Իսմայիլը իր պալատում ապաստան տվեց Սելիմի հարազատներին, սուլթանը հրամայեց Փոքր Ասիայում և մայրաքաղաքում գտնվող ու նախօրոք կազմված ցուցակով գլխատել շիա դավանանքին հետևող 40 հազար մարդու: Սելիմը փորձում էր Իրանի դեմ պատերազմին կրոնական բնույթ տալ: Շեյխ–ուլ–իսլամը իր ֆեթվայով ազդարարում էր, որ ալլահի համար մի շիայի սպանությունն ավելի հաճելի է, քան յոթանասուն քրիստոնյայի:

1514 թ. անցնելով մեծ բանակի գլուխ՝ Սելիմ Յավուզը շարժվեց դեպի Իրան՝ Երզնկա–Դերջան–Էրզրում–Չալդրան ճանապարհով: Այդ արշավանքը նա ձեռնարկել է՝ վերանվաճելու համար «...այն հողերը, որոնք նա (շահը) բռնությամբ զավթել է»: Իրանական զգլբաշական բանակը, խուսափելով թուրքերի հետ ճակատամարտելուց, դիմում է նահանջի:

Չհանդիպելով թշնամուն՝ կատաղած Սելիմ Յավուզը, շահ Իսմայիլին հղած նամակում անձնապես վիրավորելով նրա ինքնությունը, կոչ էր անում նրան մարտի բռնվել թուրքերի հետ. «եթե վախենում ես, կանչի՛ր բժշկին, որ քեզ բուժի», «...եթե տղամարդ չես, հագի՛ր կանացի հագուստ»:

Ի վերջո՝ 1514 թ. օգոստոսի 23–ին, Խոյից ոչ հեռու՝ Չալդրանի դաշտում, տեղի է ունենում մեծ ու արյունալի ճակատամարտ, և, օգտագործելով իրենց առավելությունը հրետանու բնագավառում, որից զուրկ էր Սեֆյան բանակը, թուրքերը հաղթանակ են տանում ու առանց որևէ դիմադրության գրավում Սեֆյան Իրանի մայրաքաղաք Թավրիզը:

Սելիմ Յավուզը նպատակադրվել էր նվաճել ողջ Իրանը ու, հետևաբար, շարունակել պատերազմը, սակայն հանդիպեց ենիչերիների կատաղի դիմադրությանն ու ստիպված եղավ նահանջի հրաման արձակելով քաշվել դեպի Ամասիա՝ իր հետ տանելով ու այնուհետև Կ. Պոլիս տեղափոխելով Թավրիզի լավագույն արհեստավորներին, որոնց մեջ կային շատ հայեր[34]:

Չալդրանի ճակատամարտը, անշուշտ, թուլացրեց Սեֆյան պետությունը ու հնարավորություն տվեց թուրքերին օսմանյան պետությանը միացնելու Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը: 1515 թ. գարնանը թուրքերը մեկը մյուսի հետևից գրավեցին Արևմտյան Հայաստանի քաղաքներն ու գյուղերը: Սեֆյանների ձեռքում մնացել էր միայն Կամախը, որը զավթվեց Սելիմի կողմից 1515 թ. մայիսի 16–ին, և տեղի բնակչությունը կոտորածի ենթարկվեց:

Դրանից հետո Սելիմը աստիճանաբար իրեն ենթարկեց քուրդ բեկերին՝ մեծապես օգտվելով Բիթլիսի քուրդ հոգևոր առաջնորդ, հայտնի պատմիչ մոլլա Իդրիսի ծառայություններից: Նկատի ունենալով քուրդ բեկերի զինական ուժը՝ Սելիմը ոչ միայն անձեռնմխելի թողեց քուրդ ավատատերերի ավատական տիրույթներն ու ավա-

[34] «Սելիմը քիչ մնաց Թավրիզում,— կարդում ենք Ժ. Շարդենի մոտ,— բայց իր հետ վերցրեց հարուստ ավար և երեք հազար ընտանիք արհեստավորներ՝ մեծ մասամբ հայերից, որոնց տեղավորեց Կոստանդնուպոլսում» (J. Chardin, "Voyage en Perse", II, էջ 240):

տական իրավունքները, այլև ընդարձակեց դրանք: Այս հանգամանքը խիստ բացասական հետևանքներ ունեցավ արևմտահայության համար, և հայ բնակչությունն ընկավ կրկնակի՝ թուրք ու քուրդ ավատատերերի լծի ներքո:

1515 թ. հունիսին թուրքմենական զուլքադարյան տիրակալ Ալա–ուդ–Դեվլեի անհնազանդությունը պատժելու նպատակով Սելիմի հորդաները ներխուժեցին Կարամանիա ու Կիլիկիա և հունիսի 12–ին Գյոկսուի դաշտում տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին նրանց: Օսմանյան տիրապետության տակ անցան Կիլիկյան Հայաստանն ու հարակից շրջանները:

1515 թ. վերջերին Սելիմ Յավուզի և շահ Իսմայիլի միջև ստորագրվեց զինադադար, ըստ որի՝ օսմանյան պետությանն անցան ողջ Արևմտյան Հայաստանը և Միջագետքի հյուսիսը՝ Մոսուլով հանդերձ:

Կնքված զինադադարից հետո Սելիմ Յավուզը իր ողջ ուշադրությունը սևեռեց մամլուքների գերակայության տակ գտնվող Եգիպտոսի վրա: 1516 թ. մամլուքյան պետությունը համարվում էր իսլամական աշխարհի ամենահզոր պետությունը: Նրա տարածքն ընդգրկում էր Վերին Եգիպտոսից մինչև Կենտրոնական Փոքր Ասիա, ներառյալ նաև Պաղեստինի ու Սիրիայի երկրամասերը:

Սիրիա ներխուժած թուրքական հորդաները մամլուքների հետ ընդհարվեցին 1516 թ. օգոստոսի 24–ին Հալեպի հյուսիսում գտնվող Մարջ Դարիկ կոչված վայրում: Ճակատամարտը ավարտվեց թուրքերի հաղթանակով, և այստեղ էլ վճռական նշանակություն ունեցավ թուրքական հրետանին: Պարտության բոթն այնքան ծանր էր, որ մամլուքների ծերունի տիրակալ Աշրաֆ Կանսոհ ալ–Ղաուրին անմիջապես ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին: Դրանից հետո Սելիմ Յավուզը առանց դիմադրության հանդիպելու գրավեց Դամասկոսը, Պաղեստինը և շարժվեց դեպի Եգիպտոս: Կահիրեի մոտ ևս մի անգամ պարտության մատնելով մամլուքների բանակը՝ 1517 թ. հունվարի 31–ին Սելիմ Յավուզը մտավ մայրաքաղաք ու դաժան հաշվեհարդար տեսավ մամլուքյան բեյերի հետ:

Այսպիսով՝ Սելիմ Յավուզը խիստ ընդարձակեց օսմանյան պետության սահմանները, որոնք արդեն տարածվում էին երեք աշխարհամասերի վրա ու, փաստորեն, դարձավ Օսմանյան կայսրության հիմնադիրը:

Եգիպտոսը նվաճելուց հետո Սելիմ Յավուզը մտադրվել էր նորից հարձակվել Իրանի վրա ու վերջ տալ այդ պետության գոյությանը, սակայն 1520 թ. սեպտեմբերին Սելիմի վերահաս մահը ստիպեց թուրքերին հրաժարվել այդ ծրագրերի իրականացման գաղափարից:

Սելիմ Յավուզի հաջորդ՝ սուլթան Սուլեյման Կանունիի (Օրենսդիր – 1520–1566 թթ.) իշխանության տարիներին Օսմանյան կայսրության սահմանները էլ ավելի ընդարձակվեցին: Նրա օրոք աշխարհակալ այդ պետությունը հասավ իր ծաղկման ու հզորության գագաթնակետին: Ի տարբերություն իր նախորդի՝ նա արտաքին նվաճումների մեջ առավել ուշադրություն դարձրեց եվրոպական գործերին և, նախ և առաջ, Հունգարիայի նվաճմանը: Այսուհանդերձ, նա պատշաճ մոտեցում ունեցավ

նաև Սեֆյան Իրանին և գաղտնի բանակցությունների միջոցով երկարաձգեց նախկինում կնքված զինադադարի ժամկետը:

1521 թվականից սուլթան Սուլեյման Կանունին ձեռնամուխ եղավ Հունգարիայի նվաճմանը: Հունգարիայի նվաճումը Սուլեյման Կանունիի առաջ բացում էր Կենտրոնական Եվրոպայի ճանապարհը: Նույն այդ թվականին նա նվաճեց Բելգրադը, որն այն ժամանակ հունգարական գերիշխանության ներքո էր: Հունգարիայի նվաճման ճանապարհին, որպեսզի ապահովի իր թիկունքը Մալթայի ծովահեններից, նա մեծ ուշադրություն դարձրեց Արևելյան Միջերկրական ծովում ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող Հոռոդոս (թուրքերի մոտ՝ Սակըզ) կղզու նվաճմանը: Դա անհնարին կլիներ առանց հզոր նավատորմի առկայության: Ուստի և Սուլեյման Կանունիի վարչակարգը 1522 թվի ամռանը ավարտեց մեծ նավատորմի շինարարությունը: Կրելով հսկա կորուստներ (շուրջ 50 հազար սպանվածներ)՝ թուրքերը 1522 թ. դեկտեմբերի 25-ին զավթեցին Հոռոդոս կղզին:

1526 թ. ապրիլի 23-ին 100 հազարանոց թուրքական բանակը անձամբ սուլթանի և մեծ վեզիր, ծագումով հույն Իբրահիմ փաշայի գլխավորությամբ շարժվեց դեպի Հունգարիա: Նույն թվականին Մոհաչի ճահճային դաշտում թշնամի բանակները հանդիպեցին միմյանց, և տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Ճակատամարտում սպանվեց հունգարական թագավոր Լյուդովիկ Բ-ը: Հունգարիայի մայրաքաղաք Բուդայի ճանապարհը բաց էր, որտեղ էլ Սուլեյմանը մուտք գործեց սեպտեմբերի 11-ին: Սուլթանը հունգարական գահին բազմեցրեց իր դրածո, Տրանսիլվանիայի իշխան Յանոշ Զապուլյային: Բուդայում իմանալով Փոքր Ասիայում շիաների կողմից գլխավորվող խռովության մասին՝ Սուլեյման Կանունին վերադարձավ մայրաքաղաք, և սուլթանի դեմ բարձրացված խռովությունը ճնշվեց մեծ վեզիրի զորաբանակների կողմից:

Հունգարիայից թուրքական բանակի դուրս գալուց հետո «Վիեննայի իշխանը», այսինքն՝ ավստրիական կայսրը մտավ Հունգարիա, պաշտպանության տակ վերցրեց թուրքական դրածոյի թշնամի ուժերին, վերջինս փախուստի դիմեց և հայցեց սուլթանի աջակցությունը: 1529 թ. մայիսին սուլթանը նորից իր բանակները շարժեց դեպի Հունգարիա, սեպտեմբերի 8-ին գրավեց Բուդան և Յանոշ Զապուլյային վերականգնեց հունգարական գահի վրա: Դրանից հետո 120 հազարանոց թուրքական բանակը եկավ ու պաշարեց Վիեննան, սակայն հանդիպելով ավստրիացիների համառ դիմադրությանը՝ թուրքերը ստիպված եղան հոկտեմբերի 16-ին թողնել պաշարումը և նահանջել:

Արևելքում՝ իրանական ճակատում կնքված զինադադարը երկար տևել չէր կարող, քանզի այն սուր հակասությունները, որոնք գոյություն ունեին երկու հզոր պետությունների միջև, շարունակում էին պահպանվել: Երկու կողմերն էլ առիթ էին փնտրում խախտելու այդ զինադադարը և վերսկսելու պատերազմը: Պատերազմի անմիջական առիթ հանդիսացավ հետևյալը. 1530-ական թվականների սկզբին Բիթլիսի բուրդ էմիր Շարաֆ խանը, դժգոհ թուրքական իշխանությունից, ապստամբեց ու անցավ Սեֆյան Իրանի նոր տիրակալ շահ Թահմասպի կողմը. միաժամանակ

Ատրպատականի կառավարիչ Ուլամա Թեքելուն, դավաճանելով շահին, ապաստան գտավ թուրքերի մոտ: Ուլամա Թեքելուն 50 հազարանոց բանակով գալիս, պաշարում է Բիթլիսը, սակայն Շարաֆ խանը նրան ուժեղ դիմադրություն է ցույց տալիս ու միաժամանակ դիմում շահի օգնությանը: Թողնելով Բիթլիսի պաշարումը՝ Ուլաման իր զորքերն ուղղում է դեպի Վան: Ուլամայի այս ասպատակությունների դեմ սուլթանն ուղարկում է 90 հազարանոց բանակ մեծ վեզիր Իբրահիմ փաշայի գլխավորությամբ: Արևմտյան Հայաստանի քաղաքները մեկը մյուսի ետևից գրավվում են թուրքական բանակի կողմից: Ուլամայի ու իրանական զորամասերը ստիպված նահանջում են: Թուրքերը գրավում են Թավրիզը և այնտեղից շարժվում դեպի Միջագետք՝ Բաղդադ: Օգտվելով օսմանյան բանակի բացակայությունից՝ շահ Թահմասպը հարձակվում է Ուլամայի վրա. վերջինս փախուստի է դիմում դեպի Վան, իսկ շահը հետապնդում է նրան: Ամբողջ Վանը, Վասպուրականը աղետի են ենթարկվում, և պատահական չէ, որ այդ դեպքերը մտել են Հայոց պատմություն՝ որպես «Վանի աղետը»: Դեպքերի ականատես Հովհաննես Արձիշեցու տարեգրության մեջ ասված է, որ ասպատակողները «ի չորս դիմաց աւերեցին և անմարդաբնակ արարին զՎանայ երկիրն, զՈստանայ և զԱմկուն...»:

Օսմանյան բանակի նոր արշավանքը վերջ դրեց Վանի պաշարողական դրությանը: Թուրքերը ևս մի անգամ գրոհեցին Թավրիզը, սակայն շուտով վերադարձան Թուրքիա: Շահ Թահմասպը դարձյալ ասպատակեց Վանն ու Վասպուրականը: Այսպիսով՝ 1531-1535 թվականների թուրք-իրանյան պատերազմների ժամանակ թուրքերին չհաջողվեց Սեֆյաններին շոշափելի հարված հասցնել: Բացառությամբ Բարձր Հայքի (Դերջան, Էրզրում, Կարս և այլն)՝ Արևմտյան Հայաստանի զգալի մասը դեռևս շարունակում էր մնալ Սեֆյանների ձեռքում:

Հունգարիայում 1538 թ.՝ թուրքերի դրածոյի մահանալուց հետո, վերսկսվեցին ռազմական գործողությունները: 1541 թ. սուլթան Սուլեյմանը, անձամբ ղեկավարելով ռազմական գործողությունները, մտավ Հունգարիայի մայրաքաղաք Բուդա և Հունգարիան վերածեց Օսմանյան կայսրության սովորական մի նահանգի, այնտեղ ընդհանուր աշխարհագիր անցկացրեց և այդ երկրում մտցրեց հողատիրության թիմարական համակարգը:

Այսուհանդերձ, թուրքերին անհրաժեշտ եղավ շարունակել ռազմական գործողությունները՝ Ավստրիայում և Հունգարիայում հանդիպելով տեղի բնակչության համառ դիմադրությանը: 1547 թ. հունիսի 19-ին Ավստրիայի հետ հինգ տարի ժամկետով ստորագրելով հաշտության պայմանագիր՝ թուրքերը վերջնականապես հաստատվեցին միայն Հունգարիայում:

Ապահով զգալով իրեն Արևմուտքի սպառնալիքից՝ սուլթան Սուլեյմանը մի անգամ ևս հայացքը սևեռեց դեպի Սեֆյան Իրանը: Այս անգամ Իրանի հետ նոր պատերազմի առիթ ծառայել էր հետևյալը. 1547 թ. շահ Թահմասպի եղբայր Ալխաս Միրզան ապստամբել էր նրա դեմ և Շիրվանն ու Վրաստանը ասպատակելուց հետո Սև ծովի վրայով մեկնել Կ. Պոլիս, ապավինել սուլթան Սուլեյմանին ու նրանից օգնություն հայցել:

1548 թ. մարտի 28–ին, հսկայական բանակի գլուխ անցած, սուլթան Սուլեյմանը Կոնիա–Սեբաստիա–Ամասիա–Էրզրում ուղիով շարժվեց դեպի Թավրիզ: Դարձյալ Արևմտյան Հայաստանը ենթարկվեց աղետի: Հակառակ հայ և օտար աղբյուրների ուղղակի վկայություններին՝ սուլթան Սուլեյմանը ֆրանսիական թագավոր Հենրիխ Բ–ին հղած նամակում հանդես է գալիս որպես հպատակների (հայերի) հովանավորող և շահերի արտահայտիչ, որը բնավ չի համապատասխանում իրականությանը: Դեպքերի ականատես Ներսես Վարագեցու տարեգրության մեջ մենք կարդում ենք. օսմանցիները,— գրում է նա «...քակեցին առհասարակ զգիւղս և զքաղաքս» և Վանը պարսպելու նպատակով «...քակեցին զգերեզմանս՝ զխաչքար և զտապանաքարն և արկին ի հիմն պարսպին»[35]:

Սուլթան Սուլեյմանի այս արշավանքի ընթացքում ասպատակության ենթարկվեց նաև Վրաստանը: Թավրիզը գրավելուց հետո թուրքական բանակը սուլթանի ղեկավարությամբ վերադարձավ Կ. Պոլիս:

Օգտվելով թուրքական բանակի նահանջից՝ Սեֆյան զորամասերը ներխուժեցին Արևմտյան Հայաստան՝ Վան, Մուշ, Բիթլիս, Արձեշ, Արծկե ուղղությամբ՝ ճանապարհին ավերելով և ամայացնելով ամեն ինչ, ինչպես այդ մասին միաբերան վկայում են հայկական և թուրքական աղբյուրները:

Արևմտյան Հայաստանում Սեֆյանների այս նոր ասպատակությունները թուրքերի առաջ հրամայական պահանջ էին դնում մեկ անգամ ևս հարձակվելու Սեֆյան Իրանի վրա: Թուրքական նոր արշավանքն սկսվեց 1553 թվի ամռանը: Սուլթանն այդ արշավանքի ընթացքում շահ Թահմասպին հղեց սպառնալիքներով և վիրավորանքներով լի մի նամակ: Սպառնալիքներին շուտով հաջորդեցին Շորագյալի (Շիրակ), Երևանի ու Նախիջևանի աննկարագրելի ավերումն ու կողոպուտը: Այդ մասին են գրում հենց իրենք՝ թուրք պատմիչները և, մասնավորապես, Իբրահիմ Փեչևին: Շուտով՝ 1555 թ. մայիսի 29–ին, Ամասիայում երկու երկրների միջև ստորագրվեց հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Արևմտյան Հայաստանը մնաց օսմանյան գերիշխանության ներքո, մինչդեռ Արևելյան Հայաստանը, Արևելյան Վրաստանը և Շիրվանը մնում էին Սեֆյան տիրապետության տակ: Պայմանագրով նախատեսված էր նաև երկու պետությունների սահմանագծում գտնվող Կարս քաղաքը դարձնել ամայի ու անմարդաբնակ:

1566 թ. օսմանյան գահին բազմեց Սուլեյման Կանունիի որդին՝ ապաշնորհ Սելիմ Բ–ը (1566–1574 թթ.), որի իշխանության տարիներին երկրի փաստական ղեկավարությունը մեծ վեզիր, ծագումով սլավոն Մեհմեդ Սոկոլլուի ձեռքում էր: 1569 թ. թուրքերը փորձեցին նվաճել Աստրախանը, որը կարևորագույն հանգուցակետ էր, կապում էր եվրոպական առևտուրը Իրանի հետ և հայտնի էր Վոլգա–Կասպյան ճանապարհ ընդհանուր անունով: Այդ արշավանքի ընթացքում որպես թուրքերի դաշնակիցներ հանդես էին գալիս Ղրիմի թաթարները: Աստրախանը գրավելու թուրքերի փորձերը ավարտվեցին ձախողմամբ՝ ռուսական իշխան Սերեբրյակովից կրած ծանր պարտության հետևանքով:

[35] Մատենադարան, ձեռ. N 6273, էջ 438–441:

1571 թ. թուրքերը հսկայական զոհողությունների գնով ի վերջո նվաճեցին Կիպրոս կղզին: Այսուհանդերձ, պապական իշխանության կողմից գլխավորվող եվրոպական կոալիցիայի երկրները ևս երեք տարի շարունակեցին պատերազմը օսմանյան պետության դեմ: 1571 թ. հոկտեմբերի 8–ին Լեպանտոյի ծովախորշում եվրոպական միացյալ նավատորմի կողմից թուրքական ռազմանավերը գլխովին ոչնչացվեցին: Այդ ծովամարտին մասնակցում էր իսպանացի հանճարեղ գրող Սերվանտեսը: Այսուհանդերձ, մեծ վեզիր Մեհմեդ Սոքոլլուին հաջողվեց ամենակարճ ժամկետում վերականգնել օսմանյան ռազմական նավատորմը: 1573 թ. մարտի 7–ին օսմանյան պետությունը եվրոպական կոալիցիայի պետությունների հետ կնքեց հաշտության պայմանագիր, որով Կիպրոս կղզին անցնում էր թուրքական տիրապետության ներքո: Բայց և այնպես թուրքերի այդ պատերազմում կրած կորուստները այնքան մեծ էին, որ որոշակիորեն կարելի է պնդել՝ թուրքերը, ըստ երևույթին առաջին անգամ, կորցրին իրենց հարձակողական թափը եվրոպական ճակատում:

Սելիմ Բ–ի մահից հետո գահ բարձրացած Մուրադ Գ–ի (1574–1595 թթ.) և Մեհմեդ Գ–ի առաջ հիմնական խնդիր էր դրված պահպանելու այն հսկա կայսրությունը, որը ժառանգել էին սուլթան Սուլեյմանից:

Այդուհանդերձ, օգտվելով շահ Թահմասպի մահից հետո Իրանում ծայր առած գահակալական կռիվներից, թուրքերը, խախտելով 1555 թ. մայիսի 29–ին Ամասիայում կնքված հաշտության պայմանագիրը, 1578 թ. ձեռնարկեցին թուրքական աղբյուրներում «պարսկական արշավանք» անվանված նոր մեծ պատերազմը Իրանի դեմ: Թուրքական բանակը Լալա Մուստաֆա փաշայի գլխավորությամբ ներխուժեց Արևելյան Հայաստան, և թշնամի երկու բանակների միջև 1578 թ. օգոստոսի 10–ին Չըլդըր լճի մոտ տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Այնուհետև մտնելով Վրաստանի սահմանները՝ օսմանյան բանակը մեկը մյուսի ետևից գրավեց Թումեք (Թմուկ), Ախալքալաք բերդերը և շուտով մտավ Թիֆլիս:

Չըլդըրի ճակատամարտից հետո օսմանյան մեկ ուրիշ բանակ, որն այն ժամանակ գտնվում էր Էրզրումում, Ուզդեմիր Օսման փաշայի գլխավորությամբ ասպատակում էր Դաղստանն ու Շիրվանը: Այդ նույն ժամանակաշրջանում (1584 թ.) օսմանյան մի ուրիշ բանակ, Ջաֆեր փաշայի գլխավորությամբ մտնելով Արարատյան դաշտ, մեծ ավերածություններ է գործում ու գերեվարում տեղի խաղաղ բնակչությանը: Թուրք պատմագիր Ի. Փեչևին նշում է, որ գերեվարյալները հարց հարուցեցին, թե արդյոք խաղաղ բնակչության գերեվարումը օրինական է: Շեյխ ուլ–իսլամ Քեմալ փաշա զաղեն իր ֆեթվաներով (մեկնություններով) հաստատեց դրա «օրինականությունը»: Նա մինչև իսկ գտավ՝ «...շարիաթով բացատրվում է գերի վերցված կանանց հետ գերի վերցնել նաև նրանց փոքրահասակ երեխաներին»:

XVI դարի 80–ական թվականների վերջերին, օգտվելով Սեֆյան հարստության մեջ ծագած գահակալական կռիվներից, թուրքերին հաջողվեց նվաճել ողջ Այսրկովկասը: 1587 թ. հունիսին Իրանի գահին տիրացավ երիտասարդ ու հեռատես քաղաքական գործիչ շահ Աբբասը: Հաշվի առնելով Իրանի ներքաղաքական կյանքի

անկայունությունը՝ օսմանյան պետության մայրաքաղաքում երկարատև բանակցություններից հետո՝ 1590 թ. մարտի 21-ին, նա ստիպված եղավ կնքել հաշտության պայմանագիր, ըստ որի՝ օսմանցի նվաճողների արյունոտ տիրապետության տակ անցան ողջ Այսրկովկասը և Իրանի հյուսիսարևմտյան մասերը Թավրիզի հետ:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ XVI-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI դարի երկրորդ կեսին օսմանյան պետությունը հասավ իր քաղաքական ու ռազմական հզորության գագաթնակետին: Դա մի ընդարձակածավալ կայսրություն էր, որի թևերը տարածվում էին Ասիա, Եվրոպա և Աֆրիկա աշխարհամասերի վրա:

Կայսրության գերագույն կառավարիչն ու տիրակալը սուլթանն էր՝ աստծո շուքը երկրի վրա (Զիլուլլահ): Նա իր բոլոր հպատակների կյանքի ու գույքի լիիրավ տնօրենն էր: Կայսրության երկրորդ դեմքը մեծ վեզիրն էր՝ վեզիր-ազամը, և, փաստորեն, նրա ձեռքում էր երկրի կառավարման ղեկը: Նա էր նշանակում բարձրաստիճան պաշտոնյաներ, վարում արտաքին գործերը և այլն:

Կայսրության ողջ տարածքը բաժանված էր նահանգների կամ կուսակալությունների (էյալեթ կամ վիլայեթ), որոնք կառավարում էին սուլթանի կողմից նշանակված բեյլերբեյերի կամ միրիմիրանների կողմից: Պատերազմի դեպքում վերջիններս իրենց նահանգների ռազմական ուժերի գերագույն հրամանատարներն էին:

Յուրաքանչյուր նահանգ իր հերթին բաժանվում էր մեծ կամ փոքր շրջանների, որոնք կոչվում էին սանջակներ և լիվաներ, սրանք էլ, իրենց հերթին, բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների՝ կազաների:

Օսմանյան պետության վարչաքաղաքական բաժանումը սերտորեն առնչվում էր երկրում տիրող թիմարական համակարգի ու ավատաբաշխման սկզբունքների հետ: Դեռևս XVI դարի առաջին կեսին վերջնականապես ձևավորված վարչաքաղաքական բաժանումը հետագայում ենթարկվեց հարատև փոփոխությունների, ինչը պայմանավորված էր Ասիայում և Եվրոպայում կատարված նոր նվաճումներով, օսմանյան պետության տնտեսական և քաղաքական շահերով: Որևէ մի նոր երկիր նվաճելուց անմիջապես հետո թուրքերն այնտեղ անցկացնում էին ընդհանուր աշխարհագիր և արձանագրում երկու օրինակով՝ ընդարձակ և համառոտ (defter-i müfassal և defter-i muhtasar): Համառոտ աշխարհագիր կամ դավթարն ուղարկվում էր մայրաքաղաք, որպեսզի կենտրոնական կառավարությունն իմանա, թե կայսրության որ նահանգներից տարեկան ինչ եկամուտներ պետք է ստանա:

Օսմանյան թիմարական համակարգում եղած փոփոխություններն իրենց հետ բերեցին նաև վարչական նոր փոփոխություններ, որոնց հիմնական միտումներն էին վարչատարածքային միավորների մեծացումը և ընդարձակումը:

Թուրքական թիմարական համակարգի էությունը հետևյալն էր. բոլոր մշակելի հողատարածությունները կայսրության մեջ բաժանվում էին երեք հիմնական խմբերի. ա) պետական հողեր, բ) վակֆային հողեր և գ) մասնավոր սեփականատիրական հողեր (mülk), ըստ որում՝ հողատիրության այս ձևն սկսեց արմատավորվել կայսրության մեջ միայն XVI դարի վերջերից:

Պետական հողերի (արզ-ի միրիյե կամ արզ-ի մեմլեքեթ) լավագույն ու բերրի կտորները սուլթանի, նրա ընտանիքի անդամների տնօրինության տակ էին և անվանվում էին արզ-ի սելաթին: Կայսրության հողերի մեծագույն մասը բաժանված էր խոշոր ու մանր ավատատերերի միջև՝ որպես պետության նկատմամբ նրանց կատարած ծառայությունների վարձատրություն: Ավատատերերին բաշխված հողերը, հատուկ հաշվառման հետևանքով, գրանցման մատյաններում (դավթարներում) արտոնագրված տարեկան եկամտի չափի համաձայն՝ կոչվեցին խասեր (խասերից ստացված տարեկան եկամուտը կազմում էր 100 հազար ակչե և ավելի՝ երբեմն հասնելով 4 միլիոնի), զեամեթներ ու թիմարներ: Զեամեթի պետական եկամուտը կազմում էր 20 հազար ակչեից մինչև 100 000 ակչե»[36]:

Հողատիրության երկրորդ տարածված ձևը վակֆներն էին, այսինքն՝ այն հսկայական հողային տարածությունները, որոնք տնօրինվում էին մուսուլման և քրիստոնյա հոգևորականության կողմից, այլ կերպ ասած՝ դա մզկիթապատկան և վանքապատկան հողերն էին:

Ինչպես արդեն նշվեց, մինչև XVI դարի վերջերը մասնավոր սեփականատիրական հող (մուլք կամ հայրենիք), որպես այդպիսին, գոյություն չուներ: Միայն կար մուլքի մի ձև, որը ժառանգական էր և անվանվում էր գազի մուլք, այն տրվում էր պետության նկատմամբ հատուկ ծառայություն մատուցող ավատատերերին:

Խասսերի, զեամեթների, թիմարների տեր ավատատերերը պարտավոր էին տարեկան իրենց ստացած 5000 ակչեի դիմաց պետությանը տրամադրել մեկ զինվոր՝ ջեբելու: Այս օրենքը խախտողները ոչ միայն զրկվում էին իրենց տնօրինած հողերից, այլև ենթարկվում էին դաժան պատժի: Այս համակարգը, որն ընդունված է անվանել ռազմաավատական, կազմում էր օսմանյան պետության ռազմական հզորության հիմքը:

Մինչև XVI դարի վերջերը թուրք ավատատերերի հիմնական եկամուտը ստացվում էր ոչ այնքան հողատիրությունից, որքան պատերազմների հետևանքով ռազմաավարից (ganimet): Դարավերջում, երբ մասնավորապես Եվրոպայում խիստ կրճատվեց թուրքերի հարձակողական թափը, հետևաբար՝ ռազմաավարը, ապա հողատիրությունից ստացվող եկամուտը դարձավ ոչ թե հավելյալ եկամուտ, ինչպես նախկինում էր, այլ հիմնական: Աստիճանաբար թուրքական ռազմաավատական համակարգը սկսեց քայքայվել: Դրան մեծապես նպաստում էր նաև Օսմանյան կայսրությունում XVI դարի վերջերից սկսած առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացումը:

Օսմանյան կայսրության առավելապես ասիական մասում, որտեղ տիրապետող դիրք էին գրավել քուրդ բեգերը, լայնորեն տարածված էին հողատիրության յուրթ-

[36] Ակչե՝ թուրքական արծաթ դրամի միավոր. բառացի նշանակում է սպիտակավուն: Առաջին օսմանյան ակչեները կշռում էին քառորդ մսխալ (1,2 գ արծաթ): Հետագայում ակչեի կշիռը գնալով կամ պակասել է, կամ պղնձի տոկոսը՝ մեծացել:

լուկ և օջակլըկ ձևերը, որոնք նույնպես, վերջին հաշվով, մտնում էին պետական հողերի մեջ, ու հետևաբար այստեղ օսմանյան պետությունը փորձում էր մտցնել իր թիմարական համակարգը, որը և հաճախ հանդիպում էր քուրդ բեգերի համառ դիմադրությանը: Քրդաբնակ շրջաններում գոյություն ուներ հողատիրության ևս մի ձև, որն անվանվում էր հյուբյումեթ, և որը ինքնավարության աստիճանի արտոնյալ տիրույթներ էին: Օսմանյան կենտրոնական կառավարության այդ իրավունքները սահմանափակելու որևէ փորձ հանդիպել է քուրդ բեգերի կատաղի դիմադրությանը, և այդ հողի վրա հաճախ ծագել են արյունալի ընդհարումներ քուրդ բեգերի ու կառավարական զինյալ ուժերի միջև, որոնցից, նախ և առաջ, տուժել է խաղաղ բնակչությունը: XVII դարում օսմանյան ռազմաավատատիրական համակարգի քայքայումը էլ ավելի բացահայտ բնույթ կրեց: Օսմանյան կենտրոնական կառավարությունը փորձում էր թույլ չտալ թիմարական համակարգի հետագա քայքայումը, սակայն ապարդյուն: Այսպես՝ 1701–1702 թվականներին կառավարությունը կատարեց ավատատիրական հողերի ստուգում (յոկլամա), որից պարզվեց, որ միևնույն հողային տիրույթին հավակնում են մի քանի ավատատերեր, և որ շատ ավատներ առհասարակ վերացվել են կամ դարձել խոշոր ավատատերերի տիրույթներ կամ թե անցել են պետական տնօրինության ներքո:

Ռազմաավատական համակարգի քայքայման հետևանքով Օսմանյան կայսրության տնտեսական ոլորտում ծագած փոփոխությունները առաջ բերեցին փոփոխություններ նաև հասարակական–քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում: Նախ և առաջ ապականվեց վարչական ապարատը: Պետական պաշտոնյաների շրջանում կաշառակերությունը սովորական երևույթ էր դարձել: Գլխավոր, վճռորոշ դեր էր կատարում դրամը: Դրամի միջոցով հնարավոր էր կառավարությունից կորզել նահանգի, վարչական կենտրոնի վալիի, այանի պաշտոնը: Կապալառուական (iltizâm) համակարգը թույլ էր տալիս ոչ միայն հարկերի գանձման մենաշնորհը, այլև կապալառու այանների և վալիների կողմից սեփական բանակի ստեղծումը: Դառնալով մի–մի կենտրոնախույս ուժեր՝ նրանք, փաստորեն, չէին ենթարկվում պետությանը:

XVIII դարի վերջին օսմանյան հողատիրության համակարգը շարունակում էր արագ անկում ապրել: 1777 թ. սեպտեմբերին սուլթան Աբդուլ Համիդ Ա–ը, 1768–1774 թթ. ռուս–թուրքական պատերազմում կրած պարտության պատճառներից մեկը համարելով նահանգների աշխարհազորի երբեմնի համակարգի կազմալուծումը, հրատարակեց այսպես կոչված «Նիզամ–նամե (կանոնադրություն) զաիմների և թիմարականների մասին», ուր կայսրության բոլոր սանջակբեկերին հրամայում էր ավատներ չտալ այն մարդկանց, ովքեր չեն արժանացել այդ իրավունքին: Սակայն դա մնաց թղթի վրա: Օսմանյան ռազմաավատական համակարգը հոգեվարքի մեջ էր: Այսուհանդերձ, հարկ է նշել, որ XVIII դարում թուրքական ռազմաավատական համակարգի խարխլումը դեռևս չէր նշանակում ավատատիրական եղանակի ոչնչացում:

XVI–XVIII դարերում Օսմանյան կայսրության բնակչության մեծամասնությունը կազմում էր գյուղացիությունը, որն աղբյուրներում, անկախ ազգային պատկանելությունից, անվանվում էր ռայաթ: Հետագայում, սակայն, «ռայան» կամ «ռեայա» եզրը, որը արաբերեն «ռայաթ» բառի հոգնակի ձևն է, Թուրքիայում ստացավ նոր իմաստ՝ որպես ջիզյա (գլխահարկ) վճարող կամ ոչ մուսուլման հպատակ նշանակությամբ: Քրիստոնյա ռայաթը ենթարկվում էր կրոնական ու ազգային խտրականության, բռնության, կամայականության, նրան մշտապես սպառնում էր ֆիզիկապես ոչնչացվելու վտանգը: Եթե տեղ–տեղ հանդուրժվում էր նրանց գոյությունը, ապա, ինչպես պատկերավոր ձևով ներկայացրել է XVII դարի ֆրանսիացի հեղինակ Միշել Ֆեբուրը, դա «...նրանց կաթի ու մեղրի համար» էր:

XVI դարի երկրորդ կեսից ողջ կայսրության մեջ գյուղացիների վիճակը անհամեմատ վատթարացավ՝ պայմանավորված Օսմանյան կայսրության ռազմական ու քաղաքական հզորության անկումով, ռազմաավարի խիստ կրճատումով և, վերջապես, առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացումով: Գյուղացիության շահագործման աներևակայելի սաստկացումը հասցրեց նրանց այնպիսի վիճակի, որ XVII դարի սկզբներին նրանք զանգվածաբար լքեցին իրենց հողակտորներն ու փախան խոշոր քաղաքներ, որն Օսմանյան կայսրության պատմության մեջ մտել էր «Մեծ փախուստի» (Büyük kaçkunluk) տարիներ բնորոշումով:

Նման պայմաններում օսմանյան պետությունն աստիճանաբար կանգնեց ֆինանսական ճգնաժամի առաջ, որից դուրս գալու այլ միջոց օսմանյան ղեկավար շրջանները չգտան, քան շրջանառության մեջ դնելու դրամական նոր միավորներ՝ նոր ակչեներ, որոնց մեջ արծաթի տոկոսը գնալով ավելի ու ավելի պակասում էր, և այդ ակչեները ժողովուրդն անվանում էր «կեղծ ակչեներ»: «Կեղծ ակչեների» շրջանառության պայմաններում սուլթանական կառավարությունն, առաջնորդվելով իր եկամուտների ապահովման գաղափարով, գյուղերում գտնվող իր բոլոր հարկահան ներկայացուցիչներին հրամաններ էր արձակում, որպեսզի հարկերը գանձվեին միայն մաքուր արծաթով և ոսկով: Իսկ դա գյուղացիության բացարձակ կողոպուտ էր նշանակում: Ֆինանսական ճգնաժամից դուրս գալու նպատակով օսմանյան կառավարությունը հարկերի ու տուրքերի չափը շեշտակի ավելացնում էր:

Առավել ծանր վիճակի մեջ ընկավ թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա գյուղացիությունը: Հենց նրանց է ակնարկում XVII դարի թուրք հասարակական–քաղաքական գործիչ Կոչիբեյը օսմանյան ղեկավար շրջանների հասցեին ուղղված հետևյալ մեղադրականում. «...Մի խոսքով, այն ճնշումներն ու բռնությունները, որոնց ենթարկվում են խեղճ ռայաթները, ոչ մի ժամանակ, աշխարհի ոչ մի երկրում, ոչ մի պետության մեջ չեն եղել: Եթե որևէ իսլամական պետության մեջ որևէ մեկին ամենափոքր նեղություն պատճառվի, ապա ահեղ դատաստանի ժամանակ դրա պատասխանատվությունը կընկնի տիրակալի և ոչ թե պաշտոնյաների վրա, և տիրակալը չի կարող արդարանալ տիեզերքի տիրոջ առջև՝ ասելով՝ ես իմ հպատակներին հանձնել էի այս մարդկանց: Ցրտից սարսռած ճնշվածների հոգոցները խորտակում են տները, իսկ կեղեքվողների արտասուքները խեղդում են կայսրությունը

կորստյան ալիքների մեջ: Անհավատությունից աշխարհը չի կործանվի, այլ կանգուն կմնա, իսկ բռնությունից նա չի կանգնի»:

Թուրքական զորքերի արշավանքներն ու ասպատակումները սովորաբար ուղեկցվում էին չտեսնված ավերումներով ու գազանություններով: Նրանց հորդաները գործում էին հրով ու սրով, զարհուրելի մոլեգնությամբ ու դաժանությամբ:

Արտաքին աշխարհի հետ տևական պատերազմների, անջատողական շարժումների խիստ ծավալման հետևանքով օսմանյան պետական գանձարանը, ինչպես այդ մասին վկայում են հենց իրենք՝ թուրք ժամանակագիրները, հարկերի ու տուրքերի նոր՝ շեշտակի ավելացման պայմաններում գյուղացիությանը հասցրեց հուսահատ վիճակի: Օսմանյան կայսրության շատ շրջաններ ամայի ու անմարդաբնակ էին դառնում:

Նահանգի փաշաները, քաջ գիտակցելով իրենց իշխանության կարճատև լինելը, վալիների, այանների, մալիքանեների (հարկերի ու տուրքերի հավաքման մենաշնորհ) տեր վաշխառուները, ձեռք ձեռքի տված կամ թե երբեմն իրար դեմ ըմբոստացած, արյունաքամ էին անում գյուղացիներին և քաղաքային աշխատավորությանը:

XV–XVI դդ. թուրքերը Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում գրավեցին ու իրենց ենթարկեցին բազմաթիվ քաղաքներ, որտեղ մինչև թուրքական նվաճումները ծաղկում էին արհեստներն ու առևտուրը: Միացնելով հսկա այդ տարածքները մի ընդհանուր պետության մեջ և վերացնելով բոլոր տեսակի մաքսային պատնեշները՝ թուրքերն, անկախ իրենց կամքից, նպաստում էին առևտրի և արհեստների հետագա զարգացմանը:

XV–XVI դարերում Ամերիկա և Հնդկաստան տանող ծովային ճանապարհների հայտնագործությունից հետո էլ ասիական, կամ ինչպես ասում էին, լևանտյան առևտրի ոլորտները դեռևս աշխույժ էին: Առաջվա նման օտարերկրացի և մեծ մասամբ համարյա ամբողջությամբ եվրոպացի առևտրականների ձեռքում էր կենտրոնացված, ինչպես նշում է Մ. Դ'Օսսոնը, Օսմանյան կայսրության արտաքին առևտուրը:

Թուրքիայում առևտրական հարաբերությունների էլ ավելի զարգացմանը մեծապես խոչընդոտում էր քարավանային առևտրի անապահով լինելը: XVII դարի ֆրանսիացի առևտրական ճանապարհորդ Ժ. Բ. Տավերնիեն, խոսելով առևտրական ուղիների վտանգավոր լինելու մասին, գրում էր. «Ամբողջ Թուրքիան լի է ավազակներով, որոնք թափառում են մեծ խմբերով ու ճանապարհին սպասում վաճառականներին: Եթե նրանք հանդիպում են հարուստ վաճառականների, ապա կողոպտում են նրանց ու շատ անգամ զրկում կյանքից»: Նահանգների կուսակալները, առևտրական քարավանների անվտանգությունն ապահովելու փոխարեն, հաճախ իրենք էին միանում ավազակներին, թույլ էին տալիս մեծ ճանապարհների վրա կողոպտել քարավաններ՝ ավարը կիսելու պայմանով:

Տվյալ ժամանակահատվածում Օսմանյան կայսրության մեջ գերազանցապես զարգացած էին մետաղամշակության, փայտամշակության, շինարարության, բրուտագործության, տեքստիլ և հախճապակու արտադրության ու գորգագործության ճյուղերը: Անշուշտ, արհեստագործական արտադրությունը, որ կարգավորվում ու

ղեկավարվում էր պետության կողմից, պետք է նախ և առաջ բավարարեր պալատի ու ավատատերերի պահանջները: Ռազմական արդյունաբերության կենտրոններն էին համարվում Էրզրումը, Մարաշը, Բաղդադը, Տեմեշվարը և այլ քաղաքներ: Աչքի էր ընկնում նաև Սոֆիան: Կաշվի արտադրության կենտրոններ էին համարվում Կոնյան, Երզնկան, Կեսարիան, Սեբաստիան: Տեքստիլ արտադրությունը առավելապես զարգացած էր Բուրսայում, Ամասիայում, Հալեպում, Սեբաստիայում, Ադանայում, Մալաթիայում և այլուր: Հախճապակու արտադրությունը կենտրոնացված էր Քյութահիայում (Կուտինայում), որտեղ հայ վարպետների կողմից արտադրված հախճապակին համաշխարհային համբավ ուներ:

Արհեստագործական արտադրության ամենախոշոր կենտրոնը Օսմանյան կայսրության մեջ XVI–XVIII դարերում մայրաքաղաք Կ. Պոլիսն էր (Ստամբուլ), որտեղ արհեստավորների զգալի մասը հայեր ու հույներ էին: Ստամբուլում բնակչության սննդի ու կենցաղային իրերի, ինչպես և արհեստավորների արտադրական գործիքների արտադրության համարյա բոլոր պահանջները բավարարվում էին տեղական արհեստագործական արտադրությամբ:

Խոշոր քաղաքներն ունեին իրենց բեդեստենները[37], բարվանատները, որտեղ իրացվում էին ոչ միայն արտաքին աշխարհից բերված ապրանքները, այլև տեղական արտադրության իրերը:

XVI դարի վերջերից Օսմանյան կայսրության մեջ առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացումը իր ոլորտի մեջ ներգրավեց նաև արհեստագործական արտադրությունը: Իրացման շուկան անցավ առևտրական կապիտալի ձեռքը: Սակայն առևտրական կապիտալի զարգացմանն ու ընդլայնմանը մեծապես խանգարում էին օսմանյան ռազմաավատատիրական կարգերը: Պետությունը ցեխային (համքյարական) կազմակերպությունների միջոցով իր ձեռքն էր վերցրել արհեստակցական արտադրության ղեկավարությունը: Համքարական կազմակերպությունները կոչված էին պաշտպանելու որևէ արհեստի ճյուղի մենաշնորհային իրավունքները և իրենց գործունեության մեջ առաջնորդվում էին մոլեռանդ մուսուլմանական կրոնական կանոնադրությամբ (ֆուտավվատ–նամե), և ամենայն հավանականությամբ քրիստոնյա արհեստավորությունը նույնպես ընդգրկված էր այդ ֆուտավվատների մեջ:

5. ՀԱՐԿԵՐԻ ՈՒ ՏՈՒՐՔԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

XVI–XVIII դարերում օսմանյան հարկային համակարգը սերտորեն առնչված էր ավատատիրական ռենտայի տարբեր ձևերի հետ: Համաձայն օսմանյան օրենսդրության (կանուն–նամե)՝ բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական խմբի՝ ա) հարկեր, որոնք հիմնվում էին մուսուլմանական շարիաթի վրա (rüsüm–i şeriye

[37] Բեդեստեն էր կոչվում մեծ, ծածկված շուկան, որտեղ սովորաբար հերթականությամբ շարված էին լինում միատեսակ ապրանքներով առևտուր անող վաճառականները:

կամ tekâlif–i şeriye), բ) հարկերը, որոնք հիմնվում էին սովորույթի վրա (rüsüm–i örfiye կամ tekâlif–i örfiye):

Պետության օգտին գանձվող հարկերի մեջ Օսմանյան կայսրության բնակչության մեծամասնությունը կազմող քրիստոնյա հարկատուների համար գլխավորը ջիզյան էր՝ գլխահարկը, որն աղբյուրներում հաճախ անվանվում էր խարաջ: Սա ամենածանր հարկն էր ոչ միայն այն պատճառով, որ գոյություն չուներ հաստատուն չափ, այլև նրա համար, որ ջիզյան հնարավորություն էր տալիս բացահայտ կողոպտելու ժողովրդին: Ջիզյայի չափը XVI–XVIII դարերում օսմանյան պետության ֆինանսական ճգնաժամի պայմաններում անընդհատ աճել է: Եթե սկզբում օրենքով նախատեսվում էր ամեն մի քրիստոնյա հպատակից գանձել 55 ակչե, ապա XVII դարում, ջիզյան, ըստ Կոչիբեյի, դառնում է 240 ակչե, իսկ XVIII դարում այն կրկնապատկվում է:

Բացի ջիզյայից՝ պետական հարկերի մեջ մտնում էին նաև ավարիզը (բառացի՝ պատահական հասույթներ), սուրսաթը, իմդադիյեն կամ սիմդադ–ի սեֆերիեն, զանազան պարհակային աշխատանքները (ճանապարհաշինություն, բերդաշինություն, կամուրջների կառուցում ու վերանորոգում և այլն):

Սուրսաթը նշանակում էր «պարենամթերքի պարտադիր մատակարարում» արշավող բանակի կարիքների համար: Իմդադիյեն նույնպես գանձվում էր բանակի կարիքների համար պատերազմի տարիներին, իսկ քանի որ Օսմանյան կայսրությունում պատերազմը տևական էր, ուստի և այս հարկը նույնպես դարձավ մշտական:

Ավատատերերի օգտին գանձվող հարկերը անհամեմատ ավելի բազմաթիվ էին, քան պետական հարկերը: Համաձայն օսմանյան օրենքների՝ կանուննամեների ավատատիրոջ օգտին հպատակներից գանձվում էին ավատատիրական ռենտայի բոլոր երեք ձևերը՝ պարհակային, բնատուրքային և դրամական: Գերիշխողը, սակայն, մինչև XVI դարի վերջերը, բնատուրքայինն էր, իսկ XVII–XVIII դարերում առևտրավաշխառուական հարաբերությունների զարգացման հետևանքով՝ դրամականը: Ծանոթանալով օսմանյան պաշտոնական վավերագրերի՝ կանուննամեների հոդվածներին՝ դժվար է պատկերացնել, որ գյուղացին կամ քաղաքային բնակչությունը կարողանար վճարել այդ հարկերը:

Սակայն դա էլ դեռ բավական չէր: Այդ նույն կանուննամեներում խոսվում է նաև ապօրինի գանձվող հարկերի ու տուրքերի մասին, որոնք մի ընդհանուր անունով կոչվում են բիդ'աթ (արաբերեն բառ է, որը նշանակում է շարիաթին չհամապատասխանող և նրան հակասող):

Բացի այդ բոլորից՝ կանուննամեներում զգալի տեղ է հատկացված ավատատերերի կամ տեղական կառավարչի օգտին հպատակների, պարտադիր «նվիրատվությունների» թվարկմանը՝ զանազան մուսուլմանական տոների կապակցությամբ կամ թե նոր նշանակված ավատատիրոջ և որևէ պետական բարձրաստիճան պաշտոնյայի այցելության առթիվ: XVII–XVIII դարերում Օսմանյան կայսրության բոլոր անկյուններում տիրապետողը պետական այրերի կոպիտ կամայականությունն էր: Ահա թե ինչ է այդ մասին գրում XVII դարի ֆրանսիացի հեղինակ Միշել Ֆեբրը. «Նահանգներում փաշաները դարձել են մի փոքրիկ թագավորներ և վարվում են իրենց հպատակների հետ համարյա նույնությամբ, ինչպես Մեծ Տիրակալը, և իշխում են հպատակների, ինչպես ունեցվածքի, այնպես էլ, մասնավորապես, կյանքի նկատմամբ, որոնց երբեմն զայրույթի պահին առանց դատ ու դատաստանի մահվան են դատապարտում: Նրանք հազար ու մի խժդժություններ են կատարում՝ գալով կառավարման ենթակա շրջաններ...»:

Հիրավի, ոչ մուսուլմանների իրավական վիճակն Օսմանյան կայսրության մեջ, հակառակ արդի թուրք պատմագրության ներկայացուցիչների ստահոդ հավատիացումներին, չափազանց ծանր էր: «Ամենացածր բարբարոսական աստիճանում» գտնվող թուրք զավթիչների գերիշխանության տակ չկար կյանքի ու գույքի ապահովություն, և քրիստոնյա հպատակները իսլամական մոլեռանդության պայմաններում զուրկ էին ամենատարրական իրավունքներից: Օսմանյան կայսրության մեջ հաճախակի էին հպատակ ժողովուրդների բռնի մահմեդականացման դեպքերը: Իրենց ենթարկելով Բալկանյան երկրները՝ թուրքերը XV–XVIII դարերում մեծ ջանքեր գործադրեցին այստեղ դեմոգրաֆիական փոփոխություններ կատարելու հարցում: Փոքր Ասիայի խորքերից Եվրոպա տեղափոխելով թուրք զանգվածներին՝ նրանք իրականում վարում էին գաղութացման քաղաքականություն:

Թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա բնակչության համար կատարյալ պատուհաս էր դևշիրմեն՝ մանկահավաքը: Դևշիրմեն, որը նպատակ ուներ համալրելու օսմանյան ենիչերիական կանոնավոր բանակի շարքերը, իրենից ներկայացնում էր ոչ այլ ինչ, քան օրինականացված բռնություն: Դա միաժամանակ հզոր մի միջոց էր օսմանցի զավթիչների ձեռքում՝ իրենց համաձուլման (ասիմիլյացիայի) քաղաքականության իրականացման ճանապարհին: Ստանալով մոլեռանդ մուսուլմանական դաստիարակություն՝ ենիչերիները դառնում էին ռազմատենչ սուլթանների հիմնական հենարանը:

6. ՄԱՆԿԱՀԱՎԱՔԸ (ԴԵՎՇԻՐՄԵ) ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Նվաճողների կողմից հպատակ ժողովուրդների զինուժի օգտագործման վերաբերյալ փաստերը հայտնի են դեռևս հնագույն ժամանակներից: Իսլամի գոյության վաղ տարիներին նվաճողական հիմնական գաղափարին մահմեդականների նվիրումը ստեղծեց մի շատ լայն անդունդ անհրաժեշտ ռազմուժի աճող կարիքի և մարդկային սահմանափակ ռեսուրսների միջև: Խալիֆա Օմարը (634–644 թթ.) հրամայեց ամենագրավիչ պայմաններով ռազմուժ հավաքագրել նվաճված ժողովուրդներից, ինչով դրվեց մամլուքյան համակարգի հիմքը: Նման խնդրի բախվում են նաև սելջուկյան իշխանությունները: Փոքր Ասիայի սելջուկյանների մոտ առավել տարածված էր ղուլամների համակարգը: Ղուլամները սովորաբար հավաքագրվում էին երիտասարդ հասակում, ապա բերվում արքունիք՝ համապատասխան կրթություն ու պատրաստվածություն ստանալու: Երիտասարդ ղուլամների հիմնական աղբյուրն էր մասնավորապես «պատերազմի աշխարհը» (այն երկրները, որոնք դեռ չէին ընդունել մահմեդականություն), քանի որ սելջուկները պատերազմներ էին մղում Տրապիզոնի ու

Նիկեայի հույների, Կիլիկիայի հայերի դեմ: Այսպիսով, երբ օսմանցիները դիմեցին դևշիրմեի, փոքրասիական տարածքների քրիստոնյա երիտասարդների օգտագործումը պետական ծառայության մեջ արդեն ուներ գրեթե երեքդարյա պատմություն:

Օսմանյան պետությունում մանկահավաքին նախորդել է փենջիքի համակարգը: Գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կամ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ համապատասխան փրկագին: Այն սկիզբ էր առնում Ղուրանից և շարիաթի հարկային համակարգում մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր:

Փենջիքը չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջը: Ձևավորվել էր ավատատիրական նոր դասակարգ, և այլևս անհնարին դարձավ տիրույթները զրկել աշխատավոր հասուն ձեռքից: Այս իրավիճակում օսմանյան իշխանությունը սկսեց բռնությամբ հավաքել քրիստոնյա բնակչության երեխաներին: Քրիստոնյա երիտասարդության բռնի հավաքները դարձան հաճախակի ու զանգվածային և օրինականացվեցին որպես պարտադիր հարկ:

Մանկահավաքի հայտարարումը տեղի էր ունենում ենիչերիական զորաբանակի աղայի պահանջով, որը հատուկ նամակով խնդրում էր սկսել դևշիրմեի նախապատրաստումը: Դրա հիման վրա սուլթանի գրասենյակը հրապարակում էր համապատասխան հրովարտակ՝ հյուքմ, որը զորահավաք հռչակող փաստաթղթին համարժեք նշանակություն ուներ:

Բեյլերբեյիներին (վիլայեթների ղեկավար) հասցեագրված հրովարտակներով տեղեկացվում էր առաջիկա հավաքի վերաբերյալ ու հրամայվում բնակավայրեր ուղարկել հատուկ տեսուչներ, որոնք պետք է օժանդակեն տղայահավաքի անցկացմանը: Շրջանների քադիներին (դատավոր) ուղղված հրովարտակներով պահանջվում էր տեղեկացնել հպատակներին հավաքների անցկացման մասին, ապահովել բոլոր տղաների ներկայությունը իրենց հայրերի հետ: Քադիներին հանձնարարվում էր կազմակերպել տղայաժողովների պահակախմբեր, որոնք պետք է ապահովեին ճանապարհների ու կայանումների պաշտպանությունը:

Տղաների ընտրությունն անց էր կացնում անձնապես հրամանատար սպան, որի մոտ առաջին հերթին ներկայանում էր բնակավայրի քահանան՝ իր հետ բերելով գրանցամատյանը: Հավաքում էին արդեն ամուր ֆիզիկական տվյալներով 14–20 տարեկան տղաների, որոնց արժեքային համակարգը միաժամանակ դեռ լիովին ձևավորված չէր և ենթակա էր ազդեցության: Չէին հավաքում տղաների, որոնք ամուսնացած էին, թլպատված կամ գիտեին թուրքերեն: Արգելված էր հավաքագրել նաև հրեաների ու գնչուների: Դևշիրմեի հավաքագրում անցկացվել է նաև Աթենքում, Սոֆիայում ու այլ քաղաքներում:

Դևշիրմեից ազատված էին բնակչության փոքրաթիվ կատեգորիաներ, որոնք ունեին հատուկ պարտավորություններ: 1621 թ. հավաքի սուլթանական հրամանում կտրուկ կերպով նշվում է, որ եթե բնակչությունը ցույց տա դևշիրմեից ազատման փաստաթուղթ, ապա դա այլևս պետք չէ համարել վավեր:

Եվրոպական աղբյուրները տարբեր թվեր են հայտնում դևշիրմեի պարբերականության մասին, հիմնականում՝ 3–5 տարի: XVI դարում հավաքները երբեմն տեղի էին ունենում նույնիսկ ամեն տարի: Ակնհայտ է, որ հավաքների հաճախակիացումը XVI դարում կապված է այն բանի հետ, որ թուրքերը նվաճողական պատերազմներ էին վարում հսկայական տարածության վրա՝ արևմուտքում Վիեննայից մինչև Թավրիզ՝ արևելքում ու Կահիրե՝ հարավում:

Դևշիրմեի երեքդարյա ժամանակաշրջանի ընթացքում փոփոխվել է հավաքի պարբերականությունը, չի հաստատագրվել մեկ հավաքի առավելագույն չափաբաժինը, ինչը մեծ տարբերությունների տեղիք էր տալիս. այս ամենը կասկածի տակ է առնում բոլոր հաշվարկների ստույգ լինելը:

Դևշիրմեով ընտրված երիտասարդներին հավաքում էին խմբերի մեջ: Տղաները ցուցակագրվում էին ու բնութագրվում լիարժեք անհատական նկարագրությամբ: Սա արվում էր այն նպատակով, որ ճանապարհի ընթացքում անհնարին լիներ փախուստը կամ նրանց փոխումն այլ պատանիներով: Ընտրված տղաները 100–200 հոգուց բաղկացած խմբերով տարվում էին Կ. Պոլիս: Կոստանդնուպոլսում նրանց տեղակայում էին ենիչերիական զորամասերում: Այստեղ նրանց ստիպում էին հրաժարվել քրիստոնեությունից ու ընդունել մահմեդականություն:

Երիտասարդների մի մասն ուղարկվում էր սուլթանական պալատ: Մեհմեդ Բ–ի կառավարման տարիներից մինչև XVII դարի կեսերը սրանք էին վարչական վերնախավի հիմնական պահեստային ուժերը: Պալատական դպրոցը մեծ ներդրում է ունեցել ունակ վարչական աշխատուժ պատրաստելու գործում, որի նշանակությունը հատկապես զգացվեց դևշիրմե համակարգի դուրս մղվելուց հետո, երբ պաշտոնների էին բերվում կաշառքի կամ ծանոթության միջոցով:

Հավաքված երիտասարդների մյուս մասը դառնում էր ենիչերի զորաբանակի հիմնական զանգվածը: Ռազմական, ինչպես նաև պետության ամրապնդման առումով մեծ կարևորություն ուներ ենիչերիական զորաբանակը: Ենիչերիական զորաբանակն արհեստավարժ մշտական զորք էր, որը ստանում էր ռոճիկ, ապրում զորանոցներում, ազատ էր տնտեսական կամ ընտանեկան հոգսերից: Նրանց արգելված էր ամուսնանալ կամ առևտրով զբաղվել: Ենիչերիները նաև շատ կարևոր գործոն էին հպատակ քրիստոնյաների ձուլման քաղաքականության մեջ: XVI դարից սկսած՝ ենիչերիական զորանոցներ էին տեղակայվում կայսրության ողջ տարածքով մեկ: Գավառակում տեղակայված ենիչերիական զորանոցը իր երկարատև ազդեցությունն էր թողնում շրջակա բոլոր գյուղերի ազգաբնակչության վրա: Հեռու լինելով մայրաքաղաքից՝ ենիչերիները հեռու էին նաև լուրջ վերահսկողությունից, ուստի դիմում էին բազում կամայականությունների, սակայն իրարից գտնվում էին բավական մոտ տարածության վրա, որպեսզի կարիքի դեպքում օգնության հասնեին միմյանց:

Դևշիրմե համակարգով հավաքված քրիստոնյա երեխաները մի քանի անգամ ավելի շատ էին, քան պահանջվում էր ենիչերիական զորաբանակը համալրելու համար:

XVI դարի հայ աղբյուրները վկայում են դևշիրմեի՝ պարբերաբար կրկնվող «տողայաժողովների» մասին: Հայերից մանկահավաք կատարվել է դեռևս 1464 թվականին: Այսպես, ըստ մանր ժամանակագիրների տվյալների, հայերից մանկահավաքներ կատարվել են 1464, 1519, 1531, 1536, 1543, 1547, 1550, 1590, 1622 թվականներին: Մանկահավաքներ եղել են ինչպես բուն Հայաստանից դուրս՝ անդրեփրատյան հայաշատ քաղաքներից, այնպես էլ Հայաստանում:

Դևշիրմեով հավաքված հայերից ամենից բարձր աստիճանի է հասել թերևս Հալիլ փաշան, որը երկու անգամ դարձել է Օսմանյան կայսրության մեծ վեզիրը (1616–1619 թթ., 1626–1628 թթ.):

Դևշիրմեն գործածության մեջ էր ողջ XVI դարի ընթացքում, կան նաև բազում փաստաթղթեր, որոնք վերաբերում են նաև XVII դարի առաջին կեսին: Ենիչերիական զորամասերի, ինչպես նաև ստրկական համակարգի այլ պահանջների համար դևշիրմեի հավաքագրման մասին փաստերը նոսրանում են XVII դարի երկրորդ կեսի վերաբերյալ փաստաթղթերում: Օսմանյան կայսրությունում դևշիրմեն, սկիզբ առնելով XIV դարավերջից, հասնում է մինչև XVIII դարի սկիզբը՝ տևելով ավելի քան 3 հարյուրամյակ:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVII ԴԱՐՈՒՄ

1. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈՒ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Սկսած XVI դարի վերջերից՝ Փոքր Ասիայում բազմաթիվ ապստամբություններ, խռովություններ ցնցում են Օսմանյան կայսրության հզորության հիմքերը: Այդ նույն ժամանակ (1594 թ.) բռնկվեց հերթական պատերազմն Ավստրիայի դեմ: Թուրքական տիրապետության դեմ զինված ապստամբություն բարձրացրեց Վալախիայի իշխան Միքայել (Միխայ) Քաջը, որը, դաշնակցելով մոլդավացիների հետ, թուրքերին հասցրեց շոշափելի հարվածներ: Ապստամբեց Սերբիան:

Զբաղված լինելով Ավստրիայի դեմ պատերազմով՝ սուլթանական կայսրությունը ստիպված եղավ հաշտություն կնքել Միքայել Քաջի հետ, սակայն վերջինը 1598 թ. վերսկսեց ռազմական գործողությունները թուրքերի դեմ և ազատագրեց Մոլդավիան և Տրանսիլվանիան: Այսուհանդերձ, Տրանսիլվանիայի ղեկավարները, դիմելով դավաճանության, ապստամբեցին Միխայ Քաջի դեմ և 1601 թ. սպանեցին նրան:

XVI դարի վերջին օսմանցի զավթիչների դեմ հերոսական ազատագրական պայքար էին մղում բուլղարները, սերբերը, չեռնոգորցիները, հերցեգովինացիները: Թուրքերի դեմ ոտքի էին կանգնել Մորեան, Դալմաթիան, Ալբանիան: Թուրքերին մեծ ճիգերի ու զոհողությունների գնով մի կերպ հաջողվում էր ճնշել վերոհիշյալ ապստամբությունները:

Ավստրիական ռազմաճակատում 1596 թ. թուրքերը կրեցին մի շարք լուրջ պարտություններ: Այնուհետև ռազմական գործողությունները Օսմանյան կայսրության և Ավստրիայի միջև ընթացան փոփոխակի հաջողություններով, երկու կողմերն էլ կրեցին զգալի կորուստներ, և այս պայմաններում 1606 թ. նոյեմբերի 11–ին Սիտվորոտոկում (Հունգարիա) կնքվեց հաշտության պայմանագիր: Սիտվորոտոկի հաշտության պայմանագիրը դիվանագիտական պատմության մեջ հիշարժան է մի շարք առումներով. նախ՝ Ավստրիան ազատվեց Թուրքիային հարկեր վճարելուց, Տրանսիլվանիան ընկավ կրկնակի՝ ավստրիական և թուրքական ազդեցության ոլորտ, այնուհետև՝ Ավստրիայի կայսրը անվանվում էր ոչ թե «Վիեննայի իշխան», ինչպես թուրքերի կողմից արհամարհանքով արձանագրվում էր նախկին բոլոր դիվանագիտական վավերագրերում, այլ՝ կայսր: Սիտվորոտոկի պայմանագրով Ավստրիան դառնում էր Ֆրանսիայի հետ միաժամանակ Օսմանյան կայսրության բոլոր կաթոլիկադավան քրիստոնյաների հովանավորն ու պաշտպանը:

Ահա այսպիսի պայմաններում ծագեց ու ընթացավ ջալալիական հզոր շարժումը:

Ջելալիների խռովությունների (Celâli fitreti) անմիջական շարժառիթների մասին գրելիս օսմանյան պատմության ուսումնասիրողները սովորաբար վկայակոչում են 1596 թ. Կերեշտեսի ճակատամարտից փախչող զինվորներին, որոնք հեռակա կարգով մահվան դատապարտվեցին մեծ վեզիր Սինան փաշայի կողմից: Երեսուն հազար ֆիրարիներ (փախստականներ) անցան Փոքր Ասիա ու միացան մինչ այդ ապստամբ ավատատերերի զորամիավորումներին:

Առաջին խոշոր ապստամբ ղեկավարն էր Կարա Յազըջին, նույն ինքը՝ Հալիմ շահը, որն իր շարժումը ծավալում է Ուրֆայի մոտակայքում, գրավում է քաղաքն ու շրջակայքը և մեծ ավերածություններ գործում: Կառավարական զորքերը պաշարում են Ուրֆան, սակայն չեն կարողանում գրավել այն: Կարա Յազըջիի դեմ սուլթանական արքունիքը երկու անգամ պատժիչ զորամասեր է ուղարկում: Երրորդ անգամ՝ 1600 թ. ապրիլին, կառավարական զորքերի ու խռովարարների միջև Դիվրիկի շրջակայքում՝ «Ջեհեննեմդերեի» («Դժոխքի հովիտ») կոչված վայրում, Կարա Յազըջին պարտություն է կրում, շարժվում է դեպի Սեբաստիա՝ ճանապարհին ավարի ու ավերի ենթարկելով գյուղերն ու ավանները, սպանելով բնակիչներին, տարբերություն չդնելով նրանց կրոնական պատկանելությանը: Հայկական աղբյուրներում հաճախ կարելի է հանդիպել այսպիսի վկայությունների՝ «...ոչ հայ, ոչ տաճիկ ասին, զամենայն սրով մաշեցին»: XVII դարի հայ պատմիչ Գրիգոր Դարանաղցին հատուկ նշում է, որ ջալալի հրոսակախմբերը կողոպտում, թալանում ու սպանում էին ոչ միայն հայ քրիստոնյաներին, այլև «...մանաւանդ տաճկաց առաւել անողորմաբար գործէին զամենայն չարիքս»:

Ջեհեննեմդերեի ճակատամարտից հետո Կարա Յազըջին շարունակում է իր ապստամբ գործողությունները սուլթանական կառավարության դեմ: Ապստամբների և սուլթանական զորամասերի միջև ընդհարումն այս անգամ տեղի է ունենում, թուրքական աղբյուրների վկայությամբ, «Ալբիստանի յայլաղում Սեփեդլու կոչված վայրում», ուր խռովարարները ծանր պարտություն են կրում: Կարա Յազըջին փախչում է Ջանիկի լեռները, որտեղ և շուտով մահանում է, իսկ ապստամբ զորամասերի գլուխ է կանգնում իր եղբայր Դելի Հասանը (Գիժ Հասանը): Վերջինս 1602 թ. գարնանը Ջանիկից շարժվում է դեպի արևմուտք՝ ճանապարհին կատարելով մեծ ավերածություններ և սրի մատնելով բնակչությանը:

Դելի Հասանի հրոսակախմբերը շուտով պաշարում են Թոկատը (Թոխաթ), գրավում այն, կատարում անլուր վայրագություններ, սպանություններ, հրդեհում քաղաքի ծաղկուն թաղամասերը: Երեք ամիս շարունակ վաճառաշահ այդ քաղաքը ենթարկվում է անասելի կողոպուտի, բնակչությունը՝ գերեվարման ու կոտորածի, իսկ հրաշքով փրկվածները, որոնց զգալի մասը հայեր էին, փախուստի են դիմում և մեծ մասամբ հաստատվում Կ. Պոլսում:

Անզոր գտնվելով ճնշելու ապստամբությունը՝ սուլթանական կառավարությունը ներում է շնորհում ապստամբներին, Դելի Հասանին նշանակում Բոսնիայի կառավարիչ, որտեղ և շուտով նա սպանվում է:

Դելի Հասանի մահից հետո ջալալիների շարժումը շարունակվում է ու խիստ ընդարձակվում: Կազմակերպվում են նոր՝ ավելի մեծ հրոսակախմբեր: Երեմիա Չելեպի Քյոմուրճյանը թվարկում է ապստամբ նոր ղեկավարների անունները՝ միաժամանակ տալով նրանց համապատասխան բնութագիրը: Այսպես՝ «քեսեքես» (կտրի հա կտրի), «Քեօր ղայա» («Կույր ապառաժ»), «Թանկրի Թանրմազ» («Անաստված»), «Թոփուզը պոյուկ» («Մեծ թոփուզավոր»), «Ապուխանչեր» («Դաշույն պահող»), «Ղարասահաթ» («Ջարժամ») և այլն: Մականուններ են, որոնք վկայում են այն մասին, թե ինչպիսի չարագործություններ կարող էին կատարել նրանք:

Ապստամբությունն ընդգրկում էր հսկա մի տարածք: Առաքել Դավրիժեցու վկայությամբ՝ այն ընդգրկում էր «ի մերձակայից Կոստանդնուպօլսի՝ մինչև զԵրևան քաղաք, ի Բաղդատայ մինչև զԴամուրղափուն, զՍպիտակ ծովու մէջն և զՍեաւ ծովու մէջն, այս եզերքս՝ զորս ծրագրեցի, զսոցա մէջն զայսքան աշխարհս յաւեր և ապականութիւն դարձուցին»:

Այսպիսով՝ հրոսակախմբերը գործում էին ողջ Փոքր Ասիայում՝ Կալենդար օղլին և Կարա Սաիդը՝ Այդընի և Սարուխանի մերձակայքում, Կրնալին՝ Բուրսայի, Ջեմշիդը՝ Ադանայի, Թավուլ Ահմեդ Սաչլին՝ Կարամանիայում և Արևմտյան Հայաստանում: Ջելալիների ապստամբություններից ամենահուժկուն և վտանգավորը Ջանփոլադ Ալիի և Կալենդար օղլիի գլխավորածներն էին: Ի դեպ՝ XVI դարի վերջին թուրքական տիրապետության դեմ ըմբոստացած և իր անկախությունը հռչակած Ֆ. Ման օղլին կամ Մաանը դաշինք էր կնքել հենց Ջանփոլադ Ալիի հետ, որոնք կարողացան իրենց ենթարկել Սիրիան, Լիբանանը և Կիլիկիան: Թուրքերից երկու տասնամյակ պահանջվեց, մինչև որ Լիբանանը նորից մտնի Օսմանյան կայսրության պետական սահմանների մեջ: «Այս երկու ապստամբ ղեկավարները,— գրում է Յոզեֆ Համմերը,— ... իրենց միացյալ ուժերով սպառնում էին Սիրիան (իմա՝ Լիբանանը) անկախ թագավորություն հռչակել»: Սուլթանական կառավարությունը մի մեծ բանակով այս երկու ապստամբ ղեկավարների հրոսակախմբերի դեմ է ուղարկում ռազմի դաշտերում կոփված սերդար Կույուջը («հոր փորող») Մուրադ փաշային: Մի շարք մարտերում Կույուջը Մուրադը ջախջախում է Ալի Ջանփոլադի և Ֆախրեդդին Ման օղլիի միացյալ զորամասերին: Վերջինս, 1608 թ. գարնանը թողնելով Ասորիքը (Սիրիան), մտնում է Փոքր Ասիա և Արևմտյան Հայաստան ու ճանապարհին կատարում մեծ ավերածություններ, ինչպես այդ մասին մանրամասն վկայում են հայկական աղբյուրները:

1608 թ. աշնանը Էրզրումի մոտ տեղի ունեցած ճակատամարտերում Կույուջը Մուրադը ջախջախում է նաև Կալենդար օղլիին, որը ստիպված եղավ փախուստի դիմել և ապաստան գտնել Սեֆյանների մոտ:

Թուրք–իրանական պատերազմներն ու ջալալիների շարժումները՝ մի կողմից, և գյուղացիների զանգվածային փախուստը իրենց հողակտորներից՝ մյուս կողմից, այլ խոսքով՝ հասարակական արտադրության տևական խանգարման հետևանքով ողջ Փոքր Ասիան համատարած սովի ենթարկվեց, որը խլեց տասնյակ հազարավոր մարդկանց կյանք:

Կարա Յազըջիի, Դելի Հասանի, Կալենդար օղլիի, Ալի Ջանփոլադի և այլոց գլխավորած շարժումներն, ըստ էության, ունեցել են բարդ ու բազմերանգ բնույթ: Թեև այդ շարժումներն իրենց հիմքում ունեին սոցիալական արմատներ, սակայն շարժման մասնակիցների զգալի մասը կազմել են նաև ավազակախմբերի վերածված լեվենդները (ապստամբ աշխարհազորայինները) և այլք, որոնք դարձել են չարիք ու պատուհաս ժողովրդի գլխին: Սխալ է, անշուշտ, խորհրդային պատմագրության մեջ խորապես արմատավորված այն կարծիքը, թե հողագործ նստակյաց գյուղացիությունը, իբր, ամենուր աջակցել է ջալալիներին ու անցել նրանց կողմը: Ընդհակառակը, աղբյուրների մանրակրկիտ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գյուղացիները զանգվածաբար փախել են ջալալիներից ու ապաստան փնտրել Կ. Պոլսում և Միջերկրական ծովի առափնյա շրջաններում:

Ջելալիների շարժումը մեծ մասամբ ղեկավարել են զինվորական ծառայության մեջ գտնվող մանր ու միջին ավատատերերը, որոնց ավատական տիրույթներն ու ավատական իրավունքները վտանգված էին խոշոր ավատատերերի շահերի պաշտպան սուլթանական կառավարության կողմից: Ապստամբ ղեկավարներից և ոչ մեկը իր առաջ խնդիր չէր դրել բռնությամբ ոչնչացնելու տիրող հասարակարգը, ընդհակառակը՝ նրանք այդ հասարակության ծնունդն էին և հետևողական պաշտպանները:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1590 թ. հաշտության պայմանագրով Այսրկովկասի և Հյուսիսարևմտյան Իրանի կորուստը շահ Աբբասը դիտում էր որպես ժամանակավոր երևույթ՝ համարելով, որ այն իր ժառանգական «Հայրենի աշխարհն» է: Նախքան թուրքերի դեմ պատերազմ սանձազերծելը շահ Աբբասը բանակցություններ վարեց եվրոպական մի շարք երկրների հետ՝ ռազմական դաշինք կնքելու նպատակով, քանզի համոզված էր, որ այդ երկրները «...իր մեծ թշնամու՝ թուրքի թշնամիներն են»: Իրանական շահը ուշիուշով հետևում էր օսմանյան պետության մեջ ծավալվող իրադարձություններին և պատրաստ էր օգտագործել Իրանի համար բարենպաստ իրավիճակը:

Որպես առիթ օգտագործելով Սալմաստի քուրդ բեկ Ղազիի ապստամբությունը՝ շահ Աբբասը խախտում է Կոստանդնուպոլսի պայմանագիրը և 1603 թ. սեպտեմբերի 14-ին սրընթաց շարժվում է դեպի Թավրիզ: Հոկտեմբերի 24-ին թշնամի բանակները հանդիպում են Սոֆյանի դաշտում: Այդ ճակատամարտում թուրքերի դեմ տարած հաղթանակից հետո շահ Աբբասը գրավում է Թավրիզի բերդը: Այնուհետև Սեֆյան բանակը ուղղություն է վերցնում դեպի Ջուղա, Օրդուբադ և Նախիջևան, գրավում այդ կենտրոնները, որից հետո շարժվում է դեպի Երևան ու պաշարում այն: Դեպքերին անմիջականորեն ականատես պորտուգալացի դիվանագետ Անտոնիո դե Գուվեայի վկայությամբ՝ այդ տարածքները գերազանցապես բնակեցված էին հայերով: Մասնավորապես նրա մոտ կարդում ենք, որ Նախիջևանը «...համարյա ամբողջությամբ բնակեցված էր հայերով»:

Դեռ պաշարված էր Երևանը, երբ շահ Աբբասը հրամայեց իր զորքերի գերագույն հրամանատար, ծագումով հայ Ալավերդի խանին ասպատակել և ավերել Արևմտյան

Հայաստանի գավառներն ու բնակչությանը բռնի տեղափոխել Արարատյան դաշտ, որը և կատարվեց:

Թուրքերի համար խիստ վտանգավոր իրադարձությունների պայմաններում, սուլթան Ահմեդի կարգադրությամբ հսկայական բանակի գլուխ կանգնած դեպի Սեֆյան Իրան ուղարկվեց մեծ վեզիր, ծագումով իտալացի Ջղալ-օղլի Սինան փաշան (Cicala): Թուրքական արշավանքն ընթանում էր Էրզրում, Կարս, Երևան տրորված ճանապարհով: Օսմանյան բանակի թվական գերակշռության առաջ շահ Աբբասը ստիպված եղավ նահանջել և կարգադրեց թուրքական արշավանքի գոտում գտնվող ողջ բնակչությանը տեղահանել ու տեղափոխել Իրան, որպեսզի օսմանյան բանակը, երկիրը գտնելով ամայի ու անմարդաբնակ, դժվարություններ ունենա արշավանքը շարունակելու: Սինան փաշան, տեսնելով իրավիճակը, ի վերջո հրամայեց բանակին ձմեռել «Ռումի երկրում», իսկ հաջորդ տարի՝ 1605 թ., վերսկսել ռազմական գործողությունները Իրանի դեմ:

1605 թ. գարնանը Ուրմիա լճի մոտակայքում օսմանցիների և Սեֆյանների միջև տեղի ունեցավ մեծ ու արյունալի ճակատամարտ, որն ավարտվեց թուրքերի պարտությամբ, և դա այն աստիճանի ազդեց մեծ վեզիրի վրա, որ նա Դիարբեքիրում, որտեղ նահանջել էր, ինքնասպանությամբ վերջ տվեց իր կյանքին:

1609 թ. սերասքեր (զորքերի գերագույն հրամանատար) նշանակված մեծ վեզիր, ջալալիների դեմ հաղթանակ տարած Կույուջու Մուրադը 1610 թ. գարնանը Էրզրում – Չալդրան – Խոյ – Սալմաստ ճանապարհով շարժվեց դեպի Թավրիզ: Սակայն ծերունի Կույուջու Մուրադը շուտով մահացավ, և նրան փոխարինեց Նասուհ փաշան, որի սերասքերության ժամանակ էլ՝ 1612 թ. նոյեմբերի 20-ին, արևելյան երկու պետությունների միջև կնքվեց Սիրավյան հաշտության պայմանագիր, ըստ որի վերականգնվեցին 1555 թ. մայիսի 29-ի Ամասիայի հաշտության պայմանագրի կետերը, Իրանը պարտավորվեց Օսմանյան կայսրությանը տարեկան 200 բեռ մետաքսահարկ վճարել:

1612 թ. հաշտությունը լոկ զինադադար էր: Երկու պետությունների միջև շարունակվում էր գոյություն ունեցող լարվածությունը: Թուրքիան չէր ուզում հաշտվել Այսրկովկասը կորցնելու գաղափարի հետ, իսկ Իրանը՝ մետաքսահարկը ստորացուցիչ էր համարում իր համար:

1616 թ. գարնանը օսմանյան 100 հազարանոց բանակը Հալեպից Հասան Կալա և այնուհետև Սողանլու ճանապարհով շարժվում է դեպի Կարս և նույն թվականի սեպտեմբերի 11-ին պաշարում Երևանը, սակայն հանդիպում է անհաջողության ու նահանջում դեպի Էրզրում: Թուրքերի այս հերթական արշավանքին ի պատասխան՝ իրանական կողմը ասպատակիչ հարձակումներ է գործում Արևմտյան Հայաստանի գավառներում: Նման իրադրության պայմաններում օսմանյան զորքերի գլխավոր հրամանատար Կարա Մեհմեդ փաշան ստիպված է լինում վերահաստատել 1612 թ. հաշտության պայմանագիրը: Սակայն սուլթանական կառավարությունը չեղյալ է համարում այդ նոր կնքված պայմանագիրը և մեծ զորաբանակով իրանական ճակատ ուղարկում մեծ վեզիր, ծագումով հայ Խալիլ փաշային, որին էլ միանում

է Ղրիմի թաթարական խան Ջանիբեկ Գիրեյի 40 հազարանոց հրոսակախումբը: Մի շարք մարտերում թուրք–թաթարական բանակը պարտություններ է կրում, իրանական բանակը գերագույն հրամանատար, ծագումով հայ Կարչխա խանի գլխավորությամբ ասպատակության է ենթարկում Վանն ու Էրզրումը:

Սուլթան Ահմեդի մահը 1617 թ. և խելակորույս Մուստաֆայի իշխանության գլուխ անցնելը ստիպեցին թուրքերին ակամա հաշտվել իրանական ռազմաճակատում իրենց կրած անհաջողությունների փաստի հետ: 1618 թ. փետրվարի 26–ին սուլթան Մուստաֆան գահընկեց է արվում, և սուլթան է հռչակվում Ահմեդ Ա–ի որդի Օսման Բ–ը՝ Գենջ Օսման անունով:

Այսուհանդերձ, թուրքական բանակը մեծ վեզիր Խալիլ փաշայի գլխավորությամբ շուտով գրավում է Թավրիզը և շարժվում դեպի Արդաբիլ: Դրանից հետո, սակայն, Թավրիզի մոտակայքում և Փուլ–ի շիկեստե կոչվող վայրում իրանական կողմը պարտության է մատնում թուրքական բանակին, և թուրքերը ստիպված են լինում 1618 թ. սեպտեմբերի 26–ին վերոնշյալ Փուլ–ի շիկեստե վայրում Իրանի հետ կնքել հաշտության նոր պայմանագիր, ըստ որի՝ իրանական կողմն այս անգամ պարտավորվում է թուրքերին տարեկան մետաքսահարկ վճարել ոչ թե 200 բեռ, ինչպես դա նախատեսված էր 1612 թ. պայմանագրով, այլ 100:

1618–1621 թվականների ընթացքում թուրքերը պատերազմի մեջ էին Լեհաստանի հետ: Ռազմական գործողությունները լեհերի հետ ընթանում էին փոխնիփոխ հաջողություններով, և ի վերջո՝ 1621 թ. սեպտեմբերին, երկու պետությունների միջև կնքվեց հաշտության պայմանագիր: Միայն դրանից հետո սուլթան Գենջ Օսմանը ձեռնամուխ եղավ երկրում բարենորոգումներ անցկացնելու, որի հիմնական նպատակն էր սահմանափակել պալատական վերնախավի լիազորությունները և թյուրքացնել պալատն ու բանակը: Այդ ուղղությամբ ձեռք առնված մի շարք քայլերը ճակատագրական դարձան հենց իր՝ սուլթան Գենջ Օսմանի համար, որը գահընկեց արվեց ու սպանվեց կատաղած ենիչերիների կողմից 1622 թ. մայիսի 20–ին:

Գենջ Օսմանի սպանությունը երկրում առաջ բերեց դժգոհության ալիք, և մի շարք վայրերում կենտրոնական կառավարության և ենիչերիների սանձարձակ կամայականությունների դեմ բռնկվեցին զինված խռովություններ: Ամենախոշորը Էրզրումի կառավարիչ Աբազա Մեհմեդ փաշայի 1621 թ. բարձրացրած խռովությունն էր, որը շուրջ տասը տարի ալեկոծության մեջ պահեց Բարձր Հայքի հայ բնակչությանը: Ենիչերիները երկրորդ անգամ գահ էին բարձրացրել խելակորույս Մուստաֆա Ա–ին (1622–1623 թթ.), որը նրանց ձեռքում խաղալիք դարձավ և գահի վրա մնաց մինչև 1623 թ. սեպտեմբերի 10–ը, երբ պետական նոր հեղաշրջման հետևանքով իշխանության բերվեց Ահմեդ Ա–ի տասնմեկ տարեկան որդին՝ Մուրադ Դ անունով:

Աբազա փաշայի հրամանով սպանվում է Էրզրումի ենիչերիական կայազորի մեծագույն մասը, նա կազմում է 40 հազարանոց մի բանակ ու գրավում Արևմտյան Հայաստանի զգալի մասը, ներառյալ Սեբաստիան (Սվազը): Աբազա փաշային իրեն ենթարկելու հարցում սուլթանական կառավարության բոլոր փորձերը ավարտվում են անհաջողությամբ: Եվ միայն 1628 թ. աշնանը, երբ մեծ վեզիր Խոսրև փաշայի զորամասերը Էրզրումը ենթարկեցին երկարատև պաշարման, Աբազա փաշան հուսահատ վիճակում անձնատուր եղավ, իսկ սուլթան Մուրադ Դ–ը ներեց նրան՝ համոզված լինելով, որ Աբազա փաշայի ապստամբությունը ոչ միայն ուղղված չէր օսմանյան գահի դեմ, այլ, ընդհակառակը, այն կոչված էր պաշտպանելու և ամրապնդելու այդ գահը:

Օսմանյան կայսրության ներքին անկայուն իրավիճակից օգտվում է Իրանը, որը 1624 թ. հունվարի 12–ին գրավում է Բաղդադը: Շահ Աբբասը զավթում է նաև Օսմանյան կայսրության քրդաբնակ շրջանների մի մասը: Թուրքերի այս անհաջողությունները փորձում են օգտագործել մի շարք կենտրոնախույս ուժեր: Ապստամբություններ են բարձրացվում Ղրիմում (1624–1628 թթ.), Ռումելիում (1629 թ.), Եգիպտոսում, Էմինեում, Լիբանանում (1630–1631 թթ.): Այս ամենը ստիպում է Մուրադ Դ–ին ամենադաժան քայլերով կարգուկանոն հաստատել երկրում՝ հաշվեհարդար տեսնելով երկրի ներսում բոլոր ապստամբ ու ընդդիմադիր ուժերի հետ:

1629 թ.՝ շահ Աբբասի մահից հետո, Իրանի ներքին վիճակը որոշակիորեն վատացավ, և 1630 թ. թուրքերը մի շարք ասպատակիչ ու ավերիչ արշավանքներ ձեռնարկեցին Միջագետքից Համադան: Նրանք ասպատակեցին նաև Նախիջևանի շրջակայքը: Այսուհանդերձ, այդ բոլորը չէր հանգեցնում խոշորածավալ ռազմական գործողությունների:

1635 թ. գարնանը սուլթան Մուրադ Դ–ը, հսկայական բանակի գլուխ անցած, Էրզրում–Կարս ճանապարհով եկավ և պաշարեց Երևանը: Մեկ շաբաթ անընդմեջ թուրքերի հրետանին կրակ էր տեղում պաշարված քաղաքի վրա՝ քանդելով նրա պարիսպները: Երևանի պարիսպները, ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Բ. Տավերնիեի սրամիտ արտահայտությամբ, ավելի շատ կարող էին քանդվել անձրևից, քան թե թնդանոթից: 1635 թ. օգոստոսի 8–ին Երևանի խան Թահմազ Կուլին՝ Ամիրգունա խանի որդին, ստիպված եղավ բերդը հանձնել թուրքերին: Գրավելով Երևանի բերդը՝ թուրք պատմագիր Նաղմայի վկայությամբ՝ թուրքերը «...հափշտակեցին իրենց համար անսպասելի այն գանձերն ու անհաշիվ հարստությունները, որ երեսուն տարվա ընթացքում վաստակել էին Երևանի տիրակալն ու նրա հայր Ամիրգունա խանը: Մտնելով խազինան (պետական գանձարանը) ու պահեստները՝ (թուրքերը) այնտեղ այնքան հարստություն ու մթերք հայտնաբերեցին, որ բանակին երկու տարի կբավարարեր»:

Թուրքական բանակը Երևանից Մարանդի վրայով շարժվեց դեպի Թավրիզ ու 1635 թ. սեպտեմբերի 12–ին գրավեց այն, սակայն քանի որ ձմեռը մոտալուտ էր, ինչպես վկայում են աղբյուրները, օսմանցիները ստիպված եղան նահանջել դեպի Դիարբեքիր:

Օգտվելով առիթից՝ Իրանի շահ Սեֆին արշավում է դեպի Արարատյան դաշտ, 1636 թ. մարտի 30–ին պաշարում ու գրավում է Երևանը:

1637–1638 թթ. ռազմական գործողությունները երկու թշնամի պետությունների միջև դարձյալ տեղափոխվում են Միջագետք, Բաղդադը մի անգամ ևս ընկնում է օսմանցիների ձեռքը (25 դեկտեմբեր, 1638 թ.):

Բաղդադի գրավումից հետո պատերազմող կողմերի միջև ծավալվում են նոր բանակցություններ: Դրա հետևանքով 1639 թ. մայիսի 17–ին Քասրե Շիրինում կնքվում է հաշտության պայմանագիր, որի հիմքում ընկած էին 1555 թ. մայիսի 29–ին Ամասիայում կնքված պայմանագրի բոլոր կետերը, և Այսրկովկասը բաժանվում էր թուրքերի և Սեֆյանների միջև:

XVII դարի 40–60–ական թվականներին Օսմանյան կայսրության ներքաղաքական կյանքը նորից ալեկոծվեց փաշաների տևական ապստամբություններով, քուրդ ցեղապետերի միջև ծավալված անվերջ ընդհարումներով, այլ խողովարարների զինված ելույթներով և այլն:

Սուլթան Մուրադ Դ–ի հաջորդ, նրա եղբայր Իբրահիմ Ա–ը (1640–1648 թթ.), որն անվանվում էր նաև Դելի (Գիժ), իր կյանքի մեծ մասն անցկացնում էր հարեմներում, և նրա իշխանության ամբողջ ժամանակաշրջանը Օսմանյան կայսրության պատմության մեջ բնութագրվում է որպես «հարեմական սուլթանություն»: Երկրի վիճակն էլ ավելի է վատանում, երբ 1645 թ. եվրոպական կոալիցիայի երկրների հետ բռնկվում է, այսպես կոչված, 25–ամյա (1645–1669 թթ.) Կրետեի կամ Կանդիայի պատերազմը, որի ծագման համար առիթ էր ծառայել հետևյալը. սուլթան Իբրահիմը Զաֆիրե անունով հարճից ունեցել էր մի արու զավակ, որին հայտարարել էր թագաժառանգ, ինչը առաջացրել էր սուլթանի մոր՝ Վալիդե Սուլթանի զայրույթը, և սուլթանը ստիպված կարգադրել էր Զաֆիրեին ու որդուն տեղափոխել Եգիպտոս: Ուղևորության ընթացքում՝ 1644 թ. սեպտեմբերի 28–ին, սուլթանի հարճն ու զավակը գերի են ընկնում Մալթայի ասպետների ձեռքը: Մալթայի դոմինիկյան վանքում երեխան, ստանալով մոլեռանդ կաթոլիկ դաստիարակություն, անվանակոչվում է Հայր Օտտոման, որին կաթոլիկ աշխարհը ձգտում էր բազմեցնելու օսմանյան գահին:

Եվրոպական կոալիցիայի երկրների հետ պատերազմը մարդկային ու ֆինանսական հսկայական միջոցներ խլեց Օսմանյան կայսրությունից: Ռազմական գործողություններն ընթանում էին փոխնիփոխ հաջողություններով: Այսուհանդերձ, օսմանյան ռազմական նավատորմը մի քանի անգամ ծանր պարտություններ կրեց: Այդպիսի անհաջողություններ ծովում թուրքերը չէին տեսել նշանավոր 1571 թ. Լեպանտոյի ծովամարտից ի վեր: 1656 թ. հուլիսին վենետիկյան ռազմական նավատորմը մտավ Դարդանելի նեղուց, իսկ այնուհետև՝ Մարմարա ծով ու պաշարման ենթարկեց մայրաքաղաք Կ. Պոլիսը՝ քաղաքը ենթարկելով պարենավորման տագնապի: Առիթից օգտվեցին կենտրոնախույս ուժերը: Հուզումներ սկսվեցին Փոքր Ասիայի տարբեր մասերում, Սիրիայում և այլուր: Սովորական երևույթ դարձան ենիչերիական խռովությունները: Նրանք գահընկեց արեցին սուլթան Իբրահիմին և 1648 թ. օգոստոսի 8–ին մահապատժի ենթարկեցին: Գահ բարձրացավ սուլթան Մեհմեդ Դ–ը (1648–1687 թթ.): Նրա իշխանության տարիներին երկրի սոցիալ–տնտեսական վիճակն ավելի վատթարացավ: Պետական գանձարանը դատարկվեց: Ըստ պատմագիր Կարա Չելեբիզադեի՝ «Կանդիայի դժբախտ պատերազմից ի վեր պետական գանձարան չմտավ և ոչ մի հատ դինար կամ դիրհեմ. զորքը ռոճիկ չի ստանում, մայրաքաղաքը ամեն ինչի կարիք ունի. Կրետեում նույնպես բանակում մինչև իսկ հացի

պակաս է զգացվում»: Սուլթանական կառավարության ձեռք առած բոլոր միջոցները ապարդյուն են անցնում: Նման պայմաններում ուրիշ ոչինչ չէր մնում անել, քան հպատակներից, ու նախ և առաջ, քրիստոնյաներից գանձվող հարկերի ու տուրքերի շեշտակի ավելացումը և կեղծ ակչեների շրջանառության մեջ դնելը, ինչը և 1651 թ. տեղի տվեց Կ. Պոլսի արհեստավորության և առևտրական խավի բացահայտ խռովությանը, որի մասնակիցները պահանջում էին մեծ վեզիրի մահապատիժը:

Այսպիսի բարդ իրադրության պայմաններում Օսմանյան կայսրության ղեկավար շրջանները փորձում էին մեծ վեզիրի պաշտոնում տեսնել այնպիսի մի առաջնորդի, որն իր երկաթյա ձեռքով կարողանար երկրում կարգ ու կանոն հաստատել: Այդպիսի մի անձնավորություն նրանք գտան, հանձին պալատական ծերունի խոհարար, ծագումով ալբանացի, անգրագետ Քյոփրյուլյու Մեհմեդ փաշայի, որը 75 տարեկան հասակում բարձրացավ մեծ վեզիրի պաշտոնին: Ռազմական բիրտ ուժով ու խորամանկությամբ նա կարճ ժամանակահատվածում կարողացավ ճնշել կենտրոնախույս ավատատերերի ապստամբությունները Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում: Նրանցից շուրջ 30 հազարի գլխատել տվեց, սրանց գլուխներից սուլթանական պալատամերձ հրապարակում բուրգեր կազմեց՝ ի ցույց ժողովրդի: Այդ ամենի պատճառով ժամանակակիցների կողմից նա վաստակեց «Դաժան» մականունը, թեև այդ քայլերով նա բարձրացրեց կենտրոնական սուլթանական կառավարության հեղինակությունը և կարգավորեց պետության առաջ դրված բազմաթիվ անլուծելի համարվող խնդիրներ:

XVII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրությունն ընդունված է անվանել քյոփրյուլյուների դարաշրջան, քանզի մահից հետո (1661 թ.) մեծ վեզիրի պաշտոնը, փաստորեն, դարձավ ժառանգական: Մեհմեդ Քյոփրյուլյուին փոխարինեց Ֆազըլ (Առաքինի) Ահմեդ Քյոփրյուլյուն: XVII դարի թուրք պատմիչները վկայում են, որ Մեհմեդ Քյոփրյուլյուն, գտնվելով մահվան մահճում, իրեն այցելած սուլթան Մեհմեդ Դ–ին երկիրը խաղաղ կառավարելու համար խորհուրդ է տվել մեծ վեզիրի պաշտոնում չնշանակել ընչաքաղցներին ու անարժաններին, մշտապես հոգ տանել պետական գանձարանի մասին և այլն: Սակայն այդ բոլորը, ինչպես ցույց է տալիս XVII դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության պատմությունը, ժամանակավոր ազդեցություն կարող էր ունենալ ու չփրկեց պետությունը հետագա անկումից: Եվ քյոփրյուլյուների դարաշրջանում առաջվա նման անկայուն իրավիճակն Օսմանյան կայսրության նահանգների մեծ մասում շարունակվում էր, ֆինանսական դրությունը մնում էր ողբալի, կապիտալիզմի զարգացման ուղին բռնած եվրոպական երկրների հետ արտաքին քաղաքական հարաբերությունները գնալով ավելի ու ավելի ընդգծված ձևով գործում էին ի վնաս օսմանյան պետության:

Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուն (1661–1667 թթ.) իր իշխանության տարիներին հանգամանքների բերումով առավել ուշադրություն դարձրեց երկրի ներքին հարցերին: Հենց նրա ժամանակ էլ հրապարակ հանվեց աղմկահարույց մի հարց, որպիսին էր Սաբբատա Զևիի գործը: Զմյուռնիայում 1625 թվականին ծնված այս հրեան Արևելքում կատարած իր ճանապարհորդությունից հետո՝ 1666 թվականին, իրեն հռչա-

կում է նոր Մեսիա և շուտով ունենում բազմաթիվ հետևորդներ, որը և առաջացնում է մայրաքաղաքի մեծ ռաբինի բողոքը Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուին: Վերջինս Զևիին առաջարկում է ընտրություն կատարել մահապատժի և իսլամ ընդունելու միջև: Սաբբատա Զևին առերես ընդունում է իսլամը, սակայն շարունակում է իր աղանդավորական գործունեությունը: Ի վերջո նա աքսորվում է Ալբանիա, որտեղ 1675/1676 թ. կնքում է իր մահկանացուն:

Արտաքին քաղաքականության մեջ Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուն իր առաջ խնդիր է դնում ավարտելու Կրետե կղզու նվաճումը, սակայն դա հաջողվում է միայն նրա հաջորդ՝ Կարա Մուստաֆա Քյոփրյուլյուին, որը 1669 թ. սեպտեմբերի 27-ին եվրոպական կոալիցիայի երկրների հետ կնքում է հաշտության պայմանագիր՝ վերջ տալով քսանհինգամյա պատերազմին. Կրետե կղզին միացվում է օսմանյան տիրույթներին:

Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուն, սակայն, նոր պատերազմ է սանձազերծում Լեհաստանի դեմ: 1672 թ. օգոստոսին նա զավթում է Կամենեցի ամրոցը և պաշարում Լվովը (Լեմբերգ): 1673–1676 թվականների ընթացքում ռազմական գործողությունները Լեհաստանի դեմ շարունակվում են, և ի վերջո Լեհաստանի նոր թագավոր Յան Սոբեսկին 1676 թ. հոկտեմբերի 27-ին Զորավնոյում օսմանցիների հետ կնքում է հաշտության պայմանագիր՝ նրանց զիջելով Ուկրաինան և Պոդոլիան:

Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուի իշխանության վերջին տարիներին արտաքին աշխարհում սրվում են հարաբերությունները նաև Ֆրանսիայի հետ, որը, սկսած 1535 թվականից, համարվում էր Օսմանյան կայսրության դաշնակից՝ ուղղված ավստրիական Հաբսբուրգների դեմ: Մեծ վեզիրը մեղադրում էր Ֆրանսիային Կրետեի պատերազմի ժամանակ եվրոպական կոալիցիայի երկրներին աջակցելու մեջ: Ֆրանս-օսմանյան հարաբերություններն այն աստիճանի սրվեցին, որ օրավուր սպասում էին «Արև արքայի»՝ Լյուդովիկոս ԺԴ-ի խաչակրաց արշավանքին Օսմանյան կայսրության դեմ, սակայն ֆրանսիական թագավորի առևտրի ու ֆինանսների նախարար Կոլբերին հաջողվեց հարթել Ֆրանս-օսմանյան հարաբերությունները:

Ֆազըլ Ահմեդ Քյոփրյուլյուին հաջորդած Կարա Մուստաֆա Քյոփրյուլյուի ժամանակ թուրքերը 1676–1681 թվականներին անհաջող ռազմական գործողություններ ծավալեցին ռուսների դեմ Ուկրաինայում, որն ավարտվեց 1681 թ. փետրվար-մարտ ամիսներին կնքված Ռաձինի հաշտության պայմանագրով, որով թուրքերը ստիպված էին ռուսներին զիջել մերձդնեպրյան և մերձբուգյան զգալի տարածքներ: Բացի այդ, օսմանյան պետությունը ստիպված էր ճանաչել Ռուսաստանը՝ որպես Օսմանյան կայսրության բոլոր ուղղափառ (հունադավան) հպատակների միակ պաշտպան ու հովանավոր:

1683 թ. Վիեննան գրավելու նպատակով թուրքերի նոր արշավանքի անմիջական առիթը հետևյալն էր. մի խումբ հունգարացի ավատատերեր Էմերիկ Թեքելիի գլխավորությամբ Հաբսբուրգների դեմ մղած իրենց պայքարում օգնության խնդրանքով դիմել էին սուլթանին: Սուլթանը խոստացավ օգնել և Կարա Մուստաֆայի հրամանատարությամբ խոշոր բանակ ուղարկեց Արևմտյան Հունգարիա, որտեղից ուղղություն վերցրեց դեպի Վիեննա: 1683 թ. հուլիսի 14-ին օսմանյան բանակը հասավ Ավստրիայի մայրաքաղաք Վիեննա և պաշարեց այն: Վիեննայի պաշարումը տևեց շուրջ երկու ամիս, և նրա պաշտպանները հերոսաբար հետ մղեցին թուրքերի ձեռնարկած բոլոր գրոհները: Պաշարման երկու ամիսների ընթացքում թուրքերը թեև կորցրին մեծ թվով սպանվածներ, վիրավորներ և գերեվարյալներ, սակայն պաշարվածների ուժերը ևս սպառվում էին: Սեպտեմբերի լույս 12-ի գիշերը անսպասելիորեն Վիեննայի պատերի տակ երևաց լեհական թագավոր Յան Սոբեսկին իր 25 հազարանոց բանակով, որից 5000-ը կամավոր գրված լեհահայեր էին, այնտեղ կային նաև ուկրաինական կազակներ: Օսմանյան բանակը Վիեննայի պատերի տակ ծանր պարտություն կրեց՝ տալով ավելի քան 20 հազար սպանված և հաղթողներին թողնելով 300 հրետանի ու մեծ վեզիրի վրանը, որտեղ կային անհաշիվ հարստություններ: Ինքը՝ մեծ վեզիր Կարա Մուստաֆա Քյոփրյուլյուն, փախավ Բելգրադ, որտեղ սուլթանի հրամանով գլխատվեց:

Վիեննայի պատերի ներքո օսմանցիների կրած պարտությունը մեծ հույսեր առաջացրեց Եվրոպայում ու ոտքի կանգնեցրեց Արևելյան Եվրոպայի ու բալկանյան ստրկացված ժողովուրդներին: Եվ ահա հենց 1684 թ. կազմվեց թուրքերի դեմ ուղղված եվրոպական պետությունների կոալիցիան, որը ստացավ «Սրբազան լիգա» անվանումը: Նրան մասնակցեցին Ավստրիան, Լեհաստանը, Վենետիկը, Մալթան: 1686 թ. այդ դաշինքին միացավ նաև Ռուսաստանը:

Հետապնդելով բարոյալքված օսմանյան բանակին՝ դաշնակիցները մի շարք հաջողություններ են արձանագրում Հունգարիայում, Տրանսիլվանիայում և Մորեայում: Հելլադայի թերակղզին՝ Հին Պելեպոնեսը, համարյա ամբողջությամբ անցնում է վենետիկցիների ձեռքը: Ընկնելով ֆինանսական ծանր կացության մեջ՝ ողջ կայսրության տարածքում սուլթանական կառավարությունը բնակչությունից սկսում է գանձել մեծ չափի իմդադ-ի սեֆերիե: Երկրի բնակչության վիճակն ավելի է վատթարանում 1687 թ. աննախադեպ երաշտից: Մայրաքաղաք Կոստանդնուպոլսում զգացվում էր պարենի սուր պակասը, և այս պայմաններում երկրում կատարվում է պետական հեղաշրջում, գահընկեց է արվում սուլթան Մեհմեդ Դ-ը, և իշխանության գլուխ է բերվում նրա եղբայրը՝ Սուլեյման Բ-ը (8 նոյեմբեր, 1687–1691 թթ.):

1688 թ. սեպտեմբերին ավստրիացիները գրավում են Բելգրադը, որը և ազդանշան է հանդիսանում սերբերին, բուլղարներին և տրանսիլվանցիներին զինված ապստամբություն բարձրացնելու թուրքերի դեմ: Բելգրադի գրավումից հետո ավստրիացիները մուտք են գործում Մակեդոնիա: Նոր մեծ վեզիր Քյոփրյուլյուզադե Ֆազըլ Մուստաֆա փաշայի բոլոր փորձերը՝ կանգնեցնելու դաշնակից բանակների հետագա առաջխաղացումը, ավարտվում են ձախողմամբ: Ավելին՝ նա մի ճակատամարտում սպանվում է: Դաշնակից զորքերի դեմ պատերազմները շարունակվում են սուլթան Սուլեյման Բ-ին հաջորդած Ահմեդ Բ-ի (1691–1695 թթ.) իշխանության տարիներին:

1696 թ. Ռուսաստանի ցար Պետրոս Ա-ը նվաճեց ռազմավարական խոշոր նշանակություն ունեցող Ազովը, որը հնարավորություն էր տալիս ռուսական կայսրու-

թյանը դուրս գալու Սև ծով: Դաշնակիցներից կրած թուրքերի պարտությունները շարունակվում են նաև Ահմեդ Բ–ին հաջորդած Մուստաֆա Բ–ի (1695–1703 թթ.) ժամանակ: 1697 թ. սեպտեմբերին Հունգարիայի և Սերբիայի սահմանագծում գտնվող Զենտայում թուրքերը կրում են նոր մեծ պարտություն, որտեղ իր մահն է գտնում մեծ վեզիր Էլմաս Մեհմեդ փաշան:

Եվրոպական մի շարք երկրների միջնորդությամբ Օսմանյան կայսրությունը համաձայնվում է նստել բանակցությունների սեղանին: Կառլովիցում (Սլովենիա) 1698 թ. հուլիսից սկսված բանակցություններն ավարտվում են 1699 թ. հունվարի 26–ի հաշտության պայմանագրի ստորագրմամբ, իսկ Ռուսաստանի հետ կնքվում է անջատ հաշտության պայմանագիր 1700 թ. հուլիսի 15–ին:

Կառլովիցի հաշտության պայմանագրով թուրքերը կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ու Բալկաններում ծանր տարածքային կորուստներ ունեցան: Նախ՝ համարյա ողջ Հունգարիան և Տրանսիլվանիան անցան ավստրիացիներին, իսկ Պոդոլիային և Արևմտյան Ուկրաինային տիրացան լեհերը: Վենետիկցիներին բաժին ընկան Մորեան, Իլլիրիայի և Դալմաթիայի զգալի մասը: Կառլովիցի հաշտության պայմանագիրը հանդիսացավ օսմանցիների՝ Եվրոպայից նահանջելու սկիզբը ու, փաստորեն, վերջ տվեց եվրոպական աշխարհամասում իր կամքը թելադրողի նրա դերին: Տեր դառնալով Ուկրաինայի մեծագույն մասին՝ Ռուսական կայսրությունը դառնում է Օսմանյան կայսրության անմիջական հարևանը Բեսարաբիայում, այնուհետև՝ թուրքերի վասալ ու դաշնակից Ղրիմի խանության սահմանների ողջ երկայնքով:

ԳԼՈՒԽ ՉՈՐԲՈՐԴ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐՈՒՄ

1. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

Կառլովիցի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո հաջորդաբար իշխանության գլուխ եկած մեծ վեզիրները՝ Ամջազադե Հուսեին փաշան, Ռումի Մեհմեդ փաշան, Չորլուլու Ալի փաշան, այնուհետև Դամադ Իբրահիմ փաշան, ձգտում էին հնարավորինս խուսափելու արտաքին աշխարհի հետ ռազմական նոր բախումներից և կայսրությունը փրկելու նպատակով որոշ բարեփոխումներ անցկացնելու երկրի ներսում, հատկապես պետական կառուցվածքում, սակայն դրանք որևէ դրական արդյունք չէին տալիս: XVIII դարի սկզբում Օսմանյան կայսրության տարբեր մասերում բռնկվում էին զինված ապստամբություններ, և թուրքերին մեծ դժվարությամբ էր հաջողվում ճնշել դրանք: Չհաջողվեց խուսափել նաև նոր պատերազմներից:

Ռուս–թուրքական պատերազմի համար առիթ էր ծառայել հետևյալը. 1709 թ. հունիսի 27–ին Պոլտավայի ճակատամարտում ծանր պարտություն կրելով՝ շվեդական թագավոր Կարլ ԺԲ–ը դավաճան Մազեպայի հետ փախուստի էր դիմել Թուրքիա ու դրդել սուլթան Ահմեդ Գ–ին պատերազմ հայտարարելու ռուսներին: Ահմեդ Գ–ին Ռուսաստանի դեմ պատերազմի էին հրահրում նաև Անգլիան և Ֆրանսիան՝ Ռուսաստանին մեղադրելով թուրքերի կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդներին հովանավորելու մեջ: Եվ որպես «ապացույց»՝ հիշյալ պետությունների դեսպանները սուլթանին ներկայացրին Ամստերդամում հատված մի մեդալիոն, որի վրա կար լատիներեն հետևյալ արձանագրությունը. «Petrus primus, Russo–graecorum Imperator», այսինքն՝ «Պետրոս Առաջին, ռուս–հունական կայսր»:

Ռուսաստանն, այդ տարիներին զբաղված լինելով Հյուսիսային պատերազմով, թեև խուսափում էր Օսմանյան կայսրության հետ ընդհարվելուց, սակայն 1710 թ. նոյեմբերին օսմանյան Թուրքիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Դեռ մինչև պատերազմի սկիզբը Պետրոս Ա–ը գաղտնի համաձայնագիր էր ստորագրել Բալկանյան մի շարք երկրների ղեկավարների հետ և մեծ հույսեր էր կապում նրանց աջակցության հետ:

Պատերազմը անհաջող ընթացք ունեցավ Ռուսաստանի համար: Օսմանյան բանակը թվական առումով բացարձակ առավելություն ուներ: Այդ է պատճառը, որ Մոլդավիայի և Վալախիայի բոյարները, ահաբեկված թուրքական բանակի մեծությունից, հրաժարվեցին ռուսների հետ համատեղ ռազմական գործողություններ ծավալելուց թուրքերի դեմ: 1711 թ. հուլիսին Պրուտ գետի մոտ ռուսական զորքը պաշարման ենթարկվեց թուրք–թաթարական ահռելի բանակի կողմից:

1711 թ. հուլիսի 23–ին Պրուտ գետի ափին գտնվող ռազմական ճամբարում օսմանյան պետության և Ռուսաստանի միջև կնքվեց հաշտության պայմանագիր վերջինիս համար բավականին ծանր պայմաններով. Թուրքիային վերադարձվեց Ազովը, և Ռուսաստանը զրկվեց Սև ծով ելք ունենալու իրավունքից:

Հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Ռուսաստանը չէր շտապում իրագործել Պրուտյան հաշտության ստորացուցիչ պայմանները: Այս հանգամանքներում 1712 թ. դեկտեմբերին սուլթան Ահմեդ Գ–ը նորից պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, սակայն այս անգամ գործը չհասավ ռազմական ընդհարման, և 1713 թ. հունիսի 24–ին Ադրիանապոլսում կնքվեց հաշտության նոր պայմանագիր, որով Ռուսաստանը հանձն առավ անհապաղ իրականացնել Պրուտյան հաշտության պայմանագրի բոլոր կետերը:

Ոգևորված գլխապտույտ այս հաջողություններով՝ Օսմանյան կայսրությունը Կաղոովիցի հաշտության պայմանագրով Եվրոպայում իր կորցրած տարածքները վերադարձնելու նպատակով 1717 թ. նոր պատերազմ սանձազերծեց եվրոպական կոալիցիայի երկրների դեմ:

Եվ այս պատերազմը թուրքերի համար հաջող ստացվեց: Դրան մեծապես նպաստեց և այն հանգամանքը, որ Մորեայում ու հարակից մի շարք շրջաններում հաստատելով իրենց տիրապետությունը՝ վենետիկցիները տեղական, մեծ մասամբ հունադավան եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ վարում էին խտրական ու հալածանքի քաղաքականություն և նրանց պարտադրում դառնալ կաթոլիկադավան:

Այդ պատերազմում, թեև ավստրիացիները զորավար Եվգենիոս Սավոյացու գլխավորությամբ մի շարք պարտությունների մատնեցին թուրքերին ու Բելգրադի հետ գրավեցին Սերբիայի մի մասը, սակայն թուրք–վենետիկյան ռազմաճակատում վենետիկցիները կրեցին մի շարք լուրջ անհաջողություններ և ի վերջո՝ 1718 թ. հուլիսի 21–ին, սերբական փոքրիկ քաղաք Պոժեարացում (Պասորովիչ) կնքվեց հաշտության պայմանագիր, ըստ որի՝ Ավստրիան ստացավ Տեմեշվարը, արևմտյան Վալախիան և Հյուսիսային Սերբիան՝ Բելգրադի հետ, իսկ Վենետիկը կորցրեց Մորեան ու հարակից մի շարք շրջաններ:

Պոժեարացի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո թուրքերը իրենց հայացքը սևեռեցին դեպի Արևելք՝ Իրան, որտեղ թուլամորթ և հարեմական կյանք վարող շահ Հուսեինի ժամանակ երկիրը կատարյալ անկում էր ապրում ու գտնվում էր հոգեվարքի մեջ: Օգտվելով առիթից՝ աֆղանական էմիր Միր Մահմուդը ներխուժեց Իրան և պաշարեց մայրաքաղաք Սպահանը:

Օսմանյան կայսրությունը ուշիուշով հետևում էր Իրանում ծավալվող իրադարձություններին: Էրզրումի կառավարիչ Սիլահդար Իբրահիմ փաշան տևական զեկուցագրեր էր ուղարկում Իրանի անցուդարձերի մասին ու հորդորում օսմանյան պետությանը պատերազմ սկսել Իրանի դեմ՝ նախօրոք դաշինք կնքելով Դաղստանի Հաջի Դավուդ և Սուրխայ խաների հետ: Եվ Օսմանյան կայսրությունը պատերազմ սկսեց Արևելքում՝ Իրանը զավթելու նպատակով:

Պատրվակ բռնելով ռուս վաճառականների՝ Շամախիում կողոպտվելու փաստը՝ Ռուսաստանը նվաճեց մերձկասպյան առափնյա շրջանները՝ Դերբենդը, Բաքուն, և Հյուսիսային Իրանի նահանգներ հանդիսացող Գիլանը, Մազենդարանը և Աստրաբադը:

Այս նոր բարդ իրադրության պայմաններում միանգամայն հնարավոր էր ռուս–թուրքական նոր ընդհարումը, իսկ շվեդական պատերազմից նոր դուրս եկած Ռուսաստանը խուսափում էր Օսմանյան կայսրության հետ բախումից: Ուստի երկու պետությունների միջև ծավալվեցին երկարատև բանակցություններ, և ի վերջո Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպան պարոն դե Բոննակի միջնորդությամբ 1724 թ. հունիսի 24–ին (2 շևալ 1136 թ.) կնքվեց համաձայնագիր, ըստ որի՝ Օսմանյան կայսրությունը ճանաչում էր մերձկասպյան շրջանների միացումը Ռուսաստանին, հրաժարվում էր ողջ Իրանը նվաճելուց և պարտավորվում էր անհրաժեշտության դեպքում համատեղ հանդես գալ Իրանը զավթած աֆղանների դեմ: Իր հերթին, Պետրոս Ա–ը հարկադրված եղավ ճանաչել թուրքերի կողմից Արևելյան Հայաստանի, Վրաստանի և Իրանի հյուսիսարևմտյան շրջանների զավթումը:

Դեռևս 1723 թ. ամռանը օսմանյան բանակը երեք ուղղություններով հարձակվել էր Այսրկովկասի և Իրանի վրա, այն է՝ դեպի Վրաստան, Արևելյան Հայաստան ու Շիրվան, իսկ Բաղդադի վրայով՝ Հյուսիսարևմտյան Իրան:

1724 թ. օսմանյան զորաբանակները Քյոփրյուլյու Արդուլլահ փաշայի գլխավորությամբ Կարսի վրայով շարժվեցին դեպի Երևան: Եղվարդի մոտ տեղի ունեցած ճակատամարտում նրանք հաղթանակ տարան, ու թվում էր, թե հեշտությամբ կգրավեն Երևանը: Սակայն Կարբի գյուղի մոտ նրանք հանդիպեցին տեղի հայերի համառ դիմադրությանը, որը զարմացրել էր Արդուլլահ փաշային: Կարբին գրավելուց հետո նա հարցրել էր բնակիչներին (համաձայն դեպքերին ականատես Աբրահամ Երևանցու վկայության). «Ջի՞ կայ ձեր զինուորիլ վասն երկրիս, որոց տերութիւնն ոչ է ձեր»: Ըստ երևույթին, Արդուլլահ փաշան չէր հասկացել, որ հայերը պաշտպանում են ոչ թե Իրանը, այլ սեփական հայրենիքը: Հայերը, նույն Աբրահամ Երևանցու վկայությամբ, օսմանյան բանակին հերոսական դիմադրություն ցույց տվեցին նաև Երևանում:

Երևանն ու Նախիջևանը գրավելուց հետո օսմանյան բանակին հաջողվում է իր գերիշխանությանը ենթարկել նաև Հյուսիսարևմտյան Իրանի զգալի մասը, ներառյալ Թավրիզը:

1725 թ. Իրանում իշխանությունը զավթած Միր Աշրաֆը 1727 թ. հոկտեմբերի 23–ին Համադանում օսմանյան ներկայացուցիչների հետ կնքում է Իրանի համար խիստ ստորացուցիչ մի հաշտության պայմանագիր, համաձայն որի՝ ա) շահն ընդունում էր օսմանյան սուլթան Ահմեդ Գ–ին որպես մուսուլման–սուննիների հոգևոր պետ՝ խալիֆա, բ) շահը ճանաչում էր սուլթանից իր վասալությունը, և գ) բացի 1724 թ. հունիսի 24–ին Կ. Պոլսում կնքված ռուս–թուրքական պայմանագրով նախատեսված տարածքից՝ Աշրաֆը օսմանցիներին էր զիջում Իրանի 2/5 մասը:

Համադանի հաշտության պայմանագրի ստորագրումը ցասում ու վրդովմունք էր առաջացրել իրանական ժողովրդի մոտ: Օսմանցիների և նրանց հետ համագործակցող աֆղանական զավթիչների դեմ նրանք շուտով ապստամբություն բարձրացրին: Ապստամբ զորքերի գլուխ կանգնեց եռանդուն ու հմուտ ռազմական առաջնորդ Թահմասպկուլի (Նադիր) խանը, որը, երեք տարվա համառ կռիվներից հետո ջարդելով աֆղանական զորամասերը, տիրացավ Իրանին:

Իրանի դեմ պատերազմը Օսմանյան կայսրության տարբեր կենտրոններում և, նախ և առաջ մայրաքաղաքում, առաջ էր բերել ժողովրդի դժգոհությունը, իսկ երբ Պոլսում լուր ստացվեց այն մասին, որ Թավրիզի մոտ թուրքերը կրել են ծանր պարտություն, սկսվեց մի հզոր ապստամբություն, որը ղեկավարում էր ծագումով ալբանացի ենիչերի Պատրոնա Խալիլը: Այդ ապստամբության հիմքում ընկած էին սոցիալական սուր հակասություններ: Այդ մասին են վկայում նաև դեպքերին ականատես եվրոպացի հեղինակները: Դամադ Իբրահիմ փաշայի երկարատև իշխանության տարիները Օսմանյան կայսրության պատմության մեջ բնութագրվում են որպես «կակաչների դարաշրջան» (Lale devri), երբ մայրաքաղաքը և հատկապես սուլթանական պալատն ու շրջակայքը գեղեցկացնելու նպատակով կատարվում էին արտակարգ ծախսեր, միաժամանակ շեշտակի ավելացվում էին հարկերն ու տուրքերը: Դրան էլ ավելանում էին նաև օսմանյան պետության կողմից բնակչության նկատմամբ կիրառվող բազմապիսի ու բազմաբնույթ բռնությունները, կենսականորեն անհրաժեշտ ամեն տեսակի ապրանքների գների աճը և այլն:

Պատրոնա Խալիլի ապստամբության հետևանքով մեծ վեզիր, ծագումով հայազգի Նեշեհիրլի Դամադ Իբրահիմը սպանվեց, իսկ սուլթան Ահմեդ Գ–ը ստիպված եղավ գահից հրաժարվել հօգուտ իր եղբորորդի Մահմուդի:

Պատրոնա Խալիլի ապստամբության շնորհիվ գահին տիրացած Մահմուդ Ա–ը շատ կարճ ժամանակ անց հաշվեհարդար տեսավ ապստամբության բոլոր ղեկավարների, ի թիվս որոնց, նաև Պատրոնա Խալիլի հետ:

Մահմուդ Ա–ի անհետաձգելի գործն է լինում հաշտություն կնքել Իրանի հետ: Սկսված բանակցությունները, սակայն, ավարտվում են առանց արդյունքի, և ռազմական գործողությունները 1733 թ. ամռանը երկու պետությունների միջև շարունակվում են Բաղդադի շուրջը: Սկզբում հաջողությունը օսմանցիների կողմն էր. օսմանյան բանակի սերասքյար Թոփալ Օսմանը նույն տարվա հուլիսին Բաղդադի մատույցներում պարտության էր մատնել իրանական բանակին, սակայն նոյեմբերին Քիրքուկի մոտ տեղի ունեցած երկրորդ ճակատամարտում օսմանյան բանակը ծանր պարտություն է կրում, և ճակատամարտում Թոփալ Օսմանը սպանվում է: Իրանական ճակատի նոր սերասքյար է նշանակվում Աբդուլլահ Բյոփրյուլյուն: Թահմազկուլի խանը Իրաքից ռազմական գործողությունները տեղափոխում է Հայաստան ու Վրաստան: Անցնելով Արաքս գետը՝ նա սրընթաց շարժվում է դեպի Երևան և պաշարում այն:

1735 թ. հունիսի 8–ին Եղվարդի մոտ արևելյան երկու պետությունների զորաբանակների միջև տեղի է ունենում մեծ ու արյունալի ճակատամարտ, որը վառ գույներով մանրամասն նկարագրված է դեպքերի ականատես Աբրահամ Կրետացի կաթողիկոսի կողմից: Ճակատամարտն ավարտվում է օսմանցիների պարտությամբ:

Այս հաղթանակի անմիջական հետևանքը համարյա ողջ Այսրկովկասի զավթումն էր Իրանի կողմից:

1736 թ. փետրվարին Մուղանի դաշտում Իրանի շահնշահ հռչակված Թահմազկուլին, որը ստացավ Նադիր շահ անունը, ասպատակեց նաև Շիրվանը և ամենուր հաղթանակներ տարավ թուրքերի դեմ: Այս պայմաններում օսմանյան կողմը խնդրեց Նադիր շահին դադարեցնել ասպատակությունները՝ խոստանալով կատարել նրա բոլոր պահանջները:

XVIII դարի 30–ական թվականների սկզբներին Իրանում կատարված փոփոխությունները Ռուսաստանին հարկադրել էին շտկումներ մտցնել այդ երկրի նկատմամբ նախկինում որդեգրած իր քաղաքականության մեջ: Դեռևս 1732 թ. հունվարի 21–ին Ռեշտում կնքված պայմանագրով Աննա Իոանովնայի կառավարությունը Իրանին էր հանձնել Գիլանը, Մազենդարանը և Աստրաբադը: 1735 թ. մարտի 10–ին Գանձակում Ռուսաստանի և Իրանի միջև կնքվում է նոր համաձայնագիր, ըստ որի՝ Ռուսաստանը Իրանին է հանձնում իր գերիշխանության տակ գտնվող մերձկասպյան առափնյա շրջանները՝ պայմանով, որ Իրանը Օսմանյան կայսրության հետ անջատ հաշտության պայմանագիր չի ստորագրի: Նադիր շահը, սակայն, 1736 թ. սեպտեմբերին Էրզրումում օսմանյան պետության հետ կնքում է հաշտության պայմանագիր, երբ Ռուսաստանն արդեն նոր պատերազմի մեջ էր այդ երկրի հետ:

Թեև դեռևս 1720 թ. նոյեմբերի 16–ին Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև կնքվել էր այսպես կոչված՝ «Հավերժական» հաշտության պայմանագիր, այսուհանդերձ այդ երկու պետությունների միջև ոչ բարեկամական լարված հարաբերությունները շարունակվում էին: Թուրքերի դաշնակիցներ Ղրիմի խաների հորդաները առաջվա նման ասպատակություններ էին կատարում Ռուսաստանի հարավային տարածքներում: Անգլիան և Ֆրանսիան, ինչպես միշտ, հրահրում էին օսմանյան սուլթանին նոր պատերազմ սանձազերծել Ռուսաստանի դեմ և թույլ չտալ այդ երկրին ելք ունենալ դեպի Սև ծով: Եվ այս հողի վրա 1735 թ. բռնկվեց հերթական ռուս–թուրքական պատերազմը, որը տևեց մինչև 1739 թվականը: 1736 թ. ապրիլին ռուսական զորքերը ֆելդմարշալ Մյուննիխի գլխավորությամբ ներխուժեցին Ղրիմի թերակղզի, սկզբում գրավեցին Բախչիսարայը, այնուհետև Ազովը:

1737 թ. հունվարին ավստրիացիները՝ որպես Ռուսաստանի դաշնակից պետություն, մտնում են պատերազմի մեջ ընդդեմ թուրքերի: Նրանք հարձակում են ձեռնարկում Բոսնիայում և Բուլղարիայում, սակայն հաջողության չեն հասնում:

1739 թ.՝ ռուս–թուրքական պատերազմի վերջին տարում, չնայած դաշնակից ավստրիացիների որոշակի անհաջողություններին, ֆելդմարշալ Մյուննիխը վստահ էր, որ ռուսական զենքը և Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյաների զինված ապստամբությունները թիկունքում՝ կործանելու են այդ երկիրը, սակայն ռուսական կողմի փայփայած այդ երազանքներին պատմական տվյալ պահին վիճակված չէր իրականանալ:

1739 թ. սեպտեմբերի 18–ին օսմանյան պետությունում ֆրանսիական դեսպան Մարքիզ դե Վիլնյովի միջնորդությամբ հաշտության պայմանագիր ստորագրվեց Ռուսաստանի և օսմանյան պետության միջև, որով, փաստորեն, անհետևանք մնացին Ղրիմում և Բալկաններում ռուսական զենքի փայլուն հաղթանակները, և Ռուսաստանին չհաջողվեց դառնալ սևծովյան պետություն, որին նա մտաուղղված ձևով հետամուտ էր: Իսկ մինչ այդ Ավստրիան 1739 թ. սեպտեմբերի 1–ին Բելգրադի մոտ թուրքերի հետ կնքել էր անջատ հաշտության պայմանագիր, համաձայն որի՝ Ավստրիան Օսմանյան կայսրությանն էր վերադարձնում վերջին ավստրո–թուրքական պատերազմներում ձեռք բերած տարածքները, ներառյալ՝ Բանատը, Տեմեշվարը, Սերբիայի և Բոսնիայի հյուսիսային մասերը՝ Բելգրադի հետ միասին և, այսպես կոչված, Փոքր Վալախիան: Յոզեֆ Համմերի գնահատմամբ՝ Ավստրիայի կողմից ստորագրված բելգրադյան հաշտության պայմանագիրը «...ունեցավ այն նույն նշանակությունը, ինչպիսին ունեցել էր Պրուտյան 1711 թ. հաշտությունը Ռուսաստանի համար»:

Օսմանյան կայսրությունը հմտորեն օգտագործում էր եվրոպական պետությունների միջև գոյություն ունեցող բազմապիսի հակասությունները: Բուրբոնների և Հաբսբուրգների միջև գոյություն ունեցող թշնամանքը Ֆրանսիային մղում էր դառնալու Օսմանյան կայսրության ռազմավարական դաշնակիցը: Հակասությունների հաջորդ կծիկը առաջացել էր Բալթիկ ծովի տարածաշրջանում մի կողմից՝ Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Շվեդիայի, Պրուսիայի և Անգլիայի միջև:

XVIII դարի 40–ական թվականների սկզբներին, ոգևորված 1739 թ. դեպի Հնդկաստան կատարած հաջող արշավանքից, Նադիր շահը, խախտելով 1736 թ. Էրզրումում թուրքերի հետ կնքված հաշտության պայմանագիրը, Օսմանյան կայսրության դեմ ծավալեց ռազմական գործողություններ, 1743 թ. սեպտեմբերին պաշարեց իրաքյան Մոսուլը և մեծ բանակով ասպատակության ենթարկեց Բարձր Հայքի գավառները: Արևելյան Հայաստանում մի շարք ճակատամարտերում տարած հաղթանակներից հետո Նադիր շահը օսմանյան զորքերի սերասքյար Էլիաջ Ահմեդ փաշային առաջարկում է հաշտություն՝ պահանջելով Իրանին հանձնել Վանը, Քրդստանը, Բաղդադը, Բասրան ու շիաների սրբավայրեր հանդիսացող Նաջաֆն ու Քարբալան: Սակայն բանակցությունների ընթացքում Նադիր շահը ստիպված է լինում չափավորել իր պահանջները, և 1746 թ. սեպտեմբերի 4–ին երկու պետությունների միջև կնքվում է հաշտության նոր պայմանագիր, համաձայն որի՝ վերականգնվում են 1639 թ. Քասրե Շիրինի պայմանագրի բոլոր կետերը, այսինքն՝ Արևմտյան Հայաստանն ու Արևմտյան Վրաստանը անցնում են Օսմանյան կայսրությանը, իսկ Արևելյան Վրաստանը, Արևելյան Հայաստանը և շիրվանշահերի երկիրը մնում են Իրանի տիրապետության ներքո:

XVIII դարի 40–60–ական թվականներին Փոքր Ասիայի արևելյան նահանգներում և Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում տարբեր ըմբոստ ուժերի հակակառավարական ելույթներ՝ հայ բնակչությանը թողնելով անելանելի կացության

մեջ: Հատկապես անտանելի էին դարձել լևենդների[38] խժդժությունները, որոնց մասին ընդարձակ տեղեկություններ կան հայկական աղբյուրներում:

Տեղի էին ունենում քուրդ բեգերի ընդհարումներ ոչ միայն կառավարական զորքերի հետ, այլև տարբեր ցեղային խմբավորումների միջև: Ապստամբում էին քոչվոր թուրքմենական ցեղերը՝ թերեքեմեները:

2. ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XVIII դարի 30–50–ական թվականներին Թուրքիան գնալով ավելի ու ավելի ընդգծված ձևով սկսեց կախման մեջ ընկնել հատկապես Անգլիայից ու Ֆրանսիայից: Այդ ժամանակաշրջանում և ի մասնավորի՝ XVIII դարի երկրորդ կեսին, Ռուսաստանը սկսեց խոշոր դեր ունենալ միջազգային կյանքում: Ռուսական արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրներն էին ապահովել երկրի անվտանգությունը Ռուսաստանի հարավում, դադարեցնել ու իսպառ վերացնել թաթարական արշավանքները Ղրիմից և դուրս գալ ու հաստատվել Սև ծովում: Այդ բոլորը առաջացնում էր Անգլիայի և Ֆրանսիայի կատաղի դիմադրությունն ու թշնամանքը Ռուսաստանի նկատմամբ: Եվ այս պայմաններում Օսմանյան կայսրությունը Անգլիային և Ֆրանսիային դիտում էր որպես բնական դաշնակիցներ ու հովանավորողներ: Չափազանցություն չէր լինի ընդգծել, որ արդեն Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականության կարևորագույն հարցերը լուծվում էին ոչ թե մայրաքաղաք Կ. Պոլսում, այլ Փարիզում և Լոնդոնում: Եվ բոլորովին էլ պատահական չէ, որ հենց այս ժամանակ Օսմանյան կայսրությունը ներքաշվեց եվրոպական տարբեր խմբավորումների քաղաքական դավադրությունների, խարդավանքների և նույնիսկ ռազմական ընդհարումների մեջ: Այսպես՝ Ֆրանսիայի ճնշման ներքո Օսմանյան կայսրությունը ներգրավվեց Լեհաստանում գահի թեկնածուների խնդրին, Ավստրիական ժառանգության հարցում՝ այդ պայքարում հետևելով Ֆրանսիային, որը թշնամի էր Ավստրիային և պաշտպանում էր Պրուսիային: Եվ այդ բոլորը, ինչ խոսք, թուլացնում էր Օսմանյան կայսրության տնտեսական վիճակն ու սրում ներքաղաքական կյանքը:

Մահմուդ Ա–ի (1730–1754 թթ.) իշխանության վերջին տարիները, ինչպես և Օսման Գ–ի (1754–1757 թթ.) գահակալման և Մուստաֆա Գ–ի (1757–1774 թթ.) սուլթանության առաջին տարիները, այսինքն՝ 1746–1768 թվականները, Օսմանյան կայսրության համար խաղաղ տարիներ էին, եթե նկատի չունենանք վերը նշված եվրոպական գործերին այդ երկրի մասնակցությունը:

Նկատի ունենալով օրըստօրե աճող ռուսական վտանգի առկայությունը՝ մեծ վեզիրներ Կոջա Ռաջիբ փաշան (1757–1763 թթ.) և Սիլահդար Մահիր Համզա փաշան անհաջող փորձեր կատարեցին վերակառուցելու օսմանյան բանակը Եվրոպայի օրինակով:

[38] Ենթադրվում է, որ լևենդ բառը ծագել է իտալերեն levantius, այսինքն՝ «արևելցի» և կամ ֆրանսերեն levée «զինվորագրում» բառից (տես "Islâm ansiklopedisi", c. VII, s. 46–48): Այսուհանդերձ, լևենդները թուրքական բանակի դասալիքներն էին, որոնք, ցրվելով Փոքր Ասիայի տարբեր մասերը, չարիք ու պատուհաս էին դառնում ժողովրդի գլխին:

1768 թ. բռնկվեց հերթական պատերազմը Օսմանյան կայսրության և Ռուսաստանի միջև: Ռուսաստանը, որ համառորեն ձգտում էր ազատ ելք ունենալու Սև ծով, սկսեց ավելի ու ավելի ընդգծված ձևով հայտարարել օսմանահպատակ քրիստոնյա ժողովուրդներին պաշտպանելու և հովանավորելու իր մտադրության մասին, որոնք օգնության հայցով անվերջ դիմում էին ռուսական արքունիք:

Այս նոր պատերազմի ծագման անմիջական առիթը Լեհաստանում ծավալված իրադարձություններն էին: Ռուսաստանը լեհական գահին էր բազմեցրել իր թեկնածուին, որը և առաջացրել էր ռուսական կողմնորոշման հակառակորդների կատաղի զինված դիմադրությունը: 1768 թ. Լեհաստանը կանգնած էր քաղաքացիական պատերազմի փաստի առաջ: Ռուսաստանը ռազմական գործողություններ ծավալեց՝ պաշտպանելով ռուսական կողմնորոշում ունեցողներին: Այդ ընդհարումների ժամանակ մի անգամ հետապնդելով հակառակորդներին՝ ռուսները ակամա մուտք գործեցին այդ ժամանակ օսմանյան տիրապետության ներքո գտնվող Բալթա (Պերվոմայսկ), ինչը օսմանյան կողմի համար առիթ ծառայեց պատերազմ հայտարարելու Ռուսաստանին:

Օգտագործելով այս առիթը՝ սուլթան Մուստաֆա Գ–ը վերջնագրի ձևով պահանջեց Ռուսաստանից (հոկտեմբեր, 1768 թ.) անհապաղ ռուսական զորքերը դուրս բերել Լեհաստանից, որը մերժվեց: Պատերազմի սկիզբը եկավ հաստատելու մեծ վեզիր Ռաջիբ փաշայի և նրա հաջորդների՝ սուլթանին արված այն նախազգուշացումները, որ օսմանյան բանակը պատրաստ չէ պատերազմի և վատ է սպառազինված: Մուստաֆա Գ–ը, սակայն, անտեսել էր այդ բոլորը:

1769 թ. կանգնեցնելով Ղրիմի թաթարական բանակի հարձակումը՝ ռուսական առաջապահ զորամասերը մտան Ղրիմ ու գրավեցին Ազովը: Դանուբյան ռազմաճակատում ռուսները պարտության մատնեցին օսմանյան բանակին ու գրավեցին Մոլդավիայի կենտրոնը՝ Յաշը (Յասսի), Կովկասում Ռուսաստանին միացվեց Կաբարդան:

1770 թ. գարնանը ռուսական նավատորմը ծովակալ Գ. Ա. Սպիրիդովի գլխավորությամբ ափհանում կատարեց Մորեայում, որը ոգեշնչեց հույներին, և նրանք զինված ապստամբություն բարձրացրին: Օսմանյան նավատորմը պարտություն կրելով նահանջեց Չեշմեի խորշը, որտեղ ամբողջովին ոչնչացվեց ռուսական նավատորմի կողմից, և Դարդանելի նեղուցը ենթարկվեց շրջափակման:

1770–1771 թվականներին տեղի ունեցած ճակատամարտերում թուրք–թաթարական բանակները մի շարք նոր պարտություններ կրեցին, որի հետևանքով թուրքական կողմի առաջարկների հիման վրա ընթացան բանակցություններ, սկզբում՝ Ֆոկշանում, այնուհետև՝ 1773 նոյեմբերին, Բուխարեստում, որոնք, սակայն, որևէ շոշափելի արդյունքներ չտվեցին: Օսմանյան կողմը մերժում էր ռուսների պահանջը՝ ճանաչել Ղրիմի անկախությունը, իրենց հանձնել Կերչը, Ենիկալեն, Ազովը, ինչպես նաև մերձսևծովյան Դնեպրի, Բուգի և Դնեստրի արանքում գտնվող տարածքները: Նկատի ունենալով ռազմական գործողությունների ելքը՝ Ղրիմի խանությունը դեռևս 1772 թ. նոյեմբերի 1–ին ռուսական կողմի հետ կնքել էր անջատ հաշտության

պայմանագիր՝ «Բարեկամության, դաշնակցության և փոխադարձ վստահության» մասին, որով Ղրիմը Օսմանյան կայսրությունից դառնում էր անկախ, իսկ Ռուսաստանին էին անցնում Կերչն ու Ենիկալեն:

1773 թ. ապրիլին ռազմական գործողությունները Դանուբյան ռազմաճակատում վերսկսվեցին, և ռուսական զորամասերը, մի շարք նոր հաղթանակներ տանելով թշնամու նկատմամբ, մտան Բուլղարիա: Հատկապես հիշարժան էր Շումենում ֆելդմարշալ Ռումյանցևի փայլուն հաղթանակը թուրքերի նկատմամբ, որը և ստիպեց նրանց նորից խնդրել ռուսներին վերսկսել բանակցությունները:

1774 թ. հուլիսի 21–ին ֆելդմարշալ Ռումյանցևի ճամբարում՝ Քյուչյուկ Կայնարջիում, ստորագրվեց 28 հոդվածներից բաղկացած հաշտության պայմանագիր, որոնց գլխավոր կետերն էին. ա) երկու կողմերը համաձայնվում էին ճանաչել Ղրիմի անկախությունը, բ) Մերձսևծովյան Դնեպրի ու Դնեստրի արանքում գտնվող տարածքները անցնում էին ռուսներին: Օսմանյան պետությունը ռուսներին էր հանձնում նաև Մեծ ու Փոքր Կաբարդաները և Ազովը, գ) ռուսական առևտրական նավերը կարող էին ազատ նավարկություն կատարել Սևծովյան ողջ ավազանում և օգտվել նեղուցներից, դ) Ռուսաստանը Օսմանյան կայսրությունից կորզում էր նույնպիսի կապիտուլյացիոն իրավունքներ, ինչպիսիք ունեին եվրոպական մի շարք պետություններ: Եվ վերջապես, Ռուսաստանին իրավունք էր վերապահվում Օսմանյան կայսրության ցանկացած անկյունում բացելու հյուպատոսություններ: Այդ բայլով Ռուսաստանն իր առաջ խնդիր էր դրել անմիջական շփման մեջ մտնելու օսմանցիների կողմից ստրկացված քրիստոնյա ժողովուրդների ներկայացուցիչների հետ և նպաստելու թուրքական անտանելի լծից նրանց ազատագրմանը:

Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագիրը շրջադարձային կետ էր ոչ միայն սուլթանական, այլև համաշխարհային պատմության մեջ: Դա ցույց տվեց, որ Ռուսաստանն ընդունակ է միայնակ Օսմանյան կայսրությանը հասցնելու խորտակիչ հարվածներ ու թելադրելու իր կամքը: Երբ մի անգամ Օսմանյան կայսրության պատմության մեծագույն գիտակ Յոզեֆ ֆոն Համմերին հարցրել են, թե ինչու է նա կայսրության պատմությունը ընդհատել Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագրի ստորագրմամբ, նա պատասխանել է հետևյալը. «Սկսած Կայնարջիի հաշտությունից մինչև Ադրիանապոլսինը՝ Ռուսաստանը Բարձրագույն Դռան դիվանագիտական բանավարությունների թելադրողն էր, հաշտության կամ պատերազմի դատավորը, կայսրության կարևորագույն գործերի ոգին: Ֆրանսիան և Անգլիան, եթե բացառվեն եգիպտական պատերազմն ու անգլիական ռազմական նավատորմի կողմից Դարդանելի անցումը, Բարձրագույն Դռան քաղաքականությանը եռանդուն միջամտություն են ունեցել միայն երբեմն...: Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ միայն թուրքական ժամանակագրությունները և ռուսական արխիվները կարող են անհրաժեշտ նյութեր մատակարարել թուրքական կայսրության պատմությունը գրելու համար»: Եվ քանի որ ինքը չի տիրապետում ռուսերենին, ուստիև այստեղ վայր է դրել գրիչը:

Ռուս-թուրքական պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության եվրոպական և ասիական նահանգների մեծ մասում լարված իրավիճակ էր ստեղծվել: Օգտվելով ծովակալ Օռլովի գլխավորությամբ ռուսական մի փոքրիկ ռազմական նավատորմի նավաստիների Միջերկրական ծովի սիրիական ափեր դուրս գալուց՝ Սիրիայի արաբ ժողովուրդը զինված ապստամբություն էր բարձրացրել ու հռչակել իր երկրի անկախությունը: Ապստամբությունը ճնշելու և Սիրիան նորից օսմանյան պետությանը ենթարկելու՝ օսմանյան բանակի բոլոր փորձերը ավարտվել էին ապարդյուն: Միայն Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո Ալ Ջազարի գլխավորությամբ օսմանյան պատժիչ մի մեծ բանակի ի վերջո հաջողվում է արյան մեջ խեղդել սիրիական ժողովրդի ապստամբությունը, և Ալ Ջազարը վաստակում է սիրիական արաբ ժողովրդի «Դահիճ» մականունը:

Անհանգիստ էր վիճակն Արևմտյան Հայաստանում, և ինչպես վկայում են հայկական աղբյուրները՝ «...խառնակում էր ամենայն տեղիս»: Այդ խառնակումը հետևանք էր լևենդ ավազակախմբերի ասպատակությունների և քուրդ ավատատերերի հաճախակի միջավատատիրական ընդհարումների ու հակակառավարական ելույթների:

Պատերազմը դատարկեց պետական գանձարանը ու նյութական և բարոյական աղետի հասցրեց երկիրը. կայսրությունը ոչ միայն տարածքային կորուստներ ունեցավ, այլև պատճառ հանդիսացավ այն բանի, որ երկրի տարբեր մասերում ծայր առան ապստամբություններ, և Անատոլիան ու Ռումելին վերածվեցին ավերակի:

Քաղաքական անդորր չհաստատվեց երկրի ներսում նաև պատերազմի ավարտից հետո: 1785 թ. Հայաստանի քրդաբնակ շրջաններում իրեն «Մահդի» հորջորջած մեկի ղեկավարությամբ բռնկվեց ապստամբություն, ով իր առաջ խնդիր էր դրել զավթելու ու իրեն ենթարկելու ողջ Փոքր Ասիան: Ընդունելով Մանսուր («Հաղթական») անունը՝ նա արշավանք է ձեռնարկում Սեբաստիայի, Թոխաթի և Զմյուռնիայի վրա: Օսմանյան պետությանը մեծ ջանքերի գնով հաջողվում է ճնշել ապստամբությունը:

Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագիրը վավերացվել է Եկատերինա Բ կայսրուհու կողմից 1774 թ. օգոստոսի 22-ին, իսկ սուլթան Համիդ Ա-ը ոչ միայն չէր շտապում վավերացնել պայմանագիրը, այլև փորձում էր վերանայել հատկապես Ղրիմի խանության անկախության հարցը: Սուլթանն առավելապես հույսը դրել էր Անգլիայի, Ֆրանսիայի և Պրուսիայի աջակցության վրա:

1776 թ. ռուս-օսմանյան բանակները ընդհարվեցին Պերեկոպի մատույցներում: 1777 թ. թուրքերի հրահրմամբ Ղրիմի թաթարները զինված ապստամբություն բարձրացրին: Ռուսաստանը համառ գտնվեց ու չզիջեց իր դիրքերը: Զինված ապստամբությունը ձախողվեց: Շուտով արտաքին քաղաքական հանգամանքները անբարենպաստ գտնվեցին օսմանյան կողմի համար: Ֆրանսիան Հյուսիսային Ամերիկայի անկախության պատերազմի շրջանում պաշտպանում էր անգլիական տիրապետության դեմ ապստամբած ամերիկացիներին: Պարսից ծոցում ռազմավարական մեծ նշանակություն ունեցող Բասրա նավահանգստին տիրանալու նպատակով Իրանի՝ 1776 թ. թուրքերի դեմ սկսված պատերազմը տևեց մինչև 1779 թվականը, և այսպիսի հանգամանքներում Օսմանյան կայսրությունը ստիպված եղավ 1779 թ. մարտի 21-ին ռուսական կողմի հետ սուլթանական պալատի Այնալը-Կավակ կոչված մասում ստորագրել նոր պայմանագիր և իրականացնել Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագրից բխող բոլոր կետերը:

Քյուչյուկ Կայնարջիի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո օսմանյան ղեկավար շրջանները, դասեր քաղելով թուրքերի կրած ծանր պարտություններից, փորձում էին բարենորոգումների միջոցով կարգավորել երկրի ներքին անմխիթար վիճակը, վերակառուցել օսմանյան բանակը: Ստեղծվեց նոր հրետանի և ռազմական նավատորմ: Նոր հրետանու ստեղծման գործը հանձնարարվեց ֆրանսիական բանակի սպա, ծագումով հունգարացի բարոն դե Տոտտին. նա, 1774 թ. ժամանելով Կ. Պոլիս, հիմնում է այնտեղ հրետանու ձուլման նոր արտադրամաս, որն էլ պիտի ապահովեր օսմանյան բանակը հրետանու նոր տեսակով:

Օսմանյան նավատորմի ստեղծման գործում թուրքերին մեծ աջակցություն են ցույց տալիս ֆրանսիացի ռազմական ինժեներներ Լեոուան Դյուրեստը և բարոն դե Բոննեվալը:

Եվ Այնալը-Կավակի կոնվենցիայի ստորագրումից օսմանյան ղեկավար շրջանների առավել ռազմատենչ ու հետադիմական ուժերը տոգորված էին վրիժառության գաղափարներով ու ձգտում էին ամեն գնով Օսմանյան կայսրությանը վերադարձնելու կորսված Ղրիմը: Ռազմատենչ հոսանքը գլխավորում էր մեծ վեզիր Կոջա Յուսուֆ փաշան, ով հարմար առիթ էր փնտրում վերսկսելու ռազմական գործողությունները Ռուսաստանի դեմ: Եվ շուտով ռուսական կողմը նրան ընձեռեց այդ առիթը:

Եկատերինա Բ կայսրուհին իր 1783 թ. ապրիլի 19-ի հռչակագրով Ղրիմը հայտարարեց Ռուսական կայսրությանը միացված տարածք՝ որպես պատրվակ ընդունելով օսմանցիների կողմից Քյուչյուկ Կայնարջիի հաշտության տևական խախտումները: Օսմանյան կայսրության վերնախավը սվիններով դիմավորեց ռուսական կայսրուհու այդ քայլը: Ավելին՝ կայսրուհու հրամանով թաթարական Ախտիարի գյուղի տեղում սկսեց արագորեն կառուցվել Սևաստոպոլ նավահանգիստը, որի շքամուտքի վրա արձանագրված էր «Կոստանդնուպոլսի դարպասներ»:

1783 թ. հուլիսի 24-ին Հյուսիսային Կովկասի Գեորգիևսկ ամրոցում Ռուսաստանի և Վրաստանի միջև կնքվեց համաձայնագիր դաշինքի և հովանավորության մասին: Այդ դաշինքի հիման վրա ռուսական զորքերի մուտքը Վրաստան Օսմանյան կայսրությունը դիտարկեց որպես իր արևելյան նահանգներին ևս իրական սպառնալիքի ահազանգ: Նա ամեն ինչ արեց Այսրկովկասում իսլամի դրոշի ներքո հակառուսական և հակավրացական դաշինք ստեղծելու համար՝ ներգրավելով դրա մեջ նաև իրանական խաներին: Այդպիսի դաշինք ստեղծելու գործում եռանդուն քայլեր ձեռնարկեց Ախալցխայի կառավարիչ Սուլեյման փաշան: Նա պարզապես ջիհադ էր հայտարարում Ռուսաստանին:

Նախկինի նման, Օսմանյան կայսրության ռազմատենչ ձգտումները հրահրում ու պաշտպանում էին Անգլիան, Պրուսիան, Հոլանդիան և եվրոպական մյուս երկրները:

1787 թ. օգոստոսի 14–ին Օսմանյան կայսրությունը վերջնագիր է ներկայացնում Ռուսաստանին՝ պահանջելով անհապաղ հեռանալ Ղրիմից ու Վրաստանից, որին Ռուսաստանը պատասխանում է սեպտեմբերի 15–ին՝ թուրքերին պատերազմ հայտարարելով: Որպես Ռուսաստանի դաշնակից պետություն՝ Ավստրիան ևս 1788 թ. փետրվարին մտնում է պատերազմի մեջ: Նման իրադրությունում Անգլիայի և Պրուսիայի դրդմամբ 1788 թ. հունիսին Շվեդիան պատերազմ հայտարարեց Ռուսաստանին: Ավելին՝ թուրքերի հետ կնքված գաղտնի համաձայնագրով ինքը՝ Պրուսիան, պարտավորվում էր պատերազմ հայտարարել Ռուսաստանին և Ավստրիային: Սակայն Ռուսաստանի հետ Շվեդիայի պատերազմը երկար չտևեց: Իսպանիայի միջնորդությամբ 1790 թ. Վարենում կնքվեց հաշտության պայմանագիր, վերականգնվեց status quo իրավիճակը: Պրուսիան այդպես էլ չհանդգնեց պատերազմ հայտարարել Ռուսաստանին:

Ռազմի դաշտում օսմանյան բանակները պարտություններ էին կրում: Գեներալ Ա. Վ. Սուվորովը Ֆոկշանում և հատկապես Ռիմնիկ գետի ափին թուրքերին հասցրեց մահացու հարվածներ: Հիշարժան է, որ նա 28 հազարանոց զորքով գլխովին ջախջախեց մեծ վեզիր Կոջա Յուսուֆ փաշայի 100 հազարանոց բանակը: Մոլդավիայում և Վալախիայում տարած փայլուն հաղթանակներով ռուսական բանակի առաջ բացվում էին Ռումելիի ու Փոքր Ասիայի ճանապարհները, մի հանգամանք, որն Օսմանյան կայսրության համար հղի էր ռազմական և քաղաքական ծանր հետևանքներով:

1789 թ. ֆրանսիական հեղափոխությունը որոշակի շտկումներ մտցրեց եվրոպական որոշ պետությունների՝ դեպի Ռուսաստան տածած քաղաքականության մեջ: Այսպես՝ Անգլիան և Պրուսիան պատրաստակամություն հայտնեցին վերջ տալու ռուս–թուրքական պատերազմին՝ զիջումներ կատարելով Ռուսաստանին:

1790 թ. սեպտեմբերի 19–ին Ավստրիան Օսմանյան կայսրության հետ Ժուրժևում նախ կնքեց զինադադար, իսկ 1791 թ. օգոստոսի 4–ին Սիստովում (Սվիշտով, Բուլղարիա)՝ անջատ հաշտության պայմանագիր status quo իրավիճակի հիման վրա:

1790 թ. հունվարի 10–ին Յաշում (Յասսի՝ Վալախիայում) Ռուսաստանի և Օսմանյան կայսրության միջև ստորագրվեց 13 հոդվածներից ու մի հավելվածից բաղկացած հաշտության պայմանագիր: Համաձայն այդ պայմանագրի՝ թուրքերը անվերապահորեն ճանաչում էին Քյուչյուկ Կայնարջիի պայմանագրի բոլոր կետերը, Եվրոպայում երկու պետությունների սահմանները կազմում էր Դնեստր գետը, Օսմանյան կայսրությունը հանձն էր առնում հետայսու չմիջամտել Վրաստանի ներքին գործերին:

1787–1791 թվականների ռուս–թուրքական պատերազմի ժամանակ օսմանյան պետությունը ստիպված է եղել դիմելու աննախադեպ քայլերի՝ ռազմական ծառայության մեջ ներգրավելով հայ և հույն քրիստոնյա ինժեներական կազմին:

Ընկնելով ֆինանսական ծանր կացության մեջ՝ պատերազմի տարիներին սուլթանական կառավարությունը ստիպված է եղել դիմելու արտաքին պարտքերի օգնությանը, սակայն ամենուր մերժում է ստացել: Ուստի և 1789 թվականի սուլթանական մի հրամանով ամբողջ երկրում մահապատժի սպառնալիքով բնակչությունից բռնությամբ հավաքել են ոսկյա և արծաթյա զարդեղենները:

XVIII դարի վերջին Օսմանյան կայսրությունը, դատելով աղբյուրների ընձեռած վկայություններից, շարունակում էր գոյություն ունենալ լոկ ձևականորեն և անվանապես: Իրականության մեջ արաբական երկրները, փաստորեն, դարձել էին անկախ: Արաբական թերակղզում հաստատված վահաբիները[39] բացահայտ թշնամական դիրք էին գրավել օսմանյան ղեկավար շրջանների նկատմամբ: Պաշտպանության տակ վերցնելով վահհաբիական ուսմունքը՝ Նեջդի էմիր իբն Սաուդին հաջողվեց կարճ ժամանակաընթացքում հաշվեհարդար տեսնել օսմանյան կայազորների հետ և հռչակել Արաբական թերակղզու անկախությունը: Տասնյակ տարիների ջանքերի, այն էլ Եգիպտոսի տիրակալ Մուհամմեդ Ալիի աջակցությամբ միայն 1818 թ. արաբական այս երկրամասը նորից մտցվեց օսմանյան պետության սահմանների մեջ:

Բալկաններում և Փոքր Ասիայում առանձին թուրք ավատատերեր ոչ միայն հռչակել էին իրենց անկախությունը, այլև հատել էին սեփական դրամներ: Այսպես՝ Սերբիայում Օսմանյան կայսրությունից իրեն անկախ էր հռչակել Պեզվենդօղլուն, Մորեայում՝ Ալի Թեփեդերելին: Փոքր Ասիայի ու Հայաստանի որոշ մասեր ընկել էին Չապանօղլուների, Թայարօղլուների, Կոզանօղլուների և այլ ավատատերերի գերիշխանության ներքո: Քրդստանում և քուրդ բեգերի փաստական գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի մի շարք մասերում առաջացել էին քրդական դերեբեյություններ, որտեղ իշխում էր քուրդ բեգերի սանձարձակ կամայականությունը: Կառավարական զորքերի հետ ընդհարումները դարձել էին սովորական երևույթ: Այլ կերպ ասած՝ Օսմանյան կայսրության տարածքի մեծ մասում տիրում էր քաոսային իրավիճակ, երբ սուլթանի գահին բազմեց Սելիմ Գ–ը (1789–1807 թթ.)՝ մի քաղաքական գործիչ, որի առաջ իր ամբողջ հասակով դրված էր մեկ հարց. ինչպե՞ս դուրս բերել երկիրը ստեղծված կացությունից: Օսմանյան կայսրության թուլացման ու անկման գլխավոր պատճառը նա տեսնում էր անկարգապահ, երկրի համար չարիք ու պատուհաս դարձած ենիչերիների բանակում: Ուստի և նա որոշում է և 1794 թ. իրականացնում, ենիչերիական բանակին զուգահեռ, երկրում ժամանակակից եվրոպական ոգով մարզված մի նոր բանակի ստեղծումը, որը ստանում է «նիզամ–ի ջեդիդ» («նոր կարգ») անվանումը: 1795 թվականին Սելիմ Գ–ը մայրաքաղաքում հիմնադրում է ռազմական դպրոց, որտեղ դասավանդելու են հրավիրվում ռազմական ինժեներներ Եվրոպայի տարբեր երկրներից, հատկապես նրանք, որոնք հրետանու արտադրության բնագավառում համարվում էին նորարարներ:

Երկրի ներքին կայունությունը ապահովելու նպատակով Սելիմ Գ–ը անցկացնում է մի շարք բարենորոգումներ, որոնք վերաբերում էին վարչական և պետական ծա-

[39] Վահաբիական ուսմունքի գաղափարախոսը Մուհամմեդ Աբդուլ Վահհաբն էր, որը քարոզում էր, որ թուրքերն ապականել են իսլամի ուսմունքը, և որ անհրաժեշտ է վերադառնալ իսլամի անարատ ու ջինջ ակունքներին: Այդ է պատճառը, որ վահհաբիներին արևմուտքում անվանում էին «Անապատի պուրիտաններ»: Այդ ուսմունքը բացեիբաց ուղղված էր օսմանյան տիրապետության դեմ:

ությունների բնագավառներին, ֆինանսներին, մայրաքաղաքին և մյուս խոշոր քաղաքների պարենային մատակարարմանը, հարկային համակարգին և այլն:

Սելիմ Գ–ի բարենորոգումներն անցկացնելու այդ թեժ պահին 1798 թ. բռնկվեց ֆրանս–օսմանյան պատերազմը, որը բացահայտ անակնկալի բերեց սուլթանին այն պարզ պատճառով, որ 1789 թ. ֆրանսիական հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում հեղափոխական Ֆրանսիայի թշնամի պետությունները մի անգամ չէ, որ Սելիմ Գ–ին առաջարկել էին միանալ հակաֆրանսիական կոալիցիաներին և միշտ մերժում էին ստացել: Հետևաբար սուլթանը կարծում էր, որ Ֆրանսիան ըստ արժանվույն կգնահատի օսմանյան պետության քաղաքական դիրքորոշումը, սակայն չարաչար սխալվում էր:

1798 թ. գեներալ Նապոլեոն Բոնապարտը ափհանում կատարեց Եգիպտոս, այն ժամանակ, երբ գործի անցած «Նիզամ–ի ջեդիդը» մեծ վեզիր Բյուչյուկ Հուսեինի գլխավորությամբ Սերբիայում հաղթանակներ էր տարել ապստամբ Օսման Պեզվենդոլու նկատմամբ, և վերջինս պատրաստ էր անձնատուր լինելու: Ֆրանս–թուրքական այս պատերազմը, ինչ խոսք, մեծապես բարդացրեց Սելիմ Գ–ի բարենորոգչական գործողությունները և նպաստեց կայսրության հետագա թուլացմանը:

3. ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ XV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

Կոստանդնուպոլիսը գրավելուց և այն իր մայրաքաղաքը դարձնելուց հետո (1453 թ.) սուլթան Մահմեդ Ֆաթիհը ոչ մահմեդական հանրությունները առանձնացրեց դավանական, ազգային և մշակութային կարգավիճակով (միլեթներ)՝ իրենց հոգևոր գլուխների առաջնորդությամբ: 1461 թ., հաստատվեց Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը՝ իր հոգևոր վարչությամբ:

Օսմանյան նվաճողները ելնում էին մահմեդական հանրային իրավունքի (շերի), դրան զուգահեռ գործառող աշխարհիկ իրավունքի և իրենց նվաճողական քաղաքականությունից բխող պահանջներից՝ հենվելով դավանական ու եկեղեցական բաժանվածության սկզբունքի վրա:

Հայ համայնքի հոգևոր առաջնորդը, Հովակիմից սկսած և ընդհուպ մինչև 1540 թ., մեզ հայտնի գրավոր աղբյուրներում չի կոչվել պատրիարք, այլ «հայրապետ», «արհիեպիսկոպոս», «եպիսկոպոս» կամ, ըստ օսմանյան հորջորջման, «մարհասա» (կրոնապետ): Վերջինս իր համայնքում օժտված էր հիմնականում նույն հոգևոր և վարչական իրավասություններով, ինչ հույն պատրիարքը և հրեա կրոնապետը:

Առաջինը 1540 թ. իրեն պատրիարք հորջորջել է Աստվածատուր վարդապետը:

Կոստանդնուպոլսի հայ պատրիարքները XV–XVI դարերում առավելապես կապված էին Սսի, քան Էջմիածնի կաթողիկոսության հետ, սակայն հաջորդ դարից հետզհետե առավել մեծ չափերով է զգացվում Էջմիածնի ազդեցությունը Կոստանդնուպոլսի պատրիարքության վրա: Միաժամանակ, պատրիարքությունն ընդլայնում էր իր գերակայության սահմաններն ու աստիճանը օսմանյան տարածքների հայաբնակ թեմերի ու վիճակների վրա: Դա նշանակում էր, որ օսմանյան հարկային

համակարգում ընդարձակվում էր պատրիարքների գործառութային նշանակությունը՝ հասցնելով կայսրության մեջ նրանց իրավունքների ու պարտականությունների աճին: Համապատասխանաբար թուլանում էր Էջմիածնի կաթողիկոսությունից Կոստանդնուպոլսի պատրիարքության կախումը: XVII դարի 30–70–ական թվականներին՝ Փիլիպոս և Հակոբ պատրիարքների ժամանակ, զգալի դարձավ Էջմիածնի ազդեցության ամրապնդումը Կոստանդնուպոլսի պատրիարքության վրա: Սակայն XVII դարավերջին այդ ազդեցությունը կրկին թուլացել էր պատրիարքության ինքնուրույնության ամրապնդման հետևանքով: XVIII դարում՝ մասնավորապես Հովհաննես Կոլոտ և Հակոբ Նալյան պատրիարքների օրով, Էջմիածինը օսմանյան տարածքների թեմերին ու վիճակներին արդեն կարող էր առնչվել (մյուռոնի բաժանում, վերահսկողություն «տէրունի թեմերի» վրա և այլն) միայն օսմանյան պետության առջև Կոստանդնուպոլսի պատրիարքների միջնորդությամբ, ինչը նշանակում էր հայ հանրության հոգևոր կապերն ու փոխհարաբերությունները վերահսկելուն ուղղված օսմանյան քաղաքականության խստացում:

Պատրիարքների իրավունքներն ու պարտականությունները բավական պարզ երևում են նրանց պաշտոնը հաստատող սուլթանական ֆերմաններում: Պատրիարքի ընտրությունը (իրականում՝ նշանակումը) կատարվում էր համայնքի էսնաֆի (առևտրաարհեստավորական կորպորատիվ կազմակերպություններ) և կղերական դասի համաձայնությամբ: Պատրիարքական աթոռը, որպես կանոն, զբաղեցնում էր այն հոգևորականը, ով բավարարում էր հայ համայնքում ազդեցիկ մեծահարուստ չելեպիների և խոջաների ու նաև օսմանյան իշխանությունների պահանջները: Պատրիարքի ընտրությունը հաստատվում էր պատրիարքական թեկնածուի արքունական հարկը մուծելուց հետո: Նորընտիր պատրիարքը առաջին անգամ կրկնակի մուծումներ էր անում՝ նախ տարեկան հարկը միանվագ, ապա «փեշքեշը»: Արքունական տուրքը (միրի, ղապալա) XVII դարում կազմում էր շուրջ 140 հազար աքչե և նույնքան էլ կամ պակաս չափով փեշքեշը՝ իբրև նվիրատվություն (սուլթանին, մեծ վեզիրին և այլն՝ ըստ ենթակայության): Գավառներում ևս առաջնորդների պաշտոնի նշանակումն ու նրանց պաշտոնի վավերացումը Բ. դռան կողմից ուղեկցվում էր նշված վճարումներով՝ անշուշտ, զիջելով պատրիարքական վճարումների չափերին:

Պատրիարքի ձեռքին էին կենտրոնանում համայնքի եկամտի աղբյուրները (վակֆային, բարեգործական հիմնարկներից ստացվող եկամուտներ, անշարժ կալվածքներ՝ հող, տներ, շինություններ, ջրաղացներ և այլն), եկեղեցական հարկերը, կտակներն ու նվիրատվությունները: Պատրիարքի ընտրությունը կատարվում էր Բ. դռան լայն իրազեկության (սկսած թեկնածության փուլից), ոչ քիչ դեպքերում՝ ուղղակի միջամտության պայմաններում: Օսմանյան վերնախավին տրված առատ նվերներն ու կաշառքները ընտրությունից առաջ թեկնածուի համար ապահովում էին սուլթանական համապատասխան ֆերմանը: Համայնքի աշխարհիկ երևելիների կամքը, իշխանությունների համաձայնությունը և անխուսափելի դրամական մուծումներն այն գործոններն էին, որոնք հաջողություն էին ապահովում պատրիարքական թեկ-

նածուի համար, որից և օգտվում էին պատրիարքական աթոռին հայտնված միջակություններն ու բախտախնդիրները:

Պատրիարքներին տրված սուլթանական ֆերմանները իրավական տեսակետից հիմնականում նույնն են մնացել դարերի ընթացքում: Առ այսօր պահպանված հնագույն ֆերմանը 1764 թվականի հունիսի 3-ին Գր. Պասմաճյան պատրիարքին Մուստաֆա Գ-ի տված ֆերմանն է: Այստեղ ճանաչվում է նրա հոգևոր իշխանությունը Կոստանդնուպոլսի, Ռումելիի և Անատոլիայի հայ համայնքների, նրանց առաջնորդների, քահանաների և սրանց ենթակա «բոլոր հայերի վրա»: Պատրիարքին իրավունք էր տրվում իրականացնելու պաշտամունքային արարողություններն ու ծեսերը, նշանակելու կամ պաշտոնազրկելու հոգևոր առաջնորդներին, վարդապետներին ու քահանաներին՝ առանց կողմնակի միջամտության: Պատրիարքին իրավունք էր վերապահվում դատաստան տեսնելու քահանաների և մյուս հոգևորականների հետ, եթե կատարված հանցանքը ընդդատյա չէր շերիի դատարանին:

Պատրիարքի պարտականությունների մեջ էր մտնում հայ հանրության կողմից օսմանյան օրենքների պահպանությունը, պետական և շերիի հարկերի գանձման, ինչպես և հասարակական կարգուկանոնի նորմերի ապահովումը:

Եկեղեցուն որպես վակֆ նվիրված սեփականության տարեկան հասույթի մի մասը հատկացվում էր բարեգործական, կրոնական, կրթական և այլ նպատակների: Վակֆի գործերը տնօրինում էր պատրիարքը՝ կաղիի ընդհանուր վերահսկողության պայմաններում: Թաղի երևելիների ժողովներում ընտրված անձանց, որոնք սովորաբար ունևոր և հեղինակության տեր մարդիկ էին, պատրիարքը հաստատում էր իբրև մյութեվելիներ (վեքիլներ կամ փոխանորդներ): Մյութեվելիների քանակը կախված էր տվյալ եկեղեցու սեփականության չափերից: Նրանք հար և նման էին օսմանյան բյուրոկրատական-վարչական ձևին, իրենց հերթին փոխանորդներ էին ընտրում (նազըրներ)՝ 4-12 մարդ յուրաքանչյուր թաղում, որոնք վարում էին թաղի եկեղեցու սեփականության, եկամուտների իրացման և դրանց առնչվող գործերը: Մյութեվելիների և նազըրների պաշտոնավարությունը կարող էր տևել հաշվետու շրջանից (մեկ տարի) մինչև մի քանի և նույնիսկ տասնյակ տարիներ: Նազըրները հաշվետու էին մյութեվելիներին, սրանք՝ պատրիարքին: Մյութեվելիների ու նազըրների նշանակումն ու հրաժարականը վավերացնում էր կաղին, անշուշտ, պատրիարքի ներկայացմամբ:

Հայ հանրության՝ «ալթը ջեմաաթի» (վեց համայնք) սոցիալական ու հասարակական բովանդակությունը բնութագրելու տեսակետից հետաքրքիր է պատրիարք-վերնախավ փոխհարաբերությունների պատկերը: Պատրիարքի իրական իշխանությունը գործնական ընթացք և ուղղություն էր ստանում հարուստ չելեպիների և խոջաների, իսկ XVIII դարի 2-րդ կեսից՝ ամիրաների կողմից, որոնք սոցիալական դիրքի ու կարողությունների տեր մարդիկ էին: Այս վերնախավն էր, որ ազգապետ ճանաչված պատրիարքին թելադրում էր իր կամքը, որոշում նրա գործելակերպը և հայ հանրության մեջ հանդես գալիս իբրև փաստական ղեկավար: Համայնքի վերնախավը օսմանյան արքունիքի ասկերիների պալատական ու վարչական շրջաններում իր կապերի ու ազդեցության շնորհիվ պատրիարքի վրա ներգործում էր ըստ ամենայնի՝ ներխուժելով նրա աշխարհիկ և կրոնական բնույթի գործերի մեջ: Պատրիարքի ընտրությունը, որ ձևականորեն կատարվում էր սոցիալական բոլոր խավերի մասնակցությամբ, իրականում կատարում էին թաղերի երևելիները: Պատրիարքի կողմից չափից ավելի ինքնուրույնություն ցուցաբերելը, նրան սատարող երևելիների միջև հակասությունների խորացումը, ինչպես և մրցակցությունը Էջմիածնի և Կիլիկիայի աթոռների միջև՝ պատրիարքական աթոռն իրենց ազդեցության ներքո պահելու գործում, հասցնում էին պատրիարքների կարճատև պաշտոնավարմանը հատկապես XVII դարում և XVIII դարի սկզբներին: Նրանց արագ փոփոխությունների պատճառները պետք է որոնել համայնքի բնակչության արհեստական աճի (գաղթեր), դրանից ծնվող սոցիալական հակասությունների և լարվածության մեջ: Պատրիարքական աթոռի համար չդադարող պայքարը հասցրեց համայնքում աթոռակալների՝ թաղերի աշխարհական ներկայացուցիչների հայտնությանը: Առաջին աթոռակալներին տեսնում ենք դեռևս 1607 թվականին: Հայ կրոնական կենտրոնների համակարգում Կոստանդնուպոլսի պատրիարքության տեղի ու նշանակության ընդլայնման իրողությունը ակնհայտ էր դառնում համայնքի բնակչության ստվարացմանը զուգընթաց[40]: XVIII դարում պատրիարքությունը, հաստատելով իր ինքնուրույն և ազդեցիկ դերը ազգային-կրոնական փոխհարաբերություններում, ուղղորդում ու կարգավորում էր Էջմիածնի մուտքը օսմանյան Թուրքիայի հայաբնակ տարածքներ:

XVIII դ. սկզբներին Կ. Պոլսի հայ գաղթօջախը ապրում էր որակական փոփոխությունների մի շրջան, որ պայմանավորված էր և՛ ներքին՝ համայնքային կյանքի, և՛ օսմանյան Թուրքիայի ներքաղաքական ու տնտեսական զարգացումներով: Պետությունը սկսեց խիստ վերահսկողություն իրականացնել քաղաքային բնակչության միջուկը կազմող արհեստավորության, հումքի ձեռքբերման և արտադրանքի իրացման նկատմամբ: Երկրում խոր արմատ գցած ավատատիրական հարաբերությունները, ամենուրեք իրենց զգացնել տվող կրոնական ու ազգային հակասությունները մեծապես արգելակում էին երկրի տնտեսական զարգացումը, դանդաղեցնում արդեն խոր ձեղքեր տված ռազմահողատիրական համակարգի փլուզումը: Օսմանյան պետությունը ջանքեր էր գործադրում պահպանելու այդ համակարգը և արգելակելու տնտեսապես քայքայված գյուղացիության հոսքը դեպի մեծ քաղաքներ: XVIII դ. հրապարակված օրենքներով (1710, 1731, 1741, 1748, 1782 և այլն) վարչական խիստ միջոցներ էին ձեռնարկվում այդ ուղղությամբ:

Օսմանյան կայսրության մեջ միլեթների, այդ թվում և հայ հանրության նկատմամբ պետության քաղաքականությունը որոշվում էր զարգացման ներքին գործոններով:

[40] Կոստանդնուպոլսի պատրիարքության ենթակա թեմերի և վիճակների ցանկը XVII դարի կտրվածքով առ այսօր վերականգնված չէ և կարոտ է հիմնավոր ուսումնասիրության: Հնարավոր է, որ Կոստանդնուպոլսի հոգևոր վարչությունը նորանոր թեմեր և վիճակներ ընդգրկած լիներ այն ժամանակից, երբ պատրիարքությունը 1612-1613 թվականներին բաժանվեց եռապետության՝ Զաքարիա Վանեցու, Հովհաննես Խույի և Գրիգոր Դարանաղցու միջև:

Հարկահավաքման անցման ապահովումը՝ հենված միլեթների ավանդական կրոնադավանական ու վարչական կառուցվածքի վրա, ոչ մահմեդականների անմոռնչ ենթարկումը գերակա իսլամի դրվածքին և այն դավանող տիրապետողների քաղաքական ու տնտեսական զորությանը մնում էին վերոհիշյալ քաղաքականության անկյունաքարն ամբողջ XVIII դարում: Եվ դարձյալ, այս վերջինի հարատևումն ապահովելու համար օսմանյան պետությունը շահագրգռված էր պահպանելու միլեթների միատարրությունը, անդորրը դրանց ներսում՝ որպես նրանց հետ երկխոսության ավանդական նախապայման: Կար նաև եվրոպական աճող էքսպանսիայի տագնապահարույց խնդիրը: Օսմանյան Թուրքիան Եվրոպայի հետ առճակատման մեջ պարտություններ էր կրում, և երկրի ներսում շարունակում էին դրսևորվել այդ ձախողումների հետևանքները: Հայտնի են Թուրքիայի տնտեսական զիջումները եվրոպական տերություններին, կապիտուլյացիաների համակարգի աստիճանաբար ընդլայնումը հօգուտ այդ տերությունների, որոնց քաղաքական զուգահեռները այս վերջիններն իրականացնում էին և՛ Բալկաններում, և՛ Թուրքիայի ասիական տարածքներում: Նկատի ունենք օտար կրոնադավանական ներթափանցումները միլեթների մեջ, որպիսիք ուժ և խորություն էին ստանում արտաքին ուժերի ռազմական ճնշումների ու հաջողությունների համեմատ: Հայ հանրության մեջ վերոհիշյալ ներթափանցումը Եվրոպան իրականացնում էր կաթոլիկական (հետագայում նաև ավետարանական, որ հույն համայնքի մեջ, ի դեպ, ծայր էր առել դեռևս XVI դ.) դավանական քարոզչության և ազդեցության հզորացմամբ: Օսմանյան պետությունը նախընտրում էր դրան դիմակայել միլեթների դավանական միասնականության ու վարչական կազմակերպության միջոցով, այսինքն՝ այն լծակով, որին տիրապետում էր անառարկելիորեն: Եվ այստեղից՝ Բ. դռան նոր՝ կենտրոնացված քաղաքականությունը միլեթների, այդ թվում և հայ համայնքի կրոնական ու վարչական կազմակերպության՝ Կ. Պոլսի Հայոց պատրիարքության նկատմամբ:

Դեռևս նախորդ դարից շարունակվող՝ պատրիարքների արագ փոփոխությունների հիմքում հիմնականում ընկած էին դավանական ներհակությունները, որոնցով էլ պայմանավորված էին XVII դ. վերջին ու XVIII դ. սկզբին պատրիարքական աթոռի համար հյուսվող սադրանքներն ու պայքարը: Հայադավանների զորությունը ընկճելու նպատակով արկածախնդրական գործողություններ ձեռնարկեց ֆրանսիական դեսպան Ֆերիոլը, որի հրահրումներով 1706 թ. սկզբներին Ավետիքը պաշտոնանկ արվեց, աքսորվեց Թենեդոս կղզի, ապա առևանգվեց և տարվեց Սիցիլիա, այնուհետև Ֆրանսիա՝ Մարսել և Փարիզ, որպես Բաստիլի կալանավոր: 1710 թ. Ավետիքն ընդունեց հռոմեադավանություն և ձեռնադրվեց քահանա: Վախճանվել է 1711 թ.: Բ. դուռը, հատկապես Չորլուլու մեծ վեզիրը, փորձում էր որևէ կերպ վերադարձնել Ավետիքին, սակայն Ֆերիոլին հաջողվեց կորցնել տալ նախկին պատրիարքի հետքերը: Օսմանյան իշխանությունների խստություններն այս անգամ ևս փլվեցին հայերի վրա: Ի պատասխան Ավետիքի առևանգման՝ Կ. Պոլսում հալածանքներ սկսվեցին հայ լատինադավանների դեմ: Ձերբակալվեցին շուրջ մեկուկես տասնյակ հայեր, որոնց մեջ՝ նախկին պատրիարք, հանրաճանաչ լատինասեր

Մատթեոս Սարը և Երեմիա Քյոմուրճյանի եղբայր Կոմիտաս քահանան: Առաջինը գլուխն ազատեց առերես ուրացությամբ, իսկ երկրորդը՝ հավատի և համոզմունքի տեր մարդ, գլխատվեց 1707 թ. հոկտեմբերի 25-ին:

Հովհաննես Կոլոտը (1715–1741 թթ.) նշանավորում է Կ. Պոլսի պատրիարքության զորեղացումը ոչ միայն օսմանյան Թուրքիայի հայաբնակ շրջաններում, այլև ողջ համազգային կրոնական կենտրոնների մեջ հեղինակության շեշտակի բարձրացումով: Մի որոշ չափով Կոլոտի գործունեությանը նպաստեցին օսմանյան ներքին ու արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած փոփոխությունները: Ռազմական պարտությունները եվրոպական տերություններից, Բալկաններում զգալի դարձած ռուսական և ավստրիական նկրտումները, կայսրության հպատակ ժողովուրդներին ազատագրական շարժումներից հեռու պահելու ձգտումը և, վերջապես, եվրոպական քաղաքակրթության սպառնալիքներից խուսափելու ջանքերը (որ դրսևորվում էին այդ նույն քաղաքակրթության պտուղները ինչ-որ չափով յուրացնելու ճիգերով, և որոնք ավելի ակնառու էին դառնալու 1790-ական թթ.՝ Սելիմ Գ-ի ժամանակ) թուրքական վերնախավին ստիպում էին դիմել լիբերալ որոշ քայլերի: Նևշեհիրլի Իբրահիմ փաշայի (հայկական ծագմամբ մեծ վեզիր 1718–1730 թթ.) ժամանակ թուրքերը հիմք դրեցին իրենց գրատպությանը. եվրոպական տեխնիկական դարակազմիկ մի երևույթ, որ դրանից առաջ նրանք համարում էին սրբապղծություն: 1720 թ.՝ Ահմեդ Գ-ի օրոք, 80 հոգանոց մի թուրքական պատվիրակություն մեկնեց Ֆրանսիա՝ ծանոթանալու այդ երկրի արվեստներին ու տեխնիկական նվաճումներին: Թույլ, բայց և ուրվագծվում էր եվրոպական ազդեցությունը թուրքական վերնախավի շրջանում: Մեղմացումներն ի հայտ եկան այնպիսի ասպարեզում ևս, որպիսին եկեղեցիների նորոգման արտոնումներն էին, որտեղ մինչ այդ թուրքերը հատկապես անզիջում էին՝ սկսած Ֆաթիհի ժամանակներից: Նորոգվեց նաև Երուսաղեմի Ս. Հարության տաճարը: Ս. Գեորգի և Ս. Հրեշտակապետի վերաշինությունն իրականացրել էր Մահտեսի Մելիտոն Արապյան ճարտարապետը, իսկ Ս. Լուսավորչինը՝ Մահտեսի Սարգիսը: Ի դեպ, այս նույն ժամանակներում էր գործում հայ ճարտարապետ Շիրին խալֆան՝ 1730-ական թթ. կեսերին արքունի շինությունների վերակացուն:

Երուսաղեմի պատրիարքությունը բաժանվեց Կ. Պոլսի պատրիարքությունից՝ ազատվելով հոգևոր և աշխարհիկ բախտախնդիրների շահատակություններից, որի պատճառով Երուսաղեմի վանքն ընկել էր ծանր պարտքերի տակ: Երուսաղեմի պատրիարք ընտրվեց Գրիգոր Շղթայակիրը (1715 թ.), որը մեծապես նպաստեց վանքի և պատրիարքության բարեկարգմանը: 1726 թ. Կոլոտը հրապարակեց Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ կանոնները, որով ապահովվում էին պատրիարքության ինքնուրույնությունն ու առանձին տեղը հայ կրոնական կենտրոնների մեջ: Կոլոտը որոշ չափով կարողացավ կարգավորել նաև Երուսաղեմում հայ-հունական հարաբերությունները: Հույն հոգևոր վերնախավի հետ փոխադարձ համաձայնությամբ կանխվեցին 1729 թ. ծռազատկի հնարավոր բախումները հայերի և հույների միջև: Սակայն դրանից հետո ծայր առավ Երուսաղեմում հայ-հունական սեփականատիրական վեճը (այսպես կոչված՝ «հաբեշական ժառանգության»

և Ս. Տեղյաց այլ տարածքների շուրջ) կողմերի փոփոխական հաջողություններով: Այսուհանդերձ, դրանք ավարտվեցին հույների հավակնությունների մասամբ բավարարմամբ. 1740 թ. հրովարտակով հաբեշական սեփականությունները մնացին հույների ձեռքին: Հայերի հաջողությունները հույների հետ հարաբերություններում նշանակալիորեն պայմանավորված էին Կոլոտի և Գրիգոր Շղթայակրի լայնախոհությամբ և ճկուն գործելակերպով: Հայտնի է հատկապես վերջինիս շրջահայաց վերաբերմունքը հայ կաթոլիկների նկատմամբ, որը նպաստեց դավանական հակասությունների մեղմացմանը հայ հանրության ներսում, ինչպես և նրա սահմաններից դուրս: Այս ամենը աննախընթաց չափերով մեծացրեց Կ. Պոլսի պատրիարքության հեղինակությունն ու համբավը Հայ եկեղեցու նվիրապետության մեջ: Կոլոտը գործուն մասնակցություն ունեցավ Էջմիածնի կաթողիկոսի ընտրության գործում, այն կազմակերպելով Կ. Պոլսում՝ կաթողիկոս ընտրվեց Գաղատիայի առաջնորդ Կարապետ Ուլնեցին (1726 թ.): Իր ընտրության հաջորդ օրը՝ փետրվարի 28-ին, Ուլնեցին արքեպիսկոպոս օծեց Կոլոտին՝ ընդգծելու Կ. Պոլսի պատրիարքության նշանակալիությունը:

Կ. Պոլսի այս պատրիարքը որակապես նոր փուլ էր բացում արևմտահայ մտավոր և կրթական կյանքի զարգացման մեջ: Մխիթար Սեբաստացու հետ միասին Կոլոտը մինչ այդ չտեսնված չափերով ընդլայնեց համազգային հաղորդակցությունը եվրոպական մտավոր մշակույթի հետ: Նրա որոշմամբ ու խրախուսանքով ծավալվեց կրոնադավանական, փիլիսոփայական և բնագիտական թարգմանական երկերի տպագրությունը: Երեք տասնամյակի ընթացքում՝ մինչև 1740-ական թթ. սկիզբը, Կոլոտը Կ. Պոլսում հիմնեց նոր տպարաններ: Մտավոր և մշակութային այս շարժումը, որի հիմնադիրը Կոլոտն էր, իր հետագա զարգացումը գտավ նրա աշակերտի և պատրիարքական աթոռին հաջորդի՝ Հակոբ Նալյանի (1741–1749, 1752–1764 թթ.) ժամանակ: Նալյանը հոչակված էր իբրև աստվածաբան, նա հեղինակել է մի շարք գործեր: Նալյանը, ինչպես և Կոլոտը, խրախուսում էր Կ. Պոլսի հայկական տպարանների գործունեությունը: Նա հիմնեց Կում Կափուի մայր դպրատունը, հարստացրեց Կոլոտի ժամանակից գործող գրադարանը: Հակոբ Նալյանի ժամանակ ավելի մեծացավ Կ. Պոլսի պատրիարքության ազդեցությունն ազգային եկեղեցում, հատկապես էջմիածնական գործերի, նաև կաթողիկոսական ընտրությունների վրա: Այս վերջին դեպքում պատճառը, հավանաբար, Կոլոտի ժամանակից սկիզբ առած նախադեպն էր, ինչպես և այն, որ Նալյանը բավական ազդեցություն ուներ պոլսեցի հայ մեծահարուստների և այնտեղ բնակություն հաստատած արևելցի (պարսկահայեր) վաճառականների շրջաններում: Նալյանի նախաձեռնած ժողովում 1753 թ. Էջմիածնի կաթողիկոս ընտրվեց Աղեքսանդր Բյուզանդացին, երեք տարի անց՝ 1756 թ.՝ Սահակ Ահագինը, որն այդպես էլ չմեկնեց Էջմիածին: Եվ դարձյալ՝ 1759 թ., Նալյանի նախագահությամբ Կ. Պոլսում գումարված եկեղեցական ժողովը կաթողիկոս ընտրեց Հակոբ Շամախեցուն:

Հայ կաթոլիկների նկատմամբ Նալյանը շարունակում էր ցուցաբերել ճկուն վերաբերմունք, և այս իրողությունը առավել գնահատելի է Բ. դռան կողմից հռոմեադավան հայերին մշտապես սաստելու անփոփոխ պատրաստակամության պայմաններում:

Որքան էլ ազդեցիկ, այսուհանդերձ, Նալյանի պատրիարքական կառավարումը մթագնվեց պոլսեցի որոշ մեծահարուստների սադրանքներով: Կաշառքի ուժով ստանալով թուրքական պաշտոնյաների հավանությունը՝ սրանք խուժեցին մայր եկեղեցի և պատրիարք հոչակեցին Երուսաղեմի միաբաններից ոմն Պրոխորոնի: Սակայն հուզված ժողովուրդը չընդունեց այս դրածոյին, որը պատրիարքական աթոռին մնաց ընդամենը մեկ շաբաթ: Հ. Նալյանն ընտրվեց Երուսաղեմի պատրիարք, ապա՝ 1752 թ., վերստին ստանձնեց Կ. Պոլսի պատրիարքի պաշտոնը՝ մեծահարուստ Յաղուբի զորեղ աջակցությամբ:

Կ. Պոլսի պատրիարքության համազգային կրոնական դիրքերը նշանակալիորեն թուլացան Գրիգոր Պասմաճյանի պատրիարքության ժամանակ և դրանից հետո՝ XVIII դ. վերջին քառորդին: Բուն իսկ պոլսահայ համայնքում դրամատիրական նոր խավի՝ ամիրայության հանդես գալով սրվեց ներքին պայքարը հին ուներոր վերնախավի՝ վաճառականության և վաշխառու-չելեպիների, և մյուս կողմից՝ նորահայտ սեղանավոր-ամիրաների միջև: Հայ հանրության մեջ առաջատար տեղի համար մղվող այս պայքարում XVIII դ. 2-րդ կեսից ամիրաները հեշտությամբ չէին զիջում դիրքերը, որն արտահայտվում էր պատրիարքական աթոռին յուրային եկեղեցականի նստեցնելու շարունակական ձգտումով: Պրոխորոնի միջադեպը այս պայքարի դրսևորումներից մեկն էր: Ներհակ խմբակցությունները ձգտում էին պատրիարքի միջոցով տնօրինելու համայնքապատկան եկամուտները, առաջին հերթին՝ վակֆերի կառավարումը և առհասարակ նյութական հնարավորությունները: Զևականորեն այս ամենը, որ վերաբերում էր միլեթներին տրված առանձնաշնորհումներին, պետության օրենքներով իրականացնում էր պատրիարքը: Դեռևս Ֆաթիհի ժամանակներից միլեթների ղեկավարները (հույն, հրեա, հայ) համատեղում էին կրոնական և աշխարհիկ գործառույթները, գրեթե նույնպիսի՝ այս տարբեր սկիզբները միավորող իրավասություններով, ինչ ունեին օսմանյան բարձր աստիճանավորները՝ կադիները, ենիչերիների գլխավորները, գավառական փաշաները և այլն, ընդհուպ մինչև սուլթան, որը մարմնավորում էր կրոնական՝ հոգևոր և աշխարհիկ գերագույն իշխանությունը:

Գրիգոր Պասմաճյանին տրված՝ Մուստաֆա Գ-ի բերաթում (1764 թ.) նշված են նորընծա պատրիարքի իրավունքներն ու պարտականությունները, որտեղ կրկնվում էին ավանդական սահմանումները: Պասմաճյանն այստեղ անվանվում է Կ. Պոլսի, Ռումելիի և Անատոլիայի հայ համայնքի պատրիարք և, ինչպես նախորդ պատրիարքները, գանձարանին է տրամադրել 100 000 աքչե փեշքեշ (միանվագ) ու պարտավորվել, որ տալու է նաև 140 000 աքչե տարեկան հարկ: Նրան էին ենթարկվելու պատրիարքության հոգևորականները՝ առաջնորդից մինչև քահանա և առհասարակ հայ համայնքի բոլոր մարդիկ: Նա էր նշանակելու բոլոր պաշտոնները իր համայնքում և վճռելու վակֆերը տնօրինելու հարցերը, համայնքի անդամների ծնունդի, կնունքի, պսակի, կտակների ու նվիրատվությունների վերաբերյալ օրինական

ամրագրումները: Պատրիարքն օժտվում էր ոչ միայն կրոնական ծիսակատարությունները խախտողներին, այլև եկեղեցու սեփականության նկատմամբ քրեական հանցանք կատարած հոգևորականներին պատժելու իրավունքով: Շարիաթական սանկցիան չէր կարող կիրառվել պատրիարքին ենթարկվող հանրության որևէ անդամի նկատմամբ առանց նրա իմացության: Պատրիարքն ուներ անարգել և անմաքս երթևեկելու իրավունք, նա, ինչպես և իր կափու քեհյան (սենեկապան) և մեկուկես տասնյակի չափ հոգևորական մերձավորներն ազատվում էին ջիզյայի (գլխահարկ), ավարիզի (պատերազմական հարկ) և թեքյալիֆի (սովորութային) հարկերից:

Բերաթի անվերապահ բնույթն իրականում պայմանական նշանակություն ուներ: Մասնավորապես Արևմտահայաստանում և այլ գավառներում պատրիարքական իրավասությունները հաճախ ոտնահարվում էին տեղական փաշաների, դերեբեյ քրդերի և այլ զորեղների կամայականությունների հետևանքով: Հովհաննես Կոլոտի պատրիարքության ժամանակ՝ 1740 թթ., «Անադոլուի կադիներին» ուղղված մի ֆերմանով սաստվում էին հենց վերոհիշյալ պաշտոնյաները, որոնք անարգել պաշտոնի էին դնում առաջնորդներին, վարդապետներին ու երեցներին՝ տիրանալով եկեղեցիների ու վանքերի սեփականություններին, կամ տնօրինում էին դրանք առանց պատրիարքական վկայագրի:

Ուշագրավ է Գր. Պասմաճյանին տրված այս բերաթի և նրա հաջորդ Զաքարիա պատրիարքին (1773–1781 թթ.) տրված բերաթի համեմատությունը: Նույնն են մնացել պատրիարքական միանվագ (փեշքեշ) և տարեկան հարկերի չափերը, պատրիարքների իրավունքների ու պարտականությունների սահմանումները: Սակայն նկատելի են նաև գավառական փաշաների և այանների կամայականությունների դեմ արքունիքի ու Բ. դռան սաստերի սրացումները՝ ուղղված պատրիարքի իրավասությունների ոտնահարումների դեմ (առանց պատրիարքի իմացության՝ պսակի, կրկնամուսնության երևույթներ): Զգալի է նաև կաթոլիկության դեմ հատուկ ուղղվածությունը, խստիվ արգելքը գավառներում հայ կաթոլիկների՝ եկեղեցիների նկատմամբ հավակնությունների դեմ, բռնազավթումների դեպքում ծանր պատիժներ տալու հրահանգը: Այս երևույթի դեմ հետևողական, բայց և խոհեմ պայքար էին մղել դեռևս Կոլոտն ու Նալյանը: 1740-ական թթ. սկզբներին Նալյանը ստիպված էր դիմել ոչ միայն իշխանություններին, այլև ֆրանսիական դեսպան Կաստելլանի աջակցությանը, երբ ջանքեր էր գործադրում Անկյուրիայում բռնագրավված եկեղեցիները հայադավաններին վերադարձնելու համար:

Հիրավի, Զաքարիայի պատրիարքության տարիներին, հատկապես 1770-ական թթ. 2-րդ կեսին Բ. դուռն ուժեղացրեց պայքարը կայսրության մեջ կաթոլիկության տարածման դեմ: Ըստ թուրք պատմաբան Ահմեդ Զևդեթի՝ պաշտոնական մի զեկուցագրում հայադավանները համարվում են օսմանյան տերության բարեհպատակ համայնք, իսկ հայ կաթոլիկները՝ եվրոպական երկրների հենակետ, որոնք ցանկանում են Եվրոպայի հաղթանակը Թուրքիայում: Տրվելով իշխանությունների սաստկացող ճնշումներին՝ պատրիարք Զաքարիան ծայրահեղությունների հասցրեց խստությունները հայ կաթոլիկների դեմ: Անկասկած, ոչ առանց Բ. դռան կամ

արքունիքի թելադրանքի 1780 թ. նա արգելեց հայ վաճառականներին առևտրական նպատակներով մեկնել Տրիեստի նավահանգիստ: Ավստրիական դեսպանի բողոքից հետո թուրքերը 1781 թ. Զաքարիային հեռացրին պատրիարքությունից՝ աքսորելով Բրուսա: Զաքարիան 1762–1799 թթ. դեռ պետք է վերստին վարեր պատրիարքությունը, իսկ առայժմ դեռևս առջևում էր թուրք-ավստրիական պատերազմը (1788–1791 թթ.), և սուլթանը պետք է պահպաներ դիվանագիտական պատշաճ կեցվածքը եվրոպացիների աչքին՝ հեռացնելով նրանց համար անհանդուրժելի պատրիարքին:

Կ. Պոլսի հայ պատրիարքների իրավասությունները ավելի ընդարձակվեցին Մուստաֆա Դ-ի ժամանակ (1807–1808 թթ.), երբ նրանց հանձնվեց (նաև հույն պատրիարքին՝ իր համայնքի ներսում) ջիզյայի (խարաջ) գանձման իրավունքը, որ մինչ այդ իրականացնում էին պետական պաշտոնյաները՝ իլթիզամի (վարձակալական համակարգ) սկզբունքով:

XVIII դարում պատրիարքը շարունակում էր վճարել մուքաթաա կամ մախթու հարկը՝ տարեկան հարկը համայնքի բոլոր ծխերից, որ վաղուց ի վեր պահպանում էր իր կայուն չափը և, ինչպես նշվեց, հասնում էր 140 000 աքչեի: Վարձակալական համակարգի ծավալման պայմաններում մուքաթաան գանձելու իրավունքը ևս վաճառվում էր մյուս մյուլթեզիմ-կապալառուներին: Պետք է կարծել, որ հայ ամիրաները ևս անմասն չեն մնացել վարձակալական այս հնարավորությունից՝ մեծացնելով իրենց կարողությունը և պատրիարքների վրա ունեցած ազդեցությունը: Պատրիարքն էր հաստատում մյութեվելիներին (բերաթի վերահաստատմամբ), որոնք ընտրվում էին համայնքի ժողովում և ստանձնում էին վակֆերը կառավարելու եկամտաբեր գործը:

Հայտնի են Հ. Նալյանի և Գր. Պասմաճյանի ժամանակների (1742, 1761 թթ.) հայցագիրմումները՝ ուղղված կադիին՝ մյութեվելիների հրաժարականի և նրանց փոխարինողներին հաստատելու վերաբերյալ: Կ. Պոլսի Ս. Գեորգ եկեղեցու վակֆերի մյութեվելի Մահտեսի Առաքելի 1769 թ. տարեկան հաշվետվությունից պարզվում է, որ թաղի եկամուտները գոյանում էին վարձակալված խանութից, ձիթենու արհեստանոցից, այլ կալվածքներից և մուրհակներից: Մյութեվելիների, ինչպես և եկեղեցականների պաշտոնները ընտրովի էին, չկար նրանց պաշտոնավարության որոշակի ժամկետ: Այս վերջինը կախված էր տարբեր հանգամանքներից՝ ընտրված անձից և նրա հանդեպ համայնքի ու պատրիարքի վերաբերմունքից:

Մայրաքաղաքում (և զանգվածորեն՝ գավառներում) շարունակ խախտվում էին պատրիարքի իրավասությունները: Զաքարիա Կաղզվանցին արգելել էր ոմն կաթոլիկ հայի («ի հեստելոցն») Գալուստի որդու ամուսնությունը՝ պայման դնելով, որ նրա ցանկությունը կբավարարվի, եթե վերադառնա Հայ եկեղեցու ծոցը: Սակայն Գալուստը սուլթանի մեհտերպաշու (երաժշտախմբի գլխավորը) միջամտությանն է դիմում, որի անառարկելի հրամանից հետո պատրիարքը ստիպված էր զիջել և պսակի հրամանագիր տալ: Այս պատմությունը շարադրող, պատրիարքի ազգական Պողոս Կաղզվանցուն մնում էր միայն գոհանալ նրանով, որ հարսանիքի ժամանակ «ել հուր յանկարծ Աստուածուստ և այրեաց զտունն ամբարշտելոց»:

Պաշտոնյաների կամայականությունների առջև անզոր էին և՛ պատրիարքները, և՛ երևելիները: 1788 թ. ռուս–թուրքական պատերազմի ժամանակ, բանակի սուր կարիքներից ելնելով, մեծ վեզիր Յուսուֆ փաշան դիմեց միլեթներից հավելյալ դրամ շորթելու ինքնատիպ հնարքի. առաջարկեց հայերին, որ բանակին տրամադրեն 1000, հույներին՝ 2000 մարդ «հզօր ի պատերազմի»: Դա մի աննախադեպ քայլ էր, քանի որ քրիստոնյաները մինչ այդ բանակում ծառայելու փոխարեն վճարում էին ավարիզ և քյուրեկճի (նավատորմի համար) հարկերը: Հասկանալով մեծ վեզիրի հորինած խաղի իմաստը՝ հայերն ու հույները սակարկում են՝ նշված չափերը հասցնելով համապատասխանաբար 500–ի և 1800–ի, այդքան զինվորների փոխարեն գումար տրամադրելով, որ և տևեց մինչև ռուս–թուրքական և ավստրո–թուրքական պատերազմների ավարտը (1791 թ.): Միաժամանակ, մեծ վեզիրը հույներից, հրեաներից և հայերից էր պահանջել արծաթ՝ դրամահատության համար, ըստ որում՝ սահմանվեց կողոպտչական գնման գին՝ շատ ավելի ցածր, քան արծաթի շուկայական գինն էր: Հետևանքն այն եղավ, որ բավական թվով հայ ոսկերիչներ սնանկացան (ինչպես իրենց այլազգի արհեստակիցներից շատերը) «վասն պակասութեան արծաթոյ»: Անկախ դրանից՝ Կ. Պոլսում և ամբողջ երկրում տնտեսության վիճակը միայն անկում էր արձանագրում. 1717–1778 թթ. ղուրուշի գնողունակությունը նվազել էր 180 տոկոսով, բրնձի օխան[41] 1727 թ. արժեր 33, 1789 թ.՝ 200 փարա, շաքարը 1739 թ. 24–30 փարայից 1789 թ. հասել էր 70 փարայի, ածուխը, համապատասխանաբար, 45–ից 100 փարայի և այլն:

XVIII դ. պոլսահայ համայնքի ամենամարդաշատ տարրը՝ արհեստավորական առևտրական էսնաֆը, անմիջականորեն կրում էր օսմանյան տնտեսության մեջ կատարվող տեղաշարժերի հետևանքները: Ռազմահողատիրական համակարգի քայքայումը, որ խորանում էր հողատիրական հարաբերությունների լճացումով և արտադրողականության անկմամբ, իր բացասական ազդեցությունը թողեց վակֆի՝ սեփականատիրական հանգուցային ձևի և դրա իրացման, եկամուտների բաշխման հետագա բնույթի և դրանից ածանցվող գործոնների վրա: Օսմանյան գավառի քայքայումը և այնտեղից դեպի մեծ քաղաքներ արտազատվող գյուղացիական տարրի հայտնությունը այդ քաղաքներում և, առաջին հերթին, Կ. Պոլսում, Սալոնիկում, Իզմիրում և այլուր, նոր կենսապայմաններ էին թելադրում արհեստականորեն ուռճացող այդ կենտրոններին: Թվում է՝ շահում էր էսնաֆը, այդ թվում և հայ արհեստավորները, որոնք այդուհետև հանդիպելու էին զանգվածային պահանջարկի, որ պետք է խթաներ արհեստավորական արտադրանքի ծավալումը: Սակայն այդ պահանջարկը հույժ սահմանափակ էր, ճիշտ այնքան, որքան նորեկների գնողունակությունը: Կ. Պոլսի և հատկապես փոքրասիական քաղաքների էսնաֆը տարուբերվում էր հայտնի հակասականության մեջ. գյուղատնտեսական արտադրության թույլ զարգացածության պայմաններում պակասում էր գավառից եկող հումքը, իսկ մյուս կողմից՝ արհեստավորական արտադրանքը, սեղմված սպառողական պահանջարկի և հումքի սակավության շրջանակներում, այսուհանդերձ, բավարարում էր շուկան

[41] Մեկ օխան հավասար էր 1 կգ 283 գ:

և զարգացման թույլ ազդակներ ստանում դրա պահանջներից: XVIII դարում (և դեռ մինչև թանզիմաթ ու դրանից հետո) Կ. Պոլսի հայ արհեստավորությունը շարունակում էր պահպանել իր կենսունակությունն ու հասարակական կշիռը:

XVIII դարի վերջին հայ արհեստագործները միավորվում էին բազմաթիվ արհեստագործական կազմակերպությունների մեջ: 1789 թ. վերը նշված՝ արծաթի հարկահանության տակ ընկած մարդկանց մեջ հիշվում են 65, ապա 72 և ավելի մասնագիտության արհեստավորներ, իսկ դրանից առաջ՝ 1750 թ., մի վավերագրում հիշատակվում են 150–ից ավելի մասնագիտության արհեստավորներ: Կ. Պոլսում հայերի արհեստանոցները հայտնի էին իրենց տեղակայման վայրով: 18–րդ դ. 1–ին քառորդից հետո գրված մի վավերագրում հայ արհեստավորները հիշվում են ըստ իրենց բնակության թաղերի կամ վայրերի, որտեղ գտնվում էին իրենց արհեստանոցները՝ «Ղալաթիոյ եւ Պէկօղլուի տիլկերներն» (ատաղձագործները), «Շահզատէ պաշիի խաֆաֆ (գլխակագործ) էսնաֆքն», «Զաթալ խանի բապուճճիքն» (կոշկակարները) և այլն:

Կ. Պոլսի պատրիարքների ազդու միջնորդությամբ էր, որ Էջմիածնի կաթողիկոսը սուլթանական ֆերման էր ստանում օսմանյան պետությունից, առանց որի կաթողիկոսը չէր կարող գործառել այդ երկրում իր ունեցած ոչ միայն սովորական, այլև տերունի թեմերում: Նույն ժամանակներում Էջմիածինն աստիճանաբար կորցնում էր իր վերահսկողությունը Թուրքիայում ենթակա թեմերի վրա, որոնք անցնում էին Կոստանդնուպոլսի պատրիարքության իրավասության ներքո: Հովհաննես Կոլոտի ժամանակներից սուլթանի կողմից ոչ միայն կաթողիկոսի հաստատումը, այլև նրանց սեփականատիրական գործերին առնչվող մուրհակները և «այլ հոգալիքն սրբոյ աթոռոյ» կատարվում էին միայն պատրիարքի խնդրագրով: Քաղաքական ու կրոնական դերի այսպիսի շեշտակի բարձրացումը պատրիարքներին խոստանում էր նաև նյութական զգալի շահեր: Ըստ Սիմեոն Երևանցու՝ մինչև իր նախորդը՝ Հակոբ Շամախեցի կաթողիկոսը (1759–1763 թթ.), կաթողիկոսներին իրենց հաստատման հրովարտակի դիմաց տվել են որոշակի չափով միանվագ գումար՝ մուքաթաա տուրքը, 56 ղուրուշ, 26 փարա և 2 ստակ (ամբողջը՝ 6800 ստակ): Շամախեցին արդեն տվել էր 10 800 ստակ: Սիմեոնը նշում է, որ այդ ֆերմանի համար գումարի մեծացումը պատրիարքները պատճառաբանում էին Զմյուռնիայի՝ Էջմիածնի «տէրունի» թեմի համար ևս վճարելու սուլթանական պարտադրանքով:

Պատրիարքական իրավասությունների ընդլայնումը նշանակում էր օսմանյան քաղաքականության որոշակի իրագործում հայ կրոնական համայնքի նկատմամբ, այն է՝ ամբողջովին վերահսկելի դարձնել Թուրքիայի տարածքների հայկական վիճակները պատրիարքի հոգևոր իշխանության ընդարձակման միջոցով:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄՇԱԿՈՒՅԹԸ

Խոսելով XIII–XVIII դարերում օսմանյան մշակույթի մասին՝ պետք է ընդգծել, որ օսմանյան մշակույթը հարաբերական հասկացողություն է, քանզի Օսմանյան կայսրությունում հարյուրամյակների ընթացքում ստեղծված հոյակապ հուշարձանների գնահատման հարցում ակնհայտ է դառնում «թուրքական արվեստ» եզրի պայմանականությունը: Բազմաթիվ գլուխգործոցներում ընկած են ոչ միայն թուրքերի, այլև հույների, հայերի, սլավոնների, արաբների, իրանցիների և մյուս ժողովուրդների աշխատանքն ու վարպետությունը:

Սելջուկյան ժամանակաշրջանի մշակույթի հարցերին անդրադառնալիս մասնագետները և հիմնականում թուրք հեղինակները շեշտը դնում են, այսպես կոչված, «սելջուկյան» ճարտարապետության վրա՝ «մոռանալով», որ հասարակության զարգացման ամենացածր աստիճանի վրա գտնվող և դեռևս քոչվորական կյանք վարող սելջուկների համար, ինչպես իր ժամանակին նշել է ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, ճարտարապետությունը և առհասարակ քարի արվեստը միանգամայն խորթ երևույթ էին: «Սելջուկյան» ճարտարապետական կոթողները առավելապես վերաբերում են XIII դարի կեսերին, որոնցից են սելջուկյան սուլթան Ալաեդդին Կեյկոբատի կառուցել տված «Ինջե մինարեի» անվանված մզկիթը, հենց նրա ժամանակ Կոնիայում կառուցված պալատը, խոշոր խաները, քարավանատները և այլն: Այդ կառույցների հեղինակների մասին խոսելիս ակադեմիկոս Վլ. Գորդլևսկին նշում է հայ ճարտարապետներին, հատկապես մայրաքաղաք Իկոնիայում, որտեղ արձանագրված են հայ ճարտարապետների անունները:

Սելջուկյան ժամանակաշրջանում իրենց զարգացումն ունեցան նաև արվեստի շատ ճյուղեր, ներառյալ զարդարվեստը, ոսկերչությունը, քանդակագործությունը, նույնիսկ մանրանկարչությունը: Այդ բոլոր բնագավառներում ստեղծագործողները, նախ և առաջ, հպատակ քրիստոնյաներն էին:

1. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գեղարվեստական գրականությունը մեծապես գտնվում էր իրանական մշակույթի ազդեցության ներքո և մեծ մասամբ մեզ է հասել պարսկերենով: Սելջուկյան գեղարվեստական գրականության ամենակարկառուն դեմքը Ջելալեդդին Ռումին էր: Պարսկերեն գրված և սուֆիական բովանդակություն ունեցող երկերից է «Մեսնեմե-ի մաննի» («Գաղտնի իմաստ ունեցող պոեմ») «դիվանը», որը նրա բանաստեղծությունների ժողովածուն է:

Խոշորագույն միստիկ բանաստեղծ էր Ջելալեդդին Ռումիի որդի Վելեդը, որի՝ մեզ հասած ամենահայտնի բանաստեղծությունների ժողովածուն կոչվում է «Վելեդ Նամե» («Վելեդի գիրք»): Եվ Ջելալեդդին Ռումին, և նրա որդի Սուլթան Վելեդը քրիստոնյա հպատակների նկատմամբ հանդուրժողական քաղաքականություն են քարոզել ու գրել են, որ բոլոր ժողովուրդները, կրոնները և լեզուները հավասար են:

Բանաստեղծ Սուլթան Վելեդի ժամանակակիցն էր Կաստամոնուում ծնված Յունուս Էմրեն, որի բանաստեղծությունները գրված են ժողովրդի համար հասկանալի լեզվով:

XV–XVII դարերում օսմանյան մշակույթի մեջ առավել զարգացում ունեցավ պոեզիան, որն առաջվա նման մեծապես գտնվում էր իրանական ազդեցության ներքո: Այս ժամանակաշրջանում հրապարակ եկավ բանաստեղծների մի ամբողջ համաստեղություն, որոնցից ամենակարկառունն էր Ալի Աշտի փաշան, որը ծնվել էր Իրանում: Նրա գլուխգործոց բանաստեղծությունների ժողովածուն խորագրված է «Ղարիբ Նամե», որի մեջ բանաստեղծը դեպի մարդ արարածը տածած սերը վերագրում է միայն մուսուլմաններին, իսկ ոչ մուսուլմանները արգահատանքի արժանի գյավուրներ են՝ «ստորի ստորը»:

XV դարի վերջի և XVI դարի սկզբի թուրք բանաստեղծների մեջ աչքի են ընկել Ահմեդ փաշան, Նեջատը, բանաստեղծուհի Միհրի Խաթունը և այլք: Այս նշված հեղինակների բանաստեղծական լեզուն խրթին օսմաներենն է՝ հագեցած արաբերենով ու ֆարսերենով:

Տաղանդավոր բանաստեղծ է եղել Իսա Նեջատը (1460–1509 թթ.) Ամասիայից, որը ծագումով եղել է քրիստոնյա հպատակ:

Թուրքիայում մեծ ժողովրդականություն էր վայելում բանաստեղծուհի Միհրի Խաթունը (մահացել է 1516 թվականին): Միհրի Խաթունը հիմնականում սիրո երգիչ է, թեև ունի խրատաբարոյական բնույթի բանաստեղծություններ:

XVI դարի բանաստեղծների մեջ աչքի ընկած Իլյաս Ռեանին իր բանաստեղծություններում երգում է սերը, հեշտանքը, գինին: Ի տարբերություն նրա՝ այդ նույն ժամանակ գործած բանաստեղծ Խիալեի բանաստեղծությունների զգալի մասն ունի միստիկ ասկետական բնույթ:

XVI դարի վերջի և XVII դարի սկզբի Օսմանյան կայսրության ամենակարկառուն բանաստեղծը Բաքին (1527–1600 թթ.) էր: Նա սուլթան Սուլեյմանի սիրելին էր և հովանավորվում էր նրա կողմից: Մեզ են հասել լիրիկական ոգով գրված նրա բանաստեղծությունների մի քանի ժողովածուներ: Բաքիի բանաստեղծությունները ոչ միայն իրենց վրա կրում են իրանական պոեզիայի ազդեցությունը, այլև հաճախ ուղղակի դրանց փոխառումներն են:

XVII դարում պալատական երգիչների մեջ մենք տեսնում ենք նոր դեմքեր, որոնցից են Վեյսին (1561–1628 թթ.), Օմեր Նեֆին (1572–1635 թթ.) և այլք: Վեյսիին համընդհանուր ճանաչում են բերում նրա երգիծական երկու երկասիրությունները՝ «Վակաա-նամե» («երազատեսություն») և «Նասիհաթ-ի Իսլամբուլ» («Ստամբուլի խրատները»): Առաջին երկում հեղինակը բանաստեղծական լեզվով սուր քննա-

դատության է ենթարկում պետական ապարատի թերացումները՝ բացահայտելով նրա հոռի գործունեության շատ կողմեր: Ավելի սուր քննադատության է ենթարկում պետական ապարատի պաշտոնյաների տգիտությունը, կամայականությունները իր կյանքի մայրամուտին իր երկրորդ՝ վերոնշյալ ժողովածուում:

Բանաստեղծ Օմեր Նեֆին ծնվել էր Էրզրումում և թուրքական գեղարվեստական գրականության մեջ համարվում է առավել շնորհաշատը: Նա հատկապես աչքի է ընկել ավատատիրական վերնախավի կենցաղի, բարքերի և առհասարակ գործունեության ամենասուր քննադատությամբ: Դա հատկապես արտացոլված է նրա «Սիհամ-ի կազա» («Ճակատագրի սխալները») խորագիրը կրող ժողովածուում: Իր սուր գրչի և լեզվի համար Նեֆին չարաչար տուժեց: Ավատատիրական վերնախավը, ստանալով սուլթան Մուրադ Դ-ի համաձայնությունը, նրա հետ հաշվեհարդար տեսավ:

XVII–XVIII դարերում Օսմանյան կայսրության մեջ որոշակիորեն նկատվող քաղաքական անկումն իր անդրադարձն ունեցավ նաև օսմանյան մշակույթի վրա ընդհանրապես և գեղարվեստական գրականության վրա՝ մասնավորապես: Հիրավի, ականավոր որևէ մի խոշոր դեմքի այդ բնագավառում մենք չենք հանդիպում: Հիշատակվում են միայն մի քանի բանաստեղծների անունները, որոնց աշխատությունները չունեին նախորդ դարաշրջանների հմայքն ու փայլը: Այդպիսիք են Մահմուդ Նիյազին (1617–1693 թթ.), Յուսուֆ Նեբի Էֆենդին (1640–1712 թթ.), Ալաեդդին Սաբին (մահ. 1712 թ.), Ահմեդ Նեդիմը (մահ. 1730 թ.), Սյուրսուրին, Վեհբի Ֆազըլ բեյն ու այլք:

2. ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գիտական երկերը սելջուկյան ժամանակաշրջանում գրվում էին առավելապես աստվածաբանության բնագավառում և, որպես կանոն, շարադրվում էին արաբերեն:

Մեզ են հասել սելջուկյան ժամանակաշրջանին վերաբերող պատմական երկերը՝ ժամանակագրությունները: Այդ բնագավառում ամենախոշոր ներկայացուցիչը Նասրեդդին Յահյան էր, որը առավելապես հայտնի է Իբն Բիբի անունով: Նրա երկերը գիտական շրջանառության մեջ է մտցրել հոլանդացի արևելագետ Թ. Հուտսման: Նրա ժամանակագրությունն ընդգրկում է 1188-ից մինչև 1282 թվականը տեղի ունեցած իրադարձությունները: Ժամանակագրությունը գրված է 1282–1285 թվականներին:

XV դարում սուլթան Մուրադ Բ-ի պատվերով Իբն Բիբիի ժամանակագրությունից թուրքերենով քաղվածական թարգմանությունները կատարեց Յազըջի օղլի Ալին: Նա իր կատարած թարգմանությանը տվեց «Սելջուկ-Նամե» վերնագիրը, որն ավելի հաճախ հայտնի էր նաև «Օղուզ Նամե» վերնագրով:

XV–XVII դարերում օսմանյան պետությունում մեծ զարգացում ունեցավ նաև պատմագրությունը: XV դարի երկրորդ կեսին հանդես եկան մի շարք թուրք պատմիչներ, որոնց աշխատություններն ունեն միևնույն՝ «Թեվարիխ-ի ալ-ի Օսման» («Օսմանյան տան պատմություն») խորագիրը: Նրանք են Օրուջ Ադիլը, Աշըքփաշազադեն, Մեհմեդ Նեշրին և այլք: Օրուջ Ադիլի աշխատության մեջ շարադրվում է օսմանյան պետության պատմությունը՝ սկզբնավորումից մինչև Մեհմեդ Բ-ի ժամանակաշրջանը ներառյալ: Օրուջ Ադիլի սույն աշխատությունը առաջին անգամ հրատարակվեց 1925 թ. գերմանացի արևելագետ Ֆրանց Բարինգերի կողմից: Աշըքփաշազադեի աշխատության մեջ օսմանյան պետության պատմության շարադրանքը հասցված է մինչև 1478 թ.: Աշըքփաշազադեի ժամանակագրությունն առաջին անգամ հրատարակվել և ուսումնասիրվել է գերմանացի թուրքագետ Ֆրիդրիխ Գիզեի կողմից:

Մեհմեդ Նեշրիի մասին մեր գիտելիքները չափազանց սուղ են: Նրա ժամանակագրությունը խորագրված է «Ջիհան-Նումա» («Աշխարհի հայելին»), որը ոչ այլ ինչ է, քան մի հուշագրություն այլ աղբյուրներից: Նա իր ժամանակագրությունը սկսում է Իկոնիայի սելջուկյան սուլթանության պատմությունից և հասցնում այն մինչև 1485 թ. դեպքերի շարադրանքը:

XVI–XVII դարերում օսմանցի ժամանակագիրների աշխատությունները կրում են որակական փոփոխություններ: Արդեն սուլթան Սելիմ Յավուզի ժամանակ պալատին կից ստեղծվում են պետական, պաշտոնական ժամանակագիրներ, այսպես կոչված՝ վակաի նևիսներ, այսինքն՝ նրանք, ովքեր հետևողականորեն պաշտպանել են օսմանյան վերնախավի գաղափարախոսությունը: Այդ ժամանակագիրների թվին են պատկանում Սեադեդդին Հոջա էֆենդին, Սոլակզադեն, Նաիման, Բյաթիբ Չելեբին, Մուստաֆա Սելանիկին, Էվլիա Չելեբին, Կարա Չելեբիզադեն, Կոչիբեյ Բյումյուրջելին և այլք:

Պատմագիր, շեյխ-ուլիսլամ Սեադեդդին Հոջա Էֆենդին մեզ է թողել երկու հատորանոց «Թաջ ութթևարիխ» («Պատմության թագը») խորագիրը կրող աշխատությունը, որում հանգամանորեն շարադրված է օսմանյան պետության պատմությունը սկզբնավորումից մինչև 1520 թ. դեպքերը: Նա իր կողմից շարադրված նյութերի մեծ մասի կամ ականատեսն է եղել, կամ էլ այլ դեպքերում ձեռքի տակ է ունեցել հավաստի տեղեկություններ:

Սոլակզադեի թողած ժամանակագրությունը, որը խորագրված է «Թարիխ-ի Սոլակզադե» («Սոլակզադեի պատմություն»), ոչ այլ ինչ է, քան նախորդ հեղինակների աշխատությունների քաղագրությունը և վերաշարադրանքը: Աշխատության ժողովրդականությունը պայմանավորված էր հեղինակի մատչելի լեզվով շարադրանքով:

Իբրահիմ Փեչևիի (1574–1650 թթ.) երկու հատորանոց աշխատությունը, որը խորագրված է «Թարիխ-ի Փեչևի» («Փեչևիի պատմություն»), ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունը 1520-ից մինչև 1639 թվականն ընկած ժամանակաշրջանը: Անձամբ մասնակցելով բազմաթիվ արշավանքների եվրոպական և ասիական ճակատներում՝ նա պատմական իրադարձությունները նկարագրում է որպես անմիջական ականատես:

Մուստաֆա Նաիմայի «Թարիխ-ի Նաիմա» («Նաիմայի պատմություն») վերնագրված աշխատությունը դարձյալ մի քաղագրություն է, և հեղինակը իր երկասի-

ության տարբեր էջերում մատնացույց է անում իր օգտագործած հեղինակներին՝ Ի. Փեչևի, Ք. Չելեբի և այլք:

XVII դարի ամենաականավոր թուրք պատմագիրն էր Մուստաֆա Աբդուլլահ Քյաթիբ Չելեբին (1609–1657 թթ.): Գիտական մեծ կարողություններով օժտված և բարձր կրթություն ստացած Քյաթիբ Չելեբին կամ Հաջի Խալֆեն մեզ է թողել հարուստ ժառանգություն՝ պատմության, աշխարհագրության, տիեզերագիտության, մատենագիտության և այլ բնագավառներից:

Նրա ստվարածավալ պատմական աշխատությունը խորագրված է «Ֆեզլեքե» («Ընդհանրացում») և ընդգրկում է Օսմանյան կայսրության պատմությունը 1592–ից մինչև 1654 թվականը: Նրա պատմության առավել արժեքավոր ու առավել հավաստի մասը կազմում են 1630 թվականից հետո ընկած ժամանակաշրջանի մասին հաղորդած վկայությունները, երբ հեղինակը իրադարձությունների մեծ մասը նկարագրում է որպես ականատես և ժամանակակից: Պատմությանը և աշխարհագրությանը վերաբերող նրա մյուս աշխատությունը՝ «Ջիհան Նումա» («Աշխարհի հայելին»), վերաբերում է Օսմանյան կայսրության վարչական բաժանմանը:

Մասնագետների կողմից առանձնապես բարձր գնահատանքի է արժանացել Էվլիա Չելեբին իր տասը հատորանոց «Սեյահեթ–նամե» («Ճանապարհորդության գիրք») աշխատությամբ: Էվլիա Չելեբին շուրջ քառասուն տարի ճանապարհորդել է Օսմանյան կայսրության համարյա բոլոր նահանգներում, և ժողովրդական բառուբանով նա շարադրել է իր տեսածն ու անցկացրածը:

Օսմանյան կայսրության ներքին կյանքի վերլուծությանն է նվիրված ականավոր հասարակական ու քաղաքական գործիչ Կոչիբեյի աշխատությունը «Ռիսալե–ի Կոչիբեյ» («Կոչիբեյի ուղերձը») խորագրով: Այդ ուղերձը կամ զեկուցումը ներկայացվել է սուլթան Մուրադ Դ–ին XVII դարի 30–ական թվականներին, իսկ նրա մեկ այլ ուղերձը կազմվել է քիչ ավելի ուշ սուլթան Իբրահիմի պահանջով:

Կոչիբեյի այս երկու ուղերձները խիստ հարուստ են օսմանյան պետականության անկման ախտանիշների վերաբերյալ արժեքավոր նյութերով: Կոչիբեյն իր ուղերձներում հատուկ ուշադրություն է դարձնում պետական, վարչական ապարատում տարածված կաշառակերությանը, գողությանը ու բիրտ կամայականություններին:

Օսմանյան կայսրության ներքին սոցիալ–տնտեսական բազմաթիվ ու բազմաբնույթ նյութերի կարելի է հանդիպել նաև Կարաչելեբիզադեի ժամանակագրության մեջ: Եվս մի աշխատություն անմիջական աղերս ունի կայսրության ներքին կյանքին և, առհասարակ, ռազմավատական համակարգին. դա XVII դարի ականավոր այր Այնի Ալիի «Կավանինի ալ–ի Օսման, դեր հուլեսե–ի մեզամին–ի դեֆթեր–ի դիվան» («Օսմանյան օրենքները և դիվանի արձանագրությունների բովանդակությունը») վերնագրված աշխատասիրությունն է:

XVIII դարում պատմագրության բնագավառում շարունակում էր զարգացում ունենալ պետական պաշտոնական ժամանակագրությունը, որի կարկառուն դեմքերն էին Մեհմեդ Ռաշիդը, Իսմայիլ Ալ–Ազըմը՝ Կյուչյուկ Չելեբիզադե մականվամբ, Մուստաֆա Սամին, Հուսեին Շաքիրը, Սուլեյման Իզզին, Սաղուլլահ Էնվերին, Ահմեդ Վասըֆը, կան նաև այլ բնույթի պատմագիտական աղբյուրներ, որոնց մեջ հատկապես հիշարժան է Ահմեդ Նեդիմի՝ նույն ինքը՝ Մյունեջիմ Բաշիի «Թարիխ–ի Մյունեջիմբաշը» խորագիրը կրող արժեքավոր երկասիրությունը:

3. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

Քյութահիայում (Կուտինա) արվեստի կատարելագործությանը հասած հախճապակու, ճենապակու արտադրության կենտրոնը Իզնիկում էր, իսկ այնուհետև՝ XVII դարի սկզբին, տեղափոխվեց Քյութահիա և համարյա ամբողջությամբ հայ արհեստավորության ձեռքում էր: Այդ են վկայում մեզ հասած նմուշները, որոնց վրա տեղադրված են աստվածաշնչային թեմաներով կերպարներ և հայերեն արձանագրություններ, իսկ արդի թուրք պատմագրության ներկայացուցիչները այդ բոլորն, ինչպես ասվեց, վերագրում են իրենց նախնիներին: Եվ զարմանալի ոչինչ չկա, որովհետև գործը երբեմն հասնում է այնտեղ, որ քրիստոնեական եկեղեցիներում անգամ վարագույրների և այլ կերպասեղենի վրա եղած զարդարանքները համարվում են «թուրք» վարպետների աշխատանքներ:

Անկում է նկատվում նաև արվեստի բնագավառում: Սկսած XVIII դարից՝ Օսմանյան կայսրության արվեստների վրա մեծապես նկատելի է եվրոպական և, ի մասնավորի, ֆրանսիական ազդեցությունը:

Դա նկատելի է հատկապես ճարտարապետության բնագավառում: Ստեղծվում է խառը օսմանա–եվրոպական ճարտարապետական ոճ: Սուլթաններ Մահմուդ Ա–ը և Սելիմ Գ–ը Եվրոպայից տնական հրավիրում էին ականավոր ճարտարապետների և նրանց հանձնարարում այս կամ այն կառույցի շինարարությունը:

XVIII դարում ընդհանուր անկում է նկատվում նաև մանրանկարչության բնագավառում: Այս հենքի վրա մշակույթի բնագավառում խոշոր նվաճում են համարվում ծագումով հունգարացի Իբրահիմ Մութաֆարիկայի կողմից մայրաքաղաքում տպարանի հիմնադրումը և, սկսած 1729 թվականից, գրքերի հրատարակումը:

Ի դեպ՝ նշենք նաև այն, որ այդ նույն մայրաքաղաքում հայերը դեռևս XVI դարի 60–ական թվականներին հիմնադրել էին իրենց տպարանը:

4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

XVI դարից սկսած՝ օսմանյան պետության հզորացման հետ մեկտեղ նախկին փոքր շինությունների փոխարեն երկրի ուժը խորհրդանշող ճարտարապետական կոթողների ստեղծման անհրաժեշտություն զգացվեց: Դրա համար նրանք իրենց աչքի առաջ պատրաստի ունեին ճարտարապետական մտքի թռիչքը հանդիսացող այնպիսի մի կոթող, որպիսին էր մայրաքաղաքի Այա Սոֆիայի (Սուրբ Սոֆիա) տաճարը: Սելջուկյան ժամանակաշրջանից հետո և հատկապես XVI դարում օսմանյան ճարտարապետության հետագա զարգացումը կապված էր հանճարեղ ճարտարապետ Սինանի գործունեության հետ, որը ծագումով կեսարացի հայ էր:

Սինանի հիմնական գլուխգործոցները՝ Շահզադե Սուլեյմանին և Սելիմիե մզկիթները, կառուցվել են Այա Սոֆիա տաճարի օրինակով:

Սինանի ժամանակաշրջանը համարվում է օսմանյան ճարտարապետության ոսկե դարը: Սինանի բազմաթիվ աշակերտները, որոնց մեջ դարձյալ զգալի թիվ էին կազմում «դևշիրմե» հայերը, կառուցեցին բազմաթիվ հոյակապ մզկիթներ, բազարներ, չքնաղ պալատներ, մեդրեսեներ, որոնք աչքի են ընկնում սինանյան ճարտարապետական դպրոցի գունագեղությամբ և ներդաշնակությամբ:

Մայրաքաղաք Կ. Պոլսի աչքի ընկնող ճարտարապետական հուշարձաններից մեկը՝ Նուր Օսմանիե մզկիթը, նույնպես կառուցվել է հայ ճարտարապետ Սիմեոնի կողմից:

Թուրքիայի ճարտարապետության ձևավորման և զարգացման պատմությունը բաժանվում է երեք հիմնական փուլերի՝ սելջուկյան, օսմանյան և ժամանակակից:

Քոչվոր սելջուկ-թյուրքերը, չունենալով սեփական ճարտարապետական ավանդույթներ, կիրառեցին և յուրացրին, առաջին հերթին, բյուզանդական և հայկական շինարարական արվեստը, որը դարձավ սկզբում սելջուկյան, ապա օսմանյան ճարտարապետության հիմքը: Նրանք փոխառեցին նվաճված ժողովուրդների շինարարական տեխնիկան, կոնստրուկցիաների ձևերը, հարդարանքի միջոցները:

Սելջուկյան շրջանի թուրքական ճարտարապետության մասին պատկերացում են տալիս Կոնիայի (սուլթանության մայրաքաղաքի), ինչպես նաև Սվասի, Կայսերիի, Էրզրումի առանձին պահպանված կառույցները, մեծ մասամբ՝ կիսավեր: Այդ շրջանի սելջուկյան աշխարհիկ շինությունները՝ պալատները, կարավանատները («խաները»), բաղնիքները, շատ դեպքերում ունեին պաշտպանական կառույցներին բնորոշ գծեր: Այդպիսին էին Ղլիճ-Արսլան Բ-ի պալատը Կոնիայում (1156-1192 թթ.), Քեյ-Կուբատի (1227-1235 թթ.) պալատը Քուբադաբադում, որոնք կազմված էին մի շարք շինություններից: Ամրացված կարավանատները երեք տիպի էին՝ ամբողջովին ծածկված, ներքին բակով և ծածկված դահլիճով ու բակով: Սելջուկյան քարավանատան բնորոշ և լավագույն օրինակն է Սուլուզ-խանը (1229 թ.) Անթալիայից Բուդուր տանող ճանապարհին՝ որմնահեց-աշտարակներով ուժեղացված պատերով, ստալակտիտային խորշով խոշոր շքամուտքով: Սելջուկյան մոնումենտալ կառույցների ճարտարապետական կերպարում կարևոր դեր է խաղում ճակատների հարդարանքը՝ զարդանախշերով ջնարակած սալիկները, երեսպատման քարերի մշակումը՝ ոճավորված բուսական և երկրաչափական զարդաքանդակներով, ու հիմնական շեշտը՝ շքամուտքերը, որոնց հարդարանքի կարևոր տարրերից են արաբատառ զարդանկար արձանագրությունները:

Թուրքիայի տարածքի սելջուկյան պաշտամունքային շենքերից են բազմաթիվ մզկիթները, մեդրեսեները, դամբարանները: Պահպանված վաղագույն մզկիթներից է Այա-Էդ-Դինի մզկիթը Կոնիայում (1156-1220 թթ.), որի աղոթասրահը միհրաբի դիմաց ծածկված է կրկնակի գմբեթով: Սելջուկյան ճարտարապետության ձևավորման գործընթացում զգալի դեր ունեն հայերը: Ըստ շինարարական արձանագրությունների՝ 1271 թ. Քալոյանը կառուցել է Սեբաստիայի (Սվազ) Գեյուկ-մեդրեսեն,

Ստեփանի որդի ճարտարապետ Թագավորը՝ 1274 թ. սելջուկյան լավագույն մեդրեսեներից մեկը Մալաթիայում, Գալուստը (XIII դ.)՝ Դիվրիկի մզկիթը և Իկոնիայի մեդրեսեն: Հայ ճարտարապետների և վարպետների կառուցած սելջուկյան դամբարաններն աչքի են ընկնում հայկական ազգային ճարտարապետական ձևերի ու դեկորի օգտագործումով: Օրինակ՝ եկեղեցիների կամարաշարով զարդարված բազմանիստ թմբուկով ու սրածայր վեղարով գմբեթի ձևը կիրառվեց Ախլաթի, Էրզրումի և այլ վայրերի XIV դ. դամբարաններում՝ «թյուրբեներում»:

Օսմանյան պետության գոյության առաջին տարիներին հիմնականում կառուցվում էին ամրոցներ, որոնցից իր անառիկությամբ առանձնանում է Ռումելի Հիսարը (1452 թ.), որի աշտարակներից հյուսիսարևմտյանն ունի 28,5 մ բարձրություն և մոտ 24,5 մ տրամագիծ, իսկ արևմտյանը՝ համապատասխանաբար 21,5 մ և 27,5 մ չափեր:

Օսմանյան ճարտարապետությունը ունեցավ զարգացման երկու փուլ: Առաջինը՝ XIV դ. և XV դ. առաջին կեսը, բնորոշվում է սելջուկյան շրջանի ճարտարապետության ձեռքբերումների ու փորձի օգտագործումով: Երկրորդ փուլը սկսվեց XV դ. երկրորդ կեսից՝ Կոստանդնուպոլսի գրավումից հետո, երբ կարևոր դեր խաղաց բյուզանդական շինարարական արվեստի նվաճումների կիրառումը:

Օսմանյան Թուրքիայի առաջին մայրաքաղաք Բուրսան ուներ արևելքից արևմուտք ձգված հոծ կառուցապատում, որի արևմտյան մասում միջնաբերդն էր, իսկ արևելքում՝ առևտրահասարակական կենտրոնը ծածկված շուկայով, կարավանատներով, մեդրեսեներով, բաղնիքներով: Բնակչության տեղաբաշխումը իրականացված էր ըստ ազգային պատկանելության. առանձին թաղամասեր էին հատկացված հույներին, հայերին, հրեաներին:

Օսմանյան շրջանում կարավանատներն ունեին միայն առևտրական նշանակություն և կառուցվում էին շուկաների մոտ: Բուրսայում դրանք մեծ մասամբ երկհարկանի էին (Էմիր-խան, 1339 թ. և ուրիշներ): «Խաների» շենքերն ունեն կանոնավոր ուղղանկյուն (մեծ մասամբ՝ քառակուսի) հատակագիծ՝ պատերի պարագծով ներսից կից կառուցված սենյակներով և սյունասրահով, բակի կենտրոնում՝ ջրավազանով:

XIV-XV դդ. իրենց ճարտարապետական-գեղարվեստական լուծումներով առանձնանում են Բուրսայի մզկիթները՝ շքեղ հարդարված ինտերիերով Եշիլ-ջամին (Կանաչ մզկիթը, 1413-1421 թթ., ճարտարապետ՝ Հաջի Եյվազ) և բազմագմբեթ ծածկով Ուլու-ջամին (Մեծ մզկիթը, 1396-1400 թթ.):

Կոստանդնուպոլսի գրավումից հետո սկսվեց օսմանյան ճարտարապետության զարգացման երկրորդ՝ ծաղկման շրջանը: Օսմանյան կայսրությունը, տարածվելով Իրաքից մինչև Հունգարիա և Եգիպտոսից մինչև Կովկաս, հսկայական նյութական միջոցների տեր դառնալով և օգտագործելով նվաճված երկրների շինարարական-ճարտարապետական ներուժը, կարողացավ իրականացնել խոշոր ծրագրեր և ճարտարապետական մեծ համալիրների (պալատական, առևտրական, ուսումնական և այլն) կառուցումը: Հատկապես շինարարական մեծ աշխատանքներ իրագործվեցին կայսրության նոր մայրաքաղաքում՝ Ստամբուլում (Կոստանդնուպոլսում): Այստեղ XV-XVI դդ. կազմավորվեց շուկայական մեծ համալիր՝ 34 հա տարածքով,

շատրվաններով հրապարակների և փողոցների կանոնավոր համակարգով, կառուցապատված «խաներով», «բեղեստաններով» (ծածկված շուկաներով), բաղնիքներով, մզկիթներով: Ձևավորվեց սուլթանական Թոփկափը պալատական համալիրը: Խոշոր ճարտարապետական համալիրների, շքեղ պալատների կառուցումը կոչված էր ցուցադրելու Օսմանյան կայսրության հզորությունը:

Պաշտամունքային ճարտարապետությունում ձևավորվեց «դասական ոճը», որի սկզբունքները նախապես արտահայտվեցին Ստամբուլում՝ Բայազետ Բ-ի մզկիթում (1501–1506 թթ., ճարտարապետ՝ Հայրեդդին-աղա): Սակայն «դասական ոճը» ձևավորվեց հայազգի ճարտարապետ Սինանի ստեղծագործություններում, որի անվան հետ են կապված թուրքական ճարտարապետության ամենանշանակալի հաջողությունները: Այս երկարակյաց ճարտարապետը (1490–1588 թթ.), որը միաժամանակ և տաղանդավոր ճարտարագետ էր, իր մեկդարյա կյանքի ընթացքում կառուցեց շուրջ 360 շինություն: Միայն Թուրքիայի տարածքում կառուցել է 131 մզկիթ, 55 մեդրեսե, 19 դամբարան, 31 պալատ, յոթ գրադարան, ութ կամուրջ, հինգ ջրանցույց, 17 կարավանատուն, 35 բաղնիք, ինչպես նաև մզկիթներ Բոսնիա և Հերցեգովինայում (Սարաևո, 1531 թ.), Ուկրաինայում (Ղրիմ-Եվպատորիա, 1552 թ.), Մակեդոնիայում (Բիտոլ, 1561 թ.), Սիրիայում (Դամասկոս, 1554 թ.), կամուրջ Դրինա գետի վրա՝ Բոսնիա և Հերցեգովինայում (1571 թ.) և այլն: Այս հարյուրավոր ստեղծագործություններից ինքը՝ Սինանը, առանձնացնում էր երեք մզկիթ՝ Շահ-Զադեն (1543–1548 թթ.) և Սուլեյմանիեն (1557 թ.) Ստամբուլում ու Սելիմիեն (1566–1574 թթ.) Էդիրնեում (Ադրիանապոլիս): Սինանը ստեղծագործաբար վերամշակեց բյուզանդական շինարարական արվեստի շատ սկզբունքներ, առաջին հերթին՝ մոնումենտալ շենքերի (մզկիթների) ինտերիերի կազմակերպման խնդիրը՝ ստեղծելով հսկայական, առանց ջլատումների, միասնական գմբեթածածկ տարածություն, որը համապատասխանում էր մահմեդական կրոնի ծիսական պահանջներին: Միաժամանակ Սինանի կառույցներում ճարտարապետական խնդիրները սերտորեն կապված են գեղարվեստական խնդիրների լուծման հետ: Սինանի ստեղծագործություններն իրավամբ համարվում են թուրքական ողջ ճարտարապետության գագաթնակետը:

XVII–XVIII դդ. Օսմանյան կայսրության տնտեսական և քաղաքական ճգնաժամը բացասական անդրադարձավ նաև ճարտարապետության զարգացման գործընթացի վրա: Կառուցվող սակավաթիվ պաշտամունքային ու աշխարհիկ շենքերը կրկնում էին հիմնականում XVI դ. հորինվածքներն ու ձևերը: Ճարտարապետությունում և դեկորատիվ արվեստում նոր երևույթ դարձավ եվրոպական արվեստի ազդեցությունը՝ բարոկկոյի և ռոկոկոյի ոճերի ներթափանցումը (դրան նպաստեց նաև եվրոպական ճարտարապետների ու նկարիչների աշխատանքի հրավիրումը Թուրքիա): Եվրոպական արվեստի ոճերի ազդեցությունն արտահայտվեց ոչ միայն աշխարհիկ շենքերի ճարտարապետությունում ու հարդարանքում, այլև պաշտամունքային, օրինակ՝ Ստամբուլի Նուր Օսմանիե (1748–1755 թթ., ճարտարապետ՝ Սիմոն Քալֆա) և Լալելի (1759–1763 թթ.) մզկիթներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 1591, 4515, 6273:

Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն, Երևան, 1938:

Անասյան Հ., Թուրքական ֆութուվվաթը և հայերը: «Հասկ», Անթիլիաս, 1995, էջ 221–256:

Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957:

[Արիստակես Լաստիվերցի], Պատմութիւն Արիստակեայ Լաստիվերցւոյ, Երևան, 1963:

Բայբուրդյան Վահան, Թուրք-օսմանների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը և դրա համաշխարհային պատմական հետևանքները, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VI, Երևան, 2009, էջ 32–57:

Գևորգյան Վ., Թուրքական գործոնը խաչակրաց շարժման ձևավորման մեջ, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», I, Երևան, 2002:

Երեմիա Քեօմուրճեան, Պատմութիւն համառօտ ԴԾ տարւոյ Օսմանցոց թագաւորացն, աշխատասիրությամբ Ժ. Մ. Ավետիսյանի, Երևան, 1982:

Երեմյան Ս. Տ., Լիպարիտ զորավարի հաջորդները և Դանիշմանյան տոհմի ծագման խնդիրը, ՀԽՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1947, թիվ 8, էջ 65–81:

Ջուլալյան Մ. Կ., «Դեշիրմեն» (մանկահավաքը) Օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊԲՀ, 1959, 2–3:

Ջուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI–XVIII դդ., Երևան, 1980:

Ջուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումն ու հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Երևան, 1966:

Թովմա Մեծոփեցի, Պատմագրութիւն: Աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, «Մագաղաթ», 1999:

Խաչիկյան Լ. Ս., ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն երկրորդ (1451–1480), Եր., 1958:

Խաչատրյան Պ. Մ., Հայ միջնադարյան պատմական ողբը, Երևան, 1969:

Խառատյան Ա. Ա., Կոստանդնուպոլսի հայ գաղթօջախը (XV–XVII դարեր), Երևան, ԵՊՀ հրատ., 2007:

Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ., հատոր I–II: Կազմեց՝ Վ. Հալոբյան, Երևան, 1951, 1956:

Հովհաննես Սեբաստացի, Պատմութիւն Սեբաստիոյ, աշխատասիրությամբ Բ. Լ. Զուգասզյանի, Երևան, 1974:

Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Գ, Վենետիկ, 1786:

Սաֆրաստյան Ռ., Օսմանյան պետություն. ծագումնաբանության որոշ առանձնահատկություններ, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», VI, Երևան, 2009:

«Օսմանյան օրենքները Արևմտյան Հայաստանում», թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Ա. Խ. Սաֆրաստյանի և Մ. Կ. Ջուլալյանի, Եր., 1964:

Босворт К. Э., Мусульманские династии, М. 1971.

Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А. Очерки истории Турции, М., "Наука", 1983.

Гордлевский В. А., Государство Сельджукидов Малой Азии,– Избранные сочинения, т. 1, М., 1960.

Гумилев Л. Н., Древние тюрки, Москва, 1967.

Гусаков В., Центральноазиатская экспансия тюрок в VI–VII вв., эволюция их взаимоотношений с местным населением, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», V, Երևան, 2008, էջ 85–91:

Дружинина Е. И., Кучук-Кайнарджийский мир 1774 года (его подготовка и заключение), М., 1955.
Искусство стран и народов мира, том 4, Москва, 1978.
Карпов С. П., Трапезундская империя и западноевропейские государства в XIII–XV вв., М., изд. МГУ, 1981.
Маркова О. П., Россия, Закавказье и международные отношения в XVIII в., М., 1966.
Микаелян Г. Г., История Киликийского армянского государства, Ереван, 1952.
Миллер Ю., Искусство Турции, М.-Л., 1965.
Никита Хониат, История, СПб., 1860.
Новичев А. Д., История Турции, 1, Эпоха феодализма (XI–XVIII века), Изд. ЛГУ, 1963.
„Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы". Сборник статей. Москва: Наука, 1986.
Ошанин Л., Антропологический состав населения Средней Азии и этногенез ее народов. ч. I–II, Ереван, Изд. ЕГУ, 1959.
Akdağ Mustafa, Türkiyenin iktisadî ve iltimaî tarihi, C. I, Ankara, 1952.
Antonio de Gouvea, Relations des grandes guerres et victoires othenues par le roy de Perse de Chah Abbas contre les empereurs de Turquie, Mahomet et Ahmet son fils, Romen, 1646.
Ayalon D., Preliminary remarks on the Mamluk Military Institution in Islam, War, Technology and Society in the Middle East, Ed. V. Parry and M. Yapp, London, 1975.
Belin M., "Essais sur l'histoire économique de la Turquie, d'après les écrivains originaux", Journal Asiatique, vol. 3–5, Paris 1864.
Cahen L., Introduction à l'histoire de l'Asie, Paris, 1896.
Canard M., La campagne arménienne du sultan selguquide Alp Arslan et la prise d'Ani en 1067, REA, 1965.
Chardin Jean De, Voyages du chevalier Chadin en Perse et autres lieux de l'Orient, t. I–IX. Paris, 1811–1820.
Danişmend İ., İzahlı Osmanlı Tarihi Kronolojisi, 3. cilt, İstanbul, 1950.
De Salabery, Histoire de l'empire ottoman, t. III, Paris, 1748.
Febure Michel, L'état présent de la Turquie ou il est traité des vies, moeurs et coutumes des ottomans et autres peuples de leur empire, Paris, 1675.
Fekete L., "Die Siyaqat-Schrift in der Türkischen Finanzverwaltung", Budapest, 1955.
Fisher Sydney Nettleton, The foreign relations of Turkey 1481–1512, Urbana, 1948:
Grenard F., Notes sur les momuments du Moyen age de Malatia, Divrighi, Siwas, Darendeh, Amasia et Tokat, "Journal Asiatique", XVII, 1901.
Hammer J., Histoire de l'empire ottoman, t. I, IV. Paris, 1835–1838.
Histoire de la dernière révolution arrivée dans l'empire ottoman le 28 septembre de l'année 1730, La Haye, 1737.
J. Peevi, "Tarih-i Peçevi", Istambul, 1283 (1868).
Kâtip Çelebi, Fezleke-i tarih, c. II, Istambul, 1870.
Le Voyage de Monsieur d'Aramon, ambassadeur pour le roy en Levant. Publié et annoté par M. Ch. Schéfer, Paris, 1887.
Münir Aktepe, "Patrona isyâni" (1730), Istanbul 1958.

Pamukciyan Kevork, Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar, Yayına hazırlayan Osman Köker. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3-Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4-Biyografileriyle Ermeniler, Aras Yayıncılık, İstanbul, 2002–2003.
Rice T. T., The seljuks, London 1962.
Tahsin üz Osmanlilar devrinde resimli Türk Kumaşlari, Ankara 1960.
Togan Z. V. Türk tarihine giriş, c. I, Ankara, 1946.
Uzunçarşılı J. H., Osmanlı tarihi, c. IV, I kısım, Karlofça anlaşmasından XVIII yuzyilin sonlarına kadar, Ankara, 1956.
Uzunçarşılı J. H., Osmanlı tarihi, c. IV, II kısım, XVIII yüzyil, Ankara, 1959.
Vryonis S., Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964:

ԲԱԺԻՆ 6

ԱՂՈՒԱՆՔԸ (ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ) IV–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՂՈՒԱՆՔԸ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

1. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ

Վաղմիջնադարյան ժամանակաշրջանի Աղուանից պետության մասին առավել մանրամասն տեղեկություններ է պահպանել «Վաչագանի վէպ» անվանված երկը (VI դ. սկիզբ): «Վէպ»-ն ուղղակի հայտնում է, որ Վաչագան Բարեպաշտի տոհմը «Արշակունեաց» է եղել:

Այդ մասին ակնարկ կա նաև Փավստոս Բուզանդի մոտ՝ Վաչէ Քաջին հաջորդող Ուռնայր թագավորի հետ կապված մի դեպքի նկարագրության մեջ: Ըստ պատմիչի՝ Ձիրավի ճակատամարտում (371 թ.) Հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը պարսից զորաբանակների թվում ջախջախում է նաև աղուանական գունդը Ուռնայր թագավորի գլխավորությամբ, սակայն փախուստի դիմած արքային չի սպանում և հայտարարում է, որ չի սպանի թագ կրող արքայի, եթե անգամ իրեն պատժեն դրա համար: Իհարկե, թագավորին չսպանելու սովորույթը հայտնի է[42], սակայն հնարավոր է ենթադրել նաև, որ Մուշեղի խոսքն իրականում վերաբերել է ոչ թե կամայական արքայի, այլ հենց Արշակունյաց արքայատոհմի ներկայացուցիչներին, որոնց նկատմամբ Մամիկոնյանների հավատարմությունը Փավստոսի մոտ վիպական խորհրդապաշտության է հասնում:

[42] Օր.՝ Պրոկոպիոս Կեսարացին վկայում է, որ Շապուհ արքայից արքան անգամ Արշակ Հայոց թագավորին բանտարկում է և ոչ թե սպանում, որովհետև «երբեք չէր կարող սպանել թագավորական արիւն ունեցող մարդու» (Proc. De bello Persico, I, 5.29. Պրոկոպիոս Կեսարացի (Բյուզանդական աղբյուրներ, Ա), թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ՝ Հ. Բարթիկյանի, Երևան, 1967, էջ 27):

«Վաչագանի վէպ»-ում Աղուանքի IV դարի սկզբների իրադարձությունների նկարագրությունները հիմնականում կապված են Սասանյան Շապուհ Բ Երկարակյաց արքայից արքայի 338 թ. ծավալած գործողությունների հետ (Մովսես Դասխուրանցու մոտ՝ գլուխ Ա, 14): Այդ ժամանակ ամբողջ արևմտյան ռազմաճակատով մեծամասշտաբ ռազմական գործողություններին զուգընթաց Սասանյան տերության կամ նրա կողմից գրավված բոլոր քրիստոնեական շրջաններում սկսվեցին նաև կրոնական խոշոր հալածանքներ: Ըստ այդմ՝ Արշակունի արքաների ցուցակում Վաչագան Ա Քաջին հաջորդող Վաչէ (Քաջ) թագավորի ժամանակն ընկնում է 338 թ. շրջակայքում:

Նման թվագրումից հետո կարելի է ենթադրել, որ Վաչագան Քաջ Արշակունու գահակալելու հանգամանքը հնարավոր է համադրել հենց 298 թ. Մծբինի հաշտության պայմանագրի ժամանակի ու պարագայի հետ, որի շնորհիվ Սասանյան տիրակալների ենթակայությունից փաստորեն դուրս եկան մի շարք կախյալ պետություններ, այդ թվում՝ Մեծ Հայքն իր Արշակունի թագավորով: Հաշվի առնելով «Վաչագանի վէպ»-ի պնդումը՝ հնարավոր է մտածել, որ III դարի ընթացքում Սասանյանների հաջողությունների շնորհիվ Աղուանից թագավորների պատմության մեջ ինչ-որ մի խզում է տեղի ունեցել (ինչպես որ եղավ նաև Մեծ Հայքում), որից հետո 297–298 թթ. հայտնի իրադարձությունների արդյունքում ինչպես Հայաստանում, այնպես էլ Աղուանքում գահ բարձրացավ Արշակունի արքայատոհմի ներկայացուցիչ: Մեծ Հայքում դա Տրդատ Գ Մեծն էր, իսկ Աղուանքում՝ Վաչագան Ա Քաջը: Այսպիսով՝ Աղուանից Արշակունի առաջին երկու թագավորների ժամանակի մասին դատելու որոշ հիմքեր ենք ստանում. ընդ որում, եթե 298 թվականի հետ կապվում է Վաչագան Քաջի իշխանության սկիզբը, ապա 338-ի հետ նույն հավանականությամբ հնարավոր է կապել Վաչէ Քաջի իշխանության ավարտը՝ իրրև արդյունք պարսկական զորքերի կողմից երկրի ռազմակալման և լայնամասշտաբ հալածանքների սկզբի: Այդ դեպքում կարող ենք ենթադրության մակարդակով ընդունել, որ Վաչագան Քաջը և Վաչէ Ա-ն իշխել են շուրջ 20-ական տարի՝ 298–318 և 318–338 թթ.:

Վաչէ Քաջի իշխանության ավարտը ենթադրաբար դնելով 338 թ.՝ ստանում ենք նրա հաջորդի՝ Ուռնայրի թագավորության սկզբի հնարավոր ամենավաղ ժամանակը (338 թ.): Ուռնայրի մասին պատմում են նաև Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին, որոնք նկարագրում են նրա մասնակցությունը Ձիրավի ճակատամարտին՝ իրրև Շապուհ Բ Սասանյանի դաշնակից (371 թ.): Ըստ Փավստոսի՝ ճակատամարտում պարտվելուց և Հայոց սպարապետի կողմից ազատ արձակվելուց հետո Ուռնայրը որոշ ժամանակ անց օգնում է Մուշեղին՝ նրան տեղեկացնելով Շապուհի նոր հարձակման ծրագրի մասին: Այս տվյալները թույլ են տալիս Ուռնայրի թագավորության վերջին տարին հասցնել մինչև 372–373 թթ. (այսպիսով ստացվում է 35 տարվա թագավորություն՝ 338–373 թթ.):

2. ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄՆ ԱՂՈՒԱՆՔՈՒՄ

Վերը նշված ժամանակագրությամբ՝ IV դ. առաջին երկու տասնամյակներում, երբ Աղուանքում քրիստոնեություն է տարածվել, երկրի թագավորն, ամենայն հա-

վանականությամբ, եղել է Վաչագան Քաջը, թեպետ ուշ պատմական ավանդույթը նոր հավատի մուտքը կապում է Ուռնայր թագավորի հետ (մոտ 338–373 թթ.): Այդ ուշ ավանդույթը (օրինակ՝ Մովսես Դասխուրանցու գլուխ I, 9–ում) շեշտում է նաև, որ երկիրը լուսավորվել է շնորհիվ Հայաստանում Գրիգոր Լուսավորչի կատարած հրաշագործությունների:

Աղուանից դարձի իրական պատմությունը շարադրված է Ագաթանգեղոսի երկի վաղագույն տարբերակում՝ «Գրիգորի վարք» անունը կրող սկզբնաղբյուրում, որը մեզ հասել է միայն հունարեն և ասորերեն ու նրանցից կատարված արաբերեն և քարշունի թարգմանություններով (արաբերեն բնագիրը հայտնաբերել և 1905 թ. հրատարակել է Նիկ. Մառը, իսկ հունարենը հայտնաբերվել և 1946 թ. հրատարակվել է Ժ. Գարիտի կողմից): Ուսումնասիրողների կարծիքով՝ հունարեն թարգմանության համար հիմք ծառայած հայերեն բնագիրը շարադրվել է Ե դ. առաջին կեսում՝ հիմնված Դ դարում հունարեն գրված մի երկի (պայմանականորեն կոչված «Գիրք Գրիգորիսի») վրա, որը որոշ առասպելական տարրերի կողքին մեծ հավաստիությամբ ամփոփել է Հայոց դարձի իրական դրվագներն ու հանգամանքները: «Գրիգորի վարք»–ը հայտնում է, որ վճռելով ընդունել Վիրապից դուրս հանված (311 թ. հունիսի 24–ին) Գրիգոր Լուսավորչի քարոզած քրիստոնեական հավատը՝ Հայոց Տրդատ արքան իր մոտ է հրավիրել իր կրտսեր դաշնակից ու բարեկամ Վրաց, Աղուանից և Լազիկայի (արաբերեն տարբերակում՝ աբխազների) թագավորներին: Նրանք ժամանել են Հայաստան, հայ իշխանների հետ միասին Գրիգորին քահանայապետ ձեռնադրվելու համար ճանապարհ դրել Կեսարիա, որտեղից վերադառնալով Բագավան արքայական ամառանոցը՝ Լուսավորիչը 30–օրյա պահքից հետո և 370 000 հայերի հետ չորս թագավորներին մկրտել է Արածանի գետում: Դրանից հետո Գրիգորը Հայաստանի տարբեր գավառներ և նշված երկրներ է ուղարկել երեցների ու եպիսկոպոսների: Դրանց թվում նա Աղուանք է ուղարկել բարեպաշտ այր Թովմային՝ Սատալա փոքր քաղաքից: Ինչպես պարզաբանվել է ժամանակին, եթե Գրիգոր Լուսավորչի՝ Կեսարիայում քահանայապետ ձեռնադրվելը այս տեղեկությունների հիման վրա թվագրվում է 314 թվականի սեպտեմբերով, ապա Աղուանից դարձը ճիշտ կլինի թվագրել 315 թ. գարնան ավարտով:

Ուռնայրի մասին տեղեկությունները բավական մանրամասն շարադրված են նաև Մովսես Դասխուրանցու կողմից բառացի արտագրված մի ինքնուրույն երկում՝ «Թուղթ Գիւտայ եպիսկոպոսի առ սուրբն Վաչէ» վերտառությամբ: Այստեղ ևս ասվում է, որ Աղուանից թագավորը իր նախարարների ու զորքի հետ եկել է Հայաստան՝ Տրդատ արքայի մոտ, և քառասնօրյա պահքից հետո Գրիգոր Լուսավորչի կողմից մկրտվել ջրում:

3. ԱՂՈՒԱՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԶՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ V ԴԱՐՈՒՄ. «ԱՂՈՒԱՆԵՐԵՆ» ԳՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

«Վաչագանի վէպ»–ը կանոնավոր տեղեկություններ չի հաղորդում Վաչագան Բարեպաշտին նախորդած թագավորների գործերի մասին. հեղինակին լրիվ բա-

վարար է թվացել նրանց անունների թվարկման հատվածում համառոտ տրված գնահատականը[43]: Նշված պատճառով Վաչագանին նախորդած թագավորների մասին միայն պատահական և ոչ կանոնավոր տեղեկություններ են պահպանվել երկի առանձին դրվագներում: Նմանատիպ մի հիշատակություն է պահպանված նաև V դ. առաջին կեսում թագավորած Եսվաղեն արքայի մասին, որի ոչ օրինական որդի («պոռնկորդի») է անվանվում Ցրի քաղաքի «գործակալ» կամ «կողմնապահ» Խոճկորիկ նախարարը: Նշված գլխում տեղեկացվում է. «Եւ մինչ դեռ զայս ամենայն նշանագործութիւնս պատմէին առաջի արքային, լսելի լինէր նմա ի սոյն խորհուրդ տեսիլ մի եւ Խոճկորիկայ՝ պոռնկորդւոյն Եսվաղէնայ արքային Աղուանից, որ էր կարգեալ կողմնապահ: Եւ պատմէ արքայի այրն այն՝ Խոճկորիկ անուն, որում ի Ցոռի յայտնեցան Զաքարիա սուրբն եւ Պանդալէոն»: Այս աղբյուրագիտական տվյալը թույլ է տալիս Մաշտոցին ժամանակակից Եսվաղեն թագավորի իշխանության վերջին տարիները հնարավորին չափ մոտեցնել Վաչագան Բարեպաշտի ժամանակներին: Իսկ նրա գահակալության առաջին տարիները և աղուաներեն լեզվի համար Մաշտոցի կողմից գրերի ստեղծումից հետո վերջինիս հյուսիսային երկրորդ ուղևորությունն Աղուանք և հանդիպումը Երեմիա եպիսկոպոսի ու Եսվաղեն արքայի հետ մասնագետները թվագրում են մոտավորապես V դ. 10–ական թթ. կեսից մինչև 20–ականների կեսն ընկած ժամանակով: Սակայն սկզբնաղբյուրների համադիր քննության հիման վրա անհրաժեշտ է նախապատվությունը տալ ժամանակակից ու եթե ոչ ականատես, ապա գոնե ականջալուր Կորյունի հստակ ու անմիջականությամբ տոգորված վկայություններին և, չշփոթվելով Մովսես Խորենացու՝ ավելի ընդհանուր գծերով ներկայացված շարադրանքում դեպքերի այլ դասավորությունից, վերանայել Մաշտոցի Բուն Աղուանք ու Բաղասական հասնելու ժամանակի մասին ավանդական պատկերացումները և վարդապետի այդ ուղևորությունը վերագրել Վռամշապուհ թագավորի որդի Արտաշեսի վեցամյա գահակալությանը (422–428 թթ.), այսինքն՝ 428 թվականի Սասանյան վարչական ռեֆորմին հաջորդած ժամանակահատվածին, որով հաստատվեցին Հայոց, վրաց և Աղուանից մարզպանությունները:

Իր հյուսիսային երկրորդ ուղևորությունից մի քանի տարի առաջ Մաշտոցն, ըստ իր կենսագիր Կորյունի, այցելել էր Վիրք, հանդիպել այդ երկրի Բակուր թագավորին ու Մովսես եպիսկոպոս(ապետ)ին և Ջաղա անունով «թարգմանի» օժանդակությամբ ստեղծել ու տարածել վրացերեն գիրը: Ընդ որում՝ Վիրքից վերադարձին վարդապետին դիմավորել է միայն Սահակ կաթողիկոսը: Դրա հիման վրա պատմագրության մեջ արդարացիորեն եզրակացվել է, որ Մաշտոցի հյուսիսային առաջին ուղևորությունը տեղի է ունեցել Վռամշապուհ արքայի վախճանից (415 թ.) ու նրա եղբայր Խոսրով Գ–ի՝ նույն կամ հաջորդ տարում ավարտված երկրորդ կարճատև գահակալությունից հետո և միաժամանակ՝ մինչև 422 թ. Վռամշապուհի որդի Արտաշեսի գահ բարձրանալը: Թերևս կարելի է բացառել նաև Խոսրովից հետո Հայոց գահին

[43] Պատճառը ջատագովական «վեպի» յուրահատուկ սկզբունքն է՝ իր հերոսին բարձր ներկայացնել բոլորից, անգամ նրա իսկ նախնիներից, որը, փաստորեն, արձանագրված է հենց շարունակության մէջ. «սակայն ոչ ինչ ունեք ի նոցանէ այսպիսի աստուածային եւ հոգեւոր ծածկեալ գանձ յայտնեալ ընձեռնեցաւ, որպէս վերջին Վաչագանայ»:

բազմեցված պարսից արքայազն Շապուհի թագավորելու 3–4 անփառունակ տարիները և Մաշտոցի հյուսիսային առաջին ուղևորությունը վերագրել 419–421 թթ. միջակայքին կամ անգամ այդ ժամանակամիջոցի ավարտին: Վիրքից վերադառնալուց որոշ ժամանակ անց՝ արդեն Հայաստանի բյուզանդահպատակ հատվածում ծավալած գործունեության օրերին, իրեն հանդիպած ազգությամբ աղուան երեց Բենիամինի օժանդակությամբ Մաշտոցը ստեղծեց նաև աղուաներեն լեզվի գիրը («աղուան» եզրույթի տակ անհրաժեշտ է հասկանալ ոչ թե կազմավորված էթնոսի, այլ Աղուանից թագավորության հիմնական բնակիչների՝ էթնոհամախմբման որոշակի աստիճանի հասած հավաքական, էթնոպոտեստար ընդհանրության ներկայացուցչին, իսկ «աղուաներենի» տակ՝ էթնիկական համախմբման վերջնական աստիճանին այդպես էլ չհասած ցեղային էթնոսներից մեկի կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական լեզվախմբին պատկանող այն լեզուն, որի համար ստեղծվեց 52 տառով այբուբենը):

Ըստ Կորյունի՝ Բյուզանդական կայսրությունից Մաշտոցի վերադարձի պահին Հայոց արքան Արտաշեսն էր (թագավորած 422–428 թթ.): Կարելի է ենթադրել, որ այն ամենահարմար պահը, որին հնարավոր է վերագրել Մաշտոցի և Սահակի քաղաքական ու լուսավորական գործունեության ակտիվացումը հյուսիսում և արևմուտքում, Մեծ Հայքում Արշակունիների թագավորական իշխանության վերականգնմանն ուղղված Սահակ Պարթևի՝ Մովսես Խորենացու մոտ արձանագրված եռանդուն գործունեության ժամանակն է: Ըստ այդմ՝ Մաշտոցի ուղևորությունները դեպի Վիրք, ապա դեպի Կոստանդնուպոլիս ու կայսերահպատակ հայկական նահանգներ իրոք հավանական է թվագրել Արտաշես Վերջին Արշակունու թագավորության սկզբով և դրա նախօրյակով, այսինքն՝ 420/421–423 թթ.:

Իր հյուսիսային երկրորդ ուղևորության ընթացքում, որն ավանդաբար թվագրում են արևմտյան ուղևորությունից ոչ շատ անց, Մաշտոցն ունենում է ոչ թե 1–2, այլ 4 գլխավոր կանգառ, որոնցից առաջինը Բուն Աղուանքում ու Բաղասականում էր (Կուրի ձախափնյակ), երկրորդը՝ դրանց հարավից սահմանակից Գարդման գավառում (Կուրի աջափնյակ), երրորդը՝ Վիրքում, և չորրորդը՝ վերջինիս հարավից սահմանակից Տաշիր գավառում: Բուն Աղուանքից հետո Մաշտոցն այցելում է Գարդմանա ձոր, որտեղ հանդիպում է գավառի իշխան Խուրսին: Այնուհետև Մաշտոցը հասնում է Վիրք, ուր թագավորում էր արդեն Արձիւղ–Արչիլը՝ նախորդ հյուսիսային ուղևորության պահի Բակուր թագավորի փոխարեն: Վերջապես Բուն Վիրքից հետո վարդապետն, ըստ Կորյունի մանրակրկիտ շարադրանքի, մտնում է նաև Գուգարքի Տաշիր գավառ՝ Աշուշա իշխանի մոտ: Եվ այս երկար ուղևորությունից վերադարձի պահին Մաշտոցին դիմավորում է միայն Սահակ Պարթևը, այսինքն՝ առանց Հայոց թագավորի ընկերակցության: Եվ դա բավարար հիմք է թվում՝ համարելու, որ վարդապետի հյուսիսային երկրորդ ուղևորությունը թվագրելի է Սասանյանների կողմից 428 թ. Մեծ Հայքի թագավորությունը վերացնելուց հետո ընկած ժամանակով (պարզ է նաև, որ այն միաժամանակ ընկնում է 431 թ. տեղի ունեցած Եփեսոսի տիեզերական ժողովից առաջ, քանի որ վերջինիս մասին հյուսիսային նշված ուղևորությունից անմիջապես հետո են հիշատակում և՛ Կորյունը, և՛ Խորենացին): Այդ թվականին Սասանյանների կողմից գահընկեց արվեց Հայոց վերջին Արշակունի թագավորը, սակայն բացի այդ, հանվելով Մեծ Հայքի կազմից, Ուտիք նահանգը (իր կենտրոնական Գարդման գավառով) միացվեց Աղուանքին (հարևան Արցախ նահանգը ավելի ուշ՝ Վարդանանց ապստամբության պարտությունից հետո). հիշենք նաև, որ Գուգարք նահանգը (իր կենտրոնական Տաշիր գավառով) Մեծ Հայքի կազմից հանվել և հարևան Վիրքին էր միացվել ավելի վաղ՝ 387 թ. (կամ 385 թ.)՝ Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև երկրի բաժանումից հետո:

Կորյունի տեղեկությունները ցույց են տալիս, որ 428 թ. Սասանյան վարչական ռեֆորմի արդյունքում ձևավորված նոր վարչական միավորների՝ Առան և Վարջան մարզպանությունների կազմում նշված նահանգները՝ Ուտիքը և Գուգարքը, բարձր ինքնուրույնության կարգավիճակ են ունեցել, քանի որ պատմիչի շարադրանքում, ըստ էության, չի զգացվում որևէ ռազմական տարբերություն Մաշտոցի ընդունելությունն իրականացնելու նկարագրությունների միջև՝ մի կողմից՝ թագավորական իշխանության կարգավիճակ ունեցող Բուն Աղուանից և վրաց արքունիքներում, իսկ մյուս կողմից՝ Գարդման և Տաշիր գավառների իշխանների՝ Խուրսի և Աշուշայի կողմից: Բացի այդ, կենսագիր պատմիչի տեղեկությունները ցույց են տալիս, որ Մաշտոցի՝ յուրօրինակ զույգերով կատարված դեպի Աղուանք–Գարդման և ապա՝ Վիրք–Գուգարք այցելությունների գլխավոր նպատակը, ըստ երևույթին, պարզապես լուսավորական չի եղել (ինչպիսին որ, թերևս, ավելի շատ էր հյուսիսային առաջին ուղևորության պարագայում դեպի Վիրք): Ենթադրելի է, որ Մաշտոցի՝ վերը նշված «մաքոքային հանդիպումների» արդյունքում է լուծվել պետականությունը հենց նոր կորցրած հայ ժողովրդի և Հայոց եկեղեցու համար չափազանց կարևոր ազգային–ռազմավարական մի խնդիր, այն է՝ Վիրքի և Աղուանքի թագավորությունների և այս կամ այն չափով նրանց ենթակայացված էթնիկապես հայկական շրջանների միջև ձևավորվելիք հարաբերությունների կոնկրետ պայմանների ճշտումը: Ըստ ամենայնի՝ դրանից հետո է, որ պետական աջակցությունից այլևս զրկված հայերենը պահպանում է իր՝ նորօրյա եզրույթով՝ «պետական» լեզվի կարգավիճակը Ուտիքում և Գուգարքում և, բացի այդ, ամենայն հավանականությամբ, շարունակում մնալ որպես ժամասացության երկրորդ լեզու Բուն Աղուանքում ու Վիրքում (համապատասխանաբար՝ աղուաներենի ու վրացերենի կողքին):

Ըստ Մովսես Խորենացու՝ Եսվաղենի մոտ հասնելուց հետո Մաշտոցը Սյունիքից կանչել է տալիս Բենիամին «շնորհաւոր թարգմանին» և նրան մասնակից դարձնում Բուն Աղուանքում իր գործունեության հաջողությանը (ըստ մեզ հասած բնագրի՝ նաև տեղում գրերի ստեղծմանը): Պատմահայրն այդ մասին գրում է իր աշխատության առաջին հատվածում՝ դեպի Վիրք Մաշտոցի առաջին ուղևորության նկարագրությունից հետո: Այս տեղեկությունն իր հիմնական գծերով իրականում լրացնում է Կորյունին, այլ ոչ թե հակասում նրա վկայությանը՝ աղուաներեն գրերի ստեղծման նպատակով Մաշտոցի և աղուան երեց Բենիամինի ավելի վաղ հանդիպման մասին: Այդ դեպքում ստացվում է հետևյալ պատկերը. վրաց գիրը հենց տեղում Ջա-

ղա թարգմանի հետ ստեղծելուց ու ներդնելուց անմիջապես հետո կամ, համենայն դեպս, միևնույն ծրագրային մտահղացման շրջանակներում Մաշտոցը ոչ միայն Բենիամինի օժանդակությամբ ստեղծել է նաև աղուանից գրերը (կոնկրետ տեղը՝ Հայաստանի բյուզանդահպատակ հատվածում), այլև դրանք, հավանաբար, փորձել է նույն Բենիամինի միջոցով ներդնել Բուն Աղուանքում: Ենթադրելի է, սակայն, որ առանց վարդապետի ներկայության երեցն այնտեղ անհաջողության է մատնվել, որից հետո տեղափոխվել է Սյունիք ու ինչ-որ ծառայության անցել նահանգի եպիսկոպոս Անանիայի մոտ (որը Մաշտոցի աշակերտներից մեկն էր)՝ հավանաբար զբաղվելով նաև թարգմանություններով: Եվ այդպես՝ մի քանի տարի, մինչև նորից Բուն Աղուանից թագավորության մայրաքաղաք է հրավիրվել 428–430 թթ. միջև այնտեղ ժամանած Մաշտոցի կողմից: Բենիամինը պատրաստակամորեն Կապաղակ է հասել իր բարերարներ Սյունյաց Վասակ իշխանի ու Անանիա եպիսկոպոսի օժանդակությամբ և արդեն Մաշտոցի գլխավորությամբ ավարտին հասցրել աղուաներեն գրի ներդրման առաքելությունը: Կորյունն այս վերջին պահին չի տալիս Բենիամինի անունը, սակայն փոխարենը հաղորդում է, որ աղուան իշխանավորները Մաշտոցի հետ անմիջապես ձեռնամուխ եղան աղուաներեն Ս. Գրքի քարոզին, որը, ուրեմն, արդեն թարգմանված է եղել և ենթադրաբար՝ հենց Բենիամինի կողմից: Մաշտոցի ու Բենիամինի ստեղծած աղուաներեն գիրը հետագայում, գոնե հայոց և վրաց գրերի համեմատությամբ, մեծ բարձունքների չհասավ: Թեպետ նշելի է, որ նրա գործառության մասին մեր գիտելիքները գնալով հարստանում են: Նկատի ունենք հատկապես մի քանի տարի առաջ Սինայում աղուաներեն-վրացերեն կրկնագիր բնագրերի հայտնաբերումը, վերծանությունը և հրատարակումը, որի շնորհիվ, բացի նախկինում հայտնի մեկ տասնյակի չափ վիմագիր փոքրածավալ արձանագրություններից, արդեն մեր ձեռքի տակ են նաև աղուաներենով գրված «Ճաշոցի» մի քանի մեծ կտորներ:

Եսվաղենի գահակալությունը, այսպիսով, ամենայն հավանականությամբ տևել է մինչև Վարդանանց ապստամբությունը և ժառանգորդության իմաստով բարեհաջող ավարտվել՝ թագը Վաչե Բ-ին փոխանցելով: Դեպքերի ժամանակակից Եղիշե պատմիչը ոչինչ չի հայտնում Վարդանանց պատերազմի ժամանակ Աղուանքում գահակալած արքայի մասին: Մի դրվագում նա հիշատակում է երկրի հազարապետին և եպիսկոպոսին (առանց անունները տալու), որոնք 450 թ. ժամանում են Հայաստան և օգնություն խնդրում Վարդան Մամիկոնյանից Աղուանքում հալածանքներ սկսած պարսից զորքի ու մոգերի դեմ: Դրանից հետո, ըստ պատմիչի՝ Հայոց զորքի մի մասը սպարապետի գլխավորությամբ շարժվում է հյուսիս, Լոփնասի ճակատամարտում (Կուր գետի աջ ափին) ջախջախում «Չողի մարզպան» Սերուխտի բազմացեղ զորաբանակը և աղուանների հետ ազատագրում երկրի բոլոր ամրոցներն ու բնակավայրերը: Վարդան Մամիկոնյանը գրավում է նաև «Հոնաց պահակը» (=Չողի ամրությունները), որոնց պաշտպանությունը հանձնում է Աղուանից արքայատոհմից ոմն Վահանի: Վերջինս մեկնում է հյուսիսկովկասյան Հոնաց ցեղերի մոտ ու նրանց համոզում գալ Չող և պայման կապել ապստամբ հայերի ու աղուանների հետ

Սասանյանների դեմ պատերազմելու մասին: Եղիշեն չի նշում Վահանի՝ թագավոր լինելու մասին, թեպետ նրան վստահված Հոնաց կամ Ճորա (Չողի) պահակի հսկողությունն այս դարաշրջանում հենց Աղուանից թագավորների առանձնաշնորհն էր. այդպես էր, օրինակ, Վաչե Բ արքայի ապստամբության օրոք, որը դրանից օգտվելով էր քանդել ամրությունները և օգնություն ստացել հյուսիսկովկասյան ցեղերից:

Եղիշեն Վաչե Բ-ի (իր՝ «Աղուանից արքայի») մասին հաղորդում է մի քանի ուշագրավ մանրամասնություն: Նախ՝ արքան սկզբնապես քրիստոնյա էր եղել և Սասանյան Հազկերտի հարկադրանքով ընդունել էր մոգություն: Ապստամբելով պարսիկների դեմ՝ նա ոչ միայն ինքն էր վերադարձել քրիստոնյա հավատքին, այլև ստիպել էր դա անել իր «ի բնէ մոգ» մորը և կնոջը, թերևս խորթ քրոջը: Վերջապես, հեռանալով իշխանությունից, Վաչեն Պերոզի հորդորով իրեն է պահում միայն «հազար երդ», որը մանուկ հասակում ստացել էր իր հորից: «Հազար երդի» մասին այս վկայությունը ցույց է տալիս, որ Վաչեն չի եղել Եսվաղենի ավագ որդին, որը պիտի ժառանգած լիներ իր հոր ամբողջ թագավորությունը՝ ի տարբերություն մնացյալ որդիների, որոնք ծնողից կարող էին ստանալ այսպես կոչված «սեպուհական» («սեպհական», «սեփհական») կալվածքներ: Կարելի է նաև ենթադրել, որ Եսվաղենի ավագ որդին, թերևս, այն Յազկերտն է եղել, որի որդին (Վաչագան Բարեպաշտը՝ 485 թ.) հետագայում ճանաչվեց թագավոր:

Եղիշեի տեղեկություններից հետևող առավել հավանական պատկերն այսպիսին է. Եսվաղենի վախճանը, թերևս, համընկել է Յազկերտ արքայից արքայի հալածանքների սկզբին (450 թ.) կամ գուցե Վարդանանց ապստամբության պարտությունից հետո (451 թ.), երբ Սասանյաններն Աղուանից թագավոր են ճանաչել նրա ոչ ավագ որդի Վաչեին, որը նույնպես մոգություն էր ընդունել և ամուսնացած էր Եսվաղենի՝ ազգությամբ պարսիկ և հավատով մոգ կնոջ դստեր, այսինքն՝ իր խորթ քրոջ հետ: Վաչեն, սակայն, մի քանի տարի անց քրիստոնեությանն իր հավատարմության պատճառով ապստամբություն բարձրացրեց (459–461 թթ.), որի ճնշումից հետո Պերոզ արքայից արքան վճռեց վերացնել թագավորական իշխանությունն Աղուանքում:

4. ԱՂՈՒԱՆԻՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԲՈՒՆ ԱՂՈՒԱՆԱԿԱՆ ՓՈՒԼԸ (IV–VI ԴԱՐԻ ՍԿԻԶԲ)

Աղուանից կաթողիկոսարանը (315-ից՝ եպիսկոպոսարան) սկզբնապես եղել է թագավորական մայրաքաղաք Կապաղակում (շուրջ մեկուկես դար): Նրա տեղափոխումը Չող տեղի է ունեցել Աղուանից մարզպանության կազմավորման արդյունքում (428 թ., Չող կենտրոնով), սակայն ոչ միանգամից, այլ երեք տասնամյակ անց՝ 461 թ.՝ Վաչե թագավորի ապստամբության ճնշումից և Աղուանից թագավորական իշխանության վերացումից հետո: Ըստ Կորյունի՝ մոտավորապես 428 թ. Մաշտոցը Աղուանից Երեմիա եպիսկոպոսին հանդիպել է «ի թագաւորական տեղիսն», այսինքն՝ Կապաղակում, որից հետո միայն մեկնել է արևելք՝ հանդիպելու Բաղասականի Մուշեղ եպիսկոպոսին (Բաղասականն իր թագավորական շրջանում ընդգրկում էր նաև Մասքութք երկրամասը): Ըստ Եղիշեի՝ 450 թ. Հայաստան են ժա-

մանել Աղուանից հազարապետը և եպիսկոպոսը, որոնք Վարդան Մամիկոնյանին հայտնել են, որ «Չողի» մարզպան Սեբուխտը եկել է «Աղուանքի» եկեղեցիներն ավերելու. սրանից հասկացվում է, որ Աղուանից եպիսկոպոսարանը գտնվել է ոչ Չողում, հետևաբար՝ դեռևս թագավորական կենտրոն Կապաղակում:

Իսկ արդեն «Վաչագանի վէպ»-ում տեսնում ենք Յունան «եպիսկոպոսապետի» հիշատակությունը, որի մասին ասվում է, որ նա «ի Մասքթաց աշխարհին» էր: «Յոյժ ճշմարտախոհ» այս եպիսկոպոսապետը չի կարող համարվել պարզապես «Մասքթաց աշխարհի» կաթողիկոս, քանի որ այդպիսի կաթողիկոսության մասին աղբյուրներից ոչինչ հայտնի չէ: Փոխարենը գիտենք, որ Աղուանից կաթողիկոսարանը մինչև Կուր գետի աջափնյակ տեղափոխվելը գտնվել է Չողում, որն, ըստ այլ աղբյուրների, Դերբենդ քաղաքն է իր հզոր պարիսպներով. իսկ դա հենց Սասանյան տերության Աղուանք կամ Առան մարզպանության բաղկացուցիչ մաս Մասքութք երկրամասի հյուսիսային կետն էր: Ճիշտ է, շատ ուսումնասիրողներ (Ս. Երեմյան, Ե. Պախոմով, Կ. Տրներ և այլք) Դերբենդը տարանջատել են Չողից՝ համարելով, որ նրանում Խոսրով Անուշիրվան Սասանյան արքայի (531–572 թթ.) կառուցած քարե պարիսպներն առաջինն էին, իսկ VI դարից առաջ վկայված Չողի ամրություններն անհրաժեշտ է փնտրել ավելի հարավ, սակայն Մ. Արտամոնովի և Ա. Կուդրյավցևի հնագիտական պեղումներով արդեն բացվել են Չող-Դերբենդի կավաղյուսե հզոր պարիսպները, որոնց հիմնադրումը Եղիշե պատմիչը վերագրում է իր ժամանակակից Հազկերտ Բ-ին, իսկ Ղևոնդ վարդապետը՝ Մարկիանոս կայսեր ժամանակին (450–457 թթ.), այսինքն՝ նույն Հազկերտին:

Կաթողիկոսանիստի՝ Չողից Պարտավ 552 թ. տեղափոխվելու մասին տեղեկությունը հաղորդում է Մովսես Դասխուրանցու կողմից օգտագործված աղբյուրներից մեկը՝ այսպես կոչված «Աղուանից գավազանագիրքը», որը պետք է համարել X դարի առաջին կեսում ստեղծված ժամանակագրական փոքր երկ: Նրա վկայությունները համադրելով Աղուէնի կանոնների առաջաբանի հետ՝ տեսնում ենք, որ իրականում կաթողիկոսանիստը Պարտավ է տարվել VI դարի առաջին տասնամյակներին:

Աղուէնի եկեղեցական ժողովի արձանագրությունը պահպանվել է «Պատմութիւն Աղուանից»-ում՝ Վաչագան Բարեպաշտին վերաբերող գլուխների վերջում, և Հայոց կանոնագրքի ձեռագրերում: Գրչական որոշ տարընթերցումների պայմաններում երկու տարբերակում էլ «Շուփհաղիշոյ Պարտաւա արքեպիսկոպոս»-ը հիշվում է առանց լուրջ շեղումների, ժողովի արձանագրության ամենասկզբում՝ Վաչագան արքայի անունից անմիջապես հետո. «Ես՝ Վաչագան՝ Աղուանից արքայ, Շուփհաղիշոյ՝ Պարտաւա արքեպիսկոպոս, Մանասէ՝ Կապաղակա եպիսկոպոս...»: Շուփհաղիշոյի՝ Պարտավի արքեպիսկոպոս կոչվելու հանգամանքը նախկինում բավարար հիմք է դիտվել կասկածելու Աղուենի կանոնների հավաստիությանը, քանի որ «Աղուանից գավազանագիրքը» կաթողիկոսանիստը համարում է Չողից Պարտավ տեղափոխված միայն 552 թ.: Սակայն պարզվեց, որ ճիշտ չէ «Վաչագանի վէպ»-ը և Աղուենի ժողովի արձանագրությունը լրիվ համաժամանակյա համարելը: Երկու աղբյուրում հիշատակվող միևնույն անձանցից առնվազն մեկի համար առկա են ժամանակային որոշակի միջակայք ենթադրող տվյալներ:

Կապաղակը Բուն Աղուանքի թագավորության մայրաքաղաքն էր Ք. ա. I դարից, և բնական է, որ նրա եպիսկոպոս կարող էր դառնալ թագավորական «դրան երէցը»: «Վաչագանի վէպ»-ում արքայի մայրաքաղաքի անունը չի տրվում, բայց պատահական չէ, որ նրա արքունիքի մասին խոսվում է այն Խոռկորիկի տեսիլքի առիթով (Ա. իգ գլխի սկզբում), որը Կուրի ձախափնյակում՝ հետագա Շամախու շրջակայքում գտնված Ցրի քաղաքի գործակալն էր (Կապաղակից 75 կմ արևելք. Ցրի=Սաղիան): Բացի այդ, Ա. ժթ գլխում Խոռկորիկը Ցրիում Զաքարիայի և Պանդալէոնի նշխարների գյուտից հետո ձիով շտապ հասնում է արքայի մոտ[44], այսինքն՝ անշուշտ նրա մայրաքաղաքը, որը պիտի շատ հեռու չլիներ Ցրիից: Ըստ այսմ, ինչպես բխում է Վաչագանի «դրան երէց» Մանասէի՝ «Կապաղակի եպիսկոպոս» դառնալու փաստից, նրա երկու կարգավիճակների միջև անհրաժեշտ է ենթադրել ժամանակային որոշակի միջակայք, որը և մտնում է «Վաչագանի վէպ»-ի ստեղծման ու Աղուենի ժողովի գումարման միջև ընկած ժամանակահատվածի մեջ: Իսկ դա ցույց է տալիս, որ նույն միջակայքում կարող էր փոխված լինել նաև Շուփհաղիշոյ կաթողիկոսի կարգավիճակը, որին «Վաչագանի վէպ»-ը կոչում էր «աւագ եպիսկոպոսապետ», իսկ Աղուենի ժողովի արձանագրությունն արդեն՝ «*Պարտաւայ արքեպիսկոպոս*»:

Գրականության մեջ ավանդաբար հավաստի է համարվել «Պատմութիւն Աղուանից»-ի Ա. ժե գլխի տեղեկությունը՝ «Պերոզապատ..., որ այժմ կոչի Պարտաւ» քաղաքը Վաչե Աղուանից թագավորի կողմից և «ի հրամանէ Պերոզի՝ պարսից արքայի» կառուցվելու մասին: Սակայն Վաչե Բ-ն ապստամբել էր Սասանյան արքա Հազկերտի մահից կամ նրա Որմիզդ ու Պերոզ որդիների միջև սկսված արյունալի պատերազմից անմիջապես անց, ուստի Պերոզից կրած պարտությունից հետո հեռանալով գահից՝ չէր կարող քաղաք կառուցել նրա հրամանով: Այդ տեղեկությունը նաև զուգահեռ չի գտնում որևէ հայկական կամ օտարերկրյա աղբյուրում: Իրականում քաղաքի կառուցողը եղել է Կավատ Ա Սասանյանը (488–531 թթ.): Այդ են պնդում ուշ Սասանյան պատմական ավանդույթին հետևող արաբ մատենագիրները (Իբն Խորդադ-բեհ, Իբն ալ-Ֆակիհ, ալ-Բալաձորի, Իբն ալ-Ասիր, Յակուտ ալ-Հա-

[44] Բ. Ուլուբաբյանի կարծիքով (Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության (V–VII դդ.), Երևան, 1981, էջ 141)՝ Վաչագանի թագավորանիստը կարող էր լինել Արցախի Դիտական-Գիտական գյուղը, որն ըստ 630–632 թթ. միջև գրված և Դասխուրանցու արտագրած «Վիրոյ կաթողիկոսի պատմութիւն» երկի՝ գտնվել է Տրտուի հովտում, Ուտի-Առանձնակ գավառի Կաղանկատոյք գյուղից ոչ հեռու (ՊԱ, Բ. ժ, էջ 132–133): Սակայն դրա հիմքում այն մտայնությունն է, թե Վաչագանը Առանշահիկ է եղել՝ կապ չունենալով Բուն Աղուանից արքայատոհմի հետ, ուստի նրա տոհմական տիրույթները պիտի լինեին Հայկյան Առանին իբրև կուսակալի հանձնված՝ Կուրի աջափնյա Արցախում և Ուտիքում: Իրականում այդ արքան Բուն Աղուանքի Արշակունեաց թագավորական հարստության ուղիղ շառավիղն էր, և նրա բուն կալվածքները պիտի գտնվեին ձախափնյակում: «Վաչագանի վէպ»-ը միշտ կոչում է Դիտականը «արքունի սեփհական գիւղ», այսինքն՝ արքային պատկանող փոքր տիրույթ, նրա նստոցներից մեկը, բայց ոչ պետության կենտրոն, մայրաքաղաք: Գյուղն անգամ եկեղեցի չուներ մինչև Պանդալէոնի մատուռի կառուցումը, և սրբոց նշխարները ստիպված էին դնել «ի սուրբ եւ յազնուական սենեկի»:

մավի), ըստ որոնց՝ իր տիրակալության սկզբում Կավատը կարողացավ հաղթահարել պարսից ազնվականության հզոր դիմադրությունը, այնուհետև հաղթել Բյուզանդիայի հրահրմամբ Իրանի հյուսիսարևմտյան տիրույթները ներխուժած հյուսիսկովկասյան հոն-սավիրների ցեղերին (503–504 թթ.) և նրանց դուրս մղելով՝ ամրացրեց Կովկասյան պաշտպանական ուղղությունը՝ մասնավորապես կառուցելով Բայլական և *Բերդաա* (Պարտավ) քաղաքները, իսկ Կավատի որդի Խոսրով Անուշիրվանը (531–572 թթ.) էլ ավելի ամրապնդեց այդ սահմանագիծը՝ կառուցելով Դերբենդի քարաշեն պարիսպը: Այս պատմության հիման վրա Պերոզ-Կավատ-Պարտավ քաղաքի կառուցման ժամանակը պետք է համարել VI դ. առաջին տասնամյակի երկրորդ կեսին սկսված պարսկա-բյուզանդական հաշտության յոթնամյակը (506–512 թթ.), երբ Կավատ արքայից արքան Անաստաս կայսրից նաև մեծ գումար ստացավ Կովկասյան պաշտպանական գիծը հոն-սավիրների դեմ ամրապնդելու նպատակով: Ինչ վերաբերում է Պարտավի անվան «Պերոզ*ապատ*» տարբերակին, ապա այն, ամենայն հավանականությամբ, առաջացել է «Պերոզ*կաւատ*» անվան ձևափոխման արդյունքում, հավանաբար քաղաքանվան ժողովրդական պարզեցված ընկալման և հայ մարդու համար սովորական «պատ» վերջամասով քաղաքանունների հետ զուգորդության արդյունքում (օր.՝ Վաղարշապատի): Իսկ «Պերոզապատ», այսինքն՝ «Պերոզի քաղաք» ընկալումից էլ պիտի առաջացած համարել այն մտայնությունը, իբրև թե քաղաքը կառուցվել է Պերոզի հրամանով:

Այսպիսով՝ Շուփհաղիշոն կարող էր լինել Պարտավի արքեպիսկոպոսը, քանի որ այդ քաղաքը կառուցվել էր, ամենայն հավանականությամբ, 506–512 թթ. միջակայքում, և մեծ խոչընդոտ չկա Վաղարշ արքայից արքայի (484–488 թթ.) կողմից թագավորական գահին դրված Վաչագան Բ Արշակունու օրոք աթոռակալած «աւագ եպիսկոպոսապետին» ժամանակակից համարելու նորակառույց քաղաքի կյանքի գոնե առաջին տարիներին: Միաժամանակ չի կարելի անտեսել Աղուէնի ժողովի արձանագրության վկայությունը Աղուանից կաթողիկոսարանի՝ Չողից Պարտավ տեղափոխված լինելու մասին արդեն Վաչագան Բարեպաշտի և Շուփհաղիշո կաթողիկոսի օրոք:

5. ՎԱՉԱԳԱՆ Բ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱ: ԱՂՈՒԱՆԻՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ VI ԴԱՐԻ ՍԿԶԲՈՒՄ

Վերը կատարված քննությունից բխում է, որ Աղուանից մարզպանանիստը և կաթողիկոսանիստը Չողից Պարտավ են տեղափոխվել VI դ. երկրորդ տասնամյակի սկզբներին, ուստի Աղուէնի եկեղեցական ժողովը կարելի է թվագրել հենց 510-ական թվականներով: Իսկ ավելի վաղ տվյալներ հաղորդող «Վաչագանի վէպ»-ի ստեղծումը հավանական է վերագրել VI դ. առաջին տարիներին, թերևս՝ 501–502 թթ., երբ Պարտավ մարզպանանիստը կառուցված չէր, իսկ երկիրը դեռևս խաղաղության շրջան էր ապրում: Այլ հանգամանքներ ևս ստիպում են խուսափել «Վէպը» VI դ. երկրորդ տասնամյակին վերագրելուց և մոտեցնել այն Վաչագանի թագավորության սկզբին. «Վաչագանի վէպի» շարադրման ժամանակը՝ Զ դ. առաջին տարիները,

Կավատ արքայից արքայի՝ գահին վերադառնալուն (498 թ.) հաջորդած տարիներն են՝ մինչև պարսկա-բյուզանդական կարճատև պատերազմը (502–504 թթ.) և հյուսիսկովկասյան հոն-սավիրների ավերիչ ներխուժումը (503–504 թթ.), երբ «անիծեալ եւ չար Պարսիկք մարզպանքն» երկրում չկային (նրանց գործառույթները, հավանաբար, փոխանցված էին Աղուանից թագավորին), Հայաստանում շարունակվում էր Վահան Մամիկոնյանի մարզպանության բարեհաջող շրջանը, իսկ Վիրքում՝ Վախթանգ Գորգասալի թագավորության: Դա է ամենահարմար ժամանակը «Վաչագանի վէպ»-ի նման մի ջատագովական երկի, մի վարքագրական վիպերգության ստեղծման համար, որի խնդիրն իր արքայի ու նրա տոհմի կանոնավոր պատմությունը շարադրելը չէր, այլ այն «ծրագրային» գործերի, որ պիտի կատարվեին ու կատարվեցին նրա օրոք՝ ի շահ Սասանյաններին ենթակա Աղուանից թագավորության քրիստոնյա հասարակության և եկեղեցու ամրապնդման:

Ամփոփելով «Վէպ»-ում ներկայացված պատկերը՝ կարելի է արձանագրել, որ 428 թ. սկսված Սասանյան վարչական փոփոխությունների (ռեֆորմների) արդյունքում մոտ կեսդարյա ժամանակահատվածում ձևավորվել էր «Աղուանք» հասկացության նոր իմաստը. նրա տակ ընկալվում էր արդեն ողջ մարզպանության տարածքը՝ Հակարի (Արցախի և Սյունիքի սահմանագիծը) և Արաբս գետերից մինչև Կովկասյան լեռնաշղթա և Դերբենդ: Ուտիքի և Արցախի հայությունը միջնադարին բնորոշ աշխարհընկալման սկզբունքներով ընդունել էր այդ անունն իբրև «իր» երկրի անվանում, թեպետ և նրա վրա տարածվում էր Կապաղակ կենտրոնով Բուն Աղուանքի թագավորության և Չող-Դերբենդ կենտրոնով Աղուանից կաթողիկոսության իշխանությունը: Ժամանակի ընթացքում, հատկապես մարզպանական ու եկեղեցական կենտրոնների՝ Կուրի աջափնյա Պարտավ տեղափոխվելուց հետո, այդ մտայնությունը հասավ այն աստիճանի, որ Արցախի և Ուտիքի հայությունը սկսեց իրեն համարել «Աղուանք» երկրի իսկական տերը, իսկ Կուրի ձախափնյակի բուն աղուանական, անգամ քրիստոնյա փոքր ժողովուրդների նկատմամբ քամահրական վերաբերմունք դրսևորել՝ իբրև լեռնականների ու բարբարոսների՝ խթանելով նրանց մասնակի հայացումը (նրանց մյուս հատվածը հետագա դարերում ձուլվեց վրացի էթնոսի մեջ՝ Հերեթ, իսկ մի մասը, մահմեդականություն ընդունելով, պարսկացավ (Շիրվան). մինչև նոր ժամանակներն իրենց էթնիկական դեմքը պահպանեցին միայն քրիստոնյա ուդիները Կապաղակի շրջակայքում և Դաղստանի հարավի ու Ադրբեջանի հյուսիսի՝ լեզգիական խմբի լեզուներով խոսող ժողովուրդները՝ լեզգիներ, թաբասարանցիներ, ծախուրներ, ռութուլներ, ագուլներ, բուդուղներ, կոիզներ, խինալուղցիներ: «Աղուան» մետաէթնիկ (հավաքական) ընդհանրության բազմացեղ մնալը և այդ անվան տակ մեկ էթնոսի չձևավորվելը պատճառներից մեկն էր «Աղուանք» եզրույթի արագ ընկալման Կուրի աջափնյակի հայերի կողմից:

Վաչագան Բ Արշակունու վախճանը և նրա թագավորության վերացումն արձանագրված չեն որևէ հավաստի սկզբնաղբյուրում, իսկ գրականության մեջ ավանդաբար վերագրվել են կլորացված 510 թվականին: Սակայն Աղուենի եկեղեցական ժողովի տեղեկությունների հիման վրա այդ ժամանակն անհրաժեշտ է երկարաձգել

զոնե մինչև 510-ական թթ. կեսերը: Իսկ այդ դեպքում հնարավոր է դառնում Վաչագան Բարեպաշտի իշխանության ավարտը ենթադրաբար հասցնել մինչև Սասանյան տերության այն վարչական ռեֆորմը, որով Կավատ արքայից արքան վերացրեց թագավորական իշխանությունը նաև Վիրքում (Քարթլի): Պրոկոպիոս Կեսարացու վկայության հիման վրա վրաց Գուրգեն թագավորի գահընկեց արվելը մասնագետները թվագրում են մոտավորապես 523 թ.: Դրամագիտական մի տվյալ թույլ է տալիս լրացուցիչ փաստարկել 523 թվականի հավանականությունը: Իրանագետ Է. Խուրշուդյանը բերում է Ֆ. Գրրնեի կողմից 1993 թ. հայտնաբերված և հրատարակված՝ Կավատ արքայի 35-րդ տարում (=522/523 թ.) թողարկված երկու միատեսակ դրամների վրա առկա միացագրի (մոնոգրամ) ընթերցումը 'l'n ձևով, այսինքն՝ ALAN կամ ARAN: Առաջին անգամ 523-ին այդպիսի միացագրի ի հայտ գալը և՛ Ֆ. Գուրնեն (իբրև տարբերակ), և՛ Է. Խուրշուդյանը կապում են հենց վրաց թագավորության վերացման (ըստ Պրոկոպիոս Կեսարացու) հետ մեկտեղ նաև Աղուանից թագավորությունը վերացնելու և երկու երկրներում մարզպանական վարչակարգ հաստատելու հետ: Կարելի է հավելել, որ այս առումով Սասանյան դրամագիտական նյութը զարմանալի հետևողականություն է դրսևորում. նշելի է, որ ARM (=ARMINA-Հայաստան) մակագրությամբ Սասանյան դրամներն ի հայտ են գալիս միայն Վարահրան Ե (Բահրամ Գուր՝ 420-438 թթ.) արքայից արքայի ժամանակներում, որի օրոք՝ 428 թ., Հայաստանում վերացվեց Արշակունյաց թագավորությունը, և մտցվեց մարզպանական կառավարում[45]:

Այսպիսով՝ Բուն Աղուանքի անտիկ և վաղմիջնադարյան թագավորության վերջին ներկայացուցիչ Վաչագան Բ Բարեպաշտ Արշակունուն պիտի վերագրել 38-ամյա իշխանության մի շրջան (485-523 թթ.): Իհարկե, պետք է նաև նկատի ունենալ, որ աղբյուրագիտական տվյալների բացակայության պայմաններում, այնուամենայնիվ, հնարավոր չէ Վաչագանի իշխանության բարեհաջող առաջին տասնամյակների հիման վրա անպայման ենթադրել, որ բարեհաջող է եղել նաև մեզ առայժմ անհայտ վերջին տասնամյակը:

Աղուանից թագավորության վերացումից հետո VI դ. աղբյուրները թույլ են տալիս խոսել միայն ինչ-ինչ իրադարձությունների մասին, որոնց մասնակից է եղել Աղուանից եկեղեցին, որի կենտրոնն արդեն աջափնյա Պարտավում էր: Հայոց կաթողիկոս Սահակ Ուղկացու (կամ Հարքացու) օրոք (528-538 կամ 534-539 թթ.) տեղի ունեցած Կարինի (Թեոդոսուպոլսի) ժողովի արձանագրության նախաբանում կա հետևյալ թվագրում և մասնակիցների ցանկ ենթադրող վկայությունը. «որ ժողովեցան յամենայն քաղաքաց եւ յաշխարհաց Յունաց եւ ի Հոռոմոց եւ ի մեծն Հոովմայ, հրամանաւ մեծի թագաւորին Յուստինեայ, որ նախանձայոյզ եղեալ աւրինացն Աստուծոյ եւ սրբոց առաքելոցն քարոզութեան, ժողով հրամայեաց լինել ի միջասահմանս աշխարհին Հայոց, վրաց եւ Աղուանից: Որ ժողովեցան բազում եպիսկոպոսք յամենայն քաղաքաց հանդերձ կաթողիկոսաւն Հայոց Սահակաւ: ...Եւ ժողովեցան բազում եպիսկոպոսք վրաց եւ Աղուանից ի քաղաքին Թեոդոսուպաւղիս եւ միաւորեցան ի հաւատս սրբոց առաքելոցն եւ ի կանոնս սուրբ ժողովոյն»: Յուստինիանոս Ա-ի (527-565 թթ.) օրոք տեղի ունեցած ժողովի մասին ավելի մանրամասն տեղեկություններ է հաղորդում և ժողովի ընդունած կանոններից գրեթե մեջբերումներ կատարում VIII դ. առաջին կեսի հեղինակ Ստեփաննոս Սյունեցին (Գիրք Թղթոցում պահպանված մի երկում): Անհասկանալի է միայն, թե ինչու VI դ. 30-ական թթ. ընդունված այս կանոնների բնագրում հիշատակված չէ Սասանյան արքայից արքայի (Կավատի կամ Խոսրով Անուշիրվանի) գահակալության տարին (բայց դա միգուցե այն պատճառով էր, որ ժողովը տեղի է ունեցել Հայաստանի բյուզանդական մասում):

Աղուանից եկեղեցին, անկասկած, մասնակցել է նաև Հայոց Յովհաննէս Գաբեղենացի կաթողիկոսի կողմից կազմակերպված Դվինի 554 թ. ժողովին, որտեղ վերջնականապես խզվեց կապը Քաղկեդոնի ժողովի հետ: Հայտնի է Յովհաննէս Գաբեղենացու նամակը Աղուանից կաթողիկոս Աբբասին, ինչպես նաև Յովհաննես Երուսաղեմացի պատրիարքի Թուղթը, որով անհաջող փորձ է կատարվում կտրելու Աղուանից եկեղեցին Հայոց կաթողիկոսության որդեգրած դիրքորոշումից:

[45] Համեմատության համար կարելի է նշել, որ Է դ. ողջ առաջին կեսին, ընդհուպ մինչև Սասանյանների անկումը՝ 652 թ., Հայոց, Աղուանից և վրաց մարզպանությունների քրիստոնյա բնակչությունն օգտվում էր լայն ինքնավարությունից, բայց Սասանյան արքաների անուններով դրամները, ի տարբերություն երեք երկրների կիսանկախ թագավորների ժամանակի, հատվում էին անխափան կերպով:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԱՂՈՒԱՆՔԸ VII–X ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայոց, վրաց և Աղուանից իշխանների մասին աղբյուրները խոսում են՝ սկսած VII դարից: Երեք այսրկովկասյան երկրների իշխանների հաստատությունները ձևավորվեցին այդ դարասկզբին, ենթադրաբար՝ 614/616 թ. պարսից ժողովի համատեքստում, որին մասնակցում էր նաև Աղուանից Վիրո կաթողիկոսը (596–629 թթ.): Ըստ «Պատմութիւն Աղուանից»-ի մի տեղեկության՝ հենց այդ կաթողիկոսն էր Սասանյան Խոսրով Ապրուեզ արքայից խնդրել Աղուանից իշխանի տիտղոսը Վարազ Գրիգոր Գարդմանից իշխանի համար: Վերջինիս հաջորդների և Աղուանից իշխանի հաստատության վերաբերյալ ամենից հետևողական տեղեկացնում է VII դ. 30–80-ական թթ. անցքերի մասին տեղացի ու ժամանակակից հեղինակի հավատի շարադրանք պարունակող, «684 թ. պատմութիւն» կոչված երկը: 684 թ. անանուն պատմիչն, ըստ երևույթին, մոտ է կանգնած եղել իր գլխավոր հերոսներին՝ Ջևանշեր և Վարազ Տրդատ իշխաններին, և հատկապես Մեծ Կողմանքի Իսրայել (առաջին անունով՝ Աբբաս) եպիսկոպոսին. նա ներկա կամ մասնակից է եղել նրանց մի շարք գործերին, այդ թվում՝ վերջինիս ուղևորությանը Հոնաց աշխարհ՝ հյուսիսկովկասյան թյուրքալեզու ժողովրդին քրիստոնեական հավատքի բերելու առիթով: Երկն ավարտվում է, ըստ ամենայնի, 682–683 թթ. իրադարձությունների նկարագրությամբ. վերջնական շարադրանքը կատարվել է, անշուշտ, 685 թ. ամռանը տեղի ունեցած հյուսիսկովկասյան խազարների այն ավերիչ արշավանքից առաջ, որին զոհ գնացին Հայոց և վրաց (մի վկայությամբ՝ նաև Աղուանից) իշխանները:

«684 թ. պատմութիւնը» պարունակում է մեզ հասած հայկական և օտարալեզու մնացյալ սկզբնաղբյուրներին բացարձակապես անհայտ, սակայն նրանց ունեցած տվյալներին լիովին համահունչ այն տեղեկությունը, որ Կոստանդ Բ (Կոստանդիանոս) կայսրն իր իշխանության 19-րդ տարում, այսինքն՝ 659 թ. սեպտեմբեր ամսից մինչև 660-ի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում, եղել է Ատրպատականում ու Հայքում և իր մոտ հրավիրել Աղուանից երկրի Ջևանշեր իշխանին: Ըստ 684 թ. արցախցի պատմիչի հաղորդած մանրամասների՝ Աղուանից իշխանն արժանանում է բարձրարժեք նվերների ու կայսեր անձնական մեծարանքին, և դա նախանձ է առաջացնում կենտրոնական Հայաստանի նախարարների մեջ, որոնց թվում հանվանե հիշատակվում է «զաւրավար» Համազասպ Մամիկոնյանը: Կոստանդի նվիրած փրկչական խաչի մասունքը Ջևանշերը պատշաճ ձևով պահպանելու համար Ուիտանես Աղուանից կաթողիկոսի հետ (655–680 թթ.) նախաձեռնում է

Գարդման բերդում եկեղեցու շինարարությունը (659 թ. վերջերին հիմնադրված այդ եկեղեցու կառուցման ավարտը հեղինակը թվագրում է 664 թ. նոյեմբերի 20-ով): Հաջորդ գարնան սկզբին, այսինքն՝ 660 թ. մարտ ամսին, Ջևանշերը ևս մեկ անգամ հանդիպեց կայսրին, այս անգամ՝ Վաղարշապատում: Հեղինակը թվարկում է Ջևանշերի ստացած նվերները, նշում Աղուանից աշխարհի համար կայսեր հաստատած կարգավիճակը («Եւ որ մի անգամ առաջին թագաւորացն Աղուանից գիւղաստանեայք եւ սահմանք լեալ էին, զամենայնն ի նա հրամայեաց ընձեռել ազգաց յազգս, եւ արեւելեացս ամենեցուն արքայաբար առնել տեսչութիւն»), պատմում իմաստուն զրույցների ու ջերմ բաժանման մասին»: Կոստանդ Բ-ին գրած հնազանդության «հրովարտակին» ի պատասխան՝ Ջևանշերը նրա կողմից նորից պատիվների է արժանանում («եւ իսկոյն հրամայէր գրել երդմունս եւ ունել համամիտ խաղաղութիւն: Եւ պարգեւս մեծամեծս շնորհէր եւ գահոյս արծաթիս քանդակակերտ թիկամբք ոսկեզարդ եւ հանդերձս ոսկեմանեալս... Եւ առնէ զնա պռոտոն պատրիկ, եւ տայր բերել պատրկության եւ հիպատության եւ ապ[ու]հիպաքոսության եւ ստրատելատության եւ ելիստության հազար երկերիւր արանց պատիւ»): Քիչ անց Կոստանդի «հրովարտակում» Ջևանշերը մեծարված է իբրև «Աղուանից իշխան, ապուհիպատ եւ պռոտոն պատրիկ եւ Արեւելեաց կուսակալ»:

«684 թ. պատմութիւն»-ը թույլ է տալիս պարզաբանել VII դարի Աղուանից իշխանի հաստատության պատմության կարևոր դրվագներից մեկի՝ Ջևանշեր իշխանի սպանության և նրա եղբորորդի Վարազ Տրդատի տիրակալության հաստատման ճշգրիտ ժամանակը՝ 680 թ. սեպտեմբեր: Հստակեցվում է նաև հաջորդած մի քանի տարվա դեպքերի ժամանակագրությունը՝ թվագրելով հյուսիսկովկասյան Հոնաց թագավորության տիրակալ Ալփ-Իլիթուերի փոքր արշավանքը Բուն Աղուանքի և Ուտիք նահանգի տարածք (681 թ. գարուն), Իսրայել եպիսկոպոսի ուղևորությունը նախ Վաղարշապատ (681 թ. ամառ-աշուն), ապա հոների Վարաչան մայրաքաղաք (681 թ. դեկտեմբեր – 682 թ. փետրվար), նրա ջանքերով քրիստոնեություն ընդունած հոների նամակագրությունը Աղուանքի և կենտրոնական Հայաստանի աշխարհիկ ու հոգևոր տիրակալների հետ (682–683 թթ.) և հոներին փոխարինած խազարական հորդաների ավերիչ արշավանքն Այսրկովկասի երկրներ (685 թ. օգոստոս): Այդ արշավանքի մասին հայտնող և ժամանակով ամենից մոտ սկզբնաղբյուրները՝ Փիլոն Տիրակացին և Ղևոնդը, տեղեկացնում են, որ խազարների զոհը դարձան Հայոց, վրաց և Աղուանից իշխանները: Սակայն ըստ ամենայնի՝ ավելի ճիշտ պետք է համարել երեք դար հետո իր «Տիեզերական պատմութիւն»-ը շարադրած Ստեփաննոս Ասողիկի տեղեկությունը, ըստ որի՝ սպանվել էին միայն Հայոց իշխան Գրիգոր Մամիկոնյանը (661–685 թթ.) և վրաց իշխանը (անունով աղբյուրներում չարձանագրված): Իսկ Աղուանից իշխան Վարազ Տրդատի անունը շարունակում է հայտնվել և՛ Ասողիկի, և՛ Մովսես Դասխուրանցու հաջորդ դրվագներում:

Վարազ Տրդատի իշխանության հաջորդող ժամանակահատվածի մասին ամենից մանրամասն տեղեկությունների հանդիպում ենք Մովսես Դասխուրանցու օգտագործած «Աղուանից կաթողիկոսների գավազանագրքում», որի շարադրանքի հիմնական

մասը պատմիչն արտագրել է ՊԱ եզրափակիչ գլխում (Գ. իգ՝ մեծ հավանականությամբ՝ հենց աղբյուրին հանգող «Անուանք հայրապետացն Աղուանից, ամք եւ գործք նոցին» վերտառությամբ), սակայն շատ կտորներ էլ անջատել է և դասավորել նախորդող գլուխներում: Վարազ Տրդատի՝ Բյուզանդիա տարվելու մասին տեղեկությունը հաստատվում է այլ աղբյուրների անուղղակի հաղորդումներով, որոնք կապված են Հուստինիանոս Բ կայսեր (685–695, 705–711 թթ.) առաջին չորս տարիների արևելյան ակտիվ քաղաքականության հետ: Ղևոնդը տեղեկացնում է, որ խազարների արշավանքից հետո Հուստինիանոսն իր թագավորության երկրորդ տարում (686–687 թթ.) և Աշոտ Բագրատունի պատրիկի (685–689 թթ.) իշխանության ժամանակ «առաքէ զաւր բազում ի վերայ աշխարհիս Հայոց», բյուզանդացիներն «աւերեցին զաշխարհս աւարառությամբ եւ զբազում գեղեցկայարմար շինուածս հրձիգ արարին՝ յաւեր դարձուցանելով, եւ ինքեանք դառնային յաշխարհն իւրեանց»: Ասողիկն այս արշավանքը թվագրում է Հուստինիանոսի երրորդ տարով[46]: Բյուզանդիայի այս գործողությունների հետ է կապվում IX դ. հույն ժամանակագիր Թեոփանես Խոստովանողի վկայությունը՝ Լեոնտիոս զորավարին Այսրկովկաս ուղարկելու մասին: Երկը Հուստինիանոս կայսեր առաջին (685–686 թթ.) և Աբդ ալ-Մալիք ամիրապետի երրորդ (687–688 թթ.) տարվա համար հայտնում է. «Նա [Հուստինիանոսը] Հայաստան ուղարկեց Լեոնտիոս զորավարին, որն, այնտեղի սարակինոսներին ջարդ տալով, երկիրն իրեն հպատակեցրեց, ինչպես նաև Իբերիան, Ալբանիան, Մուկանիան և Մեդիան: Նա, այդ երկրները հարկատու դարձնելով, կայսերը բազում դրամ ուղարկեց»: Ասողիկը գրում է նաև Հուստինիանոս կայսեր՝ իր իշխանության չորրորդ տարում, այսինքն՝ 689 թ. Հայաստան հասնելու մասին («Իսկ ի գալ չորրորդ ամին Յուստիանոս ինքն խաղացեալ զաւրու ծանու՝ եկն ի կողմն Առաջին Հայոց, ի լեառն, որ կոչի Արարտակ, եւ յերիս բաժանեալ զզաւրս իւր՝ առաքէ ի Հայս, ի Վիրս եւ յԱղուանս: Եւ կոչեալ առ ինքն զամենայն իշխանս աշխարհացս Հայոց այսոցիկ, եւ ոչ ի կամաց, այլ ի հարկէ գնացեալ առ նա»)[47]: Կայսեր՝ Հայաստան հասնելու մասին հայտնում է նաև Թեոփանեսը, թեպետ և տեղաշարժված ժամանակագրությամբ. «Հռոմայեցիների Յուստինիանոս կայսեր 10-ամյա թագավորության երկրորդ» (686–687 թթ.), բայց «արաբների առաջնորդ Աբդ ալ-Մալիքի 22-ամյա իշխանության չորրորդ» (688–689 թթ.) տարում «կայսրը, գալով Հայաստան, այնտեղ ընդունեց Լիբանանի մարդայիտներին...»: Ասողիկը Հայաստանում Հուստինիանոսի կատարած գործերի մասին հայտնում է. «Իսկ նորա զոմանս յիշխանացն ընդ իւր առեալ, եւ զոմանց զորդիսն պատանդս խնդրեալ, ընդ որս եւ կաթողիկոսն Հայոց զՍահակ հանդերձ Ե եպիսկոպոսաւք արգելեալ առ ինքն. եւ զոմանս յիշխանացն արքունատուր պատարագաւք պատուեալ՝ կացոյց իշխանս աշխարհացն, զՆերսէհ Շիրակայ տէր, կոմս Կապոյտիրոց՝ Հայոց իշխան, եւ զՎազգաատ՝ պատրիկ էքսարխոս, որ էր երկրորդ թագաւորին՝ Աղուանից իշխան, եւ ԼՌ զաւր աւգնական, եւ ինքն ի Կոստանդնուպոլիս դարձաւ»: Որևէ մեկի մոտ կասկած

[46] «Իսկ Յուստինիանոս ի յերրորդ ամի թագաւորութեան իւրոյ զաւր սաստիկ առաքեաց ի Հայս. եւ հրով եւ գերությամբ քանդեցին գաւառս ԻԵ եւ ԸՌ երդ գերեալ վաճառեցին. եւ միւս ամին այլ զաւր առաքեաց՝ ԽՌ» (Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն, Բ, 2, էջ 100):

[47] Ստեփանոսի Տարօնացւոյ Ասողկան Պատմութիւն, Բ, 2, էջ 100:

չի հարուցել, որ Յուստինիանոսի կողմից պատրիկ էքզարխոս և Աղուանից իշխան նշանակված այս անձնավորությունը դեռևս 680 թվականից այդ պաշտոնը տնօրինող նույն Վարազ Տրդատն է:

Նշելի է, որ Ասողիկը ոչինչ չի հայտնում վերջինիս Կոստանդնուպոլիս տանելու մասին, սակայն մյուս կողմից՝ ոչինչ չի խանգարում նաև իրարով լրացնելու նրա և Դասխուրանցու՝ վերը բերված հաղորդումները: Բայց ինչո՞ւ իր կողմից վերանշանակված Աղուանից իշխանին կայսրը պատվավոր աքսորի դատապարտեց. թերևս ենթադրելի է, որ Հուստինիանոսը մինչև վերջ հաջողության չհասավ իր ծրագրերում և ստիպված եղավ Այսրկովկասի երկրներն ամբողջությամբ իրեն ենթարկելու փոխարեն բավարարվել մի քանի տասնամյակ պարբերաբար գործող պայմանագրի համաձայն իշխանությունն այդ երկրների վրա Խալիֆայության հետ կիսելով: Դրանից հետո նա հեռացավ Հայաստանից՝ իբրև հպատակության երաշխիք պատանդ պահելով բազմաթիվ իշխանների, այդ թվում նաև իր որդիների հետ գնացած («հանդիպիւր հանդերձ որդւովք իւրովք») Վարազ Տրդատին: Այսպիսով՝ վերջինս իր Գագիկ և Վարդան որդիների հետ Կոստանդնուպոլսում հայտնվեց կայսեր չորրորդ տարում՝ 689 թ.:

Վարազ Տրդատը Կոստանդնուպոլսում հինգ տարի մնալուց հետո խորամանկությամբ վերադարձավ հայրենիք: Թեոփանեսը Յուստինիանոսի ութերորդ (692–693 թթ.), բայց Աբդ ալ-Մալիքի ամիրապետության տասներորդ (694–695 թթ.) տարվա համար գրում է. «Այդ տարի Հայաստանի պատրիկ Սմբատը, իմանալով հռոմայեցիների պարտության մասին, Հայաստանը արաբներին հանձնեց»[48]: 693–694 թթ. Այսրկովկասի երկրների ենթակայեցումը Խալիֆայությանը հաստատվում է նաև արաբական աղբյուրներով, ըստ որոնց՝ 693 թ. Փոքր Ասիայում՝ Սեբաստուպոլսի մոտ բյուզանդացիների կրած պարտությունից հետո Աբդ ալ-Մալիք ամիրապետն իր Մուհամմեդ եղբորը նշանակեց Հայաստանի, Ատրպատականի և Վերին Միջագետքի (Ջազիրա) փոխարքա: Ըստ Թեոփանեսի՝ Հուստինիանոսի առաջին կայսրության վերջին երկու տարում (694–695 թթ.) և նրան հաջորդած Լեոնտիոսի օրոք (695–698 թթ.) արաբները մի շարք հաջողությունների հասան՝ իրենց իշխանությունը հաստատելով Չորրորդ Հայքում, Լազիկայում և Ափրիկեի հյուսիսում:

Ըստ Մովսես Դասխուրանցու՝ Վարազ Տրդատի փախուստից և արաբներին հպատակվելուց հետո նրա որդիները բանտ նետվեցին, որտեղ մնացին մինչև Հուստինիանոսին իր երկրորդ գահակալությունից հետո փոխարինած Վարդան Փիլիպիկոսի (711–713 թթ.) իշխանության անցնելը. Վարազ Տրդատի որդիների՝ Կոստանդնուպոլսի բանտում մնալու ժամանակն է 694–712 թթ. սկիզբը:

Աղուանից իշխանների պատմության մեջ նշանակալի դիպված է Վարազ Տրդատի այրի Սպրամ իշխանուհու, կաթողիկոս Ներսես Բակուրի և Աղուանից իշխան Շերոյի հակամարտությունը: Ներսես Գարդմանացի կաթողիկոսն իր իշխանության (686–704 թթ. մայիս) 14 տարին, այսինքն՝ մինչև 700 թվականն աթոռակալեց «ուղղափառութեամբ», իսկ մնացյալ երեքուկեսը՝ «ի չարափառութեանն»: 686 թվականը

[48] Թէոփանէս Խոստովանող, Ժամանակագրություն, էջ 78:

խազարների ավերիչ արշավանքին հաջորդած բյուզանդական արևելյան քաղաքականության ակտիվացման ժամանակն էր, երբ իրոք ենթադրելի է երիտասարդ ու անհավասարակշիռ Հուստինիանոսի կողմից Հայաստանում և Աղուանքում քաղկեդոնականության (թերևս նրա մոնոթելիտական տարբերակի) ընդունման պայմանն առաջ քաշելու հնարավորությունը:

Այդ իրադարձության տարեթիվը համընկնում է արաբական իշխանության դեմ Հայաստանում սկսված քառամյա ապստամբության ժամանակին, որում արձանագրված է բյուզանդացիների սպասելի օգնությունը: Ըստ Ղևոնդի՝ Վարդանակերտի ճակատամարտի հաղթանակից հետո հայ ապստամբները ավետիս և նվերներ ուղարկեցին Հունաց կայսերը, որն, ի պատասխան դրան, կյուրապաղատի տիտղոս շնորհեց Հայոց իշխան Սմբատ Բագրատունուն:

Մոտավորապես 703 թ. հայերը ետ են կանգնում ապստամբությունից և արաբական նոր ուղարկված զորքերի ասպատակություններից խուսափելով (թերևս նաև Բյուզանդիայի ակնհայտ պասիվության պարագայում)՝ շնորհիվ Սահակ Ձորափորեցու հաջող դիվանագիտական ուղևորության Ասորիք (նրա նամակն արդեն ծերունազարդ կաթողիկոսի մահից հետո Խառանում ընդունում է Օկբա ոստիկանը) նորից հանձն են առնում խալիֆայության հպատակությունը[49]: Սահակից հետո կաթողիկոս է դառնում Եղիա Արձիշեցին (703–717 թթ.), որին շուտով Պարտավ են հրավիրում՝ գահընկեց անելու երկաբնակ Ներսես Բակուրին:

Շերո իշխանը և նորընտիր Սիմեոն կաթողիկոսը (աթոռակալած 1,5 տարի՝ 704–705 թթ.) փորձեցին հանգստացնել ու համախմբել նախորդող տարիներին երկպառակված Աղուանից երկիրը: Ուշագրավ է, որ արդեն Միքայել Շաքեցի կաթողիկոսի ընտրությունից հետո (մոտ 705 թ. երկրորդ կես) հրավիրված ժողովի արձանագրության մեջ Շերոն ստորագրում է նաև բյուզանդական տիտղոսով («ես՝ Շերոյ՝ ապեհի պատրիկ, Գարդմանից տէր, Աղուանից իշխան»), իսկ նրա մասնակիցների թվում Պարտավի նախորդ ժողովից հայտնի եպիսկոպոսների կողքին հիշատակված են և Ներսեսի կողմից հալածված, տարիներ առաջ Հունաց լուսավորիչը եղած «Իսրայէլ Մեծկուանից եպիսկոպոս»-ը, և «Զաքարիա Մեծիւրեանց եպիսկոպոս»-ը, որը ձեռնադրվել էր Ներսեսի կողմից նրան մատուցած՝ վերը նշված ծառայության դիմաց:

Արաբական հպատակությունը շուտով հանգեցրեց նոր հալածանքների, ողջակիզումների ու աքսորի, որոնք նկարագրված են հայկական և օտարալեզու աղբյուրներում: Ղևոնդ պատմիչը արաբների քաղաքականության փոփոխությունը կապում է Արդ ալ-Մալիք ամիրապետի վախճանի (705 թ. կես) և նրան փոխարինած որդու՝ Վլիթ-Վալիդի (705–715 թթ.) իշխանության հետ:

Շերո իշխանի ճակատագրի մասին աղբյուրներում այլ տեղեկություններ չեն պահպանվել, և հնարավոր չէ ճշտել՝ արդյոք նա շատերի նման նահատակվեց աքսորում, թե մի քանի հայ իշխանների նման կարողացավ վերապրել ու Աբդել Ազիզ ոստիկանի իրագործած ներման տարիներին (706–709 թթ.) վերադառնալ հայրենիք:

Աղուանից հաջորդ իշխանի հիշատակությունն ունենք Շերոյի աքսորից միայն ինը տարի անց՝ 714 թվականի համար:

«Եւ յետ երկուց ամաց ի թուականութեանն Հայոց ՃԿ [=711 թ.] եկն Աբդ Ազիզ իշխանն Տաճկաց յԱղուանս եւ նստաւ ի Պարտաւ: ... Եւ ի նոյն ամի էանց Աբդել Ազիզ զԿուր գետով յայն կողմն: Եւ զկնի Գ ամաց [=714 թ.] եկն Մսլիման, աւերեաց զԴարբանդ եւ եմուտ ի Խազիրս, ուստի ոչ զարեաց ելանել: Ապա թողու զքանակ կազմն ամենայն ընչիւք եւ զհարձս անգամ վերջապահս իւր առնէ, եւ զեռանշահիկն զՎաչագան ի Պատրիկեան Աղուանից իշխան զքաջ կորովի աջողակ աղեղնաւորն հանդերձ զաւրաւքն իւրովք յետոյ իւր արարեալ, յորմէ զկնի եկեալ Խազիրքն՝ պարտեցան՝ դարձեալք ի փախուստ»[50]:

2. ԱՂՈՒԱՆԻՑ ԻՇԽԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃՈՒՄԸ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ. ՀԱՄԱՄ ԲԱՐԵՊԱՇՏ ԱՐՔԱ

IX դարի վերջում թագավոր հռչակված Համամ Բարեպաշտ իշխանի նախնիների մասին կան իրարամերժ մի քանի տեսակետներ: Վստահելի է Բագրատունի լինելու վերաբերյալ վրացական աղբյուրների վկայությունը: 837 թ. Սահլ Սմբատյանը ձերբակալեց ապստամբ Բաբեկին և դրա դիմաց Արաբական խալիֆայությունից արժանացավ մեծ շնորհների՝ այդ թվում ստանալով Հայոց, Աղուանից և վրաց աշխարհների իշխանաց իշխանի փոխանցիկ պաշտոնը: Այն 2 տարի անց տրվեց «տերանց տէր» Յովհաննեսին, ենթադրաբար՝ Համամ-Հովհաննես Բագրատունու պապին: Սակայն 855 թ. Բուղա ոստիկանի կողմից Սահլը ևս գերեվարվեց և իր Ատրներսեհ որդու հետ, բազմաթիվ հայ իշխանների նման, տարվեց Միջագետք: 862 թ. Ատրներսեհն ազատվեց ու վերադարձավ հայրենիք, որտեղ շարունակեց իշխանության ամրապնդման գործը: Նրա ավագ որդին՝ Գրիգոր Ատրներսեհյանը, Հաւախաղաց բերդը կառուցելուց հետո իր իշխանությունը տարածել էր նաև «այն կողմ», այսինքն՝ Գարդման և Քուստի Փառնես գավառների վրա, որտեղ և X դ. սկզբին նրա 5 որդիներից երրորդը՝ Սահակ Սևադան, հիմնադրեց Փառիսոսի հզոր իշխանությունը (հետագայում՝ թագավորություն):

Փառիսոսին զուգահեռ հզորացած Խաչենի իշխանությունը սկսվում էր ոչ թե Սահակ Սևադայի որդուց, այլ մի եղբորից, գուցե և այն Սմբատից, որին պատմիչը վերագրում է եղբայրներից ավագի՝ Ապուլիի սպանությունը, բայց թերևս ճիշտ կլիներ ենթադրել, որ դա եղել է մյուս՝ թերևս երկրորդ եղբայրը՝ Սենեքերիմ անունով, որի անունն անցել է մեզ հայտնի թոռանը: Ստեփաննոս Օրբելյանին հասած տվյալներով՝ Տաթևի մայր եկեղեցու օծմանը 906 թ. մասնակցում էին և «Գարդմանայ տէր» Սահակը (Սևադան), և «Աղուանից» երեք այլ իշխաններ՝ Եսային (Դիզակի իշխանը), Ատրներսեհը (Շաքի-Հերեթի թագավոր Համամ Բարեպաշտի որդին, որը,

[49] Ըստ Ղևոնդի (գլ. Թ, էջ 22)՝ «Բ ամ... ծառայեցին յայնմհետէ Իսմայելացւոցն ծառայութիւն ստրկի»:

[50] ՊԱ Գ. ժգ, էջ 319–320:

ուրեմն, այդ թվականին արդեն փոխարինել էր հորը), և՛ Գրիգորը, որն, անկասկած, Խաչենի իշխանն էր[51]:

Համամին հաջորդեց նրա որդի Ատրներսեհը, որին հիշատակում են Հովհ. Դրասխանակերտցին, Ստեփանոս Օրբելյանը և այլ աղբյուրներ, այդ թվում՝ արաբական և վրացական: Ատրներսեհին փոխարինեց իր որդի Իշխանիկը, որը, հայկական և վրացական աղբյուրների տեղեկությունների համաձայն, իր մոր՝ վրաց թագավորի քույր Դինարի հետ երկրում տարածեց քաղկեդոնականությունը: Իշխանիկից հետո Աղուանից թագավորությունը կորցրեց ինքնուրույնությունը, և նրա Շաքիի հատվածը միացվեց Կախեթին:

Այսպիսով՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանում թեև Աղուանք/Առան տեղանունը աստիճանաբար փոխադրվում է Կուր-Արաքսյան միջագետք, սակայն դեռևս Կոստանդին Ծիրանածինը Ալբանիայի (Շաքի-Հերեթի թագավորության) մեջ ներառում է նաև Շարվանը, Խուրսանը, Վարսանը, Մովսանը, ինչպես նաև Ազիան, Կեղոնիա-Դիդոնիան և ինչ-որ Կրեբատաղների:

[51] Մովսես Դասխուրանցու խոսքերի ուշադիր քննության հիման վրա կարելի է նկատել, որ նրա աղբյուրում Համամ Բարեպաշտի թագավորության հոչակումը եղել է թվագրված, և դա Հայոց 343, այսինքն՝ 894 թիվն էր:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ IX-XII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԱՐԱԲԱԿԱՆ ՅԱՋԻԴՅԱՆ ՈՒ ՀԱՇԻՄՅԱՆ ՏՈՀՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՇԻՐՎԱՆՈՒՄ ԵՎ ԴԵՐԲԵՆԴՈՒՄ

IX դարի երկրորդ կեսին Արաբական խալիֆայության թուլացման պայմաններում եթե Հայաստանում և Վրաստանում իշխանությունն աստիճանաբար անցնում էր տեղական հայ և վրաց ավատատիրական տների և, մասնավորապես, Բագրատունյաց տոհմի ներկայացուցիչներին, Արծրունիներին ու Սյունիքի իշխաններին, ապա Շամախիում և Դերբենդում գերակայություն ստացան խալիֆայության կողմից նշանակված արաբ կառավարիչները:

Արաբական Շայբանի ցեղախմբի ներկայացուցիչ Յազիդ իբն Մազյադից, որ վախճանվել էր 801/802 թ., Շիրվանում սկզբնավորվեց ժառանգական մի իշխանություն, որի հաջորդ կառավարիչները իրենց անվանում էին շիրվանշահեր: Յազիդյանները կամ Յազիդիները աստիճանաբար իրենց տիրապետությունն ընդարձակեցին հարևան գավառների հաշվին. նրանք աստիճանաբար գրավեցին ու հաստատվեցին Լայզանում և Դերբենդում:

Բուն Աղուանքն ընդգրկող Արևելյան Այսրկովկասում աստիճանաբար ամրապնդվում է արաբական Հաշեմիների (Դերբենդ) ու Յազիդյանների (Շիրվան) տոհմերի տիրապետությունը:

* * *

Այսրկովկասին լավածանոթ արաբ Բալազուրի պատմիչի մոտ (մահ. 892 թ.) պահպանված ավանդությամբ. «Անուշիրվանը թագավորներ նշանակեց ըստ կարգի և ամեն մեկին տվեց մի գավառի թագավորական իրավունքը՝ շահիյյա: Այսպես՝ լեռան խաքանը, որ Սարիրի տերն էր ու կոչվում էր Վահսարանշահ, ապա Ֆիլանի թագավորը, որը Ֆիլանշահն է, Թաբարսարանշահը, լեզգիների (Լաքս) թագավորը, որը կոչվում է Ջարժանշահ,... Շարուանի թագավորը, որը կոչվում է Շարուանշահ...»:

Հյուսիսային ցեղերի ներթափանցումը դեպի Այսրկովկաս կասեցնելու և Դերբենդի անցակետը պահպանելու նպատակով արաբները ևս հատուկ ուշադրությամբ էին ամրացնում պարիսպներն ու զորք տեղակայում այնտեղ, վերաբնակեցնում Միջագետքից տեղափոխված բնակչություն:

Շամախի քաղաքի հիմնադրումը վերագրվում է Հարուն ալ-Ռաշիդի կողմից կառավարիչ նշանակված Շամմախ բին Շուջային: Քաղաքն իր ռազմավարական դիրքի

շնորհիվ աստիճանաբար վերածվեց երկրամասի կենտրոնի, որի սահմանները հյուսիսից հսկում էին Զողում (Դերբենդ) տեղակայված կայազորները: Մանսուր խալիֆայի իշխանության տարիներին Արմինիայի կառավարիչ Յազիդ բ. Ուսեյդ աս-Սուլամին գրավել էր Շիրվանը՝ իր նավթահանքերով ու աղահանքերով:

Շիրվանշահերի արաբական դինաստիայի հիմնադիր է համարվում Յազիդ իբն Մազյաղ աշ-Շայբանին, որին Հարուն ալ-Ռաշիդ խալիֆան 799 թ. կրկին նշանակեց Հայաստանի, Ատրպատականի, Շիրվանի և Դերբենդի կառավարիչ: Յազիդ իբն Մազյաղ աշ-Շայբանին այդ պաշտոնը զբաղեցրել էր նաև նախկինում՝ մինչև 788 թ.: Նա մահացավ Պարտավում, և կառավարչի պաշտոնում նրան հաջորդեցին իր որդիները՝ Ասադ իբն Յազիդը և Մուհամմեդ իբն Յազիդը: 820 թ. Մամուն խալիֆան Հայաստանի, Ատրպատականի, Շիրվանի և Դերբենդի կառավարչի պաշտոնում նշանակեց Խալիդին՝ Յազիդ իբն Մազյադի երրորդ որդուն: Վերջինիս անունով դրամներ են հատվել «Մեդինետ Առան» (Առան քաղաքի) նշումով 827/8-ից մինչև 832/3 թթ.: Բալազուրի պատմիչի վկայությամբ՝ Խալիդը «Նրանցից (իմա՝ Հայաստանի իշխաններից) նվերներ էր ընդունում և նրանց հետ անձամբ բարեկամաբար շփվում էր, իսկ այս բանը փչացրեց նրանց և նրանից հետո մյուս կառավարիչների նկատմամբ հանդուգն դարձրեց»: Խալիդը մահացավ 844/845 թ. և թաղվեց Դվինում, իսկ նրա փոխարեն «Արմինիայի» արաբ կառավարիչ նշանակվեց որդին՝ Մուհամմեդ իբն Խալիդը: Բուղայի արշավանքի ժամանակ ալեկոծված երկրամասը հնարավոր եղավ հանդարտեցնել միայն Մուհամմեդ իբն Խալիդին կրկին կառավարիչ նշանակելու միջոցով. «Նա (Բուղան) ... գրեց Մուտավաքքիլին, որը կառավարիչ նշանակեց Մուհամմեդ իբն Խալիդ իբն Յազիդ իբն Մազիադ աշ-Շայբանիին, որը երբ եկավ, ապստամբները հանդարտվեցին, և նա նորեն երաշխավորագրեր տվեց նրանց»: Մովսես Դասխուրանցու հաղորդումով. «ի չորրորդում ամին եղև գալն Մահմատայ՝ Խաղթի որդւոյ»:

Արաբական խալիֆայության տիրապետությունը ամրապնդելու նպատակով Բուղայի գլխավորությամբ ձեռնարկված արշավանքը, չնայած գործադրված անլուր դաժանություններին, ավարտվեց ձախողումով, և խալիֆայությունը, զբաղված լինելով Բյուզանդիայի դեմ մղվող պատերազմով, ստիպված էր զիջումների գնալ տեղական իշխող դասին:

859 թ. Գանձակում Յազիդի Մուհամմեդի իշխանության, իսկ 869 թ. Դերբենդում Հաշիմյանների տիրապետության հաստատումով ամրապնդվում էին Արաբական խալիֆայության գերակա իշխանությունը միայն անվանապես ճանաչող իշխանությունների դիրքերը:

1. Դերբենդում հաստատվեցին արաբական Սուլայմ ցեղի ներկայացուցիչ Հաշիմյանները, որոնք սերտորեն համագործակցում էին տեղական իշխող դասի հետ:

2. Շիրվանում հաստատվեցին արաբական Շայբանի ցեղի ներկայացուցիչ Յազիդյանները, որոնք աստիճանաբար ներառվեցին տեղական իրանական քաղաքակրթության ոլորտ:

Արևելյան Այսրկովկասում այս իրավիճակը պահպանվեց մինչև սելջուկյան արշավանքները:

Խալիֆայության կողմից երրորդ անգամ կառավարիչ կարգված Մուհամմեդ իբն Խալիդի եղբայրը՝ Շիրվանի կառավարչի պաշտոնում նրան հաջորդած Խայսամ իբն Խալիդը, օգտվելով Մուտավաքքիլ խալիֆայի սպանության հետևանքով առաջացած խառնակություններից, 861 թ. հայտարարեց իր անկախության մասին և հռչակվեց որպես շիրվանշահ:

Յազիդյանների (Մազյաղների) տոհմից «շիրվանշահ» տիտղոսով Խայսամ Իբն Խալիդը դառնում է մահմեդական առաջին կառավարիչը Շիրվանի գահին: Նրա եղբայր Յազիդ իբն Խալիդը հռչակվում է Լայզանի թագավոր՝ «լայզանշահ» տիտղոսով: Յազիդյանների տիրապետությունը, այսպիսով, փոխում է իր բնույթը. նախկինում որպես արաբական կառավարիչ նշանակված Յազիդյանները իրենց հպատակներով ու ավատատիրական սեփականությամբ վերածվում են ժառանգական տիրակալների:

Խայսամ իբն Խալիդին հաջորդել է նրա որդին՝ Մուհամմեդ իբն Խայսամը: Սրան հաջորդել է Խայսամ իբն Մուհամմեդը: Ժամանակագրության հաղորդմամբ՝ վերջինիս կառավարումը եղել է երկարատև, և նա մարտնչել է «անհավատների» դեմ:

Աբու աս-Սաջի որդի Յուսուֆի (901-928 թթ.) փորձը՝ հանդես գալ խալիֆայի անունից հաստատելու Սաջյան տոհմի տիրապետությունը Այսրկովկասում և այդ նպատակով ձեռնարկած արշավանքները դեպի Դերբենդ ու Հայաստան ավարտվեցին ձախողումով, և Յուսուֆի մահից հետո, ինչպես Բագրատունիները Հայաստանում, այնպես էլ Յազիդյաններն ու Հաշիմյանները դարձան անկախ իշխանություններ:

Խայսամ իբն Մուհամմեդին հաջորդել է նրա որդին՝ Ալի իբն Խայսամ իբն Մոհամմեդը: Ալի իբն Խայսամը Դերբենդի ամիրայի հետ 912 թ. արշավանք է ձեռնարկել հարևան Շանդանի «անհավատների» դեմ, սակայն Շանդանի դարպասների մոտ պարտություն է կրել և 10 000-անոց զորքով Դերբենդի ամիրայի հետ գերի է ընկել: Գերիները բաժանվել են Շանդանի, Սարիրի և խազարների միջև: Երեք ամիս անց, սակայն, սարիրցիները առանց փրկագնի ազատ են արձակել Դերբենդի ամիրային և գերիներին:

Շիրվանը հարձակումների էր ենթարկվում ոչ միայն խազարների, այլև ռուսների կողմից: 913-914 թթ., ըստ ալ-Մասուդի, ռուսների նավատորմը հարձակվել և կողոպուտի է ենթարկել մերձկասպյան տարածքները, այդ թվում նաև Շիրվանի կազմի մեջ գտնվող Ապշերոնը:

917 թ. Ալի իբն Խայսամի դեմ ապստամբում է նրա ազգական, Լայզանի կառավարիչ Աբու Թահիր Յազիդ իբն Մուհամմեդը և, գրավելով Շիրվանը, այն միացնում է Լայզանի իր իշխանությանը: Վերջինս Շիրվանում 918 թ. կառուցում է նոր քաղաք՝ անվանելով այն Յազիդիյա:

Ինչպես արդեն նշվել է, Դերբենդում իշխում էին Հաշիմյանները, որոնց ներկայացուցիչ ամիրա Ահմեդ իբն Աբդ ալ-Մալիք ալ-Հաշիմի դեմ 944 թ. Դերբենդում

բռնկված ապստամբության ժամանակ նրան արտաքսում են Դերբենդից և դիմում շիրվանշահ Աբու Թահիր Յազիդին՝ հրավիրելով գալ և տիրել քաղաքին: Աբու Թահիրը իր որդուն՝ Ահմադին, ուղարկում է Դերբենդ (ալ-Բաբ), որտեղ նրան հավատարմության երդում են տալիս: Որոշ ժամանակ անց դերբենդցիները ապստամբում են նաև Ահմադի դեմ և նորից իշխանության հրավիրում Ահմադ ալ-Հաշիմին: Աբու Թահիր Յազիդը հարձակվում է ալ-Բաբի վրա և կողոպտում նրա շրջակայքը:

Շիրվանշահերը ձգտում էին դիվանագիտական հարաբերություններ պահպանել ուշրջակա ամիրայությունների հետ, իսկ դեյլեմցիների հետ հաշտություն կնքելուց հետո համաձայնեցին նրանց հետ արշավել Ռումի (Բյուզանդիայի), վրացիների և այլ «անհավատ» ժողովուրդների վրա:

Աբու Թահիր Յազիդը կառավարեց մոտ երեսուն տարի և մահացավ 948 թ. սեպտեմբերին: Նրան հաջորդեց որդին՝ Մուհամմեդ իբն Յազիդը, որը մինչ այդ Լայզանի կառավարիչն էր: Մուհամմեդը ևս իր որդիներ Ահմադին՝ Լայզան, իսկ Խայսամին՝ Թաբասարան երկրամասերի կառավարիչներ նշանակեց: Ըստ Մասուդի՝ Շիրվանի կառավարիչ Մուհամմեդ իբն Յազիդը գրավել է Դերբենդը՝ այնտեղ իր փեսայի մահից հետո (939 թ.): Մուհամմեդ իբն Յազիդը կառավարել է 8 տարի և մահացել 956 թ. հունիսի 4-ին, որին և վերագրվում է այսպես կոչված «Քեսրանյանների» տոհմի հիմնադրումը: Լայզանում կառավարիչ նշանակված նրա որդին՝ Ահմադ իբն Մուհամմեդ իբն Յազիդը, հոր թաղման արարողությանը մասնակցելուց անմիջապես հետո հայտարարվեց իշխանության ժառանգորդ: Նրա եղբայրը՝ Թաբասարանի կառավարիչ Խայսամը, երկյուղելով եղբորից, փախուստով ապաստանում է լեզգիների մոտ, իսկ հորեղբորորդին՝ Աբու-լ-Խայսամ իբն Ահմադը, փախուստի է դիմում դեպի Պարտավ, որտեղ շուտով մահանում է:

Լեզգիների մոտ ապաստանած Խայսամը, շարունակելով Շիրվանի գահի նկատմամբ իր հավակնությունների դրսևորումը, 968 թ. անցնում է Իբրահիմ իբն Մարզուբան ադ-Դեյլեմի մոտ և նրա հետ խոշոր բանակով ներխուժում Շիրվան: Նրանք կողոպտում են Շիրվանն ու հասնում մինչ Դերբենդի շրջակայքը: Ահմադ իբն Մուհամմեդ իբն Յազիդը ստիպված է լինում խոշոր գումարի վճարումով կասեցնել արշավանքի ծավալումը: Խայսամը փախուստով ապավինում է Դերբենդում իշխող Ահմադ իբն Արդ ալ-Մալիք ալ-Հաշիմի մոտ: Վերջինս բանակցություններ է վարում շիրվանշահ Ահմադի հետ՝ Շիրվանի մի մասը եղբորը՝ Խայսամին տրամադրելու վերաբերյալ, սակայն մերժում է ստանում: Դերբենդի կառավարիչ ամիրա Ահմադը զորքով ներխուժում է Շիրվան և գրավելով ավերում Շիրվանի Շաբարան քաղաքը: Արշավանքը, սակայն, չի լուծում խնդիրը,և Դերբենդի ամիրան ստիպված է լինում վերադառնալ:

Շիրվանշահ Ահմադը մահանում է 981 թ. հունիսին՝ իշխելով մոտ 25 տարի: Ահմադին հաջորդում է որդին՝ Մուհամմեդ իբն Ահմադը, որը փորձում է ընդարձակել իր տիրույթները: 981-982 թթ. նա գրավում է Կապաղակ (Ղաբալա) քաղաքը, իսկ 982-ին՝ Պարտավը, որտեղ կառավարիչ է նշանակում իր դրածոյին՝ Մուսա իբն Ալիին: Հայտնի է, որ 983 թ. նա կառուցապատել է Շաբարանի պարիսպները:

Մուսա իբն Ալին 980-ական թթ. վերջերին հրաժարվում է այլևս ենթարկվելուց Մուհամմեդ իբն Ահմադին և ուրբաթօրյա աղոթքի ժամանակ շիրվանշահի անվան փոխարեն հրամայում է նշել իր անունը: «Ալ-Բաբի [Դերբենդի] պատմությունը» ծանուցում է, որ 990 թ. Դերբենդ քաղաքի բնակիչները կրկին ապստամբում են իրենց ամիրա Մայմունի դեմ և հրավիրում շիրվանշահ Մուհամմեդին՝ գալու և տիրելու քաղաքին: Մուհամմեդը մուտք է գործում Դերբենդ, վերաշինում նրա պարիսպներն ու այնտեղ կայազոր թողնելով՝ վերադառնում Շիրվան, որտեղ և 991 թ. նոյեմբեր ամսին Յազիդիյե քաղաքում կնքում է իր մահկանացուն:

Մուհամմեդ իբն Ահմադին հաջորդում է նրա եղբայրը՝ Յազիդ իբն Ահմադը: Վերջինիս կառավարման շրջանը լի էր միջավատատիրական պատերազմներով, որի ընթացքում փորձ էր արվում ընդարձակելու սեփական տիրույթները հարևան իշխանությունների հաշվին: Այսպես, 992 թ. պատերազմ է բռնկվում Շիրվանի և Շաքիի միջև, որի ընթացքում շիրվանցիները ունենում են զգալի կորուստներ: 999 թ. շիրվանցիներին այնուամենայնիվ հաջողվում է գրավել Կապաղակը: XI դարի առաջին քառորդին երկարատև մարտեր են ընթանում նաև Դերբենդի ու Շիրվանի միջև փոխադարձ հավակնություններով ու հաջողություններով, որի ընթացքում մշտապես վճռական նշանակություն է ունենում այս կամ այն կառավարչի նկատմամբ Դերբենդի բնակիչների դիրքորոշումը: 1025 թ. շիրվանշահ Յազիդ իբն Ահմադի դեմ ապստամբում է նրա որդին՝ Անուշիրվան իբն Յազիդը, որը կառավարիչ էր կարգված Յազիդիյեում: Ապստամբությունը ձախողվում է, Անուշիրվանը ձերբակալվում և սովամահ է արվում բանտում: Յազիդ իբն Ահմադը ևս շուտով վախճանվում է (1027 թ.)՝ իշխելով երեսունյոթ տարի:

2. ՇԻՐՎԱՆՇԱՀԵՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ XI ԴԱՐՈՒՄ

Ուշագրավ է Վ. Մինորսկու այն դիտարկումը, թե Յազիդ իբն Ահմադի որդիների՝ Անուշիրվանի և Մանուչիհրի պարսկական անունները տոհմի պատմության մեջ որոշակի շրջադարձի վկայություն են: Արաբական անուններին փոխարինելու են գալիս պարսկական անուններ, իսկ տոհմը սկսում է իրեն վերագրել իրանական ծագում: Դեռևս 943 թ. ներքո Մասուդին հաղորդում էր, թե Շիրվանի թագավոր Մուհամմեդ իբն Յազիդը ծագում էր Սասանյան Բահրամ Գուրից: Սասանյան արքայական տոհմից սերելու գաղափարը, Վ. Մինորսկու կարծիքով, կարող էր կապված լինել Արաբական խալիֆայության թուլացման և տեղական իշխանական տների հետ Շայբանիների խնամիական կապերի հաստատման հետ: Յազիդ իբն Ահմադի մահից հետո նույն՝ 1027 թ. շիրվանշահ է հռչակվում նրա որդին՝ Մանուչիհր իբն Յազիդը:

Մանուչիհրի կառավարման տարիներին շարունակվում էին հարևան երկրամասերի հետ Շիրվանի մղած պատերազմական գործողությունները: Մանուչիհր իբն Յազիդը սպանվեց 1034 թ. իր եղբոր՝ Աբու Մանսուր իբն Յազիդի կողմից, որը մեկ տարի անց ամուսնացավ նրա այրու հետ. վերջինս Գանձակում իշխող Շադդադյանների դուստրն էր:

Աբու Մանսուրն այնուհետև իր իշխանությունը նաև Դերբենդում տարածելու համար կարողացավ օգտագործել Դերբենդի ամիրայի նկատմամբ բնակիչների դժգոհությունն ու Աբդ ալ-Մալիքի՝ 1035 թ. քաղաքից արտաքսված լինելու հանգամանքը: Նա փորձում էր ամրապնդվել այնտեղ՝ այն միավորելով շիրվանշահերի պետությանը: Աբդ ալ-Մալիքը, սակայն, շուտով կարողացավ կրկին հաստատվել Դերբենդում՝ դուրս քշելով շիրվանշահի կողմից այնտեղ թողնված կայազորը: Աբդ ալ-Մալիքը, հաշտություն կնքելով շիրվանշահ Աբու Մանսուրի հետ, ամուսնացավ նրա քրոջ՝ Շամքուի հետ և շուտով իր դեմ կրկին բռնկված ապստամբությունից խույս տալու նպատակով անցավ Շիրվան:

1043 թ. մահացան շիրվանշահ Աբու Մանսուրն ու Դերբենդի ամիրա Աբդ ալ-Մալիքը: Շիրվանում գահն անցավ Աբու Մանսուրի եղբորը՝ Կուբադին: 1044 թ. կրկին հակասությունները սրվեցին ալ-Բաբի բնակիչների և քաղաքի կառավարչի միջև, ինչպես նաև Շիրվանի հետ: 1045 թ. Շիրվանի կառավարիչ Կուբադը, երկնչելով թուրք-օղուզների արշավանքների վտանգից, ձեռնամուխ եղավ Յազիդիյա մայրաքաղաքի շուրջ պարիսպների ամրացման գործին: Կուբադը 6-ամյա իշխանությունից հետո մահացավ 1049 թ. հուլիսի 28-ին: Կուբադի մահվան առաջին իսկ օրվանից Շիրվանում սկսեց կառավարել նրա եղբորորդին՝ Բուխտ-Նասսարը: Սակայն մեկ տարի անց իշխանությունը անցավ նրա հորեղբորը՝ Սալար իբն Յազիդին, որը և սպանել տվեց Բուխտ-Նասսարին: Տասնհինգամյա իշխանությունից հետո (1049-1063 թթ.) Սալարը մահացավ 1063 թ. փետրվարի 20-ին:

Սալարի մահից հետո Շիրվանի գահը անցնում է նրա որդուն՝ Ֆարիբուրզ Ա-ին (Ֆարիբուրզ իբն Սալար իբն Յազիդ), ով դեռևս հոր կենդանության ժամանակ ընդգրկված էր պետության կառավարման գործում:

Ֆարիբուրզի իշխանության առաջին իսկ տարում Շիրվանի վրա երեք արշավանք է ձեռնարկում Դվինից Գանձակ փոխադրված Շադդադյան Շավուր իբն Ֆադլունը, որ նաև խնամիական կապերի մեջ էր Շիրվանի արքունիքի հետ և փորձում էր տիրանալ ոչ միայն Շիրվանին, այլև Դերբենդին[52]:

Շավուր իբն Ֆադլունը 1063 թ. մարտին արշավում է Շիրվան, գրավում Կույլամիյան ամրոցը և այնտեղ տեղավորում իր կայազորը: Որոշ ժամանակ անց՝ իր հաջորդ արշավանքի ընթացքում, պարտության մատնելով Շիրվանի մեծաքանակ բանակին՝ Շավուրը հասնում է մինչև իշխանական նստավայր՝ Յազիդիյա, և պաշարում այն: Նա կողոպտում է երկիրը, ետ է վերցնում իր դստերը՝ Սալարի այրուն, և մեծաքանակ գերիներով վերադառնում Գանձակ:

1063 թ. հուլիսին երրորդ անգամ արշավելով Շիրվան՝ Շավուրը կանգ է առնում Սադուն գյուղի մոտ, հրդեհում հացահատիկի դաշտերը: Ֆարիբուրզը ստիպված է լինում օգնության խնդրանքով որդուն՝ Աֆրիդունին, ուղարկել Սարիրում իշխող մայրական գծով պապի մոտ, սակայն ապարդյուն:

[52] Գանձակի և Շիրվանի միջև խնամիական կապերի սերտության մասին է վկայում այն փաստը, որ Գանձակի Ալի Լաշքար Երկրորդի մայրը Շիրվանի արքայադուստրն էր, Գանձակի Շադդադյան Շավուրի դուստրը կնության էր տրված շիրվանշահ Սալար իբն Յազիդին և այլն:

Շիրվանի պարտություններից հետո Դերբենդի մելիք Մուֆֆարիջը ճանաչում է Շադդադյանների գերակայությունը և խուտբան ընթերցել տալիս Շավուրի անունով:

1064 թ. հունվարին Շավուրը չորրորդ անգամ է ներխուժում Շիրվան և վերադառնում՝ գանձելով խոշոր ռազմատուգանք:

Ֆարիբուրզն իր հերթին 1065 թ. արշավում է դեպի Դերբենդ, կողոպտում մի շարք գյուղեր, այնուհետև ներխուժում քաղաք և հաշվեհարդար տեսնում բնակիչների հետ, որոնք ապստամբել ու սպանել էին այնտեղ իշխող Ֆարիբուրզի ազգական Աբդ ալ-Մալիքի որդի Մանսուրին, և խոշոր կողոպուտով վերադառնում է Շիրվան[53]:

1065 թ. տարածաշրջանում իրադրությունը արմատապես փոխվում է: Սելջուկյան նոր արշավանքի սպառնալիքի պայմաններում Գանձակի տիրակալ Շադդադյան Շավուրը հաշտություն է կնքում շիրվանշահի հետ, առանց դիմադրության իր հպատակությունը հայտնում սելջուկյան Ալփ Արսլան սուլթանին և վերջինիս հետ մասնակցում դեպի Անի կատարված արշավանքներին[54]:

1066 թ. Շիրվանը ենթարկվում է թուրք-օղուզների արշավանքների արհավիրքներին: Շիրվանշահ Ֆարիբուրզը ստիպված է լինում խոշոր ռազմատուգանք վճարել: Վերջիններս հեռանում են հարուստ ավարով ու կողոպուտով: Թյուրքերի առաջնորդ Կարա Թեքինը, սակայն, 1066 թ. նոյեմբերին կրկին հայտնվում է Շիրվանում, պաշարում մայրաքաղաք Յազիդիյան (Շամախին), կողոպտում Շիրվանը՝ հասնելով մինչև Բաքու, այնուհետև վերադառնում է Շաբարան և Յազիդիյա՝ շարունակելով կողոպտել անպաշտպան բնակավայրերը և հարուստ ավարով հեռանում դեպի հարավ: 1067 թ. փետրվարին Ղազվինից Շիրվան է ժամանում թյուրքական մեկ այլ ցեղախմբի առաջնորդ Ալ-Բասանի ներկայացուցիչը և պահանջում 30 հազար դինարի ամենամյա հարկ: Նոր արշավանքներ չհարուցելու մտավախությամբ 1067 թ. Ֆարիբուրզը ստիպված է լինում պարտավորվել ամենամյա հարկ վճարել թյուրքերին:

1067 թ. ապրիլին վրացիները, ըստ «Թարիխ ալ-Բաբ» երկի, Շաքիում գրավում են Դասկարատ ալ-Հուսեին ամրոցը: Վրաց Բագրատ Դ թագավորն, արշավելով Շաքի, Պարտավ և Շիրվանից ևս գրավելով Դասկարատ ալ-Հուսեին ամրոցը, ի վերջո ստիպված է լինում շտապ վերադառնալ Քարթլի՝ ամրոցը հանձնելով Կախեթի թագավոր Գագիկի որդի Ախսարթանին (1058-1084 թթ.): Վերջինս տիրում էր նաև Շաքիին: Տարածքները ետ գրավելու Ֆարիբուրզի փորձը անհաջողության է մատնվում, և նա ձեռնունայն վերադառնում է իր մայրաքաղաք:

1068 թ. հուլիսին շիրվանշահ Ֆարիբուրզի Աֆրիդուն որդին ստիպված է լինում հեռանալ Դերբենդից և վերադառնալ Շիրվան: Շուտով, սակայն, Ֆարիբուրզն իր որդու հետ նոր արշավանք է կազմակերպում դեպի Դերբենդ, և կրկին Դերբենդի կա-

[53] Ֆարիբուրզին հաջողվում է նաև օգտվել դերբենդցիների կողմից քաղաքի ամիրայի դեմ անհնազանդության փաստից ու վերջինիս մահից հետո՝ 1066 թ., Դերբենդում կառավարիչ նշանակել իր որդուն՝ Աֆրիդունին:

[54] Ցուցաբերած օժանդակության դիմաց Ալփ Արսլանը ավերված Անին հանձնում է Շադդադյան Շավուրին, որն էլ Անի է ուղարկում իր որդուն՝ Մանուչեհրին: Վերջինիս ժառանգները տիրում են Անիին մինչև 1174 թ.:

ռավարիչ է նշանակվում Աֆրիդունը: Դրան ի պատասխան՝ Շադդադյան Ֆաղլունը իր հերթին արշավում է Շիրվան, գրավում այն և պարտադրում ամենուրեք՝ ընդհուպ նաև Դերբենդում, խուտբայի ժամանակ արտասանել իր անունը: Փոփոխակի հաջողություններով ընթացող իրադարձությունների շղթայում Ֆարիբուրզին կրկին հաջողվում է վերագրավել Շիրվանը և Դերբենդում ամրապնդել իր որդու դիրքերը՝ պարտադրելով խուտբան ընթերցել շիրվանշահի անունից: Այսպիսով՝ XI դարի երկրորդ կեսից, փաստորեն, ավարտվում է Դերբենդում կառավարող դինաստիայի իշխանությունը, և այն գրավվում է շիրվանշահերի կողմից, որին, սակայն, հաջորդում է սելջուկյան տիրապետության հաստատումը:

1068 թ. Ալփ Արսլանի բանակը ներխուժում է Ուտիք և պատրաստվում արշավելու Վրաստան: Մեծարժեք նվերներով Ալփ Արսլանին են ներկայանում և իրենց հպատակությունն են հայտնում Կախեթի և Շաքիի թագավոր Ախսարթանը, շիրվանշահ Ֆարիբուրզը, Լոռիի Հայոց թագավոր Կյուրիկեն և Տփղիսի ամիրան: Գահը պահպանելու նպատակով Ախսարթանը դավանափոխ է լինում և խոստանում հարկ վճարել:

1071 թ. նոյեմբերին Ալփ Արսլանի կողմից Դերբենդի կառավարիչ է նշանակվում Յաղմա թուրքը, իսկ Ֆարիբուրզն իր որդու հետ ստիպված է լինում հեռանալ քաղաքից: Ալփ Արսլանի մահից հետո Ֆարիբուրզն իր որդի Աֆրիդունին կրկին նշանակում է Դերբենդի կառավարիչ և ուղարկում այնտեղ:

1072 թ. շիրվանշահ Ֆարիբուրզը, Առանի կառավարիչ Ֆաղլուն իբն Շավուրի[55] հետ դաշնակցած, ներխուժում է Շաքի և սրի մատնում «անհավատներին»: Ֆարիբուրզին, սակայն, չի հաջողվում գրավել Շաքիի ողջ տարածքը:

1074 թ. Դերբենդ է ժամանում Իրաքի սելջուկյան իշխանության կողմից ուղարկված Սաու-Թեքինը, որին Դերբենդը շնորհվել էր որպես կալվածք: Ֆարիբուրզը ևս ստիպված է լինում հնազանդություն հայտնել սելջուկներին և պարտավորվել ամենամյա հարկի վճարում:

[55] Ֆաղլուն իբն Շավուրը (Ֆաղլուն Բ, 1067–1073 թթ.), մասնակցելով Ալփ Արսլանի կողմից Շաքի և Վրաստան կատարած արշավանքներին, նշանակվել էր նաև Թիֆլիսի կառավարիչ, սակայն Ալփ Արսլանի հեռանալուց հետո՝ Թիֆլիսից վերադարձի ժամանակ, գերվում է Շաքիում և հանձնվում վրացիներին: Գանձակում չսպասելով Ֆաղլուն Բ-ի վերադարձին՝ 1068 թ. գահը հանձնում են նրա եղբորը՝ Աշոտ իբն Շավուրին: 1069 թ. սելջուկյան զորավար Սաու Թեքինը գերությունից ազատում է Ֆաղլուն Բ-ին, և վերջինս կրկին գրավում է իշխանությունը Գանձակում: Գնելով Անին Ալփ Արսլանից՝ նա Անի է ուղարկում իր կրտսեր եղբորը՝ Մանուչիհր իբն Շավուրին (1072–1118 թթ.), որով սկզբնավորվում է Շադդադյանների Անիի տոհմը (1072–1199 թթ.)՝ որպես Հայաստանում Անիի տիրակալ կրելով «շահնշահ» տիտղոսը: 1073 թ. Գանձակում Ֆաղլուն Բ-ին փոխարինում է նրա որդին՝ Ֆաղլուն Գ-ն, և հորը ուղարկում Շամքոր գետի ափին գտնվող հայկական Զարեքավանք՝ սպասավորելու աստծուն: Ֆաղլուն Գ-ի իշխանությունը տևում է երկու տարի, որից հետո սելջուկյան Սաու Թեքինը 1075 թ. Առանն ու Դերբենդը (ալ-Բաբ նահանգը) միացնում է սելջուկյան տիրույթներին: Այդպիսով Գանձակի ամիրայությունը դադարում է գոյություն ունենալուց: 500/1106 թ. Գանձակը գրավվում է շիրվանշահ Ֆարիբուրզի կողմից:

Ֆարիբուրզը, 1078–1079 թթ. ներկայանալով Մելիք-շահին ու իր հպատակությունը հայտնելով, պահանջված 70 հազար դինարի փոխարեն ստանձնել էր վճարել 40 հազար դինար[56]:

Շիրվանշահ Ֆարիբուրզի կառավարման ժամանակաշրջանը հարուստ էր բուռն իրադարձություններով: Փոփոխակի հաջողություններով նա կարողացավ դիմագրավել առավել հզոր սելջուկյան արշավանքներին, պահպանել իր իշխանությունը և անգամ փորձեց հարևանների հաշվին ընդլայնել իր իշխանության սահմանները:

Ֆարիբուրզի գահակալման ժամանակաշրջանի քաղաքական վայրիվերումների մասին են վկայում նաև իր հատած դրամները, որոնք միատեսակ չեն և բաժանվում են մի քանի խմբի:

Առանձին խումբ են կազմում Շիրվանում հայտնաբերված այն դրամները, որոնք հատվել են՝ ունենալով մեկ կողմում խալիֆա ալ-Կայիմի (1031–1075 թթ.), իսկ հակառակ կողմում Ֆարիբուրզի անունը՝ «Ալ-մալիք, ալ-ադիլ Աբու-շուջա Ֆարիբուրզ, իբն Սալար, շիրվանշահ»:

Արծաթյա երկու այլ դրամների վրա փորագրված է մահմեդական հավատի նշանը, Աբբասյան խալիֆա ալ-Մուկտադի (1075–1094 թթ.) և սելջուկյան սուլթան Մելիք-շահի (1072–1092 թթ.) անունները, իսկ հակառակ կողմում՝ Ֆարիբուրզի անունը: Ըստ այդ անունների՝ դրամը հատվել է 1075–1092 թթ., իսկ Ֆարիբուրզի տոհմանունի բացակայությունը վկայություն է նրա վասալական կախման մասին:

Երրորդ տեսակ են կազմում այն դրամները, որոնց մեկ կողմի վրա փորագրված է մահմեդականության խորհրդանիշը՝ աբբասյան խալիֆա ալ-Մուսթազհիր-բիլլահ (1094–1118 թթ.), իսկ մյուս կողմին՝ ալ-մալիք Ֆարիբուրզ մակագրությունները: Սուլթանի անվան բացակայությունը վկայություն է, որ Մելիք-շահի մահից հետո Ֆարիբուրզը դադարեցրել է իր վասալական կախման ճանաչումը սելջուկներից և իր անվանը կցել է «ալ-մալիք» (թագավոր) տիտղոսը: Պախոմովի հիմնավորմամբ՝ Ֆարիբուրզի մահվան թվական պետք է համարել 1096 թ.:

3. ՇԻՐՎԱՆԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԵՏ

Ֆարիբուրզն ուներ երկու որդի՝ Մանուչիհր և Աֆրիդուն: Ֆարիբուրզի մահից հետո շիրվանշահերի գահին տիրանում է նրա որդին՝ Մանուչիհրը (1096–1105 թթ.), որին հաջորդել է վերջինիս եղբայր Աֆրիդուն Ա-ն (1105–1120 թթ.): Վրաստանի անվտանգությունը ապահովագրելու և Շիրվանի հետ դաշնակցելու նպատակով Դավիթ Շինարարն իր առաջնեկ դստերը՝ Թամարին, 1105/1106 թ. ամուսնացրել էր Աֆրիդունի որդու՝ Մանուչիհրի հետ, սակայն Աֆրիդունը շարունակել է հարել սելջուկյան իշխանություններին, որոնց դեմ պայքարի մեջ էր Դավիթ Շինարարը: Վրաց բանակը, որը գլխավորում էր արքայազն Դեմետրեն, 1117 թ. Գիշը և Քալաձոր քաղաքը գրավելուց և Գրիգորի որդիներին գերելուց հետո արշավում և 1120 թ. փետրվարի

[56] Մոտ 1080 թ. Սպահանում Մելիք-շահին այցելել և իր հպատակությունն է հայտնել նաև վրաց Գիորգի Բ թագավորը: Սուլթանին իր հնազանդությունն էր հայտնել Կախեթի թագավոր Աղսարթանը:

14–ին Շիրվանից գրավում է Կապաղակն ու այնուհետև՝ 1120 թ. մայիսին, կրկին արշավում և կողոպտում նաև Շիրվանի այլ գավառներ (Լայզան, Քուրդևան, Խիշտալան): Դավիթ Շինարարի կողմից Շիրվան կատարած արշավանքի ժամանակ Շիրվան են ներխուժել նաև «դերբենդցիները», որոնց հետ ընդհարումների ժամանակ՝ 1120 թ. նոյեմբերին, շիրվանշահ Աֆրիդունը սպանվել է: Շիրվանշահ է հռչակվել նրա որդին՝ Մանուչիհրը:

1121 թ. օգոստոսի 12–ին՝ Դիդգորի ճակատամարտում սելջուկների միացյալ բանակի դեմ Դավիթ Շինարարի տարած նշանավոր հաղթանակից և այնուհետև 1122 թ. Թբիլիսիի ազատագրումից ու 1123 թ. մարտին Դմանիսի գրավելուց հետո, Մանուչիհրը հարում է Վրաստանին և սելջուկների դեմ պայքարում հանդես գալիս որպես Վրաստանի դաշնակից: Ըստ արաբ պատմիչ Իբն ալ–Ասիրի (1160–1234 թթ.)՝ «վրաց չարագործությունները իսլամի երկրում» և հատկապես Դերբենդ–Շիրվանի բնակչության դրության վատացումը դժգոհություն էին հարուցել, որոնք և օգնության խնդրանքով դիմել էին սուլթանին: Այդ է պատճառը, որ սուլթան Մահմուդը (1118–1131 թթ.), որը 1123 թ. արշավանքի էր ելել Վրաստանի դեմ, առաջին հերթին ներխուժեց Շիրվան և գրավեց այն[57]: Վրացական բանակը, ըստ Իբն ալ–Ասիրի, վրացի և ղփչաղ զորամասերի գժտության պատճառով Շիրվանից հեռանում և վերադառնում է Վրաստան, ինչին որոշ ժամանակ անց հետևում է նաև սուլթան Մահմուդի վերադարձը Համադան: Սուլթանի հեռանալուց հետո Դավիթ Շինարարը նույն թվականի հունիսին կրկին արշավում է Շիրվան և գրավում այն, իսկ 1124 թ. ապրիլին սկսված արշավանքի ընթացքում գրավում նաև Շաբուրանը, նվաճումներն ընդարձակում դեպի Դերբենդ[58]: 1124 թ. օգոստոսին վրացական բանակը Թռեղքի, Բասենի և Անիի գրավումից հետո կրկին արշավել է Շիրվան և գրավել «ողջ Շիրվանը»: Շիրվանի քաղաքներում Դավիթ Շինարարը կարգել է կառավարիչներ, տեղակայել կայազորներ ու ընդհանուր վերահսկիչ նշանակելով Սիմոն վրաց դիվանապետին՝ վերադարձել է Վրաստան:

Վրացական տիրապետությունը Շիրվանում, հավանաբար թեև վերջնականապես չի դադարեցրել շիրվանշահերի դինաստիայի գահակալումը, սակայն մոտ 7 տարի ընդմիջվել է վրացական կառավարմամբ: Ուղղակի վկայություն չկա սուլթանի կողմից գերեվարված շիրվանշահի ճակատագրի վերաբերյալ: Մանուչիհրի պալատական բանաստեղծներ Խաքանիի և Ֆալաքի կողմից իրենց տիրակալին նվիրված գովերգումները, սակայն, վկայում են, թե նա ոչ միայն շարունակել է մնալ Շիրվանում և վերականգնել է շիրվանշահերի տիրապետությունը, այլև Շիրվանը նրա կառավարման շրջանում, այնուամենայնիվ, ապրել է որոշակի առաջընթաց:

[57] Այլ վկայության համաձայն՝ արշավանքը պայմանավորված էր Շիրվանի կողմից սելջուկներին տարեկան 40 հազար դինարի չափով սահմանված հարկի վճարումը դադարեցնելու հանգամանքով:

[58] Վրաց թագավորների տիտղոսաշարում այդ ժամանակներից սկսում է ամրապնդվել նաև «Շիրվանի տիրակալ» կամ «շիրվանշահ» ձևակերպումը, որի հավակնությունը ավանդույթի ուժով շարունակում է պահպանվել ընդհուպ մինչև XVIII դարը:

Մանուչիհրը իշխել է 30 տարի և մահացել 1160 թ.: Մանուչիհրի մահից հետո նրա կինը՝ Թամարը, վերադարձել է Վրաստան և մտել Տիկղվի վանք: Հոր մահից հետո Շիրվանում կարճ ժամանակ իշխել է Աֆրիդուն իբն Մանուչիհրը, որին հաջորդել է նրա եղբայրը՝ Ախսիտան Ա իբն Մանուչիհրը: Վերջինիս անունով հատված դրամների թվագրումով պարզվում են նրա գահակալման թվականները՝ 1160–1196 թթ.: Ախսիտանի կինը՝ Իսմատ աղ–Դինը, վրաց Գիորգի Գ թագավորի քրոջ դուստրն էր: Ենթադրվում է, որ Վրաստանում թագավորի դեմ խռովությունը ճնշելու նպատակով Ախսիտանը ժամանել է Վրաստան, իսկ վերադարձից հետո՝ գրավել Շաքին:

Ամուսնանալով Դերբենդի տիրակալ վրաց Դեմետրե Ա թագավորի (1125–1156 թթ.) փեսա Աբուլ–Մուզաֆֆար Սեյֆ աղ–Դինի դստեր հետ՝ Ախսիտանը փորձում է ձեռք բերել նաև Դերբենդը: Ըստ Քարթլիս ցխովրեբայի, երբ Դերբենդի խազարները նեղում են Ախսիտանին, օգնության համար նա դիմում է վրաց թագավորին: Վրաց թագավորը, զորք հավաքելով և իր հետ վերցնելով նաև այդ ժամանակ Վրաստանում գտնվող բյուզանդական կայսեր եղբորը՝ Անդրոնիկոսին, հասավ մինչև Դերբենդ, ավերեց Մուշկուրը և գրավեց Շաբարանը: Գիորգին քաղաքը հանձնեց իր խորթ եղբորը՝ շիրվանշահ Ախսիտանին, կնքեց դաշնագիր և վերադարձավ:

Սելջուկյան սուլթան Կըզըլ Արսլանի մահից հետո, որը սպանվեց իսմայիլիտների կողմից 1191 թ., գժտություններ սկսվեցին նրա ժառանգորդների միջև: Իշխանությունը բաշխվեց հետևյալ կերպ. Աբու Բաքրը դարձավ Ատրպատականի ու Առանի կառավարիչ: Ուզբեկը տիրում էր Համադանում: Ռեյ Իսպահանը և Իրաքը անցան Կուտլուղ–Ինանջ Մահմուդին և Ամիր Ամիրան Ումարին: Վերջիններս հանդես եկան Նախիջևանում գտնվող Աբու Բաքրի դեմ, սակայն պարտվեցին: Ումարը փախավ Շիրվան: Այստեղ նրան դիմավորեց շիրվանշահը, պատիվների արժանացրեց նրան, ամուսնացրեց իր դստեր հետ, և միասին արշավեցին Աբու Բաքրի դեմ: Արշավանքը անհաջող էր, նրանք պարտություն կրեցին Բայլականի մոտ, և Աբու Բաքրը նրանց հեռացրեց Առանից:

1192 թ. շիրվանշահի ընտանիքը, այդ թվում և նրա ժառանգորդ Մանուչիհրը, զոհվեցին Շամախիում տեղի ունեցած երկրաշարժի ժամանակ, երբ ինքն այդ ժամանակ Բայլականում էր:

Աբու Բաքրից կրած պարտությունից ու Շամախիի երկրաշարժից հետո Ախսիտանն ու Ամիր Ամիրան Ումարը ժամանեցին Թիֆլիս՝ օգնություն խնդրելու Թամար թագուհուց: Թամարը հրամայեց զորք հավաքագրել, և 1195 թ. Շամքորի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Աբու Բաքրի բանակը պարտություն կրեց, իսկ ինքը փախավ Բայլական: Շամքորը հանձնվեց: Ախսիտանը վերադարձավ Շիրվան, իսկ Ումարը մահացավ Գանձակ մտնելուց քիչ անց:

Շիրվանի պատմության մեջ Ախսիտանի կառավարման ժամանակաշրջանը համարվում է համեմատաբար խաղաղության և տնտեսական վերելքի շրջան:

Ախսիտանը վարել է զգուշավոր քաղաքականություն: Նա հարկ էր վճարում (խարաջ) և դրամ հատում սելջուկյան սուլթանների անունով: Միաժամանակ Ախսիտանը և նրա անմիջական հաջորդները լրջորեն ձեռնամուխ են լինում երկրի ամ-

բաղնդման գործին, կառուցում նոր ամրոցներ Շիրվանում և Ապշերոնում, կառուցապատում Շամախիի և Բաքվի ամրոցները, որոնց մնացորդները պահպանվել են մինչև մեր օրերը: Շիրվանշահերի աթոռանիստի՝ Բաքու փոխադրումը հավանաբար պայմանավորված էր երկրաշարժի հանգամանքով:

Ախսիտանի և նրա հոր՝ Մանուչիհր Գ–ի արքունիքում էին գործում կամ նրանց հովանավորությունը վայելում Խաքանին ու Նիզամին: Հայտնի է, որ 1188 թ. Նիզամին «Լեյլի և Մեջնուն» պոեմը գրել է Ախսիտանի պատվերով: Շիրվանշահերի արաբական հարստությունը Մանուչիհրի և Ախսիտանի ժամանակաշրջանում ևս մեծ չափով ենթարկվում է իրանական մշակութային ազդեցությանը:

Ախսիտանի մահից հետո Շիրվանում սկսեցին կառավարել նրա եղբայրները: Շիրվանշահ հռչակված Շահնշահ Ա–ն իշխեց մոտ չորս տարի: Այնուհետև մինչև 1204 թ. գահակալական կռիվների արդյունքում շիրվանշահ հռչակվեցին մի շարք այլ հավակնորդներ: Մասնավորապես նշելի է Մանուչիհր Գ–ի որդին՝ Ֆարրուխզադը, որի կարճատև գահակալումից հետո գահն անցնում է նրա որդուն: 1204 թ. շիրվանշահ է հռչակվում Ֆարրուխզադի որդին՝ Գերշասպ Ա–ն:

Գերշասպ Ա–ի դրամները կրում են նաև ան–Նասիր խալիֆայի անունը (1180–1225 թթ.): Գերշասպի կառավարման շրջանում ավելի են հաճախանում վրացական պետության հարձակումները Շիրվանի վրա, որի հետևանքով շիրվանշահերի կառավարման կենտրոնը ամբողջապես փոխադրվում է Բաքու: 1221 թ. Շիրվան է ներխուժում մոնղոլական բանակը Ջեբե նոյոնի ու Սուբաթայ Բահադուրի հրամանատարությամբ և, շարժվելով դեպի արևմուտք ու Շամքորի մոտ պարտության մատնելով հայ–վրացական բանակին, ետ է շրջվում և գրավում նաև Շամախին: Կողոպտելով Շամախին, իսկ այնուհետև հասնելով մինչև Բաքու՝ մոնղոլները շարժվեցին դեպի Դերբենդ, սակայն չկարողանալով գրավել քաղաքը՝ դժվարանցանելի կիրճերով կարողացան անցնել լեռնաշղթան և, 1222 թ. հաղթահարելով նաև ալանների ու ղփչաղների դիմադրությունը, հեռացան:

Գիորգի–Լաշայի ժամանակակից տարեգրի հաղորդմամբ՝ վրաց թագավոր Գիորգի–Լաշան 1222 թ. սկզբին ժամանում է Բաքու՝ Ռուսուդանին շիրվանշահի հետ ամուսնացնելու մտադրությամբ: Տասն օր անց, սակայն, հիվանդանալով այնտեղ, վրաց քրոնիկոնի 442 թ. (1222 թ.) հունվարի 18–ին կնքում է իր մահկանացուն: Պատվիրակությունը վերադառնում է Վրաստան, որտեղ Գիորգի–Լաշայի քույրը՝ Ռուսուդանը, հռչակվում է թագավոր:

Մոնղոլների հեռանալուց հետո ղփչաղները արշավում և գրավում են Դերբենդը: Ղփչաղները հասնում են Կապաղակ, որն այդ ժամանակ գտնվում էր վրաց տիրապետության ներքո, և պաշարում այն: Այդ ընթացքում Դերբենդի կառավարիչ Ռաշիդը կրկին վերադառնում է Դերբենդ և գրավում այն: Ղփչաղների զորքը պարտություն է կրում, գերեվարվում և վաճառվում որպես ստրուկ:

1225 թ. իր որդու՝ Ֆարիբուրզի ապստամբության հետևանքով գահընկեց է լինում նաև Գերշասպը, և նրա կառավարման վերջին տարում (1225 թ.) դրամ է հատում արդեն գահակալած նրա որդին՝ Ֆարիբուրզ Գ–ն: Գերշասպը Վրաստանից ստացված օժանդակությամբ փորձեց ետ խլել իշխանությունը որդուց, սակայն պարտվեց: Ֆարիբուրզ Գ իբն Գերշասպն ամրապնդեց իր իշխանությունը Շիրվանում:

1225 թ. Այսրկովկաս արշավեց խորեզմշահ Ջալալ ադ–Դինը: Ֆարիբուրզը դաշնակցեց Ջալալ ադ–Դինի հետ՝ տարեկան հիսուն հազար դինար վճարելու պայմանով, և Շիրվանը զերծ մնաց հարձակման ենթարկվելու վտանգից: Ջալալ ադ–Դինը գրավեց վրաց գերիշխանության ներքո գտնվող Շաքին ու Կապաղակը, որտեղ նշանակվեցին նոր կառավարիչներ: Մուղանն ու Բայլականը հանձնվեցին Ջալալ ադ–Դինի վեզիր Շարաֆ ալ–Մուլքին՝ որպես իքթա: 1226 թ. մարտի 9–ին՝ Թիֆլիս կատարած արշավանքի ժամանակ Ջալալ ադ–Դինը գերությունից ազատեց Ֆարիբուրզի եղբորը՝ Ջալալ ադ–Դին Սուլթան–շահին, և Գուշթասպի գավառը հանձնեց նրան որպես իքթա: Ֆարիբուրզ Գ–ն շտապեց մեծ նվերներով ներկայանալ Ջալալ ադ–Դին խորեզմշահին և կարողացավ ստանալ նրա բարեհաճությունն ու պահպանել իր գահը:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XIII–XV ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՄՈՆԳՈԼԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

1231/1232 թ. սկսած՝ Այսրկովկասը կրկին ենթարկվեց մոնղոլների ավերիչ արշավանքներին: Ավերված քաղաքները երկար ժամանակ կորցրին իրենց նախկին նշանակությունը: Մոնղոլական տիրապետությունը վերջ դրեց նաև շիրվանշահերի անկախությանը:

Ֆարիբուրզ Գ–ից հետո շիրվանշահերի գահին բազմեց Ախսիտան Բ–ն (1243/4–1260 թթ.), որի կառավարման տարիները անցան բուռն իրադարձությունների բովում: Որպես Շիրվանի ներկայացուցիչ՝ 1245 թ. նա ևս հրավիրված էր մասնակցելու մոնղոլ Գույուկ խանի թագադրության հանդիսություններին: Գահակալումից հետո վերահաստատելով նախկին տիրակալների իրավասությունները՝ Շիրվանի, ինչպես նաև Վրաստանի, Հայաստանի, Ատրպատականի, Իրաքի, Քերմանի, Խորասանի ու Հնդկաստանի կառավարումը Գույուկ խանը հանձնեց Արղունին:

Մինչև Մերձավոր Արևելքում ու Պարսկաստանում Հուլավույանների կամ իլխանների դինաստիայի հաստատումը Այսրկովկասը Ոսկե Հորդայի գերակայության ներքո էր: Հուլավու խանի (1256–1265 թթ.) ժամանումից հետո, ի թիվս տարածաշրջանի այլ տիրակալների, նրան ներկայացավ ու իր հպատակությունը հայտնեց նաև Շիրվանի տիրակալը:

Հուլավուն 1258 թ. փետրվարի 21–ին կարողացավ գրավել Բաղդադը և վերացնել Արաբական խալիֆայությունը: Աբբասյան վերջին խալիֆա ալ–Մուստասիմը ենթարկվեց մահապատժի:

Իլխանները հրաժարվեցին Ջուչիների (Ոսկե Հորդայի) գերիշխանությունը ճանաչելուց, ինչը հանգեցրեց նրանց միջև ռազմական բախումների: 1260–1262 թթ. Ջուչիների բանակը արշավելով հասավ մինչև Շամախի, սակայն պարտություն կրեց իլխանների բանակից: Վերջիններս գրավեցին նաև Դերբենդը և շարժվեցին հյուսիս: Թերեքի ափին, սակայն, պարտություն կրելով՝ իլխանները նահանջեցին ու կորցրին նաև Դերբենդն ու Շիրվանը:

1265 թ. Բերքեն, օգտվելով Հուլավու խանի մահվան առիթից (1265 թ. փետրվար), արշավեց Շիրվան, հասավ մինչև Կուր գետ: Ոսկե Հորդայի զորամասերը կողոպտեցին Շիրվանը, գրավեցին Տփղիսը:

Կուրից հարավ՝ Առանում (Հայկական Աղվանք՝ Արցախ և Ուտիք), իլխանական կառավարիչ էր նշանակված Մենգու Թեմուրը՝ Աբաղա խանի եղբայրը: Բերքե խանը կայանել էր Գարեջի լեռներում, որտեղից նա այլևս չհամարձակվեց շարժվել առաջ և վերադարձի ճանապարհին հիվանդությունից մահացավ:

Մոնղոլական այդ երկու պետական կազմավորումների միջև պայքարը շարունակվեց մոտ հարյուր տարի, որի ընթացքում նրանց միջև սահմանն անցնում էր մերթ Դերբենդի և մերթ Բաքվի մոտով:

Շիրվանը գրավվեց իլխանների կողմից, և շիրվանշահերը, փաստորեն, կորցրին իրենց անկախությունը: Ախսիտան Բ–ը, ճանաչելով իլխանների գերիշխանությունը, փրկեց Շիրվանը ավերածություններից:

Շիրվանշահերը շարունակում են դրամի հատումը՝ առաջին տեղում դնելով մոնղոլական խանի անունը: Ախսիտանի 1255/1256 թ. հատած դրամը կրում էր Մանգու խանի անունը, իսկ Ախսիտանի անունը նշվում էր առանց որևէ տիտղոսի: Նրանք պարտավոր էին իրենց զորքով մասնակցել մոնղոլական արշավանքներին: Հուլավու խանի հրամանով 1260 թ. Ախսիտանը սպանվում է: Ախսիտան Բ–ին հաջորդում է Ֆարրուխզադ Բ–ն:

Հուլավյան Աբաղա խանի գահակալության տարիներին (1265–1282 թթ.) ևս Ոսկե Հորդայի խաները հյուսիսից արշավում էին դեպի Շիրվան, ուստի Աբաղա խանի հրամանով Դառնոյ/Դասնո դաշտում սկսում են կառուցվել սահմանային բնակավայրեր ու ամրություններ՝ հարձակումներին դիմակայելու համար: Գահակալումից հետո Աբաղա խանը Դերբենդի, Շիրվանի ու Մուղանի վերահսկողությունը հանձնարարում է իր եղբորը՝ Յուշումուտին:

Ֆարրուխզադ Բ–ին հաջորդել է նրա որդին՝ Ախսիտան Գ–ն, որն իր նստավայրը փոխադրել էր Գուշտասպի գավառ, ինչը ենթադրել է տալիս նրա իրավասությունների կրճատման և շիրվանշահերի տարածքային կորուստների մասին: Ախսիտան Գ–ն իշխել է 1283–1294 թթ.՝ նույն ժամանակաշրջանում, երբ հուլավույանների իշխանության գլուխ էր Աբաղա խանի որդին՝ Արղունը (1284–1291 թթ.): Տեղեկանալով Ջուչիների հինգհազարանոց հեծյալ զորքով հյուսիսից Դերբենդ ներխուժման մասին՝ 1288 թ. Արղունը ժամանում է Շամախի, այնտեղից զորք ուղարկում թշնամուն դիմակայելու և վերագրավում է Դերբենդը: Ոսկե Հորդայից կատարվող արշավանքների ժամանակ նման ընդհարումներ տեղի ունեցան նաև 1290 թ., որոնք կրկին ավարտվեցին Շաբարանից Արղունի ուղարկած զորքի հաղթանակով:

Ախսիտան Գ–ին հաջորդել է նրա որդին՝ Քեյքավուս Ա–ն (1294–1317 թթ.): Վերջինիս կառավարման ժամանակ հուլավույանների մոնղոլական իշխանության առաջնորդներն էին Արղունի որդին՝ Քեյխաթու խանը (1291–1295 թթ.), և Ղազան խանը (1295–1304 թթ.): Հարկապահանջությունն ու հաճախացած պատժիչ արշավանքները ծանր իրավիճակ էին ստեղծել տարածաշրջանում, ավերվել էր տնտեսությունը, սկսվել էր սով: Հայաստանի Արցախ և Ուտիք (Առան) նահանգները որպես ձմեռոց ընտրելու և այնտեղ մոնղոլ խաների երկարատև կայանելու հանգամանքը նպաստում էր հարակից Շիրվանի նկատմամբ ևս մոնղոլական վերահսկողության

մեծացմանը: Միաժամանակ Արևելյան Այսրկովկասը հաճախակի ընդգրկվում էր նաև մոնղոլական գահակալական զինված բախումների կիզակետում, ինչն ավերիչ հետևանքներ էր ունենում տեղի բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Մասնավորապես նման իրադարձությունների արդյունքում 1295 թ. մոնղոլական իլխանական գահն անցավ Ղազան խանին:

Ըստ Ռաշիդ ադ-Դինի՝ 1297 թ. Ղազան խանը որոշում է ձմեռել Առանում, սակայն լսելով Վրաստանում դժվարությունների մասին, որտեղ չէին ճանաչում նրա իշխանությունը, անհնազանդությունները ճնշելու նպատակով ճանապարհին Խուտլուղշահ նոյոնին մեծ զորքով ուղարկում է Վրաստան, իսկ ինքը՝ ճանապարհվում դեպի Բաքու՝ այնտեղ ևս մոնղոլական տիրապետությունը վերահաստատելու նպատակով:

ԺԴ դարի սկզբին Ղազան խանը փորձում է նոր արշավանքով ամրապնդել մոնղոլական տիրապետությունը Շիրվանում և Դերբենդում: 1301 թ. մոնղոլական զորքերի հավաքատեղի նշանակելով Արցախը՝ այնտեղից շարժվում է դեպի Շիրվան ու Լեզգիստան: Ղազան խանի զորքերի՝ Դերբենդին մոտենալուց հետո Ուլուսի տիրակալ Թողթան և սահմանակից կառավարիչները հեռանում են սահմանամերձ տարածքներից: Դաղստանյան ամիրաները, որոնք դեռևս պահպանում էին իրենց անկախությունը, ստիպված են լինում իրենց հպատակությունը հայտնել մոնղոլ խանին:

Իլխանության լծի ներքո գտնվող երկրամասերից առավել ավերածությունների ենթարկվածների թվում Ռաշիդ ադ-Դինը հիշատակում է նաև Դերբենդից Շիրվան միջակայքը: Տնտեսական ծանր վիճակը մասամբ թեթևացնելու և ընդվզումները նվազեցնելու նպատակով իլխանները երբեմն բնակչությանը հրովարտակներով ազատում էին որոշ հարկատեսակներից: Բաքվի Ջումա մզկիթի մինարեթի վրա արձանագրված է մոնղոլական Օլջեյթու Խուդաբանդե Մուհամմեդ խանի (1304–1316 թթ.) հրովարտակը, որով վերացվում էին Բաքվում և մարզում գանձվող մի շարք հարկեր:

Քեյքավուս Ա-ին հաջորդել է Քեյքուբադ Ա-ն: Ենթադրվում է, որ նա սկսել է կառավարել 1317–1318 թվականից: XIV դարի առաջին տասնամյակներին ևս Շիրվանի քաղաքական կյանքը խիստ անհանգիստ էր: Օլջեյթուին հաջորդած նրա որդու՝ Մուհամմեդ Աբու Սայիդի (1316–1335 թթ.), իսկ այնուհետև վերջինիս հաջորդ Արփա-խանի (1335–1336 թթ.) իշխանության տարիներին Շիրվանի տարածքում շարունակվել են Ոսկե Հորդայի և իլխանների միջև ռազմական ընդհարումները: Արփա-խանի մահից հետո իլխանության տրոհումը մի շարք իշխանությունների ավելի է սաստկացրել միջավատատիրական բախումների հաճախականությունն ու գահակալական կռիվները: Պայքարի թատերաբեմը հաճախ ներառում էր նաև Շիրվանը, սակայն շիրվանշահերը, խուսանավելով հակամարտող ուժերի միջև, կարողանում էին աստիճանաբար ազատագրվել երկարատև ենթակայությունից ու իլխանների նկատմամբ իրենց հպատակությունը դարձնել անվանական: Այսպես՝ 1335/36 թ. թեև վերսկսվում է դրամի հատումը Շիրվանում, սակայն Արփա-խանի

անունով հատված ոսկեդրամի վրա բացակայում է շիրվանշահի անունը: Գրավոր այլ սկզբնաղբյուրներում առկա տվյալները սակավ տեղեկություններ են պարունակում Շիրվանի իշխանական տոհմացանկի վերաբերյալ: Հայտնի է, սակայն, որ Քեյքուբադին հաջորդել է նրա որդին՝ Քավուսը: Մինչև 1348 թ. նրանց հաջողվել է պահպանել իրենց ինքնուրույնությունը:

Քեյքուբադը փորձել է ստանալ 1344/45 թվականին Արցախ-Ուտիքում կայանած մոնղոլական Չորանյանների տոհմի ներկայացուցիչ Աշրաֆի բարեհաճությունն ու օժանդակությունը: Այդ նպատակով Արցախ է ժամանել Քեյքուբադի որդին՝ Քավուսը, և արժանացել ճոխ ընդունելության: Աշրաֆի հրամանով, սակայն, Քավուսի ներկայությամբ ավատատերերից մեկի որդու մահապատժի իրականացումը խորապես ցնցելով Քավուսին, նա նույն օրն իսկ փախուստով հեռացել է Արցախից և վերադարձել Շիրվան: Մելիք Աշրաֆը փորձ է կատարել վերականգնելու շիրվանշահերի հետ փոխվստահությունը և այդ նպատակով նվերներով այնտեղ է ուղարկել իր դեսպաններին՝ առաջարկելով կնության առնել Քեյքուբադի դստերը: Քավուսը, սիրալիր ընդունելով դեսպաններին, միաժամանակ հրաժարվել է քրոջը կնության ուղարկելու առաջարկից, ինչը առիթ է դարձել Աշրաֆի կողմից Շիրվան արշավելու որոշման համար: Սակայն Թավրիզում ծավալված դեպքերի պատճառով Աշրաֆը հետաձգել է որոշման իրականացումը, իսկ այնուհետև՝ 1347/8 թ., զորք ուղարկել Շիրվան: Քավուսն ու Քեյքուբադը, խույս տալով դիմադրելուց, թաքնվել են բերդերից մեկում, իսկ Աշրաֆի զորքերը կողոպուտի են ենթարկել Շիրվանը և վերադարձել:

1356/57 թ. Քավուսը դեսպաններ է ուղարկել Ոսկե Հորդայի խանի՝ Ջանիբեկի մոտ՝ առաջարկելով Աշրաֆի դեմ ձեռնարկել համատեղ գործողություններ: Օգտվելով առիթից՝ Ջանիբեկը զորքով շարժվել է Դերբենդ և Շիրվան, որտեղից համատեղ նրանք արշավել են դեպի Թավրիզ, պարտության մատնել Աշրաֆին ու գրավել Թավրիզը: Աշրաֆը գերի է ընկել և Քավուսի պահանջով մահապատժի ենթարկվել:

Քավուսը և նրա որդին՝ Նոդարը, այնուհետև դաշնակցելով Առան-Արցախի տոհմիկ տիրակալների հետ, պայքարը շարունակում են Աշրաֆի կողմից նշանակված կառավարիչների դեմ, Մուղանում պարտության են մատնում նրանց զորքին ու ժամանում Արցախ: Արցախում, սակայն, Քավուսը հաշտություն է կնքում աշրաֆյանների ներկայացուցիչ Ախիջուկի հետ և կրկին վերադառնում Շիրվան:

Մոնղոլական քոչվոր էմիրների միջև պայքարում XIV դարի երկրորդ կեսին գերակայությունն անցնում է Ջելայիրյաններին: Սուլթան է հռչակվում արաբական Իրաքի կառավարիչ Ուվեյսը (1356–1374 թթ.): Նա փորձում է իր իշխանությունը հաստատել նաև Շիրվանում: Շիրվանում Ուվեյսի անունով հատված դրամների վրա Քավուսի անվան բացակայությունը հիմք է տալիս ենթադրելու, որ Քավուսը ճանաչել է Ուվեյսի լիակատար գերակայությունը: Բաղդադում սկսված ապստամբությունները ճնշելու նպատակով Ուվեյսի հեռանալուց հետո, սակայն, Քավուսը դադարում է ճանաչել նրա իշխանությունը և երկիցս արշավում է Արցախ, կողոպտում երկիրն ու հայազգի բնակչության մի մասին անգամ զանգվածաբար փոխադրում Շիրվան: Այդ իրադարձություններին ի պատասխան՝ Ուվեյսը, 1367–1368 թթ. վերադառնալով

Բաղդադից, խոշոր բանակ է ուղարկում Շիրվան: Խույս տալով ճակատամարտից՝ Քավուսը ապաստանում է ամրոցներից մեկում, սակայն ի վերջո ստիպված է լինում հանձնվել: Ուվեյսը Քավուսին երեք ամիս շղթայակապ բանտարկված պահելուց հետո հպատակությունն ընդունելու և հարկ վճարելու պայմանով կրկին ուղարկում է Շիրվան: Սուլթան Ուվեյսին հպատակություն էին հայտնել էին նաև Բաքվի կառավարիչները:

Քավուսը մահացել է 1372/3 թ.: Նրան հաջորդել է որդին՝ Հուշենգը, որը մինչ այդ որպես պատանդ գտնվում էր Ուվեյսի մոտ:

1374 թ.՝ Ուվեյսի մահից հետո, նրա որդիների միջև գահակալական կռիվները նոր իրադրություն են ստեղծում տարածաշրջանում:

Ջելայիրյան պետությունը կառավարում էր Ուվեյսի որդին՝ սուլթան Հուսեինը (1374–1382 թթ.), որը գահին հաստատվելու համար սպանել էր տվել իր եղբորը՝ շեյխ Հասանին: 1382/3 թ. Ուվեյսի մյուս որդին՝ Ահմադը, հանդես է գալիս իր Հուսեին եղբոր դեմ, Թավրիզում սպանում է նրան և գրավում գահը: Օգտվելով այդ խառնակություններից՝ Հուշենգը ամրապնդում է իր դիրքերը Շիրվանում և անգամ միջնորդի դեր ստանձնում Ջելայիրյան տոհմի հակամարտ ուժերի միջև: Հուշենգը, սակայն, սպանվում է Շիրվանում 1382 թ. ծագած ապստամբության ժամանակ, որից հետո իշխանության են գալիս շիրվանշահերի Դերբենդի կողմնային ճյուղի ներկայացուցիչները:

Իշխանափոխության վերաբերյալ հաղորդումների բոլոր պատումներում միանշանակ ընդգծվում է տոհմի ժառանգական շարունակականությունը: Հուշենգից հետո գահակալում է հայրական գծով նրա ազգական Իբրահիմ Ա–ն, որը մինչ այդ Քավուսի ու Հուշենգի հետապնդումներից խույս տալու համար հոր հետ բնակվում էր Շաքիի գյուղերից մեկում:

2. ԼԵՆԿ ԹԵՄՈՒՐԻ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ

Իբրահիմ Ա–ի գահակալումը ժամանակագրական առումով համընկավ տարածաշրջանում Լենկ Թեմուրի ավերիչ արշավանքների ժամանակաշրջանի հետ: Այնտեղ դեռևս շարունակվում էր Ջելայիրյան սուլթան Ահմեդի իշխանությունը, միաժամանակ մեծ էր սպառնալիքը նաև հյուսիսից՝ Ոսկե Հորդայի խան Թոխթամիշի կողմից, որը 1385 թ. գրավել էր Թավրիզը, իսկ Ջելայիրյանները Ատրպատականից հեռացել էին Բաղդադ: Լենկ Թեմուրի արշավանքի ժամանակ Իբրահիմ Ա–ն նախընտրեց հնազանդություն հայտնել Թեմուրին և մնաց որպես Շիրվանի կառավարիչ: Իբրահիմ Ա–ն կառավարիչ մնաց այն ժամանակ ևս, երբ տարածաշրջանի համար գերագույն կառավարիչ էր նշանակվել Լենկ Թեմուրի որդին՝ Միրանշահը: Դեպի Դերբենդ արշավանքի պատրաստվող Լենկ Թեմուրին Իբրահիմ Ա–ն ներկայացել էր դեռևս նրա Արցախում գտնվելու ժամանակ՝ 1386 թ.: Մինչ այդ արդեն Իբրահիմ Ա–ն կարգադրել էր խուտբան կարդալ Լենկ Թեմուրի անվան հիշատակումով և դրամը ևս հատել նրա անունով: Թանկարժեք նվերներով ներկայանալով Թեմուրի ճամբար՝ Իբրահիմ Ա–ն նվերներից յուրաքանչյուրից ներկայացրել էր ինը հատ, ինչպես ընդունված էր մոնղոլական ավանդույթով, իսկ ստրուկներ ներկայացրել էր ութ հատ՝ հայտարարելով, թե «իններորդը այդ ես եմ»: Լենկ Թեմուրը նվերներով և հրովարտակով վերադարձրել է Իբրահիմ Ա–ին Շիրվան: Շիրվանը այդպիսով փրկվում է Լենկ Թեմուրի ավերածություններից:

Թոխթամիշի դեմ պայքարում, որը 1385/6 թ. իննսուն հազարանոց բանակով արշավել ու ավերել էր Թավրիզը, Իբրահիմ Ա–ն պաշտպանել է Լենկ Թեմուրին: 1387 թ.՝ Թոխթամիշի հաջորդ արշավանքի ժամանակ, որի թիրախն այս անգամ հենց Շիրվանն էր և հասել էր մինչև Կուր գետ, Թեմուրը զորք է տրամադրել Իբրահիմ Ա–ին իր ամիրաների գլխավորությամբ: Միրանշահը ևս, արշավելով Թոխթամիշի դեմ, կարողանում է պարտության մատնել նրան և հեռացնել Շիրվանից: 1395 թ., երբ Լենկ Թեմուրը, Դերբենդից անցնելով, արշավում է Թոխթամիշի դեմ, իր զորքով ուղեկցում էր նաև Իբրահիմ Ա–ն: Լենկ Թեմուրին հաջողվում է կրկին պարտության մատնել Թոխթամիշին, որը փրկվում է միայն փախուստով, իսկ Թեմուրի զորքերը ավերում ու կողոպտում են նրա տիրույթները: Լենկ Թեմուրի զորքերը, սակայն, պարտություն են կրում Դաղստանի լեռնական ղայթաղների դեմ պայքարում և ստիպված են լինում Դերբենդը անցնելու համար խաղաղությամբ կարգավորել հարաբերությունները լեռնականների հետ: Լենկ Թեմուրի կողմից Դերբենդի պահպանությունը հանձնվում է Իբրահիմ Ա–ին, ինչը նշանակում է, թե այն մտնում էր Շիրվանի պետության կազմի մեջ[59]: Լենկ Թեմուրի հետ իրենց հարաբերությունները կարգավորելու համար Իբրահիմ Ա–ի միջնորդությանն էին դիմում նաև այլ կառավարիչներ: Մասնավորապես նման ճանապարհով Շաքիի կառավարիչ Սեյիդ Ահմեդը, որի հայրը վրացիների հետ դիմակայել էր Թեմուրին և զոհվել, կարողանում է ստանալ Թեմուրի ներողամտությունը և կրկին նշանակվել Շաքիի տիրակալ: Օսմանյան սուլթան Բայազետի դեմ պայքարի և 1402 թ. Վրաստան կատարած արշավանքների ժամանակ Իբրահիմ Ա–ն Շիրվանի զորքով մշտապես գտնվում էր Լենկ Թեմուրի բանակում:

3. ԹՈՒՐՔՄԵՆԱԿԱՆ ՑԵՂԱԽՄԲԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Լենկ Թեմուրի մահից (1405 թ.) հետո նրա ժառանգների միջև սկսված գահակալական պատերազմների ժամանակ իրավիճակը Շիրվանում արմատապես փոխվեց: Իբրահիմ Ա–ի և Լենկ Թեմուրի թոռան՝ Միրզա Ումարի միջև հարաբերությունները դարձան թշնամական: Իբրահիմ Ա–ն դադարեց ճանաչելուց իր կախվածությունը Թեմուրյաններից և փորձեց ընդարձակել իր տիրապետության սահմանները հարակից տարածքների հաշվին: Նա գրավեց Գանձակն ու Արցախի զգալի մասը: Իբրահիմ Ա–ի հետ դաշինքի գնացին վրաց թագավորն ու Շաքիի կառավարիչ Սեյիդ Ահմադը: Կարամանլու ցեղի առաջնորդ Յար Ահմադը, Ջագիրլու ցեղի առաջնորդ

[59] 1403 թ. Թումա Թավրիզեցի գրչի կողմից «ի յերկիրս Շրվանայ, ի գեղջս, որ յորջորջի վերաձայնելով Մատրասայ, ընդ հովանեաւ մօր լուսոյ սուրբ Աստուածածնիս» արտագրված Ավետարանի մեկնության ձեռագիրը 1404 թ. 500 դահեկանով Ստեփաննոս վարդապետը գնել է Թավրիզում՝ «ի քարոզութիւն ի մայրաքաղաքս ի Շամախի»:

Բեստամ Ջագիրը և Արդաբիլի կառավարիչը միացան Իբրահիմ Ա–ին, որ բանակ էր դրել Պարտավի մոտ: Միրզա Ումարը Իբրահիմ Ա–ից պահանջեց իրեն հանձնել Բեստամ Ջագիրին, սակայն մերժում ստացավ, ուստի խոշոր բանակով անցնելով Արաքսը՝ ուղևորվեց դեպի Պարտավ: Իբրահիմ Ա–ի բանակը պատրաստվեց ճակատամարտի: Միրզա Ումարը, սակայն, տեղեկանալով այդ ընթացքում Միրանշահի կողմից Սուլթանիեի գրավման մասին, հաշտություն կնքեց Իբրահիմ Ա–ի հետ և հեռացավ Արցախից: Թեմուրյանների և Ջելայիրյանների դեմ պայքարում հաջողությունն ուղեկցեց կարա կոյունլու ցեղախմբի առաջնորդ Կարա Յուսուֆին, որը 1410 թ. պարտության մատնեց Ջելայիրյան սուլթան Ահմադին Թավրիզի մոտ և հաստատեց իր իշխանությունը: Կարա կոյունլուների տիրապետությունն ընդգրկում էր Կուր գետից մինչև արաբական Իրաք՝ մայրաքաղաք ունենալով Թավրիզը:

1412 թ. Կարա Յուսուֆը հնազանդության առաջարկը մերժելու պատրվակով արշավում է Շիրվան: Շիրվանշահը օգնության էր կանչել Վրաստանի թագավորին ու Շաքիի տիրակալ Սեյիդ Ահմադին: Կարա Յուսուֆին հաջողվում է պարտության մատնել դաշնակիցներին, գերի վերցնել Իբրահիմ Ա–ին և նրա բոլոր մերձավորներին, վրաց թագավոր Կոստանդինին ու նրա ազնվականներին: Վրաց թագավորին ու գերիներին սպանելուց հետո Կարա Յուսուֆը փրկագնի դիմաց ազատում է Իբրահիմ Ա–ին և նրա արքունիքի անդամներին՝ իշխելու Շաքիից մինչ Դերբենդ տարածքում՝ հպատակության պայմանով: 1413 թ. Շիրվան վերադարձած Իբրահիմ Ա–ն մահացավ 1417 թ.:

Կարա կոյունլուներից Շիրվանի կախվածությունը ըստ էության անվանական էր, Շիրվանը շարունակում էր տնտեսապես զարգանալ, առաջադիմում էր մշակույթը: XV դարի առաջին քառորդից Շիրվանը կրկին բռնեց վերելքի ուղին:

Իբրահիմ Ա–ին հաջորդեց նրա որդին՝ Խալիլուլլահ Ա–ն (1417–1465 թթ.): Խալիլուլլահ Ա–ի գահակալումից շատ չանցած՝ Լենկ Թեմուրի որդու՝ Շահրուհի (1405–1447 թթ.) դեմ ճակատամարտի ժամանակ Կարա Յուսուֆի անակնկալ մահը 1420 թ. խուճապ առաջացրեց ողջ տարածաշրջանում և փոխեց ուժերի հարաբերակցությունը: Կարա Յուսուֆի որդի Իսքանդարը պատերազմի մեջ էր ակ կոյունլուների հետ, իսկ նրա եղբայր Ջահան–շահը ենթարկվեց Շահրուհին: Շահրուհը հաղթական մտավ Թավրիզ, ապա ձմեռելու եկավ Արցախ: Արցախում թանկարժեք նվերներով նրան ներկայացավ Խալիլուլլահ Ա–ն իր եղբոր՝ Մանուչիհրի հետ և հնազանդություն հայտնեց Շահրուհին: Վերջինս Մանուչիհրին ծառայության վերցրեց իր մոտ: Խալիլուլլահ Ա–ն սերտորեն դաշնակցում էր Շահրուհի հետ և նրա բանակում 1421 թ. մասնակցեց Ալաշկերտի մոտ կարա կոյունլու Իսքանդարի դեմ ճակատամարտին: Հաղթանակած Շահրուհը այնուհետև մշտապես աջակցում էր Խալիլուլլահ Ա–ին ինչպես գահակալական ներքաղաքական պայքարում, այնպես էլ Իսքանդարի վրեժխնդիր արշավանքներին դիմագրավելու գործում: Խալիլուլլահ Ա–ն կառուցապատում էր Բաքուն, որը դարձել էր շիրվանշահերի կենտրոնատեղին, այնտեղ կառուցեց շիրվանշահերի պալատը և այլ կառույցներ:

Շահրուհի՝ դեպի Հերաթ հեռանալուց հետո Իսքանդարը հիջրայի 831 թ. (1427/8 թ.) արշավեց Շիրվան, գրավեց և կողոպտեց Շամախին: Իսքանդարը դեպի Շիրվան իր արշավանքը կրկնել է նաև 1433/4 թ. և այս անգամ ավերածություններ սփռել ողջ Շիրվանում: Խալիլուլլահ Ա–ն օգնության խնդրանքով դիմել է Շահրուհին, որը և մեծ բանակով շարժվել է դեպի Թավրիզ ու պարտության մատնել Իսքանդարին: Վերջինս փախուստով ապաստանել է Նախիջևանի Երնջակ բերդում, որտեղ և սպանվել է իր որդու՝ Շահ–Կուբադի կողմից: Հաղթականորեն մտնելով Թավրիզ՝ Շահրուհն այնտեղ դիմավորել է իր հպատակությունն ընդունած Ջահան–շահին և, նրան հանձնելով կառավարումը, ինքը ձմեռելու համար ճանապարհվել է Արցախ: 1435 թ. այնտեղ նվերներով Շահրուհին են ներկայացել Խալիլուլլահ Ա–ն, Շաքիի և Մուղանի ամիրաները:

XV դ. երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասում և Իրանում աստիճանաբար իրենց հավակնություններն ու ներկայությունն են ցուցադրում շեյխ Սեֆիի ժառանգները: Շեյխ Սեֆիի թոռը՝ Ջունայդը, որ ամուսնացել էր ակ կոյունլու Ուզուն Հասանի քրոջ հետ և վայելում էր վերջինիս հովանավորությունը, Ջահան–շահի կողմից Թավրիզից հեռացվելուց հետո որոշեց գրավել Շիրվանը և տիրանալ շիրվանշահերի գահին: Մոտ տասը հազար հետևորդներով Ջունայդը չերքեզների դեմ կրոնական պատերազմի մեկնելու պատրվակով ներխուժեց Շիրվան, որտեղ նրան միացան տեղի շիաները: Խալիլուլլահ Ա–ն որոշեց դիմել Ջահան–շահի օգնությանը, և 1460 թ. նրանց միացյալ բանակը ջախջախիչ պարտության մատնեց Ջունայդի հետևորդներին Սամուր գետի ափին գտնվող Ղփչաղ գյուղի մոտ: Ջունայդը սպանվեց:

Խալիլուլլահ Ա–ի մահից հետո (1465 թ.) Շիրվանի գահին հաջորդել է նրա որդին՝ Ֆարրուխ Յասարը (1465–1500 թթ.): XV դարի երկրորդ կեսին Ֆարրուխ Յասարի գահակալումն ընթանում է ակ կոյունլուների առաջնորդ Ուզուն Հասանի կողմից տարածաշրջանում իր տիրապետությունը հաստատելու, օսմանյան պետության հզորացման և կարա կոյունլուների ու Թեմուրյանների տիրապետության ավարտման պայմաններում: Նշված գործընթացները Ֆարրուխ Յասարին ստիպում են որդեգրել արտաքին քաղաքականության նոր ուղղվածություն: Գահակալման առաջին իսկ տարին նա դեսպանագնաց է ուղարկում Մոսկվա և միաժամանակ թանկարժեք նվերներով պատվիրակություն առաքում Կ. Պոլիսը գրված օսմանյան Մեհմեդ Բ Ֆաթիհի (1451–1481 թթ.) մոտ: Նա սերտ հարաբերություններ է հաստատում Ուզուն Հասանի հետ: Ուզուն Հասանին է հարում նաև Արդաբիլում իշխող շեյխ Հեյդարը, որի հայրը՝ Ջունեյդը, զոհվել էր Շիրվանի դեմ պատերազմում: Մոտ մեկ տասնամյակ Ուզուն Հասանի, Ֆարրուխ Յասարի ու շեյխ Հեյդարի դաշինքը մնում է կայուն: 1478 թ. Ուզուն Հասանի մահից հետո գահ բարձրացած նրա որդին՝ Յակուբ բեկը (1478–1490 թթ.), շիրվանշահ Ֆարրուխ Յասարի հետ պահպանում է դաշնակցային ու բարեկամական հարաբերությունները նաև այն ժամանակ, երբ Շիրվանը գրավելու համար քայլեր է ձեռնարկում Արդաբիլի շեյխ Հեյդարը (1483 թ.): Չերքեզների դեմ պայքարի պատրվակով նա անցնում է Շիրվանի տարածքով Հյուսիսային Կովկաս և հարուստ ավարով կրկին Շիրվանով վերադառնում Արդաբիլ: 1487 թ.

շեյխ Հեյդարը կրկնում է արշավանքը դեպի Հյուսիսային Կովկաս՝ չերքեզների դեմ, և վերադառնում մոտ 6000 գերիներով: 1488 թ. շեյխ Հեյդարը, նպատակ ունենալով կրկին անցնելու Շիրվանի տարածքով, դիմում է սուլթան Յակուբին՝ նրա միջնորդությունը ստանալու համար: Յակուբը Ֆարրուխ Յասարին հանձնարարում է ընդառաջել շեյխ Հեյդարին: Շեյխ Հեյդարը անմիջապես խոշոր բանակով ներխուժում է Արցախ, գրավում և կողոպտում Ջրաբերդը և Ֆարրուխ Յասարից պահանջում ճանապարհ բացել՝ դեպի Դերբենդ շարժվելու համար: Օգտվելով պատերազմի համար Ֆարրուխ Յասարի անպատրաստ լինելուց՝ շեյխ Հեյդարը որոշում է այս անգամ իրականացնել Շիրվանի գրավումը և պատերազմ է հայտարարում Ֆարրուխ Յասարին: Անակնկալի եկած Ֆարրուխ Յասարը, չունենալով անհրաժեշտ չափի հավաքագրված զորք, փակվում է Շամախու մոտ գտնվող Գյուլիստան ամրոցում: Ղզլբաշները գրավում են Շամախին, բնակչությանը զանգվածաբար կոտորում և կողոպտում քաղաքը: Յոթ ամիս պաշարված մնալուց հետո Ֆարրուխ Յասարը դիմում է սուլթան Յակուբին՝ օգնություն ստանալու նպատակով: Սուլթան Յակուբը, շեյխ Հեյդարի գործողությունները դիտելով որպես սպառնալիք նաև ակ կոյունլուների տիրապետության դեմ, որոշում է օգնել Ֆարրուխ Յասարին և Սուլթանիեից զորքով շարժվելով դեպի Շիրվան՝ մտնում է Արդաբիլ: Տեղեկանալով այդ մասին՝ շեյխ Հեյդարը, թողնելով Գյուլիստանի պաշարումը, շարժվում է դեպի Դերբենդ: Շիրվանում Ֆարրուխ Յասարի կողմնակիցներից հավաքագրված զորքը սուլթան Յակուբի տրամադրած զորամասերի հետ հետապնդում է շեյխ Հեյդարին և Կովկասյան լեռնաշղթայի կիրճերում տեղի ունեցած ճակատամարտում ջախջախում ղզլբաշների զորքին: Շեյխ Հեյդարը գլխատվում է, գլուխն ուղարկվում է սուլթան Յակուբին, իսկ վերջինիս հրամանով Շիրվանը կրկին հանձնվում է Ֆարրուխ Յասարի կառավարմանը (1489 թ.), որը, փաստորեն, ստիպված էր ընդունել ակ կոյունլուների գերակայությունը: Շիրվանը կրկին դարձավ անկախ, որովհետև 1490 թ.՝ սուլթան Յակուբի մահից հետո, Թավրիզում սկսված գահակալական պայքարում Շիրվանը մոտ մեկ տասնամյակ վերածվել էր ակ կոյունլուների գահը գրավելու համար կարևոր հենակետի: Այդ հանգամանքը, սակայն, իր հերթին ճակատագրական դարձավ Շիրվանի կառավարիչ Ֆարրուխ Յասարի և ակ կոյունլուների դինաստիայի համար, որոնք դարձան հզորացող Սեֆյանների զոհերը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԸ XVI–XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՇԻՐՎԱՆԻ ՆՎԱՃՈՒՄԸ ՍԵՖՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ

XV դարի երկրորդ կեսին Արևելյան Այսրկովկասը շարունակում էր մնալ Մերձավոր Արևելքում գերակայության համար մրցակցող խոշոր վարչաքաղաքական կազմավորումների հարձակումների թիրախ:

Արևելյան Այսրկովկասում քաղաքական իշխանությունը պահպանող Շիրվանի կառավարիչները փորձում էին օգտվել ակ կոյունլուների և օսմանյան պետության միջև սուր հակամարտություններից և չճանաչել ներքին գահակալական երկպառակությունների հետևանքով թուլացող ակ կոյունլուների գերակայությունը: Ակ կոյունլուների պետությունը 1499 թ. բաժանվել էր երկու մասի՝ Հյուսիսային և Հարավային: Հյուսիսային մասը, որի մեջ ընդգրկված էին Հայաստանը, Ատրպատականը և Արևելյան Այսրկովկասի իշխանությունները (Շիրվան, Արդաբիլ), կառավարվում էր Էլվենդ Միրզայի կողմից, իսկ Հարավային մասը կազմող Իրաքում և Ֆարսում իշխում էր Մուրադ ֆադիշահը: Միաժամանակ տարածաշրջանում գնալով ավելի էին մեծանում Շիրվանի ու Արդաբիլի Սեֆյան կառավարիչների հավակնությունները:

1490-ական թթ. Սեֆյանները գտնվում էին ճգնաժամի մեջ, քանի որ շեյխ Հեյդարի գլխատումից հետո նրա երեք որդիներին սուլթան Յակուբը 1489-ին բանտարկել և ուղարկել էր նախ հայոց Աղթամարի վանք, իսկ ապա Շիրազի մոտ գտնվող Իստախր ամրոց: 1490 թ.՝ Յակուբի մահից հետո, գահակալական պայքարի ընթացքում երեխաները ոչ միայն ազատվում են բանտարկությունից, այլև ղզլբաշական ցեղապետերի կողմից օգտագործվում նոր բանակ կազմավորելու և միասնական քաղաքականություն որդեգրելու համար: Առանձնապես եռանդուն էր գործում որդիներից Իսմայիլը, որի շուրջ էլ 1499 թ. համախմբվեցին ղզլբաշական ցեղապետերի տրամադրած զորախմբերը, որոնք նպատակ ունեին գրավելու նաև Շիրվանը:

1500 թ. աշնանը ներխուժելով Շիրվան՝ ղզլբաշները Շամախիի մոտ ջախջախում են Ֆարրուխ Յասարի բանակը, իսկ վերջինս գլխատվում է[60]: 1501 թ. Սեֆյան Իսմայիլը գրավում է նաև Բաքուն:

[60] Այժմ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող թիվ 1591 ժողովածուի գրիչը հաղորդում է, թե 1487 թվականից շարակնոցի արտագրությունը մնացել էր կիսատ, քանզի «ոչ կարացաք աւարտել, մինչեւ ի ՋԾ (1501) թիվն. վրդովում եղեւ, եւ թագաւորութիւն Աղղոլիին (իմա՝ ակ կոյունլու) ի Ժ (10) բաժանեցաւ, եւ Սոֆին շատ աւերք արար, եւ գնաց ի Շամախի եւ էառ զՇամախի եւ եսպան զՇրուանշէն, եւ եղան դահիճ միմեանց, եւ ազգս Հայոց անկաւ նեղութիւն,

Ֆարրուխ Յասարի մահվամբ ավարտվում է շիրվանշահերի պետության վերելքը: 1502 թ. Շիրվանի ավագանին գահը հանձնեց շիրվանշահերի դինաստիայի մեկ այլ ներկայացուցչի՝ Գիլանում գտնվող և իր արդարամտությամբ հայտնի Շեյխշահին (Շեյխ-Իբրահիմ՝ 1502-1524 թթ.):

1505/6 թ. օգնական զորքեր ստանալով շահ Իսմայիլից՝ Սուլթան Մահմուդը ներխուժեց Շիրվան՝ փորձելով գրավել գահը, սակայն այնտեղ սպանվեց իր ծառաների կողմից, իսկ զորքերը ջախջախվեցին Շեյխշահի կողմից: Շեյխշահը ստիպված էր առժամանակ ընդունել իր հպատակությունը շահ Իսմայիլին և ստանձնել հարկի վճարում: Շեյխշահը, սակայն, փորձում էր օգտագործել յուրաքանչյուր հարմար առիթ հարկի վճարումից խուսափելու համար, ինչը առիթ դարձավ շահ Իսմայիլի համար 1509 թ. արշավելու Շիրվան: Շեյխշահը փակվեց Բիգուրդ անմատչելի ամրոցում, իսկ Իսմայիլը գրավեց Բաքուն, Շաբարանը և Դերբենդն ու այնտեղ նշանակեց իր կառավարիչներին: Դերբենդից Իսմայիլի հրամանով Արդաբիլ փոխադրվեցին 22 տարի առաջ այնտեղ սպանված շեյխ Հեյդարի մասունքները: Շեյխշահը որոշեց կրկին հպատակություն հայտնել շահ Իսմայիլին և հարկ վճարել, ինչը և ընդունելի եղավ Իսմայիլի համար: Շիրվանից շահ Իսմայիլի հեռանալուց հետո նրանց միջև հարաբերությունները կարգավորվեցին, իսկ 1522-1523 թթ. ստեղծվեցին նաև խնամական կապեր: Շահ Իսմայիլը իր դստերը կնության տվեց Շեյխշահի որդուն, իսկ ինքը կնության առավ Շեյխշահի դստերը:

Շեյխշահը մահացավ 1524 թ.՝ իշխելով 22 տարի: Նրան հաջորդեց ավագ որդին՝ Սուլթան Խալիլը (Խալիլուլլահ Բ իբն Շեյխ-Իբրահիմ Բ (Շեյխշահ)), ով, շահ Իսմայիլի դստեր հետ ամուսնացած լինելով, վայելում էր շահի օժանդակությունը: Շահ Իսմայիլի մահից հետո (1524 թ.) Սեֆյանների նոր գահակալ Թահմասպ Ա-ն, սակայն, չէր վստահում իր քրոջ ամուսնուն՝ Խալիլուլլահին, և միջոցներ էր որոնում Շիրվանը գրավելու համար: Հիջրայի 939 թ. (1532/33 թ.) Թահմասպը Շիրվանի կառավարումը հանձնեց իր եղբորը՝ Ալխաս Միրզային: Խալիլուլլահը մահացավ 1535 թ. նոյեմբերի 6-ին, անժառանգ, որից հետո Շիրվանի ավագանին Դաղստանից Շամախի բերեց և գահ բարձրացրեց Ֆարրուխ Յասար Բ-ի որդուն (Շեյխշահի թոռանը)՝ տասնհինգամյա Շահրուհին: Փաստական իշխանությունը գտնվում էր Շիրվանի ամիրաների կողմից խնամակալ նշանակված Հուսեին բեկ Լելեի ձեռքին: Շուտով ծայրաստիճան բազմացած անօրինականությունների դեմ սկսվում է ապստամբություն, որը գլխավորում էր իրեն Շեյխշահի որդի Սուլթան Մուհամմեդ ներկայացնող ոմն դերվիշ: Ապստամբները գրավում են Սալյանը և շարժվում Շամախի: Շահրուհը և նրա կողմնակիցները անհրաժեշտ քանակի զորք չունենալու պատճառով ստիպված փախչում են Շամախիից և ապաստանում Բիգուրդ ամրոցում: Ապստամբները առանց կռվի գրավում են քաղաքը: Սակայն ապստամբների բանակում սկսված տարաձայնությունների պատճառով նրանց ևս չի հաջողվում հաստատվել քաղաքում, և նահանջում են դեպի Սալյան: Շահրուհի կողմնակիցները, հետապնդելով ապստամբներին, Սալյանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ջախջախում են նրանց, գերի են վերցնում ապստամբության առաջնորդին և սպանում:

Խալիլուլլահի այրի Փարիխանը, որ ճանաչել էր դերվիշին որպես շիրվանշահ, մեկնում է Թավրիզ և իր եղբորը՝ շահ Թահմասպին, հորդորում գրավել Շիրվանը: Շահ Թահմասպին են դիմում նաև Շիրվանի որոշ ամիրաներ: Շահրուհն իր հերթին հավատարմության խոստումներ էր տվել օսմանյան սուլթանին, ինչը ստիպեց Թահմասպին Շիրվանը գրավելու արագ որոշում կայացնել: Շահը հրամայում է ուսթաջլու, դաջար և թալիշ ամիրաներին Ալխաս Միրզայի գլխավորությամբ զզլբաշական զորքով արշավել Շիրվան: 1538 թ. գարնանը Ալխաս Միրզան ներխուժում է Շիրվան, գրավում Սուրխաբ և Ղարալա բերդերը և պաշարում Գյուլիստանի ամրոցը: Միաժամանակ զորք է ուղարկվում նաև Բիգուրդ ամրոցի դեմ, որտեղ ապաստանել էին Շահրուհը, նրա խնամակալն ու Շիրվանի ամիրաները: Երկարատև պաշարումից հետո դրսից օգնություն ստանալու հույսից զրկված Շահրուհն ու նրա ամիրաները հանձնում են ամրոցը, որտեղ դեռևս XIII դարից պահվում էին շիրվանշահերի գանձերը: Գանձերն անցնում են շահ Թահմասպին, ամրոցը ավերվում է, իսկ Շահրուհն ու նրա կողմնակիցները բանտարկվում են: 1538 թ. սեպտեմբերի 27-ին հանձնվում է նաև Գյուլիստանը: Շահ Թահմասպը, որպես իքթա Շիրվանը հանձնելով իր եղբորը՝ Ալխաս Միրզային, իր հետ տանելով նաև գերեվարված Շահրուհին, վերադառնում է Թավրիզ: Թավրիզում Շահրուհը սպանվում է 1539 թ.: Շիրվանը հայտարարվում է որպես Սեֆյան պետության վիլայեթ, որտեղ բեկլարբեկի կարգավիճակով կառավարում էր Ալխաս Միրզան: Շիրվանի նախկին ավագանու կալվածքները հանձնվում են զզլբաշական ցեղերին ու ամիրաներին: Որպես թիուլ Սալյան, Մահմուդաբաղ և Բաքու մահալները տրվում են թեքելու ցեղի առաջնորդ Ղազի խանին, որը մինչ այդ անցել էր օսմանյան սուլթան Սուլեյմանի կողմը և ապա կրկին հպատակություն հայտնել Թահմասպ շահին: Թեքելու Ղազի խանին մեծ դժվարությամբ հաջողվեց 1540/41 թ. կոտրել Բաքվի բնակիչների դիմադրությունը և գրավել այն՝ սրի քաշելով բնակիչների զգալի մասին: 1543/44 թ. Ղազան խան Թեքելուն, դավադրության մեջ մեղադրվելով, սպանվեց Ալխաս Միրզայի կողմից:

Շիրվանշահերի պետության վերացումից հետո Սեֆյանների տիրապետության դեմ մի շարք ապստամբություններ տեղի ունեցան, որոնք գլխավորում էին շիրվանշահերի տոհմի ներկայացուցիչները: Միաժամանակ XVI դարի երկրորդ կեսը նշանավորվեց օսմանյան արշավանքների սաստկացումով ու թուրք-պարսկական պատերազմի հետևանքով օսմանյան զորքերի ներխուժումներով:

2. ԹՈՒՐՔ-ՊԱՐՍԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ՇԻՐՎԱՆԸ

Շիրվանի իշխող վերնախավը չէր համակերպվում անկախության կորստի հետ, և Ալխաս Միրզան ևս, տեղի տալով առավել ինքնուրույնություն ունենալու ձգտումներին, փորձեց չենթարկվել Սեֆյանների կենտրոնական իշխանությանը՝ օսմանյան իշխանություններից օժանդակություն ստանալու ակնկալիքով: Չնայած Ղրիմի խանի կողմից ցուցաբերված օգնությանը՝ Ալխաս Միրզան պարտություն կրեց ապս-

զի մին զմիոյ երկիրրն թալանէր»: Տես «Մայր Ցուցակ Հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի», հատոր Ե, Կազմեց՝ Օնիկ Եգանեան, Երևան, 2009, էջ 585:

տամբությունը ճնշելու համար ուղարկված զորքերի կողմից, և ստիպված ապավինեց սուլթանի ողորմածությանը: Շիրվանի կառավարիչ նշանակվեց Իսմայիլ Միրզան, իսկ այնուհետև նրա փոխարեն բեկլարբեկ նշանակվեց ուստաջլու ցեղի ներկայացուցիչ Աբդուլլա խանը: 1549 թ. Սեֆյան տիրապետության դեմ սկսված նոր ընդվզումը գլխավորեց շիրվանշահերի ժառանգներից մեկը՝ Բուրխան Միրզան, որը ևս պարտություն կրելով փախավ Շիրվանից:

Ղզլբաշները ձեռնամուխ եղան գրավելու նաև Շիրվանի հարևանությամբ գտնվող Շաքիի իշխանությունը, որտեղ դեռևս 1524 թվականից իշխում էր տեղի վերնախավի ներկայացուցիչ Դերվիշ Մուհամմեդ խանը. նա ոչ միայն հրաժարվում էր Սեֆյաններին ենթարկվելուց, այլև փորձում էր Սեֆյանների դեմ պայքարում օգնել Շիրվանին:

1551 թ. Թահմասպ Ա-ն, ստանալով Կախեթի Լևան թագավորի օժանդակությունը, զորքով ներխուժեց Շաքի և կանգ առնելով Արեշ գավառում՝ հնազանդության հորդորներով իր մոտ հրավիրեց Դերվիշ Մուհամմեդին: Մերժում ստանալուց հետո ղզլբաշական զորքերը հարձակման անցան, իսկ Շաքիի զինված ուժերը պաշտպանության անցան տարբեր ամրոցներում: Սեֆյանների կողմից թնդանոթների օգտագործումը հնարավորություն տվեց ավերելու ամրոցների պարիսպները, ուստի բերդերի ու ամրոցների պաշտպանները ստիպված էին հանձնվել թշնամու ողորմածությանը: Դերվիշ Մուհամմեդը հետապնդող ղզլբաշների կողմից սպանվեց: Թահմասպ շահը Շաքիի կառավարումը հանձնեց Սեֆյանների մոտ ծառայության անցած Շամախիի ներկայացուցիչ Հուսեինջանին, որի ժառանգորդներն էլ իշխեցին Շաքիում մինչև Շաքիի ինքնուրույն խանության ստեղծումը XVIII դարում:

1552–1554 թթ. օսմանյան բանակը, գրավելով Երևանը, Նախիջևանն ու Արցախը, ներխուժեց Շիրվան: Օսմանյան զորքերի մեջ էր նաև շիրվանշահերի տոհմի ներկայացուցիչ Կասիմ Միրզան, որին սուլթանը նախապես նշանակել էր Շիրվանի կառավարիչ: Սակայն թուրքական բանակը պարտություն կրեց Շիրվանում, բանակի հրամանատար Սենան փաշան գերի ընկավ, իսկ Կասիմ Միրզան փախավ Դաղստան:

1555 թ. Ամասիայի հաշտության պայմանագրով ժամանակավորապես դադար առան թուրք-իրանական ռազմական գործողությունները, և տարանջատվեցին նրանց տիրապետության սահմանները: Արևելյան Այսրկովկասը մնաց Սեֆյան տիրապետության ներքո:

1576 թ. Թահմասպ շահի մահից հետո սկսված գահակալական պայքարում հաղթանակած Իսմայիլ շահին (Իսմայիլ Բ, 1576–78) վիճակված չէր երկար կառավարել, պալատական հեղաշրջման հետևանքով նա գահընկեց եղավ և սպանվեց՝ իշխելով միայն երկու տարի: Գահ բարձրացված նրա ավագ եղբայր Խուդաբանդե շահը (1578–1587 թթ.) կույր էր, և Սեֆյան արքունիքում սկիզբ առան արքունական տարբեր խմբորումներ՝ թուլացնելով երկրի կառավարումը: Այդ իրավիճակը կարևոր հանգամանք էր օսմանյան պետության համար վերսկսելու Սեֆյանների դեմ պատերազմը, որը նոր արհավիրքներ և նոր ավերածություններ բերեց տարածաշրջանին:

1578 թ. Մուստաֆա Լալա-փաշայի հրամանատարությամբ օսմանյան 100 հազարանոց բանակը կրկին ներխուժեց Արևելյան Հայաստան, Վրաստան ու Շիրվան: Օսմանյան բանակը գրավեց Գանձակը և ուղղվեց դեպի Շիրվան ու Շաքի: Ալազանի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնելով Սեֆյաններին՝ օսմանները գրավեցին Շամախին ու Դերբենդը: Շիրվանի կառավարիչ Արաս խանը փախավ, և Շիրվանի կառավարիչ դարձավ թուրքական բանակի հրամանատարներից Օսման փաշան: Թուրքական ռազմակալումը, սակայն, մեծ դիմադրության հանդիպեց նաև բնակչության կողմից: Շարունակվում էր թուրքերի դեմ պայքարը ինչպես Վրաստանում Սիմոն թագավորի կողմից, այնպես էլ Շիրվանում: Շիրվանում Սեֆյան բանակի մարտական ոգին բարձրացնելու համար օգտագործվեց անգամ բանակում Խուդաբանդե շահի կնոջ՝ Բեգումի ներկայության հանգամանքը: Ախսու գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանյան բանակը պարտություն կրեց, որտեղ գերի ընկավ նաև օսմանյան բանակին օգնության ժամանած Ղրիմի Ադիլ-Գիրեյ խանը, իսկ Օսման փաշան փախավ Դաղստան:

Սակայն շուտով Դերբենդից Օսման փաշայի զորքերի հետ միացած Շիրվան ներխուժեցին Ղրիմի Մուհամմեդ-Գիրեյ խանի զորքերը և հասնելով մինչև Արցախ՝ կողոպուտի ենթարկեցին բազմաթիվ բնակավայրեր: 1580-ական թվականներին Բաքվի, Շիրվանի և Արցախի տարածքները շարունակաբար ավերվում և կողոպուտի էին ենթարկվում օսմանյան ու Սեֆյան զորքերի կողմից: 1587 թ. Խուդաբանդե շահի մահից հետո գահ բարձրացած շահ Աբբաս Ա-ն ստիպված էր 1590 թ. պայմանագրով օսմաններին զիջել նրանց կողմից գրավված Արևելյան Այսրկովկասը՝ Քարթլին ու Կախեթը, Հայաստանը, Շիրվանը և մինչև Դերբենդ ընկած տարածքները՝ բացի Թալիշից ու Արդաբիլից, որոնք Սեֆյանների հիմնական հենարանն էին:

1590 թ. պայմանագրի կնքումից հետո օսմանյան պետությունը ձեռնամուխ եղավ նվաճված ողջ տարածաշրջանում վարչական նոր կազմավորումների ստեղծմանը, որն ուղեկցվում էր հարկային նոր համակարգի ներդրումով: Ստեղծվեցին էյալեթներ, կատարվեցին մարդահամարներ, ու կազմվեցին նոր հարկամատյաններ: Կատարվում էին թուրքական տիրապետության ամրապնդմանն ուղղված ձեռնարկումներ, այդ թվում նաև բերդերի ու ամրոցների կառուցապատում: Թուրքական լծի հաստատումը ուղեկցվում էր հարկերի բարձրացումներով, որն ավելի էր մեծացնում բնակչության դժգոհությունը օսմանյան լծից: Մոտ մեկուկես տասնամյակ տևած օսմանյան մենատիրության նկատմամբ հասունանում էր բնակչության խոր ատելությունը, որը հանգեցնում էր նրանց փախուստին դեպի պարսկական տիրապետության ներքո մնացած տարածքներ:

Օսմանյան տիրապետության սահմաններից հեռացնելով՝ շահ Աբբասը Իրանի նոր մայրաքաղաք դարձրեց Սպահանը և ձեռնամուխ եղավ սոցիալ-տնտեսական ու ռազմական վերափոխումների, որով մեծապես ամրապնդեց կենտրոնական իշխանության դիրքերն ու երկրի ներուժը: 1603 թ. վերսկսելով պատերազմական գործողությունները՝ շահ Աբբասը ձեռնարկեց կորցրած տարածքների վերանվաճումը՝ Թավրիզ-Ջուղա-Նախիջևան-Երևան ուղղությամբ, որով Շիրվանի ու մերձկաս-

պյան տարածքների օսմանյան ուժերը կտրվում էին արևմուտքից օժանդակություն ստանալու հնարավորությունից: Գրավելով Երևանը և իրականացնելով Կարսից մինչև Ջուղա ընկած տարածքներից բնակչության տեղահանումը՝ շահ Աբբասը 1606–1607 թթ. ձեռնամուխ եղավ Արցախի, Գանձակի ու Թիֆլիսի գրավմանը: Գանձակ քաղաքը պատերազմական գործողությունների ժամանակ հիմնովին ավերվեց, որը վերականգնվեց միայն պատերազմից հետո հին քաղաքատեղիից որոշ հեռավորության վրա:

Թիֆլիսի գրավումից հետո շահը ուղղվեց դեպի Շամախի[61], որն ազդանշան դարձավ հակաօսմանյան ուժերի համար ձեռնամուխ լինելու օսմանյան լծի թոթափման համար: Օսմանյան կայազորը ոչնչացվեց Բաքվում և Դերբենդում: Շահ Աբբասը գրավված նահանգներում նշանակում էր իր կառավարիչներին: Այսպես՝ Գանձակում կառավարիչ էր նշանակվել դաջար ցեղից Մուհամմեդ խանը, իսկ Շամախիում՝ կարամանլու ցեղից Ջուլֆիղար խանը:

Շահ Աբբասի կողմից վերագրավված տարածքների բնակչությունը փորձում էր որոշակի արտոնություններ ու իրավասություններ և հարկային բեռի թեթևացում ստանալ նոր իշխանություններից: Նման արտոնություններ ստացան կամովին Սեֆյաններին աջակցած Դերբենդի բնակիչները: Շահ Աբբասի դաժան ճնշումներից հուսախաբությունը մի շարք այլ վայրերում նպաստավոր հանգամանք հանդիսացավ օսմանյան կողմնորոշման տարրերի համար նոր իշխանությունների դեմ ելույթներ կազմակերպելու գործում: Անհնազանդության նման ելույթներ տեղի ունեցան մասնավորապես Շիրվանում, որոնք դաժանորեն ճնշվեցին շահական ուժերի կողմից: Տեղական բնակչության հակաշահական ելույթները զսպելու և էթնիկ հենարան ստեղծելու նպատակով շահ Աբբասը Այսրկովկասի տարածք՝ Քարթլի, Կախեթ, Շիրվան ու Շաքի, փոխադրեց մեծ քանակությամբ թյուրքալեզու բնակչություն այլևայլ ցեղախմբերից:

1639 թ. պայմանագրով Արևելյան Այսրկովկասում ամրագրվեց Իրանի տիրապետությունը: Պատերազմական գործողությունների ավարտը դրական ազդեցություն ունեցավ երկրամասի տնտեսական զարգացման վրա: XVII դարի կեսերին Արևելյան Այսրկովկասը՝ մասնավորապես Շամախին, ընդգրկված էր հում մետաքսի միջազգային առևտրական հարաբերությունների մեջ: Շամախին դարձել էր առևտրաարհեստավորական խոշոր կենտրոն՝ կազմելով պարսից պետության կարևոր նահանգներից մեկը: Այն կառավարվում էր կենտրոնական իշխանությունների կողմից նշանակվող պաշտոնյաների միջոցով: 1663 թ. Շամախիի խան կարգվեց Երևանի Նաջաֆ կուլի խանը:

[61] Դեռևս մինչև Շամախիի գրավումը շահ Աբբասը Շիրվանի բեկլարբեկ էր նշանակել վրաց արքայազն Կոստանդին խանին՝ Կախեթի Ալեքսանդր թագավորի որդուն:

3. ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

XVII դարի վերջերից Իրանում սկիզբ առած ֆինանսատնտեսական խոր ճգնաժամը ընդգրկեց նաև Արևելյան Այսրկովկասը: Հյուսիսային Իրանի վարչատնտեսական կենտրոնի վերածված Շամախին կարևոր դեր ուներ Իրանի և Ռուսաստանի միջև տնտեսական հարաբերություններում: Շամախիում էր կանգ առել Իրանի շահի մոտ ուղարկված Իսրայել Օրու դեսպանությունը: Երկար ժամանակ այնտեղ էր նաև Պետրոս Ա–ի դեսպան Ա. Վոլինսկին: Իրանի կենտրոնական իշխանության թուլացումը նպաստավոր հանգամանք էր ծայրամասերում կառավարիչների անհնազանդության և կամայականությունների դրսևորումների համար, որն ընդգրկել էր ինքնիշխանության երկարամյա ավանդույթներ ունեցող ոչ միայն Աֆղանստանը, այլև Արևելյան Այսրկովկասը:

1711 թ. Իրանի կենտրոնական իշխանությունների դեմ պայքար սկսվեց Դաղստանում, որն ընթանում էր շիականության և սուննիականության միջև դավանական հակամարտության քողի տակ: Հաճախ նման ելույթները միահյուսվում էին նաև սոցիալական դժգոհությունների հետ, ինչը օգտագործվում էր ծայրամասային կառավարիչների կողմից կենտրոնական իշխանություններից իրենց դիրքերը ամրապնդելու համար՝ զանգվածային դժգոհության սլաքն ուղղելով նրանց դեմ և ձեռնարկելով կողոպտչական գործողություններ իրենց հարակից գավառներում: 1711 թ. շարժումն ընդգրկեց Շիրվանը, Շաքին և Դաղստանը:

Եսայի Հասան Ջալալյանի նկարագրությամբ Արեշի մելիք Ալի Սուլթանը անհնազանդության դրոշի ներքո կողոպտչական արշավանքներ էր ձեռնարկում Կուր գետի ավազանում՝ հասնելով մինչև Գանձակի ու Արցախի տարածքներ: Օսմանյան իշխանությունները սուննի դավանության հովանավորության պատրվակով օժանդակում էին հակաիշխանական ելույթները Իրանում: Նման օրինակներից էին Ղազի–Ղումուխի կառավարիչ Սուրխայ խանի, Ղայթաղի տիրակալ Ահմեդ խանի, սուննի հոգևոր առաջնորդ Դավուդ խանի և այլոց գլխավորած զինված շարժումները: Ավազակային հարձակումները ուղեկցվում էին բնակչության կողոպուտով, զանգվածային կոտորածներով ու ավերածություններով: Նման արշավանքներից մեկի ժամանակ գրավվեց և կողոպուտի ենթարկվեց նաև Շամախին, որտեղ թալանվեցին ու սպանվեցին մեծ թվով ռուս վաճառականներ:

Իրանական պետության թուլացումը հարևան երկրների համար հնարավորություն էր ստեղծում տարածաշրջանում իրենց դիրքերն ամրապնդելու ծրագրերի իրականացման համար: Առավել եռանդուն քայլերի դիմեցին Ռուսաստանը և օսմանյան պետությունը՝ փորձելով տիրանալ Այսրկովկասին ու Իրանի արևմտյան նահանգներին՝ երկուստեք ունենալով էթնոդավանական մերձավորությամբ ցեղերի ու ժողովուրդների պոտենցիալ հենարան իրենց հավակնությունների համար: Թուրքական նկրտումների համար երաշխիք էին արևելյան ու Հյուսիսային Այսրկովկասի սուննի դավանության ժողովուրդները, ապա ռուսական արշավանքի համար կարևոր հենարան էին բնակչության այն խավերը, որոնք հույս ունեին Ռուսաստանի

օժանդակությամբ ազատագրվելու իրանական լծից և վերականգնելու իրենց ինքնուրույնությունը:

1722 թ. գարնանը Պետրոս Ա–ն խոշոր բանակով շարժվեց դեպի հարավ: Կասպից ծովով դեպի հարավ շարժվեց նաև ռուսական նավատորմը: Պետրոս Ա–ի առաջնահերթ խնդիրն էր գրավել Դերբենդը, Բաքուն և Շամախին: Առաջին երկու քաղաքները պետք է գրավվեին ռուսական բանակի կողմից, իսկ Շամախու գրավմանը և այնուհետև շարունակվող արշավանքին ծրագրված էր մասնակից դարձնել վրաց և հայ ազատագրական ուժերին: 1722 թ. օգոստոսին ռուսական զորքերը մոտեցան Դերբենդին, որը գրավվեց առանց դիմադրության: Քաղաքի նաիբ Իմամ Կուլին ռուսական ցարին նվիրեց հետագայում «Դերբենդ–նամե» անվանված պատմության արաբերեն ձեռագիրը: Կասպից ծովում փոթորկից խորտակվեց ռուսական նավատորմը, որով բանակը զրկվում էր նաև պարենից ու հրետանուց: Թեև Բաքվի, Շամախու և այլ քաղաքներից տեղական ավագանու ներկայացուցիչները ժամանել էին Դերբենդ և իրենց գոհունակությունը հայտնել ռուսական բանակի ժամանելու առթիվ ու պատրաստակամություն՝ ընդունելու ռուսական հպատակություն ռուսական բանակի ժամանելու դեպքում, սակայն Պետրոս Ա–ն, տեսնելով կլիմայական անսովոր պայմաններում զորքի մեջ հիվանդությունների տարածումը և սննդամթերքի ու կերի պակասն ու բանակում ձիերի անկման փաստը, որոշեց հետաձգել արշավանքը և կայազոր թողնելով Դերբենդում ու հրամանատարությունը հանձնելով գեներալ Մատյուշկինին, վերադարձավ Աստրախան, այնուհետև՝ Պետերբուրգ:

Արշավանքի շարունակումը բխում էր ինչպես Ռուսաստանի շահերից ու Պետրոսի ծրագրերից, այնպես էլ մերձկասպյան տարածքների բնակավայրերի շահերից, որոնց սպառնում էր աֆղանների կողմից նվաճվելու վտանգը: Բաքվի սուլթան Մուհամմեդ Հուսեին բեկը և նրա կողմնակիցները՝ Դերգահ Կուլի բեկի գլխավորությամբ, դեմ էին ռուսական հպատակության գաղափարին ու պատրաստ էին ամեն գնով դիմադրելու ռուսական հարձակմանը: Պետրոս Ա–ն հրամայեց գեներալ Մատյուշկինին գրավել Բաքուն և նավատորմ ուղարկեց Գիլանի կենտրոն՝ Ռեշտ: Նավատորմը գլխավորում էր կապիտան–լեյտենանտ Սոյմոնովը: 1723 թ. գարնանը ռուսական նավերը հասան Ռեշտ, իսկ հուլիսին Բաքու ժամանեցին ռուսական նավերը և ափհանում կատարեցին քաղաքի մատույցներում: 1723 թ. հուլիսի 26–ին Բաքուն որոշ դիմադրությունից հետո ստիպված էր հանձնվել, և ռուսական զորքերը մտան քաղաք ու տեղավորվեցին հնդկական և հայկական քարավանատներում: Քաղաքի պարսկական կայազորը ծառայության անցավ ռուսական բանակում՝ Դերգահ Կուլի բեկի հրամանատարությամբ, որը և միաժամանակ նշանակվեց քաղաքի կառավարիչ: Բաքվի սուլթան Մուհամմեդ Հուսեին բեկը և նրա եղբայրներն ու ընտանիքը գերի վերցվեցին և ուղարկվեցին Աստրախան: Բաքվի պարետ նշանակվեց իշխան Բարյատինսկին:

Ռուսական կողմը ձգտում էր հնարավորինս արագ իրավական ձևակերպում տալու իր նվաճումներին, ուստի Պետերբուրգ ժամանած Իրանի ներկայացուցիչ Իսմայիլ բեկը 1723 թ. սեպտեմբերի 12–ին ստիպված էր ստորագրել պայմանագիր,

որով շահական կառավարությունը Ռուսաստանին հավերժ տիրապետության էր զիջում Դերբենդ և Բաքու քաղաքները՝ նրանց հարող մերձկասպյան բոլոր տարածքներով, ինչպես նաև Գիլանը, Մազանդարանը և Աստարաբադը: Միաժամանակ Ռուսաստանը պարտավորվում էր օգնել Իրանին օսմանյան ներխուժման դեպքում: Այդ պայմանագիրը մեծ իրարանցում առաջացրեց նաև օսմանյան արքունիքում, որը իրապես պատասխան էր 1723–ի ամռանը օսմանյան բանակի արշավանքին: Պայմանագիրը, սակայն, մեծ ընդվզում առաջացրեց նաև Իրանում, և այն չվավերացվեց շահի կողմից: Չնայած այդ հանգամանքին՝ ռուսական կողմը փորձում էր առաջնորդվել այդ պայմանագրով:

Օսմանյան կայսրությունը ևս լրջորեն նախապատրաստվել էր Իրանի դեմ գործողություններին: 1722 թ. ամռանը մեծ հանդիսավորությամբ Ստամբուլում ընդունելություն կազմակերպվեց Հաջի Դավուդի և Սուրխայ խանի դեսպանագնացներին: Նույն թվականի աշնանը Հաջի Դավուդը պաշտոնապես ընդունեց օսմանահպատակություն, և օսմանյան կառավարությունը Հաջի Դավուդին ճանաչեց Շիրվանի ու Դաղստանի կառավարիչ: Այդ հիմնավորմամբ ռուսների կողմից Դերբենդի գրավումից հետո օսմանյան իշխանությունները Ռուսաստանից պահանջեցին զորքերը դուրս հանել Դերբենդից:

1723 թ. գարնանը օսմանյան զորքերը Էրզրումի փաշայի հրամանատարությամբ ներխուժեցին Քարթլի ու Կախեթ, այնուհետև շարունակեցին արշավանքը դեպի Գանձակ, Շամախի և Բաքու: Հաջի Դավուդը զորքով շարժվեց Գանձակ՝ օսմանյան բանակին օգնելու նպատակով: Սակայն Գանձակի բնակչությունը համառ դիմադրություն կազմակերպեց, և հակառակորդը մեծ կորուստներով նահանջեց: Ռուսական բանակի գործողությունները 1723–1724 թթ. և Գանձակի դիմադրությունը, որով կասեցվեց օսմանների սրընթաց արշավանքը դեպի Շամախի, ստիպեցին օսմանյան պետությանը համակերպվել մերձկասպյան տարածքներում Ռուսաստանի ներկայության հետ, և 1724 թ. հունիսի 12–ին Ստամբուլում կնքվեց ռուս–թուրքական պայմանագիր, որը հաստատում էր 1723 թ. սեպտեմբերի 12–ի պայմանները, այն է՝ Դերբենդի, Բաքվի, Սալյանի, Լենքորանի, Ռեշտի ու Էնզելիի անցումը Ռուսաստանին: Օսմաններին հաջողվեց գրավել Գանձակը միայն 1725 թ. օգոստոսին, որից հետո նրանք ներխուժեցին Արցախ, որտեղ ևս կրեցին դառը պարտություն: 1725 թ. հուլիսին օսմանները գրավեցին Թավրիզը, իսկ նույն թվականի դեկտեմբերին՝ Արդաբիլը:

Օսմանյան տիրապետությունը և նրանց կողմից նշանակված տեղական կառավարիչները ծանր իրավիճակ էին ստեղծել բնակչության համար: Բարձրացել էին հարկերը, հաճախացել կողոպուտներն ու բռնությունները, մեծ ծավալ ընդունել բռնի դավանափոխությունները: Շիրվանում կառավարիչներ նշանակված Հաջի Դավուդն ու Սուրխայ խանը գործիք էին դարձել օսմանների համար, որոնք հաճախակի զինված հարձակումներ էին գործում Սալյանի, Ղուբայի, Դերբենդի և ռուսական տիրապետության այլ բնակավայրերի վրա: Շիրվանում ու Շաքիում քրիստոնյաներին պարտադրել էին կրծքին կրել տարբերակիչ դեղին նշան:

1727 թ. ավարտվեցին ռուս–թուրքական սահմանազատման բանակցությունները, ինչն ավարտին էր հասցնում 1724 թ. հունիսի 12–ի պայմանագիրը: Ռուսաստանին անցան Ջավադը, Սալյանը, Ղուբան, Թենգին և այլն: Երբ Հաջի Դավուդը հրաժարվեց Թենգիի ամրոցը հանձնելուց, ռուսական զորքը հարձակումով գրավեց այն: Հաջի Դավուդի այդ պարտությունից հետո օսմանյան հրամանատարությունը 1728 թ. նրան ետ կանչեց Գանձակ, իսկ Շիրվանի կառավարումը հանձնեց Սուրխայ խանին:

Ռուսական իշխանությունները ևս վարչական պաշտոններում թույլատրեցին շարունակել իրենց գործունեությունը այն անձանց, որոնք ընդունել էին ռուսական հպատակություն կամ համակիր էին ռուսական իշխանություններին և գործակցում էին նրանց հետ:

1725 թ. Պետրոս Մեծի մահից հետո գահ բարձրացած Եկատերինա Առաջինը (1725–1727 թթ.), Պետրոս Երկրորդը (1727–1730 թթ.) և Աննա Իվանովնա կայսրուհին (1730–1740 թթ.) չկարողացան զարգացնել Պետրոս Մեծի արտաքին քաղաքականության արդյունքները: Ավելին՝ մերձկասպյան նվաճումները Ռուսաստանի համար դարձան ավելի խնդրահարույց, և Իրանում քաղաքական գործընթացները բնավ չէին նպաստում ռուս–իրանական ու ռուս–հնդկական առևտրական հարաբերությունների զարգացմանը: 1732 թ. հունվարի 21–ին Ռեշտում ստորագրվեց համաձայնագիր, որով Կուր գետից հարավ ընկած տարածքները կրկին անցնում էին Իրանին, որը, սակայն, պարտավորվում էր օսմանյան կողմին հնարավորություն չտալ մերձենալու Կասպից ծովին կամ գրավելու Իրանին վերադարձված մերձկասպյան տարածքները:

Իրանական պետության անկախության վերականգնմանը ձեռնամուխ եղած Նադիրը 1734 թ. ամռանը արշավեց Շիրվան: Շիրվանի կառավարիչ Սուրխայ խանը փախավ Ղազի–Ղումուխ: Նադիրի զորքերը գրավեցին Շամախին և հիմնովին ավերեցին այն: Հին քաղաքից 6 կմ հեռավորությամբ հիմնադրվեց Նոր Շամախին, որտեղ բնակեցվեց նախկին բնակչության մի մասը, իսկ մյուս մասը փոխադրվեց Աղսու, որը վերաբնակիչների շնորհիվ սկսեց վերելք ապրել: Նադիրի գործողությունները Ղազի–Ղումուխի դեմ հաջողություն չունեցան, ուստի Նադիրը ուղղվեց դեպի Գանձակ: Գանձակը գրավվեց 1735 թ.:

Նադիրը միաժամանակ բանակցություններ սկսեց Ռուսաստանի հետ մերձկասպյան տարածքների վերադարձման շուրջ, որոնք Ռուսաստանի համար Պետրոս Ա կայսեր մահից հետո դարձել էին ոչ արդյունաբեր:

1735 թ. մարտի 10–ին Իրանի և Ռուսաստանի միջև նոր պայմանագրով, որը կնքվեց Գանձակի մոտ, Ռուսաստանը իր զորքերը դուրս էր հանում նաև Բաքվից և Դերբենդից, իսկ փոխարենը ռուս վաճառականները Իրանում ստանում էին անմաքս և ազատ առևտրի իրավունք ու լայն արտոնություններ:

1736 թ. փետրվարին Մուղանի դաշտում կազմակերպվեց Նադիրի թագադրումը՝ Ջավադ ամրոցի հարևանությամբ, ուր հրավիրվել էին Իրանական պետության հոգևոր ու աշխարհիկ կառավարող վարչակազմի ներկայացուցիչները: Նադիրը

հռչակվեց Իրանի նոր շահ, որով և վերջ տրվեց Իրանում Սեֆյան դինաստիայի իշխանությանը: Գանձակում իշխող զիաղոլլու ցեղախմբի ներկայացուցիչների կողմից Նադիրի գահակալմանը դեմ արտահայտվելու պատճառով վերջինս խիստ սահմանափակեց նրանց իրավունքներն ու զրկեց նրանց Արցախի մելիքությունների նկատմամբ ունեցած կառավարման իրավունքից՝ Արցախի մելիքությունները միավորելով Մելիք Եգանի գլխավորությամբ առանձին վարչական կազմավորման մեջ (Խամսայի մելիքություններ)՝ շնորհելով նրան խանի և բեկլարբեկի աստիճան: Ղազախն ու Բորչալուն հանձնեց Քարթլիին, իսկ Գանձակի մոտ վերաբնակված զիաղոլլուների ենթակայության ներքո գտնվող ջևանշիր, օթուզիքի և քեբիրլու ցեղախմբերին ևս փոխադրեց Խորասան՝ շարունակելով այն քաղաքականությունը, ինչը իրականացնում էր նաև հայազգի բնակչության նկատմամբ Նախիջևանում և Երևանում:

1738 թ. խոշոր ապստամբություններ բռնկվեցին Շաքիում, Շիրվանում և Բելաքանում: Ապստամբությունները ճնշելու նպատակով Նադիրը զորք ուղարկեց Ատրպատականում, Վրաստանում և Դաղստանում գերագույն կառավարիչ և զորքերի գլխավոր հրամանատար նշանակված իր եղբոր՝ Իբրահիմ խանի գլխավորությամբ, որին Աբրահամ Կրետացին անվանում է «երկրորդ շահ»: Շահական զորքը հասավ մինչև Ջար, սակայն Ջանիկ վայրում ընկնելով շրջապատման մեջ՝ լիովին բնաջնջվեց, սպանվեց նաև Իբրահիմ խանը: Դեպի Հնդկաստան ձեռնարկված արշավանքի պատճառով Նադիրը հնարավորություն չուներ անմիջապես արշավելու Շիրվան և Դաղստան: 1741 թ. փետրվարին Նադիրը պատժիչ զորք ուղարկեց, և ապստամբությունը ճնշվեց: Չբավարարվելով այդ արդյունքով՝ Նադիրը որոշեց լիովին հնազանդեցնել և Իրանի տիրապետությունը վերահաստատել Դաղստանում, ուստի նույն թվականին ձեռնարկեց նաև երկրորդ արշավանքը դեպի Դաղստան, որը ևս ավարտվեց անհաջողությամբ:

Թուրքամետ ուժերը փորձում էին Շիրվանում իրենց ազդեցությունը հաստատելու համար օգտագործել բնակչության հակաիշխանական ելույթները: Այդ ելույթները ճնշելու համար Նադիրը ստիպված էր իր որդու՝ Նասրուլլա Միրզայի գլխավորությամբ նոր բանակ ուղարկել Շիրվան: 1743 թ. դեկտեմբերին Աղսուի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ապստամբների ուժերը ջախջախվեցին:

1743 թ. Նադիրը սահմանեց հարկային նոր քաղաքականություն, որն ավելի մեծացրեց դժգոհությունների ալիքը: Մերձկասպյան տարածքների և Շամախու անցումը Իրանի գերիշխանության ներքո չբարելավեց նրանց տնտեսական վիճակը: Շարունակվում էր առևտրի և տնտեսության անկումը: Տնտեսական ճգնաժամը հարուցում էր բնակչության նոր դժգոհություններ, որոնք վերաճում էին նորանոր ապստամբությունների: Նադիրի կառավարումից դժգոհությունն ընդգրկել էր Իրանի տարբեր նահանգներն ու բնակչության բոլոր շերտերը: Այդ իրավիճակի արդյունքը եղավ 1747 թ. մայիսի 9–ին Նադիր շահի սպանությունը դավադիրների կողմից, որը հանգեցրեց գահակալական երկարատև պայքարի և իրանական պետության փլուզմանը:

4. ԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ

Նադիրի սպանությունից հետո իրանական գահի նկատմամբ հավակնորդների միջև ընթացող պայքարը հնարավորություն ընձեռեց առանձին մարզերի կառավարիչներին՝ խաներին ու բեկլարբեկերին, դրսևորելու իրենց անհնազանդությունը գահի հավակնորդների նկատմամբ և վարելու ինքնագլուխ ներքին ու արտաքին քաղաքականություն: Այդ հանգամանքը հնարավորություն ընձեռեց ձևավորելու վարչատարածքային նախկին միավորների շրջանակներում նոր իշխանություններ, որոնց միջև ևս այնուհետև սկսվեցին գերակայություն ստանալու շարունակական բախումներ: Արևելյան Այսրկովկասում ստեղծված նոր իշխանություններն էին Ղուբայի, Դերբենդի, Բաքվի, Շամախու և Շաքիի իշխանությունները, որոնք իրենց հերթին հակամարտության մեջ էին Գանձակի և Ղարաբաղի խանությունների ու Քարթլիի և Կախեթի թագավորությունների (1762–ից՝ Քարթլ–Կախեթի միացյալ թագավորություն) հետ:

Իրանի գահի համար պայքար ծավալվեց Խորասանում հաստատված Նադիր շահի որդու՝ Շահրուհի, Աստրաբադում և Մազանդարանում հաստատված Մուհամմեդ Հասան–խան Ղաջարի, Ատրպատականում հաստատված աֆղանական ցեղախմբերից մեկի՝ գիլզայների ներկայացուցիչ և Նադիրի նախկին զորապետ Ազատ խանի, Իսպահանում գտնվող բախտիարների առաջնորդ Ալի Մարդան խանի ու Զենդերի ներկայացուցիչ Քերիմ խանի միջև:

Իրանում գահակալական պայքարում գերակայություն ձեռք բերեց Զենդերի ներկայացուցիչ Քերիմ խանը (1762–1779 թթ.), որի ազդեցությունը հիմնականում տարածվում էր Իրանի հարավային և կենտրոնական նահանգներում և կառավարում էր «վեքիլ» տիտղոսով՝ նստավայր դարձնելով Շիրազը: Վերջինիս չհաջողվեց գերիշխանություն ապահովել Այսրկովկասի նկատմամբ, ինչը և հնարավորություն էր ընձեռում հարևան օսմանյան պետությանն ու Ռուսաստանին օգտվելու Իրանում գահի հավակնորդների միջև պայքարից և կրկին հավակնություններ դրսևորելու Այսրկովկասի նկատմամբ: Այդ հավակնությունները դիվանագիտական պայքարի ձևով աշխուժացում ապրեցին Քերիմ խանի մահից հետո՝ Ալի Մուրադ խան Զենդի իշխանության տարիներին (1780–1785 թթ.): 1783 թ. Գեորգիևսկ ամրոցում կնքվեց ռուս–վրացական պայմանագիրը, որով Արևելյան Վրաստանը անցնում էր Ռուսաստանի հովանավորության ներքո:

Ալի Մուրադ խանի մահից հետո Հյուսիսային Իրանում գահակալական պայքարի նոր ծավալումը հանգեցրեց ղաջարական տոհմի հզորացմանը, որի արդյունքում 1790–ական թթ. սկզբից Իրանի առավել հզոր տիրակալ արդեն ներկայանում էր Մուհամմեդ Հասան խան Ղաջարի որդին՝ Աղա Մուհամմեդ խան Ղաջարը, որին, սակայն, շահ հռչակվելու համար անհրաժեշտ էր գրավել նաև Այսրկովկասը:

1795 թ. Աղա Մուհամմեդ խանի կողմից Այսրկովկասի խաներին ուղղված հնազանդության կոչին դրական պատասխանով արձագանքեցին Ղուբայի, Բաքվի, Շիրվանի, Շաքիի և Գանձակի խաները: Ղարաբաղի խանի ու Արևելյան Վրաստանի թագավոր Հերակլ Երկրորդի կողմից հնազանդություն հայտնելու մերժումը հանգեցրեց Աղա Մուհամմեդ խանի՝ Այսրկովկաս արշավանք կազմակերպելու որոշման իրագործմանը, որի արդյունքում 1795 թ. սեպտեմբերի 12–ին գրավվեց և ավերվեց Թիֆլիսը:

Այսրկովկասում Իրանի գերակայության վերահաստատումով հարցականի տակ էր դրվում Ռուսաստանի ազդեցությունը, ուստի Աղա Մուհամմեդ խանին պատժելու պատրվակով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրովարտակով 1796 թ. գեներալ Վ. Զուբովի հրամանատարությամբ ռուսական բանակ ուղարկվեց Այսրկովկասը նվաճելու համար: Առանց լուրջ դիմադրության հանդիպելու ռուսական բանակը գրավեց Դերբենդը, Ղուբան, Բաքուն, Շամախին, Շաքին ու Գանձակը և մոտեցավ Արցախին: Նշված խանությունները, ինչպես և նախորդ տարի Աղա Մուհամմեդի կողմից ներկայացված վերջնագրի դեպքում, այս անգամ ևս խուսափելով ռազմական առճակատումից և անկարող լինելով կազմակերպելու զինված դիմադրություն, փորձում էին պահպանել իրենց իշխանությունը՝ փրկելով իրենց տիրույթները ավերածություններից: 1796 թ. նոյեմբերի 6–ին Եկատերինա Երկրորդ կայսրուհու մահը և Ռուսաստանում Պավել Առաջինի գահակալումը շրջեցին իրադարձությունների ընթացքը, և Պավել կայսեր հրամանով ռուսական բանակը, լքելով գրաված բոլոր տարածքները, վերադարձավ Ռուսաստան:

Ռուսական բանակի հեռացումը հնարավորություն ընձեռեց Աղա Մուհամմեդ խանին կրկին արշավելու Այսրկովկաս: Շահի վրեժխնդրությունից խուսափելով՝ Արցախի Իբրահիմ խանը իր գերդաստանով հեռացավ Դաղստան, իսկ շահը առանց դիմադրության հանդիպելու 1797 թ. գարնանը մուտք գործեց Շուշի: Շուշիում, սակայն, շուտով շահը սպանվեց իր սպասավորների ձեռքով, իսկ խուճապահար զորքը արագ վերադարձավ Արցախից՝ գահակալական նոր պայքարի սպասումով:

1798 թ. Իրանում գահ բարձրացավ Բաբա–խանը (Ֆաթալի շահ), որը փորձեց կրկին վերահաստատել և ամրապնդել Իրանի գերակայությունը Արևելյան Այսրկովկասում և վերականգնել Սեֆյան Իրանի նախկին սահմանները: Վրաստանի Գիորգի ԺԲ թագավորին ուղղված նրա վերջնագիրը խուճապի մատնեց Գիորգիին և ամրապնդեց Ռուսաստանի մտադրությունը՝ գրավելու Վրաստանը և ամրապնդվելու Հարավային Կովկասում: Գիորգի ԺԲ–ի կողմից ռուսական հպատակություն ընդունելու վերաբերյալ գրությունից հետո Վրաստան ժամանեց ռուսական զորամաս, որի օժանդակությամբ 1800 թ.՝ Գիորգի թագավորի մահից հետո, իրականացվեց Վրաստանի միացումը Ռուսաստանին: Այդ հանգամանքը առավել ընդարձակեց Այսրկովկասի համար պայքարի աշխարհագրությունը: Այն հայտնվեց նաև անգլո–ֆրանս–ռուսական հակամարտության ոլորտում: Ֆրանսիայի և Անգլիայի դրդմամբ Իրանի Ֆաթալի շահը Վրաստանը վերադարձնելու նպատակով Ռուսաստանի դեմ պատերազմական գործողությունների սանձազերծումով հնարավորություն ընձեռեց Ռուսաստանին ծավալելու հակահարձակումը և գրավելու նաև Գանձակի, Շաքիի, Շամախիի և Բաքվի ու Դերբենդի խանությունները: Արևելյան Այսրկովկասի, ինչպես նաև Արցախի միացումը Ռուսաստանին ամրագրվեցին 1813 թ. Արցախի Գյուլիստան ամրոցում ստորագրված ռուս–իրանական պայմանագրով:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ԱՅՍՐԿՈՎԿԱՍԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աղվանից մարզպանության շրջանում (428–651 թթ.) Աղուանքի բնակչության համար որպես գրական լեզու ծառայում էին հայերենը և «աղվաներենը», իսկ պարսից արքունիքի հետ հարաբերություններում՝ պարսկերենը: Քրիստոնեության տարածումը դյուրացնելու նպատակով Մեսրոպ Մաշտոցի կողմից ստեղծվել էր նաև աղուանից այբուբենը, ու թարգմանվել էին ծիսական գրականության որոշ երկեր: Մաշտոցյան այբուբենով գրված վիմագիր արձանագրությունների մնացորդներ հայտնաբերվել են ճարտարապետական կառույցների պեղումների ժամանակ, իսկ ձեռագիր մատյանների կրկնագիր նմուշներ հայտնաբերվել են Սինայի Ս. Կատարինե վանքում:

Մարզպանության վերացումից և արաբական տիրապետության հաստատումից հետո Գանձակի, Շիրվանի ու Դերբենդի վարչական միավորների ձևավորումով միջէթնիկ հարաբերությունների ժամանակ կիրառում է ստացել նաև արաբերենը: Արաբերենը կիրառում է ստացել նաև վիմագիր արձանագրություններում և տապանաքարերի վրա, որոնց համահավաք հրատարակությունները իրականացվել են նորագույն հետազոտողների ջանքերով:

Եթե Առանում (իմա՝ Հայոց Աղուանքում) տիրապետող էր հայկական մշակույթը (Մովսես Դասխուրանցի, Հովհաննես Իմաստասեր, Մխիթար Գոշ, Դավիթ Ալավկաորդի, Կիրակոս Գանձակեցի, Վարդան Արևելցի և այլք, որոնք սերտորեն կապված էին նաև Կիլիկյան Հայոց պետականության հետ), և կար նաև պարսկական շերտը (Նիզամի), ապա Շիրվանի ու Դերբենդի տարածաշրջանում հիմնականում մնում էին պարսկերենն ու արաբերենը: Էթնիկական, դավանական ու լեզվական բազմազանությունը պայմանավորել է մշակույթի տարբեր բնագավառների բազմազանություն: Գանձակի և Շիրվանի իշխանապետությունների պալատներում ստեղծագործում էին Խաղանին, Ֆալաքին, Նիզամին և այլք: Նիզամին հեղինակ է բազմաթիվ ներբողների, ղազալների, քառյակների, որոնք արտացոլում էին պարսից գրականության հիմնական միտումները: «Խոսրով և Շիրին» պոեմում Նիզամին բազմիցս հիշատակում է Հայաստանը, որտեղ պարսից արքա Խոսրովի հրամանով փնտրում էին գեղեցիկ հայուհուն: Խաղանին ևս, որ մի շրջան շիրվանշահերի արքունական երգիչն էր, ներբող-ղասիդեն հասցրեց իր զարգացման գագաթնակետին: Նա վերնախավային արվեստի գաղափարակիր էր: Հետաքրքիր են նրա պոեզիայում առկա

քրիստոնեական թեմաներն ու մոտիվները, սիրով Հայաստանին նվիրված տողերը, որ հավանաբար նաև նրա մոր քրիստոնյա լինելու արդյունքն էին:

Շիրվանի բնակչության էթնիկ կազմի մեջ վաղագույն ժամանակներից էական մաս էին կազմում հայերը, ինչը շարունակվեց մինչև ուշ միջնադար: Անտոն Ջենկինսոնի հաղորդման համաձայն, որը 1560-ական թվականներին այցելել էր Շիրվան և մասնավորապես Շամախի, այն բնակեցված էր գլխավորապես հայերով[62]: Հայ բնակչությունը շարունակում էր իր համայնքը ունենալ նաև Դերբենդում[63]: Բիլդիից Դերբենդ ընկած ճանապարհին գտնվող Հայկական կոչվող գյուղը նավահանգիստ ուներ Կասպից ծովի ափին: Հայազգի բնակչություն է արձանագրել Շամախիում նաև Ադամ Օլեարիուսը, որը 1640-ական թթ. այցելել է Շամախի և հանգամանորեն տեղեկություններ քաղել բնակչությունից[64]: Նրա հաղորդմամբ՝ օսմանյան թուրքերը, պարսիկներից գրավելով Շամախին, քաղաքի պարիսպները ամրացրել են գերեզմանատներից հավաքած գերեզմանաքարերի միջոցով[65]:

Հայ բնակչության և նրա մշակութային ժառանգության առկայությունը փաստող վկայություններ մնացել են նաև նյութական մշակույթի հուշարձանների տեսքով: Մակար Բարխուտարյանցն իր այցելության ժամանակ արտագրել է Զողում պահպանված հայերեն տապանաքարերի արձանագրություններ, որոնք ընդգրկում են Հայոց Ի (20) = 571 թվականից մինչև 1680-ական թթ.: Դաղստանի Ռուտուլի շրջանի Աթթալ գյուղում պահպանված հայերեն արձանագրությամբ խաչարձանը թվագրվում է XII–XIII դդ.:

Ուշ միջնադարում աստիճանաբար տարածաշրջան են ներթափանցում նաև թյուրքալեզու ցեղախմբեր, որոնք հետզհետե ոչ միայն խաթարում են բնականոն էթնիկ զարգացումը, այլև ներմուծում են թյուրքերենը, որը, սակայն, ներկայացված էր հիմնականում որպես բանավոր մշակույթ: Գործընթացը ակնառու էր ինչպես Սեֆյան հարստության տիրապետության պայմաններում, այնպես էլ օսմանյան ռազմակալումների ընթացքում:

XVIII դարի Արևելյան Այսրկովկասի մշակույթի ասպարեզում կարևոր տեղ է զբաղեցրել աշուղական արվեստը, հայտնի են նաև Աղա Մասիհ Շիրվանիի, Մոլլա Փանահ Վագիֆի, Մոլլա Վելի Վիդադիի ստեղծագործությունները:

Տարածաշրջանում թյուրքերենով ստեղծագործած հեղինակները հիմնականում XIX–XX դարի գործիչներ են[66], ուստի հասկանալի են խորհրդային իշխանությունը

---

[62] «От моря город Шемаха находится в семи днях пути на верблюдах, но теперь он в большом упадке и населен главным образом армянами».

[63] Դերբենդում Հայոց գերեզմանատունը գտնվում էր քաղաքից երկու մղոն հարավ:

[64] «В городе 5 ворот. Улицы в обеих частях очень узки, с низкими каменными, глиняными и земляными домами; живут здесь персы, армяне и немного грузин; хотя каждая из этих наций и имеет свой особый язык, все они, как и вообще жители Ширвана, говорят по-турецки».

[65] «Турки, однажды, отняв Шемаху у персов и думая ее укрепить, как говорят, построили стены исключительно из надгробных плит, похищенных с персидских могил и собранных отовсюду». Sti՝u «Путешественники об Азербайджане», т. I, с. 269.

[66] Антология Азербайджанской поэзии, под редакцией В. А. Луовского и Самед Вургуна, Москва, 1939.

ների ջանքերը 1918 թ. թուրքական արշավանքի արդյունքում ստեղծված և ապա 1920 թ. Խորհրդային հայտարարված շինծու Ադրբեջան անվանված հանրապետության պատմության հորինման համար «ադրբեջանական» հայտարարելու ինչպես Մերձավոր Արևելքում, Իրանում և Միջին Ասիայում տարբեր լեզուներով (պարսկերեն, թյուրքերեն, արաբերեն) ստեղծագործած հեղինակների երկերը, այլև նախորդ դարերի հայկական մշակութային հուշարձանների՝ որպես «աղվանական» ներկայացնելու և ադրբեջանական հայտարարելու կեղծարարությունները, որոնք լայն թափ ստացան հատկապես 1930–40-ական թթ. հետո:

2. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Բուն Աղուանքի վաղքրիստոնեական մոնումենտալ ճարտարապետության հուշարձաններից քչերն են պահպանվել, սակայն մեզ հասած սակավաթիվ բազիլիկ և գմբեթավոր եկեղեցիները վկայում են, որ «Աղվանքի վաղմիջնադարյան ճարտարապետության կազմավորման հարցում առավել նշանակալից է եղել հայկական ճարտարապետության դերը, հանգամանք, որն իր բավարար բացատրությունն է գտնում ոչ միայն երկու երկրների՝ ժամանակակից պատմիչների կողմից վկայված տնտեսական և քաղաքական սերտ կապերում, այլև Աղվանքի եկեղեցու՝ հայկական եկեղեցուց կախված լինելու հանգամանքում»:

Աղուանքի պահպանված հնագույն հուշարձանը՝ Ղումի (Կում) եռանավ բազիլիկը (VI դ.), իր հորինվածքի առանձնահատկություններով առնչվում է Հայաստանի արտաքին սրահով նմանատիպ բազիլիկներին (Երերույք, Դվին): Մինգեչաուրի միանավ բազիլիկի պեղումներով հայտնաբերվել է դրա 641 թ. հայերեն շինարարական արձանագրությունը: Դա ակնհայտ վկայում է եկեղեցին հայ քարագործ վարպետների կողմից կառուցված լինելու մասին:

Ինքնատիպ են Աղուանքի տարածքում պեղումներով բացված երկու կենտրոնագմբեթ հուշարձանների (Քիլիսադաղ, Մամրուխ) հորինվածքները: Երկուսն էլ ունեն շրջանաձև դահլիճ և արևելյան կողմում՝ ընդհանուր ծավալից դուրս եկող զույգ, կլոր հատակագծով ավանդատներ: Ջաքաթալայի մոտ գտնվող Մամրուխի եկեղեցին արևելքում խորան ունի, և գմբեթը բարձրանում է դահլիճի կենտրոնում կանգուն չորս մույթերի վրա: Իսկ Կուտկաշենի մոտի՝ Վանքասար (Քիլիսադաղ) հուշարձանի գմբեթը դրված է դահլիճում շրջանաձև կանգուն ութ գլանաձև սյուների վրա: Խորանի բացակայությունը ենթադրել է տալիս, որ կառույցը հավանաբար եղել է ոչ թե եկեղեցի, այլ մկրտարան: Այս հուշարձանների շինարարական տեխնիկան (շարվածքում կիսամշակ և անմշակ քարեր ու աղյուսի կիրառում) Աղուանքի ճարտարապետության առանձնահատկությունն էր:

Աղուանքի վաղմիջնադարյան հուշարձաններից նշանավորը և հանրահայտը Լյակիթի զվարթնոցատիպ եկեղեցին է: Այն քառախորան է, շրջանց սրահով, կառուցված թեթևակի մշակված գետաքարով (միայն մուտքերի եզրերն են սրբատաշ քարից): Իսկ խորանների սյուները և գմբեթակիր մույթերը շինված են թրծված աղյուսով:

Լյակիթի եկեղեցին Զվարթնոցի տաճարի փոքրաչափ ու պարզունակ կրկնությունն է, միայն մի տարբերությամբ՝ այստեղ, ինչպես և Մամրուխում և Վանքասարում (Քիլիսադաղ), առաջին հարկաբաժնի բոլորաձև ծավալից դուրս են գալիս խորաններով զույգ ավանդատները: Ըստ Ն. Տոկարսկու հավանական ենթադրության՝ Լյակիթի եկեղեցին կառուցել է աղուանից իշխան Ջիվանշիրը 660 թ.՝ տեսնելով արդեն կառուցված Զվարթնոցի տաճարը և տպավորվելով, ինչպես Բյուզանդիայի կայսր Կոնստանտը, որոշել է իր երկրում կառուցել նմանատիպ մի եկեղեցի՝ խնդրելով Ներսես Գ Շինարար կաթողիկոսին Զվարթնոցի վարպետներից: Հայ քարագործների մասնակցության ապացույցն է Լյակիթի արտաքին ճակատների դեկորատիվ կամարաշարի կիսասյուներից մեկի վրա փորագրված հայերեն գրանշանը:

VIII դ.՝ արաբական տիրապետության հաստատումից հետո, Աղուանքում (ինչպես և Հայաստանում) եկեղեցաշինությունն ընդհատվեց, իսկ իսլամի տարածումով ու սելջուկյան տիրապետության հաստատումով պատմական Աղուանքի տարածքում ճարտարապետությունը զարգացավ միանգամայն այլ ուղղությամբ:

Սելջուկյան պետության քայքայումից հետո Աղուանքի տարածքում կազմավորված Շիրվանի իշխանությունում ձևավորվեց շիրվան-ապշերոնյան ճարտարապետական դպրոցը, որի կենտրոններն էին Շամախին և Բաքուն:

Իշխանության մայրաքաղաք Շամախին բազմիցս ավերվել է երկրաշարժներից, ինչպես նաև Նադիր-շահի կողմից, և նրա ճարտարապետական հուշարձաններից քչերն են պահպանվել: Դրանց թվում են Ջումա մզկիթը (XVII դ.), Շահական և այլ քարավանատները (XVII դ.), ծածկած շուկան, շիրվանշահերի պալատը, ինչպես նաև Շամախիի մոտ գտնվող Գյուլիստան ամրոցը և այլն: Դրանք բոլորը կառուցված են քարով, ունեն նվազագույն հարդարանք, որի հիմնական տարրերն են երկրաչափական զարդանախշերը և արաբատառ գեղագիր մակագրությունները (հիմնականում՝ Ղուրանից մեջբերումներ):

Շամախին բաժանված էր 26 թաղերի՝ «մահալների», իսկ ընդհանուր կառուցապատումը՝ երկու մասի. հարավային՝ հատկացված արհեստավորներին ու չքավոր բնակչությանը, և հյուսիսային, որտեղ տեղադրված էին պալատը և մեծահարուստների առանձնատները: Քաղաքի երկու մասերն էլ շրջապատված էին առանձին պարիսպներով:

Շիրվանի ճարտարապետական դպրոցին պատկանող հուշարձաններով, ընդ որում՝ լավ պահպանված, հարուստ է Ապշերոնյան թերակղզին, հատկապես իշխանության ժամանակավոր մայրաքաղաք Բաքուն: Քաղաքի հին մասի՝ «Իչերի Շհարի» միջնաբերդում է գտնվում շիրվանշահերի պալատական համալիրը (XIII–XV դդ.), որի բուն պալատի երկհարկանի շենքն ունի բավականին պարզունակ ճարտարապետություն և աղքատիկ հարդարանք: Ուշագրավը ութանիստ, կամարաշարով շրջապատված, գմբեթածածկ Դիվան-խանեի շենքն է, որի շքամուտքն առանձնանում է իր բարձրությամբ ու հարուստ գեղարվեստական մշակումով: Համալիրի կազմում են դամբարանը՝ «Թյուրբեն» (1435 թ.), և պալատական մզկիթը (1442 թ.):

Շիրվանի իշխանության բերդերն ունեն ընդհանուր հորինվածք. պարսպապատ բակի կենտրոնում գտնվում է բարձր, գլանաձև ծավալով աշտարակ (դոնժոն), որը ներսում բաժանվում է գմբեթածածկ հարկաբաժինների: Դրանց բնորոշ և լավ պահպանված օրինակներն են եռահարկ աշտարակով Մարդակյանի ամրոցը (1232 թ.) և Բաքվում Աղջկաբերդը (Կըզ-կալասի)՝ 27 մ բարձրությամբ և ութ գմբեթածածկ հարկաբաժնով:

Ուշ միջնադարում կազմավորված Շաքիի խանության նշանակալից ճարտարապետական հուշարձանները պատկանում են XVII դ. երկրորդ կեսին:

Խանության կենտրոն Շաքիի (հետագայում վերանվանված «Նուխի», այժմ նորից՝ «Շեքի») խանական պալատը տեղադրված է քաղաքի բարձրադիր մասում՝ միջնաբերդում (1790 թ.): Այն երկհարկանի է՝ վերևում միջանցիկ դասավորված սենյակներով, կենտրոնում հանդիսությունների դահլիճով: Քաղաքում կային XVIII դ. բազմաթիվ քարավանատներ, բաղնիքներ, մզկիթներ:

Դերբենդի ամիրայության կենտրոն, Կասպից ծովի ափին գտնվող Դերբենդ քաղաքը դեռ վաղ միջնադարից հայտնի էր իր ամրոցով, որը հիմնովին վերակառուցվեց XVII–XVIII դդ.: Ամրոցը բաղկացած է բլրի վրա տեղադրված միջնաբերդից («Նարին-Կալա») և նրանից դեպի ծովը ձգվող, միմյանց զուգահեռ երկու հզոր պարիսպներից, որոնք փակում էին Կասպից ծովի և Կովկասյան լեռնաշղթայի միջև անցումը: Դերբենդի վերին՝ հին մասը միջնադարյան արևելյան քաղաքին բնորոշ կառուցապատում ունի՝ նեղ փողոցներով, դեպի ուր դուրս են գալիս բնակելի տների խուլ պատերը: Միջնաբերդում են Ջումա մզկիթի խոշոր համալիրը՝ մինարեթով ու մեդրեսեով, խանական դամբարանի (1788 թ.) ութանիստ կենտրոնագմբեթ շենքը և պալատի (XVIII դ. երկրորդ կես) ավերակները:

XIX դ. Դերբենդի ամրոցի տարածքում ստվար հայ գաղթօջախի կողմից կառուցվեցին քաղաքատիպ երկհարկանի բնակելի բազմաթիվ տներ և հայկական խոշոր, գմբեթավոր Ս. Աստվածածին եկեղեցին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, Աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Եր., ՀՀ ԳԱ հրատ., 1990:

«Արաբական աղբյուրներ»: Գ, Արաբ մատենագիրներ, Թ–Ժ դարեր: Ներածությունը և բնագրերից թարգմանությունը՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 2005:

Եսայի Հասան Ջալալեանց. Պատմութիւն համառօտ Աղուանից երկրի, Երուսաղէմ, 1868:

Իբն ալ-Ասիր: Թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1981:

Կարապետյան Ս., Բուն Աղուանքի հայերեն վիմագրերը, Գիրք Ա, Երևան 1997:

Կարապետյան Ս., Կուրի ձախափնյակի հայկական հուշարձանները, Երևան:

Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1961, 427 էջ:

Կիրակոսյան Գ. Ե., Հայաստանը Լանկ-Թամուրի և թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում (1386–1500 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1997, 369 էջ:

Բարխուտարեանց Մակար եպս., Աղվանից երկիր և դրացիք, Թիֆլիս, 1893: Երևան, 1999, էջ 64–65:

Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, Քննական բնագիրը և ներածությունը՝ Վ. Առաքելյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:

Մնացականյան Ասատուր, Աղվանից աշխարհի գրականության շուրջ, Երևան, 1966:

Սվազյան Հ., Աղվանից աշխարհի պատմություն, Երևան, 2006:

Տեր-Ղևոնդյան Ա., Քուստ ի Կապկոհ վարչական միավորի վերապրուկները խալիֆայության ժամանակ, «Տեղեկագիր», 1956, թիվ 9:

Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Երևան, ԵՊՀ հրատ., 2003, էջ 26–30:

Айтберов Т. М., Второе Албанское царство и его роль в истории аварского народа, Махачкала, 2008.

Акопян А. А. Албания-Алвуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987.

Алиев Ф. М. Антииранские выступления и борьба против турецкой оккупации в Азербаиджане в перв. половине XVIII в. Баку, 1975.

Аликберов А. К., Об авторе исторической хроники XI в. "Та'рих Баб ал-абваб ва Ширван", – Рукописная и печатная книга в Дагестане. Сборник статей, Махачкала, 1991.

Аликберов А. К., Эпоха классического ислама на Кавказе. Абу Бакр ад-Дарбанди и его суфийская энциклопедия Райхан ал-хака'ик (XI–XII вв.), Москва, 2003.

Аликберов А. К., Сасанидская титулатура правителей Кавказа по арабо-мусульманским источникам, – Сборник докладов, прочитанных на Международном научном симпозиуме "Государственность Кавказской Албании и ее этнокультурное наследие" (Ереван, 3–5.09.2007), Москва, 2013

Артамонов М. И., История хазар, Ленинград, 1962.

Арунова М. Р., Ашрафян К. З. Государство Надир-шаха. М., 1958

Арутюнян Б. А., Административное деление закавказских владений Сасанидского Ирана согласно труду Елишэ, – «Кавказ и Византия», вып. 1, Ереван, 1979, էջ 19–35:

Джангидзе В. Т. Ингилойский диалект в Азербайджане (Вопросы грамматической и лексической интерференции), Тбилиси, «Мецниереба», 1978.

Ашурбейли С. Государство Ширваншахов. Баку, 1983.

Бартольд В. В. Место Прикаспийских областей в истории мусульманского мира. Бартольд В. В.– Сочинения. В 9-ти томах. Том 2 (часть 1). М. Изд. восточной литературы 1963.

Бартольд В. В., Ширваншах,– Сочинения, т. II, ч. I, М., 1963

Бокареев Е. А. Сравнительно-историческая фонетика восточнокавказских языков, Москва, «Наука», 1981.

Босворт К. Э., Мусульманские династии, М. 1971.

Джидди Г. А. Средневековый город Шемаха (IX–XVII века) (историко-археологическое исследование). Баку, 1981

Дубровин Н. Ф. Поход графа В. А. Зубова в Персию в 1796 г.// журн. "Военный сборник". СПб. 1874. N 2–6

Захаров В. А., История Кавказской Албании в исследованиях академика И. А. Орбели и проблема искажения истории Армении и Арцаха в Азербайджане, Москва, Центриздат, 2012.

Кулешов В. С. Вновь выявленные монеты правителей Восточного Закавказья в собрании Эрмитажа.– Сообщения Государственного Эрмитажа, вып. LXXII. С. Петербург, 2014. С. 203–212.

Крымский А. Е., Низами и его современники, Баку, "Элм", 1981.

Лебедев В. П., Марков Д. Б., Койфман А. А. Монетное дело и монетное обращение Ганджинского эмирата Шаддадидов, М., Нумизмат. Литература, 2006.
Магомедов Л. М. История Дагестана. Махачкала, 1961.
Минорский В. Ф., История Ширвана и Дербенда, Москва, 1963.
Пахомов Е. А., О Дербендском княжестве XII–XIII веков – "Известия Азерб. Гос. Научно-исследовательского института", т. I, вып. II, Баку, 1930, с. 1–12
Пахомов Е. Арабские и персидско-иранские феодалы в Азербайджане X–XI вв.,-Сборник Памяти академика Н. Я. Марра, Москва-Ленинград, 1938, с. 416–428.
Петрушевский И. П., Очерки по истории феодальных отношений в Азербайджане и Армении в XVI–начале XIX вв., Ленинград,, 1949.
Путешественники об Азербайджане, т. I. Составил З. И. Ямпольский, Баку, изд. АН АзССР, 1961.
Саудов М.-С., А. Р. Шихсаидов, "Дербенд-Наме" (к вопросу об изучении), "Восточные источники по истории Дагестана", Махачкала, 1980
Топуриа П. Государственные образования Восточного Закавказья XI–XII вв. Тбилиси, 1975. 32–46 (на груз. яз).
Тревер К. В., Очерки по истории и культуре Кавказской Албании. IV в. до н. э. – VII в. н. э., Москва-Ленинград, Изд. АН СССР, 1959, 392 с.
Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Пер. с арабского, предисловие, комментарии… З. М. Буниятова, Баку, Изд. "Элм", 1973.
Шихсаидов А., О борьбе Дагестанцев против иранских завоевателей. Дагестанские исторические сочинения. Москва, 1993.
Якобсон А. Л., Архитектурные связи Кавказской Албании и Армении, «ՊԲՀ», 1977, N 1.
ასათიანი ნ.,საქართველო-შარვანის პოლიტიკური ურთიერთობა XII საუკუნეში,- "თბილისის სახელმწიფო უნივერსიტეტის შრომები" t. 125, Tb., 1968.
The Caucasian Albanian Palimpsests of Mount Sinai, Vol. I–II, Edited by Jost Gippert, Wolfgang Schulze, Zaza Aleksidze, Jean-Pierre Mahé, Brepols Publishers n. v., Turnhout, 2008.
Floor Willem, Safavid Government Institutions, Costa Mesa, California, 2001.
Minorsky V., Studies in Caucasian History. London, 1953.
Minorsky V., A History of Sharvan and Darband in the 10th–11th centuries, Cambridge, 1958.
Minorsky V. Sahl ibn Sunbat of Shakki and Arran// Causasica-IV. BSOAS. Vol. Part 3. London, 1953. PP. 506–514
Savory Roger M., Studies on the History of Safavid Iran, London, 1987.
Savory R., Iran under the Safavids, Cambridge, 1980.
Zambaur W. Manuel de Généalogie et de Chronologie pour l'histoire d'Islam. Hanover, 1955.
The Cambridge History of Iran, vol. 4, Cambridge, 1975.
Vardanyan A., On the coinage of the Sallarids and contemporary military generals in Iranian Adharbayjan in the tenth century AD, JONS 191 (2007, pp. 8–19).

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Արազա Մեհմեդ, 424
Արաղա, 58, 503
Արբաս, 40, 78, 228, 294
Արբաս Ա, 78, 79, 80, 81, 82, 90, 117, 118, 124, 345, 350, 351, 352, 357
Արբաս Բ, 83, 124, 353
Արբաս Գ, 96, 97
Արբաս միրզա, տես Արբաս Ա, 78
Արբաս (կաթողիկոս), 481, 482
Արբասյաններ, 40, 41, 42, 43, 44, 228, 233, 235, 237, 241, 243, 245, 246, 279, 291, 293
Արդ ալ-Ազիզ Սաուդ, 271
Արու ալ-Ալա ալ-Մաարի, 238
Արդ ալ-Հայ Գարդիզի, 120
Արդ ալ-Մալիք, 37, 226, 308, 484, 485, 486
Արդ ալ-Մալիք (Դերբենդի ամիրա), 491, 492, 494, 495
Արդ ալ-Մալիք իբն Հիշամ, 288
Արդ ալ-Ռահման իբն Արդ ալ-Հաքքամ, 288
Արդ ալ-Ռազզաղ իբն Նաջաֆկուլի Դունբուլի, 126
Արդ ալ-Ռահման ալ-Ջաբարտի, 265
Արդել Ուահիդ ալ-Մարրաքուշի, 290
Արդուլ Համիդ Ա, 410
Արդուլլա, 96, 67
Արո Տպղնցի, 312
Աբրահամ Աղբաթանեցի, 305, 306
Աբրահամ Անկյուրացի, 199, 398
Աբրահամ Երևանցի, 433
Աբրահամ Կրետացի, 97, 435, 521
Արու Աբդալլահ Մուհամմեդ իբն Իդրիս աշ-Շաֆի, 286
Արու Ալի աթ-Թահունի, 282
Արու Ալի Հասան Թուսի, տես Նիզամ ալ-Մուլք, 53
Արու ալ-Աբբաս, 228
Արու ալ-Ֆարաջ Ռունի, 115
Արու աս-Սաջ, 491
Արու Բաքր (ելտկուզյան), 499
Արու Բաքր (խալիֆա), 33, 217, 218, 219
Արու Թահիր Ցազիդ իբն Մուհամմեդ, 491
Արու Թամմամ, 281
Արու Իսհաք Ալփ-Թեքին, 50

Արու Իսհաք Ինջու, 61
Արու Հանիֆա, 286
Արու Հանիֆա ալ-Դինավարի, 288
Արու Մանսուր իբն Յազիդ, 493
Արու Յուսուֆ, 291
Արու Նուվաս, 280
Արու Շաջջա Բուվայիի, 48
Արու Շուքուր Բալխի, 109
Արու Ջաֆար ալ-Մանսուր, 228
Արու Ջաֆար Մուհամմեդ իբն Ջարեր ալ-Թաբարի, տես ալ-Թաբարի, 289
Արու Սալիհ ալ-Արմանի, 231
Արու Սալիք, 109
Արու Սայիդ (թեմուրյան), 66, 67, 68
Արու Սայիդ (իլխան), 334, 335
Արու Ուբայդ ալ-Բաքրի, 291
Արու-լ-Խայսամ իբն Ահմադ, 492
Արուլ-Մուզաֆֆար Սեյֆ ադ-Դին, 499
Արու-լ-Ֆազլ Բեյհակի, 120
Արու-լ-Ֆաթհ խան Զենդ, 103
Արու-լ-Ֆարաջ Ռունի, 111
Արու-լ-Ֆիդա, 290
Արու-լ Քազեմ, 118
Արու-լ Ֆարաջ իբն ալ-Ջաուզի, 290
Արուլեթիսձեներ, 321
Ազաթոն, 152, 199
Ադամ Մեց, 277
Ադամ Օլեարիուս, 525
Ադիբ Սաբիր, 111
Ադիլ շահ, տես Ալի-ղուլի-միրզա Աֆշար, 100, 362
Ադրներսեհ, 308
Ադրներսեհ Բ, 311
Ադուդ ադ-Դաուլա, 48, 49
Ազաղ խան, 100
Ազրմներ, 268
Աթահյահ, 280
Աթանագիլդս, 147
Աթանաս, 362
Աթանաս Աթոնացի, 208
Աթթար, 113
Աթիլա, 140
Ալաեդդին, 393, 395, 456

Ալաեդդին Սաբի, 458
Ալավերդի խան, 422
Ալա ադ-Դին Աթա Մալիք իբն Մուհամմեդ Ջուվեյնի, 121
Ալա ալ-Դին Մուհամմեդ, 237
Ալա ադ-Դին Քեյկուբադ Ա, 387
Ալա ադ-Դին Քեյկուբադ Բ, 388
Ալա ադ-Դին Քեյկուբադ Գ, 389
Ալա-ուդ-Դեվլե, 400, 403
Ալեքս Ե, 183
Ալեքս (ստրատեգոպուլ), 188
Ալեքսանդր (վրաց Բաքար արքայազնի որդին), 367
Ալեքսանդր Ա (Վրաստանի թագավոր), 337, 338, 340
Ալեքսանդր Ա (Կախեթի թագավոր), 341
Ալեքսանդր Ա (ցար), 346, 347, 370
Ալեքսանդր Բ (Իմերեթի թագավոր), 341, 348
Ալեքսանդր Բ (Կախեթի թագավոր), 347, 350
Ալեքսանդր Գ (Իմերեթի թագավոր), 356
Ալեքսանդր Ե, 370, 371
Ալեքսանդր Զ, 163
Ալեքսիոս Ա Կոմնենոս, 178, 191
Ալեքսիոս Բ Կոմնենոս, 180
Ալեքսիոս Գ Անգելոս, 183, 192
Ալի Աշտի փաշա, 457
Ալի բեյ, 265, 269
Ալի Բունապարդի փաշա, տես Նապոլեոն Բոնապարտ, 273
Ալի իբն Աբու Տալիբ, 220
Ալի իբն Խայսամ իբն Մոհամմեդ, 491
Ալի Թեփեդերելի, 443
Ալի-ղուլի-խան, 78
Ալի-ղուլի-միրզա Աֆշար, 100
Ալի Մարդան խան, 522
Ալի Մուրադ խան Զենդ, 522
Ալի-Շահ, 117
Ալի Ռիզա, 118
Ալիդներ, 48
Ալլահվերդի խան, 80
Ալխաս Միրզա, 405, 512, 513
Ալվանդ, 70, 73, 401
Ալփ Արսլան, 53, 120, 169, 172, 173, 236, 316, 384, 385, 495, 496
Ալ-Ազիզ, 250
Ալ-Ամին, 280, 283

Ալ-Աշրաֆ Թուման բեյ, 249
Ալ-Բալխի, 291
Ալ-Բասան, 495
Ալ-Բիրունի, 277
Ալ-Դիմաշկի, 291
Ալ-Զահիր, 250
Ալ-Թաբարի, 289
Ալ-Իդրիսի, 291
Ալ-Իմադ, 233
Ալ-Խորեզմի, 291
Ալ-Կադիր, 51
Ալ-Կալկաշանդի, 291
Ալ-Կայիմ, 53, 236, 497
Ալ-Կինդի, 278
Ալ-Հադի, 228
Ալ-Համդանի, 291
Ալ-Հարիրի, 282
Ալ-Հումայդի, 289
Ալ-Մահդի, 228, 280
Ալ-Մոհադներ, 290
Ալ-Մուսթադի, 241
Ալ-Մուսթազհիր, 497
Ալ-Մուսթակֆի, 48
Ալ-Մուստանսիր, 247
Ալ-Մուստասիմ, 502
Ալ-Նասիր (խալիֆա), 236, 237
Ալ-Նասիր (մամլուքյան սուլթան), 248
Ալ-Զազար, 440
Ալ-Զահիզ, 282
Ալ-Ռազի, 107
Ալ-Ռայհանի, 285
Ալ-Վակիդի, 288
Ալ-Բամիլ Աբու ալ Ֆավարիզի, 384
Ախիջուկ, 505
Ախսարթան, 495, 496
Ախսիտան Ա իբն Մանուչիհր, 499
Ախսիտան Բ, 502, 503
Ախսիտան Գ, 503
Ակ կոյունլու, 67, 68, 69, 70, 72, 73, 89, 338, 340, 346, 508, 509, 510, 511
Ահարոն, 376
Ահմադ (Զելայիրյան սուլթան), 63, 65, 66, 508

Ահմադ (ակ կոյունլու), 69, 70
Ահմադ ալ-Հաշիմ, 492
Ահմադ բին Յահյա բին Զաբեր ալ-Բալազուրի, 288
Ահմադ իբն Աբդ ալ-Մալիք ալ-Հաշիմ, 492
Ահմադ իբն Հանբալ, 287
Ահմադ Զազզար, 270
Ահմադ փաշա, 96, 97
Ահմադ իբն Մուհամմեդ իբն Յազիդ, 492
Ահմեդ Ա, 80, 424
Ահմեդ Բ, 429, 430
Ահմեդ Գ, 431, 432, 433, 434, 449
Ահմեդ խան (Ղայթաղի տիրակալ), 517
Ահմեդ փաշա (բանաստեղծ), 457
Ահմեդ իբն Աբդ ալ-Մալիք ալ-Հաշիմ, 491
Ահմեդ Նեդիմ, տես Մյունեջիմ Բաշի, 458, 461
Ահմեդ Զնդեթ, 452
Ահմեդ Վասըֆ, 461
Աղա Մասիհ Շիրվանի, 525
Աղա Մուհամմեդ խան Ղաջար, 104, 105, 106, 125, 369, 522, 523
Աղա Մուհամմեդ Ռեզա Շիրազի, 125
Աղբուղա, 342
Աղեքսանդր Բյուզանդացի, 450
Աղլաբիներ, 229
Ամաղ, 111
Ամալրիկ, 240
Ամիանոս, 300
Ամիլախվարիներ, 343
Ամին Մաալուֆ, 242
Ամիր Ամիրան Ումար, 499
Ամիր (Ֆաթիմյան խալիֆա), 232
Ամիր Խոսրով Դեհլևի, 111, 115
Ամիր Սադր ադ-Դին Սուլթան Իբրահիմ Ամինի, 123
Ամիրգունա, 425
Ամջազադե Հուսեին, 431
Այբակ, 246
Այյար Սամաք, 110
Այնի Ալի, 460
Այյուբյաններ, 240, 242, 245, 246, 249, 254, 294
Այշա, 217, 218, 220
Անահիտ, 16, 17
Անանիա, 474

Անաստաս, 141, 478
Անաստաս Բ, 158
Անաստաս վարդապետ, 253
Անդրեյ Բոգոլյուբսկի, 324
Անդրոնիկ Դուկաս, 173
Անդրոնիկոս Ա Կոմնենոս, 180
Անդրոնիկոս Գ Փոքր, 195
Անդրոնիկոս Բ Պալեոլոգոս, 189
Անթեմիոս Թրալացի, 207
Աննա (Բարսեղ Բ քույրը), 168
Աննա (Էպիրոսի դեսպոտ Նիկիփորի այրին), 189
Աննա (վրաց թագուհի), 336
Աննա Իոանովնա, 435
Աննա Սավոյացի, 196
Անվարի, 111
Անտոն (մծիգնոբարթուխուցես–ձղոնդիդել), 323, 365
Անտոնիո դե Գուվեա, 422
Անուշիրվան իբն Ցազիդ, 493
Աշոքփաշազադե, 392, 393, 458, 459
Աշոտ Բագրատունի (կյուրապաղատ), 310
Աշոտ Բագրատունի (պատրիկ), 484
Աշոտ Ա Բագրատունի, 229
Աշոտ Երկաթ, 175
Աշոտ Գ, 168
Աշրաֆ, 94, 95
Աշրաֆ Կանսոհ ալ–Ղաուրի, 256, 403
Աշուշա, 301, 472, 473
Ապողինար, 151
Ապսիմար, տե՛ս Տիբերիոս Գ, 157
Ապուլի, 487
Ապուխանչեր, 421
Առաքել Բաղիշեցի, 199, 398
Ասադ ալ–Ազըմ, 268
Ասադ ալ–Դին Շիրկուհ, 240
Ասադ իբն Ցազիդ, 490
Ասաղուլլա խան, 84
Ասողիկ, 311, 483, 484, 485
Ասպագուր, 298, 300
Ասպարուխ խան, 156
Ասջադի, 111
Աստվածատուր (վարդապետ), 444

Ատրներսեհ, 487, 488
Ավ Գիորգի, 346, 347
Ավգարոզ Բանդայիսձե, 342
Ավետիք, 448
Ավիցեննա, տե՛ս Իբն Սինա, 107
Ավրելիանոս, 139
Արաս խան, 515
Արգիրոսներ, 171, 174
Արիստակես Լաստիվերցի, 384
Արիստոտել, 202
Արծրունիներ, 190, 489
Արկադիոս, 132, 139
Արղուն (իլխան), 58, 59
Արշակ, 21, 468
Արշակ Բ, 28, 300
Արշակունիներ (հայ), 27, 28, 29, 472
Արշակունիներ (պարթև), 17, 18, 26, 27, 28
Արչիլ (Արձյուղ), 300
Արչիլ (Շահնազար–խան), 354
Արսուկիսձե, 377
Արտամոնով Մ., 476
Արտաշես, 471, 472
Արտաշիր Ա Պապական, 17, 26
Արտավազդ, 160
Արտավան Ե, 17, 27
Արսեն (պատրիարք), 185, 188
Արսեն Իղալթոյեցի, 332
Արտուխյաններ, 385
Արփա–խան, 504
Ափրիդոն, 323
Աքեմենյաններ, 16, 17
Աֆշար, 71, 95,
Աֆշարներ, 97
Աֆրիդուն, 494, 495, 496, 497
Աֆրիդուն Ա, 497, 498
Աֆրիդուն իբն Մանուչիհր, 499

Բ

Բաբա Թահեր, 113
Բաբախան, տե՛ս Ֆաթհ Ալի շահ, 106
Բաբեկ, 42, 229, 487

Բաբինգեր Ֆ., 459
Բագրատ Բ, նաև Քարթլիի թագավոր Բագրատ Զ, 340, 341
Բագրատ Գ, 311, 314, 349
Բագրատ Գ (Իմերեթի թագավոր), 344, 348
Բագրատ Դ, 315, 316, 317, 318, 328
Բագրատ Ե, 336, 337
Բագրատ խան, 351
Բագրատունիներ, 169, 176, 229, 325, 329, 341, 343, 431
Բադր ալ-Դին ալ-Այնի, 291
Բալ'ամի (Աբուլ-Ֆադլ), 120
Բալաձորի, տես Ահմադ բին Յահյա բին Ջաբեր ալ-Բալազուրի, 308
Բալդուին Ա Ֆլանդրիացի, 181
Բալդուին Բ, 189
Բալխի, 109
Բակուր, 300, 471, 472
Բահիրա, 214
Բահրի մամլուքներ, 242, 246, 247, 248
Բահրամ բեկ, 23
Բահրամ ալ-Արմանի, տես Վահրամ Պահլավունի, 232
Բահրամ Միրզա, 123
Բահրամ Չուբին, 30, 149, 307
Բայազետ Ա Յըլդըրըմ (Կայծակ), 395
Բայազետ Բ, 400, 401, 402, 464
Բայանդուր (ցեղ), 67
Բայանդուր բեկ, 69
Բայբարս, 242, 246, 247
Բաշար իբն Բուրդ, 108, 280
Բաչու Նոյին, 387
Բարաթաշվիլիներ, 343
Բարկուկ, 248
Բարմաքիներ, 228, 283
Բարյատինսկի, 518
Բարսամուսես, 308
Բարսբայ, 248
Բարտոլդ Վ., 278, 279
Բարսեղ Ա Մակեդոնացի, 174, 175
Բարսեղ Բ Բուլղարասպան, 168
Բարսեղ Կեսարացի, 204
Բաքար, 359, 360, 362, 367
Բաքի, 457
Բեդրեդդին Սիմավի, 397

Բեկկեր Կ., 278
Բեհզադ, 107
Բենիամին, 472, 473, 474
Բեշքեն Օրբելյան, 338
Բեստամ Ջագիր, 508
Բերի Էգնատաշվիլի, 373
Բերտելս Դ., 278
Բերենգար Էստենացի, 190
Բերքե, 502, 503
Բեքա Ջաղելի, 334
Բիգուրդ, 512, 513
Բիղել, 111, 114
Բիյե փաս, 70
Բիյե փիշ, 70
Բլու Ջաքարե, 324
Բոլդվին, 238
Բոհեմունդ Անտիոքացի, 178
Բյորկլտաջա Մուստաֆա, 397
Բոննակ, 433
Բուիներ (Բուվեյիիներ), 48, 49, 53, 101, 229, 230, 236, 255, 289
Բուխտ-Նասսար, 494
Բուղա, 487, 490
Բուրբոններ, 436
Բուրխան Միրզա, 514
Բուրջի մամլուքներ, 248, 250
Բուքեյր իբն Մահան, 40

Գ

Գաբրիել, 30
Գագիկ (Կյուրիկյան), 310, 495
Գագիկ Ա, 315, 328
Գագիկ Բ, 169
Գալերիոս, 132
Գալուստ Աշտարակեցի, 366
Գաղերիանոս, 136
Գամրեկել Թորելի, 324
Գաստոն Վիետ, 233
Գարիտ Ժ., 470
Գարսևան ՃավՃավաձե, 368
Գելասիոս Կեսարացի, 299
Գենջ Օսման, 424

Գեորգ Ակրոպոլիտ, 185
Գեորգի Կաստրիոտա (Սկանդարբեկ), 396
Գերմանոս Բ, 192
Գերշասպ Ա իբն Ֆարրուխզադ, 500
Գթլմուշ, 384
Գիորգի Աթոսցի, 332
Գիորգ Դապս, 376
Գիորգի Ա, 314, 315, 341, 346
Գիորգի Բ (Վրաստանի թագավոր), 317, 318, 319
Գիորգի Բ (Իմերեթի թագավոր), 348
Գիորգի Գ (Վրաստանի թագավոր), 321, 322, 323, 333
Գիորգի Գ (Իմերեթի թագավոր), 355, 356
Գիորգի Դ, Գիորգի–Լաշա, 325
Գիորգի Ե Պայծառ, 334, 335, 336
Գիորգի Է, 337
Գիորգի Ը, նաև Կախեթի թագավոր Գիորգի Ա, 338, 340, 341
Գիորգի Ժ, 346, 350
Գիորգի ԺԱ, 354, 355, 356, 358
Գիորգի ԺԲ, 369
Գիորգի Ռուս, տե՛ս Յուրի Բոգոլյուբսկի, 324
Գիորգի Սաակաձե, 350, 351, 352, 375
Գիվի Ամիլախվարի, 361
Գրիգոլիսձեներ, 322
Գրիգոր (Սյունյաց իշխան), 34
Գրիգոր Ապիրատ, 192
Գրիգոր Ատրներսեհյան, 487
Գրիգոր Բակուրյան, 332
Գրիգոր Դարանաղցի, 420
Գրիգոր Լուսավորիչ, 299, 300, 305, 470
Գրիգոր Խանձթեցի, 312
Գրիգոր Համամ, 309
Գրիգոր Մամիկոնյան, 310, 483
Գրիգոր Նազիանզացի, 204
Գրիգոր Շղթայակիր, 449, 450
Գրիգոր Պարթև, տե՛ս Գրիգոր Լուսավորիչ, 305
Գրիգոր Սարկավագ, 312, 313
Գրիգոր Է (Հռոմի պապ), 173
Գրիգոր Ժ (Հռոմի պապ), 189
Գող Վասիլ, 390
Գորգին խան, տե՛ս Գիորգի ԺԱ, 93
Գորդլևսկի Վ., 391, 456

Գուարամ, 307, 311
Գուաֆ, 148
Գուրազ, 148, 303
Գուրգեն (Գուարամ), 307
Գուրգեն, 302, 312, 314, 480
Գուրնե Ֆ., 480

Դ

Դաղիանի, 338, 348, 354, 356
Դամադ Իբրահիմ, 431, 434
Դանիշմենդյաններ, 386
Դավիթ Անհողին, 310, 312
Դավիթ Կոմնենոս, 187
Դավիթ Խարբերդցի, 200
Դավիթ Բ (Իմամղուլի խան), 359, 360
Դավիթ Գ Կյուրապաղատ, 311
Դավիթ Դ Շինարար, 318
Դավիթ Ե, 321
Դավիթ Թ, 336
Դավիթ Ժ, 343, 344, 346, 347
Դավիթ ԺԱ (Դավութ–խան), 345
Դավիթ Ալավկաորդի, 524
Դավիթ Նարին, 331
Դավիթ Սոսլան, 324, 325
Դավիթ Ուլու, 331
Դավիթ (աստվածաշնչյան), 202
Դարեհ Ա, 17
Դարեջան, 369
Դե Բոնևվալ, 441
Դե Տոտտ, 441
Դելի Հասան, 420, 421, 422
Դեմետրե, 315, 319, 497
Դեմետրե (Դեմնա), 321
Դեմետրե Ա, 321, 333, 499
Դեմետրե Բ Անձնուրաց, 331, 334
Դենշապուհ, 29
Դեսպինա, 68, 69
Դերգահ Կուլի բեկ, 518
Դերվիշ Մուհամմեդ, 514
Դիմիտրե, 308
Դիմիտրի, 181

Դինար, 310, 488
Դիոգենեսներ, 170
Դիոկղետիանոս, 132
Դիոսկորոս, 139
Դովլաթշահ Սամարղանդի, 110
Դորոթեոս, 192, 204
Դուկաներ, 170
Դ'Օսսոն Մ., 412

Ե

Եզովպոս, 202
Ելեն, 357
Ելիզավետա, 363
Ելտկուզյաններ, 385
Եկատերինա Ա, 520
Եկատերինա Բ, 440, 441
Եկատերինա դը Կուրտընիե, 189
Եղիա Արճիշեցի, 486
Եղիշե, 474, 475, 476
Եսայի (պատրիարք), 84, 193
Եսայի (Դիզակի իշխան), 487
Եսայի Հասան Ջալալյան, 517
Եսվաղեն, 471, 473, 474, 475
Եվգենիոս Սավոյացի, 432
Եվդոկիա, 172
Եվդոքսիա, 139
Եվստաթեոս, 174
Եվտիքես, 151
Եվտիքիոս, 139
Եվտիքիոս Սաիդ իբն ալ-Բաթրիկ, 289
Եվտոքիոս Ասկալոնցի, 201
Եվտրոպիոս, 138
Երեմիա եպիսկոպոս, 471, 475
Երեմիա Չելեպի Քյոմուրճյան, 200, 393, 394
Երեմյան Ս., 476
Եփրեմ Կրտսեր, 332

Զ

Զահիր ալ-Ումար, 270
Զահիր Ֆարյաբի, 111
Զանգիներ, 239, 240
Զաքարե Զաքարյան, 328, 331, 386
Զաքարիա (պատրիարք), 452, 453
Զաքարիա Կաղզվանցի, 453
Զաքարիա Վանեցի, 447
Զաքարյաններ, 322, 324
Զաֆիրե, 426
Զենդեր, 100, 103, 104, 522
Զեքի խան Զենդ, 101
Զիաղոլու, 521
Զիյարիներ, 48
Զոհակ, 34
Զուբով Վ., 106, 369, 523
Զուլքադար, 71
Զուլֆիղար բեկ, 74
Զուլֆիղար խան, 516

Է

Էլմաս Մեհմեդ փաշա, 430
Էլվենդ Միրզա, տես Ալվանդ, 511
Էմերիկ Թեքելի, 428
Էմիր Վելի, 63
Էվլիա Չելեբի, 459, 460
Էվկլիդես, 201
Էրթողրուլ, 392
Էքվթիմե (Եվթիմեոս) Աթոսցի, 332

Թ

Թագավուր, 463
Թադեուշ Կրուշինսկի, 85
Թալաի իբն Ռուզիկ ալ-Արմանի, 232
Թակաշ, 237
Թահարթեն, 395
Թահիր իբն ալ-Հուսեին Խորասանի, 46
Թահիրիներ, 46, 47, 109, 229
Թահմազ Կուլի (Երևանի խան), 425
Թահմազ-ղուլի խան, տես Նադիր շահ, 95
Թահմասպ Ա (Թահմազ), 74, 75, 76, 77, 94, 96, 123, 124, 344, 348, 349, 360, 361, 404, 405, 406, 407, 512, 513, 514
Թահմասպ Բ, 95, 97
Թամար թագուհի, 187, 323, 324, 325, 326, 329, 330, 333, 377, 386, 499
Թամարա (Էպիրոսի դեսպոտ Նիկիֆորի դուստրը), 189

Թեմուրյաններ, 64, 65, 66, 67, 68, 69, 70, 114, 507, 508, 509
Թայարօղլուներ, 443
Թանկրի Թանրմազ, 421
Թավուլ Ահմեդ Սաչլը, 421
Թեմուչին, տե՛ս Չինգիզ խան, 56, 237, 243
Թեյմուրազ Ա, 350, 351, 352, 353, 354, 375
Թեյմուրազ Բ, 361, 362, 363, 371
Թեոդոս Բ Փոքր, 139
Թեոդոսիոս Ա Մեծ, 132
Թեոդոսիոս Բ, 158, 203
Թեոդոր Բ Լասկարիս, 185, 193
Թեոդոր (Մորեայի դեսպոտ), 183, 197
Թեոդորա (կայսրուհի, VI դ.), 141, 144, 152
Թեոդորա (կայսրուհի, IX դ.), 165, 208
Թեոդորոս Ա Լասկարիս, 184
Թեոդորոս Ռշտունի, 221, 222, 223
Թեոդոս Փոքր, 204
Թեոդոր Բալսամոն, 205
Թեոդորոս Ստուդիտես, 152
Թեոֆանես (պատրիարք), 162
Թեոփիլոս (կայսր), 164, 165
Թեոփիլոս (իրավագետ), 204
Թեոփիլոս (Հովհաննես Կուրկուասի եղբայրը), 168
Թեքելու, 74, 513
Թոըլակ Քեմալ, 397
Թոդոսակ, 376
Թոխթամիշ, 63, 336, 337, 506, 507
Թողթա, 504
Թոմազո Մորոսինի, 181
Թոմաս, 191
Թոռնիկ, 311
Թոռնիկյաններ, 168
Թովմա, 470
Թովմա Սլավոն, 163, 164
Թորելիներ, 322
Թորոս Բ Ռուբինյան, 191
Թոփալ Օսման, 434
Թոփուզը պոյուկ, 421
Թոքուդար (իլխան), 58
Թուլունիներ, 229

Թուղա Թիմուր, 59
Թումա Թավրիզեցի, 507

Ժ

Ժիրմունսկի Վ., 279

Ի

Իբն Աբդ Ռաբբիհի, 289
Իբն ալ-Ադիմ, 290
Իբն ալ-Ազրակ ալ-Ֆարիկի, 290
Իբն ալ-Ասիր, 238, 290, 477, 498
Իբն ալ-Արաբի, 281
Իբն ալ-Ջահաբի, 290
Իբն ալ-Մարշուշ, 249
Իբն ալ-Մութազզա, 281
Իբն ալ-Մուկաֆֆա, 119, 282
Իբն ալ-Քասիր, 290
Իբն ալ-Ֆակիհ, 291, 477
Իբն ալ-Ֆարիդ, 281
Իբն Բատտուտա, 291
Իբն Բիբի, 458
Իբն Թաղրիբիրդի, 291
Իբն Իսհակ, 288, 289
Իբն Խալդուն, 290
Իբն Խալլիքան, 290
Իբն Խորդադբեհ, 291
Իբն Կալանիսի, 290
Իբն Կութիյա, 289
Իբն Կուտայբա, 288
Իբն Հայյա, 289
Իբն Հաուկալ, 119, 291
Իբն Մաջիդ, 291
Իբն Միսկավայհ, 289
Իբն Մուքլահ, 285
Իբն Ռուստա, 291
Իբն Սաադ, 289
Իբն Սինա, 107, 110
Իբն Վահիդ ալ-Յակուբի, 288
Իբրահիմ Ա (օսմանյան սուլթան), 426
Իբրահիմ (Կարամանի էմիր), 399
Իբրահիմ (շիրվանշահ), 65

Իբրահիմ (օսմանյան վեզիր), 75, 405
Իբրահիմ բեյ (եգիպտոսի կառավարիչ), 273
Իբրահիմ խան, 105, 106, 366, 369, 523
Իբրահիմ Մութաֆարիկա, 461
Իբրահիմ Յաննալ, 384
Իբրահիմ Սիլահդար, 432
Իբրահիմ Փեչևի, 406, 459
Իբրահիմ իբն Մարզուբան ադ-Դեյլեմի, 492
Իգնատիոս, 165
Իդրիս, 402
Իեսե (Ալիոուլի խան), 360, 362
Իզզեդդին Քեյկավուս Ա, 387
Իզզեդդին Քեյկավուս Բ, 388
Իլարիոն Սամթավնելի, 377
Իլյաս Ռևանի, 457
Իմադ-ալ-Դին Զանգի, 239
Իմամ Կուլի, 518
Իմամ Զաֆար, 86
Իյադ իբն Ղանմի, 221
Իշխանիկ, 488
Իոգան Ֆյուկ, 279
Իսա Նեջատ, 457
Իսահակ Կոմնենոս, 172, 180
Իսահակ Բ Անգելոս, 180, 192
Իսավրական դինաստիա, 158
Իսթահրի, 46, 291
Իսիդորոս Միլեթացի, 207
Իսմայիլ բեկ, 518
Իսմայիլ (իմամ), 230
Իսմայիլ Ա, 73, 74, 123
Իսմայիլ Բ, 77, 124
Իսմայիլ Գ, 101
Իսմայիլ ալ-Ազրմ, 268, 460
Իսմատ ադ-Դին, 499
Իսրայել (Աբբաս), 482
Իսրայել Օրի, 84, 356, 359, 517
Իսքանդար (Լենկ Թեմուրի թոռը), 64
Իսքանդար (կարա կոյունլու), 66, 508
Իսքանդար Բեկ Թորքեման Մունշի, 124
Իվան Ահեղ, 347
Իվան Գ Ասեն, 188

Իվան Գ, 346
Իվանե (Բաղվաշ), 317
Իրինա (կայսրուհի), 152
Իրինա (Լևոն Դ այրին), 161

Լ

Լազար Գրեբլիանովիչ, 395
Լենկ Թեմուր, 63, 64, 88, 114, 122, 198, 249, 268, 336, 337, 341, 506, 507, 508
Լեկա, 174
Լեոնտի Մրովելի, 333
Լեոնտիոս, 157, 484, 485
Լեոուան Դյուրեստ, 441
Լիպարիտ Բաղվաշ, 315, 316, 317, 318, 328
Լիպարիտ Օրբելի, 322
Լիվերիոս, 147
Լյուդովիկ Բ (Հունգարիայի թագավոր), 404
Լյուդովիկոս Բ (ֆրանկների թագավոր), 167
Լյուդովիկոս Է, 239
Լյուդովիկոս ԺԴ, 358, 428
Լյուդովիկոս ԺԵ, 260
Լոթֆ Ալի խան Զենդ, 104
Լուարսաբ Ա, 344, 346, 349
Լուարսաբ Բ, 350
Լուդովիկոս Բոլոնացի, 340
Լևան Աբաշիձե, 371
Լևան Գ Դադիանի, 354
Լևան Բ Դադիանի, 356
Լևոն (էրիսթավ), 309, 310
Լևոն (Հռոմի պապ), 140
Լևոն Ա Ռուբինյան, 191
Լևոն Բ Ռուբինյան, 192
Լևոն Աբխազ, 310
Լևոն Գ Իսավրացի, 158, 159, 160
Լևոն Դ, 161, 193, 248
Լևոն Ե Հայազն, 163
Լևոն Արգիրոս, 174
Լևոն Մաթեմատիկոս, 201

Խ

Խաիր բեյ, 256, 257, 268
Խալիդ, 490

Խալիդ իբն Վալիդ, 33
Խալիլ–սուլթան, 64
Խալիլ փաշա, 423, 424
Խալիլուլլահ Ա, 508, 509
Խալիլուլլահ Բ, 512, 513
Խաղանի, 111, 112, 524
Խայսամ, 492
Խայսամ իբն Խալիդ, 491
Խաչատուր Ջուղայեցի, 91
Խիալե, 457
Խոձկորիկ, 471, 477
Խոնդեմիր, 123
Խոջա Միրաք, 68
Խոսրև փաշա, 424
Խոսրով Ա Անուշիրվան, 25, 30, 146, 307
Խոսրով Բ Փարվեզ, 26, 26, 30, 149, 307
Խոսրով Գ, 471
Խոսրով Մեծ, 27
Խոսրով Միրզա, տե՛ս Ռոստոմ խան, 352
Խուբասար, 322, 323
Խուբիլայ ղաան, 57
Խութլու Բուղա, 331
Խուրշուդյան Է., 480
Խուրս, 472, 473

Ծ

Ծաթե, 303

Կ

Կաղի Բուրհանեդդին, 395
Կալենդար օղլի, 421, 422
Կալիլա և Դիմնա, 282, 284
Կալո–Յոհաննես Կոմնենոս, 67, 399
Կասիմ, 271
Կասիմ Միրզա, 514
Կավաղ Ա, 24
Կավաղ–Շիրոե, 154
Կատարինա, 67
Կարա Թեքին, 495
Կարա կոյունլու, 65, 66, 67, 68, 89, 337, 338, 508
Կարա Մեհմեդ, 423

Կարա Մուստաֆա Քյոփրյուլյու, 428, 429
Կարա Յազրջի (Հալիմ շահ), 420, 422
Կարա Յուլուք Օսման, 65
Կարա Յուսուֆ, 65, 66, 337, 508
Կարա Չելեբիզադե, 426, 459
Կարա Սաիդ, 421
Կարախանյաններ, 47
Կարապետ Ուլնեցի, 450
Կարեն, 21
Կարլ ԺԲ, 431
Կարլոս Անժուացի, 189
Կարլոս Վալուա, 189
Կարմիր Վարդան, 30
Կարչխա խան, 424
Կեկելիձե Կ., 299, 305
Կրզլ Արսլան, 499
Կընալի, 421
Կիրակոս Գանձակեցի, 56, 88, 524
Կյուրեղ Աղեքսանդրիացի, 139
Կյուրիկե Մեծ, 309
Կյուրիկյաններ, 310
Կյուրիոն, 305, 306, 308
Կյուրոս Մեծ, 17
Կոզանօղլուներ, 443
Կոմիտաս Սամիկոնյան, 30
Կոմիտաս, 449
Կոմնենոսներ, 170, 173, 178, 180, 184, 186, 209
Կոստանդ Բ, 482, 483
Կոնրադ Գ, 239
Կոնրադ Ն., 279
Կոչիբեյ Քյումյուրջելի, 459
Կոջա Յուսուֆ փաշա, 441, 442, 454
Կոջա Ռաջիբ, 437
Կոստանդիանոս Դ, 155, 156, 157
Կոստանդին Ա (վրաց արքա), 337
Կոստանդին Բ (Քարթլիի թագավոր), 340, 341, 343
Կոստանդին Դ Դիոգենես, 173
Կոստանդին Դ (կաթողիկոս), 193
Կոստանդին Ե, 160
Կոստանդին Զ, 161
Կոստանդին Է Ծիրանածին, 168, 488

Կոստանդին Թ Մոնոմախ, 169
Կոստանդին Թ Պալեոլոգ, 198
Կոստանդին ԺԱ Պալեոլոգ, 398
Կոստանդին (դեսպոտ), 198
Կոստանդին (Մահմադղուլի խան), 360
Կոստանդին Արմենոպուլոս, 205
Կոստանդին Բարձրբերդցի, 193
Կոստանդին Դուկաս, 172
Կոստանդին Լասկարիս, 183
Կոստանդին Մեծ, 133, 298, 299
Կոստանդին Միրզա, 350
Կոստանդիոս Խլոր, 132
Կորյուն, 304, 471, 472, 473, 474, 475
Կրաչկովսկի Ի., 278
Կրիսպին, 173
Կուբաղ, 494
Կուդրյավցև Ա., 476
Կութայֆ (Շահնշահի որդին), 232
Կույուշը Մուրադ փաշա, 421
Կուտլուղ-Ինանջ Մահմուդ, 499
Կուրայշ, 214, 215, 220, 225

Հ

Հաբո Թբիլելի, տե՛ս Աբո Տպղեցի, 309
Հաբսբուրգներ, 428, 436
Հազի Եյվազ, 463
Հազարասպներ, 60
Հազկերտ Ա, 23, 139
Հազկերտ Բ, 24, 29, 301, 476
Հազկերտ Գ, 26, 32, 34, 36
Հազրաթղուլի բեկ, 366
Հալիլ փաշա, 418
Հակոբ Մարգարյան Ամդեցի, 345
Հակոբ Նալյան, 450
Հակոբ Շամախեցի, 363, 455
Հակոբ Ջուղայեցի, 355
Հակոբ վարդապետ, 193
Հակոբ պատրիարք, 445
Համազասպ Սամիկոնյան, 482
Համամ Բարեպաշտ, 487, 488
Համամ-Հովհաննես Բագրատունի, 487

Համդալլահ Մուսթովֆի Ղազվինի, 121
Համդանյաններ, 175
Համմեր Յ., 421, 436
Հայրեդդին-աղա, 464
Հանայի, 113
Հանզալե Բաղդիսի, 109
Հաշեմիներ, Հաշիմյաններ, 489, 490, 491
Հաշիմ, 213, 214, 259
Հաջի Դավուդ, 84, 432, 519, 520
Հաջի Իբրահիմ, 104
Հասան (Ալի խալիֆայի որդին), 115
Հասան բեկ, տե՛ս Ուզուն Հասան, 67
Հասան Բեկ Ռումլու, 123
Հասան Բուզուրգ, 61
Հասան իբն աս-Սաբբահ, 55
Հասան-Ջալալ, 331
Հասան փաշա, 270
Հարություն Շամավոնյան, 91
Հարուն ալ-Ռաշիդ, 228, 234, 280, 283, 291, 489, 490
Հաքիմ, 231
Հաֆեզ, 102, 113, 114
Հաֆիզ (Ֆաթիմյան խալիֆա), 232
Հաֆիզ-ի Աբրու, 122
Հեթում, 193, 387, 388, 389
Հեյդար, 72, 509, 510, 511, 512
Հենրի (Բալդուին Ֆլանդրիացու եղբայրը), 181
Հենրիխ Բ, 406
Հերակլ (բյուզանդական կայսր), 153, 154, 155, 308,
Հերակլ Ա (Նազարալի-խան), 354, 355, 359
Հերակլ Բ (վրաց թագավոր), 104, 105, 361, 362, 363, 364, 366, 371, 375, 522
Հիթթի Ֆ., 233, 236, 242
Հիլալ ալ-Սաբի, 290
Հիսուս Քրիստոս, 155
Հոմերոս, 202
Հոնորիոս, 132
Հոջվիրի, 110
Հովակիմ, 398, 444
Հովասափ Եփեսաց, 205
Հովհանոս, 28, 138
Հովհան Աթոսցի, 332
Հովհան Բագրատիոնի, 368

Հովհան Զ Կանտակուզեն, 393
Հովհան Կապադովկացի, 142
Հովհան Մարուշա, 311
Հովհան Պետրիծի, 332
Հովհան Ոսկեբերան, 135, 138, 139, 204
Հովհան Սաբանիսձե, 309
Հովհան Քերական, 165
Հովհաննես Ա Զմշկիկ, 168
Հովհաննես Բ Կոմնենոս, 179, 191
Հովհաննես Գ Վատացես, 184, 192, 193
Հովհաննես Դ Լասկարիս, 185, 188
Հովհաննես Դ (Կեղծ), 188
Հովհաննես Ե Պալեոլոգ, 196, 197, 393
Հովհաննես Արձիշեցի, 405
Հովհաննես Դամասկացի, 152
Հովհաննես Իմաստասեր, 524
Հովհաննես Խուլ, 447
Հովհաննես Կոլոտ, 445, 449, 452, 455
Հովհաննես Կոմնենոս-Անգելոս, 189
Հովհաննես Կոր, 89
Հովհաննես Կուրկուաս, 168, 174
Հովհաննես Սենեքերիմ, 310
Հովհաննես-Սմբատ, 169
Հովհաննես Սքոլաստիկոս, 204
Հովհաննես Փիլոպոնոս, 201, 202
Հովհաննես (մետրոպոլիտ Մելիտենեի), 192, 193
Հովհաննիսյան Պ., 375
Հովսեփ Էմին, 363
Հորմիզդ, 307
Հորմուզդան, 35
Հոիփսիմյանց կույսեր, 299
Հուլավու, 56, 57, 58, 64, 121, 243, 244, 331, 388, 389, 502, 503
Հուլիանոս Ուրացող, 138, 300
Հուշենգ իբն Քավուս, 506
Հուսեին (իմամ), 294
Հուսեին Բայքարի, 70, 123
Հուսեին Շաքիր, 460
Հուստինիանոս Ա, Յուստինիանոս Ա, 25, 141, 203, 207, 481
Հուստինիանոս Բ, 157, 307, 484
Հուտսա Թ., 458

Ղ

Ղազան խան Թեքելու, 513
Ղազար Փարպեցի, 28
Ղազի, 97, 239, 386, 517
Ղազի բեկ, 422
Ղազի խան, 513
Ղազնևիներ, 50, 51, 52, 53, 111, 235
Ղայս ալ-Ռազի, 110
Ղաջար, 71, 103, 104, 105, 513, 516
Ղարասահաթ, 421
Ղիյաս ադ-Դին իբն Հումամ ադ-Դին ալ-Հուսեինի, տե՛ս Խոնդեմիր, 123
Ղիասեդդին Մասուդ, 389
Ղիասեդդին Քեյխոսրով, 386
Ղիասեդդին Քեյխոսրով Բ, 387
Ղլիճ Արսլան Ա, 385, 386
Ղլիճ Արսլան Բ, 179, 386, 462
Ղլիճ Արսլան Դ, 388
Ղորչի (Ղարչխա) խան, 352
Ղվարղվարե Ջաղելի, 340
Ղվարղվարե Գ, 349
Ղվարղվարե Դ, 349
Ղութլու Արսլան, 323
Ղևոնդ Ալիշան, 231
Ղևոնդ, 483, 484, 486

Մ

Մաաններ, 259, 266
Մազդակ, 24
Մազեպայ, 431
Մաթեոս Վլաստարիս, 205
Մալալա, 144
Մալիասիններ, 186
Մալիք Աբու ալ-Կասիմ ալ Աֆդալ, Շահնշահ, 232
Մալիք ալ-Ադիլ, 241
Մալիք իբն Անաս, 287
Մալիքշահ, 53, 120, 236, 317, 318, 385
Մակար Բարխուտարյանց, 525
Մակեդոնական դինաստիա, 166, 167, 170
Մահբուբ իբն Մանսուր իբն Մուֆարրիգ, 290
Մահիր Համզա Սիլահդար, 437
Մահկանաբերդցիներ, 322, 331

Մահմեդ Ա, 198
Մահմեդ խան, 366
Մահմուդ Ա, 96, 260, 434, 437, 461
Մահմուդ Ղազան (իլխան), 59
Մահմուդ Ղազնևի, 50, 51, 110
Մահմուդ Նիյազի, 458
Մահսաթի, 111
Մահտեսի Առաքել, 453
Մահտեսի Մելիտոն Արապյան, 449
Մահտեսի Սարգիս, 449
Մաղաքիա աբեղա, 57
Մամեդ-խան բեկ, 352
Մամուկա, 356
Մամուն, 228, 490
Մանասէ, 476, 477
Մանսուր (խալիֆա), 490
Մանուել Ա Կոմնենոս, 180, 191
Մանուել Բ (պատրիարք), 192, 193
Մանուել (Անդրոնիկոս Գ Փոքրի եղբայրը), 195
Մանուել (Հովհաննես Զ Կանտակուզենի որդին), 196
Մանուչար, 345, 348, 349, 357
Մանուչար Բ, 357
Մանուչար Գ, 357
Մանուչեհրի, 111, 495
Մանուչիհր, 493, 497, 498, 499, 500, 508
Մանուչիհր իբն Յազիդ, 493
Մասլամա, 159, 308
Մասուդ (Ղազնևի), 51, 52
Մասուդ Սաադ Սալման, 111
Մասուդի, 493
Մատթեոս Ամատունի, 30
Մատթեոս Սարը, 449
Մատյուշկին, 518
Մարիամ, 315, 328
Մարկիանոս, 140, 476
Մարկոս, 290
Մարկվարտ Յ., 299
Մարտին (Հռոմի պապ), 152
Մարտինիոս (Հռոմի պապ), 155
Մարքիզ դե Վիլնյով, 436
Մաքսիմոս Խոստովանող, 152

Մաքրիզի, 232, 254, 291
Մելիաս (Մլեհ), 168
Մելիք Աշրաֆ, 61, 505
Մելիք Եգան, 521
Մելիք Շաքարո, 367
Մենգու Թեմուր, 503
Մեջլում, 369
Մզեճաբուկ, 348
Միքայել (Միխայ) Քաջ, 419
Մլեհ Մեծ, 174
Մեծ Մողոլներ, 76, 81, 98
Մեծ Կոմնենոսներ, 187, 199
Մեհմեդ Ա Չելեբի, 396
Մեհմեդ Բ Ֆաթիհ, 398, 399
Մեհմեդ Դ, 426, 427, 429
Մեհմեդ Նեշրի, 459
Մեհմեդ Ռաշիդ, 460
Մեհմեդ Սոքոլլու, 407
Մեհմեդ Քյուփրյուլյու, 427
Միհրան (Միրիան), 298
Միհրան Միհրևանդակ, տե՛ս Բահրամ Չուբին, 30
Միհրդատ, 300, 301
Միհրի Խաթուն, 457
Մինհաջ աղ-Դին Օսման Ջուզջանի, 121
Միշել Ֆեբուր, 414
Միրանշահ, 64, 65, 506, 507, 508
Միրզա Աբդ ալ-Քերիմ, 125
Միրզա Մեհդի խան, 125
Միրզա Ռապ, 367
Միրխոնդ, 122
Միր Ալիշեր Նավոյի, 123
Միր Աշրաֆ, 433
Միր Յահիա Ղազվինի, 123
Միր-Մահմուդ, 93, 94
Միր-Վեյս, 93
Միքայել (վրաց եպիսկոպոսապետ), 301
Միքայել Անգելոս, 186
Միքայել Շաքեցի, 486
Միքայել Ա Ռանգավե, 162
Միքայել Բ, 164
Միքայել Բ Անգելոս, 186

Միքայել Գ, 165, 166
Միքայել Դ Ավտորիան, 184
Միքայել Է, 173, 174
Միքայել Ը Պալեոլոգ, 185, 188
Միքայել Կերուլարիոս, 172
Միքայել Միրիանիսձե, 323
Միքայել Փսելլոս, 201
Մլեհ Ռուբինյան, 191
Մխիթար Գոշ, 374, 524
Մխիթար Սեբաստացի, 450
Մկրտիչ Շոռոթեցի, 366
Մյուլեր Ա., 233
Մյունեջիմ Բաշի, 461
Մյուննիխ, 435
Մոեզզի, 111
Մոլլա Վելի Վիդադի, 525
Մոլլա Փանահ Վագիֆ, 525
Մուհամմեդ Խուդաբենդե, 77, 78
Մովսես Դասխուրանցի (Կաղանկատվացի), 308, 469, 470, 476, 483, 485, 488, 490, 524
Մովսես Խորենացի, 26, 469, 471, 473
Մորադի, 109
Մորիկ, 30, 148, 149, 305, 307
Մոքաֆֆա, 289
Մրվան Բ, 41
Մուազզամ Թուրան Շահ, 242, 246
Մուավիա Ա, 226
Մուզաֆարյաններ, 60, 61, 63, 64
Մութամիդ, 229
Մութանաբի, 281
Մութասիմ, 284, 293
Մութավաքիլ, 284, 293
Մուկադդասի, 291
Մուհամմեդ (մարգարե), 40, 107, 108, 213, 214, 215, 216, 217, 218, 220, 221, 228, 230, 253, 259, 275, 284, 287, 288
Մուհամմեդ Աուֆի, 109
Մուհամմեդ Թահիր Վահիդ, 124
Մուհամմեդ իբն Ահմադ, 492, 493
Մուհամմեդ իբն ալ-Վահաբ, 271
Մուհամմեդ իբն Ալի, 40
Մուհամմեդ իբն Խալիդ, 490, 491
Մուհամմեդ իբն Խավանդշահ, տես Միրխոնդ, 122

Մուհամմեդ իբն Յազիդ, 492, 493
Մուհամմեդ իբն Վասիֆ, 109
Մուհամմեդ իբն Սաուդ, 271
Մուհամմեդ Հասան խան Ղաջար, 100, 104, 522
Մուհամմեդ շահ (Մեծ Մողոլ), 98
Մուհամմեդ Մուբարիզ ադ-Դին, 61
Մուհամմեդ Սադեղ Մուսևի, 125
Մուհամմեդ Սալիհ Բիթիքչի, 75
Մուհամմեդ Քյազիմ, 125
Մուհամմեդ Ֆաթհալլահ իբն Մուհամմեդ Թաղի Սարավի, 125
Մուհամմեդ Ալի, 443
Մուհամմեդ-Գիրեյ խան, 515
Մուհամմեդ իբն Եզիդ, 490
Մուհամմեդ իբն Խայսամ, 491
Մուհամմեդ Հուսեին բեկ, 518
Մունթաֆիկ (ցեղային միություն), 270
Մունջիկ, 109
Մունքե ղաան, Մունգքե, 56, 243
Մուշաշա (դինաստիա), 70
Մուշեղ եպիսկոպոս, 475
Մուշեղ Մամիկոնյան, 34, 468
Մուշեղ-Ռոմանոս, 168
Մուսա Քազիմ, 71
Մուսա իբն Ալի, 492, 493
Մուսաննա իբն Հարիս, 33
Մուսաֆիրյաններ, տես Սալարյաններ, 48
Մուսթալի, 232
Մուսթանսիր, 231, 232
Մուսթասիմ, 243
Մուստաֆա Ա, 424
Մուստաֆա Բ, 430
Մուստաֆա Գ, 437, 438, 446, 451
Մուստաֆա Դ, 453
Մուստաֆա Լալա, 347, 349, 407, 515
Մուստաֆա (Մանուչար), 345, 349
Մուստաֆա Նաիմա, 459
Մուստաֆա Սամի, 460
Մուստաֆա Սելանիկի, 459
Մուրադ (ակ կոյունլու), 70, 73
Մուրադ Ա, 197, 394, 397
Մուրադ Բ, 198, 398, 458

Մուրադ Գ, 77, 407
Մուրադ Դ, 270, 424, 425, 426, 458, 460
Մուրադ բեյ (Եգիպտոսի կառավարիչ), 273
Մուրշիդ-ղուլի-խան, 78
Մուրվան Խուլ, 309
Մուքադդասի, 46
Մուքտադիր, 284
Մուֆֆարիջ, 495

Յ

Յազիդ, 225
Յազիդ բ. Ուսեյդ աս-Սուլամի, 490
Յազիդ իբն Ահմադ, 493
Յազիդ իբն Մազյադ, 489, 490
Յազիդ իբն Մազյադ աշ-Շայբանի, 490
Յազիդյաններ, 489, 490, 491
Յազըջի օղլի Ալի, 458
Յակուբի, 291, 510, 511
Յակուտ ալ-Մուստասիմի, 285
Յահյա իբն Սաիդ ալ-Անթաքի, 289
Յաղմա, 496
Յաղուբ (ակ կոյունլու), 69, 72
Յաղուբ իբն ալ-Լայս, 47
Յաղուբ, 451
Յամբլիքոս, 201
Յան Սոբեսկի, 428, 429
Յանիս ալ-Արմանի, 232
Յանոշ Զապուլյա, 404
Յանոշ Հունյադի, 396, 397
Յար Ահմադ, 507
Յովհաննէս Գաբեղենացի, 481
Յովհաննես Երուսաղեմացի, 481
Յունան, 476
Յուշումուտ, 503
Յուսուֆ Նեբի Էֆենդի, 458
Յուրի Բոգոլյուբսկի, 324

Ն

Նադիր շահ, 95, 97, 98, 99, 100, 102, 106, 125, 360, 361, 362, 435, 436, 521, 522, 527
Նադմա, 425
Նախշաբի Զիա ադ-Դին, 115
Նապոլեոն Բոնապարտ, 272, 444
Նաջմ ալ-Դին Այյուբի, 240
Նաջմ ադ-Դին Ռավենդի, 120
Նասեր Խոսրով, 110
Նասիր ադ-Դին Մահմուդ շահ, 121
Նասրեդդին Յահյա, տե՛ս Իբն Բիբի, 458
Նասրուլլա Միրզա, 521
Նասուհ փաշա, 423
Նարսես, 146
Նիզամի Արուզի Սամարղանդի, 110, 120
Նեղոս Դիասորինոս, 205
Ներսեհ, 27, 119
Ներսես (էրիսթավապետ), 309
Ներսես Բակուր, 485, 486
Ներսես Գարդմանացի, 485
Ներսես Գրիչ, 88
Ներսես Լամբրոնացի, 192
Ներսես Գ Շինարար, 527
Ներսես Վարագեցի, 406
Նեստոր (պատրիարք), 139, 151
Նիանիա Քվաբուլիսձե, 317
Նիզամ ադ-Դին Շամի, 122
Նիզամ ալ-Մուլք, 53, 54, 120, 236
Նիզամի, 109, 110, 111, 112, 114, 500, 524
Նիկեփոր Բ Փոկաս, 168, 171
Նիկեփորոս Բրիեննիոս, 170, 173
Նիկեփորոս Վոտանիատես, 170, 173
Նիկիտա Խոնիատ, 383
Նիկիփոր (ներքինի), 173
Նիկիփոր (պատրիարք), 163
Նիկիփոր Մելիսին, 174
Նիկիփոր Վասիլակ, 174
Նիկիփոր Փոկաս Ավագ, 174
Նիկիփոր Ա (կայսր), 204
Նիկողայոս Մառ, 470
Նիկողայոս Միստիկոս, 175
Նիկոմաքոս Հերասցի, 201
Նոդար, 505
Նունե/Նինո, 299, 313
Նուր ալ-Դին (Զանգի), 239, 240, 241, 294

Նուցուբիձե Շ., 279
Նևշեհիրլի Դամադ Իբրահիմ, 434

Շ

Շադդաղյաններ, 316, 317, 322, 385, 493, 495, 496
Շալիկաշվիլիներ, 343
Շահաբ ադ-Դին Աբդուլլահ իբն Ֆազլուլլահ Շիրազի, 121
Շահամիր Շահամիրյան, 91
Շահիարմեններ, 385
Շահիդ Բալխի, 109
Շահնշահ, 19, 20, 21, 23, 24, 25, 26, 97, 232, 238, 315, 435
Շահրուհ (Աֆշար), 101
Շահրուհ (Լենկ Թեմուրի որդին), 64, 122, 508, 509
Շահրավարազ, 154
Շահ-Կուբադ, 509
Շամլու, 71, 78
Շամմախ բին Շուջա, 489
Շամքու, 494
Շայբանի, 489, 490
Շանշե, 361
Շապուհ Ա, 18, 19, 27, 119
Շապուհ Բ, 19, 23, 87, 119
Շապուհ Գ, 28
Շաջար ալ-Դուրր, 242, 246
Շավթելի, 333
Շավուր իբն Ֆաղլուն, 494, 495
Շարաֆ ադ-Դին Եզդի, 122
Շարաֆ ալ-Մուլք, 501
Շարաֆ խան Բիթլիսի, 124
Շարվաշիձե, 338
Շեյխշահ, 512
Շերո, 485, 486, 487
Շիշման, 394
Շիրին խալֆա, 449
Շիրվանշահեր, 57, 72, 73, 112, 436, 489, 490, 492, 493, 494, 496, 497, 498, 500, 502, 503, 504, 505, 506, 508, 509, 512, 513, 514, 524, 527
Շոթա Ռուսթավելի, 333, 375
Շտեյն Վ., 278
Շուշանիկ, 301, 305, 312
Շուջա, 489, 497
Շուփհաղիշո, 476, 477, 478

Ո

Որմիզդ Դ, 149
Որոգինես, 151

Չ

Չալոյան Վ., 279
Չախրուխաձե, 333
Չաղաթայ, 57
Չաղրի բեկ, 235
Չապանօղլուներ, 443
Չինգիզ խան, 56, 58, 61, 62, 63, 121, 237, 243, 331
Չոբան Նոյին, 334, 335
Չոբանյաններ, 60, 61, 505
Չոլողաշվիլիներ, 343
Չորլուլու Ալի, 431

Պ

Պախոմով Ե., 476, 497
Պահլավունիներ, 190
Պանդալէոն, 471, 477
Պապ, 28, 300
Պապակ, 16
Պապունա Օրբելիանի, 374
Պասմաճյան Գր., 446, 451, 452, 453
Պավել Ա, 369, 370, 523
Պատրոնա Խալիլ, 434
Պեգանի Գ., 166
Պեդրո Գ, 189
Պեզվենդօղլու, 443, 444
Պետրոնա, 165
Պետրոնաս, 174
Պետրոս (առաքյալ), 376
Պետրոս Ա, 84, 360, 429, 431, 433, 517, 518, 520
Պետրոս Բ, 520
Պերոզ, 301, 304, 475, 477, 478
Պողոս (առաքյալ), 376
Պողոս Կաղզվանցի, 453
Պրոխորոն, 451
Պրոկլես, 201, 202
Պրոկոպիոս (պատմիչ), 142, 145

Պրոկոպիոս Կեսարացի, 141, 144, 302, 307, 468, 480
Պուլքերիա, 139

Ջ

Ջալալ ադ-Դին (խորեզմշահ), 329, 330, 501
Ջալալ ալ-Դին ալ-Սույութի, 291
Ջահան-շահ (կարա կոյունլու), 66, 67, 338
Ջահիզ, 291
Ջաղա, 304, 471, 473
Ջաղելիներ, 322, 332, 341, 343
Ջամի, 114, 115
Ջան Բիրդի ալ-Ղազալի, 268/
Ջանիբեկ խան, 61
Ջանիբեկ Գիրեյ խան, 424
Ջանփոլադ Ալի, 421
Ջավախիշվիլի Իվ., 299
Ջավելի, 386
Ջաֆեր փաշա, 407
Ջեբե, 329, 500
Ջելայիրյաններ, 60, 61, 63, 64, 66, 505, 506, 508
Ջելալեդդին Ռումի, 456, 457
Ջեմ, 400
Ջեմշիդ, 421
Ջենկինսոն Ա., 525
Ջիվանշիր, 527
Ջիք, 79
Ջհանշահ (Մեծ Մողոլ), 83
Ջղալ-օղլի Սինան փաշա, 80, 423
Ջունեյդ, 72, 509
Ջևանշեր, 482, 483

Ռ

Ռաբի'ա (արաբական ցեղային միություն), 33
Ռայմոն Տուլուզեցի, 238
Ռայմոնդ Պուատիե, 191
Ռաշիդ (Դերբենդի կառավարիչ), 500
Ռաշիդ ադ-Դին Ֆազլուլլահ Համադանի, 59
Ռաշիդ Վաթվաթ, 110
Ռավվադյաններ, 48
Ռատ, 318
Ռեզա Աբբասի, 107

Ռիչարդ Առյուծասիրտ, 241
Ռզա ղուլի միրզա, 100
Ռոբերտ Գվիսկար, 173
Ռոբերտ դը Կուրտընիե, 192
Ռոջեր դը Ֆլորի, 190
Ռոստամ Ֆարոխզադ, 33, 34
Ռոմանոս Ա Լեկապենոս, 168
Ռոմանոս Գ Արգիրոս, 169
Ռոմանոս Դ Դիոգենես, 169
Ռոստոմ, 360, 371
Ռոստոմ խան, 352, 353
Ռուբինյաններ, 190, 191, 390
Ռուբեն Գ, 192
Ռուդաքի Սամարղանդի, 110
Ռուզբեի (ցեղ), 124
Ռուզիկ իբն Թալաի, 232
Ռումլու, 71, 74, 78, 123
Ռումյանցև, 439
Ռուստամ (ակ կոյունլու), 69
Ռուսուդան, 324, 329, 330, 331, 500
Ռուփինոս, 299
Ռուքն ադ-Դին, 386, 389

Ս

Սաբբատա Ջևի, 427
Սադուն Մահկանաբերդցի, 331
Սադուլլահ Էնվերի, 460
Սալահ ադ-Դին, 236
Սալար իբն Յազիդ, 494
Սալարյաններ, 48
Սալիհ Այյուբյան, 242, 246, 250
Սալման Սավաջ, 114
Սակոցարի, 377
Սահակ Ահագին, 450
Սահակ Ձորափորեցի, 486
Սահակ Պարթև, 472
Սահակ Սևադա, 487
Սահակ Ուղկացի (Հարքացի), 480
Սահլ Սմբատյան, 309, 487
Սայեբ, 114, 115
Սամանյաններ, 47, 50, 109, 110, 229

Սանայի, 113
Սանջար իբն Մալիքշահ, 54
Սաջյաններ, 491
Սասան, 16, 17
Սասանյաններ, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 45, 109, 116, 147, 298, 469, 472, 473, 475, 479, 480
Սարգիս Զաքարյան, 322, 323, 324
Սարգիս Ջաղելի, 331
Սաու–Թեքին, 496
Սաուղների ընտանիք, 271
Սաուրմազ, 300
Սաֆար փաշա, 357
Սաֆֆարիներ, 47
Ստավրիկիոս, 161, 162
Սեաղեդդին Հոջա Էֆենդի, 459
Սեբեոս, 30, 112, 222, 223
Սեբուխտ, 474, 476
Սեբուք–Թեքին, 50, 120
Սելիմ Ա Յավուզ (Ահեղ), 256
Սելիմ Բ, 406, 407
Սելիմ Գ, 273, 443, 444, 449, 461
Սելիմ խան, 353
Սելջուկ, 235
Սեխնիա Չխեիձե, 373
Սենան փաշա, 514
Սեներերիմ, 315, 487
Սեյիդ Ահմադ, 507, 508
Սեյֆ ադ–Դաուլա, 175
Սերգիոս (եպիսկոպոս, V դար), 144
Սերգիոս (պատրիարք, VII դար), 154
Սերերրյակով, 406
Սեֆեվիյե, 71
Սեֆի Ա, 82, 83, 124, 352
Սեֆի Բ, 83, 354
Սեֆի–ադ–Դին Իսհաք, 71
Սեֆյաններ, 71, 72, 73, 74, 76, 79, 83, 93, 95, 101, 106, 115, 118, 119, 338, 344, 345, 346, 347, 349, 352, 402, 405, 406, 421, 423, 426, 510, 511, 512, 513, 514, 515, 516
Սիգիզմունդ Ա, 197
Սիմեոն Երևանցի, 364, 366, 367, 455
Սիմեոն Լեհացի, 265
Սիմեոն (կաթողիկոս), 367, 486

Սիմեոն ցար, 167
Սիմոն Ա, 345, 357
Սիմոն Մաղաշվիլի, 362
Սիմոն Քալֆա, 464
Սինան, 294, 461, 462, 464
Սիրգիանոս, 195
Սկլերոսներ, 171
Սմբատ Բագրատունի, 30, 176
Սմբատ Բագրատունի (Հայոց իշխան), 486
Սմբատ Գունդստաբլ, 387
Սմբատ (Թրակեսիոնի զորավար), 166
Սմբատ (պատրիկ), 485
Սյուրսուրի, 458
Սոլակզադե, 459
Սողոմոն Ա, 363, 364, 365, 371, 372
Սողոմոն Բ, 372
Սոյմոնով, 518
Սոփրոնիոս, 151
Սպանդիար, 21
Սպիրիդով Գ. Ա., 438
Սպրամ, 485
Սվյատոսլավ, 168
Ստեփան Դուշան, 196
Ստեփանե, 191
Ստեփանոս, 307, 308
Ստեփանոս Ալեքսանդրացի, 202
Ստեփաննոս Ասողիկ, 483
Ստեփաննոս Սյունեցի, 481
Ստեփանոս–Քոբող, 308
Ստեփաննոս Օրբելյան, 487, 488
Սրապիոն Զարզմեցի, 312
Սուբաթայ Բահադուր, 500
Սուզանի, 113
Սուլեյման, 395
Սուլեյման բեկ Բիժան–օղլու, 69
Սուլեյման Ա (օսմանյան սուլթան), 75, 260, 268, 403, 404, 405, 406, 407
Սուլեյման Ա (Սեֆյան շահ), տես Սեֆի Բ, 83, 354
Սուլեյման Բ, 429
Սուլեյման Բույուկ, 270
Սուլեյման Իզզի, 460
Սուլեյմանշահ Ա, 386

Սուլթան Խալիլ, 69
Սուլթան Հուսեին, 83, 85, 86, 93, 94, 95, 355, 358, 359, 506
Սուլթան Մահմուդ, 498, 512
Սուլթան Մուհամմեդ, 77, 512
Սուլխան-Սաբա Օրբելիանի, 359, 374, 375
Սուվորով Ա. Վ., 442
Սուրեն, 21
Սուրխայ, 84, 432, 517, 519, 520
Սևերոս, 289
Ս. Բարսեղ, 135
Ս. Հովհան Ոսկեբերան, 135
Ս. Ներսես, 199
Ս. Սահակ, 199

Վ

Վալերիանոս (կայսր), 19, 27
Վալիդ Ա, 226
Վախթանգ Գորգասալ, 29, 301, 303, 305, 479
Վախթանգ Գ, 338
Վախթանգ Ե, 353, 354, 375
Վախթանգ Զ, 355, 360, 362, 363, 365, 370, 373, 374, 378
Վախուշտի Բագրատիոնի, 373
Վաղենտիանոս Գ, 139
Վաղես, 138
Վահան, 474, 475
Վահան Մամիկոնյան, 29, 301, 479
Վահիդ Թաբրիզի, 110
Վահրամյաններ, 190
Վահրամ Պահլավունի, 292, 253
Վաչագան Ա Քաջ, 469
Վաչագան Բարեպաշտ, 468, 470, 471, 475, 476, 478
Վաչե Բ, 474, 475, 477
Վաչե Քաջ, 468, 469
Վասակ Մամիկոնյան, 300
Վարազ-Բակուր, 300
Վարազ Գրիգոր, 482
Վարազ Տրդատ, 309, 482, 483, 484, 485
Վարդան, 158, 317, 485
Վարդան Արևելցի, 191, 524
Վարդան Մամիկոնյան, 116, 474, 476
Վարդան (Անատոլիկոն թեմի ստրատիգ), 162

Վարդան-Ֆիլիպպիկոս, 158
Վարդանիսձեներ, 322
Վարդաս, 165, 166
Վարդաս Սկլերոս, 168, 176
Վարդաս Փոկաս, 168, 176
Վարսքեն, 301
Վարահրան Ե Գոռ, 23, 480
Վելեդ, 457
Վելիսարիոս, 145, 146
Վեհրի Ֆազլ բեյ, 458
Վեյսի, 457
Վեջիհ աղ-Դին Մասուդ, 62
Վեստ Սարգիս, 328
Վիզանդ (Բյուզանդ), 199
Վիրո, 477, 482
Վլադիսլավ Գ, 198
Վոլինսկի Ա., 84, 359, 517
Վռամշապուհ, 471
Վսեվոլոդ Մեծ Բույն, 324
Վրթանես, 306
Վուրցես, 168

Տ

Տավերնիե Ժ. Բ., 412, 425
Տարասիոս, 161
Տիբերիոս, 307
Տիմոթեոս Գաբաշվիլի, 371, 374
Տիրան Մամիկոնյան, 221
Տոկարսկի Ն., 527
Տրդատ Գ, 469
Տրներ Կ., 476
Տուղրիլ բեկ, 53, 235, 236, 383, 384
Տուղրիլ Գ, 120
Տուրան Բ., 233

Ց

Ցիցիշվիլիներ, 343

ՈՒ

Ուբեյդուլլա, 75
Ուզբեկ, 499

Ուզդեմիտ Օսման, 407
Ուզուն Հասան, 67, 68, 69, 72, 340, 399, 401, 509
Ուլամա Թեքելու, 405
Ուխտանես, 482
Ուղուրլու Մուհամմեդ, 69
Ունսուրի, 111
Ուռնայր, 468, 469, 470
Ուսամա իբն Մունքիզ, 290
Ուսթաջլու, 71, 74, 78, 513
Ուվեյս, 61, 505, 506
Ուրբան Բ, 237
Օրխան բեյ, 393, 397
Ուրֆի, 111, 114

Փ

Փավստոս Բուզանդ, 468, 469
Փատլուն, 316, 317
Փարիխան, 513
Փարնավազյաններ, 298, 304
Փարսադան Գորգիջանիձե, 352, 373
Փարսման, 300
Փեշանգ Խիթարիշվիլի (Փեշվիբերտղաձե), 375
Փիլարտոս Վարաժնունի, 173, 390
Փիլիպոս պատրիարք, 445
Փիլիպոս Տարենտացի, 189
Փիլոն Տիրակացի, 483
Փլավիանոս, 139
Փոկաս (Ֆիլադելֆիայի մետրոպոլիտ), 193
Փոկասներ, 171

Ք

Քաիտբայ, 248
Քալոյան, 462
Քայի (ցեղ), 392
Քայխոսրո (Քարթլիի թագավոր), 358
Քայխոսրո Բ, 349
Քայխոսրո Գ, 344
Քայխոսրո Էնդրոնիկաշվիլի, 366
Քավեհ, 34
Քավուս, 505, 506
Քարթիր, 22
Քեթևան, 351, 354
Քեմալ փաշա զադե, 407
Քեյխաթու, 503
Քեյքավուս Ա (շիրվանշահ), 503, 504
Քեյքուբադ Ա (շիրվանշահ), 504, 505
Քեսեքես, 421
Քերիմ խան Զենդ, 100, 101, 103, 104, 125
Քեօր ղայա, 421
Քյաթիբ Չելեբի, 459, 460
Քյամալ Խոջանդի, 114
Քյամալ ադ-Դին Բեննայի, 123
Քյոսե Միխայիլ, 392
Քյուփրյուլյու Աբդուլլահ, 433, 434
Քյուփրյուլյուզադե Ֆազըլ Մուստաֆա, 429
Քյուչյուկ Հուսեին, 444
Քուշեյրի, 110

Օ

Օբեյդ Զաքանի, 114
Օգոստոս Մաքսիմիանոս, 132
Օթար Շալիկաշվիլի, 349
Օթչիգին (Չինգիզ խանի եղբայրը), 61
Օկբա, 226, 486
Օմայա (տոհմ), 215
Օմայաններ, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 225, 226, 227, 233, 268
Օմար (Թեմուրյան), 65, 507
Օմար (խալիֆա), 218, 219, 222, 253, 415
Օմար (Մելիտենեի էմիր), 174
Օմար-շեյխ (Լենկ Թեմուրի որդին), 64,
Օմար Խայամ, 107, 110, 112, 114
Օմեր Նեֆի, 457, 458
Օշին Պայլ, 248
Օսման (խալիֆա), 219, 220
Օսման Ա, Օսման բեյ, 189, 392, 393
Օսման փաշա, 515
Օսման Գ, 437
Օսման Պեզվենդողլի, 444
Օրբելի Հ., 456
Օրբելիներ, 321, 322, 323
Օրուջ Ադիլ, 458, 459

Ֆ
Ֆազլլ Ահմեդ Քյոփրյուլյու, 427, 428
Ֆազլու (աթաբեկներ), 60
Ֆաթալի խան, 366
Ֆաթիմա, 220, 230
Ֆաթի Ալի շահ, 106
Ֆաթիմյաններ, 176, 230, 231, 240, 241, 245, 249, 250, 254, 265
Ֆալաքի, 111, 498, 524
Ֆախր ալ-Դին Ա Մաան, 259, 269
Ֆախր ալ-Դին Բ Մաան, 266, 269, 270
Ֆայզի, 114
Ֆարիբուրզ Ա, 494
Ֆարիբուրզ Գ, 500, 501, 502
Ֆարրուխ Յասար, 72, 73, 401, 509, 510, 511
Ֆարրուխ Յասար Բ, 512
Ֆարրոխի, 111
Ֆարրուխզադ Բ, 503
Ֆարրուխզադ Գ, 500
Ֆեննա Խոսրով, 48, 49
Ֆեոդոր ցար, 347
Ֆերիոլ, 448
Ֆիլիպ Ավգուստ, 241
Ֆիլիպ Բ, 345
Ֆիլիպ Դ Գեղեցիկ, 189
Ֆիլիպե, 192
Ֆիլշտինսկի Ի., 233
Ֆիրդուսի, 109, 110, 111, 114, 375
Ֆիրուզ Մաշրաղի, 109
Ֆրայ Ռ., 107, 279
Ֆրանցիսկ Ա, 260
Ֆրիդրիխ Բարբարոսա, 180, 192
Ֆրիդրիխ Գիզե, 459

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա
Աբերքուհ, 70
Աբիվերդ, 61
Աբխազիա, 348, 355, 356, 370
Աբխազք, 306, 310, 312, 340
Աբուկիր, 273
Ադանա, 168, 175, 400, 413, 421
Ադրբեջան, 383, 479, 526
Ադրիանապոլիս, 163, 197, 394, 432, 439, 464
Ազիա, 488
Ազով, 429, 432, 435, 438, 439
Աթթալ, 525
Աթենք, 171, 181, 190, 204, 416
Աթոն, 171, 190
Աթոս, 182, 186, 205, 208, 311, 332
Ազերբայզան, Ազորբայզան տե՛ս Ատրպատական, 22
Ալ-Ազիար, 274
Ալ-Աքսա, 292
Ալ-Խասա, 271
Ալ-Նաջդ, 212
Ալ-Նուֆուդ, 212
Ալ-Շամամաշիյա, 283
Ալ-Շորակ, 250
Ալ-Քաբան, 268
Ալ Քավազիմ, 33
Ալազան, 317, 515
Ալամուտ, 55, 57, 121
Ալանաց լեռներ, 222
Ալաշկերտ, 76, 508
Ալավերդի, 354
Ալբանիա, 396, 398, 400, 419, 428, 484, 488
Ալբիստան, 420
Ալեքսանդրիա, 134, 153, 185, 204, 249, 250, 261, 272, 274, 289, 290
Ալի-Կափու, 118
Ալինջան, 90
Ախալքալաք, 316, 407
Ախտիարի, 441
Ածղուրի, 311
Ակկա, 231, 270
Ակր, 241, 247
Ակրոինա, 159

Ակքերման, 400
Ահվազ, 45
Աղեքսանդրիա, տես Ալեքսանդրիա, 136, 137, 139
Աղթամար, 72, 511
Աղջկաբերդ (Կրզ-կալասի), 528
Աղսու, 520, 521
Աղվանք, տես Աղուանք, 17, 29, 222
Աղուանք, 468, 469, 470, 475, 476, 482, 486, 488, 524, 527
Աձարա, 336
Ամասիա, 76, 77, 80, 344, 345, 347, 349, 351, 386, 402, 406, 407, 413, 423, 426, 457, 514
Ամբերդ, 328
Ամենաբաղ, 119
Ամերիկա, 412, 440
Ամիդ, 73, 168
Ամոլ, 45
Ամորի, 164
Ամորիա, 164
Ամորիական թեմ, 163
Ամստերդամ, 431
Ամուր, 56
Ամու Դարյա, 23, 35, 57, 74, 219, 226
Այա Սոֆիա, 461, 462
Այդրն, 392, 421
Այն Ջալուտ, 247
Այնալը-Կավակ, 441
Այսրկովկաս, 29, 77, 95, 96, 97, 101, 104, 105, 106, 119, 133, 139, 235, 236, 255, 299, 300, 301, 308, 312, 345, 350, 359, 360, 362, 367, 368, 369, 385, 407, 408, 422, 423, 426, 433, 435, 441, 468, 483, 484, 485, 489, 491, 501, 502, 504, 507, 509, 511, 514, 516, 517, 522, 523
Այրարատ, 222
Անաղոլու Հիսար, 398
Անանուր, 378
Անավարզա, 168
Անատոլիա, 383, 393, 440, 446, 451
Անատոլիկոն, 158, 159, 162
Անգլիա, 57, 237, 241, 272, 431, 435, 436, 437, 439, 440, 441, 442, 523
Անդալուս, 226, 289
Անդալուսիա, 229, 289
Անդրկովկաս, 26, 29, 45, 64, 74, 79, 82
Անթալիա, 387, 462
Անի, 169, 172, 176, 177, 232, 236, 253, 314, 315, 321, 322, 326, 328, 329, 334, 336, 384, 385, 495, 496, 498
Անի-Շիրակի թագավորություն, տես Բագրատունյաց թագավորություն, 169
Անկարա, 393, 395, 396
Անչի, 311

Անչիսխատի, 302, 376
Անտիոք, 19, 134, 136, 137, 147, 154, 163, 168, 176, 185, 190, 191, 192, 204, 232, 238, 239, 240, 247, 253, 332
Ան-Էրան, 27
Աշկելոն, 238, 242
Աշոցք, 300
Ապահունիք, 175
Ապշերոն, 491, 500
Առաջավոր Ասիա, 17, 18, 22, 63, 212, 237, 255
Առան, 227, 473, 476, 488, 490, 496, 499, 503, 504, 505, 524
Առտա, 186
Ասիա, 15, 45, 62, 68, 141, 212, 227, 276, 408, 412
Ասիր, 272
Ասորիք, 140, 153, 154, 157, 160, 168, 172, 174, 179, 180, 185, 190, 191, 206, 222, 223, 293, 421, 486
Աստարաբաղ, 75, 103, 104, 519
Աստրախան, 347, 365, 406, 518
Ավարայր, 24, 301
Ավստրիա, 400, 405, 419, 429, 436, 437, 442
Ատտալիա, տես Անթալիա, 387
Ատեն, 344
Ատլանտյան օվկիանոս, 226, 227
Ատրպատական, 17, 35, 42, 51, 53, 54, 55, 56, 57, 60, 61, 63, 64, 65, 66, 67, 68, 70, 71, 73, 75, 76, 77, 78, 79, 80, 82, 88, 89, 95, 96, 100, 227, 229, 336, 345, 384, 405, 482, 485, 490, 499, 502, 506, 511, 521, 522
Արաբական թերակղզի, 19, 37, 45, 48, 212, 213, 443
Արաբական խալիֆայություն, 15, 32, 45, 46, 87, 107, 154, 160, 161, 163, 167, 174, 175, 217, 219, 221, 222, 223, 225, 226, 233, 251, 275, 288, 293, 487, 489, 490, 493, 502
Արաբական ծով, 212
Արաբիա, 17, 20, 22, 32, 33, 45, 99, 213, 214, 217, 218, 219, 220, 230, 241, 252, 257, 269, 271, 272, 287, 288, 292
Արագոն, 189, 190
Արագվի, 342, 343, 353, 354, 363
Արալյան ծով, 52, 53, 55, 383
Արածանի, 65, 470
Արարատ, 82
Արարատյան դաշտ, 149, 364, 366, 367, 407, 423, 425
Արաքս, 69, 80, 90, 96, 97, 101, 106, 317, 434, 479, 508
Արգվեթ, 303, 315, 316
Արդաբիլ, 71, 72, 73, 79, 106, 401, 424, 508, 509, 510, 511, 512, 515, 519
Արեշ, 514, 517
Արխեոպոլիս, 304
Արծկե, 406
Արծն, 384
Արձեշ, 406

Արմազ, 304
Արմազիսխև, 312
Արմենիակ, 156, 158
Արմինիա, 224, 227, 228,251, 490
Արշակունյաց թագավորություն, 468, 480
Արտազ, 35, 87, 88
Արրան, տես Առան, 57, 68
Արցախ, 89, 352, 366, 368, 369, 374, 473, 477, 479, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 514, 515, 516, 517, 519, 521, 523
Արքիպելագի կղզիներ, 171
Արևելյան Այսրկովկաս, 15, 468, 489, 491, 502, 504, 507, 509, 511, 514, 515, 516, 517, 522, 523, 524, 525
Արևմտյան կայսրություն, տես Հռոմ, 139
Արևելյան Հայաստան, տես Հայաստան, 118, 433
Արևմտյան Հայաստան, տես Հայաստան, 14, 74, 80, 82, 89, 124, 165, 252, 266, 396, 401, 402, 403, 405, 406, 421, 423, 424, 436, 440, 443
Արևելյան Վրաստան, տես Վրաստան, 76, 304
Արևմտյան Վրաստան, տես Վրաստան, 76, 300, 303, 304, 306, 307, 310, 315, 316, 318, 320, 324, 329, 331, 332, 335, 338, 340, 344, 345, 348, 353, 354, 355, 356, 363, 364, 365, 367, 370, 371, 372, 436
Ափրիկե, 485
Աքայա, 198
Աքեմենյան Պարսկաստան, տես Իրան, 18
Աքորի, 377
Աֆղանստան, 17, 50, 57, 60, 62, 70, 74, 83, 98, 101, 109, 226, 355, 358, 517
Աֆրիկա, 45, 91, 133, 141, 142, 145, 153, 164, 167, 219, 226, 227, 228, 230, 276, 287, 408, 412

Բ

Բաալբաք, 239, 269
Բաբերդ, 399
Բագարան, 208
Բագրատունյաց թագավորություն, 169, 190, 199, 232, 384
Բաթում, 340
Բալթա (Պերվոմայսկ), 438
Բալթիկ ծով, 436
Բալխ, 23, 24, 35, 47, 57, 70, 235
Բալկաններ, 153, 154, 160, 162, 167, 168, 170, 171, 172, 173, 176, 178, 179, 180, 183, 185, 190, 191, 192, 196, 197, 205, 382, 394, 395, 396, 397, 399, 430, 436, 443, 448, 449
Բալկուվարա, 293
Բախթարի, 90
Բախչիսարայ, 435
Բախտրիոն, 354
Բահր ալ-Նիլ, տես Նեղոս, 246
Բահրեյն, 19, 35, 61, 81, 84, 286

Բաղասական, 471, 472, 475, 478, 499, 501
Բաղդադ, 41, 46, 47, 48, 53, 56, 57, 61, 74, 75, 81, 82, 92, 96, 174, 228, 229, 230, 235, 236, 237, 240, 243, 244, 249, 255, 259, 261, 264, 266, 267, 270, 280, 283, 286, 290, 293, 370, 383, 384, 386, 388, 401, 405, 413, 425, 426, 433, 434, 436, 502, 505, 506
Բայլական, տես Բաղասական, 478, 499, 501
Բայտար, 366
Բանատ, 436
Բաչկովո, 332
Բասեն, 169, 314, 316, 325, 348, 498
Բաստիլ, 448
Բասրա, 45, 48, 92, 101, 259, 261, 264, 266, 267, 270, 282, 436, 440
Բարի, 164, 173
Բարձր Հայք, 405, 424, 436
Բաքու, 77, 78, 96, 106, 369, 433, 495, 500, 504, 508, 511, 512, 518, 519, 523, 527
Բեղիա, 310
Բեթ-Խուզայե, տես Խուզիստան, 35
Բելգրադ, 172, 404, 429, 432, 436
Բելոքան, Բելաքան, 359, 521
Բելուջիստան, 35
Բեյթ-Ուլաի, 292
Բեյրութ, 204, 242, 247, 259, 261, 265, 269, 270
Բենդեր Աբբաս, 81, 84
Բերդաա, տես Պարտավ, 478
Բերկրի, 169, 222
Բզնունյաց երկիր, 222
Բիթլիս, 124, 266, 402, 404, 405, 406
Բիլդի, 525
Բիձվինթա, 304, 306, 348
Բիտոլ, 464
Բիքաա, 269
Բյութանիա, 171, 188, 392
Բյուզանդական կայսրություն, տես Բյուզանդիա, 15, 25, 28, 132, 133, 147, 151, 167, 169, 170, 174, 175, 179, 183, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 193, 194, 196, 199, 204, 205, 207, 209, 218, 222, 226, 237, 303, 309, 315, 325, 384, 385, 472
Բյուզանդիա, 15, 20, 22, 25, 26, 28, 29, 30, 32, 33, 47, 49, 132, 133, 134, 137, 138, 139, 141, 142, 143, 144, 145, 146, 147, 148, 149, 151, 152, 153, 154, 155, 156, 157, 158, 159, 160, 161, 162, 163, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 183, 186, 187, 188, 189, 190, 191, 192, 194, 196, 197, 198, 199, 201, 202, 203, 206, 209, 219, 223, 253, 284, 300, 302, 303, 304, 307, 308, 310, 314, 316, 317, 332, 335, 338, 341, 377, 384, 385, 386, 391, 393, 396, 473, 478, 484, 486, 490, 492, 527
Բյուզանդիոն, տես Կոստանդնուպոլիս, 25, 132, 133, 135, 199
Բոդրի, 346, 347
Բոլնիս, 301, 329, 376
Բոսնիա, 399, 420, 435, 436, 464
Բոսֆոր, 25, 135, 153, 198, 398

Բորչալու, 362, 366, 521
Բրուսա, 393, 395, 398, 453
Բուզ, 438
Բուդա, 404, 405
Բուդուր, 462
Բուլղարիա, 164, 168, 173, 180, 314, 332, 394, 395, 435, 439, 442
Բուլղարական պետություն, 156
Բուխարա, 47, 50, 98, 235, 243, 286
Բուխարեստ, 438
Բուն Աղուանք, 15, 471, 472, 473, 474, 477, 479, 480, 483, 489, 526
Բուրսա, 393, 413, 421, 463
Բուրվառ, 90

Գ

Գալաթիա, 195, 196
Գալիպոլիս, 197
Գաղատիա, 450
Գաղիա, 147
Գանգես, 50, 63
Գանդիման, 90
Գանձակ, 97, 105, 106, 111, 316, 325, 351, 352, 353, 360, 362, 366, 369, 435, 490, 493, 494, 495, 496, 499, 507, 515, 516, 517, 519, 520, 521, 522, 523, 524
Գանձակ-Շահաստան, 88
Գանձասար, 84, 352
Գարդման, 472, 473, 482, 483, 486, 487
Գեգութ, 377
Գելաթ, 332, 348, 377
Գեյուկ-մեդրեսեն, 462
Գերմիան, 392, 393, 395, 396
Գիզա, 228, 273
Գիլան, 35, 48, 66, 70, 73, 75, 79, 84, 90, 94, 95, 100, 104, 433, 435, 512, 518, 519
Գիշ, 497
Գյոկսու, 403
Գյուլիստան, 104, 510, 513, 523, 527
Գյուլնաբադ, 93
Գյուրջիստան, տես Վրաստան, 331
Գողթն, 222
Գուրգան, 47, 52, 61, 63, 64, 235
Գոմբրուն, 81
Գոր, 116
Գորի, 334, 335, 344, 346, 348, 353, 375
Գրգուռ լեռ, 222,
Գրեմի, 378
Գուգարք, 302, 305, 472, 473
Գուգգանան, 119

Գուրիա, 76, 340, 343, 348, 355, 356
Գուրջաանի, 376

Դ

Դալմաթիա, 180, 419, 430
Դահա, 212
Դաղստան, 72, 77, 78, 83, 95, 97, 99, 105, 347, 359, 360, 363, 407, 432, 479, 507, 512, 514, 515, 517, 519, 521, 523, 525
Դամասկոս, 38, 41, 160, 168, 219, 224, 225, 227, 239, 241, 242, 246, 249, 250, 253, 256, 258, 259, 264, 265, 266, 268, 270, 290, 292, 294, 403, 464
Դամղան, 54, 63
Դանդանաքան, 52
Դանիշմանյան ամիրայություն, 179, 180
Դանուբ, 133, 148, 149, 155, 156, 167, 169, 178, 383
Դաշթ-ե Լութ, 45, 66
Դաշթ-ե Քեվիր, 45, 66
Դառնոյ/Դասնո դաշտ, 503
Դասկարատ ալ-Հուսեին, 495
Դաստակերտ, 154
Դավիթ Գարեջա, 377
Դավրեժ, տես Թավրիզ, 88
Դարաբկերտ, 16
Դարաշամբ, տես Շամբ, 88
Դարդանել, 426, 438, 439
Դեաբոլ, 178, 191
Դելի, 98, 115
Դեհի-Բիդ, 119
Դեհիստան, 52
Դեմավենդ, 54
Դեմուրչի Հասանլու, 366
Դեյլեմ, 35, 48
Դերբենդ, 15, 77, 78, 96, 105, 106, 227, 319, 360, 366, 369, 433, 476, 478, 479, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 498, 499, 500, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 510, 512, 515, 516, 518, 519, 520, 522, 523, 524, 525, 528
Դերջան, 69, 399, 402, 405
Դիդգոր, 319, 498
Դիարբեքիր, 67, 247, 349, 423, 425
Դիոսխիում, 174
Դիվան-խանե, 527
Դիրախի, 186
Դիրայան, 271
Դմանիս, 302, 312, 498
Դնեպր, 438, 439
Դնեստր, 438, 439, 442
Դորիլեա, 385

Դվին, 154, 155, 221, 222, 227, 240, 251, 305, 326, 481, 490, 494, 526
Դրիա, 464
Դուբրովնիկ, 186

Ե

Եգերաց աշխարհ, տես Լազիկա, 307, 308
Եգիպտոս, 41, 44, 45, 57, 65, 69, 140, 143, 153, 154, 155, 176, 180, 219, 228, 229, 230, 231, 232, 233, 236, 237, 238, 240, 241, 242, 245, 246, 247, 248, 249, 250, 251, 252, 253, 254, 256, 257, 258, 261, 262, 263, 264, 265, 267, 268, 269, 272, 273, 274, 286, 290, 294, 336, 356, 387, 388, 400, 403, 425, 426, 443, 444, 463
Եգրիս, 303, 309, 310, 312, 317
Եդեսիա, 154, 169, 232, 247, 251, 386
Եդեսիայի կոմսություն, , 238, 239
Եթովպիա, 22
Եղվարդ, 97, 433, 434
Եմեն, 212, 213, 241, 242, 247, 257, 267, 271
Ենիկալե, 438, 439
Եշիլ-ջամի, 463
Եվպատորիա, 464
Եվրոպա, 15, 45, 47, 57, 58, 68, 85, 91, 108, 182, 195, 198, 208, 226, 227, 250, 269, 278, 339, 340, 355, 359, 385, 394, 396, 399, 404, 408, 409, 412, 415, 429, 430, 432, 437, 442, 443, 448, 452, 461
Երանշահր, տես Իրան, 17, 27, 35
Երասխ, տես Արաքս, 222
Երերույք, 526
Երզնկա, 385, 387, 390, 395, 401, 402, 413
Երնջակ, 509
Երուսաղեմ, 137, 144, 151, 153, 185, 205, 219, 238, 239, 240, 241, 242, 252, 253, 256, 259, 264, 266, 292, 304, 336, 341, 449, 451
Երուսաղեմի թագավորություն, 238, 239, 241, 247
Երևան, 80, 82, 97, 105, 119, 121, 122, 123, 124, 125, 266, 350, 362, 364, 366, 367, 393, 401, 406, 421, 422, 423, 425, 433, 434, 468, 477, 512, 514, 515, 516, 521
Եփեսոս, 136, 137, 139, 472
Եփրատ, 33, 34, 57, 63, 68, 74, 167, 168

Զ

Զաբուլիստան, 62
Զագրոսյան լեռներ, 34
Զաենդերուդ, 90, 118, 119
Զախուր, 352
Զապետրա, 174
Զարավանդ, 87
Զարեհավան, 87
Զաքաթալա, 526
Զենտա, 430

Զմմառ, 265, 266
Զմյուռնիա, 156, 336, 427, 440, 455
Զոհաբ, 82
Զորավանդ, 428
Զու-Քարեն, 32

Է

Էդիրնե, տես Ադրիանապոլիս, 394, 464
Էլբուրս, 48, 55, 57
Էմինե, 425
Էջմիածին, 91, 105, 208, 345, 363, 371, 444, 445, 447, 450, 455
Էպիվատ, 195
Էպիրոս, 181, 183, 184, 186, 188, 189, 190, 205, 209
Էսքիշեհիր, տես Դորիլեա, 385, 393
Էվբեա, 181
Էրզրում, 266, 349, 385, 390, 395, 399, 402, 405, 406, 407, 413, 421, 423, 424, 425, 432, 435, 436, 458, 462, 463, 519
Էրուշեթի, 311

Թ

Թաբարիստան, 35, 46, 47, 50, 88
Թաբասարան, 492
Թալեղան, 24
Թալիշ, 70, 73, 79, 515
Թավրիզ, 57, 61, 63, 65, 68, 73, 74, 75, 76, 78, 80, 82, 84, 88, 89, 90, 95, 96, 336, 346, 401, 402, 405, 406, 408, 417, 422, 423, 424, 425, 433, 434, 505, 506, 507, 508, 509, 510, 513, 515, 519
Թբիլիսի, տես Թիֆլիս, 350, 379, 498
Թելավ, 332, 369
Թենգի, 520
Թենեդոս, 448
Թեոդոսոպոլիս, 175
Թեսալոնիկե, 148, 159, 164, 169, 171, 172, 174, 181, 185, 186, 187, 190, 195, 196, 197, 198, 205, 394
Թերեք, 347, 502
Թեքֆուր–Սերայ, 209
Թիկրիտ, 240, 249
Թիհամի հարթավայր, 212
Թիննիս, 290
Թիֆլիս, 77, 97, 105, 312, 352, 363, 366, 368, 369, 370, 374, 375, 378, 407, 496, 499, 501, 516, 523
Թոհարիստան, 35
Թոխաթ, Թոկատ, 386, 420, 440
Թոփկափը, 464
Թոռոք (Թրիալեթ), 315, 318, 319, 498

Թրակիա, 133, 148, 149, 153, 157, 161, 163, 168, 174, 181, 187, 188, 196, 197, 394
Թումեք (Թմուկ), 407
Թունիս, 219, 229, 230, 287
Թուս, 61
Թուրքեստան, 57
Թուրքմենստան, 70

Ի

Իդաջ, 60
Իզմիթ, տես Նիկոմեդիա, 393
Իթիլ, 45
Իլլիրիա, 430
Իկոնիա, 255, 325, 385, 387, 392, 395, 456, 463
Իկոնիայի սուլթանություն, 179, 180, 184, 187, 192, 236, 255, 385, 386, 389, 391, 392, 459
Իղալթո, 332
Իմերեթ, 76, 340, 341, 343, 344, 348, 349, 351, 353, 354, 355, 356, 370, 371, 372, 374
Իշխան, 311, 377
Իոր, 317
Իսպանիա, 81, 142, 147, 149, 153, 226, 230, 287, 289, 345, 442
Իստախր, 511
Իվերոն վանք, 332
Իրակլիոն, 162
Իրան, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 37, 38, 39, 40, 41, 42, 43, 44, 45, 46, 47, 48, 49, 50, 51, 52, 53, 54, 55, 56, 57, 58, 59, 60, 61, 62, 63, 64, 66, 67, 68, 70, 71, 73, 74, 75, 76, 77, 78, 79, 80, 81, 82, 83, 84, 86, 87, 88, 89, 90, 91, 92, 93, 94, 95, 96, 97, 98, 99, 100, 101, 102, 103, 104, 105, 106, 107, 108, 109, 110, 116, 117, 118, 119, 120, 121, 122, 124, 125, 126, 137, 139, 147, 149, 218, 219, 228, 236, 245, 283, 287, 300, 301, 302, 305, 307, 308, 344, 345, 346, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 357, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 367, 368, 369, 370, 373, 383, 388, 389, 391, 402, 403, 405, 406, 407, 408, 422, 423, 424, 425, 432, 433, 434, 435, 436, 440, 457, 478, 509, 515, 516, 517, 518, 519, 520, 521, 522, 523, 526
Իրանական Քրդստան, 50, 68
Իրաք, 33, 46, 48, 52, 53, 54, 56, 57, 60, 61, 64, 66, 68, 70, 74, 75, 76, 81, 82, 99, 100, 120, 221, 225, 228, 230, 236, 237, 240, 257, 259, 261, 264, 266, 267, 270, 286, 293, 294, 322, 434, 463, 496, 499, 502, 505, 508, 511
Իրտիշ, 55, 63
Իֆրիկիա, տես Թունիս, 219, 229, 230

Լ

Լա Մանշ, 272
Լազերի երկիր, 147
Լազիկա, 154, 300, 304, 306, 307, 308, 310, 470, 485
Լազիստան, 17, 20
Լալեղ, 464
Լահիջան, 70

Լայզան, 489, 491, 492, 498
Լանգոբարդիա, 167
Լատինական կայսրություն, տես Ռոմանիա, 180, 181, 182, 183, 205, 386
Լարիսա, 186
Լեհաստան, 79, 197, 198, 400, 424, 428, 429, 437, 438
Լենքորան, 519
Լեչխում, 340
Լեպանտո, 407, 426
Լընջան, 90
Լիբանան, 219, 238, 239, 250, 251, 252, 253, 257, 259, 263, 265, 266, 267, 269, 270, 421, 425, 484
Լիխ, 310, 314, 315
Լիկանդոս, 168, 174
Լիոն, 189
Լյակիթ, 526, 527
Լոնդոն, 198, 437
Լոռե, 322, 323, 336, 337, 340
Լոռի, 328, 338, 350, 496
Լոտֆոլլա (մզկիթ), 118
Լոփնաս, 474
Լվով (Լեմբերգ), 428
Լուրիստան, 55, 56, 60, 61, 74, 79, 80, 100, 353
Լևանտ, 90

Խ

Խաբարաս, 386
Խան Դուան, 294
Խանձթա, 311, 332
Խալդիա, 179, 187
Խաղաղ օվկիանոս, 55
Խաչեն, 331, 387, 487, 488
Խաս, 272
Խերսոնես, 148, 157
Խիշտալան, 498
Խիվա, տես Խորեզմ, 98
Խոյ, 87, 88, 402, 423
Խոր Վիրապ, 470
Խորասան, 17, 19, 22, 35, 40, 45, 46, 47, 50, 52, 54, 56, 61, 62, 63, 64, 66, 70, 75, 77, 78, 79, 84, 95, 100, 101, 104, 106, 109, 120, 227, 229, 235, 255, 282, 286, 383, 396, 502, 521, 522
Խորեզմ, 45, 50, 52, 54, 55, 75, 98, 235, 237, 243, 383, 387
Խորեզմշահերի պետություն, 55, 56, 121
Խրեսիլի, 371
Խուանխե, 63
Խուզիստան, 16, 35, 45, 48, 52, 55, 56, 60, 66, 68, 70, 75, 96, 101

Խուժաստան, տես Խուզիստան, 35
Խուճապի վանք, 377
Խուրսան, 488

Ծ

Ծամնդավ, 174
Ծղարոսթավի, 376
Ծործորի վանք, 88
Ծրոմի, 376

Կ

Կաբարդա, 347, 438, 439
Կաղիսիա, Կաղեսիա, Ղաղեսիե, 34, 219
Կազան, 347
Կաթողիկե (Մեծ Լավրայի), 208
Կաթողիկե (Ալավերդու), 377
Կալաբրիա, 167
Կալոնարոս, 387
Կախեթ, 76, 105, 309, 310, 314, 316, 317, 318, 319, 326, 335, 341, 343, 346, 347, 348, 350, 351, 352, 353, 354, 355, 359, 360, 361, 362, 363, 369, 371, 378, 488, 495, 496, 497, 514, 515, 516, 519, 522
Կահիրե, 231, 240, 241, 246, 247, 248, 249, 250, 254, 256, 257, 264, 265, 269, 272, 273, 274, 403, 417
Կահկահե, 77
Կամախ, 399, 402
Կամենեց, 428
Կայսերի, 462
Կանգարք, 300
Կապադովկիա, 133, 155, 168, 190, 308, 385
Կապաղակ, 319, 326, 474, 475, 476, 477, 479, 492, 493, 498, 500, 501
Կապան, 387
Կապույտ մզկիթ, 119
Կապուտան լիճ, տես Ուրմիա լիճ, 87
Կաշգար, 53
Կասպից ծով, 19, 45, 48, 52, 77, 88, 90, 95, 103, 518, 520, 525, 528
Կատալոնիա, 250
Կարա Թափու Օվա, 395
Կարակ, 250
Կարամանիա, 68, 385, 395, 399, 403, 421
Կարամանի էմիրություն, 198
Կարաջադաղ, 392
Կարասի, 392, 393
Կարբի, 433
Կարթագեն, 145, 153, 157
Կարթագենի էքսարխություն, 149

Կարին, 168, 175, 480
Կառլովից, 430, 431, 432
Կարմիր ծով, 212
Կարս, 76, 77, 80, 96, 97, 326, 405, 406, 423, 425, 433, 516
Կեդոնիա–Դիդոնիա, 488
Կենտրոնական Ասիա, 19, 55, 219, 226, 228, 382
Կեսարիա, 136, 144, 154, 386, 387, 400, 413, 470
Կերեշտես, 420
Կերչ, 438, 439
Կզզլ Իրմակ, 57
Կիպրոս, 68, 156, 157, 164, 168, 175, 191, 219, 407
Կիլիկիա, 57, 154, 174, 175, 177, 179, 190, 191, 192, 193, 247, 248, 254, 266, 386, 387, 390, 400, 403, 416, 421, 447
Կիլիկյան Հայաստան, 14, 88, 193, 240, 248, 254, 387, 388, 389, 400, 403
Կիլիկիայի թագավորություն, տես Կիլիկյան Հայաստան, 192
Կիևյան Ռուսիա, 168
Կլաս, 207
Կլդեկար, 315, 318
Կլերմոն, 237
Կլոկոտնիցա, 186
Կղարջք, 310, 311, 332, 336
Կոգովիտ, 222
Կող, 310
Կողքիս, տես Լազիկա, 133, 138, 147, 300, 303, 306, 312
Կոնյա, տես Իկոնիա, 390, 413
Կոսովո, 197, 395, 397
Կոստանդնուպոլիս, 25, 28, 49, 79, 133, 135, 145, 151, 154, 169, 171, 172, 173, 174, 175, 180, 183, 186, 188, 189, 194, 197, 203, 206, 207, 208, 226, 310, 325, 385, 386, 396, 397, 398, 402, 417, 422, 429, 433, 441, 444, 445, 446, 447, 455, 463, 472, 484, 485
Կովկաս, 20, 63, 68, 125, 126, 137, 142, 147, 221, 224, 227, 251, 276, 303, 317, 319, 320, 330, 337, 338, 344, 345, 348, 368, 438, 441, 463, 509, 510, 523
Կովկասյան լեռնաշղթա, 57, 479, 510, 528
Կորդովա, 149, 230
Կորդովայի խալիֆայություն, տես Անդալուսիա, 229
Կորնթոս, 181
Կորֆու, 180, 399
Կրետե, 168, 175, 181, 399, 426, 428
Կում, 526
Կում Կափու, 450
Կումիս, 54
Կումուրդո, 376
Կուտկաշեն, 526
Կուրտերի իշխանապետություն, 57

Հ
Հադրամաութ, 213
Հալեպ, 76, 175, 176, 232, 239, 241, 246, 250, 253, 256, 257, 258, 261, 264, 265, 266, 267, 290, 294, 403, 413, 423
Հակար, 479
Համադան, 35, 45, 48, 52, 54, 61, 64, 66, 75, 82, 90, 95, 96, 100, 235, 266, 425, 433, 434, 498, 499
Հայաստան, 14, 15, 17, 18, 19, 24, 26, 27, 28, 29, 30, 35, 44, 53, 57, 60, 61, 63, 64, 65, 66, 67, 68, 70, 71, 72, 73, 74, 76, 87, 88, 89, 91, 112, 115, 116, 120, 133, 138, 139, 143, 147, 148, 149, 153, 154, 155, 157, 159, 165, 168, 169, 174, 175, 176, 177, 199, 207, 221, 222, 223, 224, 227, 229, 230, 232, 240, 248, 249, 251, 252, 253, 256, 266, 290, 291, 298, 299, 300, 302, 304, 305, 307, 308, 310, 314, 315, 316, 322, 325, 329, 331, 336, 337, 345, 363, 367, 377, 382, 383, 384, 385, 389, 390, 391, 395, 400, 418, 434, 440, 443, 469, 470, 472, 474, 475, 479, 480, 481, 482, 483, 484, 485, 486, 489, 490, 491, 496, 502, 503, 511, 515, 524, 525, 526, 527
Հայկական բարձրավանդակ, 67, 68
Հայոց Բլուր, 367
Հասան Կալա, 423
Հարան, 239
Հարք, 168, 175
Հեթումյան իշխանություն, 190
Հելլադա, 148, 160, 161, 429
Հեր, տես Խոյ, 87
Հերաթ, 45, 47, 57, 62, 63, 66, 70, 75, 78, 84, 93, 96, 98, 104, 243, 509
Հերակլիոն, 388
Հերեթ, 309, 310, 314, 318, 319, 335, 479, 487, 488
Հերցեգովինա, 400, 464
Հերք, տես Հերեթ, 310
Հինդյան լեռնաշղթա, 56
Հինդոս, 19, 55, 63, 98, 226
Հինդուստան թերակղզի, 50
Հինդուստան, 121
Հիջազ, 212, 214, 241, 247, 257, 259, 272, 287, 288
Հիրա, 33, 34
Հիրա (սար), 214
Հյուդավենդրգյար, 392
Հնդկական օվկիանոս, 60, 68, 81, 227
Հնդկաստան, 19, 22, 35, 37, 45, 47, 50, 51, 60, 63, 76, 81, 91, 92, 98, 111, 115, 121, 147, 219, 226, 250, 272, 273, 339, 361, 412, 436, 502, 521
Հոլանդիա, 81, 441
Հորաբարան, տես Միջագետք, 22
Հորմուզ, 45, 60, 76, 81, 84
Հոոդոս, 155, 156, 404
Հոոմ, 16, 18, 23, 24, 26, 27, 28, 121, 132, 139, 140, 145, 146, 155, 161, 169, 237, 238, 358, 374

Հոոմեական կայսրություն, 23, 26, 132, 141, 144, 145, 298
Հոոմկլա, 191, 193
Հրեաստան, 251
Հորդանան, 257
Հուդայի անապատ, 304
Հունգարիա, 68, 188, 197, 198, 400, 401, 403, 404, 405, 419, 428, 429, 430, 463
Հուր, 62

Ձ
Ձիրավ, 300, 468, 469
Ձվելի Գավազի, 376

Ղ
Ղաբալա, տես Կապաղակ, 492, 513
Ղազա, 256
Ղազախ, 362, 366, 521
Ղազի-Ղումուխ, 97, 517, 520
Ղազնի, 50, 51
Ղազնիների պետություն, 52, 53
Ղազվին, 55, 61, 66, 76, 78, 79, 90, 94, 122, 495
Ղայթաղ, 517
Ղանդահար, 63, 70, 76, 81, 83, 93, 98, 355
Ղարաբաղ, 61, 64, 73, 104, 105, 106, 126, 266, 336, 345, 352, 353, 522
Ղարադաղ, 88
Ղարաղորում, 57
Ղարբիյյա, 232
Ղեշմ, 81, 83
Ղրիմ, 79, 141, 164, 187, 195, 338, 345, 347, 356, 367, 388, 400, 406, 424, 425, 430, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 464, 513, 515
Ղուբա, 366, 519, 520, 522, 523
Ղում, 124, 353, 354
Ղփչաղ, 509

Ճ
Ճար, 359
Ճանիք, 147
Ճղոնդիդ, 306, 310, 320
Ճորոխ, 303

Մ
Մաարաթ ալ-Նուման, 238
Մագնեսիա, 189
Մադաին, տես Տիգրոն, 34
Մադերի-Շահ, 119
Մադինա աս-սալամ, տես Բաղդադ, 228

Մազանդարան, 54, 56, 64, 70, 90, 95, 100, 103, 104, 519, 522
Մալաթիա, 385, 413, 463
Մալթա, 404, 426, 429
Մալվիա, 293
Մակեդոնիա, 149, 161, 164, 166, 173, 186, 187, 188, 196, 197, 429, 464
Մակու, 88
Մահարաշթրա, 98
Մահմուդաբադ, 513
Մաղարո, 353
Մաղրիբ, 226, 229, 230, 241, 257, 287, 290
Մամեստիա, 168
Մամրուխ, 526, 527
Մայար, 119
Մանազկերտ, 169, 173, 177, 236, 317, 384, 385
Մասկաթ, 84
Մասջիդ ալ-Նաբի, 217
Մասքութք, 475, 476
Մավարաննահր, 40, 47, 54, 57, 62, 75, 78, 226, 229, 286, 383
Մավրիտանիա, 226
Մարաբդա, 352
Մարաղա, 51, 57, 60, 89
Մարանդ, 88, 425
Մարաշ, 175, 413
Մարաստան, 17
Մարաց աշխարհ, տես Մարաստան, 35
Մարգիանա, 17
Մարդակյանի, 528
Մարիցա, 197
Մարմարի ծով, 198
Մարոկո, 229, 257, 287
Մարջ Դաբիք, 256, 257
Մարսել, 448
Մարտիրուպոլիս, 168, 176
Մարտղուի, 352
Մեդիա, տես Մարաստան, 17, 484
Մեդինա, 292
Մեդինաթ աս-սալամ, տես Բաղդադ, 41
Մելիտենե, 174, 192, 193
Մելնիկ, 185
Մեծ Բրիտանիա, տես Անգլիա, 272
Մեծ Կողմանք, 482
Մեծ Հայք, 28, 87, 190, 399, 469, 472, 473
Մեծ Լավրայի Կաթողիկե եկեղեցի, 208
Մեծ Լուր, տես Լուրիստան, 60

Մեյդանե-Շահ, 117
Մենգրելիա, 76
Մենթեշե, 392, 395, 396
Մեշհեդ, 61, 75, 78, 100, 106
Մետաքսի ճանապարհ, 26
Մեսիենե, 16
Մերձավոր Արևելք, 14, 22, 29, 43, 45, 53, 55, 56, 67, 74, 91, 96, 191, 194, 212, 235, 255, 295, 319, 325, 336, 339, 344, 356, 371, 382, 385, 390, 502, 511, 526
Մերվ, 23, 36, 47, 78, 109, 235
Մերվի օազիս, տես Մարգիանա, 17, 54, 57, 62
Մեքրան, 17
Մեքքա, 117, 214, 215, 216, 225, 241, 253, 257, 269, 286, 292, 293
Միլեթ, 171
Մինդորի, 329
Միջագետք, 16, 18, 19, 22, 26, 28, 32, 33, 34, 37, 42, 44, 53, 57, 65, 74, 76, 82, 143, 147, 148, 154, 242, 249, 251, 252, 253, 256, 259, 293, 390, 396, 403, 405, 425, 485, 487, 489
Միջերկրական ծով, 19, 26, 55, 179, 385, 404, 422, 440
Միջին Ասիա, 22, 32, 44, 45, 46, 52, 54, 64, 67, 75, 98, 235, 243, 245, 255, 276, 301, 383, 389, 392, 526
Միջին Արևելք, 43, 45, 53, 67, 74, 91, 336
Միրիոկեֆալոն, 386
Մծբին, 19, 137, 149, 176, 239, 298, 299, 469
Մշո դաշտ, 65
Մոլդավիա, 398, 400, 419, 431, 438, 442
Մողոլիստան, 62
Մոնեմվասիա, 198
Մոնղոլական կայսրություն, 15, 58, 121
Մոնղոլիա, 56, 243
Մոսկովյան պետություն, 400
Մոսուլ, 229, 239, 259, 266, 386, 403, 436
Մովական, 488
Մորեա, 182, 183, 196, 197, 198, 205, 399, 419, 429, 430, 432, 438, 443
Մցխեթ, 304, 306, 310, 313, 376, 377, 378
Մուխրան, 343, 344, 346, 351, 353, 367, 368
Մուղան, 84, 97, 105, 222, 361, 435, 501, 503, 505, 509, 520
Մուլթան, 50
Մուշ, 406
Մուշկուր, 499
Մուրչեխոր, 95

Յ

Յազիդիյե, տես Շամախի, 493
Յայիկ, տես Ուրալ, 63
Յանցզի, 63
Յաշ (Յասսի), 438, 442

Յասրիբ, տես Մադինա, 215
Յեզդ, 70, 94

Ն

Նաբլուս, 270
Նազարեթ, 269, 270
Նախիջևան, 60, 61, 63, 73, 80, 82, 222, 406, 422, 425, 433, 499, 509, 514, 515, 521
Նաջաֆ, 96, 221, 294, 436
Նավպակտ, 186
Նարին-Կալա, 528
Նեապոլ, 68, 188, 189
Նեկրես, 346
Նեհավենդ, 35, 108, 219
Նեղոս, 246, 249, 273, 274
Նես Եկլեսիա, 208
Նիկեա, 137, 138, 152, 158, 159, 161, 169, 173, 174, 179, 181, 183, 184, 185, 186, 187, 192, 193, 194, 205, 209, 385, 386, 393, 416
Նիկեական կայսրություն, 182, 185
Նիկոմեդիա, 179, 189, 393
Նիկոպոլիս, 186, 197, 395
Նիկործմինդա, 377
Նիմրուզ, 22
Նիմֆեա, 181
Նինոծմինդա, 376
Նինվե, 154
Նիշապուր, 45, 46, 47, 61, 62, 235, 383
Նիսիբին, տես Մծբին, 19
Նոր Շամախի, 520
Նոր Ջուղա, 81, 85, 86, 90, 91, 118, 266
Նվարսակ, 29, 30
Նուբիա, 241
Նուր Օսմանիե, 462, 464
Նուխի, տես Շաքի, 528

Շ

Շաբարան, 492, 495, 499, 503, 512
Շահ-Զադե (մզկիթ), 464
Շահրիսթան-ե Յեզդիզերդ, 24
Շամախի, 72, 73, 77, 97, 106, 326, 360, 369, 433, 489, 495, 499, 500, 502, 503, 507, 509, 510, 511, 512, 514, 515, 516, 517, 518, 519, 520, 523, 525, 527
Շամբ, 88
Շամքոր, 325, 499, 500
Շամքոր (գետ), 496
Շանդան, 491
Շավշեթ, Շավշք, 310, 336

Շատբերդ, 311, 332
Շարուր, 73
Շեբանգարե, 60
Շեբլ, 119
Շաքի, 76, 347, 487, 488, 493, 495, 496, 499, 501, 506, 507, 508, 509, 514, 515, 516, 517, 519, 521, 522, 523, 528
Շիրազ, 45, 46, 48, 61, 101, 102, 104, 351, 511, 522
Շիրակ, 406, 484
Շիրիմք, 314
Շիրվան, 15, 57, 68, 73, 76, 77, 83, 95, 96, 111, 124, 227, 316, 319, 350, 405, 406, 407, 433, 435, 479, 489, 490, 491, 492, 493, 494, 495, 496, 497, 498, 499, 500, 501, 502, 503, 504, 505, 506, 507, 508, 509, 510, 511, 512, 513, 514, 515, 516, 517, 519, 520, 521, 522, 524, 525, 527, 528
Շոշաստան, տես Սուզիանե, 16
Շորագյալ, տես Շիրակ, 406
Շորապան, 304, 370
Շվեդիա, 79, 436, 442
Շումեն, 439
Շուշի, 105, 106, 369, 523
Շուշթար, 35

Ո

Ոսկե Հորդա, 57, 61, 63, 336, 337, 502, 503, 504, 505, 506
Ոստան, 405
Որմի, տես Ուրմիա, 87
Որմիզդական դաշտավայր, 17

Չ

Չալդրան, 74, 256, 402, 423
Չանդարլը, 393
Չեխիա, 197
Չեշմե, 438
Չըլդըր, 77, 345, 349, 357, 407
Չիլանդար, 208
Չինաստան, 22, 45, 60, 121, 142, 147, 243, 382, 385
Չհար-Բաղ, 118
Չհարմհալ, տես Բախթիարի, 90,
Չմանկատուկ, 387, 388, 391
Չող, 474, 475, 476, 478, 479, 490, 525
Չորրորդ Հայք, 485

Պ

Պաղեստին, 133, 144, 168, 176, 185, 219, 238, 241, 247, 250, 251, 252, 253, 256, 257, 259, 264, 265, 266, 267, 270, 287, 304, 308, 332, 336, 403
Պանագիայի եկեղեցի, 209

Պանոնիա, 148
Պարթևական Իրան, տես Իրան, 16
Պարտավ, 331, 476, 478, 479, 480, 486, 490, 492, 495, 508
Պարսից ծոց, 17, 19, 35, 45, 53, 55, 57, 60, 61, 74, 81, 82, 83, 84, 98, 212, 267, 440
Պարսկահայք, 87, 307
Պարսկաստան, տես Իրան, 18, 27, 28, 30, 73, 80, 98, 138, 139, 144, 147, 149, 154, 256, 257, 266, 298, 303, 307, 473, 502
Պարսք, 16, 35, 36
Պելեպոնես, 181, 188, 190, 197, 429
Պետերբուրգ, 363, 365, 518
Պետրա, 148, 307
Պետրիծոն, 332, 341
Պերեկոպ, 440
Պիզա, 237, 250
Պղնձահանք, 377
Պոդոլիա, 428, 430
Պոժևերաց, 432
Պոլտավա, 431
Պովոլժիե, 45
Պրոպոնտիդյան կղզիներ, 171
Պրուսիա, 436, 437, 440, 441, 442
Պրուտ, 431, 432
Պուատիե, 226

Ջ

Ջաբալ, 229
Ջալուլա, 35
Ջամ, 62
Ջանիկ, 420, 521
Ջաննաբա, 45
Ջավախք, 311, 316, 331, 344, 349
Ջար, 521
Ջաուսակ, 293
Ջազիրա, 57, 277, 229, 239, 485
Ջեհեննեմդերե, 420
Ջենովա, 57, 188, 189, 195, 196, 197, 237, 260
Ջենովական հանրապետություն, 194, 195
Ջերաուն, 60
Ջիքե, 370
Ջղախոռ, 90
Ջվար, 308, 376
Ջուղա, 69, 80, 90, 422, 515, 516
Ջումա, 504, 527, 528
Ջուրզան, տես Վրաստան, 227

Ռ

Ռաձին, 428
Ռաձա, 319, 340, 371
Ռավեննա, 146, 149, 155, 159, 206, 207
Ռավեննայի էքսարխություն, 149, 153,
Ռեյ, 45, 46, 47, 48, 50, 51, 52, 54, 66, 88, 235
Ռեյշահր, 35
Ռեշտ, 70, 435, 518, 519, 520
Ռիդանիա, 257
Ռիմնիկ, 442
Ռոդոպոլիս, 304
Ռոմանիա, 181, 182, 205
Ռուբ ալ–Խալի, 212
Ռուբինյան իշխանություն, 192, 390
Ռուիս, 320
Ռումելի, 425, 440, 442, 446, 451
Ռումելի Հիսար, 398, 463
Ռումի սուլթանություն, տես Իկոնիայի սուլթանություն, 179, 255, 385, 386, 387, 388, 389
Ռուսաստան, 78, 79, 81, 91, 96, 105, 106, 208, 324, 336, 346, 347, 348, 354, 355, 356, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 367, 368, 369, 370, 371, 372, 428, 429, 430, 431, 432, 433, 435, 436, 437, 438, 439, 440, 441, 442, 517, 518, 519, 520, 522, 523
Ռուսիա, 45, 168
Ռուսթավ, 302, 312, 316, 319, 324, 346
Ռուստեմդար, 75
Ռուտուլ, 525
Ռև–Արդաշիր, տես Ռեյշահր, 35

Ս

Սամիլախորո, 343
Սաբարաթիանո, 343
Սաբեդիանո, 340
Սաբզեվար, 62, 63
Սադուն, 494
Սաինգիլո, 347, 350
Սալմաստ, 87, 88, 422, 423
Սալյան, 512, 513, 519, 520
Սակարիա, 393
Սակըզ, տես Հոոդոս, 404
Սաղամաս, տես Սալմաստ, 87
Սամանյանների էմիրություն, 47, 229
Սամարղանդ, 47, 63, 64, 88
Սամարրա, 283, 284, 293
Սամեգրելո, 340
Սամթավիս, 377
Սամթավրո, 312

Սամծեվրիս, 376
Սամշվիլդե, 302, 319
Սամոսատ, 157, 164, 174, 175
Սամցխե, 311, 331, 332, 334, 335, 338, 340, 341, 342, 343, 344, 345, 348, 349, 351, 357
Սամուր, 509
Սայդա, 247, 258, 259, 261, 269, 270
Սասանյան պետություն, տես Իրան, 16, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 26, 27, 28, 31, 32, 33, 35, 43, 73, 116, 119
Սասուն, 266
Սատալա, 470
Սարաևո, 464
Սարդիկա, տես Սոֆիա, 169, 174
Սարի, 45
Սարիր, 489, 491, 494
Սարուխան, 392, 395, 396, 421
Սացիցիանո, 343
Սաուդյան Արաբիա, 288
Սաքաստան, տես Սիստան, 17, 19
Սաֆադ, 242, 269, 270
Սեբաստապոլիս, 303, 304
Սեբաստիա, 67, 266, 385, 386, 387, 390, 395, 396, 406, 413, 420, 424, 440, 462
Սելիմե, 294
Մեծ Սելջուկների պետություն, 385
Սելևկիա, 16
Սեյիդների պետություն, 64
Սեյիստան, տես Սիստան, 47, 93
Սեմնան, 70
Սերախս, 61
Սերբաղարների պետություն, 62
Սերբիա, 196, 394, 399, 419, 430, 432, 436, 443, 444
Սերվիստան, 116
Սեփեդլու, 420
Սեֆյան Իրան, տես Իրան, 15, 76, 79, 83, 86, 345, 348, 355, 401, 402, 404, 405, 406, 423, 523
Սվազ, Սըվաս, տես Սեբաստիա, 67, 395, 424, 462
Սինայ, 332, 474, 524
Սինդ, 50, 226
Սինոպ, 179, 187, 387
Սիոն, 378
Սիս, 248, 400
Սիստան, 17, 35, 45, 47, 50, 52, 54, 56, 62, 63, 64, 70, 79, 93, 229
Սիստով, 442
Սիտվորոտոկ, 419
Սիրաֆ, 45

Սիրիա, 19, 20, 26, 57, 69, 133, 147, 148, 219, 220, 225, 228, 230, 232, 236, 237, 238, 239, 240, 241, 242, 245, 247, 250, 251, 252, 253, 256, 257, 258, 259, 261, 265, 266, 267, 268, 269, 270, 273, 286, 287, 290, 293, 294, 308, 396, 403, 421, 426, 427, 440, 464
Սիրիական անապատ, 34, 53, 212
Սիր Դարյա, 383
Սիցիլիա, 145, 155, 159, 160, 164, 167, 169, 188, 189, 190, 448
Սլովենիա, 430
Սյոգյուտ, տես Բյութանիա, 392
Սյունիք, 89, 222, 223, 338, 473, 474, 479, 489
Սողանլու, 423
Սոմխիթ, 335
Սոմխիթ–Սաբարաթիանո, 344
Սոֆիա, 169, 413, 416
Սոֆյան, 422
Սպեր, 310
Սվանեթ, 148, 319, 348
Սվետիցխովելի, 346, 377, 378
Ստահր, 16, 35, 36
Ստամբուլ, տես Կոստանդնուպոլիս, 80, 258, 268, 269, 270, 413, 463, 464, 519
Սպահան, 16, 35, 45, 46, 48, 50, 51, 52, 60, 61, 62, 63, 64, 66, 75, 79, 84, 90, 93, 94, 95, 96, 101, 104, 107, 117, 118, 119, 125, 227, 235, 237, 286, 317, 352, 360, 432, 497, 515
Ստուդիտների վանք, 173
Սուզիանե, 16
Սուլեյմանյան լեռներ, 62
Սուլեյմանիե, 117, 294, 464
Սուլթանիե, 61, 63, 66, 88, 89, 508, 510
Սուխում, 340, 356
Սուր, 270
Սուրամ, 309, 353
Սուրխաբ, 513
Սև լեռներ, 332
Սև ծով, 53, 142, 148, 179, 195, 303, 319, 338, 399, 405, 430, 432, 435, 437, 438
Սևաստոպոլ, 441
Ս. Թադևոսի վանք, 88, 89
Ս. Ապոլինարե եկեղեցի, 207
Ս. Ապոլինարե Նոր եկեղեցի, 207
Ս. Առաքելոց եկեղեցի, 207
Ս. Աստվածածին եկեղեցի, 266, 378, 528
Ս. Բաքոսի եկեղեցի, 207
Ս. Գեորգ եկեղեցի, 449, 453
Ս. Իրենե բազիլիկ, 207
Ս. Խաչ (Ջվարի), 376
Ս. Կատարինե, 524
Ս. Հակոբի վանք, 253
Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, 292,

Ս. Պետրոսի Աթոռ, 182
Ս. Սարգսի եկեղեցի, 207
Ս. Սիոն (Բոլնիս), 376
Ս. Սիոն (Աթեն), 376
Ս. Սոֆիա, 142, 165, 181, 183, 188, 198, 207, 209
Ս. Վիտալի եկեղեցի, 207

Վ

Վալախիա, 197, 419, 431, 432, 436, 442
Վաղարշապատ, 478, 483
Վան, 75, 80, 266, 405, 406, 424, 436
Վանա լիճ, 149
Վանքասար, 526, 527
Վաչնաձիանի Կղվելաձմինդա, 376
Վառնա, 198
Վասպուրական, 76, 87, 169, 176, 222, 315, 405
Վարջան, 473
Վարսան, 488
Վատիկան, 89
Վատոպեդի, 208
Վարդանակերտ, 227, 486
Վարեն, 442
Վարձիա, 344, 377
Վենետիկ, 68, 181, 182, 186, 188, 189, 197, 237, 250, 260, 266, 399, 401, 429, 432
Վենետիկի հանրապետություն, 68, 188, 189, 194, 345, 396, 399, 401,
Վերսալ, 86
Վլադիմիր–Սուզդալյան իշխանություն, 324
Վոլգա, 63, 77, 78, 224, 406,
Վոլտուռնո, 146
Վրաստան, 15, 17, 24, 29, 57, 63, 69, 72, 76, 77, 95, 96, 104, 105, 106, 115, 155, 187, 199, 208, 227, 251, 298, 299, 300, 301, 302, 304, 305, 306, 307, 308, 309, 310, 312, 314, 315, 316, 317, 318, 319, 320, 321, 322, 323, 324, 325, 326, 329, 330, 331, 332, 333, 334, 335, 336, 337, 338, 339, 340, 341, 342, 343, 344, 345, 351, 352, 353, 355, 356, 358, 359, 360, 361, 362, 363, 364, 365, 366, 367, 368, 369, 370, 371, 372, 373, 374, 376, 377, 378, 379, 386, 405, 406, 407, 433, 434, 441, 442, 489, 496, 497, 498, 499, 500, 502, 504, 507, 508, 515, 521, 523

Տ

Տայք, 168, 169, 176, 310, 311, 314, 332, 377
Տանժեր, 226
Տաշիր, 300, 472, 473
Տաշիր–Ձորագետ, 312, 328
Տավրիկա, 133
Տարոն, 168, 221, 222
Տարսոն, 168, 192, 400

Տարսուս, 254
Տեմեշվար, 413, 432, 436
Տիբերիա, 241, 242, 269
Տիգրիս, 17, 35, 63, 67, 168, 249, 283
Տիգրոն, 17, 27, 28, 29, 30, 33, 34, 116, 300
Տիկղվի, 499
Տիվրիկ, 387
Տյուրոս, 247
Տուսկանա, 269
Տրանսիլվանիա, 400, 404, 419, 429, 430
Տրապիզոնի կայսրություն, 67, 183, 187, 199, 209, 325, 335, 338, 399
Տրիեստ, 453
Տրիպոլի, 155, 239, 258, 259, 261, 264, 269, 270
Տրիպոլիի կոմսություն, 239, 247
Տուլոն, 272
Տփղիս, տես Թիֆլիս, 222, 302, 308, 309, 315, 316, 319, 322, 327, 328, 329, 336, 338, 341, 344, 345, 346, 347, 351, 358, 360, 362, 367, 368, 496, 502
Տևրիկ, 165, 174

Ց

Ցեյլոն, 22
Ցիխիսձիրի, տես Պետրա, 307
Ցիմպե, 394
Ցրի, 471, 477
Ցուրտավ, 306

ՈՒ

Ուլեյս, 33
Ուկրաինա, 400, 428, 430, 464
Ուտիք, 473, 477, 479, 483, 496, 503, 505
Ուրալ, 63
Ուրքնիս, 312, 320, 376
Ուրմիա, 87, 88
Ուրմիա լիճ, 51, 87, 423
Ուրֆա, տես Եդեսիա, 232, 251, 386, 420

Փ

Փազիս, տես Փոթի, 148, 304
Փառիսոս, 487
Փարիզ, 198, 359, 437, 448
Փենջաբ, 50, 226
Փեշավար, 19
Փերիա, 90
Փիլիպոպոլիս (Պլովդիվ), 180, 192, 394
Փոուգիա, 155

Փոթի, 148, 340
Փոքր Ասիա, 18, 45, 53, 57, 65, 68, 71, 73, 76, 90, 153, 154, 155, 156, 159, 160, 167, 168, 169, 170, 172, 173, 174, 178, 179, 180, 181, 183, 185, 190, 196, 207, 236, 255, 267, 276, 336, 382, 383, 384, 385, 386, 387, 388, 389, 390, 391, 392, 393, 394, 395, 396, 397, 399, 402, 403, 404, 415, 419, 420, 421, 426, 427, 436, 437, 440, 442, 443, 485
Փոքր Լուր, 60
Փոքր Հայք, 133, 395
Փուլ-ի շիկեստե, 424

Ք

Քաաբա, 292
Քաբուլ, 98, 226
Քաբուլ (գետ), 17
Քալաձոր, 497
Քալխաթ, 61
Քայս, տես Քիշ, 45, 61
Քաշան, 70, 90
Քաշմիր, 50
Քառասուն մանկան եկեղեցի, 266
Քառնալ, 98
Քասրե Շիրին, 82, 357, 426, 436
Քարբալա, 96, 221, 294, 436
Քարթլ-Կախեթ, 352, 353, 361, 522
Քարթլի, տես Վրաստան, 29, 76, 93, 105, 299, 300, 302, 309, 311, 312, 314, 315, 316, 318, 319, 320, 323, 326, 333, 340, 341, 343, 344, 345, 346, 347, 348, 349, 350, 351, 352, 353, 354, 355, 358, 359, 360, 361, 362, 363, 365, 369, 371, 373, 480, 495, 515, 516, 519, 521, 522
Քարվանդ, 90
Քելհուր, 74
Քեոփսի բուրգ, 273
Քերեհրուդ, 124
Քերման, 16, 35, 47, 48, 52, 56, 61, 66, 68, 70, 104, 286, 502
Քերմանշահ, 52, 95, 96, 266
Քիլիսադաղ, տես Վանքասար, 526, 527
Քիշ, 45
Քիշմ, 61
Քիոս, 156
Քիրքուք, 96
Քյուչուկ-Կայնարջի, 372
Քոբայր, 377
Քսան, 342, 343, 353, 354, 358, 361, 363
Քտեսիֆոն, տես Տիգրոն, 17
Քուբադաբաղ, 462
Քուբաթ աս-Սահրա, 292
Քութայիս, 317, 319, 327, 330, 332, 335, 348, 370, 371, 377

Քուստի Փառնես, 487
Քուվեյթ, 33
Քուրդևան, 498
Քուֆա, 227

Օ

Օբ, 63
Օդիշ, 348, 354, 355, 356, 370
Օթլուքբելի, տես Դերջան, 399
Օխրիդ, 186
Օման, 61, 99, 257
Օմանի ծով, 19
Օպիզա, 332
Օպսիկիոն, 156, 158, 160, 166
Օսմանյան Թուրքիա, 79, 80, 345, 348, 431, 447, 448, 449, 463
Օսմանյան կայսրություն, 15, 68, 74, 77, 84, 95, 252, 260, 261, 262, 264, 266, 267, 268, 271, 409, 413, 414, 415, 418, 419, 426, 430, 431, 432, 433, 436, 437, 439, 441, 442, 443, 456, 463, 519
Օսմանյան պետություն, 68, 74, 79, 198, 256, 262, 344, 349, 355, 360, 363, 364, 365, 368, 370, 371, 372, 382, 385, 389, 392, 393, 395, 396, 397, 398, 399, 400, 401, 402, 403, 407, 408, 409, 410, 411, 414, 416, 422, 427, 428, 432, 434, 435, 436, 437, 439, 440, 442, 443, 444, 445, 447, 448, 455, 458, 459, 461, 463, 509, 511, 514, 515, 517, 519, 522
Օստգոթական թագավորություն, 145
Օստ-Հնդկական ընկերություն, 83, 102
Օտրանտո, 399
Օրդուբաղ, 422

Ֆ

Ֆարահաբաղ, 84
Ֆարս, տես Պարսք, 16, 35, 45, 47, 48, 52, 55, 56, 60, 61, 64, 66, 68, 70, 100, 101, 105, 511
Ֆիլադելֆիա, 184, 193
Ֆիրուզաբաղ, 116
Ֆլանդրիա, 181
Ֆլորենցիա, 198, 396
Ֆոկշան, 438, 442
Ֆրանսիա, 57, 81, 87, 189, 197, 208, 226, 237, 241, 250, 260, 261, 272, 273, 274, 335, 358, 359, 419, 428, 431, 435, 436, 437, 439, 440, 444, 448, 449, 523

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՉՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ II

ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Համակարգչային ձևավորումը՝ Գրիգորի Հարությունյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Լիանա Միքայելյան

Քարտեզագիրներ՝
Գեղամ Բաղալյան, Մարտին Մարտիրոսյան

Անվանացանկերը կազմեց Գոռ Մարգարյանը

ISBN 978-9939-68-532-8

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափսը՝ 70x100/16: Թուղթը՝ օֆսեթ:
Ծավալը՝ 37.5+1.5 մամուլ: Տառատեսակը՝ GHEA Mashtots:

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2, հեռ.՝ (+37410) 23-25-28
Էլ. փոստ՝ info@zangak.am, էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

HISTORY OF NEIGHBOURING COUNTRIES OF ARMENIA

IN FOUR VOLUMES

VOLUME II

MIDDLE AGES

Director of Publishing House Emin Mkrtchyan
Computer Designer Grigori Harutyunyan
Proofreader Liana Mikayelyan

Cartographers
Gegham Badalyan, Martin Martirosyan

Indices by Gor Margaryan

ISBN 978-9939-68-532-8

Printing offset. Size 70x100 1/16. Paper offset.
Volume 37.5+1.5 quire. Font «Mashtots».

«ZANGAK» PUBLISHING HOUSE
49/2 Komitas Avenue, Yerevan, 0051, Armenia, tel.: (+37410) 23-25-28
E-mail: info@zangak.am, web pages: www.zangak.am, www.book.am
Facebook page: www.facebook.com/zangak